Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

5848

241
L-50

[illegible]

1 OCT 2009

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՀԱՏՈՐ Բ

2 MAY 2013

5071
կմ

ՀՀ

241
L-50

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԲԱՐՈՑԱԿԱՆ

ՀԱՄԱՌՕՏԵԱԼ Ի Ս· ԱԼՓՈՆՍՈՍԷ

ԼԻԿՈՒՈՐԵԱՑ

Ի ՁԵՌՆ

Տ· ԵՊՈՒԱՐԴԱՑ Վ· ՀԻՒՐՄԻՒԶ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՇԻՐԱԿԱՑ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ

1008
36397

Հատոր Երկրորդ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՍ

1865

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ
ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԳԼՈՒԽ ՎԵՑՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՅԱՂԱԳՍ ԽՈՐՀՐԴՈՅ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

ՉՆԻՒԹՈՅ ԵՒ ՉՔԵԻՈՅ ԽՈՐՀՐԴՈՅՍ

1 • Հեռաւոր և մերձաւոր նիւթ :
2 • Պարտ իցէ կրօնաւորացս խոստովանիլ միանգամ յամենեան :
3 • Թէ խոստովանեալ մեղք իցէ՞ն նիւթ արձակման :
4 • Պարտ իցէ որոշել զայնս ՚ի չխոստովանելոյ :
5 • Իցէ՞ կարևոր բաւն ղԵՒ. իցէ՞ն կարևոր և այլքն յամենայն տանուակդուրնէ-նէ ծեղոյ ժդ • զինչ և այլքն • արձակմամբ լեալ մեղացն արձակին և բանագրանք • կարևոր իցէ ներկայութիւն ապաշխարողին :
6, 7 • Պայմանաւ արձակումն :

1 • Այլ է ապաշխարութիւնն և այլ խորհուրդ ապաշխարութեան : Ապաշխարութիւնն է առաքինութիւն, որ ՚ի հեռանալ և ապաշխարեալն գործոց չնչէ վերջ որպէս ընդունանարերս Աստուծոյ : Իսկ խորհուրդ ապաշխարութեան է՝ խորհրդարար սահմանեալ ՚ի Քրիստոսէ, որ իւրովբն ներգործութեամբ ապաշխարողին և արժանիմամբ հանայինն : Ապաշխարութիւն միշտ իսկ լեալ է կարևոր հարկաւորութեամբ միջնորդի ՚ի փրկութիւն . իսկ խորհուրդ ապաշխարութեան նոքին հարկաւորութեամբ միջնորդի կարևոր է ՚ի նոր օրինս՝ անկելոց յետ մկրտութեան ՚ի մահու չափ մեղս , եթէ չիցէ հնար իրաք՝ դէթ ըղձիւք :

Հեռաւոր նիւթ խորհրդոյս՝ են մեղք յետ մկրտութեան գործեցեալք . մահացուք չև ևս խոստովանեալք

են նիւթք կարևորք, իսկ ներելիք և խոստովանեալ մա-
հացուք՝ են նիւթք բաւականք. զի թէպէտ և խոստո-
վանութեամբ սոցին օրէնն է մեզ ընդունել արձակումն,
այլ չեմք պարտականք խոստովանելոյ զայսոսիկ: Իսկ
նիւթ մերձաւոր են ներգործութիւնք ապաշխարողին,
այսինքն՝ զղջումն, խոստովանութիւն և ապաշխարանք.
այլ ապաշխարանք չէ էական մասն որպէս այլքն երկո-
քին, այլ ամբողջական. զի առանց այնր իսկ՝ ի դէպս
ինչ վաւեր է խորհուրդն: Իսկ Սկովլա զամենայն էու-
թիւն խորհրդոյն համարի յարձակման:

2. Ներելի իսկ մեղք և մահացուք խոստովանեալք,
ըստ ասացելոցն, բաւականք են՝ ի նիւթ հեռաւոր:
Արդ ըստ այսմ պարտ իցէ միանձանց և կուսանաց խոս-
տովանել միանգամ յամենայն, թէպէտ և չիցէ նոցա
գործեալ ինչ մեղս մահու, ըստ կղեմեան կոնդա-
կին: — Զղջիլ, ապաշխարել, և այլք յաստուածաբա-
նից պարտ համարին զայն նոցա ընդ ծանր մեղսք. այլ
Սոթոյ, Ռանոյ, Սուարէզ, Կայեթանոյ, Նաւարրոյ և
այլք բազումք զկնդակին զայն չհամարին պատուիրանա-
կան, այլ խրատական. զի ժողովն տրիդենտեան հրա-
մայէ մեծաւորաց կուսաստանաց խրատել զնոսա, զի
գնթ միանգամ յամենայն խոստովանեալ և հաղորդես-
ցին ըստ կանոնաց իւրեանց: Այսպա ուրեմն եթէ չիցէ
նոցա կանոն խոստովանել միանգամ յամենայն, չիք նո-
ցա և ոչ այդ խիստ պարտականութիւն:

3. Արդ խոստովանեալք և արձակեալք իցէն
նիւթք ընդունակք վերստին արձակման: — Հանրա-
կան կարծիք աստուածաբանից, սովորութիւն հաւա-
տացելոց, և վճիռ առաքելական զահուն, աներկբայե-
լի առնեն զայն: Եւ ոչ զօրէ ինչ ասել՝ թէ մեղք թո-
ղեալք ոչ ևս իցեն մեղք, զի՝ ի կոզմանէ մեղաւորին
միշտ են մեղք, վասն որոյ և նիւթ արձակման, որպէս
նոյն ջուր կարէ դոլ նիւթ այլ և այլ մկրտութեան:

4. Պարտ իցէ՝ ի խոստովանութեան որոշել զմահա-
ցու մեղս խոստովանեալս՝ ի չխոստովանելոց: — Պոնա-
վինա, Ռուկոյ, Ռոնվինա, Սանքէզ և սուրբն Ղվիռո-
սոս չհամարին պարտ, բայց միայն եթէ չիցէ կարևոր
վասն այլոց ինչ հանգամանաց մեղացն, որպէս վասն
մերձաւոր վտանգին՝ յորում գտանի ոք, կամ զի վերա-
պահեալ իցեն մեղքն և այլն:

5. Զև խորհրդոյ ապաշխարութեան են բանք քահանային՝ Զո ազիւղէմ զքեզ յանէին մանաւանդ ներողութենէ մեղաց ձոց: Ոմանք յաստուածաբանից ոչ էական ինչ ման արձակման համարին զբառն զքեզ, բաւական համարելով՝ ի բացատրութիւն զյայլորդ բառն յանէնայն մանաւանդ ներողութենէ մեղաց ձոց: Եւ յայլ հասարակաց կարծիք կարևոր համարին զայն, և՝ ի կատարողութիւնս խորհրդոյ պարտ է ապահովագոյն կարծեօք վարել. զի Ինոսենտիոս ոմն ԺԱ դատապարտեաց զվարդապետութիւնն կարելոյ վարել յայնոսիկ հաւանական կարծեօք: Ոչնոյն է ասել և զբառիցս յանէնայն մանաւանդ ներողութենէ մեղաց ձոց. զի թէպէտ կէաք յաստուածաբանից չհամարին զայնոսիկ էականս վասն խնամոյից բանին բաւականապէս՝ ի յայտ գալոց յայլոց բանից, այլ զի բազումք զհակառակն հաստատեն, և նոցին կարծիք ևս է հաւանական, պարտ է վարել սովաւ. մանաւանդ զի և առաջինք միհուչեան մեզս համարին թողուլ զայնս՝ ի բաց: Հասարակաց կարծիք աստուածաբանից, ընդդեմ Տուրանտոյի, ոչ էականս համարին զբառքս յանուն Հօր և այլն, և լռել իսկ զայնս՝ ոչ ինչ աւելի քան զներելի մեղս: Իսկ զայլ ամենայն բառս ըստ ամենեցուն իսկ կարծեաց մարթ է առանց մեղաց թողուլ՝ի բաց՝ի կարևոր դէպս. զի և զայնոսիկ լռել անպատճառ ոչ առանց ներելի մեղաց համարի հայրն Ռոնչինա, ի Հռոմէական միշտոյկն աճեալ հաւաստիս:

Հասարակաց կարծիք են դարձեալ, զի ձևով և եթ արձակման մարթ է արձակել և՝ի բանադրանաց. սակայն Սոթոյ, Ռոնչինա, Ոնքալեա, Սալմատիկեանք և այլք ոչ աղատ՝ի ներելի մեղաց համարին լռել ընդդեմ եկեղեցական սովորութեան զյաւելուածն Կատարչեալ պամ զքեզ՝ի խորհուրդ սուրբ եկեղեցոյ և այլն:

Պարտ է զձև արձակմանն ասել՝ի վերոյ ապաշխարողին. զսորին հակառակ վարդապետութիւնն դատապարտեաց Ալեքսիս Ի, անվաւեր համարեալ զնոստովանութիւն և զարձակումն՝ի ձեռն թղթոյ կամ պատգամաւորի: Եւ Պօղոս Ե արգել զարձակումն՝ի հեռուստ զնոստովանեցելոյն իսկ առաջի քահանային: Եւ շատ է առ այս բարոյական ևւեթ ներկայութիւն, այսինքն ցոր վայր սովոր են մարդիկ խոսել, ևս և բարձրաձայն:

Եթէ ապաշխարողն ՚ի տալ քահանային զարձակումն մեկնեսցի ՚ի խոստովանարանէ՝ կարծելով ընկալեալ զարձակումն, պարտ է խոստովանահօր կոչել զնա՝ եթէ մարթ իցէ դիւրաւ. իսկ եթէ ոչ, օրէն է նմա տալ զարձակումն ՚ի հեռուստ որչափ քայլափոխս լինէ: Եթէ դէպ լինի քահանայի տալ ուժեք արձակումն յանկանել նորա ՚ի տանեաց, պարտ համարի Յամպուրինի արձակել զնա պայմանաւ. զի երկբայելի է ներկայութիւն նորա բարոյական այնչափ ՚ի հեռուստ: Աչառաճաբանք առհասարակ ոչ կարևոր համարին լսել ապաշխարողի զարձակումն. այլ մանաւանդ խոհեմութիւն համարի Ալբրուա դաշն ձայնիւ տալ զարձակումն, զի ՚ի չտալ ուժեք զայն՝ մի դիտասցեն այլք:

6. Իսկ յաղագս պայմանաւ տալոյ զարձակումն՝ պարտ է զի պայմանքն իցեն անցեալ կամ ներկայ առ ՚ի վաւերականութիւն. և եթէ գուցեն իրաւացի պատճառք, օրինաւոր իսկ է պայմանաւ արձակումն: Եւ իրաւացի պատճառք են, նախ՝ եթէ քահանայն երկբայեսցի ընդ տալ իւր զարձակումն ապաշխարողին: Երկրորդ՝ եթէ երկբայեսցի զընդունակութենէ ապաշխարողին, և հարկ ՚ի վերայ կայցէ արձակելոյ զնա, որպէս զտղայս և զհիւանդս ՚ի հոգեվարս. զի սովորաբար պարտ է խոստովանահօր զիտել ատուկիս զընդունակութիւն ապաշխարողին, առ ՚ի կարող լինելոյ արձակել զնա ըստ օրինի: Այսոքիկ որոց ունակացեալք ՚ի մեղս չեն ընդունակ արձակման, եթէ ոչ յայտնի նշանս տայցեն ուղղութեան, որպէս լնապոյնս յիւրաքանչիւր տեղւոջն ասասցուք: Երրորդ՝ օրէն համարի Պոնաչինա արձակել պայմանաւ զայնոսիկ, որոց երկբայելի իցեն ներելի իսկ մեղք: Եւ սուրբն Լիմոնսոս ոչ անհաւանական համարի զայս, առ ՚ի չզրկելոյ զայնպիսիս ՚ի ընտրհաց խորհրդոյն:

7. Այսոքիկ Վիտոբեր օրէն համարի տալ արձակումն պայմանաւ և յերկբայել խոստովանահօր զնրաւատութենէ իւրմէ. նման յորժամ ապաշխարողն ՚ի մահուչափ մեղս կայցէ, և պարտ իցէ նման կալ ընդերկար առ ՚ի չգոյէ այլոյ խոստովանահօր որոյ իցէ իրաւատութիւն: Այլ զայս նման ուր զգործոյ իցէ երկբայութիւնն. զի ուր զնրաւանոյ իցէ, և վկայութիւնն աստուածաբանից հաւա-

նական զնշխանութիւն նորա առնիցէ, օրէն է նմա անպայման արձակել. զի յայնժամ ընդ եկեղեցի զԹերին՝ ուր պատճառք ծանուցք՝ ի միջի կայցեն, որպէս ասացաք՝ ի գլ. Ա. 27։

Դարձեալ օրէն համարին Սփորեր և Ա՛ացցոլԹա արձակել պայմանաւ զապաշխարողն, որում հարկ իցէ հաղորդել և երկբայելի իցէ պատրաստութիւն նորա։ Ա՛յլ պարտ է զանազանել աստանօր, որպէս ասացաքն՝ ի գլ. Ա. 34։ Օ՛ի այլ է երկբայութիւն զմեղսոյ, և այլ զնոստովանութենէն նորին. զի եԹէ ապաշխարողին ստուգիւ մեղուցեալ իցէ մահու չափ, և պատրաստութիւն իւր իցէ երկբայելի, եԹէ արձակեսցի և ապայմանաւ՝ չէ օրէն նմա հաղորդել. և Թէ չիցէ նմա օրէն հաղորդել, և ոչ օրէն է ընդունել արձակումն՝ առ՝ ի չգոյէ հարկի հաղորդութեան։ Տես և՝ ի գլ. Ա. 34։

ՑՕԴՈՒԱԾ Բ

ՑԱՂԱԳՍ ԶՂՋՄԱՆ

8. ԻւրԹիւն զղջման։
9. Պատճառք նորին։
10. Ե՞րբ պարտ իցէ զղջալ։
11. Ի վառանգ մահու։
12. Բաւական՞ն իցէ զղջումն հանրական։
13. Բաւական՞նք իցեն ներդործութիւնք հաւատոյ և այլն։
14–16. Բաւական՞ն իցէ անկատար զղջումն առանց աստուածսիրութեան՝ ի վեր քան զամենայն։
17. Բաւական՞ն իցէ անկատար զղջումն առ երկիւղն դժոխոց։
18. Մ՞արԹ իցէ խոստովանութեան գոլ վաւերական առանց ընդհայց։
19. Պարտ իցէ զղջման կանխել քան զխոստովանութիւն։
20. Զբարոյական անհնարութենէ զղջման։
21. Պարտ իցէ զղջման գոլ վասն խոստովանութեան։
22. Ո՞ր անդէն վերստին խոստովանիլ, պարտ իցէ նմա նորոգել զզղջումն։
23. Զղջումն ընդ նեղեալ մեղս։

8. Ա՛յլ է զղջումն կատարեալ՝ որ՝ ի սիրոյ յառաջ դայ և կոչի զղջումն խորտակման, և այլ անկատար՝ որ կոչի զղջումն ընկմանն, և այլ անկատար՝ որ յառաջ եկեալ՝ ի ձանձրանալ չարութեան մեղաց կամ յահէ դժոխոց, այլ՝ ի քաց քառնալով զկամն մեղանչելոյ հանդերձ յուսով Թողու-

թեան։ Ոչոլիմ տրիպենտեան գկատարեալ զղջումն սահմանէ "Յաւ սրտի և գարշումն՝ի մեղաց հանդերձ առաջադրութեամբ ոչ ևս մեղանչելոյ,,։ Ասանք էու թիւն զղջման համարին զցաւս սրտի, որ յառաջ գայ՝ի գարշելոյ՝ի մեղաց. այլք զգարշումն՝ի մեղաց՝ որում գՀետ գայ ցաւ սրտի, և առաւելագոյնք հաւանին ընդ այս. զի ոչ եթէ ցաւ սրտի պատճառ է գարշելոյ՝ի մեղաց, այլ գարշումն՝ի մեղաց պատճառ է ցաւոց սրտի։ Ասացեալ չիք երկբայել զի երկաքանչիւր բովանդակեն զնութեարս, զի որ գարշի՝ի մեղաց՝ վշտանայ ևս ընդ այն, և որ վշտանայն ընդ մեղս՝ գարշի ևս յայնմանէ։

9. Ասաւ ծնանիցի կատարեալ զղջումն։ — Կիսք համարին՝ի Թշնամանաց եղելոյ որոյ և իցէ՝ի ատոյգ պելեացն Աստուծոյ, այսինքն ողորմութեան կամ արդարութեան և այլն. և Ռուկոյ և Ասւարէզ համարին զայս բաւականապէս հաւանական, զի որ սիրէն զողորմութիւնն Աստուծոյ կամ զարդարութիւն՝ սիրէ զԱստուած, զի ողորմութիւնն Աստուծոյ և արդարութիւն ինքն իսկ Աստուած է. վասն որոյ և որ զղջայն ընդ Թշնամանել զողորմութիւնն Աստուծոյ՝ զղջայ ընդ մեղս իւր ոչ՝ի սիրոյ անձին, այլ յաստուածսիրութենէ։ Այլ հանրագոյն կարծիք համարին կատարեալ զղջման ծնանել՝ի Թշնամանելոյ զբարութիւնն Աստուծոյ. վասն զի կատարեալ զղջումն ըստ սահմանելոյ տրիպենտեան ժողովոյ՝ յառաջ գայ յաստուածսիրութենէ, և առարկայ աստուածսիրութեան ըստ հասարակաց կարծեաց աստուածաբանից է բարութիւնն Աստուծոյ՝ որ բովանդակէ զամենայն կատարելութիւնս Աստուծոյ. որպէս ասացաք՝ի գլ. Ե. 9։

10. Երբ պարտ՝ի վերայ ածէ պատուիրան զղջման։ — Ասխ և հաւաստեաւ՝ի վտանգ մահու։ Երկրորդ՝ յորժամ պարտ է ամենայն ուժգ առնել ներգործութիւն սիրոյ, զոր (որպէս ասացաք՝ի գլ. Դ. 13), պարտական է ամենայն ոք առնել գԿԹ միանգամ յամենայն։ Երրորդ՝ ծանր մեղս ընդդէմ սիրոյ անձին գործէ՝ որ կայ ընդերկար անզեղջ՝ի մեղս. զի որ զղջանայն է՝ի շնորհաց՝ չկարէ կալ ընդ երկար առանց անկանելոյ և յայլ մեղս ծանուննս։ Իսկ ընդերկար ըստ հանրագոյն կարծեաց խմնալի է աւուրեայ ժամանակ։ Ասանք և

յամենայն տօնական աւուրս պարտ հաւատացելոյն ղղջալոյն առ ի սրբել զօրն գայն, որպէս և իսկ դիտաւորութիւն պատուիրանի տօնից. այլ չէ այս ընդունելի աստուածաբանից, զի որպէս սուրբ Աւգուստինոս ասէ՝ դիտաւորութիւն պատուիրանին ոչ անկանի ընդ պատուիրանն:

11. Հայրն Սուարէզ, Պոնաչինա, Ռոնչինա և այլք պարտ համարին զներդործութիւն կատարեալ ղղջմանն ի վտանգ մահու և վասն այնոցիկ, որոց անկատար ղղջմամբ եւեթ կեղ խոստովանեալ: Բայց այլոց չէ այս ընդունելի. զի որ անկատար ղղջմամբն խոստովանի, բաւարարապէս ապահով է զաստուածային շնորհացն, որպէս ասելոց եմք աստ ի ստորև (14): Եւ թէպէտ եր. կրորդս այս հանրագոյն կարծիքս հաւանական է, սակայն պարտ է ամենայնիւ խրատել և յորդորել զհաւանդ ի հոգեվարս ի ղղջումն կատարեալ. մանաւանդ զի պարտ է յայնժամ առնել ներդործութիւն սիրոյ, և այս չէ հնար առանց առելոյ զմեղս:

12. Ոչ ասն արդարանալոյ մեղաւորի բաւական կեղ նմա ղղջումն հանրական ընդ մեղս իւր: — Տարապարտուց կարեւոր համարին ոմանք ղղջումն ընդ ամի ամի ի մեղաց, կամ դէթ ներդործական յիշատակաւ միոյ միոյ ի մեղաց: Ակոստա, Սուարէզ, Խուվենին, Ռոնչինա, Լայման, Կայէթանոյ, Հոլզման, Ափոռեր, Լաքրուա և այլք բազումք բաւական համարին և աներկիւղ գհանրական ղղջումն ընդ մեղս, որպէս զի Կայէթանոյի կոչել ծաղրական զառաջնոցն կարծիս: Ոչ ի եթէ ընդ ամի ամի ի մեղաց պարտ էր ղղջալ, գհետ գայր չզօրել ինչ զղղջման առաջնոյ մեղաց՝ չև ղղջացեալ ընդ վերջինսն, զոր անտեղի և ասել. իսկ եթէ զօրն ղղջումն ի թողութիւն առաջնոցն, անտեղի և ինչ գհետ գայ՝ այսինքն թողութիւն առաջնոցն առանց թողութեան այլոց. զի ոչ կ մարթ միոյ ի մահուշափ մեղաց առանց այլոցն՝ թողութեան հանդիպել: Պարձեալ՝ որ ընդ մեղս իւր ղղջայ ընդհանրապէս որպէս ընդ թշնամանս Աստուծոյ, հարկաւորապէս և ընդ ամի ամի ի մեղաց իւրոց ղղջայ. զի որպէս սուրբ Աւգուստինոսն ասէ, որ սիրէ զմիաբանութիւնն ինչ՝ սիրէ և զամենայն միաբանս նորա:

13. Ոչ ասն ընդունելոյ գշնորհս խոստովանութեան

կարևոր էին և ներգործութիւն հաւատոյ և յուսոյ։ — Ակնք կարևոր համարին, առաւելապէսիք ոչ. բայց Յուդա և Յաբոսպար բարւոք խնաստասիրեն, զի որ ղղջայն ընդ մեղս իւր՝ նովին իսկ ղղջմամբն հաւատայ և յուսայ ներգործաբար, զի՛ ի ձեռն խոստովանութեան իւրոյ և գործութեամբ վաստակոյն Քրիստոսի քաւին մեղք իւր։

14. Ընդ խորհուրդ ապաշխարութեան բաւական ին ել ղղջումն անկատար, և կարևոր էին առ այն սկիզբն սիրոյ։ — Երկոցունցն ևս միաբանին աստուածաբանք. այլ խնդիր մեծ է՝ թէ սկիզբն սիրոյ կամ սէրն այն սկսեալ պարտի յառաջ գալ՛ի սիրելոյ Աստուած՛ի վեր քան զամենայն։ Ոմանք յաստուածաբանից այսպէս պարտ համարին, իբր զի այնր աղագաւ կոչի այն սկիզբն սիրոյ կամ սէր սկսեալ՝ զի և առկայ ծեալ լինի սէր. վասն զի ղղջումն կատարեալ՛ի բորբոքեալ սիրոյ գայ յառաջ, և չէ իսկ խոստովանեալ Աստուած զմեզս։ Այլ հանրագոյն կարծիք բաւական համարի զանկատար ղղջումն յառաջ եկեալ յերկիւղէ դժոխոյ կամ կորուսանելոյ զարքայութիւն, կամ՛ի ձանձրանալ դարշութեան մեղայ լուսոյ հաւատոյ։ Նա յաւելու Անենդիկտոս ԺԴ, զի յետ տրիդենտեան ժողովոյ դպրոցք առ հասարակ ընկալան զրուատեօք զայս կարծիս. և Սուարէզ, Եսկոբար, Վասկուսիալ, Ընկոյ, Վիւա, Փրատոյ և այլք հաստատեն զի ստոյգ է արդ բարոյապէս այս վարդապետութիւն, և հակառակին սորին ոչ ևս հաւանական։ Իբր ոչ եթէ այսու չընդունին նոքա սկիզբն ինչ սիրոյ յանկատար ղղջման, այլ ոչ կարևոր համարին զաստուածսիրութիւն՛ի վեր քան զամենայն։

15. Ասողմէ տրիդենտեան՛ի խօսելն զանկատար ղղջմանն՝ որ յառաջ գայ յերկիւղէ դժոխոյ, ասէ. "Մինչդեռ և առանց խորհրդոյ ապաշխարութեան չկարէ այն արդարացուցանել իւրև զմեղաւորն, սակայն պատրաստէ զնա յընդունելութիւն շնորհացն Աստուծոյ՛ի ձեռն խորհրդոյ ապաշխարութեան"։ Ի բանից աստի առարկեն հակառակորդք՝ զի ժողովն չասէ թաւել, այլ պապթաւել. ապա անկատար ղղջումն առանց աստուածսիրութեան պատրաստէ, այլ ոչ թաւէ. մանաւանդ զի յառաջագոյն եդեալ էր թաւէ, և յետ բաղում վիճա-

բանուԹեանց բարձեալ զայն՝ փոխանակ այնորիկ եղ պարտապէ, որպէս պատմէ կարդինալն Վալերիէլինոյ՝ ի ժողովականաց։ Այլ Հայրն Կանիճ քաջ պատասխանէ, զգուշուԹեան ժողովոյն ոչ ինչ ստնանել բառակառուԹեան անկատար ղղջման. զի որպէս նոյն ինքն ժողովն սուրբ յայտ արար, պարտ է նստուածոյ և անկատարն այն ղղջումն՝ որ առանց խոկ խորհրդոյ ապաշխարուԹեան պատրաստէ հեռաւորապէս զմեղաւորն առ ընծայս. ապա՛ի խորհրդեան անդ պատրաստէ մերձաւորապէս առ այն։ Եւ այս յայտ է՛ի նոյն իսկ բանից ժողովոյն. զի եԹէ պէՀեռաւոր լեԹ պատրաստու-ԹիւնԻմանայր առանց ընդունելուԹեան ընծայից, անտեղի էր ասել՝ ԹէպէտԵւ առանց խորհրդոյ ապաշխարուԹեան չկարէ իւրև արդարացուցանել այսինքն տալ ընծայս, սակայն՛ի ձեռն խորհրդոյն պատրաստէ առ այն. այլ պարտ էր ասել՝ ԹէպէտԵւ անկատար ղղջումն առանց խորհրդոյ ոչ պատրաստէ առ ընծայս, սակայն՛ի ձեռն խորհրդոյ պատրաստէ յընդունելուԹիւն նորին։ Այլա յասելն՝ ԹէպէտԵւ անկատար ղղջումն չկարէ զմեղս արդարացուցանել, սակայն պատրաստէ յընդունելուԹիւն ընծայից, հարկաւ զմերձաւորն պատրաստուԹիւն իմանայ։ Ո՞յր միտս ժողովոյն բացայայտումդոյն Եւ յայտորդ բանքն կացուցանեն, զի ասէ. “Ման որոյ տարապարտուց զրպարտեն ոմանք զուղղափառ մատենագիրս, որպէս ԹԷ ուսուցանիցեն խորհրդոյ ապաշխարուԹեան առանց բարւոյ իրիք շարժման ընդունելոցն տալ ընծայս,,։ Եւ յայտ է զի Լուտերականք Եւ նորադանդք ոչ ուրեք բամբասեն զուղղափառս վասն ուսուցանելոյ նոցա կատարեալ ղղջմամբ ընդունել ընծայս, այլ միայն վասն ասելոյ ընդունել անկատար ղղջմամբ. զի Եւ ոմնադիք անկատար ղղջման չէն անմասն՛ի բարւոյ շարժմանէ, այլ բաւականապէս պատրաստեալ զտանին նոքաւ յընդունելուԹիւն ընծայից՛ի ձեռն խորհրդոյ ապաշխարուԹեան։ Այլ աստ դիտելի է զի չէ ըստ օրինի ղղջումն անկատար, եԹէ ոք ղղջանայ զի ԵւԹ ընդ լինել իւր մեղաց պարտաւոր դժոխոց. այլ պարտ է նմա ղղջալ ընդ լինել իւր պարտաւոր դժոխոց վասն Թէնսամանելոյ իւրոյ զԱստուած։

16. Եւ զարձեալ՝ յայտնի է՛ի բանէ. քանզի խոր-

հուրդք ներդործեն իրօք որ ինչ նշանակեն. վասն ա-
րոյ յարձակել քահանային՝ թողութիւն լինի մեզաց ա-
պաշխարողին, ուստի և ապաշխարութիւն կոչի խոր-
հուրդ մեռելոց՝ տալով զընծորհայ կեանս ապաշխարո-
ղին: Ընդ եթէ՝ ի զղջման նորին կարևոր էր աստուած-
սիրութիւն՝ ի վեր քան զամենայն, ոչ ևս խորհուրդն
իւրև ներդործէր զընծորհս. ոչ ամենայն զղջումն յառաջ
եկեալ յաստուածսիրութենէ՝ և զղջումն կատարեալ
ըստ ուսուցանելոյ սուրբ Ընդունացոյն, և յառաջ իսկ
քան զխոստովանութիւն տայ զընծորհս, քանզի յաւելու՝
"Ընդմարթ և աստուածսիրութեան կալ ընդ մնհո-
ւեամի մեզս,,: Եւ աստուածսիրութիւն ոչ զսաստիկն
իմանայ, զի սահմանէ զայն՝ "Որով ցաւէ ումեք ընդ
կորուսանել զընծորհս Ընտուածոյ քան զայլ ամենայն քա-
րիս,,: Եւ այլուր՝ "Ահուդեամի մեզք հակառակ է
աստուածսիրութեան, այսինքն սիրելոյ զԸստուած՝ ի
վեր քան զամենայն,,:

Ընդ եթէ սկիզբն սիրոյ կամ սէրն այն սկսեալ՝ որ
խնդրի յանկատար զղջման, պարտէր զոլ աստուած-
սիրութիւն թէպէտ և թոյլ և տկար՝ այլ աստուած-
սիրութիւն՝ ի վեր քան զամենայն, որպէս ուսուցանեն
հակառակ կարծիք, ամենայն իսկ մեղաւոր նախ քան
զխոստովանութիւն արդարանայր, և ոչ երբէք խոր-
հուրդն ապաշխարութեան ներդործէր իւրև զարդա-
րանալ մեղաւորի՝ որ է զօրութիւն իւր յատուկ: Վասն
որոյ ասէ Ժողովն տրիդենտեան. "Թէպէտ և պատահէ
երբեմն զի այս զղջումն իցէ սիրով կատարեալ, և նախ
քան զխոստովանութիւն հաշտեցուսցէ զԸստուած ընդ
մեղաւորն,,. որով տայ իմանալ թէ ոչ միշտ կանխէ
հաշտեցուցանել: Ընդ ուրեմն սկիզբն այն սիրոյ, որ
խնդրի՝ ի տրիդենտեան Ժողովոյ առ՝ ի պատրաստու-
թիւն ընդունելութեան շնորհայ յանկատար զղջման,
և երկիւղ յարդարութենէն Ընտուածոյ՝ ահիւ դժոխոյ,
որպէս ասէն գիրք. (Իմաք ԻԵ. 16. ըստ լտ). "Եր-
կիւղ Ընտուածոյ սկիզբն աստուածսիրութեան,,. և
յաւսոյ թողութեան մեզաց և արքայութեան՝ որպէս
ասէ սուրբ Ընդունացին. "Նովին իսկ ի յուսամբ իմիք,
սկսանիմք սիրել զայն,,:

17. Ընդ ակն ունի՝ ի խորհուրդ ապաշխարութեան

ղջումն անկատար յահէ եւ եթէ ժամանակաւոր պատժոյ աստուածատաստ բարկութեան։ — Կէսք չհամարին բա- ւական, իբր զի պարտ է ղջման յառաջ գալ յերկիւղէ յաւիտենական պատժոյ. այլ հանրապէս եւ հաւանա- կանապէս կարծիք բաւական համարին զայն, հատա- տեալ ի բան տրիդենտեան ժողովոյն. "Ո՛ ղջումն ան- կատար, որ յերկիւղէ գեհենին կամ պատժոյ երկ- նեալ,,. որով զանազանէ զերկիւղ պատժոյ յերկիւղէ գեհենին։ Այլ քանզի առաջնոցն կարծիք չէ անհա- ւանական, վասն որոյ չէ մարթ վարել երկրորդաբան ի կատարումն խորհրդոյն։

18. Ա՛մրթ իցէ խորհրդոյ ապաշխարութեան զոլ վաւեր եւ անշնորհ. այս ինքն՝ եթէ մեղս երկուս ունելով ուրուք ծանուցանէ՝ զերդմնազանցութեան եւ զգողութեան, եւ զերդմնազանցութիւնն եւթէ յիշելով՝ ի գերբնական դարշութենէ նորին շարժեալ ղջմանայցէ, ընդունի սա վաւերաբար զխորհուրդն, որպէս զի՝ ի յիշել ապա ըզ- գողութիւնն ևս և՝ ի ղջմանալ՝ չիցէ նմա պարտ երկ- րորդել զխոստովանութիւնն, այլ զգողութիւնն եւթէ խոստովանել։ — Ո՛ այսմանէ տարաձայնին յիւրեանս աստուածաբանք։ Ո՛ի կէսք ոչ միայն վաւեր զխոր- հուրդն համարին, այլ և շնորհաւոր. իբր զի՝ ի ղջալ ա- պաշխարողին ընդ Հընանմանել իւր զԱ՛աստուած երդմնա- զանցութեամբ և՝ ի ցանկալ հաշտել ընդ նմա, զկորչն այն և իղձ տան նմա առնել զօրութեամբ և զգողութիւն իւր։ Այլ այլք ոչ միայն անշնորհ զխորհուրդն համա- րին, այս ինքն չընդունել ապաշխարողին զշնորհս խոր- հրդոյն, այլ և անվաւեր. իբր զի չհամարէ զոլ նիւթ ընդունակ ապաշխարութեան որ ինչ ոչ ածէ շնորհս։ Այայց Աստուածդ, Այուկայ, և այլք ըստ վարդապետու- թեան սուրբ Ագոստինոսեան ընդունին ընդդէմ երկա- քանչիւրոցն զխոստովանութիւնն վաւեր՝ բայց առանց շնորհաց։ Այս առաջնոցն պատասխանեն, զի որ ղջայ ընդ երդմնազանցութիւնն իւր՝ շարժեալ՝ ի դարշութե- նէ նորա, ոչ ըմբռնելով զդարշութիւն գողութեանն՝ կարէ և՝ ի յիշելն զայն չղջալ ընդ այն. զի դարշութիւն երդմնազանցութեան ոչ բովանդակէ յինքեան զգողու- թեանն դարշութիւն։ Այակ յետնոցն պատասխանեն. զի՝ ի կատարել ապաշխարողին զէական մասունս խոր-

հրդոյն զղջումն և զխոստովանութիւն և յընդունել զարձակումն, չէ մարթ անվաւեր համարել զխոստովանութիւնն:

19. Պարտ իցէ զղջման կանխել քան զխոստովանութիւն: — Լայմանն, Վասթրոփալ և այլք պարտ համարին. իբր զի խնդրի անդ զղջումն զգալն, և լինի այն զգալն խոստովանութեամբն. և զի զարձեալ խոստովանութիւն պարտի գոլ զղջական առ՝ ի լինել նմին թողհրդոյն, ապա թէ ոչ լինի պատմութիւն միայն: Այլ առաւելագոյնք յաստուածաբանից, ընդ որս և Լուկայ, Սուարէզ, Պոնաչինա, Վոնչինա, Հոլզման, ոչ պարտ համարին. և լատին մաշտոցն Թուի՝ ի նպաստ նոցա, զի ասէ. «Վահանայն լուեալ զխոստովանութիւնն՝ յորդորեսցէ՝ ի զեղջ զապաշխարողն»: Եւ պատասխանեն սոքա առաջնոցն հակառակ կարծեաց՝ զի և առանց խոստովանութեան մարթ է զղջման այլազգ ևս ցուցիւք կամ բանիւք գոլ զգալի. այլ առ երկրորդ բան նոցա չունին բաւական պատասխանի, և միայն հաւանական առաջնոցն կարծիք, վասն որոյ և պարտ է նոցին կարծեօքն վարել՝ ի կատարումն խոհրդոյն. և որպէս Վոնչինա, Ալ Լուա, Վալենտիկեանք և այլք ասեն, բարւոք է ապաշխարողին զհետ զղջման յաւելուլ Ա՛ջն ըսաճ մեչէբա նորէն ևը խոսպովանիմ:

20. Ընչափ ժամանակ տեւէ զղջումն բարոյապէս առ՝ ի կցորդել ընդ այլ մասունս խոստովանութեան: — Ամենք համարին զայն միշտաւև ցորչափ չիցէ նահանջեալ այլ այս կարծիքն չէ ընդունելի: Ասլէք համարին տեւել այնմ օր մի, և Հայրն Վոնչինա կարևոր համարի նոցոգել զայն միշտ՝ յետ զբաղանալոյ ինչ՝ ի մէջ անկանելոյ: Այլ Հայրն Ռոնքալեա և սուրբն Ալֆոնսոս յաչելուն զի մարթ է զղջման տեւել բարոյապէս և զաւուրս երկուս և աւելի իսկ՝ եթէ՝ ի զղջմանէ անտի ոք շարժեալ գայ՝ ի խոստովանութիւն. զի նոյն իսկ խոստովանութիւնն յայնժամ համարի ներգործութիւն զղջմանն: Այլ է թէ ոք վասն ջերմեռանդութեան կամ ուխտի և կամ ըստ բարւոյ սովորութեան խոստովանեսցի:

21. Պարտ իցէ զներգործութիւն զղջմանն առնել վասն խոստովանութեան: — Պոնաչինա, Պաւսեմպայ

և Պօնչկինա պարտ համարին, իբր զի եթէ պաշտօնեին և եթէ ընդունողն խորհրդոյն պարտ է զինւոր վասն խորհրդոյն տալ և ընդունել, որպէս զլուացումն վասն մկրտութեան, զձեռնադրութիւն կամ զշօշափումն վասն սուրբ կարգի, այսպէս և զղջումն վասն ապաշխարութեան. վասն որոյ եթէ ապաշխարողին առանց խորհելոյ ՚ի խոստովանութիւն իցէ զղջացեալ, պարտ համարին նմա նորոգել զայն ՚ի խոստովանութեան: Այլք այլք, ընդ որս և Լուկաս, Ափոթեր, Կոպաթ, չընդունին զայն. և Հաւանականագոյն է կարծիք սոցա, զի նովին իսկ խոստովանութեամբ նորոգի զղջումն և կցորդի ընդ արձակման: Այլ քանզի հաւանական է և առաջնոցն կարծիք, պարտ է նովաւ վարել՚ի կատարումն խորհրդոյն:

22. Եթէ ոք յետ ընդունելոյ զարձակումն յիշեցէ զայլ ինչ մեղս իւր և խոստովանելոյն, պարտ է նմա նորոգել զղջումն: — Լուկաս, Ընաքլեթոյ, Անդրեաս, Ալիւա, Ափոթեր և այլք բազումք ոչ պարտ համարին. զի առաջին զղջումնն ՚ի վերայ ամենայն մեղաց՝ զօրէ և վասն մոռացելոցն, և տեւէ բարոյապէս. և թէպէտ այլ և այլ խորհուրդք կատարին անդ, սակայն օրէնն է միակ նիւթոյ սպասաւորել այլ և այլ խորհրդոց, որպէս նոյն ջուր այլ և այլոց մկրտութեանց: Այլք Ալ ասդուէզ, Պօնաչինա և այլք ասեն, զի ՚ի կատարել խորհրդոյն արձակմանն, այլ նիւթ խնդրի վասն միւսանգամ կատարման խորհրդոյ. և թէպէտ տեւէ բարոյաբար զզղջումն առաջին, այլ ոչ վասն երկրորդ արձակմանն՝ որպէս ՚ի վեր անդր ասացաք: Այս քանզի հաւանական է և այս, պարտ է, որպէս և Լաքրուա և Պօնչկինա ասեն, նովաւ վարել՚ի կատարումն խորհրդոյն, բայց եթէ չէ կատարեալ իցէ խորհուրդն. իսկ յետ կատարման նորին ոչ է պարտ խղճել յերեսին և ՚ի վերստացեալ խնդիրս:

23. Որսիսի պարտ է զոլ զղջման ընդ ներելի մեղս: — Ընտաքոյ խոստովանութեան, որպէս ուսուցանէ սուրբ Ադունացին, "Հաւական է շարժումն ինչ սիրոյ ՚ի Թողութիւն ներելի մեղաց": Այլ վասն ընդունելոյ զխորհուրդ խոստովանութեան՝ ըստ աստուածաբանից ամենեցուն վարդապետութեան խնդրի տեսա-

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

կաբար ղղջումն. որպէս զի ըստ Հանրական և ազգամիա կարծեաց՝ ծանր մեղք են առանց ղղջման ընդունել զաղ- ձակումն՝ ընդունայն առնելով զխորհուրդն առ՝ ի չգոյէ նիւթ, որ է ղղջումն:

Ա՛յլ՝ի խոստովանութեան ներելն մեղաց շնո՛ր էոյէ ղղջալ ընդ մի և եթէ՝ ի նոցանէ՝ առանց ղղջանալոյ ընդ այլս: — Ասանկ ոչ շատ համարին, այլ հասարակաց կարծիք ժողովականն հաստատեն. զի որպէս առաջնոք՝ ներելն մեղք չեն նիւթ կարևոր, այլ բաւական վասն խորհրդոյն: Դարձեալ և կ՚ըսեն ոչ շատ համարին ըզ- հանրական զիղջ, պարտ համարելով ղղջալ զկնի ընդ մի՛ ի նոցանէ որոշակի. այլ ոչ է մարթ ղղջալ ընդ բազ- մութեան մեղաց, առանց ղղջանալոյ ընդ մի մի՛ ի նո- ցանէ:

ՅՕԴՈՒԱԾ Գ

ՅԱՂԱԴՍ ԱՌԱՋԱԴՐՈՒԹԵԱՆ

24. Չի պարտ է առաջադրութեան գոլ հաստատուն. զի՞նչ եթէ ոք համարիցի զի անկանելոյ է վերսալն:
25. Պարտ է առաջադրութեան գոլ հանրական:
26. Պարտ է գոլ և գործունեայ. վերսալն անկումն կոչ միշտ նշան անվաւեր խոստովանութեան. պա՛րտ իցէ առաջադրութեան գոլ բացայայտ:

24. Երբեմն են պայմանք՝ զկնի առաջադրու- թեան՝ ի խոստովանութիւն. զի պարտ է այնմ գոլ հաստատուն, հանրական և գործունեայ: Եւ նախ՝ հաստատուն, որպէս զի դնել ապաշխարողին հաստա- տութեամբ՝ ի մտի ոչ ևս երբեք մեղանչել: Ա՛յլ եթէ ոք հաստատեալ իցէ՝ ի մտի չմեղանչել, այլ դիտէ ըս- տուգիւ զի դարձեալ անկանելոյ է՝ ի մեղս, զօրինակ՝ ա- ռաջադրութիւն նորա: — Սուարեզ, Լայման, Լաւար- ցոյ, Սիփոլեր և այլք համարին զօրել, զի մարթ է ա- ռաջադրութեան կամայ կալ՝ ի միասին ընդ գաւտման մտաց՝ որ նախատեսանէ ստուգիւ զանկումն իւր զիտօք առեալ տկարութեան իւրոյ: Ընդ հակառակն Սայրն Վանցինա մերժէ իբր անհաստատ՝ ևս և զառաջադրու- թիւն, որ հաւանական համարիցի զանկումն իւր. այլ խիստ է այս վարդապետութիւն, զի երկիւղ վերսալն

անկման ոչ ինչ ստնանկ հաստատուԹեան առաջադրուԹեան: Բայց և առաջինն, զԷԹ՝ի գործնական մասին, ոչ ընդունելի. զի որպէս ասէ Տ. Պօղոս, և Պօղոսեմպատոյ գրեԹէ զնոյն հաստատէ, որ ստուգիւն հաւատարիմի անկանել վերստին՝ յայտ առնէ զի չէ հաստատուն առաջադրուԹիւն իւր: Զի որ հաւատայ յանշուշտ օգնականուԹիւնն Աստուծոյ յուսացելոցն լինքն, և՝ի հաւատարմուԹիւն նորա չարկանելոյ զոք՝ի փոխձուԹիւն առաւել քան զկար, անհնար է նմա յառաջադրելն հաստատուԹեամբ՝ զամենայն տոյժս յանձն առնուլ քան զվեզս, համարել ստոյգ զվերստին անկումն իւր. և եԹէ համարիցի, յայտ առնէ զանհաստատուԹիւն առաջադրուԹեան իւրոյ:

25. Պարտ է առաջադրուԹեան գոլ և հանրական վանս ամենայն ծանուցից մեզաց, որպէս ուսուցանեն ամենայն աստուածաբանք: Ծանուցից ասեմ, զի գնեՀելեաց շատ է և մանաւանն՝ ըստ վարդապետուԹեան սրբոյ Աստուածացուցն. այլ որպէս Տ. Պօղոս և Սուսաւկզ յաւելուն՝ քաջ իսկ կարէ զբ առաջադրել հաստատուԹեամբ չգործելոյ լինչ և ս և՝ի ներելի մեզաց կամաւ և գիտուԹեամբ, իսկ զակամայից և զանգիտուԹեան մեզաց առաջադրել զգուշուԹիւն ըստ ներելոյ մարդկային տկարուԹեան, որպէս և նոյն լինքն սուրբ Աստուածացուցն յաւելու անդ:

26. Պարտ է առաջադրուԹեան գոլ և գործունեայ, այսինքն զի որ առաջադրէն մի և ս մեզանչել՝ և զնարս կարեւորս առ այն՝ի գործ արկցէ: Այլ աստ գիտելի է զի ոչ միշտ վերստին անկումն ցոյց է ոչ բարւոյ առաջադրուԹեան, և ոչ վասն այնորիկ պարտ է կրկնել զխոստովանուԹիւնս՝ համարելով անվաւերս. զի յաՀախ իսկ և հաստատուԹեամբ առաջադրողաց փոփոխին կամք: Ասն որոյ մաշտոցն Հռոմէական խրատել ասէ զդիւրագնացեալս զի ստեպ խոստովանեալ Հաղորդեսցին, և ոչ ԹէԹ կրկնել զխոստովանուԹիւնս նոցա: Զի առ՝ի կրկնել զխոստովանուԹիւնս պահանջի բարոյական ստուգուԹիւն անվաւերականուԹեան նոցա. որպէս եԹէ ոք զկնի խոստովանուԹեան, Հաղիւ աւուրք երկու կամ երեք՝ի վերայ անցեալ, դառնայ՝ինոյն մեզս իւր՝ առանց Հնարս զգուշուԹեան՝ի գործ առնելոյ, և

առանց հեռանալոյ ի մերձաւոր վտանգաց։ Պարտ էր առաջ խօսել զունակացելոյն ի մեզս, և ոչ ի մերձաւոր վտանգս մեզաց կան կամակար, այլ զսոցանէ առաջս ի տուրև։

Ընդ այսմ քննել թէ զօրութեամբն առաքելոցն բովանդակեալ ի ղեկման՝ բաւական էր ի խոստովանութեան։ Երկրեակ կարծիք են զայսմանէ. Սկովտ, Ռանոյ, Կայետանոյ, Ռոնչինա և այլք ոչ բաւական համարին, իբր զի ժողովն տրիդենտեան էական մասն խորհրդոյ ապաշխարութեան յայտ առնէ զղեկումն հանդերձ առաքելութեամբ ոչ ևս մեղանչելոյ։ Այսմ, Աւարրոյ, Ոկոյ և այլք բաւական համարին զայն՝ եթէ ոք ի վերայ ամենայն մեզաց իւրոց ղեկանայցէ. զի նոյն սուրբ ժողովն յաւելու այլուր, անկատար ղեկման պատրաստել զապաշխարողն առ ընծայ յարտաքսելն զկամն մեղանչելոյ։ Ըստ այսմ Լենեդիկտոս ԺԳ՝ ի հաստատութեան հրահանգաց հռոմէական ժողովոյն ասէ. «Որոց միանգամ չկոչէ ղեկումն դէթ անկատար, հանդերձ հաստատուն կամ գէթ լռելեայն առաքելութեամբ ոչ ևս մեղանչելոյ, ոչ ընդունին ըզթողութիւն մեզաց»։ Իսկ Սուարէզ Պելլարմինոս, Պոնաչինա և Հոլզման, զանազանեն այսպէս. եթէ ապաշխարողն ոչ խորհի յառաքելական, որպէս դիւրաւ պատահէ հիւանդաց՝ ի վտանգ մահու, բաւէ յայնժամ լռելեայն առաքելութիւն. այլ ոչ բաւէ այն որոյ խորհինն յառաքելական, զի հրամայէ Պետուած՝ ի ձեռն մարգարէին (Եզեկ. ԺԸ. 30). «Դարձարուք յամենայն անպարշտութեանց ձերոց, և արարէք ձեզ սիրտ նոր»։

Ընդ վանն զի առաքինոցն կարծիք հաւանական է, նոքաւ պարտ է վարել՝ ի կատարումն խորհրդոյն. այլ յետ կատարելոյ ուրուք լռելեայն առաքելութեամբ զխոստովանութիւն իւր, ոչ ևս պարտ է նմա կրկնել զայն՝ որպէս աստուածաբանք առ հասարակ միաբանին. զի որ հաւանականաբար ընդունի զխորհուրդն վաւերական, ոչ ևս պարտական է կրկնելոյ զայն. զի զադարէ այնուհետև վտանգ անարգանաց՝ ի դէրև առնելոյ զխորհուրդն։

ՅՕԴՈՒԱԾ Դ

ՅԱՂԱԳՍ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ

27 • Չի պարտ է խոստովանուԹեան գոլ բանիւք և 'ի ծածուկ :
28 • Գոլ Ճշմարիտ • և զինչ որ ասէ 'ի խոստովանուԹեան :
29 • Գոլ անձների • զհանգամանաց՝ որ ծանրացուցանեն զմեղս :
30–32 • Չերկբայականաց :
33 • Չորոց ոք երկբայիցի Թէ չիցէ խոստովանեալ :
34 • Որ չեռ խոստովանելոյ ինչ երկբայուԹեամբ՝ Ճանապէհ զգայն հաստեաւ :
35 • Բնական անկարողուԹիւն համերոյ , խլից , այլալեզուաց և հիւանդաց 'ի հոգեվարս :
36 • Որոյ 'ի հոգեվարս տուեալ իցէ նշան ըստ վկայուԹեան այլոց :
37 • Որ ոչ տան ինչ նշան :
38 • Չանզգայելոց 'ի մեղս անդ :
39 • ԱնկարողուԹիւն բարոյական :
40 • Ո՞յր պարտ իցէ յայտնել զմեղսակիցն :
41 • Չի չէ օրէն խոստովանահօր հետազօտել զանուն մեղսակցին :

27 • Վաւեակ պայմանք են խոստովանուԹեան , այսինքն զի իցէ բանիւք , 'ի ծածուկ , Ճշմարիտ և ամբողջ : Ասի՝ բանիւք , զի այս է սովորուԹիւն եկեղեցւոյ , և ոչ նշանացի կամ գրով . եԹէ առ ծանր հարկի իսկ ոք , որպէս առ տարապայման ամօԹոյ , կամ ձայնին նուաղելոյ և այլոց հանգոյն սոցին պատՃառաց գրով զմեղս իւր տացէ խոստովանահօր յընԹերցուածն , պարտ է նմա յաւելուլ բանիւք , Օ՜այս ամենայն մեղս իմ խոստովանիմ : Այսպէս ուսուցանեն սատուածաբանք , ընդ որս և Վաասիլ , Վանոյ , Վոնչինա , Ամպրոսիոս , և Աալմատիկեանք : Իսկ որ ոչն կարող իցէ խոստովանել բանիւք , պարտ է նմա նշանացի կամ գրով յայտնել զմեղս իւր , եԹէ առանց վտանգի կամ ծանր նեղուԹեան կարասցէ , որպէս ասացաւ 'ի ստորև զՀամերոյ 'ի Թիւ 36 : Երկրորդ՝ պարտ է խոստովանուԹեան գոլ 'ի ծածուկ առանձինձառ . զի ոչ ոք պարտական է խոստովանել հրապարակաւ և ոչ Թարգմանաւ , բայց միայն եԹէ 'ի վտանգ մահու երկբայիցի ոք զկատարեալ զղջմանէ իւրմէ , որպէս ասացաւ դարձեալ 'ի ստորև :

28 • Երրորդ՝ պարտ է խոստովանուԹեան գոլ Ճշմարիտ . վասն որոյ սեղանակատուուԹեան մեղք են ստել 'ի ծանր ինչ ժխտելով կամ Թագուցանելով առանց

իրաւացի պատճառի մնայցու ինչ մեզս չև խոստովանեալ, և երբեմն ի խոստովանեալն՝ իսկ՝ որ իցէ կարևոր առ՝ի յայտնել զունակութիւն՝ի մեզս : Եղանչէ և որ աւելի ինչ խոստովանի չարութեամբ, կրկին մեզս դործելով ծանուցանս. ա՛ի՝ ընդդէմ կրօնից, Հինամանեալ զսուրբ խորհուրդն. և միւս ևս՝ ընդդէմ Հիմարտութեան, ի ծանր վնաս անձին : Առել ասեմ՝ի ծանր ինչ. զի ժխտել՝ի խոստովանութեան ներելի մեզս ինչ կամ զմոռացեալ խոստովանեալ, կամ այլ ինչ սուտ Թեթև ասել՝ չհամարի՝ի մնայցու մեզս, որպէս հաստատեն Աւարէզ, Սանքէզ, Լուկա, Պոնաչինա, Ռոնքալեա, Հոլզման և այլք՝ բաց՝ի սակաւուց ումանց :

29. Պարտ է խոստովանութեան գոլ և ամբողջ. այլ պարտ է աստ զանազանել զամբողջութիւն նիւթական՝ի տեսական ամբողջութենէ : Նիւթական ամբողջութիւն ըստ ինքեան կարևոր է՝ի խոստովանութեան, զի պարտ է ապաշխարողն բացատրել զտեսակ և զթիւ ծանուցեալ մեզաց : Բացաք՝ի վեր անդր (գլ. Դ.) ըզտեսակարար և զթուական զանազանութենէ մեզաց, և Թէ յորմէ արմատոց պարտ իցէ առնուլ զայն : Այլ խնդիր է աստ՝ Թէ զտեսակարարն ևեթ հանդամանս մեզաց պարտ իցէ խոստովանել, Թէ զծանրացուցիչս ևս :

Երիւակ կարծիք են զայսմանէ հաւանականք : Սոթոյ, Աւարէզ, Կոնէթ, Սանքէզ, Ռոնչինա և այլք հաւանին, զի որով պատճառաւ պարտ իցէ զտեսակարար հանդամանս մեզաց խոստովանել, նովին իսկ պատճառաւ պարտ է խոստովանել և զայն՝ որ ոչ սակաւ ծանրացուցանէն զմեզս : Լայման, Սիլվեր, Պուսեմ պաղ և այլք ևս զնոյն հաստատեն, այլ զհանդամանաց ևեթ՝ որ հայնի իսկական ամբողջութիւն մեզաց, որպէս զչափ գողնոյ, և զաստիճան ազգականութեան՝ի սիրծուԹիւնս. իբր զի այլազգ ոչ է մարթ խոստովանօղ առնել զատաստան զմեզաց : Իսկ երրորդ կարծիք հանրագոյն և հաւանականագոյն, զոր հաստատեն սուրբն Ընտոնինոս, սուրբն Պոնաւենթուրա, սուրբն Ռեմնարդոս սենացի, Սոթոյ, Լուկա, Բասիլիոսիալ, Պոնաչինա, Ռոնքալեա, Հոլզման, Ալֆոնսիկեանք և այլք, բոլորովին զներհակն ունին ընդ սուրբ Ընտունացոյն՝ որ ասէ. "Իսկ այլք զայնս ևեթ՝ի հանդամա-

նաց կարևոր համարին խոստովանել, որ այլ ինչ տեսակ մեղաց՝ ի վերայ յաւելուն. և այս հաւանականապէս է ,,: Այս ասա յաւելու. ,,Վասն որոյ շատ է քահանային ձանձրանալ զորքանութիւն, որ՝ ի տեսակէ մեղաց յառաջ գայ ,,:

Պատճառք այսր վարդապետութեան. նախ զի ժողովին տրիդենտեան ոչ այլ ինչ պարտ՝ ի վերայ գնէ խոստովանելոց բայ՝ ի հանգամանաց՝ որ փոխեն զտեսակ, ասելով զի խոստովանահայրն առանց դիտելոյ զայնս՝ չկարէ ուղիղ դատաստան առնել. ապա ըստ սրբոյ ժողովին՝ նոքօք ևեթ կարէ խոստովանահայրն դատել ուղիղ: Այրկրորդ՝ զի պարտք խոստովանելոց զծանրացուցիչ հանգամանս տակնուվրայ յոյժ զապաշխարողս՝ յաձախելով նոցա երկեցոյց զհանգամանաց լռելոյ, թէ գուցէ յաւելուցուն զծանրութիւնն մեղացն կամ թէ գուցէ ոչ բաւականապէս բացատրեալ իցէ նոցա զայնս: Այ երրորդ՝ որ զօրաւորագոյնն է, զի օրինք խոստովանելոց զծանրացուցիչ հանգամանս, որպէս ասեն Լուկոյ, Ռոնքալեա, Սալմանտիկեանք և կարդինալ Ամպերալինի, երկբայականք են. և ոչ ոք պարտական է երկբայական օրինաց հպատակել՝ որպէս ցուցաք՝ ի գլ. Ա. 33: Այս ոչ ինչ զօրէ ասել՝ թէ՝ ի կատարումն խորհրդոյ չկոչէ օրէն հաւանականաւ ևեթ կարծեօք վարել. զի զօրէ այն ուր զվաւերականութենէ խորհրդոյ խնդիր բանք, և ոչ թէ զամբողջութենէ. իսկ ատ չկոչ տալոյս զի առ վաւերականութիւն խորհրդոյն բաւէ տեսական ամբողջութիւն: Սակայն աղգ առնեն Լուկոյ, Վրասպրոխալ, Սալմանտիկեանք և այլք վասն գողութեան, զի թէպէտ և ապաշխարողն ինքնին չէ պարտական զորքանութիւն գողոնիցն բացատրել, բայց սոյնպարտ է խոստովանահօր հարցանել զայն վասն պարտուցն հատուցման, և վասն տալոյ կամ յապաղելոյ զարձակումն:

30. Պարտ իցէ խոստովանել զմահացու մեղս երկբայականս: — Պարտ է աստանօր բաժանել զնդիրն՝ ի գործականապէս և՝ ի բացասականապէս երկբայականս: Ա. առաջինն, այսինքն յորժամ հաւանական իցէ թէ գործել ուրուք զայնս և թէ չգործել, պարտ համարին խոստովանել Ա՝ երպէս, Հաբերտ և Վռնչինա, ասե-

լով թէ յերկբայականս պարտ է ունել զապահովապոյն ձանապարհ : Բայց այլք գրեթէ առհասարակ չընդունին զայս , իբր զի օրէն է վարել կարծեօք իսկապէս հաւանականօք , որպէս ցուցաք ՚ի վերոյ . (գլ. Ա. 32) . և առ կանոնն զապահովապոյն ձանապարհ ունելոյ , պատասխանեցաք զարձեալ անդ (35) : Ասէ որ յայնպիսում երկբայութեան անկանի ՚ի վտանգ մահու , որպէս աղգ առնեն Մանքէզ , Ալ Լուա , Հոլզման և այլք , պարտի գնել այլ ինչ ՚ի տոյժ մեղաց խոստովանել և ընդունել արձակումն , և կամ զղջանալ ՚ի վերայ ամենայն մեղաց իւրոց կատարեալ զղջմամբ :

31 . Իսկ զբացասականապէս երկբայականս , այսինքն զորս չիցէ մարթ ոչ հաստատել և ոչ ժխտել , հանրապետն կարծիք պարտ համարին խոստովանել , այսու զի ժողովն տրիդենտեան հրամայէ ապաշխարողաց խոստովանել զամենայն մեղս զորոց խղճեն : Յորմէ իմաստասիրեն և զմեզս երկբայականս խոստովանել , զի երկբայք են խղճի մտաց : Բայց Մերպես , Հաբերտ , Վրոնինքիոյ , Մարքանցիոյ , Հոլզման , Լաքուա , Մացոլիա հաւանականապոյն և զհակառակն հաստատեն , և զկարծիս նոցա հաւանական համարին Լայման , Ալ Լուա , սուրբն Ընտոնինոս , Լեսիոյ և այլք : Օ՚ի ժողովն սուրբ հրամայէ խոստովանել զամենայն մեղս , զորոց ապաշխարողն ունի գիտակցութիւն՝ այսինքն ստուգիւ ունի խիղճ : Օ՚ի յաւելու և անդ . “Ոչ այլ ինչ եկեղեցի պահանջէ յապաշխարողաց , բայց խոստովանել զայն մեղս՝ որոնք յիշէ մտաւոյժ զՈ՚ստուածն Հինամանեալ,, : Ասէ որ բացասականապէսն երկբայի զմեղաց ինչ , չհամարի յիշել նմա զայն մեղս : Ան դարձեալ որպէս ասացաքն ՚ի վերոյ , օրէնք անստոյգ չիաբեն ստոյգ պարտս ՚ի վերայ դնել . արդ զերկբայական մեղս խոստովանելոյ չիք ստոյգ ինչ օրէնք : Օնդն և վասն հաղորդելեաց է իմանալ , որպէս ՚ի վեր անդր ասացաք (գլ. ԺԵ . 34) :

32 . Բայց պարտ է խրատել սովորաբար զապաշխարողս , զի յաւուրս ելապոյն հանդարտութիւն խղճի մտաց խոստովանելոյն և զերկբայական մեղս . բայ ՚ի խղճահարաց , որպէս ասացաք (գլ. Ա. 11) : Յաւելուն և իմաստութեամբ Ալմատիկեանք , դասականք , Հա-

բերա, Պռնաչինա, Սայիրոյ, Լաբրուա և այլք, զի օրէն է երկիւղածաց՝ որ դուն ուրեք հաւանին ծանուցց մեզաց, չխղձել յերկբայելն իւրեանց Թէ հաւանեալ իցեն, կամ Թէ յարԹմնի իցէ լեալ հաւանել իւրեանց. զի որպէս Սալմատիկեանք և Նաբերա յաւելուն, անհնար է բարոյապէս կամաց՝ի բարւոյն հաստատելոց յեղաշրջել առանց բացայայտ գիտուԹեան մտաց։ Սակայն մեզք հրէշ լինի այնպէս սոսկալի է, ասէ Նայրն Աստուարէզ, որում չէ մարԹ մտանել՝ի հոգի՝ որ զարհուրին յայնմանէ, առանց իմանալոյ յայտնապէս զմուտս նորա։ Որպէս և ընդ հակառակն յերկբայել սովորելոց՝ի մեզս՝ պարտ է համարել զնոսա մեղուցեալս. զի ԵԹէ հակառակ մեղացն կացեալ էր նոցա, քաջ յիշէին զՔիւդն իւրեանց ընդդէմ փորձուԹեանն։ Ասատի քաջուրք իմաստասիրէ Լաբրուա, զի դժուարաւ մարԹ է պատահել՝ի մասինս յայսմիկ բացասական երկբայանոց, զի՝ի բարի կամ՝ի չար սովորուԹենէ օրէն է՝ի միտ առնուլ զՀաւանուԹիւն կամ զՀաւանուԹիւն նոցա։

33. Պարտ իցէ խոստովանել զմեզս, զոր ստուգիւ ուրուք գործեալ իցէ, և երկբայի Թէ չիցէ խոստովանեալ։ — ԵԹէ բացասական իցէ երկբայուԹիւն ուրուք, միաբանին աստուածաբանք առ հասարակ՝ զի պարտ է նմա խոստովանել զայն. իսկ եԹէ դրական, այսինքն զի հաւանականաբար կարծիցէ խոստովանեալ զայն, Աստարէզ, Նաւարրոյ, Պռնաչինա, ՍիլուեսԹրոյ, Վ Լուա, Լաբրուա, Սալմատիկեանք և այլք, ոչ պարտ համարին նմա խոստովանել զայն։ Բայց Նայրն Պռնչինա և այլք ոչ սակաւք զհակառակն հաստատեն, վասն մեզացն ստոյգ և խոստովանուԹեանն անստոյգ գոլոյ. և ստուրքն Ալփոնսոս յառաջադոյն զառաջնոցն կարծիս կալեալ, և ապա նահանջեալ զայն, զՆօրն Պռնչինայ կարծիսն հաստատէ։

Սակայն աստուածաբանք գրեԹէ առ հասարակ ազգ առնեն, զի որ միտաջանն լեալ իցէ՝ի խոստովանել զմեղս իւր, յերկբայել իւրում ապա զխոստովանուԹենէ իրիք յանցելոց մեզացն՝ ոչ է պարտական խոստովանելոց զայն, խոհականապէս համարելով խոստովանեալ զայն։ Եւ Նայրն Պռնչինա յաւելու, զի եԹէ ոք՝ի սո-

վօրելոյն ՚ի մեզս, զգաստացեալ՝ երկիւղածութեամբ վարել զկեանս իւր, և երկբայիցի մնասցեալ ինչ ՚ի մեզաց յընդհանրական կամ՚ի մասնական խոստովանութեան, պարտ է խոստովանահօր արդելուլ նմա մի և այս խորհել զանցեալն։ Իսկ խղճահարքը ըստ ամենեցուն իսկ առաւածաբանից վարդապետութեան չեն պարտական խոստովանելոյ ինչ՝ զոր չգիտիցեն հաւաստեաւ գործեալ և չխոստովանեալ. և ատուգութիւն այնպիսի պարտ է նոցա ունել, մինչև կարելոյ երկմամբ հաստատել զայն. որպէս ասացաք և ՚ի վեր անդր (գլ. Ա. 10)։

34. Որ խոստովանի ինչ երկբայանօք, ՚ի գիտենն զայն ապա առուգիւ՝ պարտական իցէ խոստովանելոյ անդրէն։ — Հոլման, Սիոռեր, Ճամպուրինի, Վասկէզ և այլք ոմանք ոչ պարտական գնա համարին, ընդ որ մեզքն այն արձակեալ է ուղղակի։ Այլ Ճիմարիտ և հանրական կարծիք աստուածաբանից պարտական համարին գնա. զի Թէպէտ և արձակեալ է այն ուղղակի, այլ ոչ որպէս ՚ի գործելն անդ էր ՚ի խիղճ մտաց ապաշխարողին և որպէս էն յայնժամ՝ այնպէս բացատրեալ ՚ի խոստովանութեան, ըստ սահմանելոյ տրիդենտեան ժողովոյ։

Ընդարձակն առ այս Թէ ուրեմն ոք խոստովանի ընդ տան անգամ գործեալ մեզս ինչ, և ապա յիշեցէ հաւաստեաւ մեռատան անգամ գործեալ, պարտական իցէ և նա վերստին խոստովանել։ — Պատասխանեմք զի անդ մակբայն էէր տայ իմանալ զաւելին և գնուաց. այլ մեզք երկբայական ոչ տան իմանալ զստոյգն։

Բայց Սուարէզ, Ռընինքիոյ, Սանքէզ, Ալմատիկեանք և այլք յաւելուն հաւանականաբար, զի եԹէ ոք ծանր ինչ մեզս խոստովանեացի որպէս և էն, այլ ոչ ինքն և ոչ խոստովանահայրն գիտիցէ զծանրութիւն նորա, ՚ի գիտենն ապա զայն՝ ոչ է պարտական անդրէն զայն խոստովանելոյ. զի անդ ապաշխարողն խոստովանի զմեզսն որպէս և է ՚ի խղճի մտաց իւրոց։

35. Յայտնապէս գնիւթական ամբողջութենէ. այլ երբեմն բաւէ իսկ տեսական ամբողջութիւն ՚ի խոստովանութեան, այսինքն յորժամ ապաշխարողն ոչափ ինչ առ ժամն բարոյապէս կարելի է՝ խոստովանեացի, պարտ յանձն առեալ խոստովանել գնիւթական ամբողջու-

Թեամբ՝ ի բառնալ խափանաց. զի՝ ի նիւթականս ամ-
բողջութենէ ազատ կացուցանէ զնական կամ բարոյա-
կան անկարողութիւն։ Նմանապէս անկարողութեամբ ա-
զատ են, նախ՝ համերգք, որոց Թէ՛ ի վտանգ մահու և
Թէ՛ ի զատկի բաւական է բացատրել նշանացն զմի
ինչ՝ ի մեզաց ըստ կարի։ Իսկ եԹէ պիտոյեն գրել
Թէպէտ և կէսք յաստուածաբանից ազատ համարին
զնոսա՝ ի գրելոյ՝ վասն վտանգին յայտնութեան, բայց
Լուկիոյ, Պոնաւէնտա, Նաքլեթոյ, Աբրուա, Սալմա-
տիկեանք և այլք ընդ սուրբ Ագուինացւոյն ըստ հան-
րագոյն և հաւանականագոյն կարծեաց պարտ համարին
նոցա գրել. զի որ պարտական է իմիք, պարտական է
և կարևորաց առ՝ի նոյն, իմա եԹէ չիցեն յոյժ դժուա-
րինք. վասն որոյ ոչ է պարտական համրն գրելոյ զմեզս
իւր, եԹէ ծանր նեղութիւն ինչ կամ վտանգ հասցէ
նմա՝ ի գրելոյ անտի։

Երկրորդ՝ ազատ են խուզք, որ չգիտեն բացատրել
զմեզս իւրեանց որպէս պարտն է, և գՀարցմունս խոս-
տովանաւորն չլսեն. իմա զբոլորովին խուզս, զի ծանրա-
լուրք պարտին յառանձին ուրեք տեղւոջ խոստովանիլ,
առ՝ի լսել զբարձրաձայն բանս խոստովանաւորի։

Երրորդ՝ այլալեզուք, որք՝ ի զատկի կամ՝ ի ստիպել
այլոց իրիք հարկի չգտանեն խոստովանաւոր՝ որ լսիցէ
զնուրեանց բարբառ՝ կարեն զգեղջ իւրեանց և զմի ինչ
՝ի մեզաց նշանացի յայտ առնել, և ոչ է պարտ նոցա՝
որպէս ոմանք համարին՝ Թարգմանաւ խոստովանել։
Իսկ՝ ի վտանգ մահու կէսք պարտ համարին, և կէսք
հաւանականաբար ոչ՝ եԹէ իցէ նոցա զգջումն կատա-
րեալ. զի յերկբայել նոցա ընդ զգջումն իւրեանց, պարտ
է նոցա Թարգմանաւ խոստովանել վասն ընդունելոյ
զնորհս՝ ի ձեռն խորհրդոյն. այլ յայնժամ շատ է նո-
ցա զմի իսկ՝ ի ներելն մեզացն Թարգմանաւ յայտ առ-
նել խոստովանահօրն։

Չորրորդ՝ հիւանդք՝ ի հոգեվարս, այլ պարտ է զա-
նազանել զնոսա։ ՆեԹէ՝ ի զգաստութեան իցէ հի-
ւանդն՝ այլ չկարիցէ խօսել՝ ի տալ նորա նշան զղջման
և՝ ի խնդրել նշանացի զարձակումն, օրէն է արձակել
զնա քանիցս և խնդրեսցէ. զի է իսկ խոստովանութիւն
՝ի խնդրուածս նորա կամ՝ ի ցոյց զղջման, որով զանձն

խոստովանի մեղաւոր, վասն որոյ և ուղղակի ընդունի զարձակումն համօրէն ամենայն մեղաց, մնալով միշտ պարտական խոստովանելոյ զմի մի յայնցանէ՝ ի լուծանել կապանաց լերզուին, առ՝ ի նիւթական ամբողջութիւն խոստովանութեան։

36. Իսկ եթէ հիւանդն ինչ անզգայեալ, և վկայեսցեն այլք խնդրելոյ նորա խոստովանել և տալոյ նըշանս զղջման, թէպէտ և ոմանք ոչ օրէն համարին արձակել զնա՝ որպէս Կանոյ, Լետիսմա, Ալբերիկ և այլք, այլ հանրական կարծիքն պարտ համարին արձակել. զի խոստովանութիւն նորա՝ ի ձեռն վկայից բաւականապէս՝ ի յայտ գոյ խոստովանահօրն։ Ոմն հասատատ և սուրբ Գուլիելմոյին յասէ. "Եթէ հիւանդին՝ որ խնդրէ զօծումն՝ կորուսեալ իցէ զզգայութիւն և զբարբառ, պարտի քահանայն օծանել զնա. զի յայնպիսի դէպս պարտ է և միրտել և արձակել՝ ի մեղաց"։ Եւ յաւելու սուրբն Գնտոնինոս հաստատել զնոյն, թէպէտ և հիւանդն ունակացեալ՝ ի մեղս իցէ և՝ ի բազում ամաց անխոստովան։ Ոնոյն սահմանեն և Կարթագինեան երրորդ և չորրորդ, և արաւսեան ժողովք, և սուրբն Լեւոն Հռոմայեցի հայրապետ։ Վասն որոյ Լուկոյ, Լաքրուա և այլք պարտ համարին արձակել և ըստ միոյ ուրուք եւեթ վկայութեան, և եթէ չիցէ խոկ ինքն լեալ ականատես՝ այլ՝ի լըոյ վկայից տալոյ հիւանդին զնշան զղջման։ Եւ արձակումն իմա անսպասման ըստ հանրագոյն կարծեաց, ուր իցէ հաւանականութիւն վաւերականութեան նիւթոյն. իսկ ուր երկբայելի եւեթ իցէ, պարտ է պայմանաւ տալ զարձակումն։ Անդէպէտ և Ռուարիկ, Պանաչինա և սուրբն Գնտոնինոս, ուր իցէ և հաւանականութիւն վաւերականութեան նիւթոյն, պայմանաւ պարտ համարին արձակել. մանաւանդ ուր չհանդամանաց զղջմանն մարթ իցէ երկբայել ըստ տգիտութեան հիւանդին։

37. Ոչն իցէ արձակել պայմանաւ և զհիւանդ՝ ի հոգեվարս անզգայեալ, որոյ չիցէ տուեալ նշան ինչ զղջման։ — Ոմանք յաստուածաբանից ոչ օրէն համարին. բայց հանրական կարծիքն յոյժ հաւանականաբար պարտ համարին արձակել զնա, զոր և սուրբն Անտոնինոս հաստատէ։ Այլ՝ որ իցէ յայնժամ նիւթ ապաշ-

խարուեձեան խորհրդոյ։ — Ոչ պայմանեալ արձակումն ոչ խնդրի նիւթ ստոյգ. իսկ ի նիւթ երկբայական մարթի ել համարել, զի հիւանդին զղջացեալ նախ քան զանզգայել, և կամ յանզգայուեձեան իսկ անդ առ վայր մի յինքն եկեալ, յահէ դատապարտուեձեան խնդրեցէ զարձակումն հառաչանօքն և շրջշրջելով աչացն և շրթանց. զի ձեպէտ և այսոքիկ չցուցանեն ինչ հաւատեաւ զղջումն, այլ երկբայուեիւն ևեթ զղջման բաւէ յայնժամ առ ի տալ արձակումն պայմանաւ. զի ի ծանր հարկի բաւական է և նիւթ երկբայելի ի խորհուրդս, որպէս ընդունին աստուածաբանք։ Ապանաւանդ զի օրէն է յայնժամ և դոյզն ինչ հաւանական կարծեօք վարել ըստ հանրական կարծեաց աստուածաբանից. զի հարկ՝ օրինաւոր առնէ և յերկբայս կատարել պայմանաւ զխորհուրդս. քանզի պայմանն այն յապահովէ յանարգանաց զխորհուրդն ի տնօրինել անդ զՀնարս փրկուեձեան հոգւոց։

Վասելի է ասա զի պարտ է քահանային ընդ ծանր մեղաւք՝ արձակել զհիւանդս ի վտանգ մահու, որպէս աստուածաբանք առ հասարակ ուսուցանեն և որպէս ի կանոնս Յուլիոսի քահանայապետի սահմանի. «Ապահանայ, որ չկամիցի ընդունել զապաշխարուեիւն հիւանդացն ի հոգեվարս, պարտաւոր լինի հոգւոց»։ Այս ընդհակառակն ազդ առնէ Ալոնքալեա վասն հիւանդացառ հասարակ ի հոգեվարս, զի չէ պարտ ստեպ կրկնել զարձակումն առանց ցոյցս ինչ վերստին զղջման տեսանելոյ ի նոսա, զի գադարէ յայնժամ հարկ արձակման. և եթէ տեւէ ընդերկար անզգայուեիւն հիւանդին, բաւական է երիցս կամ չորիցս ի միում աւուր տալ նմա զարձակումն։

38. Որքո՞ն ինչ արձակել պայմանաւ զանզգայեալն անդէն ի մեղս, զոր օրինակ ի մենամարտիկն կամ ի հնալ։ — Հաբերտ, Կոնէք, Լուվենին, և Վոնչինա ոչ օրէն համարին. բայց այլք ոչ սակաւք պարտ համարին արձակել պայմանաւ ըստ նմին երկբայուեձեան զոր ի վեր այսր ասացաք, զի ուղղափառ քրիստոնէի մարթ իսկ է ի վտանգ մահու ի մի կէտ ժամանակի գալ ի զեղջ յերկիւղէ դատապարտուեձեան։

39. Ներոյական անկարողուեձեամբ ազատ են զար-

ձեալ՝ ի նուէիական ամբողջութենէ խոստովանութեան և խղճահարք՝ որք տագնապին միշտ ահիւ թերութեան անցելոց խոստովանութեանցն, որպէս ուսուցանեն [այ]մանն [ա]լեկ, [հ]ոլմանն և այլք։ [Ա]զատ են և հիւանդք, որոց չեա զմեզս ինչ իւրեանց խոստովանելոյ՝ հասանէ վտանգ նուազմանն։ [Ա]զատ և նոքա, որք յածել քահանային զսուրբ Թոշակն՝ չայտ առնեն անվաւերս լեալ զառաջինն խոստովանութիւնն, և չիցէ նոցա մարթ յայնժամ կրկնել զայնոսիկ առանց վտանգի կանխելոյ մահուն իւրեանց քան զարձակումն, կամ առանց գայթակղութեան՝ որպէս ասացաք ի վեր անդր (գլ. ԺԵ. 24)։ [Ո]նոյն հաստատէ [Ա]ռնքալեա և ի ստիպել հարկի պատարագելոյ կամ հաղորդելոյ, ուր չիցէ ժամանակ կատարելոյ զխոստովանութիւն։ [Ո]նոյն է ասել և ընդ քահանայէ՝ որոյ իցեն ինչ մեղք վերապահեալ, և ի ստիպել հարկի պատարագելոյ՝ չգտանիցի խոստովանահայր, որոյ իցէ իշխանութիւն արձակելոյ զնա. որպէս ի նախորդ գլուխդ ասացաք (27)։ [Կ]արձեալ եթէ խոստովանահայրն կայցէ ի վտանգի մեռանելոյ չև արձակեալ զապաշխարողն։ [Ա]ւ գարձեալ ի ժամանակի սրածութեան, յորժամ վտանգ է խոստովանահօր ըմբռնելոյ յախտէն, օրէն է նմա ի լսել զմի ինչ ի մեզաց՝ տալ զարձակումն, որպէս հաստատեն [Վ]ոնէլինա, [Պ]ոնաչինա, [Ա]ղելլի և այլք. այլ յայնժամ եթէ խոստովանահայրն յանձն առցէ լսել ամբողջ զխոստովանութիւնն, պարտ է հիւանդին կատարել զայն։ [Կ]արձեալ և ի վտանգի նաւաբեկութեան և ի պատերազմի՝ մի ինչ ի ներելն իսկ մեզաց շատ է խոստովանել կամ մեզաւոր զանձն դատանել առանց յայտնի ինչ խոստովանելոյ, և օրէն է քահանային արձակել զամենեսեան ի միասին՝ յորնակի ձևէն ասելով [ա]ս ա[բ]ս[ո]լ[վ]ե զձեզ և այլն։ [Ա]յլ յայնժամ եթէ ապաշխարողացդ առանց այլոյ իրիք հարկի՝ ոչ է բաւական պատճառ համառօտելոյ զխոստովանութիւնս. զի զհակառակն սորին Թիւր վարդապետութիւն դատապարտեաց [Ի]նոմովկենտիոս ԺԱ։

[Ա]ւ գարձեալ եթէ յիրաւի վտանգ իցէ հոգևոր կամ մարմնաւոր ծանր ինչ առաւս անձին կամ այլոյ ի խոստովանութենէ մեզաց ինչ, օրէն է լսել զայն. այլ զայս

խնա ՚ի ստիպել հարկի խոստովանութեան ՚ի վտանգ մահու կամ զառակական հաղորդութեան, և կամ եթէ ապաշխարողին հասանէ կալ ՚ի մահուչափ մեղս զաւուրս ինչ, և կամ մի իսկ օր, որպէս ասեն Ալուարեզ և Խոքսարա։ Այս առաւել եթէ չիցէ մարթ խոստովանել ինչ առանց լուծանելոյ զկնիք խոստովանութեան։

40. Ամենք ՚ի բարոյականաց օրէնս համարին ապաշխարողն լռել և զմեղս, յորմէ ՚ի յայտ գայ անձն մեղսակցին. իբր զի պարտ է նախադասել զբնական օրէնս չքնաւելոյ ընկերին քան զդրական պատուիրան ամբողջ առնելոյ զխոստովանութիւն։ Այլ հանրական կարծիք աստուածաբանից մերժէ զայն. զի յայտնել զմեղս այլոց վասն օրինաւոր պատճառի՝ ոչ է մեղք. և զի դարձեալ մեղսակիցն կորուսանէ զիրաւունս իւրոյ համբաւոյն ըստ մասին խոստովանութեան այնր մեղաց, զոր գիտէ իսկ՝ եթէ պարտ է առնել։ Այլ ՚ի խոստովանութիւն ծանուցանց և եթէ մեղայ օրէնն է յայտնել զծանր մեղս ուրուք, և ոչ ՚ի խոստովանութիւն ներելեաց կամ մահացուաց խոստովանելոյ, որպէս ուսուցանեն Ասկոյ, Ալանքալեա, Վիւա, և Ղամպուզինի։ Զի ՚ի խոստովանել իսկ զմահացու մեղս պարտ է ապաշխարողին ինդրել այլ խոստովանահայր, որում անծանօթ իցէ անձն մեղսակցին, եթէ կարիցէ առնել զայս առանց հոգևոր կամ մարմնաւոր ծանր նեղութեան։ Վասն որոյ չէ պարտական որ սկսեալն իցէ խոստովանել քահանայի՝ որ ձանձրէ զմեղսակիցն. կամ որ պարտի պատարագել կամ հաղորդիլ. կամ որ ոչ գտանէ անդ դիւրաւ այլ խոստովանահայր. կամ որ դժուարաւ կարէ այլուստ զնիդձ իւր յայտնել. կամ որ պարտի յապաղել վասն այն զխոստովանութիւն իւր և մի իսկ օր՝ կալով ՚ի մահուչափ մեղս, և այլն։ Դարձեալ ներելի է մարդ և կանանց յայտնել ՚ի խոստովանութեան զմեղս որդւոց և արանց, զի օգնէ այն ընդունելոյ ՚ի խոստովանահօրէն խրատ զգուշութեան։ Ըստ համառօտիւ, եթէ որ գտանէ զխոստովանութիւն հոգւոյ ՚ի յայտնելն զայն խոստովանահօր իւրոյ և կամ այլ ումեք կամ այնմ քահանայի. զի որպէս ՚ի վեր անդր ասացաք (գլ. ԺԱ. 11). ըստ բաղմաց երևելի աստուածաբանից ոչ ծանր ինչ մեղք են անպատճառ իսկ յայտնել զմեղս ուրուք խո-

հականի ումեք անձին, ապա և ոչ ներելի մեղք են՝ ուր իցեն պատճառք։

41. Դայց Թէպէտ և օրէնն է ապաշխարողն վանն ասացեալոցս պատճառաց յայտնել զանուն մեղսակցին, այլ ոչ երբէք օրէնն է խոստովանահօր հետաքննել զայն, և ոչ վանն օգտի նորին, և ոչ առ՛ի խափանել զչարիս։ Կանգղ Կենեդիկտոս ԺԴ մահացու մեղս յայտ առնէ զայն, և անկուճն՛ի պաշտամանէն սահմանէ՛ի պատիժ խոստովանահօր այնպիսւոյ վճռելի դատակնքաւ, և անկանել՛ի բանադրանս նովին իսկ գործով որ հակառակ այսմ վարդապետութեան իշխեսցէ ուսուցանել։ Յաւելու և պարտ՛ի վերայ դնել ամենայնն, քաց յապաշխարողաց, յայտնել՝ եթէ գիտիցեն՝ զի ուրուք՛ի խոստովանահարց չիցէ արձակեալ զապաշխարողն վանն չյայտնելոյ նորա զմեղսակից իւր։ քայց միայն եթէ չիցէ նորա պարզմտութեամբ սխալեալ։

Ակայն որպէս Հայրն Կոնչինա ազգ առնէ, ոչ արդելու այս հետաքննել խոստովանահօր զհանգամանս՝ որ վիճակեն զտեսակ մեղաց, կամ կարևորք են՛ի գիտութիւն վանն ուղղելոյ զինացս ապաշխարողին։ Ա՛ստն որոյ օրէնն է խոստովանահօր հարցանել զաստիճան ազգականութեան մեղսակցին՛ի պղծութիւնս, և զպայմանս կենաց նորա՝ եթէ իցէ ուխտիւ ողջախոհութեան նուիրեալ Աստուծոյ, եթէ իցէ աղախին՛ի տան անդ բնակեալ և այլն։

Յաւելու Հայրն Ա՛ացցոլեթա զի պարտ իսկ է ապաշխարողն յայտնել զմեղսակից իւր, եթէ զծանուննց չարեաց մերթ իցէ խոստովանահօրն առնուլ զառաջի գիտութեամբ նորին։ Որպէս զի անընդունակ է արձակման՝ որ չկամիցի յայտնել զմեղսակից իւր՛ի ծանր ինաս հասարակաց. այլ և յայնժամ չէ օրէնն խոստովանահօր ստիպել զապաշխարողն յայտնել զայն ինքեան, այլ որում կարող իցէ խափանել զչարիսն։ Եթէ եթէ յայնժամ յօժարեսցի ապաշխարողն նովին ինքեան խոստովանահօրն յանձնել զայն հոգ՝ յայտնելով նմա զմեղսակիցն, օրէնն է նմա յանձն առնուլ՝ այլ ոչ և յօդուտ. զի զժուարաւ յաջողէ խոստովանահարց առանց գայթակղութեան և զժպհի առնելոյ զսուրբ պաշտօնն՛ի կիր արկանել զծանօթութիւն ընկալեալ՛ի խոստովանութեան։

ՅՕԴՈՒԱԾ Ե

ՅԱՂԱԳՍ ԱՆՎԱՒԵՐ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ, ԵՒ ԹԷ Ո՞ՐՊԷՍ ՊԱՐՏ ԻՑԷ ՎԱՒԵՐԱՑՈՒՑԱՆԵԼ ՋԱՑՆ

42. Խոստովանութիւն անվաւեր՝ ի կողմանէ խոստովանահօր:
43. Ի կողմանէ ապաշխարողին. և մեղսակից՝ ի պղծութիւն:
44. Ո՞րպէս պարտ էցէ զխոստովանութիւնն անվաւեր վաւերացուցա-նել առ նմին խոստովանահօր, և թէ շահ էցէ յիշատակել նմա զսահմանեալ ապաշխարանսն:
45. Յաղագս ոմանցն և տգիտի, որոյ չէցէ ոչ գտեսակ և ոչ գթիւ քա-ցատրեալ:
46. Ե՞րբ զխոստովանութիւն պարտ էցէ երկրորդել:

42. Ա՛արդ է խոստովանութեան գոլ անվաւեր՝ ի կողմանէ խոստովանահօր, կամ՝ ի կողմանէ ապաշխա-րողին: Ի կողմանէ խոստովանահօրն, նախ՝ եթէ չէցէ նորա իրաւասութիւն: Երկրորդ եթէ սխալէ կամ թերի առնէ գարձակումն: Երրորդ՝ եթէ չէցէ նորա լուեալ և ոչ մի ինչ՝ ի մեղաց ապաշխարողին. Ի՞նչ ոչ ինչ ասեմ, զի եթէ գնթ զմի ինչ էցէ լուեալ՝ վաւեր է արձակումն ընկալեալ անգիտութեամբ յապաշխարո-ղէն. բայց միայն՝ ի գիտել զայն ասպա, պարտ է նմա վերստին խոստովանել զմեղսն չլուեալս՝ ի խոստովանա-հօրէն: Իսկ եթէ գիտութեամբ ընդունի զարձակումն՝ զգայեալ զի չլսէ քահանայն, կամ նիրհէ, կամ տգէտ է, կամ չըմբռնէ զծանրութիւն մեղացն, կամ գիւրա-և զանպատրաստ արձակէ, մեղանչէ խոստովանու-թեամբն իսկ, և անվաւեր է խոստովանութիւն իւր աներկբայապէս: Բայց եթէ յետ խոստովանելոյ զմեղսն՝ զգայ զի քահանայն զմեղս ինչ իւր չէցէ լուեալ, առանց գիտելոյ զնոսա, ըստ հասարակաց վարդապետու-թեան աստուածաբանից պարտի կրկնել զխոստովա-նութիւնն՝ եթէ էցէ համառօտ. իսկ եթէ երկայն է-ցէ, ոչ է պարտական երկրորդելոյ զայն այնքան նեղու-թեամբ վանն ամբողջութեան: Յաւելուն Սոթոյ, Սուարէզ, Վասթրոփալ, Լուկոյ, Սալմատիկեանք և այլք, զի որ առանց նենգամտութեան խոստովանի քա-հանայի տգիտի՝ որ չգիտէցէ զանապանել զթիւ և զտե-

սակ մեղաց, վասնզի է խոստովանութիւն նորա։ Այլ միայն եթէ չկոչէ Տողեաւ ինչ՝ի բաց, և անձնիւրն զխոստովանութիւն իւր կոչէ արտրեալ. ապա թէ ոչ, պարտ է նմա ընդ զնիւրն. զի Թէպետ և վաւերական կոչ լեալ առաջինն խոստովանութիւն իւր, գտանի անվաւեր երկրորդն՝ յորում զիտութեամբ չընդ զնիւրն։

43. Իսկ՝ի կողմանէ ապաշխարողին անվաւեր է խոստովանութիւն, նախ՝ եթէ կոչ բանադրեալ։ Երկրորդ՝ եթէ նենգաւ կամ մեղադրելի անհոգութեամբ լռէ ինչ՝ի ծանունց մեղաց իւրոց։ Երրորդ՝ եթէ չկոչ նորա զղջումն և առաջադրութիւն ըստ օրինի, մանաւանդ եթէ չկամի հատուցանել զինչս կամ զպատիւ կամ զհամբաւ ընկերին, և կամ եթէ չառնու յանձն յետս կալ՝ի մերձաւոր և՝ի կամաւոր վտանգէ մեղաց։ Չորրորդ՝ եթէ խոստովանի մեղսակցին զմարմնական մեղս իւր. զի Ներեդիկտոս ԺԴ բառնայ զամենայն իշխանութիւն խոստովանահօր՝ի մասինս յայսմիկ, մինչև չկարել նմա և՝ի վտանգ իսկ մահու արձակել զմեղսակից իւր՝ի զղջախոհութիւն, եթէ կոչ այլ ոք՝ի քահանայից իսկ՝ որոց չկոչ իշխանութիւն արձակելոյ. և որ արձակէն զմեղսակից իւր, անկանի՝ի բանադրանս վերապահեալ Պապին, որպէս մինչ մեզ ասել զայսմանէ լինի՝ի տեղւն (95)։

44. Ո՞ւ որպէս պարտ կոչ կրկնել զխոստովանութիւն անվաւեր առ նոյն խոստովանահայր։ — Գիտելի է զի՝ի յապաղել խոստովանահօր զարձակումն՝ չկոչ կարևոր յիշել նմա բացայայտակի զմեղս ապաշխարողին, և կամ տալ երկրորդել զխոստովանութիւնն. շատ է զի յիշեսցէ ընդ աղօտ զհանգամանս ապաշխարողին, որպէս ուսուցանեն աստուածաբանք առհասարակ։ Այլ աստ խնդիր է թէ բաւական կոչ աղօտն այն յիշատակ և վասն կրկնութեան անվաւեր խոստովանութեան։ — Հայրն Սուարէզ և Վոնինքիոյ բաւական համարին զայն, եթէ խոստովանութեանն անվաւերութիւն յառաջ գայցէ՝ի թերութենէ խոստովանահօր՝ի պաշտամանն իւրում, որպէս եթէ չկոչ տալեալ նորա զարձակումն և կամ առանց իրիք դիտաւորութեան տուեալ. այլ ոչ յորժամ յառաջ գայցէ այն՝ի թերութենէ պատրաստութեան ապաշխարողին,

կամ իրաւասութեան խոստովանահօրն. զի խոստովանութիւնն այն ոչ եւս է խորհրդական վասն սրբասպրդծութեանն կամ անպատկանաւորութեան պաշտօնէին: Յաւանական է վարդապետութիւնս այս, այլ հանրական և յոյժ հաւանական հակառակն սորին՝ զոր հաստատեն Լաւարրոյ, սուրբն Ընտոնինոս, Ալիւեսթրոյ, Ազատէզ, Ռուկոյ, Այման, Ասլաս, Պոնաչինա, Ձամպուրինի, Ուերտա, Տաբրուա, Ասլմատիկեանք, և այլք բազումք. որք, ուստի և յառաջ գայցէ անվաւերութիւն խոստովանութեանն, ոչ ինչ կարևոր համարին երկրորդել զայն՝ այլ միայն դաւանել ապաշխարողին պարտաւոր զանձն ամենայն մեղացն խոստովանելոց, և խոստովանահօրն յիշել եթէ զհանգամանս ապաշխարողին, կամ թէ շատ՝ առնուլ անդրէն աղօտ ինն ծանօթութիւն զկղզի մտաց նորա: Բայց առաջինն խոստովանութիւն նորա ոչ էր պարտ պատմութիւն, այլ իսկապէս խորհրդական պարտս կնքոյ՝ ի վերայ ածելով խոստովանահօրն: Իսկ եթէ չիցէ իսկ այն լեալ խորհրդական, սակայն ապաշխարողին վերստին զանձն պարտաւոր այնոցիկ դաւանել, և խոստովանահօրն կանխակալ այնոցիկ ծանօթութիւն, բաւական համարի վաւեր և ամբողջ կացուցանելոց զայն:

Բազում երևելի աստուածաբանք յաւելուն եւս, զի ապաշխարողին զխոստովանութիւնն զայն վասն ընդունելոյ զարձակումն առնելով՝ ոչ միայն աղօտ եթէ նորին յիշատակ բաւէ խոստովանահօրն առ՝ի տալ զարձակումն, այլ բաւէ և ապաշխարանացն եթէ յիշատակ՝ յորմէ կարէ նա դատել զհանգամանս ապաշխարողին:

45. Ո՞ան ոմանքին և մանկտուց, որոց միշտ անդիտութեամբ առանց բացատրելոյ զթիւ և զտեսակ մեղացն լոկ խոստովանեալ, Ձամպուրինի և Հայրն եւս Ենկինէրի ոչ պարտ համարին տալ նոցա վերստին խոստովանել: Բայց Ռուկոյ, Լաւարրոյ, Պոնաչինա, Ասլմատիկեանք և այլք ոչ ընդունին զայն, պարտ համարելով նոցա լնուլ զթերին խոստովանութեան իւրեանց՝ ի ձանաչելն զայն. զի թէպէտ և խոստովանութիւնք նոցա վաւերականք իցեն լեալ, սակայն թերի ըստ նիւթականն ամբողջութեան՝ զոր պարտ է նոցա կատարել: Բայց եթէ ուրուք միօրինակ իցեն լեալ կեանք, նոյն-

չափ և նոյնպիսի մեղօք, օրէն համարին խոստովանահօր ըստ միոյ այնմիկ խոստովանութեանն գատել և զամենայն կեանս նորա, եթէ միայն զմեղաց խոստովանութեանն այնորիկ ունիցի օրէշ և բացայայտ յիշատակ։ Ապա որոյ սուրբն Ղևոնտոս կարևոր համարի գիտել խոստովանահօրն՝ ի սկզբանէ այնր խոստովանութեան զանցելոց խոստովանութեանցն անվաւերականութիւն. զի թէպէտ և բաւական է նմա վասն արձակելոյ զապաշխարողն ունել աղօտ և եթէ գիտութիւն զհանգամանաց խզձի նորա, այլ կարևոր է զի լուեալ իցէ միանգամ ողջ ողջ զբեղս նորա յանուանէ, որպէս և մնաշտոցն մեր ասէ, և արարեալ զայնցանէ Ճշգրիտ գատաստան։

46. Ապա բարւոք ազգ առնեն աստուածաբանք գրեթէ առ հասարակ և Հայրն իսկ Անդրէաս, զի յերկբայս ոչ է պարտ տալ կրկնել ապաշխարողաց զխոստովանութիւնս, զի ցորչափ չիցէ հաւաստի անվաւերականութիւն նոցին՝ իրաւունք՝ ի հակառակ կուսէն է, և վաւերականք համարին։ Եւ ոչ զօրէ ինչ ասել՝ զի ուր գուցէ ստոյգ պատուիրան, և կատարումն նորին իցէ երկբայական, իրաւունք՝ ի կողմն պարտականութեան է։ Օ՛ի զօրէ այդ՝ եթէ կատարումն պատուիրանին չիցէ՝ ի գործ եղեալ. իսկ յորժամ ատուդիւ եղեալ է՝ ի գործ, և զգօրութենէ ևեթ գործոյն է երկբայութիւնն, իրաւունք՝ ի կողմն զօրութեան նորա է ըստ առաձին՝ Հոմարտ՝ զօրութեան գործոյն յաղնէ հոմարմանց այս ինքն երկբայութեանց։ Իսկ յաղագս պարտուց կրկնելոյ զխոստովանութիւն գեղեցիկ ինչ կանոն տայ Հաբերտ. եթէ ապաշխարողն յետ խոստովանութեան փախչի՝ ի վտանգաց մեղաց, և գնէ առ ժամանակ մի զգիմ ունել փորձութեանց, վաւերական համարի զխոստովանութիւնս նորա։ Իսկ եթէ սուղ ինչ յետոյ ընդհանդիպել վտանգի դիւրագայթ գտանի որպէս յառաջն, չարոյ է նշան. զի որ իսկապէս զղջացեալ է և առաջադրեալ փոխել զվարս, անկարելի է նմա այնպէս դիւրաւ անկանել՝ առանց տևելոյ գնէ առ ժամանակ մի՝ ի բարւոք առաջադրութեանն, և կամ գնէ առանց գուն գործելոյ զգիմ ունել փորձութեանն։ Ապա որոյ եթէ ոք զկետ խոստովանութեան անկանի որպէս յառաջն առանց Ճիգն ընդդիմ փորձութեանց գործելոյ,

բարոյական ստուգութեամբ յայտ է՝ զի անվաւեր լեալ են խոստովանութիւնք նորա առանց զղջման և առաջադրութեան։

ՅՕԴՈՒԱԾ Զ

ՅԱՂԱԳԱՍ ԱՊԱՇԽԱՐՈՒՆԱՑ

47. Պարտք խոստովանահօր սահմանելոյ ապաշխարանս. եթէ չիտ արձակման սահմանեսցէ։
48. Պարտ է սահմանել զայն որպէս պարտս։
49. Ե՞րբ օրէն իցէ թեթևացուցանել զայն. և յաղագս հիւանդաց։
50, 51. Յաղագս խօթամտաց։
52–54. Որպիսի ապաշխարանս պարտ իցէ սահմանել։

47. Նայց թէպէտ և Թողութիւն մեղաց լինի ապաշխարողին, այլ ոչ միշտ և պատժոյ՝ զորս մնայ նմա հատուցանել։ Վասն որոյ երբորդ մասն խորհրդոյ ապաշխարութեան է ապաշխարանքն. որ չհամարի եւս կան մասն խորհրդոյն, զի առանց այնր իսկ մարթ է նմա գոլ վաւեր. այլ ամբողջական մասն, զի է լրումն խորհրդոյն։ Պարտ է ապա խոստովանահօր յարձակել զապաշխարողին՝ սահմանել ապաշխարանս ըստ չափոյ առնելոց տրիդենտեան ժողովոյն. և եթէ չսահմանիցէ, ծանր մեղս գործէ՝ եթէ մահացու մեղաց իցէ խոստովանութիւնն. իսկ եթէ ներելեաց կամ մահացուաց վաղ իսկ խոստովանելոց, հաւանական է չմեղանչել նմա ծանր, որպէս համարին Լուկից, Ածցոլիթա, Ալֆոնսիկեանք և այլք։ Նա եթէ ապաշխարողն իսկ և իսկ զհետ արձակման այլ ինչ մեղս խոստովանեսցի, պարտ է յաւելուլ նմա նոր ապաշխարանս, և չէ բաւական՝ որպէս ումանք համարին՝ զնոյն ապաշխարանս վերըստին հաստատել։ Օ՛ի թէպէտ և օրէն է զղործ հրամայել սահմանել՝ի կատարումն այլոց հրամանի, որպէս յառաջագոյն ասացաք և գործել ասելոց եւնք, այլ ոչ և զգործ վասն նոյն իսկ ապաշխարանաց հրամայել։ Նոյնպէս կանոնի յառաջ քան զարձակումն պարտ է սահմանել զապաշխարանս, առ՛ի դատել զյօժարութիւն ապաշխարողին. այլ մարթ է և իսկ և իսկ զհետ արձակմանն սահմանել, վասն բարոյապէս ընդ նմա կը-

ցորդութեանն, որպէս ասեն Ալբա, Տիանա, Պա-
սեմպայ, Սիորեր, Աալմատիկեանք և այլք:

48. Պարտ է խոստովանահօր սահմանել միշտ ա-
պաշխարանս որպէս պարտ. այլ օրէնն իցէ նմա ճշմարտ
ինչ ապաշխարանս սահմանել՝ ի թեթև պարտս: — Ա-
նարատոյն և հաւանականագոյն կարծիք օրէն համա-
րին. զի ասա քահանայն ոչ որպէս յայլ խորհուրդս
պաշտօնեայ Աեթ Քրիստոսի է, այլ Աչմարիտ դատա-
ւոր կացուցեալ՝ի Քրիստոսէ՝ իշխանութեամբ կապե-
լոյ և արձակելոյ. և մանր կապանաց է ապաշխարանքն,
վասն որոյ և թեթևութիւն և ծանրութիւն պարտուց
կատարելոյ զայն՝ յիշխանութիւն խոստովանահօր է ա-
պաստան:

49. Պարտ է ապաշխարանաց գոլ համեմատ մեղաց
ապաշխարողին, ըստ սահմանելոյ տրիդենտեան ժողո-
վոյն՝ որ՝է հոփեաէրոՒնէան և՝է խոհեմՈՒնէան խոստովա-
նահօր ապաստան առնէ զայն: Ալ ասի որոյ օրէն է թե-
թևացուցանել ըստ պատճառաց զապաշխարանս. և
նախ՝ եթէ ապաշխարողն իցէ զղջացեալ յոյժ, կամ ինք-
նին իսկ յառաջագոյն ապաշխարանս՝ի կիր առեալ: Ներ-
դործ՝ յաւուրս յոբելինի կամ լինակատար ներողութեան.
այլ միշտ պարտ է սահմանել ինչ և յայնժամ ապաշ-
խարանս ըստ յայտարարութեան Բենեդիկտոսի ԺԴ,
ոչ միայն վասն անստուգութեան ընդունելոյ զլինակատար
ներողութիւնն, այլ և վասն ամբողջութեան խորհըր-
դոյն: Ասկ որ ինչ բժշկական ապաշխարանաց պէտք ի-
ցեն ապաշխարողին, յայնցանէ չէ ինչ օրէն պակաս առ-
նել, որպէս նմանութեամբ ազգ առնէ Հայրն Ա՝ած-
ցոմիթա: Ներդործ՝ եթէ հիւանդ իցէ ապաշխարողն,
զի չկարէ ապաշխարանս ծանուցս յայնժամ կատարել:
Ասկ եթէ՝ի հոգեվարս կացցէ կամ անզգայեալ, օրէն
է յայնժամ առանց ապաշխարանաց արձակել զնա. այլ
պարտ է ջանալ ըստ կարի տալ և այնպիսեաց դոյզն ինչ
ապաշխարանս, որպէս համբուրել զխաչ, անուանել
զՅիսուս և զԱարիամ գէթ՝ի սրտէ, և այլ այսպիսի
ինչ: Ալ է խոհեմութիւն սահմանել հիւանդաց ա-
պաշխարանս՝ համեմատութեամբ տանել հիւանդու-
թեանն, զի մարթ է յաւելուլ նոցա այսուհետև տաղնապս
խղճի մտաց. այլ որպէս Աալմատիկեանք ազգ առնեն,

եթէ ձեռն հիւանդին բաւական իցէ՝ պարտ է սահմանել նմա յապաշխարանս առնել ողորմութիւն աղքատաց. զի ամենայն ոք պարտական է առնել ապաշխարանս որ ինչ կարէ։

50. Ոմրոմդ՝ օրէն է թեթեւացուցանել զապաշխարանս խօթամոց, այսինքն զորոց մարթ իցէ կասկածել՝ թէ չիատարիցեն զապաշխարանս համեմատ մեղացն։ Այս այսպէս ուսուցանեն Սուարէզ, Ալվաթ, Նաւարրոյ, Մոլետոյ, Լայման, Պելլի, Քասթրոփալ, Նաբերտ, Կոնեթ, Բերտան, Նաճալէ աղեքսանդրացի, Պնաքլեթոյ, սուրբն Կարոլոս Պորրոմիոս, և սուրբ Պգունացին։ Օ՛ր որպէս ժողովն տրիդենտեան յաւելու, պարտ է ապաշխարանաց էրկաբեռ գալ, այսինքն օգտակար առ՛ի փրկութիւն ապաշխարողին. այլ չիցեն փրկաւէտք, այլ մանաւանդ իցեն հիւանդական, եթէ ապաշխարողն առ խօթամտութեան իւրում չիատարիցէ զայնս։ Նա դարձեալ ապաշխարանք առ՛ի դեղ սահմանին քան՛ի հատուցումն, վասն որոյ ասէ սուրբ Պգունացին. "Որպէս բժիշկ մի ոչ տայ դեղ այնպիսի զօրաւոր՝ որ տկարութեան հիւանդին վտանգ՛ի վերայ ածիցէ, այսպէս և քահանայ աստուածազգեցիկ ոչ միշտ բռնկանդակ տայ զպատիժ ըստ մեղաց, զի մի հիւանդն յուսահատեալ՝ բոլորովին վերջանայցէ յապաշխարանաց,,։ Նա այլուր յաւելու. "Պահովագոյն է նուազ քան զարժանն՝ քան աւելի սահմանել ապաշխարանս. զի դիւրագոյն արդարանալիք առաջի Պստուծոյ վասն բազում առնելոյ ողորմութիւն քան վասն կարի խստութեան. զի պակասութիւնն ապաշխարանաց ընու՛ի քաւարանի,,։ Նա սուրբն Պնտոնինոս այնպիսի ապաշխարանս պարտ համարի սահմանել, զոր հաւանական իցէ ապաշխարողին կատարել, և յօժարութեամբ յանձն առնուլ. իսկ եթէ ասիցէ չըկարել կատարել զպատշաճ ապաշխարանսն, յաւելու նոյն ինքն սուրբն Պնտոնինոս. "Մեպէտ և յանցանէ յայնժամ ապաշխարողն, այլ ոչ է պարտ թողուլ զնա առանց արձակմանն զի մի վհատեսցի,,. Յաւելեալ՛ի վերայ ապաշխարանացն զեան Պաշտօցին՝ Օ՛ր ինչ գործեսցէ բարի, եղիցի ինչ՛ի բարեգործութիւն։ Օ՛ի և առլորական բարեգործութիւնք՛ի վերայ յաւելեալք՛ի

խորհուրդ ապաշխարութեան, ըստ ուսուցանելոյ սուրբ Աթանասեայն, առնուն առաւելագոյն զօրութիւն ի հատուցումն պատժոյ մեղաց։

Յամարին դարձեալ բազումք յաստուածաբանից ընդ նմին սրբոյն Աստուածոսի հաւանականաբար՝ օրինաւոր պատճառ թեթևացուցանելոյ զապաշխարանս, եթէ ի ցե՛ղ ոմն այնուիկ յորդորեսցի ապաշխարողն ի սէր խոստովանութեան։ Զգտակար է ծանուցանել ապաշխարողին զապաշխարանս արժանաւորս մեղաց նորա, ցուցանելով զկանոնս նախնի ապաշխարողաց, և առնել ըստ խրատուն՝ զոր տայ սուրբն Յովհաննէս Աստիճանաւոր. այսինքն է սահմանել թեթև ինչ ապաշխարանս, այլ յորդորել զնա յառաւելագոյն ինչ։ Ասէ որոյ սուրբ Աղեքսանդրին և սուրբն Կարոլոս Պորրոմէոս խրատեն հարցանել և զապաշխարողն՝ եթէ կարիցէ առնել զսահմանեալ ապաշխարանսն, ապա թէ ոչ՝ փոխել զայն։ Զգնել երբեմն և ծանր ինչ սահմանել, այլ ոչ ընդ ծանր պարտականութեամբ որպէս ի վերոյ այսր ասացաք, կամ՝ հրամայել ինչ՝ զոր և այլուստ պարտք իցեն առնելոյ, որպէս ասելոց եմք ի տեղիս (թիւ 53)։

51. Յասացեալոցս ի միտ առնուլ է թէ քանի՛ անխոհեմութեամբ գործեն՝ որք ապաշխարանս ծանուննքան զկար ապաշխարողաց սահմանեն։ Եւ քանի՛ք զարձեալ արձակեն զխուրաւ զանպատրաստս և որք ի մերձաւոր վտանգս մեղաց կան, կարծելով բժշկել զնոսա ծանր ապաշխարանօք՝ թէպէտ և յայտնի իսկ իցէ թէ չկատարեսցեն նոքա զայնս. որպէս յամենայն եօթնեկի խոստովանել նոցա՝ որք հաղիւ զտարեկան պարտս խոստովանութեանն կատարեն, հնդետասան տունս վարդապետի կատարել նոցա՝ որք և ոչ զմին կատարեն, պահս, ձաղկանս, մտաճախան աղօթս այնոցիկ՝ որք և զանուանս նոցին անգիտանան։ Եւ աստի զհետ եկեալ աղէտք, զի առ ի կորզել զարձակումն՝ յանձն առնուն նոքա ի հարկէ զապաշխարանսն, և ոչ կատարեն. և ոմանք զոյնքան ի նոցանէ կարծելով ի դերև լեալ այնուիկ զխոստովանութենն իւրեանց, դառնան ի նոյն յառաջինն կեանս. և յահէ ծանուննց ապաշխարանացն առեալ զխոստովանութիւն, կան մնան խղխայթեալք ի մեղս։ Այլ և արտաքոյ ծանր հիւանդութեան և անդ-

սովոր ինչ լաւահառաչ զղջման չէ օրէն վասն ծանուցից մեղաց սահմանել թեթև ինչ ապաշխարանս՝ վերբեր- ելիչ թեթև պարտականութեան. զի թէպէտ և օրէն է ըստ տեղւոյն սահմանել ինչ ապաշխարանս՝ որ առ ծանրութեամբ մեղացն իցէ թեթև, սակայն պարտ է միշտ ապաշխարանաց այնպիսի մեղաց ծանուցս դոլ, և ծանր պարտականութիւն՝ ի վերայ ածել:

52. Չէ օրէն դնել ապաշխարանս միանձնաւորս, ոչ՝ ի կրօն մտանելոյ և ոչ՝ ի կարգ աշխարհի, առ որս խնդրի կատարեալ ազատութիւն. զարձեալ և ոչ ուխտ միանձնաւոր, զոր եթէ կամեսցի իսկ ապաշխարողն ուխտել, օրինակ իմն ոչ ևս անկանելոյ՝ ի նոյն մեղս, ոչ է պարտ ներել նմա զայն առանց զիտոյձ առնելոյ: Իսկ պայմանեալ ապաշխարանս թէպէտ և օրէն է սահմա- նել, որպէս զծոմ կամ զողորմութիւն յանկանելն առ մէն մի նուազ, և ապաշխարողին պարտ է յանձն առ- նուլ և կատարել զայն, որպէս հաստատեն Ասուարիզ, Լայման, Պոնաչինա, Ֆերսա և Սալմատիկեանք, այլ ոչ է բարւոք ընդ երկար ժամանակ սահմանել զայն. զի դիւրաւ մարթի է ապաշխարողաց զանց զնուաւ առնել, և յանձխել ումեք. պարտ է ապա առ սուղ ինչ ժա- մանակ սահմանել զայն, որպէս ամօրեայ աւուրս կամ յիսանգամ խոստովանութիւն: Զարձեալ չէ օրէն և ապաշխարանս հրապարակականս վասն ծածուկ մեղաց սահմանել: Իսկ վասն հրապարակական մեղաց պարտ իսկ է սահմանել զայնս, եթէ այլազգ չիցէ մարթ բաւ- նալ զգայթակղութիւն կամ հատուցումն առնել թըշ- նամանաց ուրուք. վասն որոյ եթէ յանձն առնուցու նա բառնալ զգայթակղութիւն յաձխելոյ՝ ի սուրբ խոր- հուրդս, այցելութեամբ եկեղեցեաց, կրօնաւորելով և այլն, ոչ է պարտ յայնժամ բռնադատել զնա՝ ի հրա- պարակական ապաշխարանս:

53. Պարտ է ապաշխարանաց, որպէս յայտ առնէ ժողովն տրիդենտեան, ոչ միայն դոլ առ՝ ի դէզ՝ այլ և պատժական՝ ի հատուցումն դործեցելոցն մեղաց: Ընդ պատժականքս այսոքիկ ձգնութիւնք՝ են պահք, ողոր- մութիւնք և աղօթք: Պահովք է խմանալ զամենայն աղգի ազգի մեռելութիւնս զգայարանաց, և աղօթիւք զխոստովանութիւն, զհաղորդութիւն, զայցելութիւն

եկեղեցեաց, զներդործուԹիւնս սիրոյ և զղջման, և զնաածական աղօԹս, զօրս օրէն է սահմանել և յապաշխարանս, որպէս ուսուցանեն առաքելական աստուածաբանք առ հասարակ։ Օ՛ի և աղօԹք և ողորմուԹիւնք և ամենայն իսկ գործք բարիք՝ պատժականք համարին վասն մեր յետ անկանելոյ՝ի սկզբնական արդարուԹենէ մերմէ և՝ի խնամս չարին հաստատելոյ։

Օրէն է սահմանել յապաշխարանս և զգործս իսկ պարտականուԹեան, որպէս լսել զպատարագ յաւուրս տօնից, պահել զծոմապահս հրամայեալս և այլն, որպէս հաստատեն Ոմիոյ, Ասուարէզ, Լայման, Անքէզ և այլք։ Եւ զայս օրէն է առնել վասն տկարուԹեան մարմնոյ կամ մտաց ապաշխարողին. զի առանց այսորիկ պարտ է ըստ օրինի սահմանել զաղատ գործս յապաշխարանս. վասն որոյ եԹէ խոստովանահայրն չասիցէ ինչ յայտնապէս՝ պարտ է խնդրել պատարագս կամ ծոմապահս այլս՝ի հրամայելոյ։ Նայց եԹէ սահմանեսցէ յապաշխարանս լսել հանապազօր պատարագ ընդ առիս մի, ոչ է պարտ ապաշխարողին լսել երկուս՝ի տօնս, որպէս ուսուցանեն բարոյականք առ հասարակ։ Օրէն է սահմանել յապաշխարանս, որպէս հաւանականաբար հաստատեն Լուկոյ, Ֆուրրիանոյ, Պուսեմպայ և այլք, և բարեգործուԹիւնս՝ի նպաստ ննջեցելոյ. և որպէս այլք դարձեալ հաւանականաբար հաստատեն, մարԹէ է և զկրաժեշտ իսկ՝ի պահոց և՝ի ձգնուԹեանց վասն հնազանդուԹեան սահմանել յապաշխարանս երկիւղածաց, ուր չիցէ վտանգ՝ի յայտ գալոյ զի վասն ապաշխարանաց դադարեն՝ի բարեգործուԹեանց անտի։ Այլ է մարԹ ապաշխարողի՝ի ձեռն այլոց կատարել զապաշխարանս, որպէս դատապարտեաց Ալեքսանդր Զ զհաւաքական այսր վարդապետուԹեան. այլ որպէս սուրբ Գրիգորիոսին և այլք ասեն, Թէ օրէն է խոստովանահօր ներել զայս ապաշխարողին. իբր ոչ եԹէ բարեգործուԹիւնք այլոց զօրինեն յապաշխարանս իւր, այլ ինդրելն զայնոսիկ յայլոց։

54. Յապաշխարանս զգայական մեղաց՝ պարտ է ըստ կանանաց սահմանել ձգնուԹիւնս, մեղաց ագահուԹեան՝ ողորմուԹիւնս, հպարտուԹեան՝ աղօԹս, ըստ այսմ կանոնի և այլոց մեղաց. այլ յամենայնի զհոգևոր

օգուտ ապաշխարողին անօրինելով։ Յաճախել՝ ի սուրբ խորհուրդս ; մտածական աղօթք և ողորմութիւնք օգտակարք են յոյժ, այլ չսովորելոցն յայնս միաբանակարք իսկ գտանին։ Ապաշխարանք՝ որ սովորաբար օգտեն ամենեցուն՝ են ներդործութիւն զղջման ընդ երեկս, առաջադրութիւն յառաւօտս, այցելութիւն սրբոյ հաղորդութեան և սրբոց պատկերաց Աստուածամօրն՝ խնդրելով զյարատեւութիւն, կատարել զսուրբ վարդապետին, ընդ առաւօտս և ընդ երեկս զհրեշտակային ողջոյնն երիցս մատուցանել նմա, և աղօթք ըղձականք համառօտք՝ որպէս այն, Ասա էնչ առնել կեանս իս, կէ պատ եա Աստուածդ իմ. Մի ընկենուր կեա ցերբեսաց իոց. Արդ եմ ես, կեցո կեա. Գթնեա էնչ, կէ մի մեղայց հեկ. Սորբէ Աստուածամայդ, էարբեհասեա զանն իմ մեղաւորիս. և այլ ևս սոցին հանգոյն իղձք։

ՑՕԴՈՒԱԾ Ի

ՑԱՂԱԳՍ ԿԱՑՄԱՐՄԱՆ ԱՊԱՇԽԱՐԱՆԱՑ

55. Պարտք ընդունելոյ զապաշխարանս։
56. Պարտք կատարելոյ զայն։
57. Որ յապաղէ կատարել զայն։
58. Կարճեր իցէ դիտաւորութիւն՝ ի կատարումն նորին։
59. Որ մոռանայցէ կատարել զայն։
60. Որ՝ ի մահուշտի մեղս կատարէ զայն։
61. Ո՞ փոխել զապաշխարանս կարիցէ։

55. Պարտ է ապաշխարողին ընդ ծանր մեղաց ընդունել զապաշխարանս, եթէ չիցէ ինչ անիրաւ. զի խոստովանահայրն է՝ չափարիտ դատաւոր իւր, որում պարտի հնազանդել։ Ա՝ ասն որոյ Աուարէզ և Պոնաչինա յետ արիզենտեան ժողովոյ՝ յանդգնական համարին զկարծիս՝ զոր՝ Նաւարրոյ, Կայեթանոյ և այլք ոմանք հաստատէին՝ կարել ապաշխարողին չընդունել զապաշխարանս, յանձն առեալ զհատուցումն մեղացն առնել՝ ի քաւարանի։ Ոչ իսկ ընդունելի և կարծիք այլոց ոմանց աստուածաբանից՝ որք ասեն, զի եթէ ապաշխարողն թեթև ապաշխարանս խնդրիցէ՝ չառեալ յանձն զծանուցնս թէպէտ և համեմատս մեղաց իւրոց, օրէն է

խոստովանահօր արձակել զնա։ Որ եթէ մեղանչէ խոստովանահայր, որպէս զի վերս անդր յուշացաք (52), որ առանց օրինաւոր պատճառի ապաշխարանս թեթեւս ծանուսնց մեղաց սահմանէ, հարկաւ ապա մեղանչէ և ապաշխարողն՝ որ ծանուսնց մեղաց իւրոց թեթեւ ապաշխարանս պահանջէ։ Նայց Սուարէզ, Լայման, Վիլալպանդոյ, Պուսեմպայ, Լեզկէլ, Հոլզման և Սիորեր հաստատեն, զի եթէ ապաշխարողին ծանր թուեսցին ապաշխարանքն համեմատութեամբ մեղաց իւրոց կամ տկարութեան անձին, և ոչ կամեսցի խոստովանահայրն մեղմել զայն, ազատ է մեկնել առանց արձակման, և խոստովանել այլուր։

56. Ապաշխարող, որ ոչ կատարէ զծանր ինչ ապաշխարանս զծանուսնց մեղաց չև ևս խոստովանելոց, ծանր մեղս գործէ. իսկ որ չկատարէ զթեթեւ ապաշխարանս զթեթեւ մեղաց կամ ծանուսնց վաղ իսկ խոստովանելոց, ներելի մեղս գործէ՝ ըստ հասարակաց վարդապետութեան աստուածաբանից։ Եւ ոչ զօրէ ասել, զի թերի առնիցէ սա զխորհուրդ ապաշխարութեան. զի կատարեալ իսկ է խորհուրդն ըստ էական մասին, և պարտք կատարելոյ զայն ըստ ամբողջականին՝ ոչ ծանր ինչ է ուր թեթեւ իցէ նիւթն։ Ի թեթեւ ապաշխարանս համարի Աղբրէա ինչ Ապոստոլ փոխան, և՛ի ծանր՝ երրորդ իսկ մանն վարդարանին։ Ապրդ խնդիր այն է՝ եթէ ծանր ինչ ապաշխարանք վասն թեթեւ ինչ մեղաց իցէ սահմանեալ, կամ վասն ծանուսնց վաղ իսկ խոստովանելոց, որպիսի մեղս գործիցէ որ չկատարիցն զայն։ — Պոնաչինա, Վոնչինա և Ռոնքալեա ծանր մեղս համարին. բայց Սոթոյ, Նաւարրոյ, Սուարէզ, Լայման, Լուկոյ, Սիորեր, Լաքրուա և այլք հաւատնակականաբար զհակառակն հաստատեն։ Որ որպէս չէ օրէն յայնժամ խոստովանահօր սահմանել ծանր ապաշխարանս հանդերձ պարտականութեամբ, այսպէս և ապաշխարողին չէ ինչ ծանր պարտ կատարել զայն։ Այլ որպէս յաւելու Ռոնքալեա, եթէ մեղքն այնոքիկ ներելիք աճեն վասնզ մեծ ապաշխարողին անկանելոյ՛ի ծանուսնս, օրէն է խոստովանահօր սահմանել նմա ապաշխարանս ծանուսնս հանդերձ ծանր պարտականութեամբ՝ առ՛ի փրկել զնա՛ի վտանգէ անտի. և յայն-

ժամ պարտ է ապաշխարողին ընդունել և կատարել զայն ընդ ծանր պարտեօք: Պարձեալ որպէս նոյն ինքն ասէ, եթէ ապաշխարողին չէ ևս իւր արարեալ ապաշխարանս ըստ ծանուցեալ մեզաց վաղ իսկ խոստովանելոյ, օրէն է խոստովանահօր դնել նմա ծանր ապաշխարանս. և եթէ ընդունի զայն ապաշխարողն, պարտական է և կատարելոյ զայն ընդ ծանր պարտեօք: Իսկ յաղագս յապրակից հանդամանաց ապաշխարանացն, որպէս ծնողաց դրուեցաւքն կամ բազկատարած աղօթելոյ, քոհանի յուխտ գնալոյ և այլն, առեն աստուածաբանք զի ըստ ծանրութեան կամ դժուարութեան իրացն ծանր կամ թեթև յանելոյն պարտ:

57. Ըստ ժամանակի կատարման ապաշխարանաց թէպէտ և չիք պարտականութիւն կատարելոյ զայն յառաջ քան զսուրբ հաղորդութիւնն, որպէս պարտ համարիլն ոմանք՝ զորոց վարդապետութիւն դատապարտեաց Ղեբեսանդր ե., սակայն մեղանչէ որ յապաղէ զայն յոյժ, որպէս ամիսս վեց. իսկ որ ամենօրեայ աւուրս եւեթ յապաղէցէ, ոչ մեղանչէ՝ եթէ ապաշխարանքն չիցեն՝ի բժշկութիւն ունակութեան ինչ չարի սահմանեալ, և եթէ յետ ամոյ կարելի իցէ կատարումն նոցին: Որ զծոմապահս յուրբաթէ ձգէ՝ի շաբաթ, կամ զհաղորդութիւն ամենակեր յապաղէ եօթնեակ մի, եթէ չիցեն ապաշխարանք՝ի դէպ բժշկութեան սահմանեալ նմա, ոչ ծանր ինչ մեղանչէ՝ որպէս հաստատեն Աւարեզ, Վրաստրոփալ, Սիսոեր, Յոլզման ընդ Ոսնքաւեայ, ընդդէմ Լուկայի և Սալմատիկեանց: Լաքրուա, Կոպաթոյ, Սթէֆանոյ և այլք ոչ ծանր համարին և զմիով՝ի տասանց հաղորդութեանց զանց առնել:

Որ չկատարէ՝ի սահմանեալ աւուր զապաշխարանս, ոչ ազատ գտանի՝ի պարտուց կատարելոյ զայն. զի օր սահմանել խոստովանահօր առ՝ի փութացուցանել է, և ոչ առ՝ի սահման հատանել պարտականութեան: Նայց Պոնաչինա, Վրոնինքիոյ, Կոպաթոյ Ասցցոթթա և այլք, եթէ խոստովանահայրն սահմանեսցէ հաղորդել յամենայն տօնս Տիրամօրն կամ ծոմապահել՝ի յորեքշաբաթի աւուրս նուիրեալս՝ի պատիւ նոցա, յանցանել աւուրն՝ ոչ ևս պարտ համարին կատա-

րել զապաշխարանս այնը աւուր. զի համարին կապեալ զայն խոստովանահօրն ընդ այնմ աւուր:

Օրէն է կատարել զապաշխարանս ընդ այլ հրամայեալ պարտս, որպէս կատարել զվարդապան՝ ի լսել զպատարագ տօնական և այլն, որպէս ասացաք՝ ի գլ. Ե. 30:

58. Կարևոր իցէ դիտաւորութիւն՝ ի կատարումն ապաշխարանաց: — Ասացօմք թէ, Կ՚ասպուհէզ և այլք՝ ոչ որպէս յայլ պատուիրանս շատ համարին յայսմ ըզկատարումն և՝ եթէ հրամայելոյ իրաց, այլ կարևոր և զդիտաւորութիւն վայն ամբողջութեան խորհրդոյն: Կ՚այլ Ալանքէզ, Լուկոյ և Ասուարէզ հաւանականաբար և ըստ հասարակաց կարծեաց բաւական համարին զուռնակական դիտաւորութիւն ապաշխարողին, որ կեր ընդունելոյ զապաշխարանն դիտաւորութեամբ կատարելոյ՝ ոչ նահանջէ զայն. և եթէ՝ ի կատարումն իսկ խորհրդոյ բաւէ դիտաւորութիւն ունակական, ապա և առաւել բաւեսցէ աստ: Պանաւանդ զի ամենայն ոք յամենայնի կամի նախ զպարտս իւր կատարել, և ապա զաւելին քան զպարտս:

59. Ո՞ինչ պարտ իցէ առնել այնմ, որ չկիշէցէ զապաշխարանս իւր: — Ասուրէզ Կ՚նտոնինոս, Պոնաչինա և այլք պարտ համարին նմա երկրորդել զխոստովանութիւնն: Կ՚այլ հասարակաց և Թերևս հաւանականագոյն կարծիք ոչ պարտ համարին միւսանգամ խոստովանել, թէ և յանցաւորաբար իցէ մոռացեալ: Ո՞վ յայնժամ՝ ի միջոկ կողմանէ անկարելի գտանի լեալ կատարումն ապաշխարանացն, և՝ ի միւսմէ կողմանէ յոյժ երկբայականք են օրէնքն միւսանգամ խոստովանելոյ զմեղս արձակեալս: Կայց պարտ է ապաշխարողին դառնալ առ նոյն խոստովանահայրն, զի Թերևս կիշէցցէ նա կամ զապաշխարանն սահմանեալս կիւրմէ, և կամ զկանգամանս խղճի մտաց ապաշխարողին՝ որով կարասցէ այլ ինչ սահմանել նմա ապաշխարանս:

60. Կ՚պաշխարողին կալով՝ ի մահուջան մեղս՝ մի՞թէ իցէ կատարել զապաշխարանս: — Վնպէտ և ոմանք ոչ մարթ համարին, այլ հասարակաց կարծիք զհակառակն հաստատեն ըստ հանրական կանոնին, զի դիտաւորութիւն պատուիրանին ոչ անկանի ընդ պատուիրա-

նաւն : Այլ թէպէտ որ՝ի մեզս կալով կատարէ զապաշխարանն՝ ընդ զպարտս իւր , այլ գէթ ներելի մեզս գործէ՝ խաւխանելով զմանկական ընդհարս խորհրդոյն :

61. Ո՞ւմ օրէն ունի փոխել զապաշխարանս : — Ոստ հաստատակաց կարծեաց աստուածաբանից ոչ է օրէն ապաշխարողին փոխել իւրումն զապաշխարանս , և ոչ՝ի ծանրագոյն ինչ . զի որպէս խոստովանահօր եւթէ իշխանութիւն դնել ապաշխարանս , այսպէս և նորա է փոխել զայն : Այլ խնդիր է թէ կարի՞ց և այլ ոք խոստովանահայր փոխել զայն՝ առանց երկրորդելոյ ապաշխարողին զխոստովանութիւն իւր : — Կէաք հաւանականաբար չկարել ասել , առանց ապաշխարողին գէթ աղօտ ինչ տալոյ նմա տեղեկութիւն զհանգամանաց խղճի մտաց իւրոց : Այլ բազումք ևս յաստուածաբանից նոյնպէս հաւանականաբար զհակառակն հաստատեն . զի ասա ոչ ևս զմեզաց ապաշխարողին է դատաստան , այլ զտկարութենէ նորա՝ի կատարել զսահմանեալ ապաշխարանսն : Ո՞՛ի եթէ բժշկականք իսկ իցեն այնոքիկ , մարթ է դուշակել անտի զտեսակս մեզաց նորա , և ըստ այնմ փոխել կամ թեթևացուցանել : Հաւանական իսկ է կարել այլոց խոստովանահօր առանց իսկ խնդրելոյ ապաշխարողին փոխել զապաշխարանս նորա , ՚ի տեսանել զի դարձեալ վտանգ է նմա չկատարելոյ զայն :

Վասիլիոսիոս , Անքիզ , Պոնավինա և այլք օրէն համարին խոստովանահօր փոխել և զապաշխարանս սահմանեալս ՚ի վեհագունից վասն վերապահեալ մեզաց . այլ զայս պարտ է իմանալ ՚ի ծանր հարկաւորութեան՝ յորժամ դժուարին իցէ ապաշխարողի դառնալ առ նոսա . զի յայնժամ օրէն է համարել զլռելեայն հաւանութիւն նոցա :

Օրէն իցէ փոխել զապաշխարանս արտաքոյ խոստովանութեան : Եթէ այլ ոք իցէ խոստովանահայր , ոչ է նմա օրէն . իսկ վասն նոյն խոստովանահօր կէաք յաստուածաբանից օրէն համարին ևս և յետ ուրեք աւուրց փոխել . այլ հանդուգն կարծիք չընդունին զայն , և հաճիւ իսկ և իսկ պէտ արձակմանն չէ մեկնեալ ապաշխարողին ՚ի բաց՝ ներելի համարին զայն : Ակայն օրէն է ապաշխարողի յետ փոփոխութեան ևս ապաշխարանացն զնոյն զառաջինն ապաշխարանսն կատարել :

ՑՕԴՈՒԱԾ Ը

ՑՆԴՆԴՍ ԱՊԱՇԽԱՐԱՆԱՑ Ի ՁԵՌՆ ՆԵՐՈՂՈՒԹԵԱՆ

62 · Ջներողութեանց :
63 · Ջվնասատար ներողութիւն մարթ եղէ ընդունել ըստ մասին :
64 · Ջյոբելինէ :
65 · Պարտ եղէ զպայմանեալ գործս ի միում աւել եօթնեակի կատարել · զաղօթից և զողորմութենէ , և զխոնարհութենէ այնց :
66 · Անվաւեր խոստովանութեամբ բառնին բանադրանք և վերապահեալ արգելք :
67 · Մեղանչէ արձակեալն ի վերապահելոց եթէ չկատարէ զպարտս յոբելինէ :
68 · Որ մոռանայցէ զվերապահեալ ինչ մեղս :
69 · Որ պատեհ առեալ զյոբելեանն՝ մեղանչէ մեղս վերապահեալս :
70 · Օրէն եղէ նախ քան զՏատուցումն արձակել ի յոբելինէ :
71 · Յորմէ մեղաց և ի բանադրանաց մարթ եղէ յայնժամ արձակել :
72 · Գիտելիք ինչ յաղագս սուրբ տաճարին :

62 · Ներողութիւն է ընդհանր՝ որով Թողութիւն լինի առժամանակեայ պատժոյ ի կատարել զգործս սահմանեալս առ այն , ի ձեռն արձակման վասն կենդանեաց , և ի ձեռն նպաստից վասն ննջեցելոց : Ակնհայտ է սուրբ , որպէս յայտ արար Ժողովն տրիդենտեան , ունել իշխանութիւն Այսուհետև ընդհանր եկեղեցւոյ ներողութիւնս՝ ի սկզբանէ հետէ վարեալ նովին իշխանութեամբն . վասն որոյ և ընդ բանադրանօք արկանէ՝ որք ընդունայն համարին զներողութիւնս և որք ուրանան ջնջել եկեղեցւոյ այնպիսի իշխանութիւն :

Վասն ընդունելոյ զներողութիւնս խնդրին պայմանք երիւք . կատարել զգործս սահմանեալս առ այն , և գոլ ի ընդհանր՝ գէթ ի կատարել զվերջինն ի գործոց սահմանելոյ . ապա թէ ոչ , չէ մարթ շահել զայն՝ ոչ վասն անձին և ոչ վասն ննջեցելոց : Պարտ է խնամանալ զներողութենս ըստ խնաստից բացատրութեան բառիցն . զի այլապէս խնացուած , թէպէտ և վերնպակաւ հաստատեսցի , ոչ ինչ զօրէ : Եւ ընդ հակառակն պարտ է մեկնել զայն ընդարձակ . վասն որոյ եթէ չկարի սահմանեալ ի նմա ժամանակի , համարի մշտնջենաւոր : Այլ է լիակատար ներողութիւն , և այլ ըստ մասնեայ . առաջինն բառնայ զամենայն պատիժս մեղաց , իսկ երկ-

ղորդն այնչափ ինչ բառնայ ՚ի պատժոց՝ որչափ մար-
թերն ուժեք ձգնութեամբ կամ ծոմապահութեամբ
այնքանեաց աւուրց կամ ամաց՝ որքանեաց ընդհեալ է
՚ի հրամանագրին՝ արժանաւոր լինել թողութեան։

63. Պուսեմպայ անմարթ համարի ընդունել ուժեք լիակատար ներողութիւն, եթէ չիցէ ազատ ևս և ՚ի ներելի մեղաց։ Այլ քաղումք յաստուածաբանից թէպէտ և ընդունին զի եթէ չիցէ թողութիւն լեալ ներելի մեղաց՝ և ոչ պատժոց նոցին լինի թողութիւն, որպէս հաւաստի է վկայութեամբ սուրբ Աւգուստինոսի, այլ համարին զի թէպէտ և իցեն ուրուք մեղք ինչ ներելի չեն ևս թողեալ՝ չիասիանէ այն զթողութիւն պատժոց այլոց մեղաց, որ իցեն թողեալ. զի որպէս մարթէ միով ՚ի ներելի մեղաց թողութիւն առանց միւսոցն թողութեան, ընդոյն է իմանալ և զպատժոց։

64. Ի քայքայել աստ զկնդակ Ենեդիկտոսի ծնվանն յօբելեանն ներողութեան, ՚ի յայտ գան և որ ինչ այլ ևս գիտելիք իցեն զայլոց ներողութեանց։ Առ վանն ընդունելոյ զներողութիւն, ա. պարտ է խոստովանել. զի չքաւէ չունել ինչ ծանր ՚ի խղճի մտաց, որպէս սահմանէ անդ քահանայապետն վանն յօբելինի. և վանն այլոց ներողութեանց ՚ի հրամանագիրս նոցին առնէ ապաստան զնդիրն՝ տեսանել թէ խոստովանութիւնն որպէս պայմանն պահանջի ՚ի նոսա, եթէ որպէս պատրաստութիւն։ — բ. Ցայելութիւնս եօթանց եկեղեցեաց կատարել ՚ի միում աւուր ՚ի հասարակ զինչերոյ ցմիւսն, կամ յերեկոյէ ցերեկոյ։ — գ. Ներողութիւնք ընդհեալք քանիս ինչ հաճոյ էցէ մեզ, պատարեն մահուամբ ընդհողին։ — դ. Ներողութիւնք ընդհեալք վանն կենդանեաց, ոչ մանաւանդ ննջեցելոց։ — ե. Ալէ և մարթ ՚ի յօբելինի արձակել զմեղսութիւն արտայայտեալ։ — զ. Ցխոհականութիւն ուխտից ոչ է մարթ առնել ՚ի գործ թեթևագոյն յոյժ քան զուխտեանն։ — է. Կշիռն վասն խնամակելոյ զգործս սահմանեալս վանն յօբելինի ոչ է իմանալ զխոստովանութենէ կամ զչհաղորդութենէ (բայց միայն վանն մանկտուց), և ոչ զաղօթից յայցելութիւնս, և ոչ զայլոց իրաց սահմանելոց զոր չէ մարթ փոխել յայլ ինչ՝ որ այլով պատճառաւ պարտք

իցեն ուրուք : — Ը. Կան մեռանս արդելք ՚ի վերայ խոստովանահարց չարձակելոյ զմեղսակիցս իւրեանց ՚ի գործ պղծութեան : — Թ. Չէ մարթ ընդունել ուխտեալ զյօթելեան ներողութիւն առանց պատրաստելոյ յընդունելութիւն նորին , և կատարելոյ զգործս սահմանեալս առ այն : — Ժ. Ի խոստովանութեան ևեթ օրէն է փոխանակել զուխտս : — ԺԱ. Պարտ է խոստովանահօր և ՚ի յօթելինի գնել ապաշխարանս խոստովանելոյ : — ԺԲ. Ոչ է օրէն փոխանակել զուխտս ՚ի տոյժ այլոց ուրուք , և մանաւանդ զուխտ յաջապահութեան՝ արարեալ ՚ի կրօնս ուրեք , որ որպէս զաշն լինչ է : — ԺԳ. Որ կեաց խոստովանելոց անկանի ՚ի մահացու մեղս , պարտ է նմա խոստովանել վերստին՝ եթէ կամի ընդունել զյօթելեան ներողութիւն , առ ՚ի կատարել ՚ի ընորհս դնել զվերջինն ՚ի գործոց սահմանելոց առ այն . բայց զայցելութիւնս եկեղեցեաց չէ ինչ պարտ առնել վերստին : — ԺԴ. Ասան ընդունելոց զներողութիւն շատ են աղօթք բանաւոր . իսկ որ մտածական աղօթս առնէ՝ պարտի յաւելուլ և զբանականն : — ԺԵ. Իշխանութիւնք խոստովանահարց ՚ի յօթելինի միանգամ ևեթ զօրեն . որպէս զի եթէ ոք կեաց միանգամ արձակելոց ՚ի վերապահելոց՝ միւսանգամ անկցի ՚ի նոյնս , չկարէ ընդունել արձակումն ՚ի տեւել իսկ տակաւին իշխանութեան խոստովանահարց . այլ զներողութիւնս մարթ է ընդունել այլ և այլ անգամ՝ կրկնելով զգործս սահմանեալս առ այն : — ԺԶ. Եթէ ՚ի հրամանապրին ընծոհի իշխանութիւն խոստովանահարց արձակելոց զմեղս վերապահեալս ՚ի կոնդակին ընծերեաց , ոչ է իմանալ զմոռոգութիւն արտայայտեալ : — ԺԷ. Որ արձակեան է յուխտից կամ ՚ի բանադրանաց , չանկանի անդրէն ՚ի նոսին՝ ՚ի չընդունելն զյօթելեան : — ԺԸ. Հրամանն ընտրելոց կուսանաց զոր ոք և կամիցին ՚ի խոստովանահայր , իմանալի է զքահանայից՝ որոց կոչ իշխանութիւն խոստովանահայրութեան : Պիտելի է զի և կրօնաւորք ՚ի յօթելինի ազատ են խոստովանելոց ուր և կամիցին ՚ի խոստովանահարց , որպէս յայտ արար Պրիպոր ԺԳ , և Պղեքսանդր Ե :

65. Պա ՚ի ստանալ զյօթելեան ներողութիւն պարտ է ՚ի միում յերկուց եօթնեկաց կատարել զամենայն

գործս սահմանեալս առ այն: Օ՛ի թէպէտ և ոմանք յաստուածաբանից ոչ հարկ համարին զայս, մանաւանդ ուր օրինաւոր պատճառք իցեն՝ի միջի, այլ հաստարա- կաց վարդապետութիւն աստուածաբանից, սովորու- թիւն հաւատացելոց, և բացատրութիւն հրամանադրի յոբելինին՝ որ ոչ առ յերկոսին եօննեակս, այլ՝է ոմն յերկոցունց եօննեկաց, հաստատեն զայն: Սակայն յոյժ հաւանական է զի զխոստովանութիւն և զհաղորդու- թիւն մարթ իցէ յառաջնութեն կամ յերկրորդում կի- րակէի անխտիր կատարել: Այնքէսլ, Ուկոլինի, Պու- սեմպայ և այլք օրէն համարին, որոց՝ի հայրենիս իւ- րեանց վերջացեալ իցէ՝ի ստանալոյ զյոբելեան՝ ստա- նալ զայն այլուր, ուր չև ևս իցէ դադարեալ: Պոնաչի- նա և Տիանա յաւելուն՝ զի և անդ իսկ՝ի հայրենիս իւր յետ դադարելոյ յոբելինին կարէ ստանալ, որ ան- յաղթելի տպիտութեամբ անդիտացեալ իցէ զայն:

Ո՛ան աղօթից յոբելինին յայցելութիւնս եկեղե- ցեաց՝ ոմանք եօթն և ոմանք հինգ իսկ Տայր Վէր և Ող- ջոյն շատ համարին: Իսկ վասն ողորմութեան ասէ հրա- մանադիրն քան Էրատանէէր կարի, կամ քան Եռանդեան, որով և զսակաւն բաւական համարի. վասն որոյ և աղ- քատաց իսկ պարտ է ըստ կարի իւրեանց առնել ողոր- մութիւն: Իսկ վասն կրօնաւորաց և մանկտուց և կա- նանց՝ բաւական է զի մեծաւորք և տանուտեարք զի- տութեամբ նոցա արասցեն ողորմութիւն: Այլ զծո- մանպահս ամենայն ուժեք պարտ է առնել անպատճառ, և չէ օրէն փոխանակել ընդ այնմ զհրամայեալս կամ ուխտիւ պարտականս: Իսկ զփոխանակութիւնս գոր- ծոց սահմանելոց վասն յոբելինի մարթ է ամենայն խոստովանահարց, ևս և արտաքոյ խոստովանութեան առնել, որպէս յայտ առնէ Վրիզոր ԺԳ:

66. Ո՛ր՝ի յոբելինի խոստովանեալ, և խոստովանու- թիւն նորա անվաւեր լեալ իցէ, դառնի արձակեալ՝ի բանադրանաց և՝ի վերապահելոց: — Եթէ սրբապղծու- ծութեամբ լեալ իցէ խոստովանութիւնն անվաւեր, պարտ է ասել թէ չգտանի արձակեալ՝ զի ներգործելեան ոչ է արձան օձանդակել ոմեք, և զի դարձեալ իշխանու- թիւնն այն ընդրկի վասն որոց պատրաստ իցէն յընդու- նելութիւն յոբելինին: Իսկ եթէ վասն թերութեան

ղղջմանն կամ տարապարտ անդիտութեամբ լեալ իցէ անվաւեր՝ Լուկայ, Յոհննքիոյ, Ալիւս և այլք համարին զնա արձակեալ, զի յայնժամ ապաշխարողին իշխապետ կամք են ընդունել զյօթելեանն. Թէպէտ և կէսք յաստուածաբանից և ոչ զայս ընդունին, որոց համաձայնի և սուրբն Աւգոստոս, վասն չընդունելոյ ապաշխարողին իսկապէս զյօթելեանն:

67. Որ յետ արձակելոյ ի բանադրանաց և ի վերապահելոյ՝ ոչ կատարէ զպարծս սահմանեալս վասն յօթելենի, մեղսիցէ մահու չափ: — Սուարէզ, Ալ. ասպուէզ և այլք համարին մեղանչել նման. բայց հանրագոյն կարծիք ազատ կացուցանեն զնա ի մեղաց, ոչ յօթելենին և ոչ խոստովանահօրն պարտս ի վերայ նորա գնելով: Բայց նոյն ինքն քահանայապետն յայտ առնէ այնպէս սուելն չանկանել անդրէն ի բանադրանս կամ ի վերապահեալս:

68. Որ ի յօթելեան խոստովանութեան մոռանայ ինչ վերապահեալ, կարիցէ ապա արձակել զայն ինչ և իցէ խոստովանահայրն: — Հաւանականագոյն կարծիք համարին արձակեալ զնա և ի մոռացելոյ անտի վերապահելոյ. զի պարտ է համարել խոստովանահօրն զամենայն իշխանութիւն իւր ի նպաստ ապաշխարողին ի կիր արկեալ: Այս այսպէս հաստատեն Լաւարդոյ, Սանքեզ, Ալիւս, Սուարէզ, Լաքրուա և այլք: Նոյն հաւանականաբար հաստատեն կէսք յաստուածաբանից և յաղագս փոխանակութեան ուխտից. զի ապաշխարողին զօրութեամբ յօթելենին ստանայ իրաւունս զխոխանակութեանն: Եւ ամենեքին միաբանին զի որ ի յօթելենի սկսեալ իցէ զխոստովանութիւնն՝ յետ կատարելոյ աւուրց յօթելենին կարէ ընդունել արձակումն ի նոյն խոստովանահօրէ. և կէսք յաւելուն հաւանական նաբար կարել խոստովանահօրն արձակել և զվերապահեալս, յորս յետ յօթելենին անկեալ իցէ ապաշխարողին չէ ընկալեալ զարձակումն: Նոյն հաւանականաբար հաստատեն Սուարէզ, Սանքեզ և այլք վասն այնոցիկ, որք վասն յօթելենին խոստովանեալ՝ և ապա ոչ ընդունին զայն. զի արձակումն բառնայ ի քաց զվերապահեալս, առանց կորուսանելոյ զզօրութիւն իւր ըստ հանդերձեալ պատահարաց: Իսկ որ արտաքոյ յօթելենի

խոստովանի այնմ, որոյ է իշխանութիւն արձակելոյ զվերապահեալս, և ապա յիշէ վերապահեալ ինչ մեզս, զայսմանէ տես՝ի ստորև՝ի թիւն 140։

69. Իցէ ընդունակ արձակման՝ որ յոբելինին վատահութեամբ գործէ մեզս վերապահեալս։ — Ակնարկ անընդունակ զնա համարին արձակման հաւանականաբար, իբր զի չէ օրէն կարծել՝ թէ կամիցի քահանայապետն տածել զանօրէնութիւն։ Այլ հանրագոյն և հաւանականագոյն կարծիք զհակառակն հաստատեն, զի չէ պարտ ամփոփել զիշխանութիւն ընդհատել խոստովանահարց անպայման, և ոչ տածիչ անօրէնութեան մնրթ է համարել զդէզ առ՝ի փրկութիւն ընդհատել։

70. Որչափ իցէ՝ի յոբելինի արձակել՝ի բանադրանայ զոք, նախ քան զհատուցումն վնասուց՝ զոր արարեալ իցէ ումեք, վասն հրամանագրին ասելոյ Ոչ պէտ է վճարել քո հատուցումն։ — Ակնարկ օրէնն համարին, առաւել՝ի խրատ զբան հրամանագրին առնելով քան՝ի պայման։ Այլ Սուարէզ, Ազոռէզ, Սիոռեր, Ան-ա և այլք զհակառակն ունին, բենեդիկտեան կոնգրեգատիոն հաստատեալ աներկբայելի։ Այլ եթէ ապաշխարողն չկարիցէ առժամն հատուցանել, արժանի գըտանի արձակման խոստանալով առաջի Աստուծոյ վճարպոյն ըստ կարի հատուցանել։ Որ եթէ կարելով ապա վերջանայցէ՝ի հատուցանելոյ, ոմանք համարին անկանել նմա անդրէն՝ի բանադրանս, այլ Պոսկոյ, Սալաս, Սիոռեր, Ան-ա, և այլք չընդունին զայն՝ ուր չկը զայնմանէ օրէնք բացայայտ։ Ոմա զի անցեալն այն և խոստովանեալ մեղք ոչ ևս դառնան. այլ վերոյհին ընայն մեզս գործէ չհատուցանելովին, և անդրէն անկանի՝ի բանադրանս։ Այլ իսկ է զի՝ի ներել Աստուածնելոյն զինաս ընկալեալ յումեքէ, գոյանի նա ազատ՝ի հատուցմանէ. բայց բարւոք ազդ առնէ զայսմանէ Լաքրուա, նախ՝ զի Աղաչութիւն Աստուածնելոյ միանձին ոչ բաւէ, եթէ Աստուածնելն՝ի միաբանութիւն անդր հասեալ իցէ. երկրորդ՝ զի պարտապանն գերծանի՝ի պարտուց, եթէ Աստուածնեալն մերժէ զարդար հատուցումն. երրորդ՝ եթէ պարտապանն չկարիցէ առժամն առանց ամենածանր ինասու անձին առնել զհատուցումն, որպէս ասացաք զայսմանէ՝ի գլ. ժ. 65 և 117։

71. Յորմէ բանագրանաց և՛ ի մեզաց վերապահելոց կարեն խոստովանահարքն արձակել զապաշխարողս՝ ի յօթևընկի։ — Ըստ հաստատակաց կարծեաց աստուածաբանից, իշխանութիւնն ընծրհեալ խոստովանահարց՝ ի յօթևընկի արձակելոց զապաշխարողս՝ ի վերապահելոց պատկին՝ բովանդակ է զվերապահեալս Թեմական եպիսկոպոսի. և զի Թէպէտ և չիցէ օրէն արձակել զհերետիկոսս, այլ զհամախոհս նոցա և զընթերցօղս արգելեալ գրեանց և զհայհոյիչս մելօրական հայհոյանաց օրէն է արձակել. զի այսոքիկ չեն յատկապէս տեսական հերետիկոսութիւնք։ Օրէն է զարձեալ արձակել զյայտնի հարկանօղս եկեղեցականաց, և զայլս յանուանէ իսկ բանագրեալս և կախեալս։ Սակ յաղագս յանուանէ բանագրելոց՝ է ծագումն, այսինքն յեպիսկոպոսաց ըստ առանձնական վերապահելոց, յայտ առնէ քահանայապետն, զի առ ընդունելութիւն ևեթ յօթևընկին օրէն իցէ արձակել։ Ի յաղագս անկանոնութեանց, զայնոսիկ ևեթ առ տնօրինել՝ որք արհամարհութեամբ բանագրանաց անկեալ իցեն յանկանոնութիւն։

72. Ի յօթևընկի սուրբ տարուցն գադարեն ամենայն ներողութիւնք ընծրհեալք վասն կենդանեաց, այլ ոչ ննջեցելոցն և ոչ հիւանդաց՝ ի հոգեվարս, որպէս սահմանեաց Աւրբանոս Ը. նա և ոչ ընծրհեալքն ոմանց առանձինն՝ ի պատկն, որպէս և ոչ ընծրհեալքն յեպիսկոպոսաց։ Գադարեն արտաքոյ հռովմայ և իշխանութիւնք վասն լիակատար ներողութեան ընծրհեալք արձակելոց զվերապահեալս պատկին, տնօրինելոց զուխտս, և այլն։ Այլ ոչ և Թեմական եպիսկոպոսացն ընծրհեալք՝ ի տրիդենտեան ժողովոյ, արձակելոց զվերապահեալս պատկին, տնօրինելոց զարգելս ամուսնութեան կամ խնդրելոց զամուսնական պարտս և այլն, որ նոցա ըստ իրաւանց անկ են։

ՅՕԴՈՒԱԾ Թ

ՅԱՂԱԴԴ ՊԱՇՏՕՆԷԻ ԽՈՐՀՐԴՈՑ ԱՓԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

73 · Զի քահանայից ևեթ է պաշտօն խոստովանութեան :
74 · Զի պարտ է խոստովանահօր ունել հրաման · զի ոչ է կարևոր քննութիւն :
75 · Եթէ յանկրաւն բառնի յումեքէ հրաման :
76 · Օրէն ևս յաջորդն առնել վերատին քննութիւն :
77 · Օրէն ևս անհրաման քահանայի արձակել զապաշխարսն ի նեբելի մեղաց :
78 · Օրէն ևս ժողովրդապետի կոչել յօդնութիւն զոք ի ժողովրդապետաց այլոց թեմի :
79 · Կամ զայնր թեմի :
80 · Որմէ եպիսկոպոսն անկ է տալ հրաման : Կրծնաւորք , որք ի թեմի ուրեք ունին հրաման :

73 · Պաշտօնեայ խորհրդոյ ապաշխարութեան չկարէ ոք կալ բաց ի քահանայից , որոց միայն տուաւ իշխանութիւն ի տեառնէ Թողուլ զմեզս · « Որոց ևս թողուք մուրք · եթէ ումեք Թողուցուք զմեզս , Թողեալ լինին նոցա ,, : Այլ առ ի կարող լինելոյ վաւերաբար զխորհուրդ ապաշխարութեան պաշտել , պարտ է քահանայի ի վերայ իշխանութեան կարգին ունել և զիշխանութիւն իրաւասութեան յեկեղեցւոյ , և հրաման յեպիսկոպոսէ , ըստ յայտարարութեան տրիդենտեան ժողովոյ : Կրօնաւորաց ևեթ հրաման է կարելոյ խոստովանել որում և է կրօնակից քահանայի ըստ հրամանի կարգապետին ևեթ · այլ ոչ և կուսանաց , որպէս սահմանեաց Կղիմեդոս թ · զի և որ ազատք յիշխանութենէ Թեմական եպիսկոպոսին են կուսանք , չկարեն խոստովանել քահանայի՝ որոյ չկոյ հրաման յեպիսկոպոսէն :

74 · Թէպէտ և մեզանէ եպիսկոպոս՝ որ տարապարտուց մերժէ ի քննութենէ զոք ի քահանայից և զըստայ նմա հրաման պաշտելոյ զխորհուրդ ապաշխարութեան , սակայն քահանայն չկարէ առանց նորին հրամանի ընդունել զխոստովանութիւն · զի զսորին հակառակ վարդապետութիւնն դատապարտեաց Ալէքսանդր Ե : Կարելի է զի առ ի տալ քահանայի հրաման խոստովանութեան՝ ոչ է կարևոր քննութիւն , այլ շատ է հոգևական դատաստան եպիսկոպոսի զբաւականութենէ

նորա։ Օ այս այսպէս հաստատեն Հայման, Վ՚ռնեին-քէոյ և Ո՚ՁուսեմպայՀ. և յաւելուն Ալմատիկեանք՝ զի Թէ և եպիսկոպոսն՚ի ներքուստ անբաւական համարեսցի զոք և չհաւանեսցի տալ նմա զիշխանութիւնն, այլ արտաքին հաւանութիւնն նորա շատ է յիրաւատուԹիւն քահանային։ Վ՚իտելլի է դարձեալ զի կարէ եպիսկոպոսն և՚ի ձեռն այլոց տալ զայս հաւանութիւն. զի չէ սա գործ կարզին, այլ իրաւատուԹեան։

75. Օրէն է եպիսկոպոսի ամիսոյիել զՀրամանն իրաւատուԹեան ըստ անձանց, ըստ ժամանակի և ըստ տեղւոյ. այլ՚ի տալ միանգամ արձակաբար, մեղանչէ՝ եԹէ յանիրաւի ամիսոյիէ զայն կամ՚ի սպառ քառնայ։ Այնպիսի այն է՝ Թէ անիրաւութիւնն այն առնիցէ անվաւեր զբարձումն Հրամանին։ — Ո՚ղաւելագոյնք յաստուածաբանից անվաւեր համարին զայն, զի ոչ է օրէն խոստովանահօր տարապարտուց կորուսանել զիրաւատուԹիւն իւր։ Այլ քանզի յերկբայս՝ պարտ է արդար համարել զբարձումն, ՚ի գործնականի մասին ոչ ինչ զօրէ կարծիքս այս. զի մարԹ իսկ է եպիսկոպոսի ունել պատճառս իրաւացիս, զորս չկարէիցէ յայտնել քահանային։

76. Օրէն է յաջորդի եպիսկոպոսին վանն իրաւացի պատճառաց կոչել անդրէն՚ի քննութիւն զխոստովանահարս, և զժողովրդապետս իսկ կացուցեալս՚ի նախորդէն իւրմէ՝ նա և զարտունացեալ կրօնաւորս, եԹէ միայն սաստիկ կասկած զգոյուԹենէ նոցա կայցէ, ըստ յայտարարուԹեան սրբոյ դահուն։ Այլ չէ այս օրէն վերանորդի ուխտին կանոնիկոսաց՝ եԹէ չկայցէ եպիսկոպոսին առժամանակեայ տուեալ ումեք իշխանութիւն խոստովանուԹեան, պայմանաւս դնելոյ հաճոյ նէ ժԷղ. զի յայնժամ՚ի մահու եպիսկոպոսին դադարէ իշխանուԹիւն նոցա։

77. Խոստովանութիւն ներելի մեղաց առ քահանայ, որոյ չկայ իշխանուԹիւն արձակելոյ, օրինաւոյնս եԹէ կայ՝ Թէ անվաւեր ևս։ — Օ օրինաւորութեան նէն ոչ ևս է երկբայուԹիւն յետ վճռոյ Ինոսենկենտիոսի ԺԱ. ինայ ասել զանվաւերականութենէն։ Վ՚ևպէտ հաստատակաց կարծիք վաւերական համարին զայն, այլ քանզի յայժ հաւանական է՝ զի քահանայք ոչ ուղղակի

’ի Վրիստոսէ առնուն զիշխանութիւն արձակելոյ այլ ’ի ձեռն եկեղեցւոյ՝ որպէս հաստատեն Սուարէզ, Լուկա, Պանաչինա, Վրանչինա, Ռոնքալեա և այլք, յոյժ հաւանական գտանի և անվաւերականութիւն այնպիսւոյ խոստովանութեան յետ Կնոսովկենտեան վճռոյն։ Օ՞ի չէ համարելի տալ եկեղեցւոյ իրաւասութիւն այնոցիկ, որոց յայտնապէս արդելու չվարել նովաւ։

78. Որքա՞ն իցէ ժողովրդապետի կոչել յօգնութիւն իւր ’ի յաձախել ապաշխարողաց՝ զայլ ոք ժողովրդապետ յայլմէ թեմէ։ — Վասերիալ, Սուարէզ, Ասպուէզ, Լուկա, Վրանչինա և այլք օրէն համարին՝ ըզժողովրդապետաց իշխանութիւն ընդարձակելով ընդհանուր եկեղեցի վասն բանի տրիդենտեան ժողովոյն, “Ո՛ի ոք կարասցէ ընդունել զխոստովանութիւնս՝ եթէ չիցէ բաւական դատեալ առ այն, կամ զժողովրդապետութիւն և կամ հրամանն յեպիսկոպոսէ ընկալեալ,,։ Այլ հաւանականագոյն կարծիք առաւելագունից ’ի բարոյականաց չընդունին զայն. զի իմաստ բանից ժողովոյն է՝ ժողովրդապետաց նովին խակ ընտրութեամբն ’ի հոգաբարձութիւն ժողովրդեան, ունել իշխանութիւն պաշտելոյ զխորհուրդ ապաշխարութեան՝ առանց այլոյ հրամանի, քայց յիւրուքին եւեթ վիճակի և ըստ կամաց եպիսկոպոսին. որպէս և են իսկ զայսմանէ այլ և այլ յայտարարութիւնք սրբոյ ժողովոյն տրիդենտեան սահմանադրութեանց։ Վիտելի է աստանօր զի ’ի հրաժարել ուրուք ’ի ժողովրդապետութենէ իւրմէ, չկարէ առանց հրամանի եպիսկոպոսին պաշտել զխորհուրդ ապաշխարութեան։

79. Այլ ըստ հանրագոյն կարծեաց օրէն է ժողովրդապետի կոչել զայլ ոք ’ի ժողովրդապետաց այնր թեմի յօգնութիւն իւր, եթէ չիցէ ինչ հակառակ սովորութիւն ’ի թեմին։

80. Ընդ թեմական եպիսկոպոսունս համարին և կարգապետք՝ որոց է իրաւասութիւն ’ի վերայ հպատակաց իւրեանց, որպէս և աբբայից ոմանց և ուխտի կանոնիկոսաց ’ի դատարկանալ աթոռոց։ Սմա և զեպիսկոպոսունս հաստատեալ, թէ և չիցեն տակաւին օծեալ. այլ ոչ և զայնոսիկ՝ որ ընտրեալ եւեթ իցեն, նա և ոչ զկրաժարեալս ’ի թեմէ իւրեանց։ Այլ խնդիր այն է թէ

զո պարտ իցէ խմանալ Թեմական եպիսկոպոսաւ, որում անկ իցէ տալ հրաման խոստովանութեան քահանայի։ — Կնքաք զԹեմական ապաշխարողին, այլք զԹեմական քահանային ասէին խմանալ. այլ արդ ոչ ևս զայսմանէ օրէն է վիճել, զի ըստ կանոնակաց Նիոմկիետեայ Ժ.Ր, և Նէոնեզիկետեայ Ժ.Դ, պարտ է խմանալ զԹեմական տեղոյն։ Նայց օրէն է ժողովրդապետի ընդունել զխոստովանութիւն ժողովրդեան իւրոյ յորում և իցէ Թեմի, ըստ յայտարարութեան նորին վերոյիշեալ ժողովոյ։

Նակ յայտագս կրօնաւորաց, ևս և ազատաց յիւրաքանչիւր վանսն Թեմական եպիսկոպոսի, յառաջագոյն իսկ քան զՆիոմկիետիոս Ժ.Ր յայտ արարեալ է Նիոմկիետեայ Ժ, զի որք կամիցին պաշտել՝ ի վիճակի ուրեք զխորհուրդ ապաշխարութեան՝ պարտ է նոցա ունել հրաման՝ ի Թեմական եպիսկոպոսէ։

ՅՕԴՈՒԱԾ Ժ

ՑԱՂԱԳՍ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԽՈՍՏՈՎԱՆԱՀԱՅՈՑ

81. Ո՞ ըստ կարգի եշխանութեանն, և ո՞ ըստ աւանդեալ եշխանութեան ունի իրաւասութիւն։
82. Աւանդեալն իրաւասութիւն դադարէ՞ ընդ մահուան աւանդողին։
83. Բաւակա՞ն իցէ հաւանութիւն մեռաց եպիսկոպոսի։
84. Ո՞ր երկբայելի իրաւասութեամբ արձակիցէ։
85. Ո՞ւմ օրէն իցէ ընտրել իւր խոստովանահայր։
86. Ազատ է աներևոյթ ոք խոստովանել ումմէ և կամիցի՝ ի խոստովանահարց։
87. Ո՞ւմ օտարականք կարեն խոստովանել։
88. Ո՞ւմ կրօնաւորք։
89. Ո՞ւմ կուսանք։
90. Վրիպակ հաստարակաց. կարծեցեալ իրաւունք։
91. Օրէ՞ն իցէ արձակել հաւանական իրաւասութեամբ։
92. Օրէ՞ն իցէ բանադրելոց և այլն՝ արձակել զհիւանդս՝ ի հոգեվարս։
93. Օրէ՞ն իցէ պարզ քահանայի՝ ի կաղ անդ խոստովանահօր։
94. Բացառութիւնք։
95. Խոստովանահայր մեղսակից՝ ի պղծութիւն։
96. Խոստովանահայր հաստարակ՝ ի կաղ անդ վերադունի։
97. Ջվերապահելոց Պապին։
98. Պարտ իցէ հիւանդն՝ ի հոգեվարս աղերսել դրով հրաման՝ ի վերադունից։

81. Ա՛յրէ է, որպէս ասացաքս, իշխանութիւն կարգին՝ զոր ընդունի ձեռնադրեալն ընդ քահանայութեան

'ի Քրիստոսէ վասն արձակելոյ զմեզս, և այլ իշխանութիւն իրաւասութեան՝ զոր ընդունի յեկեղեցւոյ վասն վարելոյ իշխանութեամբ կարգին 'ի վերայ հաւատացելոց, յորոց վերայ տայ նմա եկեղեցի իշխանութիւն։ Եւ զայս իշխանութիւն իրաւասութեան կրկին է, քահ կարգէ և քահանայութեան։ Զատ կարգի է հովուացն ամենեցուն, որպէս Պատլին և եպիսկոպոսաց, արքեպիսկոպոսաց (յայց առնել նոցա հպատակաց օժանդակ եպիսկոպոսաց), ժողովրդապետաց և կարգապետաց։ Ումանք յաստուածաբանից երկբայեցին զեպիսկոպոսական փոխանորդաց՝ թէ չունիցին իրաւասութիւն ըստ կարգի 'ի խորհրդական ատենի, ընդունելոյ զիսոստովանութիւն և տալոյ այլոց զնոյն իշխանութիւն. իբր թէ իշխանութիւն նոցա իցէ յարտաքին եւեթ ատենի։ Եւ այլ հանրական և ձեմարտապետն կարծիք աներկբայելի ունին զայն. զի եպիսկոպոսական փոխանորդք ոչ եպիսկոպոսք ունին զայն իրաւասութիւն, այլ 'ի կանոնաց, զի ոմն եւեթ ատեան կացուցանեն ընդ եպիսկոպոսին։ Սակ իրաւասութիւն ըստ աւանդութեան այն է, զոր աւանդեն այլոց՝ ունողք իրաւասութեան ըստ կարգի. որպէս Պատն կարէ աւանդել ընդ հանուր եկեղեցի, եպիսկոպոսունք 'ի Թեմի իւրեանց, կարդապետք ընդ կրօնն ողջոյն, և ժողովրդապետք 'ի վիճակի իւրեանց։ Պատն կարէ աւանդել իշխանութիւն ընդդէմ կամաց եպիսկոպոսաց և կարդապետաց, եպիսկոպոսունք և կարդապետք կարեն ընդդէմ կամաց ժողովրդապետաց և վանահարց, այլ ոչ և ընդ հակառակն։

82. Իրաւասութիւն արտաքին դադարէ մահուամբ աւանդողին, այլ ոչ և ներքինն. այսինքն չդադարէ յորժամ հանրական է աւանդեալն իշխանութիւն, եթէ 'ի Պատէն և եթէ յեպիսկոպոսէ. այլ դադարէ յորժամ մնայնական է, այսինքն վասն դիպաց լինչ կամ անձանց աւանդեալ։ Եւ զիտելի է զի որ ըստ աւանդութեան ունի իշխանութիւն՝ չկարէ աւանդել զայն այլումն, եթէ չիցէ տուեալ նմա բացայայտակի իշխանութիւն և այլումն աւանդելոյ։ Ի բաց առեալ զայնոսիկ՝ որոց աւանդի իշխանութիւն հանրական. այլ և զայս պարտ է զանազանել։ Զի՝ յորժամ աւանդի նմա պաշտօն լինչ՝ ընդ որում կցորդ է իրաւասութիւն, թէ-

պէտ և չկայ սեփական պաշտօնն այն՝ այլ փոխանորդա-
կան. օրպէս փոխանորդ ժողովրդապետի բացակայի
կամ չէ և ևս քահանայացելոյ, կարէ աւանդել այլում
պիրաւասութիւն իւր, ոչ բովանդակ՝ այլ վասն միոյ
իրիք կամ երկուց իրաց, օրպէս հաստատեն աստուա-
ծաբանք առ հասարակ ընդ ամուրը Կ՚գուինացւոյն։ Ո՞վ
ոչ յանձնի նման գործ ինչ ժողովրդապետի, այլ պաշ-
տօն ժողովրդապետական՝ որում անկ է ոչ միայն՝ ի կիր
արկանել զիրաւասութիւն, այլ և աւանդել զայն։ Իսկ
միւս ևս՝ յորժամ աւանդի ուժեք ոչ պաշտօն ինչ, այլ
իրաւասութիւն՝ օրպէս ընդոհ մէջանջևնաւոր կացոյդ իշ-
խանութեան իւրում. զի յայնժամ իրաւասութիւնն
այն համարի օրպէս ըստ կարգի իշխանութեան, օրպէ-
սի է իշխանութիւնն ընդոհեալ եպիսկոպոսաց՝ ի տրի-
գենտեան ժողովոյ՝ արձակելոյ զվերապահեալս Պապին,
տնօրինելոյ զարգելս ամուսնութեան և այլն։ Յաւե-
լեան Նոտարիուսէ, Պէյա, Վ լուա, Կաւարրոյ և այլք,
զի եթէ եպիսկոպոսն տայ խոստովանահօր իշխանու-
թիւն արձակելոյ զամենայն վերապահեալս, կարէ նա
աւանդել այլում զիշխանութիւն իւր՝ ի դէպս ինչ. այլ
խնդ օրպէս՝ ի վերջ այսր ասացեալ, ի տալ նմա եպիսկո-
պոսին զիշխանութիւնն զայն վասն ժողովրդապետու-
թեանն կամ փոխանորդութեան ժողովրդապետի, և
կամ վասն այլոյ իրիք այսպիսի պաշտամանն, և ոչ յոր-
ժամ տայ ուժեք զայն վասն հմտութեան նորա և խոս-
հականութեան. զի իշխանութիւն աւանդելոյ այլում
զայն՝ անկ է այնոյիկ միայն, որոց յանձնի պաշտօն, և
ոչ որոց գործ ինչ պաշտամանն այնորիկ աւանդի։

83. Կ՚ը՝ ի կարող լինելոյ պաշտել զխորհուրդ ապաշ-
խարութեան՝ ոչ է բաւական հաւանութիւն մտաց ե-
պիսկոպոսի, այլինքն վստահել ուրուք՝ զի եթէ գիտէր
եպիսկոպոսն զհանգամանս իրացն՝ հաւանէր. զի այս-
պիսի մեկնողական կամք ոչ է բաւական առ՝ ի տալ ի-
րաւասութիւն։ Կ՚այլ եթէ գոյի անդ, և զնեղքին հա-
ւանութիւն իւր յայտնեսցէ արտաքին նշանօք, և կամ
տեսանելով զմատչել քահանային՝ ի խոստովանարան
վասն ընդունելոյ զխոստովանութիւն լռեցէ, շատ է
այս նորին լռելեայն հաւանութիւն։

84. Կ՚եղանչէ քահանայ եթէ երկբայական իրաւա-

սուքեամբ արձակել զապաշխարողն. այլ ի բաց առեալ նախ՝ զվտանգ մահու. երկրորդ՝ եթէ ապաշխարողն պարտի առնել զտարեկան խոստովանութիւնն, և չկայ անդ այլ խոստովանահայր. երրորդ՝ եթէ ապաշխարողին չկայ մարթ ճոգոլ զպատարագ կամ զհաղորդութիւնն առանց անուանարկութեան, կամ որպէս յաւելուն Ալմատիկեանք՝ եթէ պարտ իցէ ապաշխարողին պատարագել ի նմին աւուր: Ա. այլ ասա պարտ է յիշատակել որ ինչ ի նախորդ գլխի ասացաք (34). զի եթէ ստոյգ իցէ ապաշխարողին մեղքն և անստոյգ կատարելութիւն ջղջմանն, չէ օրէն յայնժամ երկբայելի արձակմամբ հաղորդել. զի զօրէ յայնժամ պատուիրան փորձելոյ զանձն, որ պահանջէ զստոյգ և ոչ զերկբայելի արձակումն: Ա. այլ որպէս ուսուցանեն աստուածաբանք, օրէն է խոստովանահօր ի դէպս յայսպիսիս պայմանաւոր զարձակումն՝ էլևառնուելոցամբս զղջ եղիցի ոմանի: Յաւելուն և՝ զի լաւ է յայնժամ ապաշխարողին խոստովանել ներելի մեզս ինչ, որպէս զի ուղղակի արձակել զայն քահանային, և անուղղակի զայլսն:

85. Օրէն էր երբեմն եպիսկոպոսաց և իշխանաց և այլոց ոմանց ընտրել իւրեանց խոստովանահայր ի պարզ քահանայից, այլ ապա խափանեցաւ արտունութիւնս այս վաղուց սրբոց ժողովոյն, և յամին 1582 կոնդակաւ Գրիգորի ԺԳ. հաստատեցաւ վճիռն այն: Այս արդ եպիսկոպոսաց և ոչ ևս թոյլ է ընդ իւրեանս խոստովանահայր, և յորում և իցէ թեմի խոստովանել նմա: Այլ և կարգեալ առաւելաւն է օրէն. զի ոչ միայն ինքեանք, այլ և ընտանիք իւրեանց կարեն խոստովանել նմին խոստովանահօր՝ յորում վճռակի և զբաղանիցին: Ա. այլ առնոյն վարդապետութիւնք և արտունութիւնք զայսմանէ անբնդունելի են. և ոչ խոստովանահարք բանակաց կարեն արձակել զքինուորս ի քաղաքի, առանց հրամանի թեմական եպիսկոպոսին:

86. Այլ օրէն է առնոյն ուժեք խոստովանելոյ ուժ ուժեք ի խոստովանահարց և կամիցի, և ընդդէմ կամաց ժողովրդապետին: Զի զհրամանն զայն լատերանեան ժողովոյն՝ զզատակական խոստովանութիւն առնելոյ առնոյն ուժեք իւրումն ժողովրդապետի, Ալեքսիոս Ը. և միւս Ալեքսիոս Ժ. կոնդակաւ յայտ արարին

իմանալ զոր և իցէ խոստովանահայր. և Յովհաննէս ԻԲ դատապարտեաց զսորին հակառակ վարդապետութիւնն:

87. Այսպէս և օտարականք, ուր և գտանիցին, ազատ են խոստովանելոց խոստովանահարց տեղւոյն, թէպէտ և այսր իսկ աղագաւ մեկնեալ իցէ ոք ի հայրենեացն՝ առ ի խոստովանել այլուր: Այսպէս արգելեալ է ի Կղեմայ Ժ. եթէ մեղս ուրուք վերապահեալ ի Թեմն ուրեք իցէ գործեալ, չկարէ գնալ այլուր առ ի խոստովանել զայն, որպէս ասացաւք ի տառն (135, 136):

88. Այլոց կրօնաւորաց ոչ է օրէն առանց հրամանի մեծաւորին իւրեանց խոստովանել այլում արտաքոյ կրօնին, որպէս հաստատեաց Ինոսենտիոս Դ. և այլ քահանայապետք: Այսպէս ոչ և յաղագս Թեան իւրեանց, ուր և գտցին, օրէն է նոցա և պարտ խոստովանել ուղղակի իւրեանց կրօնակցի, եթէ իցէ նորա իշխանութիւն ընդունելոց զխոստովանութիւն: Իսկ եթէ չիցէ նոցա ուղղակից, և կամ՝ ի կրօնակցաց իւրեանց ոք խոստովանահայր անդ, օրէն է նոցա խոստովանել ումէ և իցէ խոստովանահօր՝ ի կղերոյ կամ՝ ի կրօնաւորաց: Այս ամենայն հաստատակաց վարդապետութիւն է աստուածաբանից, հաստատեալ Ինոսենտեայ Ը: Այլ խնդիր է՝ թէ կարիցէ՞ն յաղագս Թեան, առ ի չգոյն նոցա ուղղակի կամ կրօնակի, խոստովանել ումէ և իցէ կարող քահանայի՝ որոյ չիցէ իշխանութիւն ընդունելոց զխոստովանութիւն: Հանրագոյն և ճշմարտագոյն կարծիք օրէն համարին ըստ ընտրելոյ Ալքատոսի Դ, և մանաւանդ Ինոսենտեայ Ը. ի բաց առեալ զվերապահեալսն:

89. Իսկ յաղագս կուսաստանաց գիտելի է նախ՝ զի Թեմական եպիսկոպոսին է անկ տալ նոցա խոստովանահարս. իսկ որոց ազատ իցեն յիրաւասութենէ նորա, դեռ զտուեալս նոցա ի վանահարց հաստատեալ ըստ կոնդակին Վրբիգորի Ժ. զոր հաստատեաց և Ինոսենտիոս Ժ. որպէս զի չկարել կուսանաց և ոչ զնեբելի մեզս խոստովանել այլոց խոստովանահարց, ըստ յայտարարութեան սրբոյ Ժողովոյն: Գիտելի է երկրորդ՝ զի ի լրումն երից ամաց զազատ իշխանութիւն օրինաւոր խոստովանահարց, ոչ միայն կուսաստանաց՝ այլ և

որբանոցաց և վարժոցաց դստերաց, առանց վերստին հաստատութեան։ Ըստ եմ իսկ օրինաւոր խոստովանահարց, զի եթէ տնօրինաբար տուեալ իցէ ումեք իշխանութիւն ընդունելոյ ի կուսաստանս զխոստովանութիւն ուրուք կամ ումանց ի կուսանաց անտի, նորայն իշխանութիւն ոչ երիւք ամօք սահմանի. զի ընդհեալ իսկ է կուսանաց հրամանաւ եպիսկոպոսին չխոստովանել օրինաւոր խոստովանահօր վասն խստութեան նորա և կամ վասն այլոց իրիք իրաւացի պատճառի։ Կրնաեալի է երբորդ՝ զի պարտ է եպիսկոպոսին կամ վանահարց տալ կուսաստանաց դէթ մի անգամ՝ի տարւոջ եօթնեակ մի զայլ զբ խոստովանահայր, որպէս սահմանեաց Ինոկենտիոս ԺԳ. կոնդակաւ, և Բենեդիկտոս ԺԳ. ընդարձակեաց զայն ընդ ոլորտս ուղղափառաց, և Բենեդիկտոս ԺԴ. վերստին հաստատեաց։ Այլևս՝ի պակասել նոցա տալ խոստովանահայր տարօրէն՝ կարել կուսանաց ըստ բենեդիկտեան կոնդակին դիմել առ աւագ ապաշխարահայրն, և պահանջել՝ի նմանէ զայլ զբ։ Ի նմին կոնդակի հրամայի կուսանաց ամենեցուն յանդիման լինել տարօրէն խոստովանահօրն, թէպէտ և էկաւիցին խոստովան լինել նմա։ Նոյնպէս և՝ի վտանգ մահու եթէ կամիցին այլ խոստովանահայր, հրամայի անդ տալ նոցա, և եթէ կուսաստանն աղաւա իցէ յիրաւասութեանն եպիսկոպոսին, և վանահայրն էկամիցի տալ, հրամայի զի տացի յեպիսկոպոսէն. և եթէ եպիսկոպոսն և՝ էկամիցի տալ, տացի յաւագ ապաշխարահօրէ։ Նոյն ընդհ հանդերձ ամենայն մասամբք ընդհի անդ կուսանաց և արտաքոյ վտանգի մահուան՝ եթէ էկամիցին օրինաւոր խոստովանահօրն լինել խոստովան, և հրամայի եպիսկոպոսաց մի դժուարահաճս լինել ընդ այն։ Ի վերայ այսոցիկ հրամայի անդ և և՛ս վանահարց տալ ամի ամի կուսաստանաց խոստովանահայր զոք յընտրեցոյ յեպիսկոպոսէն՝ի կղերոյ և կամ յայլոց կրօնաւորաց. ապա թէ ոչ, եպիսկոպոսն տացէ նոցա. և յաւուրն յայնմիկ էկարել օրինաւոր խոստովանահօրն ընդունել զխոստովանութիւն ուրուք՝ի կուսանաց անտի, և ոչ զվանամօրն, և ոչ իսկ զնորընծայից։

90. Եթէ երբեք վրիպակ հասարակաց զերաւասու-
թենէ ուրուք՝ի քահանայից դիպիցի, ընդ եկեղեցի

զԹերին։ — Եթէ հասարակաց վերնակին կցորդ ի-
ցեն կարծեցեալ ինչ իսկապէս իրաւունք, որպէս եթէ
տուեալ էին իրաւասութիւն քահանային՝ այլ ընդդէմ
հրամանի վերադունին, հաւատի համարին առաուա-
ծաբանք առհասարակ ընուլ եկեղեցւոյ զԹերին. ապա
Թէ ոչ, բազմաց հասանէր կորուստ։ Երկրորդին
կանդիր այն է, Թէ առանց կարծեցեալ ինչ իրաւանց ևս
ընդ եկեղեցի զԹերին։ — Վերջ յաստուածաբանից չը-
համարին ընուլ, բայց Լուկիոս, Լեսիոս, Փանդիոս, Դաս-
Թրուիալ, Ամբէկ և այլք հաւանականաբար վասն
նոյն պատճառի հաստատեն՝ ընուլ և յայնժամ եկեղե-
ցւոյ զԹերին։

91. Որպէս էին խոստովանահօր արձակել զոք հա-
ւանականաւ Եթէ իրաւասութեամբ։ — Ամենք բայց
Ի բաց մերժեն զայս վասն դատապարտեալ վարդապե-
տութեան չվարելոյ հաւանական կարծեօք Ի կատա-
րումն խորհրդոյ։ Դէյք, ընդ որս և Լուկիոս, Պոնաչի-
նա, ՎասԹրուիալ, Ամբէկ, Վիւա, Լա-
քրուա, ըստ հանրական կարծեաց հաստատեն զայն
բոլորովին, և Ամբէկ համարի զայն ստոյգ բարոյապէս.
զի Ի սովորութիւն կալեալ է յեկեղեցւոջ հաւանական
իրաւասութեամբ արձակել, և սովորութիւն քաջ իսկ
տայ իրաւասութիւն՝ որպէս ուսուցանեն աստուածա-
բանք առ հասարակ։ Եւ ոչ զօրէ ինչ դատապարտեալն
վարդապետութիւն, զի անդ խնդիրն է զիրաց՝ յորս չիք
իշխանութիւն եկեղեցւոյ, որպիսի են նուէք և ձէ խոր-
հըրդոյ. այլ ասա զիրաւասութենէ՝ ուր եկեղեցի կարէ
ընուլ զԹերին, և օրէն իսկ է համարել զի ընուցու վասն
փրկութեան հաւատացելոյ։ Ումն որոյ խոստովանա-
հայրն Ի դէպս յայսպիսիս ոչ հաւանականաւ, այլ
ստոյգ իրաւասութեամբ տայ զարձակումն. ինա Ի պա-
հանջել ծանուցից և իրաւացի պատճառաց, ապա Թէ
ոչ՝ չէ օրէն համարել զի եկեղեցի համարձակութեան
խոստովանահարց տեղի տայէ։ Եւ իրաւացի պատ-
ճառք են՝ կարօտութիւն ապաշխարողին օգնականու-
Թեան այնր խոստովանահօր. կամ եթէ մերձակիցն Ի-
ցէ ծանօթ խոստովանահօր՝ որոյ նոյն ստոյգ իրաւասու-
Թիւն. կամ եթէ վտանգ անվաւեր խոստովանութեան
Ի վերայ կայցէ. կամ եթէ հակառակութեան և կաս-

կաճանաց խոստովանահօրն այնմիկ տացին պատձառք. կամ պարտ իցէ ապաշխարողին յամել՝ի մեղս առանց խոստովանութեան. և կամ եթէ հարկ տարեկան խոստովանութեան կամ լիակատար ներողութեան ստիպեսցէ: Յաւել և զայն, եթէ ապաշխարողին խոստովանեալ իցէ ծանր ինչ մեղս՝ զորմէ մարթ իցէ երկբայել թէ իցէ վերապահեալ, որպէս ասացուք՝ի տառև (142):

92. Որքո՞ն իցէ՝ի վտանգ մահու արձակել ամենայն քահանայից, և յերձաւածողաց, չարաւիառաց, և բանադրելոց իսկ անհաղորդելեաց: — Վասնայայտ է զի յայնժամ և քահանայք անկեալք՝ի կարգին՝ կարող են արձակել զամենայն իսկ վերապահեալ մեղս, ոչ միայն՝ի հոգեվարս՝ այլ և՝ի վտանգ մահու, ըստ հանրապոյն և ճշմարտապոյն կարծեաց, զոր հաստատեն Նաւարրոյ, Միլուեսթրոյ, Սուարէզ, Լուկոյ, Սանքէզ, Վասթրոփալ, Սալմատիկեանք և այլք. զի ամենայն որ հաւատացեալ, ոչ միայն՝ի հոգեվարս՝ այլ և՝ի վտանգ մահու պարտական է խոստովանելոյ: Իսկ վտանգ մահու համարի գնալ՝ի պատերազմ, երկար նաւարկութիւն, դժուարաճիւն երկունք, և ամենայն ախտ վտանգաւոր. յորս յաւելուն Սանքէզ և Սալմատիկեանք զհաւանական վտանգ խելագարութեան, զգերութիւն՝ի ձեռս անհաւատից՝ ուր իցէ երկիւղ չգտանելոյ խոստովանահայր: Ընդ գնոյն և վասն երիցանց հերձաւածողաց, չարաւիառաց և բանադրելոց անհաղորդելեաց հաստատեն Սանքէզ, Սուարէզ, Նաւարրոյ, Լուկոյ, Սալմատիկեանք և այլք: Նո՛ւ թէպէտ են և աստուածաբանք՝ որք զհակառակն հաստատեն, քայց սուրբն Ղիմնասս՝ որ յառաջն՝ի նոցա կարծիսն եր վասն սրբոյ Ղուինացւոյն համաձայնութեան, ապա յետս նահանջեալ՝ զառաջնոյն կարծիս ընդունի:

93. Որո՞ն իցէ անհրաման քահանայի արձակել զոք՝ի հոգեվարս, ուր իցէ ոք խոստովանահայր: — Հանրապոյն կարծիք ոչ օրէն համարին. զի զհրամանն զայն տայ եկեղեցի ամենայն քահանայից վասն յետին վտանգի՝ պէ՛ս ** կոչեցէ, որպէս յաւելու ժողովն տրիդենտեան. իսկ վտանգս այս կորստեան դադարէ ուր իցէ քահանայ խոստովանահայր: Քայց թէպէտ և՝ Նա-

ասլըդ, Պարսպազա, Այիլդ, և այլք զհակառակն հաստատեն, և զկարծիս նոցա հաւանական համարին Լուկա, Վիա, Փոլբը և այլք, սակայն առաջնոց կարծիքը ընդունելի են։ Ո՞ի մնշտոյն լատին յաւելու ենէ չէյե անդ խոստովանահայը. և զի այս իսկ էր՝ ի սկզբանէ տուողութիւն յեկեղեցւոջ, յայտ առնէ զայն Պօղոս ե՛ի կռնդակին՝ որում զմնշտոյն զայն սահմանէ՝ ի կանոն յասելն. Ո՞ր ինչ կամ՝ ողորմեցեալ եղեղեցի, ե՛ն նմանէ ընկալեալ առաքութիւնէն հաստատեաց։ Նոյնպէս զիշխանութիւն անհրամանն քահանայից արձակելոյ զհիւանդս՝ ի հոգեվարս ուր չկոչէ խոստովանահայր, ոչ՝ ի տրիդենտեան ժողովոյ՝ այլ՝ ի հին կանոնաց և՝ ի հասարակաց սովորութենէ եկեղեցւոյ ունիմք։

94. Նայց միաբանին աստուածաբանք զի օրէնն է և անհրամանն քահանայից արձակել, ևս և՝ ի կալ անդ խոստովանահօր, ՝ի դեպս ինչ։ Նախ՝ եթէ խոստովանահայրն չկարէ կամ չկամի արձակել։ Նրկրորդ՝ եթէ խոստովանահայրն յանուանէ քանադրեալ կամ կախեալ իցէ։ Նրրորդ՝ եթէ յայլում աեղի թեմի իցէ նորա իշխանութիւն արձակելոյ։ Ղորրորդ՝ եթէ հիւանդն էնա այնպիսի խորշումն իցէ՝ ի նմանէ, զի վտանգ՝ ի վերայ կացէ սրբապիղծ խոստովանութեան՝ որպէս ասեն Նաքրուա, Փոլբը և Ա՝ացցոթթա ընդ սուրբ Նգուինացւոյն. զնոյն յաւելու Փոլբը, եթէ հիւանդն չըկարիցէ առանց ծանր դժուարութեան կամ նեղութեան խոստովանել նմա, կամ յայտնապէս օգտակարագոյն իւր համարեսցի խոստովանել անհրամանն քահանային։ Ընդհերորդ՝ եթէ սկսեալ իցէ խոստովանել նմա, և ապա հասցէ քահանայն խոստովանահայր։ Նսկ եթէ վերատին ունիցի ինչ խոստովանել, և մեղքն՝ զորս խոստովանելոյն է՝ չիցեն յարակից այլոց խոստովանելոցն յառաջագոյն, պարտի միւսոյմն խոստովանել՝ որոյ իցէ հրամանն արձակելոյ։ Նյս գարձեալ եթէ հիւանդն՝ ի քանադրանս ինչ վերապահեալս կացէ, թէպէտ և սկսեալ իցէ զխոստովանութիւնն՝ պարտի յայնժամ դադարել, և զարձակումն քանադրանացն ընկալեալ՝ ի միւսմէն՝ կատարել ապա զխոստովանութիւնն։ Ալ եղեբորդ՝ եթէ քահանայն խոստովանահայր իցէ մեղսակից ընդ հիւանդին՝ ի գործ պղծութեան, որպէս յայտ ա-

րար Ս. Ենեդիկտոս ծդ: Ա. այլ զայսմանէ պարտ է մանրամասնաբար ասել:

95. Արդէն կոնդակօք բառնայ քահանայապետն զաշխարհական իրաւասութիւն խոստովանահօր՝ի վերայ մեղսոյն էրոյ ընդդէմ վէպերորդ պատուիրանին, և եթէ իշխի՞ ընդունել զխոստովանութիւնս նորա, անկանի՝ի բանադրանս վերապահեալս Պապին: Ա՝իսկ՝ի բաց առնու զվերջին հարկ՝ի հոգեվարս՝ յորում ներէ նմա արձակել զմեղսակիցն, եթէ միայն չիցէ ոք այլ քահանայ՝ևս և անհրաման՝ որ կարիցէ արձակել զհիւանդն. և կամ եթէ միւսն այն քահանայ չկարիցէ առանց ծանր պայթակղութեան կամ անուանարկութեան խոստովանահօրն այնորիկ ընդունել զխոստովանութիւնն հիւանդին: Յաւելու քահանայապետն, զի եթէ կարող իցէ նա բառնալ զվտանգն զայն պայթակղութեան կամ անուանարկութեան՝ պարտական է բառնալ ընդ նովին պատժով բանադրանաց. թէպէտ և՝ի չբառնայն՝ վաւերապար արձակիցէ զհիւանդն:

Ընդ նախ պղծութեան մեղօք պարտ է իմանալ ոչ միայն զպոռնկութիւն կամ զսրսուագիտութիւն լրացեալ, այլ և զշօշափումն և զպիղծ խօսակցութիւնս՝ եթէ իցեն ծանուցք: Նայց ոչ բովանդակին ընդ սովաւ մեղք ըստ թեթևութեան իրացն և կամ ըստ անկատար կամաւորութեան ներելիք, կամ մահացուք իսկ՝ այլ ոչ լիով արտայայտեալք, զի պարտ է մեղացն և արտաքուստ գոլ ծանր: Ոչ բովանդակին ընդ սովաւ և ոչ մեղք, որք ըստ արդեանցն կամ ըստ իրաւանցն երկբայութեամբ իցեն մահացուք. նա և ոչ յորժամ չիցէ յայտ և մեղսակցին մեղանչել մահուաւք. զի ըստ կոնդակին՝ պարտ է իմանալ զմեղսակից տեսականի՝ի ծանր մեղս պղծութեան. որպէս հաստատեն Ալմատիկեանք զայս ամենայն: (Տես և՝ի ստորև թիւ 142):

Վ-խտելի է երկրորդ՝ զի արձակումն տուեալ՝ի մեղսակից խոստովանահօրէ՝ է անվաւեր և վանն այլոց մեղաց ապաշխարողին, եթէ չիցէ նորա խոստովանեալ յառաջագոյն այլում զայն մեղս իւր: Ա՛յլ եթէ մեղսակից խոստովանահայրն լուիցէ և եթէ զխոստովանութիւն մեղսակցին, և կեղծեօք և եթէ զնա արձակիցէ, անկանի՝ի բանադրանս: — Ասուրբն Ա՛լիմնաս աղա-

կացուցանէ զնա՛ ի բանադրանաց, զի Անենդիկտոս ԺԴ յաւելու զարձակումն առ՛ ի բանադրանս. «Ոը արտաքոյ վանդի մահու ընդունի զխոստովանութիւն մեռսակցին, և ապչակէ ինա, կամ՛ ի վտանգ մահու ապչակէ ուր կայցէ այլ ոք քահանայ»։ Սակ ԼԹ օրէն ելեն եպիսկոպոսի, զօրութեամբ արտունութեանցն ընդունելոց՛ ի տրիպենտեան ժողովոյ, արձակել զխոստովանողսն՝ որոց զմեղսակից իւր արձակեալ եցէ, տես՛ ի ստորև՛ ի գլ. Ժ. 57։

96. Օրէն եցէ հաստատակ խոստովանահօր՝ ՛ի կալանդ վերադունի՝ արձակել զՀիւանդ՛ ի հոգեվարս՛ ի մեղաց և՛ ի բանադրանաց վերապահելոց։ — Ի մեղաց վերապահելոց կարող եսկ և արձակել, զի՛ ի վտանգ մահու դադարէ ամենայն վերապահութիւն ըստ յայտարարութեան սրբոց Ժողովոյն. որպէս զի յառողջանալ հիւանդին՝ չեն ինչ նմա պարտք յանդիման լինելոց այլում խոստովանահօր, ուր արձակեալն առ այլ ինչ հարկի՛ ի վերապահելոց՝ չէ ազատ՛ ի պարտուց աստի։ Սակ անհրաման քահանայի չէ օրէն արձակել զոք առանց խոստովանահայր քահանայի, թեպէտ և ելեալ սորա իշխանութիւն արձակելոյ՛ ի վերապահելոց. զի որպէս առաջք, դադարէ՛ ի վտանգ մահու ամենայն վերապահութիւն։ Այլ՛ ի բանադրանաց վերապահելոց չկարէ հասարակ խոստովանահայր արձակել զոք՛ ի կալանդ վերադունի։ Օ՛ի եԹէ յառողջանալ հիւանդին՝ պարտ է նմա ըստ օրինի յանդիման լինել վերադունի, ոչ վասն ընդունելոց արձակումն՝ այլ՛ ի ցոյց յօժարութեան ընդունելոց ապաշխարանս՝ Թէ կամիցի նա տալ. և եԹէ՝ որպէս ուսուցանեն Ղաւարոյ, Ռուսրիզ, Պոնաչինա, Սանքեզ, Սալմատիկեանք և այլք, հիւանդն յառողջանալ իւրում ոչ լինի յանդիման վերադունի՝ անկանի անդրէն՛ ի բանադրանս, ապա և՛ ի կալանդ վերադունի՝ չէ օրէն հասարակ խոստովանահօր արձակել զնա՛ ի բանադրանաց։

97. Օրէն եցէ հասարակ խոստովանահօր արձակել առաջի եպիսկոպոսի՛ ի հոգեվարս՛ ի վերապահելոց Պապին։ — Ռոլինա Ռուարիզ, Սանքեզ և այլք այսպէս զանազանեն. եԹէ վերապահեալքն դաժանիք եցեն, չէ նմա օրէն արձակել. զի յայնժամ

Եպիսկոպոսն ըստ կարգի իշխանութեան ունի իրաւասութիւն ՚ի վերայ այնոցիկ, ըստ արտունութեանցն ընդհելոց նմա ՚ի արիւդենտեան ժողովոյ. վասն որոյ և պայման է լամանալ զհարկանելոյ ղոք յեկեղեցականաց հրապարակաւ, զի յորժամ չիցէ մարթ դիմել առ Պապն՝ եպիսկոպոսին անկ է արձակել և յայտնանէ զհարկանողն։ Այլ օրէն համարին հասարակ խոստովանահօր ՚ի կալ իսկ անդ եպիսկոպոսին արձակել զայլ հրապարակական մեղս վերապահեալս Պապին, զի և եպիսկոպոսին չիք իրաւասութիւն արձակելոյ զոք յայնցանէ։ Այս երկբոյդ մանն ոչ ընդունին այլ աստուածաբանք զրեթէ առ հասարակ. զի զկանոնն զայն դիմելոյ առ եպիսկոպոսն՝ յորժամ չիցէ մարթ դիմել առ Պապն՝ ոչ միայն վասն հարկանողաց զեկեղեցականս պարտ համարին իմանալ, այլ և վասն ամենայն հրապարակական մեղաց վերապահելոց. և որպէս ՚ի վեր այսր ցուցաք, չկարէ հասարակ խոստովանահայր ՚ի կալ անդ վերհագուն արձակել զհիւանդն ՚ի մեղաց և ՚ի բանադրանաց վերապահելոց։ Այնքերձ այսու ամենայնիւ չէ ինչ անհաւանական և առաջնոյն կարծիք, որովհետև չէ բաւական զոլանդակել ընդ վերոյիշեալ կանոնիւս և այլ ամենայն բանադրանաց։

98. Ոչն իցէ հասարակ խոստովանահօր արձակել զհիւանդ մահկանացու ՚ի մեղաց և ՚ի բանադրանաց վերապահելոց Պապին, յորժամ մարթ իցէ նմա գրով խնդրել իշխանութիւն յեպիսկոպոսէն։ — Ասկայ, Պոնաւենտուրա, Ալբերտ և այլք ոչ օրէն համարին. այլ հանրապոյն և հաւանականագոյն կարծիք զհակառակն հաստատեն. մի՝ զի վտանգ է յայտնութեան մեղաց ՚ի գրելոյ. և միւս լաւ՝ զի չկարէ դիմել առ Պապն կամ առ եպիսկոպոս՝ իմանալ ըստ որ և իցէ խափանածոյ, որպիսի է և չկարելն երթալ անձամբ առ եպիսկոպոսն։

ՅՕԴՈՒԱԾ ԺԱ.

ՅԱՂԱԳՍ ՊԱՇՏԱՄԱՆ ԵՒ ՊԱՐՏՈՒՑ ԽՈՍՏՈՎԱՆԱՀՕՐ

99, 100 · Չի կարևոր է խոստովանահօր գիտութիւն :
101 · Քանի պարտք իցեն նորա :
102, 103 · Պարտք քննութեան :
104 · Դատելոյ :
105 · Հրահանգելոյ :
106, 107 · Ազդ առնելոյ և խրատելոյ :
108–112 · Եթէ ազդարարութիւն և խրատ չիցեն յօդուտ :
113 · Եթէ չիցէ վաւեր պատիժ ապաշխարողին :
114 · Եթէ հարան և վնասայ պատրաստք կան ՚ի պատիժ :
115 · Եթէ իցեն պարտք հատուցման · եթէ ազդարարութիւն օգտակար իցէ յառաջիկայս :
116 · Եթէ հարցանէ ապաշխարողն · եթէ միւսոյ հասարակաց կայցէ ՚ի մէջն · եթէ երիցայելի իցէ օգուտ ազդարարութեան :
117 · Յաղագս արձակման :
118 · Որպիսի սուգութիւն պատրաստութեան իցէ կարևոր :
119 · Եթէ ապաշխարողն զկարծիս ինչ պինդ ունի որպէս հաւանական :
120 · Եթէ ժխտէ կամ լռէ ինչ ՚ի մեղաց :
121 · Յաղագս ուղղելոյ զսխալանս, և նախ զվաւերականութեան խորհրդոյն :
122 · Զպարտուց հատուցման՝ եթէ ազատ յայնմանէ կացուցեալ իցէ զապաշխարողն :
123 · Եթէ չիցէ ազդ արարեալ նմա զպարտս հատուցման :
124 · Օրէն իցէ ազդ առնել նմա զսխալանս խոստովանութեան առանց խնդրելոյ ՚ի նմանէ հրամանի :
125 · Պարտք պաշտելոյ զխորհուրդ ապաշխարութեան · ևս և վտանգաւ մահու :
126, 127 · Պարտ իցէ քահանայի պատրաստել և առնուլ հրամանն պաշտելոյ զխորհուրդ ապաշխարութեան :

99 · Ոչք միանգամ զխորհուրդ ապաշխարութեան պաշտել կամիցին, պարտ է նոցա զգիտութիւնս կատարեալս մեծի այնորիկ պաշտամանն ունել : Ո՛չ որպէս մեծն Կիւրիղոս ասէ, "Աղուեստ արուեստից է առաջնորդութիւն հոգւոց", և սուրբ Աւետարանքն կարևորագոյն և գերազարագոյն քան զամենայն պաշտամունս զպաշտօն խոստովանութեան համարի · կարևոր, զի նըպատակ ամենայն գիտութեանց է յաւիտենական փրկութիւն · և գերազարին, զի բարոյականին գիտութեան բազմապատիկ են ստեղունք, և բազկանայ ՚ի բազում այնչափ զրական օրինաց՝ զորոց պարտ է ուսանել

զՀարազատ իմաստս, զորս դէպք հետզհետէ եառնն յայտ առնել առաքելական գահուն վճռովք և կոնդակօք. վասն որոյ օգտակարագոյն յոյժ քան զնախնեաց՝ զարդի բարոյականաց մատեանս ի ընթեռնուլ, յորս բովանդակին առաւելագոյն հրահանգք գործնականի մասին: Նաղում մեծամեծ աստուածաբանք, նեղհունք՝ ի տեսականին՝ գտանին ճանճաղք՝ ի գործնականին, որ ըստ բանից Վերոնի դժուարագոյնն է, և նորանոր դժուարութիւնս միշտ առաջի առնէ. ուստի և զՀետ բերէ նոյն ինքն Վերոն, զի պարտ է հանապազորդել խոստովանահօր յուսումն բարոյականին, և մի երբեք թողուլ զայն՝ ի բաց: Նա բազմահմուտն Ափերելի յաւելու, զի սխալեն յոյժ խոստովանահարք, որք դասականին ևեթ հպատակեալ՝ անփոյթ առնեն զբարոյականն, ժամավաճառութիւն զայն համարեալ. Ե՛ չէիպեն զբոլ՝ ի բոլոյ պանապանել, որով ընդ խոսփովանորդս ի բութեանց՝ ի յաւիտենական կորուստն մղին: Վասն որոյ մնհուչափ մեղանչէ որ առանց բաւական գիտութեան իշխէ պաշտել զկորհուրդ ապաշխարութեան. մեղանչէ և եպիսկոպոսն՝ որ տայ նմա հրաման կամ թողու զնա՝ ի պաշտամանն. մեղանչեն և ապաշխարողք, որք գիտելով զտգիտութիւն խոստովանահօրն՝ առ նա դիմեն՝ ի խոստովանութիւն:

100. Ա՛պաքէն նուաստագոյն գիտութեան պէտք են վասն ընդունելոյ զխոստովանութիւն պարզամտաց քան զատենական, զվաճառական և զեկեղեցական որերոյ, նուազ՝ ի գեղջ քան՝ ի քաղաքի, մանաւանդ ուր առ՝ ի չգոյէ բաղում խոստովանահարց՝ պարտ իցէ հաւատացեալոց յապաղել զխոստովանութիւն: Ա՛յլ և ոչ այսուիկ արդարանան որք հարկանցի ինչ ուսեալ զհամառօտութիւն բարոյականի, յանդգնին բազում՝ ի խոստովանարանի: Պարտ է խոստովանահօր գիտել զոնեայ ցորչայր հասանէ իրաւասութիւն իւր. զի՛ք՝ ի մեզաց և՝ ի բանադրանաց իցէն վերապահեալ, գէթ յորս յաձախ պատահէ անկանել, որպիսի են բովանդակեալքն՝ ի կոնդակին ընթերեաց վերապահեալք Պապին, մերձութիւն արտայայտեալ, ընթեռնուլ պահել վաճառել զգիրս հերետիկոսաց՝ որ յատկապէս ձառեն զկրօնից, և բովանդակեն տեսական մոլորութիւնս, որպիսի են և

հնգեքին բանադրանքն պատկանիք Կղեմայ Ը. այսինքն Յանը և միջակ հարուած եկեղեցականի կամ կրօնաւորի, սիմոնականութիւն իրական կամ մտերմական. լուծումն փականայ արդելավանից կուսաստանայ ջար դիտաւորութեամբ. բռնաբարութիւն եկեղեցական աղատութեան և մենամարտ. որպիսի են և բանադրանքն ի Լենեդիկտեայ ԺԴ եդեալք ի վերայ խոստովանահարց՝ որք արձակեն զմեղսակիցս իւրեանց ի գործ պղծութեան, և որք օրինաւոր ասեն լինել խոստովանահօր հետազօտել զանուն մեղսակցի ապաշխարողին, զրկելով իսկ զնա յարձակմանէ՝ եթէ չկամիցի յայտնել զայն. և այլ ևս սոցին սակի բանադրանք, զորս մարթ է ուսանել ի Ձառն յաղագս բանադրանաց։

Պարտ է դարձեալ խոստովանահօր գիտել զխոհիր մահացու մեղաց ի ներելեացս, գէթ ըստ սեռին, և զայլոցն գոնէ երկբայել։ Գիտել դարձեալ որ ինչ պարտն իցէ հարցափորձել հանպամանս մեղաց, գէթ զայնս՝ որ փոխեն զտեսակ. որ ինչ կացուցանէ մերձաւոր վտանգ մեղաց, կամ աճէ պարտականութիւն հատուցման. զհանգամանս զղջման և առաջադրութեան, և զդէպս պատկանաւորս յուղղութիւն։ Համառօտիւ իսկ ասացեալ՝ լեզու գժոխոց շղջի խոստովանահայր տգէտ, զոր տէր ինքնին մերժէ ի պաշտամանէն ի ձեռն մարգարէին (Ովս. Դ. 6). «Օ՛ի դու զգիտութիւն մերժեցեր, մերժեցից և ես զքեզ՝ զի մի քահանայասցիս ինձ»։ Եւ ոչ եպիսկոպոսին ընտրութիւն արդարացուցանէ զնա, եթէ անձամբ զանձն յայտնապէս ձանաչէ անբաւական. զի ընտրութիւն ոչ տայ նմա գիտութիւն, այլ համարի ունել նմա։ Այսեմ իսկ յայտնապէս. զի որ երկբայի և եթէ, պարտ է նմա հանդարտել դատաստանաւ եպիսկոպոսին, այլ ջանալ յաւելուլ ի գիտութիւն։ Եւ ամենեցուն իսկ խոստովանահարց պարտ է յածել միշտ ընդ գիրս և ընդ խնդիրս բարոյականս. զի յայնչափ ի բազմապատիկ մասանց նորին, մանաւանդ այնց՝ որ ոչ յաձախ պատահեն՝ մարթ է անկանել ի մոռացօնս, եթէ ոչ տեսպ յուշի մտաց նորոգեսցին։

101. Ի վերայ ասացելոցս վեցեակ պարտք են խոստովանահօր։ Ա. Տեղեկանալ խղճի մտաց ապաշխարողին։ — Բ. Ունել ըստ օրինի դատաստան զծանրու-

թենէ և զաւազանէ մեզաց նորա : — Գ. Հրահանգել զնա ի հաւատս և ի բարի վարս : — Դ. Ազդառնել նմա զպարտս նորա : — Ե. Հրաժարել զնա, եթէ ընդունակ իցէ արձակմանն : — Զ. Ուղղել զխոստովանս իւր, եթէ երբեք գործիցէ ի պաշտել զևաորհուրդ ապաշխարութեան :

102. Ա. Պատասխանատու է խոստովանահայրն. և որպէս պարտ է դատաւորի լսել նախ երկուստեք զպատճառս և հշդադատել, և ապա տալ վճիռ, այսպէս և խոստովանահայր պարտի տեղեկանալ նախ խղճի մտաց ապաշխարողին, հշդադատել զպատրաստութիւն նորա, և ապա տալ կամ զլանալ նմա զարձակումն : Այլ թէպէտ քննութիւն խղճի մտաց անկ է առաւելապէս ապաշխարողին, սակայն ի զգալ խոստովանահօր՝ ոչ բաւական նապէս արարեալ զայն ապաշխարողին, պարտի հարցափորձել որ ինչ ըստ պայմանի կենացն մարթ իցէ նմա թէ գործեալ իցէ մեղս, և ապա զտեսակ նոցին և ըզթիւ : Այլ ոչ զօրէ ինչ ընդդէմ յաձախութիւն ապաշխարողաց, զի դատապարտեալ է յԱնովկենտեայ ժԱ վարդապետութիւնն այն թիւր թէ "Որքն է արձակել վանն յաձախութեան ապաշխարողաց զայնոսիկ, որոց զկէսս ի մեզացն իցէ խոստովանեալ,, :

103. Ոմանք որոց չար գործեն և խոստովանահարք, որք ի բաց արձակեն զապաշխարողս՝ քննել լաւ և զսխիզմ մտաց իւրեանց : Հայրն Ենիէլի կոչէ զայն Վրէպակ անպանեալ. զի այնպիսիք որչափ և աշխատ լինին, դժուարաւ կարեն առնել բաւականապէս քննութիւն, և վտանգ իսկ է զի ի դժուարութենէ անտի վհատեալ՝ ոչ և զսա ընդունայնեն : Սին իրի խոստովանահայրն ինքնին պարտի օգնել նոցա ի քննութիւն, հարցափորձելով զնոսա ըստ կարգի տասնաբանեայ պատուիրանաց և եօթանեցունց մահացու մեղաց. մանաւանդ ռամկին, ծառայից, կառավարաց, համբակաց՝ որ ի կրպակս և ի պանդոկի, զինուորաց, և այլ սինլքոյ մարդկան՝ որ անփոյթք զսիրկութենէ իւրեանց կեան տգէտք հոգևոցաց, զի և ոչ ի լուր բանին Աստուծոյ գնան :

Սեծ և վտիպակ՝ արձակել ի բաց զայնոսիկ՝ որոց առ ամենայն լռեալ իցէ զմեղս ինչ իւրեանց, թէ և պարտ իցէ տալ նոցա կրկնել զխոստովանութիւնս բա-

զուտ ամաց. զի վտանգ մեծ է ոչ ևս դառնալոց նոցա՝ի խոստովանութիւն. Ոչ այսպէս առնեն հոգեւսէր խոստովանահայրք, որք վասն սիրոյն Աստուծոյ պաշտեն զքրիստոսէրդ ապաշխարութեան. այլ ըստ օրինակի փրկչին՝ որ երկայնամիտ հարցափորձիւ աճ զսամարացին՝ի խոստովանութիւն, և զաշխատեալս և զբեռնաւորս հանդուցանէր, այսպէս և նոքա ընդ տաժանեալս մեղօք վարին համբերութեամբ.

Այլ եթէ ապաշխարողն, թէպէտ և ահաւիկ, գիտիցէ ըստ բաւականին խոստովանել զմեղս իւր հանպատմանօքն հանդերձ, ըստ պայմանի կենաց իւրոց և ըստ հասողութեան մտաց, (զի այլազգ գիտնոց և այլ տգիտաց է պարտականութիւն քննելոց զանձինս), յայնժամ ոչ ևս պարտ է խոստովանահօր հարցափորձել զնա մանրամասնաբար.

Այլ է ըստ միոյ միոյ՝ի խոստովանելոց մեղացն առնել զհարցուածս, քան թողուլ զամենայն՝ի կատարածի. զի ոչ միայն մարթ է խոստովանահօրն մոռանալ որ ինչ հարցանելոցն էր, այլ և յաւելու թեան ապաշխարողին կրկնելոց զխոստովանեալն.

Ըստ գէղջախոհութեան մեղաց սակաւ և զգուշութեամբ պարտ է առնել հարցուածս, մանաւանդ աղջկանց և մանկտւոյ. զի լաւ է պակասել խոստովանութեան նոցա՝ի նուիթականն ամբողջութենէ, քան ուսանել՝ի հարցուածոց անտի կամ իղձ լինել ուսանելոց զոր անգիտանան.

Ըստ մեղաց ունակութեան եթէ չիցէ մարթ գիտել ստուգիւ զթիւ, պարտ է հետազօտել զերկայնակ կենաց նորա և զպարապուն, զժամանակ կենակցութեան նորա ընդ մեղսակցին, զտեղի սովորական բնակութեան նորա, և ըստ այնմ հարցանել թէ քանիցս յաւուր կամ յեօթնեկի կամ յամսեան աւելի կամ նուազ անկեալ իցէ յայն մեղս, երիցս թէ չորիցս, ուրիցս թէ տասնից, և տեսանել թէ ընդ ո՞ր թիւ հաւանի. եթէ ընդ առաւելագոյնն, պարտ է յաւելուլ և ևս զայն, և կըրկնել զհարցուածն մինչև կարի թուեսցի նմա հարցեալն թիւ. Այլ որպէս ազգ առնէ Պուսեմպայոյ, ոչ է պարտ խոստովանահօր ձշդիւ զթիւ մեղացն ստուգել, և ոչ ստուգիւ զայնցանէ առնել դատաստան, այլ ընդհան-

բապէս գյաձախուԹիւն նոցին ՚ի միտ առնուլ, և միա-
համուռ առնել զնոցանէ դատաստան՝ որպէս իցէն ա-
ռաջի սրտագիտին Աստուծոյ։ Ամենք զմեզայ ատելու-
Թեան և ցանկուԹեան շատ համարին պիտել զժամանակ
տեւողուԹեան. բայց մարԹ է ուժեղն ըստ պայմանի
կենացն առաւելագոյն քան զայլ ոք ունել պատճառս
յաձախելոյ ՚ի նոյն, կամ սաստկագոյն կրիւք ստէպ ևս
մտաբերել ՚ի նոյն. վասն որոյ կարևոր ասացաք հարցա-
նել ընդհանրապէս զեղանակ կենաց նորա, զպարապումն
և զտեղի, առ ՚ի կարող լինելոյ դատել զառաւել կամ
զնուազ յաձախուԹիւն ներգործուԹեան կրից նորա ՚ի
սրտի։ Այլ յետ երկուց կամ երից հարցուածոց ոչ
ևս պարտ է խոստովանահօր տապնասիլ ընդ աղօտ դա-
տաստան իւր. զի յայնպիսեաց պղտոր խղճմտանաց ոչ
է յուսալ յստակագոյն ծանօԹուԹիւն։

Ոչ է բարւոք խոստովանահօր յանդիմանել ՚ի խոս-
տովանուԹեան անդ զապաշխարողն, զի մի գուցէ առ
ահի լռեսցէ ինչ. այլ մեղմով ազդ ևԹէ առնել նմա
զծանրուԹիւն մեղացն, և խրախուսել զնա ողորմու-
Թեամբն Աստուծոյ ՚ի բարւոք խոստովանուԹիւն։

Ապաքէն օգտակար է յոյժ ընդհանրական խոստովա-
նուԹիւն, այլ ոչ է պարտ խոստովանահօր կարի դիւրաւ
տալ կրկնել զխոստովանուԹիւնս, զի վաւերականս
պարտ է համարել զայնոսիկ՝ ցորչափ չիցէ ինչ յայտնի
ԹերուԹիւն լեալ ՚ի նոսա, որպէս ասէ և Հայրն Ա-
նիերի։ Զի և ոչ վերստին ՚ի նոյն մեղս յաձախել նըշ-
շան է միշտ անվաւերուԹեան խոստովանուԹեանց, որ-
պէս ՚ի վեր անդր ասացաք (47). մանաւանդ եԹէ ա-
պաշխարողն զգուշացեալ լիցէ առ ժամանակ մի յանկա-
նելոյ, կամ գուն գործեալ ընդդէմ փորձուԹեան։ Իսկ
եԹէ չև աւուրց ինչ ՚ի վերայ անցեալ՝ առանց ինչ զդէմ
ունելոյ փորձուԹեանն իցէ անկեալ, բարոյական ստու-
գուԹեամբ յայտ է խոստովանուԹեանց նորա առանց
զղջման և առաջադրուԹեան լեալ։

104. Բ. Պարտ է խոստովանահօր, յետ լսելոյ ըզ-
մեղս, առնել զծանրուԹենէ և զբաղմուԹենէ նոցա
դատաստան. զի Թէպէտ և աղօտ իսկ ծանօԹուԹիւն
մեղաց շատ է վասն արձակելոյ վաւերաբար, այլ վասն
օրինաւորապէս արձակելոյ՝ պարտ է նմա առնել խոհա-

կան պատուիճն զմեզայ իւրաքանչիւր ըստ սովորական հանգամանաց, վասն անսովորին շատ համարեալ ըզլուեալսն, և արձակել՝ որպէս առաջի Աստուծոյ իցեն։ Ապաւէն խոստովանահայրն՝ որք կամին ստուգիւ գատել զծանրութիւն կամ զթեթեւութիւն մեղաց, հարցափորձելով զառամիկ ապաշխարողն՝ թէ արդեօք որպէս մնհուչամի թէ որպէս ներելի գործեալ իցէ զայն, զի այսպիսիք խառն՚ի խուռն լինչ տան պատասխանի, և յաձախ ևս զհակառակն նախատացելոցն։ Իսկ որք ձանաչենն զծանրութիւն մեղաց իւրեանց, և զգան զի չիմացաւ զայն խոստովանահայրն, պարտականք են իմացուցանելոյ նմա զայն. ապա թէ ոչ, սեզանակապուտ է խոստովանութիւն նոցա. և զօրէ պարտականութիւնս այս ևս և յետ խոստովանութեան, եթէ խելամուտ լինին չիմանալոյ խոստովանահօրն լինչ՚ի մեղաց։

105. Գ. Պարտ է խոստովանահօր և հրահանգել զապաշխարողն, ՚ի զգալ իւրում՝ զի անգիտանայ նա զկարևորս հատատոց և վիրաւորութեան։ Այլ շատ է առժամն, առ՚ի կարող լինելոյ արձակել զնա, զգլխաւոր խորհուրդս ուսուցանել նմա ըստ ասացելոցս՚ի գլ. Դ. 3։ Իսկ յաղագս այլոցն կարևորաց հարկաւորութեամբ պատուիրանի՝ շատ է խոստումն ապաշխարողին ուսանելոյ զայնս. և հոգեսէր խոստովանահայրն ոչ հրաժարեն յուսուցանելոյ իսկ նոցա զայնս անձամբ։ Պարտ է խոստովանահօր հրահանգել զապաշխարողն և ըստ պարտուց հատուցման ընչից, համբաւոյ, պատուոյ, բառնալոց զվերձաւոր վտանգս մեղաց, շինելոց զգայթակղեալս լինքն, յանդիմանելոյ, ողորմելոյ և այլն. և եթէ անպատրաստ իցէ ապաշխարողն, պարտ է խոստովանահօր պատրաստել զնա յընդունակութիւն արձակման։ Ա՝ ասն որոյ մեղանչէ խոստովանահայր, որ՚ի տեսանել զանպատրաստութիւն ապաշխարողին՝ արձակէ զնա՚ի քաց, ասելով. Ընդ ընդունակ արձակման, Երթ և դարձիր միւսանգամ։ Այսման, Ասարկ, Ափոթեր, Պասեմ պաց և այլք յաւելուն, զի յետ միանգամ լսելոց խոստովանահօր զմեզս ապաշխարողին՝ պարտ է նմա, և խիստ պարտ եղբայրսիրութեան, գուն գործել ըստ կարի պատրաստելոյ զնա յընդունակութիւն արձակման, ցուցանելով նմա զգարշութիւն մեղացն, զզօրութիւն աս-

տուածծային ընորհաց, զվտանգ դատապարտութեան, և զսոցին սակի ձշմարտութիւնս։ Այլ և պարտ նման խըն-նայել՝ի ժամանակ, և ոչ հոգալ՝ զի այլք յապաշխարող-ազ գնայցեն՝ի քաց, չկարելով յամել. զի չէ նա յայն-ժամ պարտական այլոց, այլ վասն միայնոյ այնր ապաշ-խարողի պարտի տալ հաշարս Աստուծոյ։ Այլ եթէ չյաջողեսցի իսկ պատրաստել զնա յայնժամ, գէթ ուս-ցի նա որով պատրաստութեամբ պարտ է նման միւսանդ-դամ գալ՝ի խոստովանութիւն։

106. Պարտ է խոստովանահօր և խրատել զա-պաշխարողն. այլ առ՝ի կարող լինելոյ խրատել՝ պարտի գիտել, ոչ միայն զտեսակ և զթիւ մեղաց՝ այլ և զպատ-ճառս նոցին, առ՝ի տալ դեղ պատկանաւոր։ Այն որոյ պարտ է նման հետազօտել զսկիզբն և զծանրու-թիւն մեղացն, ուր և երբ անկեալ իցէ՝ի նոյն մեղս և յինչ պատճառաց. զի գիտելով զայսոսիկ՝ դիւրագոյն մարթ է խրատել զապաշխարողն, և սպեղանիս վիրաց նորա մատուցանել։

107. Նայց թէպէտ և հայրաբար սիրով պարտ է նման վարել ընդ ապաշխարողին, սակայն և ըստ պիտոյից արժան է խրատել զնա և յանդիմանել, մանաւանդ որ ծանրաբեռնեալ մեղօք յամէն գալ՝ի խոստովանու-թիւն։ Այլ պարտ է առնել զայս ընդ իշխանս իսկ և ընդ երիցունս, ընդ ժողովրդապետս և ընդ եպիսկոպո-սունս. զի խրատք խոստովանահօր զօրաւորագոյն են քան զքարոզեալ. զի սոքա ոչ գիտեն զկարիս իւրա-քանչիւր ուրուք, ուր խոստովանահայրն գիտեն և ըստ այնմ կարեն տալ զդեղ։ Այլ եթէ ոք յապաշխարողաց՝ի մեղադրելի տգիտութեան կայցէ պարտուց իւրոց՝ կամ բնական և կամ դրական օրինաց, պարտ է խոստովա-նահօր աղգ առնել նման զայն։ Իսկ եթէ յանմեղադրե-լի տգիտութեան կայցէ, այլ տգիտութիւն նորա իցէ զկարևորաց փրկութեան, կամ զվրաց՝ որ միտասակար իւ-ցեն հաստարակաց, պարտ է անպատճառ աղգ առնել նման զայն՝ թէպէտ և չիցէ ինչ օգուտ յաղդարարու-թենէ անտի։

108. Այլ եթէ տգիտութիւն նորա իցէ զայլոց ի-րաց, և իցէ այն անյաղթելի՝ չունելով նորա ամենևին զգայնանալ կասկած, պարտ իցէ յայնժամ խոստովանա-

հօր աղջ առնել նմա զՀիմարտութիւն, եթէ չկայ յոյս օգտի յաղդարարութենէն։ — Ասանք ՚ի բարոյականաց պարտ համարին. այլ հասարակաց և Հիմարիտ վարդապետութիւն զհակառակն հաստատէ։

109. Ո՞վ Կոնոմիկենտիոս գ Հարցեալ յեպիսկոպոսէ ումեմնէ յաշակս աղքականաց ումանց անվաւեր տնօրինմամբ պսակելոց, պատասխանէ. "Արժան էր քեզ լռել, տեսանելով զվտանգ ծանու գայթակղութեան ՚ի բաժանմանէ նոցա"։ Ո՞վ յերկուց չարեաց փոքրագոյնն է ընտրելի. վասն որոյ պարտ է խոստովանահօր լռել, և Թողուլ ապաշխարողին կալ ՚ի նիւթական մեղս անդ, առ ՚ի զերծուցանել զնա ՚ի տեսականէն՝ յոր վտանգ է նմա անկանելոց ազդարարութեամբն. զի Աստուած գտեսական մեղս ևեթ պատուհասէ, և նովաւ ևեթ Թշնամանի։ Այս ըստ այսմ յաւելումք ևս, զի մեղանչէ խոստովանահայր ՚ի գործելն այլազգ։

110. Արարիկեն հակառակ կարծեացն պաշտպանք զոր մարգարէին ասէ Աստուած. "Յասել ինձ ցմեղաւորն Թէ մահու մեռանիցիս, և դու ոչ խօսիցիս զդուշացուցանել զամպարիշտն ՚ի Ճանապարհէ իւրմէ, ինքն անօրէնն յանօրէնութեան իւրում մեռցի, և զարիւն նորա ՚ի ձեռաց քոց խնդրեցից"։ (Եզեկ. Լգ. 8)։ Այսպա ուրեմն որում պարտն է ըստ պաշտամանն իւրում ազդ առնել մեղաւորին և ոչ առնէ, համարս տալոց է Աստուծոյ։ — Այլ անդ զամպարշտէն են քանք՝ որ Ճանաչէ զանօրէնութիւն իւր, և վասն այնորիկ պարտ է խոստովանահօր յանդիմանել զնա։ Ո՞նպէս է ասել և առ այլ բանս գրոց և սրբոց Հարց, զորս առարիկեն։ Ասէ զոր ասենն Թէ խոստովանահօր իբրև ուսուցչի պարտ է ուսուցանել ապաշխարողի զՀիմարտութիւն, պատասխանեմք առ այն՝ զի խոստովանահայրն ոչ ուսուցիչ միայն է, այլ և բժիշկ. և որպէս բժիշկ ՚ի տեսանել զի փոխանակ օգտելոյ՝ Հիւանդանայ է դեղն՝ չտայ զայն Հիւանդին, այսպէս և խոստովանահօր տեսանելով զի խրատն այն ՚ի կործանումն լինելոց է ապաշխարողին՝ պարտի լռել զայն։ Այս Թէպէտ պարտ է նմա որպէս ուսուցչի խրատել, այլ զի յօգուտ ևեթ Հոգւոց տըւեալ է նմա ՚ի Քրիստոսէ պաշտօնն այն, պարտի ուսուցանել զայն ևեթ Հիմարտութենա՝ որ օգտէն, և

ոչ որ միսաեն. վասն որոյ ասէ սուրբ Աքուինացին. "Որում անկն է ուսուցանել զՀիմարտուԹիւն, մի՛ հաւկառակ ինչ ՀիմարտուԹեան ուսուսցէ, այլ զՀիմարտուԹիւն՝ ի դէպ ժամանակի և ըստ պատշաճի անձանց,,:

111. Ասարկեն դարձեալ. ՏգիտուԹիւնն այն ապաշխարողն չէ անյաղԹելի, զի բաց է առաջի նորա ձանապարհ գիտելոյ զՀիմարտուԹիւն. և եԹէ չէ անյաղԹելի, ապա մեղադրելի է: — Պատասխանեմք զի տգիտուԹեան առ՝ի լինել մեղադրելի՝ ոչ է շատ զի կարւոյն գիտել զՀիմարտուԹիւն, այլ և կարևոր է զի երկբայեսցի ընդ օրինաձանցուԹիւն իւր. զի որպէս ուսուցանէ սուրբ Աքուինացին, տգիտուԹիւն անյաղԹելի այն է՝ որոմ ոչ է մարդ յաղԹել ուսմամբ կարէ ոք յաղԹել տգիտուԹեան իւրում, եԹէ ոչ երկբայուԹիւն ինչ՝ ի միտս նորա անկանի զայնմանէ, կամ գէԹ զպարտուց յաղԹելոյ այնմ: Ապա որոյ սուրբն Աստուածաբանք ասեն՝ զի առ՝ի կացուցանել յաղԹելի զտգիտուԹիւն՝ պարտ է մարդոյ կասկած՝ ի մտի ունել զպատուիրանէն, և կամ գէԹ զպարտուց կասկածելոյ. զի որպէս առ պարտս պահպանուԹեան օրինաց՝ պարտ է զի յայտնեալ իցեն օրէնք, նմանապէս և առ՝ի պարտականուԹիւն գիտելոյ զօրէնս՝ պարտ է զի յայտնեալ իցէ պարտականուԹիւնն այն ծանօԹուԹեամբ կամ գէԹ կասկածանօք: Ապա որոյ բարւոք՝ ի վերայ ածէ Այրն Աենիկրի. "Այնժամ անյաղԹելի է տգիտուԹիւն, յորժամ չիցէ ումեք զայնմանէ երկևան, ուստի և ոչ հնար յաղԹելոյ մեղուԹեան իւրում,,:

112. Ասարկեն դարձեալ. Ապաշխարողն այն և՛ի խրատելն և՛ մեղանչելոյ է՝ յաղԹելի լեալ յայնժամ տգիտուԹեան նորա. ապա միշտ է անընդունակ արձակման: — Պատասխանեմք զի չէ կարևոր յապաշխարողն պարտաստուԹիւն մեկնողական, այսինքն զի եԹէ զբաներ նա յայս ինչ կամ յայնմ փորձուԹեան՝ չմեղանչէր: Ո՞վ եԹէ պարտ էր խոստովանահարց խնդրել զմեկնողական պատրաստուԹիւն յապաշխարողս, սակաւ յոյժ մարթ էր նոցա արձակել. զի բազումք՝ ի նո-

ցանէ եթէ ՚ի փորձ տանջանաց բռնադատիլին ՚ի բռնաւորաց, անկանիլին ՚ի հաւատոց։ Այսպա շատ է յապաշխարողն պատրաստուելիւն ներքոծական, այսինքն զի ասատ և այժմ պատրաստ իցէ յանձն առնուլ զամենայն ինչ ընդհանրապէս առ ՚ի չմերձանչել. և ոչ զօրէ ինչ ընդդէմ՝ զի եթէ խրատեր ՚ի խոստովանահօրէն, անպատրաստ գտանէր ըստ մեկնողական պատրաստութեան։

113. Ի հասարակաց վարդապետութենէ աստի աստուածաբանից յառաջ բերեն Այմոն, Անքէզ, Ալկոյ, Վաալթրուիալ, Մալմատիկեանք, Նոլզման, Նաքերտ և այլք գրեթէ առ հասարակ, զի եթէ ապաշխարողին անվաւեր իցէ պակաս վասն անյայտ ինչ արգելոյ՝ և անդիտանայցէ նա, և վտանգ ևս ՚ի վերայ կայցէ անուանարկութեան կամ գայթակղութեան կամ անժուժկալութեան՝ եթէ անվաւերականութիւն պակասին յայտնեսցի նմա, յայնժամ պարտ է խոստովանահօր թողուլ զնա յանգիտութեան իւրում մինչև ընկալցի անօրինութիւն վասն նորա։ Այլ եթէ փութալ և դիւրաւ կարելի իցէ ընդունել զայն, անդստին իսկ կարէ խոստովանահայրն յայտնել նմա զայն. զի ըստ հասարակաց և յոյժ հաւանական կարծեաց օրէն է եպիսկոպոսին անօրինել զարգելս ևս և լուծիչս պակսի, եթէ վտանգ գայթակղութեան կամ անուանարկութեան ՚ի վերայ կայցէ, և չգուցէ ժամանակ դիմելոյ առ Պապն. (Տես ՚ի գլ. ԺԵ. ԺԸ)։ Այլ եթէ չիցէ մարթ ընդունել դիւրաւ զանօրինութիւն, պարտ է խոստովանահօր թողուլ յանգիտութեան զպակասելոս։ Ռենեդիկտոս ԺԴ յանդիմանէ յոյժ զմի ՚ի ժողովրդապետաց, որոյ չէր թողեալ զնոսա յանգիտութեան։

ԵՒսՀ եթէ յայնժամ խոստովանեսցի կինն ոչ հատուցեալ առն իւրում զամուսնական պարտս իւր, օրէնս իցէ խոստովանահօր պարտ ՚ի վերայ դնել կնոջն հատուցանելոյ զպարտս իւր։ — Լուկոյ, Անքէզ, Վանքէնա, Վորտուպա, Անրիկուէզ, Աքրուա և այլք օրէն համարին, իբր զի վաւերական համարելով կնոջն զպակասիւ՝ պարտի ըստ խղճի մտացն գործել։ Այլ Ռոթոյ, Նուրթատոյ և Պոնաչինա ապահովագոյն համարին խոստովանահօր խրատել զնա ընդհանրապէս ՚ի

կատարումն պարտուցն, և թէ անընդունակ է արձակ-
ման՝ որ չհատուցանէ առն իւրում զամուսնական պարտս
իւր:

Իսկ եթէ չև իցէ օրհնեալ պսակն անվաւեր, պա՛րտ
իցէ խոստովանահօր ազդ առնել ապաշխարողի զայն՝
եթէ անօգուտ լինելոց իցէ ազդարարութիւնն: — Կէսք
հաստատեն, կէսք ժխտեն. այլ հաւանականագոյնս
Պասիլոսիոս և Աղբիանիկեանք ասեն զի սովորաբար
պարտ է ազդ առնել, մանաւանդ եթէ արենակցու-
թեան իցէն արգելքն, զի յայնժամ չէք վտանգ անուա-
նարկութեան՝ ի դադարեցուցանելոյ զպսակն, և զի դիւ-
րին ևս է պսակելոյն լինել ապա իրաղեկ, և նիւթա-
կան մեղացն փոխել՝ ի տեսական: Ա՛յ ասն որոյ ասէ Այ-
ման, զի յայնժամ յուսալ օգտի պարտ է ազդ առնել.
բայց եթէ չիցէ ինչ ամենևին յոյս օգտի, նոքին իսկ
Այմանն, Պասիլոսիոս և Աղբիանիկեանք, ընդ նոսին
և Աքրուա և Ուբերսա պարտ համարին լռել մինչև
հայթայթեալ զանօրինութիւն:

114. Այլ եթէ հանդերձեալ իցէ օրհնութիւն
պսակին յեկեղեցւոջ, և հարսնն կամ փեսայ յայտնեսցէ
՝ի խոստովանելն արդեօք ինչ, և չիցէ մարթ դադարե-
ցուցանել զօրհնութիւն պսակին առանց գայթակղու-
թեան և անուանարկութեան, զինչ պարտ իցէ առնել
խոստովանահօր: — Հասարակաց և յոյժ հաւանական
կարծիք, զոր հաստատէ և Բենեդիկտոս ԺԴ, օրէն
համարին յայնժամ եպիսկոպոսի տնօրինել զայն, և
տալ իսկ այլոց իշխանութիւն տնօրինելոյ, զի եպիսկո-
պոսական պաշտամանն կցորդ է իշխանութիւնն այն:
Իսկ այլք յաւելուն, և ոչ առանց հաստատութեան, զի
և ժողովրդապետին և խոստովանահօր իսկ մարթ է
բացառութիւն առնել անդ օրինաց վասն միաստակարու-
թեանն. բայց ապա առ՝ի յարգութիւն եկեղեցական
սահմանադրութեանց և վասն առաւելագոյն ապահո-
վութեան պարտ համարին դիմել առ ապաշխարահայրն
մեծ, և ընդունել՝ ի նմանէ տնօրինութիւն:

115. Ի նոյն հասարակաց վարդապետութենէ կէսք
բերեն դարձեալ աստուածաբանք, զի ուր չիցէ ամե-
նևին յոյս օգտի՝ պարտ է լռել և զպարտս հատուցման
ինչ, վասն խափանելոյ զհոգևոր միաս եղբօրն քան զայ-

լոյ ուրուք մարմնաւոր միսս։ Օրոյն հաստատեն Պուա-
ըէզ, Լուկոյ, Սանքէզ, Լայման, Ռոմքալէա, Վաս-
գուէզ, Բասթրոփալ, Սալմատիկեանք և այլք, եթէ
յաղագարարութենէ անտի իցէ վտանգ գայթակղու-
թեան այլոց, անուանարկութեան և վիճից. զի լաւ է
միշտ խափանել զտեսական չարիս քան զնիւթականս։
Այլ ոչ է պարտ վեր՛ի վերոյ դնատել որպէս անօգուտ
ապաշխարողին զաղագարարութիւն. զի թէ և առ ժամն
չօգտեսցի, այլ՛ի հանդարտել խռովութեան արտին
գործէ օգուտ։ Եւ պատճառք իսկ գայթակղութեան
ոչ զօրեն, եթէ լռութեամբ խոստովանահօրն վտանգ
իցէ հաստատելոյ ապաշխարողին՛ի գործն չար՝՛ի գայ-
թակղութիւն այլոց և կամ իւր իսկ։ Օրինէ ուրեք,
որպէս ուսուցանեն Լուկոյ, Ռոմայուրինի և Պուսեմ-
պաոյ, Թողուլ առ ժամն զապաշխարողն յանդիտու-
թեան՝ յապաղելով զաղագարարութիւնն առնել՛ի դէպ
ժամանակի, եթէ յայնժամ ոչ յօժարութեամբ ըն-
դունելոց իցէ զխրատն։

116. Այսց յերկուս դէպս պարտ է խոստովանահօր
առնել ապաշխարողին զհիմնարարութիւն։ Ա՛ի՝ յորժամ
նա ինքն հարցանիցէ. զի յայնժամ պարտական է խոս-
տովանահայրն լուսաւորել զնա, զի երկբայութենէն
ոչ ևս է նա յանդգնելի տգիտութեան։ Եւ միւս ևս՝
յորժամ յանդիտութենէ անտի ապաշխարողն միսս հո-
գևոր յառաջ գայցէ հաստարակաց. քանզի պարտական
է յայնժամ խոստովանահայրն խափանել զմեծագոյն
չարն, ընտրելով զհաստարակաց թարին քան զմիոյ ուրուք։
Ասն որոյ պարտ է խոստովանահօր խրատել զնշխանս,
զերիցուսն, զժողովրդապետս և զամենեսեան խնդ՝ որոց
թերութիւնք՛ի միսս և՛ի գայթակղութիւն են հա-
ստարակաց. մանաւանդ զի գժուարաւ մարթի լինել՛ի
նոսա տգիտութիւն անյաղթելի։ Իսկ յերկբայս՝ պարտ
է խոստովանահօր կշռադատել զօգուտ և զվնաս ազդ-
արարութեանն, և ըստ առաւելագունի մասին գոր-
ծել. այլ զգուշանալ միշտ առաւել՛ի տեսական չարեաց
քան՛ի նիւթականացս։ Օրոյն խրատ Հայրն Ռոն-
զինա և զեղբայրական ազդարարութենէ. ուր երկբայե-
լի իցէ օգուտ նորին կամ վնաս, լռել. զի ոչ խոհակա-
նութեամբ գործէ ոք զանձն՛ի վտանգ արկանել տալոյ
այլում պատճառս մեղաց։

117. Ե. Պարտ է խոստովանահօր արձակել զապաշխարողն, եթէ իցէ նա ընդունակ արձակման։ Եւ յայլ յաղագս ընդունակութեան ապաշխարողաց գիտելի է՝ զի սակաւք են, մանաւանդ ՚ի ռամկէն, որք նախ քան զխոստովանութիւն առնիցեն զներդործութիւն ղջմանն։ Ապա ոյժ է բաւական նախ քան զարձակումն, որպէս ոմանք ՚ի խոստովանահարց առնեն, ասել՝ Եղէր ընդոծին ընդ Քրիստոս ՚ի մկրտութեանդ։ Եւ կամ՝ Ղջա ըստ ծներ ուդ զքոյ, և արձակեն։ Զոյսեսիկ խոստովանահայր գուն գործէ ազդել ՚ի սիրտ մեղաւորին, որ ծանրաբեռնեալ մեղօք գայ ՚ի խոստովանութիւն, ղջմամբ ձչմարիտ և առելութիւն մեղաց, յանկատար ղջմանէ աճելոյ զնա ՚ի կատարեալն։ Ապա ոյժ սկսանի նախ յիշատակաւ դժոխոց. Դէպքս, սիրելի, հիմայ ո՞ր պիտոյ ընձայեր. դժոխոյն մէջ, յոտնահպատակ, ամենուն երեսէն ինկած, Քրիստոս ալ յոյս մը չունենալով յատեանն. ղջա ուրեմն որ Քրիստոս բարկացընելվէր՝ դժոխոյն արժանի եղեր ես։ Եւ ՚ի պատրաստել այսպէս զսիրտ նորա, ապա յորդորէ զնա ՚ի ներդործութիւն կատարեալ ղջմանն, ասելով. Դպածէ ըստ. Քրիստոս ու ապեղծողէդ դեմ ըրեր ես, անհուն բարին բանէ պեղ չէդնելով՝ երբեն կոնակ դարձուցեր ես, իր ընծրհրը ոտքէ տակ առեր ես. հիմայ չեպնայիր, կը ղջաս ապ ամեն ըստ ծներուդ վրայ, հապէս դու՝ մեղքերդ ամեն ջնաւէն ա՞ելէ, հաւաջարքիս ասկեց ետքը մեյմեանց չիմեղանչելու, և այլն։ Եւ ընկալեալ ՚ի բերանոյ ապաշխարողին զխոստովանութիւն, ապա արձակէ զնա։

Պարտ է սովորաբար արձակել զընդունակս արձակման. այլ մարթ է և յապաղել երբեմն զարձակումն, եթէ այնպէս օգտակար իցէ։ Այլ թէ լաւ իցէ առնել զայն առանց հաւանութեան ապաշխարողին, ասասցուք ՚ի ստորև յիւրում տեղւոջն։ Եւ առ ՚ի տալ զարձակումն՝ պարտ է խոստովանահօր գիտել ստուգիւ զընդունակութիւնն ապաշխարողին. զի ներդործութիւնք նորա, որովք ընդունակութիւն նորին կատարի, են նիւթ խորհրդոյ ապաշխարութեան։ Այլ քանզի յայլ խորհուրդս բնական է նիւթն, խնդրի և ստուգութիւն բնական. այլ աստ զի բարոյական է նիւթն, ներքին և անչնորհելի զգայութեանց, շատ է ստուգութիւն բարոյականն ըստ կանոնին՝ զոր տայ տուրք Հոգւոյն. «Ո՞վ

նոյն ստուգութիւն խնդրի յամենայնի, այլ յիւրս իւրաքանչիւր ըստ իւրումն եղանակի»։ Այսոքն որոյ շատ է խոստովանահօր խոհական դատումն ձեռնհասականութենէ ընդունակութեան ապաշխարողին, առանց խոհական կասկածանաց՝ ի հակառակին։ Եւ մաշտոցն հռովմէական եկեղեցւոյ ասէ՝ «Այսահանայն եթէ ոչ՝ ի խոստովանութեան մեղաց ապաշխարողին զինչ, և ոչ յատեղութեան նոցին զղեղջ դատի պահասեալ, կարասցէ արձակել զնա»։ Այսպա ուրեմն ոչ բոլորովին պակասէ զղջումն, զոր ոչ է օրէն համարել պակասեալ ուր ապաշխարողն ջանիւ զմեղան խոստովանի, կարէ խոստովանահայրն արձակել զնա։

118. Որ՞ն իցէ և պարտ խոստովանահօր արձակել զապաշխարողն, որ զկարծիս ինչ պինդ ունի որպէս հաւանական և ըստ խղճի՝ թէպէտ և խոստովանահօրն ոչ թուիցի այն այնպէս։ — Եթէ ապաշխարողն տգէտ ոք իցէ՝ որ չկարիցէ ունել ուղիղ խիղճ մտաց ըստ հաւաստնականութեան այնր կարծեաց, հաւաստի է զի չէ մարթ արձակել զնա։ Այլ խնդիր այն է, եթէ ապաշխարողն կարող իցէ ուղղել զխիղճ մտաց իւրոց, կարի՞ց յայնժամ խոստովանահայրն արձակել զնա։ — Ոչ պարտ և կէսք՝ ի բարոյականաց չհարել ասեն, իբր զի դատաւոր է նա՝ ի խոստովանութեան, և պարտ է ապաշխարողն հպատակել դատաստանի նորա, այլ հանրական կարծիք օրէն համարին նմա և պարտ իսկ ընդ ծանր մեղօք՝ արձակել զապաշխարողն։ Որպ ծանր մեղօք նմա՝ եթէ խոստովանութիւնն իցէ լեալ ծանութեամբ մեղաց. զի չարձակել զոք՝ ի թերև մեղաց՝ չէ ինչ ծանր մեղք ըստ Սուարէզի, Սանքէզի և այլոց։ Այայց միայն եթէ խոստովանահայրն ստոյգ գտակաւ և՝ ի խղճէ մտաց համարիցի ինչ՝ ի մահուշտի մեղս, և կարծիք ապաշխարողին թուիցի նմա բոլորովին սուտ, կարէ յայնժամ ղանալ զարձակութեն. իսկ եթէ ոչ ստուգիւ հաստատեալ գիտիցէ, և ապաշխարողն համարիցի ստոյգ ինչ կարծիս, պարտի արձակել զնա։ Այս այսպէս ուսուցանեն սուրբն Նստոնինոս, սուրբն Այսիմնտոս, և բազմահմուտն Սիլուէստր, որ՝ ի խօսելն զայնսահմանեալ կանանց՝ ասէ. «Եթէ խոստովանահայրք ոչ յայտնի գիտիցեն՝ մահացու թէ ներելի իցէ, յորդորեա-

ցեն զապաշխարողն հրաժարել յայնմանէ. իսկ եթէ չկամիցի նա հրաժարել, մի՛ ի խիղճ մնհուչամի մեղաց արկցեն զնա, և մի՛ զլասցին զարձակումն ,,:

119. Վ՚անդի ապաշխարողն՝ ի խոստովանել իւրում ստանայ ստոյգ իրաւունս արձակման, վասն որոյ անիրաւութիւն մեծ գործէ նմա խոստովանահայր՝ ի զլանալ զարձակումն՝ յորչափ չիցէ ստոյգ ստութիւն կարծեաց նորա: Եւ ոչ զօրէ ինչ ասել՝ թէ ապաշխարողն իցէ անընդունակ արձակման՝ ի ստունգանել դատաստանի խոստովանահօրն, որ դատաւոր իւր է յատենի անդ: Ո՛չ խոստովանահայրն չէ դատաւոր հակառակութեանց որպէս զՎ՚ասն, այլ դատաւոր եթէ պատրաստաւոր գտանի նա մեղօքն, որպէս ժողովն տրիդենտեան յայտ առնէ: Իսկ ըստ կարծեաց, որ հայրն՝ ի հանրական պարտս ապաշխարողին, ոչ է դատաւոր խոստովանահայրն, և չկարէ ստիպել զնա յիւր կարծիս՝ նոր օրէնս՝ ի վերայ նորա դնելով, այսինքն չկարել նմա ընդունել արձակումն առանց՝ ի բաց դնելոյ զկարծիս՝ զոր հաւանական և Թերևս հաւանականագոյն իսկ համարի: Իսկ խոստովանահայրն՝ ի խոստովանել ապաշխարողին զմեղս իւր, և՝ ի համարել իւր օրէնն զկարծիս ինչ, չկարէ առանց ծանր անիրաւութեան զրկել զնա յարձակմանէ, բայց եթէ համարիցի զկարծիս նորա բոլորովին սուտ: Ո՛րպէս իսկ Բոլդրովէն առաջ զի Թէպէտ և Ո՛ւկոյ, Ո՛այման, Սանքէզ, Ո՛աքրուա և Սուարէզ պարտ համարին յայնժամ խոստովանահօր արձակել զնա՝ Թէպէտ և կարծիք նորա Թուեսցի իւր սուտ, այլ պարտ է իմանալ զայս՝ (որպէս բացատրէ իսկ Սանքէզ), եթէ կարծիքն այն համարի հաւանական առ աստուածաբանս ոմանս, և իցէ մերձ ձշմարտութեան, այլ ոչ յորժամ խոստովանահօրն կարծիք՝ ի ստոյգ ինչ հատաւել իցէ՝ առ որ չիցէ մարթ տալ պատշաճ պատասխանի, և կարծիք ապաշխարողին՝ Թէպէտ և ընդունելի աստուածաբանից ոմանց՝՚՚ի սուտ ինչ հաստատեալ իցէ. զի յայնժամ՝ Կաւարրոյ և սուրբն Ո՛նտոնինոս ոչ պարտ և ոչ օրէն համարին խոստովանահօր արձակել զնա՝ եթէ ոչ հրաժարեսցի նա՝ ի կարծեաց անտի: Ո՛րդ ուր սակաւք ոմանք յաստուածաբանից համարին մեղանչել

խոստովանահօր՝ ի տալ արձակումն ապաշխարողի՝ որ չկամիցի՝ ի բաց դնել զկարծիս իւր ոչ թոյլտուիլն առաս, իսկ առաւելապէսք՝ ի նոցանէ երևելիք հինք և արդիք համարիլն մեղանչել նմա՝ ի չտալ արձակումն ապաշխարողի յետ լսելոյ զխոստովանութիւնն նորա, որպէս մարթ էր խոստովանահօր գոլ աներկիւղ՝ ի խիղճ մտաց իւրոյ՝ եթէ զլսացի նմա զարձակումն։ Իսկ թէ որպէս պարտ էր խոստովանահօր ընտրել զկարծիս, խոստացուք՝ ի ստորև՝ ի գլուխս ԻԱ, ի խօսելն զհոգեմտութենէ խոստովանահօր։

120. Որպէս պարտ էր վարել խոստովանահօր ընդ ապաշխարողն, յորժամ գիտիցէ կամ կասկածիցի թէ ժխտէ կամ լռէ զինչ՝ ի մեղաց։ — Եթէ արտաքոյ խոստովանութեան գիտացեալ էր և անձին գիտութեամբ, աներկբայելի է զի չկարէ յայնժամ արձակել զնա. իսկ եթէ կասկածիցէ և եթէ և կամ՝ ի լոյ գիտիցէ, չէ օրէն նմա սովորաբար զլանալ զարձակումն, զի յատենի աստ պարտ է հաւատալ ապաշխարողին որ զինչ՝ ի նպաստ և որ զինչ հակառակ իւր վկայէ։ Այլ եթէ յայնպիսեաց հաւատարիմ վկայից գիտիցէ զայն խոստովանահայրն՝ մինչև բարոյական ունել ստուգութիւն զայնմանէ, ոչ օրէն համարի լուծել տալ արձակումն. զի զօրէ կանոնն յերկբայս, և ոչ՝ ի բարոյական ստուգութեան։

Իսկ եթէ՝ ի խոստովանութենէ մեղսակիցն գիտիցէ խոստովանահայրն զմեղս ինչ ապաշխարողին, չկարէ հարցանել ինչ զայնմանէ մանաւանդ՝ առանց բացայայտ հրամանի մեղսակցին, այլ ընդհանրապէս միայն և առանց կրկնելոյ զհարցափորձ վասն վտանգի յայտնութեան խոստովանութեան նորա։ Այլ եթէ հարցմունքն սովորականք էին, որպէս հարցանել ծառայից թէ գողացեա՞լ ինչ էիցէն՝ ի տերանցն, կամ արանց թէ գործեա՞լ ինչ էիցէն ընդդէմ ամուսնական պարտուցն և այլն, յայնժամ օրէն է խոստովանահօր հարցանել և մանաւանդ։ Այլ խնդիր այն է՝ թէ պարտ էիցէ խոստովանահօր արձակել զապաշխարողն, եթէ նա ընդդէմ ստոյգ գիտութեան ժխտեսցէ զինչ՝ ի մեղաց։ — Ակնհայտ պարտ համարիմ պայմանաւ արձակել զնա, այլք անպայման իսկ տալ զարձակումն։ Իսկ Սուարէզ, Լա-

քրուա, Վ ՚իւա և այլք ասեն՝ զի չէ օրէն խոստովանահօր ոչ անպայման և ոչ պայմանաւ արձակել զոք, զի տեղով ստուգիւ զի Թագուցանէ սեղանակատուԹեամբ զմեղս իւր. այլ պարտ է նմա աղօԹս ինչ՚ի վերայ նորա ասել անձայն, զլանալով նմա լռելեայն զարձակումն*: Իսկ յաղագս զի պարտ է խոստովանահօր կալ՚ի ընորհս յընդունել զխոստովանուԹիւն, կամ գէԹ յարձակել զապաշխարողն, ասելոց եմք՚ի յաւելուածն Բ. Թիւ 16:

121. Հ. Պարտ իցէ խոստովանահօր ուղղել և զսխալանս իւր, զոր սխալեալ իցէ յընդունել զխոստովանուԹիւնս կամ՚ի տալ զարձակումն: — ԵԹէ սխալանքն իցեն զվաւերականուԹենէ խորհրդոյն, օրպէս եԹէ՚ի ձև արձակմանն կամ յիրաւասուԹեան, և յանգէտս իցէ սխալեալ, էեն ինչ նմա պարտք այնչափ նեղուԹիւն և անարգանս յանձն առնուլ առ՚ի ծանուցանել ապաշխարողին զսխալանս իւր. զի եղբայրսիրուԹեան պարտք ոչ ստիպեն ցայդվայր, օրպէս ուսուցանեն, Լուկոյ, Ամորեը, Վ ՚իւա, Վլսիել, Սալմատիկեանք և այլք: Իսկ առեալ զդէպս՝ յորում ապաշխարողն՚ի հոգեվարս կացեալ կամ յայլ ինչ վտանգ ոչ ևս կարելոյ խոստովանել, և կամ եԹէ խոստովանահայրն իցէ ժողովրդապետ: Իսկ եԹէ ծանր յանցանօք իցէ սխալեալ, կէսք յաստուածաբանից յայնժամ ևս ազատ կացուցանեն զխոստովանահայրն նովին պատճառաւ, իբր զի առ եղբայրսիրուԹեան ընդունելով զխոստովանուԹիւն՝ չկոչէ պարտական այնչափ նեղուԹիւն յանձն առնուլ, և զի դարձեալ որպէս չէ պարտական ապաշխարողն վերստին խոստովանելոյ՝ նոյնպէս և ոչ խոստովանահայրն վաւե-

* Առ ուղիղ խնացուած վարդապետուԹեանս յաւելուածք զի սուրբն Աւետնոս համարի ասա երկու ինչ հաւասարի, այսինքն զի ապաշխարողն իցէ գործեալ սաստիկ զմեղս՝ զոր լաւ, և զի չկոչէ յետ այնորիկ խոստովանեալ զայն. օրինակ ինն եԹէ՚ի խոստովանուԹենէ մեղսակցի նորա գիտիցէ հաւասարեալ՝ զի գործեալ է նորա զայն մեղս, և՚ի նոցին իսկ խոստովանուԹենէ՚ի միտ առնուցու՝ զի յամէ հետէ չկոչէ խոստովանեալ: Արդ՚ի դէպս յայս ոչ ևս է խաբէուԹիւն մրմնջել այլ ինչ աղօԹս փոխանակ ձևոյ արձակմանն, այլ զգուշանալ է՚ի մեղսակից կոչ լինելոց սեղանակատուԹեան նորա՝ չկարելով լուծանել զկնիք խոստովանուԹեան, և յայտնի զլանալ նմա զարձակումն: Զի և ոչ կարէ յայնժամ ապաշխարողն հաւանիլ զանձն արձակեալ՚ի մեղաց, ինքնին իսկ գնելով խափան զօրուԹեան խորհրդոյն լռելով զմեղսն:

բացուցանելոյ զխոստովանութիւնն նորա։ Խայց Ղուկիոյ, Ամպուբինի, Ափորեր, Ղևա և այլք զհակառակն հաստատեն. զի Թէպէտ և առ եղբայրսիրութեան ընդունի քահանայ զխոստովանութիւնս, այլ չընդունելն միանգամ՝ պարտական գտանի պաշտել ըստ օրինի ջնորհուրդն. և զի գտձեալ եթէ գիտիցէ ապաշխարողն զանվաւերութիւն խոստովանութեան իւրոյ, կարէ ապա ընդ լել զԹերինն. վասն որոյ խոստովանահօրն չէ օրէն Թողուլ զնա յանգիտութեան՝ի ծանր մեղս նորին։

122. Եթէ խոստովանահօրն ծանր յանցանօք ազատ կացուցեալ իցէ զապաշխարողն՝ի հատուցմանէ, պարտ է նմա և զծանր իսկ նեղութիւն յանձն առնուլ, և հրամանաւ նորին ազդ առնել նմա զպարտս հատուցմանն։ Եթէ՝ի դէպ ժամանակի արասցէ զազդարարութիւնն, այսինքն յորժամ կարող իցէ ապաշխարողն հատուցանել, ազատ է ինքն յամենայն պարտուց զի նահանջեաց զնորատ իւր, որպէս ասացաք՝ի գլ. ժ. 44։ Իսկ եթէ յամելով խոստովանահօրն՝ի ծանուցանել նմա զպարտականութիւն նորա՝ ոչ ևս գտանիցի ձեռն նորա բաւական՝ի հատուցանել, կամ ոչ ևս յօժարեսցի որ յառաջն պատրաստ էր՝ի հատուցանել, պարտական է նա ինքն խոստովանահայրն հատուցանելոյ. զի ինքն գտանի լեալ պատճառ միասու եղբօրն։ Այլ եթէ խոստովանահայրն առանց ծանր յանցանաց իցէ սխալեալ, ոչ է պարտական ծանր նեղութեամբ ազդ առնել. իսկ եթէ թեթև նեղութեամբ կարող իցէ առնել զազդարարութիւն, պարտական է. զի ամենայն իսկ ուժեք պարտ է թեթև ինչ նեղութեամբ խափանել զծանր միասս այլոց։ Այլ եթէ խոստովանահայրն չառնիցէ ազդ, ըստ հանգամանաց կարծեաց պարտական գտանի՝ի հատուցումն. քանզի իրաւ իւր, Թէպէտ և անգիտութեամբ տուեալ, ազդէ՝ի միասս պարտատեառնն. վասն որոյ՝ի ձանձնանալ զսխալանսն՝ պարտի ըստ արդարութեան խափանել զմիասն, եթէ կարէ առանց ծանր նեղութեան. որպէս եթէ ոք առանց ինչ յանցանաց գտանիցի պատճառ լեալ հրդեհելոյ տան ընկերին, պարտի ըստ արդարութեան շինուցանել զհրդեհն, եթէ կարող իցէ առանց ծանր նեղութեան։

123. Եթէ խոստովանահօր չիցէ ազատ կացուցեալ

պապաշխարողն՝ի հատուցմանէ, այլ վերջացեալ ևեթ՝ի խրատելոյ զնա՝ի հատուցումն, նոյն պարտք են նմա որ ինչ՝ի վեր այսր առացաք. այսինքն եթէ առանց մեղայ իցէ վերջացեալ՝ի խրատելոյ, չէ պարտական ծանր նեղութեամբ աղդ առնել զայն ապաշխարողին. այլ պարտական է, եթէ կարիցէ թեթև նեղութեամբ ըստ համեմատութեան տուժիւ վնասելոյն: Իսկ եթէ ծանր մեղօք իցէ վերջացեալ, պարտի և ծանր նեղութեամբ առնել զազդարարութիւնն: Այլ աստ և նոյն խնդիրն է, թէ՝ի չառնելն աղդ՝ պարտականն իցէ ինքն՝ի հատուցումն: — Հանրական և ճշմարիտ կարծիք չհամարին զնա պարտական. զի թէպէտ և պարտ է խոստովանահօր աղդ առնել ապաշխարողին զպարտս նորա, այլ վանն եղբայրսիրութեան ևեթ՝ և ոչ ըստ արդարութեան. և դարձեալ զի ոչ դրականապէս տայ պատճառս տուժիւ վնասելոյն, որ միշտ խնդրի վանն ածելոյ պարտականութիւն հատուցման: Երկրորդս այս պատճառ ազատ կացուցանէ զխոստովանահայրն, եթէ իցէ և ժողովրդապետ՝ որում ըստ արդարութեան և պարտք են աղդ առնելոյ ապաշխարողին զպարտս նորա:

124. Որքն իցէ խոստովանահօր, առանց հրամանի խնդրելոյ յապաշխարողէն, աղդ առնել նմա զսխալանս գործեցեալս՝ի խոստովանութեան: — Սուարէզ, Վերդրոզո և Սփորեր հաւանական համարին. իսկ Այման, Վասքրուիալ, Պոնաչինա, Սալմատիկեանք և այլք ստուգիւ իսկ օրէն համարին զայն. իբր զի ազդարարութիւնն այն է՝ի ընուլ զթերութիւն խոստովանութեան: Այլ հանրական կարծիք զանազանեն այսպէս. եթէ կատարեալ իցէ խոստովանութիւնն արձակմամբ, ոչ ևս օրէն է խոստովանահօր առանց հրամանի ապաշխարողին խօսել զայնմանէ. զի հաւասար է այն յիշեցուցանելոյ նմա զմեղսն, որով գժպհի առնի խոստովանութիւն: Այս այսպէս ուսուցանեն Սոթոյ, Ալիլուիոյ, Սանքէզ, Վալենցիա, Տիանա, Մեկալա, Լաքրուա և այլք. իսկ կարգինալ Տուկոյ զմիւս կարծիս համարի հակառակ հաստարակաց մտաց աստուածաբանից: Այլ եթէ չէ խոստովանահօր տուեալ իցէ զարձակումն, յայնժամ օրէն է նմա և առանց հրամանի խօսել զայնմանէ. զի յայնժամ չևեթս կատարեալ է գործ

տաստանն. և կամ եթէ արձակումն լեալ իցէ Թերի, զի յայնժամ ոչ ինչ զմեզաց ապաշխարողին են բանք։

125. Պարտ իցէ քահանայից պաշտել զխորհուրդ ապաշխարութեան։ — Պարզ քահանայից չեն ինչ պարտք, բայց միայն՝ ի յետին հարկաւորութեան. իսկ ժողովրդապետաց պարտք են պաշտել զայն ժողովրդեան իւրեանց, երբ իսկ ըստ օրինի և ըստ ժամանակի խընդրեցէ ոք զայն։ Տես որ ինչ զայսմանէ ասացաք՝ ի գլ. Ի. 24։ Արդ պարզ քահանայ, կամ պարզ խոստովանահայր, պարտականք իցեն վտանգաւ իսկ կենաց արձակել զհնազանդ՝ ի հոգեվարս, որոյ իցեն մահացու մեղք։ — Կենաց յաստուածաբանից ոչ պարտականս զնոսա համարին, եթէ զի մարթ է նոցա կատարեալ զղջմամբ ընդել զպետս իւրեանց։ Արդ Հնամարտագոյն կարծիք զհակառակն հաստատեն. զի թէպէտ և մարթ իցէ հիւանդին ընդել զկարօտութիւն իւր կատարեալ զղջմամբ, այլ զի ոչ դիւրին ինչ է կատարեալ զղջումն, ՝ի վտանգի մեծի կայցէ փրկութիւնն նորա։ Վասն որոյ որպէս յորժամ եղբայր քո՝ ի ստոյգ վտանգի կորստեան կայցէ առանց արձակման՝ պարտ է քեզ մահուամբ ջափ վըտանգաւ արձակել զնա. այսպէս և յորժամ կայ նա՝ ի հաւանական վտանգի կորստեան՝ պարտ է քեզ զհաւանական վտանգ կենաց յանձն առնուլ. զի՝ ի հաւասար վտանգի պարտական է ամենայն ոք դնել զկեանս իւր՝ ի վերայ փրկութեան եղբօրն։

126. Պարտ իցէ պարզ քահանայի պատրաստիլ և առնուլ հրամանն պաշտելոյ զխորհուրդ խոստովանութեան, տեսանելով զկարօտութիւն հոգւոյ առ՝ ի չըզգոյէ խոստովանահարց։ — Քահանայք կարգեալ են՝ ի տեառնէ, ոչ միայն վասն պատարագելոյ, այլ մանաւանդ պարապելոյ՝ ի փրկութիւն հոգւոց. զի որպէս Հայրն երկնաւոր առաքեաց զորդի իւր առ՝ ի փրկել զաշխարհ, նոյնպէս և Քրիստոս կացոյց զքահանայս փոխանակ իւր՝ ի նոյն պաշտօն. “Որպէս առաքեաց զիս Հայր իմ, և ես առաքեմ զձեզ,,։ Եւ այսր իսկ աղագաւ կոչին քահանայք լոյս աշխարհի, աղ երկրի, գործակիցք Աստուծոյ։ Վասն որոյ և Ժողովն տրիդենտեան հրամայէ “փորձել զմատուցեալս՝ ի քահանայութիւն թէ կարող իցեն ուսուցանել ամենեցուն զկարևորս փրկութեան և պաշ-

պէլ պնորհուրդս ,,: Պրկնաւոր պարտք քահանայից են պաշտել պնորհուրդս Հաղորդութեան և ապաշխարութեան, զի վասն այսորիկ ընդունին՝ ի ձեռնադրութեան կրկին իշխանութիւն՝ պատարագելոյ և արձակելոյ: Ա՛ստ նաւանդ զի առ այս պնկաւորապէս ետ նոցա Քրիստոս զՀոգի սուրբ. զի որպէս աւետարանիչն պատմէ, յետ ասելոյ՝ ,,Ընդուն զՀոգի սուրբ. եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լինին նոցա ,,: Ա՛յդ եթէ այս է սեփական պաշտօն քահանայից, և մի՛ ի պնկաւոր գործոց՝ վասն որոյ կոչին՝ ի քահանայութիւն, ապա պարտ է նոցա պատրաստիլ առ այն՝ գէթ՝ ի տեսանելն զկարօտութիւն հոգւոց առ պակասութեան խոստովանահարց, զի մի՛ յանդիմանեսցին յառաքելոյն՝ ընդունայն պնդորհն Աստուծոյ ապրեալ:

127. Ընդպէս ապա մարթ էիցէ քահանայի արդարանալ, որ պղերգանայ՝ ի պաշտել զկորհուրդ ապաշխարութեան կամ պատրաստիլ՝ ի քննութիւն՝ տեսանելով զկարօտութիւն ժողովրդեան: Ընդպէս մարթ էիցէ նմա զերծանել՝ ի դատապարտութենէ քանքարաթաղոյց ծառային, որով մեկնիչք սուրբ գրոց և սուրբն Ամբրոսիոս իմանան զայնսոսիկ՝ որ կարողք գոլով պարապել՝ ի փրկութիւն հոգւոց, անփոյթ առնեն: ,,Ի միտ առցեն ասա, ասէ Աւուռնելիոս Ալափիտէ, որք զհանձար զգիտութիւն և զայլ աստուածատարգև ձիրս ոչ՝ ի կիր արկանեն՝ ի փրկութիւն անձանց և այլոց առ ծուլութեան կամ առ երկիւղի մեզանչելոյ. զի համար՝ ի նոցանէ պահանջեսցէ Քրիստոս յաւուրն դատաստանի ,,: Ա՛յդ պինք են աստուածատուութիւնքն առ քահանայս. ,,Յորժամ ասիցեմ ցանօրէնն՝ թէ մահու մեռանիցիս, և դու ոչ զգուշացուցանիցես նմա.., անօրէնն այն յանօրէնութեան իւրում մեռցի, և զարիւն նորա՝ ի ձեռաց քոց խնդրեցից ,,. (Եզեկ. Գ. 18): Ա՛ւ ոչ ինչ զօրի ասել՝ թէ ուսուցանելով, խրատելով և աղօթելով զպարտս իւրեանց կատարիցեն. զի պարտ է նոցա օգնել ամենայնիւ՝ ի փրկութիւն հոգւոց: Ա՛թէ եղբայրք կարօտի կերակրոյ, չէ բաւական եթէ զգեցուցանիցես զնա. բազումք են ուսուցիչք և խրատիչք, այլ ժողովրդեան զինչ ասեն՝ զայն ոչ լսեն, զի ոչ ունին զսէր Աստուծոյ:

զովուրդն կարօտի խոստովանահօրոյ՝ որք զնուրբաքանչիւրոյ լցցեն զկարօտութիւն։ Այլ ոչ դարձեալ զօրէ ինչ առել՝ թէ պաշտօն խոստովանահօր եղբայրսիրութեան նոցին գործ, և եղբայրսիրութիւն ոչ զոք ստիպեցէ յայնքան աշխատանս ուսանելոյ զկարևորս առ՝ի պաշտել զնորհուրդ ապաշխարութեան։ Օ՛ի թէպէտ և յիրաւի եղբայրսիրութեան է գործ պաշտօնն այն, սակայն ոչ՝ի պարտուց եղբայրսիրութեան ևեթ յառաջ գայ՝ այլ և՝ի կարգէ քահանայութեան, ըստ որում աստուածային սահմանադրութեամբ կցորդ է կարգի պարտականութիւնս այս, և ամենայն որ քահանայ պարտական գտանի առ այն՝ի տեսանել զոչխարս Ժողովրդեան։ Այս ոչ անբաւականութիւն և տկարութիւն անբաւիր զնոսա կարիցեն առնել. զի զանբաւականութիւն կարող են լնուլ ուսմամբ. իսկ զխոստովանութենէ տկարութեան անձին ասէ սուրբ Աւետարանն՝ զի պատրանք անձնասիրութեան է այն և ձախողակի խոնարհութիւն, ընդ որոյ զոք ծածկի պղերգութիւն։ Այլ յաւելու զի Աստուած՝ի տալ ուժեք զքանքար, պահանջէ՝ի նմանէ յարգել զայն. և Աշմարիտ խոնարհութիւն այն է՝ հնազանդել, և գործել նուաւս և շահել։ Խոնարհին է մանաւանդ ձեռնարկել՝ի գործ. զի ոչ յանձին ինչ զօրութիւն ապաստանի նա, այլ Աստուած վստահացեալ՝ որոյ պղտութեանն՝ է փակրութեան կապարք՝ արիանայ՝ի գործել։ Օ՛ այսմանէ Հայրն Վաւեն յիսուսեան, և Տէր Յովսէփ Աղիի Աղոիոյ՝ի գիրսն մակագրեալ ժողովրդապետ գեղջ, երկարագոյնս և բազում խնամատութեամբ ձառեն։

ՑՕԴՈՒԱԾ Ժ-Ր

ՑԱՂԱԳՍ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՑ

128 · Զի վերապահութիւն ամփոփումն է իրաւասութեան :
129 · Զի տգիտութիւն ոչ ազատ կացուցանէ ՚ի վերապահութենէ, այլ՚ի բանադրանաց ևեթ : Խոհեր ընդ վերապահեալս Պապին և եպիսկոպոսին :
130 · Ո՞ւմ անկ իցէ վերապահել : Վերապահեալք ՚ի կրօնաւորական կարգս :
131 · Օրէ՞ն իցէ մեծաւորն արձակել զոք ՚ի վերապահեալ մեղաց, և Թողուլ խոստովանահօր արձակել զնա յայլոց մեղաց :
132 · Օրէ՞ն իցէ վերապահել զմեզս ներելիս կամ զներքինս կամ զԵկեղեցական :
133 · Ե՞րբ մարթի իցէ սաղմնադունի արձակել :
134 · Եթէ անիրաւաբար ումեք չտացի իշխանութիւն արձակելոյ ՚ի վերապահելոց : Եթէ վանահայրն զատցի տալ զայն :
135 · Կարիցի՞ն օտարականք ընդունել արձակումն, եթէ իցեն մեղքն այն վերապահեալ ևեթ արտաքոյ, կամ՚ի հայրենիս նոցա :
136 · Ո՞րպէս պարտ իցէ խմանալ զբանն ՚ի Նէնգ վերապահութենէն :
137 · Որ մեղանչէ ՚ի հայրենիս իւր, կարիցէ ընդունել արձակումն այսուր ՚ի խոստովանահօրէ՝ որոյ իցէ իշխանութիւն :
138 · Որ մեղանչէ արտաքոյ, կարիցէ ընդունել արձակումն ՚ի հայրենիսն : Որ մեղանչէ ՚ի հայրենիսն, կարիցէ ընդունել այսուր արձակումն ՚ի բանադրանաց · կամ որ մեղանչելով այսուր անկանի ՚ի բանադրանս վերապահեալս :
139 · Որ յանգիստս արձակի ՚ի վերապահելոց ՚ի ձեռն խոստովանահօր, որոյ չիցէ իշխանութիւն արձակելոյ :
140 · Որ մոռանայ ինչ ՚ի մեղաց վերապահելոց ՚ի խոստովանելն առ մեծաւորն :
141 · Եթէ խոստովանութիւնն այն իցէ լեալ անվաւեր :
142 · Օրէ՞ն իցէ պարզ խոստովանահօր արձակել զվերապահեալ երկբայելն :
143 · Որ յետ խոստովանութեան այնորիկ ճանաչէ սաուգիս վերապահեալ զայն :
144 · Որ մեղանչէ վստահացեալ ՚ի հրաման արձակմանն :
145 · Որ մեղանչէ յետ հրամանին :
146 · Իշխանութիւն եպիսկոպոսաց և կարդապետաց ՚ի վերայ վերապահելոց :

128 · Վերապահութիւն է բարձումն իրաւասութեան ՚ի վերայ մեղաց ինչ : Վասն որոյ ըստ հանրապոյն վարդապետութեան աստուածաբանից, չէն ապատք ՚ի վերապահութենէ տգիտք՝ ևս և յանյաղթելի տգիտութեան · զի վերապահութիւն ոչ ՚ի մեղաւորս հայի իբրև պատիժ որպէս համարին Ռոնքալեա, Վալենսիկեանք և այլք, այլ իբրև ամփոփումն իրաւասու-

թեան հայի ուղղակի ՚ի խոստովանահարս։ Նա այս յայտ է ՚ի բանից տրիդենտեան ժողովոյ, զի ասէ "Ոչ ինչ զօրել արձակմանն քահանային այնմ, յորս վերայ չունի նա իրաւասութիւն, ոչ ըստ կարգի իշխանութեան և ոչ ըստ աւանդեալ իշխանութեան"։ Ասէ ոմն և յաւելու ՚ի կնիք բանիցն. "Ի կարասցեն քահանայք արձակել զոք ՚ի վերապահելոց"։ Նա ոչ զօրէ ինչ ասել, զի թէպէտ և վերապահութիւն ուղղակի ՚ի խոստովանահարս հայիցի և ամիսփիւկ զնշխանութիւն նոցա, սակայն դիտաւորութիւն վերապահութեան հայր ուղղակի ՚ի հպատակս, որպէս զի զգուշանայցեն ՚ի մեղայ անտի վերապահելոյ. վասն որոյ ՚ի դադարել վախճանին ՚ի մեղուցեալս անդիտութեամբ, դադարէ և վերապահութիւն։ Օ՚ի պատճառ վերապահութեան ոչ զգուշութիւն եւեթ հաւատացելոյ է ՚ի մեղայ անտի, այլ զի և պատշաճ դեղք զգուշութեան և խրատք և ապաշխարանք տային մեղուցելոյ ՚ի դիմել նոցա առ մեծաւորս։ Ասէ ոմն որոյ ասէ Ժողովն տրիդենտեան. "Հաճոյ թուեցաւ Հարց Ժողովոյս, զի դժնդակագոյն մեղք մի յամենայն երիցանց՝ այլ ՚ի ծայրագունացն արձակեցին"։

129. Ապտի զհետ թերեն վերոյիշեալ աստուածբանք, զի և ՚ի մեղս վերապահեալս յեպիսկոպոսաց հանդերձ բանադրանօք, թէպէտ անդիտութեամբ մեղուցեալք զերծ ՚ի բանադրանաց անտի գտանին առ ՚ի չգոյէ ՚ի նոսա յամառութեան՝ որ կարևորն է վասն անկանելոյ ընդ բանադրանօք, այլ չեն ազատք ՚ի վերապահութենէ։ Օ՚ի այս իսկ է խոչիր ընդ վերապահեալս եպիսկոպոսաց և ընդ պապականս. զի պապականքն առաւելապէս ՚ի պատճառս բանադրանացն վերապահեալ են Պապին, քան յերկուց անտի, որ են զրպարտութիւն քահանայի ՚ի հրապոյրս, և ընդոծնելութիւն պարգևի ՚ի կրօնաւորէ, զորմէ առացաք ՚ի գլ. ԺԹ. 8։ Ասի ոմն որոյ անդիտութեամբ մեղուցեալք զերծ գտանին ՚ի վերապահելոյ Պապին, որպէս ուսուցանեն Սուարէզ, Վասկէզ, Սանքէզ, Լայման, Մոլինա, Կայէթանոյ, Կոնէք, Սիլվեր, Լաքրուա, Շիերա, Ասի Լուա և այլք. զի անդիտութիւն ազատ կացուցանէ ստուգիւ ՚ի բանադրանաց, որպէս ասելոյ եմք ՚ի գլ.

ժթ: Իսկ վերապահեալքն յեպիսկոպոսաց, քանզի ա-
ռաւելապէս 'ի պատճառս մեզացն են վերապահեալ,
Թէպէտ և բանադրանք ևս 'ի վերայ յաւելեալ լինեն,
ոչ ազատ 'ի վերապահութենէն կացուցանեն զմեղու-
ցեալս անգիտութեամբ. զի վերապահութիւն մեղաց,
որպէս ասացաք, բառնայ զիրաւասութիւն խոստովանա-
հօր արձակելոյ զայնպիսի մեղս:

130. Ի մենայն մեծաւորք, որք ըստ կարգի իշխա-
նութեան իւրեանց ունին իրաւասութիւն, որպէս
Պապն և եպիսկոպոսունք և կարգապետք, և որոց միան-
գամ իցէ իշխանութիւն գրել եպիսկոպոսական ըստ
յայտարարութեան սրբոյ Ժողովոյն տրիդենտեան սահ-
մանադրութեանց, կարող են վերապահել ինչ 'ի մե-
ղաց: Այլոց միայն Ժողովրդապետաց չիք իշխանութիւնս
այս, խափանեալ 'ի սովորութենէ: Իսկ կարգապետք
կրօնից ըստ սահմանադրութեանն Կղեմայ Ը. չկարեն
աւելի ինչ քան զմեռտասան մեղս վերապահել առանց
հանրական Ժողովոյ վասն համօրէն կրօնին, կամ առանց
գաւառական Ժողովոյ վասն գաւառին: Այլ զորս կա-
րենն իւրովի վերապահել՝ այսոքիկ են: Ա. Ի Ժողով
զկարդ կրօնաւորութեան: Բ. Պիշերախառն գաղտա-
գողն եղբ 'ի վանից: Գ. Նմայք: Դ. Ի ահուչափ մեղք
ընդդեմ աղքատութեան: Ե. Ի ահուչափ գողութիւն
իրաց ուխտին: Զ. Ի արմենական մեղք լսայեալ գոր-
ծով: Է. Ի տերգմնութիւն 'ի գատաստանի: Ը. Գող-
ծակցութիւն 'ի վիժումն հոգևորեալ սաղմին: Թ. Ընդ-
հարուած ոչ ուրուք և իցէ: Ժ. Կեղծել զձեռնարկ
կամ զկնիք պաշտօնէից ուխտին: ԺԱ. Ի գործել կամ
բանալ զնաւակային մեծաւորաց առ հպատակս, կամ
զհպատակաց առ մեծաւորս: Ի յլ բանադրանս առանց
վերապահութեան սահմանել վասն յանցանաց իրիք,
ըստ հանրագոյն և ըստ հաւանականագոյն կարծեաց,
չկարեն կարգապետք:

131. Ոչ օրէն վերապահել ինչ առանց իրաւացի
պատճառի. վասն որոյ ոմանք զանխրատ վերապահու-
թիւն անվաւեր համարին, իբր զի Ժողովն տրիդենտեան
եւս մեծաւորաց զիշխանութիւնն զայն 'ի շինել և 'ի
*ակել: Այլոց հանրագոյն կարծիք, զոր հաստատեն Ա-
ման, Սուարեզ, Լուկայ, Հոլզման, Ազերա և այլք,

թէպէտ և օրինապանցութիւն մեծ համարին զանիրաւ վերապահութիւն, այլ հանդերձ այնու վաւերական. զի օրպէս կարէ մեծաւորն չտալ ումեք իշխանութիւն՝ ի վերայ մեղաց ինչ, կարող է նմանապէս և զտուեալն ամիռփել։

Օրէն էր մեծաւորի արձակել զոք՝ ի վերապահելոց եւեթ, և թողուլ խոստովանահօրն արձակել զնա յայլոց մեղաց։ — Հանրական կարծիք ոչ օրէն համարին զայն, բայց միայն՝ ի դժուարագիպ ինչ հարկի. որպէս եթէ հարկ էր ապաշխարողին հաղորդել, և մեծաւորին չէր մարթ լսել բովանդակ զխոստովանութիւն նորա, և չկամէր ապաշխարողն կրկին զվերապահեալ մեղսն խոստովանել։

132. Օրէն է և զներելի մեղս վերապահել, որպէս ուսուցանեն Աւարէզ, Լուկէյ, Ղիերա, Հոլզման, Վոնչինա և այլք ընդդէմ Նագուէզի։ Օ՞ի թէպէտ և չիք ինչ պարտ խոստովանելոյ զներելի մեղս, սակայն և ոչ թողութիւն այնոցիկ լինի՝ ի խորհուրդ ապաշխարութեան առանց իրաւասութեան։ Սակայն խոհեմութիւնն պահանջէ զմահուչափ եւեթ մեղս վերապահել, և՝ ի նոցունց իսկ զԴԺՆԴԱԿԱՓՈՅՆս ըստ սահմանելոյ ժողովոյն, և արտաքուստ իսկ ծանուցանս։ Օ՞ի որպէս Լուկէյ, Սանքեզ, Աւարէզ, Վոնաչինա, Կրանատոյ, Ղիերա և այլք ուսուցանեն, մեղք՝ ի վերին երեսս թեթևք, թէ և՝ ի ներքուստ իցեն ծանուցք, ոչ անկանին ընդ վերապահութեամբ. զի մեծաւորաց դիտաւորութիւն զայնս եւեթ՝ ի մեղաց է վերապահել, որոց ծանրութիւն իցէ ակներև, և իցեն լսացեալք և ըստ տեսակի իւրեանց կատարեալք։ Ասն որոյ Հայրն Ասպոթա, Սիլուէյ, Ղաղոյ, Վոնաչինա և այլք չհամարին վերապահեալ զմծծնէութիւն և զսոդոմականութիւն արտաքոյ անօթոյ լսացեալ, և զսոդոմականութիւն իսկ անկատար՝ այսինքն արուէ ընդ իդի գործեալ։

133. Ի կարևոր ժամանակի եթէ չէր մարթ դիմել առ վերադոյնն, օրէն է ստորնադունի արձակել անուղղակի՝ ի վերապահելոյ, որպէս եթէ չէր հնար այլապէս խափանել զգայթակղութիւն կամ զանուանարկութիւն, կամ կատարել զպատուիրան զատկական, և կամ եթէ հարկ իցէ ապաշխարողին յառել՝ ի մեղս

վան բացակայութեան վերհատուցին։ Այսպէս ուսուցանեն աստուածաբանք գրեթէ առ հասարակ. բայց՝ի դադարել հարկին պարտ է ապաշխարողին յանդիման լինել վերհատուցին՝ վասն ընդունելոյ՝ի նմանէ ուղղակի զարձակումն վերապահելոյ։ Օ՞ի պարզ խոստովանահաւքը, ըստ յայտարարութեան տրիդենտեան ժողովոյ, արդարև վճռական մահառաքն չունին եղկաւորեալքն՝ի վերայ վերապահելոյ։ Ապա որոյ՝ի դադարել հարկին, եթէ յեպիսկոպոսէն էր վերապահեալ, պարտ է դիմել առ նա վասն ուղղակի արձակմանն։ Այլ եթէ՝ի Պապէն, և ապաշխարողին չէր լեալ հնար և ոչ առ եպիսկոպոսն դիմել՝ (որպէս պարտն էր նմա՝ի չկարենալն դիմել առ Պապն), պարտի յետ արձակմանն առհարկի՝ի պարզ խոստովանահօրէն՝ յանդիման լինել գէթ եպիսկոպոսին, որպէս ասելոց եմք՝ի գլ. ժ. 45։ Այլ եթէ բանադրանօք հանդերձ էր վերապահեալ, ՝ի չկամել ապաշխարողին յանդիման լինել՝ անկանի անդրէն՝ի բանադրանս, որպէս առասցաք՝ի թիւ 96։ Իսկ եթէ էր ուրուք մեղք վերապահեալք, և՝ի տեսիլ հարկին չէր օք՝ որ ունէր իշխանութիւն արձակելոյ զնա, պաշրտ էր նմա խոստովանել պարզ խոստովանահօր, և՝ի խոստովանելն՝ յայտնել և զվերապահեալս ընդ այլ մեղս նմա, առասցաք՝ի գլ. ժ. 27 և 28. և աստ երկրորդեմք զի պարտ է նմա խոստովանել, և զայն ևս մեղս նմա յայտնել, գէթ յորժամ կարևոր իցէն առ՝ի կարող լինելոյ խոստովանահօրն դատել ըստ պատրաստութեան նորա. և յաւելումք զի՝ի հարցանել խոստովանահօրն՝ պարտ է նմա յայտնել զամենայն։ Օ՞ի որպէս բարւոք ազգ առնէ կարդինալ Տուկոյ, թէ՝ պէտ և էր պարտ ապաշխարողի յայտնել անդ զմեղս նմա, սակայն պարտի յայտնել զայն՝ի հարցանել խոստովանահօրն. որում իրաւունք են դիտելոյ բովանդակ զհանգամանս խոշտի մեռոց ապաշխարողին առ՝ի դատել զպատրաստութեանն նորա և տալ զդեղ պատկանաւոր։ Իսկ եթէ օրէնն էր պարզ խոստովանահօր առաջի եպիսկոպոսին արձակել զոք՝ի վերապահելոց Պապին, տես՝ի գլ. ժ. 97։

134. Եթէ մեծաւորն յանիրաւի իսկ զանայցէ տալ ստորնագոյնի իշխանութիւն, չկարէ նա արձակել զոք

՚ի վերապահելոց, որպէս ուսուցանեն սատուածաբանք քաց՚ի սակաւուց ոմանց։ Ո՚ր որպէս վաւերը և վերապահումն անկրաւ, ըստ ասացելումն՚ի Թիւ 131, նոյնպէս վաւերը գտանի և յանկրաւի չտալ իշխանութիւն արձակելոյ՚ի վերապահելոց։ Սակայն չկը երկբայել զի մահուամբ մեղանչէ եպիսկոպոս, որ տարապարտուց զլանայ ուժեք կիշխանութիւն, և ընդդէմ իսկ արդարութեան մեղանչէ, եթէ ծանր ինչ վնաս հոգևոր՚ի զլանալոյ անտի հասանէ հպատակաց. և մանաւանդ եթէ չկայ հնար հաւանեցուցանել զապաշխարողն յանդիման լինել նմա։ Այլ օրէն է մեծաւորի չտալ իշխանութիւն արձակելոյ զապաշխարողն մինչև յայտնեսցէ նա զկարևորս առ՚ի խափանել զդայթակղութիւն՝ կամ զվնաս հասարակաց. զի այլապէս չէ նա ընդունակ արձակման յումմէ և իցէ՝ իբր անզեղջ։

Կ՚ասեն և աստ վասն կրօնաւորաց, զի ըստ յայտարարութեան Կղեմայ Ը, եթէ մեծաւորն յանկրաւի կամիցի տալ իշխանութիւն արձակելոյ կարգեալ խոստովանահօր, կարէ նա արձակել զապաշխարողն։ Ո՚նոյն հաստատեն Վենդեցցարիոյ, Տիանա և այլք յաստուածաբանից, եթէ մեծաւորն կամիցի տալ իշխանութիւն այլում ումեք՚ի կրօնաւորաց, որ զխոնարհսցն իցէ և խոհեմագոյն, քէպէտ և չիցէ կարգեալ խոստովանահայր. և գարձեալ եթէ նմին իսկ ապաշխարողին կամիցի տալ արձակումն։

135. Ո՚տարականք ըստ վերապահելոց և մեղաց սպարտին հպատակել օրինաց Թեմին՝ ուր գտանին։ Ա՚ան որոյ եթէ ինչ՚ի մեղաց վերապահեալ իցէ անդ, կարէ օտարականն ընդունել արձակումն՚ի սարկ խոստովանահօրէ՝ Թէպէտ և՚ի հայրենիս իւր չիցէ այն վերապահեալ։ Ո՚այս այսպէս ուսուցանեն ըստ հանրագոյն և ճշմարտագոյն կարծեաց Սուարէզ, Լ՚ուկոյ, Պոնաչինա, Վ՚անչինա, Ղիերա, Տիանա, Ամմատիկեանք և այլք. քանզի օտարականք ըստ հասարակաց սովորութեան՝ ոչ արձակին ըստ համարեալ հաւանութեան Թեմական եպիսկոպոսի իւրեանց, որպէս վարկանին հակառակ կարծեացն պաշտպանք, այլ ըստ կամաց ընդհանուր եկեղեցւոյ։ Ա՚րդ վերապահութիւն, որպէս՚ի վեր անդր ասացաք (128), ոչ յապաշխարողս հայի՝

այլ՝ի խոստովանահարս· վասն որոյ չկարեն նոքա արձակել զօտարականս՝ի մեղաց անտի, յորոց ամիսուիեաւ է իշխանութիւն իւրեանց: Իսկ եթէ մեղք օտարականին՝ի հայրենիս նորա լոկ վերապահեալ, այլ ոչ՝ի թեմին՝ ուր է, կարէ ընդունել արձակումն յաներեսային խոստովանահօրէ, որպէս ուղիղ ուսուցանեն սուրբքն Աստուածոմինոս, Կայէթանոյ, Լուկոյ, Սուարեզ, Վոնչինա, Մոնքաչեա, Լաքրուա, Ծացցոլիթա, Սալմատիկեանք և այլք: Ոչ՝ի այս է սովորութիւն ընկալեալ յաներեսային եպիսկոպոսաց և՝ի քահանայապետաց իսկ Հռոմայ· եթէ միայն, որպէս յայտ առնէ Կղեմէս Ը, չիցէ ապաշխարողն մեկնեալ՝ի հայրենեաց առ՝ի նենգել վերապահողն:

136· Իսկ զատոյգ խնդիր նենգելոյ զվերապահութիւն համարին Հայրն Ծացցոլիթա և Ֆաղնանուրինի և այլք, եթէ իրքն ածեալ իցեն յատեան, և առ՝ի խոյս տալոյ յատենին մեկնեսցի զի՝ի հայրենեացն: Այլ այս խնդիրս ածէ ընդունելի, զի ոչ զարտաքին յատենէ են՝ի կոնդակի անդ բանք, այլ զիսորհրդակատնէն: Եւ այլք այլազգ տան խնդիրս բանին· այլ հանրագոյն և հաւանականագոյն խնդիրս, զոր հաստատեն Լուկոյ, Վոնքաչեա, Վիւա և այլք, այս է՝ եթէ ապաշխարողն առ՝ի դիւրաւ այլուր ընդունել արձակումն՝ խոյս տայ՝ի դատաստանէ իւրոյ հօվուին· զի այսուիկ նենգէ օրինաց վերապահութեան, մեկնելով՝ի հայրենեացն՝ առ՝ի զերծանել յօրինաց անտի: Այլ ոչ հաճի նենգել վերապահութեան որ վասն այլ իրիք զըկայ այլուր, որպէս՝ի գործ ինչ իւր, կամ յուխտ, կամ՝ի խնդիր խոստովանահօր անծանօթի՝ որում համարձակագոյն կարիցէ խոստովանել, յառաւելագոյն անդորութիւն խղճի մտաց, և կամ վասն այլ իրիք իրաւացի պատճառի:

137· Վոնքաչեա յաւելու՝ զի որ խոյս տայ յատենէ հօվուի իւրոյ, անընդունակ է արձակման այլուր, և՝ի խոստովանահօրէ՝ որոյ իցէ իշխանութիւն արձակելոյ՝ի վերապահելոյ, իբր զի և անդ՝ի ներքս մտանէ նենգ: Այլ ոչ ընդունին զայս այլք յաստուածաբանից, զի ոչ թուի նենգել որ ոչն խուսէ՝ի վերապահութենէ՝ գնալով այլուր, ուր և անդ վերապահեալ իցէն

մեղք նը։ Նմանապէս յաւելու Յանսէն, և Յոնքալեա հաստատէ զայն, զի եթէ ոք գնայցէ այլուր մեղանչել առատ՝ ի վերապահութենէ, չկարէ և նա ընդունել անդ արձակումն։ Այլ և այս անընդունելի թուի. զի յայնժամ ապաշխարողն ոչ առ՝ ի նենգել վերապահութեան գնայ այլուր, այլ առ՝ ի չանկանել ընդ նովաս։

138. Որ մեղանչէ՝ ի մենաստանի ուրեք մեղս ինչ վերապահեալս՝ ի քաղաքի անդ, Թէպէտ և հաւանական ազատ են մենաստանք ըստ տեղւոյ և՝ որպէս ասացաք՝ ի գլ. Բ. 39, սակայն որպէս ուսուցանեն աստուածաբանք քաց՝ ի սակաւուց ոմանց, չկարէ ընդունել արձակումն՝ ի խոստովանահօրէ՝ որոյ չիցէ իշխանութիւն արձակելոյ՝ ի վերապահելոց։ Օնոյն և ասել և զայնմանէ՝ որ այլուր մեղանչիցէ, այսինքն զմեղս վերապահեալս՝ ի հայրենիս իւր՝ գործիցէ արտաքոյ հայրենեացն, ուր չիցէ այն վերապահեալ։

Դարձեալ չկարէ ոք արտաքոյ Թեմի ընդունել՝ ի պարզ խոստովանահօրէ արձակումն՝ ի բանադրանաց, ընդ որովք՝ ի հայրենիս իւր անկեալ իցէ. զի յայտնապէս ասեն կանոնք չկարել խոստովանահարց արձակել զոք՝ ի բանադրանաց վերապահելոց։ Նմանապէս եթէ օտարական ոք գործէ մեղս ինչ ուրեք վերապահեալս, չկարէ ընդունել անդ արձակումն՝ ի պարզ խոստովանահօրէ. զի ինքն անկանի անդ՝ ի վերապահութիւն, իսկ խոստովանահայրն՝ որպէս ասացաք՝ ի վեր անդր 135, չկարէ արձակել զօտարականս՝ ի մեզաց՝ յորոց վերայ ունի իրաւասութիւն յեպիսկոպոսէ իւրմէ։ Այլ գիտելի է զի օտարականք Թէպէտ և անկանին՝ ի վերապահութիւն, այլ ոչ և՝ ի բանադրանս կցորդս նոցին, որպէս ուսուցանեն աստուածաբանք քաց՝ ի սակաւուց ոմանց. զի կանոնք սահմանեն հպատակաց եպիսկոպոսի անկանել՝ ի բանադրանս վճռելոյ յանդգնողաց գործելոցդ։

139. Եթէ ապաշխարողն խոստովանի անզիտութեամբ զվերապահեալս պարզ խոստովանահօր, և կամ մոռանայ խոստովանել, արձակի վաւերաբար։ — Յանապատական և հաւանականագոյն կարծիք համարին վաւեր զարձակումն. զի պարզ խոստովանահայրն Թէպէտ և չկարէ արձակել՝ ի վերապահելոյ, այլ կարող է արձակել յայլոց մեղաց. վասն որոյ յայնժամ արձակին այ-

նոքին ուղղակի, և վերապահեալքն անուղղակի. զի մա-
հուչսի մեղայ ոչ է մարթ արձակիլ միւմն առանց
պլոց: Այս քանզի հասարակաց է և յոյժ հաւանական
այս կարծիքս, եթէ երբեք չիցէ ևս ձչմարիտ, ընդ եկե-
ղեցի զԹերին իրաւասուԹեան խոստովանահօրն ըստ
առաջելումն՝ ի Թիւ 91:

140. Արդ ապաշխարող ոք՝ ի խոստովանելն քահա-
նային, որոյ իցէ իշխանուԹիւն արձակելոյ՝ ի վերապա-
հելոյ, մոռասցի խոստովանել ինչ վերապահեալ, օրէնն
իցէ ապա արձակել զնա յայնմանէ ուր և իցէ խոստովա-
նահօր: — Ակնաբ յաստուածաբանից ոչ օրէնն համարին,
իբր զի պարտ է ապաշխարողն արկանել զվերապահեալ
մեղսն ընդ դատաստանաւ ունողի իշխանուԹիւն արձա-
կելոյ զայն, որպէս զի ընկալցի դեղ և ապաշխարանս
պատկանաւորս՝ ի նմանէ: Այլ հանրագոյն և ձչմարիտ
կարծիքս օրէնն համարին զայն. զի քահանայն, որոյ իցէ
իշխանուԹիւն արձակելոյ՝ ի վերապահելոյ, արձակէ
զապաշխարողն ամենայն իշխանուԹեամբն յամենայն
իսկ՝ ի մեղայ ըստ առաջելումն՝ ի Թիւ 69:

141. Արդ ոք խոստովանեսցի մեծաւորի, այլ խոս-
տովանուԹիւն իւր իցէ անվաւեր, ազատի՞ նա՝ ի վերա-
պահուԹենէ: — Արդ առանց մեղայ ապաշխարողին
անվաւեր լեալ իցէ խոստովանուԹիւնն, ազատի ըստ
ամենեցուն կարծեաց. զի մեծաւորն որպէս կամի ար-
ձակել զնա՝ ի մեղայ՝ նոյնպէս կամի և՝ ի վերապահու-
Թենէ ազատել զնա. և ապաշխարողն ևս արկանէ զը-
վերապահեալ մեղս իւր ընդ դատաստանաւ մեծաւորին,
և ընդունի՝ ի նմանէ դեղ և ապաշխարանս ըստ օրինի.
վասն որոյ պարտ է նմա կատարել զապաշխարանն,
Թէպէտ և յետ խոստովանուԹեանն ծանիցէ զանվաւե-
րուԹիւն նորին: Այս ոչ զօրէ ինչ ասել Թէ մեծաւորն,
և ևս առաւել փոխանորդ նորին, խորհրդական արձակ-
մամբն բառնան զվերապահուԹիւն, և եԹէ անվաւերը
իցէ արձակումն՝ չզօրէ բառնալ և զվերապահուԹիւն.
զի մեծաւորն կարող է բառնալ զվերապահուԹիւն
առանց իսկ խորհրդական արձակման. իսկ փոխանորդն՝
ոչ ասեղծեալ իշխանուԹեամբն արձակէ, Թէպէտ և
չկարիցէ առանց խորհրդական արձակման բառնալ զվե-
րապահուԹիւն, սակայն համարի կամաց մեծաւորին

ընուլ անդ զԹերևին, զեթ ՚ի սովորութենէ այսպէս համարեալ, և ընկալեալ յամենայն աստուածաբանից:

Այլ եթէ յանցանօք ապաշխարողին անվաւեր և արբասիղձ լեալ իցէ խոստովանութիւնն, կէսք յաստուածաբանից չհամարին զնա ազատեալ ՚ի վերապահուԹենէ. իբր զի չէ օրէն կարծել Թէ մեծաւորն կամիցի նպաստել այնպիսւոյն: Ասկայն հանրագոյն կարծիք զհակառակն հաստատեն. զի այլ է վախճան խոստովանութեան՝ բառնալ զմեղս, և այլ վերապահուԹեան՝ արկանել զմեղս ընդ դատաստանաւ մեծաւորի, զոր առնէ իսկ ապաշխարողն. և եթէ չկամիցի իսկ մեծաւորն ըստ մեկնողական կամաց արձակել զնա ՚ի վերապահուԹենէ, սակայն ներգործական կամօք արձակէ զնա: Այլ ոչ արձակի ՚ի վերապահուԹենէ որ լուէ կամաւ զվերապահեալ մեղս իւր, կամ առանց զղջման և առաջադրութեան խոստովանի զայն: Իսկ յաղագս անվաւեր կամ արբասիղձ խոստովանութեան ՚ի յոթելինի տես ՚ի Թիւ 66, ուր այլ ազգ ինչ վասն յոթելինեան ընծրհին ասացաք զայսմանէ:

142. Եթէ երկբայելի իցէ անկանել ուրուք ՚ի վերապահուԹիւն, կարիցէ արձակել զնա պարզ խոստովանահայր: — Եթէ երկբայուԹիւն զմեզայն իցէ, այսինքն ներելի Թէ մնհուչափ իցէն լեալ մեղքն, կամ լռացեալ Թէ Թերակատար, կարէ աներկբայապէս՝ որպէս հաստատեն Սուարէզ, Լուկէ, Անքէզ, Վոնչէնա և այլք. զի զվերապահուԹիւն որպէս դժպհի ինչ պարտ է ամիծոխել ըստ կարի, վասն որոյ և խնամալ զճանուցց եւԹէ և զատոյգ մեղացն լռացելոց, ըստ ասացելումն ՚ի Թիւ 132: Իսկ եթէ զիշխանութենէ խոստովանահօրն իցէ երկբայուԹիւն, կէսք յաստուածաբանից ասեն չկարել խոստովանահօր անատոյգ իրաւութեամբ արձակել: Այլ հանրագոյն կարծիք յայսմ ևս զհակառակն հաստատեն, Թէպէտ զրական և Թէ բացատական իցէ երկբայուԹիւնն. զի յերկբայս՝ իրաւունք են խոստովանահօր արձակելոյ: Այնուամենայնիւ զի հանրական և յոյժ հաւանական գոլով կարծեացս, եԹէ երբեք չիցէ ձեմարիտ՝ ընու եկեղեցի զվերին իշխանութեան խոստովանահօր: Եւ ոչ զօրէ ինչ ընդդէմ կոնդակին Կղեմայ Ը, որ արգելու ևս և արտունա-

ցեալ խոստովանահօրց չարձակել զոք յերկբայականաց իսկ վերապահելոց կոնդակին ընթերեաց. և ոչ այն զի արգելեաւ է եպիսկոպոսաց չարձակել զհարկանող եկեղեցականի, և ա՛ս և յերկբայել զծանրութենէ հատուածոյն։ Զի արգելքս այսոքիկ հաստատեն մնանեանդ զվարդապետութիւնս զայս, օրէն համարելով արձակել նոցա զայլ երկբայական վերապահեալս. քանզի Բայաառունեան հաստատէ զնոսա։ Ա՛նաւանդ զի եթարձ ապա Կղեմէս՝ի կոնդակին զյաւելուածն զայն յերկբայականաց իսկ վերապահելոց։ Ա՛նքեզ, Պոնաչինա, և այլք՝ի բաց առնուն զմեզս, որ յարտաքին ատենի համարիցի ստոյգ։ Ա՛յլ այս բացատութիւն չէ ընդունելի այլոց աստուածաբանից. զի այլ է արտաքին ատեան, և այլ ներքինն. յարտաքնումն ոչ ինչ զօրէ վկայութիւն յանցաւորին, այլ՝ի խորհուրդ ապաշխարութեան հաւատարիմ համարին քանզ ապաշխարողին ցոլջատի հակառակին նոցին չիցէ հաւաստի։

143. Ա՛թէ ոք զերկբայելի վերապահեալս խոստովանիցի պարզ խոստովանահօր, և ապա ծանիցէ հաւաստեաւ զվերապահութիւնն, զտանի՞ արձակեալ յայնմանէ։ — Ն՛այրն Վ՛ոնչինա չհամարի զնա արձակեալ՝ի վերապահութենէ. բայց այլք գրեթէ առ հասարակ համարին զնա արձակեալ։ Զի այլ է՝ զոր ասացաքն՝ի Թիւ 35, յորժամ ապաշխարողն երկբայանօք խոստովանի ինչ՝ի մեղաց, և ապա ձանաչէ զայն հաւաստեաւ. անդ պարտական է ապաշխարողն խոստովանել զայն անդրէն որպէս ստոյգ, վասն ամբողջութեան խոստովանութեան։ Ա՛յլ աստ ընդ մեղաց բառնի՝ի բաց և վերապահութիւն, և ոչ ևս պարտական զտանի ապաշխարողն յանդիմանն լինել մեծաւորի և ընդունել արձակումն՝ի նմանէ։

144. Կարիցէ՞ ընդունել արձակումն՝ի վերապահելոց՝ որ մեղանչէ վստահացեալ՝ի հրամանն արձակմանն։ — Երկբային ոմանք. այլ հաւատարակաց կարծիքն հաստատեն զայն. զի թեպետ և չկամի մեծաւորն պատճառս մեղաց տալ հրամանաւն, սակայն և ոչ կամի զրկել յարձակմանէ զապաշխարողն՝ որ զղջացեալ՝ի սրտէ առաջադրէ ոչ ևս մեղանչել։ Զնոյն և վասն յոգնելեան հրամանի ասացաւք՝ի Թիւ 70։

145. Եթէ ոք յետ հրամանին արձակման յաւելցէ գործել ինչ վերապահեալ, զօրէ հրամանն այն և վասն արձակման այնր մեղաց: — Եթէ հրամանն տուեալ էցէ այս ինչ կամ այն մեղաց յանուանէ և սահմանեալ ըստ թուոյ, ոչ զօրէ. իսկ եթէ էցէ ընդհանուր, զօրէ ըստ հասարակաց վարդապետութեան աստուածաբանից:

146. Իսկ յաղագս իշխանութեանն եպիսկոպոսաց արձակելոյ զվերապահեալս Պապին ոչ հրապարակեալս, տես ի գլ. Ի. 29. և վասն իշխանութեան կրօնաւորաց դարձեալ անդ ի թիւն 97:

ՅՕԴՈՒԱԾ ԺԳ

ՑԱՂԱԳՍ ՆՆԴՈՑ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ

147. Պարտք կինքոյ:
148. Ո՛յք անկնք պարտականք լսել զնոսին:
149. Պարտականն էցէ որ հրամանաւ ապաշխարողին հարցեալ ի խոստովանահօրէն վասն խորհրդակցութեան:
150. Պարտականն էցէ որ ի նոյն իսկ յապաշխարողէն հարցեալ:
151. Պարտականն էցէ որ զգիր խոստովանութեան ընթեռնուցու:
152. Անկանիլն ընդ կինքով Ս. Դներիզն և մեղք վոչնաեւսակք: Ե. Մեղսակիցն և մեղք, այլ հրամանաւ ապաշխարողին օրէն է խրատել զմեղսակիցն:
153. Գ. Պատճառք մեղացն: Դ. Ապաշխարանք: Ե. Բանք յարակից մեղաց: Զ. Յայտնութիւնք և առաքինութիւնք: Է. Խղճահարութիւնք:
154. Թերութիւնք բնականք:
155. Յաղագս ընդունելոյ զխոտ ապաշխարողի խոստովանութիւն:
156. Ուր ուրեք չկինքոյ: Հրամանն ապաշխարողի. էցէ օրէն ի խոստովանութեան խրատել զինա առանց խնդրելոյ հրամանի:
157. Լուծանէ զկինիք որ ասիցէ Թէ ի մեռսատանի ուրեք և այլն:
158. Որ ասիցէ Թէ ի քաղաքի ուրեք և այլն:
159. Որ վարի ծանօթութեամբ ի սեաչութեան ընդդէմ ապաշխարողին:
160. Ի դառնալ անեղկիւղած ապաշխարողի:
161. Օրէն էցէ խոստովանահօր զգուշանալ ի միաստոց:
162. Օրէն էցէ տալ զպիտակ խոստովանութեան:
163. Ի սպառնալ ապաշխարողի զմահ:
164. Օրէն էցէ հաւանական կարծեաք ի մասինս յայտնիկ վարել:

147. Կնիք խոստովանութեան ածէ պարտս լռելոյ զմեղս, և զամենայն իսկ զբանս՝ որ հայկն յայտնս, և ի խօսելն ընդ ապաշխարողին: Եւ այնպիսի խիստ

պարտս, զի չէ օրէն խոստովանահօր յայտնել ինչ երբեք յայնցանէ՝ մեռանել իսկ թէ հասանիցէ նմա:

148. Ընդհանրին իսկ, որոց պատահէ գիտել ինչ՛ի դաղանեաց խոստովանութեան, պարտականք են ինքեանց զլռաւորապէս և նախ՝ խոստովանահայրն, որ՛ի լուծանել զինեալ խորհրդոյն՝ երբակի մեզանչէ. թէևնամանելով զխորհուրդն, անիրաւելով առ ապաշխարողն, և բամբասանօք՝ եթէ մեղքն չկոչեն հրապարակագոյժ: Եթէ երբեք հարցանիցի խոստովանահայր զմեզաց լուեալոց, օրէն է նմա երդմամբ իսկ հաստատել՝ թէ չիցէ իւր լուեալ այնպիսի ինչ. զի անհաղորդելի այլոց լիցի նա անդ զամենայն, որպէս ամենայն աստուածաբանք ուսուցանեն, և առաքն Պաւղինոսին ասէ. "Օրէն է նմա երդնուլ չգիտելոյ զոր աստուածաբարն գիտէ": Եւ յաւելուն Ռուկոյ, Սասդուէզ, Սալմանտիկեանք, Պայման, Պաքուա և այլք, զի եթէ հարցանիցի ևս խոստովանահայրն պատասխանել որպէս Պատուծոյ պաշտօնեայ և ոչ որպէս մարդ, և կամ պատասխանել առանց երկդիմի բանից, զնոյն երդումն օրէն է նմա երդնուլ. զի գնէ իսկ՛ի բաց զամենայն երկդիմութիւն՝ զոր կարէ, այլ զոր ոչն կարէ գնել՛ի բաց՝ չհամարի նմա յերկդիմութիւն, և ոչ հարցողին օրէն է պահանջել՛ի նմանէ՝ զոր առանց մեզաց չկարէ նա առնել: Իսկ եթէ հարցանիցի խոստովանահայրն եթէ տուեալ իցէ ապաշխարողին արձակումն թէ ոչ, պարտի պատասխանել. Օ պաշտօն իմ կատարեցի: Եւ քանզի մարթի է զի և այս երբեմն իցէ կասկածելի, և ձախողակի տացէ՝ իմաստ, պարտ է մանաւանդ պատասխանել՝ զի անպատճառ է հարցուածն: Իսկ եթէ ապաստաւոր ժամարարին հարցանիցէ ցխոստովանահայրն վասն հաղորդելոց ապաշխարողին, պարտի պատասխանել. Ոչ գիտեմ թէ կամիցի՞ հաղորդիլ, զնա ինքն հարց:

Արկղորդ՝ պարտական է ինքեան եպիսկոպոսն կամ մեծաւոր, յորմէ խոստովանահայրն խնդրէ հրամանն արձակելոյ զվերապահեալս. զի և այն իսկ առեալն առնէ զխոստովանութիւն: Արկղորդ՝ և թարգմանն: Ողորդ՝ որ լսելոյ ինչ մեզս՛ի խոստովանել ուրուք, ևս և ըստ գիպաց. և կամ՛ի նաւաբեկութեան և՛ի պատերազմի՛ի բարձրաձայն խոստովանութենէ ուրուք. այլ ոչ՝ եթէ ապաշխարողն հրապարակաւ զմեզս իւր առ խոնարհու-

թեան խոստովանեալն: Հինգերորդ՝ ամենեքեան խակ, որք ի սեղանակապուտ լուծմանէ կինքոյ զմեզս ինչ ուրուք դիտացեալ իցեն: Վեցերորդ՝ եթէ աշխարհիկ ոք զքահանայութիւն կեղծաւորեալ, և զխոստովանութիւն ուրուք ընկալեալ իցէ: Յօթներորդ՝ եթէ ոք զմեզս տգիտի ուրուք ըստ աղաչանաց նորին գրեալ իցէ:

Յաւելուն ոմանք զի և ապաշխարողն պարտական իցէ ըստ նմին կինքոյ չյայտնել ուժեք զլուեալն ի խոստովանահօրէն. այլ չէ այս ընդունելի աստուածաբանից, զի ի նպաստ ապաշխարողաց և եթէ սահմանեալ է կինքն խորհրդոյն: Այլ ամենեքին միաբանին, զի պարտական է ապաշխարողն ըստ բնական գաղտնեաց՝ մի՛ ուժեք յայտնել զբանս խոստովանահօր, յորոց կարէ հասանել նմա վնաս, և դժուարին յոյժ է թէ ոչ հասանիցէ. մանաւանդ զի պարտ է խոստովանահօր բազում ինչ ըստ պարտուց պաշտամանն ասել ի խոստովանութեան, որոց յայտնութիւն աւելի ինչ է քան զբնական գաղտնեաց, և չկարէ խակ նա պաշտպանել անձին առ զգուշանալոյ խորհրդական կինքոյն:

149. Պարտականն իցէ խորհրդական կինքոյ վարդապետն, ընդ որում հրամանաւ ապաշխարողին՝ խորհրդակից ոք ի խոստովանահարց: — Վասնզրուիալ, Ասգուդեզ, Ալամպուրինի, Տիանա և այլք չհամարին զնա պարտական. իբր զի յայնժամ ծանօթութիւնն այն հրամանաւ Ա՛ի դիմաց ապաշխարողին հասանէ առ նա. և որպէս չգտաներ պարտական՝ ի լսել զայն յապաշխարողէն, այսպէս և ոչ՝ ի լսելն զայն՝ ի ձեռն խոստովանահօր՝ գտանի պարտական: Այլ հանրագոյն և հաւանականագոյն կարծիք զհակառակն հաստատեն, ըստ բացայայտ վարդապետութեան սուրբ Գրոյն. զի սահմանադրութիւն խակ խորհրդոյն պահանջէ զայս պարտս յամենայն ուժեք, առ որ հասանէ ծանօթութիւն մեղաց ինչ՝ ի խոստովանութենէ. ապա թէ ոչ, աւելի լինի խոստովանութիւն: Այլ ոչ ապաշխարողն՝ ի տալ առ հարկի հրաման խորհրդակցելոյ ընդ ուժեք զմեղաց ինչ իւրոց, հաւանի ընդ յայտնութիւն նորին առ այլս: Այլ մինչ չև խոստովանահօրն արձակեալ զապաշխարողն, օրէն է վարդապետին խօսել զայնմանէ համարձակ ընդ նմա:

150. Պարտական իւրէ ինքոյ վարդապետան ընդ որում ինքնին իսկ ապաշխարողն խորհրդակցի զմեզայ ինչ իւրոյ՝ զոր խոստովանելոյ է այնմ։ — Ակնք յաստուածաբանից պարտական գնա համարին եւ գնա. բայց այլք համանականագոյնս զհակառակն հաստատեն։ Օ՛ի ինքք խորհրդական՝ ի խորհրդական խոստովանութենէ եւեթ յառաջ գայ, որպէս ուսուցանեն Վասդուէզ, Սուարէզ, Ռոնչինա, Վասկուէզ, եւ ինքն իսկ տուրբ Վազունացին. վասն որոյ խորհրդականն թէպէտ եւ պարտական է ինքոյ բնական գաղտնեաց, այլ ոչ խորհրդականին։ Օ՛ի երկիւղ յայտնութեան խորհրդակցութեանն ոչ զխոստովանութիւնն առնէ ատելի, այլ զխորհրդակցութիւն՝ որ չէ կարեւոր առ խոստովանութիւն։ Նմին ապաշխարողն ընդ նմին ինքեան խոստովանահօրն յառաջ քան զխոստովանութիւն խորհրդակցեցի՝ առ՝ի խոստովանել ապա գնոյն, ապաքէն յայնժամ խոստովանահայրն գտանի պարտական ինքոյ. զի իբրեւ սկիզբն եւ մանն խոստովանութեանն համարի խորհրդակցութիւնն այն։

151. Պարտական իւրէ ինքոյ որ ընթեռնուցու զմեզս գրեալս յապաշխարողէ առ՝ի խոստովանութիւն։ — Ամենք յաստուածաբանից պարտական գնա համարին, այլ հանրագոյն եւ հաւանականագոյն կարծիք ոչ ընդունին զայն. զի ինքն ոչ՝ի պատրաստութենէ խոստովանութեան, այլ՝ի խոստովանութենէ անտի յառաջ գայ. եւ զի դարձեալ չէ ինչ կարեւոր գրուածն այն՝ի խոստովանութիւն, երկիւղ յայտնութեան գրուածոյն ոչ ընդունէն զայն. զի ինքն ոչ՝ի պատրաստութենէ խոստովանութեան, այլ՝ի խոստովանութենէ անտի յառաջ գայ. եւ զի դարձեալ չէ ինչ կարեւոր գրուածն այն՝ի խոստովանութիւն, երկիւղ յայտնութեան գրուածոյն ոչ ընդ խոստովանութիւնն առնէ ատելի, այլ զգրութիւնն՝ որպէս զայտնութենէ խորհրդակցութեանն առաջաբ։ Նաւար Լուկա, Սիլուեր, Հոլզման եւ այլք՝ի քաջ առնուն զգրուածս համերոց, որ չկարեն այլազգ խոստովանել. եւ դարձեալ զնամականի գրեալ առ մեծաւոր վասն խնդրելոյ հրամանն արձակման՝ի վերատպհելոյ. եւ դարձեալ եթէ ապաշխարողին զգրուածն զայն տուեալ իցէ խոստովանահօր իւրում՝ի խոստովանութեան, եւ կամ՝ի խոստովանարանի անդ իցէ մնացեալ. զի եւ յայնժամ համարի այն՝ի խոստովանութիւն։ Ալ որպէս ազգ առնեն Լայման, Վասկուէզ եւ Սիլուեր, միշտ իսկ ծանր մեղք են ընթեռնուլ՝ եւ եւս առաւել յայտնել

զայսպիսի գրուածս. բայց եթէ երկիւղածի ուրուք կամ գրուած, և վիտասցէ զոք ստուգիւ՝ զի հաղիւ՝ ի նմանէ ընդլինչ մեղք գտանիցին: Այսու օրոյ՝ ի յեռին հարկաւորութեան և՛ եթ, որպէս առ՝ ի փրկել զքաղաք կամ զկեանս անմեղի, օրէն ե յայտնել լինչ յայնպիսեաց գրուածոց:

152. Անկանին ընդ կնքով նախ՝ ամենայն մեղք խոստովանեալք յապաշխարողէն, և ա և ներելիք փոշեաւեսակք. զի ըստ վարդապետութեան աստուածաբանից առ հասարակ՝ չիք՝ ի մասինս յայսմիկ դուշնաքեայլինչ, և այս թէպէտ և ապաշխարողն անզէղջ և առանց արձակման մեկնեսցի՝ ի քաց: Արկղորդ՝ մեղք մեղսակցին յայտնեալք յապաշխարողէն, և ա և առանց հարկի: Այսացաք՝ ի վեր անդր (42), զի ոչ երբէք օրէն ե խոստովանահօր հարցանել ապաշխարողի զանուն մեղսակցին: Այեք յաստուածաբանից չներեն, և ոչ հրամայեն և ապաշխարողին, խրատել զմեղսակից նորա. այլ սուրբն Նատնինոս, Գերմոն, Տրիանոյ, Գաւարիոյ, Մաւարկէ, Լուկոյ, Յոնքալեա, Լաքրուա և այլք ըստ Հնմարիտ վարդապետութեան ներեն զայն. զի կնիք խոստովանութեան վասն այն ևթ ե սահմանեալ, զի ապաշխարողք աներկիւղ և համարձակ մատիցեն՝ ի խոստովանութիւն: Այս չէ մարթ ասել՝ թէ ատելի լինի այսուիկ խոստովանութիւն. զի այն ևթ ատելութիւն խոստովանութեան ե զգուշալի՝ որ զապաշխարողս ընկերկէ՝ ի խոստովանութենէ, և ոչ այն՝ որ տայ առիթ ապաշրջաց բաղձալ զի մեղսակիցք իւրեանց մի խոստովանեսցին: Այլ ոչ ե պարտ խոստովանահօր յաձախել՝ ի խնդիր այսպիսի հրամանաց, և մի թ ախանձել. զի եթէ չիցեն յօժարակամք, և ոչ օրէն ե նմա վարել նոքօք. և՝ ի կարևոր դէպս իսկ լաւագոյն ե յորդորել զապաշխարողն զի արտաքոյ խոստովանութեան խօսեսցի ընդ իւր զայնմանէ:

153. Արկղորդ՝ անկանին ընդ կնքով պատճառք խոստովանելոյ մեղացն, որպէս ևթէ խոստովանիցի ոք անարգեալ զհայր իւր վասն թշնամանելոյ նորա զինքն: Այայց Սփոբեր և Վատմոնդուինի հաւանականաբար հաստատեն, զի ևթէ խոստովանեսցի ոք ախորժեալ ընդ սպանութիւն լինչ եղեալ՝ ի քաղաքին, սպանութիւնն այն

չանկանի ընդ կնքով. զի ոչ համարի ընդ կնքով արկա-
նել ապաշխարողն զհրապարակապոյժ եղեռն: Այլ
միաբանին ամենայն բարոյականք, զի այն ամենայն՝ որ
չածէ վտանգ յայտնութեան իւրիք ուղղակի կամ անուղ-
ղակի կամ տհաճութիւն ապաշխարողին՝ ոչ անկանի
ընդ կնքով: Յորրորդ՝ ապաշխարանքն, եթէ իցէ ծանր
ինչ և ոչ՝ ի դուշնաթէից՝ որ սովորաբար վասն ներելի մե-
ղաց սահմանին: Հինգերորդ՝ ամենայն բանք յարակից
բացատրութեան մեղաց, և սա և որ ինչ յետ արձակմանն
յաւելեալք. որպէս եթէ ոք խոստովանեսցի պանծա-
ցեալ իբրև զիտուն՝ տգէտ գոլով, տգիտութիւն նո-
րա անկանի ընդ կնքով: Նրկբայելի և սա իրք՝ թէ ար-
դեօք ՚ի բացատրութիւն մեղացն իցեն ասացեալ թէ
ոչ, անկանին ընդ կնքով. բայց միայն ազատ ՚ի կնքոյ
են, որ ինչ ոչ ակնարկեն ՚ի խոստովանութիւն մեղացն
կամ ՚ի բացատրութիւն նոցին: Վեցերորդ՝ յայտնու-
թիւնք և աստուածայինք և առաքինութիւնք, եթէ
վասն թերութեանց ինչ ՚ի նոսա գործեցելոց ասացեալք
իցեն, այլ ոչ առ հնազանդութեան կամ այլ ինչ պատ-
ճառաց պատմեալքն. որպէս զանազանեն Լուկիոյ, Ան-
քալեա, Աքրուա, Ացցոթթա և Լուա: Հօթնե-
րորդ՝ խղճահարութիւն ապաշխարողին, կամ խղճա-
հարական բանք ՚ի բացատրութիւն խղճի մտաց ասա-
ցեալք, զի և այսոքիկ դէպ անուղղակի հային ՚ի խոս-
տովանութիւն, և բազումք դժկամակին կոչել խղճա-
հար, մանաւանդ գիտնաւորք. քանզի խղճահարութիւն
թերութիւն լինի և դէպ բնական, ցուցանելով զտար-
տամ և զվիրթ միտս. և չէ օրէն զայսպիսի բնական
թերութիւնս ծանուցեալս ՚ի խոստովանութեան յայտ-
նել, որպէս արդ իսկ ասելոց եմք: Այլ այլ ինչ է ա-
սել զումեքէ խղճահար, առ ՚ի նշանակել զերկիւղա-
ծութիւն նորա՝ որպէս սովորութիւն է ասել երբեմն
գաշխարհականաց:

154. Վեցերորդ՝ բնական թերութիւնք ապաշխա-
րողին, որպէս խլութիւն, թլատութիւն, աղքատու-
թիւն, տգիտութիւն և այլն, ծանուցեալք ՚ի խոստո-
վանութեան, և ընդ մեզս կամ ՚ի բացատրութիւն մե-
ղաց առանց իսկ հարկի յայտնեալք յապաշխարողին:
Իսկ որ առանց ինչ կցորդութեան ընդ մեզս ինքնին

գան՝ ի յայտ, ազատ՝ ի կնքոյ համարին զայնոսիկ կէսք յաստուածաբանից. բայց Ագաթոփալ, Ագոնինքիոյ, Հուրթեր, Միտրեր, Ղամալուրնի, Ագոնչինա, Ուխնցի և այլք ոչ ընդունին զայս, զի որ ինչ՝ ի պատճառս խոստովանութեան մերոց գան՝ ի ծանօթութիւն, խօսել զայնցանէ առեալ առնէ միշտ զխոստովանութիւն։ Եւ գարձեալ ազատ՝ ի կնքոյ համարին կէսք յաստուածաբանից՝ որ ինչ ապաշխարողն յայտ առնէ որպէս ծանօթ ինչ ամենեցուն. այլ և զայս պարտ է իմանալ զթերութեանց, որ ոչ ածէն ամօթ ինչ կամ ստգտանս ապաշխարողին. որպէս կուրութիւն, խլութիւն, մոլորողութիւն և այլն։ Եւ ոչ օրէնն է ասել զմեզս գործեցեալս յապաշխարողէն՝ ի խոստովանութեան անդ, որպէս զթշնամանս ընդդէմ խոստովանահօրն կամ այլ ինչ յայսպիսեաց. վասն զի այսոքիկ անուղղակի յայտ առնեն յանդիմանութիւն ինչ վասն խոստովանելոյ մերազան կրեալ ապաշխարողին և կամ ոչ ընկալեալ արձակումն։ Եթէ ոք յապաշխարողաց կարի երկայն իցէ և ձանձրալի՝ ի խոստովանութեան, Ոնքաւեա չհամարի խոստովանահօր լուծանել զկնիք՝ եթէ խոյս տացէ յընդունելոյ զխոստովանութիւն նորա։ Նմա եթէ երկիւղածութիւն և նորա ծանօթ իցէ, և չգուցէ վըտանգ կասկածելոյ այլոց՝ զի վասն այլ ինչ պատճառի խաւսէ՝ ի նմանէ խոստովանահայրն։

155. Ո՞ինչ պարտ իցէ առնել խոստովանահօր, եթէ ոք մեզս ինչ ծանուսնս անուրոյ խոստովանեսցի, և խոստովանահայրն՝ ի հարցանել ինչ զայնցանէ՝ ծանիցէ զխըղութիւն նորա յայլ ընդ այլոց պատասխանւոյն, և չըկարիցէ բարձրացուցանել զբարբառ վասն որոց անդն կայցեն։ — Եթէ՝ ի սկզբան խոստովանութեան իրաւունք լինի խղութեան ապաշխարողին, պարտի աղդ առնել նմա զի՝ ի դէպ ժամանակի և՝ ի պատեհ տեղւոջ գայցէ խոստովանել ուր չիցեն լսողք, և ծանուցանել տեառնէ զպատճառ դառնալոյ նորա՝ ի քաց։ Իսկ եթէ՝ ի մէջ խոստովանութեան ծանիցէ, չէ օրէն նմա յայնժամ բարձրաձայն աղդ առնել, զի կասկածեն լսողք զծանր ինչ խոստովանելոյ նորա։ Ապա որոյ առաքեն Աղիոնոս խրատ ընդունել յայնժամ՝ ըստ կարի զխոստովանութիւն նորա, և առ նմա արձակումն՝ եթէ իցէ

ընդունակ արձակման. իսկ եթէ երկբայելի՝ արձակել զնա պայմանաւ, թէթև ինչ սահմանեալ նմա ապաշխարանս, զի մի լսօղք դուշակել զծանրութիւն մեղացն նորա կարասցեն:

156. Ազատ է խոստովանահայրն՝ի կնքոյ նախ՝ եթէ խոստովանութիւնն չիցէ լեալ խորհրդական, այլ կեղծեալ առ՝ի գողանալ ինչ զխոստովանահօրն կամ առ՝ի խաբել կամ առ՝ի գաւել զնա: Երկրորդ՝ եթէ ոք յասել ինչ գաղտնի յաւելցէ. Ընդ կնքով խոստովանութեան ծանուցանեմ քեզ զայս, կամ Աոսպովանանք ինձ ոչ վնաս. զի կնիք խոստովանութեան՝ի խորհրդական եւեթ խոստովանութենէ յառաջ գայ, այսինքն յայնմանէ՝ զոր առնէ ոք վասն ընդունելոյ արձակումն: Երրորդ՝ եթէ խոստովանահայրն ասիցէ եւեթ զներելեաց լեալ զխոստովանութիւնն. այլ լուծանէ զկնիք, եթէ աւելի ինչ քան զայս ասիցէ՝ որպէս թէ այլ եւ այլ մեղս նեբելիս խոստովանեալ ապաշխարողին, և կամ թէ զնեբելի մեղս ինչ նորա թէպէտ և փոշետեսակ ամենաթեթեւս յիշատակիցէ. զի չիք՝ի մասինս յայսմիկ դուշնաբեալ ինչ: Չորրորդ՝ եթէ գովէ զխոհեմ մտաց ապաշխարողին. այլ զդուշալի է չտալ կասկած ինչ զայլոց, որք՝ի նմին աւուր խոստովանեալ իցեն նմա, և կամ ընդհանրապէս իսկ զայլոց խոստովանողաց իւրոց: Հինգերորդ՝ եթէ ասիցէ զխոստովանութիւն ուրուք ընկալեալ. բայց միայն եթէ չիցէ արդելեալ ապաշխարողին չյայտնել ումեք զայն, կամ չիցէ նորա գաղտ եւ կեալ՝ի խոստովանութիւն, որպէս յաւելուն Աւաւրայ, Պուսեմպայ, Աիտրեր, Հոլման, և այլք: Վեցերորդ՝ եթէ ասիցէ լուեալ այսպիսի ինչ մեղս՝ի խոստովանութեան, յորմէ չիցէ մարթ բարոյապէս դուշակել զապաշխարողն. այլ և այս կարի զդուշալի է, մանաւանդ՝ի սակաւամարդ տեղիս. զի յաճախ պատահէ դուշակել լսողաց և կամ դէթ կասկածել՝ի հանգամանաց զումմէ իցէ բանն: Եօթներորդ՝ եթէ արտաքոյ եւս խոստովանութեան գիտիցէ զկրսն, եթէ չյաւելուցու հանգամանս ինչ յայն լուեալս՝ի խոստովանութեան: Եւ այս եւս զգուշալի է, դէթ վասն վտանգի գայթակղութեան լսողաց՝ որ կարծիցեն զգաղտնիս խոստովանութեան յայտնել նմա: Վեցերորդ՝ եթէ յայտնեալ

ցէ ինչ հրամանաւ ապաշխարողին. զոր աստուածաբանք առ հասարակ ընդունին, բայց՝ ի սակաւուց ոմանց՝ որք համարին չկարել ապաշխարողն տալ զայն հրաման։ Այլ պատասխանեն աստուածաբանք, զի որպէս՝ ի նըւազ պատառ ապաշխարողաց ևեթ սահմանեալ է կինքն այն՝ նոյնպէս և իշխանութիւն է նոցա տնօրինել զայն։ Ապա կայ առ՝ ի կարող լինելոյ խոստովանահօր հրամանաւն այնուիկ վարել, պարտ է գոլ հրամանին նախ՝ քառասայտ, երկրորդ՝ յօժարակամ, վասն որոյ չկարէ վարել նովաւ՝ եթէ երբեք վասն ապառնալեաց և կամ՝ վասն ակնածութեան տուեալ լինի, և կամ զառաջինն չկամեցեալ և ապա վասն թախանձանացն հաւանեալ լինի տալ։ վասն որոյ լաւագոյն է միշտ յորդորել զապաշխարողն, զի արտաքոյ խոստովանութեան խօսելոյ զայնմանէ։ Երկրորդ՝ եթէ չլինի ապաշխարողին նահանջեալ զհրամանն, զի իրաւունք են նորա նահանջելոյ զայն. վասն որոյ և ոչ զօրէ հրամանն այն՝ ի դէպս, ուր եթէ եր ապաշխարողն՝ նահանջեր զհրամանն. զի վարել նովաւ յայնպիսի դէպս՝ առեալ առնէ զխոստովանութիւն։

Գիտելի է ասա զի յերկբայս՝ թէ արդեօք հրամանաւ թէ անհրամանն խօսելոյ խոստովանահայրն, պարտ է նմին ինքեան ընծայել հաւատս քան ապաշխարողին և ժառանգաւոր նորա. որպէս յօրժամ խոստովանահայրն յայտնիցէ զպարտս ինչ հատուցմանն ապաշխարողին։ Զդարձեալ՝ է ուրեք զի գործով տայ ապաշխարողն հրամանն խոստովանահօրն, յօրժամ սկսանի խօսել զնորայ խոստովանելոյ, որպէս ուսուցանեն աստուածաբանք. բայց յաւելու Ղուկոյ՝ զի հրամանն այն համարի բարեգործութեան, վասն որոյ ոչ բաւական կցորդ խոստովանութեան, վասն որոյ ոչ բաւական կինքն, և ոչ յետ այնուիկ օրէն է խոստովանահօր խօսել զայնմանէ։ Ընդացաք՝ ի վեր անդր (124) զի չէ երբեք օրէն խոստովանահօր, առանց խնդրելոյ հրամանն յապաշխարողէն, ազդ առնել նմա զարտաքոյ խոստովանութեան զխոսեալսն ինչ գործեցեալս՝ ի խոստովանութեան։ Ընդայց՝ ի խոստովանութեան օրէն է առնել նմա զամենայն սկսեալսն գործեցեալս և զմեզս խոստովանեալս ևս և յայլ խոստովանութիւնս, որպէս հաստատեն Ղուկոյ, Ամբռոսիոսեանք, Կոնչինա, Ոսոքաբելեա, Ալփոնս և այլք. բայց՝ ի Տիանայ և յայլոց

ումանց· վասն զի ստէպ անկ է խոստովանահօր ըստ հալ-
կի պաշտամանն իւրոյ յիշատակել զանցեալս յօգուտ ա-
պաշխարողին· վասն որոյ յատենի անդ իրաւունք են
նմա, ոչ միայն ասելոյ որ ինչ օգտակար է ապաշխարո-
ղին, այլ և գիտելոյ զամենայն ինչ՝ որոց տեղեկու-
թեամբ կարող է լաւ ևս իրատել զնա: Եւ զայսոսիկ
օրէն է խոստովանահօր առնել ևս և զհետ արձակման:

157· Ցեսաք յայսվայր զի զոր ինչ ոք՝ ի խոստովանու-
թենէ գիտացեալ յայտնէ արտաքոյ ուղղակի կամ ան-
ուղղակի, և կամ որով իւիք ոք տհաճէ զապաշխարողն
կամ ատելի առնէ զխոստովանութիւն, լուծանէ զինիք:
Նոյնպէս արդ և յոր ինչ այլ դէպս խոստովանահայր
լուծանէ զինիք: Այլ՝ եթէ ասիցէ թէ լուեալ է՝ ի
խոստովանութեան զի՝ ի մենաստանի ուրեք ծանր ինչ
մեղք յումեմնէ՝ ի միանձանց անտի գործեալ է, կամ
թէ անդ մեղք ծանուցանք գործին· զի թէպէտ և չանուա-
նիցէ զոք, սակայն միանձանց ամենեցուն այնր մենաս-
տանի հասուցանէ ձեռս: Այս այսպէս ուսուցանեն
աստուածաբանք, բայց՝ ի սակաւուց ումանց: Ոմանք
հաստատէ Ցիանա և զխոստովանահօրէ՝ որ ասիցէ
զմեզս ինչ ուրուք՝ ի միանձանց այսր կամ այնր կարգի·
բայց Հայրն Վոնչինա չընդունի զայն, և հաւանակա-
նաբար, զի յամենայն կարգս կրօնաւորաց գտանին չարք·
եթէ միայն ոչ զխստակրօն ինչ կարդէ իցեն բանքն:

158· Լուծանէ զինիք որ ասիցէ լուեալ՝ ի քաղաքի
ուրեք՝ ի խոստովանութեան զայս ինչ՝ կամ զայն անօ-
րէնութիւնս որ գործին: — Հանրագոյն կարծիք հաս-
տատեն լուծանել· քանզի յայտնութիւնն այն չարա-
համբաւէ զբնակիչս այնր քաղաքի, և նուիրին իսկ ատելի
առնէ զխոստովանութիւն: Իսկ եթէ ընդարձակ իցէ
քաղաքն, և անօրէնութիւնքն՝ որ անդ գործին՝ իցեն
յայտնի, ոչ միայն չլուծանէ խոստովանահայրն զինիք՝
այլ և քարոզեցոյ օրէն է խօսել ընդդէմ այնոցիկ՝ ի բե-
մէ ընդհանրապէս, առանց հանգամանս ինչ մասնաւո-
րաբար յաւելոյ՝ որպէս զի մի ոք կասկածիցէ՝ ի խոս-
տովանութենէ գիտացեալ նոցա զայն: Այս որոյ որ ա-
սիցէ՝ թէ՝ ի քաղաքի ուրեք յաձախեն հայհոյութիւնք,
պարտ է զի իցեն անդ դէմ երեք հազար քննակիչք· իսկ
որ ասիցէ՝ թէ՝ ի քաղաքի ուրեք մեծամեծ անօրէնու-

թիւնք գործին, առանց անուանելոյ զանօրէնութիւնն, ոչ լուծանէ զկնիքն, թէ և չիցեն անդ և ոչ երեք հաղար քնակիչք: Այլ բազմամարդ պարտ է գոլ քաղաքի, ուր մարթի իցէ առանց լուծանելոյ զկնիքն՝ անուանել զանօրէնութիւնս:

159. Արկղոյդ՝ լուծանէ զկնիքն որ վարի 'ի գործս իւր ըստ գիտութեան, զոր ընկալեալ իցէ 'ի խոստովանութեան: Ամպողջնոյ վկայութեամբ վարդապետաց ոմանց օրէն համարի վանահօր հեռացուցանել 'ի վանացն կամ 'ի պաշտամանէ զոք 'ի միանձանց ըստ գիտութեանն՝ զոր ընկալեալ իցէ 'ի խոստովանութենէ, եթէ չիցէ վտանգ յայտնութեան մեղաց: Այլ Կղեմէս Ը. յամին 1594 զհակառակն սահմանեաց. և թէպէտ վանն կրօնաւորական կարգաց է կոնդակն, այլ զօրէ և վանս ամենեցուն այնու՝ զի առելի առնէ զխոստովանութիւն: Եւ Ինոսենտիոս ԺԱ. յամին 1682. դատապարտելով զհակառակն վարդապետութիւն՝ արգելու չվարել այնու գիտութեամբ, թէպէտ և մեծագոյն չարիք անտի զհետ գայցեն: Ա՝ան որոյ չէ օրէն ըստ այնմ գիտութեան ընկենուլ զանարժանն 'ի պաշտամանէ, քառնալ զբանալիս 'ի սպասաւորէ, ոչ և ընտանեբար վարել ընդ նմա, վահել զդրօշնա, և հանդոյն սոցին ըզգուշութիւնս 'ի կիր արկանել: Ա՝ան որոյ և ոչ օրէն է ըստ այնմ գիտութեան չհաղորդել զոք առանձին խոկ ուրեք. և ոչ խրատել զսպասաւորողն արտաքոյ խոստովանութեան, որպէս ասացաք 'ի Թիւ 124: Ա՝է սակաւք յաստուածաբանից օրէն համարին խոստովանահօր ըստ այնմ գիտութեան առաւելագոյն զգուշութիւն 'ի վարարկանել, ուր չիցէ վտանգ յայտնութեան մեղաց սպասաւորողին. որպէս և սուրբ Ա՝գուստինոսին օրէն համարի խոստովանահօր՝ ազդ առնել մեծաւորի, կէ կգոշոփոյն հակեցոյց: Այլ Հայրն Վրոնչինա ոչ ընդունելի համարի զայս. զի միշտ վտանգ է յայտնութեան մեղաց և առելի առնելոյ զխոստովանութիւն: Սակ առանց այսր վտանգի ամենեցուն իսկ ընդունելի է, և և Հօրն Վրոնչինայ, վարել գիտութեամբ՝ զոր ընկալեալ ուրուք իցէ 'ի խոստովանութեան: Ա՝ան որոյ օրէն է խոստովանահօր ըստ այնմ գիտութեան ուղղել զվարս իւր, աղօթել վասն սպասաւորողին, մարդասիրագոյնս վարել

ընդ նմա, հետազօտել՝ի գիրս զմեղս ինչ նորա, զկարծմունս և զխրատս ըստ այնմ տնօրինել, զգուշանալ՝ի վտանգաց և այլն։ Ըստ այսմ Ուղղոյ, Ուխտաց և Ծամ պուրինի օրէն համարին և պարտ իսկ խոստովանահօր չպատարագել յեկեղեցւոջ, զոր՝ի խոստովանութենէ գիտից թէ պղծեալ է։

Գիտելի է զի՝ի խնդրել ուրուք պաշտօն ինչ կամ ժառանգութիւն եկեղեցական, եթէ մեծաւորն գիտից արտաքոյ խոստովանութեան զանարժանութիւն նորա, ոչ միայն կարէ՝ այլ և պարտի իսկ մերժել զխնդիրն նորա, թէպէտ և՝ի խոստովանութենէ ևս գիտից ըզպակասութիւնս նորա, որպէս ուսուցանեն Արապէս, Ալթալէ, Վեթրոքոր և սուրբ Աղուինացին։ Եւ ոչ ինչ զօրէ յայնժամ կասկածել ապաշխարողին թէ վասն խոստովանութեանն լինի խնդիրն իւր անընդունելի. զի թէպէտ և պարտ է զգուշանալ՝ի տալոյ պատճառս կասկածանաց, այլ ոչ անիրաւ կասկածանաց՝ զոր սովոր են առնել չարք։

160. Հայրն Ոնոքալեա ոչ օրէն համարի խոստովանահօր խուսել յընդունելութենէ խոստովանութեան ապաշխարողի առանց այլ ինչ պատճառանաց, գիտելով եթէ՝ի խոստովանութենէ զթեթևութիւն խղճմտանաց նորա. զի այսուհիկ տեղի կասկածանաց տայ այլոց զնմանէ, և նմա իսկ ծանրաբեռնէ զխոստովանութիւն։

161. Որքո՞ն իցէ խոստովանահօր պատճառանօք ինչ զգուշանալ՝ի միտս՝ զոր գիտից՝ի խոստովանութենէ, որպէս եթէ դաւ պատրաստեալ իցէ կենաց նորա կամ ընչից։ — Եթէ չիցէ ինչ վտանգ յայտնութեան մեղաց կամ ատելի առնելոյ զխոստովանութիւն, օրէն է աներկբայապէս։ Այլ եթէ՝ի զգուշութենէ նորա գուշակեսցեն դաւաձնիք զի՝ի խոստովանութենէ դաւակիցի իւրեանց գիտացեալ է նորա զդաւն, օրէն է նմա և յայնժամ զգուշանալ։ — Ինչք յաստուածաբանից օրէն համարին, այլ և զբանս նորա ըստ հանրական վարդապետութեան պարտ է իմանալ. այսինքն զի ոչ երբէք օրէն է անուղղակի իսկ տալ ծանօթս զխոստովանութենէ մեղաց, այլ պարտ՝ի վերայ դնել ապաշխարողին յայտնելոյ զդաւն արտաքոյ խոստովանութեան։

162. Որ՞ն իցէ խոստովանահօր տալ ապաշխարողին պիտակ խոստովանութեան ըստ աղաչանաց նորա, և ե՞թէ չիցէ արձակեալ զնա։ — Հանրագոյն և հաւատնականագոյն կարծիք զանազանեն. եթէ պիտակն ըզխոստովանութենէ և եթէ ապաշխարողին վկայէ, օրէն է և պարտ իսկ տալ. զի՝ ի չտալն՝ յայտնին մեղք նորա, և չէ իսկ սուտ վկայել զխոստովանութենէ նորա։ Իսկ եթէ զարձակմանն, ապաշխարողին իցեն քանք, չէ օրէն խոստովանահօր տալ. զի սուտ ըստ ինքեան է չար, և ոչ երբեք օրինաւոր։ Այլ եթէ տպագրեալ իցեն պիտակք, և արձակումն և՛ ի նոսա եդեալ, (զոր ոչ է պարտ եպիսկոպոսի ներել), հաւանականաբար օրէն է՛ ի խնդրել ապաշխարողին՝ տալ նմա զայն. զի յայնժամ խոստովանահայրն ոչ ասէ և ոչ գրէ ինչ սուտ, այլ տայ զպիտակն զայն՝ զոր չէ մարթ չտալ առանց յայտնելոյ զմեզս ապաշխարողին։

163. Որ՞ն իցէ խոստովանահօր փախչել յերեսաց անզեղջ ապաշխարողի, որ սպառնալեօք մահու պահանջիցէ՛ ի նմանէ արձակումն։ — Ուրեք և Ո՛նպաւելեա օրէն հաւարիմն, զի սպառնալիքն այն ոչ է խոստովանութիւն և ոչ մեղք խոստովանեալ, այլ մեղք գործեալ՛ի խոստովանարանի։ Իսկ ունկնք օրէն հաւարիմն փոխանակ արձակման աղօթս ինչ՛ի վերայ նորա ասել, և կամ՛ի ձեռ արձակմանն յաւելուլ անձայն զբացատական ասելով՝ Եւ ոչ ածիցէ զնէս. զի ոչ է այս խաբել զապաշխարողն՝ որ գիտէ և պարտի գիտել զի արձակումն այն՝ չէ արձակումն, թէպէտ և անփոփոխ տուեալ իցէ։

164. Որ՞ն իցէ՛ ի խնդիրս խորհրդական կնքոյ հաւանական կարծեօք վարել։ — Կոպաթոյ, Տիանա, Լաքրուա և այլք օրէն հաւարիմն վարել նուաւա՛ ի նպաստ եթէ կնքոյն. իսկ Այլոն Ի՛նա անդ եթէ օրէն հաւարիմն, ուր բարեյաւելս ստոյգ իցէ կամ գէթ աւելնահաւանական (որով հակառակն նորին գտանի անհաւատնական), զի չիցէ վտանգ յայտնութեան մեղաց կամ ծանրաբեռնելոյ զապաշխարողն. զի և հաւանականութիւն ծանրաբեռնութեան ապաշխարողին ատելի առնէ զխոստովանութիւն։ Յոյժ զօրաւոր է այս պատճառ. զի որպէս ասացաք՛ի գլ. ա. 21. ոչ է օրէն հաւանական կարծեօք վնասել ստոյգ իրաւանց այլոց. և քանզի

ապաշխարողին ստոյգ իրաւունք են չճանրաբեռնելոյ ի խոստովանութենէ իւրմէ, ապա ուրեմն չէ օրէն խոստովանահօր վարել հաւանական կարծեօք՝ որում մարթի իցէ ճանրաբեռնել զապաշխարողն:

ՅՕԴՈՒԱԾ ԺԴ

ՅԱՂԱԳՍ ՀՐԱՄՈՒՐԱՆԱՑ Ի ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵՆՆ

165. կոնդակ Գրիգորի ԺԵ:
166. Հրապոյրք՝ի խոստովանութեան անդ:
167. Յառաջ քան զխոստովանութիւն:
168. Պատճառաւ խոստովանութեան:
169. Պատճառանօք խոստովանութեան:
170. Արտաքոյ խոստովանութեան:
171. Ե՞րբ պարտք իցեն յայտնութեան:
172. Ե՞րբ չիցեն:
173. Եթէ կրնն հրապուրէ զխոստովանահայրն:
174. Եթէ խոստովանահայրն չօշափէ զկինն հրապուրիչ:
175. Եթէ եկեալ իցէ յուղղութիւն:
176. Օրէ՞ն իցէ արձակել նախ քան զայայտնութիւն. եթէ պաթտ իցէ ապաշխարողին առնել զայն գրով. եթէ չկամիցի՝ի կարելն առնել զայն անձամբ:
177. Զբանադրանաց՝ յոր անկանի:
178. Եթէ աղգարարութիւն իցէ անօգուտ:
179. Այլոց ևս գիտողաց պարտք են յայտնելոյ զայն, թէ և չկարիցեն ցուցանել զայն, թէ և անյայտ մնացեալ իցէ այն:
180. Եթէ երկբայելի իցեն հրապոյրքն:
181. Որ գովէ զգեղեցկութիւն:
182. Երկբայելի բանք:
183. Յաղագս չկարելոյ հրապուրողաց պատարագել:

165. Ծնկեպատ և յոյժ զժուարագիպ է անկարգութիւնս՝ մանաւանդ թէ եղեռնս այս մեծ, և չէ մարթ կարծել քահանայի Աստուծոյ փոխանակ արձակելոյ զապաշխարողն՝ի կապից մեղաց՝ և ևս կաշկանդել զնա հրապուրանօք յեղեռն, այլ քանզի բարոյականին պարտք են ձառել մանրամասնաբար զբնաւից իսկ կարելի մեղաց, յաւելումք զառաջինիսկայքս:

Ըստ կոնդակին Գրիգորի ԺԵ. պարտ է խոստովանահայրն ծանուցանել ապաշխարողի զպարտս յայտնելոյ եպիսկոպոսին զսեղանակատարութիւն խոստովանահօր, որոյ հրապուրեալ իցէ զնա՝ի գործ անարժան: Կարևոր համարիմ ածել այսր զբանս կոնդակին. "Ամենայն քահանայ կամ աբեղայ՝ որ զո ոք, որով և իցէ

եղանակաւ, ՚ի խորհրդական խոստովանութեան կամ յառաջ կամ յետոյ անընդմիջաբար, պատճառաւ կամ պատճառանօք խոստովանութեան՝ ևս և չկատարելոյ, թէ ՚ի խոստովանարանի անդ առանց խոստովանութեան, և թէ յորում և իցէ տեղւոջ՝ ուր խոստովանութիւնք առնին՝ ժամադրեալ ՚ի լուր խոստովանութեան, կեղծաւորելով անդ ընդունել զխոստովանութիւն, փորձեալ իցէ հրապուրել կամ զրդռել ՚ի պղծութիւն ընդ իւր կամ ընդ այլս, կամ զոյցս անարժանս և անհամեստս, կամ բանակցութիւնս ընդ նմա արարեալ իցէ ,,։ Եւ ապա յաւելու. ,,Հրամայեմք ամենայն խոստովանահարց, զի ապաշխարողաց իւրեանց՝ որք ըստ ասացելոցս իցեն հրապուրեալ յայլոց՝ ազդ առցեն զպարտս յայտնելոյ զհրապուրողս և այլն, Թեմական եպիսկոպոսի,,։

166. Ա՝ան առաջնոյ բանի կոնդակին ՚ի խորհրդական խոստովանութեան, շատ է զի սկսեալ իցէ խոստովանութիւնն՝ թէ և չիցէ կատարեալ։ ՚Այն է և զոր հրապուրանաց ՚ի խոստովանութեան տուեալ ապաշխարողին, որպէս յայտ արար Ա՚ղէքսանդր Է, դատապարտելով զհակառակ վարդապետութիւնն։ ՚Այն է և ասել խոստովանահօր ցապաշխարողն ՚ի խոստովանութեան՝ ինձ ՚ի տան, կամ հարցանել անդ զբնակութիւն նորա և ապա գնալ առ նա ՚ի հրապուրել, եթէ ՚ի հանդամանաց և յեղանակէ հարցուածոյն իմասցի դիտաւորութիւն իւր, որպէս ուսուցանեն Ա՚նդրեաս և Պօրտոնէ։

167. Ո՚երկրորդ բան կոնդակին յառաջ կամ յետոյ անընդմիջաբար ՚ՀՀդիւ իմանալի է, այսինքն առանց ժամանակի ընդ միջ անցանելոյ ընդ խոստովանութիւնն և ընդ հրապոյրս, որպէս հաստատեն հաւանականաբար Ա՚նդրեաս, Պոսիոյ, Փասսերինի և Տէլպինէ։ ՚Եթէ ապաշխարողին կալով առ խոստովանարանի առ ՚ի խոստովանել՝ մերձեսցի ՚ի նա խոստովանահայրն կամաւորապէս ձեռամբ կամ ոտիւք, լինի աներկբայապէս համբաստանելի։ Իսկ եթէ ՚ի խնդրել ապաշխարողին խոստովանել՝ մերձեսցի ՚ի նա խոստովանահայրն, Թէպէտ և ըստ երկրորդի բանիս կոնդակին չիցէ ամբաստանելի՝ այլ է իսկ ըստ երրորդին պարտաւոր խոստովանութեան։

՚Այնպէս զասելն յեղոյ անընդմիջաբար պարտ է ի-

մանալ առանց ժամանակի կամ այլ ինչ գործոյ ընդ մէջ անցանելոյ · վասն որոյ եթէ ապաշխարողն մեկնեալ ի ց՝ ի խոստովանարանէ , և ապա խոստովանահօրն զնա հրապուրեալ , ոչ է ամբաստանելի : Իսկ եթէ ՚ի մեկնելն ասիցէ՝ ՚Ցնա ինձ վայրկ մի , և ապա ՚յետ ժամուց իսկ ՚ի վերայ անցանելոյ՝ եկեալ հրապուրեացէ զնա , ամբաստանելի է : Իայց եթէ այլ ինչ զրոյցս ՚ի սկզբան անդ առնիցէ , որ թէ և պատճառանք իցեն՝ այլ կարևոր Թուիցին , և ապա հրապուրեացէ , երկբայելի են պարտք ամբաստանելոյ զնա : Ի՚այլ ամբաստանելի է աներկբայապէս որ ՚ի մեկնել ապաշխարողին ասիցէ ցնա՝ ՚Ցնա ինձ այսօր ՚ի տան , և ապա առանց այլ ինչ պատճառանաց երթեալ հրապուրեացէ զնա : Օ՚նոյն է ասել՝ եթէ ՚ի մեկնել նորա երթիցէ ընդ նմա ՚ի՝ հրապուրել , կամ ՚ի հաւքուրել նորա զաջ խոստովանահօրն՝ սա չարամտութեամբ զձեռն նորա սեղմ ունիցի :

168 · Յերրորդումն բանի կոնդակին պապճաաա կամ պապճաանօ խոստովանուԼեան , պատճառաւ է խմանալ զստոյգ հրաւէր խոստովանահօր կամ վնդիր ապաշխարողի ՚ի խոստովանութիւն · իսկ պատճառանօք զկեղծ հրաւէր : Իստ առաջնոյն եթէ ՚ի խնդրել ապաշխարողին զխոստովանութիւն՝ շրջեացէ խոստովանահայրն զբանն ՚ի հրապոյրս , ամբաստանելի է՝ թէպէտ և չև և ՚ի խոստովանարան անդր երթեալ , և ոչ ապաշխարողին առ նմա ՚ի ծունր իջեալ : Օ՚նոյն հաստատեն Կոնչինա և Մացցոլթա , թէ և ապաշխարողն ոչ առօրսն՝ այլ առ վաղիւ խնդրեացէ խոստովանել · զի թէպէտ և յայնժամ ոչ անընդմէջ յաջորդէ հրապուրանացն խոստովանութիւն , այլ պատճառաւ խոստովանութեան են հրապոյրքն : Իսկ եթէ խոստովանահայրն լսելոյ զմեղս ապաշխարողին՝ երթայցէ ապա առ ՚ի հրապուրել զնա , կէսք աստուածաբանից չհամարին զնա ամբաստանելի , իբր զի ոչ զխոստովանութիւն առնու պատեհ ՚ի հրապոյրս , այլ զխոստովանեալ մեզս նորա : Իայց հաւանականագոյնս զհակառակն հաստատեն Կոնքալեա , Կոնչինա , Մացցոլթա և այլք · զի ՚ի խոստովանութենէ գիտելով զտկարութիւն ապաշխարողին՝ այնու պատճառաւ զնայ ՚ի հրապուրել զնա · մանաւանդ եթէ յետ խոստովանութեանն հարցանիցէ

զտուն նորա, և կամ թէ միայնակ իցէ՝ ի տան և այլն։ Օնոյն հաստատէ Վ՚ոնչինա, եթէ՝ ի խոստովանու-թենէ մեղաց ապաշխարողին գիտացեալ զտկարութիւն նորա՝ դրուլ հրապուրեսցէ զնա, և կամ՝ ի խնդրել նո-րա խոստովանել՝ խոստասցի ընդունել զխոստովանու-թիւն նորա, եթէ միայն զինջանիցի՝ ի կամն իւր։

169. Ըստ երկրորդին, այսինքն ըստ պատճառանաց խոստովանութեան, ամբաստանելի լինի որ հարցեալ նախ զապաշխարողն՝ թէ կամիցի՞ խոստովանել, և ապա հրապուրեսցէ զնա. որպէս հաստատեն Վ՚ոնչինա, Ալոնքալեա, Պորտոնէ և Ա՚ացցոթթա։ Այլ խնդրեսցէ՝ ի մեծաւորէ հրամանն գնալոյ՝ ի տուն ապաշխարողին պատ-ճառանօք խոստովանութեան՝ այլ ստուգիւ առ՝ ի հրա-պուրել զնա, Ալոնքալեա, Պորտոնէ, Ջանքրեատի և Ալամանիկեանք չհամարին զնա ամբաստանելի. զի ոչ ընդ ապաշխարողին վարի պատճառանօք, այլ ընդ մե-ծաւորին։ Այսպէս եթէ խոստովանահայրն հաւա-նեալ և եթէ՝ ի հրապոյրս ապաշխարողին՝ խրատ տացէ նմա զհնազանդութիւն կեղծաւորել, և կոչել զինքն պատ-ճառանօք խոստովանութեան. զոր թէ և կէսք յատ-ուածաբանից համարին ամբաստանելի, այլ հանրա-պոյն և հաւանականագոյն կարծիք ըզհակառակն հաս-տատեն։ Ո՛չ ի նմ պատճառանք ոչ վասն խոստովա-նութեան է, այլ առ՝ ի պատրել զընտանիս, և զան-արժան կամ իւրեանց կատարել։ Եթէ կինն պատ-ճառանօք խոստովանութեան հրապուրեսցէ զխոստո-վանահայրն, և նա թշուառաբար հաւանեսցի, չէ ամ-բաստանելի. իսկ եթէ ինքն զկինն հրապուրեսցէ, և նա ի և արտաքոյ խոստովանութեան, և յերկինչել նորա՝ ի տեսողաց՝ խրատեսցէ զնա զհնազանդութիւն կեղծաւո-րել՝ ի տան, և այնու պատճառանօք կոչել զինքն, լինի ամբաստանելի. զի յայնժամ զխոստովանութիւն առ-նու իբր օգնական առ՝ ի հաստատել զհրապոյրսն։ Օնոյն է ասել եթէ մայր աղջկանն կոչեցէ զխոստովա-նահայրն՝ ի խոստովանութիւն դստերն, և նա սովին պատճառանօք երթեալ հրապուրեսցէ զաղջիկն։ Այն-պէս եթէ կոչեցի արձակել զկինն անզգայեալ, և սովին պատճառանօք կամ պատճառաւ երթեալ յանարժան շջշափմունս անկղնտանայցէ։ Այսպէս և որ՝ ի խոստո-

վանարանի կամ՝ի ժամադրեալ տեղւոջ՝ի լուր խոստովանութեան, ընդունել կեղծելով զխոստովանութիւն ինոջ, հրապուրեսցէ զնա։

170. Եթէ չորրորդ բանի կոնդակին՝ կեղծաւորելով անդր ընդունել զխոստովանողն, փորձեալ եղէ հրապուրել նա գրգռել զդա՝ի գործ պղծութեան ընդ ինր կամ ընդ այլ, կամ խօսս անարժանս և անհամբոյս, կամ բանակցութեանս ընդ նմա արարեալ եղէ. Աքսորեալ և Աւնքալեա պարտ համարին իմանալ երկուստեք զկեղծաւորութիւն, այսինքն խոստովանահօր կեղծելով լսել զխոստովանութիւն, և ապաշխարողին խոստովանել կեղծելով։ Այլ այլ առաւածաբանք շատ համարին զխոստովանահօրն կալ՝ի խոստովանարանի կամ՝ի ժամադրեալ տեղւոջ խոստովանութեան, և զկալ ինոջն առաջի նորա՝ի ծունկս. զի այսպէս խոստովանահօրն զնա հրապուրելով, շատ իսկ կարճեցուցանէ տեսողաց խոստովանել նմա ինոջն։

Ապա եթէ՝ի խոստովանարանի անդ, առանց կեղծաւորելոյ լսել զխոստովանութիւն, հրապուրեսցէ զնա կամ խօսեսցի ընդ նմա զանարժանս, չիցէ՞ ամբաստանելի։ — Վեսք յաստուածաբանից չհամարին զնա ամբաստանելի վասն բանի կոնդակին՝է խոստովանարանի անդ և յորում՝ն եղէ պեղծող՝ ուր խոստովանութեան առանին՝ձատդրեալ՝է լուր խոստովանութեան, կեղծաւորելով անդ լսել զխոստովանութիւն. ուր թուի թէ բաց՝ի տեղւոջէ խոստովանութեան՝ պահանջիցի և կեղծաւորել զխոստովանութիւն։ Այլ այլք հաւանականագոյնս ասեն, զի եթէ խոստովանահայրն արտաքոյ խոստովանարանի հրապուրէ՝ պահանջին յայնժամ կեղծիք խոստովանութեան, այլ եթէ՝ի խոստովանարանի՝ շատ է անհաւատութիւն, որպէս ցուցանեն կոնդակաւ Պօղոսի Ե, և յայտարարութեամբ առաքելական գահոյն։

171. Յետ կոնդակին Բենեդիկտոսի ԺԴ չիք տեղի երկբայութեան զի ամբաստանելի են և խոստովանահարքն՝ որոց չիցէ իրաւասութիւն, և եթէ հաւանեսցին իսկ ապաշխարողք հրապուրանաց նոցա. մանաւանդ զի չէ պարտ ապաշխարողին՝ի յայտնել անդր ըզհրապուրողն՝ յայտնել և զյանցանս իւր, և ոչ օրէնն է հարցանել զնա զայնմանէ։ Եւ զարձեալ չդադարէ պարտականութիւն յայտնութեան յետ բաղում իսկ

ժամանակի. և ըստ կոնդակին Վրիպոլի ԺԴ, պարտ է յայտնել և զայր աշխարհիկ, որ կեղծաւորեալ՝ի քահանայ՝ հրապուրէ զապաշխարողն. և դարձեալ զխոստովանահայր՝ որ վաղ իսկ՝ի նոյն յանցանս ամբաստանեալ և պարտաւորեալ և պատուհասեալ իցէ: Վասն ձեալ և որ՝ի ձեռն ապաշխարողին փորձի հրապուրել զայլ ոք՝ի մեղս ընդ իւր, և կամ հրապուրէ զնա մեղանչել ընդ այլում: որպէս յայտ է այս ամենայն ըստ վերոյիշեալ կոնդակաց և վճռոց առաքելական գահոյն:

172. Ընդ հակառակն չեն ամբաստանելի խոստովանահարք, որք ոչ՝ի գործ պղծութեան՝ այլ յայլ տեսակս մեղաց հրապուրեն, ըստ ուսուցանելոյ աստուածաբանից առ հասարակ՝ բաց՝ի սակաւուց ոմանց. զի չիք որբեք օրէնք այսպիսի: Ազատ են յամբաստանութենէ և ննջեցեալք, զի ոչ ևս ընդունակք են պատուհասի և ուղղութեան: Ազատ են և ապաշխարողք հրապուրիչք՝ի խոստովանութեան. զի զպատժական օրէնս ոչ է պարտ ընդարձակել, մանաւանդ զի աստ վտանգ ևս է լուծանելոյ զկնիք խոստովանութեան՝ի յայտնել խոստովանահօր զապաշխարողն հրապուրիչ:

173. Այլ կին, որ հրապուրէ զխոստովանահայրն, պարտի՞ ամբաստանել զնա՝ի հաւանել նորա հրապուրանաց իւրոց: — Կոնչինա, Մացցոլթա, Վոլթեսթա, Սալմանտիկեանք և այլք պարտ համարին ընդ էական կողմնակցութեամբն իմանալ և զայս: Այլ Պոնաչինա, Վասթրոփալ, Տելպինե, Պորտոնե, Տիանա և այլք զհակառակն հաստատեն, զբանակցութիւն իմանալով զառաջարկեալ հրապոյրսն՝ի խոստովանահօրէ: Զի կոնդակն գրիպորեան հրամայէ պարտ՝ի վերայ գնել ապաշխարողաց, որք նոքա հրապուրեալ յայլոց. իսկ զապաշխարող, որ ինքն հրապուրէ զխոստովանահայրն, ոչ է մարթ ասել հրապուրեալ յայլմէ. և ոչ օրէնն է կարծել թէ քահանայապետին կամեցեալ իցէ պարտ՝ի վերայ գնել կնոջն հրապուրողն ամբաստանել զխոստովանահայր յիւրմէ հրապուրեալ: Եւ ոչ զօրէ աստ բան Բենեդիկտեան կոնդակին՝ ընդէ՞ր և խոստովանահայրն և ապաշխարող փոխանակ՝ զմիմեանս էին հրապուրեալ: Զի փոխանակաւ հրապոյրքն այն են, յորժամ խոստովանահայրն՝ի մեղս ինչ յապաշխարողին հրապուրեալ՝ յայլ ինչ մեղս և

ինքն զնա հրապուրեսցէ, որպէս ՚ի յաջորդ Թուի ասա
ասելոց եմք. և կամ եթէ խոստովանահայրն հրապու-
րեալ յապաշխարողին՝ ընդդէմ դարձցի նմա ՚ի սկզբան,
և յետ այլոց բանից ինքն զնա հրապուրեսցէ. զի յայն-
ժամ պարտ է ապաշխարողին յայտնել զխոստովանա-
հայրն, և զհակառակն սորին վարդապետութիւն դա-
տապարտէ Յենեդիկտոս. զի Ձմեռրտի անդ խոստովա-
նահօրն հրապուրել զապաշխարողն, և ոչ յորժամ հա-
ւանի և եթէ խոստովանահայր հրապուրանաց ապաշխա-
րողին: Իսկ եթէ երբեք մեղսակցութիւն խոստովանահօր
ինչ հաւանութիւն եւեթ, և երբեք փոխանակաւ հրա-
պոյր, դատելի է ՚ի բանից և ՚ի գործոց՝ որ անցանեն
ընդ նա և ընդ ապաշխարողն:

174. Պարտ ինչ ապաշխարողին յայտնել զխոստովա-
նահայրն, որ հրապուրեալ յիւրմէ ՚ի պոռնկութիւն՝
շօշափմամբ մեղանչէ ընդ նմա: — Ոմանք յաստուածա-
բանից պարտ համարին, բայց այլք հաւանականագոյնս
զհակառակն հաստատեն. զի որ հրապուրէ ՚ի պոռնը-
կութիւն, հրապուրէ զօրութեամբ և ՚ի շօշափումն՝ որ
բովանդակի ՚ի պոռնկութեան, և կարապետէ սովորա-
բար ՚ի նոյն. և ասա ահա խոստովանահայրն, որպէս
ասացաք, ոչ է հրապուրող՝ այլ հրապուրեալ: Իսկ ե-
թէ հրապուրեալ ՚ի պոռնկութիւն՝ գործեսցէ ընդ նմա
սոդոմականութիւն, և կամ ընդ հակառակն, յայնժամ
և ինքն է հրապուրող. զի երկոցունց այսոցիկ անօրէնու-
թեանց չարութիւնք ոչ բովանդակին յիրեարս:

175. Պարտ ինչ ամբաստանել զխոստովանահայրն
հրապուրող ղղջացեալ: — Կէսք յաստուածաբանից ոչ
պարտ համարին, և Հայրն Ալ ի ւա հաւանական կոչէ
զկարծիս զայս. իբր զի գադարէ յայնժամ գլխաւոր
վախճան ամբաստանութեանն՝ որ է ուղղութիւն յան-
ցաւորին: Իսկ նշանս ուղղութեան նորա ասեն, եթէ
ոչ ևս յետ այնորիկ հրապուրեալ ինչ զկինն զայն՝ թէ-
պէտ և բազում անգամ դարձեալ առ ինքն ՚ի խոստո-
վանութիւն. եթէ զերեսամ մի բարւոք ինչ կենցաղա-
վարեալ. եթէ ինչ կրօնաւորեալ. և եթէ երկիւղած
ոք համարիցի, և ընդ անկանելն միանգամ կամ երկից՝
ինչ զգաստացեալ, կամ եթէ անցեալ ինչ զաւուրբք:
Յաւելու Հայրն Ալ ի ւա, զի և նշանքս այսոքիկ չեն բա-

եական, այլ պարտ է ունել բարոյական հաւաստիս զուգ զուգեցեալ նորա։ Սակայն Սուարէզ, Վազքէզ, Սալմանտիկեանք, Պոնաչինա և սուրբն Լիւդովիկոս հաւանական նադոյն համարին զպարտս յայտնելոյ. զի եկեղեցի զայսպիսւոյ յանցաւորի ոչ միայն զղջումն պահանջէ, այլ և զպատիժ՝ ի խրատ այլոց։

176. Իսկ յաղագս հրապուրելոց ապաշխարողաց զի տեսանի է նախ՝ զի չէ օրէն արձակել զնոսա մինչեւ յայտնեալ նոցա զհրապուրողն. և եթէ չկարենան առ ժամն, պարտին խոստանալ յայտնելոյ վաղագոյն։ Ոմն Ռենեդիկտոս Ժ.Դ. սահմանէ՝ ի կոնդակին. "Ոչ գոյշ լինին յոյժ խոստովանահարց մի տալ արձակումն ապաշխարողաց, զորս ծանիցեն հրապուրեալս յայլմէ, եթէ չև ինչ նոցա արարեալ զայսմանեաթիւն հրապուրողին՝ ցուցանելով զնա օրինաւոր դատաւորի՝ և կամ եթէ դեռ չխոստանայցեն հաւաստեաւ յայտնել զնա վաղագոյն յորժամ կարիցեն"։

Այլ որ չկարիցէ զնալ անձամբ առ՝ի յայտնել զհրապուրողն, պարտականն ինչ գրով կամ՝ ի ձեռն այլոյ ուրուք յայտնել։ — Ասէրն Ալեսանդրացի, Ռոնքալեա, Սալմանտիկեանք և այլք պարտ համարին, եթէ չկարէ վտանգ անուանարկութեան խրոց. զի պարտ է ապաշխարողն կատարել զպարտս իւր որպէս և կարիցէ, վասն որոյ եթէ չկարէ անձամբ՝ պարտի գրով կատարել զայն։ Եւ ոչ զօրէ ինչ ասել զի ապաշխարող, որոյ ինչն մեղք վերապահեալ, և չկարիցէ երթալ առ մեծաւորն, ոչ է պարտական գրելոյ առ նա. զի անդ վասն ընդունելոյ դեղ և խրատ՝ ի նմանէ է պարտականութիւն գնալոյ անձամբ, իսկ աստ վասն ծանուցանելոյ եւեթ զյանցաւորն՝ առ՝ի խափանել զչարիս, զորս կարէ նա առնել և այլոց՝ ի հանապազորդելն՝ ի լուր խոստովանութեան։ Եթէ չկամիցի ապաշխարողն գրել առ եպիսկոպոսն, օրէն է նմա գրել՝ ի Հռոմ։ Իսկ եթէ խոստովանահայրն իշխանութիւն առեալ յեպիսկոպոսէ՝ ինքնին կամիցի ընդունել յապաշխարողէն զյայտնութիւնն, շատ է զի ծանուսցէ եպիսկոպոսին զանուն հրապուրողին և զտեսակ հրապուրանացն, առանց ակնարկելոյ ըզհաւանել կամ զչհաւանել ապաշխարողին։ Այլ որպէս ազգ առնեն Ալֆասուրինի և Ռոնքալեա, ոչ է

բարւոք խոստովանահօր յանձն առնուլ զայն առանց հարկի: Իսկ եթէ ապաշխարողն չկարասցէ յաղթել ամօթոյ և զժկամակութեան իւրում միջնորդաւ իսկ խոստովանահօրն յայտնելոյ զայն եպիսկոպոսին, օրէնն է խոստովանահօր մինչ չև արձակեալ զնա՝ գրել՝ի Հռոմ: զի վկայէ Աստուածաբան անօրինեալ երբեմն առաքելական գահոյն զպարտս յայտնութեան վասն կարի ամօթ զածութեան և երկիւղի ապաշխարողին:

177. Պիտեալն է երկրորդ զի եթէ ապաշխարողն, կարելով յայտնել զհրապուրողն, չյայտնիցէ ցայնօրեայ աւուրս՝ սկսեալ յօրէ գիտելոյ զպարտականութիւն իւր, նովին իսկ գործով անկանի՝ի բանադրանս: Այլ ապա՝ի յայտնել նորա, կարիցէ ամենայն խոստովանահայր արձակել զնա: — Պիտեն Սալմատիկեանք, Ցիանա, Աստուածաբան և այլք. բայց այլք հաւանական համարին զադարել վերապահութեան ընդ յամառութեան ապաշխարողին, զի վճիռն ասէ չկարել ապաշխարողին ընդունել արձակումն չե՞ կարելի պարտ է. յօրմէ օրէն է՝ի միտ առնուլ՝ զի՝ի կատարել զպարտս իւր կարէ ընդունել արձակումն: Իսկ որ զբպարտէ զխոստովանահայր անմեղ, գործէ մեզս վերապահեալս Պապին, թէպէտ և առանց անկանելոյ ընդ բանադրանօք, որպէս ասացաք՝ի Թիւն 129:

178. Պիտեալն է երրորդ՝ զի թէպէտ և անօգուտ իսկ իցէ ազդ առնել ապաշխարողին զպարտս իւր յայտնելոյ զհրապուրողն, սակայն պարտ է խոստովանահօր ազդ առնել նմա զայն. զի զհասարակաց վնասուց են բանք, որպէս ասացաք՝ի Թիւն 116:

179. Պիտեալն է չորրորդ՝ զի պարտ է ապաշխարողին յայտնել զհրապուրողն, թէպէտ և չիցէ մարթ նմա տալ հաւաստիս զհրապուրանացն, և է այս ըստ հասարակաց վարդապետութեան աստուածաբանից: Եւ ոչ միայն ապաշխարողին է այս պարտ, այլ և ամենեցուն՝ որ գիտիցեն զայն, եթէ միայն՝ի հաւաստարիմ վկայից պիտացեալ իցեն, թէպէտ և ընդ բնական գաղտնեօք յայտնեալ իցէ նոցա այն. զի ուր զհասարակաց վնասուց իցեն բանք, չկայ պարտականութիւն խորհրդապահութեան՝ երդմամբ իսկ խոստացելոյ, բայց միայն եթէ ապաշխարողին առ՝ի խնդրել և եթէ խորհուրդ՝

յայտնեալ իցէ զայն։ Եւ ոչ գաղտնութիւն յանցանացն ազատ կացուցանէ զոք ՚ի յայտնութենէ յանցաւորին ըստ այլոց պատժական օրինաց. վասն զի եթէ ըստ այնմ զօրէնս զայս պարտ էր մեկնել, անօգուտ օրէնքն լինէին։

180. Եթէ երկբայելի իցեն հրապոյրքն, պարտ իցէ յայտնել զհրապուրողն։ — Եթէ գործք նորա կամ բանք ստուգիւ իցեն հրապուրականք, և հրապուրողն իցէ երկբայելի, պարտ է ծանուցանել մեծաւորի՝ որպէս զի խնդիր արասցէ հրապուրողին. այլ եթէ չիցէ զիւրին ստուգել զնրան, ոչ է պարտ մեծաւորի հետաքննել՝ զի մի գուցէ ինքս ինչ անուան անմեղն ուրուք հասցէ։ Իսկ եթէ յայտնի իցէ խոստովանահայրն, այլ հրապոյրքն անստոյգ՝ այսինքն զի չիցէ յայտ եթէ բանք նորա կամ գործք իցեն ստուգիւ հրապոյրք, հանրագոյն և հաւանականագոյն կարծիք ոչ պարտ համարիմն ամբաստանել զինա, զի յանցանք երկբայելիք ոչ ևս են յանցանք, և զի չէ օրէնն չարահամբաւել զոք վասն երկբայելի յանցանաց։ Այլ միայն եթէ վարք խոստովանահօրն տացեն բարոյական ստուգութիւն չարոյ մասին վարկանելոյ զբանս նորա, կամ եթէ բանքն ինքնին հրապուրականք իցեն՝ թէպէտ և երկբայելի միտք խոստովանահօրն, զի ըստ բանիցն սովորաբար դատելի են միտք։ Իսկ ընդ հակառակն եթէ կինոջն կամ աղգականացն նորա իցէ թշնամութիւն ընդ խոստովանահօրն, կամ եթէ պակասամիտ միտքն մի իցէ կինոն, ոչ է պարտ դատապարտել զխոստովանահայրն։ Այլ եթէ հրապոյրքն թէպէտ և երկբայելիք՝ այլ հաւաստիս ինչ ոչ գուշնաքեայս բերիցեն, թէպէտ և չիցէ պարտ ամբաստանել զինա, այլ արժան է ազդ առնել մեծաւորի առ ՚ի զգուշութիւն։

181. Պարտ իցէ ամբաստանել զխոստովանահայրն, որ ՚ի խոստովանութեան անդ գովէ զգեղեցկութիւն ապաշխարողին։ — Կէսք հաստատեն, կէսք ժխտեն. այլ բարւոք ասէ Ալբոսար զի ըստ հանգամանաց անձինն և ըստ եղանակի բանից նորա պարտ է կշռադատել զնրան։ Օնոյն է ասել և զխոստովանահօրէ, որ ՚ի խոստովանութեան գովէ առ ապախինն զտիկնոջն նորա՝ որպէս զի պատմեսցէ նա զայն տիկնոջ իւրում. զնոյն և

զխոստովանահօրէ, որ անսուղոր ինչ պարգեւ տացէ ապաշխարողին. զի զայս ամենայն ըստ յարակից հանդամանացն գատելի է։

182. Յարմարական ամբաստանելի համարին զխոստովանահայր, որ այսպիսի ինչ բանս ասացէ ապաշխարողին. Այնէ չէէ եէէղէցեակա՛ն, առնուէ զէէղ ինչ ինձ ընէա՛ն։ Այդուէէ ղէզ ես եսուա՛ն ինչ գէլանալ։ Այնէ ոչ պարգեւ տէղ զրաս, կամիցիս ղէզանէլ ընդ նմա։ Այսպանաւս ինչ՝ ի գալ եմոս առ էէղ՝ առնել զոր կամիս։ Այս ինչ ելէ աչքս զէս։ Պայցէ՛ն ես էէղ գորչուելիս, զոր կրեմ ես վան ես։ Յանկալէ է ինչ կալ ղէզ ընդ էէղ։ Այրապատուհասանէա՛ն կրեցի վան ես։ Այս այլ ևս հանգոյն սոցին անօրէնութեան բանք։

183. Պիտելի է հինգերորդ՝ զի ըստ կոնդակին Նեղիկտեայ ծ.Ա. խոստովանահարք հրապուրողք (որպէս և որք զեղծանին խորհրդոցն ապաշխարութեան՝ ի համայս), քան՝ ի պատժոյն առաջնոց՝ գտանին անընդունակք պատարագելոյ մինչև՝ ի սպառ։ Այլ առ այս խնդրի վճիռ դատապարտութեան, որպէս և սուրբն Աքինոսս Հաստատէ՝ փոխեալ զառաջինն կարծիս իւր, որ նովին իսկ գործով համարեր խոստովանահօր հրապուրողն անկանել ընդ պատժոյն։ Իսկ թէ անյաղթելի տգիտութիւն կացուցանիցէ զնա աղատ՝ ի պատժոյ աստի, թուի թէ պարտ իցէ զնոյն զայսմանէ առնել գատաստան՝ զոր ինչ զանկանոնութենէ ասելոց եմք՝ ի գլ. ծթ։ Այս գարձեալ թէ իցէ իշխանութիւն եպիսկոպոսի տնօրինել զայսպիսի անընդունակութիւն, ասելոց եմք՝ ի գլ. ժ. 53։

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵԻՏԱՍՆԵՐՈՐԴ

Ի ՎԵՐԱՑ ԽՈՐՀՐԴՈՑ ՎԵՐՋԻՆ ՕԾՄԱՆ ԵՒ ԿԱՐԳԻ ՓԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

ՑԱՂԱԳՍ ՎԵՐՋԻՆ ՕԾՄԱՆ

1 · Իւրքիւն և զօրութիւնք նորա :
2 · Նիւթ հեռաւոր :
3 · Նիւթ մերձաւոր :
4 · Կարեւո՞ր իցէ օծանել զամենայն իսկ զպայարանս :
5 · Զե՞ն նորա , և ո՞րպէս պարտ իցէ յարմարել զայն :
6 · Պաշտօնեայ նորին :
7 · Ո՞յց պարտ իցէ տալ զվերջին օծումն :
8 · Ե՞րբ կրկնել զայն :
9 · Պատրաստութիւն կարեւոր առ այն :
10 · Պա՞րտ իցէ տալ զայն մանկտւոյ :
11 · Պա՞րտ իցէ տալ զայն յիմարաց , արբեցելոց , անզեղջ մեղաւորաց , համերց , խլից , կուրաց :
12 · Իցէ՞ ծանր պարտականութիւն ընդունելոյ զայն :
13 · Ո՞րպէս պարտ իցէ պաշտել զայն :

1 · Վերջին օծումն է Խորհուրդ հաստատեալ՝ Քրիստոսէ , ի՝ որով հիւանդացեալ՝ Քրիստոսի հաւատացելոյ հրապարակեալ , առ՝ ի պալ հիւանդացոյ՝ ի հոգեվարս զբիւրուելն հոգւոյ ի պատրաստ լինելն մարմնոյ , օծմամբ եղելոյ օրհնելոյ , ի՝ յեռն պղծութեց հանացին : Զսի խորհուրդ , որպէս և է իսկ Աշխարհատապես ըստ յայտարարութեան տրիդենտեան ժողովոյ : Հրապարակեալ՝ Յակոբոյ առաքելոյ , զի ասէ . « Հիւանդանայցէ՞ ոք՝ ի ձէնջ , կոչեսցէ զերիցուսն եկեղեցւոյն , և արասցեն՝ ի վերայ նորա աղօթս , օծցեն իւղով յանուն տեառն . և աղօթքն հաւատովք փրկեսցեն զպաշտեալն . և եթէ մեղս ինչ իցէ գործեալ , թողցի նմա » . Զի՝ է պալ հիւանդացոյ զբիւրուելն հոգւոյ ի պատրաստ լինելն մարմնոյ . զի գլխաւոր զօրութիւն խորհրդոյս է զօրացուցանել զհոգի ընդդէմ փորձութեանց դիւին՝ ի հոգեվարս անդ . իսկ երկրորդական զօրութիւնք՝ քաւել զպ-

ինացուածս մեղաց, այսինքն զակարութիւն մնացեալ՝ի սկզբնական և՝ի ներգործական մեղաց, զյօժարութիւն՝ի չարն, զկեղծութիւն՝ի բարին, զբեռն ինն՝ որ հակէ զհոգին և զժուարին առնէ նմա յերկնայինս՝ի վեր ուղղել զմիտս, զտրամութիւն և անձկութիւն՝ որ՝ի հոգեվարս անդ տապնապեն զհոգի և մղեն՝ի թերացութիւն. ՚ի վերայ այսոցիկ և Թողուլ զպարտս պատժոյ մեղաց, և տալ զմարմնաւոր ևս առողջութիւն եթէ ինչ օգտակար հոգևորին, որպէս նոյն սուրբ ժողովն յայտ առնէ: Ասէ յաղագս Թողութեան մեղաց՝ ըստ հանրագոյն և չաւանականագոյն վարդապետութեան աստուածաբանից՝ գլխաւոր զօրութիւն խորհրդոյս ոչ է Թողուլ զմեղս, որպէս սկովտականք համարին, այլ զմնացուածս մեղաց: Այլ յաւելու սուրբ Ագուինացին, զի եթէ հիւանդն անյաղթելի տգիտութեամբ անպիտանացեալ զմեղս ինչ իւր, ՚ի զղջանալ նորա ՚ի վերայ ամենայն մեղացն՝ ևս և անկատար զղջմամբ, ՚ի ձեռն խորհրդոյս լինի Թողութիւն եթէ՝ ներելի և եթէ մահացու մեղաց նորա: Այլ զայս Պելլարմինոս, Սուարէզ, Լայման և այլք անդատին՝ ՚ի բանից սրբոյ ժողովոյն հաստատեն, զի ասէ. "Որոյ օծումն զյանցուածս, եթէ իցեն տակաւին քաւելիք, և զմնացուածս մեղացն ջնջէ,,: Այլ յոյժ հաւանականաբար ասեն Ներպէս, Տաբերտ, Ծուրնելի, Սուարէզ և Ասլմատիկեանք, զի խորհուրդս այս Թողութիւն առնէ և ծանուցց մեղաց ոչ ըստ պատահման, այլ ըստ ինքեան, Թէպէտ և հեռաւապէս: Ոչ զի թէ և կենդանեաց է խորհուրդ, այլ սահմանեալ է յԱստուծոյ առ՝ի Թողուլ իւրև զմեղս ըստ բանի առաքելոյն: "Այլ եթէ մեղս ինչ իցէ գործեալ, Թողցի նմա,,: Ասեմ իսկ հեռաւապէս, զի վերջին օծումն սահմանեալ է գլխաւորաբար առ՝ի բառնալ զմնացուածս մեղաց, այսինքն զներելին տկարութիւն, զխաւար մտաց և այլն. այլ քանզի չէ մարթ բառնալ այնոցիկ՝ կալով մնալով մեղաց՝ ի հոգւոջ, բառնայ հեռաւաբար և զմեղս: Ասէ որոյ հասարակաց վարդապետութիւն է, հաստատեալ՝ի սրբոյ Ագուինացւոյն և՝ի սրբոյն Պոնաւենդուրայ, զի մարթ է խորհրդոյս այսմիկ գոլ վաւեր առանց ընդհատ. այս ինքն զի եթէ հիւանդն՝ի մահուչափ մեղս գոլով անգիտութեամբ ընդ-

կալցի զայն , ՚ի զղջանալն ՚ի վերայ մեղաց իւրոց՝ դնէր անկատար զղջմամբ , ընդունի զառաջինն չնորհս : Ալ սան որոյ Լայման և Թամպուրինի յաւելուն , զոր և Ռենե- դիկտոս ԺԴ հաստատէ , զի եթէ հիւանդն չկարէցէ ընդունել այլ խորհուրդս , օրհն է քահանային Թողուլ անկատար զպատարագն՝ առ ՚ի պաշտել նմա զվերջինն օծումն , որպէս զի ընկալցի չնորհս՝ եթէ կայցէ ՚ի մեզս անկատար զղջմամբ : Ըսի դարձեալ հերձուածողաց ՚ի հոգե- վարս , առ ՚ի ցուցանել մեզ պարտ իցէ պաշտել զխորհուրդն զայն : ( )ծամբ եղոյն օրհնելոյ , առ ՚ի ցուցանել զնիւթ խորհրդոյն : Ցո ՚ի ձեռն աղօթիցն Տահիանոսին , առ ՚ի ցուցանել զձև խորհրդոյն : Ըստ պարտ է ուրոյն զիւ- րաքանչիւրոցն ասել : Ա· Ոնիւթոյ : Բ· Ոձևոյ : Գ· Ո պաշտօնեից խորհրդոյն : Դ· Ո՛յց պարտ իցէ պաշ- տել զայն : Ե· Ո՛րպէս պարտ իցէ պաշտել :

2· Ա· Ձեռաւոր նիւթ խորհրդոյս է ձէթ օրհնեալ վանն հիւանդաց , զոր պարտ է նորոգել ամի ամի , զհե- ղուկն արկեալ ՚ի հուր , ըստ պատուիրելոյ Կղեմայ Ը· ընդ ծանր մեղաւք , որպէս հաւանականագոյնս հաստա- տեն Պոնաչինա , Վ՚ասթրոփալ , Լ աքրուա և այլք : Ըստ եթէ երբեք չիցէ հնար ունել զնորն , օրէն է զհերուկն ՚ի կիր արկանել ըստ յայտարարութեան սրբոյ Ժողովոյն տրիդենտեան սահմանադրութեանց , և ըստ վարդապետութեան աստուածաբանից : Ցո ՚ի պակա- սել իւղոյն օրէն է առ հարկի յաւելուլ ՚ի նոյն՝ այլ ձէթ նուազ քան զօրհնեալն . և զայս օրէն է կրկնել և ե- րեքկնել , որպէս ուսուցանեն Ռոնքալեա , Վ՚արտենա , Փոսաեւինոյ և Լ աքրուա , և որպէս նոյն ինքն սուրբ Ժո- ղովն յայտ առնէ , այլ միշտ նուազ քան զօրհնեալն յա- ւելուլ :

Պարտ է իւղոյն գոլ ՚ի ձիթենւոյ , և օրհնեալ հար- կաւորութեամբ պատուիրանի աներկբայապէս : Ըստ հարկաւորութեամբ խորհրդոյն Թէպէտ և ոմանք յաս- տուածաբանից ոչ կարևոր համարին զօրհնութիւն ձի- թոյն , այլ հասարակաց վարդապետութիւն զհակա- ռակն հաստատէ ընդ սրբոյ Ա՚գուինացւոյն . զի Ժողովն տրիդենտեան ասէ . “Ձիւթ վերջին օծման համարի եկեղեցի զձէթ օրհնեալ յեպիսկոպոսէ ,, : Ցո գալ- ձեալ յայժ հաւանական կարծիք են աստուածաբանից ,

պի ձիթոյն այնորիկ օրհնութիւն հարկաւորութեամբ խորհրդոյն պարտի դոլ վասն վերջին օծմանն. վասն որոյ հակառակ կարծիքն՝ թէ մարթ իցէ միւռոնաւ և այ իւղով երախայից պաշտել զայս խորհուրդ, չէ հաւանական՝ի կատարումն խորհրդոյս, այլ առ հարկի և եթէ և պայմանաւ պաշտելի. և եթէ դէպ լինի հայթայթել ապա զձէթ օրհնեալ առ այս ըստ օրինի, պարտ է կրկնել զխորհուրդն, որպէս պատուիրէ սուրբն Կարթղոս Պորրոմէոս: Օ օրհնութիւն ձիթոյն կարող են հրամանաւ Պապին և քահանայք կատարել, ըստ վերջոյ կղեմայ Ը: Վասն վաւերականութեան խորհրդոյն շատ է թանալ զծաղ բուսեցոյ մատին, և օծանել նովաւ. որպէս զի ըստ հանրագոյն կարծեաց և շիթ մի իւղոյ բաւէ առ այն՝ յօծանել նովաւ զդպայարանս: Այլ զի հաւանական է և այլոց կարծիք, որ պահանջէն այնչափ ինչ իւղ՝ որոյմ մարթ իցէ հեղուլ, վասն այնորիկ՝ի կատարումն խորհրդոյն պարտ է ըստ նոցին կարծեացն վարել:

3. Նոկ մերձաւոր նիւթ խորհրդոյս է օծումն հնգից զգայարանաց՝ի քահանայէ. կամ եթէ ինչ յանդամոց հիւանդին պակաս իցէ, օծումն մերձաւորագոյն նոցին մասանց: Նայց առ հարկի, որպէս առ ըմբռնեալս՝ի ժանտախտէ, օրէն է և առանց շօշափման մատին՝ յատուկ ունելոջ և բամբակաւ կամ ծայրիւ ցպոյ պաշտել զօծումն, և ապա արկանել զցուպն կամ զբամբակ՝ի հուր: Այլ թէպետ այլևայլ են օծութիւնքն, այլ միակ կատարի անդ խորհուրդ. սակայն Ակոլտ և բազումք յաստուածաբանից ասեն՝ զի օծումն իւրաքանչիւր ածէ շնորհս առանձինն, մեն միոյ ունելոյ ձև ուրոյն՝ որ նշանակէ շնորհս:

4. Կարևո՞ր իցէ հարկաւորութեամբ խորհրդոյն ամենայն զգայարանաց հիւանդին օծումն: — Կէսք բազումք հաւանականաբար զմիակ օծումն ունի և իցէ մասին մարմնոյ, զի առաքեալն ասէ եթէ՝ օծցէ՛ն եղբա՛ք: Այլ հանրագոյն կարծիք կարևոր համարին օծանել զիւրաքանչիւր մասունս, զի այսպէս սովորութիւն կալաւ յեկեղեցւոջ ըստ աւանդութեան՝ի սկզբանէ և այսր. բայց միայն՝ի պահանջել հարկին, որպէս ապր առնեն մաշտոցք, օրէն է միով ևեթ օծմամբ

մասին ինչ մարմնոյ (մանաւանդ գլխոյն) պաշտել վնասու. հուրդն պայմանաւ, համառօտելով յայնժամ զձևն։ Սովին օրհնութեամբ և երդով ամենատապ ողջմտութեամբն ընդունէ ինձ զայդ, զոր ինչ յանցեալ պեսանելիօք, լսելիօք, ճաշակելիօք, հոտոտելիօք և շօշափելիօքդ։ Սակայն եթէ յերկարեացէ հիւանդն ի կեանս, պարտ է կատարել զիերն օծութեան իւրաքանչիւրոյ զգայարանացն հանդերձ աղօթիւքն, ըստ պատուիրելոյ մաշտոցին. և եթէ երկեայելի իցէ կենդանութիւն հիւանդին, յաւելու՛ ձևն ելիս կենդանի ես։

Ըստ հարկաւորութեան խորհրդոյն չէ ինչ կարևոր օծումն երիաքանչիւրոյ իսկ կրկնակ զգայարանաց, որպէս երկոցունց աչաց կամ ականջաց. վասն որոյ՛ ի ստիպել հարկին, առ՛ ի չգոյէ ժամանակի, կամ՛ ի վտանգի աճանցական ախտից, կամ՛ ի չկարել հիւանդին դառնալ՛ ի միւս կողմն, շատ է օծանել զմի յաչաց կամ յականջաց և այլն։ Օ՛ օծումն սրտի կանանայ՛ ի բաց թողլի է, որպէս ազդ առնէ և մաշտոցն, և զարանց իսկ՝ եթէ դժուարաւ շարժել կարիցեն։ Ո՛ծումն ոտից, և կարգ օծութեան զգայարանաց, թէպէտ ոչ է՛ ի հարկաւորութենէ խորհրդոյն կարևոր, ըստ հասարակաց վարդապետութեան, այլ թողուլ զայն կամ զկարգն փոխոխել ծանր մեղք համարին։

Ե. Բ. Զև խորհրդոյս են բանքն. Ո՛ծանեմ զքէս (կամ զքահանայս) և այլն. զո եղով սրբով, զէ զոր ինչ պեսութենէմբ մեղաբ՝ ասէին օծութենէմբ եղոյս ձրիեսցիս ընդ հօ պեսան մերոյ Յիսուսի Քրիստոսի, Ամէն։ Առաւս մեղաբ, որպէս հաստատեն Լաբրուա, Կոպաթոյ և Մացցոթթա, էապէս է կարևոր, զի բայատուէ զթողութիւնն մեղաց՝ որ է մի՛ ի գլխաւոր զօրութեանց խորհրդոյս։ Սրբով ոչ է էական, այլ մեղանչէ որ թողու զայն՛ ի բաց։ Ընդ հօ պեսան մերոյ Յիսուսի Քրիստոսի, կամ Ամենողորմածային գլուխնէանցն ողջմտութենէմբ, ըստ բազմաց յաստուածաբանից էականք են, այլ հանրագոյն և հաւանականագոյն կարծիք չհամարին զայնոսիկ էական, բայց ամենեցուն միաբանելով զի ծանր մեղք են թողուլ զայնոսիկ՛ ի բաց։ Հանրական և ճշմարտագոյն կարծիք կարևոր համարին զձև աղօթական, ըստ պատուիրելոյ առաքելոյն. “Եւ արասցեն՛ ի վերայ նորա

աղօթս ... և աղօթքն հաւատովք փրկեսցեն զաշխատեալն ,,: Վասն որոյ Կենեդիկտոս Ա· ասէ զՔրիստոսեան ձևոյն , որպիսի և մերս է , զի բառքն ( )ծանեմ ղալս ոս զի էրկեսցես հաւատասը են աղօթից , իբր ասել· ( )ծանեմ զալս ոս աղօթելով զի էրկեսցես :

Օ ձևն այսպէս պարտ է կցորդել ընդ արարողութեան· քահանային Թագեալ զաջ բոյթ ի ձէթն օրհնեալ , օծցէ խաչանիշ գմի մի ի գլխայարանաց · յասելն ( )ծանեմ , կինքեսցէ գխաչ , ( )ծանեմ ✠ զաչս քո խաղալ սրբով , զի զոր ինչ տեսութեամբ մեղար , (գիտա նա ակնն օծանելով) սորին օծութեամբ խաղցես փրկեսցիս և այլն · և չէ պարտ կատարել զձևն , մինչև զմիւռն ևս ի կրկնակ գլխայարանաց օծեալ : Օ մանն օծեալ պարտ է սրբել քահանային կամ սուրբ աստիճանաւոր պաշտօնէի , բամբակաւ՝ զոր պարտ է ապա այրել , և զմնխիւրն արկանել յաւազան սարկաւագանոցին : Օ նոյն պարտ է առնել և ի մէն մի ի գլխայարանաց , նոյնպէս զձևն կցորդելով ի լսելիսն , ի հոտոտելիսն , ի ձաշակելիս՝ (գշրթունսն առ միմեանս ածեալ) · ի շօշափելիս՝ (զվերին երեսս ձեռաց քահանային օծանելով , իսկ զաշխարհականաց զսուի ձեռին) · և յոտսն՝ (զներքանսն օծանելով) յասելն ի գնացս անօրէնութեան · ի սիրտն՝ յասել անդ գոր ինչ ձեղաբ սովաս : Ի ստիպել հարկին մնալ է այլևայլ քահանային գայլևայլ գլխայարանս հիւանդին օծանել՝ կցորդելով ըստ օրինի զձևն · զի չէ օրէն այլուս օծանել և այլուս զձևն ասել , և ոչ միւսմ գմին ի կրկնակ գլխայարանաց և այլուս գմիւռն օծանել : Եթե երբեք լինի քահանային չկարել ի կատար ածել զօծութիւնն , պարտ է այլուս քահանայի ընծայել գձեռին՝ առանց կրկին օծանելոյ զօծեալ գլխայարանն՝ եթե իսկ և իսկ յաջորդեսցէ ի պաշտօնն · իսկ եթե ժամանակ ընդ միջ անցանիցէ , որպես քառօրդ մի ժամու , պարտ է յայնժամ և զօծեալսն օծանել վերստին՝ ամբողջ գկարգն կատարելով :

6 · գ· Պաշտօնեայ խորհրդոյս է ժողովրդապետն , և հաւանութեամբ նորին ուր և է քահանայ · զի թէպէտ և առանց հաւանութեան նորա վաւեր է խորհուրդն , այլ ծանր մեղանչէ քահանայն : Օ լսելեացն հաւանութիւն ժողովրդապետի ոչ բաւական համարին կէսք յաս-

տուածաբանից, քայց Սանքէզ, Վրասէրտիալ, Վա-
լենցիա, Պոնաչինա, Սալմատիկեանք և այլք բաւական
համարին։ Նմէկ ոք՝ ի կրօնաւորաց առանց հաւանու-
թեան ժողովրդապետի պաշտեսցի զխորհուրդս զայս
արտաքոյ մենաստանի, անկանի՝ ի բանադրանս վերա-
պահեալս Պապի. այլ՝ ի մենաստանի կարեն պաշտել
և ս սպասաւորաց, և աշխարհականաց իսկ՝ ի ներքս
անդ բնակելոց։ Իսկ՝ ի տիտղել հարկին եթէ չիցէ անդ
ժողովրդապետն, և ոչ ժամանակ առ եպիսկոպոսն դի-
մելոյ, հասարակաց վարդապետութիւն է՝ զի որ և իցէ
քահանայ, և ս և կրօնաւոր, եթէ չիցէ բանադրեալ
կամ կախեալ, կարէ պաշտել զխորհուրդն։ Ո՛չ ի ժո-
ղովրդապետն իսկ եթէ իցէ կախեալ, ըստ հաւանակա-
նագոյն կարծեաց չկարէ պաշտել։

Նմէկ երբեք՝ ի շրջել քահանային զհիւանդն վասն
օծանելոյ՝ անշնչասցի նա՝ ի ձեռս իւր, ոչ օրպէս ոմանք
համարին՝ անկանի քահանայն յանկանոնութիւն. զի
վասն մեղաց սահմանեալ է պատիժն այն, իսկ որ վասն
եղբայրսիրութեան ինչ առնէ՝ ոչ գործէ մեղս։

Ո՛րանք մեղանչէ ժողովրդապետ՝ որ՝ ի հոգեվարս ան-
փոյթ առնէ տալ զվերջին օծումն՝ ի խնդրել հիւան-
դին, եթէ միայն չիցէ ինչ վտանգ կենաց իւրոց։ Տես
որ ինչ ասացաքս զայսմանէ՝ ի գլ. Ե. 27 և 28։ Բայց
վտանգաւ և ս կենաց պարտական է, եթէ հիւանդն հա-
ւանականաբար՝ ի մահուչափ մեղս կայցէ, և՝ ի քաղ-
մաց հետէ չիցէ խոստովանեալ, օրպէս ուսուցանեն
աստուածաբանք գրեթէ առ հասարակ։ Նա հաւանա-
կան կարծիք են նոցա, զի օրէնն է ժողովրդապետի պա-
հել երբեմն առանձին զվերջին օծման, յորժամ գու-
շակէ զկոչ իւր գիշերային, և զվտանգ չժամանելոյ։

7. Դ. Ոչ օրէն պաշտել ողջոց զխորհուրդս զայս,
թէպէտ և վտանգ մահու առաջի կայցէ նոցա, օրպէս
՝ի պատերազմի և՝ ի նաւակոծութեան և՝ ի դատապար-
տութեան իսկ մահու. այլ հիւանդաց և եթէ մերձ՝ ի
մահ, կամ ծերոց՝ որք առանց իսկ հիւանդութեան նը-
ւազեալ օր ըստ օրէ կան՝ ի վտանգ մահու։ Զ ան որոյ
Սուարէզ, Վրասէրտիալ, Սալմատիկեանք, Վրոնչինա
և Լենեգիկտոս ԺԴ, ոչ միայն ընդդեմ օրինաց համա-
րին տալ ողջոց զխորհուրդս զայս, այլ և անվաւեր։ Ա-

ոչ զօրէ ինչ ընդդէմ արարողութիւն Յունաց, որք յաւազ հինգշաբաթու օծանեն զհաւատացեալս յեկեղեցւոջ. զի Ներսէսիկտոս ծդ, ոչ խորհուրդ համարի զայն, այլ հոգևոր արարողութիւն։ Ըստ այսմ և անվտանգ հիւանդի պաշտել զայս խորհուրդ, ոչ միայն ըստ ոչ օրինի՝ այլ և անվաւեր համարին հանրագոյն կարծիք։

Ա. Այլ որո՞յ հիւանդաց պարտ իցէ պաշտել զայն։ — Ա. Յոգևկի՝ որոց վտանգ մահու՝ ի վերայ կայցէ. զի յայնժամ ոչ միայն օրէն է, այլ և պարտ իսկ։ Ուր ըստ հաստատակաց վարդապետութեան ծանր մեղանչէ ժողովրդապետ՝ որ յապաղէ զայն ցանզգայել հիւանդին. զի զրկէ զնա յարգասեաց խորհրդոյն, յառողջութենէ հոգւոյ և մարմնոյ։ Ըպա ուրեմն պարտ է կանխել քան զհոգեվարս հիւանդին. այլ որչափ կանխել, և երբ օրէն իցէ պաշտել։ — Ըստ հաստատակաց վարդապետութեան շատ է զի հիւանդութիւնն իցէ վտանգաւոր, թէպէտ և վտանգ մահուն չիցէ մօտալուտ. զի ժողովն վկայեն ասէ. "Ընդունակ խորհրդոյս է հիւանդն, զորմէ երկիւղ իցէ մեռանելոյ"։ Ուր տրիդենտեանն յաւելու. "Ոչ այս օծումն պարտ է պաշտել հիւանդաց, և մանաւանդ այնց՝ որք յելս կենաց թուին հասեալ", ուր բառս Յանաոանդ յայտ առնէ՝ զի օրէն իցէ պաշտել զայն և հիւանդաց, որք չիցեն յելս կենաց։ Ա. առաւել ևս հաստատէ զայս Ներսէսիկտոս ծդ՝ի կոնդակին, ուր ասէ. "Մի պաշտեսցի օծումն ողջոց, այլ ծանր ախտիւ հիւանդացելոց"։ Ա՝ան որոյ ասէ Ըսահրոսիկ՝ զի որոց օրէն իցէ տալ զվերջին Թոշակ, օրէն է պաշտել նոցա և զվերջին օծումն. բայց և յաւելու ընդ Ալամանի, զի չէ բաւական կասկած մահու առ այս, այլ պարտ է զի իցէ գէթ հաւանական վտանգ մահու. զոր և հաստատեն այլք գրեթէ առ հասարակ։

Օրէն իցէ պաշտել զօծումն յերկուսից կանանց։ — Ներէ կրե զսովորական ցաւս, թէ և իցեն առաջին նոքա երկուանք, կամ իցէ իսկ յայլ նուագս վտանգեալ, ոչ օրէն համարին աստուածաբանք. այլ եթէ ցաւս ծանուսս կրէ, մինչև տալ կասկած վտանգի, օրէն է յայնժամ։

8. Ընդ օրէն՝ի նմին հիւանդութեան կրկնել զայս

խորհուրդ, այլ միայն յապաքինել հիւանդին և անպ-
ըէն անկանել ի վտանգ։ Իսկ եթէ երկարատեւ իցէ
հիւանդութիւնն, և միշտ ի նմին վտանգի, որպէս թոք-
ախտին և ջրգողայ, և ոչ յայնժամ օրէն է կրկնել։
այլ եթէ զերծեալք ի մծտալուտ վտանգէ իբր ամսո-
րեայ աւուրս, և ապա վերստին անկցին ի վտանգ, օ-
րէն է կրկնել և նոցա, թէպէտ և ընդհատութիւն վը-
տանգին իցէ երկբայելի, որպէս յաւելու Ռենեդիկ-
տոս ԺԴ։

9. Պարտ է հիւանդին խոստովանել նախ, և ապա
ընդունել զվերջին օծումն. և եթէ երբէք դէպ տացէ,
զի չկարիցէ խոստովանել, դէթ զղջումն կատարեալ
պահանջի։ Ոչայց որպէս կարգ մաշտոցին և սովորու-
թիւն եկեղեցւոյ ուսուցանէ, պարտ է կանխել տալ հի-
ւանդին և զվերջին Թոշակ, և ապա պաշտել զվերջին
օծումն. Թէպէտ և յեղափոխութիւն այսր կարգի չէ
ինչ աւելի քան զներելի մեղս, որպէս ասեն Ասուարէզ,
Լաքրուա և Ռենեդիկտոս ԺԴ։

10. Ոչ է օրէն պաշտել զխորհուրդս զայս մանկտւոյ՝
որոց չէ իցէ բանաւարութիւն. զի ոչ Ջհմարտի՛ ի նո-
սա Թողութիւն մեղաց, զոր չէ օրէն իմանալ զսկզբնա-
կանէն՝ որ վաղ իսկ Թողեալ է միրտութեամբ։ Այլ
հանրապոյն և հաւանականապոյն կարծիք օրէն համա-
րին պաշտել զայն մանկանց՝ որոց հասեալ իցէ՛ ի չափ
բանաւարութեան, Թէպէտ և չիցեն տակաւին ընդու-
նակք հաղորդութեան. զի ասէ մաշտոցն Հռովմէական.
„Պարտ է զխորհուրդս զայս պաշտել հիւանդաց, որք
հասեալ իցեն՛ ի բանաւարութիւն„։ Իսկ որոց երկ-
բայելի իցէ բանաւարութիւն, պարտ է պայմանաւ պաշ-
տել նոցա զայն ըստ հաւանականապոյն կարծեաց՝ զոր
ուսուցանեն Ռուկոյ, Լաքոպար և այլք, զի մի զրկեսցին
յարդասեաց խորհրդոյն՝ եթէ իցեն ինչ նոցա մեղք։
Օնոյն է ասել և զխեղագարաց, որոց երկբայելի իցէ
բանաւարութիւն։

11. Այլ ստոյգ յիմարաց, որոց չիցէ ինչ լեալ միջոց
բանաւարութեան, չէ օրէն պաշտել զօծումն։ Իսկ որոց
յառողջութեան մտաց խնդրեալ իցէ զայն, կամ հաւա-
նականաբար կամեցեալ կամ ցոյցս զղջման տուեալ, Թէ-
պէտ և յետոյ՛ ի խօսից և՛ ի մտաց և՛ ի զգայութենէ իսկ

անկեալ էին, պարտ է պաշտել զայն։ Եւ եթէ՛ ի զաւանցութենէ մտաց նոցա վտանգ էին անարգութեան խորհրդոյն, Աւանդուրինի հաւանականաբար ուսուցանէ՝ սինդ զձեռս նոցա և զոտս ունել, առ՛ի պաշտել աներկեան զխորհուրդն։ Օնոյն և յաղագս արբեցելոց՝ որ կան՛ի վտանգ մահու՝ ասեն Աքրուա, Կոպաթոյ և Ազներ, եթէ չկոյ յայտնի՝ կալ նոցա՛ի մահուջափ մեղս։ Ասկ զվիրաւորելոց՛ի կազդ զանզգայից, ուսուցանեն Ռոնինքիոյ, Աւանդուրինի, Ազներ և Աքրուա, տալ պայմանաւ զօծումն, համարելով զնոսա զղջացեալս՛ի վիրաւորելն։ Ասկ զհամերս, զխուրս և զկոյրս՛ի ծնէ աներկբայապէս պարտ է օծանել, ևս և՛ի զգայարանն՝ յորոց զուրկ էին. զի Թէպետ և չկարէին մեղանչել նոքօք արտաքուստ, այլ մարթ է նոցա ցանկութեամբ նոցին մեղաց յանցանել, որպէս ուսուցանեն առաուաձաբանք ընդ սրբոյ Աւգուստինոսէ և ընդ սրբոյն Կարոլոսի Պորրոմեայ։

12. Պարտ էին հիւանդին ընդ ծանր մեղօք ընդունել զվերջին օծումն։ — Սուրբն Պոնաւենթուրա, Սոթոյ, Սերպէս, Ռոնքալեա, Ֆաբերտ և Ռոնչինա համարին մահուջափ մեղանչել հիւանդի՝ որ անփոյթ առնիցէ ընդունել զայն, իբր զի ծանր պատուիրան է ասել առաքելոյն. "Կոչեսցեն զերիցունս„ և այլն։ Ոայց Սուարեզ, Ազաարրոյ, Ասթիոյ, Սիլուիոյ, Սամպովիոյ, Ռասթրուիալ, Սալմատիկեանք և այլք, ոչ համարին զայն՛ի ծանր պարտս. որոց համաձայնել թուի և սուրբ Աւգուստինոսի յասելն, թէ որպէս գրուշին՝ նոյնպէս և վերջին օծումն չեն հարկաւորք՛ի ֆրկոնվեկն։ Սակայն հանդերձ այսու ամենայնիւ սուրբն Աւքինաս յոյժ հաւանական համարի զառաջինն կարծիս, և յաւելու թէ ամենայնիւ պարտ է խրատել զհիւանդն՛ի նոյն. ոչ այնչափ վասն պատուիրանին՝ որ չէ յայտ ծանր թէ թեթև պարտս՛ի վերայ դնիցէ, որչափ զի պարտ է հիւանդին խնայել յանձն. զի Թէպետ և մարթ էին նմա և այլովք սուրբ խորհրդովք առնուլ զօրութիւն՛ի կատարեալ պահուն, այլ թուի՛ի վտանգի մեծի դնել զանձն անկանելոյ՛ի հրապոյրս դիւին՝ որ ըստ ուսուցանելոյ աստիճենտեան ժողովոյն զայրագինս յայնժամ դարանի, անփոյթ առնելով զօրանալ խորհրդովն՝ զոր յայս խակ ամանեաց Ռրիստոս։

Ասացե՛ւ և միաբանին ամենայն աստուածաբանք զի մարթ է հիւանդին գտանել ընդ ծանր պարտեօք ընդունելոյ զայս խորհուրդ, որպէս եթէ՛ ի մահուչափ մեղս իցէ և չկարիցէ ընդունել զայլ խորհուրդս, կամ թէ կարծիս հերետիկոսութեան կամ արհամարհութեան խորհրդոյն տայցէ այլոց չընդունելոյնն զայն։ Եւ հաւաստի իսկ է զի արհամարհութիւն այսպիսի, եթէ իցէ տեսական, ծանր մեղք են։ Ցեսական՝ ոչ է իմանալ զհրաժարել հիւանդին անհոգութեամբ կամ երկիւղիւ, այլ իսկապէս առ ոչ ինչ համարելով զայն. զոր և հաստատէ Ա՛արտինոս Ե. յասելն՝ ի կոնդակին. "Այն է մարթ անփոյթ առնել զխորհուրդս զայս առանց մեղաց, և ոչ արհամարհել զայն առանց մահուչափ մեղաց։"

13. Ա՛ան պաշտելոյ զխորհուրդս զայս՝ պարտ է քահանային պատրաստել սեղան ծածկեալ կտաւով, և ծուէնս բամբակի եօթն՝ ի պնակի՝ առ՝ ի սրբել զիւղ օծելոյ մասանցն, միջուկ հացի՝ առ՝ ի մաքրել զմատունս, ջուր առ՝ ի լուանալ, և մոմ վառեալ։ Ա՛ոյգ ընդ իւր և դպիր, խաչ՝ ի ձեռին և ջուր օրհնեալ, բերելով ինքնին զանօթ իւղոյն։ Իսկ եթէ երկայն իցէ Ճանապարհն, և հեծեալ կամիցի գնալ, օրէն է նմա կախեալ բերել զայն քսակաւ զպարանոցէ։ Եթէ հիւանդն՝ ի մերձաւոր վտանգի կայցէ, նոյն ինքն որ ըզսուրբ Թոշակն բերէ՝ կարէ և զիւղն բերել ընդ նմին. այլ եթէ կայցէ անդ այլ քահանայ կամ սարկաւագ, նոցա անկ է բերել զայն զհետ։

Ծանր մեղք են առանց շտապի և ուրարի, կամ առանց շուրջառի պաշտել զօծումն. բայց՝ ի կարևոր ժամանակի, այսինքն եթէ վտանգ իցէ մեռանելոյ հիւանդին մինչև՝ ի տալ բերել սպաս սուրբ, հաւանական է ըստ բազմաց աստուածաբանից կարել պաշտել զայն առանց սուրբ սպասուց։ Նոյնպէս՝ ի ծանր մեղս համարի Թողուլ առանց հարկի՝ ի բաց զաղօթս մաշտոցին. իսկ՝ ի ստիպել մերձաւոր վտանգի մահուն՝ պարտ է զկարևոր մասն խորհրդոյն կատարել, և ապա եթէ լինի ժամանակ՝ ընդուլ զԹերին աղօթից, և արարողութեանց։ Հհամարի՝ ի ծանր մեղս պաշտել զօծումն առանց մեռելինի վառելոյ, և առանց դպրի. և՝ ի ստիպել հար-

կին և ոչ նեբելի մեզք են։ Այնպես նեբելի և եթե մեզս գործէ որ ոչ խաչանիշ օծանիցէ։

ՅՕԴՈՒԱԾ Բ

ՅԱՂԱԳՍ ԽՈՐՀՐԴՈՑ ՍՐԲՈՑ ԿԱՐԳԻՆ

14. Մէն մի յեօթանեցունց կարգաց իցէ խորհուրդ։
15. Նիւթ և ձև խորհրդոց՝ ի Քրիստոսէ իցեն սահմանեալ։
16. Ո՞ր իցէ նիւթ սրբոյ կարգին, ձեռնադրութիւն թէ առաջութիւն սպասուց։

14. Երկրորդումն յաւելուածի գրոցս՝ ի քննութեան նուիրելոց մնայ մեզ ասել որ ինչ սրբոյ կարգիս են պատկանաւոր. այլ ասա զերիս զայսոսիկ լանդիսս համառօտեմք։ Նա նախ՝ թէ արդեօք մէն մի յեօթանեցունց կարգաց իցէ խորհուրդ։ Աստատեն զայն պելլարմինոս, կոնեթ, Սանքէզ, Աալմատիկեանք և այլք ընդ սրբոյ Աստուածայցոյն. վասն զի Աստիւնեոս Դ, ի կոնդակին որ առ մերսաղնեայս, ասէ. "Նիւթ սրբոյ կարգին այն է, որոյ տուչութեամբ կատարի կարգն"։ և ապա յուցանէ զնիւթ իւրաքանչիւրոց կարգաց։ Նա կառակ այսմ կարծեաց Այլեթանոյ և Տուրանտոյ զկարգ եթե քահանայութեան համարին խորհուրդ. այլ այս չէ հաւանական, զի սարկաւագութեանն կարգ խորհուրդ է աներկբայապէս, զի են՝ ի նմա երեքին պայմանք խորհրդոյ. այսինքն նշան զգալի, որ է ձեռնադրութիւն, սահմանադրութիւն աստուածային, զի ժողովին տրիդենտեան ասէ սահմանեալ Աստուծոյ զասակարգութիւն յեկեղեցւոջ՝ եպիսկոպոսաց քահանայից և պաշտօնէից, և պաշտօնէիւք պարտ է իմանալ գեթ զսարկաւագունս. և շնորհք, զի ըստ լատին արարողութեան՝ ասէ եպիսկոպոսն ցնուելեանն. Ընդունիր զՍուրբ Հոգին։ և ըստ մերում աղօթէ եպիսկոպոսն ընդ ընծայեցեալսն Հոգւով սրբով։ Ասացորդ և Ա սարկաւագունս զերիս սուրբ աստիճանս եթե համարին խորհուրդս։ Նայց հաւանականագոյն կարծիք, զոր հաստատեն Կրացիանոս, Պետրոս Լոմպարտոս, Ասրինոս, Ալեթիոս, Ծաւրնելի, Նաբերտ և այլք, զքահանայ-

յանէին և զսարկաւագութիւն համարին խորհուրդ, և ոչ զայլս, և ոչ զկիսասարկաւագութիւն։ Ո՛չ ի եթէ այնոքիկ ևս էին խորհուրդք, էր մարթ աբբայից տալ ուժք զայն. զի պաշտօնեայ կարգին եպիսկոպոսն է միայն, հաստատուն աւանդութեամբ յեկեղեցւոջ առ ամենայն ազգս, և յորում և իցէ հարկաւորութեան չէր ուժք տուեալ իշխանութիւն ձեռնադրելոյ քահանայ կամ սարկաւագ բաց յեպիսկոպոսաց։ Այլ զի զարձեալ յայլս՝ի կարգաց չէր ձեռնադրութիւն, որ է նիւթ խորհրդոյ կարգի. և ոչ ձև ինչ՝որ յայտ առնիցէ զտրուածութիւն շնորհաց, այլ միայն աւանդութիւն իշխանութեան և պաշտաման։ Իսկ կոնդակն եւգինեան ոչ որպէս էական ինչ զնիւթս այլոց կարգաց սահմանէ, այլ յայտարար իշխանութեանն՝ որ աւանդի նոքօք։ Իվարդապետութենէ ասաի զՀետ բերէ Ղենեդիկտոս ԺԴ, զի չէ մարթ՝ի ծանր մեզս դատապարտել՝ որք ընդունինն զայնոսիկ՝ի մահուամբ մեզս։

15. Արկրորդ խնդիր այն է, թէ նիւթ և ձև խորհրդոց (և մանաւանդ սրբոյ Կարգին)՝ի Քրիստոսէ իցեն սահմանեալ։ — Սուրբն Պոնաւենտուրա, Պելլարմինոս, Մորինոյ, Լուկոյ, Սալմատիկեանք և այլք չհամարին սահմանեալ՝ի Քրիստոսէ. զի եթէ՝ի նմանէ էին սահմանեալ, էր մարթ զանազանել այնոցիկ ըստ արևմտեան և արևելեան եկեղեցւոյ, որպէս մանաւանդ՝ի խորհուրդ կարգին, զի քահանայութիւն և սարկաւագութիւն առ Յոյնս ձեռնադրութեամբ ևեթ կատարի, իսկ առ Լատինս՝ ձեռնադրութեամբ և տուչութեամբ սպասուց, որպէս յայտ առնէ Եւգինէոս Դ՝ի վերոյիշեալ կոնդակին։ Յորմէ զՀետ բերեն զնիւթ և զձև մկրտութեան և հաղորդութեան որոշակի՝ի Քրիստոսէ սահմանեալ, իսկ զայլոցն Թողեալ ընդհանրապէս եկեղեցւոյ սահմանել որոշակի՝՝ի կիր արկանելով իւրս և բանս յայտարարս զօրութեան խորհրդոյն։ Հաւանական է վարդապետութիւնս այս, այլ հաւանականագոյն հակառակն՝ որ համարի զամենայն իսկ խորհրդոց զնիւթ և զձև՝՝ի Քրիստոսէ սահմանեալ որոշակի. որպէս հաստատեն Ա՛երպէս, Հաբերտ, Իւվենին, Գաւրնելի, Փեթրոքոր, Վոնչինա և այլք ընդ սուրբ Աքուինացւոյն. որոյ համաձայնի և Ղենեդիկտոս ԺԴ յասելն

«Ալ իւիք մարթ է ցուցանել տուեալ եկեղեցւոյ ի Քրիստոսէ զայս իշխանութիւն, այլ միանաւանդ զհաստատութիւն ուսուցանէ Ժողովն տրիդենտեան յասելն՝ զի չիք ինչ եկեղեցւոյ իշխանութիւն ըստ զօրութեան խորհրդոյ, այլ ըստ մատակարարութեան ևեթ նոցին։» Անապատնութիւն արևելեան և արևմտեան եկեղեցեաց ոչ հակառակ ինչ ելանէ այսմ. զի տուչութիւն սպասուց ոչ է նիւթ էական խորհրդոյս, այլ պատահական և ամբողջական։ Իսկ վասն եւգինեան կոնդակին պատասխանեն Աերպէս, Ճաուսնեվլի և Քոնչինա, զի ոչ զէական նիւթ խորհրդոյ կարգին սահմանել անդ քահանայապետն, այլ ցուցանել նայոց զարտարողութիւն հռովմէական եկեղեցւոյ՝ ընդ որում կամիցին միանալ։ Եւ չէ մարթ ասել՝ թէ անդ ոչ զարարողութենէ իցէն բանք, այլ զնիւթոյ. զի եթէ այդպէս էր, պարտ էր և զիրաքր աստիճանս համարել խորհուրդ, զի և զայնոցիկ քահանայապետն ցուցանէ զնիւթ. այլ զայս և ինքեանք իսկ հակառակ կարծեացն պաշտպանք ոչ ընդունին։

16. Երրորդ խնդիրն այն է, թէ որ իցէ նիւթ կարգի քահանայութեան. ձեռնադրութիւն թէ տուչութիւն սպասուց, և որ ձև նորին։ — Սոթոյ, Ֆանխանոյ և այլք ոմանք զտուչութիւն ևեթ սպասուց համարին ի նիւթ, իսկ ի ձև զբան եպիսկոպոսին՝ զոր ի տալն ասէ. Ա՛ր ընկալ, ևանպէ առեր կարողութիւն ընդհօրն Ա՛պոստոլոյ կնոքել և կապարել զսուրբ պապարափս. և այսուհիկ ևեթ հաստատել ընդունել նուիրելոյն զնշխանութիւն պատարագելոյ և արձակելոյ զմեղս։ Քանզի Աուպինեսս ի նմին կոնդակի ասէ. «Կարգ քահանայութեան աւանդի տուչութեամբ սկզբան զնուոյ, և մաղթմամբն հայիւ»։ Ա՛յլ այս կարծիք չէ ընդունելի այլոց աստուածաբանից։ Պելլարմինոս, Լաթիոյ, Ակովա, Լայման, Քոնչինա, Տոլման, Ա ազգուէզ, Սալմատիկեանք և այլք կրկնակ համարին զէական նիւթ կարգի քահանայութեան, այսինքն զի աւանդելով եպիսկոպոսին զսպասս՝ տայ նուիրելոյն իշխանութիւն՝ի վերայ իրական մարմնոյն Քրիստոսի, և ձեռնադրութեամբն՝ի վերայ խորհրդականին՝ արձակելոյ զհաւատացեալս՝ի մեղաց՝ի ձև առաջնոյն ասելով Ա՛ռ ընկալ և այլն, և՝ի ձև երկրորդին Ա՛ռ զեղ իշխանութիւն՝ի Հոգւոյն սրբոյ կապելոյ և արձակելոյ և այլն։

Բայց Մարթեն, Պեքանոյ, Ֆուրնելի, Լուվենին, Վեթրոքոր, Վոնչինա և այլք ընդ սրբոյն Պոնաւենթուրայի, որոց համաձայնի և Ներսէդիկոս ԺԴ, հաստատին զերկուսին և սա իշխանութիւնս ձեռնադրութեամբ ընդունել նուիրելոյն, յորժամ եպիսկոպոսն՝ի միասին ընդ քահանայից դնէ ձեռս՝ի գլուխ նուիրելոյն և ասէ. Ընդունջիր զհոգին սուրբ և այլն, որպէս յայտ առնէ ժողովն տրիդենտեան յասելն. Պաղպանեայ վերջին օծման են եպիսկոպոսունք, ևս՝ քահանայ օրհնելոյ՝ի նոցանէ ըստ օրինի՝ դրոնելեամբ ձեռաց։ Եւ յասելոյ նոյն սուրբ ժողովն՝ զի սուրբ գիրք ուսուցանեն որ ինչ յօրհնութեան քահանայից և սարկաւագաց կարևորք են. այլ սուրբ գիրք զձեռնադրութիւն ևեթ ուսուցանեն, ապա պարտ է ասել՝ զի քան՝ի ձեռնադրութենէ չիք ինչ էապէս կարևոր՝ի խորհուրդ սրբոյ կարգին։ Ըստ այսմ արևելեան եկեղեցի ձեռնադրութեամբ ևեթ օրհնէ քահանայս. և Ներսէդիկոս ԺԴ յասելոյ ընդ Մարթենի, զի տուչութիւն ապաստուց յոյժ բորդ կամ յիննեորդ դարու յասելաս։ Իսկ ձև ըստ այսմ վարդապետութեան է առ մեզ՝ որպէս ասացաք. Ընդունջիր զհոգին սուրբ և այլն, զոր եպիսկոպոսն ասէ՝ի ձեռնադրելն. իսկ առ լատինս՝ Ընկալ իշխանութիւն և այլն։ Իսկ զոր յասելոյնն յետոյ լատինք Ընդ գլխովք սուրբ և այլն, և առ մեզ եպիսկոպոսն՝ի տալ զգօտին՝ Ընդ գեղ իշխանութիւն՝ի հոգւոյն սրբոյ հպատելոյ և արձակելոյ և այլն, Մորինոյ և Ֆուրնելի համարին յայտարարութիւն ևեթ իշխանութեանն տուելոյ յառաջագոյն։ Նորոգոս այս վարդապետութիւն հաւանականագոյն է. այլ քանզի և երկրորդն է հաւանական, պարտ է ամենայն զգուշութեամբ և զձեռնադրութիւն և զտուչութիւն կատարել, և զերեսին ևս զձևս քաջ մտադրութեամբ արտասանել. այսինքն Ընդունջիր զհոգին սուրբ և այլն. Ընդ գեղ իշխանութիւն՝ի հոգւոյն սրբոյ և այլն. և Ընկալ, դանդի առեր հրամայեան և այլն։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

Ի ՎԵՐԱՑ ԽՈՐՀՐԴՈՑ ՊՍԱԿԻՆ

ՑՕԴՈՒԱԾ Ա.

ՑԱՂԱԳՍ ՀԱՐՍՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ

1. Զինչ է հարսնախօսութիւն: Եթէ մանկունք յառաջ քան զխնամն ամաց առնիցեն: Որ առանց կամելոյ պարտ յանձն առնուլ՝ արասցէ հարսնախօսութիւն: Որ դաւով, կամ վրիպակաւ:
2. Եթէ պայմանք պատճառաւ տուեալ իցեն դաշինն:
3. Հարսնախօսութիւն առ երկիւղի:
4. Պարտ իցէ խոստմանն լինել երկուառեք:
5. Պարտ իցէ արտայայտել զայն: Եթէ հայր խոստանայցէ վասն որդւոյն՝ ի լուր նորա:
6. Պարտ իցէ յերկբայս նպաստել ազատութեան: Որ խոստանայն չառնուլ զայլ ոք կնութեան: Որ ասյ զնշանն:
7. Զչէ ևս հասելոց յարդուն: Զչօշափմանց խօսեցելոց:

1. Հարսնախօսութիւն է խոստումն կամաւ և գիտութեամբ երկուստեք արտայայտեալ զգալի նշանաւ, զհանդերձեալ պսակէ, որոց կարող իցեն ամուսնութեան: Այլ խոսփոփն, զի առաջադրութիւն եւեթ ոչ արտայայտեալ և ոչ ընկալեալ ոչ ածէ պարտս: Այլ համառ ի գիպուածէն, զի վասն ծանր պարտականութիւն՝ ի վերոյ ածելոյ՝ որպէս ածէ հարսնախօսութիւն, խնդրի յօժար և լիուլի կամք: Ասն որոյ ոչ է պարտական՝ որոյ չիցէ յայտնի կատարեալ բանաւարութիւն. այլ եթէ իցէ յայտնի, գտանի նա պարտական՝ թէպէտ և չիցէ հասեալ՝ ի տիս եօթնամեայ, ըստ Հանրագոյն և ըստ հաւանականագոյն կարծեաց. իմա եթէ հասու ևս իցէ բեռանց ամուսնութեան: Պարտ ձեալ ոչ է պարտական՝ որ խոստանայ առանց կամաց դաշնադրութեան և պարտս յանձն առնոյ, թէպէտ և դիտիցէ զպարտս՝ որ՝ ի խոստմանէ անտի գան յառաջ:

Այս այսպէս ուսուցանեն Անքէզ, Վ.Ասեթրոփալ, Այման, Լեսիոյ, Ասցոթթա, Սալմատիկեանք և այլք. զի որովհետև պարտականութիւն՝ ի կամաց գոյ

յառաջ, ուր չեն կամք՝ չկք և պարտականութիւն: Այս ջրէ այս, Թէպէտ և երդմամբ խոստումն իցէ հաստատեալ. որպէս հաստատեն սուրբն Պօնավենթուրա, սուրբն Ընտոնինոս, Անքէզ, Վասթրոփալ, Պոնաչինա, և սուրբ Գուինային. զի երդումն զպայմանաց խոստմանն երթայ զհետ: Այլ որ ապականէ զկոյս խոստմամբ առնլոց կնա կնութեան, Թէպէտ և ստիցէ՝ պարտական գտանի, որպէս ասացաք՝ ի գլ. ժ. 93: Իսկ որ խոստանայ կամօք դաշնադրութեան և պարտս յանձն առնլոց, Թէպէտ և չիցէ նորա դիտաւորութիւն կատարելոց զպարտսն, պարտական գտանի: Այս դարձեալ ոչ է պարտական որ ստիպի խոստանալ բանի կամ նենգաւ կամ վրիպակաւ զկուրծեանէ իրին և կամ զկարևոր ինչ հանդամանաց նորին: Տես որ ինչ զայսմանէ ասացաք՝ ի գլ. ժ. 124:

2. Աւաւքր իցէ հարսնախօսութիւն, եթէ նենգ կամ վրիպակ ինչ լեալ իցէ զիմաքէ՝ ի պայմանաց՝ որ Թէպէտ չիցէ եական, բայց այնպիսի՝ որ պատճառս տուեալ իցէ դաշինն, և առանց այնր չէր մարթ վերապին խոստանալ: — Ոչ սակաւք՝ ի բարոյականաց անվաւեր համարին. բայց զհակառակն ըստ այլոց հաւատնականագոյն ցուցաք անդ՝ ի վերոյիշեալ տեղւոջ, այլ յաւելաք զի իրաւունք են պատրելոյն եղծանել զդաշինսն, Թէպէտ և պատրանքն յայլմէ ումեքէ նիւթեալ իցեն յանգիտս դաշնակցին, որպէս ուսուցանեն Անքէզ և այլք: Յաւելուն Լեսլիոյ, Լայման, Սփոռեր և Ալիւա, զի եթէ իրքն իցեն դեռ ամբողջ, որպէս են իսկ՝ ի հարսնախօսութեան, և վրիպակն իցէ լեալ անյաղթելի ըստ խղճի մտաց, չէ պարտական պատրեալն կալ՝ ի դաշինն, և ոչ յառաջ քան զվճիռ ատենի: Իսկ ըստ առաջինն կարծեաց անվաւեր ըստ ինքեան համարեալ զդաշինսն, պատրօղն և գտանիցի ազատ՝ ի պարտականութենէ: — Հաւանականագոյն կարծիք, զոր հաստատեն Լուկոյ, Վասթրոփալ, Լեսլիոյ, Լայման և այլք, ոչ ազատ կացուցանեն զնա ըստ հանրական կանոնին, զի չէ արժան գտեալ օժանդակել ուժեք:

3. Հարսնախօսութիւն ստիպեալ յանիրաւ՝ ի ծանր և յարտաքին երկիւղէ իցէ ըստ ինքեան վաւեր: — Ասեք՝ ի բարոյականաց չհամարին զայն անվաւեր, բայց

ատիպելոյն յերկիւղէ օրէն համարին հրաժարել յայնմանէ, որպէս և զայլ ամենայն գաշանց ասացաք ՚ի գլ. ժ. 125։ Ա՛յլ հանրական և հաւանականագոյն կարծիք անվաւեր համարին զայն. զի հարանախօսութիւնն որպէս զհարսանիս է, որ ստիպեալ յերկիւղէ՝ ոչ ինչ զօրէ. զի որպէս ոչ ինչ պարտս ՚ի վերայ աճէ ամուսնութիւն այնպիսւոյ, ապա և ոչ հարանախօսութիւն՝ որ առ այն սահմանեալ է։ Ա՛ման որոյ և ոչ արգելս անվայելչութեան ՚ի ներքս աճէ հարանախօսութիւնն այնպիսւոյ։

Նայց երկիւղին պարտ է անէքա՛ զոլ. զի եթէ իրաւացի է երկիւղն՝ զօրաւինակ վաւեր են հարսանիք յարգար երկիւղէ յանձն առեալ, որպէս ՚ի ստորև այսր ասելոց եմք, նոյնպէս վաւեր է և հարանախօսութիւն։ Պարտ է երկիւղին և ծանր զոլ. զի եթէ թեթև ինչ իցէ երկիւղն, հանրական և հաւանականագոյն կարծիք վաւեր համարին զհարանախօսութիւն։ Օ՛ր որ դիւրաւ կարող է ՚ի բաց դնել զերկիւղ, և ոչ արհամարհէ զայն, համարի գործել կամակար։ Ա՛յսու ամենայնիւ եթէ արդարև ՚ի թեթև երկիւղէ անտի լեալ իցեն գաշինքն, անվաւեր համարին ըստ հաւանականագոյն կարծեաց՝ զոր հաստատեն Լ՛այման, Սանքէզ, Պանաչինա, Սալմատիկեանք, Լ՛աքրուա, Լ՛ուկոյ, Ա՛զպիոյ և Ա՛իկանտ ընդդէմ այլոց ոմանց։ Ո՞անաւանդ եթէ երկիւղն այն թեթև՝ ծանր ինչ թուեցեալ իցէ երկուցելոյն։ Նա՛ դարձեալ պարտ է երկիւղին զոլ առ պոռոսպ. զի եթէ ՚ի ներքուստ իցէ երկիւղն, որպէս թէ ոք առ երկիւղն տուժիւ խոստանայցէ, պարտական է խոստմանն։

4. Ա՛ասացաք թէ խոստումն հարանախօսութեան պարտի զոլ էրնոսպէ. զի եթէ միւն ևեթ խոստանայցէ, հարան կամ մեսայ, և միւսն ոչ, երկոքեան ևս զբաւանեն ազատք. և որ չխոստանայն, եթէ կամիցի իսկ յանձն առնուլ զպարտս, ոչ ըստ գաշինն է պարտականութիւնն՝ այլ ըստ պարզ խոստման, որ ըստ հաւանական կարծեաց՝ որպէս ասացաք ՚ի գլ. Ե. 127, և ըստ սրբոյ Ա՛գուինացւոյն, հաւատարմութեան ևեթ աճէ պարտս՝ որ չէ ինչ ծանր։

Ա՛յլ մնՙրթ իցէ զպարտս հարանախօսութեան ընդ

ծանը մեղօք յանձն առնուլ Աչմարիտ խոստմամբ, եթէ միւսն չխոստանայցէ։ — Ամենք ժխտեն. այլ Հանրապետն և Հաւանականապետն կարծիք մարթ համարին. զի և մարթ իսկ է խոստումն՝ առանց ինչ խոստմանն ընդունողին զայն, և ոչ ընդունելութիւն խոստմանն թերէ չինքեան զխոստումն, զի մարթ է ընդունել զպարտականութիւն ուրուք առանց պարտական զանձն կացուցանելոյ։ Բայց ազգ առնեն Սփորեր և Ղամպուրինի, զի հարմնախօսք սովորաբար չառնուն յանձն պարտականութիւն առանց համարելոյ և զմիւս կողմն պարտական։

Ե. Պատուիրք պիտի նշանակապես արտայայտեալ, զի լռութիւն եթէ չբաւէ՝ ի հարմնախօսութիւն. բայց եթէ հայրն կամ մայրն միասին կամ հարսին լո՛ւ լու ուստերն կամ դստեր խոստանայցէ՝ ի դիմաց նորա, և նա լռեսցէ։ Սակայն և այս յարտաքին եթէ առնի զօրէ. իսկ ըստ խղճի մտաց չէ նա պարտական, եթէ չկոչէ հաւանեալ՝ ի ներքուստ, որպէս առն Պոնաչինա, Ռոնքալեա, Ղոլման և Պնաբլեթոյ։ Օ՞նոյն է առնել եթէ՝ ի լռելն ոչ հաւանիցի՝ ի ներքուստ և ոչ չհաւանիցի. զի առ՝ ի ձգել յանձն զպարտականութիւն՝ խնդրի դրական հաւանութիւն։ Եւ ներքին իսկ հաւանութիւն՝ ի խոստանալ ծնողաց եթէ նորին զօրէ, և ոչ այլոց՝ թէ և աղգականք նորա իցեն կամ հոգաբարձուք. զի օրինք զծնողաց եթէ խոստումն ընդունին։ Իսկ եթէ չկոչէ անդ ուստրն կամ դուստր, և դիտացեալ զխոստումն ծնողացն՝ լռեսցէ եթէ և ոչ հակառակեսցի, Ամբէզ, Փոնցիոյ, Լաբռոպար, Պոսսիոյ, Ռոնքալեա և այլք ոչ բաւական համարին, այլ պահանջեն յայտնի ինչ նշան։ Հաւանական է կարծիք նոցա, այլ հաւանականագոյն հակառակն՝ զոր հաստատեն Պոնաչինա, Վաթրոփալ, Ռոնչինա, Սոթոյ, Սփորեր, Ալմատիկեանք և այլք, այսինքն զի բաւական է լռութիւն ուստերն կամ դստեր՝ որ չկոչէ անդ, և՝ ի դիտել զխոստումն ծնողացն՝ ոչ հակառակիցի. զոր և սուրբ Պգուինացին հաստատէ։ Բայց բարւոք ազգ առնեն Վաթրոփալ և Ռոնինքիոյ, զի չբաւէ դիտել զայն ուստերն կամ դստեր ըստ պատահման, այլ պարտ է զի ծնողքն ինքնին կամ՝ ի ձեռն այլոց ծանուսցեն զայն նոցա։

6. Լեթէ բանք կամ նշանք հարսնախօսութեանն լ-
ցեն երկբայելիք, որմէ կողման պարտ է նպաստել,
հարսնախօսութեանն թէ աղատութեան: — Ոմանք
պարտ համարին նպաստել հարսնախօսութեան, այլ
հաւանականագոյն կարծիք զհակառակն հաստատեն:

Վեսայ որ ասիցէ՝ Լինէ ոչ պէտք ածէց ի հարսնութիւն,
ածէց ևս ոչ պա՞տ, գտանիցի պարտական ի հարսնախօսու-
թիւն: — Հանրագոյն և ճշմարտագոյն կարծիք ոչ օրէն
համարին նման ածել զայլ ոք ի կին, այլ և ոչ պարտ՝
ածել զնա որում զբանն զայն իցէ ասացեալ: Սակայն
որպէս ազգ առնեն Հայրն Ալ Լուա, Վոնցիոյ և Վերէզ,
պարտական գտանեը՝ եթէ ի ներկայ եղանակ ասա-
ցեալ եր. Ոչ պա՞տ բայ ի բէն կամ՞ ընէ ի հարսն: Սակ յղել
և եթէ մատանի կամ այլ ինչ նշան հարսնախօսութեան
ոչ ածէ ինչ պարտս, եթէ սովորութիւն երկրին ոչ
տայցէ այնմ զայն նշանակութիւն, որպէս ուսուցանեն
բարոյականք, և կամ եթէ չկայցէ լեալ աստի խոստումն
և անտի ընդունելութիւն նշանին, և կամ եթէ ոչ
հայր կամ մայր փեսային հաւանութեամբ նորին տար-
ցի զնշանն առ հարսնացուն: Սակ որոց արգելք իցեն
ամուսնանալոյ ընդ միմեանս, և պայմանաւ անօրինմանն
Պապին արասցեն հարսնախօսութիւն, թէպէտ և չկայցէ
այն վաւեր, սակայն պարտ է նոցա մնալ ելից տնօրին-
մանն՝ եթէ չկայցէ այն գժուարին: Այսմանէ ասելոց
եմք ի Թիւ 15:

7. Ըստացաք որոց կարող եղեն ամուսանութեան. զի ոչ զօ-
րէ հարսնախօսութիւն այնոցիկ՝ որ չկեցեն հասեալ յօ-
րինաւոր տիս, կամ թէ իցէ ինչ խափան պսակելոյ նո-
ցա ընդ միմեանս: Գիտելի է զի չև յարբունս հասելոց
խոստումն ամուսանութեան ըստ օրինի՝ զօրէ ի հարսնա-
խօսութիւն. իսկ դաղտագողի դաշինք՝ ևս և հասելոց
յարբունս, այսինքն առանց ժողովրդապետի և վկայից,
ոչ ինչ զօրեն. զի ընդդէմ են սահմանադրութեան
տրիդենտեան ժողովոյ, և անվաւեր դաշնադրութիւն
չկարէ ածել պարտս: Այլ զայս իմա ուր ընկալեալ են
կանոնք բարեկարգութեան տրիդենտեան ժողովոյն. զի
ուր չկայցէ ընկալեալ, վաւեր է հարսնախօսութիւն ար-
տայայտեալ դէմ յանդիման բանիւք կամ նշանօք, որ
կեցեն որպէս առհաւատչեայ ամուսանութեան ընդ մի-

մեանս։ Պիտելի է զարձեալ զի խօսեցելոց ընդ իրեարս ոչ միայն անհամեստ շշնջափմունք, այլ և համեստա-
կանք մահուչափ մեղք են՝ վասն զգայական հեշտու-
թեան՝ ի կիր առեալք, որպէս նոցա ամենեցուն՝ որ չի-
ցեն ամուսինք՝ ըստ ասացելումն՝ ի գլ. Թ. 2։ Օ՛ի
խօսեցելոց չէ և այս իրաւունք են՝ ի վերոյ մարմնոյ իրե-
րաց. և որպէս չէ օրէն նոցա գալ առ միմեանս, նոյն-
պէս և ոչ շշնջափել զիրեարս՝ որ՝ ի նոյն բերի։ Օ՛այս
այսպէս ուսուցանեն Լեսլիոյ, Պոնաչինա, Մոնքալեա,
Պոնչինա, Սուարեզ, Վ Լիւա, Լ աբրուա, Մ ացցոթ-
թա և այլք բազումք։ Չգալիս ներելի է խօսեցելոյ
համբոյր ողջունի ըստ սովորութեան երկրին, և այն ոչ
յերկարաձգեալ և ոչ ողջագուրանօք։ Օ՛ի յարդիւնս
իրաց չէ ընդունելի տեսական վարդապետութիւն այնո-
ցիկ՝ որք շհամեստ շշնջափմունս օրէն համարին խօսե-
ցելոց, եթէ չզգայցեն անտի զգայական հեշտութիւն՝
այլ ախորժ և եթ. զի յոյժ դիւրաւ ախորժն այն ածէ
՝ի հեշտութիւն, և կամ գէթ՝ ի բաղձանս նորին։ Կը-
մանապէս ընդ ծանր մեղաւ արգելեալ է խօսեցելոյ չը-
հեշտանալ մտածութեամբ հանդերձելոց հարսանեացն,
որ չի և այս օրէն է նոցա ըստ ասացելոցս՝ ի գլ. Գ. 17։

ՅՕԴՈՒԱԾ Բ

ՅԱՂԱԳՍ ՊԱՐՏՈՒՑ ՀԱՐՍՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ

8. Ո՞րպէս և երբ պարտ է կատարել զհարսնախօսութիւն։
9. Եթէ ոք խոստանայ երկուց օրիորդաց։
10. Մ՚ոքի է որդւոյ առանց գիտութեան և հաւանութեան ծնողացն խոստանալ։
11. Որ հրաժարի յեա հարսնախօսութեան։ Որ ինչ պատիժ սահմանեալ հրաժարելոյն։
12. Հրիտակ պայմանաւ ամուսնանալոյ կամ չամուսնանալոյ։

8. Հարսնախօսութիւն ընդ ծանր մեղաւ պարտ՝ի վերոյ ածէ պսակի. և եթէ չիցէ սահմանեալ ժամա-
նակ, ստիպէ վաղագոյն ըստ Հիմարտագոյն կարծեաց՝
զոր հաստատեն Պոնցիոյ, Վ Ասլիրուփալ, Մոնքալեա,
Վ Ռոնինքիոյ, Վ Ռոնչինա, Մալմատիկեանք և այլք ընդ-
դէմ ոմանց ոլք ոչ համարին ստիպել հարսնախօսու-

թեան՝ ի չպահանջել զայն միւսոյ կողմանէ։ Այլ ամենայն իսկ պարտականութիւնք, որոց չկայ սահմանեալ ժամանակ, ստիպեն՝ ի վաղագոյն կատարումն ըստ օրինացն. "Որ ինչ պարտի ոք առանց սահմանեալ ժամանակի, վաղագոյն պարտի,,։ Այլ նոքին իսկ Աալմատիկեանք, Վասթրոփալ և այլք հաւանականաբար հաստատեն, զի եթէ միւսոյ կողմանէ չկայ ինչ դժուարին պահանջել զկատարանիս և լուծ, օրէն է համարել զի հաւանիցի ընդ յամեցումն։ Այս վասն խօսեցելոց. այլ վասն դատաւորի բարւոք ազդ առնեն աստուածբանք առ հասարակ, զի չէ պարտ նմա ստիպել զնոսա՝ ի հարսանիս՝ եթէ դուցէ ինչ վտանգ դայթակղութեան կամ վիճից, որպէս և սուրբ Ժողովն յայտ արար։ Ա. Լերկբայս՝ լաւագոյն համարին Պուսեմպայ, Վամպուրինի և Վոնչինա զգուշանալ՝ ի չար հետեւանաց այնպիսւոյ ամուսնութեան քան՝ ի միասուն խօսեցեալսն։

9. Եթէ ոք խօսիցի ընդ երկուս օրիորդս, և երկրորդն գիտակ իցէ հարսնախօսութեան նորա ընդ առաջնումն, պարտ է նմա պատկիլ ընդ առաջնումն։ Իսկ եթէ երկրորդն չգիտիցէ, և յուսով ամուսնութեան հաւանեալ իցէ լինել ընդ նմա, ոմանք յաստուածաբանից պարտ համարին պատկիլ նմա ընդ երկրորդումն։ Այլ հանրագոյն և հաւանականագոյն կարծիք այսու ամենայնիւ պարտական համարին զնա առաջնումն, զի անվաւեր է ամենայն խոստումն առ երկրորդն արարեալ ընդդէմ օրինացս, վասն որոյ և ոչ զօրէ՝ թէ և երդմամբ իցէ հաստատեալ, զի երդումն ոչ է կապանք անիրաւութեան։ Այլ վասն ընդ երկրորդումն պոռնկութեան նորա պարտ իցէ առաջնոյն հրաժարել յիւրաւանց իւրոց վասն արդարութեան։ — Այլք պարտ համարին. բայց Հոլզման, Գնաքլեթոյ, Աուերթիւր և Փիքլեր չհամարին նմա զայն պարտ, զի երկրորդն ինքն իւրում միասուն է պատճառ։

10. Հարսնախօսութիւն առանց իսկ գիտութեան ծնողաց լեալ՝ վաւեր է աներկբայապէս ըստ յայտարարութեան տրիդենտեան ժողովոյ. այլ խնդիրն այն է, թէ մեղանչէ՞ որդի հարսնածելով առանց հաւանութեան ծնողացն։ — Վառեակ կարծիք են զայսմանէ.

առաջինն՝ զի ծանր մեղանչէ որ առանց գիտութեան ծնողացն և առանց հաւանութեան նոցա առնէ հարսնախօսութիւն, վասն ծանր վնասուց և գայթակղութեանց՝ որ անտի ծնանին։ Այս կարծիս հաստատեն Վոնցիոյ, Սիլուիոյ, Նաւարրոյ, Մոլինա, Ռոնչինա, Վեթրոքոր, և Ռոնքալեա։ Արկրոդ կարծիք թէպէտ և՛ ծանր պարտս համարի որդւոյ գիտութեամբ ծնողացն առնել զհարսնախօսութիւն, այլ ոչ պարտականս համարի զնոսա ըստ խորհրդոյ ծնողացն առնելոյ. զի որպէս սուրբ Ագուստինացին ասէ, ոչ են պարտական որդիք հնազանդել ծնողաց յիրս ամուսնութեան, առ որ պահանջի լիուլի ազատութիւն։ Այս կարծիս ունին Ասդուէդ, Սանքեզ, Պարպոզա, Լայման, Պոնաչինա, Ալբա և այլք։ Արկրոդ կարծիք չհամարի՛ ծանր ինչ մեղս որդւոյ, ուր չկայցեն նախատինք ընտանեացն և իրաւացի պատճառ դժկամակութեան ծնողացն, առանց հաւանութեան և գիտութեան իսկ նոցա առնել հարսնախօսութիւն. զի ոչ գոլով պարտական հնազանդել խորհրդոյ նոցա, և ոչ ընդ ծանր պարտեօք զբռտանի պարտական հարցանել զնոսա։ Այսպէս ուսուցանեն Վասկէզ, Պոսկոյ, Հոլզման, Սալմանտիկեանք, Փիլլեր, Լեհի, Ռենցի, Ալ իքթոր, Լնրիկուէզ, Սփորեր, Աբերսա և այլք։ Իսկ Ջորջոզ կարծիք պրեմէ հանգոյն երրորդին զանազանէ. եթէ ծնօղք իրաւացի պատճառաւ արգելուն զհարսնախօսութիւն՝ որ՛ի նախատինս և՛ ի գայթակղութիւն ընտանեացն լինէ, յայնժամ ծանր մեղք են որդւոյ ստուգապէս ընել ծնողացն. վասն որոյ և ոչ պարտական գտանի զայն լինիլ՝ թէպէտ և երդմամբ զայն հաստատեալ լինի, թէպէտ և զպատիւ իսկ հարսնացուին բարձեալ. շատ է զի օժտեսցէ զնա, եթէ կարէ. այլ չէ պարտական վասն նորա՛ի գործ մեղանչական։ Իսկ եթէ ծնօղք առանց իրաւացի պատճառի արգելուն զհարսնախօսութիւն, չէ ինչ պարտ որդւոյ հնազանդել նոցա։ Այսպէս ուսուցանեն Լայման, Տելկնէք և Աբերսա։ Բայց ամենեքին իսկ անբաւիւք առնեն զանհնազանդութիւն որդւոյ, նախ՝ եթէ հայր նորա անիրաւաբար արգելուցու նմա ջամուսնանալ, և նա՛ի վտանգի անժուժկալութեան կայցէ։ Արկրոդ՝ եթէ անիրաւաբար բռնանայցեն

ծնօղք ի վերայ նորա : Երրորդ՝ եթէ հայրն կայցէ ի տար աշխարհ, և որդին համարիցի հաւանել նմա ընդ ամուսնութիւն իւր : Չորրորդ՝ եթէ հայրն արդելցու զպատշաճ ամուսնութիւն, զի մեղանչէ նա յայնժամ, և ոչ է պարտական որդին հնազանդել նմա : Հինգերորդ՝ եթէ կամիցի հայրն հարկանացուցանել որդւոյ իւրում զաղջիկ հիւանդ կամ վատազգի կամ չարաբարոյ :

Այլ խնդիր է թէ պարտ իցէ որդւոյ հնազանդել հօր իւրում՝ ի հրամայել նորա ամուսնանալ. կամ ածել կնութեան՝ զոր ինքն ոչ կամի : — Յետեն աստուածաբանք առ հասարակ, ի բաց առեալ զհարկ բառնալոյ այնուիկ զերջնամութիւն մեծ կամ զծանր կարօտութիւն ծնօղացն. այլ և զայս պարտ է իմանալ եթէ որդին չկամիցի կրօնաւորիլ կամ մնանել՝ ի կարգ եկեղեցական, և եթէ չունիցի անախորժութիւն ընդ աղջկանն կամ գարշելիս գժուարայաղթելի. զի ոչ է օրէնն ստիպել զոք՝ ի մշտնջենաւոր կենակցութիւն ընդ այնպիսւոյն կնոջ :

11. Յորմէ, որ անխրատաբար հրաժարէ յետ կատարելոյ զհարանախօսութիւն, կորուսանէ զշրջաս հարսանեկանս, և պարտի հատուցանել զմնուրհակս հանդերձ ամենայն տուժիւք՝ զոր հրաժարելովքն իւրով հատուցանէ միւսում կողմանն : Այլ ընդդիմ օրինաց է և անվաւեր տուգանս սահմանել հրաժարողին, և որ հրաժարէն՝ ոչ է պարտական հատուցանելոյ զտուգանսն, թէպէտ և երդմամբ յանձն առեալ իցէ : Այլ եթէ երբեք հատուցեալ իցէ զտուգանսն, ըստ հաւանականագոյն կարծեաց պարտ է ընդունողին յետս դարձուցանել զայն, զի չէն նորա իրաւունք ունելոյ զայն. քանզի սահմանեն օրէնք այնպիսւոյ խոսպանն երկուսպեռ ինչ չլսելինչ : Այսու ամենայնիւ պարտ է իմանալ զայս, եթէ տուգանքն յինքեանց կամ՝ ի ծնողաց իւրեանց կամ յազգականաց կամ՝ ի բարեկամաց իցեն սահմանեալ, որով կապի ազատութիւն ամուսնութեան, այլ ոչ՝ եթէ յօտարաց. և կամ եթէ անխտիր սահմանեալ իցեն՝ ի վերայ յիրաւի և յանիրաւի հրաժարման : Օ՛ի Թէպէտ և կէսք յաստուածաբանից հաւանականագոյն ազատ կացուցանեն՝ ի տուգանաց և զտարապարտ

հրաժարեալն՝ վասն ամբողջ պահելոյ զազատութիւն ամուսնութեան, այլ հաւանականագոյն կարծիք զհակառակն հաստատեն։ Օ՛ի խոստումն այն տուգանաց ոչ՛ի քնականն և ոչ՛ի դրական օրինաց է արգելեալ. ոչ՛ի քնականն, զի արժանի իսկ է տուգանաց որ անիրաւաբար հրաժարէ՛ի խոստմանէն. իսկ ազատութիւն ամուսնութեան՝ ոչ անիրաւն խնդրի, ապա թէ ոչ՝ էր մարթ դատաւորի ստիպել պատժովք զնաօսեցեալս յամուսնութիւն։ Եւ ոչ՛ի դրական օրինաց տուգանքն այն է արգելեալ. զի մանաւանդ յօրինաց անտի սահմանեալ է պատիժ հրաժարելոց անիրաւաբար. որով՛ի միտ առնուլ է, զի վերոյիշեալ օրէնքն վասն իրաւամբք հրաժարելոց սահմանեալ է, զի չէ արժան նոցա կրել տուգանս։

12. Օրէն էր՞ն իցէ ժառանգել օրիորդի զհրիտակ թողեալ նմա պայմանաւ ամուսնանալոյ ընդ այսմ կամ ընդ այնմ պատանւոյ, եթէ նա ամուսնանայցէ ընդ այլում։ — Այսա ինքեան չէ օրէն. այլ օրէն է, եթէ հայր նորա սպառնասցի զրկել զնա յօրինաւոր ժառանգութենէ, կամ եթէ անպատշաճ իցէ նմա ամուսնութիւնն այն, զի յայնժամ չէ ընդունելի պայմանն այն, որպէս հաստատեն աստուածաբանք ըստ վճռոյ Նոմայի բարձրագոյն ատենին Հռոմայ։ Այլ եթէ պատանին իցէ արժանի, իսկ հայր օրիորդին այլում զնա հարանացուցանէ, ոչ ևս անկ է նմա հրիտակն ըստ աստուածաբանից՝ որք օրինաւոր համարին դատեր առանց իսկ հաւանութեան ծնողացն ամուսնանալ զպատշաճ ամուսնութիւն։ Իսկ որք ոչն օրէն համարին դատեր ընդդէմ կամաց ծնողացն ընտրել իւր ամուսին, ոչ օրէն համարին և զրկել զնա՛ի հրիտակէ անտի վասն չկատարելոյ նորա ամուսնանալ ըստ օրինի ընդ պայմանեալ պատանւոյն։ Իսկ եթէ պայմանն հրիտակին իցէ չամուսնանալ ամենևին, օրէն է օրիորդի և յամուսնանալն ժառանգել զհրիտակն. այլ ոչ և այլոյ կինոջ։

ՅՕԴՈՒԱԾ Գ.

ՑԱՂԱԳՈՒ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՐՍՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ

13. Լուծանի նախ հարսանեօք ընդ այլում. այլ արձակի յանցաւորն ևս՝ ի պարտուց:
14. Երկրորդ՝ հաւանութեամբ միմեանց, թէպէտ և երդմամբ իցէ հաստատեալ. իսկ ինչ եթէ չև ևս յարբունս իցեն հասեալ:
15. Երրորդ՝ եթէ արդեօք՝ ի վերայ գայցեն. պարտ իցէ յայնժամ խնդրել նոցա տնօրինութիւն:
16. Անհաւասարութեան պայմանի օրէն իցէ լուծանել զհարսնախօսութիւն:
17. Անհաւանութեան ծնողաց օրէն իցէ լուծանել զայն:
18. Չորրորդ՝ վասն եղեռնագործութեան. պոռնկութիւն ևս համարիցի յեղեռնագործութիւն, մանաւանդ եթէ յաւելցի՝ ի վերայ այլ յարութիւն:
19. Հինգերորդ՝ յեղաշրջութեամբ հանգամանաց:
20. Տարագնացութեան օրէն իցէ լուծանել զայն:
21. Վեցերորդ՝ լռութիւն սահմանեալ ժամանակի լուծանիցէ զայն:
22, 23. Ութերորդ՝ ուխտ կրօնաւորական կամ սուրբ կարգ լուծանիցէ զնն զայն:
24. Մեղանչէ որ ընդունիցի զսուրբ կարգ:
25. Ուխտ ողջախոհութեան կամ ընդունելոյ զսուրբ կարգ լուծանիցէ զնն զայն:
26. Կարեւոր իցէ առ այս իշխանութիւն դատաւորի:
27. Զինչ հաւաստիք խնդրին առ այս:

13. Լուծանի հարսնախօսութիւն նախ՝ վասն հարսանեօք միոյն՝ ի խօսեցելոց: Ընդերկբայելի է այս վասն անմեղին՝ ի նոցանէ. այլ խնդիր է վասն յանցաւորին՝ թէ լուծանի և նա հարսանեօքն: — Ակն եաստուածաբանից համարին լուծեալ. այլ հաւանականագոյն կարծիք առաւելագունից չհամարին զնա լուծեալ, զի ոչ է մարթ ցուցանել զլուծումն նորա ոչ՝ ի դրական և ոչ՝ ի բնական օրինաց. քանզի և հաստատակաց միտք վկայեն զի խափանի եւեթ այն հարսանեօքն, այլ ոչ լուծանի:

14. Երկրորդ՝ հաւանութեամբ երկուստեք, թէպէտ և երդմամբ հաստատեալ իցէ հարսնախօսութիւնն. բայց միայն առանց իրաւացի ինչ պատճառի կամել լուծանել զայն չէ առանց մեղաց: Սակայն ասուածաբանք՝ ի ներելի մեղս համարին զայն, թէպէտ և յանուն Աստուծոյ երդուեալ իցեն երկուստեք. զի յա-

մենայն իսկ երդմանն՝ որ ՚ի նպաստ այլոց ուրուք առնիցէ՝ համարի պայմանս այս, եթէ ոչ արձակեսցի երդմանէն: Այս վասն հասելոց յարգուանս. իսկ չհասելոց ոչ լուծանի հարկանախօսութիւնն երկուստեք հաւանութեամբ՝ եւ հասեալ նոցա յարգուանս: Այլ ընդ հասանելն օրէն է նոցա հրաժարել՝ իսկ եւ իսկ յայտ առնելովք զհրաժեշտն, այսինքն յերիս աւուր՝ սկսեալ յօրէ գիտելոց նոցա զաղատութիւն իւրեանց առ ՚ի հրաժարել: Ա՛ն օրոյ եթէ վեճասացուին եւ հասեալ յարգուանս՝ յայտ արարեալ իցէ զհրաժեշտ իւր, իմա ըստ հաւանականապոյն կարծեաց արտայայտեալ բանիւ, ընդ հասանել նորա յարգուանս՝ լուծանի հարկանախօսութիւն, թէպէտ եւ երդմամբ իցէ հաստատեալ. զի երդումն զհետ երթայ օրինաց դաշինն՝ այսինքն հարկանախօսութեան՝ որ լուծանելի է ՚ի նոսա, որ չեն իցեն յարգուանս հասեալ: Ո՞չ այս այսպէս ուսուցանեն հաւանականաբար բազումք յաստուածաբանից ընդդէմ Պոնտացւոյ, Անքէզի, Ռոնքալեայ եւ այլոց: Այլ գիտելի է զի որք մերձ իցեն հասանելոց յարգուանս, ընդ հասեալս համարին:

15. Երրորդ՝ եթէ արգելք ինչ ՚ի վերայ գայցեն: Այլ պարտ է զանազանել զարգելս. եթէ արգելքն խափանիչք եւեթ իցեն, հանրագոյն եւ հաւանականագոյն կարծիք չհամարին լուծեալ զհարկանախօսութիւն ՚ի բաց առեալ զուխտ կրօնաւորելոյ, եւ հաւանականաբար զոզջախոհութեանն եւս՝ որպէս ասացաւ ՚ի թիւ 24: Իսկ եթէ արգելքն իցեն լուծիչք, լուծանի հարկանախօսութիւն վասն անմեղին՝ եթէ համբաւ եւեթ այսպիսեաց արգելոց լու լեալ իցէ առ բազմագոյնս ՚ի գրացեաց: Այլ ոչ լուծանի վասն յանցաւորին ըստ հանրագոյն եւ ըստ հաւանականագոյն կարծեաց, զի յանցանաց չէ արժան օժանդակել ուղիղք: Ա՛ն օրոյ վեճասացուին, որ ինքն լեալ իցէ պատճառ արգելմանն, պարտ է ինդրել տնօրինութիւն՝ եթէ դիւրաւ եւ փութով մարթ իցէ ընդունել. զի պարտ է նմա ՚ի կիր առնուլ զկարեւորս ՚ի կատարումն դաշինն: Այլ եթէ ծանր ծախուց եւ վաստակոց եւ ժամանակի պէտք իցեն, ըստ հաւանականագոյն կարծեաց ազատ է ՚ի պարտուց անտի, եթէ չիցէ նորա բարձեալ զկուսու-

Թիւն և զպատիւ հարսնացուին : Իսկ եթէ արդեօք լուծիչք կանխագոյն քան զհարսնախօսութիւնն իցեն, և պայմանաւ անօրինման հարսնախօսութիւնն լեալ, թէպէտ և չիցէ սա վաւեր, սակայն պարտ է խօսեցեալ ոյժ մնալ երկոց պայմանին. վասն որոյ անվաւեր է այլ հարսնախօսութիւն նախ քան զելս անօրինման, և՛ի յաջողել անօրինմանն՝ վաւերանայ ինքնին հարսնախօսութիւնն առանց նորոգ հաւանութեան, յարատեւելով առաջնոյն : Տես և՛ ի տողս և՛ ի Թիւ 34 :

16· Օրէն իցէ վասն ոչ գուշնաքեայ ինչ անհաւասարութեան պայմանի խօսեցեալոյն լուծանել զհարսնախօսութիւն : — Եթէ յանդէպս անհաւասարութեանն այնորիկ լեալ իցէ հարսնախօսութիւնն, անվաւեր է անեղկբայապէս. իսկ եթէ գիտութեամբ, վաւեր է և անլուծանելի. եթէ միայն չիցէ՛ի ծանր նախատինս ընտանեացն. որպէս եթէ՛ի տուն ազնուական ածել հարսն զդուստր շինականի կամ կրպակաւորի : Օրէնքն է ասել և զհարսնախօսութենէ Հոխ վիճայացուի ընդ աղքատ օրիորդի, եթէ չիցէ օրիորդին փոխանակ Հոխութեան այլ ինչ, որպէս ազնուականութիւն, լաւութիւն, խոհականութիւն կամ գեղեցկութիւն, և եթէ ոչ լիցի նմա՛ի նախատինս լուծումն հարսնախօսութեանն : Ամանք՛ի բարոյականաց բաւական համարիլն՛ի լուծումն՝ և զվտանգ տուժից կամ ատելութեան ընտանեաց. այլ զայս պարտ է իմանալ զծանուցց տուժից և ատելութեանց՛ի միջ յոգունց ընտանեաց՛ի սակաւաւոր քաղաքի, որով մարթ իցէ համարել զայն՛ի վերնաս հասարակաց :

17· Օրէն իցէ վասն անհաւանութեան ծնողաց լուծանել զհարսնախօսութիւն : — Եթէ ծնօղք յանիրաւի չհաւանին, չէ օրէն որդւոյ հրաժարել՛ի պակիւ. զի ըստ կանոնական իրաւանց ոչ է կարևոր հաւանութիւն ծնողաց՛ի վաւերականութիւն պսակի, այլ պատշաճ միայն : Իսկ եթէ իրաւամբք չհաւանիցին ծնօղք, որպէս եթէ՛ի նախատինս կամ՛ի գայթակղութիւն ընտանեաց իցէ ամուսնութիւնն, կամ թէ իցէ վտանգ անժառանգելոյ հօր զորդի իւր, և վտանգն այն յետ հարսնախօսութեանն գայցէ՛ի յայտ, օրէն է լուծանել զայն :

18. Ջորդոյդ՝ լուծանի հարսնախօսութիւն եղեւ-նագործութեամբ, որպէս եթէ մի՛ ի խօսեցելոց սպան-ցէ զոք, կամ գողութիւն ծանր գործեսցէ, կամ անկցի՛ ի մեղսութիւն, և կամ այլ ինչ յանցանս յանցանիցէ՛ ի ծանր ինսա և՛ ի վատահամբաւութիւն։ Իսկ եթէ զպոռնկութենէ իցէն քանք, պարտ է խափր առնել ընդ այր և ընդ կին. զի եթէ հարսնացուն պոռնկիցի, ազատ է այրն աներկբայապէս՝ թէպէտ և կինն իցէ բռնաբա-րեալ։ Ո՞այս այսպէս ուսուցանեն բարոյականք առ հա-սարակ. և օրէնք իսկ ներեն արձակել՛ ի բաց զկին առ-և անկեալ, և որոյ թողացուցեալ իցէ շօշափել զինքն անհամեստաբար։ Իսկ՛ ի պոռնկել փեսայացուին և՝ հանրագոյն և հաւանականագոյն կարծիք օրէն համա-րին հրաժարել հարսնացուին. և և եթէ յառաջ քան զհարսնախօսութիւնն իցէ պոռնկեալ և լեալ իսկ նմա որդի, կամ ընդ բազում անկեալ և ունակացեալ՛ ի նոյն ախտ, այլ հարսնացուին չիցէ գիտացեալ զայն յա-ռաջագոյն։

Խնդիր է առ բարոյականս՝ թէ նմին չարութիւն իցէ պոռնկութեան խօսեցելոց, եթէ այլատեսակ ինչ։ — Երեսակ կարծիք են զայսմանէ, երեքին իսկ հաւանա-կանք։ Վասիլոսիոս, Հայմոն, Աւգմատիկեանք և այլք համարին զայն այլ ինչ ազգ չարութեան երկաքան-չիւրոյն և, վասն անիրաւութեան՝ զոր առնեն մի-մեանց, համարելով ունել նոցա անդստին իրաւունս ինչ՛ ի վերայ մարմնոյ իրերաց։ Անքէզ և Պոնաւէնտա զհարսնացուին և եթէ պոռնկութիւն համարին այլատե-սակ։ Իսկ այլք ոչ զհարսնացուին և ոչ զփեսայացուին պոռնկութիւն այլատեսակ ինչ համարին, վասն չև և ունելոյ նոցա իրաւունս՛ ի վերայ մարմնոյ իրերաց։ Իսկ եթէ պատ իցէ հարսնացուն, որ համարիցի կոյս և չի-ցէ, յայտնել զայն փեսայացուին՝ ասասցուք աստ՛ ի տարև։

19. Հինգերորդ՝ լուծանի հարսնախօսութիւն՛ ի չե-զաշրջել հանգամանաց. որպէս եթէ միոյն կամ միւսոյ՛ ի խօսեցելոց՛ ի յայտ գայցէ դժնդակութիւն բարուց՛ ի վատնգ մեծ ատելութեան նոցա ընդ միմեանս կամ ընդ ընտանիս։ Կարձեալ եթէ յայտնեսցին պարտք ծա-նունք փեսայացուին, և հարսնացուն իցէ անօժիտ։ Ո-

թէ մի՛ ի խօսեցեալոցն քօրօտեսցի կամ խեզասցի կամ այլով իւիք ախտիւ անպիտան՛ ի տեսչութիւն ընտանեաց գտանիցի, որպէս Յաստատեն Անքեզ, Վրանչինա, Լայման, Պոնաչինա և այլք ընդ սրբոյ Աղուինայոյն. որք և զկատարած իսկ խոհական գայսպիսւոյ վտանգի բաւական համարին։ Եւ եթէ միոյն կամ միւսոյ իցէ ինչ ախտ՛ ի ծածուկ՝ որ զնաւասակար միւսումն զհարսանիս գործիցէ, պարտ է նմա յայտնել զայն յառաջ քան զհարսնախօսութիւն։ Ապեմ իսկ ՚ևաոակար, զի եթէ նուազ ևեթ ցանկալի գործեսցէ զայն, որպէս եթէ չիցէ հարսնացուն Ջոխ կամ անխորձ, շատ է զի մի՛ զնա կառավին հաստատեսցէ խաբէութեամբ, զի ծածկել զթերութիւն ոչ է նենգ, և ոչ պարտական է որ զնա խաւինս իւր յայտնելոյ՝ եթէ չիցէ այն հակառակ իրաւանց այլոց։ Ոչ այս այսպէս ուսուցանեն Անքեզ, Փոնցինոյ, Վասիլրոսիալ, Ոնքալեա, Լաքոպար, Ալմանաիկեանք և այլք գրեթէ առ հասարակ ընդդէմ Ջօրն Վրանչինայ։

Բայց առ՛ի գաւել թէ որ՛ ի հանգամանաց ասելի բաւական իցէ լուծանելոյ զհարսնախօսութիւն, երկու կանոնք են։ Ա՛ի՝ զի եթէ ծանօթ էին այն հանգամանք հարսնացուին կամ փեսայացուի, չհաւանէը ընդ հարսնախօսութիւնն. վասն որոյ և մնայ ազատ՛ ի խոստմանէն, զոր համարի արարեալ նորա պայմանաւ՝ եթէ չիցէ թերութիւնն այն։ Ա՛իւս և կանոն՝ եթէ յետ հարսնախօսութեանն՛ ի վերայ հասանէին այն հանգամանք, բաւական լինէին լուծանելոյ զայն։ Վասն որոյ եթէ տգիտութիւն այնր հանգամանաց չիցէ լեալ պատճառ հարսնախօսութեան, որպէս զի եթէ ծանօթ ևս էր այն՝ սակայն չլինէր խափան հարսնախօսութեանն, յայնժամ չքաւէ և՛ ի լուծումն հարսնախօսութեանն։

Ապա եթէ միւսմ՛ ի խօսեցելոց անկցի յանկարծ ժառանգութիւն մեծ, օրէ՞ն է նմա լուծանել զհարսնախօսութիւն։ — Ջանրագոյն կարծիք ոչ օրէն համարին, վասն ոչ փոփոխելոյ այնուիկ հանգամանաց միւսոյ կողման։ Բայց եթէ ժառանգութեամբն այնուիկ գտցէ փեսայացուն այլ օրիորդ աղնուականագոյն յայժ՛ ի հարսնութիւն, թէպէտ և ոչ աղնուականաբար գործէ թողուլ զնա, այլ ոչ է դիւրին դատապարտել զգործ

նորա՝ ի մեզս. զի կոտուստ շահու մեծի, հաւասար է ծանր միասուն՝ որպէս ասացաք՝ ի գլ. Զ. 12։

20. Ա եթերօրդ՝ լուծանի հարանախօսութիւն վասն տարաբնացութեան միոյ՝ ի խօսելոյ. վասն որոյ՝ ի տարաբնակ լինել վեճայայութիւն, կամ՝ ի տարաբնաց իսկ լինել յաշխարհ հեռաւոր՝ թէպէտ և առ ժամանակ մի, ազատ է հարանացուն, և օրէն է նմա լինել ուր կամի, այսպէս սահմանեալ յօրինաց։ Իսկ եթէ՝ ի մօտաւոր ուրեք երթիցէ առ՝ ի գառնալ, պարտ է յայնժամ հարանացուին տպաստել գարձի նորա կամ խնդրել զդարձ նորա. և եթէ յամեսցէ, սահմանել նմա ժամանակ ըստ խորհրդոյ խոհական անձին կամ դատաւորի, եթէ չիցէ սահմանեալ՝ ի հարանախօսութեան. զի եթէ սահմանեալ իցէ յառաջագոյն, ինքնին իսկ լուծանի հարանախօսութիւնն՝ որպէս՝ ի յաջորդ Թուի աստ ասելոց եմք։

21. Ա օթներորդ՝ լուծանի հարանախօսութիւն՝ ի ընդ սահմանեալ ժամանակին, իմա եթէ պայմանաւ լուծման սահմանեալ իցէ ժամանակն. և յայնժամ միւսն որ անմեղն է, գտանի ազատ, թէպէտ և երդմամբ հաստատեալ իցէ հարանախօսութիւնն, որպէս առաւաճաբանք առ հասարակ ուսուցանեն ընդ սուրբ Գրոնացոյն։ Եւ եթէ պատճառաւ իսկ միւսոյն, այլ առանց յանցանաց նորա անցեալ իցէ ժամանակն, զօրէ դարձեալ՝ ի լուծումն ըստ հանրագոյն և ըստ հաւանականագոյն կարծեաց։ Իսկ՝ ի ընդ ժամանակին գտանիլ ազատ և որ յանցանօքն յամէ։ — Հանրագոյն և հաւանականագոյն կարծիք չառնեն զնա ազատ, զի չէ արժան յանցանաց օժանդակել յանցաւորին։ Այլ եթէ երկուստեք լեալ իցեն պատճառք յամեցմանն, ի ընդ ժամանակին երկոքին ևս գտանին ազատ։

22. Ա ւթներորդ՝ լուծանի հարանախօսութիւն և ուխտիւ կրօնաւորութեան կամ ընդունելութեամբ սուրբ կարգի, թէպէտ և երդմամբ իցէ այն հաստատեալ։ Այլ՝ ի մտանել եւեթ՝ ի կրօն՝ գտանիցի ազատ եթէ մտեալն և եթէ միւսն։ — Հանրագոյն և հաւանականագոյն կարծիք զմիւսն եւեթ ազատ կացուցանեն. զի մտեալն՝ ի կրօն թէպէտ համարի հրաժարեալ կենաւանց իւրոց, այլ չէ ազատ. զի մտանելովն եւեթ՝ ի կրօն չէ ևս անընդունակ է ամուսնութեան։ Իսկ որք

ջերկաքանչիւրն ևս ազատ կացուցանեն, չէ հաւանական կարծիք նոցա։

23. Այլեւ երդմամբ իցէ հաստատեալ հարսնախօսութիւնն, օրէնն իցէ առանց կատարելոյ զերդումն մեռանել՝ի կրօն։ — Ոմանք, Կաւարրոյ և այլք ոմանք պարտ համարին նմա պահել նախ, և չէ կատարեալ զամուսնութիւն՝ մեռանել՝ի կրօն։ Այլ հանրական և ողջամիտ վարդապետութիւն օրէն համարի նմա կրօնաւորել, զի յամենայն երդմունս է իմանալ զպայմանն, եթէ ոչ կատարելագոյն ինչ քան զերդուեալն լինի առնել։ Այլ միայն ուր կարևոր իցէ պահ առ՝ի խափանել զպայթակղութիւն և զնախատինս հարսնացուին, և օրինաւոր կացուցանել զորդին ոչ ըստ օրինի յղացեալ, յայնժամ պարտ է նմա պահել, և յայնժամ ոչ ևս օրէն է նմա թողուլ զպահն և կրօնաւորիլ։ Եւ այս յայտ անտի է՝ զոր ասացաք՝ի գլ. ժ. 97. զի եթէ իցէ ուրուք ուխտ ողջախոհութեան կամ կրօնաւորելոյ, և փորձիցէ զկոյս խոստմամբ ամուսնութեան, պարտ է նմա խնդրել զնօրինութիւն ուխտին առ՝ի պահել ընդ նմա։ Իսկ եթէ յետ հարսնախօսութեանն ուխտեալ իցէ մեռանել՝ի կրօն և ոչ փորձեալ զհարսնացուն, պարտական է ուխտին, և ցորչափ կայ՝ի կրօնի՝ ազատ է՝ի հարսնախօսութեան պարտուցն։ Այլ եթէ ուխտեալ իսկ իցէ ուխտել և՛ի կրօնի անդ, յայնժամ երկաքանչիւր և ազատ գտանին. զի որ ուխտն զկրօնաւորութիւն՝ անընդունակ է պահել։

24. Որ առանց զիտութեան կամ հաւանութեան խօսեցելոյն առնու զսուրբ կարգ, մեղանչէ։ — Որ ձեռնադրին՝ արձակի՝ի հարսնախօսութենէ աներկբայապէս. այլ խնդիր այն է՝ եթէ մեղիցէ մահու չափ։ Ոմանք համարին մեղանչել նմա՝ վասն կրօնաւորելոյ և եթէ վարկանելոյ զհրաման կանոնական օրինաց հրաժարելոյ՝ի հարսնախօսութենէ, և ոչ վասն եկեղեցական կարգի։ Այլ յայժ հաւանական է հակառակն վարդապետութիւն՝ զոր հաստատեն Փռնգիոյ, Կաւարրոյ, Վռանչնա, Պռնաչինա, ԿուԹԹիեր, ՈմԹոյ, ՍիլուեսԹրոյ, Սալմանտիկեանք, Լաբոպար, Լնրիկուեզ և այլք վասն ահա ասացեալ պատճառաց, զի՝ի խոստմունս է միշտ իմանալ զպայման տեղի տալոյ տիրահրաւէր կոչման՝ի

կատարելագոյն կարգ : Իսկ եթէ զփոքր աստիճանս եւեթ ընկալցի , չէ օրէն հարսնացուին հրաժարել՝ի նըմանէ ըստ հանրագոյն եւ ձշմարտագոյն կարծեաց , զի ոչ խափանեն այնոքիկ զամուսնութիւն , եւ են իսկ փոքր աստիճանաւորք կանամբիք :

25. Ուխտ ողջախոհութեան եւ եկեղեցական կարգի ինչ վաւերական խօսեցեալ , եւ արձակիցէ՞ի հարսնախօսութենէ զուխտեալն : — Ըստեմ իսկ զի՝ այո , զի միւսն գտանի արձակեալ աներկբայապէս . ասեմ դարձեալ խօսեցեալ , զի եթէ յառաջ քան զհարսնախօսութիւնն ինչ ուխտեալ՝ հարսնախօսութիւնն՝ի վերայ եկեալ ընդդէմ օրինաց է եւ անվաւեր . վասն որոյ խընդիր այն է , եթէ յետ հարսնախօսութեանն ինչ ուխտեալ : Կէսք համարին անվաւեր զուխտն՝ի միտս այլոյ ուխտեալ . այլ հանրագոյն կարծիք վաւեր համարին զայն , զի հարսնախօսութիւն պայմանաւ է միշտ՝ եթէ ոչ կատարելագոյն կենաց լինի նոցա կոչումն : Օգայս այսպէս յայտ առնէ եւ Ժողովն աւանդապահ տրիդենտեան սահմանադրութեանց՝ի միում ուրեք՝ի վձռոցն : Յաւելուն Պոնաչինա եւ Սանքէզ, զի ուխտեալն ազատ գտանի՝ի հարսնախօսութենէ՝ թէպէտ եւ յետոյ տնօրինեսցի ևս յուխտէն , որպէս զի օրէնն է նման պսակիլ ընդ այլում . եթէ զի ուխտիւն այնուիկ քառնայ՝ի սպառ պարտականութիւն նորա , եւ ոչ եթէ խափանի , վասն որոյ եւ ոչ տնօրինմամբն դառնայ անդրէն : Այս կարծիք չէ բոլորովին անհաւանական , այլ հաւանականագոյն Թոմի հակառակին՝ զոր հաստատեն Ախպելլիոյ , Ֆերրա եւ Սալմատիկեանք . զի առաջինքն թէպէտ եւ ասեն , այլ ոչ ցուցանեն թէ ուխտիւն այնուիկ քարձի՝ի սպառ պարտականութիւն նորա . ուր՝ի դէպ ևս է ասել զի մեծագունի պարտականութեան տեղի տայ փոքրագոյնն՝ խափանեալ ցորչափ տեւէ այն , այլ՝ի դադարել նորին՝ զօրէ անխափան :

26. Ո՞ւ՝ի լուծանել զհարսնախօսութիւն խնդրի միշտ իշխանութիւն դատաւորի : — Եթէ որպէս հարսնախօսութիւնն նոյնպէս և պատճառքն իցեն յայտնի և ստոյգ , չեն ինչ պէտք իշխանութեան դատաւորի . նմանապէս եթէ հարսնախօսութիւնն և պատճառքն իցեն

անյայտք ։ Իսկ ուր պատճառքն չիցեն ստոյգ ըստ օրինաց կամ ըստ արդեանց, խնդրի իշխանութիւն դատաւորի ըստ աստուածաբանից գրեթէ առ հասարակ ։ Իսկ ուր յայտնի իցէ հարսնախօսութիւնն, և պատճառքն անյայտ, յայնժամ եթէ չիցէ մարթ ապացուցանել զպատճառսն յատենի՝ չեն ինչ պէտք իշխանութեան դատաւորի, այլ պէտք են՝ եթէ իցէ մարթ ապացուցանել· սակայն և այն ոչ ընդ ծանր մեղօք, եթէ չիցէ ի միջի ծանր գայթակղութիւն, որպէս հաստատեն նոյն աստուածաբանք ։ Իսկ ուր մարթ իցէ ապացուցանել զթերութիւն անյայտ, պարտ է անմեղին ծանուցանել զայն միւսումն· և եթէ չհաւանեսցի ընդ լուծումն հարսնախօսութեանն, յայնժամ օրէն է զթերութիւնն աճել յատեան ։

27· Ո՞րինչ ապացոյց խնդրի ի լուծումն հարսնախօսութեան ։ — Ուր զարդեւից իցեն բանք, եթէ լուծիչք իցեն արդեւքն և եթէ խաւխանիչք, շատ է ուր և իցէ վկայ երդմնական, թէպէտ և դատախազ իցէ այն և ոչ եկակոչ, թէպէտ և գաղտնի և անանուն վկայիցէ, որպէս հաստատեն Սանքեզ, Վասթրոփալ, Սալմատիկեանք, Վանչինա, Հոլզման, Ալիւա, Աքրուա և այլք ։ Իսկ ուր ոչ զարդեւից իցեն բանք, այլ զայնպիսեաց՝ որ բաւական է յազատութիւն հրաժարելոյ միոյ ի խօսեցելոց, յայնժամ հանրագոյն կարծիք երկուս պահանջեն վկայս· զի ըստ օրինաց՝ ի միասս այլոց կրկին խնդրին վկայք ։ Այլ հաւանականաբար ըստ աստուածաբանից բաւէ և մի ոք արժանահաւատ ի վկայել զպոռնկութիւն հարսնացուին ։ Այլ այս յայտնի ատենի· այլ ըստ խղճի մտաց ամենայն իսկ ուրեք բաւէ մի և եթէ վկայ, որպէս հաստատեն Սանքեզ, Վասթրոփալ, Աքրուա, Վանչինա, Սալմատիկեանք և այլք գրեթէ առ հասարակ ։

ՅՕԴՈՒԱԾ Դ

ՑԱՂԱԴՍ ՆԻՒԹՈՑ, ՁԵՒՈՑ ԵՒ ՊԱՇՏՕՆԻ ՊՍԱԿԻՆ

28. Նիւթ, ձեւ և պաշտօնեայ պսակին:
29. Օրէն էր կին կեղծել զպսակ: Գողացիկ ամուսնութիւն. առ՝ի վերացուցանել զայն՝ խնդրի ընթերակայութիւն Ժողովրդապետին:
30. Պատճառք ամուսնութեան:
31. Բաւական էր նշանք ևեթ հաւանութեան:
32. Պսակ՝ի ձեռն փոխանորդի կամ նամակաբեր:
33. Պայմանաւ հաւանութիւն:
34. Ի ընդ պայմանին խնդրի վերաբերեալ հաւանութիւն:

28. Հանրագոյն կարծիք պաշտօնեայս պսակին համարին զՀարսն և զփեսայ, նիւթ գտուչութիւն իրաւանց՝ ի վերոյ մարմնոյ իրերաց՝ բանիւք կամ նշանօք արտայայտեալ, իսկ ձեւ՝ ընդունելութիւն նոցին իրաւանց նոյնպէս արտայայտեալ: Ըստ հակառակին Վանոյ, Լուվենին, Ռոնչինա, Հաբերտ, և Ֆոբրնելի, համաբերով պաշտօնեայ զքահանային, ձեւ կարծեմ պէտք և այլն, կամ Պապ ապրուածային հրամանին և այլն: Օառաջին կարծիս Հաստատակ և սուրբ Գաւնայոյին. և ժողովն փլորենտեան արարողական պաշտաւն պսակին կոչէ ներկուստեք հաւանութիւն պսակելոյն: Իսկ ժողովն արիդենտեան անլուծանելի ասէ լեալ՝ի սկզբանէ հետէ զպսակ՝ թէպէտ և առանց ընթերակայութեան ժողովրդապետի. իսկ անլուծանելի ասել հաւասար է խորհրդոյ: Վարձեալ նոյն ժողով յայտ արար զվաւերականութիւն պսակի առանց ժողովրդապետի, թէպէտ և լուռ ևեթ կալով նորա. ապա ուրեմն բանք նորա չեն ձեւ խորհրդոյն և ոչ կարևոր, ապա և ոչ ինքն պաշտօնեայ պսակին *:

* Ալ ըստ արևելեան եկեղեցեաց, և ըստ այլոց բազմաց աստուածաբանից, առ՝ի որական պաշտօնեայ խորհրդոյն է քահանային՝ որպէս և բանք մաշտոցին յայտ առնեն, և ձեւ՝ բանք նորա « Ընդ ապրուածային հրամանին » և այլն, իսկ նիւթ՝ գաշինքն:

Զայս այսպէս հաստատէ և Կուսէ, որոյ հռովմէական եկեղեցւոյ կարդինալ արքեպիսկոպոս Պըզանսոն քաղաքի: Եւ Հաբերտ (յղ՝ Պսակի գլ. Դ.) ասէ. « Զայս կարծիս Դոմինիկոս Սոտոս, Վասկուեզ և այլք ոմանք կոչեն յանդուգն, այլ յանխրատ. զի՝ի ժողովն արիդենտեան Մելքիոր Կանոս, և մի՝ի գլխաւորաց աղբիւրանան վարդապե-

29· Ոչսաի զՀետ գայ նախ՝ զի ժողովրդապետ՝ի կալ առընթեր պսակի յայտնի մեղաւորաց ոչ իբրև պաշտօնեայ մեղանչէ, այլ որպէս գործակից եւեթ սեղանակապտուելեան նոցա, ըստ առաջելումն՝ի գլ· ԺԴ· 6։ Օ՞Հետ գայ երկրորդ՝ զի պսակեալքն՝ի մահուչափ մեղս՝ գործեն կրկին սեղանակապտուելիւն· մի՝ ընդունելով զխորհուրդ, և միւս ևս՝ մատուցանելով· թէպէտ և զերկրորդս զայս հաւանականաբար չհամարիմն՝ի ծանր լինչ մեղս Ոչնչինա, Ծուրնելի, Կոնկէթ և առաքք Ոչգուինացին։ Սակ թէ օրէն իցէ հարսին պսակիլ ընդ յայտնի մեղաւորի, տե՛ս անդ (գլ· ԺԴ· 6)։

Գխաեալն և առաջնոր զի Հայրն Ալիանթէ ոչ օրէն համարի կեղծել զպսակ վասն իրաւացի պատճառի, որպէս յորժամ արգելք լուծիչք՝ի միջի կայցեն, և չիցէ մարթ չօրհնել զպսակն առանց ծանր վհասու։ Նայց այլ աստուածաբանք, ընդ որս և Անքէզ, Ոհասթոտ

տաց, պաշտպան կացին այնմ՝ որպէս պատմէ Կարդինալ Փալլաւիչինի (գիրք Ե· գլ· Դ·)։ Զոյն կարծիս կալաւ և Սիմոն Վիքոր պայծառագոյեալ՝ի արիւնառեան Ժողովն անդ, որ Թերևս իցէ նոյն ինքն՝ զոր ոչն անուանէ Փալլաւիչինի։ Քանզի Վիքոր լուսեաւացն հռովմ՝ի ժողովոգաւոգական եկեղեցւոջ սրբոյն Պօղոսի եկաց, և ապա եպիսկոպոս՝ի Նարբոն։ Վասն որոյ ժողովին չկամեցաւ սահմանել ինչ յաղագս այսր խնդրոյ· քանզի Փալլաւիչինի (գիրք ԺԴ· գլ· Թ·) ասէ· Ուրբէ ժողովէն յայս արար զի գաղտ ամառանուիւն իցէ խորհուրդ· վասն զի ապուաժաւ բանի պոպիաուելիի ընդունին զայն։ Ապա և ոչ պաշտօնեայս խորհրդոյն յայս արար զամուսնիս· զի եթէ նոքա էին պաշտօնեայք, գաղտագողի հարսանիք որպէս վաւեր էին յառաջ քան զժողովն, նոյնպէս լինէին և խորհուրդ՝ ոչ լինչ՝ի պայմանաց խորհրդոյ Թերի՝ի նոսա գտեալ։ Ապա ուրեմն տգաստ է ամենայն որ ընդունել որ յերկաքանչիւրոցն կարծեաց հաւանականագոյն Թուեսցի նմա։

Հանդերձ այսու ամենայնիւ որովհետև փրկիչն մեր զդաշն ամուսնութեան սրբազանեալ կացոյց խորհուրդ, և այնուհետև անբաժանելի է՝ի հաւատացեալս դաշն հարսանեաց՝ի խորհրդականութենէ, զորոյ շնհակառակ վարդապետութիւնն գտատապարտեաց Պիոս Թ· և զի դարձեալ՝ի դէպս լինչ առանց քահանայի և առանց օրհնութեան օրէն է վաւերացուցանել զդաշն ամուսնութեան՝ անվաւեր լեալ ըստ արգելից լինչ յօրհնութեան պսակին, պարտ է հաւատալ զի և ամուսինք լինին պաշտօնեայք խորհրդոյն ըստ լռելեայն կամ ըստ յայտնի հրամանի սրբոյ եկեղեցւոյ։ Որպէս սովորական պաշտօնեայ գրոշմին եպիսկոպոսն է, այլ հրամանաւ սրբոյ եկեղեցւոյ պաշտէ զայն և քահանայ։ Զայսմանէ լուսի և ներհուն հմտութեամբ ճառէ Աւոկատոյ՝ի մատենին յաղագս սահմանադրութեան Պասկի· և նախ քան զնա բազմահմուտ Կարդինալն Ճերթիլ՝ի գիրսն յաղագս Պասկի։

Ծանօթութիւն թարգմանչին։

փալ, Վ[illegible]ոնչինա, Ա[illegible]լա, Լ[illegible]աքրոա, Լ[illegible]նրիկոսէց զՀաւատսն հաստատեն. զի առ՝ի չգոյէ անդ հաւանութեան և դաշնի, չիք և ոչ խորհուրդ, վասն որոյ և ոչ կեղծիք խորհրդոյ։ Օ՜հետ գայ երրորդ՝ զի պահակելոց և՛ի ձեռն փոխանորդաց պարտ է գալ՝ի ընորհս. զի և յայնժամ վասն իսկապէս դաշինն կատարի խորհուրդ ձշմարիտ, որպէս հաստատեն Պոեսչինա, Ա[illegible]ոնքալեա, Վ[illegible]ոնչինա, Ա[illegible]ալելլիոյ, Կուլթիխէր, Պելլարմինոս, Ա[illegible]անքէզ, Լ[illegible]աւարրոյ, Ա[illegible]ոթոյ և այլք։ Օ՜հետ գայ չորրորդ՝ զի գողացիկ պահակ, այսինքն առաջի ժողովրդապետի՝ որ չիամի կալ առընթեր պահակելոցն և օրհնել զայն, ծանր օրինազանցութիւն է՝ այլ վաւերական և ձշմարիտ խորհուրդ։ Օ՜ի յայնժամ միայն անվաւեր է պահակ կատարեալ առաջի ժողովրդապետի, յորժամ նա իսկապէս ոչ տեսանիցէ ինչ և ոչ գիտիցէ, և ոչ թէ չգիտելոյն և չտեսանելոյն առնիցէ, որպէս յայտ արար նոյն սուրբ ժողովն տրիդենտեան սահմանադրութեանց աւանդապահ։ Օ՜հետ գայ հինգերորդ՝ զի ժողովրդապետն առընթերակայ պահակին, եթէ թշուառաբար՝ի մահու չափ մեղս իցէ, ոչ վասն այնորիկ յաւելու ծանր ինչ մեղս գործել, քանզի ոչ ինքն կատարէ զխորհուրդ։ Ա[illegible]այց սակայն եթէ ոչ ասիցէ զբանն՝ Հա՛ պո՛գեմ պէհեղ և այլն, կամ Ա[illegible]ոթ ասպռաճայինն հրամանին և այլն, մահու չափ մեղանչէ ըստ հաւանականագոյն կարծեաց, զի զկարևոր ինչ արարողութիւն եկեղեցւոյ՝ի բաց թողու։ Օ՜հետ գայ վեցերորդ՝ զի պահակ առաջի ժողովրդապետի և վկայից կատարեալ, եթէ գաղտ արդելք՝ի միջի կայցեն, վաւերանայ յետոյ տնօրինմամբ, և լինի ձշմարիտ խորհուրդ՝ վերստին հաւանութեամբ և եթէ պահակելոցն, առանց ժողովրդապետին ընթերակայութեան։ Ա[illegible]յսպէս հրամայէ սուրբ ժողովն ատաչխաւութեան ըստ սահմանելոյ սրբոյն Պիոսի Ե, որ հարցեալ՝ի ժողովոյ անտի՝ յայտ արար, զի յետ միանգամ կատարելոյ պահակին առաջի ժողովրդապետին և վկայից՝ ոչ ևս պէտք իցեն նոցա։

30. Արկին են մասունք ամուսնութեան էականք. տուչութիւն մարմնոյ միմեանց, և կապ անլուծանելի. և որ ամուսնանայցէ առանց կամելոյ զայսոսիկ, այսինքն՝ի մտի եդեալ չհաստուցանել զպարտս իւր կամ առ ժա-

մանակ մի ևեթ գոլ ընդ ամուսնոյն, անվաւեր է պսակ նորա։ Իսկ որ ամուսնանայ գլխաւորաբար առ՝ի դեղ ցանկութեան, կէսք յաստուածաբանից ընդ սուրբ Աւգոստինոսէ համարին գործել նմա ներելի մեղս. բայց այլք հաւանականաբար ազատ կացուցանեն զնա՝ի մեղաց բանիւ առաքելոյն՝ "Եթէ վասն պոռնկութեան իւրաքանչիւր զի զկին կալցի,,. (ա Կոր. է. 2)։ Ոչ ի Հռոմէից, Ալմերոնէ և Վիոռնելից ընդ սուրբ Անկեթերանին իմանան զայն առ՝ի զգուշութիւն անձին իւրոյ՝ի պոռնկութենէ, և ոչ ամուսնոյն, որպէս այլուր նոյն առաքեալ ասէ. (գլ. է. 1). "Բարւոք է մարդոյ՝ի կին մարդ չմերձենալ, բայց վասն պոռնկութեան իւրաքանչիւր զիւր կին կալցի,,։ Այս նախ՝ի ժուժկալութիւն խրատէ, և ապա զդեղ անժուժկալութեան առաջի դնէ. "Եթէ ոչ ունիցին ժոյժ, ամուսնասցին. զի լաւ է ամուսնանալ քան զվառնուլ,,։ Այս ապա և ևս հաստատէ զայս յասելն. "Ա՛ի զրկէք զմիմեանս, բայց եթէ ինչ՝ի միաբանութենէ առ ժամանակ մի՝ զի ուխտիցն (այսինքն աղօթից) պարապիցէք, և դարձեալ՝ի նոյն դարձջիք, զի մի փորձեսցէ զձեզ սատանայ վասն անխառնութեան ձերոյ,,։ Արդ եթէ առ՝ի զգուշանալ ևեթ յանժուժկալութենէ օրէն է ամուսնացս խնդրել՝ի միմեանց զպարտս, օրէն է ապա վասն այնորիկ և ամուսնանալ։ Այնպէս հաւանականաբար չհամարին աստուածաբանք՝ի մեղս՝ ամուսնանալ գլխաւորաբար վասն արտաքին ինչ իրաց, որպէս առ՝ի պահել զպատիւ տանն, առ՝ի հաշտեցուցանել զերկուս ազգատոհմս և այլն։ Իսկ եթէ ոք ամուսնացի զպարտս ամուսնութեան յանձն առեալ՝ այլ՝ի մուխ եդեալ չհատուցանել զայն, կամ խափանել զորդեծնութիւն, վաւեր է պըսակն՝ այլ մեհուչափ գործէ մեղս։

31. Ի վաւերականութիւն պսակին չէն կարևոր բառք, այլ շատ են նշանք արտայայտիչք հաւանութեան։ Ա՛ան որոյ բաւական է եթէ հարսն՝ յետ արտայայտելոյ փեսային զհաւանութիւն իւր, տացէ նմա զձեռն հաւանութեան, այլ ոչ է բաւական եթէ չամփոփեսցէ ևեթ յետս զայն իւր յունել զայն փեսային։ Այլ ոչ տուչութիւն մատանւոյն, և ոչ գնալ հարսին՝ի տուն փեսային բաւական համարի, եթէ՝ի սովորու-

թեանէ երկրին ընչանակից հաւանութիւն։ Այլ սակայն չէ ազատ ի ներելի մեղաց նշանօք ևեթ արտաքայտել զհաւանութիւն, եթէ չիցէ առ յոյժ պատճառանաց։

32. Որ ի ձեռն փոխանորդի պսակի, եթէ նահանջեսցէ զհաւանութիւն իւր ի մէն իսկ իւրում նախ քան զպսակն, անվաւեր է ամուսնութիւն։ Իսկ եթէ ի տալ փոխանորդին իւրում պատուէր՝ չունիցի հաւանութիւն, այլ ի ժամ պսակին ունիցի, հանրագոյն և հաւանականագոյն կարծիք կամաըին վաւեր զպսակն. զի յայնժամ փոխանորդն ոչ զանցեալ կամ նորա արտայայտէ, այլ զայնր ժամու՝ յորում կատարի պսակն։ Այլ փոխանորդին առ ի վաւերական առնել զպսակն, պարտ է նախ՝ զի յայտնի պատուէրը ունիցի. երկրորդ՝ զի որոշեալ իցէ յականէ յանուանէ անձն, ընդ որում պսակելոցն է. երրորդ՝ զի իւրովի, և ոչ ի ձեռն այլոց ուրուք, առաջի ժողովրդապետին և վկայից յայտնեսցէ զպատուէրն՝ զոր անպիր ևս բաւական համարին Աթրոփալ, Սանքէզ, ԿուԹիէր և այլք. և չորրորդ՝ զի մի զպայմանն այլայլեսցէ զօժտին, զժամանակին, և այլն, ապա Թէ ոչ՝ անվաւեր լինի պսակն։ Այլ եթէ ընդդէմ հրահանգացն անհրամանի եպիսկոպոսին և առանց երբակի հրատարակմանցն կատարեսցէ զպսակն, վաւեր համարին զայն աստուածաբանք, Թէպէտ և չիցէ ըստ օրինի։ Այլ յորժամ՝ ի ձեռն փոխանորդի կատարի պսակն, պարտ է ժողովրդապետին՝ ի հարցանելն Թէ Յոսպանա՞յ առաջի Աստուծոյ, յաւելուլ՝ ի ձեռն փոխանորդիդ։ Օրէն է և զլուռ կատարել զպսակ. զի գրէ փեսայն առ հարսն՝ Թէ ընդունիմ զքեզ ինձ ի կին, և հարսնն՝ Թէ ընդունիմ զքեզ ինձ ի փեսայ. և յընԹեռնուլ առաջի ժողովրդապետին և վկայից զդիւրան՝ կատարի պսակն. և շատ իսկ է գիր փեսային, եթէ հարսնն առաջի ժողովրդապետին և վկայից ընԹերցեալ զայն՝ տացէ զնւր հաւանութիւն։

33. Յորժամ պայմանաւ իցէ հաւանութիւնն, եթէ զանցելոց ինչ իրաց կամ ընդրկայից իցէ պայմանն, և վաղ իսկ յարդիւնս եկեալ իցէ կամ գոյցէ, կատարի պսակն հաւանութեամբ։ Նոյնպէս եթէ իցէ զատոյգ հանդերձելոց, որպէս եթէ ի վախճանել հօր ոմն, բայց

միայն անգամին տալով զհատանուէիւն, և ոչ պահելով զայն՝ի վախճան հօր նորա: Իսկ եթէ զազատ հանդերձելոց իցէ պայմանն, պարտ է զանազանել. եթէ պայմանն իցէ անօրէն և ընդդէմ էական ինչ մասին ամուսնութեան, որպէս թէ ասէ՝ ընդունիմ զքեզ քնոջ՝ ի կին, եթէ խոփանելյանջն առնուսս զորդեծնուելիսն, և կամ դինչ գործոյ զոր լաս դան զքեզ. անվաւեր է պատկն: Իսկ եթէ իցէ անօրէն և եթէ՝ այլ ոչ ընդդէմ էութեան պատկի, և կամ անհնարին, վաւեր է պատկն՝ որպէս եթէ չէր եդեալ պայմանն այն. զի համարի տուեալ յայնժամ հատանուէիւն, որ եթէ արդարև չիցէ տուեալ առանց կատարման այնոցիկ պայմանաց, անվաւեր է և յայնժամ: Այլ հերկեցայս պարտ է միշտ՝ի նպաստ պատկին դատել, համարելով զայն վաւերական:

34. Եթէ պայմանքն զհանդերձելոց՝ իցեն բարիք, յայնժամ գաշինքն ոչ ամուսնականք լինին՝ այլ հարսնախօսութեան. այլ՝ի լնուլ պայմանին՝ խնդրի վերջատին հատանուէիւն վասն ամուսնութեան: — Կէսք յաստուածաբանից կարևոր համարին, զի ամուսնութիւն ոչ միայն գաշն է, այլ և խորհուրդ՝ որոյ վաւերականութեան ոչ է մարթ գոլ ըստ դիպուածոյ: Իսկ այլք չհամարին կարևոր. զի թէպէտ և խորհուրդ է ամուսնութիւն, այլ ըստ օրինաց գաշնագրութեան կատարելով՝ ըստ այնմ ևս վաւերականութիւն նորա գատի: Հաւանականագոյն թուի երկրորդս այս վարդապետութիւն. այլ զի հաւանական է և առաջինն, պարտ է ըստ այնմ վարել՝ի կատարումն պատկին:

Օ. Նոյն է ասել և յորժամ արգելք՝ի միջի կայցեն պատկին, և պայմանաւ անօրինաման լեալ իցէ հարսնախօսութիւնն: Կայց գիտելի է զի պայմանք՝ի կախ ունին զպատակ, այլ ոչ և յայտարարութիւն կամ պատճառ կամ եղանակ: Յայտարարութիւն է՝ յորժամ ասիցէ փեսայն. Հարսնածեմ զքեզ, որ ես անփորձ կամ աղնուատոհմ և այլն: Պատճառ՝ յորժամ ասիցէ. Հարսնածեմ զքեզ, զի ես անփորձ, զի ես աղնուատոհմ և այլն: Իսկ եղանակ է՝ յորժամ ասիցէ. Հարսնածեմ զքեզ, զի լիցիս ինձ յաղախին: Այսոքիկ ոչ՝ի կախ ունին զպատակ, զի հանդամանս և եթէ յաւելուն և ոչ պայման, թէպէտ և անօրէն և անկարելի հանդամանքն իցեն. զի հաւա-

նուԹիւն ոչ կախի ՚ի հանդամանաց, որպէս կախի ՚ի պայմանաց։ Իսկ եԹէ օր սահմանեսցի, որպէս Թէ ասել՝ Հարսնածեմ զքեզ յետ տասն աւուրց, հանրագոյն և հաւանականագոյն կարծիք համարին ՚ի կախ ՚ի հաւանականութիւն մինչև ՚ի կատարումն սահմանեալ ժամանակին։

ՑՕԴՈՒԱԾ Ե

ՑԱՂԱԳՈՒ ՕՐԻՆԱԳԻՏ ՎԱՐԵԼՈՑ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՄԲ

35. Ո՞ է օրէն վարել ամուսնութեամբ, եԹէ անվաւեր լեալ իցէ պըսակն, կամ երկբայելի. այլ օրէն իցէ պսակիլ, եԹէ արգելք երկբայականք իցեն ՚ի միջի։
36. Օրէն իցէ յերկբայս խնդրել կամ հատուցանել զպարտս։
37. Ընդ ինչ եԹէ երկբայութեամբ լեալ իցէ պսակն։
38. Ընդ ինչ եԹէ վաղնջուԹեան ՚ի վերայ կայցէ։
39. Ընդ ինչ եԹէ առ հեշտութեան անկ գայցեն առ միմեանս։ Ընդ ինչ եԹէ մաջք չնութեան։ Ընդ ինչ եԹէ անարժան եղանակաւ։
40. Ընդ ինչ եԹէ այրն նահանջեսցի ՚ի սերմնարկութենէ։
41. Ընդ ինչ եԹէ յանպատեհ տեղւոջ կամ յանպատեհ ժամանակի այսինքն ՚ի յղութեան։
42. Եթէ այրն իցէ արգելեալ ուխտիւ կամ մծղնէութեամբ։
43. Ներելի իցեն ամուսնոց շօշափմունք կամ յամեալ հեշտութիւնք։

35. Այելք ամուսնութեան ըստ ինքեան օրինաւորք՝ օրինաղանցք գտանին նախ՝ եԹէ պսակն լեալ իցէ ստուգիւ անվաւեր. և յայնժամ այր կամ կին, որ գիտիցէ զանվաւերութիւն նորին, չկարէ ոչ խնդրել և ոչ հատուցանել զամուսնական պարտս։ Երկրորդ՝ եԹէ վաւերականութիւն պսակին իցէ երկբայելի։ Այլ նախ քննելի է Թէ օրէն իցէ կատարել զպսակ՝ եԹէ կասկած արգելից ՚ի միջի կայցէ։ — Հանրագոյն կարծիք ուսուցանեն, զի յետ բաւական քննութեան հաւանական կարծեօք տարապարտ գոլոյ կասկածանացն օրէն է պսակիլ։ Այս ոչ զօրէ ինչ ասել՝ Թէ ՚ի կատարումն խորհըրդոյ չլինի օրէն հաւանական կարծեօք վարել. զի որպէս ասացաք ՚ի գլ. Ա. 27, Համարի տնօրինել յայնժամ եկեղեցւոյ զարգելս՝ եԹէ գոյցեն։ Իսկ եԹէ հաւանականութիւնն իցէ ըստ իրաւանց, այսինքն ըստ վկայութեան աստուածաբանից, և ոչ ըստ գործոյն. զի հաւանականութիւն գործոյ ոչ է իսկապէս հաւանա-

կանութիւն, այլ վարկած կամ դուշակութիւն՝ որ չբաւէ առ ի պսակ, եթէ չիցէ այնպիսի՝ որ հաւաստացիցէ բարոյական ստուգութեան։ Սակս դարձեալ՝ եթէ արգելքն յեկեղեցական իրաւանց յառաջ գայցէն, և ոչ ի բնականաց՝ զորս չկարէ եկեղեցի տնօրինել։ Կամ որոց եթէ երկբայելի իցէ մահ միոյ յամուսնացս, չէ օրէն պսակիլ միւսումն ընդ այլում. բայց եթէ բարոյական ստուգութեամբ յայտ իցէ մահ ամուսնոյն։ Նաև զում երևելի աստուածաբանք հաւանականաբար հաստատեն, զի յերկբայս արգելից՝ որ յեկեղեցական իրաւանց յառաջ գան՝ օրէն իցէ եպիսկոպոսի տնօրինել որպէս հանդերձեալ եմք ասել ի գլ. Ի. 57։

36. Այլ կետ պսակին յերկբայել ամուսնոյ զվաւերականութենէ նորին՝ ընդ որ օրէն իցէ նոցա խնդրել կամ հաստուցանել զպարտս։ — Այլ կամ կին՝ որ երկբայ զվաւերականութենէ պսակին՝ չկարէ խնդրել զայն, այլ պարտի հաստուցանել ամուսնոյն՝ որ խնդրէ յանդիման, եթէ գէթ երկամեայ աւուրք ի վերայ անցեալ իցեն պսակին, և չիցէ նա արգելեալ մծղնէութեամբ ի խնդրելոյ։ Այլ եթէ առանց երկբայութեան պսակեալ իցէ, և կետ քննելոյ բաւականապէս զի վերայ հասեալ երկբայութիւնն՝ չկարիցէ լուծանել, հանրական և ամենահաւանական կարծիք օրէն համարին նմա և խնդրել իսկ՝ վասն իրաւանցն ի ձեռն պսակին ստացելոց, ցորչափ չիցեն արգելքն ստոյգք, թէպէտ և երկբայքն իցեն հաւանականք։

37. Իսկ եթէ երկբայութեամբ պսակեալ իցէ, կարիցէ որ երկբային՝ կետ բաւական քննութեան եթէ տակաւին կայցէ երկբայս, խնդրել զպարտս։ — Ամանաչող կարծիք ոչ օրէն համարին, վասն երկբայութեամբ ստանալոյ նորա զիրաւունս. բայց Հոլզման և Աչտել ոչ անհաւանականաբար զհակառակն հաստատեն։ Ո՞ի թէպէտ և ըստ երկբայելի ստացմանն չիցեն նորա իրաւունք, այլ են իսկ ըստ այնմ՝ զի յերկբայս վաւերական համարի պսակ եթէ՛ յայտաբին և եթէ՛ ի ներքին առեն։ Այլ զի առեալ զնոյն վերոյասացեալ երկբայութիւն մահուան ամուսնոյն, եթէ արդարև երկբայութիւն ևս ևս իցէ. զի օրէնք զերկբայութիւն ևս ևս ի բաց առնուն, և ոչ զհաստատուն հաւանակա-

նաւթիւն։ Ա՝ան որոյ եթէ ոք յետ բաւական քննութեան թէպէտ և չկարէցէ լուծանել զերկբայութիւն՝ի սպառ, սակայն հաւանական իցէ մահ առաջնոյ ամուսնոյն, օրէն է նմա ոչ միայն հատուցանել՝ այլ և խնդրել զպարտս. որպէս ուսուցանեն Ա՝անքէզ, Պոնաչինա, Պոսխոյ, Ա՝ոնքալէա, Սիոլեր, Սալմատիկեանք և այլք։

Ա՝ոկ յաղագս երկբայելոյ կամ չերկբայելոյ զվաւերականութենէ պսակին, երբոյկի կանոնք աւանդին՝ Ա՝ախ՝ զի չէ ոք պարտական հաւատս ընծայելոյ ամուսնոյն, եթէ երդմամբ իսկ հաստատիցէ՝ վեր՝ի վերոյ տուեալ զհաւանութիւն և ոչ՝ի նեղքուստ։ Ա՝երկրորդ՝ եթէ արգելս ինչ պսակին յանստոյգ համբաւոյ և ոչ յարժանահաւատ որերոյ լուիցէ զոլ, չէ պարտ նմա հաւատալ։ Ա՝երրորդ՝ զի եթէ յարժանահաւատ ումեքէ կամ՝ի ստոյգ համբաւոյ լուիցէ, պարտի հետազօտել զձշմարտութիւն, և՝ի հետազօտելն հրաժարել՝ի խնդրելոյ զպարտս, այլ ոչ՝ի հատուցանելոյ՝ եթէ մի ոք ևեթ իցէ արգելիչն վկայ. զի միւն ևեթ չքաւէ՝ի ատուգութիւն։ Ա՝այլ երկբայս գատելն է միշտ՝ի նպաստ պսակին։

38. Ա՝երրորդ՝ չէն օրինաւոր վայելք ամուսնութեան, եթէ ծանր վտանգ առողջութեան՝ի վերոյ կայցէ և չգուցէ վտանգ անժուժկալութեան։ Ա՝այլ հաւանականաբար օրէն է, եթէ ախտն իցէ յարատեւ՝ որպէս բոր կամ մաշարայական կամ գաղղիական և կամ հանգոյն ինչ սոցին ախտ, եթէ միայն չածխցէ մերձաւոր վտանգ մահու, և իրաւացի պատճառ առաջի կայցէ։ Ա՝այլ զայնպիսի ախտ պարտ է յայտնել ամուսնոյ՝ի խնդրել զամուսնական պարտս՝ի նմանէ և՝ի հատուցանել։ Ա՝ոկ եթէ չկամիցի զնախատինս իւր յայտնել, որպէս եթէ գաղղիական ախտիւ իցէ վարակեալ, կարէ ըստ օրինի՝ի հատուցանելոյ իսկ հրաժարել։ Ա՝է օրէն խնդրել իսկ և իսկ զՀետ բաղանեաց կամ երակ հատանելոյ կամ՝ի ջերման. այլ օրէն է խնդրել՝ի կնոջէ, որ զախտ սերմնակալութեան կրէ յարատեւ, զսպասաւորն կոչեցեալ և ոչ զժանտ. այլ և յայնժամ օրէն է, եթէ վտանգ անժուժկալութեան կայցէ միւսմ յամուսնացոյ։ Ա՝երձաւորութիւն յետ ձաշու ոչ այնչափ ինչ վնասակար է, մինչև աղաստ կացուցանել զկին՝ի հատու-

ցանելոյ զպարտս : Իսկ ՚ի ժամանակի սանտուղեան Թէպէտ և Փոնցիոյ ոչ օրէն համարի եթէ գուցէ ծանր ինչ վտանգ կաճնկեր մանկանն , այլ Անքեզ զհակառակն հաստատէ : Յաւուրս սովորական դաշտանի ոչ է օրէն , Թէպէտ և ՚ի ներելի մեղս համարեալ ՚ի հանրագոյն և ՚ի հաւանականագոյն կարծեաց . իսկ եթէ անսովոր իցէ և յորատաւ , օրէն է : Նոյնպէս ՚ի ներելի մեղս համարի յաւուրս մաքրութեան ՚ի մանկածնութենէ , եթէ չիցէ ՚ի նմին իսկ աւուր :

39 . Ողորոգ՝ չէ օրէն , այլ ընդ ներելի և եթէ մեղք , առ հեշտութեան և եթէ մերձենալ՝ առանց ինչ դիտաւորութեան գնել պատրաստագոյն այնուիկ լինելոյ ՚ի հատուցանել զպարտս : Ընդերոգ՝ չէ օրէն դիտաւորութեամբ ընութեան մերձենալ : Ոչ զրգռե զանձն ՚ի մերձաւորութիւն՝ հայելով ՚ի պատկերս սրբոց , ծանր մեղք Թէպէտ և ընական մերձաւորութեան անտի առնի ոմն : Ոչ օրէն և յանօթ բնական՝ այլ անբնական եղանակաւ՝ որպէս յառին կամ ՚ի նիստ կալով , կամ ըստ օրինակի անառանց , կամ առն ենթակայելով . այլ այսքիկ ՚ի ներելի մեղս համարին , զի ոչ խափանեն զորդեծնութիւն՝ սաղմաբոյն մղանաց ինքնին զայրական սերմն ծծելով : Յաւելուն բարոյականք , զի և ոչ ՚ի ներելի մեղս համարելի է՝ եթէ իրաւացի պատճառք ինչ լիցեն այնու եղանակաւ մերձաւորելոյ : Հանրագոյն կարծիք ազատ առնեն ՚ի մահացու մեղաց , եթէ ոք զրկին փոփոխութեամբ պատճառաւ տացէ մասին ինչ սերման արտաքս հեղանելոյ :

40 . Եթէ ամուսինք մերձաւորեալք նախ քան զսերմնարկութիւն մեկնեսցին յիրերաց , մեղանչեցեն մահու ջափ : — Աւրբան Ընտանինոս , Այման , Փոնցիոյ , Կաբեթանոյ , Եսխիոյ , Ալմատիկեանք և այլք ժխտեն , եթէ ՚ի հասարակաց հաւանութենէ առանց վտանգի սերման արտաքս հեղանելոյ մեկնեսցին . այլ դժուարին

համարի Աստիճ՝ թէ չիցէ վտանգս այս։ Իսկ եթէ կինն սերմանեալ իցէ կամ մերձ՝ ի սերմանել, ծանր մեղանչէ այր յամիսուիեկն յետս, եթէ ոչ մահ կամ գայթակղութիւն այլոց զնա ստիպեսցէ։ Իսկ եթէ առն սերմանեալ իցէ, կէսք՝ ի բարեյականաց ազատ կացուցանեն՝ ի մահուչափ մեղաց զընկերկել կնոջ. բայց այլք մահուչափ համարին և զայն՝ կարևոր ասելով և զսերմն կնոջ յորդեծնութիւն, զի չիք ինչ վայրապար՝ ի բնութեան։ Այլ քանզի հաւանական թուի և այս կարծիք, այսմ պարտ է հետևել, զի չէ օրէն՝ ի վտանգ որդեծնութեան միւսոյն հետևել։ Ասան որոյ և հանրական կարծիք օրէն համարին կնոջ, եթէ նախ քան զսերմանել իւր ընկերկեսցի այրն, ինքնին իսկ նոյնհետայն զըզգուել զանձն շօշափմամբք առ՝ ի սերմանել։

41. Յօժաներօրդ՝ չէ օրէն վարել ամուսնութեամբ յանդիպ տեղւոջ, որպէս ակնարև այլոց կամ՝ ի սուրբ վայրի. այլ թէ երբ օրէն իցէ այն յեկեղեցւոջ անտես յայլոց, տես որ ինչ ասացաքն՝ ի գլ. թ. 21։ Ալեթերօրդ՝ ի տարաժամու. և նախ՝ ներելի մեղք են խընդրել յառաջ քան զսուրբ հաղորդութիւն, եթէ չիցէ վտանգ անժուժկալութեան. այլ յետ հաղորդութեան չհամարի՝ ի մեղս, ոչ հատուցանել և ոչ խնդրել ըստ ասացելոցս՝ ի գլ. ԺԵ. 57։ Նոյնպէս չէն ինչ մեղք յառուրս տօնից հատուցանել, և խնդրել իսկ. զի օրինք ինչ ոչ արգելուն զայն. և թէպէտ ոմանք՝ ի սրբոց Հարց զգուշացուցանեն, այլ առ՝ ի խրատ և ոչ առ՝ ի պատուէր, որպէս ցուցանէ Աստիճ։ Այս որպէս Ներսիկտոս ԺԴ. ասէ, եթէ էր իսկ այն երբեմն պատուիրան, այժմ խրատ և՛եթ է աներկբայապէս։ Այս դարձեալ՝ ի ժամանակի չղութեան ներելի մեղք են, եթէ չիցէ վտանգ վիժելոց սաղմին՝ որ է իսկ յառաջս. այլ եթէ վտանգ անժուժկալութեան կամ այլ ինչ իրաւացի պատճառք կայցեն, չհամարի՝ ի մեղս։

42. Կարձեալ չէ օրէն ամուսնոյ խնդրել, եթէ յետ պսակին ուխտիւ ինչ կամ խնամութեամբ զտանիցի արգելեալ. այլ կարէ, և պարտի իսկ հատուցանել՝ի խնդրել միւսոյն։ Այս՝ի չխնդրելն իսկ՝ եթէ յայտնի իցէն կամք նորա, որպէս եթէ կինն առ պատկառանաց չիշխիցէ խնդրել, և զգայցէ այր զվիշտ նորա։ Այս ե-

Թէ ինքն իսկ արգելեալն խնամուԹեամբ (այլ ոչ ուխտիւ) կայցէ ՚ի վտանգի անժուժկալուԹեան, օրէն է նմա. և հաւանականաբար առանց իսկ վտանգի, եԹէ չիցէ մարԹ փուԹով առնուլ տնօրինուածն։ ( )րէն է աներկբայապէս խնդրել յամուսնոյ բանադրելոյ. և բանադրեալն իսկ ըստ ոգեմտագոյն և ըստ հանրագոյն կարծեաց օրէն է խնդրել, եԹէ կայցէ ՚ի վտանգի անժուժկալուԹեան։

43. Ոչ երեւի իցէն ամուսնոյ շօշափմունք և յամեալ հեշտուԹիւնք։ — Շօշափմունք, ասս և անհամեստք, կարգեալք ՚ի մերձաւորուԹիւն, օրինաւորք են ամուսնոյ. այլ առանց այնորիկ՝ Թէպէտ և ոմանք յաստուածաբանից դատապարտեն զայնոսիկ ՚ի ծանր մեղս, այլ հանրագոյն և Հիմնարարագոյն կարծիք՝ ի ներեալն մեղս համարին. զի ամուսնուԹիւն ներեալ առնէ զայնս։ Ուստի եԹէ որ խնդրէն՝ չիցէ կապեալ ուխտիւ ողջախոհուԹեան, և չգուցէ վտանգ գինջուԹեան՝ ոչ իւր և ոչ միւսումն, ասս և ակամայ, որպէս յաւելումն Աղեք, ՂասԹրուխալ, ԿայեԹանոյ, Պոսիոյ, Աստաւիկեանք և այլք։ Ոչն օրինաւոր և ոչ համեստ շօշափմունք, մերձաւոր վտանգաւ գինջուԹեան, ասս և առանց վտանգի հաւանուԹեան. բայց եԹէ իրաւացի պատճառք իցեն, որպէս արծարծումն սիրոյ ընդ իրեարս և այլն։ Ոչ այս վտանգ խնդրելոյ. իսկ հատուցողին ներեալ է միշտ տալ գիրաւունս խնդրողին, եԹէ միայն չիցեն այնպէս անհամեստք՝ մինչև Թուել սկիզբն գինջուԹեան։ Ոչ օրէն ամուսնոյ անձամբ զանձն վտանգ հեշտուԹեան շօշափել, Թէ առ վտանգի գինջուԹեան, և Թէ զի չեն ամուսնոյ այս իրաւունք՝ բայց միայն ՚ի պատրաստուԹիւն մերձաւորուԹեան։ Ոչ ասն օրոյ պարտ է խրատել զնոսա, զի մի և մնասուԹեամբ անցեալ կամ առաջիկայ մերձաւորուԹեան հեշտասցին բացակայք ՚ի միմեանց. այլ և ոչ դատապարտել զնոսա այնուհետև ՚ի մահու չափ մեղս, որպէս հաստատեն Ոանքէզ, սուրբն Ընտոնինոս, Պոնաչինա, Ոուարեզ, Պերսան, ԿայեԹանոյ, Ի աքրուա և այլք պրեԹէ առ հասարակ, եԹէ չիցէ մարմնական և վաւաշ հեշտուԹիւն նոցա։

ԳՕԴՈՒԱԾ Զ

ԳԼՈՒԽՔ ՊԱՐՏՈՒԻՑ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

44. Ե՞րբ պարտ է՞ր ամուսնոյ խնդրել:
45. Եթէ ժխտեսցէ միանգամ և երկիցս:
46. Եթէ բազմածին իցէ կինն:
47. Եթէ մահուչափ մեղաք խնդրիցէ մին:
48. Եթէ խնդրիցէ այր ոչ՝ ի սազմաբոյնն սերմանել:
49. Եթէ մին յամուսնոց խնդրեսցէ ներելի մեղաք:
50. Եթէ խնդրիցէ արբեալն կամ անմիտ: Արդեօք խնդրելոյ վասն մծղնէութեան: Եթէ՝ ի վերայ կայցէ վասնզ առողջութեան կամ սազմին:
51. Եթէ այր նահանջեսցէ զսերմն: Եթէ կինն յարիցէ կամ միկնիցէ: Օրքո՞ն իցէ օրինրդի բռնաբարելոյ արտաքսել զսերմն: Եթէ ծեր առէպ հեղու արտաքս զսերմն:
52. Ցաղագս պարտուց բնակակցութեան ընդ կնոջ, և մնուցանելոյ զնա:

44. Պէտ է խնդրել, և այլ հատուցանել զամուսնական պարտս: Ոչ ոք յամուսնոյ պարտական է խնդրելոյ, եթէ չիցէ անձին կամ ամուսնոյ իւրում վտանգ անժուժկալութեան: Պէտ շատ է և լռելեայն խնդիր կընդոջ առ՝ ի պարտական առնել զայր՝ ի մերձաւորութիւն, ըստ հասարակաց վարդապետութեան աստուածաբանից ընդ սուրբ Գրոյն: Ընդ հակառակն Յանքէզ, Սոթոյ և այլք ընդ նմին սուրբ Գրոյն չհամարին կնոջ պարտ, եթէ այրն չխնդրիցէ յայտնապէս: Իսկ եթէ կինն չիցէ՝ ի մեծահեաց ոք կամ յայնպիսեաց, զի առաւելապոյն առնն՝ ի նմանէ իցէ ակնածութիւն. և կամ որպէս ասացաք՝ եթէ այրն կայցէ՝ ի վտանգի անժուժկալութեան. այլ զի յամուժամ յեղբայրսիրութենէ և եթէ պարտական գտանի կինն՝ ի խնդիր, Յանքէզ և այլք յաստուածաբանից ներելի համարին նմա՝ եթէ առ կարի ամօթ խաճութեան չընդրիցէ:

45. Յոլորաբար ծանր մեղք են ամուսնոյ չհատուցանել. այլ եթէ միանգամ կամ երկիցս հրաժարեսցէ ոք՝ ի հատուցանելոյ՝ ի խնդրել ամուսնոյն թուլակի, և՝ ի հաւանել դիւրաւ ընդ հրաժեշտ նորա, ներելի մեղք համարին բազոյականք. և եթէ ունիցի ինչ պատճառս

հրաժարելոյ, և ոչ՝ ի ներելն մեղս համարին. բայց եթէ՝ ի վտանգի անժուժկալութեան գտանիցի խընդրողն, և միւսոյն չկոյ ինչ ծանր պատճառ հրաժարելոյ: Իսկ եթէ ի ախտանձանաւք խնդրիցէ, կեաց յաստուածաբանից համարին ծանր մեղանչել միւսոյն՝ ի հրաժարելն, եթէ խնդիր նորա չկոյ չափազանց՝ որպէս թէ չորիցս՝ ի միում ևեթ գիշերի: Այլ այլք ևս ազատ կացուցանեն զնա՝ ի մահուամբ մեղաց, եթէ խընդրողն չկոյ՝ ի վտանգի անժուժկալութեան: Իսկ՝ ի տուընջենէ՝ ի գիշեր, կամ յերեկոյէ՝ ի վաղորդայն արկանել զհատուցումն՝ ոչ ծանր ինչ մեղս համարին հասարակօրէն աստուածաբանք:

46. Ումքն կոչ հրաժարել յամուսնական պարտուց վասն բազմութեան օրգասց, զորս կոչ՝ զի բաւական կերակրել: — Այսման, Անքաղէա և Վիտեր ոչ օրէն համարին. բայց այլք ևս զհակառակն հաստատեն՝ եթէ կոչ վտանգ անժուժկալութեան, իբր զի դժուարութիւն մեծ ազատ կացուցանէ յամենայն պարտուց: Այլ քանզի դժուարաւ ամուսինք կարեն ազատ զոլ՝ ի վտանգէ ասոյ, պարտ է զառաջնոյն պինդ ունել զկարծիս:

47. Պարտ կոչ ամուսնոյ, կամ կոչ օրէն հատուցանել զպարտս՝ ի խնդրել միւսոյն մահուամբ մեղաց: — Եթէ մեղք՝ ի ներողութեան անդ կոչեն, որպէս եթէ այր՝ ի սրբազան տեղւոջ կամ վտանգաւ վիճակի սաղմին խնդրիցէ, պարտ է կնոջ ժխտել նմա, զի չեն նորա իրաւունք խնդրելոյ զայն. և՝ ի հատուցանելն մեղանչէ և ինքն մահուամբ: Այլ եթէ մեղքն՝ ի կամն խնդրողին կոչ, որպէս եթէ վասն հեշտութեան ևեթ խնդրիցէ, օրէն է յայնժամ և պարտ իսկ ամուսնոյ հատուցանել: Իսկ եթէ գործն ինքնին՝ ի մեղս կոչ խընդրողն, որպէս եթէ ուխտիւ կապեալ կոչ, հանրագոյն և հաւանականագոյն կարծիք և յայնժամ օրէն համարին հատուցանել, այլ չետ աղգ առնելոյ նմա ըստ պարտուց եղբայրսիրութեան: Այլ եթէ չկոչ, խրատեն՝ ինքնին իսկ՝ ի նմանէ խնդրել. այլ բաւ զայս ասել Անքէտէ, զի դժուարին է յոյժ կնոջ այս պայման: Նմանապէս՝ ի խնդրել ամուսնոյ մծղնէի՝ որոյ ոչ ևս են իրաւունք խնդրելոյ, թէպէտ և միւսն չէ պարտաս-

կան՝ այլ կարէ հատուցանել, որպէս ուսուցանեն Յանքէզ, Բասիլոսիալ, Այմոն, սուրբն Նտոնինոս, Յաւէմատիկեանք և այլք։

48. Օրէն էր կին ոմն խնդրել կամ հատուցանել առն, որ կամիցի սերմանել արտաքոյ՝ յետ մերձենալոյ առնն։ — Պարտ է զանազանել և աստ զհատուցանելն և զխնդրել։ Ըստ առաջնումն Ոնոքաւեա և Լովպել հաւանականաբար հաստատեն՝ զի օրէն էր կնոջ, և պարտ իսկ՝ եթէ առանց ծանր նեղութեան կարէր չհատուցանել. զի չէն իրաւունք առն խնդրելոյ զամուսնական պարտս առ՝ի զերծանել նուաւս։ Այլ հաւանականագոյնս Յանքէզ պարտ համարի հատուցանել յետ խրատելոյ զնա. զի ոչ գործոյն է մեղ, այլ անձին նորա՝ որպէս՝ ի վեր այսր առացաք։ Իսկ ըստ խնդրելոյ՝ չէ օրէն կնոջ խնդրել յառնէ այնպիսւոյ, զի եղբայրսիրութեան պարտք են խափանել զմեզս նորա. իսկ եթէ չտիպիցի՝ ի խնդրել վասն վտանգի անժուժկալութեան, կամ եթէ հասանէ նմա հրաժարել բոլորովին յիրաւանց խնդրելոյ. զի եղբայրսիրութիւն չածէ այսպիսի ինչ ծանր պարտս, վասն որոյ չէ պարտաւական հրաժարել միշտ՝ ի խնդրելոյ, այլ երբեք երբեք առ՝ի խրատ։ Տես և զոր ինչ առացաքն՝ ի գլ. Դ. 18։

49. Պարտ իցէ ամուսնոյ հատուցանել՝ի խնդրել միւսոյն ներելն մեղօք։ — Յանազանելն է և ասա. եթէ մերձաւորութիւնն ըստ խնդրողին իցէ մեղք, պարտ է հատուցանել. իսկ եթէ ըստ գործոյն, որպէս եթէ՝ի տարաժամու կամ տարադէպ եղանակաւ խնդրիցէ, ոչ է պարտ հատուցանել առանց իրաւացի ինչ պատճառի։

50. Ըստ հասարակաց վարդապետութեան չէն ինչ պարտք հատուցանելոյ յիմարաց կամ արբեցոյ, զի անընդունակք են իրաւանց տէրութեան. բայց եթէ վտանգ իցէ նոցա սերմնահեղութեան, կամ թէ չկացեն բոլորովին յիմար կամ արբեալ։ Այլ օրէն է հատուցանել նոցա ուր չկայ գայթակղութիւն, կամ վտանգ վիժման՝ որպէս յորժամ կինն իցէ մինդին յիմար։

Եթէ այր անկեալ իցէ ընդ ազգականի կնոջն յառաջին կամ յերկրորդ աստիճանի արեւնակցութեան, կրնաւսանէ զիրաւունս խնդրելոյ։ Այլ առ՝ի ձգել յանձն զարգելս զայս՝ խնդրի դիտել զօրինս, ոչ միայն աս-

տուածայինս՝ այլ և զեկեղեցականս սահմանեալս ընդդէմ մծղնէութեան. և հաւանականաբար խնդրին և սա գիտել նմա զպատիժ այնպիսի մեղաց։

Ըստ վտանդի առողջութեան՝ պարտ է ամուսնոյ հատուցանել, եթէ թեթև ինչ իցէ նմա անտի վտանգ։ Իսկ եթէ ծանր իցէ վտանգ, ոչ պարտ է նմա և ոչ օրէն. բայց եթէ կամ ինքն և կամ որ խնդրէն՝ կայցէ ի մերձաւոր վտանգի անժուժկալութեան, և կամ եթէ իցէ երկիւղ ծանր գժտութեան, և ախտն՝ յորմէ խնդրի՝ չիցէ ստուգիւ մահառիթ, կարէ իսկ հաւանակա՛ նագոյնս հատուցանել, թէպէտ և չէ պարտական. զի եղբայրսիրութիւն ոչ ստիպէ ցայնվայր։ Այլ թերութիւն լինի մանկանն, այսինքն եթէ վտանգ իցէ թերի կամ անառողջ ծնանելոյ մանկան՝ ի մերձաւորութենէ անտի, ոչ ազատ կացուցանէ՝ ի հատուցանելոյ զամուսնական պարտս, որպէս ուսուցանէ սուրբ Աւգուստինոս. զի որպէս յաւելու, "Լաւ իցէ նմա այնպէս ծնանել քան ոչ ծնանել,,։

Ազատ է կին յամուսնական պարտուց, եթէ զվարձ առեալ գիտիցէ՝ զի չկարէ առանց վտանգի կենաց ծնանել, որպէս ուսուցանեն բարեյականք առ հասարակ։ Այսման օրէն համարի կնոջ հատուցանել, թէպէտ և մեռեալս ծնանիցի միշտ զորդիս. այլ հանրագոյն կարծիք զհակառակն հաստատեն, եթէ չիցէ վտանգ անժուժկալութեան. այլ միշտ իսկ, որպէս յաւելու Աստուածաբեզ, իցէ այս վտանգ, եթէ պարտ իցէ ամուսնոյ վասն այնորիկ հրաժարել միշտ՝ ի միմեանց։

51. Ոմանք մեղք են ամուսնոյ նահանջել զերծմն՝ ի սերմանել ամուսնակցին, կամ յետ սերմանելոյ նորոյ՝ ի բաց կալ՝ չև սերմանեալ միւսոյն. զի հաւասար է այս խափանելոյ զորդեծնութիւն։ Վերակատար առնել զմերձաւորութիւն առ վտանգի և եթէ գայթակղութեան կամ կենաց օրէն է, որպէս ասացաք՝ ի թիւ 40։ Նմանապէս մեղանչէ կին եթէ իսկ և իսկ զհետ մերձաւորութեան յարիցէ կամ միշտ. իսկ ո՞ իսկ ասեմ, զի չէ նա պարտական անշարժ կալ ընդերկար։ Վարձեալ և աղջկան բռնաբարելոյ չէ օրէն զսերմն առն վերել արտաքս, այլ խափանել և եթէ զսերմնաւորութիւն. զի զսերմն ընկալեալ ոչ է մարթ արտաքսել առանց

թէնամանելոյ զմարդկային սերունդ։ Եթէ այր առ ծեր-
բուԹեան և կամ վասն խօԹուԹեան յաձախ իսկ ըզ-
սերմն արտաքս հեղուցու, սակայն օրէն է նմա ըստ հա-
սարակաց վարդապետուԹեան մերձենալ առ կին իւր՝
ցորչափ իցէ նմա յոյս հաւանական՝ ի ներքս սերմանե-
լոյ, զի են նմա յայնժամ իրաւունք մերձենալոյ։

52. Պարտ է ամուսնացս վասն ամուսնական պար-
տուցն հատուցանել ընակել՝ի միասին, ոչ միայն՝ի նմին
տան՝ այլ և՝ի նմին առագաստի. եԹէ ոչ՝ի հասարա-
կաց հաւանուԹենէ կամիցին կալ ուրոյն առանց վասն-
զի անժուժկալուԹեան և առանց միաստու դաստիարա-
կուԹեան որդւոց։ Այլ օրէն է առն սուզ լինել ժա-
մանակ գնալ ուրեք յուխտ կամ յայլ լինչ գործ օրինա-
ւոր, և և ընդդէմ կամաց կնոջն. այլ կնոջ ոչ է օրէն
առանց կամաց առնն։ Արդ իսկ այր հեռի կալ ընդ եր-
կար վասն հասարակաց լինչ բարւոյ կամ սիրոյ ընտ-
անեացն, որպէս ասեն Սանքէզ, ԲասԹրոփալ, Պոս-
սիոյ, Լայման և այլք. այլ պարտական է և զկին իւր
ածել՝ի միասին, եԹէ չիցէ գժուարին և կամիցի կինն։
Այլ ԵԹէ երբ պարտ իցէ կնոջ գնալ զհետ առն իւրոյ,
և առն ածել զնա ընդ իւր, տես զոր լինչ ասացաքն՝ի
գլ. Ը. 13։

Պիտեալի է զի չէ օրէն առն հրաժարել յամուսնական
պարտուց կամ՝ի բնակակցուԹենէ ընդ կնոջ, վասն չհա-
տուցանելոյ նորա զօժիան պայմանեալ։ Այլ միայն չէ
պարտական մնուցանելոյ զնա, եԹէ կամաւ չհատուցա-
նիցէ զխոստացեալն. զնոյն իմն եԹէ չկամիցի նա բնա-
կել ընդ իւր։ Սակ եԹէ առանց յանցանաց կնոջն կամ
խոստացողին չիցէ հատուցեալ օժիտ նորա, կամ ակա-
նմէ չբնակիցէ ընդ առն իւրում, և պակասիցէ նմա ապ-
րուստ, պարտական է այր նորա կերակրել զնա։ Պար-
ձեալ եԹէ այր ըմբռնեսցէ զկին իւր՝ի շնուԹեան, օ-
րէն է նմա չտալ լինչ կնոջն՝ եԹէ հրատարակեալ իցէն
յանցանք նորա, և ոչ պատուհասիւն այնուհետև լիցի նմա
առակիլ։ Զայս այսպէս ուսուցանեն Հանրագոյն և հա-
ւանականագոյն կարծիք. զնոյն է ասել ըստ Սալմանտի-
կեանց և ըստ այլոց զկնոջէ, որ ընդունի համբոյրս հրա-
պարակաւ, կամ՝ի ծածուկ՝ այլ կարի անհամեստս,
աղնուական լինին գոլով։

ՅՕԴՈՒԱԾ Լ

ՅԱՂԱԳԱՑ ԽԱՓԱՆԻՉ ԱՐԳԵԼԻՑ

53. Ո՞ր են արգելք:
54. Ա. Արգելական հրաման: Բ. աւուրք՝ յորս չլինին հարսանիք. արգելաճ կոչ յայնժամ լուծին հարսանեաց. արգելեաճ կոչ օրհնութիւն պսակի: Գ. Հարանախօսութիւն: Դ. Ուխտ: Կոչ նշանութիւն եպիսկոպոսի անօրինել զուխտ ողջախոհութեան:
55. Գողացիկ հարսանիք:
56. Պարտք ծանուցանելոյ զարգելս, և երբ խափանէ ծանուցումն:
57. Բաւական կոչ համբաւ. հարցմունք պսակելեաց. եթէ ժողովրդապետին ծանօթ կոչեն արգելքն:
58. Երբ կարէ և պարտի եպիսկոպոսն անօրինել զերկրակի հրատարակումն: Կարէ՞ և փոխանորդն կամ ժողովրդապետ անօրինել:

53. Երկեակ ազգ են արգելից պսակի. խափանիչք՝ որ օրինադանց առնեն զայն, կամ խափանեն զկատարումն նորին. և լուծիչք՝ որ անվաւեր առնեն զայն: Ընդերկբայելի է, և մանր իսկ հաւատոց, ունել եկեղեցւոյ իշխանութիւն սահմանելոյ զերկաքանչիւրս, որպէս յայտ արար ժողովն տրիդենտեան. զի թէպէտ և չկարէ եկեղեցի անպօր առնել զհաւորդութս յորժամ պայմանք նորին կոչեն կատարեալ, սակայն զի՛ ի խորհուրդ պատկին դաշինք և ոս են՝ կարէ եկեղեցի վանն իրաւացի պատճառաց անպօր առնել զդաշինս. և յայնժամ առ՛ի չըգոյէ դաշանց՝ անվաւեր լինի խորհուրդն: Ի յաղօրդ յօդուածիս ասասցուք զլուծիչ արգելից, ասա զիսանչաց ևեթ: Նոց՛ ի մահուչան մերձաց և՛ ի բանադրանաց, են և քառեակ արգելք՝ որովք չէ օրէն առնել պսակ: Ա. Արգելական պատուէր եկեղեցւոյ: Բ. Աւուրք՝ յորս չլինին հարսանիք: Գ. Հարանախօսութիւն: Դ. Ուխտ:

54. Ա. Արգելական պատուէր եկեղեցւոյ է, յորժամ եկեղեցի՛ ի ձեռն եպիսկոպոսին կամ ժողովրդապետի արգելու զպսակ՝ ուր կոչ ինչ երկբայութիւն արգելից կամ անկարողութեան պսակելեաց: Բ. Աւուրք յորս չլինին հարսանիք՝ առ մեզ են՛ ի Յիսնակաց բարեկենդանէ մինչև ցվերջ Աղաչաւորաց, ՛ի քուն բարեկենդանէ մինչև ցվերջ ութօրեից Հոգեգալստեան

տեան, և շաբաթապահք, որպէս նշանակին յօրացոյցն: Իսկ ըստ Յատնեաց յառաջին կիրակիէ Դաւատեան մինչև ցՊատուածծայայտնութիւն, և յօրէ մնոյրոց մինչև ցվերջ ութօրիից զատկին: Դայց գիտելի է զի յաւուրս յայսոսիկ արգելեալ է ջառնել եւթ հանդիսաւոր օրհնութիւն պահկի և խնջոյս հարսանեաց, որպէս և՝ ի հարսանիս այրուց. այլ պահկիլ և ածել զհարսն լուելեայն՝ ի տուն, և լրումն իսկ առնել հարսանեացն չէ արգելեալ, որպէս ուսուցանեն Պետրոսինոս, Յանքէզ, Յոնոյիոյ, Վինեսաթէլլի, Պռաչինա, Յաքրուա, Կարդինալ Յամպեգիոնի և այլք. և սուրբ Ժողովն՝ տրիդենտեան սահմանադրութեանց աւանդապահ՝ յայտ առնէ, զի կանոնք եկեղեցականք՝ որ արգելուն՝ խրատականք են և ոչ հրամայականք:

Գ. Ներանախօսութիւն ընդ այլում, որ չև ևս իցէ լուծեալ, զորմէ ասացաք՝ ի նախորդ յօդուածիս: Դ. Ուխտ, այսինքն պարզ ուխտ ողջախոհութեան կամ կրօնի: Պիտելի է զի չիք իշխանութիւն եպիսկոպոսի տնօրինելոյ զուխտ ողջախոհութեան յառաջ քան զպատակ, եթէ չիցէ այն պատժական կամ պայմանաւոր ըստ ասացելումն՝ ի գլ. Ե. 49. բայց միայն՝ ի վտանգի անժուժկալութեան կամ այլ ինչ ծանր պճասու՝ ի յաւելն, յորժամ չիցէ ժամանակ դիմելոյ առ Պապն, որպէս ուսուցանեն Յանքէզ, Սուարէզ, Լեսիոյ, Նաւարրոյ, Սոթոյ, Սիլուիոյ, Պալմատիկեանք և այլք, զի վերապահութիւն առ՝ ի ձեռնէ՝ ոչ առ՝ ի *ակել սահմանեալ է: Իսկ յետ պահկին եթէ եպիսկոպոսն, և եթէ վանահորդ նորա ըստ իշխանութեանն արձակելոյ զամենայն վերապահեալս եպիսկոպոսին, կարեն տնօրինել զուխտ ողջախոհութեան արարեալ ոչ միայն յետ պահկին, այլ և յառաջ իսկ քան զայն՝ որպէս ուսուցանեն Սոթոյ, Պանքէզ, սուրբն Ղնտոնինոս, Նաւարրոյ, Ռոնչինա, և այլք ընդ սուրբ Ղգուինացւոյն: Ի բայց առեալ զուխտ ողջախոհութեան ամուսնոց՝ ի հասակաւորութենէ արարեալ, որ Հռոմայ Հայրապետին է վերապահեալ: Իսկ զամենայն արգելս խափանիչս պահկի, բայց յուխտէ ողջախոհութեան և՝ ի հարսնախօսութենէ, և որ այլ ինչ արգելք յետ պահկի՝ ի վերայ հասեալ, իշխանութիւն է եպիսկոպոսի տնօրինելոյ:

55. Նայ յասացելոցս յօրինաւորութիւն պսակի խնդրին ըստ տրիդենտեան ժողովոյն սահմանադրութեան և երրակի յայտարարութիւնք։ Եւ պայմանք յայտարարութեանցս են, նախ՝ զի ժողովրդապետն ինքնին, կամ այլ ոք յերիցանց՝ ի հրամանէ նորին, առցէ զայնս։ Երկրորդ՝ զի արասցէ եկեղեցւոջ՝ ի մէջ պատարագի. այլ հաւանականաբար օրէն է ըստ աստուածաբանից առնել զայն և՝ ի բեմախօսութեան կամ՝ ի հանդէս Թաւիւոյ, և արտաքոյ իսկ եկեղեցւոյ՝ ի խառան ժողովրդեան, զի և այսպէս դիտաւորութիւն ժողովոյն առնուս կատարումն։ Երրորդ՝ առնել զայսպարարութեանն՝ ի վիճակի, յորում բնակեն խօսեցեալքն. վասն որոյ եթէ յայլ և յայլ վիճակի ժողովրդապետութեան իցէ բնակութիւն նոցա, և չիցեն մերձ առ միմեանս վիճակքն, պարտ է յերկաքանչիւր իսկ եկեղեցւոջ առնել զայնս։ Եւ եթէ սակաւ ժամանակ իցէ բնակութեան նոցա՝ ի վիճակին՝ չէ բաւական առնել անդ, այլ պարտ է յայտ առնել և ուսոյ անդր փոխեալ իցէ նոցա զբնակութիւն իւրեանց, որպէս հաւանականապոյս յոյժ ուսուցանեն Անքէզ, Վ.ոնչինա, Պարպոզա, Ռոնքալեա և այլք ըստ յայտարարութեան նոյն սուրբ ժողովոյ։ Իսկ եթէ ոմն՝ ի նոցանէ իցէ օտարական, չէ օրէն ժողովրդապետի առնել զայսպարարութիւնն, եթէ ոչ նախ վաւերական վկայականաւորեալ իցէ առ թեմական եպիսկոպոսունս գոլ նորա ամենի։ Երրորդ՝ առնել զայսպարարութիւնն յերիս տօնս անընդհատ. կէսք յաստուածաբանից ընդունելի համարին, եթէ չիցեն և տօնքն անընդհատ, շատ է զի ի՝ մի աւուրք բազումք ընդ մէջ անցանիցեն. բայց այլք ոչ ազատ կացուցանեն զայն՝ ի ներելի մեզաց։ Իսկ եթէ յետ յայտարարութեանցն յամեսոյ պսակն աւելի քան ղերկամեայ աւուրս, պարտ է կրկնել զայսպարարութիւնն՝ եթէ ոչ այլապէս թուեսցի եպիսկոպոսին։

56. Երդ՝ ի կատարել յայտարարութեանցն՝ եթէ պիտիցէ ոք արգելս ինչ զպսակելեացն, պարտականն իցէ ծանուցանել զայն, և և՝ ի չկարելն ցուցանել զայն։ — Հասարակաց և ողջմտապոյն կարծիք պարտական զնա համարին. զի և միոյ ուրուք վկայութիւն, թէպէտ և դատախազի և չարախօսի, բաւական է առ՝ ի յայտ ա-

ծել հետապօտութեամբ զՀնմարտութիւն. զի և կանոնք եկեղեցականք շատ համարին յարդելութիւն պսակի զվկայութիւն մօր, որ ապրականա վնոսա հասպատիեսդէ գոլ: Բաւական է դարձեալ յարդելութիւն պսակի ըստ նոցին կանոնաց՝ համբաւ ազգականութեան նոցա:

Եթէ ոք ընդ բնական դաղտնեօք, և ոչ երդմամբ խորհրդապահութեան, գիտիցէ արգելս ինչ՝ պարտի ծանուցանել զայն, որպէս ուսուցանեն Անքիղ, Լատքոպար, Պոսիոյ, Պարպոզա, Աղմատիկեանք և այլք ընդ սուրբ Դաւթեացն: Այլ իմա, եթէ առանց նեղութեան ոք կարիցէ առնել զծանուցումն. զի ոչ ծանր ինչ նեղութեամբ, և ոչ գայթակղութեամբ այլոց պարտական է ոք՝ ի վկայութիւն: Իմա դարձեալ յետ ազդարարութեան առ պսակելիս. զի չէ ծանուցեալ եպիսկոպոսին կամ ժողովրդապետի զարդելն, պարտ է ազդ առնել զայն պսակելեաց՝ եթէ իցէ յոյս հրաժարելոյ նոցա՝ ի պսակէ:

Իսկ առ՝ ի խափանումն պսակին ծանուցմամբ վկայի, կարևոր է նախ՝ զի վկայն ոչ միայն ծանուսցէ զարգելս՝ այլ և վկայեսցէ վասն այնորիկ, թէպէտ և ինքնակամ արարեալ իցէ զծանուցումն. բայց եթէ ցուցցէ զայն՝ ի համբաւոյ, շատ իսկ է յայնժամ ծանուցումն: Երկրորդ՝ զի վկայեսցէ կամ ծանուսցէ երդմամբ: Երրորդ՝ զի վկայեսցէ ստոյգ գիտութեամբ, և ոչ՝ ի լուոյ. բայց եթէ արգելքն իցեն ազգականութեան կամ խնամութեան, շատ է զի՝ ի ստոյգ և յարժանահաւատ որերոյ իցէ լուեալ: Չորրորդ՝ զի վկայն չիցէ անարգ ոք. բայց եթէ այնպէս գաղտնի իցեն նրքան՝ զի չիցէ մարթ այլ ազգ ապացուցանել, ընդունելի է յայնժամ առ Հարկի և այնպիսւոյն վկայութիւն, որ ըստ ինքեան չիցէ բաւական:

57. Համբաւ և եթէ արգելից շատ է՝ ի խափանումն պսակի, որպէս՝ ի վեր անդր ասացաք. այլ ոչ զօրէ այս՝ եթէ ազգականք պսակելեացն կամ ինքեանք իսկ հարան և վեսայ զՀակառակն երդմամբ հաստատեսցեն: Ի յորժամ հարցանիցին ըստ օրինի, պարտ է նոցա կամ խոստովանել զարգելն, և կամ հրաժարել՝ ի հարսանեաց, թէպէտ և չիցեն արգելքն ապացուցեալ: Այլ եթէ առեալ իցէ նոցա տնօրինութիւն՝ ի ծածուկ, և ա-

պելքն չկեն ապացուցեալ, օրէնն է նոցա լսել զայնս։ Եթէ ժողովրդապետան կամ եպիսկոպոս կամ դատաւոր ինքն միայն գիտիցէ զարդելսն, միայն թէ չկեն ընդ կըն- քոյ խոստովանութեան գիտութիւն նորա, պարտական է խափանելոյ զպատկն։ Եւ ոչ զօրէ ինչ ասել՝ թէ պաշտօնի մեղաւորն չկեն մարթ զանազանել զկորհուրդ՝ խնդրել նորա զայն առաջի այլոց. զի այդ զօրէ ուր չկեն այլ ինչ ջոր բաց յանարժան ընդունելութենէ խորհըր- դոյն, այլ ոչ ուր կեն և այլ ծանր միասք՝ որպիսիք յառաջ դան յաձախ յանվաւեր հարսանեաց։ Ապա ո- րոյ պարտ է ժողովրդապետի ընդ ծանր մեղաց քաջ քննել և հետազօտել զարդելս յառաջ քան զպատկ։

38. Իչխանութիւն է եպիսկոպոսին տնօրինել զմի յերրակի յայտարարութեանց, և զերիսն ևս՝ եթէ ի- ցեն իրաւացի պատճառք, որպէս եթէ վտանգ հաւա- նական կայցէ բանսարկուաց խափան լինելոյ պատկին՝ որպէս ժողովին տրիդենտեան ակնարկէ, և կամ որպէս աստուածաբանք յաւելուն՝ եթէ յաւարտից կեն պա- կելքն, կամ անցեալ զաւուրքն, կամ յոյժ անհաւա- սարք ըստ աստիճանի, ըստ տիոց, ըստ Հոխութեան և ըստ այլոց հանգամանաց. և կամ եթէ բարոյապէս կեն ստոյգ զի չկեն ինչ արգելք. վասն որոյ պարտ է եպիս- կոպոսին՝ տնօրինելն ստուգել միշտ այլազգ զերսն։ Ա- յոյժ կարևոր կեն տնօրինութիւն առ՝ի խափանել զգ- ծանր ինչ միասս հոգևոր կամ մարմնաւոր, կամ առ՝ի բառնալ զարգելս մեծի բարւոյ, և և առանձին ուրուք, պարտական իսկ է եպիսկոպոսն տնօրինելոյ. որպէս նախ՝ եթէ կեն վտանգն ակնարկեալ՝ի սրբոյ ժողովոյն։ Երկ- րորդ՝ եթէ կարևոր կեն վաղվաղել զպատկն առ՝ի խա- փանել զնախատինս պատկելեացն կամ զզաւակի նոցա, որպէս եթէ նախ քան զպատկ եկեալ կեն նոցա առ մի- մեանս, և պարտ կեն փեսային ուղևորել, կամ՝ի վը- տանգի մահու կայցէ կամ յեղափոխութեան կամաց։ Եր- րորդ՝ եթէ ծնօղք փեսային նեղչեն զնա ընդ այլում ան- արժանի պատկել։ Չորրորդ՝ եթէ ծանր ինչ վտանգ հոգևոր կամ մարմնաւոր առաջի կայցէ։ Հինգերորդ՝ եթէ աղուհացք կամ պահք ծննդեանն Քրիստոսի ա- ռաջի կայցեն, կամ այլ ինչ սոցին սակի պատճառք ըստ նահականաց խորհրդոց։

59. Իցէ օրէն և վոխանորդի եպիսկոպոսին կամ ժողովրդապետի անօրինել զերբակի յայտարարութիւնս։ — Հաւանականագոյնս օրէն համարին վոխանորդի՝ Ամնքէզ, Պրասթրոփալ, Պոնաչինա, Լվսել, Պարտոզա, Լաւարդոյ, Ռոնքալեա, Պոնչինա և այլք, զի մի ատեան ե նորա ընդ եպիսկոպոսին։ Իսկ ժողովրդապետի չէ օրէն. և եթէ իշխեսցէ օրհնել սպակ առանց յայտարարութեանցն, զրկի՛ ի պաշտամանէն զերեամ մի, այլ յետ վճռոյ։ Ըստ Ամնքէզ, Լայման, Լաքրուա, Ռոնքալեա և այլք յաւելուն հաւանականաբար, զի եթէ իցէ՛ ի միջի պատճառք՝ վասն որոց պարտ իցէ եպիսկոպոսին անօրինել զյայտարարութիւնս, և չիցէ մարթ դիմել առ նա, և վտանգն ստիպեսցէ, յայնժամ օրէն ե ժողովրդապետի ոչ թէ անօրինել՝ այլ յայտ առնել զի ոչ ստիպէ անդ պատուիրանն, եթէ միայն դիտիցէ հաւաստեաւ զի չեն արգելք՛ ի միջի։

ՅՕԴՈՒԱԾ Ը

ՅԱՂԱԳՍ ԼՈՒԾԻՉ ԱՐԳԵԼԻՑ

60. Ո՞ր այն իցեն արգելք լուծիչք սպակի։
61. Ա. Վրիպակ անձին և անգիտութիւն հանգամանաց նորա։
62. Բ. Անգիտութիւն հաւաստութեան նորա։ Գ. Ուխտ։ Դ. Աղգականութիւն։
63. Ե. Ոճիր։
64. Զ. Կրօնից զանազանութիւն։ Է. Բռնութիւն և երկիւղ։
65. Ը. Սուրբ կարգ։ Թ. Կապ ամուսնութեան։ Ժ. Անվայելչութիւն։
66. ԺԱ. Տիք։
67. ԺԲ. Խնամութիւն։
68. Արգելք խնդրելը զամուսնական պարտս. և ուր իցէ անօրինել զայն։
69. ԺԳ. Գողացիկ պսակ, և յաղագս ընծերակայութեան վկայից։
70. 71. Ընծերակայութիւն ժողովրդապետին։
72. Յաղագս Թախտաւականաց և օտարականաց։
73. Որպիսի՛ ընծերակայութիւն ժողովրդապետի իցէ կարևոր։
74. 75. ԺԴ. Անկարողութիւն։
76. ԺԵ. Առևանգութիւն։

60. Ըստ ՛ի պակասութենէ հաւանութեան, են և արգելք լուծիչք սպակի, և են այսոքիկ։ Ա. Ընդիմութիւն անձին և հանգամանաց նորա։ Բ. Ընդիմութիւն աստիճանի նորա։ Գ. Ուխտ։ Դ. Ազգականութիւն։ Ե.

Ախիր։ Զ. Ալօթից զանազանութիւն։ Է. Խոնարհութիւն։ Ը. Սուրբ կարգ։ Թ. Կապ ամուսնութեան։ Ժ. Ընակցելութիւն։ ԺԱ. Տէր։ ԺԲ. Խնամութիւն։ ԺԳ. Կոյսական ամուսնութիւն։ ԺԴ. Ընկարողութիւն։ ԺԵ. Ընեանկութիւն։

61. Ա. Ընգիպոսին՝ անձին ամուսնոյ ըստ բնական իսկ օրինաց անվաւեր առնէ զպսակ, թէպէտ և յաղթելի իցէ անպիտութիւնն, թէպէտ և ոչ այն լեալ իցէ պատճառ դաշանցն. որպէս զի եթէ ծանուցեալ իսկ էր զվնասակին՝ սակայն ոչ հրաժարէր ՚ի դաշանց անտի։ Իսկ անպիտութիւն հանդամանաց անձին ամուսնոյ, որպէս համարել ազնուական կամ կոյս կամ ձոխ որ ոչն իցէ, ոչ առնէ անվաւեր զպսակ ըստ հանրական և ողջմտագոյն վարդապետութեան, թէպէտ և անպիտութիւնն այն իցէ լեալ պատճառ դաշանցն։ Օ՚ի է իսկ հաւանութիւն ընդ էական մնան ամուսնութեանն՝ որ է անձնն. և զի հանդամանք անձինն և՝ եթէ զօրէին առնել անվաւեր զպսակ, յաձախէին վէճք, և անթիւ պսակք լուծանէին։ Ընայց զօրէն առ այն և հանդամանք, եթէ էականք իցեն. և առ՚ի գիտել զայնս՝ երեսակ կանոնք են։ Ընաջլին՝ եթէ ոք կամեցեալ իցէ և կամիցի այնու հետ պսակիլ։ Ներկրորդ՝ եթէ հանդամանքն անհաղորդականք իցեն այլում. որպէս եթէ ոք ընդ անդրանկի արբայնի համարիցի պսակիլ, զի անհաղորդելի այլում են հանդամանքն և որոշիչ անձինն. այլ ոչ այսպէս է՝ եթէ համարիցի ընդ միում յորդւոց կամ ՚ի դստերաց արբայն պսակիլ, զի այս ոչ որոշէ զանձնն. բայց եթէ դէնաւորաբար վանն արբանն զարմին հաւանեալ իցէ ընդ պսակն, որպէս արդ ասացաք։ Ներկրորդ՝ եթէ ուժեք չիցէ այնչափ ինչ փոյթ զանձնէ ամուսնոյն, որչափ զհանդամանաց ինչ նորա՝ վանն որոյ հաւանի պսակիլ ընդ նմա. որպէս եթէ ասիցէ՝ Կամիմ ընդ ազնուականի ոմեէ պսակիլ, որպէսզի է ընդ որոմ պսակիմ։ Ընայլ ոչ այսպէս է, եթէ ասիցէ՝ Կամիմ պսակիլ ընդ սմա, զոր համարիմ ազնուական։ Օ՚ այս այսպէս ուսուցանեն Սոթից, Աիլուխոյ, Հոլզման, Ծամպուրինի, և այլք ընդ սուրբ Ընդունացւոյն։

62. Բ. Ա՚ոաքառնեամբ է իմանալ զծառայական կարգ. վանն որոյ որ յանդէտս պսակի ընդ աղախնոյ, ան-

վաւեր է պսակն, թէպէտ և թանձր ևս ապիտու-
թիւն նորա, որպէս հաւանականապէս ասեն Անքէզ,
Պոնչինա, Ամատիկեանք և այլք: Իսկ եթէ գիտու-
թեամբ պսակեսցի, վաւեր է պսակն՝ բայց անկանոն.
նոյնպէս վաւեր է, եթէ ծառայ յանդիման իսկ պսակեսցի
ընդ աղախնոյ՝ որպէս հաւանականապէս հաստատեն
ընդ սրբոյ Ալֆոնսացւոյն Անքէզ, Պոնաչինա, Ամա-
մատիկեանք և այլք: Նոյնպէս վաւեր է պսակն, որպէս
հաւանականաբար համարին Անքէզ, Պոնաչինա, Ամա-
մատիկեանք և այլք, եթէ աղախին՝ ի պսակելն լոյծ ա-
զատ, որպէս պատահէ յորժամ տէր նորա տայ զմուր-
հակ օժտի նորա, կամ ինքն զնա հարանածէ:

Գ. Ո՞րպէ՞ս է իմանալ զհանգիստաւորն, զոր ուխտէ
զբ յընդունելն զսուրբ կարդ կամ՝ ի կրօնաւորելն:
Սուրբ Ալֆոնսացին, սուրբն Ընտոնինոս, Սուարէզ,
Վասկրուիալ, Լեսիոյ, Անքէզ, Կայեթանոյ, Փոն-
ցիոյ և այլք հաստատեն զի կարող է Պապն տնօրինել
զուխտ կրօնաւորութեան. զնոյն իմա և զուխտէ սրբոյ
կարդին:

Դ. Արդարև է ապացանուելի. նախ օրինական՝ որ
յառաջ գայ՝ ի կատարեալ որդեգրութենէ, այսինքն
յայնմանէ՝ որ գերագոյն իշխանութեան հրամանագրով
լեալ: Այս լուծանէ սա զպսակ հայրագրի ընդ որդե-
գիր ընդ կին և ընդ որդիս նորա, և զկնոջ հայրագրի
և զարենակցաց նորա առաջին աստիճանի: Արկրորդ
հոգևոր՝ որ յառաջ գայ՝ ի մկրտութենէ և՝ ի դրոշմէ,
և լուծանէ զպսակ մկրտողին ընդ մկրտեալն, և զկնքա-
հօր ընդ մկրտեալն և ընդ ծնօղս նորա: Տես զոր ինչ
յաղագս այսորիկ ասացաք՝ ի գլ. ԺԴ. 33 և 53: Արկ-
րորդ մարմնաւոր՝ որ յառաջ գայ յարենակցութենէ ի-
ջելոց՝ ի նմին բնէ. և սա լուծանէ զպսակ ընդ դիծ
կողմնական մինչև յաղդ չորրորդ ըստ եկեղեցական օ-
րինաց, իսկ ընդ գիծ ուղիղ միշտ իսկ. այլ ըստ բնա-
կանն թէ ըստ եկեղեցական օրինաց լուծանիցէ, խնդիր
է առ աստուածաբանս: Արդ քանզի հաւանական է զի
առաջնոյ եւեթ աստիճանի ընդ գիծ ուղիղ լոյծ արգե-
լեալ՝ ի բնական օրինաց, զայլ ամենայն աստիճանս կա-
րէ Պապն տնօրինել, որպէս հաստատեն Լեսիոյ, Լո-
կոյ, Անքէզ, Ռոնքալեա, Ամատիկեանք և այլք: Տես

և 'ի գլ. թ. 18։ Այս որոշելոյ գաստիճանս արհնակցու-
թեան այս են կանոնք։ Ա։ Ընդ գիծ ուղիղ այնչափ են
աստիճանք որչափ անձինք, բայց 'ի նախահօրէն՝ որ ոչ
մտանէ երբեք 'ի թիւ։ Բ. Ընդ հաւասար գիծ կողմնա-
կան որչափ աստիճանս իցէ հեռի փեսային 'ի հաստարա-
կաց քնէ հարսին, նոյնչափ հեռի են 'ի միմեանց։ Հա-
ւասար ասի գիծ կողմնակաւն, յորժամ 'ի նոյն հաստարա-
կաց քնէ հաւասարապէս հեռի իցեն հարսն և փեսայ.
իսկ անհաւասար, յորժամ անհաւասարապէս իցեն հե-
ռի։ Գ. Ընդ անհաւասար գիծ կողմնակաւն, որչափ աս-
տիճանս հեռի իցեն ազգականք 'ի հաստարակաց քնէ,
նոյնչափ հեռի են և 'ի միմեանց. որպէս և տեսանել 'ի
ցուցակիդ։

	Գ. Հաւ հաւոյ. Հան հաւոյ.	
Գ. Եղբայր և քոյր նախահանոյ.	Գ. Նախահաւ. Նախահան.	Գ. Եղբայր և քոյր նախահանոյ.
Գ. Եղբայր և քոյր հաւոյ.	Բ. Հաւ, Հան.	Գ. Եղբայր և քոյր հանոյ.
Բ. Հօրեղբայր, Հօրաքոյր.	Ա. Հայր, Մայր.	Բ. Մօրեղբայր, Մօրաքոյր.
Ա. Եղբայր.	✠ Բուն.	Ա. Քոյր.
Բ. Ուստերք և դստերք եղբօր.	Ա. Ուսար և դուսար.	Բ. Ուստերք և դստերք քեռւ.
Գ. Թոռն յեղբօրէ.	Բ. Թոռն.	Գ. Թոռն 'ի քեռւէ.
Դ. Թոռնեայ յեղբօրէ.	Գ. Թոռնեայ.	Դ. Թոռնեայ 'ի քեռւէ.
	Դ. Թոռն Թոռին։	

63. Ե. Ձէրթ լուծիչք պահակի երիք են. մարդա-
սպանութիւն, շնութիւն և առևանգութիւն։ Առև-
անգութենէ հասանի մեզ ասել 'ի թիւ 76։ Նոյն ար-
դելք մարդասպանութեան և շնութեան երրակի պա-

տահէն. մի՝ երկաքանչիւրոցն իսկ պսակելեաց համա-
ւոհ գոլով՝ ի սպանուելիւնն. երկրորդ՝ միոյն ևէթ գոր-
ծելով զսպանուելիւնն. երրորդ՝ առանց սպանուելեան:
ա. Օ երկաքանչիւրոցն գաւակցուելիւն իմա, յորժամ
հոմանի և կին միաբանին առանց շնուելեան՝ ի սպա-
նուելիւն առն առ՝ ի պսակիլ ընդ միմեանս. և շատ է՝
զի միոյ՝ ի նոցանէ իցէ այս դիտաւորուելիւն, և յայտ-
նեալ իցէ զայն միւսումն՝ գէթ նշանօք, որպէս պատ-
գեւօք, տուիական նամականեւով, կամ կարի մտերմու-
ելեամբ: բ. Յորժամ միոյն ևէթ՝ ի նոցանէ գործեալ
իցէ զսպանուելիւնն առանց համախոհուելեան միւսոյն,
այլ յառաջ քան զսպանուելիւնն շնացեալ իցեն ընդ մի-
մեանս: Այլ պարտ է զի շնուելիւնն իցէ լռացեալ սեր-
ծնարկուելեամբ՝ ի սազմաբոյնն, և ինոջն ևս սերմանե-
լով որպէս հաստատեն Պոնաւինա և այլք, և Այլոյն
Պոնչինա հանրական համարի զայս կարծիս. և Սան-
քեզ, Վասեքուիալ, Ռոնքալեա, Սալմանտիկեանք և
այլք հաւանական կոչեն զայն: Օ՝ ի որովհետև պատիժ
է արդելքս այս, խնդրին յանոյանքն լռացեալ՝ ի տեսակի
նուրում. իսկ առ՝ ի լռումն շնուելեան խնդրի երկաքան-
չիւրոցն սերմանց խառնուելիւն. զի որպէս սուրբ Ա-
գոստինոսին ասէ, խառնելով ևէթ սերմանց երկաքան-
չիւրոցն՝ լինին այր և կին՝ ի մարմին մի: Խնդրի դար-
ձեալ զի երկոքեան ևս իցեն դիտակք նախկին ամուսնու-
ելեան միոյն. վասն որոյ հաւանականաբար ազատ կա-
ցուցանէ զնոսա տգիտուելիւն՝ ևս և մեղադրելի, եթէ
միայն չիցէ կեղծեալ: Խնդրի դարձեալ զի սպանու-
ելիւնն իցէ լեալ վասն ածելոյ՝ ի կնուելիւն զկինն
շնացեալ, և յայտնեալ իցէ այս նմա գէթ նշանօքն՝
գործս՝ ի վեր անդր ասացաք: գ. Առանց սպանուելեան,
շնալով ընդ միմեանս խոստմամբ պսակելոյ: Այլ պարտ
է խոստմանն և շնուելեան կանխել քան զմահ առն կը-
նոջն շնացելոյ, և դարձեալ՝ զի չիցէ նահանջեալ խոս-
տումնն յառաջ քան զշնուելիւն, և դարձեալ՝ զի իցէ
ընկալեալ խոստումնն: Այսոքիկ հաւաստի են առ ա-
ստուածաբանս, այլ են և ինչ ինչ երկբայելի. և նախ՝
հաւանական է զի լռուելիւն ևէթ կնոջն շնացելոյ չիցէ
բաւական յընդունելուելիւն խոստմանն: Երկրորդ՝ զի
ըստ հանրագոյն և ըստ հաւանականագոյն կարծեաց չէ

բաւական խոստումն կեղծեալ, զի բնագիրն օրինացն չհամարի՛ խոստումն զխոստումն կեղծեալ։ Երրորդ՝ զի ոչ բաւէ խոստումն պայմանեալ, զի որովհետեւ ըզպատժոց են բանք՝ խնդրի խոստումն անպայման, որպէս հաւանականագոյնս հաստատեն Լայման, Բոնչինա, Վերիզ և Հոլզման։ Երրորդ՝ զի ըստ հանրագոյն և հաւանականագոյն կարծեաց ոչ խնդրի խոստումն երկուսեքե, զի յօրինս անդ չէր յիշատակ փոխանակաւ խոստանալոյ, այլ ընդունելոյ ևեթ զխոստումն։

Բայց յերեցունց աստի ոձրագործութեանց՝ և ևս չորրորդ լինի, որ ածէ արգելս պատկի. և է չնութիւն առն՛ի կենդանութեան կնոջ իւրոյ, անօրէն ամուսնութեամբ ընդ չնացելումն կնոջ։ Երի ամուսնութիւնն այն անվաւեր է, թէպէտ յառաջ և թէ յետոյ քան զայն լեալ իցէ չնութիւնն։ Սակ որ կենդանեաւ կնոջն խոստանայ ուժեք ածել զնա կնութեան, առանց շնալոյ ընդ նմա և առանց անօրէն ամուսնութեան, ոչ ձգէ յանձն արգելս պատկի՝ թէպէտ և ծանր մեղանչէ։

64· Զ· Երանգանութիւն ևս կրօնի անվաւեր առնէ զպատակ, որպէս ընդ մկրտեալ և ընդ անհաւատ. բայց ընդ ուղղափառ և ընդ հերետիկոս չառնէ անվաւեր, այլ միայն օրինազանց՝ յորչափ չիցէ անօրինեալ՛ի պատկէն։

Է· Բռնութիւն և երկիւղ ըստ բնական և ըստ եկեղեցական օրինաց առնեն անվաւեր զպատակ, թէպէտ և երդմամբ ևս իցէ հաստատեալ. եթէ միայն չերդնուցուսը՛ի վերայ ազատ հաւանութեան իւրոյ, զի յայնժամ պնդատական առնէ զանձն՝ որպէս Լայրն Ալ ևս հաստատէ։ Այլ զի բաւական իցէ երկիւղ անվաւեր առնելոյ զպատակ, խնդրի նախ՝ զի իցէ ծանր. Քանզի ըստ հասարակաց վարդապետութեան և ըստ ուսուցանելոյ սուրբ Աստուածածնայն՝ երկիւղ թեթեւ ոչ է բաւական, և ոչ բնական և ոչ դրական օրինք բաւական համարին զայն։ Ծանր երկիւղն է խմանալ զվտանգ մահու, աքսորանաց, բանտի, անուանարկութեան, տուժից ծանրանց, բանադրանաց, և հանդոյն սոցին վտանգաց անձին կամ աղգականաց մինչև յաղգ չորրորդ։ Սակ երկիւղ ակնածութեան՛ի ծնողաց յաղգականաց՛ի տեսանց՛ի մեծաւորաց չեն բաւական անվաւեր առնելոյ

զպաակ, եթէ չիցէ կցորդ նմին երկիւղ ծանր լինչ չարի, առեւտրական, ցասման, և այլն: Իմդրի երկրորդ՝ զի արտաքուստ իցէ երկիւղն, այսինքն յայլմէ ումեքէ. վասն որոյ չէ բաւական երկիւղ նեղքին, որպէս եթէ ոք առևտրական չարեաց ամուսնանայցէ, ոչ յայլմէ սպառնացեղոյ՝ այլ երևակայելոց յիւրմէ, որպէս ուսուցանեն Յանքէզ, Փոնցիոյ, Սոթոյ, Ռոնքալեա, Պալմատիկեանք և այլք: Իմդրի երրորդ՝ զի յանիրաւի սպառնացեալ իցէ երկիւղն այն. վասն որոյ եթէ փեսայն յետ խոստանալոյ՝ կամիցի անպատճառ հրաժարել, և յահէ արդար սպառնալեաց դատաւորին կամ բողոքոյ խօսեցելոյն պակեսցի, վաւեր է պսակն: Իմդրի չորրորդ՝ զի սպառնալիքն իցեն առ՛ի ստիպել զնա յամուսնութիւն. վասն որոյ եթէ կուսապղծն առ սպառնալեաց վրէժխնդրութեան ազգականաց կուսին առնու զնա կնութեան, վաւեր է պսակն. իսկ եթէ սպառնայցեն սպանանել զնա՝ եթէ ոչ առնուցու զպղծեալն կնութեան, անվաւեր է պսակն: Այլ յորժամ առ ահի անվաւեր իցէ պսակն, գտանի՞ աղատ և կոզմն ահընկեց: — Պէտք կէսք յատուածաբանից հաւանականաբար ազատ և զնա կացուցանեն, այլ հաւանականագոյնս զհակառակն հաստատեն Փոնցիոյ, Կաւարրոյ, Ռոնչինա, Պալմատիկեանք և այլք. զի ոչ է արժան յանցանաց օժանդակել ումեք: Ասանաւանդ եթէ այր ահարկութեամբ առնել հատուցումն նախատանաց նորա, պարտի պսակիլ ընդ նմա՝ որպէս հաստատէ Պասիլիոփալ:

65. Ը. Սուրբ կարգ արգելու զպսակ. ոչ ըստ աստուածադիր օրինաց՝ որպէս ումանք համարին, այլ ըստ եկեղեցական օրինաց՝ որպէս հաւանականագոյնս հաստատեն Յանքէզ, Սուարէզ, Փոնցիոյ, Պելլարմինոս, սուրբն Պոնաւենտուրա, և սուրբ Աղուինացին: Օ՞ի պարզ ուխտ ողջախոհութեան ոչ անվաւեր առնէ զպսակ, այլ հանդիսաւորն եւեթ. իսկ հանդիսաւորութիւն ուխտն յառաջ գայ եկեղեցական օրինաց, ապա կարող է Պապն տնօրինել զայն:

Թ. Պաղ եւս ամուսնութեան անվաւեր առնէ զպսակ. զի որ կապեալն է ընդ ումեք, չկարէ ամուսնանալ ընդ այլում՝ եթէ չիցէ բարոյապաար հաւաստի մահ ամուս-

նոյ իւրոյ. և եթէ երբեք սովին բարոյական առաքինութեամբ ամուսնանայցէ ոք ընդ այլում, յերևել ամուսնոյ իւրոյ՝ պարտի առ նա ինքն դառնալ:

ժ. Ի՞նչ է ուրեմն և ս. Համարի ընդ արգելս լուծիչս ամուսնութեան. զի որ հարսնախօսութիւն ընդ ումեք արարեալ, և ապա ընդ այլում ումեք մերձաւորութեամբ ազգականի նորա ամուսնանայցէ, անվաւեր է պսակն նա: Այլ ազգականութեանն պարտ է գոլ յառաջնում աստիճանի ըստ տրիգենաեան սահմանադրութեան. զի յառաջագոյն արգելքս այս ընդարձակէր մինչև ի չորրորդ աստիճան: Այլ ազատ է յարգելից սակս որոյ չիցէ արարեալ զհարսնախօսութիւն ընդ ուրուք ասել զնա, այլ օրինակ իմն՝ խոստացեալ առնուլ զմի ի դստերաց Պետրոսի, և կամ որոյ պայմանաւ խոստացեալ իցէ, և պայմանն չէ ևս յարդիւնս եկեալ:

Պիտելի է զի պսակ, թէպէտ և անվաւեր, ի վերայ աճէ զարգելս անվայելչութեան մինչև ի չորրորդ ազգ՝ եթէ անվաւերութիւն պսակին չիցէ յառաջ եկեալ առ ի չգոյէ հաւանութեան: Այլ բնաւ իսկ աճիցէ արգելս պսակ անվաւեր առ ի չգոյէ հաւանութեան: — Ասեն, Փռանգիոյ և այլք համարին աճել, եթէ պսակութիւն հաւանութեանն իցէ գաղտ. զնոյն և ըստ հարսնախօսութենէ ասեն առ ուր և իցէ գաղտ թերութեան, յորժամ յարտաքին ատենի իցէ վաւեր: Այլ հաւանականացոյնս զհակառակն հաստատեն այլք. քանզի կանոնք հանրապէս ասեն, զի պսակ՝ առ ի չգոյէ հաւանութեան անվաւեր՝ չաճէ ինչ արգելս. և զայսպարտութիւն ինչ սրբոյ եկեղեցւոյ զայսմանէ յառաջ բերէ Պարպոզա: Իսկ զհարսնախօսութենէ անխտիր յայտ առնէ ժողովն տրիդենաեան յասելն. “Հարսնախօսութիւն, որով իւրք և լեալ անվաւեր, չաճէ արգելս,,: Այլ Հարսնախօսութիւն, լուծեալ ի հաստատակաց հաւանութենէ կամ որով և իցէ իրաւացի պատճառաւ, աճէ արգելս՝ որպէս հաստատեն Անքեզ, Թուրնելի, Վռնչինա, Սոթոյ, Լայման, Պոնաչինա, Սալմատիկեանք և այլք: Ո՛չ ի որովհետև ի վաւերականն հարսնախօսութենէ յառաջ գան արգելք, քան յայտարարութեան սրբոյ ժողովոյն, կամք խօսեցելոյ և որ ինչ այլ ի վերայ հաւեալ պատճառք չկարեն զատ

նալ զայնս : Օ այս վարդապետութիւն հաստատեաց Աղեքսանդր ի՝ Դարձեալ և զոլացիկ ամուսնութիւն, այսինքն առանց ժողովրդապետի և վկայից արարեալ, յառաջ ածէ արգելս անվայելչութեան՝ որպէս հաստատեն Փռնգիոյ, Պասիլիսկիալ, Փինեաթիկլի, Ասքալեա, Սալմատիկեանք, Ծուբնելի, Պռնչինա, Լայման և այլք, որպէս և ժողովն իսկ տրիդենտեան սահմանադրութեանցն աւանդապահ յայտ արար : Այլ գիտելի է զի ամուսնութիւն ուրուք ընդ միում յերկուց քերց, վասն անվայելչութեան լեալ անվաւեր, ոչ ինչ ստանայ հարմնախօսութեան նորա՝ զոր ընդ միւսումն ի նոցանէ արարեալ էին յառաջագոյն :

66. ԺԱ. Աղջիկ պատկի է իմանալ, յորժամ պատանւոյն չէ ևս իցէն ամք 14 կատարեալ, և օրիորդին ամք 12. եթէ միայն չարութիւն ոչ լցեալ ըզնմա, որպէս յաւելոյն կանոնք : Այլ զայս իմա զորոց մերձ իցեն յարբունս, կարողք որդեծնութեան, և խելամուտք ամուսնական կապանաց. զի առ պատկ խնդրի կատարեալ ընտրութիւն, որպէս հաստատեն Յանբլիք, Յոթոյ, և այլք ընդ սուրբ Աքուինացւոյն : Այլ արդեօք անվաւէր իցէ պատկ, եթէ ամք նոցա լցեալ իցեն, սակայն չևս կարող իցեն ի գործ ամուսնութեան : — Ամենք անվաւեր համարին, բայց հանրական կարծիք ղհակառակն հաստատեն. զի չիք ուրեք օրէնք անվաւերութեան պատկի յարբունս հասելոյ, վասն տակաւին անկարողութեան նոցա յորդեծնութիւն. քանզի անկարողութիւնն այն առժամանակեայ է, և ոչ միշտնջենաւոր : Ասն որոյ յաւելոյն հանրագոյն կարծիք, զի պարտ է յայնժամ սպասել արուին մինչև ց18 ամ տիոյն, և իգին ց14 առ ի տուգութիւն : Յակ ծերոյ, ևս և զառանցելոյ, վաւեր է ամուսնութիւն, եթէ միայն կարիցեն գալ առ միմեանս, զէթ ի ձեռն դեղոյ, որպէս հաստատեն աստուածաբանք առ հասարակ ընդ սուրբ Աքուինացւոյն :

67. ԺԲ. Աղջիկ նշանադրեալ, յառաջ գայ ի մերձաւորութենէ միոյ յամուսնացս ընդ ազգականն միւսոյն, և լուծանել զպատկ մինչև ցչորրորդ աստիճան՝ եթէ յօրինաւոր մերձաւորութենէ գայ յառաջ, և մինչև ցերկրորդ՝ եթէ յօրինազանց մերձաւորութենէ, այսպէս ի

տրիդենտեան ժողովոյ սահմանադրեալ։ Այլ գիտելի է զի խնամութիւն ոչ յառաջ բերէ այլ խնամութիւն. վասն որոյ երկուց եղբարց օրէն է պսակիլ ընդ երկուս քոյս, և հօրուն ընդ երբեմն հարսին ուրջանի իւրոյ, ըստ յայտարարութեան սուրբ եկեղեցւոյ։

Գիտելի է դարձեալ, զի եթէ գիտենայցէ ոք ընդ քեռ խօսեցեալըն, և ոչ ընդ միւսմն՝ ի նոցանէ կարէ ամուսնանալ առանց տնօրինման. այլ եթէ յետ տնօրինման անդրէն ընդ նմին քեռ խօսեցեալըն անկանիցի, ոչ ևս պէտք են տնօրինման, ևս և յետ յայտնիւնս գալոյ տնօրինմանն, որպէս Հաւանականագոյնս հաստատեն Սանքէզ, Վուրնելի և այլք ըստ յայտարարութեան սրբոյ գահուն. զի խնամութիւնն համարի բարձեալ տնօրինմամբ պսակին։

68. Ընդելք խնամութեան լուծանէ զամուսնութիւն, եթէ կանխէ քան զայն. իսկ եթէ յետ պսակին ի յամուսնացեալ անկանիցի ընդ ազգականի ուժեք միւսոյն յառաջնում կամ յերկրորդ աստիճանի, արգելեալ մնայ նա՝ ի խնդրելոյ զամուսնական պարտս, որպէս սահմանեն կանոնք, և որպէս Գրիգոր ԺԳ յայտ առնէ։ Այլ յարգելմանէ աստի ազատ կացուցանէ նախ՝ երկիւղ, որպէս եթէ կին առ ակն մեծի ընդ ազգականի ուժեք առն իւրոյ անկանիցի։ Ոյայս այսպէս հաստատեն հանրագոյն և հաւանականագոյն կարծիք. զի երկիւղ ծանր որպէս ազատ կացուցանէ՝ ի մարդկային օրինաց, նոյնպէս և՝ ի պատժոց համարի ազատ առնել։ Գարձեալ և անգիտութիւն ազատ կացուցանէ. քայց երրակի մարթէ դալ անգիտութեան, այսինքն գործոյն, օրինաց, և պատժոյն։ Եթէ գործոյն լոկ անգիտութիւն, այսինքն եթէ անգիտանայ այր զի ազգական կինոջն է նա՝ ընդ ուրուք ընայ, ազատ կացուցանեն զնա բարոյականք առ հասարակ, Թէպէտ և Թանձր տգիտութեամբ անգիտանայցէ՝ որպէս ասեն Սանքէզ, Փոնցիոյ, Նաւարրոյ, Ռաալթրոփալ և այլք. քանզի կանոնք գէթ ուրեմն զնա ընդելոյ սահմանեն զայս պատիժ։ Ազատ է և որ անգիտանայն զեկեղեցական օրէնս, որ ընդ աստուածային օրէնս արգելուն զայն. զի չէ օրէն ուժեք անկանել ընդ նոյն արգելուն զայն. զի չէ օրէն ուժեք անկանել ընդ պատժով, զոր անգիտանայ։ Նաւանական է դարձեալ չանկանել ընդ նուէաւ և այնմ, որ զօրէնսն գիտիցէ՝ բայց

անգիտանայցէ զպատիժն, որպէս հաստատեն Պռնաչէնա, Պռոսիոյ, Վ.ռնչինա, և այլք. զի արդեօք այս է իսկապէս պատիժ, ապա թէ ոչ՝ և որ յանգիտս մեղանչէրն ընդ ազգականի, անկանէր՝ի նոյն արդեօք. և քանզի է պատիժ անսովոր, ոչ ոք յանգիտս անկանի ընդ նովաւ, որպէս ասացուք՝ի Ձառս բանադրանաց՝ի ստորև (գլ. ԺԹ.): Պարձեալ ազատ են յարգելմանէ աստի և որոց չիցէ երկուստեք զմեղսն կատարեալ, երկաքանչիւրոցն և սերմանելով, որպէս հաստատեն Հաւանական, Պասլ Վ.ասթրոփալ, Սիլուիոյ, Սանքէզ, Պռնաչինա, Սալմատիկեանք, տուրբն Պռնաւենթուրա և տուրբ Վ.գուինացին: Վ.այց յերկբայս՝ կատարեալ համարին մեղք երկուստեք:

69. Ըստ հանրական կարծեաց կարող են եպիսկոպոսունք ըստ կարգի իշխանութեան իւրեանց, և կամ գէթ՝ի սովորութենէ այսպէս ընկալեալ, տնօրինել զարգելս զայս, և և աւանդել այլոց զիշխանութիւն տնօրինելոյ, որպէս հաստատեն Պարպոզա, Վոնցիոյ, Սանքէզ, Վ.ասթրոփալ, Պռնաչինա, Սալմատիկեանք և այլք:

70. ԺԳ. Պողաչէկ ամուսնութիւն երկակի է. մի՝ յորժամ առանց երդակի յայտարարութեան առնուն հարսանիքք, զորմէ ասացաք՝ի Թիւ 55: Եւ միւս և՝ յորժամ առանց ժողովրդապետի և վկայից առնուն հարսանիք, զորմէ աստ մեր բանքս են: Ժողովն տրիդենտեան անվաւեր արար զայսպիսի հարսանիս՝ որ առանց ժողովրդապետի կամ հրամանաւ նորա այլոց ուրուք քահանայի, և առանց գոնէ երկուց վկայից կատարին: Եւ զօրէ այս, ուր ժողովն տրիդենտեան իցէ ընկալեալ, և և՝ի ստիպել որպիսի և իցէ հարկի, և և եթէ անյաղթելի տգիտութեամբ այսր պայմանի կատարեալ իցեն հարսանիքն: Այս այսպէս ուսուցանէ հանրական վարդապետութիւն ընդդէմ սակաւուց ոմանց, զի տուրբ ժողովն Բոլորովին անընդունակս յայտ առնէ որ այլ ազգ առնիցեն հարսանիս: Իսկ յաղագս վկայից գիտելի է, զի բաւականք են այք և իցեն, կանայք, մանկունք՝ի տիս բանաւարութեան, անհաւատք, չարահամբաւք, ծնողք, ծառայք, և և անցաւորք ընդ այն, և բոլոր իսկ

անդ կալեալք, որպէս ընդունին բարոյականք առ հասարակ:

71. Յաղովբդապետիւ է իմանալ, ոչ միայն զեպիսկոպոսն իսկ և զառեղակալ՝ի վախճանել նորին, այլ և զաբբայ՝ որոյ է իրաւասութիւն դրեթէ եպիսկոպոսական, և զհանրական փոխանորդ եպիսկոպոսի. որ ընդդէմ հրամանի իսկ նորին վաւերաբար օրհնէ զպսակ որպէս և ժողովրդապետն, չկարելով եպիսկոպոսին առնել զայն նոցա. թէպէտ և մահուչափ մեղանչեն յօրհնելն զայն ընդդէմ իրաւացի հրամանի նորա: Յաղովբդապետ, թէպէտ և անկանոն և արգելեալ՝ի պաշտամանէն, թէպէտ և ընդ մեծաւ բանադրանօք անկեալ, կարէ օրհնել վաւերաբար զպսակ. զի ոչ իրասութեամբ վարի անդ, այլ առընթեր ևեթ կայ իբրև վկայ: Թէպէտ և բանադրեալն անհաղորդելի առընթեր իսկ կալով՝ծանր մեղանչէ և ինքն և պսակեալք, եթէ չտեսիցէ ծանր ինչ հարկ առ՝ի չգոյէ ժամանակի առ եպիսկոպոսն դիմելոյ, որպէս հաւանականաբար հաստատեն Վռնինքիոյ, Փոնցիոյ, Սուարէզ, Վասկուէզ, Պոնաչինա և այլք, բայց հաւանականագոյնս Սանքէզ, Բասէրուիալ, Պարպոզա, Փոնցիոյ, Պոնաչինա, Կայեթանոյ, Սալմատիկեանք և այլք օրէն համարին ժողովրդապետի այլում ուրեք յերիցանց տալ հրաման առընթեր կալոյ պսակին. զի տալ հրաման ոչ է ներգործութիւն իրաւասութեան, այլ իշխանութիւն ընդհանուր նմա՝ի սրբոյ ժողովոյն, ոչ որպէս ժողովրդապետի՝ այլ որպէս վկայի, կացուցանելոյ զայլ ոք յերիցանց փոխանակ իւր: Ընդ այս ինա և զժողովրդապետէ, որ չէ ևս իսկ ձեռնադրեալ՝ի քահանայութիւն. և զքահանայէ՝ որ համարիցի ժողովրդապետ և չիցէ, ըստ ասացելումն՝ի գլ. ԺԲ. 90: Ճատ է և հրամանն ժողովրդապետի լռելեայն, եթէ միայն մարթ իցէ համարել զայն ներկայ հրամանի, և ոչ ապառնի հաստատութիւն, որպէս յաւելուն Սանքէզ, Փոնցիոյ, Վռնինքիոյ, Սալմատիկեանք և այլք: Ճատ է և հրամանն յատկացեալ ընդհատ կամ ահարկութեամբ, և բռնի ևեթ տուեալ, որպէս նոքին իսկ յաւելուն:

72. Օրհնիչ պսակին պարտի գոլ ժողովրդապետ վիճակին՝ յորում բնակեն պսակեալքն. որք եթէ յայլ

եայլ վիճակս բնակիցեն, օրէն է նոցա յորում և իցէ յերկաքանչիւրոյն պսակիլ՝ եթէ բարոյապէս հաւասար լեալ իցէ բնակութիւն նոցա յերկաքանչիւր վիճակի։ Եթէ կեղծեօք փոխիցեն զբնակութիւն իւրեանց յայլ վիճակ և անդ պսակիցեն, անվաւեր է պսակ նոցա. իսկ եթէ չհմարտապէս տեղափոխիցեն, թէպէտ և առ՛ի խոյս տալ՛ի ժողովրդապետէ այնր վիճակի, վաւեր է պսակ նոցա։ Ճ ատ է զի մի՛ ի ժողովրդապետաց պսակելոյն առընթեր կացցէ պսակին, և արտաքոյ վիճակի իւրոյ և թեմի. վասն որոյ վաւեր է պսակ, եթէ՛ի վիճակի ժողովրդապետի հարսին ժողովրդապետ փեսային օրհնեսցէ զպսակն, ըստ յայտարարութեան սրբոյ գահոն. և հանրագոյն կարծիք՛ի մեզս իսկ չհամարին նման զայն։ Եթէ ոք անցցէ՛ի վիճակ այլոյ ժողովրդապետի, ոչ առ՛ի հաստատել անդ զբնակութիւն իւր և ոչ՛ի հարևանցի կալ, այլ զառաւելագոյն մասն տարւոյն, և պսակեսցի անդ, ըստ հաւանականագոյն կարծեաց վաւեր է պսակն։ Կարդինալ Յամպերթինի, Յայման և Կաւարրոյ շատ համարին առ այս՝ եթէ զբնակիլն ինչ մասն տարւոյ կայցէ ոք ուրեք ըստ հարկի պաշտամանն, որպէս բժիշկ կամ դատաւոր կամ ծառայ կամ պանդոկապետ, ըստ ասացելումն՛ի գլ. ԺԴ. 17։

73. Ծ ափսառականաց օրէն է պսակիլ առ ում և իցէ ժողովրդապետի, Թէպէտ և մին միայն՛ի պսակելեաց իցէ Թափսառական։ Ա յլ պարտ է յայնժամ ժողովրդապետին քաջ հետազօտել զնմ մի գուցէ և այլուր իցէ ոք՛ի նոցանէ ամուսնացեալ, և ոչ պսակել զնոսա առանց բացայայտ հրամանի եպիսկոպոսին, որպէս ուսուցանեն Սանքեզ, Վոնցիոյ, Պարպոզա, Սալմանտիկեանք և այլք։ Իսկ զօտարականս ոչ է պարտ պսակել առանց վաւերականի Թեմական եպիսկոպոսի, որ վերկայիցէ զամուրի գոլոյ նոցա. այլ զբանտարկեալս արտաքոյ հայրենեաց իւրեանց չէ օրէն պսակել ըստ յայտարարութեան սրբոյ գահոն։ Ո՛չնոյն հաստատէ կարդինալ Յամպերթինի զՀիւանդաց՝ որ յանկելանոցս կան. և՛ի ստիպել հարկին պսակելոյ զնոսա, չէ օրէն նոցա գալ առ միմեանս՝ մինչէ՛ի յայտ եկեալ ամուրի գոլոյ նոցա։

Վատերբ՛ի բաց ընկեցիկք, որ յորբանոցս կեան,

պարտին պսակիլ առ ժողովրդապետի տեղւոյն ըստ յայտարարութեան սրբոյ գահուն։ 70. Նոյն հաստատէ կարգինալ Լամպերթինի ըստ վաղեմի սովորութեան և զաղջկանց՝ որք ի դստերանոցս կեան և կերակրին, և անտի զօժիտս իւրեանց ընդունին. այլ որք ի դաստիարակութիւն ևեթ կան անդ, պարտ է նոցա առ ժողովրդապետի ծնողաց իւրեանց պսակիլ. իսկ եթէ չիցեն նոցա ծնօղք կամ եղբարք, պարտ է նոցա առ ժողովրդապետի տեղւոյն՝ ուր կանն՝ պսակիլ. զնոյն և զծառայից ասէ, որք ի տան տեառց իւրեանց բնակեն։

73. Ի վաւերականութիւն պսակի խնդրի, ոչ միայն նիւթական՝ այլ և բարոյական ընթերակայութիւն ժողովրդապետին և վկայից. որպէս զի մարթ իցէ նոցա վկայել ոչ միայն զպսակելեացս, այլ և զպսակէ նոցա։ Ասն որոյ եթէ չիմանայցեն զՀաւանութիւն նոցա անդինութեամբ խօսից նոցա, չէ բաւական մի ևեթ թարգման. քայց բաւական է ժողովրդապետին խնդրել զՀաւանութիւն նոցա, թէպէտ և չտեսանիցէ զնոսա՝ այլ զձայն նոցա ձանաչիցէ, թէպէտ և չասիցէ ինչ, թէպէտ և բանի կալեալ իցէ անդ և մերժիցէ զպսակ նոցա, որպէս ուսուցանեն աստուածաբանք ըստ յայտարարութեանց սրբոյ գահուն։ Քայց յայնժամ պսակքն մահուչափ մեղանչեն, եթէ չիցէ զի ժողովրդապետն յանիրաւի հրաժարիցէ ի կալոյ առընթեր, և հարկ իցէ նոցա պսակիլ։ Պարտ է ժողովրդապետին հարցանել զնոսա, և առնուլ զՀաւանութիւն նոցա. և արտասանել ի վերայ նոցա՝ Եւ զտեսցեմ զիջեզ յամուանոս Ուխտ յանուն Տօր և այլն. կամ Եսդ աստուածային հրամանիս և այլն։ Եւ թէպէտ հինք յաստուածաբանից հաւանականաբար ի ներելն մեզս համարին թողուլ զայն ի բաց, քայց Պոսիոյ, Ռեպելլիոյ, Պարպոզա և այլք ոչ աղատ կացուցանեն զնա ի մահուչափ մեղաց։

74. Ժդ. Անկարողութիւն լուծիչ պսակի է ցրտութիւն պսակելոյ, կամ անընդունակութիւն գալոյ նոցա առ միմեանս յորդեծնութիւն։ Եթէ միջնջենաւոր իցէ այս անկարողութիւն և կանխեալ քան զպսակ, և չիցէ մարթ բառնալ այնմիկ առանց հրաշիւ կամ առանց մեղաց կամ առանց վտանգի մահու, ըստ բնական իրաւանց անվաւեր առնէ զպսակ։ Անկարողութեանս այս

միկ մարթ է յառաջ գալ նախ՝ ի կախարդանաց. և յայնժամ եթէ չիցէ մարթ առանց մեղաց բառնալ զայն ցաւն երիս, լուծանի պաակն ըստ կանոնաց։ Այլ-բորդ՝ մարթ է այնմ յառաջ գալ՝ ի ցրտութենէ բնութեան. և յայնժամ ևս եթէ զերեամ մի չիցէ մարթ ամուսնաց ըստ օրինի որդեծնութեան խառնից գալ առ միմեանս, լուծանի պաակն։ Օ՞նոյն ասէ սուրբ Աթանաս զինն զառնէ, որ այնպէս գարշելի՝ ի կնոջէն՝ մինչև չկարել ոչ իսկ եղանակաւ մերձել առնա, զոր և մեծն Աղեքսէտ, Սիլուեսթրոս, Թոմասլուրինի և այլք ընդ Սոթոյի հաստատեն։ Այլորդ՝ մարթ է յառաջ գալ այնմ և յանհամեմատութենէ անդամոց, որպէս եթէ կինոջն անձուկ լայժ լիցի, և յայնժամ եթէ պարտ լիցի հատանել զայն վտանգաւ մահու, կամ ծանր հիւանդութեան՝ յորում է իսկ բարոյապէս վտանգ մահու, անվաւեր է պաակն ըստ եկեղեցական կանոնաց,

75. Այլ թէպէտ և չիցէ յայնժամ կինն պարտաւական կրել հատմամբ զվտանգ ծանր հիւանդութեան, զի չհամարի պաակաւն յանձն առեալ զայնպիսի վտանգ, սակայն հանրագոյն և հաւանականագոյն կարծիք պարտական զնա համարին կրել ծանր ինչ նեղութիւն և ցաւս. զի այսչափ ինչ համարի յանձն առեալ առ՝ի հատուցանել առն զպարտս իւր ըստ դաշինն։ Սակայն եթէ վիրաւորաժի հարկ իցէ զհատուածին առնել, ոչ անհաւանականաբար Ռոնինքիոյ, Թուրնելլի և Վոնթաս ազատ կացուցանեն զկինն յայնքան ամօթոյ։

Նոկ եթէ տկարանայցէ այր լուծանել զկինիք կուսական, պարտ իցէ կինոջ յանձն առնուլ զհերձուածն գործեաւ։ — Վոնթաս, Վասթրոփալ և այլք ոչ պարտ համարին. զի թերութիւն յառնէ է, և կինն ոչ առաւել ինչ պարտական է նմա քան զտուչութիւն մարմնոյ իւրոյ ըստ բնական եղանակի, և ոչ անօրէնս հերձմանէ։ Այլ հաւանականագոյնս պարտ համարին Սանքէզ, Ա եկա, Ընկլէս և այլք. զի՝ ի տալ կինոջ առն իւրում իրաւունս՝ ի վերայ մարմնոյ իւրոյ՝ համարի յանձն առեալ և զնաւթս վարելոյ առն իւրոյ զիրաւունս իւր։

Վիտելլի է զի՝ ի լուծանել պաակի վասն անձկութեան կանացւոյն, եթէ ընդ այլում առնուացեալ

կինն լինի ընդունակ մերձաւորութեան առաջնոյ առնն ոչ այնու վաւերը զառաջինն պսակն համարելի է : Ո՛չ մարթ է թէ՛ի խառնից անտի ընդ երկրորդին բարձեալ իցէ թերութիւնն նորա, զոր առաջնոյն էր մարթ բառնալ առանց վտանգի մահու : Ա՛ան որոյ այլուստ զվաւերականութիւնն առաջնոյ պսակին պարտ է գուշակել, այսինքն՝ի հաւաստարութենէ առաջնոյ առն ընդ երկրորդին ըստ տիոց ըստ կազմութեան ըստ կորովութեան և ըստ ամենայնի, որպէս բարւոք ուսուցանեն սուրբն Ա՛նտոնինոս, Ա՛անքէզ, Ա՛իլուեսթրոյ, Ա՛նկլէս և այլք, և որպէս քալ՛ի միտ առնուլ է՛ի կանոնաց՝ որ ոչ օրէն համարին կինոջ դառնալ յառաջինն հարսանեան, եթէ էիցէ յայտ՛ի ֆորչոյ անտի՝ զի ընդունակ էր առաջնոյ առնն, որ նմանաւոյ նորին եղև ընդունակ :

Պ՛ատեհ է դարձեալ, զի եթէ հաւաստի իցէ անկարողութիւն միոյն՝ չէ պարտ յամել միւսոյն զերեամ, այլ վաղ իսկ օրէն է նմա, և պարտ իսկ՝ եթէ իցէ՛ի վտանգի անժուժկալութեան, պսակիլ ընդ այլում: և և ինքնահրաման, եթէ չիցէ վտանգ գայթակղութեան : Իսկ եթէ իցէ, որպէս և է իսկ յաճախ, պարտ է նմա դիմել առ իշխանութիւն եկեղեցական, և զարթնել յայտ առնել : Ա՛թէ կասկածելի կամ երկբայելի իցէ անկարողութիւնն նախ քան զպսակ, որ երկբային զանկարողութենէ իւրմէ դրականապէս ըստ հաւանական նշանաց, և ոչ բացասապէս՝ զի ամենայն ոք սովորաբար համարի կարող, չէ օրէն նմա պսակիլ առանց յայտնելոյ միւսում զերկբայութիւն իւր, եթէ չիցէ դէթ հաւանականաբար կարող : Իսկ եթէ յետ պսակին յայտնեսցի երկբայութիւնն, երեամ սահմանեալ է առ՛ի փորձ՝ սկսեալ յառաջնոյ փորձոյն . և օրէն է նոցա փորձն, արտաքոյ իսկ՝ (այլ յակամայս նոցա) հեղանելոյ սերմանն, որպէս ուսուցանեն բարոյականք ընդ սուրբ Ա՛գուինացւոյն : Ա՛թէ չիցէ յայտ անկարողութեանն կանխել քան զպսակ, հաւանականագոյն կարծիք՝պարտ համարին դատել զայն կանխեալ, եթէ յետ պսակին չիցէ հիւանդութիւն ինչ՛ի վերայ հասեալ՝ յորմէ օրէն իցէ համարել զայն :

76· ԺԵ· Ա՛նառանիութեան և այսինքն յաւիշտակութեան աղջկան, լուծիչ է պսակի ըստ սահմանադրու-

թեան տրիդենտեան ժողովոյ։ Պէ՛ւ ձգել յանձն զարդելը զայս, խնդրի նախ՝ զի աղջկին յափշտակեալ տարոյն տեղւօջէ՝ ի տեղի, գէթ տանէ՝ ի տուն, (զի չէ բաւական տանել զնա սենեակ՝ ի սենեկէ՝ ի նմին տան), ուր ընդ ձեռամբ յափշտակողին կայցէ՝ թէպէտ և անփոյթ՝ ի նմանէ։ Երկրորդ՝ զի յափշտակութիւնն լիցի վասն ամուսնութեան եւթ. վասն որոյ հաւանականացոյնս Սանքէզ, Պոնչինա, Հոլզման, Պասթրոփալ, Ալմաինիկեանք և այլք չհամարին արդելը՝ եթէ վասն այլ ինչ իրաց յափշտակիցէ ոք զկինն, եւս և՝ ի յապուրդ շամբշութեան. զի դիտաւորութիւն սրբոյ ժողովոյն՝ ի սահմանադրութեանս յայսմիկ ոչ այլ ինչ է, բայց զատ առնել զկինն կացուցանել զպսակ։ Երրորդ՝ զի ակամայ աղջկանն լեալ իցէ յափշտակութիւնն. զի եթէ ծնօղք եւեթ նորա և ընտանիք զդէմ ունիցին, և աղջկին հաւանեսցի, յափշտակօղն թէպէտ և անկանի ընդ այլովք պատժովք առևանգութեան՝ այլ չձգէ արդելը յանձն։

Ըստ տրիդենտեան սահմանադրութեան՝ յափշտակօղն և գործակիցք նորա առ հասարակ նովին խոչ գործով անկանին՝ ի բանադրանս. իսկ այլ պատիժք սահմանեալք՝ ի նմին ժողովոյ՝ վճռով՝ ի վերայ հասանեն։ Յափշտակութիւն ոչ միայն զպսակ՝ այլ և զհարանսխոսութիւն առնէ անվաւեր. և որ յափշտակէն զօրիորդ ընդդէմ կամաց նորա, թէպէտ և խոստեցեալ իւր իցէ, զնոյն արդելս և զպատիժս ձգէ յանձն, որպէս ուսուցանեն Պասթրոփալ, Լեզոպալ, Սալաս, Սանքէզ, Պոնչինա, Ալմաինիկեանք և այլք. զի ժողովն վճռէ անխտիր՝ անկանել յափշտակողին յարդելս, եթէ չիցէ աղջկին հաւան։

ՅՕԴՈՒԱԾ Թ

ՅԱՂԱԳՍ ՎԱՒԵՐԱՑՈՒՑԱՆԵԼՈՑ ԶՊՍԱԿ ՍՆԿԱՒԵՐ

77 · Ե՞րբ համարին արգելքն ծածուկք :
78 · Եթէ ժողովրդապետին և վկայից ծանօթ իցեն լեալ արգելքն :
79 · Որոյ կեղծեալն իցէ զգաչինս , պա՞րտ իցէ նմա նորոգել զսյն :
80 · Որոյ առ ահի կամ կեղծեաք իցէ խոստացեալ , պարտականն իցէ յայտնել զանվաւերութիւն պսակին :
81 · Ի բառնալ արգելիցն , պա՞րտ իցէ յայտնել անգիտին զանվաւերականութիւնն :
82 · Ո՞րպէս պարտ իցէ առնուլ զհաւանութիւն անգիտին :

77 · Պսակ , որոյ հաւանական իցէ վաւերականութիւն , համարի ստուգիւ վաւերական . զի համարի տրնօրինել եկեղեցւոյ զարգելս վաւերականութեան նորա , ուր իցէ հաւանականութիւն ըստ ասացեալումն ՚ի գլ· Ա · 27 : Իսկ առ ՚ի վաւերուցանել զպսակ՝ որոյ թերութիւն է ՚ի ծածուկ , բաւական է (որպէս ասացաք ՚ի թիւ 29) , վերստին հաւանութիւն պսակելոց , առանց միւսանգամ ընթերակայութեան ժողովրդապետի և վկայից : Այլ արդ գիտելի է զի արգելք պսակին համարին ծածուկք , յորժամ չորից կամ հնգից ոմանց են ծանօթ ըստ Փանեաանոյն . բայց Կարդինալ Լամբերթինի ընդ այլս յաստուածաբանից ծածուկ համարի և զծանօթս եօթանց կամ ութից ոմանց . և հաստատեն զայս հրամանադիրք ժողովոյն ապաշխարութեան : Իսկ Սուարէզ , Նաւարրոյ , Ազորիոյ , Թոլետոյ , Ասղինա , Թոմբնելի , Պոնաչինա , Վասթրոփալ , Էլիա , Սալմանտիկեանք և այլք գրեթէ առ հասարակ համարին ծածուկ զգործ ինչ կամ զյանցանս , որ չիցեն ծանօթ առաւելագունից ՚ի բնակչաց քաղաքին կամ թաղին կամ գրացեաց : Այլ իմա եթէ չիցէ վտանգ ըստ խոհական երկիւղի՝ հրատարակելոյ արգելիցն , զի յայնժամ չէ մարթ ընդունել տնօրինուածն որպէս ծածուկ արգելից , թէ և երկուք և եթ ոմանք գիտիցեն զայն : Պատահէ և այս երբեմն՝ զի ծանօթ իցեն հասարակաց նիւթապէս իրքն , այլ մարթ իցէ տեսակաբար ծածուկ համարել զայն վասն ոչ ուրուք գիտելոյ զի արգելու այն պսակ :

78. Արդ ըստ այսմ խնդրելի է թէ արդեօք պա՞տա
հի է վաւերացուցանել զպատկ առաջի ժողովրդապետի
և վկայից, որոց ծանօթ լեալ իցեն արդեալք նորին։ —
Կերպ յաստուածաբանից հաւանականաբար պարտ հա-
մարին, զի ոչ ևս վկայք վաւերականութեան պսակին
գտանին լեալ նոքա, այլ անվաւերութեան։ Այլ այլք
հաւանականագոյնս զհակառակն հաստատեն. զի ժո-
ղովն տրիդենտեան ոչ եթէ վաւերականութեան պսա-
կին վկայս կացուցանէ զնոսա, այլ յայտնութեան նո-
ցին, որպէս զի մի՛ ոք իշխեսցէ նենգել զամուսնութիւն։

79. Որ կերպիւ առանց հաւանութեան պսակիցի,
պարտակա՞ն իցէ ապա վաւերացուցանելոյ զպսակն՝ տա-
լով իսկապէս հաւանութիւն։ — Հաւանականագոյն
կարծիք ազատ կացուցանեն զնա, եթէ միայն չիցէ այն
կարևոր՝ ի հատուցումն վնասուց՝ որ՝ ի խաբէութենէ
անտի յառաջ եկեալ իցեն։ Ո՞ւ առ՝ ի չգոյէ հաւա-
նութեան նորա՝ անզօր լեալ ե՞ն դաշինքն, վասն որոյ և
դաշնակիցն ևս ազատ մնացեալ, որպէս եթէ չէր և նո-
ցա տուեալ հաւանութիւն։

80. Որ կերպիւ կամ՞ առ երկիւղն իցէ պսակեալ, ո-
րով անվաւեր լեալ է պսակն՝ որպէս՝ի վեր անդր թ. 64
ասացաք, կամելով ապա վաւերացուցանել զպսակն,
պարտակա՞ն իցէ յայտնելոյ ամուսնոյն անվաւեր լեալ
զպսակն։ — Հանրական և ողջմտագոյն կարծիք ոչ պարտ
համարին զայն, այլ յաւելուլ և՛եթ զիւր հաւանու-
թիւն. զի՛ի դաշին ամուսնութեան ոչ խնդրի բնական
յարակցութիւն հաւանութեանց, այլ շատ խակ է բա-
րոյականն. զի՛ի տալ նորա զհաւանութիւն իւր՝ տուէ
միւսոյն հաւանութիւն արդեամբք, այսինքն բնական-
ցութեամբ և ամուսնակցութեամբ։ Ո՞չ այս այսպէս
հաստատեն և բանք եկեղեցական կանոնաց. բայց Կան-
քեզ, Կաւարտոյ, Ժուրնելն և այլք կարևոր համարին
առ՝ի նորոգել զսոյն օրինակ զհաւանութիւն՝ գիտել զի
առ՝ի չգոյէ հաւանութեան անվաւեր լեալ է պսակն։

81. Այլ եթէ արդեալք ինչ լեալ իցեն վաւերակա-
նութեան պսակին, ՚ի բաւնալ արդելոյն անօրինամբ՝
առ՝ի վաւերացուցանել զայն վերստին հաւանութեամբ
պա՞տա իցէ ամուսնոց գիտել զանվաւերութիւն պսա-
կին։ — Ո՞սա հաւանականագոյն կարծեաց է այն կա-

րևոր, այլ շատ է գի որ չգիտէն՝ տացէ զՀաւանութիւն իւր բացայայտ կամ լռելեայն։ Ո՛չ թէպէտ և առաջին Հաւանութիւն իւր ոչ գործէ վասն եկեղեցական արգելից, այլ գործէ ըստ բնական օրինաց. վասն որոյ՝ի բառնալ արգելիցն՝ի բաց՝ շատ է տևել առաջին Հաւանութեանն բնակակցութեամբ կամ ամուսնակցութեամբ և կամ ուր և իցէ արտաքին նշանօք։ Այս վարդապետութիւն հաստատի՝ի հրամանագրոց տնօրինման Կղեմայ ԺԱ. և Ղենեդիկտեայ ԺԴ. բայց ուր չիցէ տնօրինումն Պապին, պարտ է վարել ըստ հակառակ կարծեաց՝ որք կարևոր համարին գիտել ամուսնաց զանվաւերութիւն պսակին առ՝ի վաւերացուցանել զայն վերստին Հաւանութեամբ. գի որ չգիտէն զանվաւերութիւն նորին՝ թէպէտ և տայ զՀաւանութիւն իւր, այլ համարի տալ զայն ամուսնոյ իւրում և ոչ ազատի, որով սխալէ յէական մասին գաշանցն։ Վասն որոյ՝ի հրամանագիրս տնօրինման արգելից սահմանի ծանուցանել ամուսնոյն անգիտի՝ զանվաւերութիւն պսակին, և ապա նորոգել զՀաւանութիւն իւրեանց։ Այս յաւելու Կարգինալ Ամպերթինի՝ գի գրական պայման է այն, և ոչ հրահանգ։ Այլ սակայն՝ի տիպել Հարկին, յորժամ՝ի յայտնութենէ անվաւերականութեան պսակին վտանգ լիցէ մահու կամ բաժանման հանգերձ գայթակղութեամբ կամ անուանարկութեամբ, օրէն է եպիսկոպոսին տնօրինել զայն. և եթէ չիցէ ժամանակ գիմելոյ առ նա, օրէն է խոստովանահօր յայտ առնել՝ գի արգելքն դադարեն անգ, և կատարել զպսակն։ Ո՛ այսմանէ տես՝ի տողս՝ի գլ. Ի. 57։

82. Այս պիտէս պարտ լիցէ առնուլ զՀաւանութիւն ամուսնոյ անգիտի։ — Հասարակաց կարծիք շատ Հաստարեալ է, գի որ գիտէն զարգելս վաւերականութեան պսակին՝ՀՀ բաւական նոցին ասիցէ ցմիւսն. Ի պսակիլն ձեզ ոչ ոք կրնայ հաւանութիւնը առնել, այլ արդ ուրիշ, ուրեմն ձեզ ալ պոտ։ Ո՛չ ի այսպիսի Հաւանութիւն տուեալ ամուսնոյ անգիտի՝ չունի ինչ ըստ առաջնումն. քանզի Հաւանութիւն վասն անվաւեր գաշինն անգոր՝ չիցէ Հաւանութիւն։ Ամանաւսկս շատ Համարին Պուսեմպաթ, Ամմատիկեանք, Այեթանոյ, Նաւարրոյ և Ծրուլենքոյ ասել. Արիբայուենսն է ինչ գվաւերականութենէ պսակիս ձերոյ, եկ

նորոգեսցուք զիշատանութիւնն մեր. զի և այս հաւանութիւն
ջոնի ինչ ընդ առաջնումն : Ասէ ոչ թուի բաւական,
զոր այլք շատ համարին ասել. Արդ չէր պատակ մեր վա-
ւերը, կամիքն և արդ պահել ընդ ես. զի այս հաւանու-
թիւն ունի ինչ ընդ առաջնումն աղերս, և չէ ազատ,
եթէ ոչ միւսն յերեսանակէ բանից նորա զուշակեսցէ
զանվաւերութիւն պատկին : Այսան որով չէ ընդունելի
զոր այլք ոմանք շատ համարին ասել. Արդ չէր պա-
հեալ ընդ ես, հաղիւր պահել՝ զի այս և սոցին նման ձևք,
և կամ իղձ ևեթ մերձաւորութեան, որպէս աստուա-
ծաբանք գրեթէ առ հասարակ ասեն, 'ի կարևոր ևեթ
ժամանակի ընդունելի են, այսինքն յորժամ յայլոց օ-
րինաւոր ձևոց վտանգ իցէ ծանր հետևանաց ըստ ա-
սացելոցս 'ի նախորդ թուխս : Եւ ոչ զօրէ ինչ ընդդէմ
պայմանն պահանջեալ 'ի հրամանագրի տնօրինման ար-
գելչին. զի որպէս կարդինալ Ամպերթինի, Ծխտուր-
ցիոյ և Վաւարրոյ ասեն, համարելի է յայնժամ ներել
եկեղեցւոյ զպայմանն զայն բարոյապէս անհնարին,
վասն հաւանականութեան՝ զի 'ի բառնալ արգելից բա-
ւական իցէ հաւանութիւն արտաքին նշանօք ևեթ
յայտնեալ առ 'ի վաւերացուցանել զպատակ : Տես որ
ինչ ասացաքս 'ի թիւ 80 :

ՑՕԴՈՒՄԱԾ Ժ

ՑԱՂԱԴՍ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԱՐԳԵԼԻՑ ՊՍԱԿԻ

83. Զոր արգելս կարիցէ տնօրինել Պապն :
84. Իրաւացի պատճառք տնօրինման. պարտ իցէ բացատրել զամենայն իսկ արգելս :
85. Պարտ իցէ բացատրել զամենայն հանգամանս, մանաւանդ զմեղքնէութեան :
86. Պարտ իցէ բացատրել զամենայն յարակից հանգամանս՝ որ դժուարացուցանեն զտնօրինումն :
87. Պարտ իցէ բացատրել զամենայն առտիճանս ազգականութեան :
88. Պայմանք հրամանագրոց տնօրինման :
89. Պատճէնք աղերսագրոց :
90. Զև պաշտելոյ զտնօրինումն :

83. Իշխանութիւն է Պապին անեղկեցապէս տնօ-
րինելոյ զեկեղեցական արգելս առ հասարակ խափանիչս
և լուծիչս պատկի. այլ ոչ և զբնական և զաստուածա-

ղէր օրինաց արգելլ, որպէս զպսակ առանց հաւանու-
թեան կամ՝ ի կենդանութեան ամուսնոյ: Ոչ ի թէ-
պէտ և ըստ հանրապոյն և ըստ հաւանականապոյն կար-
ծեաց իշխանութիւն է Պապին տնօրինելոյ ուր իրա-
ւունք աստուածայինք յառաջ գան՝ ի մարդկային կա-
մաց՝ որպէս զուխտս և զերդմունս, այլ ոչ որ ինչ յաս-
տուածային կամաց ևեթ յառաջագային: Սակայն որպէս
յաւելուն Սուարէզ, Սոթոյ, Կաւարրոյ, Ռոնչինա և
այլք, ՚ի կարևոր ինչ դէպս կարող է Պապն որպէս ու-
սուցչապետ և գերագոյն Թարգման կամացն Աստուծոյ՝
յայտ առնել՝ զի գադարեն անդ օրէնք աստուածայինք,
ըստ ասացելոցս ՚ի գլ. Ե. 56. և աստ ՚ի Թիւ 81: Իսկ
յաղագս իշխանութեան եպիսկոպոսաց տնօրինելոյ զար-
գելս պսակի, ասասցուք ՚ի գլ. Ւ. 54 և այլն:

84. Իրաւացի պատճառք տնօրինելոյ զարգելս լու-
ծիչս պսակի, են նախ՝ բարձումն գայթակղութեան,
կամ ծանր վնասի, կամ գժտութեան աղգականաց:
Երկրորդ՝ անհաւասարութիւն պսակի առ՚ի չգոյէ օժ-
տի կամ այլ ինչ իրաց, եթէ ոչ պսակեսցի ընդ աղգա-
կանին: Երրորդ՝ պահպանութիւն ստացուածոց յաղ-
գատոհմին: Չորրորդ՝ վաստակք խնդրողին զտնօրի-
նութիւն: Հինգերորդ՝ տիք օրիորդի աւելի քան գամն 24:
Վեցերորդ՝ ողջմտութիւն վասն բարերարութեան. և
այլ ևս սոցին սակի պատճառք:

85. Որպէս զի տնօրինութիւն չկոչէ Թերի, պարտ է
բացատրել յաղերսապրին զամենայն արգելս աղգակա-
նութեան կամ խնամութեան՝ Թէպէտ և իցեն՚ի նմին
աստիճանի, որպէս եթէ ոք գիտացեալ իցէ զերկոսին
ևս քոյս խօսեցեալսն. զի Թէպէտ արգելք այսպիսիք չի-
ցեն այլատեսակք, բայց այլևայլ են Թուով և յաւելուն
զժտութիւն տնօրինելոյ: Նմանապէս և որ կամիցի
պսակիլ ընդ աղգականի՝ զորոյ գիտացեալ իցէ զքոյր,
ոչ է բաւական ուրոյն զերկաքանչիւրոցն առնուլ տնօ-
րինութիւն, այլ զերկոսին միանգամայն պարտ է խնդրել,
որպէս հաւանականապոյնս ուսուցանեն Ալմատիկեանք,
Ալեա, Ռոտրիկուէց և այլք: Այլ միայն եթէ մեղքն՝
ընդ քեռ խօսեցելոյն գործեցեալ՝ ծածուկք իցեն, այն-
ժամ օրէնն է վասն զգուշանալոյ ՚ի վատահամբաւու-
թենէ՝ խնդրել նախ զտնօրինութիւն աղգականութեան,

և ապա զմեղացն ի ձեռն ապաշխարահօր, որպէս է իսկ սովորութիւն։ Այլ յերկրորդումն պարտ է բացատրել զերկոսին ևս արդեալս, զմեղացն և զազգականութեան. բայց միայն եթէ յետ ընդունելոյ զտնօրինուածն մեղացն՝ անդրէն ի նոյն մեղս լինի անկանել նմա, ոչ ևս պէտք են այլոց տնօրինման, Թէպէտ և առաջինն տնօրինուածն ի գործ եդեալ էին ըստ ասացելումն ի վեր անդր Թիւ 67։

86. Պարտ է բացատրել յաղերսագրին զամենայն յարակից հանգամանս՝ որ դժուարացուցանեն զտնօրինուածն, մանաւանդ եթէ ընդ ազգականս՝ որ պսակիլ ընդ միմեանս խնդրեն՝ էին լեալ մերձաւորութիւն մծղնագործ. ոչ միայն յորժամ մտաբերեալ էին յայն վանդիւրացոյն ընդունելոյ զտնօրինուածն, այլ և առանց այսր դիտաւորութեան, որպէս Ինեներիկտոս ԺԴ յայտ առնէ ի կոնդակին։ Պարձեալ եթէ ոք յետ ընդունելոյ տնօրինուածն վանն ազգականութեան, չէ յարդիւնս եկեալ տնօրինմանն՝ անկցի ընդ խօսեցելումն, խնդրի միւս այլ տնօրինուածն՝ ըստ յայտարարութեան սրբոյ գահուն։ Իսկ եթէ յետ յարդիւնս գալոյ տնօրինմանն անկցի, հաւանականաբար ոչ կարեւոր համարին միւս այլ տնօրինուածն Յանքնէ, Լուսոյ, Կայեթանոյ և Վեկա. զի՛ի գալ յարդիւնս տնօրինմանն՝ բառնան արդեալք ամուսնութեան, և դադարեն պատճառք մծղնկործութեան։ Պարձեալ եթէ ոք խնդրէ միւսանգամ տնօրինուածն վանն նոյն յանցանաց, պարտի բացատրել և զառաջինն. այլ չէ այս կարեւոր, եթէ չիցեն յանցանքն նոյն։

87. Պարտ է բացատրել յաղերսագրին և զամենայն աստիճանս ազգականութեան և խնամութեան զհեռաւորն և զմերձաւոր. զի Թէպէտ և տնօրինուածն վանն չորրորդ աստիճանին եւեթ էին կարեւոր, սակայն Պիոս Ե Յովքնաշարժ կոնդակին յայտ առնէ՝ զի ընդ տնօրինման կարեւոր է և Թուղթ յայտարար մերձաւոր աստիճանի։ Եւ Թէպէտ առանց այսր Թղթոյ վաւեր է պսակն, այլ ոչ ըստ օրինի, որպէս յայտ արար Ինեներիկտոս ԺԴ, եթէ միայն ազգականութիւնն կամ խնամութիւն չիցէ յառաջնում կամ յերկրորդում աստիճանի։ Պիտելի է զի՛ի գադարել պատճառի տնօրինման յա-

ռաջ քան զառաքումն կամ զկատարումն նորին, դատարկ և տնօրինումն. այլ ոչ և՛ ի դադարել պատճառին յետ յարդիւնս գալոց տնօրինմանն, թէպէտ և տակաւին չէին կատարեալ պսակին. զի բարձեալ են յայնժամ արգելք։

88. Իսկ յաղագս պայմանաց, որ յաւելուն՝ ի հրամանադիրս տնօրինմանց ժողովոյն ապաշխարութեան, զի տեսի և նախ՝ զի որ ասէն Լինէ այդպէս եղե, ցորչափ չէին յայտ հակառակն՝ պարտ է հաւատալ աղերսաւորին. և որպէս Ինեննդիկտոս ԺԴ յայտ առնէ, ՚ի բացատրութիւն և ՚ի ստուգութիւն պատճառաց հաստատեալ է զօրութիւն տնօրինմանն։ Այլ միայն եթէ աղերսարկուք որպէս աղքատք աղերսիցեն և չիցեն աղքատք, և իբրև աղքատաց տացի տնօրինումն, սակայն վաւեր է ըստ յայտարարութեան ժողովոյն տրիդենտեան սահմանադրութեանցն։ Պիտեալ է և դարձեալ զի՛ ի տնօրինումն ուխտի ողջախոհութեան չէ բաւական վտանգ սովորական, այլ խնդրի ծանր միրձութիւն անժուժկալութեան, թէպէտ և վասն միանգամ լեալ անկանելոյ իցէ վտանգն։ Ընդհարդ պայման յաւելու հրամանադրին՝ Առեալ կնոջէ պաշտօնական խոստովանութիւն. վասն որոյ անհրաժեշտ կարևոր է խոստովանութիւն նախ քան զկատարումն տնօրինման։ Ընդհարդ պայման յաւելու՝ Բայ բաւչեալ զպատճառս ձեզաց. որով է իմանալ զկամաւոր պատճառս. իսկ եթէ կարևորք իցեն, շատ է՛ի կիր արկանել զՀնարս՝ որով միրձաւորքն վտանգք լինին հեռաւորք։ Ընդհարդ պայման՝ Լինէ գոյն ծածուկ իցէն արգելչն. իսկ թէ միրք ծածուկք հասանելիցին, աստացաք՛ի թիւ 75։ Ընդհարդ պայման՝ Զանձ ապաշխարողին՝ խարանս՛ի վերայ եդեալ. իմա ըստ կարի ապաշխարողին. որպէս ծոմապահել երկիցս՛ի տարւոջ, կատարել երիցս յեօթնեկի զպսակ Աւսին, խոստովանել միանգամ յամ սեան, և սոցին սակի ապաշխարանս։ Յաւելու Ծանրնել, զի եթէ ապաշխարողին վաղ իսկ կատարեալ իցէ զապաշխարանս միջացն, մարթ է սակաւուք վճարել՝ եթէ չիցեն՛ի հրամանադրին սահմանեալ ապաշխարանք որպէս փոխարէն տնօրինմանն։ Ի եդեղորդ պայման՝ Երչանելով զիրաւանագիրս ընդ պապիով վճռեալ բանադրանաց։ Ի՝ ան որով պարտ է վաղագոյն պատառել զայն.

այլ բարեյաւսէս զվաղագոյնն իմա, այսինքն յերիս աւուր յետ կատարելոյ զտնօրինութիւն, եթէ կատարեալ էցէ պսակն. ապա թէ ոչ՝ պարտ է ժողովրդապետին ունել զայն ի ծածուկ, և կամ դէթ արձանագրել ի մատենի, որպէս զի եթէ յանկարծ արգելքն ի յայտ գայցեն՝ կարիցէ տալ վկայութիւն զայնմանէ:

88. Կարևոր է յաւելուլ աստ զպատճէնս աղերսագրոյ վասն խնդրելոյ տնօրինութիւն արգելից կամ ուխտի կամ անկանոնութեան վասն արգելից պսակի.

Eminentissimo e Reverendissimo Signore.

N. N. avendo avuto copula con una donna, si ritrova aver data parola di matrimonio a N. N. sua sorella. E perchè l' impedimento è occulto, e non succedendo il detto matrimonio, ne verrebbe molto scandalo, supplica perciò l' Em. Vostra a volergli concedere la dispensa. La risposta si degnerà di mandarla a Costantinopoli, in testa di (աստանօր պարտ է յաւելուլ զանուն և զմականուն խոստովանահօրն) confessore approvato.

Իսկ եթէ վաղ իսկ կատարեալ է պսակն, պարտ է գրել այսպէս.

N. N. ignaro (o consapevole) dell' impedimento ha contratto matrimonio con una donna, la cui madre (o sorella) avea prima carnalmente conosciuta: ma essendo occulto l' impedimento, e perciò non potendosi separare senza scandalo, supplica l' Em. Vostra per l' assoluzione e dispensa.

Վասն տնօրինման ուխտի ողջախոհութեան կամ կրօնաւորելոյ գրելի է այսպէս.

N. N. si ritrova aver fatto voto di castità (o di religione): ma perchè sta in grave pericolo d' incontinenza, prega per tanto l' Em. Vostra di dispensare al suddetto voto, affine di poter contrarre matrimonio.

Վասն անկանոնութեան գրելի է այսպէս.

N. N. sacerdote ha incorso irregolarità per cagione d' omicidio (o d' aborto, o violazione di censura, եւ) : ed essendo che vi è pericolo d' infamia se astiene dal celebrare, pertanto supplica l' Em. Vostra per l' assoluzione.

Արեսագիր նամակին

A Sua Eminenza Reverendissima il Signor Cardinal Penitenziere Maggiore.

Roma.

89. Խոհ խոստովանահայրն ընկալեալ զհրամանագիրն անօրինման, յետ ընդունելոյ զխոստովանութիւն ապաշխարողին՝ ըստ այսմ օրինակի կարէ անօրինել զնմանութիւն. Յ՚ տարչեալ հրամանաւ առաքելական եկեղեցւոյն պնօրինեմ զձեզ զարգելս առաջնոյ (կամ երկրորդի, կամ առաջնոյ և երկրորդի) ասպիճանի, որով եաք արգելեալ վասն օրինազանցութեանդ ընդ ձեռս հարցինդ՝ ընդ որոմտութեանէ (կամ պատճէնոյ), որպէս զի կարող լինիս առանց ընդ նմա՝ նորոգելով զհաւանութիւնն. և որդիք, զոր ընկալար ի նմանէ (կամ ըստ ընդունելոյս), լեցի օրինաւոր յանուն Հօր, և այլն:

Վասն անօրինելոյ զուխտ ողջախոհութեան. Յ՚ տարչեալ պնօրինեմ զձեզ զտեսլեան ողջախոհութեանն՝ որով հպատակեալ եաք, փոխանակեալ ընդ այնմ (պայս ինչ) ապաշխարանս, որպէս զի կարող լինիս առաւանանալ և վարել առաւնութեամբ, յանուն Հօր և այլն:

Խոհ եթէ հանդերձ ուխտիւ ողջախոհութեան պատկեալ զբաղ, այս է ձև անօրինմանն.

Յ՚ տարչեալ հրամանաւ առաքելական եկեղեցւոյն պնօրինեմ զձեզ հանդերձիդ ուխտիդ ողջախոհութեան և յառնութեան և կարող լինել ընդրելոյ պատանական պարտս, յանուն Հօր, և այլն:

ՑՕԴՈՒԱԾ ԺԱ.

ՑՆՂԱԳՍ ԲՆԱԺԱՆԵԼՈՑ ԱՈՒՆ ԵՒ ԿՆՈՋ

90. Լուծումն պահկի:
91. Բաժանումն ըստ առագաստի. քանի պատճառաւ օրէն էգէ: Ա. Վասն յանցանաց: Բ. Վասն ախտի: Գ. Ի հաւաբարակաց հաւանութենէ:
92. Դ. Առ ահի մեռանել:
93. Ե. Վասն շնութեան. այլ խնդրի առոյգ և կատարեալ շնութիւն:
94. Պարտ էգէ ամուսնոյ բաժանիլ վասն շնութեան ամուսնակցին:
95. Իրաւունք կոչելոց զբնացեալն:
96. Օրէն էգէ ինքնահրամայ բաժանումն:
97. Ցետ բաժանման ո՞ յամուսնոյ կարէցէ կրօնաւորիլ:

90. Լուծումն ըստ պահկի, և է ըստ առագաստի: Նորակի օրէնն է ըստ պահկի. նախ՝ ազատ է ամուսինն ի մեռանել ամուսնակցի իւրոյ: Երկրորդ՝ եթէ մի յամուսնոց գայ ի հաւատս, և ամուսնակիցն անհաւատ չկամիցի կալ ընդ նմա խաղաղութեամբ և ըստ կամացն Արարածոյ: ԵՒ երրորդ՝ եթէ յառաջ քան զլրութիւն ամուսնութեան, չև երկուց ամսոց ի վերայ անցեալ պահկին, միւն յամուսնոց կամիցի կրօնաւորիլ: Ամուսնութիւն անհաւատից թէպէտ և օրինաւոր, այլ չէ անլուծանելի. բայց միայն եթէ երկոքին ևս եկեալ ի հաւատս, վարեսցին ամուսնութեամբն: Այլ եթէ յետ ընդունելոց զհաւատս չև ևս իցէ նոցա եկեալ առ միմեանս, իշխանութիւն է Պահկին առ յոյժ ծանր ինչ հարկի լուծանել զամուսնութիւն նոցա: Ակ'ի գալ միոյն ի հաւատս, չկարէ ամուսնանալ ընդ այլում՝ եթէ կամիցի ամուսնակիցն կալ ընդ նմա խաղաղութեամբ, առանց թշնամանելոց զաստուածս հաւատոյ: Յառաջին ժամանակս քրիստոնէութեան ի յաշխարհին՝ նէ սքանչելեաց բազումք յանհաւատից գային ի հաւատս, և հարկ էր ամուսնոյ կալ ընդ միմեանս. վասն որոյ գրէր առ նոսա առաքեալն. "Եթէ ոք եղբայր՝ կին ունիցի անհաւատ, և նմա հաճոյ իցէ բնակիլ ընդ նմա, մի թողցէ զնա. և կին՝ որ ունիցի այր անհաւատ, և նմա կամ իցէ բնակել ընդ նմա, մի թողցէ զայրն": Այլ արդ ի դադարել սքանչելեաց և յաշխարհին

պարձելոյ, ըստ հանրագոյն կարծեաց աստուածաբանից՝ ոչ և սա օրէն է քնակել ընդ անհաւատ ամուսնոյ վասն վտանգի հրապուրանաց։ Այն որոյ եթէ ամուսին անհաւատ հրաւիրեալ՝ի հաւատս և ոչ կամիցի գալ, կարէ և պարտի հաւատացեալն թողուլ զնա, և պսակել ընդ այլում, ըստ հրահանգացն Կորնթոսի ԺԳ. և սրբոյն Պետրոսի Ե։

Նոյնպէս հաւատացելոյ ամուսնոյ անլուծանելի է պսակ, ցորչափ կենդանի իցէ ամուսնակիցն. բայց միայն, որպէս ասացաք, եթէ չառաջ քան զլրումն ամուսնութեան կամիցի մին կրօնաւորիլ՝ ազատ է միւսն. վասն որոյ երկամեայ աւուրքն սահմանեալ են նոցա յետ պսակի, յորս չեն պարտական հատուցանելոյ զամուսնական պարտս ըստ եկեղեցական կանոնաց և ըստ սահմանադրութեան տրիդենտեան ժողովոյ։ Նմանապէս եթէ կուսոյ ամնոյ ոք կրօնաւորեսցի, ընդդէմ է օրինաց ուխտն՝ այլ ոչ անվաւեր։ Այլ զայսոսիկ պարտ է խմանալ, եթէ ամուսնութիւն նոցա չիցէ կարևոր վասն օրինաւոր առնելոյ զորդի, կամ խափանելոյ զգայթակղութիւն և զնախատինս հարսինն. զի յայնժամ չէ օրէն առն թողուլ զկին իւր և ոչ վասն կրօնաւորելոյ։

Ինդիր է՝ թէ կարիցէ Պապն լուծանել զպսակ, որ չիցէ լրացեալ։ — Երկին կարծիք են զայսմանէ, երկոքին և սա հաւանականք։ Գոնցիոյ, Կոնէթ, սուրբն Պոնաւենթուրա, Սկոտ, Վասթրոփալ, Սոթոյ և այլք ժխտեն, հաւասար համարելով զպսակ ընդ լրացեալ ամուսնութեան, վասն որոյ և անլուծանելի ըստ աստուածային հրամանի։ Բայց Պելլարմինոս, Սանքեզ, Կայեթանոյ, Նաւարրոյ, Ա աստուէզ, Վոնչինա, Սալմատիկեանք և այլք սեն՝ զի Պապն որպէս փոխանորդ Քրիստոսի կարէ անօրինել ինչ ինչ յաստուածային իրաւանց, որ ընդ մարդկային գործս ունին կցորդութիւն, յորժամ հարկ ինչ ստիպիցէ. որպէս անկարողութիւն ի վերայ հասեալ պսակելոյ, գայթակղութիւն առաջիկայ, կամ օգուտ հասարակաց։ Այլք և զիրաւացի պատճառս բաւական համարին, որպէս զանակնկալ գերժուութիւն, զանհանդիստութիւն պայմանի կենաց, զախտաճանացական, և զհաւանութիւն իսկ երկուստեք. բայց Տայրն Վոնչինա ոչ ընդունելի համարի զայսոսիկ, զեթ ոչ չիցէ օգուտ հասարակաց։

91. Իսկ բաժանումն ըստ առաջաստի, անլոյծ մնալոյ պսակի, վասն հնդից պատճառաց է օրինաւոր։ Նախ՝ եթէ մի յամուսնացս հրապուրեսցէ զմիւսն ի մեզս, կամ ուրասցի ի հաւատոց. զի յայնժամ օրէն է միւսոյն, և պարտ իսկ, մեկնել ի նմանէ՝ եթէ կայ ի վտանգի մեզաց. և եթէ յանցանքն յայտնի են հաստատակաց, և եկեղեցական վճռով լեալ բաժանումն, օրէն է նմա և կրօնաւորել։ — Նոյնպէս՝ եթէ միւն յամուսնացս բռնութեամբ, կամ այլով իւիք ածանցական ախտիւ ընկճեսցի, կամ մոլեգնեալ և կամ դիւահարեալ իցէ, զի վտանգ է յայնժամ միւսումն ծանր ինչ ասել։ — Նոյնպէս՝ եթէ ի հաստատակաց հաւանութենէ կամիցին բաժանիլ ըստ առաջաստի. այլ սովորաբար չէ այդ նոցա տալ, եթէ չկամիցին երկոքեան իսկ կրօնաւորիլ, և կամ մնոջն կրօնաւորել՝ առնն ընդունելով զտունըդ կարդ։ Նա եթէ կինն անցեալ իցէ զանխնամութիւնք, և կամիցի ուխտիւ ողջախոհութեան մնալ յաշխարհի, օրէն է առնն կրօնաւորել կամ ձեռնադրիլ։ Անքէզ, Յովհաննոյ և այլք ասեն, զի եթէ մի յամուսնացս յանդգնեսցէ առանց ուխտի կացեալ իցէ յաշխարհի, կարէ և նա կոչել անդրէնն առ ինքն զուխտեաքն ամուսին՝ եթէ կամ իցէ նմա գալ։

92. Պորպորդ՝ օրէն է ամուսնոյ բաժանել ըստ առաջաստի վասն խատուածեան ամուսնակցին, և նա և եթէ իցէ յանցաւոր։ Նա առ այս բաւական համարին Անքէզ, Աւմատիկեանք և այլք զվտանգ ծանր չարեաց անձին կամ որդւոց կամ ազգականաց յանողորմ ամուսնոյն կամ ի նորայոցն։ Իսկ ծանր չարեաք իմանան, ոչ միայն զսպառնալիս մահու կամ չարաչար հարուածոյ՝ եթէ սովոր իցէ կատարել զսպառնալիսն, այլ և զնախատինս յաձախաւորս և ծանուցս ըստ համեմատութեան անձին, որպէս եթէ աղնուական ոք իցէ ընդմանեալն։

Այլ գանք ևս ի բաւականինք իցեն ի բաժանումն առաջաստի։ — Փոնցիոյ, Ոսնքալեա, Անքէզ, Սիլուեստր Թրոյ և այլք նեբելի համարին առն գանել երբեմն զկինն իւր, եթէ միայն չիցէ յաձախ և սաստիկ. վասն որոյ և չկարել կնոջ վասն թեթև գանից մեկնել յառնէն, եթէ չիցէ աղնուատոհմիկ՝ որպէս յաւելոն Աւլ-

մատիկեանք· և եթէ սաստիկ ևս լեալ իցեն գանքն, սակայն եթէ միանգամ ևեթ լեալ, և չիցէ հաւանական վտանգ կրկնելոյ : Եւ դիտելի է զի վասն բռնաւորութեան ամուսնոյ չէ օրէն առանց դատաւորական հրամանի մեկնել՝ ի նմանէ, եթէ ոչ մօտալուտ՝ ի վերայ կայցէ վտանգ, կամ չիցէ մարթ դիմել առ դատաւորն, կամ դիւրաւ ապացուցանել զվտանգն :

93· Հինգերորդ՝ի շնալ ամուսնոյն ըստ տէրունեան հրամանին· "Ոյմեկնայն որ արձակէ զկին իւր առանց բանի պոռնկութեան, նա տայ նմա շնալ,, : Այլ առ՝ի կարօղ լինելոյ բաժանել յամուսնոյ վասն շնութեան, պարտ է զի նոցա կատարեալ շնութիւն տերմնարկութեամբ, որպէս հաւանականագոյնս հաստատեն Անքէզ, Պոնաչինա, Սալմատիկեանք, Լաբոպար և այլք ընդդէմ կիսոյ յաստուածաբանից· զի պոռնկութիւն իմանի կատարեալն՝ տերմնարկութեամբ, որում լինի բաժանումն մարմնոյ : Եւ չբաւէ հաւանականութիւն առայս, այլ խնդրի բարոյական ստուգութիւն, որպէս ուսուցանեն աստուածաբանք առ հասարակ· որպէս եթէ վկայք հաստատեացեն տեսեալ զնա միայնակ ընդ կնոջ մերկա՝ի միում անկողնի· զի Անքէզ և Լաւարդոյ ոչ համարին բաւական տեսանել զնա միայն ընդ միայնում: Եւ ոչ զգրկախառնութիւն զշօշափումն և զհամբոյր բաւական համարին Փոնցիոյ, Ալ Լուա, Անքէզ, Պարպոզա, Լաւարդոյ և այլք : Ընդ հակառակն Անքէզ, Ալ Լուա և այլք շատ համարին ըստ խղճի մտաց, եթէ արժանահաւատ ոք վկայեսցէ և կամ ակամայ իսկ նշանս ինչ տացէ զշնութենէն· այլք դարձեալ շատ համարին զվիր կնոջն, յորում խոստովանեսցի զշնութիւն իւր· և այլք՝ թէ գտցի միայն ընդ միայնում՝ի նմին անկողնի :

Այլ արդեօք իցէ բաւական առ՝ի բաժանումն առդատականութիւն կամ անատնապիտութիւն գործեալ յամուսնոյ : — Ամենք ժխտեն վասն չլինելոյ անօրէնութեանցս այսոցիկ պոռնկութիւն· բայց այլք առ հատուկ բաւական համարին, վասն թշնամանելոյ այսոցիկ զհաւատարմութիւն ամուսնական և բաժանելոյ ընդ այլում զմարմին : Այլ Փոնցիոյ յաւելու՝ զի թէպէտ և հանրական է վարդապետութիւնս այս, այլ ոչ ապատուցեալ· քանզի մարթ է ասել միշտ, զի առանց բնական մերձաւորութեան ոչ բաժանի մարմին :

94. Ոչ է պարտական այր վասն ընութեան կնոջն յաժանել՝ի նմանէ. մարթ է նմա առ՝ի խրատ կնոջն պարտական գտանել, եթէ չիցէ այլ ինչ հնար ուղիղ ինա, այլ և այն եթէ չիցէ նմա ծանր։ Մարթ է նմա պարտական գտանել և առ՝ի չտալոյ գայթակղութիւն՝ որպէս թէ համախոհ իցէ ընդ կնոջն, այլ և զայս պարտ է իմանալ եթէ յայտնի ընայցէ կինն, և չիցէ այլ հնար բառնալոյ զգայթակղութիւն, և եթէ չուենիցի այրն իրաւացի պատճառս չբաժանելոյ՝ի նմանէ, որպիսի է վտանգ անժուժկալութեան, կամ ծանր ինչ ինա, և կամ եթէ մեկնելովին՝ի նմանէ՝ չարագոյն ևս անօրինեսցի կինն։ Ասէ՝ որոյ՝ի վերայ ածէ սուրբն Աստուածոս, զի "Ոչ է պարտ առն՝ տուժիւք իրաւանցն իւրոց և հանդերձ վտանգաւ արձակել զկին իւր"։ Յաւելուն Ղազարոփալ և Այմոն, զի եթէ միայն յայտ առնիցէ այր զգժկամակութիւն իւր ընդ մեզս կնոջն՝ ոչ է պարտական առ այլ ինչ. զի գայթակղութիւնն այն այլոց՝ փարիսական է գայթակղութիւն։

Այսպէս և կնոջ մարթ է պարտական գտանել մեկնելոց յառնէն՝ եթէ կարևոր իցէ այն. ոչ առ՝ի խափանել զգայթակղութիւն, զի ոչ ոք երբեք կարծիցէ զկին համախոհ ընութեան առն իւրոյ, այլ առ՝ի խրատ նորա։ Այլոց որպէս բարւոք ազգ առնեն Մուսարկղ, Ղազերփալ, Ալմատիկեանք և այլք, յոյժ դժուարաւ պարտական առ այս գտանի տառապեալն կինն, զի դուն ուրեք խրատ նորա օգտէ առն, և դուն ուրեք առանց ծանր նեղութեան մարթ է նմա մեկնել յառնէն։ Ասա այսմ և առ՝ի ժխտել զամուսնական պարտս իւրեանց առ՝ի խրատ՝ դժուարաւ պարտական գտանին կանայք. մանաւանդ զի ժխտելով նոցա՝ չարագոյնս անօրինին արք։ Ասակ եթէ ընացեալն ամուսին գայցէ յուղղութիւն և գայցէ՝ի վտանգն անժուժկալութեան, Ալմատիկեանք պարտ համարին ամուսնակցին ընդունել զնա՝ եթէ կարիցէ առանց նեղութեան. և Պուսեմպայ, Ղոնչինա և այլք համարին ծանր մեղանչել նմա՝ եթէ չընդունիցի։ Այլ սուրբն Աստուածոս չիշխէ հաստատել զայս, ուր տերունականն բան աղատ առնէ զնա՝ի պարտականութենէն անտի, և եղբայրսիրութիւն ոչ ատիպէ՝ի կենակցութիւն ընդ այնմ՝ որոյ չիք հաւատարմութիւն։

Ի քառեակ դէպս չէ օրէն մեկնիլ ամուսնակցի՝ ի ընացեալ ամուսնոյ ։ Այս՝ եթէ և ինքն ընացեալ իցէ. և թէպէտ կէաք յաստուածաբանից հաստատեն, զի պատասխանելոյն՝ ի ընութենէ օրէն իցէ բաժանել՝ ի յամառելոյն՝ ի ընութեան, և հաւանական իսկ է կարծիք նոցա, բայց հաւանականագոյն այլոցն է՝ որք զհակառակն հաստատեն ։ — Արկրորդ՝ եթէ հաւանի ընդ ընութիւն ամուսնոյն. այլ զի համարեսցի հաւանութիւն՝ չէ բաւական տալ նորա պատճառս ընութեան ինոջն՝ առնել զնա կամ չարաչար ընդ նմա վարելով, և ոչ լռել նորա և չտեսանելոյն առնել՝ ի չկարելն առանց ծանր նեղութեան արգելուլ զանօրէնութիւն ինոջն, որպէս կանոնք և աստուածաբանք և սուրբ Աւգուստինոս հաստատեն ։ — Արրորդ՝ եթէ կինն բռնաբարիցի, այլ ոչ՝ եթէ առ երկիւղի ընայցէ. և դարձեալ եթէ անմեղաբերելի վրիպակաւ տեղի տուեալ իցէ ընութեան, որպէս ասեն աստուածաբանք առ հասարակ ընդ սուրբ Աւգուստինոս ։ Այլ յաւելու Տիքաստիկոսն, զի եթէ այր համարելով մեռեալ զկին իւր՝ գիտասցէ զայլ կին, չէ օրէն կնոջ նորա մեկնել՝ ի նմանէ. այլ ոչ և ընդ հակառակն ։ — Ցորրորդ՝ եթէ ներեալ իցէ յանցանաց ամուսնոյն յառաջ կամ յետոյ քան զբաժանումն. որպէս Համարի իսկ, եթէ անյայտն ամուսնին գիտելով զընութիւն ամուսնակցին՝ ինքնակամ ննջէ ընդ նմա, կամ բռնակէ, կամ սեղանակից լինի. և մանաւանդ եթէ գըլխաւորն, և համբուրէ զնա և շոշափէ ։ Այս այսպէս ուսուցանեն աստուածաբանք ընդ սուրբ Աւգուստինոս. բայց Անքեզ, Աբերսա, Ամմատիկեանք և այլք յաւելուն, զի եթէ արդարև առանց թողութիւն առնելոյ անիրաւութեան ընացելոյն՝ վարիցի ոք՝ ի սոսին իրաւամբք իւրովք, օրէն է նմա ըստ խղճի մտաց բաժանել յամուսնոյն ։

95. Ի բաժանել ամուսնաց ըստ վճռոյ դատաւորի վասն որ և իցէ յանցանաց, իրաւունք են միշտ անմեղին կոչելոյ առ ինքն զյանցաւորն. և առ այս չեն ինչ պետք այլոյ վճռոյ դատաւորին ։ Այլ բարւոք ազդ առնեն Աստեղոփալ և Աւրելիոսն, զի դժուարաւ մարթ է ինոջ ընացելոյ պարտ՝ ի վերայ դնել դառնալոյ առ այր իւր, զի միշտ վտանգ է նմա մահու կամ անողորմ բըռ-

նուիրեան առն՝ ի վերայ նորա, եթէ չիցէն այլ պատճառք ապահովութեան՝ ի միջի։ Այլ եթէ անմեղն եւս ամուսին հետ բաժանելոյ յամուսնակիցն ըստ առենական վճռոյ՝ ինքն եւս անկցի՝ ի շնութիւն, պարտական իցէ դառնալոյ՝ ի կոչ ընացեալ ամուսնակցին։ — Սկսք յաստուածաբանից պարտական համարին զնա, բայց այլք ընդ սուրբ Աւգուստինոս հաւանականագոյնս զհակառակն հաստատեն. զի որ նախկինն շնայ՝ առենական վճռով զրկի բոլորովին յիրաւանց՝ ի վերայ անյանդ ամուսնոյն։ Սակայն յաւելու սուրբ Աւգուստինոս, զի օրէնն է դատաւորին պարտ՝ ի վերայ աճել յետոյ շնացելոյն դառնալ յամուսին իւր առ՝ ի չանկանել անդրէն, և առ՝ ի բառնալ զգայթակղութիւն։

96. Որո՞ն իցէ անյանց ամուսնոյ ինքնահրաման մեկնել՝ ի յանցաւորէն։ — Երեսակ կարծիք են գայսմանէ, երեքին եւս հաւանականք։ Պելլարմինոս, Ազերսա և Վոնչինա ընդ սուրբ Աւգուստինոս ոչ օրէն համարին։ Լայման, Վոնցիոյ, սուրբն Անտոնինոս, Ամմատիկեանք և այլք, եթէ յայտնի իցէ շնութիւնն, օրէն համարին. իսկ եթէ՝ ի ծածուկ, ոչ օրէն համարին առակել յատենի զընացեալն։ Իսկ այլք, եթէ ծածուկ և եթէ յայտնի իցէ շնութիւնն, օրէն համարին. զի օրինք ասեն՝ "Ոչ ուստեք օրէն է առանց յայտնի պոռնկութեան թողուլ զկինն իւր"։ Այս ուրեմն օրէն է թողուլ վասն յայտնի պոռնկութեան։ Իսկ եթէ ծածուկ՝ յաւելուն օրինք. "Ուր իցէ պոռնկութիւն կամ հասկած պոռնկութեան (իմա հասկած հաստատեալ՝ ի ստուգութիւն բարոյական՝ որպէս առացաք՝ ի թիւ 93). օրէն է ազատաբար թողուլ զկինն"։ Արդ եթէ պարտաբար, ապա ոչ վճռոյ և ոչ հրամանի պէտք են. զի տեղեկանան պատգամ անպայման է, արձակել զկինն վասն բանի պոռնկութեան։ Արդարեւ այս հաւանականագոյն թուի, զեթ յորժամ կինն իցէ շնացեալ. զի ծանր է յոյժ պարտ՝ ի վերայ դնել առն աշխարհագոյժ առնել յատենի զանհաւատարմութիւն կնոջ իւրոյ՝ ի նախատինս իւր։ Այլ եթէ երեքեք վճռեսցէ դատաւորն զնակել ընդ նմա, ոչ վասն այնորիկ պարտական է նա զամուսնական պարտս հատուցանել նմա։

97. Ի բաժանել ամուսնոյ ըստ ատենական վճռոյ,

անմեղն ՚ի նոցանէ կարէ ընդդէմ կամաց իսկ ընացելոյ ամուսնոյն կրօնաւորիլ կամ ընդունել զսուրբ կարգ. իսկ յանցաւորն չկարէ ոչ կրօնաւորիլ և ոչ ձեռնադրիլ առանց հրամանի ամուսնոյն, կամ յանձն առնլոյ նորա պայման ինչ կենաց անհրաժարելի։ Օ՚ի օրէն է անմեղ ամուսնոյն կոչել զինա և ՚ի կրօնից, և պարտական է նա գնալ ՚ի կոչն։ Ա՚յլ բաւական է առ այս և լռելեայն հրաման, որպէս եթէ գիտելով ամուսնոյ անմեղն զկրօնաւորելն ընացելոյ ամուսնակցին և կարելով խափանել զայն գիւրաւ՝ ոչ խափանեսցէ. և կամ որպէս այլք հատուածն՝ կամելով ընացելոյն հաշտել ընդ նմա, չառնու ցու յանձն. և կամ որպէս յաւելուն այլք ըստ կանոնադրոց, եթէ զերկեամ մի չկոչեցի յանցաւորն յանմեղէն։

Գիտելի է զի ՚ի բաժանել ամուսնաց ատենական վճռով, պարտ է որդւոց կալ ընդ անյանց ամուսնոյ. և եթէ վասն յանցանաց հօր նոցա լինի լեալ բաժանումն, նա ինքն է պարտական տալ զծախս դաստիարակութեան նոցա ըստ օրինաց։ Օ՚նոյն կամ և յորժամ վասն յանցանաց մօրն լինի լեալ բաժանումն, որպէս հաստատեն Ա՚յման, Վ՚ասիլ Թոմիալ, Սանքէզ, Սիլուեսթրոյ և այլք գրեթէ առ հասարակ. զի եթէ ազատ ՚ի ծախուց էր ընացեալն, օգնականութիւն ՚ի յանցանաց իւրոց գտանէր ընդդէմ առաջին։ Ա՚յլ առ այս պարտականութիւն ծախուց՝ խնդրի վճիռ ատենին։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

Ի ՎԵՐԱՑ ԲԱՆԱԴՐԱՆԱՑ ԵՒ ԱՆԿԱՆՈՆՈՒԹԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

ՅԱՂԱԴՍ ՍԱՀՄԱՆԵԼՈՑ ԲԱՆԱԴՐԱՆՑ

1 · Զի՞նչ են բանադրանք և քանիսփառիկ :
2 · Ե՞րբ վճռեալ են և ե՞րբ վճռելի :
3 · Ո՞ կարէ սահմանել բանադրանս · որ բանադրէ առ երկիւղն ·
4 · Որ ինչ ինդրի վասն հպատակաց անկանելոյ ընդ բանադրանաւք · որ ինչ վասն եպիսկոպոսաց և Թագաւորաց · մանրթ իցէ միաբանու- Թեան անկանել ընդ բանադրանաւք :
5 · Օրէն իցէ եպիսկոպոսն բանադրել, ոչ ի վիճակի իւրում կալով- կամ զհպատակ , որ կայ արտաքոյ վիճակի իւրոյ :
6 · Օրէն իցէ նմա բանադրել զօտարական ոք :
7 · Զինչ մեղս օրէն իցէ ընդ բանադրանաւք արկանել · զպատուիրողաց · զնպատաւորաց :
8 · Իցէ Թէ անպիտուԹիւն և երկիւղ ազատ առնիցեն ի բանադրանաց · օրէն իցէ վասն անցելոց մեղաց բանադրել զոք :
9 · ԱղարտուղուԹիւնք բանադրելոյ :
10 · Զինչ եԹէ առաւ կամ երկբայելի իցեն պատճառք բանադրանացն :

1 · Բանադրանք է պատիժ հոգևոր առ ի քաշկու- Թիւն , որ ի յանցաւորաց և ի յամառելոց քաւնայ ըզ- վայելս հոգևոր բարեաց : Այս քաժանի նախ՝ ի նզովս , յարգել կամ ի կախոտին , և ի նոսփանոտին յաստուածային պաշտամանց : Բաժանի երկրորդ՝ յայն որ չերաւանդ սահ- մանեալ, այսինքն ըստ հանրական և հաստատուն օրի- նաց · և յայն որ ի Ժողով սահմանեալ, այսինքն չեպիս- կոպոսէ վասն ամենեցուն կամ ումանց ըստ այս ինչ յան- ցանաց : ԱյԹէ վասն ամենեցուն իցէ սահմանեալ, հայի ի տեղին և ի մեղս ապագայս · վասն որոյ եԹէ ոք ի հպատակաց իւրոց այլուր յանցանիցէ, չանկանի ընդ բա- նադրանաւքն : Իսկ վասն ումանցն սահմանի ընդդէմ յան- ցանաց գործեցելոց և յայտնի անձանց , վասն որոյ և մարթ է նոցա ընդդէմ բացակայից իսկ սահմանել·

Նաժանի երկորդ՝ ի վճռեալ, յոր նովին իսկ գործով անկանի օք. և՝ ի վճռելի, յոր չետ վճռոյ է անկանել։

2. Ո՞ւ՝ ի զանազանել զվճռեալ բանադրանս՝ ի վըճռելեաց՝ պարտ է հայել՝ ի բանս սահմանադրութեան նոցին. զի ուր յիշատակին գործք յանցաւորին, որպէս ասել նովին իսկ գործով, նովին երեսաքէր. կամ ուր յանցեալ ժամանակի ասի բանադրեալ է այնպիսին, բանադրեալ պիտ հրամայէմ և այլն, վճռեալ են բանադրանքն։ Իսկ վճռելի են ուր ասի. անկանի կամ անկցի ընդ բանադրանօք, բանադրեալ լիցի, ընդ պատժով բանադրանաց կամ նզովելոց։ Զանգերձ այսու ամենայնիւ և զկարդ բանիցն պարտ է նկատել, և զհանգուցած աստուածաբանից և զսովորութիւն։

3. Ո՞ւմ օրէն իցէ սահմանել զբանադրանս։ — Սըրբազան Պատկին, եպիսկոպոսաց, փոխանորդաց նոցին, փոխանորդաց ուխտի կանոնիկոսաց, գաւառական ժողովոց, կարգապետաց և ժողովոյ միաձանց, և ամենեցուն՝ որոց ընդօրհեալ է իշխանութիւն։ Ա՛յլ ոչ և ժողովրդապետաց. իսկ աշխարհականաց ամենևին իսկ ոչ. և ոչ վանամարոց և աբբասուհեաց, զի և նոքա չեն ընդունակք եկեղեցական իրաւասութեան։ Ո՛վ ի որ սահմանէն բանադրանս, պարտ է զի իցէ նորա գէթ խուզուած հերաց և իրաւասութիւն ազատ. վասն որոյ եպիսկոպոս բանադրեալ կամ կախեալ կամ հերետիկոս կամ հերձուածող չկարէ բանադրել, և ոչ փոխանորդ նորին։ Ա՛յլ որոյ անյայտ իցէ բանադրանք կամ մոլորութիւն, թէպէտ և չեն ըստ օրինի նզովք նորին, այլ վաւերականք են ըստ հասարակաց կարծեաց բարոյականաց։ Պօնաւինա, Տիանա, Ա՛ւիլա, և այլք զնոյն գայթանի իսկ բանադրելոց ասեն, եթէ չիցեն ամբաստանեալ յանուանէ։ Գիտելի է ասա՝ զի վաւերականք են և բանադրանք առ ծանր երկիւղի առեալք, որպէս և արձակուածն՝ ի բանադրանաց բռնաբարեալ անիրաւապատուհասելոք։

4. Ո՞ւմ անկանելոյ ընդ բանադրանօք, խնդրի նախ՝ զի իցէ՞ ձեռ մկրտեալ։ Երկրորդ՝ զի իցէ հասեալ՝ ի բանաւարութիւն. և այնոքիկ իսկ՝ որ չէ ևս հասեալք ի՛նչ են յարբունս՝ չանկանին՝ ի բանադրանս սահմանեալս եթէ չիրաւանդ և եթէ՝ ի մոլորեալ, առանց բացայայտակի

և զնոսա անուանելոյ օրինաց, որպէս զմանկունս՝ որ մկրտանեն ի կուսաստանս կամ հարկանեն զեկեղեցական։ Արդարև՝ զի ոչ էր հպատակ. վասն որոյ հաւանականագոյնս հաստատեն Լուկոյ և այլք, (որպէս ասացաք ի գլ. ԺԲ. 138) զի չկարէ եպիսկոպոս բանադրել զծառայականս, եթէ ոչ յետ միանգամ խրատելոյ զնոսա՝ դարձեալ յանցանիցեն։ Կարդինալք և եպիսկոպոսունք ոչ անկանին ընդ բանադրանօք, եթէ չէին զնոցանէ բայայայտ յիշատակ. այլ աստուածաբանք իմանան զայս սովորաբար զարդելմանէ և զխափանմանէ, զի օրինք զայնոյ ևեթ առնեն յիշատակ։ Իսկ զԹագաւորս և զդշխոյս բանադրել՝ սրբազանին ևեթ է իշխանութիւն։ Ընդդարձ՝ զի ոչ էր անձն որոշեալ. և զայս պարտ է զնգովից ևեթ իմանալ, զի մարթ իսկ է արգելուլ կամ խափանել զմիաբանութիւն, այլ ոչ և նզովել։ Այս ոչ օրէն է նզովել զոք ի միաբանութենէ անորոշակի՝ ուր զայնցանաց գործեցելոյ իցեն բանք, բայց միայն ուր բանք իցեն զառաջնիկայից. և յայնժամ որ զբ և գործիցէ զայն՝ անկանի ընդ բանադրանօք։ Պարտեալ է՝ զի եթէ ի միաբանութեան ուրեք ամենայն իսկ միաբանք իցեն յանցաւորք, օրէն է Պապին բանադրել զնոսա. այլ եպիսկոպոսի առնել զնոյն՝ ընդդէմ օրինաց է, Թէպէտ և վաւերական ըստ կիսոյ յաստուածաբանից։ Իսկ այլք և անվաւեր համարին զայն, զի օրէնք ամենևին ապգելոմ ասեն, որպէս Թէ ասել՝ բառնալոյ զամենայն իշխանութիւն բանադրելոյ։ Այս Յանեանոյ՝ որ զառաջնոցն կարծիս պաշտպանէ, յաւելու՝ զի պարտ է յետնոցն կարծեօք վարել, զապահովագոյնն ի գործ առնելով վասն հաւանականութեան նորին. վասն որոյ պարտ է եպիսկոպոսի յանկանէ յանուանէ զյանցաւորն բանադրել։

Ե. Արգասիեաի օրէն է բանադրել զհպատակս իւր, ուր ուրեք և ինքն գտանիցի. բայց եպիսկոպոսի չէ օրէն, արտաքոյ կալով իւրոյ վիճակին. այսպէս սահմանեն կանոնք, ի բաց առեալ զայսոցին յամառութիւն անկարօտ հարցափորձի և առենական քննութեան. և դարձեալ ի բաց առեալ, եթէ եպիսկոպոսն ոչ որպէս վիճու առաքեսցէ զբանադրանս, այլ որպէս պատուիրան առ ի զգուշութիւն։ Բայց կալով ի վիճակին՝ կարող

է բանադրել զհպատակ իւր բացակայ ՚ի վիճակէ իւրմէ · և յայնժամ բաւէ յղել զեկակոչ ՚ի տուն նորա , կամ ՚ի տեղն աշխարհաժողով դնել յայտարարութիւն , որպէս սահմանէ ժողովն տրիդենտեան : Այլ զայս իմա վասն յանցանաց գործեցելոց ՚ի վիճակի իւրում, և ոչ արտաքոյ · որպէս ուսուցանեն Սուարէզ , Պանաչինա , Սալմատիկեանք և այլք : Իսկ եթէ եպիսկոպոսն պատուիրան ումեք հանդերձ բանադրանօք ՚ի վերայ գնել չառնել ինչ , և նա արասցէ , անկանի ՚ի բանադրանս , թէպէտ և արտաքոյ վիճակին յանցանիցէ : Ո՞ ՚ի պատուիրանն այն հայր յանձն նորա , և կապէ զնա ուր և գտանիցի · և չէ որպէս զայլ բանադրանս սահմանեալս յեպիսկոպոսէ , որ հային ՚ի տեղւոջ , և ոչ ընդարձակին արտաքոյ վիճակի նորա : Ո՞այս այսպէս հաւանականագոյնս ուսուցանեն Սուարէզ , Լայման , Պանաչինա , Լաքրուա և Սփոռեր · թէպէտ և հաւանական է և հակառակն կարծիք , զոր պաշտպանեն Ծուրնելի , Ռոնքալեա , Հոլզման և այլք :

6· Ոչն է եպիսկոպոսի բանադրել զօտարական , որ յանցանիցէ ՚ի վիճակի իւրում: Այլ միայն եթէ յամառեսցի յանցաւորն , որպէս ասացաք ՚ի վեր անդը (գլ· ժ.Հ· 138) , և եթէ միայն սկսեալ էցէ եպիսկոպոսին զդատաստան նորա , և կամ դեռ եկակոչ արարեալ նմա յառաջ քան զելս նորա ՚ի վիճակէ իւրմէ : Ոտաբաւական ոք ուր ուրեք և զկայ առցէ՝ ՚ի մոռ եդեալ կալ անդ զառաւելագոյն մասն տարւոյ , անկանի ՚ի բանադրանս սահմանեալս անդ վասն ամենեցուն՝ որոց յանցանիցեն զայս ինչ կամ զայս յանցանս : Իսկ եթէ ՚ի հարևանցի կայցէ անդ , և կամ եթէ բանադրանքն չիցեն վասն հասարակաց՝ այլ որպէս պատուիրան ինչ սպառնացեալ, օրինակ լինի՝ որոց ոչն յայտնիցեն գիտելով զգողս սեղանակապուտս , յայնժամ ազատ է ՚ի բանադրանաց :

7· Ալ ան անկանելոյ ՚ի ծանր ինչ բանադրանս , որպիսի է մեծագոյնն նզով , արգելուին յամենայն պաշտամանց կամ բազմաժամանակեայ , խնդրին նախ՝ ծանր մեղք , այսինքն զի իրն ինքնին ինչ ծանր : Այլ եթէ երկբայելի և ոս ինչ ծանրութիւն իրին , զօրէ հրամանն մեծաւորի · զի յերկբայս՝ իշխանութեան են իրաւունք :

Ա՛յլ յորժամ պատուիրանն իցէ ընդ վճռեալ բանադրանօք, նուիրին իսկ ծանր մեղաց պարտ՝ ի վերայ ածէ, թէպէտ և չիցէ իրն ծանր, այլ՝ ի ծանր ինչ իցէ պատկանաւոր։ Ա՛յլ ոչ և յորժամ իրն ինքնին չիցէ ծանր, և բանադրանքն իցեն վճռելիք. որպէս ուսուցանեն Ա֊թոյ, Ա֊իլա, Ա֊ոնքալեա, Ա֊ալմատիկեանք և այլք։

Երկրորդ խնդրի արտաքին գործ գիտելի այլոց. վասն որոյ եթէ ոք ասիցէ այո՝ այս այսպէս է, և՝ ի մէն իւրում հաստատեսցէ այսուիկ մոլորութիւնն ինչ, ոչ անկանի՝ ի բանադրանս։ Ա՛յլ զարձեալ պարտ է գործոյն արտաքուստ և զոլ ծանր. վասն որոյ ոչ անկանի՝ ի բանադրանս՝ որ թերեւսակի հարկանէ զեկեղեցական, թէպէտ և՝ ինեղբուստ սպանութեան կամօք առնիցէ զայն. որպէս ուսուցանեն բարոյականք առ հասարակ։

Երրորդ՝ խնդրի զի լրացեալ իցեն մեղքն, եթէ ոչ այլազգ ինչ ասիցեն օրէնք։ Ա՛յլ որք պատուիրեն կամ խրատեն զմեղս ինչ բանադրանաց, անկանիցին՝ ի նոյն՝ եթէ մեղքն ոչ գայցեն յարդիւնս։ — Եթէ բանադրանքն ընդդէմ նոցա գլխաւորապէս իցեն սահմանեալ, անկանին վասն տալոյ նոցա զպատուէրն կամ զխրատ. իսկ եթէ ընդդէմ յանցանացն է սահմանեալ գլխաւորապէս՝ ի հրամանէ կամ՝ ի խրատուէ անտի յառաջ եկելոց, ոչ անկանին. վասն որոյ որ պատուիրէ կամ խրատէ հարկանել զեկեղեցական, եթէ ոչ յարդիւնս գայցէ հարուածն՝ ոչ անկանի՝ ի բանադրանս։ Ո՞յս այսպէս ուսուցանեն Պ֊ոնաչինա, Պ֊ուսեմպայ, Ա֊ալմատիկեանք, Լ֊աքրուա և այլք։ Յաւելուն Ա֊ալմատիկեանք, Լ֊աքրուա, Կ֊աւարրոյ և այլք ազատ կացուցանել՝ ի բանադրանաց և զպատուիրողս և զխրատիչս այնոցիկ, որոց առանց իսկ պատուիրանի կամ խրատու նոցա՝ ի մէն եղեալ էր հարկանել։ Իսկ եթէ երկբայելի իցէ ազդումն պատուիրանին կամ խրատուն՝ ի գործ անդր, կէսք համարին չանկանել նոցա՝ ի բանադրանս, իբր զի չհաստանէ պատիժ առանց յայտնի կամ կատարեալ յանցանաց. և կէսք զհակառակն հաստատեն, վասն զօրելոյ յերկբայս՝ իրաւանց ազդեցութեան խրատուն կամ հրամանի։ Երկոքին և կարծիք հաւանականք են ըստ ասացելոցս՝ ի գլ. ժ. 45։

Ա՛յլ որ յառաջ քան զկատարումն յանցանացն նա-

հանջէ զպատուէր իւր կամ զխրատ, չէցէ ազատ ի բանադրանացն։ — Ասաւորդոյ, Պոնաչինա, Քոնչինա և այլք չառնեն զնա ազատ. բայց հանրագոյն կարծիք ազատ կացուցանեն, զի եկեղեցի վասն յամառելոյ եւեթ մինչև ի լուծմն մեղացն սահմանէ զբանադրանս, որպէս ասելոյ եմք զանկանոնութենէ որոց դէզ մահու տան եկեղեցականի։

8. Ողորոգ՝ վասն անկանելոյ ի բանադրանս խնդրի յամառութիւն, որ աճէ ընդ իւր զարհամարհանս բանադրանացն։ Ասաւի զհետ գայ, զի պարտ իցէ յանցաւորին գիտել՝ ոչ միայն զեկեղեցական օրինացն արգելս (Թէպէտ և յաստուածային օրինացն իսկ արգելեալ իցեն յանցանքն), այլ և զբանադրանս՝ որ վասն այնր յանցանացն սահմանեալ։ Ասն որոյ Սուարէզ, Կայեթանոյ, Քասթրոփալ, Պոնաչինա և այլք գրեթէ առ հասարակ ազատ կացուցանեն ի բանադրանացն ոչ միայն զնախընթաց տգիտութիւն, այլ և զհամընթաց. իբրու այն՝ եթէ ոք սպանանիցէ յանգէտս զեկեղեցական ոք, այլ այնու պատրաստութեամբ կամաց, զի թէ գիտեր և զեկեղեցականութիւն նորա՝ ոչ խորշեր ի սպանանելոյ զնա։ Ազատ կացուցանէ և Թանձր իսկ տգիտութիւն, եթէ բանադրանքն իցեն սահմանեալ՝ ընդդէմ յանդգնելոյ և կամաւ կամ գիտութեամբ յանցուցելոյ. որպէս հաստատեն Անքէզ, Լաքոպար և այլք։ Իսկ Պոնաչինա, Ռոնքալեա, Ալբերտոյ, Ամմատիկեանք և այլք ընդդէմ հանրագոյն իսկ կարծեաց հաստատեն, զի և կեղծեալ տգիտութիւն ազատ կացուցանիցէ ի բանադրանաց. և չէ անհաւանելի կարծիք նոցա. զի որ կեղծէն զտգիտութիւն, ոչ արհամարհէ զբանադրանս։

Զհետ գայ դարձեալ, որպէս յոյժ հաւանականագոյր հաստատեն Սուարէզ, Քասթրոփալ, Պոնաչինա, Քոնչինա, Ամմատիկեանք և այլք, զի և երկիւղածանր՝ ազատ առնէ ի բանադրանաց, Թէպէտ և յանցանքն յաստուածային իսկ օրինաց արգելեալ իցեն. քանզի երկիւղ ազատ կացուցանէ ի մարդկային օրինաց, իմա որպէս սահմանելոյ ի մարդկանէ։ Զհետ գայ դարձեալ՝ զի չիցէ օրէն սահմանել բանադրանս յանցանաց բոլորովին անցելոց, առանց յարատեւութեան ինչ նոցա և առանց խրատու առ յանցաւորն,

առ՝ի չգոյէ անդ յամառութեան։ Այլ զայս իմա զնզո-
վից ևեթ. զի գանկանոնութիւն և զնախանձումն մարթ
իակ է սահմանել և անցելոց յանցանաց իբր՝ի պատիժ
միայն, որպէս հաստատեն Վասիլիոսիոս, Պոնաչինա,
Սալմատիկեանք, Վոնչինա և այլք։ Օ՞չ հետ զայ դար-
ձեալ կարևորութիւն կանոնական երեքկին աղդարա-
րութեան՝ի վեց կամ՝ի նուազ իսկ աւուրս՝ի ստիպել
հարկին։ Ուր զայս իմա վասն պարտաւորութեան յան-
ցաւորին. զի՝ի վաւերականութիւն բանադրանացն շատ
է զի ինչ լեալ ազդարարութիւն, վասն որոյ է ուրեք
զի բաւէ և միանգամն՝ի պարտաւորութիւն։ Ուր դար-
ձեալ իմա զայս վասն բանադրանաց սահմանելոց՝ի Տէր-
պտ, զի վասն սահմանելոցն չէրաւանդ վճռեալ բանա-
դրանաց օրինքն ինքնին ազդ առնեն, ըստ հաւանականա-
գոյն կարծեաց։ Ո՞նդի է իմանալ և վասն վճռելեաց, զի
է և անդ ազդարարութիւն և յամառութիւն, եթէ
միայն արարեալ իցէ եկակոչ յանցաւորին նախ քան
զվճռելն, յորժամ յանցանքն չիցեն հրապարակագոյժ,
որպէս ուսուցանեն Վոլֆտոյ, Վոնչինա և այլք։

9. Յօրինաւորութիւն բանադրանաց պարտ է դա-
տաւորի առնել զայն գրով՝ նշանակելով անդ յականէ
յանուանէ զյանցաւորն, և զբանադրանն և զպատ-
ճառս նորին որոշակի, և զպատճէնն բանադրանացն տալ
բանադրելոյն՝ եթէ խնդրիցէ։ Ընդանց այսոցիկ թէ-
պէտ և վաւեր են բանադրանքն, այլ ծանր մեղանչէ
դատաւորն, և արգելեալ դատանի յաստուածային պաշ-
տամանց ամաւրեայ աւուրս՝ չկարելով իսկ մտանել կե-
ղեցի, ըստ կանոնաց։ Ուր զայս իմա զատենական
բանադրանաց՝ որ եկակոչիւ և հարցափորձիւ կատա-
րին. և մի՛ զայլոցն՝ որ ըստ հանրական օրինաց կամ ա-
ռանձնական սպառնալեօք կատարին, որպէս պատուի-
րեալ ումեք մի՛ առնել զայս ինչ կամ զայն։ Ուր դար-
ձեալ ոչ է պարտ իմանալ զայս զդատաւորաց, որք՝ի
ստիպել հարկին կամ առ տգիտութեան զանց առնեն
զարարողութեամբք, թէպէտ և մեղադրելի իցէ տգի-
տութիւն նոցա. զի կանոնք ասեն՝ Ընդ ոչ յանդգնեցոյ։
և առ յանդգնութիւն խնդրի գիտութիւն։ Ուր գիտելի
է զի զվճիռ բանադրանաց չէ օրէն տալ յաւուր տօնի,
եթէ յամառութիւն յանցաւորին չիցէ այնչափ յայտնի՝
զի չիցեն պէտք հարցափորձի։

10. Լինի ոք անմեղ իցէ խոհապէս, և ըստ ատենական օրինաց գտցի պարտաւոր, թէպէտ և ազատ է՛ի բանադրանաց ըստ խղճի մտաց, և ոչ անկանի յանկատնոտութիւն՛ի կատարել զպաշտամունս, այլ առ՛ի չտալ դայթակղութիւն՝ պարտ է նմա վարել որպէս բանադրեալ, ըստ հասարակաց վարդապետութեան աստուածաբանից։ Ոչնոյն իմն և յորժամ ստոյգ իցէն բանադրանքն, և արդարութիւն նոցին կամ արձակումն երկբայելի. զի իրաւունք իշխանութեան դատաւորին են յայնժամ, և յանցաւորն համարելի է՛ի բանադրանս ըստ հանրական վարդապետութեան։ Իսկ եթէ բանադրանքն կամ յանցանք իցեն երկբայելի, որպէս եթէ հարուած եկեղեցականի իցէ լեալ ծանր թէ ոչ, և կամ երկբայելի իցէ ըստ իրաւանց՝ արդեօք վճռեաւ թէ վճռելի իցեն բանադրանքն, յայնժամ Սանքէզ, Պոնայինա, Հոլգանն, Ռանքաբէա, Սալմանտիկեանք և սուրբ Աւգուստինոսին չհամարին անկեալ զյանցաւորն՛ի բանադրանս։

Լինի դատաւորն սահմանեսցէ վճռատուցումն ընդ բանադրանօք, պարտ է յանցաւորին՝ թէպէտ և ըստ հաւանական կարծեաց չհամարիցի զանձն պարտաւոր՝ հատուցանել զայն՛ի սահմանեալ ժամանակին, զոր օրէն է պարտաւորեաւն յերկարաձգել։ Իսկ եթէ ստոյգ ապա ծանիցէ զարդարութիւն իւր, ոչ ևս է պարտական հատուցանելոյ զտուգանն, և ոչ պահելոյ զօրէնս բանադրանաց ըստ խղճի մտաց. այլ միայն վանն չտալոյ դայթակղութիւն, որպէս ասացաք։

ՑՕԴՈՒԱԾ Բ

ՑԱՂԱԳՍ ԱՐԶԱԿԵԼՈՑ Ի ԲԱՆԱԴՐԱՆԱՑ

11. Ո՞ւմ օրէն է արձակել՛ի բանադրանաց։
12. Ո՞ւմ՛ի բանադրանաց հասարակաց. կարկիճ նախակոպման արձակել՛ի բացեայ կալով՛ի վիճակէն։
13. Կարևոր իցէ ձև արձակման կամ ներկայութիւն բանադրելոյն։ Պայմանաւ արձակումն։ Աղտաքոյ խոստովանութեան։
14. Պայմանք կարևորք վանն արձակման։

11. Լինի բանադրանքն առանձին վճռով իցեն հաստեալ, սովորաբար դնողին և՛ եթէ օրէն է բառնալ զայն,

կամ վեհագունի քան զնա, կամ յաջորդի նորին, և կամ որում ինքն զիշխանութիւն իւր ասանդէ։ Սակ եթէ՝ ի սովորական իրաւանց առանց վերապահութեան իցեն եղեալ, յայնժամ ամենայն խոստովանահայր կարէ քառնալ, որպէս հաստատեն՝ ի կանոնաց Ծ. ուրնելի, Սոթոյ, Քաղքեդոնի, Քոնչինա, Ոռնքալեա, Սալմանտիկեանք, տուրք Գզուինացին, և այլք գրեթէ առ հասարակ։ Այլ քահանայք, որոց չիք իրաւասութեան խոստովանութեան, չկարեն և ոչ՝ ի փոքր քանադրատնաց արձակել զոք։

12. Այս արձակումն այն զօրէ եթէ՝ ի ներքին և եթէ յարտաքին ատենի. վասն որոյ Ոռնքալեա, Քոնչինա, Քաղքեդոնի, Տուարեզ, Սփորեր, Սալմանտիկեանք և այլք ասեն, զի և արտաքոյ խոստովանութեան օրէն է քառնալ զքանադրանս։ Պիտելի է զի ամենայն խոստովանահայր կարող է արձակել՝ ի քանադրանաց եղելոց՝ ի Տոմոյ, ոչ առանձին վճռով, այլ հասարակաց՝ որ հաւասար է եղելոցն՝ ի սովորական իրաւանց, որպէս հաւանականագոյնս ուսուցանեն բարոյականք գրեթէ առ հասարակ։ Պիտելի է դարձեալ զի օրէն է եպիսկոպոսի՝ ի քացեայ իսկ կալով՝ ի վիճակէ իւրմէ՝ արձակել՝ ի քանադրանաց, ուր չիցեն պէտք առենական հարցափորձի։ Ընդ հակառակն եթէ ոք մեղիցէ՝ ի վիճակի ուրեք, և՝ անկցի ընդ առանձինն քանադրանօք Թեմական եպիսկոպոսի, առանց հրամանի նորա չկարէ ընդունել յուժեքէ արձակումն։ Որոյ հիմ իշխանութիւն արձակելոց՝ ի վերապահելոց Պապին, ոչ այնու կարէ արձակել և՝ ի վերապահելոց կոնդակին ընթեաց. և որոյ հիմ իշխանութիւն արձակելոց և՝ ի սոցանէ, ոչ այնու կարէ արձակել և՝ ի հերետիկոսութենէ, որպէս Բենեդիկտոս ԺԴ յայտ առնէ՝ ի կոնդակի ուրեք իւրում։ Պարձեալ և ընդ իշխանութեամբ, զոր տայ եպիսկոպոս արձակելոյ՝ ի վերապահելոց, ոչ է իմանալ և զմեզս՝ որոց վասն սահմանեալ իցեն քանադրանք վերապահեալք. իսկ եթէ՝ ի Պապէն տացի իշխանութիւն վերապահելոց, բովանդակին և այնք ընդ իշխանութեամբն. զի վերապահեալքն Պապին գրեթէ առ հասարակ վասն քանադրանացն են վերապահեալ։ Բայց այսմ և իշխանութիւնն ընդարձակ խոստովանա-

հարց ՚ի յոթելինի՝ արձակելոյ յամենայն բանադրանաց վերապահելոց, բովանդակէ ըստ հասարակաց սովորութեան և զվերապահեալս եպիսկոպոսաց:

13. Ոչ ասի արձակելոյ ՚ի բանադրանաց ՚ի ներքին աշխարհի՝ չեն ինչ պէտք սահմանեալ ձևոյ բանից, այլ բաւական է ամենայն նշան արտաքին՝ յայտարար կամաց; զի առանց այնր՝ կասկած եւեթ ոչ բաւեն: Այս ոչ ներկայութիւն բանադրելոյն խնդրի առ այս, զի և ՚ի հեռաստ օրէն է արձակել զնա. բայց որպէս Անգղէզ, Ամսմատիկեանք և այլք ազգ առնեն, ոչ է պարտ առանց ծանր հարկի առնել զայն. և ՚ի սահիլել հարկին՝ պարտ է փոխանորդի նորա ունել գիր ՚ի ձեռին վասն տալոյ զարձակումն փոխանակ նորա: Ոչ աւեր է և յայսկամայս բանադրելոյն արձակումն, այլ ոչ օրինաւոր: Այլ արձակումն՝ ծանուս և անիրաւ ահարկութեամբ բռնաբարեալ՝ անվաւեր է, և որ այսպիսի ինչ գործէ՝ անկանի յայլ ևս բանադրանս: Արձակումն, առանց հաստուցման պարտուց տուեալ եկեղեցոյն, վաւեր է՝ այլ օրինազանց, որպէս ասացաք ՚ի գլ. ԺԲ. 70: Իսկ որ ՚ի փոխանորդէ՝ աւանդեալ եւեթ իշխանութեամբ տուեալ՝ անվաւեր է և օրինազանց, եթէ յաւելեալ կայցէ ՚ի հրամանագրին հաստատել պատճառս, որպէս հաւանականացեալ հաստատեն Ասարկղ, Ալորեր, Ա աստղուկղ, և այլք. թէպէտ և հաւանական է և հանգամանին սորին կարծիք՝ զոր հաստատեն Անգղէզ, Բաստ Թրոփալ, Պոնաչինա, Ռոնքալեա, և Ամսմատիկեանք, ցորչափ հրամանագիրն չառնիցէ անվաւեր զառանց հաստուցման արձակումն:

Ա աւեր է և արձակումն ապառնի պայմանաւ, այլ ոչ օրինաւոր առանց իրաւացի պատճառի. և ՚ի լնուլ պայմանին՝ բառնին բանադրանք: Օրէն է ընդ հակառակն տալ զարձակումն պայմանաւ անդրէն ՚ի նոյն անկանելոյ ՚ի չկատարել արձակելոյն զպարտս իւր ՚ի պայմանեալ ժամանակին: Այլ յայնժամ ըստ հաւանականացն կարծեաց խնդրին այլ յանցանք, այս ինքն կամաւորապէս վերջանալ ՚ի կատարմանէ պարտուցն. զի առանց այնորիկ ոչ է մարթ դառնալ բանադրանացն արձակելոյ, և ոչ մարթ է ՚ի կախ կալ բանադրանաց առանց իշխանութեան Պապին: Այս զիշխանութենէ

իսկ Պապին զնոյն հաստատեն Լայմանն, Վ՚ոնչինա, Ալմաթիկեանք և այլք, ՚ի տալ նորա արձակումն պայմանաւ վերատին անկանելոյ ընդ բանադրանօք։ Գիտելի է զի որ կարէ արձակել՚ի բանադրանաց՚ի խոստովանութեան, կարէ և արտաքոյ խոստովանութեան. ՚ի բաց առեալ զվերապահեալս Պապին անյայտս, զորս եպիսկոպոսունք արտաքոյ խոստովանութեան չկարեն արձակել ըստ կոնզակին Գրիգորի ԺԳ, որպէս ասասցուք ՚ի տողս (գլ. Ի. 32)։

14. Ոմանք արձակմանն կարևոր են պայմանքս այսքիկ։ Նախ՝ հատուցումն ընծաուն, եթէ չկայ ընծայեցոյն ներեալ զայն, կամ հրաժարեալ՚ի պահանջելոյ զհատուցումն, կամ եթէ յանցաւորն չկայ անկարող. իսկ եթէ առ ժամն և եթ չկարկայ հատուցանել, շատ է զի երաշխաւորեսցէ կամ խոստասցի առաջի Գ՚ստուծոյ։ Երկրորդ՝ խոստումն երդմամբ ոչ ևս՚ի նոյն յանցանս անկանելոյ. այլ զայս իմա՚ի մեծեղեռն ոճիրս, որպէս հարկանել զքահանայ, տակաւին հրապարակաւ պահանջել և այլն։ Երրորդ՝ խնդրել զարձակումն. Թէպէտ և՚ի զղջանալ յանցաւորին՝ յաւժամայս իսկ նորին մարթ է խոստովանահօր արձակել զնա՚ի բանադրանաց, զի կանոնն չասէ՝ թէ չէնջէ մարդն, այլ ոչ է պարտ ասէ։ Այլ զայս իմա, եթէ իշխանութիւն արձակելոյ՝ խոստովանահօրն էցէ տուեալ, և ոչ ապաշխարողին ընդհեալ արտօնութիւն ընդունելոյ զարձակումն բանադրանացն յումմէ և էցէ խոստովանահօրէ. իսկ եթէ դեռ լիցի ապաշխարողն խոստովանել քահանայի՝ որոյ էցէ իշխանութիւն արձակելոյ զվերապահեալս, և մոռանայցէ ինչ՚ի վերապահելոյ, հանրական կարծիք համարին զնա արձակեալ. որպէս ասացաք՚ի գլ. ԺԶ. 140։

ՅՕԴՈՒԱԾ Գ.

ՅԱՂԱԳՍ ՄԵԾԱԳՈՑՆ ՆԶՈՎԻՑ

15. Հաղորդակցութիւն ընդ տանելն և ընդ խորշելն նզովեալս:
16. Ընդ հարկանողս եկեղեցականաց:
17. Պատիժք յարակից նզովից: Ա. Զրկուածն ի խորհրդոց:
18. Բ. Զրկուածն ի հոգևոր նպաստից: Գ. Ի պաշտելոյ զնորհուրդս:
Դ. Յաստուածային պաշտամանց:
19. Ե. Յեկեղեցական ժառանգութեանց, յիշխանութեանց և ի հասոյից:
20. Զ. Յառնական պաշտամանց: Է. Յերաւասութենէ: Ը. Ի թաղմանէ: Թ. Ի քաղաքական հաղորդակցութենէ:

15. Նզովք են բանադրանք, որով զրկի ոք ի հաղորդութենէ եկեղեցւոյ: Այլ է նզով մեծ, և այլ փոքրն. փոքրն, զորմէ ի յաջորդ յօդուածիս պիտի մեզ ասել, յընդունելութենէ և ի խորհրդոց զրկէ զբանադրեալն. իսկ մեծն, զորմէ աստանօր մեր բանքս են, զրկէ ի բնաւից իսկ ի հոգևոր և ի մարմնաւոր հաղորդակցութեանց: Ի բանադրելոյ մեծաւ նզովիւքն այլք պոռնկիւք են, և այլք խորշելիք: Ի սկզբանէ ամենայն իսկ բանադրեալք խորշելիք էին. այլ կոստանդեան ժողովն սահմանեաց, զի յանուանէ և ի բանադրեալք և հրապարակաւ հարկանողք եկեղեցականաց և միանձանց խորշելիք: Ոմանք որոյ չէ պարտ խորշել ի յայտնի իսկ բանադրելոց և ի հերետիկոսաց, եթէ չիցեն յայտնի յանուանէ բանադրեալ և հրատարակեալ զրօվ կամ բանիւ: Պիտաւորութիւն ժողովոյն էր նպաստել անմեղաց՝ բառնալով ի նոցանէ զբեռն խորշելոյ ի բազմաց, և ոչ եթէ թեթևացուցանել զպատիժ բանադրելոց. վասն որոյ սոքա մեղանչեն միշտ ի հաղորդելն ընդ այլս ի հոգևորս և ի մարմնաւորս. իսկ այլք չմեղանչեն ի հաղորդելն ընդ տանելիս և ի հոգևորս: Այլ թէպէտ են՝ որք մեղս համարին հաղորդել անպատձառ ընդ տանելիս, գէթ տալով նոցա պատձառս մեղաց, այլ հանրական կարծիք հաստատեն՝ զի և ոչ բանադրեալն տանելի մեղանչէ ի խնդրել այլոց հաղորդիլ ընդ նմա: Ո՞ի եթէ մեղանչէր, անօգուտ լինէր, կամ գէթ ըստ մասանեաց, հրամանն տուեալ հաւատացելոց հաղորդա-

կից լինելոյ ընդ նմա. զի գէթ անուղղակի արդելեալ ինայիցին նոքա վասն եղբայրսիրութեան՝ ի հաղորդակցելոյ ընդ տանելի բանադրեալս։ Վասն որոյ տալ ժողովոյն լուծլի հրամանն հաղորդակցելոյ հաւատացելոյ ընդ նոսա, անուղղակի և նոցա է տալ հրամանն հաղորդակցելոյ ընդ այլս, հրաւիրեալք՝ ի նոցանէ։ Ոչնոյն է իմանալ և զկախելոյ և զնափանելոյ չխորշելեացդ, զի ժողովոյն հանրաբար տայ հրամանն զբանադրելոյ. զնոյն և զանկելոյ յանկանոնութիւն չխորշելեացդ հաստատէ Ա՛ելիա։

16. Հարկանողք եկեղեցականաց խորշելիք են, եթէ յայտնի և հրապարակաւ հարեալ իցեն. վասն որոյ խնդրի զի յայտնի լեալ իցէ հարուածն առաւելագունից՝ ի բնակչաց քաղաքին կամ՝ ի դրացեաց կամ՝ ի միաբանից, ուր պատահեալն է. և կամ բազմութեան մարդկան, եթէ քաղաքն իցէ ընդարձակ։ Զի սատ է զի յարժանահաւատ մարդկանէ սկիզբն լեալ իցէ հաւքաւոյն, և պատմեսցի ոչ միայն հարուածն՝ այլ և հրապարակաւ գոլ հարուածոյն։ Ո՛չ ի եթէ՝ ի ծածուկ լեալ իցէ հարուածն, ոչ է պարտական խորշելոյ՝ ի հարկանողէն որ գիտէն զայն առանձին։ Այս հաւանական կարծիք են ոչ սակաւուց աստուածաբանից, զի բաց՝ ի ծանօթութենէ գործոյն՝ կարևոր իցէ և առեղական ծանօթութիւն. զի վասն խորշելոյ՝ ի հարկանողէն՝ պահանջէ ժողովն ոչ վայրապար լինել ստուգութիւն զհարուածոյն, այլ այնպիսի՝ զի չկարէցէ հարկանողն ընդդէմ դառնալ և ծածկել զայն, և ոչ անբաւեր խոչ զնոյն առնել։ Վասն որոյ եթէ յանցաւորն չիցէ ըմբերանեալ յատենի, կամ դատապարտեալ, և կամ գէթ չիցեն յանցանք նորա ցուցեալ, դուն ուրեք լինի խորշելի. զի կարող է նա միշտ անբասիր առնել զանձն՝ ասելով յանդէտս կամ յանըզգաստից հարեալ, և կամ առ՝ ի պաշտպանել անձին և այլն։ Նոյնպէս եթէ հարկանողն դատապարտեալ ուրեք իցէ և խորշելի, ոչ այնու խորշելի է և այլուր՝ ուր չիցէ հասեալ համբաւ դատապարտութեան նորա և կամ ընդհուպ հասանելոյ, որպէս հաստատեն հաւանակա-նաբար Ղասէրտոփալ, Սանքէզ և Սալմատիկեանք. զի ուր չիցէ ծանօթ հարկանողն, չէք անդ և գայթակղութիւն՝ որ աղագաւ ժողովն հրամայէ զկատարեալ խորշել յայնպիսեացդ։

17. Պատիժք յարակից ընդ մեծագոյն նզովիցն զանազանին ՚ի հեռաւոր և ՚ի մերձաւոր։ Հեռաւորքն են նախ՝ անկանոնութիւն, յոր անկանի բանադրեալն ՚ի կատարել զգործ ինչ պաշտամանն սրբոյ կարգին. և երկրորդ՝ եթէ յամառեալ կայցէ ամ մի ՚ի նզովս և կամ այլ բանադրանս, այսինքն յանկանոնութեան և այլն, կասկած հերձուածողութեան ձգէ յանձն, և որպէս կասկածելի՝ զրկի յեկեղեցական ժառանգութեանց։ Նոքա մերձաւոր պատիժք են. — ա. Զրկումն յընդունելութենէ խորհրդոց, զորս չկարէ ընդունել առանց մահու չափ մեղաց՝ եթէ ոչ ծանր ինչ վնաս ՚ի վերայ կայցէ նմա, որպէս ուսուցանեն Պանաչինա, Պոնչինա, Լայման, Սալմատիկեանք և այլք։ Եւ ըստ հասարակաց ողջամիտ վարդապետութեան աստուածաբանից (ընդդէմ սակաւուց ոմանց) վաւերաբար ընդունին բանադրեալք զխորհուրդս, զի չկարէ եկեղեցի խափանել զզօրութիւն նոցա։ Այսու որով վաւերական է և արձակումն ՚ի մեղաց նախ քան զարձակումն ՚ի բանադրանաց։ Պիտելի է ասա զի որ պաշտէ բանադրելոց տանելեաց զխորհուրդս, թէպէտ և մեղանչէ մեղանչէ ընդդէմ աստուածային օրինաց՝ պաշտելով զայնս անարժանից, այլ ոչ մեղանչէ ընդդէմ եկեղեցական պատուիրանի ըստ ասացելոցս ՚ի Թիւ 18. զի օրէն է հաղորդակցութիւն և յաստուածայինս ընդ տանելն բանադրեալս։ Այսու որով և օրէն է պաշտել բանադրելոց զխորհուրդս, յորժամ ՚ի բարւոք խղճի մտաց կայցեն։ Յաւելուն ևս Սուարէզ, Նաւարրոյ, Վասկէրոսիալ, Պոնաչինա, Պոնչինա, Լաքրուա, Սալմատիկեանք և այլք, զի ՚ի յերկբայս թէ իցէ ոք արձակեալ ՚ի բանադրանաց թէ ոչ, օրէն է պաշտել նմա զխորհուրդս ՚ի խնդրել նորա, մանաւանդ յորժամ ինքն վկայեսցէ՝ թէ արձակեալ է. զի յերկբայս չէ համարելի ուժգին ստել։

18. Ր. Զրկումն ՚ի ներողութենէ, ՚ի հաղորդութենէ սրբոյ, և ՚ի հասարակաց աղօթից. այլ ոչ և յառանձնականաց, զի կարէ ամենայն ոք աղօթել առանձինն վանն բանադրելոյն, և ես և քահանայ ՚ի պատարագի զի ոչ որպէս պաշտօնեայ եկեղեցւոյ՝ այլ որպէս ոք ՚ի հաւատացելոց։ Այսու տանելեաց իսկ բանադրելոց աղօթել յանուն եկեղեցւոյ ոչ օրէն համարին կէսք յա-

տուածաբանից. բայց այլք զհակառակն հաստատեն, ըստ ընտրելոց կոստանդեան ժողովոյն հաղորդիլ անխըտիր ընդ տանելի բանադրեալս։ Արիւաքանչիւրոցն և կարծիք հաւանականք են. այլ չէ հաւանելի զոր յաւելուն ոմանք՝ թէ մարթի իցէ հասարակաց աղօթս մատուցանել և վասն խորշելեաց բանադրելոց, որք՛ի ընտրս կայցեն, և չիցէ՛ի կարի նոցա ընդունել զարձակումն՛ի բանադրանաց։

Գ. Օրհումն՛ի պաշտելոյ զխորհուրդս, Թէպէտ և վաւեր են խորհուրդք՛ի նոցանէ պաշտեցեալք, որպէս և վասն օրհնութեան պսակին ասացաք՛ի գլ. ԺԸ. 71։ Օ խորհուրդ ևեթ ապաշնարհութեան չկարեն պաշտել վաւերաբար, զի չէք նոցա իրաւասութիւն՝ բայց միայն՛ի վտանգի մահու, որպէս ասացաք գլ. ԺԶ. 92։ Այլ զայս իմա վասն խորշելեացն բանադրելոց, որ ըստ հանրական կարծեաց անկանին և յանկանոնութիւն՛ի պաշտելն. զի տանելեացն ոչ բառնի իրաւասութիւն, և օրէն իսկ է նոցա պաշտել զխորհուրդս՛ի խնդրել զայն հաւատացելոց. վասն որոյ հաւանական է՝ զոր ասէն Վասքեսիալ, զի յաւուր տօնի առ՛ի չգոյէ այլոց քահանայի օրէն է նոցա և պատարագել՝ եթէ չիցէ ուրեք՛ի գայթակղութիւն, զի համարի յայնժամ հաւատացելոց խնդրել զի պատարագեսցէ։ Իսկ բանադրեալ, որ անխտիր ընդդիմ օրինացս պաշտէ զխորհուրդս, անկանի յանկանոնութիւն. նմանապէս և որ օրհնէն զպղծասակ, կամ որ հանդիսիւ կատարէ զմկրտութիւն, կամ այլուստ քահանայի տայ պատարագել առաջի իւր։ Ընդունողք և խորհրդոց՛ի խորշելեացն բանադրելոց ծանր մեղանչեն, և անկանին՛ի փոքր նզովս. իսկ որ ձեռնադրին՛ի նոցանէ, կախեալ մնան՛ի պաշտամանէ կարգին՝ զոր ընդունին։

Դ. Օրհումն յաստուածային պաշտամանց. զի բանադրեալն ոչ միայն՛ի զօրութենէ նոցա զրկի, այլ և ոչ կարէ կալ յաստուածային պաշտամունս առանց ծանր մեղաց։ Այլ վասն իրաւացի ինչ պատճառի կարէ մերձանալ յեկեղեցի, և յայնժամ օրէն է նմա աղօթել առանձինն՝ ոչ հաղորդելով ընդ այլս. և ոչ յայնժամ պարտ է քահանայից արտաքսել զնա կամ դադարել յաստուածային պաշտամանց։ Իսկ եթէ կամիցի առա-

ջի կալ սրբոյ պատարագին կամ աստուածծային պաշտամանց, և ազդեալ ի պաշտօնեից՝ ոչ մերկնեսցի ի բայ, անկանի ընդ պատպական բանադրանօք։ Օնոյն խնա և զկատարեալսն յաստուածծային պաշտամանէ, և զորոց չբերողուն նոցա կամ բանադրելոց մերկնել ի բայ։ Եթէ բանադրեսցէ պարտական իցէ կատարել զժամակարգութիւն վասն սրբոյ կարգին, կամ եկեղեցական ևեթ հասից, չէ ազատ յայնմանէ վասն չընդունելոյ զհասս, զի ինքն է պատճառ խափանման նոցա։

Ե՛ւ ի կատարելն զժամերգութիւն՝ չէ օրէն նմա ասել խաղաղութի՛ւն ամենեցո՛ւն, այլ միոխանակ այնորիկ պարտի ասել Տէր լո՛ւր աղօթից նոցա։ Ա՛յլ ըստ հասարակաց կարծեաց ներելն ևեթ գործէ մեղս՝ եթէ ասիցէ. իսկ Հայրն Ա՛բէլա և Վաւաղրոյ և ի ներելն մեղաց ազատ կացուցանեն զնա, եթէ իցէ ոք ընդ նմա աղօթակից։

19. Ե. Ընդհանուր է ամենայն ընտրութիւն և տուչութիւն եկեղեցական ժառանգութեանց բանադրելոյն. վասն որոյ ոչ միայն բանադրեալն մեղանչէ յընդունելն զայնս, այլ և տուիչն՝ անկանելով ի փոքր նզովս, և զրկելով յիրաւանց տուչութեան։ Ա՛յլ եթէ ոք ի ժամանակի ընտրութեանն և տուչութեան ժառանգութեան չէ և ևս իցէ բանադրեալ, և իցէ յընդունելն ևեթ, վաւերաբար ընդունի զայն, զի ընդունելութիւնն ոչ է գործ իրաւասութեան։ Իսկ ընդ հակառակն եթէ ոք ի ժամանակի տուչութեանն իցէ բանադրեալ, և արձակեալ իցէ յընդունելն, անվաւեր է ժառանգութիւնն. և պարտ է տուչին նորոգել զտուչութիւնն և կամ դնել զկամս տուչութեանն։ Պիտելի է զի բանադրեալն խոշընդելի պարտի տալ յետս զամենայն հասս ժառանգութեանն ընկալեալս յետ բանադրանացն. բայց միայն որպէս Պետրոսի, Պօնաւէնտա, Ալմաինիկեանք և այլք ասեն, եթէ զպարտս ժառանգութեանն կատարեալ իցէ անձամբ կամ ի ձեռն այլոց ուրուք, և յետ արձակմանն հաստատիցի անդրէն ի նոյն ժառանգութիւն, կարէ ունել զայնս որպէս հասս մերթևեթ ի դատարկանալ ժառանգութեանն՝ որ յաջորդի ժառանգաւորին են անկ, ուրանօր չիցեն օրէնք կողոպտոց։ Օնոյն խնա և զեկեղեցական իշխանութեանց, եպիսկոպոսաց, առաջնոր-

պաց, վոխանորդաց և այլոց եկեղեցական պաշտօնեից. և զաշխարհական պաշտամանց իսկ զնոյն հաստատեն կէսք՝ ի բարոյականաց, բայց այլք չընդունին զայն հաւանականաբար, զի չիք օրինք՝ որ անվաւերս յայտ առնիցէ զայսպիսի տուչութիւնս։ Ա՛յ միայն բանադրեալք խորշելիք, այլ և տանելիքն անընդունակք են եկեղեցական ժառանգութեանց և իշխանութեանց և թոշակաց, զի չկարեն անձամբ կատարել զպարտս իւրեանց. ՚ի բաց առեալ զպաշտամունս՝ որ են յօգնականութիւն տուչին. վասն որոյ և ժողովն կոստանդեան եբարձ զարգելս սահմանեալս ՚ի կանոնաց վասն այնոցիկ՝ որ զեկեղեցական ժառանգութիւնս տան բանադրելոց տանելեաց։ Եւ թէպէտ բանադրեալն անպիտանայցէ զբանադրանս իւր անմեղադրելի իսկ տգիտութեամբ, կամ համարեսցի արձակեալ յայնմանէ, անվաւեր է տուչութիւն եկեղեցական ժառանգութեանցն. բայց հաւանականաբար վաւերանայ բանիւն՝ զոր յաւելու տուիչն բառնալով՚ի նմանէ զամենայն արգելս յընդունակութիւն այնր պատկանեան։ Պիտելի է դարձեալ՝ զի որ յետ ընդունելութեան եկեղեցական ժառանգութեանց անկանիցէ ՚ի բանադրանս, ոչ է պարտական հատուցանելոց զհասս նախ քան զվճիռ, եթէ անձամբ կամ՚ի ձեռն այլոց ուրուք կատարեալ նմա զպարտս պաշտամանն։ Տե՛ս որ ինչ զայսմանէ ասացաք՚ի գլ. Բ. 25։

20. Զ. Օրկուճն յատենական պաշտամանց. վասն որոյ բանադրեալն չկարէ լինել ոչ դատաւոր, ոչ նօտար, ոչ վկայ, ոչ փաստաբան և ոչ գործակալ. և թէպէտ տանելի ևս բանադրեալք չունին իրաւունս կատարելոց զատենական պաշտամունս՝ եթէ ՚ի բաց մերժեսցին, այլ կարող են վաւերաբար կատարել։ Այլ օրէն է և խորշելոյ իսկ բանադրելոյն պաշտպանել զդատ իւր յատենի, և դատախազել ևս. իսկ տանելոյն պաշտպանել և զդատ այլոց։ Ա՛յ դատաւորն խորշելոյ ոչ միայն չէ ըստ օրինի, այլ և անվաւեր է. իսկ վկայութիւն նորա՚ի մերժելն եւ եթէ է անպօր։ Կարէ նա ոչ հայր որբոյ լինել, ոչ հոգաբարձու, և ոչ կուսակալատար (եթէ անընդունելի լիցի ժառանգից). և ոչ դաշինս ըստ օրինի կռել, և ոչ կուսակալել, թէպէտ և վաւեր են և դաշինքն և կուսակ։

Ի. Օրկումն յիրաւասութենէ. վասն որոյ բանադրեալն խորշելի ոչ օրէնս կարէ գնել, ոչ վճիռս տալ, ոչ ընտրել զոք կամ ընծայել՝ ի ժառանգութիւն, զի այս ամենայն՝ ի նմանէ արարեալ անվաւեր են, իսկ՝ ի տալ նելոյ արարեալ՝ օրինազանցք լեալ, եթէ ոչ հարկ գնա անբաւսիր առնիցէ։

ԺԱ. Օրկումն յեկեղեցական Թաղմանէ. վասն որոյ զղխակուռնս Թաղելոյ իսկ պարտ է հանել՝ ի գերեզմանացս սրբոյ, եթէ չիցեն ընդ այլ ոսկերօտին խառնեալ անընտրելի։ Եւ ուր Թաղեալ իցեն բանադրեալք այսպիսի խորշելիք, (այլ ոչ տանելիք, ևս և հերետիկոսք ոչ յանուանէ դատապարտեալք), չէ օրէն պատարագել՝ մինչև վերստին սրբեալ եկեղեցին։ Իսկ եթէ՝ ի տանելեաց զբ նշան զղջման՝ ի մեռանելն տուեալ իցէ, օրէն է արձակել զղխակն նորա և Թաղել։ Որ Թաղէն զոք՝ ի բանադրելոյ, անկանի՝ ի մեծագոյն նզովս. իսկ յուզարկաւորք և երգիչք և գործակիցք ծանր մեղանչեն, այլ ոչ անկանին՝ ի բանադրանս։ ԺԲ. Օրկին բանադրեալք և՝ ի մարմնաւոր հաղորդակցութենէ, զորմէ՝ ի յաջորդ յօդուածիս ասասցուք։

ՅՕԴՈՒԱԾ Դ

ՅԱՂԱԳԴ ՓՈՓՐ ՆԶՈՎԻՑ ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ՆՈՐԻՆ ՊԱՏՃԱՌԻ

21. Որովք իւիք անկանի զբ՝ ի փոքր նզովս։ Ա. Խօսակցութիւն։ Բ. Ազօթակցութիւն։ Գ. Ողջոյն. ընդունելութիւն ողջունի. պատասխանի նամականւոյ։ Դ. Հաղորդակցութիւն։ Ե. Սեղանակցութիւն։
22. Զինչ մեղք են հաղորդակցութիւն ընդ խորշելւոյ, և երբ ծանր։
23. Որ ինչ օրինաւոր առնեն հաղորդակից լինել ընդ խորշելւոյ։ Ա. Օգուտ։ Բ. Ամուսնութիւն։
24. Գ. Հպատակութիւն։
25. Դ. Անդիտութիւն։
26. Ե. Հարկ։
27. Պատիժք յարակից փոքր նզովից. արդելուցն զմատակարարութիւն խորհրդոց և զընդունելութիւն եկեղեցական ժառանգութեանց։

21. Ի՝ փոքր նզովս անկանի զբ հաղորդակցութեամբ ընդ բանադրեալս խորշելիս. և նախ՝ խօսակցութեամբ կամ Թղթակցութեամբ կամ որով և իցէ նշանաւ բա-

բեկամուԹեան, որպէս պարգեւօք և այլն։ Յրկրորդ՝ ա-
ղօԹակցուԹեամբ և հաղորդակցուԹեամբ յաստուա-
ծայինս, որպէս ՚ի միասին կալով յեկեղեցական պաշ-
տամունս, ՚ի պատարագի, ՚ի Թափորի, ՚ի ժամերգու-
Թեան և այլն։ Ա՝ ասն որոյ պարտ է յայնժամ պաշտօ-
նէից եկեղեցւոյ արտաքսել զբանադրեալս խորհելիս,
եԹէ կարիցեն. ապա Թէ ոչ, դադարել ՚ի պաշտամա-
նէն. և քահանային պարտ է Թողուլ զպատարագն, ե-
Թէ չէ ևս եղեալ սկսեալ զկանոնն, այսինքն զաղօԹս՝ որ յա-
ռաջ քան զսրբազործուԹիւն։ Կէսք յաստուածաբա-
նից պարտ համարին Թողուլ՝ եԹէ սկսեալ ևս իցէ ըզ-
կանոնն. բայց եԹէ սրբազործեալ իցէ, պարտ է նմա
յայնժամ կատարել զպատարագն մինչև ցձաշակուքն։
Այլ որք ոչն այսպէս առնիցեն պաշտօնեայք եկեղեցւոյ,
անկանին ՚ի փոքր նզովս։ Աուարէզ, Պոնաչինա, Վրգան-
չինա, Պուսեմպայ, Աալմատիկեանք և այլք աղատ կա-
ցուցանեն ՚ի մահուչափ մեղաց հաւանականաբար, որ
առանձինն ընդ բանադրեալս խորհելիս կատարեսցէ ըզ-
ժամերգուԹիւն։ Խոկ զաշխարհականս, որք ընդ նոսա
առաջիկայ լինին սրբոյ պատարագին, հանրապէս կար-
ծիք ազատս ՚ի ծանր մեղաց կացուցանեն՝ եԹէ ոչ ա-
ռաջիկայուԹեամբն իւրեանց տայցեն նոցա պատճառս
կալոյ անդ. այլ ըստ ամենեցուն խոկ աստուածաբանից
չեն նոքա ազատ ՚ի ներելի մեղաց և ՚ի փոքր նզովից.
բայց եԹէ ուրոյն ՚ի խորհելոյ անտի կացեալ եկեղե-
ցւոջ, և այլ պատարագ լսիցեն։

Յրրորդ՝ ողջոյն տալով կամ մեծարանս առնելով բա-
նադրելոց խորհելեաց. բայց աստուածաբանք զրեԹէ
առ հասարակ օրինաւոր համարին հաւանականաբար
զմարդասիրուԹեան պարտս. որպէս տեղի տալ, յառնել
և այլն. զի զայսոսիկ ոչ վասն մեծարանաց և եԹէ սովո-
րուԹիւն է առնել, այլ վասն չարհամարհելոյ և սրբ
և չձգելոյ յանձն զնախատինս տմարդուԹեան. մանա-
ւանդ եԹէ բանադրեալն իցէ ՚ի պատուականաց ոք,
կամ եպիսկոպոս, կամ առաջնորդ և այլն։ Ա՝ ասն որոյ
օրէն համարին և ընդունել զողջոյն նոցա, և զրել պա-
տասխանի նամականուց նոցին. բայց Ջայրն Ալիլա,
Պոնաչինա, Ջոզման և Աալմատիկեանք հաւանակա-
նագոյնս զհակառակն հաստատեն, զեԹէ վասն պատաս-

խանի տալոյ նամականուց նոցա. զի զվայելչութեան օրէնս այսպիսիս ոչ ևս պարտ է հատուցանել նոցա ՚ի պատիժ յանցաւորութեան նոցին: Ապացի գէթ վասն պատասխանի նամականուց նոցին տալոյ. զի չընդունել զողջոյն արհամարհել է և տմարդութիւն:

Ողբորդ՝ գաշնակցութեամբ, շահակցութեամբ և բնակակցութեամբ. բայց բնակակցութիւն իմա հանդերձ ընկերակցութեամբ, զի ննջել ՚ի նմին տան և ՚ի նմին խոկ անկողնի առ ՚ի հանդչել ևեթ՝ չհամարի իսկապէս հաղորդակցութիւն, և չէ արգելեալ:

Հինգերորդ՝ սեղանակցութեամբ, այսինքն գնալով ՚ի հրաւէր բանադրելոց խորշելեաց, և ՚ի տան նոցա՝ ևս և յայլևայլ սենեակս ձաշելով. այլ ոչ՝ եթէ ըստ դիպուածոյ գտանիցի ոք ուրեք ձաշակից կամ սեղանակից նոցին, որպէս հաւանականաբար հաստատեն Սուարէզ, Լայման, Սայիրոյ, Սիփորեր, Վասթրոփալ, Հոլմանն և այլք:

22. Ո՞րչափ մեղս գործէ, և յորպիսի՞ բանադրանս անկանի հաղորդակցեալն ընդ խորշելի բանադրելոյ: — Ըստ մեղացս սովորաբար ներելի մեղս գործէ, այլ բաւէն և ներելի մեղքն այն առ ՚ի փոքր նզովս անկանելոյ: Բայց եթէ չկրցեն կամաւ և դիտութեամբ գործեալ մեղքն ներելիք, չկարեն ՚ի վերայ ածել զբանադրանս. զի առ ՚ի պատիժ՝ խնդրին յանցանք ՚ի տեսակի իւրեանց կատարեալք: Այս թէպէտ չեն ինչ պարտք խոստովանելոյ զմեղս ներելիս, սակայն պարտ է խոստովանել զայնս՝ որ ՚ի վերայ ածեն բանադրանս. զի ոչ է օրէն ընդունել խորհուրդս կալով ընդ բանադրանօք: Բայց երբեմն մարթ է ծանր մեղանչել հաղորդակցութեամբ ընդ բանադրելոյն, որպէս ուսուցանեն սուրբ Աղուինացին և այլ աստուածաբանք առ հասարակ: Մի՝ արհամարհելով զարգելս եկեղեցւոյ. երկրորդ՝ հաղորդակցելով յաստուածայինս ըստ ասացելումն ՚ի Թիւ 21. և երրորդ՝ մեղսակցութեամբ, այսինքն գործակից լինելով ընդ բանադրելոյն ՚ի նոյն մեղս՝ որ աղաչաւ բանադրեալ է նա ինքն. վասն որոյ մահուամբ մեղանչէ հարձ, որ վերատին անկանի ընդ բանադրելումն՝ որ վասն այնորիկ իսկ բանադրեալ էր, և կամ որ խրատան տայ նմա և օգնութիւն առ ՚ի չթողուլ զհարձն ՚ի բայ:

Խակ որ ընդ այնպիսումն յաձախէ՝ ի մարմնաւորս հաղորդակցութիւնս, ոչ ինչ աւելի քան զներելն մեղս գործէ. զի մեղք ներելիք յաձախութեամբն ոչ լինին մահացու։ Օ այս այսպէս ուսուցանեն հաւանականաբար Կաւարդոյ, Բասիլիոսիոս, Սայիրոյ, Էլիա և այլք. բայց հաւանականագոյնս Սուարէզ, Պոնաչինա, Հոլզման, Բոնչինա, Սիորեր, Սալմանտիկեանք և այլք զհակառակն հաստատեն. զի որ ընդ այնպիսումն յաձախէ հաղորդակից և՛ ի մարմնաւորս խակ լինել, պէտ պանձն է՛ է վըպանգ՝ որպէս կանոնք յաւելուն։ Բայց ճշմարիտ և նոքին խակ վերոյասացեալ աստուածաբանք ոչ դատապարտեն՝ ի ծանր մեղս, որ ստէպ և ընդհարկաւ խակ հաղորդակցելոյ առանց դիտաւորութեան յաձախելոյ, այլ զնա լեռնի՝ որոյ դէպ զօրութեամբ՝ ի մոխ եղեալ կոչ յաձախել ընդ այնպիսումն։ Ըստ այսմ որ հաղորդակիցն լինի ընդ բանադրեալ խորշելի, սովորաբար՝ ի փոքր նզովս անկանի. այլ յերիս դէպս անկանի՝ ի մեծագոյն նզովս։ Կախ՝ եթէ յեկեղեցականաց ոք գիտութեամբ հաղորդեսցի յաստուածծայինս ընդ այնպիսում՝ որ յանուանէ բանադրեալ իցէ՝ ի Պապէն և յայտ արարեալ։ Երկրորդ՝ եթէ՝ ի բանադրանս ուրուք յաւելեալ իցէ և հաղորդելոյն ընդ նմա բանադրանք. զի յայնժամ որ յետ յայտարարութեանն հաղորդի ընդ նմա, անկանի՝ ի մեծագոյն նզովս։ Եւ երրորդ՝ որ մեղսակիցն լինի ընդ բանադրելումն, որպէս՝ ի վեր այսր ասացաք։ Եւ՝ ի դէպս յայսոսիկ ոչ ոք կարէ արձակել զնոսա, բայց միայն որ զգլխաւոր բանադրեալն կարիցէ արձակել։

23. Այժմ՝ ինչ պատճառք օրինաւորք հաղորդակից լինելոյ՝ ի մարմնաւորս ընդ բանադրեալ խորշելի։ — Երեակ պատճառք են, որ օրինաւոր առնեն զայն.

Կախ՝ օգուտ բանադրելոյն, որպէս զի գայցէ յուղղութիւն. վասն որոյ և օրէնն է ողջունել խակ զնա, և սիրով խօսել ընդ նմա, և քարոզել նմա՝ ի լուր նորա։ Կամ օգուտ այլոց, հոգևոր և մարմնաւոր. վասն որոյ օրէն է լսել՝ ի նմանէ բանս հոգևորս, խորհուրդ՝ ի նմանէ խնդրել՝ առ՝ ի չգոյէ այլոց ուրուք խորհրդականի, ողորմութիւն կամ դեղ ընդունել՝ ի նմանէ. յառաջ վարել զսկսեալն ընդ նմա շահակցութիւն, այլ ոչ և նորոգ դաշինս ընդ նմա դնել։

Երկրորդ ամուսնական պարտք. վասն որոյ ամուսինք, այլ ոչ և խօսեցեալք, կարեն հաղորդակցիլ ընդ իրեարս՝ և ս և՛ ի խնդրել և՛ ի հատուցանել զպարտս իւրեանց։ Այլ և նոցա չէ օրէն, եթէ բաժանեալ իցեն՛ ի միմեանց, կամ եթէ բանադրանքն վասն հերետիկոսութեան իցեն կամ վասն անվաւերութեան պսակին։ Պարձեալ՝ չէ նոցա օրէն և հաղորդակցութիւն յաստուածայինս, որպէս սահմանեալ է յԱննովկենտեայ Գ։

Այլ որ գիտութեամբ պսակի ընդ բանադրելոյ, կամ ընդ այնուհետեւ հաղորդակցիլ ընդ նմա։ — Ոխտեն հաւանականաբար Պասթրոփալ, Ծուրնելի, Սալմանտիկեանք, Պոնչինա, սուրբ Գուինացին և այլք. եթէ զի քահանայապետն ներէ եւեթ հպատակաց հաղորդակցիլ ընդ բանադրելումն՝ որպէս յառաջ ասեն ղբանադրեալք չկարեն հաղորդիլ ընդ իրեարս, բայց՛ ի կամ հաստատեն Սուարէզ, Պոնաչինա, Պասթրոփալ, Սալմանտիկեանք և այլք. նմանապէս և Թոռունք խակ և Թոռնեայք, և ուրջու և նու։ Նոյնպէս և կրօնաւորք ընդ վանահօր՛ ի կարևոր իրս, և զինուորք ընդ զօրավարի, և ծառայք ընդ տեարս իւրեանց, որպէս ուսուցանեն աստուածաբանք առ հասարակ։ Այլ ծառայք մեղանչեն, եթէ գիտութեամբ մնանեն՛ ի ծառայութիւն բանադրելոյ առանց հարկի. և ոչ օրէն է նոցա հաղորդիլ յիրս՝ որ արտաքոյ ծառայութեան իւրեանց իցեն. վասն որոյ մեղանչեն՛ ի հաղորդելն ընդ նմա յաստուածայինս, եթէ չիցէ նոցա պարտ ընկերել նմա յեկեղեցի, կամ սպասաւորել՛ ի պատարագի, կամ օգնել՛ ի ժամերգութիւն։ Եւ պարձեալ ծառայակիցք բանադրեալք չկարեն հաղորդիլ ընդ իրեարս, բայց՛ ի կա-

լևոթս քարոյապէս ՚ի ընակակցութիւն, և այն՝ եթէ չկարիցեն առանց նեղութեան ելանել ՚ի ծառայութենէ անտի։ Այս օրպէս որդիք, կանայք, ծառայք և հպատակք, նոյնպէս և հարք, արք, տեարք և առաջնորդք կարեն հաղորդիլ ընդ բանադրեալ հպատակս, օրպէս սուրբ Գրիգորիոս և այլ աստուածաբանք ուսուցանեն։

25. Յորմորդ՝ անգիտութիւն օրինաց կամ դործոյ։ Անդրագոյն կարծիք հաւանականաբար բաւական համարին և զԹանձր տգիտութիւն. նախ՝ զի քանք կոնդակին անխտիր ՚ի բաց առնուն զտգիտութիւն, և անմեղադրելի տգիտութիւն ինքնին խիստ աղատ է և անկատ օտ բացառութեան. և երկրորդ՝ զի յաւելուն. Կանչէ ՚ի պապճառս բանադրանաց պետականէմ հանապատչէ պիտոսոպ բաղմայ. որով քահանայապետն աղատ առնէ և զմեղադրելի տգիտութիւն, զի որք անմեղադրելի տգիտութեամբն հաղորդակցին՝ ոչ մեղանչեն, և ոչ կորնչին։

26. Հինգերորդ՝ հարկ, այսինքն որ և իցէ ծանր հարկաւորութիւն հոգևոր և մարմնաւոր, թէ հաղորդելոյն, թէ բանադրելոյն, և թէ այլոց։ Զմանապէս և ծանր և անհրաւ ահարկութիւն համարի ՚ի հարկ ըստ ասացելոցս ՚ի գլ. Բ. 44։ Կխտեալ է դարձեալ զի չէ պարտ խորշել ՚ի բանադրելոյ, եթէ չիցէ յայտ գէթ ՚ի համբաւոյ կամ յերկուց արժանահաւատ վկայից՝ գոլ նորա խորշելի։ Այլ եթէ երկբայութիւնն զխոստովանահօրն իցէ, չէ օրէն խոստովանել նմա, վասն վտանգի անվաւերութեան արձակմանն։ Իսկ եթէ մի և եթէ որ արժանահաւատ վկայեսցէ, և ինքն իսկ բանադրեալն եթէ անժանահաւատ որ իցէ և վկայեսցէ ընկալեալ զարձակումն ՚ի բանադրանաց, օրէն է հաղորդել ընդ նմա։

27. Պատիժք յարակից վոքր նզովից կրկին են. ուղղակի և անուղղակի։ Ուղղակի է զրկումն յընդունելութենէ խորհրդոց ընդ ծանր մեղաց. այլ մեղից՝ որ ընդ վոքր նզովիւք կալով պաշտեսցէ զխորհուրդս։ — Հասարակաց վարդապետութիւն ազատ առնէ զինա ՚ի ծանր մեղաց. և կէսք յաստուածաբանից հաւանականաբար ազատ առնեն զինա և ՚ի ներելի մեղաց։ Յերկրորդ պատիժ անուղղակի է զրկումն յընդունելութենէ եկեղեցական ժառանգութեանց ընդ ծանր մեղաց։

Ա՛յլ ընտրութիւն նորա, եթէ գիտութեամբ բանադրանացն իցէ լեալ, չէ ըստ ինքեան անվաւեր՝ այլ խափանելի, զի ասէ կանոնն. "Եթէ բանադրեալն ընտրեսցի գիտութեամբ, խափանելի է ընտրութիւն նորա,,: Ա՛յլ այր գէպ-ՌԷամբ. ոմանք ասեն ընտրողին, այլք ընտրողին և ընտրելոյն. իսկ Ա՛յման, Ռ՛ասիթրոփալ և Ա՛քբուա Թերևս հաւանականագոյն ըստ բնական կարգի բանին զընտրելոյն և եթէ իմանան զգիտութիւն, այսինքն եթէ 'ի տալ նմա զժառանգութիւնն՝ յիշեսցէ նա զբանադրանս իւր: Գիտելի է զի ամենայն ոք խոստովանահայր կարող է արձակել զիոքրատոյն բանադրանս, այլ ոչ և պարզ քահանայ՝ որոյ չիցէ հրամանն ընդունելոյ զխոստովանութիւն:

ՑՕԴՈՒԱԾ Ե

ՑԱՂԱԳՍ ԱԶԳԻԱԶԳԻ ԲԱՆԱԴՐԱՆԱՑ

28. Բանադրանք ոչ վերապահեալք:
29. Որ բռնադատեն զաղջիկ կամ զկին մտանել 'ի վանս:
30. Բանադրանք վերապահեալք:
31. Ընդդէմ վիճողաց զանարատ յղութենէ Տիրամօրն:
32. Որ մտանէ յարփելավանս կուսանաց:
33. Որ պատճառանօք իշխանութեան մտանէ չարամտութեամբ:
34. Զի պարտ է հրամանին գրով և բացայայտ գոլ:
35. Ո՞ւմ անկ իցէ տալ զհրամանն զայն:
36. Եւ վասն էր:
37. Վասն խոստովանահօր կուսանաց:
38. Վասն բժշկի և այլոց:
39. Որ ոչ ելանէ վաղագոյն: Որ յամէ կամ մտանէ չար մտօք, այլ հրամանաւ:
40. Արգել խօսելոյ ընդ կուսանս, մանաւանդ կրօնաւորաց:
41. Վերապահեալք. դուշնաքէութիւն նիւթոյ յայտ մտանն. զազգականաց և զմտնկանց չև հասելոց յարբունս:
42. Խօսել ընդ վանամօր:
43. Կրօնաւորք ընդ որով բանադրանօք անկանիցին:
44. Զքնէ և զօտարականաց:
45. Զքնէ զեպիսկոպոսաց:
46. Զկուսանաց, որ լուծանեն զփականս:
47. Փականք կրօնաւորաց:
48. Հարկանողք եկեղեցականաց:
49. Պատուիրողք, հաւանողք, կամ ոչ արգելողք զհարուածն:
50. Զքնէ իցէ իմանալ եկեղեցական կամ կրօնաւոր ասելով:
51. Որո՞վ իւիք ոք անկանի 'ի բանադրանս:
52. Որո՞վ իւիք ոչ անկանի:
53. Բանադրանք կոնդակին ընթերցաց. ընդդէմ հերետիկոսաց:

54. Ընդդէմ համախոհից նոցա:
55. Ընդդէմ ընծերցողաց զարդելեալ դիրս:
56. Որ ինչ խնդրի ման այլ բանագրանաց. ընծեռնուլ գիտելոյ զի մաաենագիրն է հերետիկոս:
57. Գիտելով զի զկրօնից է մատեանն, և է ի նմա մոլորութիւն:
58. Նիւթ ծանր:
59. Որ ունկնդիրը լինի. որ ընծեռնու զնամականի կամ զձեռագիրը:
60, 61. Արգելեալք ի ցուցակէն:
62. Որ ունի առ իւր զայնպիսի գրեան:
63. Այլ ևս բանագրանք՝ որ են ի կոնդակին:

28. Ի բանագրանաց ոչ վերապահելոյ կարգեացուք աստ զսովորականն՝ յորս անկանի Ա. Որ ահարկու. Թեամբ կորզէ արձակումն ի բանագրանաց: Բ. Որ Թագէ զյայտնի վաշխառուս: Գ. Որ պսակի ընդ ազգակա. նի: Դ. Որ տպագրէ գիրս անհրաման ի մեծաւորաց. և ըստ սահմանի որիդենատեան ժողովոյն (Նիւս Դ) որ տպագրէ կամ տայ տպագրել կամ վաճառէ կամ ունի առ իւր գիրս կրօնականս առանց անուան մատենագրին, և առանց հրամանի Թեմական եպիսկոպոսին: Ե. Որք վարժապետեն առանց առնելոյ զդաւանութիւն հաւա. տոյ: Զ. Ուխտանութիւնք, որ նպաստեն վաշխառու. Թեան: Է. Որ գրաւէ զինչս անտէրունչ եկեղեցւոյ: Ը. Որ հրամայէ սպանանել զոք ի քրիստոնէից: Թ. Որ արգելու զգրաւումն հրամայեալ եպիսկոպոսէ: Ժ. Որ ոչ ծանուցանէ եպիսկոպոսին զհերետիկոս, կամ զկռո. տուվանահարս հրապուրիչս: ԺԱ. Որ ի գործ դնէ զսահ. մանադրութիւնս ընդդէմ եկեղեցական ազատութեան: ԺԲ. Եկեղեցական՝ որ ամբաստնայ ի բարձ և ի պատիւ, կամ հանապազորդէ ի տամալաարանի յուսումն օրէնս. դիտութեան կամ բժշկութեան: ԺԳ. Կահանայք՝ որք զաշխարհական տեսչութիւնս յանձն առնուն: ԺԴ. Եկեղեցականք՝ որք տունս ի վարձու տան վաշխառուաց: ԺԵ. Որք վաճառեն զստացուածս եկեղեցւոյ, կամ ի վարձու տան աւելի քան զերեամ մի: ԺԶ. Կաղուիչք որ ձառեն ընդդէմ զրաւառանց: ԺԷ. Որ կեղծեօք հրաժարէ եկեղեցական ժառանգութենէ կամ փոխա. նակէ զայն: ԺԸ. Որ յանդգնի արձակել զոք ի վերա. պահելոյ կոնդակին ընծերեաց: ԺԹ. Որ ի պաշտօն մինչ եկեղեցական ձեռնադրիւք անհրաման եպիսկոպոսի: Ի. Կռևանիք և գործակիցք առևանից: ԻԱ. Որք

կամ կանայք՝ որք առանց Հրամանի Եպիսկոպոսին մնա-
նեն յարգելավանս կուսանաց, զորմէ ուրոյն ՚ի տողս
առաջս։

29· Ի վերայ այսոցիկ ժողովն տրիդենտեան սահմա-
նէ բանադրանս և այնոցիկ, որք բռնադատեն զօրիորդ
կամ զկին մնանել ՚ի վանս, կամ առնուլ սքեմ, և կամ
ուխտել· (բաց ՚ի դիպուածոց՝ զորս նշանակեն օրէնք)։
Ա՛յլ որ ստիպէ զաղջիկ առ ՚ի դաստիարակութիւն եւեթ
մնանել ՚ի վանս՝ անկանիցի ընդ բանադրանաւք։ — Ա-
մանք ժխտեն· քայց Աուարէզ, Պոնաչինա, Լաւարրոյ
և այլք հաստատեն· զի Թուի հաստատել զայն և ժո-
ղովոյն ՚ի յաւելուածն՝ Որ գէթ ելով ՚ի ափամոյ մրանէ աղ-
ջիկն, հաւանին ընդ մտաս նորա։ Ա՛յլ որպէս և ժողովն
՚ի քայ առնու զնշանակեալ դէպս յօրինաց, հաւանա-
կանաբար օրէն է ստիպել ՚ի մուտս զաղջիկ յանցու-
ցեալ, որպէս զի մի ևս ՚ի նոյն յանցանս կամ ՚ի չարա-
գոյնս ևս անկանիցի։ Սանքէզ և Պոնաչինա օրէն հա-
մարին ստիպել ՚ի մուտս և զաղջիկ, առ ՚ի զգուշութիւն
եւեթ պարկեշտութեան նորա· այլ զայս պարտ է իմա-
նալ՝ եթէ վտանգ ինչ իցէ նմա անկանելոյ վասն հա-
մարձակութեանն կամ յաձախելոյ ընդ արս, և կամ ե-
թէ իցեն ՚ի տան անդ հրապուրիչք· զի յայնժամ Թուի
դադարել դիտաւորութեան ժողովոյն ըստ ասացեալսն
՚ի գլ· Բ· 69։

Ընդհակառակն՝ որք յորդորեն զդստերս իւրեանց մտանել ՚ի
վանս, այնպէս յայտ առնելով զկամս իւրեանց՝ մինչև
դստերացն առ ակնածութեան հաւանել նոցա, անկա-
նիցին ընդ բանադրանաւք։ — Հանրագոյն և հաւանա-
կանագոյն կարծիք ազատ կացուցանեն զնոսա ՚ի բանադ-
րանաց, թէպէտ աղաչանս իսկ յաւելուցուն՝ առանց
յոգնաթափանձ ժուռութեան։

Ա՛յս բանադրանք վասն դստերաց եւեթ ստիպելոյ է
և ոչ ուստերաց, որպէս ուսուցանեն Աուարէզ, Պար-
պողա, Սանքէզ, Պոնաչինա, Լաւարրոյ, և այլք առ
հասարակ· Թէպէտ և որ ստիպէն զուստր իսկ, չիցէ
ազատ ՚ի մահուչափ մեղաց։ Յաւելու ժողովն տրիդեն-
տեան բանադրանս և այնոցիկ՝ Որ կ՚ամանոյ առուբէ կ՚ամա
ոչ առնելոյ կամ ուխտելոյ, իբր թէ եղանակաւ առանց երաս-
չի պարտաճառ խափանեն։ Ստիպանել իմա հնարս հնարե-

լով, այլ ոչ և ազաչանօք, որպէս ասեն Անքիզ, Պո-
նաչինա և Ալմատիկեանք։ Հաւանականագոյն կար-
ծիք ոչ ազատ կացուցանեն ՚ի բանադրանաց և որ խա-
փանէ զմուտ կնոջ ՚ի վանս. զի որ խափանէ զմուտ, նո-
ւիրն իսկ և զուխտել նորա խափանէ։

30. Ո՞ բանադրանաց առ եպիսկոպոսունս վերապա-
հելոց ասելոց եմք ՚ի գլ. ի. 46։ Իսկ աստ ըստ կարգի
է մեզ ասել զբանադրանաց վերապահելոց Պապին ա-
տաքոյ կոնդակին ընթերեաց, յորոց սովորականք այս-
քիկ են. 1. Որ հուր արկանէ, եթէ իցէ բանադրեալ
՚ի Տէրէն և ամբաստանեալ։ 2. Որ բռնաբարէ և կո-
ղոպտէ զեկեղեցի։ 3. Որ մեղսակից լինի ՚ի նոյն մեղս
ընդ բանադրելումն ՚ի Պապէն։ 4. Որ նեղէ զբանա-
դրօղս։ 5. Որ տայ ինչ կամ ընդունի վասն կրօնաւորե-
լոյ զոք։ 6. Որ գործէ սիմոնականութիւն իրական կամ
մտերմական վասն եկեղեցական ժառանգութեանց և
արբոյ կարգի։ 7. Որ տայ կամ առնու ինչ վասն ընդու-
նելոյ ընօրհս կամ արդարութիւն յառաքելական գա-
հէն։ 8. Ո՛ենամարտք, հանդիսադիրք նոցին և խրատ-
տուք և համախոհք, և որք ՚ի զինի կան (ոչ հարեւանցի,)
և ընթերակայութեամբն իւրեանց դրդիռ լինին նո-
ցա ըստ ասացելոցս ՚ի գլ. Ը. 25 և 26։ 9. Որ յափըշ-
տակէ կամ գրաւէ զինչս եկեղեցեաց կամ զտեղեաց
բարերարութեան։ 10. Որ պահանջէ հարկս յեկեղե-
ցականաց։ 11. Որ լուծանէ զնաւափանաճ եկեղեցական։
12. Որ հրատարակէ ներողութիւնս սուտս։ 13. Որ
ունի առ իւր զհասս եկեղեցական ժառանգութեանց
դադարելոց, կամ արգելու զժառանգութիւն որոց չտան
ինչ նմա պարգև։ 14. Որ ուսուցանէ կամ պաշտպանէ
զվարդապետութիւնս դատապարտեալս։ 15. Որ քա-
րոզէ զժամանակ վերջին դատաստանին ընդդէմ վար-
դապետութեան սրբոց Հարց։ 16. Չողովրդապետք
որք ոչ կան ՚ի վիճակի իւրեանց։ 17. Կրօնաւորք՝ որք
առանց հրամանի կամ արտօնութեան պաշտեն հիւան-
դի զթոշակ կամ զվերջին օծումն։ 18. Կրօնաւորք՝ որ
պատճառանօք արտօնութեան արձակեն զվերապա-
հեալս եպիսկոպոսաց։ 19. Որ բռնաբարէ զազատու-
թիւն եկեղեցական, ըմբռնելով զապաստանեալս յե-
կեղեցւոջ, ընդդէմ կոնդակին Գրիգորի ԺԲ։ 20. Որ

պաշտպանել զՀետազօտութիւն անուան մեղսակցի՝ ի խոստովանութեան, ընդդէմ կռնդակին Ալենեդիկտեայ ԺԴ. ըստ ասացելոցս՝ ի գլ. ԺԶ. 42։ 21. ԽոստովանաՀայր՝ որ արձակէ զմեղսակից իւր՝ ի ըղձախոհութիւն, ընդդէմ միւս և կռնդակի նոյն քահանայապետի, ըստ ասացելոցս՝ ի գլ. ԺԶ. 95։

31. Իսկ յաղագս անարատ յղութեան Տիրամօրն, մինչ չև վճռեալ էր յեկեղեցւոյ, այլ և այլ բանադրանք էին հակաճառողաց երկուստեք և զմիմեանս դատապարտողաց, զորոց երկար խօսեին բարոյականք։ Այլ արդ յետ միանգամ վճռելոյ վարդապետութեանն այնորիկ՝ ի սուրբ եկեղեցւոյ և ընդ մասուն Հաւատոյ դասելոյ, նոյն բանադրանք են և չընդունողաց զայն և զհակառակն վարդապետողաց՝ որ ինչ ընդդէմ քարոզողաց զմեղսութիւն։

32. Ընդ այժմ մեզ ասել ուրոյն զերկուց այլոց բանադրանաց սահմանելոց ընդդէմ այնոցիկ, որք լուծանեն զիւականս մեռանողաց, և որք հարկանեն զեկեղեցականս։ Այս նախ զկուսաստանաց գիտելի է, զի ով որ այր կամ կին առանց հրամանագրի եպիսկոպոսին կամ մեծաւորի մտանէ՝ ի կուսաստան, նովին իսկ գործով անկանի՝ ի բանադրանս ըստ սահմանելոց տրիդենտեան ժողովոյն։ Սուարէզ, Ազորիոյ, Նաւարրոյ, Պոնաչինա, Պարպոզա և այլք բազումք յաստուածաբանից օրէն համարէին մուծանել զմանկունս, իբր ազատս՝ ի պատուիրանէն. այլ ուրոյ գահն զհակառակն յայտ արար։ Ոնոյն առաւելաւն պարտ է իմանալ և զիմարաց, յորոց առաւելագոյն վտանգ է գայթակղութեան։ Կոնդակաւ Գրիգորի ԺԳ. արգելեալ է և եպիսկոպոսաց չմտանել անդր առանց հարկի. և որք միւսանգամն մըտանեն՝ արգելեալ գտանին յաստուածայինն պաշտամանց, և յերրորդումն անկանին ընդ բանադրանօք։ Իսկ կրօնաւոր մեծաւորք յառաջնումն իսկ նուագի ըստ Ասքեզի զրկին յամենայն պաշտամանց և անկանին՝ ի բանադրանս. բայց Պոնաչինա և Այման յերրորդումն նուագի համարին և նոցա անկանել ընդ բանադրանօք։ Օրէն է եպիսկոպոսաց վասն հարկի կամ այցելութեան մտանել՝ ի կուսաստանս, այլ կրօնաւոր մեծաւորաց միանգամ՝ ի տարւոջ վասն այցելութեան ընդ եպիսկո-

պոսին կամ ընդ եկեղեցականի՝ զոր եպիսկոպոսն սահմանեն ըստ կոնդակին Նիքեացւոց։ Պարտ է և եպիսկոպոսին առնուլ ընդ իւր այլ ոմանս ծերունիս երկիրս ըստ զրիգորեան կոնդակին։ Ոմանս իմա չորս կամ հինգ անձինս. ապա թէ ոչ, յառաջնումն նուազի խափանի՝ ի մտանելոյ յեկեղեցի, յերկրորդումն արգելեալ գտանի յաստուածային պաշտամանց, և յերրորդումն նուիրն իսկ գործով անկանի՝ ի բանադրանս ըստ զրիգորեան կոնդակին։ Ի կրօնաւոր մեծաւորաց կարդապետք կարեն ածել ընդ իւրեանս երկուս ոմանս՝ ի կարգէն ծերունիս երկիւղածս. իսկ վանահարք մի և եթ զոք։

33. Բայց բանադրանքս այսոքիկ չեն վերապահեալ. են և բանադրանք վերապահեալք՝ ի Պղեմայ ը, սահմանեալ այնոցիկ՝ որք չար մտօք մտանեն՝ ի կուսաստան. չար դիտս իմա ղդիտաւորութիւն գործելոյ զանարժանս. զի փականք կուսաստանաց առ՝ ի զգուշութիւն ողջախոհութեան կուսանաց են սահմանեալ, և վասն այն իսկ են զգուշութիւնք խոստարանաց՝ զորոց ասելոց եմք՝ ի տոմս (40)։ Այն և այլ բանադրանք վերապահեալք՝ ի Զրիգորէ ԺԳ. սահմանեալ ամենեցուն, և ս և կանանց՝ որ մտանիցեն՝ ի կուսաստանս, (և առաւել՝ ի մենաստանս միանձանց), պատճառանօք բայառութեանց կոնդակին. որով անկանին՝ ի բանադրանս վերապահեալս ամենայն իսկ մեծաւորք ստորակարգեալք՝ որ առանց պատճառի մտանեն, կամ այլոց հրամանն տան մտանելոյ. այլ ոչ և եպիսկոպոսունք կամ առաջնորդք։

34. Հրամանաց մտանելոյ՝ ի կուսաստանս պարտ իցէ գոլ գրաւոր։ — Անքէզ, Սուարէզ և Վասկրոիալ պարտ համարին գրով. բայց այլք վասն արտաքին առեն և եթ կարևոր համարին զհրամանագիր, ըստ ասացելումն՝ ի գլ. Ի. 20։ Իսկ Պարպոզա, Նոտրիկուէց և այլք, գէթ վասն սովորաբար մտելոց ոչ կարևոր համարին զհրամանագիր, որպէս բժշկի, խոստովանահօր, գործաւորաց, որոց յաճախ կարօտին կուսաստանք։ Այլ ստուգապէս պարտ է հրամանին մտանելոյ՝ ի կուսաստան այսմ կամ այնմ ումեք գոլ յանուանէ։ Սակայն օրէնն է առաջնորդին հրաման տալ վանահարն կամ այլուստ ումեք խոհական անձին մուծանելոյ զոք ըստ պիտոյից։

35. Ո՞ւմ անկ ի՛նչ տալ զայս հրաման։ — Եպիսկոպոսին վանս կուսաստանաց՝ որ ընդ իշխանութեամբ նորա են կամ ընդ իշխանութեամբ Պապին, զի և նոցա ինքն եպիսկոպոսն հրամայէ որպէս փոխանորդ նորա՝ ըստ սահմանելոց տրիդենտեան ժողովոյն։ Կարեն և փոխանորդք ուխտի կանոնիկոսաց, ևս և առաջնորդք՝ որոց գրեթէ եպիսկոպոսական է իրաւասութիւն, և հաւանականաբար ընդհանրական փոխանորդք իսկ եպիսկոպոսաց՝ ի վերայ կուսաստանաց՝ որ ընդ ձեռամբ եպիսկոպոսին են, որպէս հաստատեն Սանքեզ, Եաւարրոյ և Լայման. քանզի սուրբն Պիոս յինքնաշարժ կանգակին ասէ՝ Եպիսկոպոսն կամ այլ ոք վիճակին առաջնորդ. և առաջնորդս է իմանալ զփոխանորդ եպիսկոպոսին, որպէս ցուցանէ Սանքեզ։ Սակայն զի յիրս թեմական իրաւասութեան զամենայն իշխանութիւն եպիսկոպոսին վարէ և փոխանորդ նորին։ Իսկ վանս կուսաստանաց, որ են ընդ ձեռամբ կրօնաւորաց, վճռաւորին է անկ տալ հրաման՝ որպէս հաստատեն Պոնացինա, Պարպոզա, Ալեքսոպա և այլք՝ ի վերոյ արդեն գահուն, և ի ձևոյ բանից տրիդենտեան ժողովոյն՝ որ ասէ. Ընդանոյ հրամանի եպիսկոպոսին կամ ներկայութեամբ։ Եւ Սանքեզ ի հաստատութիւն այսորիկ ածէ և զյայտարարութիւն ինչ սրբոյն Պիոսի։ Այլ զայս լսմա ուր չիցէ հակառակ սովորութիւն, ըստ յայտարարութեան Ալբանոսի Ը։

36. Ո՞ւմ անկ իրաց օրէն ի՛նչ տալ զայս հրաման։ — Ըստ սահմանելոց տրիդենտեան ժողովոյ՝ խնդրին կարևոր պատճառք, զի ասէ. Պարտ է տալ հրամանն ի դէպս կարեւոր։ Եւ կարևորութիւնս այս խնդրի ի կողմանէ կուսանաց, և ոչ արտաքնոց. վասն որոյ չէ օրէն մուծանել զկին ի կուսաստան առ ի վերծուցանել զնա ի ցասմանէ առն նորա, կամ զի մի վերստին վերջանայցէ ի հաւատարմութենէ, ըստ յայտարարութեան սրբոյ դահին։ Ի բաց առեալ զդէպս, ուր բնական օրէնք ստիպեացեն զհակառակն. վասն որոյ օրէն է եպիսկոպոսի մուծանել անդր զօրիորդ, զորմէ ի՛նչ վէճ, մինչև սահմանեցի վէճն։ Իսկ ի կողմանէ կուսաստանին պարտ է բարեյապես իմանալ զկարևորութիւն, այսինքն իրաւացի պատճառս։ Եւ Թեթևագոյն պատճառ խնդրի ի

մուտս կանանց քան արանց, ՚ի տունջնեան քան ՚ի գիշերի, ՚ի նախասենեակս կուսաստանին քան ՚ի ներքնասենեակս։ Իսկ յորժամ հրդեհ լինիցի, կամ մահ կամ բռնութիւն ՚ի ստիպիցէ, և այլ այսպիսի հարկ, ոչ ևս խնդրի հրաման. զի օրէնք մարդկայինք զադարեն անդ. վասն որոյ ՚ի վտանգի յանկարծամահ լինելոյ ուրուք ՚ի կուսանաց, օրէն է ում և է ՚ի քահանայից մտանել ՚ի ներքս առ ՚ի տալ արձակումն և Թոշակ և վերջին օծումն։

37. Իսկ կարգեալ խոստովանահօր օրէն է մտանել ըստ հրամանի, ոչ միայն առ ՚ի պաշտել զվերջին խոստովանութիւն՝ այլ և առ ՚ի հաղորդել զկուսանս ՚ի հիւանդութեան նոցա։ Այլ ՚ի մտանելն անդր յետ պաշտելոյ զհաղորդութիւնն՝ կարէ և օրհնել զնոր ինչ շինուածք կուսաստանին, կամ զխաչափայտ և կամ զնշխարս սրբոց ած ել ՚ի համբոյր այլոց ուրուք հիւանդի, և կամ վասն այլ ինչ այսպիսի պատճառաց յամել տուղ ինչ ՚ի ներքս անդ, ևս և առ ՚ի տեսանել զգործարանս կուսաստանին կամ առ ՚ի խօսել զկարևորաց ինչ։ Յաւելուն ոչ սակաւք յաստուածաբանից, զի տարօրէնն խոստովանահօր՝ որոյ ընկալեալ իցէ հրաման մտանելոյ միանգամ, եթէ վասն հիւանդութեան չկարիցէ ընդունել յայնժամ զխոստովանութիւն՝ կարէ մտանել միւսանգամ առանց այլոյ հրամանի. նմանապէս եթէ յետնելն ՚ի կուսաստանէն նոյնհետայն կոչեսցէ զնա հիւանդն առ ՚ի խոստովանել զմոռացեալ ինչ։ Իսկ խոստովանահօրն պարտ է մտանել շապիկ և ուրար զանձամբ, և առանց դեգերելոյ ՚ի կուսաստանին՝ ելանել անտի, և մի՛ իսկ այց առնել այլոց հիւանդաց՝ որոց չիցեն պէտք խորհրդոց։ Պարտ է նմա միայնակ մտանել. այլ եթէ իցէ կրօնաւոր, հանդերձ փորձ և խոհական ընկերաւ ըստ առաքելական սահմանադրութեան. և յընդունել նորա զխոստովանութիւն հիւանդին, պարտ է հիւրընկալ կուսանացն կալ առ դրան ՚ի տես նորին։ Օրէն է խոստովանահօր կալ անդ և ՚ի գիշերի ՚ի հոգեվարս հիւանդին։ Օրէն է և վասն այսոցդ ներելոյ զկուսաստանն՝ մտանել անդր քահանայի և օրհնել ըստ յայտարարութեան սրբոյ գահուն. իսկ եթէ այսահարեալ ոք ՚ի կուսանաց անտի իցէ, չէ օրէն մտանել վասն

երդմնեցուցանելոյ գնա , այլ խնդրել հրամանի ՚ի սրբոյ գահէն ածելոյ յեկեղեցի վանացն զայսահարն , և անդ երդմնեցուցանել գնա ։

38 · Պարտ է երկուց երիցագոյն կուսանաց ընկերել բժշկին · և բժշկին պարտ է մնանել միայնակ՝ եթէ չիցեն նմա պէտք խորհրդակցի ։ Ասն ոյոց օրէն է և այլոց ուժեք բժշկի ընդ օրինաւոր բժշկին մնանել, և միայնակ իսկ՚ի խափանել օրինաւորին ՚ի մնանելոյ ։ Որէն է և վիրաբուժի մնանել վասն երակ հատանելոյ կամ այլոյ պիտոյից · և դեղագործին իսկ եթէ պէտք իցեն վասն պատրաստութեան դեղոյ կամ վասն ուսուցանելոյ զեղանակ դեղոյն մատուցման ։ Որէն է մնանել և գործակալաց և նօտարաց և այլոց առ՚ի գնել զվտանգ շինուածոյ կուսաստանին , կամ՚ի խնդիր կարևոր գրուածոյ ՚ի գիւանին , կամ վասն կտակի օրիորդի ուրուք վերտանգելոյ անդ ՚ի մահ ։ Որէն է մնանել անդր հրամանաւ և հիւսան և դարբնի և բեռնակրաց և պարտիզպանաց և այլոց սոցին հանդոյն գործաւորաց ։

39 · Որ հրամանաւ մնեալ իցէ , ՚ի յամենն անդ տապարտ՝ մեղանչէ՞ արեթ , թէ անկանի և ՚ի բանտ դրանս ։ — Ընկանել ոչ անկանի ընդ բանտադրանօք , որչափ և յամեսցէ · զի որ հրամանաւն մնանէ , ոչ լուծանէ զիւակատս , թէ և չար մտօք յամեսցէ անդ՝ որպէս յաւելու Անքէզ ։ Այլ թէպէտ Պռնաչինա համարի անկանել նմա յայնժամ՚ի բանտադրանս ՚ի Կղեմայ Ը սահմանեալ վասն մնելոյ չար մտօք ՚ի կուսաստանս , սակայն այլ աստուածաբանք հաւանականաբար պարտ համարին և զկղեմեան բանտադրանս ըստ մտաց տրիդենտեան ժողովոյն խնդրել վասն անհրամանն մնելոյ ։ Այս ըստ մասին բանտադրանաց , սակայն մեղանչէ մահու չափ որ թէպէտ և հրամանաւ մնեալ՝ այլ յամէ անդ ընդերկար · իսկ եթէ սուղ ինչ յամէ , որպէս թէ զբաւորդ ժամու , ոչ ինչ աւելի քան զներելի մեղս գործէ՝ ըստ հասարակաց վարդապետութեան աստուածաբանից · և որ զբ կարի սուղ յամէ , Անքէզ , Տոլենա , Ռոտրիկուէց և ՚ի ներելի մեղաց աղատ առնեն գնա , որպէս ՚ի սովորութենէ երկիւղածաց իսկ ընկալեալ ։

40 · Որք առանց հրամանի խօսին ընդ կուսանս աշխարհիկք , անկանին ՚ի բանտադրանս վճռելիս եպիսկո-

պոսին. և արդելեալ՝ի պաշտաւնեէ պատնին եկեղեցականք՝ ոլք անհրաման յաձախեն՝ի խօսարանս կուսանաց. և յաճախ լինա եթէ ոք զաւուրս երիս անընդմէջ գնայցէ անդր, կամ չորիցս յեօթնեկի, և կամ յաճենայն ամիս տարւոյ, թէպէտ և միանգամ յամենեան։ Եպատազոյն և արդելք՝ի վերայ յաւել կրօնաւորաց Ալեքսոս ե. չկարել նոցա խօսել, ոչ միայն ընդ կուսանս՝ այլ և ընդ կանայս բնակեալս՝ի կուսաստանի։ Ո՛հայն չնորհեալ է Թեմական եպիսկոպոսի տալ նոցա հրաման վասն իրաւացի պատճառաց խօսել ընդ կուսանս, ՚ի բաց առեալ զաւուրս՝ յորս չկարեն կուսանքն ի ջանել՚ի խօսարան անդր։ Եւ ոչ այնոցիկ՝ի կրօնաւորաց, որոց ազգականք լինեն՚ի կուսաստանին, օրէն է խօսել ընդ նոսա առանց հրամանի Թեմական եպիսկոպոսին։

41. Ա՛յս ամենայն հասարակաց են օրէնք. այլ են և ըստ վիճակաց սահմանեալ կանոնք ընդ կուսանս խօսակցութեան, և դէպք վերապահեալք և բանադրանք յառաւելագոյն զգուշութիւն։ Եւ հասարակաց օրինաց որ ոք միանգամ եթէ անհրաման խօսիցի ընդ ումեք՚ի կուսանաց՝ մահուամբ մեղանչէ. բայց միայն սղութիւն ժամանակի կարէ սպատ կացուցանել զնա՚ի ծանր մեղաց. և սուղ ժամանակ համարի ըստ բարոյական կանաց քառորդ ժամու։ Եւ այլ է վճիռ ինչ առաքելական պահուն հասատատեալ՚ի Կղեմայ թ. որ արդելու կրօնաւորաց ընդ մահուամբ մեղօք և ընդ բանադրանօք չխօսել ընդ կուսանս և ոչ սուղ ինչ. և գիտելի է զի և սուղ խօսակցութիւնք յաձախեալք կցորդին բարոյապէս, և կացուցանեն ծանր մեղս. և զի գարձեալ և ոչ ի ինչ օգուտ հոգևոր առնէ զայն օրինաւոր, զի չդադարէ երբէք մեծագոյնն այն օգուտ զգուշութեան՚ի զգայական յարնչութենէ, յոր վտանգ է զառաջանալոյ և հոգևոր խօսակցութեանց։ Եւ զատ են յօրինաց աստի ազգականք առաջին և երկրորդ աստիճանի. ծառայք և աղախնայք՝ որ բերեն պարգևս, և սուղ բանիւք վճարեն զպատգամաւորութիւն. մուրացիկք ըստ ումեքէ և լռելեայն հրամանի. և եթէ երբէք՚ի ծանր երկիւղէ ոք ստիպեալ խօսիցի, զի զադարեն անդ օրէնք զրականք ըստ հանրական կանոնի։ Իակ

մանկունք չև ևս հասեալք յարբունս, թէպէտ և ծանր մեղանչեն ՚ի խօսելն ընդ կուսանս, եթէ իցեն ՚ի տիս բանաւարութեան, սակայն ազատք են ՚ի բանադրա-նաց։

42. Օրէն իցէ դէմ ընդ վանականս խօսել։ — Ակնք յաստուածաբանից ոչ օրէն համարին վասն կոն-դակին Ալեքսանդրի Ե. ոչ զոք ՚ի բաց առնլոց, և Գրէ-գորի Ե. և ընդ վանականս չհրամայելոց խօսել։ Այլ այլք, ընդ որս և Աթոդոսիոս և Տիանա զկոնդակ Ա-լեքսանդրի վասն քաղաքին ևեթ Հռոմայ համարին. և անդ իսկ ՚ի Հռոմ շնորհեալ է իշխանութիւն վա-նականց խօսելոյ ըստ պիտոյից ընդ եկաւորս։

43. Արօնաւորք ՚ի խօսել ընդ կուսանս՝ անկանիցին ՚ի բանադրանս վերապահեալս, սահմանեալս ՚ի Թեմա-կան եպիսկոպոսէ։ — Հանրական կարծիք համարին անկանել և այնոցիկ ՚ի կրօնաւորաց, որ ազատք են յեպիսկոպոսական բանադրանաց. զի իշխանութիւն ե-պիսկոպոսի ՚ի վերայ կուսաստանաց, ևս և որոց ընդ տեսչութեամբ կրօնաւորաց իցեն, առաքելական է՝ իբր փոխանորդի աւանդեալ նմա ՚ի Պապէն։

44. Օտարականք՝ որ ՚ի հարևանցի ուրեք բնակեն, ՚ի խօսելն ընդ կուսանս՝ անկանիցին ՚ի բանադրանս վե-րապահեալս եպիսկոպոսին։ — Ոստ հաւանականագոյն կարծեաց զանազանելի է։ Եթէ կուսաստանն ազատ իցէ յիշխանութենէ եպիսկոպոսին, անկանին. զի անդ եպիսկոպոսն է իբրև առաքելական փոխանորդ, վասն որոյ և ունի իրաւասութիւն ՚ի վերայ օտարականաց։ Իսկ եթէ կուսաստանն իցէ ընդ իշխանութեամբ եպիս-կոպոսին, ազատ են ՚ի բանադրանաց. զի անդ եպիսկո-պոսն ըստ կարգի իրաւասութեանն իշխէ, որում չեն հպատակ օտարականք ՚ի հարևանցի ուրեք բնակեալք ըստ հաւանականագոյն կարծեաց, ըստ ասացեալումն ՚ի գլ. Ե. 41։ Հանդերձ այսու ամենայնիւ տես և որ ինչ ասելոց եմք ՚ի յաջորդ Թուիս։

45. Օրէն իցէ եպիսկոպոսաց խօսել ընդ կուսանս յայլում Թեմի առանց մեղաց, և առանց անկանելոյ ՚ի բանադրանս սահմանեալս ՚ի Թեմական եպիսկոպոսէ։ — Են ազատ ՚ի մեղաց, զի հանրական է արգել, և չիք ուրեք յօրինս ազատ ՚ի հաւատարակաց օրինաց գոլ է-

պիսկոպոսաց։ Ա՛յլ՝ի բանադրանաց ազատ զնոսա կացուցանեն ումանք ըստ կանոնին, զի չկարէ կապել օրինաւոր հաւասար զհաւասար. իսկ այլք չընդունին զայն, զի եպիսկոպոս յայլում Թեմի է իբրև սոսկական ոք։ Սակայն սուրբն Ա՛լէոնտոս հաստատէ զի և եպիսկոպոսունք որպէս զայլ օտարականս Թէպէտ և մեղանչեն, այլ ոչ անկանին՝ի բանադրանս. զի Ա՛ենեդիկտոս ԺԴ. ՝ի կոնդակին իւրում ասէ՝ Թէ եպիսկոպոսունք և այլք ազատք՝ի հպատակութենէ, Թէպէտ և անկանին ընդ առաջնորդական սահմանադրութեամբք Թեմական եպիսկոպոսի, այլ ոչ անկանին ընդ բռնադատիչ օրինաւոր նորա. Ո՛չն ընդ երաւասաւ՛ենամբ եպիսկոպոսաց որ ըսպ կարգէ իշխանութեան նոցա է։ Ո՛ւ Թեմական եպիսկոպոսունք Թէպէտ և որպէս առաքելական փոխանորդք են ըստ իրաւասութեանն՝ի վերայ կուսաստանաց, այլ իրաւասութիւնն այն է ըստ կարգի իշխանութեան նոցա՝ որպէս յատուկից պաշտամանն նոցա։

46. Կուսանք արգելաւանից անկանին՝ի բանադրանս վերապահեալս Պապին՝ յերկանել արտաքս՝ի կուսաստանէն՝ի չափ ոտին իսկ միոյ, եթէ բոլոր անձամբն ելցէ երեսաւ։ Ո՛ւ նոյն բանադրանս անկանի որ հրամանս տայ նման ելանելոյ, կամ ընկերէ նմա, կամ՝ի տուն իւր ընդունի գնա յերկանելն։ Ո՛ւ բանադրանաց աստի ազատ կացուցանէ հրդեհ մեծ, կամ էորոպոսութիւն և ջանապախտ, եթէ չկոչէ ժամանակ խնդրելոյ հրամանն յեպիսկոպոսէն կամ յառաջնորդէ։ Ո՛ւղղ հրդեհիւ է իմանալ և զհեղեղ գետոց և զարշաւանս հինից, և զսոցին համագոյն վտանգս մահու. իսկ ընդ ժամտախտիւ զբաժանութիւնն և զախտս ստուգիւ աճանցականս, որպէս յայտ արարն սուրբ Ժողովն առաքելական, և ոչ որպէս ումանք իմանան զամենայն ախտս՝ որոց մարթ կոչ աճանցել յայլս. և՝ի բժշկել յախտէն՝ պարտ է կուսին վաղագոյն դառնալ՝ի վանս. այլ զվաղագոյն իմա բարոյապէս, այսինքն յետ միոյ կամ երկուց աւուրց։

47. Յայսվայր զկուսաստանաց. այլ են և զմենաստանաց արանց կանոնք և բանադրանք պատկանք, սահմանեալք վանն կանանց։ Ո՛ւ բանադրանաց աստի ազատ կացուցանէ վտանգ և՛ եթէ մահու, յորմէ խոյս տուեալ ոք՝ի մենաստան ուրեք անկանիցի։ Ա՛զատ են

և դշխոյք · օրէն է և տիկնայց հիմնադրաց կրօնին և աղ-
գականաց նոցա , այլ ոչ առանց յատուկ շնորհի առա-
քելական գահուն , ըստ յայտարարութեան Ինոկենտիկ-
տեաց ԺԴ· որ խափանեալ և զկնդակ սրբոյն Պիոսի ,
արգել կանանց չմտանել ամենևին ի մենաստանս ա-
րանց և ոչ պատճառանօք Թափորոյ կամ քարոզի և կամ
որ և իցէ կրօնական հանդիսից : Սմանք և ի սարկաւա-
գանոց կրօնաւորաց ոչ օրէն համարին մտանել կանանց,
բայց Նայրն Ֆերրարի զհակառակն ցուցանէ ամենայն
ուրեք ընկալեալ ի սովորութենէ :

48· Յամ է արդ ասել և զհարկանողաց զեկեղե-
ցականս : Ըստ սահմանելոյ կանոնաց “Որ զբ սպրա-
նօք զիւրն յեկեղեցականաց կամ ի միանձանց զոք հար-
կանիցէ , անկցի ընդ կապանօք նզովից , և մի զբ յեպիս-
կոպոսաց իշխեսցէ արձակել զինա , բայց միայն ի վտան-
գի մահուան , մինչև յանդիման լեալ առաքելական գա-
հուն՝ ընկալցի զպատուհասս նորա ,, :

49· Ա· Որ ոչն ասելով բռնանդակէ զարս և զկանայս
հասեալս ի բանաւարութիւն : Ի նոյն բանադրանս ան-
կանին և որք հրամանս կամ խրատ տան հարկանելոյ ,
կամ հաւանին ընդ այն : Ոչ այլ խնդրի առ այս , զի նո-
քա լինին պատճառք հարուածոյն՝ ոչ գոյզն լինչ ազդե-
ցութեամբ ի գործն . որպէս ուսուցանեն Սուարէզ,
Նաւարրոյ , Պոնաչինա , Սիլուեսթրոյ , Սալմատիկեանք
և այլք : Ոմանք որոյ յաւելուն Պոնչինա , Ընրիկա , Տիա-
նա , Լաքրուա , Սալմատիկեանք և այլք , զի եթէ որ
ասիցէ՝ Որ պայր ինչ առնուլ ձրիաբ յայսմ կամ յայնմ եկեղե-
ցականէ , գիտելով զի ի բանից անտի յորդորեացին այլք
առնուլ ի նմանէ ձրիաբ , անկանի ի նզովս ի գալ հա-
րուածոյն յարդիւնս : Ընկանին ի նոյն բանադրանս և
որք հաւանին ընդ հարուածն . այլ առ այս խնդրի նախ՝
զի հարուածն յանուն նորա կամ ի շնորհս նորին գոր-
ծեսցի . երկրորդ՝ զի հաւանութիւն նորա արտայայտեալ
լիցէ այլոց . և երրորդ՝ զի ի ժամ գործելոյ հարուածոյն
կարող լիցէ նա ի տուչութիւն հրամանին կամ խրա-
տու , գէթ ունակաբար՝ այսինքն գոլով ի քուն կամ
յարբեցութեան , այլ ոչ եթէ յիմարեալ լիցէ , որպէս
ուսուցանեն Սուարէզ , Սայիրոյ , Պոնաչինա , Սալմա-
տիկեանք , Լաքրուա և այլն : Ընկանին և նոքա որք ոչն

խափանեն զՀարուածն, պարտականք գոլով խափանելոյ ըստ արդարութեան կամ ըստ պարտուց պաշտաման, որպէս իշխանք, առաջնորդք, դատաւորք, ծնօղք, վարժապետք, ժողովրդապետք և այլն. այլ ոչ և նոքա՝ որք յեղբայրսիրութենէ և եթէ իցեն պարտականք խափանելոյ, թէպէտ և առ աստեղութեան չիցէ նոցա խափանեալ զՀարուածն, որպէս ուսուցանեն Կաւատրոյ, Պոնաչինա, Լայման, Ռոնչինա, Բասիլիոփալ, Մոլինա, Սալմանտիկեանք և այլք. զի այնոքիկ եթէ համարին նպաստել հարուածոյն, որ կարող գոլով խափանել զայն իշխանութեամբ իւրեանց՝ ոչ խափանեն, զի հաւանին ինքն այնու ընդ հարուածն:

50. Բ. Յեկեղեցականաց կամ ի վանից ընդ եկեղեցականաս պարտ է իմանալ և զայն՝ որոյ զխոստումն եթէ հերաց ընկալեալ իցէ, թէպէտ և բանադրեալ կամ արգելեալ և կամ խափանեալ ի պաշտամանէ. ի բաց առեալ որոյ զձև եկեղեցական մերկացեալ իցէ, և յետ երկակի ազդարարութեան ոչ ևս զգեցեալ, որպէս կանոնք և աստուածաբանք ուսուցանեն: Նոյնպէս միանձն առեալ բռնանդակէ զամենայն կրօնաւորս, զարս և զկանայս, զուխտեալս և զնորընծայս, և զերկրորդականս իսկ սրբոյն Փրանկիսկեայ և սրբոյն Դոմինիկոսի՝ որք զձև նոցին կրեն և կեան ի միասին ընդ առաջնորդաս: Ոչնոյն հաստատէ Ֆրանեսկոյ և զկանանց միաբանակիցաց ի դստերանոցս, թէպէտ և չիցեն հաստատեալ ի Պապէն. զնոյն և Ալենսկ հաստատէ զմանկտուց՝ որ ի կղերանոցս և ի վարժարանս կեան. զնոյն և Սուարէզ, Ֆրանեսկոյ, Ծումրնեզի և Ռոնքալեա ասեն զանապատաւորաց՝ որ ի սրբազան ուրեք տեղւոջ կեան ընդ հնազանդութեամբ. այլ ոչ Թափառական անապատաւորք, որք ի պահպանութիւն և ի ծառայութիւն մատրանց պարապեն:

51. Գ. Նոյնիսկ եթէ իմա իրապէս և յայտնապէս, ձեռամբ կամ գաւազանաւ, հարուած ծանր՝ արարեալ մահուչափ մեղօք: Այլ բաւական է և թեթև հարուած, եթէ ընդհանրապէս իցէն ծանուցք ըստ պատուականութեան անձինն՝ ի նպաստ եկեղեցականին զօրէնսն ընդարձակելով: Ասն որոյ անկանի ի նոյն բանադրանս և որ թքանէ յերեսս եկեղեցականի, կամ

տիզմ զնովաւ արկանէ, կամ Թանայ զնա Ջուրբ, կամ զգեստ նորա պատառէ, կամ զՀերս նորա խզէ կամ զնոյր կամ զվերարկու և այլն։ Դարձեալ և որ արգելու զեկեղեցական՝ ի բանտի կամ այլ ուրեք անել. և որ հալածէ զնա վտանգաւ անկանելոյ՝ ի փոս կամ՝ ի ձիոյ, և կէսք՝ ի բարոյականաց առանց այսր վտանգի իսկ համարին հաւանականաբար անկանել նմա՝ ի բանդարանս։ Դարձեալ և որ կարեվէր հարկանէ զձի նորա կամ աղեգանէ, կամ բռւռն հարեալ զանձուց նորա ձգէ։ Եւ զայս ամենայն գործս Թշնամանաց եւ Թէ չհաւանութեամբ և նորին իսկ եկեղեցականի գործեցեալ ոք, ոչ ազատ՝ ի բանադրանաց կացուցանեն զնա Սուարէզ, Պոնաչինա, Վոնչինա և Սալմատիկեանք. այլ յայնժամ, որպէս յաւելուն Պոնաչինա և Ա քրուա, ոչ՝ ի վէռեալ բանադրանս՝ այլ՝ ի վէռելիս անկանի այնպիսին. զի կանոնք՝ ի խօսելն զայսպիսեաց, սակս եւ եթ՝ է բանադրանս անկեալ։ Եւ դարձեալ յաւելուն Վոնինքիոյ և Սալմատիկեանք ազատ առնել զնա՝ ի բանադրանաց, եթէ հաւանութիւն եկեղեցականին՝ ի բաց բառնայցէ զԹշնամանս գործոյն։ Այսան և Կաէտրոյ համարին անկանել՝ ի բանադրանս և եկեղեցականի՝ որ անձամբ զանձն առ զայրոյթ սրտի հարկանիցէ. բայց այլոց չէ այս ընդունելի, զի կանոնք վասն այլ ոք հարկանողաց են սահմանեալ։

52. Ազատ է՝ ի բանադրանաց և որ առանց ծանր Թըշնամանաց հարկանէ զոք. վասն որոյ նախ՝ չանկանի՝ ի բանադրանս որ բառնայ գաղտագողի զքսակ կամ զձորձ եկեղեցականի, առանց բռնի յափշտակելոյ։ Երկրորդ՝ որ ընդ խաղ կամ առանց մահուչափ մեղաց հարկանէ, զի սակս կանոնք. Եւ ոչ էղբրէիոս չափահասակ անկանին՝ է բանադրանս, եթէ ոչ յապերլոենէ կամ՝ է նախանձոտէ կամ՝ է բարկութենէ, այլ ընդհանրութեամբ ընդ խաղ զբրեաս հարկանիցեն։ Ոմանք սակս աստուածաբանք և զիրար աստիճանաւորաց, որք բռնի զմիմեանս հարկանիցեն՝ մինչև արեան իսկ ընդ ունդունս նոցա գալ. զի այսպիսի հարուածք չհամարին՝ ի ծանր Թշնամանս։ Յաւելու Սոթոյ՝ եթէ ծանր իսկ իցէ հարուածն. բայց զայս պարտ է իմանալ, եթէ ոչ կամաւ և գիտութեամբ այնպիսի հարուածքն ծանրութիւն առնիցին։ Ոմանք է ասել,

և զորոց ըստ դիպուածոյ, կամ՚ի պաշտպանութիւն անձին և մերձաւոր աղգականաց, կամ՚ի պահ ընչից իւրեանց հարկանիցեն։ Այրուրդ՝ որ՚ի հարկանելն ոչ ծանր մեղանիցէ, առ յանկարծակի ինչ կրնոյ ոչ կամաւ և գիտութեամբ բերեալ՚ի հարուածդ, որպէս հաստատեն բարոյականք գրեթէ առ հասարակ։

Որ ոչ ձանաչելով հարկանիցէ զեկեղեցական, այլ այնպիսի կամօք՝ զի եթէ ծանուցեալ ևս ի՛ր գնա՝ հարկանէր, անկանիցի՚ի բանադրանս։ — Հանրագոյն կարծիք ազատ կացուցանեն գնա՚ի բանադրանաց. զի առ՚ի բանադրանս չբաւեն մեկնողական կամք, այլ խնդրին կամք ներդործական։ Այլ անկանի որ երկբայութեամբն հարկանէ, կամ՚ի մոռ եղեալ թէ նամանել գնա եթէ աշխարհիկ և եթէ եկեղեցական իցէ։ Այնքեզ, Յովաւր, ի աքրուա և այլք ոչ ազատ առնեն՚ի բանադրանաց և զթանձր տգիտութիւն։ Ոսկ յաւելն ասոքանօք պիտին չպահանջեն կանոնք զնենգամտութիւն, որպէս համարին ոմանք պահանջել, այլ զմանհուշոյն եւեթ մեղս։ Ընկանի և որ հարկանէ զայլ ընդ այլոյ եկեղեցականի, զի թէ նամանել թէ նամանէ զկարգ եկեղեցական ըստ ասացելումն՚ի գլ. ժ. 85։

Ընդրդրդ՝ ազատ են՚ի բանադրանաց մեծաւոր և վարժապետ և հայր, որք հարկանեն չափով զփոքր աստիճանաւորս. նոյնպէս և երէց եղբայր՝ որ զկրտսերոյ աստիճանաւորի ունի զհոգաբարձութիւն։ Այնանապէս ազատ՚ի բանադրանաց կացուցանեն աստուածաբանք զմեծաւորս և զվարժապետս եկեղեցականս, որք չափաւորապէս զսուրբ աստիճանաւորս իսկ հարկանիցեն առ՚ի պատիժ։ Հաւանականագոյն կարծիք աստուածաբանից բազմաց զնոյն ազատութիւն տան և ծնողաց։ Հինգերորդ՝ որ զեկեղեցական ոք գտանիցէ՚ի գործ պղծութեան ընդ կնոջ իւրում կամ ընդ մօր կամ ընդ քեռ կամ ընդ դստեր, և հարկանիցէ գնա, ազատ է՚ի բանադրանաց. այլ ոչ և ընդ այլ ազգականս իւր թէ գտանիցէ։ Այս որպէս յաւելուն Այաւարրոյ, Յոռնելին, Յովհաննա, ի աքրուա և այլք, եթէ ոչ անդէն՚ի մեղս կամ նոյնհետայն գնետ մեղացն հարկանիցէ, էր ազատ՚ի բանադրանաց։ Ոչ ազատ համարին ի այսման և Այաւարրոյ և զայր, որ գտանեալ կայցէ եկեղեցակա-

նի մտանելոյ առ կին իւր, և՛ ի վերայ հասեալ հարկա-
նիցէ զնա. զի ոչ՛ ի մեզս անդ դատանէ զնա, այլ սպասէ
մեղացն. ուր կանոնք ասեն՝ Որ հարկանէ զէկեղեցեական,
գիտանելով զնա՛ ի պղծութեան ընդ ինոջ խորամ և այլն:
Նոյնպէս ընդ հակառակն Սուարէզ, Սայիրոյ, Սկլուհոյ,
Սալմատիկեանք և այլք ազատ կացուցանեն զկին, որ
հարկանէ զեկեղեցական հրապուրիչ՝ չկարեալով այլապէս
խուսել՛ ի նմանէ, թէպէտ և բանիւք ևեթ իցեն հրա-
պոյրքն, այլ վտանգ իցէ իւր և՛ բանից անտի: Նոյն
յաղագս արձակման՛ ի բանադրանաց աստի, թէ երբ
օրէնն իցէ եպիսկոպոսի արձակել, և երբ պարտ իցէ առ
Պապն դիմել, ասելոց եմք՛ ի տողս՛ ի գլ. Ի. 46—48:

53. Ի բանադրանաց, որ բովանդակին՛ ի կանդակին
ընթերեաց, գլխաւորագոյնն է ընդդէմ հերետիկոսաց և
համախոհից նոցա և ընթերցողաց գրոց նոցին: Ընդ-
նախ՛ ի բանադրանս յայս անկանին հերետիկոսք՝ որոց
տեսական իցէ մոլորութիւն, այսինքն յամառեալ մտօք
պնդել կալ՛ ի կարծիս՝ գիտելով զի հակառակ է այն
վարդապետութեան եկեղեցւոյ, որպէս ուսուցանէ
սուրբ Աստուածային ընդ աստուածաբանս առ հասա-
րակ: Աստ իսկ գիտել զի տգիտութիւն, թէպէտ և
թանձր, ազատ առնէ՛ ի բանադրանաց առ՛ի չգոյէ յա-
մառութեան՝ որ կացուցանէ տեսական զմոլորութիւն:
Ստանալանդ զի հաւանականագոյնս յաւելուն Աստուծոյ,
Ռասթրոփալ, Սուարէզ, Սալմատիկեանք, Պոնաչինա
և Սայիրոյ ազատ կացուցանել և զկեղծեալ տգիտու-
թիւն. քանզի չէ յամառութիւն՝ համարել զի ոչ հա-
կառակ եկեղեցւոյ վարդապետէ, որով և իցէ տգիտու-
թեամբ զայն այնպէս համարիցի: Նոյ եթէ որ երկ-
բայեալն զմասանց հաւատոյ՝ դրականապէս դատելով
երկբայելն զվարդապետութիւն ինչ հաւատոյ, անկանի
՛ի բանադրանս որպէս հերետիկոս. այլ որ բացասապէս
երկբայի, ոչ դատելով այլ՛ ի կախ ևեթ ունելով զդա-
տումն, մեղանչել մեղանչէ՝ այլ ոչ անկանի ընդ բա-
նադրանօք. զի չէք անդ յամառութիւն ընդդէմ վար-
դապետութեան եկեղեցւոյ: Այս այսպէս ուսուցա-
նեն Անքեզ, Վասգուեզ, Պոնաչինա, Սալմատի-
կեանք և այլք: Այլ վասն անկանելոյ՛ ի բանադրանս
կնդրկի զի արտայայտեալ իցէ մոլորութիւնն բանիւք

կամ նշանօք, իւրև կամ՝ ի ձեռն յարակից յայտարար հանգամանաց. վասն որոյ Լայման և Աալմատիկեանք ազատ կացուցանեն՝ ի բանադրանաց որ ասիցէ Լեթ՝ թէ չէ Պապաած, և զկատարումն բանին զԲրիսպոս՝ յաւելցէ լռելեայն՝ ի մտի իւրում: Ինդրի գարձեալ՝ զի առ՝ ի հաստատութիւն արտայայտեսցէ զմոլորութիւնն իւր, որպէս դաւանելով զայն. վասն որոյ ազատ է՝ ի բանադրանաց որ յայտնէ զայն առ՝ ի խնդրել զձշմարտութիւն: Պայլ ոչ խնդրի զի ծանիցեն այլք զմոլորութիւն ուրուք վասն անկանելոյ նմա՝ ի բանադրանս, շատ է զի արտայայտեալ եցէ իւր զայն: Ասկ՝ ի մոլորութենէ, որովք ոք ըստ ասացելոցս ոչ անկանի՝ ի բանադրանս, կարէ ամենայն խոստովանահայր արձակել զնա:

54 Երկրորդ՝ անկանին՝ ի բանադրանս յայս ըստ բանից կոնդակին, համախոհք, ապաստամատոյցք, ընկալուչք և պաշպանք: Համախոհք են՝ որք արտայայտեն զհաւատնուելիսն իւրեանց ընդ մոլորութիւն ուրուք, որպէս եթէ ասիցէ ոք ողջամիտ գոլ զվարդապետութիւն ուրեմն: Ապաստամատոյցք են՝ որ օգնեն աղանդաւորի՝ ի փախուստ, կամ կարողք գոլով և պարտականք պահուհասել զնա՝ թողուն զնա ազատ: Ընկալուչք են՝ որք հիւրընկալեն կամ թագուցանեն զնա առ իւրեանս, զի մի պատուհասեսցի: Պաշտպանք են՝ որք խափանեն չպատուհասել զնա դատաւորի, և պաշտպանեն զվարդապետութիւնն նորա՝ գիտելով զայն մոլորական: Յաւելումն Կոլետոյ և Վասլերոփալ և այլք բանադրեալս համարել և զայնոսիկ, որք թէպէտ և ոչ առ՝ ի պաշտպանել զմոլորութիւն՝ այլ առ մեր ազգականութեան կամ բարեկամութեան արտացեն զայն. բայց Կոմէց, Ազորիոյ, Լայման, Աալմատիկեանք և այլք ընդ սրբոյն Պոնաւենթուրայ չընդունին զայն. զի եկեղեցի դատապարտէ զնպաստաւորս այսպիսիս վասն նպաստելոյ նոցա աղանդաւորին ըստ մոլորութեանն, և ոչ ըստ աղգականութեան կամ ըստ բարեկամութեան: Լթէ օգնեսցէ ոք աղանդաւորին առ՝ ի զերծանել՝ ի ձեռաց դատաւորի, թէպէտ և ոչ յաջողեսցի նմա զերծանել, չէ ինքն ազատ՝ ի բանադրանաց, զի խոհապէս նպաստաւոր գտանի լեալ աղանդաւորին, որպէս հաստատեն Այիրոյ, Վասլերոփալ և այլք:

55 · Արդարդ՝ անկանին՝ի բանադրանս դարձեալ ըստ բանից կոնդակին, որ գիպուածեամբ ունին առ էրբեանս, ընկերանուն, պատգրեն, և չապաշխանեն՝ և յայնմանէ հաւ անդայտ պատճառաւ, որով և եղեւ մուտ հաւ պատճառանուտ ըղգերս հերձուածոյ՝ որ ճառեն զկրօնից, հաւ բռնադատին՝ի նոսա մոլորուածանս: Օնոյն է հմանալ ըստ այլոց առաքելական վճռոց և վանն այնոցիկ, որ վաճառեն և գնեն և տարուբերեն զայնպիսի գրեանս, կամ արգելուն այլոց չաւանդել զայնոսիկ եպիսկոպոսաց:

56 · Ա՛յլ վանն անկանելոյ՝ի բանադրանս յայս՝ խընդրին քառեակ պայմանք: Նախ՝ զի որ գիտութեամբ զայնպիսի գիրս կալցի առ իւր և ընթերցցի· վանն որոյ ազատ՝ի բանադրանաց անտի կացուցանել և տգիտութիւն թանձր և կեղծ, ըստ ասացելումն՝ի Թիւ 8: Ա՛յլ չէ ազատ որ կամ՝ի լոյ և կամ՝ի միջէ իսկ յարժանահաւատ վկայէ գիտից՝ զի արգելեալ է մատեանն այն: Արկրորդ՝ զի մատենագիրն էոյ հերետիկոս, և ոչ թէ անհաւատ: Նայց Ծաալմուան՝ երից և այլ մատեանք նոցա արգելեալ են կոնդակաւ Կղեմայ Ը· և Պիոսի Դ: Ընդ մատեանս հերեսիովտաց համարին և անանուն հրատարակեալ մատեանք՝ որք ուսուցանեն մոլորութիւնս, զի մատենագիրք նոցա աներկբայապէս են հերետիկոսք:

57 · Արդարդ՝ զի մատեանն այն կամ զկրօնից Քառիցէ և կամ էոյեն՝ի նմա մոլորութիւնք· վանն որոյ բաւական է զի մի ևեթ մոլար վարդապետութիւն ընդդէմ հաւատոց էոյ՝ի նմա, թէպէտ և ոչ Քառիցէ զկրօնից· և կամ թէ և չէոյեն՝ի նմա մոլորութիւնք՝ այլ յառաջարկութենէ զկրօնից Քառիցէ, այսինքն զառաքելոյ, զմարհրդոց հաւատոյ, զեկեղեցական կանոնաց կամ զարարողութեանց, և կամ զորոց և էոյ կրօնական իրաց: Ապրուա և վինեաթելլի ազատ առնեն՝ի բանադրանաց, որ զմոլորութիւնս մատենին ջնջեալ, և այնպէս ունիցի, զայն առ իւր· բայց Անքէզ, Պոնաչինա և Սուարեզ չընդունին զայն, իբր զի ոչ բառնայ առանձնական ջնջմամբն այնուիկ արգել մատենին: Վան որոյ հայրն Վիորեր զանազանէ այսպէս· եթէ առաջարկութիւն մատենին էոյ զկրօնից,՝ի ջնջել և զմոլորութիւնս որ՝ի նմա՝ արգելեալ մնայ մատեանն

ըստ հրամանի կոնդակին, որ արգելու զառ ի հերեսիկոսաց գրեալ մնասեանս զկրօնից։ Իսկ եթէ զայլոց ի-րաց իցէ առաջարկութիւն մատենին, ընդունի զառաջնոցն կարծիս. եթէ միայն առաջարկութիւնն այն պատմական կամ իմաստասիրական չիցէ պատրուակ, ընդ որով մատենագիրն զաղանդ իւր ծածկիցէ։ Ալբ միանգամ առանց հրամանի զգիրս այսպիսիս ընթեռնուն, թէպէտ և առ ի հերքել զմոլորութիւնս նոցա ընթեռնուցուն, թէպէտ և չիցէ նոցա վտանգ հաւատոցն սասանութեան, սակայն չեն ազատ ի բանադրանաց. զի կոնդակն հրամայէ չընթեռնուլ որով և իցէ պատճառաւ կամ պատճառանօք։ Այսոյն օրէնն համարին Այսման, Հոլշման, Ալեկ և այլք, եթէ հարկ լիցի ուրեք անդէն առեւտեղ ընթեռնուլ զմոլորելոց ուրուք գիրս և պատասխանել, և չիցէ ժամանակ առնլոց հրաման։ Պարտ է հրամանին գոլ գրաւոր և ի պապէն շնորհեալ։ Այսոյն Այս իւա օրէն համարի և եպիսկոպոսաց, ի սահիպել ծանր հարկի, տալ հրաման։

58. Ողորդ՝ խնդրի զի չիցէ գոյն ինչ ընթերցեալն, քանզի ընդունելի է աստուածաբանից և ի մասինս յայսմիկ դուշնաքէութիւնն նուիրոյ։ Ակնք դուշնաքեայ համարին էջ մի, և կնքք երիս կամ չորս տողս. բայց այլք ի միջատահմանին կացեալ, դուշնաքեայ ինչ զատանեակ մի տողից համարին։ Իսկ Հոլշման, Ափոբեր, Ալեկ և այլք յաւելուն զի եթէ որ ի բանալ զգիրսն՝ հանդիպեսցի մոլորութեան, մարթ է նմա և ընթերցմամբ տողից ինչ անկանել ի բանադրանս՝ դնելով զանձն ի վտանգ սասանութեան, ուր մարթ է նմա և բազում ինչ տողս ընթեռնուլ անվտանգ՝ եթէ հանդիպեսցի անվնաս ձառից։ Այլ որպէս Այսման, Պոնաչինա և Պուսեմպայ հաստատեն, որ զայնպիսեայ մատենից զյառաջաբանութեան իսկ կամ զցանկին ոչ սակաւ ինչ մանն ընթեռնուցու, չէ ազատ ի բանադրանաց։

59. Ազատ իցէ ի բանադրանաց որ ունկն դնէ ընթեռնլոց ուրուք զարդելեալ գիրս։ — Ակնք չառնեն զնա ազատ, բայց Նաւարրոյ, Պոնաչինա, Սանքեզ, Վասկրոփալ, Աքրուա և այլք հաւանականաբար ազատ կացուցանեն զնա ի բանադրանաց, և Այսոյն

Ա իւա և Սիոռբը և այլք՝ ի մեղաց իսկ, եթէ չիցէ նմա վտանգ տասանութեան ի հաւատոց։

Ընդմի՞ իցէ ի բանադրանաց որ ընթեռնու Ճառ ինչ կամ նաման ուրոյն տպագրեալ։ — Հանրագոյն և հասարականագոյն կարծիք աղատ կացուցանեն զնա, զի այնպիսի ինչ սակաւաթերթ գրուած չհամարի ի մատեան, և դժպհի ինչ արգելականն գոլով հրամանի՝ օրէն է ամփոփել զայն ըստ կարի։

Ընդմի՞ իցէ ի բանադրանաց որ զձեռագիրս հերետիկոսաց ընթեռնուցու։ — Ընդորիոյ, Ա իւա, Սիոռբը և այլք աղատ համարին. և Սիլուիոյ ածէ առ այս ի հաստատութիւն զյայտարարութիւն ինչ առաքելական գահուն։ Նայլ այլք զհակառակն հաստատեն, զի և ձեռագիրք՝ մատեանք են, որպէս էին յառաջ քան զպիւտ տպագրութեան, որպէս և են իսկ ձեռագիրք հերետիկոսաց միանչ չև իսկ տպագրեալ. և զառաքելական յայտարարութիւնն Լաբրուա անստոյգ ինչ համարի։ Հետևոցս կարծիք ընտրելի են առ ի զգուշութիւն. և զիտելի է զի ընդ բնագիրս արգելեալ գրոց՝ համարին արգելեալ և թարգմանութիւնք նոցին ըստ սահմանագրութեան Կղեմայ ը։

60. Ոչ են արգելեալ մատեանք ուղղափառ մատենագրաց, որք զբանս հերետիկոսաց ածեն յեզծումն։ Դարձեալ և որք ծանօթութիւն ի գրոց նոցա ի կիր առնուն չափով։ Եւ դարձեալ մատեանք հերետիկոսաց պատմականք կամ իմաստասիրականք և կամ զայլոց ինչ առաջարկութեանց, յորս չիցեն մոլորութիւնք. զի եթէ իցէ ինչ ի նոսա և մի ինչ մոլորութիւն, արգելեալ համարի ըստ առացելումն ի թիւ 57. ընդդեմ ոմանց։

61. Ընժան է աստ տալ համառօտ ինչ տեղեկութիւն զգուշակի արգելեալ գրոց, զոր հրամայեաց Պօղոս Դ, և հաստատեաց զայն Կղեմէս ը։ Ի սմա երբեակ դասակարգութիւն է արգելեալ գրոց։ Յառաջնումն դասին մատեանք հերետիկոսաց՝ յորս են մոլորութիւնք, և կամ թէ ձառեն զկրօնից։ Երկրորդումն մատեանք ուղղափառ մատենագրաց, յորս իցէ մոլորութիւն ինչ ընդդէմ ուղղափառ վարդապետութեան կամ բարւոյ վարուց. այլ այսոքիկ մինչև ի ցուցակին դա-

սեալ՝ չհամարին ընդ արգելեալ գիրս, եթէ չլցեն ըստ հանրական կանոնին արգելեալ՝ի սկզբանէ անտի ցուցակին։ Յերրորդումն ամենայն մատեանք առանց ա-նուանն մատենադրին հրատարակելոք. այլ այսոքիկ ևս չհամարին արգելեալ, եթէ չուսուցանիցեն օտարոտի ինչ վարդապետութիւն. մանաւանդ եթէ հրամանաւ Թեմական եպիսկոպոսի իցեն տպագրեալ կամ հրատարակեալ։ Լոկ աղանդապետաց ամենայն իսկ գրեանք արգելեալ են, թէպէտ և ոչ զկրօնից ձառիցեն. դարձեալ և հերետիկոսացն անշնաս մատեանք, չև հրամայելոք՝ի Թեմական եպիսկոպոսէ. դարձեալ և սուրբ գիրք յաշխարհիկ բարբառ առանց բնադրին, և հակաձառութիւնք ընդ հերետիկոսս նոյնպէս աշխարհաբառ։ Դարձեալ և գիրք մոգականք, և ախտարաց գիրք՝ ո-րոց բանադրանք վերապահեալ են Պապին. և որք յառաջարկութենէ ձառեն զպղծութեանց։ Նոյ դարձեալ արգելեալ են՝ի ցուցակի անդ և ամենայն մատեանք դատապարտեալք վասն կասկածելի կամ մոլորական վարդապետութեան. և Պալմատիկեանք համարին վերապահեալ՝ի սրբոյն Պիոսէ զբանադրանս ընթերցողացն այնպիսի մատենից։

62. Ոչ միայն որք ընթերցունն, այլ և որք ունին առ իւրեանս զարգելեալ գրեանս, անկանին ընդ բանադրանօք։ Պ ասն որոյ որ ունիցին, պարտին աւանդել զայնոսիկ եպիսկոպոսաց կամ պաշտօնէից ատենին սրբազնութեան։ Ոչն ազատ՝ի բանադրանաց աստի և ոչ որք՝ի գրաւ կամ յաւանդի ունին զարգելեալ գիրս, և ոչ որք առ այլում ուսումն գնեն՝ի պահեստի. բայց եթէ այնպիսեաւմ ուսումն տայցեն՝ի պահ՝ որոյ իցէ հրամանն ընթերցողի զարգելեալ գիրս, և տացեն պայմանաւ չվարելոյ պահանջել զայնս՝ մինչև առեալ հրամանն ընթերցողի։ Պայման, Պանքէզ, Պայերոյ, Պոնա-ջինա և այլք ազատ կացուցանեն՝ի բանադրանաց՝ որ օր մի և եթէ կամ երկուս ունիցի առ իւր զարգելեալ ինչ գրեան, թէպէտ և՝ի մտի եդեալ իցէ ունել միշտ զայն՝ որպէս յաւելուն Վ.ասլերոտիալ և Պ իւա ըստ բանադրանաց մասին, զի չէր անդ ծանր ինչ նիւթ ըստ գործոյ։ Պ այման, Վինեաձելլի, Պայերոյ, Պանքէզ և այլք անբասիր առնեն և որ երկարատոյն իսկ ժամանակ

կալցի զայն առ իւր, մնալով դէպ ժամանակի աւանդելոյ զայն մեծաւորի կամ որոյ իցէ հրամանն ընթերնոյ:

63. Խաղալ և այլ բանադրանք են՝ի կոնդակի անդ ընթերցաց, և զլխաւորք յայնցանէ ընդդէմ որոց գոլանան զինչս քրիստոնէից նաւաբեկելոց, թէպէտ և առ ծովեզերք գտեալ, եթէ չկոչեն լքեալ թողեալ: Ընդդէմ այնոցիկ՝ որք տուրս՝ի վերայ այլոց՝ի կալուածս իւրեանց դնեն՝ առանց առնելոյ իրաւունս, որպէս առնիննթագաւորք և պետութիւնք և քաղաքաժողով միաբանութիւնք, որք՝ի պէտս հասարակաց առնուն տուրս: Ընդդէմ հինից ծովայնոց, որք նեղեն զքրիստոնեայս ընդ ծովն եկեղեցական: Ընդդէմ խարդախողաց զառաքելական նամականի: Ընդդէմ որոց զգաստ հոգևորս բառնան յեկեղեցական ատենէ, կամ ձգեն զեկեղեցականս յատեան աշխարհական: Ընդդէմ յաւիտեանաւոր զերբաւասութիւն կամ զժառանգութիւնս եկեղեցականս: Ընդդէմ որոց նեղեն զուղևորս՝ի հռովմ, կամ զեկաւորս անտի վասն իրաց առաքելական գահուն: Նա պիտելի է զի Կղեմէս Ը. յաւել սահմանել բանադրանս վերապահեալս Պապին՝ ընդդէմ այնոցիկ, որք իշխիցեն արձակել զոք անհրամանի՝ի վերապահելոց՝ի կոնդակին ընթերցաց:

ՅՕԴՈՒԱԾ Զ

ՑԱՂԱԳՍ ԱՐԳԵԼՄԱՆ, ԿԱՐԳԸՆԿԷՑ ԱՌՆԵԼՈՑ, ԽԱՓԱՆԵԼՈՑ ԵՒ ԴԱԴԱՐՄԱՆ ՑԱՍՏՈՒԱԾՈՑՅԻՆ ՊԱՇՏԱՄԱՆՑ:

64 – 66. Արգել կամ կախումն:
67. Անկումն՝ի կարգէ:
68 – 70. Խափանումն:
71. Դադարումն յաստուածային պաշտամանց:

64. Կախումն կամ արգել է ազգ մինչ բանադրանաց, որով արգելեալ մնայ եկեղեցական ոք՝ի պաշտամանց մինչ իւրոց: Կ՚երևանի մանաւանդ որ պաշտէ մինչ գործ արգելեալ նմա. բայց միայն անբաւիր զնա առնեն տուրքն Կոստանդնոս, Հաբերտ, Ճոռընեւի, Կալմատիկեանք և այլք, եթէ չկոչէ տուրք կարգ՝ զոր պաշտէն, կամ եթէ տուրք՝ այլ ոչ հանդիսապէս պաշտեալ:

և կամ եթէ անդիտութեամբ պաշտեսցի, կամ առ ծանր երկիւղի, կամ դուշնաքեայ ինչ գործ պաշտամանն։ Արհեղեցական, որ պաշտէ զգործ արգելեալ նմա, անկանի՛ յանկանոնութիւն։ — Արթէ արգել՛ի վերայ նորա եդեալ իցէ որպէս պատուիրան վանն հանդերձեալ օրինազանցութեան, կամ անցելոյն՝ որ յարատեւէ, անկանի յայնժամ յանկանոնութիւն. իսկ եթէ իցէ եդեալ որպէս դատակնիք օրինազանցութեան անցելոյ բոլորովին, ոչ անկանի. զի համարի այն պատիժ, և ոչ բանադրանք. և չէ օրէն ընդ բանադրանօք արկանել զօրինազանցութիւն բոլորովին անցեալ, ըստ առաջելումն՛ի Թիւ 8։ Արսիկոպոս արգելեալ յեպիսկոպոսական պաշտամանց, անկանի՛ յանկանոնութիւն՛ի կատարելն զայնս։ — Եկաք յաստուածաբանից ազատ կացուցանեն զնա, չհամարելով պաշտել նմա գործ սրբոյ կարգի, հաստատեալք՛ի կարծիս՝ զի եպիսկոպոսութիւն չիցէ կարգ. թէպէտ և յայժ հաւանական է թէ իցէ, որպէս հաստատեն Պելլարմինոս, Սանքեզ, Վուբնեալն և այլք, և որպէս ասեցաք ի յաւելուածն Դ. Թիւ 29։ Սակայն ոչ է մարթ ժխտել զի գործն այն գործ է սրբոյ կարգի, որ թէ և չիցէ այլ՛ի քահանայական՝ բայց լրումն է նորին։ Իսկ եթէ հայրապետական հանդիսիւ մատուսցէ պատարագ, մեղանչէ մեղանչէ՝ այլ ոչ անկանի յանկանոնութիւն. զի՛ի պատարագելն ոչ պաշտէ զգործ եպիսկոպոսական կարգի, այլ քահանայական՝ յորմէ չէ արգելեալ։

65. Արգելեալն խորշելի՝ անվաւերաբար՛ի կիր արկանէ զնուաստութիւն. իսկ տանելին թէպէտ և վաւերաբար, այլ ոչ ըստ օրինի արկանէ՛ի կիր, եթէ ոչ ըստ խնդրոյ հաւատացելոյ՛ի կիր արկանիցէ։

Իսկ հաւատացեալք, որպէս հաւանականաբար հաստատեն Սուարէզ, Վասկէզ, Տոլեդան և Սալմանտիկեանք, թէպէտ և յանուանէ իցէ արգելեալ եկեղեցականն, չեն ընդ ծանր մեղաց պարտական խորշելոյ՛ի նմանէ. և օրէն իսկ է նոցա զարգելեալ քահանայէ լսել զպատարագ։

66. Արգել կամ կախումն՛ի պաշտամանց, է որ առժամանակեայ է, և է որ մշտնջենաւոր. այլ է կախումն եկեղեցական ժառանգութենէ կամ՛ի սպասա-

ւորութենէ ինչ նորին, և այլ ՚ի պաշտամանէ կախումն՝ որ արգելու զկարգ և զկրաւասութիւն։ Զի որ առանց իրիք պայմանի կախեալն իցէ, արգելեալ է թէ՛ յեկեղեցական ժառանգութենէ և թէ՛ ՚ի պաշտամանէ, և չկարէ ՚ի կիր արկանել ոչ զկարգ և ոչ զկրաւասութիւն։ Այլ գիտելի է նախ՝ զի որ կախեալն է ՚ի կարգէն, ոչ այնու և կիրաւասութենէ է արգելեալ. և որ կախեալն է ՚ի պաշտամանէն, ոչ այնու և յեկեղեցական ժառանգութենէն է արգելեալ՝ եթէ ՚ի ձեռն այլոց կատարեսցի զսպասաւորութիւնս պաշտամանն։ Ի բայ առեալ զծանր ինչ եղեռն, կամ զտարւոյ արգել, որպէս սահմանեն եկեղեցական կանոնք։ Գիտելի է երկրորդ՝ զի որ կախեալն է յեկեղեցական ժառանգութենէ, ոչ այնու արգելեալ է և՛ ՚ի պաշտամանէն. վասն որոյ պարտ է նմա կատարել զժամակարգութիւն և զայլ պարտս պաշտամանն, թէպէտ և զրկեալ ՚ի հասից։ Եւ զայս ոչ է պարտ իմանալ զյանցանաց բոլորովին անցելոց, այլ յորժամ արգել ՚ի վերայ եղեալ իցէ յամառութեան՝ յորմէ մարթ իցէ կախելոյն զերծանել ազատաբար, որպէս ուսուցանեն բարոյականք. և յաւելուն Նաւպնեղի, Ալիա, Աւինոյի և այլք, զի եթէ ժառանգաւորն ծածկապէս իցէ արգելեալ և կատարիցէ զպաշտօն իւր, կարէ ունել զմասն հասից՝ որ անկ է փոխանորդի։ Արգելեալն եպիսկոպոսէ իւրմէ, ոչ գտանի արգելեալ յայլոց եկեղեցական ժառանգութեանց՝ որ իցեն նորա յայլ թեմս, եթէ եպիսկոպոսն ոչ ինչ զայնցանէ յիշատակեսցէ. զի թէպէտ և ժառանգութիւնքն այնոքիկ չիցեն ընդ իշխանութեամբ եպիսկոպոսին, այլ անձն ժառանգաւոր հպատակ նորին է։ Յաւելումբ ըստ հաւանականացն կարծեաց, զի եթէ արգելեալն ընկալցի նոր ժառանգութիւն, օրէն է անվաւեր առնել զտուչութիւնն, այլ ըստ ինքեան վաւեր է՝ ոչ ուրեք օրինաց հակառակ ինչ վճռելով։

Գիտելի է երրորդ՝ զի արգելեալն յեկեղեցական ժառանգութենէ ոչ այնու արգելեալ գտանի և յառաջարկութենէ և ՚ի տուչութենէ այլոց ժառանգութեան, թէպէտ և իրաւունքն այն յարգելեալ ժառանգութենէն անկ իցէն նմա։ Գիտելի է չորրորդ զի յարգելուլ միաբանութեան՝ ոչ արգելանին միաբանք, այլ միաբա-

նուիրեալն ևեթ գտանի արդելեալ՝ ի պաշտամանց և՝ ի ժառանգութեանց, զորս ժառանգէ միաբանութեամբ. և եթէ միաբանք կատարեսցեն զսպասաւորութիւնս արդելեալս միաբանութեան, մեղանչել մեղանչեն՝ այլ ոչ անկանին յանկանոնութիւն. զի արգելն այն չհամարի՝ ի բանադրանս: Իսկ եթէ արգելն այն թէ՛ ի վերայ միաբանութեան և թէ՛ ի վերայ միաբանից իցէ եղեալ, ազատ յայնմանէ մնան անմեղքն: Կիտելն և հինգերորդ՝ զի եթէ մեծաւորն բանիւ և եթ ասիցէ Արգելեալ լիցիս, ոչ ինչ աւելի զօրէ այն քան զարգելական հրամանն. քանզի չէ օրէնն համարել թէ մեղանչել կամիցի նա, զի առանց գրոյ արգելուլ զօք չէ օրէնն մեծաւորի: Կիտելն և վեցերորդ զի ըստ հանրական և Հնմարտագոյն կարծեաց բոլորովին արգելումն, այսինքն թէ՛ ի պաշտամանէ և թէ՛ ի ժառանգութենէ, կամ՝ ի միոջէ յայնցանէ ընդերկար, ոչ զօրէ առանց ծանր մեղաց. զի պարտ է այնմ կամ ըստմանեալ գոլ, և կամ սակաւ ժամանակեայ, այսինքն ոչ ինչ աւելի քան զեօթնեակ մի, և կամ վճռելի: Կիտելն և եօթներորդ՝ զի ամենայն խոստովանահարք կարեն արձակել յարգելմանց՝ որ չիցեն վերապահեալ, ըստ ասացելումն՝ ի Թիւ 11: Ասանաւանդ զի եթէ արգելքն ժամանակեայք իցեն և պայմանաւորք, ՝ի լնուլ ժամանակին և պայմանի՝ ինքնին լուծանին:

67. Արգելակիցութիւն հանգոյն իմն է արգելման, այսու ևեթ զանազանութեամբ զի բառնայ բոլորովին զկրաւունս ժառանգութեան, և խափանէ մինչև՝ ի սպառ՝ ի պաշտամանէ կարգին, զոր ոչ առնէ արգելումն: Արգելակիցութիւն երկակի է. և որ բանիւ, որ Թողու զարտաւնութիւն կանոնական և աստենական. և է որ իրական, որ արարողութեամբ՝ ի բաց բառնայ՝ ի սպառ ըզգործ պաշտամանն զժառանգութիւն և զարտաւնութիւն կանոնական և աստենական, առանց յուսոյ վերստին առանալոյ զայնս: Զսեմ իսկ զգործ պաշտամանն, զի չկարէ բառնալ զկարգ. վասն որոյ անկեալն՝ ի կարգէն կայ մնայ միշտ պարտական ուխտին ողջախոհութեան և ժամակարգութեան, և եթէ ամուսնանալ կամիցի՝ անվաւեր է պսակն: Եպիսկոպոսին և եթէ է իշխանութիւն առնել իրապէս զոք կարգակից. իսկ բանիւ ևեթ օ-

րէն է և փոխանորդն նորա առնել, և կարող իսկ է եպիսկոպոսն տնօրինել զայն. իսկ գիրականն կարզընկէցուԹիւն՝ Պասիլն ևԵԹ պահեալ է տնօրինել: Նա-նիւ ընկենուլ զոք ՚ի կարգէն՝ սահմանեալ է յօրինացդ ՚ի պատիժ ծանուննց յանցանաց. այլ իրականն ամենածանուննց ևԵԹ, որպէս յայտնի հերետիկոսուԹեան, արուսպիտուԹեան զարձադարձիւ գործեցելոց, և այլոց սոցին սակի ոՀիք եղերանց:

68. Խափանուիմն է ազգ լինչ բանադրանաց, որով խափանի սպասաւորուԹիւն սատուածային պաշտամանց, և խորհրդոց լինչ, և եկեղեցական Թաղման: Երբրակի է խափանուիմն. տեղական, անձնական, և խառն: Տեղականաւն խափանին սատուածային պաշտամունք յայնմ ևԵԹ տեղւոջ. անձնականաւն այս լինչ անձին կամ միաբանուԹեան ամենայն ուրեք. իսկ խառն՝ որ տեղւոյ և բնակչաց Համանպամայն առնէ խափանուիմն: Նաժանի դարձեալ ՚ի հանրական և ՚ի մասնական: Ի հանրական խափանման քաղաքի, խափանին և արուարձանեայք, և եկեղեցիք ևս կրօնաւորաց ազատք, և ամենեքին պարտականք են զգուշանալ այնմ, ևս և եպիսկոպոսն խափանիչ, զի ինքն ևս չկարէ առնել անդ Հոգևոր պաշտամունս, բայց ՚ի սրբազան Պատկն: Նայց այնոցիկ ՚ի քաղաքացոց, որոց չիցէ տուեալ պատձառ խափանմանն, օրէն է գնալ այլուր յասատուածային պաշտամունս: Ի խափանել եկեղեցւոյ՝ խափանին և մատրունք և գերեզմանք առընԹերակայք: Այլ ՚ի խափանել ժողովրդեան՝ ոչ խափանին կղերք և եկք և ուսանողք, զի չեն սոքա մասնակիցք ժողովրդեան. և ՚ի խափանել կղերոյ՝ ոչ խափանին աշխարհականք, և ոչ կրօնաւորք՝ որոց չիցէ պաշտօն կամ ժառանգուԹիւն ՚ի ժողովրդեանն, և ոչ այլք եկեղեցականաց՝ որոց չիցէ անդ պաշտօն: Իսկ յանձնական ընդՀանուր խափանածոյ ազատ են նախ եպիսկոպոսունք, որք և ՚ի Հանրական արգելմանէ են զերծք. երկրորդ՝ մանկունք և ՀիմարքԹէպէտ և սոքա ևս զրկին եկեղեցական Թաղմանէ. երրորդ՝ անյանցք ՚ի փոխել այլուր զբնակուԹիւն իւրեանց. և չորրորդ՝ եկք, Թէպէտ և ՚ի բազմաց Հետէ անդ բնակեալք:

69. Պատիժք յարակիցք խափանման են, նախ՝ ար-

գելք աստուածային պաշտամանց՝ որք ի սահմանեալ տեղիս կատարին յեկեղեցականաց. և չէ օրէն ինչ անդ առընթեր և ոչ անպարտականաց, որ վասն մեղաց այլոց գտանին խափանեալ։ Իսկ եկեղեցականաց, որ չիցեն խափանեալ, օրէն է պատարագել՝ բայց դրօք փակելովք, և առանց հնչման զանգակի, արտաքսեալ զխափանեալս յայսմանէ. որք եթէ չկամիցին ելանել, չէ օրէն ի խափանեալ անդ տեղւոջ պատարագել. և որ պատարագէն անկանի յանկանոնութիւն։ Ի նայ ի տօնի Ծննդեան, զատկի, Հոգեգալստեան, վերափոխման, և յումեք օրէ մարմնոյ և արեան Տեառն օրէն է պատարագել։ — Յերկրորդ՝ արգելեալ է պաշտել զխորհուրդս, բայց ի մկրտութենէ՝ զոր օրէն է հանդիսիւ իսկ պաշտել, և բայց ի խորհրդոց դրօշմի և ապաշխարութեան՝ զորս օրէն է ընդունել ամենեցուն, բայց յայնցանէ՝ որ պատճառ լեալ իցեն խափանածոյն։ Նայ ի հոգեվարս օրէն է պաշտել զթողչակ, և զվերջին օծումն իսկ՝ որպէս հաստատեն Ի սքրուա, Ուսաբէկ և այլք ընդդէմ Ալամատիկեանց և Անքեզի։ Ձաւանականագոյնս օրէն համարին Ռանչինա և Ի այմանն պաշտել և զպսակ։ — Յերրորդ՝ արգելեալ է ծաղումն եկեղեցական. բայց զեկեղեցականս, եթէ չիցեն յանուանէ խափանեալք, օրէն է թաղել յեկեղեցւոջ՝ հանդերձ հոգեհանդիստ պատարագաւ. իսկ եթէ եկեղեցին իցէ խափանեալ, օրէն է թաղել առանց մատուցման պատարագի։ Նայց զաշխարհականս չէ օրէն թաղել յեկեղեցւոջ, և զթաղեալս իսկ պարտ է հանել ի բաց։ — Չորրորդ՝ եկեղեցականք ի լուծանել զխափանումն ի նիւթ ծանր՝ մեղանչեն մահու չափ, և ի պաշտել զկարգ իւրեանց՝ անկանին յանկանոնութիւն։ Իսկ կրօնաւորք նովին իսկ գործով անկանին ի բանադրանս։ Ա՛ահուչափ մեղանչեն և աշխարհականք յընդունել զխորհուրդս ընդդէմ անձնականի խափանածոյ. իսկ ի լուծանել զտեղականն, որպէս առընթեր կալով աստուածային պաշտամանց, առաջի գտանին ի մահուչափ մեղաց՝ եթէ չիցեն ինքեանք անձնօրէն խափանեալ։

70. Ոգալնորդք, որք կարենան բանադրել, ունին իշխանութիւն և խափանելոյ։ Ա՛ ի խափանել զտեղի

ինչ կամ զմիաբանութիւն՝ խնդրին մեղք ծանունք յոյժ, գործեալք յամառութեամբ ի գլխոյ և ի գլխաւորաց տեղւոյն կամ միաբանութեան։ Այլ զկատարնումն առ սուղ ինչ ժամանակ և միով կամ երկու յարակից պատժովք օրէն է առնել և վանն ներելի մեզաց։ Ո՛չ խափանումն տեղական և անձնական ընդհանուր եդեալ եպիսկոպոսէ ըստ հասարակ իրաւանց և ոչ վերապահեալ, կարող է բառնալ և որ ունի իրաւութիւն ի վերայ տեղւոյն կամ միաբանութեան. իսկ զեղեալն ի Տէրէն՝ եպիսկոպոսն միայն և Հռոմայ Հայրապետն կարող են բառնալ։ Այլ զկատարնումն ըստ անձնական իրաւանց եդեալ և ոչ վերապահեալ, կարեն արձակել և խոստովանահարք առ հասարակ։

71. Դատարանն յաստուածային պաշտամանց և եկեղեցական թաղմանէ իսկ, այլ է ի խափանածոյ և ի բանադրանաց. և ոչ սահմանի սա ի պատիժ յանառութեան, այլ ի նշան տրտմութեան և ապաշխարանաց վանն թշնամանաց ծանունց գործեցելոց ընդդէմ Աստուծոյ կամ տան նորա։ Եւ պարտական են առնոյն քաղաքացիք հպատակել այսմ հրամանի։ Անքէզ, Պոնաչինա, Ալմատիկեանք և այլք հաստատեն, զի ի ժամանակի դադարման զրկին եկեղեցականք և ի ընծրհաց՝ յորս վայելեն ի ժամանակի խափանածոյ. բայց օրէն է պաշտել և յայնժամ զկորհուրդս, որ պաշտին ի ժամանակի խափանման։ Որոց միանգամ իշխանութիւն է սահմանելոց զբանադրանս, նոցա է սահմանել և զԴատարնումն՝ յառաջագոյն ազդեցութեամբ, և նոցա դարձեալ բառնալ զայն ի սպառ կամ առ ժամանակ մի։

ՅՕԴՈՒԱԾ Է

ՅԱՂԱԳՑ ԱՆԿԱՆՈՆՈՒԹԵԱՆ

72. Չ[ինչ է անկանոնութիւն:
73. Իցէ այն հաւասար բանադրանաց:
74. Խոհը զանազանութեան նորա:
75. Յորո՞ց ինչ զրկէ անկանոնութիւն:
76. Իցէ ընդունակ եկեղեցական ժառանգութեանց անկեալն յանկանոնութիւն:
77. Կարիցէ վայելել յայնս:

72. Անկանոնութիւն է արգել կանոնական չընդունելոյ զսուրբ կարգս, և չպաշտելոյ զընկալեալս:

73. Սոթոյ, Վռովար և այլք բազումք հաւասար բանադրանաց համարին զսա որպէս պատիժ եկեղեցական. բայց հանրագոյն և հաւանականագոյն կարծիք այլ ինչ զսա՛ ի բանադրանաց ասեն գոլ, որպէս խոչ իմն և անընդունակութիւն. զի Թէպէտ պատիժ է և սա, այլ առ՛ի պատուհասել և եթ զգործեցեալ մեղս, և ոչ առ՛ի խափանել զառաջիկայս:

74. Երկեակ է անկանոնութիւն. որ՛ի յանցանաց, և որ՛ի Թերութենէ. և զանազանի՛ ի բոլորականէ և՛ ի մասնական: Բոլորականն զրկէ՛ ի բնաւից իսկ սրբոց կարգաց ընդունելութենէ, և՛ ի պաշտելոյ զընկալեալս. իսկ մասնականն զրկէ և եթ՛ ի պաշտամանէ ինչ կարգին, և՛ ի մատչելոյ՛ ի վեր յայլ կարգ. որպէս քահանայ խեղ կամ կոյր զրկի՛ ի պատարագելոյ, այլ ոչ և չընդունելոյ զխոստովանութիւն:

75. Անկանոնութիւն նախ անընդունակ կացուցանէ կարգաց, և խուզումն իսկ ընդունելոյ հերաց. երկրորդ՝ խափանէ՛ ի պաշտելոյ զընկալեալ կարգս, վասն որոյ անկեալն յանկանոնութիւն չկարէ տալ արձակումն ըստ օրինի, Թէպէտ և վաւերաբար արձակէ. և երրորդ՝ արգելու չընդունելութենէ եկեղեցական ժառանգութեանց:

76. Իցէ վաւեր տուչութիւն ժառանգութեան անկելումն յանկանոնութիւն, որ չէ ընդունակ կատարելոյ զպաշտաման[ն այնր ժառանգութեան, — Բանրագոյն

և հաւանականապէս կարծիք անվաւեր համարին զայն ըստ տրիդենտեան սահմանադրութեան, որ արգելու չտալ զժառանգութիւնս որոց չիցէ հաստակ և ընդունայնութիւն. զի որ անընդունակն է պաշտամանն կարգին՝ զոր ժառանգութիւնն պահանջէ, անընդունակ և ժառանգութեանն համարելի է: Այլ ոչ սակաւք յերևելի աստուածաբանից զհակառակն հաստատեն՝ առ՝ի չգոյէ բացայայտ օրինաց առ այսպիսի ծանր պատիժ. զի տրիդենտեանն սահմանադրութիւն ըստ ոչ օրինի զտուչութիւնն կացուցանէ, այլ ոչ անվաւեր: Այլ թէպէտ և հաւանական է կարծիք նոցա, այլ զի հաւանականագոյն է առաջնոցն կարծիք և հանրագոյն, չէ օրէն անկանոն ընդունել զժառանգութիւն, որպէս չէ օրէն հաւանականագոյն կարծեօք գրաւել զայլոյ ինչ: Այլ որոյ յանպէտս և անխիղճ ընկալեալ իցէ, օրէն է նմա վայելել յայն՝ ի տնօրինելն յանկանոնութենէ, առանց իսկ յիշատակի ժառանգութեանն՝ ի հրամանագրին տնօրինման:

77. Օրէն իցէ անկանոնի ըստ վերասացեալ հաւանական կարծեաց վայելել՝ ի ժառանգութիւնն: — Ո՛չ ժառանգութիւնս ընկալեալս յառաջագոյն օրէն է նմա ունել, և ոչ դատաւորն մարթ է զրկել զնա յայնցանէ՝ եթէ անկանոնութիւն նորա իցէ՝ ի թերութենէ: Իսկ եթէ՝ ի յանցանացէ, օրէն է դատաւորի զրկել զնա. և յառաջ իսկ քան զվճիռ դատաւորին, եթէ չըկարիցէ ընդունել տնօրինութեամբ, պարտ է նմա հրաժարել՝ ի ժառանգութենէնն կամ դէթ աւանդել զայն այլոյ. զի որ ոչն կարէ ըստ օրինի ընդուլ զպարտս ժառանգութեանն, չէ օրէն նմա և ունել զայն: Ո՛յս այսպէս ուսուցանեն Սուարէզ, Վասկրուխալ, Պալմատիկեանք և այլք բազումք:

ՅՕԴՈՒԱԾ Ը

Ո՞ՐՊԷՍ ԼԻՆԻ ԱՆԿԱՆԵԼ, ՅԱՆԿԱՆՈՆՈՒԹԻՒՆ

78. Զի պարտ է բացայայտ սահմանել օրինաց զանկանոնութիւն:
79. Ո՛ր երկբայանաք իցէ անկանոն:
80. Որոյ երկբայելի իցէ մարդասպանութիւն:
81. Ո՛ր ինչ խնդրի առ անկանոնութիւն ըստ յանցանաց:
82. Եթէ յանցանքն իցեն զանխուսափ ամենևին:
83. Խնդրի գիտութիւն օրինացն:
84. Խնդրի գիտութիւն անկանոնութեանն:
85. Ո՞րպէս ՚ի բաց բառնի անկանոնութիւն:
86. Տնօրինութիւն անկանոնութեան:
87. Ո՞րպէս ՚ի բաց բառնի անկանոնութիւն ըստ Թերութեան:

78. Ոչ լինի անկանել յանկանոնութիւն՝ որ չիցէ յայտնապէս սահմանեալ յօրինաց, զի կանոնք ասեն՝ Զոր չէիցէ յերաւանոյ բացայայտել. վասն որոյ և չէ պարտ ընդարձակել զայն քան զդէպս սահմանեալս անդ: Երբ առնս կամ օրէնս է խմանալ զհռովմայ քահանայապետին, և զժողովոյ Հաստատելոյ ՚ի նմանէ: Ասատի ՚ի միտ առնուլ է՝ զի ՚ի մասին անկանոնութեան չգործէ ձեռնարկութիւն ՚ի նմանէյ առ նման, և ոչ ՚ի մեծագունէ առ փոքր, որպէս Հաստատեն վարդապետք առ հասարակ: Յաւելու Յայման զի յերկբայս թէ անկանոնութիւն ինչ իցէ բացատրեալ յօրէնս թէ ոչ, պարտ է զկարծիս աստուածաբանից խնդրել և զսովորութիւն:

79. Ո՛ր երկբայի անկեալ յանկանոնութիւն, պարտ իցէ նմա վարել որպէս անկանոն: — Երկբայութեամբ պարտ է խմանալ աստ զբացասականն. զի որ ՚ի դրական երկբայութեան իցէ առանց Քանից ստուգելոյ զայն, պարտի ունել զանձն առ անկանոն. բայց միայն ՚ի ատելել հարկի, որպէս յընդունելութիւն կարգի կամ ժառանգութեան, յետ բաւական Քանից՝ օրէն է նմա զգաստ համարել զանձն յանկանոնութենէ, որպէս ուսուցանեն Սուարէզ, Վասթրոփալ, Սալմատիկեանք և այլք: Սոյն գործութիւն խնդրոյն ՚ի բացասական երկբայութեան. արդ եթէ երկբայութիւնն զկրաւանց իցէ, այսինքն զգոյ կամ զգոյ այնպիսի օրինաց՝ որ սահմա-

Նիցե անկանոնութիւն այսպիսի ինչ գործոց, յայնժամ
՚ի ներքին և յարտաքին ատենի համարելի է ազատ
յանկանոնութենէ, թէ՛ ըստ ասացելումն ՚ի նախորդ
Թուխս, և թէ՛ ըստ այնմ զի երկբայութիւն չկարէ բառ-
նալ զերաւունս։ Իսկ եթէ երկբայութիւնն ինչ զգոր-
ծոյ, այսինքն զի գործեալ ինչ թէ ոչ զայնպիսի յան-
ցանս՝ որում սահմանեն օրէնք զանկանոնութիւն, եր-
կու կարծիք են. Ֆաբերտ, Ֆուրնելի, Ռոնչինա և
այլք ըստ կանոնի երկբայելի մարդասպանութեան, զոր-
ժէ ՚ի յաջորդ Թուխս ասելոց եմք, դատապարտեն և
զայլ ամենայն երկբայս յանկանոնութիւն։ Պաւլ Ուա-
րեզ, Ռոնքալեա, Ռասթրուիալ, Ալմատիկեանք և
այլք բազումք զհակառակն հաստատեն, այնու զի զօ-
րէնս դժպհիս պարտ է ամփոփել, և ոչ զոք երկբայա-
նօք օրէն է դատապարտել։ Եւ զարձեալ այնու իսկ զի
երկբայելի է՝ թէ արդեօք օրէնք երկբայական մար-
դասպանութեան զօրէն և յայլ երկբայս, զտանի երկ-
բայութիւնն զերաւանց՝ յորում ամենեքին և կանոնք
իսկ ազատ առնեն յանկանոնութենէ։ Ընդ այսոսիկ զի
և անկանոնութիւնն սահմանեալ երկբայական մարդաս-
պանութեան վասն յարգութեան սրբոյ պատարագին է,
և ոչ ՚ի ստոյգ համարելոց զանկանոնութիւն յերկբայս.
զի Թէպէտ և քահանայապետն սահմանէ զայն ՚ի կա-
նոն, այլ կանխէ ասել յառաջագոյն. Ո՞չ պարզաճափն
է յայսպիսւոյ երկբայութեան (պմարդասպանութենէ) հրաժա-
րել՚ի պատարագելոյ զոն համարձակել յայն։

80. Որ երկբայելոյն լեալ մարդասպան, պարտ իցէ
նմա համարել զանձն անկեալ յանկանոնութիւն։ —
Ամենք պարտ համարին նմա զայն յարտաքին ատենի,
այլ ոչ և ՚ի ներքնումն. այլք յերկոսին իսկ ազատ կա-
ցուցանեն զնա. այլ հանրական և ձշմարտագոյն կար-
ծիք յերկոսին իսկ համարին զնա անկանոն, զի վերոյի-
շեալն կանոն այսպէս սահմանէ. «Որանզի պարտ է
յերկբայս զասպահովագոյնն ունել ուղի, արժան է քեզ
արդելուլ քահանային այնմիկ չպաշտել զսուրբ կարգս»։
Այլ զայս նմա եթէ ստոյգ իցէ մարդասպանութենէն,
և երկբայելի միայն պատճառ նորին, այսինքն եթէ չի-
ցէ ստոյգ ՚ի հարուածոյ անտի լեալ սպանութեան. զի
եթէ չիցէ ստոյգ մարդասպանութիւնն, իրաւամբք Վ-

պէլ, Տիանա, Յաստղուբենի, Սիոնը և այլք ազատ կացուցանեն զնա յանկանոնութենէ։ Ա՝ան որոյ Տիանա, Կաւարրոյ և այլք չհամարին անկեալ յանկանոնութիւն զբժիշկն՝ որոյ երակ հատեալ էին զլղեայ առ՝ի վիժել զսաղմն, և չէին յայտ թէ էին վիժեալ. զի չէ օրէն ըստ կանոնաց պատուհասել ուր չիցեն ստուգիւ արդիւնք յանցանաց։ Բայց եթէ այնպիսի ինչ սաստիկ էին գեղն, զի սովորաբար ազդէ զգօրութիւն իւր, ոչ և անստոյգ համարի մարդասպանութիւնն, որպէս հաստատեն Կաւարրոյ և Պաքարտ։ Տես և որ ինչ ասացաքն զայսմանէ՝ ի գլ. Ը. 22։ Բայց միայն վասն անստոյգ իսկ մարդասպանութեան ստուգապէս պարտ է քահանայի հրաժարել՝ ի պատարագելոյ, և խնդրել տնօրինութիւն։ Ասասի զհետ գայ նախ՝ չանկանել այնուհետև աշխարհականի յանկանոնութիւն. երկրորդ՝ ոչ զրկիլ եկեղեցականի՝ ի ժառանգութենէ. և երրորդ՝ եկեղեցականի իսկ չանկանել յանկանոնութիւն, եթէ երկբայութիւնն էին զնեղութենէ կամ զկրճատութենէ, որպէս հաստատեն Սանքէզ, Պոնաչինա, Ասունքաչեա, Սալմանտիկեանք և Ասաբէզ, ընդդէմ Կաւարրոյի և Անրիկուէզի։

81. Ա՝ան անկանելոյ յանկանոնութիւն ըստ յանցանաց՝ խնդրի գործ արտաքին և մահուչափ, զի անկանոնութիւն է պատիժ ծանր՝ վասն ծանուցից մերոց սահմանեալ։ Ասասի զհետ գայ նախ՝ զի որ ինչ մարթ է ըստ հանգամանաց ինչ ազատ առնել՝ ի մահուչափ մերոց, ազատ է և յանկանոնութենէ։ Երկրորդ՝ զի որ ինչ հրամայի ընդ պատժով անկանոնութեան, պարտաւորէ՝ ի մահուչափ մերս։ Երրորդ՝ զի որովհետև խնդրի գործ արտաքին առ այս, վասն որոյ զանօրինութիւն՝ ի մտաւորանկանոնութենէ՝ իմանալ պարտ է զգործոյ՝ որ զանխաբար գործին։ Եւ չորրորդ՝ զի եթէ թերակատար իցէ գործն և ոչ լցացեալ, ազատ է յանկանոնութենէ։

82. Ա՝ան արտաքին և լցացեալ մերոց, զոր ամենեքին՝ ի ծածուկ գործեալ իցէ ուրուք, անկանի յանկանոնութիւն։ — Երբեակ կարծիք են զայսմանէ, այլ Ջէմարտագոյն այն է՝ զի անկանի. զի և մերք գաղտնածածուկք ընդ իշխանութեամբ եկեղեցւոյ են, որպէս հերետիկոսութիւն զանխոտ ըստ ասացելումն՝ի թիւ 53։

Ա ման որոց և ժողովն տրիդենտեան ՚ի տալն իշխանութիւն եպիսկոպոսաց արձակելոյ և տնօրինելոյ ՚ի բանադրանաց և յանկանոնութենէ, ՚ի համար ածէ և զմոլորութիւն և զմարդասպանութիւն ՚ի ճաճուկ գործեալ. և որպէս վանն սոցին, զնոյն և զայլոց զանխուսլ յանցանաց ՚ի խմանալ։ Իսկ թէ ուժ իցէ զայսոսիկ տնօրինել, տես ՚ի ստորև ՚ի գլ. ՝. 51. 52. 106. 107։

83. Ա ման անկանելոց յանկանոնութիւն խնդրի արդեօք գիտել զեկեղեցական օրէնս, որ արգելուն զգործն զայն։ — Անրակատն և հաւանականագոյն կարծիք հաստատեն զայն. զի անկանոնութիւն է իսկապէս պատիժ, վանն որոյ խնդրի գիտութիւն գէթ արգելական օրինացն։ Այս ցուցանի այս ՚ի վճռոյ Բենուվկենտեայ ԺԴ. ոլոմ ոչ պարտ համարի քահանայապետն արկանել ընդ անկանոնութեամբ զեկեղեցականս ոմանս անժուժկալս՝ որք անդիտանային զսահմանադրութիւն Իրիկեայ Հանայապետի։ Յորմէ նայն Ա ՚ւա, Ալմատիկեանք և այլք ձեռնարկեն և վանն մարդասպանութեան, զի որ անդիտանայէ զօրէնս ընդդէմ այնորիկ սահմանեալ՝ չանկանի յանկանոնութիւն. ոչ ըստ յանցանաց, զի խնդրի գիտութիւն առ այն. և ոչ ըստ Թերութեան, զի ըստ այսմ անկանին պաշտօնեայք եւեթ քննիչք և կատարիչք արդարութեան։ Նայց յոյժ հաւանականագոյն համարելի է անկանել նմա յայն, ոչ այնչափ ըստ յանցանաց կամ Թերութեան՝ որչափ ըստ անպատշաճութեան մատչելոյ անգութ քահանայի ՚ի պատարագել զգառն Աստուծոյ զամենահեզ։ Ա ման որոյ ժողովն տրիդենտեան ՚ի վերապահել զանկանոնութիւն մարդասպանութեան՝ ասէ. "Օ՚ի որ զընկերս իւր հնարիւ սպանանել, պարտ իսկ է մերժել զնա ՚ի սուրբ սեղանոյն"։

84. Նայ ՚ի գիտելոյ զի չեկեղեցական օրինաց և արգելեալ է յանցանքն, կարեւոր իցէ գիտել և զանկանոնութիւնն սահմանեալ յանցաւորին՝ վանն անկանելոյ յայն։ — Սուարէզ, Լայմանն, Լաքրուա, Վուբրունէ, Փանցիոյ, Սոթոյ, Ա՚ասգուէզ և այլք ոչ կարևոր համարին, իբր զի անկանոնութիւն ոչ առ ՚ի դեղ ինչ սահմանեալ է, այլ ՚ի պատիժ եւեթ և յանընդունակութիւն. վանն որոյ և շատ է սահմանել զայն օրինաց,

և յանցաւորին կամաւ և դիտումբեամբ գործել զյանցանսն : Իսկ Նաւարրոյ , Սիլուէոյ , Սանքէզ , Ռոնքալեա , Պոսկոյ , Վիննինքիոյ , Ռոտրիկուէց և այլք հաւասարապէս հաւանական կարծեօք ջհակառակն հաստատեն . վասն զի անկանոնութիւն է պատիժ անսուղոր , և չէ մարթ նախատեսանել զայն զէթ ընդ աղօտ որպէս զսուղորական պատիժս . և չէ համարելի կամել և կեղեցւոյ այնքան խստիւ պատուհասել զանդիտութիւն : Հաւանական համարի զայս և Նայրն Ռուարիզ :

85 . Պատեհակ օրինակաւ է զերծանել յանկանոնութենէ : Նախ՝ի դադարել պատճառին , յորժամ անկանոնութիւնն վասն Թերութեան է . որպէս անկանոնութիւն վասն տգիտութեան՝ բառնի ուսմամբ . անկանոնութիւն վասն անուանարկութեան եթէ ըստ համբաւոյ իցէ , բառնի ուղղութեամբ . եթէ ըստ գործոյ իմիք , բառնի տեղափոխութեամբ . իսկ եթէ վճռով դատաւորի , խնդրի տնօրինումն առ այն : Նրկրորդ՝ բառնի մկրտութեամբ , եթէ իցէ վասն յանցանաց . վասն որոյ եթէ ուրուք յառաջ քան զմկրտութիւն գործեալ իցէ մարդասպանութիւն , ՚ի մկրտիլ նորա՝ բառնի ՚ի նմանէ անկանոնութիւն : Նրրորդ՝ տնօրինմամբ Պապին : Չորրորդ՝ կրօնաւորական ուխտիւ : Իսկ թէ ՚ի քրիստոնէութիւն իցէ եպիսկոպոսաց և կրօնաւորաց տնօրինել զանկանոնութիւն , տես՛ ՚ի ստորև գլ . Ի . 51 . 106 :

86 . Ո՛ւմ ասն տնօրինման դիտելի է նախ՝ զի տնօրինումն Պապին անպատճառ՝ թէպէտ և վաւեր է , այլ ըստ ոչ օրինի . իսկ այլոցն և անվաւեր : Նրկրորդ՝ զի որ յայլևայլ ՚ի համատեսակ անկանոնութիւնս իցէ անկեալ , շատ է ասել յաղերսագրին բազում անգամ անկեալ ՚ի նոյն : Նրրորդ՝ զի եթէ առաջնորդ , որոյ իցէ իշխանութիւն տնօրինելոյ , տացէ դիտումբեամբ եկեղեցական ժառանգութիւն ինչ անկելումն յանկանոնութիւն՝ համարի տնօրինել զայն :

87 . Պապին ևեթ է տնօրինել զանկանոնութիւն Թերութեան , և կամ որ ՚ի նմանէ ունիցի արտունութիւն տնօրինելոյ : Անկանոնութիւն ըստ ծննդեան բառնի կրօնաւորական ուխտիւ ՚ի կրօնս ընկալեալս ՚ի սրբոյ գահէն , այլ ըստ ընդունելութեան ևեթ սրբոյ կարգի՝ և ոչ ըստ ամբառնալոյ յառաջնորդութիւն . սա-

կայն յընդհանուր կամ՝ ի գաւառական ժողովս կարէն մեծաւորք տնօրինել և զայն։ Ընդ առաքնորդութեամբ ոչ է իմանալ և զեպիսկոպոսութիւն. և ոչ այլ ևս անկանոնութիւնք բառնին կրօնաւորական ուխտիւ։

ՅՕԴՈՒԱԾ Թ.

ԱՆԿԱՆՈՆՈՒԹԻՒՆՔ ԸՍՏ ՑԱՆՑԱՆԱՑ

88. Ի թերութենէ մկրտութեան։
89. Ի բռնաբարելոյ զբանագրանս։
90. Ի պաշտելոյ յայտնապէս զպաշտօն սրբոյ կարգի։
91. Ձընդունելոյ ըստ ոչ օրինի զկարգս։
92. Ցաճիր եղեռանէ։
93. Ի մարդասպանութենէ։
94–96. Վասն կամաւոր մարդասպանութեան։
97, 98. Վասն պատուիրողաց և խրատատուաց։
99. Վասն գործակցաց։
100. Վասն հաւանողաց ընդ այն։
101. Վասն ոչ խափանողաց։
102–105. Վասն պատահական մարդասպանութեան։
106. Որ՝ ի պահպանութիւն անձին սպանանէ զոք։
107. Որ՝ ի պահ ընչից իւրոց սպանանէ զոք։
108. Որ՝ ի կռիւն սպանանէ զոք։
109. 110. Որ խեղէ զոք։
111. Ջանօրինմանէ այսոցիկ։

88. Ընկանոնութիւն յառաջ գայ նախ՝ ի մկրտութենէ, եթէ որ՝ ի հերետիկոսէ ընկալեալ իցէ զայն. այլ զայս իմա զչափահասակաց, զի վասն տղայոց յամին 1716 զհակառակն յայտ արար ժողովն ասանդասպահ տրիդենտեան սահմանադրութեամբ։ Ընկանոն են և որդիք հերետիկոսաց. այլ՝ ի գալ ծնողացն՝ ի հաւատս՝ բառնի անկանոնութիւն նոցա, որպէս նոյն ժողով յայտ արար։ Ընկանոն է և որ յապաշէ զմկրտութիւն մինչև՝ ի վտանգ մահու. և որ զիտութեամբ կրկին ընդունի զմկրտութիւն, և յայնժամ մկրտօղն ևս անկանի յանկանոնութիւն, և ջահակալ ևս նորին. բայց միայն ազատ յանկանոնութենէ առնեն զնա աստուածաբանք, եթէ առ երկիւղի սպասաւորեսցէ. այլ ոչ ոք ազատ առնէ զնա առ տգիտութեան, որ իցէ մեղադրելի։

89. Երկրորդ՝ յառաջ գայ՝ ի բռնաբարելոյ զբանագրանս. այսինքն որ ընդ բանագրանօք պաշտիցէ հան-

դիտապէս զսուրբ կարգս, որպէս սարկաւագ՝ որ շապիկ և ուրար զանձամբ կարդայ զաւետարան, կամ քահանայ՝ որ՝ի հասարակաց ժամերգութեան յառաջ քան զերեսաց աղօթից տայ խաղաղութիւն։ Եւ եթէ ընդ կրկին բանադրանօք իցէ, անկանի՝ի միակ անկանոնութիւն համաձօր երկուց, զոր պարտ է բացատրել յաղերսանքին՝ի խնդրել զտնօրինումն։ Այլ աղատ է յանկանոնութենէ աստի որ ընդ փոքր նզովիւք իցէ, և որ ընդ մեծաւ՝ այլ զփոքր աստիճանս պաշտեսցէ, թէպէտ և հանդիսապէս։ Աղատ է և որ քարոզչին, և որ՝ի կիր արկանէ զներաւասութիւն, որպէս՝ի բանադրել, ՝ի տալ հրամանն ընդունելոյ զխոստովանութիւնս, կամ պսակ օրհնելոյ, ՝ի տալ զեկեղեցական ժառանգութիւնս, ՝ի տնօրինել զուխտս և այլն։ Աղատ է և որ պատարագչն յեկեղեցի պղծեալ, որ չէ իցէ խափանեալ յաստուածային պաշտամանց։ Նոյն ընդ հակառակն եպիսկոպոս կամ քահանայ, որ տայ պատարագել բանադրելոյն, անկանի յանկանոնութիւն։

90. Երրորդ՝ յառաջ գայ՝ի պաշտելոյ զպաշտօն սրբոյ կարգի, զոր չիցէ ուրուք ընկալեալ. որպէս եթէ դպիր փոքր աստիճանաւոր կարդայցէ ուրարաւ զաւետարան, կամ կատարեսցէ զմկրտութիւն առանց հարկի։

91. Չորրորդ՝ յառաջ գայ յօրինադանց ձեռնադրութենէ. վասն որոյ անկանոն է ձեռնադրեալն՝ի բարձրանալ կամ՝ի հերձուածող կամ յարդելեալ և կամ՝ի սիմոնական եպիսկոպոսէ. զի կանոնք տնօրինումն սահմանեն այսպիսւոյ ձեռնադրութեան։ Անկանոն է և որ՝ի բանադրանս գոլով կամ արգելեալ՝ ընդունիցի զսուրբ կարգս, կամ ընդունիցի զայնս յայլմէ եպիսկոպոսէ՝ առանց հրամանագրի եպիսկոպոսին նորոյ, կամ ոչ կարգաւ ընդունիցի, կամ յառաջ քան զսահմանեալ տիս։ Զօրութենէ կոչին յաստուածաբանից այս ամենայն ձեռնադրութիւնք. և անկանոնութիւն, զոր՝ի վերայ ածեն, համարին մանաւանդ արգել չընդունելոյ զբարձրագոյն կարգ։ Զօրութենի է և ձեռնադրութիւն, զոր ընդունի ոք յետ պսակի առանց հաւանութեան հարսինն, թէպէտ և չիցէ լրացեալ ամուսնութիւնն։

92. Հինգերորդ՝ յառաջ գայ՝ի յայտնի եղեռանէ, որ ածէ անուանարկութիւն. որպիսի է չնութիւն, առ

ևանկուԹիւն, մծղնեուԹիւն, սաեղծմնուԹիւն ՚ի դաստատանի, հերետիկոսուԹիւն, սիմոնականուԹիւն և այլն։ Այսո անկանելոյ յայս անկանոնուԹիւն՝ իշխողի ոչ յայտնի իցեն յանցանքն ըստ գործոյ կամ ըստ իրաւանց. ըստ գործոյ՝ ոչ իցէ մարթ պատրուակել զայն, վասն որոյ պարտ է գիԹ տասանց ումանց գիտել զայն. իսկ ըստ իրաւանց՝ ոչ վճռեալ իցէ կամ յայտ առնել ՚ի դատաւորէ, և կամ խոստովանեալ ՚ի յանցաւորէն։ Այս անկանոնուԹիւն բառնի ՚ի քաց մկրտուԹեամբ, կամ յայտնի ուղղուԹեամբ գիԹ զերեամ մի. իսկ եԹէ ՚ի վճռոյ դատաւորին գոյ յառաջ, օրէն է նմա այլով վճռով կամ յայտարարուԹեամբ հատուցանել յանցաւորին զբարեհամբաւուԹիւն։

93. Ո՞վ եղեր ոք յառաջ գոյ ՚ի մարդասպանուԹենէ կամ՚ի խնդրելոյ զոք յանիրաւի։ Այլ պարտ է մարդասպանուԹեանն գոլ կամաւոր, այս ինքն ուղղակի կամ անուղղակի մերձաւոր առիԹ մահուան ուրուք. զոր օրինակ ուղղակի՝ տալով դեղ մահու, իսկ անուղղակի՝ յորժամ տուեալն պատճառ չիցէ մերձաւոր, այլ նախատեսանելով տուողին զՀետևանսն՝ չարգելուցու զայն։ Այս որ ինչ զսպանուԹենէ ասացաք, զնոյն է իմանալ և զխնդրելոյ զոք։

94. Ո՞վ կամաւոր մարդասպանուԹենէ չիք երկբայել, զի ՚ի վերայ ածէ զանկանոնուԹիւն ըստ սահմանադրուԹեան տրիդենտեան ժողովոյ։

95. ԱյԹէ նախ քան զմեռանել հարուածելոյն զըղջասցի հարկանօղն, անկանի՞ յանկանոնուԹիւն։—Ըստ ՀՀմարտագոյն կարծեաց անկանի, որպէս հաստատեն Սանքեզ և Այլա ընդդէմ Սալմատիկեանց. զի քանզի պատճառ մահու եղեալ կամաւորապէս, ներգործէ հարկաւ. վասն որոյ յետ առլոյ զդեղ մահու, ոչ ևս ՚ի կարի տուողին է խափանել զմահ դեղելոյն։ Այլոյն իրի Տայրն Սուարէզ ոչ ազատ կացուցանէ յանկանոնուԹենէ և զպատուիրող մահուն, եԹէ նահանջ պատուիրանին ոչ ժամանեսցէ խափանել զպատուիրանն։

96. Որ կարեվէր զոք հարկանիցէ, բայց այլ ոք ըզհարուածեալն սպանանիցէ, անկանի՞ առաջինն յանկանոնուԹիւն։—Այսմանէ, Պոնաչինա, Էլիա, Վոնին, Ծոլինա և այլք ազատ կացուցանեն զնա յանկա-

նոնութենէ. զի Թէպէտ և մահացու իցէ հարուածն, այլ մահ՝ ի ձեռն այլոց հասանել նմա ստուգապէս. և զի օրինաք ոչ ինչ զայսմանէ ասեն, ապա ազատ է առաջինն հարկանօղն: Սակայն այս ոչ ինչ զօրէ, ուր ստոյգ իցէ մահ առաջնոյ հարուածոյն, և երկրորդն արագեսցէ և եթ զայն:

97. Ընկանի յանկանոնութիւն և որ պատուէրն տայ կամ խրատ. այլ եթէ մարդասպանութիւնն յայլմէ պատճառէ գոյ յարդիւնս, ազատ են նոքա յանկանոնութենէ: Իսկ յերկբայս թէ պատուէրն կամ խրատ լեալ իցէ պատճառ սպանութեանն թէ ոչ, բազում աստուածաբանք ոչ ազատ առնեն յանկանոնութենէ. զի ցորչափ չիցէ ցուցեալ հակառակն, օրինացն են իրաւունք. և կանոնք զապահովագոյնն սահմանեն ունել՝ ի մարդասպանութեան ըստ ասացելումն՝ ի վեր անդր, յառաւելագոյն զգուշութիւն մարդասպանից. զնոյն է ասել և զպատուիրողայ իսկ և զխրատտուացդ: Սակայն Տիանա, Սիղոբեր և Թոամպուրինի համարին խօսել կանոնացդ զայնցանէ, որ ստուգիւ գտանին մարդասպանք պատուիրանաւ կամ խրատու, վասն որոյ և ազատ առնեն զերկբայելիս. և սուրբն Ղևինոս չիշխէ անհաւանելի համարել զկարծիս զայս:

98. Իսկ եթէ յառաջ քան զկատարումն մարդասպանութեանն յետս նահանջեալ իցէ պատուիրողին կամ խրատտուն զՀրաման կամ զխրատ իւր, Թէպէտ և Ղաւարդոյ, Պոնաչինա և Ղոլիոյ գտատպարտեն զնոսա յանկանոնութիւն վասն ազդելոյ միւտ այնոցիկ՝ ի սպանութիւնն, սակայն Ռաբէզ, Սիլուէոյ, Ղիլա, Սալաս և այլք ոմանք ազատ կացուցանեն. զի որպէս պատուիրանաւն կամ խրատու ազդեն բարոյապէս՝ ի գործն, նոյնպէս և նահանջելովն զայնս՝ բառնան բարոյապէս զազդեցութիւնն, և համարի յայնժամ մարդասպանութիւնն այն չարութեան կատարողին: Ընդ այս է զի նախ քան զկատարումն մարդասպանութեանն հաւասար իցէ առ մարդասպանն նահանջ պատուիրանին կամ խրատու, և զի խրատտուին չիցէ սադրեալ հնարս և զեղանակ կատարմանն. զի յայնժամ հաւանականագոյնս՝ ի վերայ ածէ զանկանոնութիւն. Թէպէտ և այսու ամենայնիւ զՀակառակն հաստատէ Ղայրն Ռաւա-

ըհղ, և չէ իսկ անհաւանելի կարծիք նորա ըստ առաջելոյն՝ ի գլ. ժ. 48։

99. Ընկանին յանկանոնութիւն և ամենայն գործակիցք, որ օգնեն՝ ի վաղագոյն՝ ի յանդգնագոյն և յապահովագոյն կատարումն սպանութեանն։ Որպէս որք փութացուցանեն զսպանողն՝ դրականապէս տալով պատճառս առժամայն սպանութեանն, թէպէտ և ինքեանք իսկ ապա գործելոց իցէ նորա զայն։ Որպէս որք խրախուսեն զնրեարս՝ ի սպանութիւն, թէպէտ և մի ոք գործիցէ զայն։ Որպէս որք մղեն մարտ անիրաւ, յանկանել ուրուք՝ ի հակառակամարտից՝ ամենեքին իսկ համարին սպանողք նորին, թէպէտ և գիտիցէ ոք ատելի՝ ոչ յիւրմէ ձնա սպանեալ, և թէ չէցէ իսկ իւր զէն՝ ի գործ արկեալ։ Որպէս որք զէն կամ դրամս տան՝ ի սպանութիւն կամ՝ ի մարտ անիրաւ։ Որպէս զրպարտիչք, սուտ վկայք և անիրաւ դատաւորք։ Որպէս և որ բանիւ կամ՝ ի գնին կալով յաւելցէ զյանդգնութիւն սպանողին։

100. Որ հաւանի ընդ սպանութիւն՝ ի վրէժխնդրութիւն իւր արարեալ, անկանի՞ յանկանոնութիւն։ — Անրակատ և ձգմարտագոյն կարծիք ազատ կացուցանեն զնա, զի ոչ ուրեք սահմանեն զայն օրինք։ Այսպէսքն հաւանութիւն ընդ եղեալն հաւասար է ըստ մեզաց ընդ հրամանատարութեան, այլ ոչ և ըստ պատժոյ՝ եթէ չէցէ սահմանեալ յօրինացդ, որպէս սահմանեալն է վասն հաւանողաց ընդ հարուածս եկեղեցականի։

101. Որ կարծէն իցէ խափանել զմարդասպանութիւն և ոչ խափանէ մեզադրելի թոյլտուութեամբ, անկանի՞ յանկանոնութիւն։ — Հաւաստի է զի եթէ յեղբայրասիրութենէ եւեթ պարտիցի խափանել և ոչ խափանէ, թէպէտ և առ առելութեան վերջանայցէ՝ ի խափանելոյ, ոչ անկանի։ Այնպէս այն է՝ եթէ յարդարութենէ պարտիցի, որպէս ըստ պարտուց պաշտամանն կամ ըստ դաշանց, զոր օրինակ բժիշկք՝ որ վասն այն ընդունին Թոշակ, փաստաբանք՝ որոց պարտք են պաշտպանել զամբաստանեալն, ուղեպահք և այլն։ Ոմանք ալեհ, Վասգուեզ, Թուրնելլի, Տիանա, և այլք բազումք ազատ կացուցանեն զնա յանկանոնութենէ, վասն բացատրելոյ եւեթ ազդելոյ նորա՝ ի սպանութիւնն։ Այլ

հանրագոյն կարծիք ոչ ազատ առնեն զնա. զի որ պարտի ըստ արդարութեան և կարէ պաշտպանել զոք, և ոչ պաշտպանէ, զկնի բարոյապէս դատանի սպանող նորին: Սակայն և առաջնոցն կարծիք հաւանականք են վասն հանրական կանոնին, զի մարդասպանութեան պատուիրողք, խրատտուք և գործակիցք ևեթ անկանին ստուգիւ յանկանոնութիւն: Դարձեալ և Ծուրնեւլի և Քոսար ազատ կացուցանեն յանկանոնութենէ զՀայր՝ որ անհոգութեամբ թողու հեզձամղձուկ մեռանել տըղայոյ յորրանս, հաստատութիւն ածեալ՝ի կանոնաց՝ որ զայնոսիկ ևեթ դատապարտեն յանկանոնութիւն՝ որք կամաւ չխափանեն զհեզձամահ լինել որդւոյ իւրեանց յորրանս:

102. Ի պատահական մարդասպանութենէ անկանի յանկանոնութիւն, որ՝ի գործելն ինչ՝ նախատեսանէ զվտանգ մահու ուրուք, և մեղադրելի անհոգութեամբ չխափանէ զայն: Պսեմ իսկ մեղադրելի անհոգութեամբ. զի առ անկանոնութիւն ըստ յանցանաց պահանջին մահու չափ մեղք, որպէս ուսուցանեն աստուածաբանք առ հասարակ:

103. Իսկ որ օրինաւոր ինչ գործէ բաւական զգուշութեամբ, եթէ պատահեսցէ անտի մահ ումեք՝ չանկանի յանկանոնութիւն: Այս բաւական համարի զգուշութիւն, որով վարին խոհականք ըստ հանգամանաց գործոյն: Իսկ եթէ ոք վերջանայցէ՛ի զգուշութենէ աստի մահուչափ մեղադրելի անհոգութեամբ, չէ ազատ յանկանոնութենէ ըստ ասացեալսն՛ի Թիւ 81: Այն որոյ ազատ է յանկանոնութենէ վարժասէտ՝ որ չափով հարկանէ զաշակերտ իւր, և հայր զորդի իւր, եթէ երբեք հասանիցէ անտի մահ: Պզատ է հնծեալ, որ՛ի ձիաւարել ձի ամենի՝ սմբակակոխ ըստ դիպուածոյ առնասցէ զմանուկ: Պզատ է՝ որ գազան վայրենի պահիցէ զգուշութեամբ, և յեզակարծում վերծեալ գազանին՝ սպանցէ զոք: Պզատ է, որ՛ի յարդարել զտանիս՝ ազդ առնիցէ անցաւորաց զգուշանալ, և սակայն կզմիտ՛ի գլուխ ուրուք անկեալ՝ սպանցէ զնա: Պզատ է՝ որ առ սիրոյ տայցէ ինչ հիւանդի՛ի ձաշակ, և մահառիթ լիցի նմա կերակուրն այն կամ ըմպելի, և կամ՛ի յարդարել ուրուք զմահիճս հիւանդին կամ՛ի դարձուցանել զնա

'ի մահՃի, անշնչանայէ նա յանկարծ։ Պզատ է և քահանայ՝ որ տայ հատանել զմի յանդամոց ուրուք ըստ սահմանելոց բժշկի։ Այրն Ռոնչինա ազատ համարի զնա, եթէ օգնեսցէ իսկ վիրաբուժին՝ի հատանել զայն. և Պաւարրոյ և Ռովար յաւելուն, զոր և Պալմատիկեանք հաւանական համարին, եթէ յօգնելն կամիցի ևս ընդ կանխել մահու հիւանդին՝ի հատմանէ անտի. զի թէպէտ և մեղանչէ՝ի նեղքուստ մահուչափ, այլ չգործէ արտաքուստ յայտնի ինչ և ծանր մեղս։ Պզատ է և բժիշկ, եթէ յանկարծ լինի հիւանդին մեռանել՝ի դեղոյ՝ զոր տայ նմա առ՝ի կեանս։ Ընդ նոյն իմա և զեկեղեցականէ և զկրօնաւորէ, եթէ բարեմտութեամբ յօդուտ հիւանդին մատուսցեն զդեղն. և եթէ խարել իսկ և հատանել հարկ լինի նոցա առ՝ի չգոյէ վիրաբուժի, և առ կսկիծ այրմանն կամ հատման պատահեսցէ հիւանդին մեռանել, ազատ առնեն զնոսա բարոյականք յանկանոնութենէ, և՝ի մեղաց իսկ։ Եթէ եկեղեցական փոքր աստիճանաւոր կամ ժառանգաւոր, առանց հարկի իսկ ձեռնարկիցէ՝ի խարել և՝ի հատանել, ոչ անկանի յանկանոնութիւն ըստ Ճշմարտագոյն կարծեաց. քանզի կանոնք զսուրբ աստիճանաւորաց և եթէ առնեն յիշատակ։

104. Եթէ ոք յանցանս ինչ՝ ոչ մահաբերս այլոց՝ բաւական զգուշութեամբ գործիցէ, զոր օրինակ պատուիրելով ումեք գողութիւն, և նա՝ի գողանալն սպանցի ըստ պատահման, մեղանչել մեղանչէ՝ այլ ոչ իբրև սպանող. զի չէ պատճառ մահու նորա, ոչ ուղղակի՝ զի չկամի զայն, և ոչ անուղղակի՝ զի ոչ նախատեսանէ։ Պանզի կանոնք, ուր զպատահական մարդասպանութենէն խօսին, իմանան զայն՝ որ ուղղակի կամ անուղղակի կամաւորութեամբ գործիցի։

105. Իսկ եթէ ոք առնիցէ ինչ ընդդէմ օրինաց վըտանգաւոր առ՝ի մահ, և պատահեսցէ մահ, անկանի՞ նա յանկանոնութիւն։ — Սուարէզ, Պաւարրոյ, Սոլինա, Ռոնչինա, Էիլա և այլք համարին անկանել նմա. բայց այլք բազումք, ընդ որս Պասթրոփալ, Ծաուրնելլի. Լայման, Սփորեր, Ծամպուրինի, Վկեր, Պոնաչինա և Պալմատիկեանք զհակառակն հաւանականագոյն հատատատեն՝ եթէ գործն ինքնին չիցէ սուղ-

քաթար մահառիթ, և գործօնն վկարևոր զգուշութիւն ի կիր արկանիցէ. զի յայնժամ ոչ ևս կամաւոր է մարդասպանութիւնն, ոչ ըստ ինքեան, և ոչ ի պատճառն։ Այլ միաբանին ընդ առաջնոյն, եթէ գործն ինքնին այնպէս իցէ մահաբեր՝ զի գժուարին իցէ առանց մահու յաջողել, որպէս եթէ ոք զայրեցագործ գնտոյ հուր հարկանիցէ, որոյ ի ձայթելն՝ գժուարին յոյժ է թէ չպատահիցէ ումեք մահ։

106. Այլ անկանի յանկանոնութիւն և որ սպանանէ զոք ի պաշտպանութիւն անձին ըստ օրինի։ Այս թէպէտ ժողովն տրիդենտեան կարևոր համարի զանօրինութիւն և վասն գործողաց ըստ դիպուածոյ սպանութիւն, այլ ըստ յայտարարութեան ժողովոյն՝ որ սահմանադրութեանց նորա աւանդապահն է և մեկնիչ՝ պարտ է իմանալ զայն, եթէ ոք անցանիցէ ըստ օրէնս ի պաշտպանելն անձին՝ ոչ ի չափու պաշտպանութեանն կալով։ Դարձեալ Սուարէզ, Մոնքաձեա, Լեսիոյ, Պոնաչինա և այլք ազատ կացուցանեն յանկանոնութենէ որ գյարձակեալն ի վերայ անմեղին սպանանիցէ. զի առանկանոնութիւն պահանջի մեղք մահուչափ։ Այլ որ թէնամանօք և հարուածովք գրգռէ զոք յարձակիլ ի վերայ իւր, և ապա ի պաշտպանութիւն անձին սպանանիցէ զնա, անկանի յանկանոնութիւն՝ գործելով ինչ մերձաւորապէս վտանգաւոր առ ի մահ, որպէս հաւանականաբար հաստատեն Մոնքաձեա, Սուարէզ, Ալմաինիկեանք և այլք։ Օնոյն իմա և զհամանուագ, որ դնէ զանձն ի վտանգ՝ կասկածելով զի վերայ հասանելոյ առն հարձին, եթէ ի հասանել նորա սպանանիցէ զնա ի պաշտպանութիւն անձին, և կամ նա ինքն զկինն իւր սպանանիցէ։

107. Որ սպանանիցէ զոք ի պահ ազատութեան կամ պատուոյ կամ պարկեշտութեան անձին և կամ ընչից իւրոց, անկանի յանկանոնութիւն։ — Հանրագոյն և հաւանականագոյն կարծիք ազատ կացուցանեն զնա յանկանոնութենէ ըստ ասացելոցս ի գլ. Ը. 13. 14։ Օ՛ի որպէս ցուցաք անդ, այնպիսին ոչ մեղանչէ. իսկ առանց մեղայ չիւր անկանոնութիւն։ Այս կանոնք ան-բաւական առնեն զսպանողն ի պաշտպանութիւն կենաց և ընչից իւրոց. յայն եթէ մեծագինք իցեն ինչքն, և պաշտպանութիւնն ըստ չափոյ օրինի։

108. Ո՞ սպանումքիւն գործեալ՝ի կապելն պարտ ի-ցէ համարել պատահական: — Արեպէտ և Սալմատիկեանք ընդ այլս համարին զայն պատահական, այլ հաւանականագոյնս այլք ջհակառակն հաստատեն. զի որ՝ի կապելն սպանանէ զոք, կամաւորութեամբ սպանանէ. և Թէպէտ շարժեալ՝ի յանկարծական կրից, այլ գիտէ զոր գործէն. ուր պատահականն սպանումքիւն առանց կամաւորութեան և առանց նախատեսութեան է:

109. Ընկանի յանկանոնութիւն և որ խեղէն զոք. այլ զինչ պարտ իցէ իմանալ զխեղելն: — Հանրական և հաւանականագոյն իմաստ նորին է զրկումն՝ի միոջէ յանդամոց, որոց է գործ առանձին. որպէս ականտեսանել, ձեռին՝ գործել, ոտին՝ գնալ, լեզուի՝ խօսել, և այլն. վասն որոյ այլ ամենայն մասունք մարմնոյ՝ որ՝ի զարդ են՝ չհամարին անդամք, որպէս ատամունք, հերք, խազձախուզ ունկան (զի և առանց նորին լսէ ունկն), ունչ, և ծր և իցէ՝ի մատանոյ:

110. Որ զերկուորիս ուրուք խզիցէ, անկանի յանկանոնութիւն: — Հաւանականագոյնս հաստատեն Ռոմքալեա, Վասքոսիալ, Սալմատիկեանք և Տիանա, եթէ չիցեն պատճառք իրաւացիք հատանելոյ զայնս. զի և այնոցիկ է գործ յատուկ, այսինքն պատրաստել սերմն՝ի ծննդագործութիւն: Համանապէս անկանի յանկանոնութիւն որ զմի իսկ՝ի տեառնց կնոջ հատանիցէ, կամ զկին ձեռին ուրուք: Այլ որ զգօսացեալ անդամ ուրուք հատանիցէ, ազատ է յանկանոնութենէ: Յանկանոնութեանց աստի խեղութեան, եթէ չիցեն հրապարակեալ, օրէն է եպիսկոպոսին տնօրինել. զի՝ի կամաւոր մարդասպանութենէն և եթէ չկարէ նա տնօրինել զոք:

111. Ի՛նչ յաղագս տնօրինման անկանոնութեանց տես՝ի յաջորդ գլուխ գրոցս, թիւ 51 և 106:

ՑՕԴՈՒԱԾ Ժ

ՑՍՂԱԳՍ ԱՆԿԱՆՈՆՈՒԹԵՆՆ Ի ԹԵՐՈՒԹԵՆՆ

112 · Թերուելիւն մտաց :
113 · Լուանոտք և այսահարք :
114 · Անուամունք :
115 · Նօրաստունկք :
116 · Թերուելիւն մարմնոյ · կոյրք :
117 · Խուլք :
118 · Համրք :
119 · Կաղք :
120 · Միսաձեռանիք :
121 · Ջերմնոտք :
122 · Այլանդակք :
123 · Բորոտք :
124 · Հրեշք :
125 · Նեղքինիք :
126–128 · Ըստ ոչ օրինի ծննեալք :
129 · Ի բացընկեցիկք :
130 · Թերահասակք :
131 · Կրկնամուսնիք :
132 · Որ ածէ կին այրի :
133 · Որ ածէ 'ի կին զխորձեալ :
134 · Որ ամուսնանայ ընդ նմա անվաւերապար :
135 · Կանամբէ՝ որ մտանէ առ կին իւր շնացեալ :
136 · Որ երկից ամուսնանայ անվաւերապար :
137 · Որ ամբաստանէ զկին իւր 'ի շնութիւն , և միանգամայն հատու-
ցանէ նմա զամուսնական պարտս :
138 · Ուխտեալ՝ որ ածէ կին :
139 · Ո՞րպէս բառնի անկանոնութիւն կրկնամուսնութեան :
140 · Զարահամբաւութիւն · Անաղտոք · Ծառայք :
141 · Կանամբիք :
142 · Օրէն ևս կանամբեայ կրօնաւորիլ առանց կրօնաւորելոյ և կնոջն :
143 · Առևնական պաշտօնեայք , զինուորք , և այլն :
144 · Օրինաւոր սպանութիւն :
145 , 146 · Դատաստան :
147 · Տնօրինմունք :

112 · 'Ախ' վասն թերութեան մտաց անկանոն էն կիմարքը առ հասարակ և ցնորեալքը , լուանոտք և այսահարքը : Այլ թէ թերութիւնքս այսոքիկ կեաց ձեռնադրութեան ուրուք 'ի վերայ հասանիցեն , 'ի դադարել նոցին՝ օրէն է նմա ըստ դատման Թեմական եպիսկոպոսի կեաց ընդերկար փորձոյ , այսինքն ընդ ամն ինչ զփորձ առեալ թժշկելոյ նորա 'ի թերութենէ անտի , պաշտել զպաշ-

տամունս սրբոյ կարգին: Իսկ չէ ձեռնադրելոց, եթէ պատճառք Թերութեան մնայուն լինեն՝ ի վնասել գործարանաց ինչ նոցա, չէ օրէն ձեռնադրել. զի դիւրին է նոցա վերստին անկանել՝ ի նոյն: Այլ եթէ՝ ի պատահական պատճառաց յառաջ եկեալ լցէ թերութիւն նոցա, որպէս՝ ի տենդէ, ՝ի հարուածոյ, կամ յառաջամանակեայ կրից ինչ, օրէն իսկ է ընդունել նոցա զկարգ:

113. Նոյն կանոն է և վասն լուանոտաց և այսահարաց. զի եթէ կանխէ ախտ նոցա քան զձեռնադրութիւն, անկանոնք են՝ ի սպառ: Այլ միայն եթէ յառաջ քան զհասանել նոցա յարբունս պատահէ այն, և անցանէ բոլորովին՝ ի հասանել նոցա յարբունս, օրէն է նոցա ընդունել զկարգ. զի Իպպոկրատ սովորական համարի զառողջանալ նոցա յարբունս: Իսկ եթէ յետ ժամանելոյ յարբունս, մանաւանդ յետ քահանայիցդ առնոյ հասակի պատահեսցէ այն, դժուարաբուժելի է: Նթէ ամ մի ազատ գտանիցի յախտէն կամ՝ի դիւէ, ըստ դատման եպիսկոպոսին օրէն է նմա պաշտել զընկալեալ կարգս: Հաւելուն Ծուարէզ, Նաւարրոյ, այսման, սուրբն Ընտոնինոս և այլք բազումք, զի եթէ միանգամ ևեթ յամենեան ըմբռնի ոք յախտէն առանց անկանելոյ յերկիր և փրփրալոյ, օրէն է նմա պատարագել առանձին՝ ընթերակայութեամբ ուրուք՝ ի քահանայից, որոյ չկոչէ լուծեալ զծամ:

114. Ի սատ գիտութեան մասին՝ վասն ընդունելոյ ընկերութիւն չէրոցա պարտ է գիտել զնոսա զդպրութիւն, այսինքն ընթեռնուլ և գրել: Ի սան փոքր աստիճանաց, գիտել զդրոց բարբառ: Ի սան կիսատարկաւագութեան և սարկաւագութեան, բայց՝ ի կարևոր արտաքին գիտութեանց՝ գիտել և զկարևորս պարտուց պաշտամանն կարգացն: Ի սան քահանայութեան, գիտել ուսուցանել զկարևորս փրկութեան հաւատոցելոյց և պաշտել նոցա զխորհուրդս: Իսկ վասն կրօնաւորաց՝ ի հայեցողական կեանս պարապելոյ, շատ է գիտել զքերականութիւն. առանց այնորիկ անկանոնք են ըստ աստուածային իրաւանց, և չկարէ տնօրինել զնոսա և ոչ Յուվենալիս Պարրապետան: Տես՝ ի յաւելուածն գ. 35. 36:

115. Նկանոնք են և չափահասակք նորակնութք.

այլ եթէ եպիսկոպոսն յետ ամաց պատշաճ համարեսցի տալ նոցա զսուրբ կարգ, կարէն ընդունել: Ա՛ոլետոյ համարի ինոսա յետ տասն ամաց զերծս յանկանոնութենէ:

116. Երկրորդ՝ վասն թերութեան մարմնոյ անկանոնք են կոյքք: Եթէ յետ քահանայութեանն ոք կուրացեալ լիցի, և կարէ անսխալ կատարել զնուիրհուրդն, օրէն է նմա առնուլ տնօրինութիւն՝ ի Պատկն, և պատարագել ընթերակայութեամբ ուրուք՝ ի քահանայից: Եթէ զմի յաչաց կորուսեալ լիցի, հանրական կարծիք և զնա համարին անկանոն, այլ դիւրաւ մարթի է նմա ընդունել տնօրինութիւն: Եթէ թերատես ոք լիցի, չէ օրէն նմա ընդունել զկարգ, այլ օրէն է առնուլ տնօրինութիւն առ՝ ի պաշտել զընկալեալսն, և պատարագել՝ անփոփոխ ունելով զընթերցուածս սրբոյ պատարագին: Իսկ որ բոլորովին կոյրն լիցի, ոչ տնօրինի նմա և ոչ խոստովանի հերետ առ՝ ի ժառանգութիւն եկեղեցական: Իսկ տկարն տեսութեամբ կամ շիլ, որում մարթ լիցի ակնոցաւ ընտրել զթերին, ոչ է անկանոն:

117. Անկանոն է և խուլ, որ չլսէ ամենևին զձայն ապաստաւորին. բայց եթէ յետ քահանայութեան խլացեալ լիցի, ներելի համարին նմա զայն Պոնտացինա, Նիամպուրինի, Վրոնչինա, Նաւարրոյ, Սալմատիկեանք և այլք: Իսկ ծանրալուրն ազատ է յանկանոնութենէ:

118. Անկանոն է և համրն, և որ չկարէ արտասանել զաժենայն վանկս. յաւելուն Սալմատիկեանք և զկակազոտս՝ որ կարի դժուարաւ կարիցեն բարբառել, և Հոլմանն զլիսատոդս՝ որ չկարիցեն նուաճել զլեզուս իւրեանց: Իսկ թլուատք և ատամնատք չեն անկանոն, եթէ չիցեն այնպիսիք՝ որ՝ ի ծաղր շարժիցեն:

119. Անկանոն է և կաղ, կամ միոտանի, կամ որ չկարիցէ գնալ՝ ի սուրբ սեղանն առանց ցոլոյ, այլինքն որ չկարիցէ կալ առ սուրբ սեղանովքն անյեղ կամ անեղեռուկ, որպէս յայտ առնեն մեկնիչքն կանոնին և բացայայտիքն: Այլ ազատ են յանկանոնութենէ աստի որոյ խեղաթիւր իցեն բարձք, կամ կաղայցեն և եթէ անկարօտք ցոլոյ: Այլ որ վայատատամբն իսկ գնայցէ, կարէ հրամանաւ եպիսկոպոսին պատարագել. շատ է միայնոյեաց չիցէ ինչ տգեղութիւն անհեթեթ:

120· Ընկանոն է և ձեռնատ, և որոյ բոյթ կամ ցուցամատն ևէթ, և կամ կէս իսկ բուէթոյ մատին պակասիցէ, կամ հաշմ իցեն ձեռք իւր և չկարիցեն ամբառնալ կամ բեհանել զՀացն: Իսկ եթէ յետ ձեռնադրութեան կորուսցէ զցուցամատն, կարէ այլովք մատամբքն վարել, և առ հարկի հաղորդել իսկ նոքիմբք: Ընկանոն է և որոյ երեքեան իսկ յետին մատունքն պակասեն, այլ ոչ՝ որոյ երկուք միայն, որպէս հաստատեն Հոլզման, Վայեթանոյ, Կաւարրոյ, Մուրնեւլի և այլք· յաւելու Մուրնեւլի, զի մարթ իցէ ընդունել տնօրինուածն վասն ցուցամատին Թերութեան:

121· Ընկանոն է և որ հանապազօրեայ տենդիւ կամ ցաւով դլխոյ ախտանայցէ, մինչև չկարել անսխալ պատարագել: Ընկանոն է և անդամալոյծ՝ որոյ դողայցեն ձեռք, և վտանգ իցէ սրբոյ արեանն հեղման· և որոյ հազ սաստիկ իցէ, վտանգաւոր՝ ի ձաշակել սուրբ գաւրինն· և որոյ այնպիսի տկարութիւն իցէ ստամքսի կամ հակակրութիւն գինւոյ, զի վտանգ իցէ նմա վերբերելոյ զայն· և այս՝ ի Պապէն իսկ անտնօրինելի է:

122· Ընկանոն է և որոյ մարմին կամ մասն ինչ նորին այլանդակ իցէ կամ նողկալի· որպէս այնչատն, կամ կորաքիթ՝ ի վայր կամ՝ ի վեր: Այլ զկնի զննելոյ ականջ այլանդակութիւն մարթ է բառնալ ապակեայ ականջ, և զունկան՝ ծածկելով զայն ընդ հերովք, որպէս հաւանականաբար հաստատեն աստուածաբանք:

123· Ընկանոն են և բորոտք վասն նողկանս տեսողաց ածելոյ, վասն որոյ չէ օրէն նոցա յայտնապէս պատարագել: Յայնպէս և որոց ախտ գաղղիական՝ ի յայտ գայցէ, և կամ յերեսս նոցա կամ՝ ի շրթունս իցեն նողկալի արատք կամ տգեղութիւն:

124· Ընկանոն են և սատակողունք, գաճաճք, ըստուարագլուխք, և որ չկարեն բազուկ՝ ի վեր ամբառնալ· և խափշիկք իսկ անկանոն ուրեք ուրեք համարին: Օ արուհագայ սահն Մոլետոյ, Ալբոպար և այլք ընդդեմ՝ Ռոնչինայ, զի եթէ անյայտ իցէ Թերութիւնն, և առնի անդամն քան զկանացին գերազօր, ոչ՝ ի վերոյ ածէ անկանոնութիւն: Այս ամենայն Թերութիւնք եթէ յետ ձեռնադրութեան՝ ի վերոյ հասանեն, ոչ արդելուն զձեռնադրեալն՝ ի պաշտելոյ զայնս՝ ի պաշտա-

մանց՝ զոր կարէ. որպէս քահանայ, որոյ կացեալ իցէն աչք, կարող է ընդունել զխոստովանութիւն և այլն:

125. Երբքինի, զոր այլոց՝ ի մանկութեան նորա վասն ախտի կամ ոչ և է պատճառաւ իցէ մաքեալ, չէ անկանոն. այլ եթէ անձամբ զանձն արարեալ իցէ ներքինի, կամ այլոց՝ վասն մոլենախանձ ողջախոհութեան տուեալ իցէ առնել, անկանոն է: Ամանք՝ ի բարեպատկանաց հաւանական համարին չանկանել յանկանոնութիւն այնմ, որ վասն պահելոյ զնորբաձայնութիւն՝ հատցէ կամ տացէ հատանել զերկուորիս իւր. իբր զի կանոնք բոլոր իսկ առնի անդամոյ խզելոյ սահմանեն զանկանոնութիւն:

126. Երկրորդ ըստ Թերութեան ծննդոյ անկանոնք են ամենայն որդիք՝ ըստ ոչ օրինի ծնեալք, թէպէտ և չիցէ Թերութիւն ծննդոյն՝ ի յայտ եկեալ: Այլ մարթ է օրինաւորս առնել զնոսա ծնողացն պատկառ, եթէ միայն չիցեն պատնէշորդիք, այսինքն ծնեալք՝ ի ժամանակի՝ յորում էր մարթ ծնողաց նոցա ամուսնանալ ընդ իրեարս, որպէս եթէ մի՝ ի նոցանէ կապեալ էր յայնժամ ամուսնութեամբ ընդ այլում: Այսան օրինաւորս առնելոյ զնոսա շատ է, զի՝ ի ժամանակի ծնելդեան նոցա պատկերին ծնօղքն: Այս այսպէս հաստատեն Յանքէզ, Վոնցիոյ, Պոնաչինա, Յալմատիկեանք և այլք բազումք ընդդէմ Սուարէզի և Թուրնելեայ. զի կանոնք ասեն՝ Ընդէ այր՝ ի էնդիանոնէան կնոջն գիտեցէ զայլ էնն, և որդի՝ ի նմանէ ընկալցէ. արդ ընդոնել ակնարկէ՝ ի ծնուցդս և ոչ՝ ի յղութիւն: Այսոյն կարծիս և Կենեդիկտոս ԺԴ. համարի հատատակաց՝ ի միում՝ ի Ջատից իւրոց:

127. Եթէ որդի՝ ըստ ոչ օրինի ծնեալ՝ ընկալեալ իցէ սուրբ կարգ յառաջ քան զամուսնութիւն ծնողացն իւրոց չնացելոց, յամուսնանալ նոցա ընդ միմեանս՝ օրէն է նմա պաշտել զկարգ իւր առանց անօրինման, որպէս հաստատեն Յալմատիկեանք. և վասն օրինաւորութեան նորա՝ բաւական է պատկ չև իսկ լցացեալ: Որդիք ծնեալք յանվաւեր ամուսնութենէ, որոյ անվաւերութիւն իցէ անյայտ, և դէպ՝ ի միջէ՝ ի ծնողացն վաւեր համարեալ իցէ, համարին օրինաւորք. այլ եթէ երկոցունց ևս ծնողացն գիտակ լեալ իցէ ան-

վաւերութեան պահակին, չհամարին օրինաւորք։ Արդիք ծնեալք յամուսնութենէ աղջկից ծնողաց պահակելոց առանց անօրինման և առանց հրատարակման, թէպէտ և անպիտանութեամբ և անխոհեմ մտօք, թէպէտ և առանց ժողովրդապետի և վկայից, չհամարին օրինաւորք։

128. Անկանոնութիւն ըստ ոչ օրինի ծնելոց՝ բառնի կրօնաւորական ուխտիս, որպէս ասացաք ի Թիւն 85. և դարձեալ անօրինմամբ Պապին, որ միայն կարող է անօրինել զնոսա յընդունակութիւն ամենայնի, որպէս հաստատեն աստուածաբանք առհասարակ։ Իսկ որ ինչ յայսմ մասին իշխանութիւն իցէ եպիսկոպոսաց և կարգապետաց, տես ի գլ. Ի։

129. Անկումն ի քաց ընկերութիւք, այսինքն որոց անծանօթք իցեն ծնօղք, համարիցին անկանոնք։ — Նաւզուամբ յաստուածաբանից անկանոնս զնոսա համարին, իբր զի կասկածելի է յոյժ՝ թէ չիցեն յօրինաւոր ամուսնութենէ. քանզի ծնօղք օրինաւորք՝ ոչքափ և չքաւորք իցեն և ազօրմելիք՝ գԹան յորդիս իւրեանց, և ոչ զնոսա ի քաց ընկենուն։ Այլ հաւանականագոյն կարծիք զհակառակն հաստատեն. զի առ անկանոնութիւն խնդրի՝ զի ստուգիւ ոք ըստ ոչ օրինի իցէ ծնեալ. իսկ զընկերութիւ մանկունս ոչ է մարթ ստուգիւ և աներկբայապէս այնպիսիս համարել։ Եւ պաշտպանք այսր կարծեաց, Նաւղոտիոս, Պոնցիոս, Աղմատիկեանք, և Հայրն Սուարէզ՝ որ հաւանական կոչէ զայս, ածէն ի հաստատութիւն զայտառարութիւն Կրիպոլի ԺԴ, որ միւսմ յերեքայրութեանց սահմանելոց ի ժողովել զընկերութիւ մանկունս՝ հրաման տայ օրինաւորս զնոսա համարել՝ ցորչափ չիցեն հաւաստիք ի հակառակն։

130. Ցորդորի՝ ի Թերութենէ տոից, զորմէ ասացաք ի յաւելուածն գ. 43. 44։

131. Հինգերորդ՝ ի Թերութենէ խորհրդոյ անկանոն են երկիանայք, զի ոչ յանգիման առնեն զխորհուրդ միաւորութեանն Քրիստոսի ընդ միակ հարսին իւրոյ եկեղեցւոյ սրբոյ, բաժանելով զմարմին իւրեանց յայլ և այլ կանայս։ Չորակի է երկիմութիւն. նախ՝ եթէ ոք այլ և այլ կանայս յաջորդաբար ածիցէ, ընդ իւրաքանչիւր ի նոցանէ լրացուցեալ ամուսնութիւն, ըստ ասացելումն ի գլ. ԺԸ. 68։

132. Երկրորդ՝ եթէ ոք ամուսնանայցէ և լացուսցէ զամուսնութիւնն ընդ այրոյ, անվաւեր իսկ ամուսնութեամբ. կամ եթէ ամուսնասցի ընդ կնոջ, որ փոխձեալ իցէ յայլոյ. կամ եթէ մոցէ առ կին իւր յետ շնալոյ նորա. կամ եթէ կրկին կանայս միանգամայն առցէ, և լացուսցէ ընդ երկոսին և զամուսնութիւն, ընդ միում վաւերաբար, ընդ միւսում անվաւեր:

133. Որ յանգիտս առնէ կին փոխձեալ յայլմէ, կարծելով զնա անփոխձ, համարիցի անկանոն: — Յանրագոյն կարծիք ընդ սուրբ Աստուածացոյն համարին զնա անկանոն, զի անգիտութիւն ոչ բառնայ զբաժանումն մարմնոյ նորա ընդ կնոջ՝ որ լեալ իցէ ընդ այլում. վասն որոյ ոչ ևս յանդիմանն առնէ զկորնթոսեցիսն Կիրիտոսի ընդ եկեղեցւոյ սրբոյ:

134. Որ ամուսնանայ ընդ կնոջ՝ որ չիցէ անփոխձ, այլ անվաւեր ամուսնութեամբ վասն լուծիչ արգելից, համարիցի անկանոն: — Զի որք ազատ կացուցանեն զնա յանկանոնութենէ. այլ հանրական կարծիք համարին զնա անկանոն, ածեալ՝ի հաստատութիւն զԿնոմկենտեաց գ. դատապարտել զմի՝ի կիսաամարկաւագաց՝ որոյ ածեալ էր կին այլի, թէպէտ և անվաւեր ամուսնութեամբ:

135. Կանամբէ, որ մտանիցէ առ կին իւր շնացեալ՝ որոյ անյայտ իցէ շնութիւն, համարիցի անկանոն: — Յանրակաւ կարծիք անկանոն համարին զնա, ևս և եթէ ակամայ բռնաբարեալ իցէ կինն. և պատճառք նոցին՝ զոր՝ի վերոյ ասացաք՝ի Թիւ 133. վասն որոյ ոչ ինչ օգնէ, ոչ ակամայ բռնաբարութիւն կնոջն, և ոչ առնն անգիտութիւն. զի և անդ իսկապէս բաժանումն մարմնոյ: Իսկ զոր առարկեն ոմանք զբանս կանոնին՝ Նիւ ապաշխարեալ եղէ կնոջն ընտրեալոյն, անդ ոչ զանգիտութիւն առնն յայտ առնեն բանքն, այլ զանստուգութիւն ընտրելոյն. որով յայնժամ ոչ ևս անկանոն համարի այրն:

136. Աջոյ զկետ պայ ըստ հանրական կարծեաց և ըստ սրբոյ Աստուածացոյն, զի և որ երկիցս ամուսնանայ՝ թէպէտ և անվաւերաբար՝ անկանոն համարելի է ըստ ասացելոցս՝ի Թիւ 134: Այս դարձեալ որ կեղծէ երկրորդ հարսանիս, առ՝ի կարելոյ ևեթ լինել ընդ կեղծեալ ամուսնոյն:

137. Եթէ այր ամբաստանէ զկին իւր ի շնութիւն, և ի գաւառէն ընդ նմա՝ հատուցանիցէ նմա ըստ խնդրոյ նորա զամուսնական պարտս իւր, համարիցի անկանոն։ — Եթէ այրն չգիտիցէ ատուգիս զկնոջն շնութիւն, ի հատուցանել նմա զտոյգ պարտս իւր՝ ոչ է անկանոն։ Թէպէտ եթէ զնոյն պարտ իցէ ասել և որ ածէ կին՝ կարծելով զնա անփորձ, զորմէ ի վեր անդր ասացաք ի Թիւ 133. զի ատ զհատուցանելոյ են բանք. զնոյն և զառնէ՝ որ յանգիտս հատուցանիցէ կնոջ իւրում շնացեալ կամ բռնաբարեալ, զորմէ ասացաք ի Թիւ 135։

138. Որ ամուսնանայն յետ կրօնաւորական կամ քահանայական ուխտի ողջախոհութեան, թէպէտ և անվաւեր է ամուսնութիւն նորա՝ ևս և ընդ կուսի, անկանի յանկանոնութիւն՝ եթէ լցացեալ իցէ ամուսնութիւնն։ Այլ զայս անկանոնութիւն համարի Անքէզ յետզետանէ քան ի պակասութենէ խորհրդոյ։ Ապայն ազատ է յանկանոնութենէ, որ չև ընկալեալ զսուրբ աստիճան՝ ամուսնանայցէ ընդ կուսանի ուխտելոյ. զի օրէնք սահմանեն զանկանոնութիւն այնմ, որ ինքն իցէ ուխտեալ։

139. Ո անկանոնութիւն երկկնութեան և ոչ միլըտութիւն՝ ի բաց բառնայ։ Պապին Լեւեթ իշխանութիւն է վանն ծանր պատճառի տնօրինել զայն, որպէս Տաստատեն Անքէզ, Գրոնչինա, Ալմաստիկեանք և այլք. և Ծուրնելլի ընդ այլս ածէ ի հաստատութիւն՝ Ղուկիոսի երրորդի տնօրինեալ։ Ապակ որ ինչ ի մասինս յայսմիկ իշխանութիւն իցէ եպիսկոպոսաց և կարգապետաց, տես ի գլ. Ժ։

140. Ա եղեբորդ՝ ի Թերութենէ բարեհամբաւութեան՝ որ ի վերայ ածէ զանկանոնութիւն, այլ զայսմանէ ասացաք ի Թիւ 92։ Ղօթնեբորդ՝ ի Թերութենէ ազատութեան անկանոնք են ծառայք, այսինքն ստրուկք չև ազատացեալք. իսկ եթէ ոք գիտութեամբ տեառն իւրոյ և ոչ հակառակ կալով նորա ընդունիցի և ևս և զիւսուզումն հերայ, նովին իսկ գործով ստանայ ազատութիւն։ Այլ օրէն է տեառն նորա տալ նմա ազատութիւն պայմանաւ կատարելոյ զծառայութիւնս, որ չեն հակառակ ազատութեան։ Ապակ եթէ առանց գիտութեան տեառն իւրոյ ընդունիցի զփոքր աստիճանս,

կայ միայն ՚ի ծառայութեան՝ եթէ չիցէ նորա ընկալեալ և զսուրբ կարգ, և եթէ եպիսկոպոսն կամ գործակիցք նորա ոչ հատուցանիցեն կրկնապատիկ զդէնսն տեառն նորա. այլ եթէ չկարիցեն հատուցանել, կայ միայն նա ՚ի ծառայութեան ըստ վերոյ եդեալ պայմանին ՚ի ձեռնադրելն իսկ սարկաւագ։ Այլ եթէ քահանայ իսկ ձեռնադրեսցի, պարտի ծառայել տեառն իւրում յոր ինչ առանց սահմանելոյ քահանայութեանն կարող իցէ, և զպատարագս վասն նորա մատուցանել. եթէ միայն ՚ի գիտել զայն տեառն իւրոյ՝ ոչ անտես առնիցէ զամ մի։

141. Ընկանան է և կանամբն, եթէ կինն նորա չհաւանիցի կամ չուխտիցէ զողջախոհութիւն, թէպէտ և չիցէ տակաւին պատկ նոցա լրացեալ. վասն զի առ այս սահմանեալ են երկամեայ աւուրքն, զի որ կամիցի յայն ժամ կարասցէ կրօնաւորիլ։ Այլ որ առանց կրօնաւորելոյ ընկալեալ իցէ զսուրբ կարգ, ըստ հաւանական կարծեաց ազատ է ասպա ՚ի կրօնաւորելոյ՝ վասն կարի ծանրութեան պարտուցն, որպէս հաստատեն սուրբն Ընտոնինոս, Սանքէզ, Սալմատիկեանք և այլք։

142. Օրէն իցէ առն ընդունել զսուրբ կարգ կամ կրօնաւորել հաւանութեամբ կնոջն, եթէ չկամիցի կինն և ա կրօնաւորել։ — Ամանք օրէն համարին վասն կանոնին՝ որ ասէ. "Ոչ օրէն առն ձեռնադրիլ՝ էթ ազատ լեալ ՚ի կնոջէն, ուխտելոյ նորա պաշտաւնէութեան։" Օ՞ր եթէ պաշտաւնէութիւն, ապա ոչ է հարկ նմա ուխտել զողջախոհութիւն կամ կրօնաւորել։ Այլ ընդհակառակն ամենևին պարտ է հաստատել ըստ բացայայտ սահմանելոյ զայն կանոնաց, զի ասէն. "Այլ է պարտ անպիտանալ զի հակառակ է սահմանադրութեան սրբոց Հարց, կրօնաւորել առն՝ առանց ընդունելոյ կնոջ նորա զքեմ, և կնոջ՝ առանց ընդունելոյ զայն առն նորա։" Այս Պիկոզայոս Պապ գրէ վասն կնոջ արբայնի Ռոտարիոսի. "Օ՞ր օրէն այլազգ առնել զայդ, եթէ ոչ ինոյն կենցաղ և այր նորա Ռոտարիոս յանձն առցէ։" Իսկ առարկելոյ կանոնին ասելն ոմանց զիտական ուխտ ակնարկելով։ Այլ ամենեքեան միաբանին զի եթէ մանկամարդ իցէ կինն, ՚ի կրօնաւորել

ասեն իւրոյ՝ չէ օրէնն նման կալ յաշխարհի. իսկ եթէ ուսարդ, նոյն իսկ կանոնք չնորհէն կալ նման յաշխարհի՝ պարզապէս ուխտիւ ժուժկալութեան:

143. Պաշտօնեայք առենի, որք երդմամբ կամ թուշակաւ սպասաւորեն արդարութեան, դատաւորք, փաստաբանք և այլն, ցորչափ կանո՛ն պաշտամանն իւրեանց՝ անկանոնք են, եթէ չեղեն նոցա հրաման՛ւ Պապէն, կամ յընկալեալ սովորութենէ օրէնն հաստարեալ, որպէս այրքունի խորհրդականաց օրէնն է եկեղեցականք. ՚Նոյնպէս անկանոն են և զննուորք ցորչափ ժամանակս տևէ երդումն զննուորութեան նոցա: Պարձեալ և գանձապետք, և հաստարակաց աւանդապահք, յանձանձիչք իրաց պետութեան, թիկնապահք արքայի, և որք խիստ կամ անարժան ինչ վարեն պաշտօն, կամ որք երբեմն լեալ իցեն պաշտօնեայք արդարութեան:

144. Ուխերոյդ՛ւ պակասութենէ մարդասիրութեան անկանոնք են, որոց սպանութիւն ինչ կամ անդամատութիւն՝ թէպէտ և օրինաւոր՝ իցէ գործեալ, կամ՛ւ ինաստղական (թէպէտ և յարդար) պատերազմի զննուորեալ: Նոյ վասն անկանելոյ յայս անկանոնութիւն՝ խնդրի զի իւրովի ուրուք գործեալ իցէ զըսպանութիւն և այլն. վասն որոյ թէպէտ և Պուսեմպայ և Պոնաչինա համարին անկանոն՝ որ յարդար պատերազմի իսկ յորդորեալ իցէ հարկանել զայս ոք կամ զայն, այլ Ալմաստիկեանք հաւանականաբար մերժեն զայն. զի կանոնք սահմանեալ են իւրովի գործոց զսպանութիւն կամ զանդամահատութիւն, և ոչ յորդորոցայ առնել զայնս: Իսկ եթէ պատերազմին արդար պաշտպանողական իցէ և ոչ ինաստղական, չանկանի յանկանոնութիւն որ գործէ անդ սպանութիւն: Իսկ յանիրաւ պատերազմի եթէ մի ոք ևեթ անկցի սպանեալ, ամենեքեան իսկ գտանին անկեալ յանկանոնութիւն. վասն որոյ զկանոնիկոս սարկաւագ, որոյ յայլ և այլ պատերազմունս էր զննուորեալ, թէպէտ և երդնոյր ոչ ուժեք ինաստեալ՝ ընդ օգս միշտ զհրացինս արձակելով, սակայն սուրբ ժողովն անկանոն զնա յայտ արար:

145. Սակայն անկանոնք են և դատաւորք արեան, և ամենայն պաշտօնեայք՝ ևս և արդար դատաստանի

մահուան կամ անդամահատութեան, զի ներգործաբար, աղբողաբար և մերչաորաբար գործակից լինին այնպիսի իրօք՝ որ ի բնէ բերին ի նոյն։ Ներգործաբար ասեմ, այսինքն ի կոդմանէ սպանողին. և ոչ սպանելոյն, որպէս խոստովանահայր՝ որ յորդորէ զնա յանձն առնուլ զմահ՝ չէ անկանոն։ Աղբողաբար, զի որ օգնէ և ևեթ ի բերել զգործն սպանութեանն, կամ որ ի զնելն և ևեթ կայ, ոչ անկանի յանկանոնութիւն. զի Թէպէտ և արգելեալ է եկեղեցականաց մի կալ ի զնելն այսպիսի տեսարանաց, այլ ոչ ի ծանր մեղս պարտաւորէ կանոնն այն, որպէս հաստատեն Պոնաքինա և Ալմատիկեանք. և Մուրնեզլի հասարակաց վարդապետութիւն համարի զայս. իսկ Նաւարրոյ և Էլիա ազատ իսկ ի մեղաց կացուցանեն զվիրաբ աստիճանաւորս։ Դարձեալ և մերձայաորպէս, զի չեն անկանոն՝ որք հեռաւորապէս բանիւ ինչ կամ գործով հաղորդք լինեն, որպէս որ յորդորիցէ զգատաւոր ի պատուհասել զյանցաւորս, և կամ որ վաճառիցէ սուսեր պատուհասի. վասն որոյ յոյժ հաւանականաբար Մուարէզ, Լայման, Էլիա և այլք ազատ կացուցանեն յանկանոնութենէ զխոստովանահայր, որ ասիցէ ցգատաւոր՝ Թէ այսպիսի ինչ կամ այնպիսի իրաց վնասակար արժանի է մահու։ Յաւելաք՝ այնպէսի երօք լինել գործակից, որ բերէն ի բնէ ի նոյն պատուհաս։ Այսինքն որ ըստ ինքեան լինեն պատճառք սպանութեանն. վասն որոյ ոչ է անկանոն խոստովանահայր, որ ասիցէ ցգահիճն. Ապաւրեպ վպաշտօն եմ, ոչ հաւրգելոմ զքոյդ։ Նա ոչ գատաւոր եկեղեցական, որ ընկալեցեալ զոք ի կարգէն՝ տացէ զնա յատեան աշխարհական։ Նա ոչ գատախազ եկեղեցական, որ զգողմանեսցէ առեալ՝ յայտ արարեալ զնա չկամի զմահ նորա։

146. Իսկ ընդ հակառակն անկանոնք են գատաւորք, առենակիցք նորա, նօտարն՝ որ գրէ զգատակնիքն, այլ ոչ որ օրինակէն զայն. և ամենեքեան՝ որ կատարեն զայն։ Այլ ոչ որք յանձնեն ուժեք զգատաստան՝ առանց արժանի մահու ցուցանելոյ զոք, կամ փութացուցանելոյ զգատակնիքն մահու ուրուք։ Անկանոնք են և ինքնայօրդոր վիպաբ յատենի, և փաստաբանք և գործակալք գատախազին՝ որ առանց յուժեք բռնադատելոյ

պաշտպանեն նմա: Ընկանոն են և դատախազք յանցանաց գլխապարտուԹեան. և եԹէ իցեն եկեղեցականք ժառանգաւորք, մեղանչեն ևս մահուամբ: Այլ ազատ է յանկանոնուԹենէ, որ դատախազէ եԹէ առ ՚ի պահանջել զտոյժս իւր՝ յայտ առնելով զի չկամի զաւրիւն: Օնոյն իմա և զտուժից ազգականաց ցաղգ չորոտ, և զընտանեաց և զեկեղեցւոյ իւրոյ: Այլ եԹէ վեր ՚ի վերոյ իսկ զյայտարարուԹիւնն առնիցէ, և յետոյ իսկ քան զամբաստանուԹիւնն՝ այլ յառաջ քան զվճիռ, ազատ է յանկանոնուԹենէ որպէս հաստատեն Սուարէզ, Բասիլիոսիալ, Պոնաչինա, Բոնչինա, Սալմատիկեանք և այլք:

147. Ինօրինմունք անկանոնուԹեանց ըստ ԹերուԹեան, վերապահեալ են առ հասարակ Պապին վանն կղերոյ. իսկ վանն կրօնաւորաց տես ՚ի գլ. ի. 106. 107:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

ՅԱՂԱԳՍ ԱՐՏՈՒՆՈՒԹԵԱՆՑ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

ԶԱՐՏՈՒՆՈՒԹԵԱՆՑ ՀԱՆԴԱՊԻՒՍ

1 • Խոխը ընդ արտունութիւն ընդ անօրինութեան և ընդ հրամանի:
2 • Ե՞րբ արտունութիւն զօրէ ընդդէմ հասարակաց իրաւանց:
3 • Որ ունին զարտունութիւն, պարտի վարել նովաւ:
4 • Որ՝ ի խորհրդական առենի ունի զայն, կարիցէ վարել նովաւ և արտաքոյ:
5 • Բացառութիւնք:
6–8 • Մեկնութիւն արտունութեանց:
9–11 • Հաղորդակցութիւն արտունութեանց:
12 • Արտունութիւնք կրօնաւորաց խափանեալք՝ ի սրբոյն Պիոսէ:
13 • Հրամանապիրք ընտրհայց և արդարութեան դատարանն՝ ի մեռանիլ Պապին:
14 • Քանի՞ օրինակաւ դատարանն արտունութիւնք:
15 • Ո՞րպէս դատարանն նահանջմամբ:
16 • Բարձումն բացայայտ:
17 • Բարձումն լռելեայն • պարտ իցէ ազդ առնել, կամ դէթ հրատարակել զբարձումն:

1 • Արտունութիւն է առանձնաշնորհութիւն, այսինքն օրէնք՝ որ շնորհէն ումեք կամ ումանց շնորհս ինչ առանձինն: Եւ զանազանի՝ ի անօրինմանէ՝ որ ազատ եւեթ առնէ յօրինեալ, վասն օրոյ և միշտ գոյացի ինչ է • զանազանի և՝ ի հրամանէ, որ՝ ի սակաւ ինչ գեպս շնորհի:

2 • Ասն զօրելոյ արտունութեան ընդդէմ հասարակաց իրաւանց՝ ոչ է կարևոր զի բացատրեսցի այն, քանզի համարի գիտել իշխանին զօրէնս հանրականս: Բայց կարևոր է նախ՝ յորժամ չիցէ մարթ արտունութեան ունել զօրութիւն առանց խափանելոյ բացայայտակի զհակառակ օրէնս: Երկրորդ՝ եթէ յօրէնս անդ, որ արտունութեամբն այնուհետև եղծանի, իցէ պայման չզօրելոյ որ ինչ և իցէ հակառակ արտունութեան • զի

յայնժամ պարտ է արտաւնուիլեան յիշատակել զայն բացայայտակի, կամ յաւելուլ ապոյժ գէպուածէ կամ լէուածէ իշխանուիլեան: Երկրորդ եթէ արտաւնուիլինն հակառակ իցէ սովորութեան կամ օրինաց ինչ բարեկարգութեան, զի այսոքիկ առանց բացայայտ յիշատակի ոչ խափանին:

3. Որպ իցէ արտաւնուիլինն, չէն ինչ նմա պարտք վարել նուաճ, բայց միայն՝ ի դէպս յայտնիկ: Նախ՝ եթէ ծանր միաս հասանէ այլում չվարելոյնն նուաճ. որպէս եթէ խոստովանահայր ունելով զարտաւնուիլին արձակելոյ՝ ի մեզաց վերապահելոց, յետ ընդունելոյ զխոստովանուիլին չկամիցի վարել արտաւնուիլեամբն: Երկրորդ՝ եթէ արտաւնուիլինն իցէ յօգուտ հասարակաց, որպէս ազատուիլին ինչ կամ ապահարկուիլին: Երրորդ՝ եթէ արտաւնուիլինն բառնայցէ զարդելս օրինապահուիլեան, որպէս եթէ հիւանդին իցէ մատուցն առանին, և կարիցէ զիւրաւ տեսանել անդ զպատարագ, պարտ է նմա վարել արտաւնուիլեամբն: Չորրորդ՝ եթէ արտաւնուիլինն չիցէ անձնական, այլ իրական՝ յարակից տեղոյ կամ աւագուիլեան կամ կարգի. որպէս արտաւնուիլինք շնորհեալք եպիսկոպոսաց և կրօնաւորաց:

4. Որպ է արտաւնուիլին յատենի ապաշխարուիլեան, որպէս արձակելոյ՝ ի բանադրանաց և յեկեղեցական պատժոց, յոյժ հաւանականաբար կարող է վարել նուաճ և արտաքոյ խոստովանուիլեան, թէպէտ և իբրև խոստովանահօր տուեալ իցէ նմա իշխանուիլին:

5. Եթէ արտաւնուիլինն շնորհի հանգոյն այլոց իմիք յառաջագոյն շնորհելոց, հաճելի է այնմ՝ եթէ միայն առաջինն այն իցէ լեալ վաւերական, զեմ՝ ի սկզբան անդ՝ թէպէտ իցէ յետոյ նահանջեալ կամ չիցէ լեալ ընդունելի. զի եթէ առաջինն անվաւեր լեալ իցէ, անվաւեր գտանի և երկրորդն՝ եթէ չիցէ՝ ի նմա բացատրեալ որ ինչ շնորհի: Եթէ արտաւնուիլինն շնորհեալ իցէ այսուիկ՝ թէ յորս ինչ չիցէ ընդդէմ եկեղեցական կանոնաց, պարտ է իմանալ զայնս՝ ի կանոնաց՝ յորս յաւելեալ իցէ չըջել որոյ ոչ իցէ հակառակ արտաւնուիլեան: Իսկ եթէ յարտաւնուիլեան անդ իցէ պայմանս այս՝

ընորհելով պամենայն ներողութիւնս, իմանալ զայնս՝ որ ըստ դրական իրաւանց են թերութիւնք և պատահականք· այլ ոչ և զբնական թերութիւնս կամ էականս, որպէս եթէ աղերսաւորն ի բանադրանս կայցէ, կամ աղերսագիրն իցէ թերի կամ խաթէական, կամ թերութիւն ի պատճառան իցէ կամ յանձն աղերսաւորին։

6· Օ արտունութիւնս պարտ է այնպէս մեկնել, զի մի լինի այն անօգուտ կամ ի բեռն արտունացելոյն· և մեկնել զայնս ըստ օրինի և վաւերաբար անկ է իշխանին եւեթ, և որում նա յանձն արասցէ։ Նոկ վարդապետօրէն կարէ մեկնել ամենայն ոք այլ գիտուն· և մեկնութեան նորա օրէն է լսել· զի յարգելով արտունութեան զմր և իցէ մեկնութիւն, իմանալ զվաւերականն և զօրինական, կամ թէ շատ՝ զմեկնութիւն արարեալ յառաջարկութենէ, որպէս ասացաք յաղագս օրինաց (գլ· Բ· 75։) Նդրելեալ է ի Կղեմայ Դ· և յայլոց Պահանայապետաց Հռովմայ, մի մեկնել եպիսկոպոսաց օրինապէս զարտունութիւնս կրօնաւորաց· այլ ի ստիպել հարկին, եթէ չիցէ մարթ հարցանել զսուրբ գահն, Նղեքսանդր Դ· և Պօղոս Գ· ընորհեն մեկնել իրաւապիտաց և այլոց դատաւորաց ի նպաստ կրօնաւորաց։ Օնոյն ընորհեն և կարգապետաց, այցելուաց, դաւառապետաց և վանահարց, մեկնել ըստ խորհրդոյ իրաւապիտաց՝ ոչ միայն զարտունութիւնս, այլ և զկանոնս զսահմանադրութիւնս և զսովորութիւնս կրօնից իւրեանց։ Նայն որոյ կարէն նոքա և զարտունութեան հպատակաց իւրեանց բառնալ կամ ամփոփել զվայելս։

7· Պարտ է զարտունութիւնս մեկնել սովորաբար ընդալաձակօրէն, քանզի յայնցանէ՝ որ ատելիքն են, որպէս ոչք խափանեանն զիրաւունս հասարակաց, կամ զսահմանադրութիւնս և զսովորութիւնս առանձնականաց՝ որ չիցեն հակառակ հասարակաց իրաւանց, կամ եթէ արտունութիւնն չիցէ ի կարգս իրաւանց անցեալ։ Նայն որոյ Նանքէզ և Նացցօթեթա պարտ համարին ընդարձակաբար մեկնել զամենայն արտունութիւնս իրականս· զի միջանջենաւորութեամբն համարին ի կարգս հասարակաց իրաւանց անցեալ։ Պարձեալ և զայնս՝ որ այլազգ անօգուտ լինին, կամ յորս յաւելեալ

իցէ սպայի գէպռնէամբ կամ ինչնաշարժ կառօք. և կամ ե-
թէ արտունուքիւնն իցէ արձակելոյ, տնօրինելոյ, կամ
հաղորդելոյ զայն այլոց։ Իսկ զարտունուքիւնս միասա-
կաց այլոց, որպէս ունելոյ այլ և այլ ժառանգուքիւնս
եկեղեցականս, տալոյ այլոց զանտերունչ միացեալս,
կամ որք հակառակ իցեն կանոնապահուքեան կրօնա-
ւորաց, պարտ է ամփոփել ըստ կարի, թէպէտ և ինք-
նաշարժ կամքք չնորհեալ իցեն։

8. Յայոքիկ վանս առանձնական արտունուքեանց.
այլ որք միաբանուքեանց կամ վանաց կամ հոգևոր
ընկերուքեանց իցեն չնորհեալ, զայնոսիկ պարտ է ընդ-
արձակապէս մեկնել՝ թէպէտ և հակառակ իցեն հասա-
րակաց իրաւանց կամ միասակար այլոց, որպէս հաստա-
տեն բարոյականք առհասարակ։ Ո՛ւ արտունուքիւնք
չնորհեալք միաբանուքեանց՝ համարին ի վարձ վաս-
տակոց նոցա չնորհեալ, վասն որոյ համարին և նպաս-
տաւորք։

9. Մուրացիկ կրօնաւորաց արտունուքիւնք՝ ան-
ցեալք և ապառնիք՝ հաղորդականք են ամենայն կար-
գաց նոցա, անձանց, տեղեաց և տօնից, որպէս յայտ է
ի կոնդակաց Ալեքսանդրի Դ. Կղեմայ Ը. և Լևոնի ժ.
թէպէտ և կրօնին, որում չնորհեալ է արտունուքիւնն,
չիցէ ընկալեալ զայն և ոչ ի կիր առեալ։ Ի յաւելուլ
արտունուքեան միոյ ի կրօնից, յաւելուլ և այլոց կրօ-
նակից նոցին կարգաց։ Այս դարձեալ մուրացիկ կրօնա-
ւորաց կարգք հաղորդին արտունուքեանց և այլ ամե-
նայն կրօնից և միաբանուքեանց և ամենայն ուխտից
միակեցական և միաբանակեաց կարգաց։ Թէպէտ և
արտունուքիւնն չնորհեալ իցէ նոցա անհաղորդելի այ-
լոց. զի ի կոնդակս հաղորդակցուքեան ի բաց բար-
ձեալ է ամենայն արգել։ Ո՛ւ արտունուքիւնս զայնոսիկ
վայելեն և աշխատաւոր եղբարքն, զի են և նոքա խակա-
պէս կրօնաւորք. և նորընծայք իսկ՝ որպէս հաստատեն
սատուածաբանքն, և որպէս յայտ արար Կղեմէս Ը։
Վայելեն և եպիսկոպոսացեալ կրօնաւորք որ ինչ յար-
տունուքեանց անտի կարիցեն կալ ընդ եպիսկոպոսա-
կան կարգի, որպէս տալ քուէ և այլն։ Կրօնաւորք և ո-
չ մուրացիկք հաղորդին արտունուքեանց մուրացիկ և
անմուրացիկ կարգաց և բարեգործուքեան տեղեաց,

յարևնման մեռրացիկ կրօնաւորաց, ըստ պայմանի ամ֊ փոխելոյ և ընդարձակելոյ կոնդակաց արտօնութեանցն։

10· Կուսաստանք, եթէ՛ մեռրացիկ և եթէ անմեռ֊ րացիկ կարգաց, վայելեն յարտօնութիւնս կրօնակից միանձանց· վասն որոյ և այլ ամենայն կարգաց յոր ինչ և մարթ իցէ նոցա· թէպէտ և արանց ևեթ շնորհեալ իցէ արտօնութիւնն, որպէս յայտ առնէ Լևոն Ժ·՚ի կոնդակին։ Այսպէս և միանձունք վայելեն յարտօնու֊ թիւնս կուսաստանաց ամենայն կարգաց։ Կուսաստանք ևս, որք չեն ընդ ձեռամբ կարգապետաց՝ այլ թեմական եպիսկոպոսին կամ Պապին, վայելեն՚ի նոյն արտօնու֊ թիւնս· վասն որոյ՚ի շնորհել միանձանց զշնորհս ընդ֊ունելոյ արձակումն կամ անօրինումն՚ի մեծաւորաց իւ֊ րեանց, կուսանք ևս կարեն զնոյն շնորհս՚ի մեծաւորաց անտի ընդունել· թէպէտ և հպատակք ևեթ նոցին կուսանք յիշատակեալ իցեն՚ի կոնդակին։

11· Այլ չեն հաղորդական արտօնութիւնք հակա֊ռակք սահմանադրութեան իւրաքանչիւրոց կարգաց, և միասակարք բարեկարգութեան և կանոնապահու֊ թեան նոցա։ Արտօնութիւնք շնորհեալք ումեք վասն պաշտամանն կամ աւագութեան կամ որպէս միանձին այսր կամ այնր միաբանութեան, շնորհեալ համարին և աներեցուն պաշտօնակցաց նորին կամ կրօնակցաց· և արտօնութիւնք շնորհեալք հպատակաց կամ ստո֊ րակարգեալ մեծաւորաց, համարին շնորհեալ և վե֊ հագունից։ Սմանապէս և արտօնութիւնք շնորհեալք միում՚ի մենաստանաց կամ յեկեղեցեաց, կամ միան֊ ձին որպէս միաբանի այնր մենաստանի, համարին շնոր֊ հեալ և այլոց միանձանց առ հասարակ, եթէ այնր կարգի և եթէ այլոց հաղորդակից կարգաց, որոց նոյն կամ նման պատճառք իցեն։ Այլ զայս ոչ է պարտ ի֊ մանալ զարտօնութեանց՝ որ առժամանակեայ շնորհին միում՚ի միաբանութեանց, կամ վասն առանձին ինչ իրիք հրամանագրով, կամ որ անսովոր ինչ իցէ և զըր֊ ժուարին։

12· Ոչ ևս օրէն է կրօնաւորաց վարել արտօնու֊ թեամբք, զորս խափանեաց ժողովն տրիդենտեան։ Այլ որպէս ժողովն աւանդապահ սահմանադրութեանց նորին յայտ արար, և սուրբն Պիոս զյայտարարու֊

Թիւնան զայնոսիկ հաստատեաց, օրէն է աշխարհական-նայ և յաւուրս ածնից տեսանել զպատարագ և լսել քարոզ յեկեղեցիս նոցա, և ոչ օրէն է եպիսկոպոսի տալ հրաման մտանելոյ ումեք 'ի կուսաստանս՝ որ ազգաք յիւրմէ ընդ ձեռամբ նոցա իցէն, և ոչ քննել զբարոզիչս կրօնաւորս՝ որք յեկեղեցիս իւրեանց քեմս ախօսեն:

13. Պ՚ԱՀԼ է հրամանագիր ընդհատ, որպէս արձակելոյ, տնօրինելոյ և այլն. և այլ հրամանագիր արդարութեան, որպէս 'ի կիր արկանել զիրաւասութիւն առեն-նական: Ի հրամանագրի ընդհատ ասի ընդհ արարեալ, եթէ փոխանորդն իցէ կատարիչ և ենթ ընդհէնն. իսկ ընդհ առնելէ, եթէ իցէ աւանդեալ փոխանորդին իշխանութիւն տնօրինելոյ, և 'ի կամ նորին թողեալ ընդհէնն: Հրամանագիր արդարութեան դադարէ 'ի մեռանել իշխանին, եթէ չիցէ սկիզբն լեալ իրացն. նոյնպէս և հրամանագիր առնելի ընդհատ: Պ՚ԱՀԼ ոչ դադարի հրամանագիր արարեալ ընդհատ, որպէս ընդունելոյ արձակուն, կամ ձեռնադրութիւն նախ քան զլրումն ամսհմանեալ ամաց. ունելոյ մատուռն առանին, և այլն: Պ՚ատուներութիւն ընդհէալ պայմանաւս վինչև դադճոյ նոցա ընդհէնէ, հաւանականաբար ոչ դադարի 'ի մեռանել ընդհատին. տես և որ ինչ ասացաք 'ի գլ. ԺԲ. 82: Եթէ 'ի հրամանագրի ընդհէնն բացատրեալ իցէ գործ փոխանորդին, 'ի մեռանել նորա անցանէ նոյն հրաման 'ի յաջորդ նորա:

14. Իազգամ օրինակաւ մարթ է դադարել արտոնութեան: Ելախ՝ 'ի սպառել ամսհմանեալ ժամանակին: Իրկրորդ՝ 'ի դադարել վախճանական պատճառն, նման յորժամ արտոնութիւնն վասն այնր իցէ տուեալ. իսկ եթէ առանց այնր պայմանի իցէ տուեալ, յոյժ հաւանական է չդադարել արտոնութեան 'ի դադարել իսկ վախճանի նորին, և ոչ այնու՝ զի միանգամ 'ի վար արկեալ իցէ, ըստ ասացելումն 'ի գլ. Ե. 66: Իերրորդ՝ 'ի հրաժարել ընդունողի զարտոնութիւնն. այլ արտոնութիւնք միաբանութեանց ոչ դադարեն՝ ոմանց եթէ 'ի նոցանէ հրաժարելով. և վասն վանեցեալ հրաժարելոյ՝ պարտ է 'ի ձեռս նորին իսկ ընդհողի զարտոնութիւնն՝ տալ զհրաժեշտն, և նման ընդ-

ունել զայն: Ողբողդ՝ դադարէ հակառակ սովորու-
թեամբ կամ ոչ ի վար արկանելով զայն: Այլ գի-
տելի է՝ զի արտունութիւնք հաձոյականք, այսինքն որ
չիցեն դժպհիք այլոց, որպէս իշխանութիւն արձակելոյ
կամ տնօրինելոյ, ազատութիւն ի ծառայակալելոյ և
այլն, ոչ դադարեն վասն ոչ ի վար արկանելոյ, և ոչ
բազմաժամանակեայ հակառակ սովորութեամբ: Նակ
արտունութիւնք դժպհիք այլոց, որպէս չհատուցանել
տասանորդս և այլն, դադարեն հակառակ սովորու-
թեամբ· դադարեն և չարկանելով իսկ զայնս ի վար,
եթէ տէր արտունութեանն չկամիցի վարել նովաւ, և
ոչ եթէ չկարիցէ· այլ զայս իմա, եթէ չիցէ ի հրամա-
նագրին վարել նովաւ երբ և կամ էցեն նմա: Այս դարձեալ
իմա յարտաքին ատենի· զի ըստ խղճի մտաց չկորուսա-
նէ երբեք զարտունութիւն, որ ոք չհրաժարէ յայն-
մանէ: Պարտ է դադարել արտունութեան և զեղծա-
նելով ուրուք նովաւ ըստ բոլորին կամ ըստ մասին:

15· Դադարէ արտունութիւն և բառնալով զայն ի շ-
խանին: Այլ պարտ է աստ զանազանել զձրիատուր ար-
տունութիւնս ի վարձատրականաց և ի բեռնաւորաց:
Ո՞ի զձրիատուրն մարթ է բառնալ վաւերաբար առանց
իսկ պատճառի, թէպէտ և չիցէ ազատ դէմ ի ներելն
մեղաց, ուր չիցէ իսկ գայթակղութիւն: Այլ եթէ ընդ
արտունութեան և տէրութիւն ի վերայ իրիք տուեալ
իցէ ումեք, ոչ է մարթ բառնալ զայն, ոչ օրինաւոփս
և ոչ վաւերաբար, առանց ծանր պատճառի բարւոյ հա-
սարակաց, կամ առանց ծանր եղեռան, և կամ վասն
նոյն պատճառաց՝ որոց վասն օրէն է բառնալ զամենայն
պարգև տուեալ: Նակ եթէ վարձատրական է արտու-
նութիւնն, ըստ արդարութեան կամ փոխարէն երախ-
տեաց տուեալ, խնդրի իրաւացի պատճառ առ ի բառ-
նալ զայն վաւերաբար: Պանաւանդ եթէ բեռամբ ի-
ւիք տուեալ իցէ արտունութիւնն ընդունողին զայն,
կամ սակ ի վերայ եդեալ, բաց յիրաւացի պատճառէ՝
խնդրի և հատուցումն, որպէս և վասն վարձատրակա-
նացն՝ եթէ ըստ արդարութեան իցեն տուեալ:

16· Նարձումն արտունութեանց երկակի է, բացա-
յայտ և լռելեայն: Ո՞ր բացայայտակի բարձումն շատ
է սովորաբար յաւելուածն հանրական, ոչ պղծել զբ-

պատուհասանց ընդդէմ հրամանին. որով խափանին ամենայն արտունուվթիւնք հակառակք այնմ հրամանի: Պէտ պարտ է՝ ի բաց առնուլ նախ՝ զարտունուվթիւնս ընծրհեալս ըստ դասուց, թէ՛ բեռնակիանք իցեն և թէ վարձատրականք ըստ արդարուվթեան, յորս յիշատակին յանուանէ վաստակք ընդունողի զարտունուվթիւնն: Երկրորդ՝ զարտունուվթիւնս, յորս յաւելեալ կայցէ՝ անբաժանելի առանց առանձին յիշատակի: Երրորդ՝ զարտունուվթիւնս կրօնաւորաց, վասն որոց խնդրի առանձին յիշատակ, զի վարձատրականք են արտունուվթիւնք նոցա, և անընդունակք խափանածոյ առանց յանուանէ յիշատակի, որպէս հաստատեն Աստրիկուէց, Աթոթեմա և այլք: Չորրորդ՝ զարտունուվթիւնս անյեալս ի կարգ իրաւանց, զի այսոքիկ իսկապէս օրէնք են, վասն որոյ և խնդրի ի խափանումն սոցին առանձին յաւելուած՝ ոչ ջօրելոյ ի օրինաց հակառակ այնմ հրամանի: Օնոյն հաստատեն Պոնաչինա, Անքէզ, Վաթիքան, Աթոլինա, Ալմատիկեանք և այլք, զարտունուվթեանց ընդհանուր ժողովոյ. զի և այսոքիկ պահանջին յաւելուած առանձին՝ ոչ ջօրելոյ ուր ի նէ ահմանադրուվնեան, ևս ի ընդհանուր ժողովոյ, ընդդէմ հրամանին: Պէտ զայս ամենայն բացայայտուվթիւնս պարտ է իմանալ, ուր չիցեն յայտնի միտք հրամայողին, որպէս ուսուցանեն աստուածաբանք առհասարակ. վասն որոյ եթէ յաւելու պապ գիպուվնեամբ, ինդնաշարժ, ի նրուվնէնէ եկնեանուվնեան, խափանէ զամենայն արտունուվթիւնս բաց ի բեռնաւորաց և որ տոյժս ի վերայ ածին այլոց:

17. Որք լսելեաց խափանին արտունուվթիւնք ի հրատարակել օրինաց ինչ կամ արտունուվթեանց տուեալոց այլուս, եթէ այսոքիկ չիցէ մարթ ունել զօրուվթիւն առանց խափանելոյ հակառակ արտունուվթեանց. զի չէ համարելի թէ օրէնսդիրն կամիցի տալ օրէնս անզօրս, կամ արտունուվթիւնս խափանիչս զօրուվթեան նոցա: Պէտ զայս պարտ է իմանալ, յորժամ արտունուվթիւնքն ծանօթք իցեն իշխանին, որպէս համարին ամենայն արտունուվթիւնք անցեալք ի կարգ օրինաց, որով ոչ այնպիսիք համարին ունք արտաքոյ օրինաց իցեն, վասն որոյ և խնդրի առանձինն զայնցանէ յիշատակ: Ամենք հա-

մարին զօրել արտաւնութեանց մինչեւ ի՞նչ քարձումն նոցին աղգ արարեալ քաղաքի կամ միաբանութեան եւ այլն. բայց այլք յաստուածաբանից շատ համարին առ ի քարձումն նոցին ընդհատարակել հակառակ օրինացն, և զամսոց երկուց ի վերայ անցանել՝ որով մարթ իցէ հասանել համբաւոյն առ արտաւնացեալս, թէպէտ և չհասանիցէ: Տես և որ ինչ ասացաք զօրինաց. գլուխ Բ. 5–8:

Յայսվայր զարտաւնութեանց հանրապէս, ասասցուք արդ ի յաջորդ յօդուածսդ ուրոյն և զարտաւնութեանց եկեղեցականաց, եպիսկոպոսաց, և կրօնաւորաց:

ՅՕԴՈՒԱԾ Բ

18. Յոր ինչ երս ազատ են եկեղեցականք յաշխարհական իշխանութենէ:
19. Արտաւնութիւն կանոնական և աստենական ըստ անձին:
20. Ըստ գոյից:
21. Ո՛յք ոմանք վայելեն յայն:
22. Ժառանգաւորք:
23. Որոց զնուազումն հերաց ընկալեալ ունի:
24. Որոց մերկացեալ իցէ զձև եկեղեցական:
25–28. Ձազատութենէ առօրք աեղեաց:

18. Եկեղեցականք ըստ աստուածայնի օրինացս ազատք են յաշխարհական իշխանութենէ ի հօգևորս, որպէս ի ձեռնադրութիւնս, կընտրութիւն եկեղեցական աւագութեանց և այլն, որպէս յայտ է ի կանոնաց Նռոմէական ժողովոյ. Նոյնպէս թէ իցեն ըստ աստուածայնի օրինացդ ազատ և անձինք և տեղիք եկեղեցականաց, խնդիր է առ աստուածաբանս: Կէսք չընդունին, և կէսք հաստատեն զայն ի կանոնաց, և մանաւանդ տրիդենտեան ժողովոյ՝ ուր ասէ. "Եկեղեցւոյ և եկեղեցականաց անձանց ազատութիւն աստուածայնի հրամանաւ և ի կանոնական վճռոց սահմանեալ է,,: Այլ հաւատն է ղի եկեղեցականք ըստ կանոնական և ըստ քաղաքական իրաւանց ազատ են յաշխարհական աստենէ, բայց ի խղճէ պարտին հպատակել ամենայն քաղաքական օրինացդ, որ չիցեն հակառակ եկեղեցականաց:

19. Նայ յարտաւնութենէ Կանոնի, (զորմէ ասացաք ի գլ. ԺԹ. 48), որով անկանի ի բանադրանս որ ոք հար

կանէ զնոսա յանկուաւ. ազատ են նոքա և՛ ի պատժոյ աշխարհական ատենի. և թէպէտ օրէնք քաղաքականք՝ ի քաղաքական դատից ևեթ ազատ առնեն զնոսա, ՚ի քաց առեալ զնուաւնս դատելոյ զջարագործուԹիւնս նոցա՝ առանց դատապարտելոյ յառաջ քան զբարձումն կարգի նոցա, այլ կանոնական օրէնք բոլորովին ազատ կացուցանեն զնոսա: Սակայն ՚ի դէպս լինչ օրէն և աշխարհական իշխանուԹեան ունել զեկեղեցականս առ ՚ի տալ զնոսա յեկեղեցական ատեան. որպէս ՚ի գտանել զնոսա զինուել ծպտեալ, կամ զէն արգելեալ կրելոյ յանձին, կամ ՚ի գործ յանցանաց. և ՚ի տունջեան իսկ կապտել ՚ի նոցանէ զզէն արգելեալ: Որպէս և նման ՚ի դէպս լինչ և պատուհասել զնոսա, այլ ոչ ՚ի մահ, եԹէ գտցէ զոք ՚ի նոցանէ ընդդէմ պետուԹեան դաւադործ կամ խռովարար ժողովրդեան անպատուհաս յեպիսկոպոսէն: Հաւանական է կարել նման պատուհասել և զյայտնի արուեստիս յեկեղեցականաց, զի յամենայն եկեղեցականս արուեստուԹեանց զրկեալ է զնոսա Լևոն ժ. և սրբոյն Ղևոն:

20. Ազատ են եկեղեցականք յաշխարհական ատենէ և ըստ գոյից, եԹէ եկեղեցականաց և եԹէ որով և իցէ օրինակաւ ստացելոց. վասն որոյ և ոչ պարտական են հատուցանելոյ տուրս վասն այնց: Այլ զոր զեկեղեցական հաս ՚ի տուրևառս ՚ի կիր արկանեն, զրկին յամենայն ազատուԹենէ. իսկ վասն այլոց գոյից զրկին յետ երրակի ազդեցուԹեան: Սիայն ՚ի ստիպել սովոյ օրէն է իշխանի գրաւել և վաճառել զցորեան եկեղեցականաց:

21. Ո այս արուեստուԹիւն անձին և ընչից վայելեն նախ ամենայն կրօնաւորք և նորընծայք և երրորդական եղբարք և քոյրք, որ կրեն զձև կարգին հանդերձ ուխտիւ ողջախոհուԹեան. ևս և առաքեալք կարգի սրբոյն Յովհաննու, սրբոյն Յակոբայ, և այլոց կարգաց: Այ եղեն և փոքր աստիճանաւորք և որոց ընկալեալ ՚իցէ ձեռնադրուԹիւն հերաց, եԹէ կանամբիք իսկ իցեն՝ այլ կրնցեն զձև եկեղեցական և ՚ի ծառայուԹեան կացեն եկեղեցւոյ: Դայց արգելեալ է ՚ի կանոնաց ջոջ կանանց զձեռնադրուԹիւն հերաց, եԹէ ոչ հաւանուԹեամբ ինչ կամիցի կրօնաւորել կամ ընդունել զսուրբ կարգ:

22. Ա՝յրելեն և ժառանգաւորք, Թէպէտ և ոչ կայցեն ՚ի ծառայութեան եկեղեցւոյ, և ոչ զձև և զխոստումն կրիցեն, որպէս Հաւանականաբար Տիմոթէոս, Ստորիկուսէ և Ալմաստիկեանք ընդդէմ Սաւարեզի, Թէպէտ և չվայելիցեն ՚ի հասս և չունիցին ժառանգութիւն. զի շատ է զպատիւ ևեթ ժառանգաւորութեան ունել: Շատ է և զժամարարութեան կամ զոր և է եկեղեցական պաշտամանն զհասս ունել, այլ ոչ է բաւական զթոշակ ևեթ ունել:

23. Ա՝յրելեն և փոքր աստիճանաւորք և որոց ընկալեալ իցէ զխոստումն հերաց, եթէ միայն կրիցեն զձև և զխոստումն ըստ սահմանելոյ ժողովոյն, և ըստ հաւանականագոյն կարծեաց աստուածաբանից. և եթէ հարկանիցեն ուրեք յեկեղեցեաց հոգևոր սպասաւորութիւն (զի չէ բաւական մարմնաւորն), Թէպէտ և ոչ յեպիսկոպոսէն կարգեալ՚ի նոյն:

24. Ա՝ման զրկելոյ փոքր աստիճանաւորաց յազատութենէ՝ատենի, (զի այլ է արտաքնութիւն Կանոնի), ոչ ինդրի երբակի ազգարարութիւն, զի այս վասն ժառանգաւորաց ևեթ և սուրբ աստիճանաւորաց ինդրի. այլ շատ է զի՚ի բաց թողեալ իցէ նոցա զձև և զխոստումն հերաց ընդ երկար:

Ա՝կայն օրէն է եպիսկոպոսին առնուլ զնոսա յաշխարհական ատենէ. և մարթ իսկ է նոցա ունել վերըստին զխոստումնս ազատութեան՚ի զգենուլ անդրէն զձև եկեղեցական, եթէ ոչ նենգաւ առնիցեն զայն. և համարի նենգ, եթէ յետ եկակոչի յաստեան կամ՚ի բանտարկելն կամ յելանելն երաշխաւորութեամբ յազատութիւն՝ փոխեսցէ զձևն: Ինդիր մեծ է՝ թէ օրէ՞ն իցէ աշխարհական իշխանութեան քննել զդատ անմեղին ընդդէմ եկեղեցականաց: Ա՝կսք օրէն համարին. իսկ այլք ներելի՝ եթէ դժուարին իցէ անմեղին բողոքել՚ի բարձրագոյն ատեան եկեղեցական:

25. Ա՝զատութիւն սուրբ տեղեաց տալոյ ապաստան յանցաւորի, ըստ եկեղեցական և ըստ քաղաքական իրաւանց անկ է ամենայն եկեղեցեաց, խափանելոյ իսկ յաստուածային պաշտամանց և պղծելոյ, և ա՛ն և աւերելոյ՝ եթէ չիցէ բարձեալ սրբութիւն նոցա իշխանութեամբ եպիսկոպոսին, մատրանց նոցա, սարկաւագա-

նոցա, զերեզմանատեղեաց՝ և ս և հեռաւորաց եկե-
ղեցւոյն, որմոց, զանգակատանց, տանեաց, գաւթից,
անդաստակաց և աստիճանաց նոցա, և անդր և ս քան
զաստիճանս 40 քայլ մայր եկեղեցեաց, և 30 այլոց·
իմա զեկեղեցեաց՝ որ են յարուարձանեայս քաղաքին,
ուր չիցեն փողոց հասարակաց կամ տունք աշխարհա-
կանաց, զի եկեղեցականացն ոչ խափանէ զարտաւնու-
թիւնն։ Այն ազատութիւն է և հիւանդանոցաց՝ ուր
իցէ հասարակաց մատուռն, և մատրանց կանգնելոց ե-
պիսկոպոսին, եպիսկոպոսարանին, և մենաստանաց, հան-
դերձ գաւթօքն և պարտիզիւք։

26· Զմենայն յանցաւորը քրիստոնեայք, թէպէտ և
հերետիկոսք իցեն կամ արգելեալք յաստուածային
պաշտամանց, կամ բանտարգելք՝ որոց խորտակեալ ըզ-
բանտ և փախուցեալ ապաստանիցին ի վերայեալ
սրբավայրս, վայելեն յազատութիւն· սակայն
հակառակ այսորիկ ոչ ինչ զօրելով։ Բայց միայն Գր-
դոր ԺԴ և Բենեդիկտոս ԺԴ՝ի բաց առնուն զաւազակս,
զապականիչս անդաստանաց, զսպանողս, և զհերետի-
կոսս ապստամբս ընդդէմ Թագաւորի։ Ի դէպս յայս-
սիկ օրէն է գատաւորի մտանել ինքնին եկեղեցի, և
ձգել արտաքս զյանցաւորն, որպէս է իսկ սովորութիւն·
այլ՝ի դէպս երկբայելիս անկ է եպիսկոպոսի։ Բաց
յասացելոցս այլ ամենայն յանցաւորը, և ս և պարտա-
տեալը՝ որք եկեղեցիս ապաստանին, վայելեն յազա-
տութիւն։

27· Ինդիր է Թէ արդեօք եկեղեցականք և կրօնա-
ւորք ունիցին զնոյն ազատութիւն յերեսաց առաջնոր-
դաց իւրեանց։ — Բազումք հաստատեն զայն ըստ յայ-
տարարութեան խմիք սրբոյ գահուն, և է յոյժ հաւա-
նական՝ որպէս և Սալմատիկեանք համարին։ Սակայն
նոքին իսկ, և Սուարէզ, Լայման, Բասլերոփալ, Պո-
նաչինա, Սիլուէոյ և այլք զհակառակն հաստատեն վասն
հասարակաց ընկալեալ սովորութեան, և վասն բանից
կոնդակին Գրիգորի ԺԴ, որ պաշտպանողական եղեալ ապաս-
պանելոց յեկեղեցի առնէ յիշատակ։ Այսպա Թէ ոչ, զժուա-
րաւ մարթի էր պատժել զկրօնաւորս՝ որ կան միշտ ի մե-
նաստանի։ Այս որպէս օրէն է առաջնորդաց, եպիսկո-
պոսաց և փոխանորդաց նոցին, հանել արտաքս եկե-

ղեցւոյ զՀպատակս իւրեանց, օրէն է նոցա և՛ ի ատիպել Հարկին տալ Հրամանն աշխարհական ատենի Հանել զնոսա: Այլ էի օրէն եպիսկոպոսի Հանել զՀպատակս իւր յեկեղեցւոյ կրօնաւորաց, զի էին ընդ իրաւասութեամբ իւրով:

28· Իսկ որք միանգամ առանց Հրամանի ձեռն արկանեն յապաստանեալս յեկեղեցիս, նովին իսկ գործով անկանին՝ ի բանադրանս վերապահեալս Պապին կամ եպիսկոպոսի· զի վՀիռ Կղեմայ Ը· խոստովանահարց եւԹ արգելու արձակել զայնպիսիս: Այլ օրէն է կրօնաւորաց, առանց գործելոյ ընդդէմ այսր ազատութեան, վարել՝ ի բաց յեկեղեցւոյ իւրեանց կամ՝ ի վանդակ զչանցաւորս ապաւինեալս առ նոսա՝ վանն զերծանելոյ՝ ի վտանգէ կամ՝ ի նեղութենէ:

ՅՕԴՈՒԱԾ Գ

ԱՐՏՈՒՆՈՒԹԻՒՆՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ

29· Իշխանութիւնք առեալք նոցա՝ ի սրբիչենաեան Ժողովոյ· օրէն էցէ եպիսկոպոսի անօրինել զանկանոնութիւն՝ ի չանգանաց կամ՝ ի ընբռնենէ զերիւրեալն:
30· Ուր չէցէ Ժողովն սրբիչենաեան ընկալեալ:
31· Ջո՞ր ընդ անուամբ եպիսկոպոսի էցէ խմանալ:
32· Ցաղագս օտարականաց· օրէն էցէ եպիսկոպոսի արձակել՝ ի վերապահելոց Պապին արտաքոյ խոստովանութեան:
33· Զի՞նչ էցէ խմանալ զանչայտ մեղս:
34· Օրէն էցէ եպիսկոպոսի աւանդել այլոյմ զայս իշխանութիւն:
35· Կարէցէ արձակել՝ ի վերապահելոց այլոյ եպիսկոպոսի:
36· Կարէցէ և՛ ի վերապահելոց յետ Ժողովոյն:
37· Օրէն էցէ եպիսկոպոսի արձակել զնոտաուովանահայր, որոյ արձակեալ էցէ զմեղսակից իւր՝ ի գործ բղջախտութեան:
38· Կարէցէն եպիսկոպոսունք արձակել՝ ի վերապահելոց կոնդակին ընձրեաց:
39· Կարէցէն անօրինել զանկանոնութիւն· յոր անկեալ էցէ ոք հերետիկոսութեամբ:
40· Կարէցէն արձակել զանկարողս դիմել՝ ի Հռոմ:
41· Եւս և՛ ի ձեռն այլոց:
42· Ջո՞ր պարտ է խմանալ անկարողս:
43· Անկարողք՝ ի սպառ:
44· Պա՞րտ էցէ նոցա դիմել գրով:
45· Պա՞րտ էցէ նոցա դիմել գէթ առ եպիսկոպոսն· և եԹէ չկարէցէն· և զի՞նչ եԹէ էցեն՝ ի հոգեվարս:
46–48· Վեցեակ դեպք վերապահեալք եպիսկոպոսի, և մանաւանդ բանադրանք Հարկանողաց զեկեղեցականս:
49· Տնօրինութիւն ըստ ոչ օրինի պահելոց:

30. Երիկամայք:
31. Անկանոնութեան անչափ յանցանաց. և զինչ եթէ ապանութիւնն իցէ բոլորովին զանխոչ:
32. Եթէ իցէ պատահական:
33. Տնօրինութիւն անբնդոծնակութեան:
34. Իշխանութիւն եպիսկոպոսի՝ ի վերայ պսակի:
35. Տնօրինութիւն հրատարակման. ուխտ ողջախոհութեան. արգելից խնդրելոց ազմուկական պարտս. լուծիչ արգելից երկբայականաց:
36. Լուծիչ արգելից հատատեաց, եթէ կատարեալ իցէ ամուսնութիւնն:
37. Եթէ չիցէ կատարեալ:
38. Օրէն իցէ եպիսկոպոսի աւանդել այլում զայս իշխանութիւն:
39. Տնօրինութիւն միջոցաց ձեռնադրութեան:
40. Ժամարարին յայլում եկեղեցւոջ պատարագելոց:
41. Յետ միջօրէի պատարագելոց:
42. Ջմատրանց:
43. Ո՞ւր օրէն իցէ եպիսկոպոսի պատարագել:
44. Կարիցէ՞ տալ հրամանն պատարագելոց առանձին:
45. Իշխանութիւն եպիսկոպոսաց և մեծաւորաց ընտրելոց խոստովանահարս:
46. Ջարգելամանից կուսասատանաց:
47. Ընտրութիւն խոստովանահարց նոցա:
48. Իցէ՞ օրէն եպիսկոպոսի փոխել զկոտակս:
49. Անտոյգ հատուցմանց իրաւախոհութեան:
50. Թուոյ պատարագաց նուազութեան:
51. Ջերդմանց և զուխտից. կցորդել զժառանգութիւնս և կանգնել նոր ժողովրդապետութիւն:

29. Եպիսկոպոսունք ըստ սահմանադրութեան արիդենատեան ժողովոյ կարեն տնօրինել զամենայն անկանոնութիւնս և արգելս պատպականս՝ յորս անկեալ իցէ ոք վասն ծածուկ յանցանաց, ՚ի բաց առեալ զկամաւոր սպանութիւն, և զայլ անկանոնութիւնս աճեալս յատեան: Պատճառք վասն ծածուկ յանցանաց. զի որպէս Պոռնայինա, Վրասթրոխալ, Սալմատիկեանք և այլք հատատեն, չկարեն եպիսկոպոսունք տնօրինել զանկանոնութիւնս ծածուկս յառաջ եկեալս ՚ի թերութենէ, եթէ չիցեն երկբայելիք, որպէս հաւանականաբար ասեն Ֆանեանոյ, Ռուրնեզիւս և այլք, ըստ ասացելոցս ՚ի գլ. ԺԶ. 57: Կարեն և արձակել զկպատակս իւրեանց իւրովի, կամ ՚ի ձեռն ուրուք ՚ի քահանայից սահմանելոց առ այս, ՚ի վերապահելոց Պապին անչափից:

30. Բայց ուր չև և իցէ ընկալեալ արիդենատեանն ժողով, չկարեն անդ եպիսկոպոսունք վարել զիշխանութիւնս զայսոսիկ, որպէս ուսուցանեն միաբան աստուա-

ծաբանք. զի որք չառնուն յանձն զբեռինս եդեալս ՚ի ժողովոյ անտի, չէ նոցա իրաւացն ՚ի շնորհս նորա վայելել:

31. Ընդ եպիսկոպոսունս է իմանալ և զիւոխանորդս ուխտի կանոնիկոսաց՚ի դատարկանալ աթոռոյն, այլ ոչ և զիւոխանորդս եպիսկոպոսաց. զի սոքա Թէպէտ և կալեն զամենայն՝ որ ինչ եպիսկոպոսին ըստ կարգի եպիսկոպոսութեան իւրոյ է սեփական իշխանութիւն, որպէս ասացաւք՚ի Թիւ 47. այլ ոչ և որ ինչ ըստ աւանդեալ իշխանութեան կարիցէ եպիսկոպոսն, Թէպէտ և յարակից Թեմական պաշտամանն կոչէ այն, որպէս ասէլոց եմք՚ի Թիւ 34 և 47: Պարձեալ և զառանձին տուչութիւն վասն իշխանութեանցս այսոցիկ պահանջէ բազայայտակի սուրբ ժողովն: Նոյնպէս վասն աբբայից և որոց հանգոյն նոցին եպիսկոպոսական իրաւասութիւն է, կէսք յաստուածաբանից ասեն չունել զիշխանութիւնս զայսոսիկ. բայց հանրագոյն կարծիք զհակառակն հաստատեն. քանզի ընորհք սահմանեալք յիրաւունս՝ հաւասար են օրինաց, և ամենեցուն իսկ անկ են՝ ուր նոյն պատճառք՚ի միջի կայցեն. ապա Թէ ոչ, հպատակք մեծաւորացն այնոցիկ զուրկ դառնէին՚ի շնորհէն, զիւ տեղով նոցա առ ո՞ դիմել:

32. Ընդ հպատակս է իմանալ և զօտարականս. զի և զնոսա կարող է եպիսկոպոսն արձակել յամենայն վերապահելոց Պապին անյայտից, որպէս ուսուցանեն Սուարէզ, Սանքէզ, Պոնաչինա, Կաւարրոյ, Պարպոզա, Պասխոյ և այլք: Ոչ՚ի Թէպէտ և սուրբ ժողովն շնորհէ եպիսկոպոսաց արձակել զյաճախաւորս հպատակս իւրեանց, այլ օտարականք ևս՚ի խոնարհել արկանել զանձինս ընդ խոհրդական աւենսիւն՝ համարին հպատակք նոցա: Նայրն Սուարէզ ածէ և զայսպիսի Թիւն ինչ առաքելական գահուն՚ի հաստատութիւն այսոցիկ: Կամին իրի չկարեն եպիսկոպոսունք արտաքոյ խոհրդական աւենի արձակել զնոսա, որպէս հաստատէ Յանեանոյ, զԻրիգոր ԺԳ ևս ածեալ առ այս ըզգայայտարարութիւն: Այլ զարձակեն իմա՚ի մեզայ և եթէ և՚ի բանադրանաց, և ոչ զնոօրինմանէ անկանոնութեանց և արգելմանց՝ որ յառաջ գան՚ի նոցունց. զի որպէս նոյն ինքն Իրիգոր ԺԳ յայտ առնէ, չկարէ ե-

պիսկոպոսունք տալ զարձակուածն զայն օտարականաց, և ա-
և այնոցիկ՝ որք իշխանութեամբ իւիք կամ պաշտամամբ
կամ օրպէս ժխիկք կայցեն անդ։ Նոկ վասն իշխանու-
թեան եպիսկոպոսի տնօրինելոյ յանկանոնութենէ ըզ-
հպատակ իւր բացակայ յայլուստ թեմի, Նայրն Նիւ-
և այլք չկարեն ասեն. այլ հանրագոյն և հաւանակա-
նագոյն կարծիք զհակառակն հաստատեն. զի զտնօրի-
նուածն մարթ է տալ և՛ի հեռուստ, և զիրաւասութիւն
կամաւոր՛ի կնոջ ականել արտաքոյ ևս թեմի՛ի վերոյ
հպատակաց։

33. Նայայս յանգանս ոչ է պարտ իմանալ զայն՝ զոր չի-
նէ մարթ երկուց ոմանց վկայութեամբ ցուցանել յա-
ւետնի, օրպէս իմանան ոմանք. այլ ըստ հանրական կար-
ծեաց իմանալի է զայն ամենայն յանցանս՝ զորս մարթ
եղէ պատրուակել իւիք, թէպէտ և մարթ եղէ ցուցա-
նել զայն յաւետնի։ Ոմանք որոց Սանքէզ, Նզորիոյ,
Ծուրնելլի, Պոնաչինա, Նրասթրոփալ, Սալմատիկեանք
և այլք անյայտ յանցանս իմանան, զոր առաւելագոյնք
՛ի քաղաքացոց կամ՛ի դրացեաց կամ՛ի միաբանութե-
նէն՝ ուր եղեն գնթ ոգիք տանն՝ անգիտանայցեն. կար-
ղինալ Նամպերթինի, Ծիպուրցիոյ, Նաւարրոյ, Սայ-
իրոյ և այլք յաղագս անյայտ արգելից պսակի, որոց
նոյն կանոն է, ասեն՝ թէ անյայտ համարին արգելք, որ
եօթանց կամ ութից ևեթ ծանօթք եղեն՛ի քաղաքի,
և վեցից՛ի գեղջ։ Նս օրպէս բարւոք իմաստասիրէ Ֆա-
նեանոյ, յանցանք կամ արգելք երկուց ոմանց վկայու-
թեամբ ցուցեալք յաւետնի՝ յայնժամ չհամարին ան-
յայտք, յորժամ՛ի հրամանագրի արձակմանն յաւե-
լեալ եղէ պայման՝ Բոլորովին անյայտ գոլոյ։

34. Ունէր եղեն եպիսկոպոսի աւանդել այլում հան-
րապէս զամենայն իշխանութիւն իւր ընտրեալ՛ի տրի-
պենտեան ժողովոյ։ — Սուարէզ, Պարպոզա, Սանքէզ
և այլք վասն տնօրինման անկանոնութեանց շատ հա-
մարին եպիսկոպոսի զտուչութիւն իշխանութեան իւրոյ
այլում, առանց փոխանորդ զնա կացուցանելոյ. զի այս
իշխանութիւն՛ի հրամանէ սրբոյ ժողովոյն համարի
արդ եպիսկոպոսաց թեմական իրաւունք յարակից պաշ-
տաման նոցա, և ոչ անձին քաւականութեան ընտրէ։
Նոկ վասն արձակման՛ի վերապահելոյ կարևոր համա-

ըլլն ամանք՝ առանձին փոխանորդ կացուցանել զոք ըստ բանից Ժողովոյն. էարձէ կամ՝ է չէ՞ն փոխանորդն կացուցեալ առ այս: Եթէ հանրական և հաւանականապէս կարծիք շատ համարին և առ այս ՀՀանրական տուչութիւն իշխանութեան՝ բացայայտակի զնաստունս իշխանութեանն նշանակելով, զի հաւասար է այս փոխանորդ կացուցանելոյ:

35· Որպէս իցէ եպիսկոպոսի ըստ այսմ իշխանութեան իւրոյ արձակել կամ տալ իշխանութիւն արձակելոյ՝ ի վերապահելոց այլոց եպիսկոպոսաց հանդերձ բանադրանօք, եթէ իցեն անյայտք: — Պահաչինա և այլք օրէն համարին վասն շնորհելոյ Ժողովոյն արձակել յոմն՝ ոչ էդէ անյայտից, և զի վերապահելոց առաքելական գահոյն. իբր զի աւելորդ էր անդ նա՝ նան, եթէ չկամիցի Ժողովն տալ իշխանութիւն եպիսկոպոսաց արձակելոյ և զվերապահեալս այլոց եպիսկոպոսաց: Սակայն այլևայլ յայտարարութիւնք առաքելական գահոյն զհակառակն հաստատեն, ՚ի բաց առեալ յայսմանպէս զվերապահեալս այլոց եպիսկոպոսաց:

36· Արդեօք իշխանութիւնս այս, շնորհեալ եպիսկոպոսաց ՚ի տրիդենտեան Ժողովոյն, զօրէ և վասն յանցանաց և անկանոնութեանց վերապահելոց յետ այնր Ժողովոյ: — Հանրական կարծիք համարին զօրել, զի անպայման է սահմանադրութիւն Ժողովոյն. և ըստ առածին՝ ՚՚ոչ է պարտ զանազանել ուր օրէնք ոչ զանազանեն,,. Եւ ոչ ինչ զօրէ ընդդէմ այսօրիկ յայտարարութիւն Պիոսի Ժ., զոր ամանք առարկեն, զի յայտ առնէ քահանայապետն չկարել եպիսկոպոսի արձակել զկուսան, որոյ լուծեալ իցէ ծածկաբար զվիճականս կուսաստանին՝ ՚ի բանադրանաց վերապահելոց ՚ի սրբոյն Պիոսէ: Վասնզի ամենեցուն խոկ ընդունելի է՝ զի ուր ուրեք ՚ի կոնդակս բացառութիւն ինչ է, որպէս առատ զի ՚ի հոգեվարս ևնէ շնորհի հրաման արձակելոյ, պարտ անդ իշխանութիւն եպիսկոպոսի:

37· Արդեօք կարիցէ՞ն եպիսկոպոսունք ըստ իշխանութեանս այսմիկ շնորհելոյ նոցա ՚ի տրիդենտեան Ժողովոյն՝ արձակել ՚ի բանադրանաց, յոր անկանին խոստովանահարք յարձակել զմեղսակիցս իւրեանց ՚ի գործ պղծութեան: — Ի միջի կոզմանէ Թուի թէ չկարի-

յեն. զի այնպիսի մեզք՝ ի ծածուկ մնան, և եթէ եպիսկոպոսաց օրէն էր արձակել զնոսա՝ անօգուտ ամենևին գտանէր վերապահել զայն Պասքն. և որպէս ասացաք՝ ի թիւ 17, յայսպիսի դէպս համարի խափանեալ լռելեայն ամենայն արտաւնութիւն, զի ոչ ինչ զօրեն օրինք՝ ի մնալ անխափան արտաւնութեանն: Յայլմէ կողմանէ մարթ է պատասխանել, զի՝ ի մնալ և այս անխափան իշխանութեան եպիսկոպոսաց՝ ոչ բոլորովին՝ ի զօր գտանի վերապահել զայն Պասքն. նախ՝ զի մարթ է և այս եղեռանն գալ՝ ի յայտ. և երկրորդ՝ զի գիտի՝ ի Հռոմ, և՝ ի տեղիս՝ ուր չև և այս տրիդենտեանն ժողով ընկալեալ իցէ, կամ՝ ուր ուրեք չկարիցեն եպիսկոպոսունք վայելել յարտաւնութիւնն յայն ըստ ասացեալոցս՝ ի թիւ 30, զօրէ վերապահութիւնն այն: Նման այսմ իմաստասիրեն Սալմանտիկեանք, և ածեն՝ ի վկայութիւն ոչ սակաւս յաստուածաբանից՝ որոց զկնդակին զայնմանէ Լենեդիկտեայ ԺԴ. գրեալ է:

38. Երդեօք կոնդակաւն ընդրեաց խափանեալ իցէ իշխանութիւն եպիսկոպոսաց վասն անյայտ հերետիկոսութեան, և վասն վերապահելոյ՝ ի նմին կոնդակի: — Նաւարրոյ, Ռանինքիոյ, Սիլանէ, Ռանչինա, Սալմանտիկեանք և այլք չհամարին խափանեալ զայն, իբր զի կոնդակն այն ոչ յայտնապէս խափանէ զիշխանութիւնն ընդհակառակ նոցա՝ ի տրիդենտեան ժողովոյ, որպէս պարտն էր ըստ կանոնաց: Եւ հանրագոյն կարծիք զհակառակն հաստատեն ըստ յայտարարութեան սրբոյ գահոյն վասն յաւելուածոյ կոնդակին՝ ի հոփեվարս դեպն, որպէս ասացաք՝ ի թիւ 36, և վասն արգելոյ նորա մի՛ ոք արձակել պատճառանօք որոց և իցէ առանձնաշնորհութեանց՝ ի ընդ կամ՝ ի ահմանադրութեանց ծաղովոյ երէից ընդհեղոյ: Եւ այնչափ այլ ևս յայտարարութիւնք և վճիռք են քահանայապետաց զայսմանէ, զի կարգինալ Լամբերթինի յանդգնութիւն այնու հետև համարի օձնել զառաջնոցն կարծիս:

39. Եթէ եպիսկոպոսն՝ ի նեղքին ատենի արձակել յանյայտ հերետիկոսութենէ, այլ որպէս առաքելական փոխանորդ կարէ տնօրինել զանկանոնութիւն՝ յոր անկեալ իցէ ոք վասն անյայտ հերետիկոսութեան, և արձակել ևս գայսմանէ իսկ հերետիկոս

յարտաքին առենի՝ ի հրաժարել նորա ի մոլորութենէն առաջի նօտարի և վկայից։ Նա յետ արձակելոյ զնա եպիսկոպոսին, ուր և իցէ խոստովանահայր այնուհետև կարէ արձակել զնա ի մեղաց հերետիկոսութեան. զայս այսպէս ուսուցանեն աստուածաբանք առ հասարակ։

40. Որ՞ն իցէ եպիսկոպոսի արձակել ի մեղաց հերետիկոսութեան և յայլոց վերապահելոց կոնդակին ընթերեաց զանկարողս գնալ ի Հռոմ։ — Ամենք բոլորովքին ժխտեն, այլք ըստ մասին և եթէ արձակման ի հերետիկոսութենէ. այլ հանրագոյն կարծիք աստուածաբանից զերկոսեան և օրէն համարին, և հաստատեն զայն ի կանոնաց, մանաւանդ ուր ասի. "Նթէ առնա՝ յորմէ պարտինն ընդունել զարձակումն՝ խափանիցին դիմել, յայլմէ ումեքէ արձակեսցին"։

41. Յայսպիսի դէպս խափանելոյ ուրուք՝ ոչ միայն անձամբ կարէ եպիսկոպոսն արձակել զնա ի հերետիկոսութենէ, այլ և ի ձեռն այնոցիկ՝ որոց հանրապէս աւանդեալ իցէ զիշխանութիւնն իւր։ Նա ոչ ինչ զօրէ ընդդէմ այսորիկ սահման տրիդենտեան ժողովոյն՝ նոցա հաւել, ա՛մ ի վոխանորդաց նոցա լէիցէ հրամանն. զի անդ եպիսկոպոսն ոչ ըստ հրամանի ժողովոյն արձակէ, այլ ըստ հասարակաց իրաւանց՝ որով շնորհեալ է եպիսկոպոսաց ըստ թեմական իշխանութեանն արձակել, և տալ իշխանութիւն արձակելոց որպէս՝ի բնաւից իսկ վերապահելոց։

42. Ընկարօղս կամ խափանեալս է իմանալ զծերս, զկանայս, զհիւանդս, զչև ժամանեալս յարբունս, զաղքատս, և զամենեսեան՝ որոց բանաւոր ինչ պատճառք իցեն չկարելոյ ուղևորել։ Նթէ արգելքն առժամանակեայք իցեն, որպէս վեց կամ եօթնամսեայ, մարթ է արձակել զնոսա, երդումն ի նոցանէ ընկալեալ՝ ի դադարել արգելիցն՝ դիմելոյ առ գահն առաքելական գնթ ի ձեռն վոխանորդի, և ընդունել ուղղակի զարձակումն։ Նա ի վերջանալ յերդմանէն՝ անկանին ի նոյն բանադրանս, թէ և ստուգիւս ղղջացեալ իցեն, և հատուցումն արարեալ թշնամանելոյն։

43. Նսկ եթէ միանջենաւորք իցեն արգելքն, որպէս տան կամ գնթ հինգ ամաց, ազատ են արձակեալքն

'ի պարտականութենէ դիմելոյ առ սուրբ գահն։ Ընշանակէս արգելեալ համարին, նախ՝ որդիք էվ ևս բաժանեալք չընտանեաց։ Երկրորդ՝ կրօնաւորք, թէպետ և նախ քան զկրօնաւորել անկեալ իցեն'ի բանտ։ Երրորդ՝ ծերք անդեալք զվաթսունամենից։ Չորրորդ՝ ծառայք։ Հինգերորդ՝ աղքատք։ Վեցերորդ՝ դատապարտեալք ցկեանս 'ի ծառայութիւն կամ 'ի բանտ։ Եօթներորդ՝ որոց իցէ ախտ յարատեւակ, որպէս տենդ դարձաւոր։ Ութերորդ՝ որոց պարտ իցէ պահել զընտանիս, կամ տնտեսել զինչս նոցա։ Իններորդ՝ կանայք առ հասարակ, 'ի բաց առեալ զկուսանս՝ որոց լուծեալ իցէ զփեսայեան, թէպետ և զանխուսք. զի ամենևին վերապահեալ է այս ըստ ասացելումն'ի Թիւ 36։ Տասներորդ՝ էվ յայլբուսնս հասեալք, թէպետ և յետ հասանելոյ խնդրիցեն արձակումն։ Տասնետասներորդ՝ որք էիցեն ազատք, որպէս զինուորք կամ սանք կղերանոցի։ Երկոտասաներորդ՝ ամենեքեան իսկ, որք առանց հոգևոր կամ մարմնաւոր ծանր տուժից չկարեն գնալ'ի Հռոմ։

44. Ընդ այսպիսիք ըստ հաւանականագոյն և հանրական կարծեաց չեն պարտական և ոչ'ի ձեռն փոխանորդի կամ նամականոց դիմել'ի Հռոմ. զի արգելքն այնոքիկ, ըստ ասացելումն'ի Թիւ 40, տան անդրէն եպիսկոպոսաց զիշխանութիւն կարդի նոցա զբարձեալն վերապահութեամբ Պապին։ Այնաւանդ զի օրէնք հրամայեն և՛եթ գնալ անձամբ'ի Հռոմ. վասն որոյ որ չկարէ գնալ անձամբ, ազատ է'ի պարտականութենէ։

45. Հայր ապաշխարողին պարտ է յայնժամ դիմել առ եպիսկոպոսն վասն ընդունելոյ'ի նմանէ զարձակումն'ի վերապահելոց Պապին։ Իսկ թէ զինչ'ի ժամ մահու պարտ իցէ առնել, տես'ի գլ. ԺԲ. 97։ Իսկ եթէ առանց իսկ վտանգի մահու չկարիցէ նա դիմել առ եպիսկոպոսն, յոյժ հաւանական է կարել զի և իցէ խոստովանահօր արձակել զնա, պայմանաւ յանդիման լինելոյ եպիսկոպոսին'ի գաղտարել արգելչին։ Հայր յայնժամ ապաշխարողն ըստ հաւանական կարծեաց չէ ըստ ինքեան պարտական խոստովանելոց զվերապահեալ մեղսն, եթէ չիցէ գարձադարձիւ անկեալ'ի նոյն, կամ'ի

մեծաւոր վանից կայցէ վերատին անկանելոյ, որով կարեւոր լինի յայտնել զայն՝ առ՝ի կարելոյ խոստովանահօրն դատել զպատրաստութիւն նորա ըստ առաջելոցս՝ի գլ· ժե· 27, 28· և՝ի գլ· ժզ· 123, և՝ի հոգեվարս ապաշխարողին՝ հաւանական է կարել ամենայն խոստովանահօր, եւս և՝ի դատանել անդ եպիսկոպոսին, արձակել զնա՝ի վերապահելոյ Պապին· զի որպէս առաջագոյն, (գլ· ժզ· 69), դադարէ յայնժամ ամենայն վերապահութիւն: Բայց իսկ՝ե՛ վերապահելոյ Պապն, և ոչ եպիսկոպոսին· զի եթէ պարտ է խոստովանահօր պարտա՛ի վերայ գնել հիւանդին եւս և՝ի հոգեվարս՝ զի յառաջանան յանդիման լոյծ մեծաւորին վանն ընդունելոյ՝ի նմանէ իրաւ պատկանաւոր և զպաշխարանս վերապահելոյ մեղացն, թէպէտ և արձակելոյ, որպէս ապա կարիցէ արձակել զնա՝ի գտանել անդ նորին իսկ մեծաւորն:

46· Բան բանադրանաց լինէ, որոց արձակումն ըստ իրաւանց վերապահեալ է եպիսկոպոսաց· և են այսոքիկ: ա· Հարկանել զեկեղեցական կամ կրօնաւոր և կամ ոք յոյ իցէ արտաքնութիւն կանոնին: բ· Հայթայթել ըզվիժումն հոգևորեալ սաղմին: գ· Ոչ՝ի հոգեվարս արձակեալ՝ի բանադրանաց վերապահելոյ եպիսկոպոսին, յառաջանալն ոչ լինի յանդիման նմին: դ· Ոչ զգօծակից լինի՝ի նոյն մեղս ընդ բանադրելոյն եպիսկոպոսէն: ե· Սմենայն իսկ բանադրանաց վերապահեալք եպիսկոպոսէն: Նայց զՀարկանողաց զեկեղեցականս պիտելի է, զի պարտ է զանազանել զթեթև հարուած՝ի ծանր կամ յամենածանր հարուածոյ, և զի խնդրի մեզք մահաւջափ վանն անկանելոյ հարկանողին՝ի բանադրանս: Թեթև հարուած է հարկանել եթէ ձեռամբ կամ ոտամբ կամ գաւազանաւ և այլն· ծանր՝ խլել զմի յատամանց, խլել զգիսակ հերոց, թողուլ հարուածովն երաշխեպ կամ ուռոյց՝ի մարմնի, կամ մագլել և բռնոյն հանել արիւն: Իսկ ամենածանր հարուած՝ որ խեղդ զոք կամ կրճատէ, կամ կարեվէր խոյճ, կամ զինուք վիրաւորէ, կամ հեղումն արեան կամ ծանր ինչ թշնամանս գործէ: Ա՝ան որոյ յաձախ թեթևն հարուած ծանր կամ ամենածանր համարի ըստ պատուականութեան թշնամանելոյն կամ ըստ գայթակ-

ղութեանն, որպէս կրօնաւորն հարկանել զեկեղեցական. կամ ըստ առեղծ, որպէս հարկանել յեկեղեցւոջ. կամ ըստ ժամանակի, որպէս ՚ի կատարել զաստուածային պաշտամունս կամ ՚ի ժամ պատարագի:

47. Որդ եթէ թեթև իցէ հարուածն, կարէ արձակել զայն եպիսկոպոսն, և փոխանորդ իսկ նորա, զի այս իշխանութիւն անկ է եպիսկոպոսի յիրաւանց կարգին ըստ հանրական կանոնին որպէս ասացաք ՚ի թիւ 31. զի որ ինչ կարէ եպիսկոպոսն ըստ իրաւասութեան կարգին, և ոչ ըստ աւանդեալ իշխանութեան, կարէ և փոխանորդ նորա՝ որ առենակից է եպիսկոպոսին ՚ի նմին առենի: Յաւանականաբար կարեն արձակել զայն և որոց պրեթէ եպիսկոպոսական իրաւասութիւն է, և ընդ եպիսկոպոսունս համարին ըստ ասացեալսն ՚ի թիւ 31: Իսկ եթէ ծանր իցէ հարուածն կամ ամենածանր, պատն ևեթ կամ փոխանորդ նորա կարէ արձակել զայն. վասն որոյ մնրթ է և առ ժողովն ապաշխարութեան դիմել, որպէս ասացաք ՚ի գլ. ՃԾ. 130: Իսկ եպիսկոպոս կարէ ևեթ յորժամ զանխուսափ իցէ հարուածն, կամ հարկանօղն չև յաղթուսն հասեալ և կամ կին, կամ եթէ չկարիցէ հարկանողն գնալ ՚ի հռովմ, որպէս ասացաք ՚ի թիւ 40: Ի՝հաքանակեացք ՚ի կղերանոցս կարեն ընդունել արձակումն յեպիսկոպոսէ, եթէ ծանր ևեթ իցէ հարուածն՝ այլ ոչ եթէ ամենածանր:

48. Երկբայս եթէ արդեօք ծանր իցէ հարուածն եթէ թեթև, ծանր համարելի է զայն ըստ սահմանելոյ կանոնին: Ի արբուցանել եկեղեցականի թոյն, ըստ հանրագոյն և ըստ հաւանականագոյն կարծեաց՝ յայնժամ անկանի ՚ի բանադրանս, յորժամ սկսանիցի թոյնն ազդել ՚ի նա, զի յառաջ քան զայն չիք բռնութիւն:

49. Ի յայտնի անկանոնութիւնս կարէ եպիսկոպոսն անօրինել որոց չիցեն ծնեալ ՚ի սուրբ ամանութենէ՝ ընդունել զիոքր աստիճանս, զեկեղեցական պարզ ժառանգութիւնս, զկանոնիկոսութիւն ՚ի հասարակ եկեղեցիս, զթերակատար հասս կաթողիկէից, և զայլ պաշտամունս, որոց չիցեն յարակից սուրբ աստիճանք. այլ ոչ և զժառանգութիւնս հոգաբարձութեան, որպէս միաբանին աստուածաբանք: Այլ օրէն իցէ արդեօք

եպիսկոպոսի տնօրինել նոցա և զկանոնիկոսութիւն մայր եկեղեցւոյ ։ — Ըստ հանրապոյն և ըստ հատանական կարծեաց չէ օրէն. զի թէպէտ և կանոնիկոսութիւն ըստ ինքեան է պարզ ժառանգութիւն, այլ ըստ տրիդենտեան սահմանադրութեան կցորդ է ընդ սուրբ կարգի, և չէ օրէն ունել զայն արդ փոքր աստիճանաւորի ։ ( )րէն էր եպիսկոպոսի տնօրինել և զամենայն իսկ անկանոնութիւնս այնոցիկ՝ որ չկան յօրինաւոր ամուսնութենէ, այլ անյայտ ։ — Ընդպէտ և ոմանք օրէն համարին վասն տալոյ տրիդենտեան ժողովոյն իշխանութիւն եպիսկոպոսաց տնօրինելոյ զանկանոնութիւնս անյայտ յանցանաց, այլ ըստ այլոց աստուածաբանից առ հասարակ ոչ է օրէն. զի անկանոնութիւնս այս ոչ՝ ի յանցանաց է, այլ՝ ի պակասութենէ. և եթէ համարիցիմք իսկ զայն՝ ի յանցանաց, բան ժողովոյն զյանցանաց անձին իւրաքանչիւր է, և ոչ օտարին ։ ( )րէն էր եպիսկոպոսի տնօրինել նոցա զկեթ պաշտելոյ զսուրբ աստիճանն ընկալեալս ։ — Ո՛չ նոյն և զայսմանէ ըստ հանրապոյն կարծեաց է իմանալ որ ինչ՝ ի վեր անդր ասացաք, զի չէ օրէն եպիսկոպոսի տնօրինել զնոսա՝ ի սուրբ կարգ ։

50. Լաւարդոյ, Սանքէզ, Պոնչինա, սուրբ Գաւթնացին և այլք օրէն համարին եպիսկոպոսին տնօրինել և վերկականայս՝ ի փոքր աստիճանս և՝ ի պարզ ժառանգութիւնս. այլ ըստ հանրապոյն կարծեաց ոչ օրէն համարելի է. զի Ալբստոս ց. արգելեալ՝ ի կարգէն յայտ արար զմի յեպիսկոպոսաց, որոյ տուեալ էր ժառանգութիւն երկինոյ ումեմն, և զձեռնադրեալն անկեալ ընդ պատժովք՝ որպէս ոչ ըստ օրինի ընկալեալ զկարգ ։ Այլ եթէ ոք յետ եկեղեցական կամ կրօնաւորական ուխտի ամուսնացեալ իցէ, թէպէտ և յայտնի իցէ օրինազանց ամուսնութիւնն, հանրական կարծիք օրէն համարին եպիսկոպոսի տնօրինել և յընդունելութիւն սրբոյ կարգաց. ՚ի բաց առեալ զամուսնութիւնն ընդ այրոյ կամ ընդ անկելոյ՝ ի կուսութենէ, և կամ եթէ նախ քան զձեռնադրութիւն ածեալ իցէ նորա այլ կին ։

51. ( )րէն է եպիսկոպոսին, որպէս յառաջ ասացաք, տնօրինել զանկանոնութիւնս՝ որ՝ ի ծածուկ յան-

ցանաց յառաջ եկեալ, բայց՝ ի կամաւոր մարդասպանութենէ։ Յաւելուն ոմանք յաստուածաբանից, զի եթէ սպանութիւնն այնպէս ծածուկ լիցի՝ զի չլիցի մարթ ցուցանել երբեք զայն՝ ի պատասխանի, կարէ և յայնժամ եպիսկոպոսն անօրինել։ Ա. այս չէ ընդունելի այլոց. զի եպիսկոպոսունք չունին՝ ի վերայ անկանոնութեանց աւելի ինչ իշխանութիւն քան զոր ետ նոցա Ժողովն տրիդենտեան, յայտնապէս՝ ի բաց առեալ զկամաւոր մարդասպանութիւն անյայտ։ Եւ է իսկ յայտնապարտութիւն ինչ Ժողովոյ տրիդենտեան սահմանադրութեանց՝ ի հաստատութիւն վարդապետութեանս այսորիկ։ Այլ ընդունելի ամենեցուն է կարել եպիսկոպոսի անօրինել ուր վտանգ լիցի հոգւոյ և կամ այլ ծանր ինչ պատճառ, և դժուարին լիցի դիմել առ Պապն։ Յաւելուն Սուարէզ, Վասկէսիոս, Պոնացինա, Սալմանտիկեանք և այլք, կարել եպիսկոպոսի անօրինել զանկանոնութիւնս անյայտս՝ որ՝ ի խոհեղէզ և՝ ի կրճատութենէ յառաջ եկեալ։ Իսկ զանկանոնութիւն որ՝ ի պատահական մարդասպանութենէ՝ ի յայտ իսկ եկելոյ՝ հանրական կարծիք օրէն համարին եպիսկոպոսի անօրինել յընդունելութիւն փոքր աստիճանաց և պարզ ժառանգութեանց. զի այս և յառաջագոյն օրէն էր նոցա, և Ժողովն տրիդենտեան զկամաւորն եւեթ՝ ի բաց հան, այլ ոչ և զպատահականն՝ ոչ զանյայտ և ոչ ըզյայտնի։

52. Մարդասպանութիւն պատահական է՝ որպէս եթէ կամելով ուրուք հարկանել եւեթ զոք, անզգոյշ հարուածով սպանցէ զնա. կամ վերաբոյժ անզգուշութեամբ տացէ պատճառս մեռանելոյ վիրաւորին. ըստ այսմ խնա և զայլոց։ Ընդ նմին կրկին եթէ արգելօք համարիցի պատահական մահ՝ պատահեալն՝ ի կազելն։ — Ահա պատահական համարին զայն. բայց Սուարէզ, Նաւարրոյ, Վոնչինա, Թոմպուրինի, Սիրոլը, Տիանա և այլք զհակառակն հաստատեն. տես որ ինչ ասացեալն՝ ի գլ. ԺԹ. 108։ Ա. յլ հանրական և յոյժ հաւանական կարծիք օրէն համարին եպիսկոպոսի անօրինել զսպանութիւն, զոր՝ ի պաշտպանել ուրուք զանձն՝ գործեցէ անզգուշաբար. զի այսպիսի մարդասպանութիւն չէ քաղցրացեալ համաւոր։

53. Օրէն ինչ եպիսկոպոսի տնօրինել զանընդունակութիւնս սահմանեալ ի պատուհաս. որպէս զարդել Սիքստոսի Ե. սահմանեալ ընդդէմ այնոցիկ՝ որոց հայթայթեալ իցէ զվիժուածն, չկարելոյ ընդունել զժամանգութիւնս. որպէս և զարգել Կղեմեդիտեայ ԺԲ. սահմանեալ ընդդէմ խոստովանահարց հրապուրողաց, չկարելոյ պատարագել: — Ընաքլեթոյ ոչ օրէն համարի, և Յոնքալեա երկբայի. բայց Լսել և Սիրոել զհակառակն հաստատեն ըստ հանրային կանոնին, զոր ասեն ընկալեալ յամենեցունց, կարելոյ եպիսկոպոսաց տնօրինել զամենայն պատիժս սահմանեալս ի հասարակաց օրինաց և ոչ վերապահեալս Պապին: Տես ի գլ. Գ. 58:

54. Յազագս պսակի այլ և այլ իշխանութիւնք են եպիսկոպոսի տնօրինականք. զի կարէ նա տնօրինել զերդակի հրատարակութեն, ըստ ասացելումն ի գլ. ԺԸ. 58: Կարէ տնօրինել և զուխտ ողջախոհութեան ամուսնացս, որպէս և զայսմանէ ասացեալ անդ ի Թիւ 54: Կարէ տնօրինել և զարգել խնդրելոյ զամուսնական պարտս. զայսմանէ ևս ասացեալ անդ ի Թիւ 68: Պարտ արդ տեսանել Թէ ինչ է եպիսկոպոսաց իշխանութիւն ինչ ի վերայ լուծիչ արգելից:

55. Պապին միայնոյ է տնօրինել զլուծիչ արգելս. այլ ուր արգելքն երկբայելիք իցեն, Հանրական կարծիք օրէն համարին և եպիսկոպոսի տնօրինել զայն: Եւ Թէպէտ Սանքէզ ի Հառս պսակի Թուի ինն ջնջունել զայս, այլ ի Հառս տասնաբանեայ պատուիրացն ասէ. "Եւ քանզի վերապահութիւն տնօրինման դժպհի ինն է, պարտ է զայն աւիծուիլ ի ստոյգ դէպս. զի երկբայականք ոչ բովանդակին ընդ վերապահութեամբ,,:

56. Եթէ ստոյգ իսկ իցեն լուծիչ արգելք, այլ կատարեալ իցէ պսակն, Հանրական կարծիք և զայն օրէն համարին տնօրինել եպիսկոպոսի, յորժամ դժուարին իցէ դիմել առ Պապն, և վտանգ իցէ գայթակղութեան և անուանարկութեան ի բաժանել ամուսնացս, կամ անժուժկալութեան ի կալն ի միասին: Այլ որպէս ազգ առնեն Լաքրուա և այլք, Եթէ դիւրաւ մարթ իցէ ընդունել զտնօրինումն ի ձեռն ժողովոյ ապաշխարու-

թեան, և ամուսինք յանպէտս կայցեն արգելիցն, յայնժամ պարտ է սպասել այնմ, և առանց աղմկելոց զնիզակ մնաց նոցա՝ թողուլ զնոսա յանպիտութեան ըստ ասացելումն ի գլ. ԺԲ. 113։ Դարձեալ զկարէ եպիսկոպոսն տնօրինել, եթէ երկոքին ևս ամուսինք գիտութեամբ և խղճիւ իւրեն պահակեալ. զի եթէ տնօրինումն այսպիսի տեղի գտանիցէ, յաձախիցէն ամուսնութիւնք անվաւերք յուսոյ տնօրինման. ուր ժողովն արիպետեան կամի բառնալ զամենայն յոյս տնօրինման ամուսնացելոցն նենգաւ յարգելեալ աստիճանաւ։ Այլ առ ի նենգ այսպիսի՝ խնդրի զի ոչ միայն գիտութեամբ որ ամուսնացեալ իցէ ընդ ազգականին, այլ և գիտել ստուգիւ զի արգելեալ է այն՝ որպէս սահմանէ սուրբ ժողովն. վասն որոյ և Թանձր տգիտութեամբ ամուսնացեալն ընդունակ է տնօրինման։ Եւ զարձեալ որպէս նոյն սուրբ ժողովն սահմանէ, ոչ է պարտ տնօրինել զայնոսիկ՝ որք չարութեամբ զանց առնեն զերծրակի հրատարակմանէն։

57. Իսկ եթէ չև իցէ կատարեալ ամուսնութիւնն, հանրական և ամենահաւանական կարծիքն յայնժամ օրէն համարին եպիսկոպոսի տնօրինել զլուծիչ արգելս՝ յորժամ վտանգ չարահամբաւութեան առաջի կայցէ, և չիցէ դիւրին դիմել առ Պապն։ Որ ՓանեանոյԱռաւելապանց խստութեամբ ոչ օրէն համարի և ոչ ի հոգեվարս, և ոչ ի ստիպել հարկին օրինաւոր առնելոց ընդդէմ, ուր այլք առ հասարակ համարին դադարել յայնժամ վերապահութեան տնօրինմանն, և եպիսկոպոսին կարել իշխանութեամբ կարգին տնօրինել զայն։ Յաւելու փինեաթելլի հաստատել՝ զի յայնժամ ոչ միայն վերապահութիւնն, այլ և արգելք դադարեն որպէս ձեռնակարք. զի հաւաստի խոկ է, որպէս ուսուցանեն ամենեքեան ընդ սրբոյ Աղուինացւոյն, զի օրէնք ձեռնակարք ոչ ևս պարտ ի վերայ դնեն։ Ասն որոյ որպէս ասացաք ի գլ. ԺԲ. 114, եթէ հարսն և փեսայ կայցեն յեկեղեցւոջ առ ի պահակ, և մի ի նոցանէ յայտնեսցէ խոստովանահօր զծածուկ արգելս ի վերայ ուստեք յառաջ եկեալ, և չիցէ մարթ առանց գայթակղութեան կամ անուանարկութեան յապաղել զպահակն, օրէն է յայնժամ խոստովանահօրն յայտ առ-

նել՝ զի դադարեն անդ արդելք, և օրէն է կատարել զպատակն, և ապա յառաջելագոյն զգուշութիւն խնդրել տնօրինութեան՝ ի ժողովոյ ապաշխարութեան։ Այլ զայս նման յորժամ չիցէ անդ եպիսկոպոսն. զի եթէ իցէ անդ, պարտ է առնա դիմել վասն տնօրինման ըստ առաջելոյն՝ ի Թիւ 45։ Այլ և այլ թեմք իցեն հարան և փեսայ, Ամպովինոյ և Ինկերթ պարտ համարին երկաքանչիւրոցն և այս դիմել առ եպիսկոպոս իւրոյ թեմին վասն տնօրինման. բայց այլք հաւանականաբար ոչ կարևոր համարին զայն. քանզի՝ ի բառնալ միոյ յեպիսկոպոսաց զարգելս իւրոյ հպատակին՝ ընդունակ կացուցանէ զնա պատակելոյ ընդ միւսում, որպէս՝ ի տնօրինել զմի յարգականաց՝ գտանի և միւսն տնօրինեալ։

58. Օրէն իցէ եպիսկոպոսի առանձել զայս իշխանութիւն իւր տնօրինելոյ զլուծիչ արգելս՝ ի վերասացեալ դէպս։ — Ամանք ոչ օրէն համարին. այլ հանդգնական կարծիք համարին կարել նման, ոչ միայն՝ ի դէպս իւրաքանչիւր առանձել՝ այլ և հանրապէս տալ իշխանութիւն տնօրինելոյ յայն ամենայն դէպս։ Զի իշխանութիւնն այն ոչ թէ բառականութեան անձին եպիսկոպոսի է, այլ պաշտամանն նորա. վասն որոյ և համարի որպէս իշխանութիւն կարգի նորա, զոր կարէ առանձել այլոյ՝ ըստ առաջելոյն՝ ի Թիւ 34։ Զնոյն առաջելն է ասել և զընտրելոյ իսկ այլոյ վերոյասացեալ իշխանութեանց նորա տնօրինելոյ զերբակի հրատարակումն և վնասականիչ արգելս։ Այլ փոխանորդն եպիսկոպոսին չէր իշխանութիւնս այս տնօրինելոյ, եթէ ոչ եպիսկոպոսն առանձեացէ նման զայն ուրոյն. զի որպէս առաջաք՝ ի Թիւ 51, ՚ի հանրական տուչութեան եպիսկոպոսի զիշխանութիւնս իւր նմա՝ ոչ բովանդակի իշխանութիւնս այս՝ որ ՚ի դէպս յայսպիսիս համարի տուեալ եպիսկոպոսին՝ ի Պապէն։

59. Կարող է եպիսկոպոսն տնօրինել և զմիջոցս քահանայական կարգաց առհմանեալս՝ ի տրիդենտեան ժողովոյ։ Զան փոքր աստիճանաց՝ ՚ի խոհեմութիւն եպիսկոպոսին ապաստան առնէ ժողովն զտնօրինութիւն. ուստի է իմաստասիրել զի և զաստիճանս փոքունս ոչ է պարտ միահաղոյն տալ, այլ տոնել ՚ի տոն. բայց առ ՚ի տնօրինել զայն՝ բաւական համարի ծր և է պատճառ։

Ընդ խաղալն հերայ և ընդ ասելիանս ոչ խնդրի միջոց՝ ըստ հաւանականացոյն կարծեաց, զի հաւանականացոյն կարծիք չհամարին զայն ասելիան։ Ընդ փոքր ասելիանս և ընդ կիսասարկաւագութիւն սահմանել ժողովին միջոց տարեւոր, եթէ հարի կամ օգոստ եղեղեցոյ ոչ այլապէս պահանջեսցէ. իսկ եղեղեցոյն ուր ասելիանաւորն սպասաւորէ։ Ընդ կիսասարկաւագութիւն և ընդ սարկաւագութիւն սահմանել դարձեալ ձամ մի. բայց և զայն ի կամս եպիսկոպոսին ձողեալ, որպէս զի կարող է նա վանն այր և իցէ բանաւոր պատձառի տնօրինել զայն։ Իսկ ընդ սարկաւագութիւն և ընդ քահանայութիւն ձէպէտ և դարձեալ միջոց տարեւոր սահմանել, այլ խոտագոյն պայմանաւ. զի առ ի տնօրինութիւն ոչ շատ համարի զօգուտ եկեղեցոյն, այլ պահանջէ և զհարկ։

60. Կարէ եպիսկոպոսն տնօրինել և զմատուցումն կարգեալ պատարագի յայլ սեղան կամ յայլ եկեղեցի, և ոչ ի սահմանեալն ի քարերարին, եթէ օգուտ եկեղեցոյն զայն պահանջիցէ, կամ եթէ ժամադրարն խօթ իցէ կամ ի գործ կարեւոր և կամ յոտաւութիւն պատրաստել, կամ եթէ ծանր աշխատութիւն իցէ գնալ ի սահմանեալն եկեղեցի, և կամ վասն այլ ինչ այսպիսի պատձառաց, որպէս ուսուցանեն քարոյականք առ հասարակ։ Օ՞ի յայնժամ եպիսկոպոսն, ըստ ասացելումն ի Թիւ 68, մեկնէ զկամս քարերարին։ Ի՞աքովբա և Փաւղոսականիկոյ ի քաց առնուն, եթէ քարերարին սահմանեալ իցէ զվայր և ձժամ պատարագին ի դիւրութիւն հաւատացելոց կամ ընտանեաց իւրոց, կամ ի պատիւ ուրուք ի սրբոց։ Իսկ ընդ Հակառակն Ի՞ուկոյ և Ծաւրնեցւոյն ասեն, զի եթէ քարերարին չիցէ լեալ ինչ գիտաւորութիւն յայնմիկ, և կամ գիտեսցէն ի նմանէ օգուտ դադարեալ իցէ, ժամադրարին այլուր պատարագել ներելի և եթէ մեղք են. և եթէ յարտունացեալ սեղանի ուրեք մատուսցէ այլուր զպատարագն, ազատ է և ի ներելի մեղաց՝ օգտակարապոյն ինչ առնելով քարերարին։

61. Կարէ եպիսկոպոսն ըստ իրաւացի պատձառի տնօրինել անձին և այլոց պատարագելոյ յեւտ միջօրէի, որպէս հաստատեն Ի՞ուկոյ, Նաւարրոյ, Ի՞այանն, Ալմաւիկեանք և այլք։

62. Կարէին եպիսկոպոսունք յառաջագոյն պատա-
րագել և տալ պատարագել այլոց ամենայն ուրեք, և
և՛ ի տունս· այլ ժողովին տրիդենտեան արգել չտալ
նոցա հրամանն պատարագելոյ այլուր, բայց միայն՛ ի մատ-
րունս օրհնեալս՛ ի նոցանէ և առ՛ ի սուրբ պաշտամունս
սահմանեալս, յորս օրէն է պատարագել զօրհնա-
պաղ: Ա՛ստուածոյ այսոցիկ պարտ է ունել դուռն՛ ի
վերայ հասարակաց փողոցի· բայց յայնցանէ՝ որ՛ ի մե-
նաստանս, ՛ի միաբանութիւնս, ՛ի կղերանոցս, ՛ի դպ-
տերանոցս, ՛ի հիւանդանոցս և՛ ի բանտս են մատ-
րունք, որոց չէ հարկ ունել դուռն՛ ի փողոցի· և օրէն
է պատարագել՛ ի նոսա և յաւուրս երևելի տօնից,
որպէս և յառանձին մատրունս եպիսկոպոսաց, և յա-
մարաստան բնակութեան նոցա, և արտաքոյ թեմի
իւրեանց:

63. Կարէին եպիսկոպոսունք յառաջագոյն և արտա-
քոյ թեմի իւրեանց պատարագել և տալ պատարագել
այլոց առանձին: Այլ թէպէտ Կղեմէս ԺԱ· խափանեաց
զայս իշխանութիւն նոցա, այլ Ինոսէնտիոս ԺԳ·
յայտ արար՝ զի զխափանումն զայն պարտ է լսանել
զայլոց տանց, և ոչ ուր ինքեանք բնակիցեն· զոր և
Բենեդիկտոս ԺԳ· հաստատեաց: Այլ զի անձնական
է այս արտօնութիւն, չկարեն այլք պատարագել՛ ի
նմին տան՝ եթէ չիցէ անդ եպիսկոպոսն:

64. Որչն իցէ եպիսկոպոսի տնօրինել երբեմն պա-
տարագելոյ յառանձին մատրունս, ուր չիցէ հրաման մա-
տուցանելոյ զօրհնապաղ աւելի քան զպատարագ մի:
— Նայրն Ա՛ստուածածին ոչ օրէն համարի· բայց այլք
բազումք զհակառակն հաստատեն, եթէ իցեն ինչ պատ-
ճառք և ցօրչափ տեւեսցեն: Այս չէ այս հակառակ տրի-
դենտեան վճռոյն· զի այն, ըստ ասացելումն՛ ի թիւ 62,
՛ի բայ բառնայ զիշխանութիւն եպիսկոպոսաց առնոյ
պատարագել ըստ կամս իւրեանց, և ոչ զիշխանութիւն
տնօրինելոյ ըստ իրաւացի պատճառաց: Այս ոչ վճռոյ
Կղեմայ ԺԱ· է հակառակ· զի զայն պարտ է լսանել
ըստ վճռոյ Պօղոսի Ե· և Ա՛ւրբանոսի Ի· որ արգելուն
եպիսկոպոսաց չտնօրինել առանց առ ժամանակեայ հար-
կի, որպէս հիւանդութեան և այլն:

65. Ի կանոնաց ընդհակառակ է եպիսկոպոսաց արտա-

քոյ Թեմի իւրեանց, որպէս և այլոց առաջնորդաց՝ այսինքն ազբայից, վանահարց, և աւագերիցանց հռոմէականաց՝ այսինքն առենադպրաց, առենակալաց Պօղոսի և այլն, ընտրել իւրեանց խոստովանահայր առանց հրամանի Թեմական եպիսկոպոսի իւրոյ: Եւ Կրիզոր ԺԳ. ի ձեռն Ժողովոյ յայտ արար, զի պարտ է իմանալ զայն վանն ընտրելոյ զոք ի քահանայից հպատակաց իւրեանց, և կամ զոք չընտրելոյ խոստովանահարց ի Թեմական եպիսկոպոսէ՝ ընդ որով ինչ քահանայն:

66. Եպիսկոպոսունք փոխանորդք են առաքելական գահոյն ի պահ փականաց կուսաստանաց, ևս և այնոցիկ՝ որ ազատք են ի Թեմական եպիսկոպոսէ, և հպատակք կարգապետի իւրեանց: Այսոքն որոց կարող են վերապահել ինքեանց որ ինչ ի նոյն են պատկանաւոր:

67. Թեմական եպիսկոպոսին է անկ սահմանել և վիճակաւորս կուսաստանաց, ևս և ազատաց, այսպէս ի յոգունս քահանայապետաց հաստատեալ: Զի թէպէտ թերի Կամպուրինի անկանել և ազատ կուսաստանաց ընդ վերապահելոյք Թեմական եպիսկոպոսի. բայց հանրագոյն և հաւանականագոյն կարծիք ըզհակառակն հաստատեն. զի ազատ կուսաստանք չեն ընդ իրաւասութեամբ եպիսկոպոսին, և ընտրութիւն խոստովանահարց՝ի բաւականութիւն և ի նոյնն հայի. զի և ոչ՝ի կղեմեան կանոնակին է ինչ զայսմանէ յիշատակ: Եւ ոչ այսպէս և՝ի մասին փականաց. զի կարէ եպիսկոպոսն վերապահել իւր ըստ այսմ որ ինչ և կամի, հանգոյն բանադրանաց՝ զորմէ առաջաբ՝ի գլ. ԺԹ. 43, և որպէս ինայ մեզ ասել՝ի Թիւ 80: Պատձեալ և ըստ սահմանադրութեան Բենեդիկտոսի ԺԴ. կարէ եպիսկոպոսն սահմանել և ազատ կուսաստանաց խոստովանահայր տարօրէն, եթէ կարգապետն կամ առաջնորդ չկամիցի տալ զոք՝ի կղերոյ կամ յայլմէ կարգէ կրօնաւորաց. և իշխանութիւն է եպիսկոպոսին սահմանել զայն, ոչ միայն՝ի վտանգ մահու կուսանաց, այլ և առանց իսկ այնորիկ ամի ամի:

68. Ազգութիւք յաստուածաբանից հաստատեն կալ եպիսկոպոսի ըստ իրաւացի պատճառաց փոխոխել Սրբոյ հոգւոյս. իբր զի ունի նա իշխանութիւն

ըստ իրաւացի պատճառաց տնօրինելոյ վիճաբանութեան կը-
տակէ: Եւ յայլ հաւանականագոյն կարծիք չընդունին
զայս, զի սրիդենաեանն ժողով հրամայէ եպիսկոպո-
սաց զգուշանալ՝ ի վիճաբանութիւն կռուակից. և՝ ի կղեմեան
կոնդակին հրամայի չխոխել զհրեւտակս յայլ ինչ պետս,
առանց հրամանի առաքելական գահոյն: Եւ յոյժ
հաւանական է զոր հաստատեն Լայման, Պոնաչինա,
Վալմաթիկեանք և այլք, զի եթէ պատահէ ինչ կամ
լեալ իցէ ինչ անճանօթ կռակապրին, զոր եթէ գի-
տէր նա կամ նախատեսանէր՝ այլապէս անօրինէր, յայն-
ժամ օրէն է եպիսկոպոսին հաւանութեամբ ժառանգին
փոխել զհրեւտակն. և՝ ի հակառակել իսկ ժառանգին
իրաւացի կամաց եպիսկոպոսին, օրէն համարին եպիս-
կոպոսի անօրինել զայն ինքնին:

69. Ակնք՝ ի բարոյականաց օրէն համարին եպիսկոպո-
սի սահմանել և վճռատեսանել պարտուց՝ որոց անստոյգ
իցեն տեարքը, հաստուցանելոց զայն աղքատաց. իբր զի
ոչ ուրուք վերապահեալ է այս Պապին, և համարի իսկ
համեմատ կամաց պարտատերացն: Այլք այլք չընդու-
նին զայս. զի անօրինութիւն այսպիսեաց անստոյգ ընչից
անկ է Պապին կամ իշխանի. և Բենեդիկտոս ԺԴ·
զայս իշխանութիւն՝ ի ժողովին ապաշխարութեան ա-
պաստան արար:

70. Ասէք և օրէն համարին եպիսկոպոսի նուազել
զթիւ պատարագաց սահմանելոց՝ ի բարերարէն, յոր-
ժամ առ նուազութեան պատարագեաց չգտանիցին
պատարագիչք: Այլք Ալբքանոս ե. և Լենովկենատիոս
ԺԲ. արգելուն խոստիւ եպիսկոպոսաց մի այլայլել կա-
փաւորել կամ փոխել զբեռինս պատարագաց՝ ի սահ-
մանադրութենէ նոցին պայմանեալս. և ժողովին տրի-
պենտեան հրամայէ գիտել վասն այն՝ ի գահն առաքե-
լական: Սակայն եթէ՝ ի սկզբան բաւական սահմա-
նեալ իցեն պատարագիք, և այնպէս ապա նուազին՝
մինչև չբաւել թուոյ պատարագացն, յայնժամ թոյլ
է՝ ի հաստատուց իրաւանց կարող իցեն եպիսկոպո-
սունք նուազել զթիւ նոցա:

71. Ասեն ասացաք՝ ի թիւ 53, կարեն եպիսկոպոսունք
հաւանականաբար անօրինել որ ինչ ոչ է բացայայտա-
կի վերապահեալ Պապին. և որ ինչ օրէն է նոցա անօ-

բինել ՚ի կատարումն երդմանդ և ուխտից, ասացաք ՚ի գլ· ե· 19, 45, և այլն: Կարէն նոքա և ըստ սահմանելոց տրիդենտեան ժողովոյ յարել կամ փոխել յայլ եկեղեցի զպարզ ժառանգութիւնս՝ որոց նուազեալ իցեն հասք, կամ աննորոգելի աւերեալ եկեղեցիք՝ յորս իցեն հաստատեալ· կարէն և ս ՚ի ժամանակի այցելութեան պարտս ՚ի վերայ դնել ժողովրդեան հայթայթելոց զպէտս ժողովրդապետին· կարէն և նոր ժողովրդապետութիւնս հաստատել, և օժտել զայնոսիկ ՚ի հասից մայր ժողովրդապետութեան՝ եթէ ձոխ իցէ այն, այլ առանց վնասու ժառանգաւորին: Կարէն և ժողովրդապետութիւն ՚ի ժողովրդապետութիւն յարել, յորժամ չբաւեն հասք նոցա վասն երկուց ժողովրդապետաց· եթէ միայն չիցեն յոյժ ընդարձակք, և կարիցէ մին և եթէ հասանել ՚ի խնամն նոցա:

ՅՕԳՈՒԱԾ Դ

ԱՐՏՈՒՆՈՒԹԻՒՆՔ ԿՐՕՆԱԻՈՐԱՑ ՀՅՆՐԱԿԱՆՔ

72–74· Ազատութիւն յիրաւասութենէ եպիսկոպոսաց:
75· Ի բաց առեալ ինչ ինչ, և մանաւանդ զմաուցուածն պատարագի:
76· Յայտարարութիւն որոց պահուն զայսմանէ:
77· Յո՞ր ինչ կրս օրէն ե եպիսկոպոսն պարս ՚ի վերայ դնել նոցա:
78· Պա՞րտ իցէ կրօնաւորաց հնազանդել հրամանաց եպիսկոպոսի:
79· Օրէ՞ն իցէ եպիսկոպոսի այց առնել նոցա:
80· Օրէ՞ն իցէ եպիսկոպոսի այց առնել արդելավանից կուսաստանաց:
81· Օրէ՞ն իցէ եպիսկոպոսի խնդրել համար զպատարագաց կատարած սահմանելոց:
82, 83· Յո՞ր ինչ կրս օրէն իցէ եպիսկոպոսի պատուհասել զնոսա:
84–87· Ապահարկութիւն նոցա ՚ի տասանորդաց:
88· Շինութիւն նորոց մենաստանաց:
89· Մենաստանք հպատակք եպիսկոպոսաց:
90· Դատաւոր կրօնաւորաց:
91, 92· Թաղումն:
93, 94· Բաժ կանոնական:

72· Ազատ են կրօնաւորք յիրաւասութենէ եպիսկոպոսաց, և վանահարք ունին իրաւասութիւն զրեթէ եպիսկոպոսական յեկեղեցիս և ՚ի մենաստանս իւրեանց ըստ անձանց և ըստ տեղեաց, որպէս յուցանեն Սալմանտիկեանք մանրամասնաբար· այլ մեք ՚ի հարեւանցի զգեաւոր արտունութիւնս նոցա ասացուք:

73. Յաղագս այսր ազատութեան գիտելի է նախ՝ զի՛ լինել երկբայութեան զատտունութենէ խոնքէ, Պաւղոս պահի սահմանել զայն ըստ յայտարարութեան Աղեմայ Դ, և այլոց քահանայապետաց։ Երկրորդ՝ զի չիարեն կրօնաւորք հրաժարել յազատութենէ ատոկ ըստ կանոնաց, զի՛ ի միւս կրօնին լինին հրաժեշտնոցա. վասն որոյ և ոչ մի ինչ հակառակ սովորութիւն զօրէ ընդդէմ այսր ազատութեան նոցա.

74. Երրորդ՝ զի ոչ միայն աբեղայք և աշխատաւորք եղբայրք վայելեն յայն ազատութիւն, այլ և նորընծայք, որք յիւրս նախատաւորս ինքեանց համարին կրօնաւորք. և ա և երրորդականք, որպէս ասացաք՝ ի թիւ 8. և ազատաւորք բնակեալք՝ ի վանս ընդ հնազանդութեամբ կրօնաւորաց, եթէ ըստ մասին զատկական հաղորդութեան, և եթէ ըստ բանադրանաց։ Երրորդ՝ զի չէ օրէն եպիսկոպոսաց ունել զօրխատարուժ կամ զդաստալիք կրօնաւորս, բայց առ՝ի տալ գնոսա՝ ի ձեռս մեծաւորաց նոցա. կարեն և եթէ պատուհասել գնոսա՝ եթէ չիցէ նոցա անդ մեծաստան, և եթէ խրատեալ՝ չիաւելցին գնալ՝ ի վանս իւրեանց։ Հինգերորդ՝ զի աշխարհիկք իսկ բնակեալք՝ ի մեծաստանս՝ ի յանցանելն չանկանին՝ ի պատիժս սահմանեալս՝ ի թեմական եպիսկոպոսէ։

75. Այլ կիրս երս էեն ազատ կրօնաւորք կիշխանութենէ եպիսկոպոսաց։ Ա՛ի նախ՝ չիարեն առանց հրամանի նոցա կանգնել ուրեք վանս, որպէս սահմանեաց Ալեքսանդր Ե։ Նա ըստ կոնդակին Գրիգորի յԱ. էջ օրէն եպիսկոպոսաց տալ նոցա հրաման կանգնելոյ վանս, եթէ չիարիցեն՝ ի հասից կամ յողորմութենէ պահել անդ կրօնաւորս գէթ երիսատասան։ Այլ զայս իմա ըստ վանորէից, և մի՛ զհիւրանոցաց, որպէս ուսուցանեն Պարսպարոզք և այլք։ Երկրորդ՝ զի ոչ կարեն կրօնաւորք ատգրել գիրս առանց հրամանի եպիսկոպոսին, ըստ սահմանելոյ տրիդենտեան ժողովոյն։ Երրորդ՝ զի օրէն է եպիսկոպոսի առնել զնոսա զի ոչ ինչ ուրուք՝ի նորընծայից բերեալ իցէ՝ի վանս, ՝ի չկամելն ուխտել հատուցեն նմա։ Չորրորդ՝ պարտ է եպիսկոպոսի կամ այլում ումեք՝ի նմանէ սահմանելոյ հետապօտել զկամս օրիորդի՝ի մտանելն՝ի կուսաստան կամ յուխտել ըստ

սահմանելոյ տրիդենտեան ժողովոյն. այլ եթէ յամեցեք աւելի քան զաւուրս հնգետասան, դադարեն իրաւունք նորա: Հինգերորդ՝ օրէն է եպիսկոպոսի արգելուլ ևս և ազատ կուսաստանաց մի ընդունել զոք աւելի քան զբաւականութիւն հասից իւրեանց, ըստ սահմանելոյ սրբոյն Պիոսի: Վեցերորդ՝ օրէն է եպիսկոպոսի կոչել զկրօնաւորս՝ ի Թաւիօր, ոչ հասարակաց հրամանագրով՝ այլ՝ ի ձեռն հրաւիրակի: Յօթներորդ՝ մենաստանք, որոց չիցեն հասք բաւական երկոտասանից միանձանց, չեն ազատ յիրաւասութենէ եպիսկոպոսի. որպէս ասացուք՝ ի տոմս՝ ի թիւ 88: Ութերորդ՝ յաղագս հրամանի պատարագելոյ՝ եպիսկոպոսունք սահմանին՝ ի տրիդենտեան ժողովոյ որպէս առաքելական փոխանորդք, առ՝ ի տալ պահել ևս և կրօնաւորաց՝ ոչ միայն զզգուշութիւնս օրինադրեալս՝ ի ժողովոյն, այլ և յիւրեանց: Ա՛ս յայտնի իշխանութիւն է նոցա պատուհասելոյ խակ և բանադրելոյ զօրինազանցս՝ ի կրօնաւորաց, որպէս վճռոք առաքելական գահոյն սահմանեն: Ա՛ստ որոյ Կարզինալ Սիննելլի արքեպիսկոպոս Նեապօլսոյ արգել ամենեցուն, ևս և կրօնաւորաց, ըստ պատնաւելոյ խոստուածոյին պաշտամանց, մի ումեք յօտար երիցանց նեղել պատարագելոյ յեկեղեցիս իւրեանց առանց վաւերականի Թեմական եպիսկոպոսին:

76. Ըստ յայտարարութեանց սրբոյ գահոյն՝ օրէն է կրօնաւորաց ընդունել զնուէրս հաւատացելոց, առանց՝ ի խնդիր շրջելոյ յեկեղեցւոջ: Չէ օրէն նոցա արտաքոյ եկեղեցւոյ և շրջակայից նորա գնալ շուրջառաւ կամ՝ ի Թաւիօր ելանել, եթէ չիցէ՝ ի տալորութենէ լեալ նոցա օրէն: Օրէն է նոցա և նախ քան զժողովպապետականն պատարագ հարկանել զանպակ և պատարագել յեկեղեցիս իւրեանց. և՝ ի քառասնորդս և՝ ի յինանակս քարոզել անդ, Թէպետ և՝ ի ժողովրդապետական եկեղեցւոջ ևս իցէ քարոզ:

77. Յերիս դեպս ևեթ օրէն է եպիսկոպոսի հրամայել կրօնաւորաց: Ա՛ռաջ՝ ըստ սահմանելոյ տրիդենտեան ժողովոյն, ՚ի հատուցումն իրաց նորընծայի՝ որ չկամիցի ուխտել, որպէս՝ ի վեր անդր ասացաք: Յերկրորդ՝ ՚ի զգուշութիւն փականաց կուսաստանաց: Յերրորդ՝

ծորդ՝ ի զգուշութիւն հրամանի պատարագելոյ, որպէս առացաք ի թիւ 75։ Կանեգիկտոս ԺԳ· ածէ առ այս երկուս վկիւս զԺողովոյ տրիդենտեան սահմանադրութեանց, որով եպիսկոպոսունք յայսմ մասին որպէս առաքելական փոխանորդք կարող են և պատժել խակ զկրօնաւորս՝ եթէ տացեն նոքա երիցանց օտարաց պատարագել յեկեղեցիս իւրեանց առանց հրամանի եպիսկոպոսին, որպէս հրամայէ եպիսկոպոսաց Ժողովն տրիդենտեան՝ մի՛ թող Կրօնաց երիցանց կանոնաւորաց անձանց ինչ պատարագելոյ։ Պարտաղա և այլք օրէնս համարին եպիսկոպոսի և յայլոն ևս յերկուսին վերոյիշեալ դէպս պատժել զկրօնաւորս՝ ի յանցանելն· այլ հանրապէտն կարծիք ընդունելին զայն։

78· Պաշտ ինչ կրօնաւորաց պահել զսահմանադրութիւնս գաւառական և թեմական Ժողովոց, կամ այլոց հրամանագրաց եպիսկոպոսին։ — Հաւաստի է զի կրօնաւորք չեն պարտական գնալ ի Ժողովս, բայց ի Ժողովրդապետաց՝ ըստ սահմանադրութեան տրիդենտեան Ժողովոյ և ըստ վճռոց առաքելական աթոռոյ։ Այլ սահմանադրութեանց նոցին՝ Պասպուէլ, Սանքէզ և այլք պարտական համարին զնոսա հնազանդել վանն համաձայնելոց հասարակաց՝ որոց մանն են և ինքեանք։ Նայց Սուարէզ, Լեծանա, Սալմատիկեանք և այլք ազատ համարին զնոսա ուր ուրեք չիցէ վտանգ դայթակղութեան, և եթէ չիցեն ըստ պաշտամանն իւրեանց ընդ իշխանութեամբ եպիսկոպոսին, որպէս Ժողովրդապետք, խոստովանահարք· քարոզիչք և այլն։ Այս ցուցանեն զայն ի կանոնաց՝ ուր ասի ազատս գոլ կրօնաւորաց ի հրամանաց եպիսկոպոսի, բայց միայն՝ զորս բացայայտեն օրէնք։ Այս վասն համաձայնութեան հասարակաց յաւելուն, զի որպէս այնչափ ինչ թեւինք են կրօնաւորաց առաւել քան զհասարակաց, նոյնպէս և օրէնս է նոցա ազատս գոլ ի թեառանց ինչ հասարակաց։ Սակայն յերկու ինչ հաւաստեաւ պարտ է նոցա հնազանդելոյ ըստ սահմանադրութեան տրիդենտեան Ժողովոյն· մի՝ ի պահպանութիւն խափանածոյ աստուածային պաշտամանց, եթէ պահիցի այն ի մայր եկեղեցւոջ· և երկրորդ ի պահպանութիւն տօնից սահմանելոց եպիսկոպոսին։ Այ վերայ այսոցիկ և ի զգու-

ջու Թիւն հրամանի պատարագելոյ, զորմէ՛ ի վեր այսր ասացաք ՛ի Թիւ 75 և 77: Դարձեալ օրէն է եպիսկոպոսի արգելուլ կրօնաւորաց մի՛ ընդունել խոստովանու Թիւն ՛ի սենեակս ըստ վճռոյ սրբոյ գահուն, որպէս և ամենայն իսկ խոստովանահարց արգելուլ սպառնալեօք արգելման՝ մի՛ ընդունել զխոստովանու Թիւն կանանց և մանկանց արտաքոյ խոստովանարանի:

79. Երէ՞ն իցէ եպիսկոպոսի այց առնել մենաստանաց և որոց ՛ի նոսա իցեն: — Ըստ հասարակաց օրինաց ազատ են յայցելու Թենէ եպիսկոպոսի կրօնաւորք և մենաստանք և եկեղեցիք նոցա, եԹէ իցեն ՛ի նոսա ոչինչ գէԹ երկատասան. և ըստ յայտարարու Թեանց սրբոյ գահուն՝ ժողովրդապետական իսկ եկեղեցիք նոցա, ուր կրօնաւոր իցէ ժողովրդապետն, ազատք են յայցելու Թենէ. և եԹէ յանդգնաւոր իսկ գտցի նա ՛ի պաշտամանն, չկարէ եպիսկոպոսն պատուհասել զնա: Սակայն հանդերձ այսու ամենայնիւ Գրիգոր ԺԵ, և առաւել քան զնա Բենեդիկտոս ԺԴ, յայտ արար յամին 1744, զի ժողովրդապետք կրօնաւորք ըստ մատակարարու Թեան խորհրդոց, և ըստ գնացից իւրեանց ՛ի ժողովրդեան, ընդ իշխանու Թեամբ եպիսկոպոսին են, և կարէ իսկ նա պատուհասել զնոսա:

Հաւաստի է դարձեալ զի կարէ եպիսկոպոսն այց առնել ժողովրդապետական եկեղեցւոյ՝ որ չիցէ կից մենաստանին, և կարէ պատուհասել անդ զժողովրդապետ յանդգնաւոր ՛ի պաշտամանն, Թէպէտ և առաջարկեալ ՛ի մենաստանէ իւրմէ: Կարէ այց առնել և եկեղեցւոյ՝ որ կից իցէ մենաստանին և ընդ իշխանու Թեամբ նոցա, եԹէ որ ժողովրդապետն անդ՝ չիցէ կրօնաւոր: Կարէ այց առնել և աշխարհիկ եղբայրու Թեանց՝ որ ՛ի մենաստանս, ըստ տնտեսու Թեան ընչից ևԹէ, (այլ ոչ ըստ մատրան,) եԹէ տնտեսու Թիւնն չիցէ ՛ի ձեռս կրօնաւորաց:

80. Երէ՞ն իցէ եպիսկոպոսաց այց առնել արգելանից ազատ կուսաստանաց: — Նաւարրոյ, Անգղիա, Պոնաչինա, Ալմատիկեանք և այլք ոչ օրէն համարին, մեկնաբանելով զտրիդենտեանն սահմանադրու Թիւն: Այլ պարտ է ընդ այլ յաստուածաբանից ջնակառակն հաստատել. զի Գրիգոր ԺԵ ՛ի կանդակին

իւրեամ արգելու կրօնաւորաց նախ՝ չսահմանել զոք ի խոստովանահայր կուսաստանաց, որոյ չիցէ հրաման խոստովանութեան յեպիսկոպոսէ. և Կաղենդիկտոս Ա.Դ. ի հաստատելն զկոնդակ Կաղենդիկտեայ Ա.Դ, հրամայէ՝ զի ի չտալ վանահարց ըստ հրամանի քահանայապետին խոստովանահայր տաւրօրէն ի գղեցց կամ յայլմէ կարգէ կրօնաւորաց վանս ազատ կուսաստանաց, ինքն իսկ եպիսկոպոսն Թեմական տացէ։ Հրկրորդ՝ սահմանէ Գրիգոր Ա.Ե, զի վերատեսուչք կուսաստանաց տացեն եպիսկոպոսի զհամար տնտեսութեան ընչից նոցա։ Հրրորդ՝ իշխանութիւն ունել եպիսկոպոսի մերժել ի պաշտամունէն զխոստովանահայր կամ զպաշտօնեայ կուսաստանի, զոր վանահայր նոցա ազդեալ ի նմանէ ոչ մերժեացէ։ Չորրորդ՝ դահեկից ընտրութեան վանաւորց բազմել եպիսկոպոսի։ Հինգերորդ՝ սահմանէ բացայայտ՝ կարել եպիսկոպոսի խրատել և պատժել որպէս փոխանորդ առաքելական՝ զօրինազանցս ընդդէմ վանականաց, և և ազատ կուսաստանաց։ Ո այս կոնդակ Գրիգորի Ա.Ե. վերատին հաստատեցին Ալեքսիոս Ա. և Ա.Ր. հրամայեալ զպահպանութիւն այնորիկ՝ անզօր կացուցանելով զամենայն հակառակ սովորութիւն։ Պարպոզա և գլխիւ ինչ սրբոյ գահոյն ի ներքս ածէ, զի ըստ մասին պզուշութեան վանականաց որ ոք իշխեսցէ կալ հակառակ այցելութեան եպիսկոպոսի՝ յետ երրորդ ազդարարութեան անկանի ի բանադրանս նոցին իսկ գործով։

81. Որչ՞ն իցէ եպիսկոպոսի պահանջել համար ի կրօնաւորաց զպարտուց պատարագաց, և զՏրիտակաց սահմանելոյ ի նպաստ իւրոց Տպատակաց։ — Նման թէ օրէն իցէ ըստ տրիդենտեան սահմանադրութեան, որ տայ եպիսկոպոսաց իշխանութիւն այց առնելոյ ամենայն Տոհմէ Տրիտակաց՝ անզօր կացուցանելով զամենայն իսկ հակառակ արտունութիւնս։ Սակայն Բենեդիկտոս առանց ժխտելոյ զՏատանականութիւն այսր կարծեաց, զՏակառակն Տաստատեն՝ վասն Ալեքսեոսի Ե. ազատս կացուցանելոյ զամենայն ստացուածս կրօնաւորաց յամենայն իրաւասութենէ եպիսկոպոսաց, սահմանելով, որ և էջ առաքելական սահմանադրութեան և ձեղուելոց ի ղօրել ընդդէմ։

82. Որ՞ն իցէ եպիսկոպոսի պատել և պատժել զոք ի կրօնաւորաց։ — Որպէս ի վեր անդր ասացաք, սակաւ են կրօնաւորք յիշխանութենէ եպիսկոպոսաց՝ բայց յիրաց ինչ, յորս օրէնք բացայայտեն զիշխանութիւն նոցա։ Այսու որոյ բայց յերեցունց անտի՝ զորս ասացաք ի թիւ 77, կարեն նախ՝ պատժել զկրօնաւոր օրինազանց, որ քնակէ արտաքոյ վանաց առանց օրինաւոր պատճառի խոստովանութեան, կամ քարոզութեան, կամ առժամանակեայ ինչ գործոյ՝ հրամանաւ մեծաւորաց. բայց միայն եթէ այնչափ հեռի իցեն մեծաւորք, զի չկարիցեն պատժել զնա ըստ ժամանակի։

83. Արկղոզ՝ եթէ ոք ի կրօնաւորաց ի վանս իսկ քնակելոց գործեսցէ հրապարակագոյժ ինչ յանցանս ի պայթակղութիւն ժողովրդոց, և մեծաւորք նորա ոչ պատուհասիցեն զնա։ Զայս այսպէս սահմանէ ժողովն տրիգենտեան։ Եւ քանզի ոմանք ի մեծաւորաց առ ի վերծուցանել անպատուհաս զյանցաւորն՝ յայլ թեմ զնա առաքէին, Ալեմէս Ը. պարտ ի վերայ եդ նոցա զի ի խնդրել եպիսկոպոսին զայնպիսի յանցաւորս՝ ի պայմանեալ ժամանակի դարձուսցեն. ապա թէ ոչ, կապասցէ եպիսկոպոս թեմին՝ ուր յանցաւորն ապաստանի՝ պատուհասել զնա։ Այլ որպէս ազգ առնեն Ալմանտիկեանք և այլք, սահման ժողովոյն զօրէ վասն յանցանաց՝ որ քաջայայտ իցեն և ըստ գործոյ. և քանզի դժպհի իմն է սահմանն, ոչ զօրէ ընդդէմ վանահարց և մեծաւորաց՝ զորս չանուանէ ժողովն ուրոյն։ Եւ դարձեալ չէ օրէն եպիսկոպոսի դատել զոք ի կրօնաւորաց և պատուհասել, բայց միայն եթէ մեծաւորք նորա յետ ազդարարութենան չկամիցին պատուհասել զյանցաւորն։ Իսկ ի յանցանս անդ օրէն է եպիսկոպոսի ընկրկանել զնա, որպէս ասացաք, առ ի տալ զնա ի ձեռս մեծաւորի նորա. և եթէ յանցանքն իցեն ի ծանր պայթակղութիւն ժողովրդեան, կարէ և ի բանտի ունել զնա առաւել քան զօր մի առ ի յղել զնա առ մեծաւորն. և մեծաւորին պարտ է զհաւաստիս պատուհասի նորա վաւերական ըստ արժանի յանցանացն ընծայել եպիսկոպոսին։

84. Սակաւ են կրօնաւորք և ի հաստուցանելոյ տանուտոյս։ Տասանորդ կոչի մասն հասոյ կամ ձարտա-

ջուԹեան, զոր պարտ է հաւատացելոյ հատուցանել պաշտօնէից Եկեղեցւոյ յապրուստ· վասն որոյ ըստ առաւածային բնական իրաւանց պարտ է հատուցանել ղտասանորդս, այլ չափ նորա՝ այսինքն տասներորդ մասն՝ Յեկեղեցական օրինաց է սահմանեալ, զի հնոյ օրինացն տասանորդ խոտիանեալ է որպէս ատենական: Ոչ ասի զկետ գայ իշխանուԹիւն Պապին ապահարկ առնելոյ զոր ոք պատշաճ համարիցի ՚ի տասանորդաց· իսկ եպիսկոպոսաց օրէն է միայն, ըստ սահմանելոյ տրիդենտեան ժողովոյն, յայլ ինչ բարեգործուԹիւն զտասանորդս ՚ի կիր արկանել, յարել ընդ իրեարս և բաժանել զհասս: Ոչ կետ գայ գաղձեալ զօրել սովորուԹեան ապահարկ զոմանս առնել ՚ի տասանորդաց, եԹէ ոչ պակասեսցէ այնուհիկ ապրուստ պատշաճաւոր եկեղեցականաց: Ոչ այլ առ ՚ի զօրել այսպիսւոյ սովորուԹեան ՚ի նախապրուԹիւն՝ պահանջին ամք 40 անընդհատք, աննենգ միտք և համարեալ պատճառք· իսկ առանց կարճեցեալ պատճառաց՝ խնդրի անչուտակ ժամանակ: Ոչ խոտիանեալ տասանորդս կարէ Թողուլ նա ինքն, որումդ անկ են· այլ զառաջնիկացից իրաւահոգուԹիւն Պապին ևԹԷ է տնօրինել, և եպիսկոպոսաց՝ յորժամ ՚ի մէջ եկեղեցեաց իցէ իրաւախոտուԹիւնն:

85· Յառաջագոյն ևԹէ գոյից և ևԹէ չարտարուԹեան էին տասանորդք· այլ ըստ արդի հանրական սովորուԹեան ՚ի գոյից ևԹԷ հատուածնոց և շարժականաց պահանջին կանոնք տասանորդս· և որպէս ուսուցանեն աստուածաբանք առ հասարակ, պարտ է հաշուել զտասանորդս հասից՝ առանց ՚ի բաց հանելոյ ըզծախս և զտուրս:

86· Պարտ է ամենայն հաւատացելոյ, և՛ և իշխանաց, հատուցանել զտասանորդս· իսկ աղքատք ԹէպԷ և ազատք են յօրինաց աստի, սակայն ոչք ՚ի յետին՝ այլ ՚ի ծանր կարօտուԹեան իւրեանց՝ պարտին հատուցանել և զևսափանեալ տասանորդս, որպէս հաստատեն Սուարէզ, Այման, ԲաԹրոփալ, Վալենտիկեանք և այլք: Ըստ հասարակաց օրինաց ևԹէ կղերք, ևԹէ կրօնաւորք և ևԹէ ժողովրդապետք պարտին հատուցանել զտասանորդս հայրե-

նական ընչից, և ա՛ւ ի հաս ձեռնադրութեան սահմանելոց, որպէս ուսուցանէ սուրբ Աստուածային։ Իսկ որք ոչն հատուցանեն տասանորդս, ընդդէմ նոցին այսպէս սահմանէ ժողովն տրիդենտեան. "Որք միանգամ խոտրեն զտասանորդս կամ խափանեն, ընդ բանադրանօք անկանին, և չիք արձակումն նոցա՛ ի մեղաց անտի առանց հատուցանելոյ զայն"։

87. Կրօնաւորք և կուսանք ամենայն կարգաց, որ ինչ իրաւունք և լեալ իցեն՛ ի վերայ նոցա յառաջագոյն, սակայն արդ ըստ բազմապատիկ արտունութեանց ընորհելոց՛ ի քահանայապետաց՝ ազատ են, ոչ միայն յանձնական տասանորդաց Հարտարութեան՝ այլ և կալուածոց սեփականաց և՛ ի վարձու առեալոց։ Այլ միայն կալուածք՝ յորոց վերայ սահմանեալ իցեն տասանորդք, յանցանե՛ ի ձեռս կրօնաւորաց՝ ոչ աշխատին՛ ի բեռանէ անտի ըստ յայտարարութեանց առաքելական դահուն։

88. Աշխ՛ ի կանգնել ուրեք կրօնաւորաց վանս, ըստ տրիդենտեան սահմանադրութեան և ըստ կոնդակին Գրէմայ Ը, խնդրին երբեակ պայմանք։ Նախ՝ հրամանն եպիսկոպոսին. կէսք յաստուածաբանից կարևոր համարին և ղհրամանն Պապին։ Երկրորդ՝ հաւանութիւն այլոց մենաստանաց մերձաւորաց՛ ի տեղի անդր ցքաւեակ միոն. որոց եթէ իրաւացի պատճառք իցեն չհաւանելոց, չէ օրէն եպիսկոպոսի տալ հրամանն։ Երրորդ՝ զի՛ ի վանս անդ կարասցեն առանց նեղութեան կեա՛ ի հասից կամ յողորմութենէ երկոտասան կրօնաւորք. որպէս զի եթէ՛ ի մենաստանի անդ չկարիցեն կեալ և չիցեն իսկ երկոտասան ոգիք, իշխանութիւն է Թեմական եպիսկոպոսին՛ ի վերայ նորա ըստ սահմանելոց Գրիգորի ԺԶ. և Ուրբանոսի Դ։ Չորն պայմանք խնդրին և վանս կուսաստանաց. և ըստ տրիդենտեան սահմանադրութեան, ոչ է օրէն կանգնել կուսաստանս հեռի՛ ի բնակութենէ։

89. Այլ ոչ խնդրին պայմանքս այսոքիկ առ՛ ի կանգնել հիւրանոցս կրօնաւորաց. և ոչ՛ ի տեղափոխութիւն վանաց, զոր առանց հրամանի Պապին և եպիսկոպոսին, և առանց հաւանութեան այլոց մերձաւոր մենաստանաց կարեն առնել, որպէս հաստատեն Ամբատիկեանք, Նաւարրոյ, Պարսպոզա, Լեծանա և այլք։ Այլ զտե-

զախտուԹիւն նմա ՚ի նմին քաղաքի կամ ՚ի վայրն փո-
խել զբնակուԹիւն վանացն, որով և ոչ ինչ ՚ի գոյից և
՚ի ստացուածոց այնր մենաստանի կորուսանեն կրօնա-
աւորք։ Կարեն և ըստ հնուհելոյ Ալբքանոսի Ը, և Ան-
նովկենտեայ Ը, ՚ի նուազել հասից կամ ողորմուԹեան
միոյ ՚ի վանաց՝ յարել զայն ընդ այլում մենաստանի, և
պատնալ իսկ անդրէն ՚ի Թողեալ վանս։ Եւ գարձեալ
ըստ հնուհելոյ Ալեքսանդրի Դ, և նորին ինքեան Ալբքա-
նոսի Ը, օրէն է կարգապետաց փակել զվանս սակաւա-
աւորս, և զինչս նոցա տալ աւագ մենաստանաց։

Բայց եԹէ վանքն ՚ի քաղաքէն տուեալ էին նոցա,
պարտին Թողուլ զայն ՚ի ձեռս եպիսկոպոսին. այլ եԹէ
՚ի հասից իւրեանց կամ յողորմուԹենէ շինեալ էին
զայն, առը են տնօրինելոց զայն ազատօրէն։

90. Գործել և այս արտաքնուԹիւն է կրօնաւո-
րաց, ընտրել իւրեանց գատաւոր յատենի, ուր յանցա-
աւորն կամ գատախազք էին կրօնաւորք. այլ յորժամ
վասն զրկանաց ևԹէ և յայտնի հարստահարուԹեանց
գատախազիցեն։

91. Կարեն կրօնաւորք Թաղել յեկեղեցւոջ կամ ՚ի
գերեզմանատունս իւրեանց, որ ոք և կամիցի։ Սակ ինք-
եանց կրօնաւորաց պարտ է ՚ի մենաստանի իւրեանց
Թաղիլ, Թէպէտ և մեռանիցին արտաքոյ, եԹէ ոչ հե-
ռի յոյժ ՚ի մենաստանէն հասցէ նոցա մահ։ Որէն է
նորընծայից այլուր ընտրել իւրեանց գերեզման. այլ ե-
Թէ չիցէ ինչ նոցա զայնմանէ սահմանեալ, պարտ է
Թաղել զնոսա ՚ի մենաստանին, Թէպէտ և այլուր վախ-
Ճանեալ էիցեն։ Այն իրաւունք են և բնակչաց և ծա-
ռայից, որք ՚ի նմին մենաստանի ընդ հնազանդուԹեամբ
վանահօրն կան. որոց օրէն է ընդունել անդ և զամե-
նայն խորհուրդս ՚ի կրօնաւորաց անտի, բաց ՚ի մկրտու-
Թենէ և ՚ի պսակէ։ Բանադրանք ՚ի վերայ կան եկե-
ղեցականաց և կրօնաւորաց, որ ածեն զոք ՚ի խոստումն
հանդերձ երդմամբ կամ ուխտիւ՝ յեկեղեցւոջ իւրեանց
ընտրելոց զԹաղումն։ Օրէնն յեկեղեցական Թաղմանէ
մեռեալքն անզեղջ, և որոց չխոստովանել և չհաղորդել
գեԹ ՚ի զատկի՝ յայտնի էին հասարակաց. նոյնպէս և
հերետիկոսք և բանադրեալք, և անձնասպանք ՚ի սըրտ-
մտուԹենէ՝ որ չտան ինչ նշանակ ղջման, և մենամար-

տիկք՝ որոց տուեալ իսկ իցէ նշան զղջման, հրապարա-
կական մեղաւորք, և որք անդէն իսկ՝ ի մեղս մեռանին՝
առանց նշան ինչ տալոյ զղջման, զի համարին մեռեալ
անզեղջ, որպէս ուսուցանեն աստուածաբանք առ հա-
սարակ՝ բաց յոմանց։

Որ Թաղումն եկեղեցական տայ այսպիսեաց, մեղանչէ մահուամբ. իսկ որ հերետիկոսաց և համախոհից նոցին, կամ յայտնի բանադրելոց, կամ վաշխառուաց, անկանի և՛ի բանադրանս. և զԹաղեալս այսպիսիս, եթէ հնար իցէ, պարտ է հանել՛ի գերեզմանաց։ Այլ ոչ զոք պարտ է զրկել՛ի Թաղմանէ առանց հրամանի եպիսկոպոսին, կամ վանահօր՝ եթէ վախճանեալն իցէ կրօնաւոր։

92. Որքն է ամենայն ումեք եկեղեցականի կամ աշխարհականի ընտրել իւր գերեզման եկեղեցիս կրօնաւորաց. և եթէ իցէ ուրուք գերեզման աղգատոհմին յեկեղեցւոջ կրօնաւորաց, և չկոչէ նորա ընտրեալ այլ ուրեք իւր գերեզման, օրէն է կրօնաւորաց Թաղել զնա անդ։ Ժողովրդապետ՝ որ առ՛ի յուղարկաւորել ըզվախճանեալն յեկեղեցիս կրօնաւորաց պահանջիցէ առնել ինչ քան զսահմանեալն՛ի Թաղումն՛ի ժողովրդապետական եկեղեցւոջ, առ՛ի խափանել զհաւատացեալս՛ի կամելոյ այլուր զԹաղումն, անկանի՛ի բանադրանս վերապահեալս Պատկին։ Պարտ է կրօնաւորաց հրաւիրել զժողովրդապետն, և տպաստել գալստեան նորա առ՛ի յուղարկաւորել զոք՛ի նորայոյն եկեղեցիս իւրեանց. այլ եթէ հրաժարէ նա կամ յամէ յոյժ՛ի գալ, օրէն է նոցա բառնալ տանել զդին. և չէ օրէն ժողովրդապետի վարել անդ իւիք զիշխանութիւնն իւր, և ոչ ստիպել զժառանգս տալոյ մատուցանել զպատարագս կամ զմահ ինչ յայնցանէ՛ի ժողովրդապետական եկեղեցւոջ։ Ոչնոյն է իմանալ և զեկեղեցւոյ կուսաստանաց. այլ չէ օրէն Թաղել անդ զաշխարհականս առանց հրամանի սրբոյ գահին, բաց յայնցանէ՝ որոց իցէն անդ գերեզմանք։

93. Պարտ իցէ կրօնաւորաց զբաժ կանոնական հատուցանել եպիսկոպոսի կամ ժողովրդապետի։ — Որ տէր է զի յամենայն հրիտակաց՝ զորս ընդունիցէ եկեղեցիք և բարերարութեան տեղիք, պարտին հանել մասն

թեմական եպիսկոպոսին· և այս բաժ եպիսկոպոսական մերթ երիր և մերթ չորիր մնան համարեր· այլ Ան-նովկենտիոս Գ· սահմանեաց հատուցանել զայն ըստ սովորութեան տեղեաց: Իսկ ժողովրդապետականն բաժ է չորիր մնան մեռելութիւ և հրիտակաց և ամենայնի՝ որ հասանէ եկեղեցւոյ ժողովրդապետին, ուր վախճանեալն թաղի: Այս ևս բաժ զարդիս ըստ սովորութեան տեղեաց սահմանի ժողովրդապետին:

94· Այլ յեպիսկոպոսական բաժից աղատ են բոլորովին մենաստանք և կուսաստանք· իսկ զբաժ ժողովրդապետական ըստ հասարակաց իրաւանց հատուցանեն յառաջադոյն և ամենայն կրօնաւորք· այլ յետ վախճոյ տիրիդենտեան ժողովոյն և կոնդակի սրբոյն Պիոսի այնօրիկ ևեթ՝ ի մենաստանաց պարտին հատուցանել, որք աւելի քան զամն քառասուն յառաջ քան զսահմանն ժողովոյն սովոր էին հատուցանել: Այս այսպէս հաստատեն Պալմատիկեանք և վէհուք սրբոյ պահուն վանց բազում արտօնութեանց շնորհելոց՝ ի քահանայապետից, և մանաւանդ վանն Մէքստոսի Ե· բանադրանս և անկումն՝ ի պաշտամանէ սահմանելոց ժողովրդապետաց՝ որ պահանջիցեն բաժ՝ ի կրօնաւորաց:

ՅՕԴՈՒԱԾ Ե

ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆՔ ԿՐՕՆԱՒՈՐԱՑ ԱՌԱՆՁՆԱԿԱՆՔ

95–97· Իշխանութիւն արձակելոց զհպատակս՝ ի վերապահելոց և՝ ի բանադրանաց:
98· Վերապահելոց իշխանութիւն:
99· Իշխանութիւն նոցա՝ ի վերայ աշխարհականաց:
100· Կարիցէ՞ն արձակել՝ ի վերապահելոց եպիսկոպոսին ըստ իրաւանց կամ ըստ սովորութեան:
101· Կարիցէ՞ն արձակել՝ ի վերապահելոց Պապին:
102· Զի՞նչ յուղևորութեան:
103· Օրէ՞ն էգե եպիսկոպոսի զնոսատուականահայր կրօնաւորս քննել վերաին:
104, 105· Տնօրինութիւն անկանոնութեանց:
106· Տնօրինութիւն եկեղեցական պատուիրանաց:
107· Ժամակարգութիւն:
108· Տնօրինութիւն ուխտից և երդմանց:
109· Ուխտ ողջախոհութեան պահելոց և խօսելոց:
110· Արտօնութիւն կրօնաւորաց, նորընծայից և սպասաւորաց նոցա խոստովանելոց ումէ և է քահանայի:

111. Վասն կրօնաւորաց պանդխտելոց:
112. Որ ինչ նոցա իշխանութիւն ի յօբելինի:
113–116. Ընդունելութիւն կարգաց:
117–120. Ձեռնադրութիւն:
121, 122. Ս. առուցումն պատարագաց:
123. Հաղորդութիւն:
124–127. Փարոշ:

95. Ոչ միայն կրօնից այլ իշխանութիւն է արձակելոյ ի վերապահելոց և ի բանադրանաց զկապտակս իւրեանց, և այլ արձակելոյ զաշխարհականս: Ոչ միայն նորա է իմանալ, ոչ միայն զկարգապետս և զդաւառապետս և զտեղակալս նոցա, այլ և զլանահարս, զտեսուչս, և զիոխանորդս իսկ նոցա՝ յորժամ չիցեն նոքա անդ գեթ օր մի: Ոչ ըստ սոցա ամենեցուն իշխանութիւն է արձակելոյ զկապտակս իւրեանց յամենայն վերապահելոց, բայց ի պատկանաց, թէպէտ և ի մարդոյ առանձին վճռով վերապահեալ իցեն յեպիսկոպոսէն: Այլ ոչ միայն զկրօնաւորս՝ այլ և զնորընծայս, ոչ միայն ի մեղաց յետ մտից ի վանս զործեցելոց՝ այլ և յառաջ քան զմուտս, եթէ չիցեն ամբաստանեալ յատեան եպիսկոպոսին և դատ նոցա սկսեալ: Ընդ նորընծայս իմա և զորս կանչ ի վանս առ ի փորձ յառաջ քան զմուտս ի նորընծայութիւն:

96. Իշխանութիւն է նոցա արձակելոյ զկապտակս իւրեանց ուխտեալս և նորընծայս ի վերապահելոց իսկ Պապին անյայտից, յարևնման եպիսկոպոսացն իշխանութեան ընդհակելոյ նոցա ի տրիդենտեան ժողովոյ: Օ՞ այս այսպէս ընդհակաց սուրբն Պիոս, և զնոյն հաստատեաց Բենեդիկտոս ԻԴ, ընդհակելով կրօնաւորաց իշխանութիւն արձակելոյ զկապտակս իւրեանց՝ ևս և ի վերապահելոց կոնդակին ընթերեաց, բայց ի կրկին անդամ անկելոյ ի հերետիկոսութիւն, ի նենգողաց զաղաքելական նամականի, և ի տանելոյ առ անհաւատս որ ինչ արդելեալն է:

97. Այսուհետև նոքա արձակել զկապտակս իւրեանց և ի բանադրանաց հարկանելոց զեկեղեցականս, ևս և ծանր և ամենածանր հարուածով, թէպէտ և հրատարակեալ իցէ այն ոչ միայն առ կրօնակից՝ այլ և յուխտ եկեղեցւոյն. այսպէս ընդհակաց ի Պոնիփակեայ Դ. և ի Կղեմայ Ը:

98. Նորին Աղեմայ ընտրիւ կարեն և վերապահել մեռասան դեպս, որպէս ասացաք ի գլ. ԺԴ. 130. ուր և յաւելաք ասել ի թիւ 134, երբ օրէն իցէ խոստովանահօր անհրաման ի մեծաւորէ արձակել զկրօնաւորս ի վերապահելոց:

99. Իսկ յաղագս արձակելոյ կրօնաւորաց զարտաքինս ի վերապահելոց որ ինչ արտունութիւնք և լեալ իցեն նոցա երբեմն ընտրեալ, զարդիս հաւաստի է չկարել նոցա արձակել զարտաքինս ի վերապահելոց եպիսկոպոսին, և ոչ յայլոց անտի վերապահելոց՝ի Աղեմայ ը. այսինքն ի հարկանելոց զեկեղեցականս, ի մենամարտութենէ, ի գործելոց ընդդէմ եկեղեցական ազատութեան, ի լուծանելոց զիւականս կուսաստանի չար մտաց, և ի մեերմական սիմոնականութենէ ի ժառանգութիւն եկեղեցական: Ոչ ի իշխանութենէն ընտրեալ նոցա ի սրբոյն Պիոսէ՝ արձակելոց ի վերապահելոց անյայտից ըստ իշխանութեանն ընտրելոց եպիսկոպոսաց ի տրիդենտեան ժողովոյ, զորմէ ասացաք ի թիւ 96, վասն կրօնաւորաց եւեթ է և ոչ վասն արտաքնոց:

100. Որքն իցէ կրօնաւորաց արձակել զարտաքինս, ոչ ի վերապահելոց եպիսկոպոսին յինքենէ՝ այլ ի վերապահելոց նմա ըստ իրաւանց կամ ըստ սովորութեան, որպէս յանցուցանելոց զսաղմն հոգևորեալ և յայլոց ընդունակելոց ի թիւ 46: — Ակսք ի բարոյականաց ոչ օրէն համարին, իբր զի Պօղոսի ե. և Աւրբանեանն արգելք անպայման են չարչաքելոց ի վերապահելոց ընդհանուր եպիսկոպոսաց: Այլ հաւանականագոյնս զհակառակն հաստատեն Բռնչինա, Լաքրուա, Սփորեր, Վալմատիկեանք, Լեծանա, Սանքեզ, Փիներինոյ, Ալիւա և այլք բազումք: Ոչ ի զկոնդակս Աւրբանոսի ը. և Պօղոսի ե. պարտ է իմանալ զվերապահելոց եպիսկոպոսաց անտի. զի կոնդակքն այնորիկ հաստատեն զվճիռ Աղեմայ ը., յորում զվերապահելոց եւեթ եպիսկոպոսաց են բանք: Ասանաւանդ զի, որպէս յաւելու Այրն Սուարէզ, վերապահեալքն եպիսկոպոսաց ըստ իրաւանց՝ համարելի են ըստ աւանդեալ իշխանութեան ընտրեալ նոցա քան վերապահեալ: Այլ զայս ոչ կ պարտ իմանալ զհարկանելոց զեկեղեցականս, և ոչ զայլոց մեղաց՝ զորս եպիսկոպոսն կամիցի առանձինն վերա-

պահել իւր. զի որպէս ՚ի վեր անդր ասացաք, խափանեալ է վասն այսոցիկ իշխանութիւն կրօնաւորաց ՚ի սպառ:

101. Որչափ իցէ կրօնաւորաց արձակել զարտաքինս ՚ի վերապահելոյ պապին: — Անդրականս և հաւանականագոյն կարծիք օրէն համարին վասն արտունութեանն՝ զոր յամին 1545 պօղոս գ. ընդհեաց Յիսուսեանց, ոչ ակնհայտ պաշխարհականս յամենայն մեղաց, եւ ոչ ՚ի վերապահելոց առաքելական գահոյն, բայց ՚ի բովանդակելոց ՚ի կոնդակին ընդրեաց: Որ ըստ ասացելոցս ՚ի վեր անդր ՚ի թիւ 9. զօրէ և վասն այլոց ամենեցուն ուխտից միանձանց: Այս ոչ կոնդակք պօղոսի ե. և Ուրբանոսի ը. զօրեն ինչ ընդդէմ: զի որպէս ՚ի նախորդ թուիդ ասացաք, պարտ է իմանալ զայնս զվերապահելոց ՚ի Պղեմեան կոնդակին՝ զոր նոքա հաստատեն, և յորում վերապահին բովանդակեալքն ևեթ ՚ի կոնդակին ընդրեաց, և միւս այլ վեցեակ դէպք: Այլ զիտելի է զի իշխանութիւնս այս ՚ի ներքին ևեթ առենի զօրէ. տէս և ՚ի թիւ 31, որ ինչ ասացաք զաբբայից:

102. Խոստովանահարքն կրօնաւորք ըստ ընդհելոյ նոցա Գրիգորի ժգ. և Աւգինեայ դ. ունէին երբեմն իշխանութիւն յուզևորին ընդունել զխոստովանութիւնս ոչ միայն ՚ի թեմի անդ՝ ուր հրաման էր նոցա, այլ և յայլ թեմս, և ըստ կոնդակին խաչակրաց ընտրեալքն ուրեք ՚ի խոստովանահայրութիւն, ամենայն ուրեք հաստատեալ ընտրեալ: Այլ Կոնովկենտիոս ժ. արգել նոցա չընդունել ուրեք զխոստովանութիւն առանց հրամանի թեմական եպիսկոպոսին:

103. Կրօնաւորք անցեալք միանգամ ընդ քննութիւն և ընտրեալք եպիսկոպոսն ՚ի խոստովանահայրութիւն, ազատք էին յառաջագոյն ՚ի միւսանգամ քննութենէ: Այլ սուրբն Պիոս եբարձ զնոցին զայս արտունութիւն. և թէպէտ Գրիգոր ժգ. ընդ այլ յայտարարութիւնս սրբոյն Պիոսի էարկ և զայս ընդ տրիդենտեան սահմանադրութեամբ՝ որ այլ ինչ ոչ սահմանէ կրօնաւորաց բայ ՚ի հրամանել թեմական եպիսկոպոսի, սակայն աստուածաբանք ոչ միաբանին ՚ի լուծանել այնուիկ զայս խնդիր: Ոմ ՚ի բազումք ՚ի նոցանէ զհետ բերին, չկարել յաջորդ եպիսկոպոսի զքննեալն ՚ի նախոր-

դէն միաժամադամ քննել· սակայն և այլք բազումք գհաւատային հաստատեն ըստ վճռոյ իմիք սրբոյ գահուն, զոր ածեն Ի Եծանա և Ցիանա ։ Ա ան որոյ հաւանականաբար, ըստ հաստատելոյ Սալմատիկեանց, օրէն է յաջորդ եպիսկոպոսի կոչել՝ի քննութիւն գայնոսիկ՝ի կրօնաւորաց՝ զորոց ծանիցէ զանբաւականութիւն, այլ ոչ հանրական հրամանագրով բառնալ զիշխանութիւն ամենայն խոստովանահարց կրօնաւորաց առ՝ի քննել զնոսա առ հասարակ ։ Նա՝ի բառնալ իսկ եպիսկոպոսին զիշխանութիւն՝ի գղեցց առ հասարակ, ոչ իմանին ընդ նոսա կրօնաւորք՝ վասն որոյ յիրս գժպհիս պահանջէ բացայայտ յիշատակ ։ Պիտելի է դարձեալ զի փոխանորդ ուխտին կանոնիկոսաց՝ի դատարկանալ աթոռոյն չունի իշխանութիւն միաժամադամ քննելոյ զկրօնաւորս, ըստ արտունութեան ընդհելոյ նոցա՝ի Կղեմայ Դ։

Ո՞այս ամենայն պարտ է իմանալ զխոստովանահարց՝ որոց անպայման տուեալ իցէ իշխանութիւն խոստովանութեան, և ոչ առժամանակեայ կամ ըստմանեայ· զի ըստ սահմանելոյ Կոնսվկենտիոսի ԺԳ· և ըստ հաստատելոյ զայն Բենեդիկտոսի ԺԴ· խոստովանահարք, եթէ կրօնաւորք և եթէ ոչ, չկարեն ընդունել խոստովանութիւնս՝ բայց՝ի սահմանեալ տեղւոջ և՝ի ժամանակի և զսահմանեալ անձանց, ըստ ասացելումն՝ի գլ· ԺԶ· 7 ։

104· Կրօնաւորք, ըստ ընդհելոյ սրբոյն Պիոսի, և ըստ հաստատելոյ զայն Յուլիոսի Բ· կարեն անօրինել զայն ամենայն անկանոնութիւնս հպատակաց իւրեանց զանչայոսս՝ զորս իշխանութիւն է եպիսկոպոսաց անօրինելոյ՝ի թեմի իւրեանց ըստ ասացելումն՝ի Թիւ 29 ։ Այլոն Սուարէզ, Սանքէզ, Սայիրոյ, Սալմատիկեանք, Սիփորէր, Ի Եծանա և այլք զնոյն իշխանութիւն և վասն արտաքնոց ընդհաել ասեն նոցա՝ի Ալեքսանդրէ Դ· և՝ի նմին խակ Յուլիոսէ Բ ։

105· Պարձեալ կարեն նոքա անօրինել՝ի հպատակս իւրեանց զոր և իցէ անկանոնութիւն՝ որ՝ի յանցանաց և որ՝ի պակասութենէ ։ Նա նախ՝ զանկանոնութիւն մարդասպանութեան, ոչ միայն զանչայոս՝ ըստ ընդհելոյ Ա արտինոսի Ե, այլ և զկայսեսն և զկամաւոր՝ ըստ ընդհելոյ Բենեդիկտոսի ԺԴ, եթէ միայն չիցէ նիւ-

թեալ և կատարեալ անդէն իսկ ՚ի մեռանելոյն։ Երկրորդ՝ կարեն տնօրինել յընդունելութիւն կարգի քահանայութեան զանկանոնութիւն յառաջ եկեալ յընդերկար յիմարութենէ, եթէ ըստ վկայութեան բժշկաց անցեալ իցէ ՚ի սպառ վտանգ վերստին անկանելոյ ՚ի նոյն։ Երրորդ՝ կարեն տնօրինել զթերութիւն միոյ յոտից կամ յաչաց, ըստ ընդհանուր նոցա Կանոնաց Դ. և յերկբայելի թերութեան յայտ առնել՝ զի չիցէ այն արգել ձեռնադրութեան, որպէս եպիսկոպոսաց է օրէնն առնել վասն հպատակաց իւրեանց։ Չորրորդ՝ զանկանոնութիւն թերութեան ծննդոց, որ ինքնին իսկ դադարէ կրօնաւորական ուխտիւ՝ վասն ընդունելութեան սրբոց կարգաց, այլ ոչ և վասն եկեղեցական աւագութեանց՝ վասն որոց խնդրի տնօրինումն, զոր և կարեն տալ կարգապետք, գաւառապետք, և վանահարք իսկ։ Հինգերորդ՝ կարեն տնօրինել և զանկանոնութիւն զբաւն իսկ երկակնութեան, ըստ ընդհանուր Կանոնաց Ե, որպէս հաստատեն Վասիլեոսիոս, Փեւլիոյ, Կաչէտոյ, Սալմատիկեանք և այլք։ Վեցերորդ՝ զանկանոնութիւն և այսանի ՚ի պակասութենէ մարդասիրութեան։ Եօթներորդ՝ զամենայն իսկ անընդունակութիւն և պատիժ յառաջ եկեալ ՚ի յանցանաց, որպէս զրկումն ՚ի պաշտամանէ, յեկեղեցականի ժառանգութենէ, ՚ի քաւարկութենէ և այլն, թէպէտ և վերապահեալ իցեն Պապին։ Ո՛չ այս այսպէս հաստատեն Մաւարէզ, Սանքէզ, Փեւլիոյին, Սալմատիկեանք և այլք ըստ ընդհանուր Կանոնաց Դ. սրբոյն Պիոսի, և Գրիգորի ԺԴ։

106. Նաև ընդունողք կրօնից կարեն տնօրինել և զեկեղեցական պատուիրանս վասն հպատակաց իւրեանց հանդերձ Թեմական եպիսկոպոսաց, ըստ ասացելումն ՚ի գլ. Ը. 57. զի է նոցա իշխանութիւն զրեթէ եպիսկոպոսական, վասն որոց կարեն հաւանականաբար տնօրինել զամենայն, որ չիցէ վերապահեալ Պապին, որպէս ասացաք անդ ՚ի թիւ 58. մանաւանդ ուր երկբայելի իցէն պէտք տնօրինման։ Կարեն տնօրինել և ժամանակարգութիւն ՚ի սուղ ինչ աւուրս ըստ իրաւացի պատճառաց՝ զոր յամենայն իսկ տնօրինմունս է իմանալ, զաշխատութիւն ՚ի տօնս, և զայս և վասն ծառայից քնա-

կելոց՝ ի մենաստանին։ Կարէն և ան տնօրինել արուեստաւորաց արտաքնոց աշխատել վասն մենաստանին, այլ ըստ այլում մասին. այսինքն եթէ մենաստանն իցէ աղքատ, և չկարիցէ հատուցանել նոցա վարձս. տես զայսմանէ՝ ի գլ. Զ. 17։

107. Ղեմէս Ե. ընդհեաց կրօնաւորաց հիւանդաց, քանզի այնպիսի հիւանդաց՝ որ չեն ազատ՝ ի կատարելոյ զժամակարգութիւն, և հիւանդապահաց, փոխանակ ժամակարգութեան ասել վեց կամ եօթն սաղմոս ըստ սահմանելոյ վանահօրն, և եօթն Տէր ողորմեա, և երկիցս Տէր ողորմեա։ Արտինոս Ե. ընդհեաց դեռ և ան ազատ քինելոյ՝ ի հիւանդութենէ զմանն ինչ և եթէ ժամակարգութեան կատարել ըստ սահմանելոյ խոստովանահօրն։

108. Իշխանութիւն է մուրացիկ կրօնաւորաց, որով և այլոց՝ որ հաղորդ են արտաւնութեանց նոցա, տնօրինելոյ և զուխտս և զերդմունս, և զարգելս խնդրելոյ զամուսնական պարտս վասն մեղաց ընդ ազգակիցս ամուսնոյն գործեցելոց։ Այլ առ՝ ի կարելոյ վարել կրօնաւորաց իշխանութեամբս այսուիկ, պարտ է նոցա դէթ՝ ի վանահօրէն ունել հրաման։

109. Կարէն նոքա տնօրինել և զուխտ ողջախոհութեան արարեալ յառաջ և յետոյ քան զամուսնութիւն, և որ ինչ օրէն է եպիսկոպոսաց ըստ թեմական իշխանութեան տնօրինել։ Այլ խնդիր է թէ կարիցէ՞ն հանգոյն եպիսկոպոսաց՝ ի ստիպել հարկին տնօրինել և նոքա զուխտ ողջախոհութեան խոստեցելոց, առ՝ ի կատարել զպատակ։ — Ակնք համարին կարել նոցա զայն. բայց հանրագոյն կարծիք չընդունին զայն, իբր զի արտաւնութիւն նոցա է՝ ի տնօրինել և եթէ զուխտ՝ զոր՝ ի թեմական իրաւանց օրէն է եպիսկոպոսի տնօրինել։ Այլ առ այս պատասխանեն առաջինք, զի՝ ի ստիպել հարկին և եպիսկոպոսունք՝ ի թեմական իրաւանց տնօրինեն. զի իշխանութիւնն այն յարակից է պատուոյ և պաշտամանն իւրեանց, ըստ ասացելումն՝ ի թիւ 34 և 41. վասն որոյ չէ անհաւանական և առաջնոցն կարծիք։

110. Կարէն կրօնաւորք, յայտնի կամ լռելեայն հրամանաւ վանահօրն, խոստովանել որում և իցէ քահանայի. որպէս հաստատեն Աւարէզ, Լուկէս, Ալմա-

տիկեանք և այլք։ Ապա որոյ ամենայն առաջնորդք կրօնաւորաց ունին իշխանութիւն ընտրելոյ իւրեանց՝ ի խոստովանահայր զի՛ր և իցէ՝ ի քահանայից։ Ընդ կրօնաւորս իմա և զսպասաւորս՝ որ՝ի վանս անդ կեցակրին, ըստ սահմանելոյ տրիդենտեան ժողովոյն (Նիստ. ԻԳ. գլ. ԺԱ)։ Ապա որոյ կարեն նոքա և խոստովանիլ և հաղորդիլ՝ի վանս անդ, և զվերջինն օծութիւն ընդունել՝ի կրօնաւորաց անտի։ Ընդ նոյն իմա և զնորընծայից, որք յիւրս նպաստաւորս համարին ընդ կրօնաւորս ըստ ուսուցանելոյ աստուածաբանից և ըստ յայտարարութեան սրբոյ գահուն. վասն որոյ և՝ի վերատակելոց եպիսկոպոսին կարեն նոքա ընդունել արձակումն՝ի կրօնաւորաց ըստ ասացելումն՝ի Թիւ 95։

111. Կրօնաւորք ուղևորք, եթէ իցէ նոցա ոք՝ի կրօնակցաց իւրեանց ուղեկից կարող՝ի խոստովանահայրութիւն, պարտին նմա խոստովանել. իսկ եթէ չիցէ նոցա ուղեկից և ոչ կրօնակից ոք անդ, կարեն խոստովանել ումէ և է կրօնաւոր կամ ոչ կրօնաւոր քահանայի՝ որ կարող իցէ՝ի խոստովանահայրութիւն։ Որ՝ի թէպէտ և ումանք յաստուածաբանից կարևոր համարին՝ զի քահանայն այն իցէ յընտրելոց անտի յեպիսկոպոսէն՝ի խոստովանահայրութիւն, այլ հանրական կարծիք զհակառակն հաստատեն. նախ՝ զի այսպէս է սովորութիւն կրօնաւորաց, որ յայտ առնէ զհաւանութիւն առաջնորդաց. և երկրորդ՝ զի Բենովկենտիոս Ը. շնորհէ անխտիր զշնորհս զայս կրօնաւորաց ուղևորաց՝ զի՞ ասո՞՛ է չգոյէ հրաժանիլ խոստովանահօր՝ զի՛ր ի՞ իցէ այլ քահանայ կարող, կրօնաւոր կամ ոչ, կարասցեն ընտրել իւրեանց՝ի խոստովանահայր։

112. Յաւուրս հանրական յոբելէնի միանձունք և կուսանք, առանց իսկ հրամանի մեծաւորաց, կարեն խոստովանել կրօնաւորաց այլոց կարգաց, թէպէտ և իցէ նոցա խոստովանահայր՝ի կրօնակցաց։

113. Կրօնաւորք զհրամանագիր ձեռնադրութեան ոչ յեպիսկոպոսաց ընդունին, այլ՝ի մեծաւորաց իւրեանց. և եթէ առանց հրամանագրի նոցա ընկալցին կարգ, ծանուցս մեզանչեն և անկանին յարգել։ Այլ զձեռնադրութիւն պարտ է նոցա ընդունել՝ի թեմական եպիսկոպոսէ, հանդերձ քննութեամբ. իսկ եթէ եպիսկոպոսն թեմական չիցէ անդ, կամ չկարիցէ ձեռնադրել

օրէն է նոցա յայլմէ ումեքէ ընդունել զձեռնադրութիւն՝ վկայականաւ փոխանորդի կամ քարտուղարի Թեմական եպիսկոպոսին. ապա թէ ոչ, ի նոյն պատիժս անհրաժեշտ ձեռնադրելոցն անկանին: Այլ չէ օրէն կրօնաւորի յայլ ուրեք ի վանաց գնալ բնակել առ ի ձեռնադրիլ յայլմէ եպիսկոպոսէ, խոյս տալով ի քննութենէ Թեմական եպիսկոպոսին: Իսկ որք ի Թեմի ոչ ոք ծանօթ կան կրօնաւորք, պարտ է նոցա ի մերձաւորագոյն եպիսկոպոսէ առնուլ զձեռնադրութիւն:

114. Իսկ յաղագս նորընծայից կէսք ասեն թէ պարտ է նոցա ընդունել զձեռնադրութիւն ի Թեմական եպիսկոպոսէ հայրենեաց իւրեանց. իսկ այլք թէ յեպիսկոպոսէ Թեմին՝ ուր վանքն իսկ են: Երկոքին ևս հաւասարապէս հաւանականք են, եթէ միայն կամիցին նորընծայն իսկապէս կալ ճեալ ի վանս անդ՝ խոստացեալ երդմամբ:

115. Որքն է դարձեալ կրօնաւորաց արտաքոյ սահմանեալ աւուրց ընդունել զձեռնադրութիւն, ըստ յայտարարութեան Կղեմէդիկտոսի ԺԴ:

116. Որք միանգամ արտաքոյ սահմանեալ աւուրց կարին ընդունել ձեռնադրութիւն, օրհն իցէ նոցա յաւուրս իսկ ոտնից սրբոց ընդունել զայն: — Ցիանա և այլք օրէն հաստատին ըստ կոնդակին Ղեբասանդրի Զ, որ ասէ. Յաւուրս պէրունականս ի՛ պօնս. և Հայրն Սուրբ հաւանական կոչէ զկարծիս զայս, վասն ոչ ասելոց քահանայապետին և ի պօնս պապուէբեալս: Նայց հաւանականագոյնս զհակառակն հաստատեն Լուկիոյ, Ալզողիոյ և Նաբոպալ. զի Գրիգոր ԺԴ յայտնագոյն բացատրէ զայն, և զի այսպէս ընկալեալ է ի սովորութենէ՝ ի կիւրակէս և ի տօնս տէրունականս առնել զձեռնադրութիւն:

117. Իսկ յաղագս իշխանութեան աբբայից տալոց զաստիճանս՝ որ ինչ արտօնութիւնք և լեալ իցեն նոցա յառաջագոյն ձեռնադրելոց բաց ի կրօնաւորաց և զայլ հպատակս իւրեանց, սակայն կոնդակաւ Աւրբանոսի Ը. խաչիանեցան առ հասարակ. և զարդիս չէ օրէն նոցա ձեռնադրել զոք այլ բաց ի հպատակաց իւրեանց կրօնաւորաց, և ոչ հրամանադիր ձեռնադրութեան տալ ումեք. և որ տացէ օք, արգելեալ գտանի

՚ի պաշտամանէն : Նայց միայն աբբայից կասկինեան լե-
ցին , և Կաւայ , և այլոց ոմանց տակաւին է արտուն-
Թիւն՝ տալոյ և այլոց հպատակաց իւրեանց հրամանա-
դիր ձեռնադրուԹեան :

118 · Կ՚ան որոյ և ոչ այնոքիկ յաբբայից , որոյ է
իրաւասուԹիւն գրեԹէ եպիսկոպոսական և ԹեմՀ , կա-
ցեն ձեռնադրել զՀպատակս իւրեանց աշխարՀիկս , որ-
պէս յուցանեն Ի՞աքրուա և Նենեդիկտոս ԺԴ· յայտա-
րարուԹեամբ ժողովոյն տրիդենտեան սահմանադրու-
ԹեանՑ :

119 · Նաբբայից , որք կարեն ձեռնադրել զՀպատակս
իւրեանց ուխտեալս , օրՀնի՞ն իցէ ձեռնադրել և զնորընծ-
ծայս : — Ի՞անրագոյն և հաւանականագոյն կարծիք օ-
րՀնէն Համարին , վասն Համարելոյ նորընծայից ընդ կրօ-
նաւորս յորո լինչ նպաստաւոր է նոցա , որպէս ասացաք ՚ի
Թիւ 109 :

120 · ՆէԹէ որք յաբբայից տացէ աշխարՀականաց
կամ օտար կրօնաւորաց աստիճանս , վաւերո՞ իցեն : Ի՞այրն
Կաւարէզ , Ի՞աքրուա և այլք ոչ վաւեր Համարին . բայց
պարտ է ընդ այլս առ Հասարակ վաւեր Համարել : Զ՞ի
այս իշխանուԹիւն ընորՀեալ էր նոցա երբեմն , որպէս
ասացաք , և ուրբանեան կոնդակաւն խափանեցաւ իշ-
խանուԹիւն նոցա · վասն որոյ ԹէպէՀ և ոչ ըստ օրի-
նի , այլ վաւեր է ձեռնադրուԹիւն նոցա : Զ՞ե նոյն իսկ
կոնդակն սահմանէ ձեռնադրելոց արգելս ՚ի պաշտամա-
նէն , ապա Համարի վաւերաբար զնոսա ձեռնադրեալ ·
և Նենեդիկտոս ԺԴ· զայս այսպէս ասէ Հաստատեալ
՚ի ժողովոյ տրիդենտեան սահմանադրուԹեանց :

121 · ԻշխանուԹիւն էր երբեմն կրօնաւորաց ամե-
նայն ուրեք կանգնելոց սեղան , և առանց իսկ Հրամանի
Թեմական եպիսկոպոսին պատարագելոյ և Հաղորդելոյ
զայլս : Զ՞այլ և այս իշխանուԹիւն նոցա ամիսուիեցաւ ,
և զարգիս ՚ի վանս եԹէ և ՚ի հիւրանոցս իւրեանց օրէն
է նոցա պատարագել · և անդ ոչ ՚ի սենեակս , զոր ար-
գել Կնոսվիկենտիոս ԺԴ , այլ մատուռն ուրոյն Հրամա-
նաւ վանահօրն կանգնեալ :

122 · Կրօնաւորք , ըստ ընորՀելոյ Պրիպոլի ԺԴ , կա-
րեն Ժամաւ յառաջ քան զարշալոյս պատարագել · այս
լինքն երեք Ժամաւ յառաջ քան զծագել արեգական :

Լսակ ըստ իրաւացի պատճառաց կարեն և , պատարա-
գել, ըստ շնորհելոյ Ալեքսանդրի Զ, և Կղեմայ Ը, եր-
կու ժամաւ յետոյ քան զՀատարակ գիշեր : Բայց իշխա-
նութեամբն այսուիկ յեկեղեցիս ևեթ իւրեանց կարեն
վարել· ուր և այլոց քահանայից օրէն է արտուներ
թեան նոցա հաւատարել : Նոյնպէս Ի· շնորհեաց նո-
ցա և իշխանութիւն՝ ըստ իրաւացի պատճառաց երիւք
ժամաւ յետոյ քան զմիջօրէ պատարագելոյ : Նա թէ-
պէտ Ալզոլիոյ և այլք հայրապետք խափանեալ՝ի սրբոյն
Պիտեր զայս նոցա արտունութիւն , սակայն Ալբերտա ,
Տիանա, Ալմատիկեանք և այլք ջընդունին խափանեալ
զայն· զի սուրբն Պիոս զերեկոյեան պատարագաց խոս-
սի՝ յատենն փարաձամ գբելնէ՝ի Տոտոս էակ արեգական : Ա ան
որոյ հայրապետք զօրել տակաւին Եւգինեան շնորհի· և
առ՝ի վարել նուաւ շատ հայրապետք ունել պատճառ մնչ
իրաւացի, որպէս զկարևոր մնչ ուսումն կամ զվատա-
ռողջութիւն և այլն :

123· Օրէն է կրօնաւորաց յեկեղեցիս իւրեանց հաղորդել զամենայն հաւատացեալս, ՚ի բաց առեալ ե-
թէ զոք եպիսկոպոսն ըստ իրաւացի պատճառաց արգե-
լուցու չհաղորդել : Օրէն է նոցա պաշտել և զթոշակ
՚ի հոգեվարս կամ՚ի վտանգ մնհու, եթէ՝ ՚ի յետին
կամ՚ի ծանր հարկի ժողովրդապետն չկարէցէ կամ չը-
կամիցի պաշտել զայն : Այլ չկարեն մնատակարարել
զհաղորդութիւն զատկական, ըստ ասացելոցս ՚ի գլ· Ը·
Թիւ 42 :

124· Օրէն էր երբեմն կրօնաւորաց ազատօրէն յա-
մենայն եկեղեցիս և ՚ի հրապարակս քարոզել· այլ ժո-
ղովն տրիդենտեան սահմանեաց վասն օտար եկեղեցեաց
առնուլ նոցա հրամանն յեպիսկոպոսէն , իսկ վասն քա-
րոզելոյ յեկեղեցիս իւրեանց՝ օրհնութիւն ևեթ· և
շատ խակ է խնդրել նոցա զայն , թէպէտ և չկամիցի ե-
պիսկոպոսն տալ , որպէս ուսուցանեն Լեծանա , Փելլե-
գրինոյ , Ալմատիկեանք և այլք ըստ վէճոյ ժողովոյն տրի-
դենտեան սահմանադրութեանց : Այլ վասն քարոզե-
լոյ՚ի հրապարակս և ոչ օրհնութիւն յեպիսկոպոսէն
պարտ է նոցա խնդրել ըստ Ալմատիկեանց, զի ժողովն
զեկեղեցեաց ևեթ առնէ յիշատակ : Այլ պարտ է նո-
ցա ունել հրաման յառաջնորդաց իւրեանց , և մեզան-

չէն առաջնորդք, եթէ առանց քննելոյ գնասա՝ տացեն նոցա հրաման քարոզելոյ։ Կարէն առաջնորդք և որոց խուզումն ևեթ իցէ հերացի՝ հրաման տալ քարոզելոյ, որպէս և հասարակաբար իսկ նոյն ժողով չարգելու չըտալ հրաման քարոզելոյ որոց խուզումն ևեթ իցէ հերաց։

125. Որպէս ասացաք, չկարեն կրօնաւորք առանց հրամանի եպիսկոպոսին յօտար եկեղեցիս քարոզել. քայց եթէ չիցէ անդ եպիսկոպոսն, և ոչ՝ի կրօնաւորաց ուղևոր պատահիցէ, օրէն է ժողովրդապետի տալ նմա հրաման, ըստ ընդհելոյ Կղիմեսի Ը., քարոզել անդ։ Իսկ եթէ՝ի տալ եպիսկոպոսին հրաման՝ ժողովրդապետն ընդդէմ դառնայցէ, սակայն օրէն է կրօնաւորի քարոզել. զի եպիսկոպոսն հրամայէ ժողովրդապետին, և զի գարձեալ զայս այսպէս Աղեքսանդր Ե. սահմանեաց։

126. Որո՞ն իցէ եպիսկոպոսի քննել զկրօնաւոր՝ի խնդրել նորա հրամանն քարոզելոյ յեկեղեցիս.— Կէսք յաստուածաբանից օրէն համարին, զայտարարութիւն ինչ նորին ժողովոյ զայսմանէ՝ի ներքս ածեալ։ Իսկ այլք ոչ օրէն համարին վասն կոնդակին Լևոնի Ե., ուր ասէ. Մի ընդունել, զոր՝ի կրօնաւորաց՝ի քարոզութիւն, եթէ չիցէ նա քննեալ՝ի մեծաւորաց իւրոց, և զիր վկայութեան՝ի նոցանէ ունիցի։ Յորմէ Սալմասիկեանք ընդ այլս զհետ բերեն, զի գայտարարութիւն ժողովոյն՝ի հաւանական կարծիս ևեթ պարտ է ունել, և ոչ նախադասել կոնդակին Լևոնի։ Սակայն եթէ հաւանական է եպիսկոպոսին ունել իրաւունս քննելոյ զկրօնաւորն, ապա կարէ իսկ կոչել զնա՝ի քննութիւն, և՝ի հրաժարել նորա՝ չտալ նմա հրամանն քարոզելոյ։ Զանգի կոնդակն Լևոնի թէպէտ և չարգելու եպիսկոպոսին չընդունել՝ի քարոզութիւն զկրօնաւոր՝ որ զգիր վկայութեան մեծաւորի իւրոյ ունիցի, սակայն և ոչ արգելու չքննել զնա։

127. Որքն է եպիսկոպոսի, ըստ սահմանելոյ լատերանեան հինգերորդ ժողովոյն, արգելուլ և պատժել զքարոզիչս կրօնաւորս յերից պէսպ՝ յորս ինքնին իսկ զտանին արգելեալ՝ի քարոզելոյ։ Զայս՝ի պատմել նոցա հրաշս ատելոգս կամ անստոյգս։ Արկղոզ՝ի քա-

ղոչել մարգարէութիւնս ոչ՝ի սուրբ գիրս հաստատեալ, և ոչ յեկեղեցւոյ ընկալեալս։ Երրորդ՝՝ի չարախօսել նոցա զեպիսկոպոսաց և զառաջնորդաց իւրեանց։ Այս առաւել, ըստ տրիդենտեան սահմանաղրութեան, կարող են եպիսկոպոսունք արգելուլ զնոսա և պատուհասել, եթէ մոլորութիւնս քարոզիցեն և բանս գայթակղելիս։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

ՈՐ ԻՆՉ ԿԱՐԵԻՈՐ ԵՆ ԽՈՍՏՈՎԱՆԱՀՕՐ

1. Չի պարտ է խոստովանահօր մանրամասնաբար ընդունել զապաշխարսն:
2. Սիրով լսել նմա:
3. Սիրով խրատել:
4. Խոհեմութեամբ առնել զհարցուածս և զյանդիմանութիւն, և պատրաստել զնիրա նորա:
5. Հանրական դեղք:
6. Դեղք առանձնականք:

1. Քառեակ պաշտօն է բարւոյ խոստովանահօր, և քառեակ դէմն պարտ է նմա բերել. զհօր, զբժշկի, զուսուցչի և զդատաւորի: Պաշտամանն ուսուցչի և դատաւորի աստացաք ցայս վայր ըստ բաւականին. մնայ արդ ասել զպաշտամանն հօր՝ որում անկ է սէր, և բժշկի՝ որում անկ է խոհեմութիւն: Զի՝ի բերել խոստովանահօր զդէմն հօր, պարտ է նմա առատանալ՝ի սէր. և նախ քան զամենայն նովին սիրով ընդունել զամենեսեան, զաղքատս, զտխմարս, և զբազմամեղս: Զնա ոմանք՝ի խոստովանահարց՝ որք զհոգեսէրս և զարժանապատիւս ոմանս խնդրեն. իսկ զապաշխարողս կասկեցութեան արժանիս դժկամակութեամբ ընկալեալ, և նախատանօք՝ի բաց արձակեն: Ա՛ան որոյ հնչէն այն՝ որ դժուարութեամբ մեծաւ եկեալն էր՝ի խոստովանութիւն, ՚ի մերժելն ՚ի բաց՝ խորշի այնուհետև ՚ի սուրբ խորհրդոյն, երկնչէ ՚ի խոստովանելոյ, և վհատեալ սոյ զանձն բոլորովին ՚ի մեղս: Խոստովանահայրն որպէսզի ընդունի զայնպիսին և ողջագուրկ, և բարեբախտ զանձն համարի՝ի զերծուցանել զնա՝ի գերութենէ սատանայի: Ոչ հոգեսիրաց վասն և անմեղաց է խորհուրդս այս, այլ վասն մեղաւորաց. զի նեղելի մեղայ չեն ինչ պէտք արձակման, մանրթ է նոցա և այլազգ քաւել. և փրկիչն մեր ոչ եկն հնչել պարտաւս, այլ զնեղա-

տուս : Ա՛ման որոյ պարտ է խոստովանահօր ըստ խրատու առաքելոյն զկենսուլ զգուշ և զողորմութիւն, և քաջալերել զայնպիսին այսպիսեօք ինչ բանիւք . Բեղ նայիմ, սիրտ ըրէ, աղէկ խոստովանանայիմը եղիր, ղուրբէ հա մարչիկ, մի՛ ամայներ : Ծէ որ աղէկ ալ պարբաստուած չես՝ կեն չուանի . հօգնեմ չեղիր, հերիւ է որ հարցմունքներուս պա պասխան տաս : Ը՛նորհակալ եղիր Ա՛ստուծոյ որ ինչուան հի մայ չեղիր ապաշխեյ . էայց վարդը պիտոր գոնեա . ուրախ եղիր, Ա՛ստուած չեղիր սպասկ կընուիրէ՝ նէ որ առաջադրութիւնդ հաս պասան ըլլայ : Ա՛ստուած անոր համար ինչուան հիմայ ապա շեյ չեղիր, որպէս զի դարձի գաս, ու ընդունիլուան պայ չեղիր . ուրիշին հանգիստ արտով ակռ խոստովանանդիր :

2. Ա՛զաւել ևս՝ ի լսել զխոստովանութիւնն պարտի խոստովանահայրն առնել ընդ նմա գուշ և սէր : Օ՛գոյշ կացցէ՝ մի՛ ցուցանել անհամբերութիւն կամ ձանձրութիւն . մի՛ և զարմանս կամ սարսափ ընդ ծանրութիւն և ընդ բազմութիւն մեղացն . զայսոսիկ պարտ է ցուցանել խստասիրտ ապաշխարողաց , որք՝ ի մահացու թմրութեան կան՝ անզգայք այլանդակութեան և յամախութեան մեղացն : Օ՛նոսա և յանդիմանել իսկ օրէն է . զի Թէպէտ և արգելուն վարդապետք չյանդիմանել զապաշխարողն՝ ի խոստովանել անդ , զի մի գուցէ ահաբեկեալ ծածկեսցէ ինչ՝ ի մեղաց, այլ ոչ զնըւազատմից է իմանալ զայն : Օ՛ի զոնա պարտ է ահա ցուցանել՝ ի խոստովանելն անզգայաբար զմեզս ծանուցնա որպէս Թեթև ինչ, ցուցանել նոցա զծանրութիւն մեղացն, և յորդորել զնոսա միանգամայն ամբողջ առնելոյ զխոստովանութիւնն առ՝ ի զերծանել յահապին մեղացն :

3. Ասկ յետ խոստովանութեան ամենեցուն իսկ մեղաւորաց պարտ է ցուցանել զվտանգն՝ յորում կան , և ազդել՝ ի նոսա ահ և սոսկումն՝ ծանուցանելով նոցա զծանրութիւն մեղացն . այլ յամենայնի կարեկցութեամբ և սիրով, որպէս զի զգայցէ ապաշխարողն՝ զի յօգուտ իւր խօսի խոստովանահայրն , և ոչ՝ ի ցասմանէ : Ա՛ման որոյ այսպիսի ինչ բանս ասասցէ քաղցրութեամբ . Ըրէեակ, նայէ ինչ վարդ անպուղեր ես ընկուանի հիմա, նայէ ինչ ոեղերու մէջ ընկեր ես . նէ որ Բրիստոս գոնէ ընդունիդ եղած ըլլար , ասկէց առելի երբեն դէմ չէիր կրնար

ընել. եւ ինչ բան ասա՞ ինչ ընելոյ համար էր հեանդը պատեր է։ Ով որ յանկարծ ասա ինչոյնա՝ ասա գիշեր ցերեկ ընդունելու ընդլայնէր, ո՞ր ընդլայնէր հիմայ. ալ չեպլէ համար յաւիտեան ճար չէր ընդլայնը։ Ո՞րեմն երբէ ասկէց ետքն ալ նոյն վարքն որ ունէնաս, նոյն վտանգին ինչը կըտնես պիտի։ Ո՞նչ վաստըկեցար ինչուան հիմայ ըրած ինդրերովդ. չէ՞ս պետնար որ անդին չեպլէ դիտիս պատրաստելէն՝ ի պար, հոս ալ չտա հեանդը չեպլէ դիտիդ պարչուցեր ես՝ խղճմտանքդ չեպլէ պտաճ պանձանդերովը։ Ո՞րեմն, չեպլ նայիմ, ինձ ասա հիմա, Ո՞պտաճդ պո՞ր ընչեպլ, հրցածիս չափ կօգնեմ չեպլէ, երբոր կուզես՝ եկուր խոստովանելու. ի՞նչ աղէկ բան է Ո՞պտաճդ ընորհէն ինձը ընկալնը, որպէս խաղաղութեան առնելը և այլն։ Ասոնցն Գիրքն չեսկտս Առեզայի, առ՝ի ձգել զմեզ առ Ո՞պտաճ, սակայն էր մանաւանդ ցուցանել նոցա զխաղաղութիւնն՝ զոր վայելեն արդարքն՝ի շնորհս Ո՞պտաճդ, և զաւագնապ սրտի՝ որով տանջին մեղաւորքն հեռւ՝ի շնորհացն Ո՞պտաճդ։

Այս ապա պարտ է խոստովանահօր օգնել ապաշխարողին՝ի ղջմտնի. և եթէ իցէ նա պատրաստ և ընդունակ արձակման, արձակել զնա՝ տալով նմա ղդեղս կարևորս, զորոց խօսեցայաք՝ի ստորև՝ի թիւ 5 և 6։ Իսկ եթէ չև ևս պատրաստ իցէ ընդունելոյ զարձակումն, սահմանեսցէ նմա ժամանակ դառնալոյ առ ինքն, և ասասցէ. Երբ աբեղէդ հրպտաես չեպլէ, եկուր նորէն, ասա պէն պէս խոստովանարանը հրգիտաս. ատոր ապտաճծինայ յանչնէ պչեպլ, ա՛ս ուրպէս հանգիստ բառնէ։ Ո՞յսու սիրով և քաղցրութեամբ պարտ է գնալ ընդ ապաշխարողս, և այսու օրինակաւ է փրկել զնոսա. խոստութիւն տալուցանէ գնոսա, առեալն առնէ նոցա զխոստովանութիւն, և անպէղջ կոմնչին։

4. Իսկ պաշտօն թժշկի պահանջէ զխոհեմութիւն. և առ՝ի բարւոջ դարմանել զապաշխարողն՝ պարտ է խոստովանահօր հետազօտել զսկիզբն և զպատճառս ախտից նորա հոգեկանաց, թէ ունակացեալ՝ի մեզս իցէ, կամ՝ի մերձաւոր վտանգս մեղաց կայցէ, ուր և իցէ և ընդ ո՛յս իցէ մեղուցեալ։ Այս ըստ այսոցիկ պարտ է նմա պատրաստել զդեղս, առաջնոց ակն ածելոյ յոյսից, թէպէտ և իշխան իցէ, թէպէտ եկեղեցական, և թէ աւազ արժանապատիւ. զի թէպէտ և քաղցրագոյն

և զգուշացոյն առ այսպիսիս պարտ է առնել զխրատ, այլ առաւելագոյն արիութեան և աղդուութեան պէտք են. զի այնպիսեաց մեղք վնասակարագոյնք են չար օրինականաւն, և արգասիքն նոցին չարաչար:

Ոըք միանգամ յանմեղադրելի տգիտութեան կայցեն, ուրպէս ընդ նոսա պարտ իցէ վարել՝ի խրատեըն՝ ասացեալ՝ի գլ. ԺԲ. 108: Եւ թէ ուրպէս յետ խոստովանութեան պարտ իցէ պատրաստել զապաշխարողն՝ի զեղջ և յառաջադրութիւն, զայն և աստացաք անդ՝ի թիւ 105. զի եթէ չիցէ նա պատրաստ՝ պարտ է խոստովանահօր պատրաստել զնա, որպէս ուսուցանեն Աուարէզ, Լայման և այլք, և մի ինչ հոգալ թէ այլք սպասիցեն կամ գնայցեն իսկ՝ի բաց: Աւգացաք անդ՝ի թիւ 51 և վասն ապաշխարանաց՝ եթէ ուրպէս պարտ իցէ խոստովանահօր ըստ կարի ապաշխարողին պատշաճել զայն, առանց ծանրաբեռնելոյ զնա առաւել քան զկար: Այլ՝ի վեր քան զամենայն պարտ է խոստովանահօր մատուցանել ապաշխարողին զզեղս կարևորս առ՝ի հաստատուն պահել զնա՝ի շնորհս Աստուծոյ:

5. Ի զեղոց աստի կէսք հասարակաց են, այլք իւրաքանչիւրոց պատշաճ՝ առ՝ի բժշկել զախտ ինչ ումեք սեփական: Հասարակաց զեղք են նախ՝ սէրն Աստուծոյ, որ յայս իսկ ստեղծ զմեզ, և այսուհետև եթէ վայելէ՝ի խաղաղութեան որ կեայ՝ի շնորհս նորա, և կանխել զդժոխս իւր որ՝ի բաց կայ՝ի նմանէ: Արկրորդ՝ դիմել ստէպ աղօթիւք առ Աստուած, և առ սուրբ աստուածածինն՝ զվարդարան նորա օրըստօրէ կատարելով, և առ սուրբ հրեշտակն պահապան, և առ պաշտպան սուրբս: Երրորդ՝ ընդունել յաձախ զսուրբ խորհուրդս, և յանկանելն՝ի մեղս ինչ՝ փութալ՝ի խոստովանութիւն: Չորրորդ՝ խորհել՝ի աչխարհասիրութիւնս յաւիտենականս, և մանաւանդ՝ի մահ. և ծնողաց զօրհանապազ ընթերցանել ընտանեօքն հանդերձ հոգևոր ինչ, կամ դէթ կատարել ընդ նոսա զսուրբ վարդարանն: Հինգերորդ ընծեռիկայութիւն Աստուծոյ ունել՝ի մտի՝ի ժամ փորձութեան, և ասել՝ Տէսանէ զիս Աստուած: Վեցերորդ քննել ընդ երեկս զվնասդ մտաց հանդերձ զղջմամբ և առաջադրութեամբ: Աօթներորդ՝ մտանել աչխարհականաց յերջայրութիւն ուրեք, և եկեղեցականաց առ-

նել հանապազօր մտածական աղօթս՝ առանց որոյ զբաժուարաւ ոք լեր կարիցէ գոլ ճշմարիտ եկեղեցական, և զպոհութիւն զկնի պատարագի բարւոք կատարել, և յառաջ և յետոյ ընթեռնուլ զկրս ինչ հոգևօրս։

6. Իսկ իւրաքանչիւրոյ ըստ այլ և այլ ախտից մատուցանելի է զդեղս. որպէս ատեցողի՝ աղօթս ինչ վանատելոյ իւրոյ առնել հանապազօր, և՝ ի յիշել զԹշնամանս ինչ ընկալեալս յոմանէ՝ զմտաւ ածել զաստուածընդդէմ Թշնամանս իւր։ Նկուելոյ՝ ի մեղս պղծութեան՝ փախչել յանգործութենէ, ի չար ընկերութենէ և ի վատնպաց բղջախոհութեան. և ունակացելոյ՝ ի նոյն մեղս՝ ոչ միայն ի մերձաւոր վտանգաց խորշել, այլ և ի հեռաւորաց՝ որ ինչ տկարութեան նորա մերձաւորք իցեն։ Պարտ է նմա օրըստօրէ՝ ի պատիւ անապատ սրբութեան տիրամօրն ասել յառաւօտու և յերեկոյի զողջոյնն հրեշտակային, և նորոգել զառաջադրութիւն իւր առաջի պատկերի նորա, խնդրելով՝ ի նմանէ զյարատևութիւն. և միանգամայն յաձախել՝ ի սուրբ խորհուրդս։ Ունակացելոյ՝ ի հայհոյութիւն՝ կնքել լեզուաւ խաչ՝ ի գետնի, և ՝այր մեր և Ողջոյն ասել հանապազօր՝ ի պատիւ սրբոց՝ զորս անարգիցէ հայհոյանօք, և ընդ առաւօտս նորոգել զառաջադրութիւն համբերելոյ՝ ի ցասնուլն՝ ասելով երիցս. Տէր ինէ, տէրմայր, համբերութիւն։ Օ՜ի այսպէս ոչ միայն զօրասցի՝ ի համբերել, այլ և սովորեսցի կրկնել զնոյն՝ ի ցասման։ Այլ և սա հանդոյն սոցին զեղս խոստովանահայրն ըստ խոհեմութեան իւրոյ պատշաճեսցէ հանգամանաց ապաշխատողին։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

ԹԷ ՈՐՊԷՍ ՊԱՐՏ ԻՑԷ ՎԱՐԵԼ ԽՈՍՏՈՎԱՆԱՀՕՐ ԸՆԴ ԱԶԳՍ ԱԶԳԱՍ ԱՊԱՇԽԱՐՈՂԱՑ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

1–7. Վասն որ՝ ի մերձաւոր վտանգս մեղաց կան։

1. Ցժուարտագոյն մասն պաշտաման խոստովանահօր է առաջնորդել այնոցիկ՝ որք՝ ի մերձաւոր վտանգս մեղաց կայցեն, կամ ունակացեալ՝ ի մեղս, և կամ դարձագարձիւ՝ ի նոյն մեղս անկանիցին։ Ի յաջորդ յօդուածս առաջի կայ մեզ ասել զունակացելոց և զդարձագարձիւ անկելոց. առասցուք աստ զոլոց՝ ի մերձաւոր վտանգս մեղաց դեգերին։ Որ՝ ի մերձաւոր վտանգ մեղաց կամակար ոք արկանէ զանձն, բազում այն է՝ զի՝ ի մեղս անդ կործան անկանի. եթէ՝ ի վտանգէ աստի զգուշանայիւն մարդիկ, դուն ուրեք պատահէր նոցա անկանել՝ ի մեղս։ Զանց այսորիկ ցժուարաւ յաջողէ զիւրն օրսալ զնոսա. վտանգ, մանաւանդ զգայական մեղաց, է սովորական վարմ նորին՝ յոր ըմբռնէ զնոսա, այնպէս ախտիւս այսուիկ կուրացուցեալ զմիտս նոցա՝ զի գրեթէ անտեսաբար անկանին՝ ի հաղես նորա։

Վտանգ մեղաց զանազանին նախ՝ ի կամաւոր և՝ ի հարկաւոր. կամաւոր է այն, յորմէ զիւրաւ մարթ է ուրեք խոյս տալ, իսկ հարկաւոր՝ յորմէ առանց ծանր վնասու և գայթակղութեան չէ մարթ խուսափել։ Զանազանի երկրորդ՝ ի մերձաւոր և՝ ի հեռաւոր. հեռաւոր է՝ որ առնային ուրեք գտանի, և որով ոք զուն ուրեք անկանի՝ ի մեղս. իսկ մերձաւոր ըստ էնչեան այն է՝ որով մարդիկ յաձախ անկանին՝ ի մեղս, և առընչաբար է այն՝ որ թէպէտ և վասն այլոց չլինի մերձաւոր, ոչ ըստ ինքեան հրապուրելով զմարդիկ՝ ի մեղս, սակայն մերձաւոր է վասն այնոցիկ՝ որք կամ սակս անկեալ եղեն՝ ի նոյն, և կամ զփորձ առեալ տկարութեան իւրեանց՝ գիտիցեն զի վը-

տանդ է անտի ինքեանց անկանելոյ : Ամենք յաստուածաճառանից մերձաւոր վտանգ համարին զայն , յորում մարդիկ գրեթէ միշտ կամ սովորաբար անկանին . այլ հանրապոյն և ողջամտապոյն կարծիք համարին զայն , յորում յաձախ ոք անկեալ իցէ : Ականջն ըստ ասացեալսն ի վեր այսր զառընչական վտանգէ , որպէս երբեմն վտանգ՝ որ վասն այլոց մերձաւորն է՝ երկիւղածի ումեք և զգուշաւորի պատահէ գոլ հեռաւոր , այսպէս և վտանգք ինչ՝ ըստ ինքեան հեռաւորք՝ կարեն գոլ ումեք մերձաւոր վասն բազում անգամ՝ ի նոյնս անկանելոյ , և վասն ակարանալոյ բնութեան իւրոյ ըստ յօժարութեանն յախտս լինչ՝ որպէս պատահէ սովորաբար ի զգայականս . վասն որոյ պարտ է նմա փախչել ոչ միայն ի մերձաւոր վտանգաց նոցին , այլ և ի հեռաւորաց անտի՝ որ վասն նորա մերձաւորք այնուհետեւ եղանին :

2 . Ի՞րդ ի մերձաւոր վտանգի կայ նախ՝ որ ունի ի տան կին մարդ , ընդ որում սովորաբար անկեալ իցէ : Երկրորդ՝ որ յաձախ ի խաղս նետից կամ հայհոյից : Երրորդ՝ որ ի գինետան ուրեք սահիլ արբենայ , կամ կազդ , կամ ի խորհուրդս ի բանս և ի գործս աղտեղիս զառաձանի : Ո՞ այսոսիկ առ հասարակ չէ օրէն արձակել՝ առանց բառնալոց նոցա զվտանգն ի բաց , կամ գէթ խոստանալոց բառնալ ըստ հանգամանաց՝ զորոց ի յաջորդ Թուխտ ասելոց եմք : Չէ օրէն արձակել և զայն՝ որ Թէպէտ միանգամ ի տարւոջ գնայ ի տուն ուրեք , այլ միշտ ի գնալն անդր մեզանչէ . զի վասն նորա մերձաւոր վտանգ է այն : Եւ ոչ զայնոսիկ օրէն է արձակել , որք Թէպէտ ի վտանգի անդ ոչ մեզիցեն՝ սակայն ի ծանր գայթակղութիւն այլոց դնեն զանձինս ի նոյն : Յաւելուն ոմանք յաստուածաբանից , և ոչ յանխրատ , անընդունակս արձակմանն համարել և զայնոսիկ՝ որ ոչ ի բաց հեռանան ի վտանգաց , յորս Թէպէտ և չկեղծեն անկեալ , այլ այնպիսի սաստիկ փորձութիւն կրեն՝ զի դիւրաւ լիցի անկանել նոցա . որպէս աղախին փորձեալ ի տեառնէ իւրմէ՝ զդիւրագայթ տկարութիւն իւր գիտելով , պարտի ելանել ի բաց եթէ կեղծ ազատ :

3 . Ո գուշացուացեն խոստովանահարք զիւեսայացուս՝ մի յաձախել առ խօսեցեալն իւրեանց , և մի ծնողաց տալ ընդունել զնոսա ի տուն . զի դուն ուրեք յաջողէ

չմերձանչել նոցա, դէթ բանիւ կամ խորհրդով, ուր ա-
մենայն հայեցուածք և խօսակցութիւնք հրապուրիչք
են նոցա, և ե բարոյապէս անհնարին կենակցել նոցա
առանց գրգռելոյ ի գործս՝ որ ի ժամանակի ամենա-
թեան ե օրէն։ Այլ հասարակաբար ընտանութենէ
պատանեաց ընդ օրիորդս վանն Յարմնախօսութեան
գիտելի ե, զի թէպէտ և չիցե օրէն դատապարտել զնո-
սա անխտիր ի մեղս ծանուննս, այլ գժուարաւ ազատ են
ի մերձաւոր վտանգէ մահուչափ մեղաց՝ ի փորձոյ վը-
կայեալ. զի ի Յարիւրոց Հազիւ երկու կամ երեք զերծ
գտանին ի ծանուննց մեղաց. և եթէ ոչ ի սկզբան անդ,
սակայն ոչ յամէ նոցա անկումն։ Օ՜ի տակաւ ի խո-
սակցութենէ ի սէր, ի սիրոյ ի տուիանս զառաճանչին,
և ի բորբոքել բոցոյն ի սիրտս նոցա՝ կուրացեալք ի
բիւր մեղս գահավիժին. մանաւանդ որք ի դիշերային
այցելութիւնս ընդերկարեն զանխուլ ի ծնողաց, վտան-
գաւ համբուրից և գրկախառնութեանց և անհամեստ
խօսից։ Որչափ խստիւ զգուշութիւն ի մասինս յայտ-
միկ պատուիրեաց խոստովանահայրն, այնչափ և առա-
ւել օգնէ ապաշխարողաց ի փրկութիւն. և ընդ հա-
կառակն՝ որչափ ներողաբոյն դնայ ընդ նոսա, այնչափ
անգթանայ ի նոսին. սուրբն Յովհաննա Վ իլլանուէեան
անգոսե գնուելին կոչէ զայն։ Յայսպիսի դէպս ապաշ-
խարողք պատճառեն զդայթակղութիւն ի բառնալ ըզ-
վտանգն զայն մեղաց, այլ ոչ ե պարտ լսել նոցա. զի
մեծագոյն դայթակղութիւն ե ի յարատևելոյ նոցա ի
վտանգի անդ յետ խոստովանելոյ իսկ։ Օ՜ի որք անդի-
տանանն զյաճախել նոցա անդր, և ոչ ի գադարել նո-
ցա գաթ ակղեսցին. իսկ որք գիտենն, շինեսցին մնա-
լանդ ի տեսանելն զհրաժեշտ նոցա ի վտանգէն։

4. Ասացուք ի բարոյականաց օրէն համարին արձա-
կել միանգամ և երկիցս, որ ի մերձաւոր վտանգի մե-
ղաց՝ խոստանայցէ և եթէ հաստատուն առաջադրու-
թեամբ բառնալ զայն ի բաց։ Այլ պարտ ե զանազա-
նել ըստ վարդապետութեան սրբոյն Կարոլոսի Պորո-
մեան զվտանգ ի վտանգէ։ Որինակ լիցի՝ եթէ օր ի
խաղալն անկանի ի մեղս հայհոյութեան, կամ ի զի-
նետունս արբենոյ, և կապի և յաղտեղի խորհուրդս և
ի բանս բերի, մարթ ե արձակել զնա երկիցս և երիցս

խակ՝ ի խոստալ նորա Աչմարիտ առաջադրութեամբ ոչ
և խաղալ կամ գնալ ի գինետուն : Այլ եթէ ուրուք
իցէ հարձ ի տան , կամ աղախին ընդ տեառն իւրում
անկանիցի , և յայլ այսպիսի մերձաւոր վտանգս , չէ օրէն
և ոչ միանգամ արձակել զապաշխարողն՝ չև բարձեալ
նորա զվտանգ մեղացն , և չէ բաւական խոստումն :
Ո՞ւ արձակել զայնպիսին է գնել զնա ի վտանգ չկա-
տարելոյ զխոստումն իւր . վասն զի կարի դժուարին է
բառնալ ի բաց զայսպիսի վտանգս , և չէ հնար յաջողել
յայն առանց բուռն սաստիկ առնելոյ անձին , զոր դը-
ժուարաւ առնէ ապաշխարողն յետ արձակման՝ անոտի
յուսով յաղթելոյ փորձութեան առանց փախչելոյ ի վը-
տանգէն : Այլ այսպէս դարձեալ անկանի ի նոյն մեղս ,
որպէս զփորձ առին տեսանելեմք սակս ի բազում . և
վասն այսր վտանգի , յոր արկանէ զանձն իւր ապաշխա-
րողն , ծանր մեղանչէ ի խնդրելն զարձակումն՝ չև բար-
ձեալ ի բաց զվտանգն . և ծանրագոյն և աս մեղանչէ խոս-
տովանահայր ի տալ նմա զարձակումն վասն նոյն նորին
վտանգի :

5 . Ի սովորական կանոնէ աստի ի բաց առնուլ պարտ
է զապաշխարողս , որք այնպիսի զիղջ անսովոր բերեն
յանձինս՝ յորմէ խոհական դատմամբ ի միտ առնուլ է
կարել նոցա ընդհօքն Աստուծոյ յաղթել ամենայն դը-
ժուարութեանց , և բառնալ զամենայն վտանգ : Պարտ
է դարձեալ ի բաց առնուլ զայնոսիկ , որ չկարիցեն դարձ
առնել փութով , և իցէ նոցա Աչմարիտ առաջադրու-
թիւն կատարելոյ զխոստումն իւրեանց , զի համարի նո-
ցա յայնժամ որպէս հարկաւոր վտանգն այն , և վասն
չկալոյ ընդերկար առանց ընդհօքն խորհրդոյն՝ իրաւունք
են նոցա պահանջելոյ զարձակումն : Այս առաւել որք
չկարիցեն դառնալ միւսանգամ , և հարկ իցէ նոցա
կրկնել այլեւս զխոստովանութիւնն : Սակայն և այս
չմարթէ , եթէ ապաշխարողն խրատեալ յայլմէ խոս-
տովանահօրէ և չկոչէ բարձեալ զվտանգն ի բաց . զի
համարի յայնժամ որպէս զդարձադարձիւ անկեալ՝ զորս
չէ օրէն արձակել առանց անսովոր նշանաց զղջման , որ-
պէս ի յաջորդ յօդուածիս առաջի կայ մեզ ասել :

6 . Յայսմանէ զկամաւոր վտանգէ . այլ եթէ հար-
կաւոր իցէ վտանգն բնականապէս , որպէս եթէ որ ի

բանտի ընդ մեղսակցին գտանիցի, կամ՝ ի հոգեվարս՝ յորժամ չիցէ ժամանակ և հնար արձակելոյ՝ ի բաց զմեղսակիցն. և կամ եթէ հարկաւոր իցէ վտանգն բացայայտել, որպէս եթէ չկարիցէ ոք բառնալ՝ ի բաց զվտանգն առանց գայթակղութեան կամ ծանր վնասու կենաց կամ համբաւոյ և կամ ընչից, օրէն է յայնժամ արձակել զապաշխարողն՝ մինչ չև բարձեալ նորա զվտանգն՝ ի բաց, զի չկարէ իսկ։ Այլ միայն պարտ է նմա յանձն առնուլ զամենայն հնարս զմերձաւորն հեռաւոր առնելոյ. որպէս՝ ի զգայական մեղս՝ խորշել յընտանութենէ մեղսակցին և՝ ի հայհոյել իսկ՝ ի նա, յաձախել՝ ի սուրբ խորհուրդս, դիմել ստէպ առ Աստուած, նոթոգել զառաջադրութիւն մանաւանդ առաւօտուց առաջի սրբոյ խաչին՝ խորշելոց ըստ կարի՝ ի վտանգէ։ Օ՛ի վտանգ մեղաց ոչ է յինքեան, և ոչ հարկ ումեք առնել մեղանչելոյ. վասն որոյ կարէ կալ ընդ այնմ՝ ի միասին ձկմարիտ զղջմամբ և առաջադրութիւն։ Այլ թէպէտ պարտ է ամենայն ումեք փախչել՝ ի մերձաւոր վտանգէ մեղաց, այլ յորժամ կամակար կայցէ՝ ի վտանգին. իսկ եթէ վտանգն իցէ բարոյապէս հարկաւոր, յայնժամ հակառակ հնարիւք լինի հեռաւոր, և շնորհք Աստուծոյ օգնեն որոց զայնպիսի հնարս՝ ի կիր արկանիցեն առ՝ ի չմեղանչելոյ։ Ոմանք որոց սուրբ գիրք չասեն կորնչել այնոցիկ՝ որք՝ ի վտանգի կան, այլ այնոցիկ՝ որք սիրեն զվտանգ. և ոչ է մարթ ասել եթէ սիրիցէ զվտանգ, որ ակամայ՝ ի նմին կայցէ։

7. Աստ այսմ օրէն համարին բարոյականք արձակել և զայնոսիկ, որ ոչն կամիցին Թողուլ՝ ի բաց զպաշտօն կամ զտուրևառ կամ զտուն՝ յորս յաձախ լեալ իցէ նոցա մեղանչել, վասն չկարելոյ նոցա Թողուլ զայնս առանց ծանր տուժից, եթէ միայն իսկապէս զղջացեալ իցեն և՝ ի մտի եդեալ զամենայն հնարս ուղղութեան։ Որպէս եթէ վիրաբոյժք՝ ի դարմանել զկանայս, և ժողովրդապետք՝ ի լսել զխոստովանութիւնս անկեալ իցեն՝ ի մեղս, և՝ ի հրաժարել՝ ի պաշտամանէն՝ չկարիցեն կեալ ըստ պատշաճի իւրեանց։ Այլ պարտ է խոստովանահօր յայսպիսի դէպս յապաղել ըստ կարի զարձակումն, զի չիք աղդողագոյն դեղ քան զայս որոց՝ ի մերձաւոր վտանգի մեղաց կայցեն. զի որպէս քաջայայտ է՝ ի

փորձոյ, բազումք յետ միանգամ ընդունելոյ զարձակումն՝ անփոյթ առնեն զինարս զգուշութեան, և անդրէն՝ ի նոյն մեղս անկանին։ Քանի՛ նուազ լինէին մեղք, և քանի՛ առաւելագոյնք փրկութեան հասանէին, եթէ խոստովանահարքն առ հասարակ զայս զգուշութիւն՝ ի կիր արկանէին։ Լաւ է և օգտակար ներողագոյն կարծեօք վարել, քան ներելոյ քրիստոնէական խոհեմութեան, ուր առաջի կայցէ զերծուցանել զապաշխարողս՝ ի մեղաց. այլ ուրանօր ներողագոյն կարծիք յաձախեն զվտանգ մեղաց, որպէս՝ ի մանկունս յայսմիկ մերձաւոր վտանգաց, պարտ է խոստովանահօր խստագոյն կարծեօք վարել. զի առաւել օգնեն այսոքիկ՝ ի փրկութիւն հոգւոց։ Իսկ եթէ ոք՝ ի հարկաւոր իսկ վտանգի կալոյ հանդերձ ամենայն դեղովք և հնարիւք չկարիցէ յետս կալ՝ ի մեղաց, պարտ է նմա զամենայն տոյժ և զինաս յանձն առնուլ առ՝ ի զերծանել՝ ի վտանգէ անտի. և չէ օրէն արձակել զնա, մինչ չև բարձեալ նորա զվտանգն՝ ի քաց. զի այս իսկ է տէրունականն հրաման խլելոյ զակն և հատանելոյ զձեռն և զոտն։

ՅՕԴՈՒԱԾ Բ

Վասն ունակացելոց, և դարձադարձիւ անկելոց՝ ի մեղս։

8. Պարտ է զանազանել զունակացեալս՝ ի դարձադարձիւ անկելոց՝ ի մեղս։ Ունակացեալք են սովորեալքն՝ ի մեղս լինել, զոր չև ևս խոստովանեալ է նոցա. և օրէն է արձակել զոսա, եթէ ձշմարիտ զղջմամբ և հաստատուն առաջադրութեամբ պատրաստք իցեն զամենայն հնարս ուղղութեան՝ ի վար արկանել։ Յորս միանգամ կարի տարբացեալ իցէ ունակութիւն մեղաց, օրէն է յապաղել զարձակումն նոցա առ՝ ի փորձ հաստատութեան կամաց նոցա, և վասն աղդելոյ՝ ի նոսա սոսկումն՝ ի մեղաց։ Ընդհանս յամենեան անկումն՝ ի մեղս լինել արտաքինս՝ բաւական է՝ ի կացուցանել զունակութիւն. և ի՝ ոմն պատճառ իսկ յամենեան բաւական է անկումն՝ ի պոռնկութիւն, յարուսապիտութիւն և յանառնապիտութիւն, յարատեւեալ ընդ ամ մի։

9. Իսկ դարձադարձիւ անկեալք այնոքիկ են, որք յետ

խոստովանելոյ զմեզս իւրեանց՝ առանց ուղղութեան անկանելոյն անդրէն՝ ի նոյն։ Ո՞րպես չէ օրէնն արձակել ըստ սովորական զղջման և առաջադրութեան. զի անուղղայ անկումն նոցա անդրէն՝ ի նոյն՝ կասկածելի առնէ զղջումն նոցա և զառաջադրութիւն. վասն որոյ պարտ է յապաղել զարձակումն նոցա, մինչև տացեն ցոյց ինչ ուղղութեան։ Իսկ ի բարոյականաց օրէնն համարին մինչև երիցս և չորիցս արձակել զայնպիսիս ըստ սովորական զղջման և առաջադրութեան, այլ չէ այս ընդունելի. զի ունակացեալն՝ ի մեղս՝ որ յետ խոստովանելոյ անկանի անուղղայ՝ ի նոյն մեղս, յայտ առնէ զի չէ ստուգիւ զղջացեալ։ Ո՞նոյն խմա և զներելի մեղացդ. զի Թէպէտ սովորաբար օրէն է արձակել զանկեալս դարձադարձիւ՝ ի նոյն ներելի մեղս, այլ զի հանդիսական կարծիք՝ ի ծանր մեղս և՝ ի սեղանակատուածիւն համարին և ընդունելի մեղս առանց ճշմարիտ զղջման և առաջադրութեան խոստովանել, որպէս ասացաք՝ ի գլ. ԺԲ. 23, զհետ գայ զի այնպիսի խոստովանութիւնք եթէ չիցեն իսկ սեղանակատուածիւն՝ սակայն անվաւերք են։ Այսուհետև որոյ չէ պարտ խոստովանութիւն արձակել անխտիր զայնպիսի ապաշխարողս. զի Թէպէտ և նոքա յանգիտս իցեն անպատրաստք, այլ ինքն չէ ազատ՝ ի սրբապղծութենէ յարձակելն զանպատրաստս։ Եթէ չկամի զրկել զայնպիսին յարձակմանէ, պարտի պատրաստել զնա՝ յորդորելով՝ ի զղջումն գէթ ընդ մի՝ ի մեզաց անտի ներելեաց, և կամ ընդ մի ինչ՝ ի մեզաց յանցեալ կեանս իւր գործեցելոց. և շատ իսկ է ապաշխարողին հանրաբար ինչ ասել ընդդէմ իրիք յառաքինութեանց գործեալ, և նորոգել զվիշտ իւր ընդ այն։ Ասպա Թէ ոչ, պարտ է յապաղել առ ժամանակ ինչ զարձակումն։

10. Ա՛ռ ժամանակ ինչ ասեմ. զի չէ հարկ ընդ ամի կամ ընդ ամիսս յապաղել զարձակումն դարձադարձիւ անկելոյ, Թէ՛ ի ներելի և Թէ՛ ի մահու չափ մեղս, որպէս կարի ինն խստիւ համարի Յուվենին. այլ եթէ՝ ի բնական տկարութենէ յառաջ գայցէ անկումն, շատ իսկ է յամել ուշ կամ տասն աւուրս, որպէս Հաբերտ և այլք ուսուցանեն, վտանգաւոր համարելով զառաւելն՝ Թէ գուցէ ոչ ևս դարձցի ապաշխարողն։ Այլ՝ ի

պատկական խոստովանութեան չքաւեն աւուրք տասն առ՝ ի փորձ. զի յայնժամ ապաշխարողք մարդկային ակնածութեամբ քան Աստուածութեամբ հրաժարեն առ ժամանակ մի՝ ի մեղաց։ Ողբասեն և վասն այնոցիկ՝ որք՝ ի սահմանեալ ինչ վտանգի անկանին միշտ՝ ի նոյն մեղս, որպէս՝ ի վեր այսր՝ ի նախորդ Թուխ ասացաք. բայց ոչ է պարտ ասել այսպիսեացդ զի յետ առ օրհնեալ աւուրց դառնայցեն, այլ հրաւիրել դառնալոյ՝ ի միս եօթնեկի կամ յետ հնգետասան աւուրց, և յորդորել զնոսա քաղցրութեամբ միւսանգամ դառնալոյ ընդունել զարձակումն։

11. Այսոքիկ ըստ սովորական նշանաց ղջմանն և առաջադրութեան. այլ նշանք անսովորք բառնան՝ ի բաց զամենայն կասկածանս անպատրաստութեան ապաշխարողին։ Ոչ՝ ի փոփոխութեան կամաց ոչ ժամանակին միայն է նշանակ, այլ կարի իսկ քաջ մարթ է ճանաչել զայն և յայլոց նշանաց՝ առանց կարօտութեան ժամանակի առ՝ ի փորձ։ Այնուամենայնիւ զի այլ նշանք պատրաստութեան ապաշխարողին՝ է ուրեք զի յայտնագոյն ցուցանեն զփոփոխութիւն կամաց նորա, քան զփորձ ժամանակի՝ որում մարթ իսկ է սխալել։

12. Նշանքս այսոքիկ անսովորք, են նախ՝ ղջմութիւն հանդերձ արտասուօք, և բանիք ղջմականք բղխեալք՝ ի սրտէ՝ որք առաւել քան զարտասուս յայտ առնեն երբեմն զփոփոխութիւն կամաց։ Երկրորդ՝ նուաղել թըշուոյ մեղաց՝ ի նոյն վտանգս և՝ ի փորձութիւնս, կամ յարատեւել ապաշխարողին իբր ամսօրեայ ժամանակ առանց մեղաց՝ որ մեղանչէրն յառաջագոյն այլևայլ անգամ եօթնեկի, կամ հրաժարել նորա ընդերկար՝ ի մեղաց յառաջ քան զխոստովանեալն, և կամ յետ զդեմ ունելոյ փորձութեանցն պատերազմաւ մեծաւ՝ անկանել։ Երրորդ՝ ձիգն ուղղութեան, որպէս փախչել՝ ի վտանգաց, ՝ի կիր արկանել զինարս պատուիրեալս՝ ի խոստովանահօրէն, ծոմապահութիւն կամաւոր, ողորմութիւն, աղօթք, և պատարագիք վասն բարւոք զխոստովանութիւնն առնելոյ։ Չորրորդ՝ խնդրել նորա զեղս և հնարս ուղղութեան, և յօժարութիւն կատարելոյ ըստ պատուէրս խոստովանահօրն, մանաւանդ եթէ չիցէ տակաւին խրատեալ յայլոց. զի խոստմունք եւեթ դուն

ուրեք զօրեն, զի դիւրաւ ապաշխարողք խոստանան
ւան ընդունելոյ զարձակումն, և դժուարաւ զխոստ-
մունն կատարեն։ 2 Ինդերորդ՝ ինքնայօժար խոստովա-
նութիւն. այսինքն եթէ ապաշխարողն ոչ ւան զատ-
կական պարտուցն գայ ի խոստովանել, և ոչ առ սով-
րութեան ինչ ի տօնս տէրունականս, ոչ ի ծնողաց կամ
ի տեառնէն ստիպեալ, այլ կամակար ի խղճէ շար-
ժեալ դառնայ ի ընծրկս Աստուծոյ. և մանաւանդ եթէ
ի հեռուստ եւիեալ նկէ ի խոստովանութիւն, կամ տու-
ժիւք շահից, կամ նեղութեամբ մեծաւ, և կամ յաղ-
թելով նեղքին կամ արտաքին ինչ ընդդիմութեան։
3 Երրորդ՝ եթէ յանկարծուստ ի մահուանէ ուրուք
ի՝ մեղաւորաց կամ յաստուածասաստ պատուհասից
սասանութեան, սրածութեան և այլն, և կամ ի լսելոյ
զբանն Աստուծոյ շարժեալ գայ ի խոստովանութիւն։
4 Չորրերորդ՝ եթէ խոստովանի զմեղս լռեալս առ ամե-
նայ քոյ յայլ խոստովանութիւնս իւր։ 5 Հինգերորդ՝ եթէ
յառաջ քան զխոստովանութիւն հատուցեալ նկէ զպո-
ղոնս կամ զհամբաւ այլոց։ Յաւելուն այլք և այլ նշանս
ինչ, որպէս ընդունել ի բանից խոստովանահօրն ահ
և սոսկումն ընդ մեղս և ընդ դատաստանութիւն, ըն-
դունել յօժարութեամբ զապաշխարանս ծանուննա, կա-
մել յանձն առնուլ զմահ քան զմեղս և այլն. այլ այ-
սոքիկ օգնեն եւեթ այլոց նշանաց ի հաւաստիս, և ոչ
թէ ինքնին իցեն բաւական։

13. Ապա ուրեմն ի տալ ապաշխարողին նշան ինչ
յորմէ մարթ իցէ խոհեմաբար դատել զփոխոխութիւն
կամաց նորա, օրէն է արձակել զնա. զի թէպէտ և
պարտ է խոստովանահօր ունել ստուգութիւն զպատ-
րաստութենէ ապաշխարողին առ ի կարօղ լինելոյ ար-
ձակել զնա, այլ ոչ խնդրի աստ այնպիսի ստուգութիւն
որ ինչ յայլս ի խորհրդոյ. զի անդ որպէս բնական է
նիւթն, այնպէս բնական խնդրի և ստուգութիւն. այլ
աստ զի բարոյական է նիւթն, այսինքն ներգործու-
թիւնք ապաշխարողին, վասն այնորիկ բաւական է և
ստուգութիւն բարոյական։ Արդ զի մարթ իցէ խոս-
տովանահօր խոհական դատմամբ հաւանական համա-
րել զպատրաստութիւն ապաշխարողին, առանց խոհա-
կան կասկածանաց ի հակառակէն. ապա թէ ոչ, չէր

մարթ և ոչ զոք ՚ի մեղաւորաց արձակել. զի ամենայն իսկ նշանք զղջման ոչ ինչ սակս քան զՀաւանական հաւատոյ ընծայեն զպատրաստութենէ նորա: Տես զայսմանէ ՚ի գլ. ժԶ. 117: Գիտելի է ասա զի գիւրագոյն գան յուղղութիւն ունակացեալք ՚ի հայհոյանս, քան ՚ի զգայական մեղս և ՚ի գողութիւն և յատելութիւն. վասն որոյ և զգուշագոյն յայտնի պարտ է գոլ խոստովանահօր ՚ի տալ արձակուածն, զի զգայասէրք, գողք և սատեօղք առաւելապէս յարնչին ցանկութեամբ ՚ի մեղս իւրեանց:

14. Այլ Թէպէտ և օրէն իցէ խոստովանահօր արձակել զունակացեալս և զդարձադարձիւ անկեալս ՚ի տալ նոցա անսովոր նշանս փոփոխութեան կամացն, սակայն և ոչ պարտական է արձակելոյ՝ եթէ այլազգ օգտակարագոյն համարիցի: Օ՞ի Թէպէտ և իրաւունք են ապաշխարողն արձակելոյ ՚ի մեղաց իւրոց՝ զորս խոստովանի, այլ ոչ և պահանջելոյ զայն նոյնհետայն. զի և խոստովանահօրն օրպէս բժշկի իրաւունք են, և երբեմն պարտք իսկ, յապաղելոյ զարձակուածն՝ ՚ի դատել զայն այնպէս կարևոր ՚ի փրկութիւն ապաշխարողին: Այլ և ոչ օգտակար է միշտ այս յապաղուածն, մանաւանդ զժկամակութեամբ ապաշխարողին կամ վտանգաւոր անուանարկութեան նորա: Իսկ եթէ չիցէ վտանգ համբաւոյ նորա, և յօժար իսկ իցէ ինքն ՚ի համբերել յապաղելոյ արձակմանն, սակայն և այնպէս չէ պարտ ՚ի կանոն հաստատուն ունել զյապաղուածն, այլ ըստ պիտոյից հանգամանաց ապաշխարողին վարել՝ յաւուրս ապաւինեալ, որ պատրաստ է ՚ի լուսաւորել զմիտս խոստովանահարց: Սակայն եթէ ՚ի ներքին տկարութենէ իցէ անկուածն ապաշխարողին, որպէս ՚ի կիրս բարկութեան և գինւոլութեան և յամեցմանն ՚ի խորհուրդս աղտեղիս, ոչ յօգուտ համարին աստուածաբանք յապաղել զարձակուածն՝ եթէ պատրաստ իցէ ապաշխարողն. զի հնարհք խորհրդոյն առաւել օգնեն նման քան զյապաղումն արձակմանն:

15. Այժմ իսկ ՚ի ներքին փափաքեմք. զի այլազգ պարտ է վարել ընդ անկեալս զարձադարձիւ յարտաքին պատճառաց, Թէպէտ և ՚ի հարկաւորաց: Օ՞ի պատճառքս այսոքիկ աստիճագոյնս յոյժ յուզեն զկիրս, և տեսիլ ա-

չաց կարի առաւել շարժէ զզգայարանս և զրգռէ զսիրտ ՚ի մեղս, քան նեղքին ունակութիւն։ Վասն որոյ պարտ է ապաշխարողին բռնադատ առնել անձին՝ ոչ միայն զդէմ ունելոյ փորձութեան, այլ և ՚ի բաց կալոյ յերեսաց սիրելոյն՝ վասն հեռաւոր զմերձաւորն կացուցանելոյ։ Վասն աւանդ ուր կամաւոր իցէ վտանգն, պարտ է նմա բառնալ զայն ՚ի սպառ ՚ի բաց. զի որ յառաջ քան զբառնալ զայն ընդունի զարձակումն, ՚ի վտանգ մեծ արկանէ զանձն չկատարելոյ զառաջադրութիւն իւր բառնալոյ զայն, որպէս ասացաք ՚ի Թիւ 4։ Իսկ ունակացեալն ՚ի նեղքին պատճառաց՝ հեռադոյն է վտանգ զրժելոյ առաջադրութեանն. զի ոչ միայն պակասէ անդ տեսիլ աչաց՝ որ սաստկապէս հրապուրէ ՚ի մեղս, այլ և չէ ՚ի կամն նորա ՚ի բաց բառնալ զունակութիւն իւր անդէն որպէս զվտանգ կամաւոր։ Վասն որոյ այնպիսւոյն առաւելապէս օգնէ Աստուած, և ըստ այմ առաւելապոյն օգուտ ՚ի շնորհաց խորհրդոյն յուսալի է նմա քան ՚ի յապաղելոյ զարձակումն. քանզի շնորհքն այն զօրացուցանեն զնա, և աղդոզապոյնս գործեն զՔնարս՝ զոր ՚ի վար արկանէ նա առ ՚ի խլել ՚ի բաց զչար ունակութիւնն։

16. Վր ինչ զունակացելոյ և զդարձադարձիւ անկելոյ հասարակաբար ասացաք, ոչ զնոյն է իմանալ ըստ ձեռնադրելեաց ունակացելոյ ՚ի մեղս, մանաւանդ ՚ի քղէախոհութիւն։ Վարթ է արձակել զաշխարհիկ զոք ունակացեալ ՚ի մեղս, եթէ ընդունակ իցէ արձակմանն. այլ որ կամիցի ընդունել զսուրբ կարգ, և ունակացեալ ՚ի մեղս իցէ, չէ բաւական զի իցէ ընդունակ արձակմանն՝ այլ խնդրի զի և սրբոյ կարգին իցէ ընդունակ. ապա թէ ոչ, երկաքանչիւրոցն և զտանի անընդունակ։ Զի որ այն ինչ ՚ի բաց կացեալ ՚ի մեղաց, և անաչառ ՚ի սուրբ սեղանն մատչելոյ, չունիցի զկարևորն սրբութիւն յընդունելութիւն աստիճանին՝ յոր կամի ամբառնալ, թէպէտ և իսկապէս զղջացեալ իցէ ՚ի մեղաց, չէ օրէն արձակել զնա՝ եթէ ոչ խոստանայցէ հրաժարել յընդունելութենէ սրբոյ կարգին առ ժամանակ մի, այսինքն դէթ զամիս ինչ առ ՚ի փորձ հաստատութեան իւրոյ։ Զայս այսպէս ըստ հասարակաց վարդապետութեան աստուածաբանից հաստատէ սուրբն Աթիոնաս։ Տես զայսմանէ և ՚ի գլ. Ե. 48։

17· Սակայն պարտ է՝ի բաց առնուլ զընտրհացն Աստուծոյ աքանչելիս, որով ոք յանկարծ՝ի հոգևոր տկարութենէն բժշկեալ գտանիցի։ Սպաթէն ոչ յաձախ պատահեն աքանչելիք այսպիսիք, մանաւանդ՝ի նուիրեալս՝ի սուրբ կարգ, թէպէտ և՝ի կրթութիւն հոգևոր՝ի վանս ուրեք առանձնացեալ իցեն· զի սովորաբար առանձնանան անդր առ Տարկի։ Այլ եթէ արդարև ընկալցի ոք այսպիսի ընծայս յողորմութենէն Աստուծոյ, զի բազմոյիլն փոխեալ յայր յայլ՝՝ի զգալն իսկ այնուհետև փորձութիւնս զարհուրեցի՝ի մեղաց, և ոչ միայն փախիցէ՝ի վտանգաց՝ այլ և զամենայն հնարս՝՝ի վար արկանիցէ առ՝՝ի բերել յանձին վարս ըստ արժանի եկեղեցական կարգին, տալով բարոյապէս հաւաստիս յարատևութեան, օրէն է յայնժամ խոստովանահօր արձակել զնա, թէպէտ և առաջի կայցէ նմա ընդունել զսուրբ կարգ։ Յանդերձ այսու ամենայնիւ պարտ է խոստովանահօր յորդորել զնա՝ի յապաղել ըստ կարի զձեռնադրութիւնն՝ առ՝՝ի սրբել զանձն և պատրաստել՝՝ի նոյն, եթէ չիցէ՝՝ի յապաղմանէ անտի վտանգ համար բաւոյ նորա։ Այս ամենայն վարդապետութիւն առաքելական հաստատէ Կենեդիկտոս ԺԴ· յիւրումն գերագոյն մատենին զԺողովոյ։

ՑՕԴՈՒԱԾ Գ

Որ ինչ հարցուածս պարտ է խոստովանահօր առնել ապաշխարողաց ըստ տանաբանեալ պատուիրանաց, որք առ ոգիտութեան կամ անհոգութեան անպատրաստք գայցեն՝ի խոստովանութիւն։

18· Թէպէտ և պարտք քննութեան խղճի մտաց անկ է ապաշխարողին, որպէս՝՝ի վեր անդր ասացաք (գլ· ԺԲ· 102·) սակայն՝՝ի տեսանել խոստովանահօր՝ զի չէ նորա ըստ բաւականին քննեալ զանձն, պարտի հարցափորձել զնա։ Յաւելաք և անդ (՝ի թիւ 203·) զի սխալել խոստովանահայր, որ զայնպիսիս արձակէ՝՝ի բաց առ՝՝ի քննել զանձինս· այլ պարտ է նմա քննել զնոսա ըստ կարգի տանաբանեալ պատուիրանաց, և հարցանել որ ինչ ըստ իւրաքանչիւր պայմանի նոցա, և հարցանել որ ինչ ըստ իւրաքանչիւր պայմանի սովոր են գործել մեղս, մանաւանդ կառավարիչք, պան-

դոկապետք, զինուորք, ծառայք և այլն: Ասա առաջնոյ պատուիրանին պարտ է քննել զնոսա ԹԷ դիտիցե՞ն զՀաւատոյս, որպէս ասացաք ՚ի գլ. Դ. 3: Եւ որպէս ազդ առնէ երանելին Հոնարատ Վորմատաբրիտացի, պարտ է խոստովանահօր ուսուցանել ապաշխարողաց իւրոց տխմարաց զխորհուրդս Հաւատոյ, դէթ զբանեին դլխաւորս, և ապա ՚ի վերայ ածէ. "Եչ է բարւոք զտխմարս այսպիսիս ՚ի բաց արձակել, զի ուսանիցին յայլոց. զի այս ոչ այլ ինչ է, բայց Թողուլ զնոսա ՚ի տգիտութեան: Ասացն որոյ պարտ է ուսուցանել նոցա Համառօտիւ զվերոյիշեալ դլխաւոր խորհուրդս, և տալ նոցա առնել ներգործութիւն Հաւատոյ, յուսոյ, սիրոյ և զղջման, և պարտ ՚ի վերայ դնել նոցա ուսանելոյ և զայլ խորհուրդս կարևորս ՚ի գիտութիւն ըստ Հարկաւորութեան պատուիրանի,,: Ասէ ընդ բարեկիրթս, որ անհոգ լեալ զհոգևորացն՝ ամաչեն ևս խոստովանել զտգիտութիւն իւրեանց, այսպէս խորատէ վարել խոստովանահօր. յորդորել զնոսա առնելոյ ընդ իւր զնոյն ներգործութիւն, բովանդակելով ՚ի նմին զկարևորս Հաւատոյ. և առանց Հարցաքննելոյ զնոսա, ասել. Ահա դեղէ հետ հաւատոյ ներգործութիւնդ ընդունիս: Ապուաժ եմ, ճշմարտութիւնս անսխալ, որ պիտէ յայտներ ես առաքեալդ, հրհաւատամ ինչ որ ինդ հը ասրվեցընէ ինձ. Նանաանդ իրէս անչ ու դէկ Ապուաժ ըլլալը. դաճին որբոյդ Տարդանալը, դէպէ հոմարդ կասչէ վրայ դեռնելը, յարութիւնն առնելը, երկինս վերանալը, ասկից պետրդ գայ պաղենդը դատելու, արդարներուն ապրայութիւնն ու դեղատրութիւն յաւիտենական դժոխս պալու: Ագենեդիկտոս Յ.Դ. յայտ առնէ ՚ի կանդակի ուրեք իւրում, զի չէ պարտ արձակել զայնոսիկ՝ որ անհոգութեամբ իւրեանց անգիտանայցեն զկարևորս, Թէ ըստ Հարկաւորութեան ունջնորդի և Թէ ըստ Հարկաւորութեան պատուիրանին: Ասկ ոչք անգիտանայցեն զպատուիրանս, օրէն Համարի արձակել զնոսա՝ եԹէ ձշմարտիւ խոստանայցեն ուսանել զայնս:

Պարտ է դարձեալ Հարցանել զնոսա՝ Թէ իցէ արարեալ նոցա կամ ուսուցեալ իրս մնապաշտութեան, կամ և զայլս ծառայեցուցեալ ՚ի նոյնս՝ գործակից ումեքայ իւրեանց առնելով զնոսա: Եւ պարտ է խնդալտա

առնել զնոսա ի սնապաշտութիւն միշտ իսկ մեզք են, թէպէտ և վասն եղբայրսիրութեան ոք և առ հարկն վարեսցի նուաւս։

Պարտ է դարձեալ հարցանել՝ մանաւանդ զտխմանսս և զկանայս՝ որք ոչ յաձախեն ի խորհուրդս, թէ իցէ երբեք լռեալ նոցա առ ամենից զմեզս ինչ ի խոստովանութեան, և ասել. Ընդէ՞ալ կենագոյ վրայ խղճմտանքդ ոանէս, ըսե հաճարչակ, մի վնասուար, ամեն անհանգստութենէ աէրդ հալատի։ Այսու օրինակաւ բազումք յորդորին ընուլ զմեզսն անցելոց սեղանակապուտ խոստովանութեանց. և յայնժամ պարտ է զմիւս այնպիսեաց խոստովանութեանց և հաղորդութեանց հարցանել, և թէ յամենայն նուաւգս ընդունելոյ զխորհուրդս խղճէր. զի պատահէ ոմանց առնել խոստովանութիւնս ինչ այսպիսիս ի մանկութեան, և մոռանալ զայնս. և չէ պարտ երկրորդել զխոստովանութիւնս արարեալս ի ժամանակի մոռացութեանն։ Այլ դարձեալ թէ զիտէր զի այնպիսի խոստովանութեամբ և հաղորդութեամբ չկատարեր զպատուէրն զատկական։ Ոչ այս հարցուածք յաղագս սրբապղծութեան բարւոք է՝ ի սկզբան անդ խոստովանութեան առնել. որպէս զի մի յետ խոստովանութեանն հարկ լինի երկրորդել զայն՝ եթէ պարտ իցէ Հնդրատագոյն զանցեալ կենացն խոստովանել զմեզս ոչ ըստ օրինի խոստովանեալս։

Պարտ է դարձեալ հարցանել թէ կատարեաւ իցէ նոցա զապաշխարանսն, կամ թէ մոռացեալ, և կամ կամաւ զանց զնովաւ արարեալ, կամ յապաղեալ առ ի յետոյ կատարել, կամ առ ի տալ փոխել զայնս. և թէ խղճեաւ իցէ նոցա ի յամենն։ Պարձեալ՝ տուեաւ իցէ նոցա զայթակղութիւն այլոց, կամ հրաապուրեաւ զայլս ի մեղս անձամբ կամ ի ձեռն այլոց. և մանաւանդ հարցանել սպանդակապետաց՝ թէ տուեաւ իցէ նոցա զինի որոց սովոր իցեն արբենալ. և կանանց՝ թէ իցէ նոցա անհամեստ բանիւք, խեղկատակութեամբ, աչացն մեղմեզանօք, զկուրծս հոլանելով, ձորձ ի վեր առնելով, պատճառս տուեալ արանց ի չարիս մտաբերելոյ, կամ պարգեւս առ ի հրապոյրս չարեաց ընկալեալ։

19. Ոստ երկրորդ պատուիրանին՝ պարտ է հարցանել, թէ պրժեաւ իցէ նոցա երբեք ուխտիցն, թէ լեալ

երբէք սահմանումն, թէ երդուեալ ՚ի սուրբս կամ ՚ի սրբութիւնս, ՚ի հոգի, ՚ի խիղճ մտաց, կամ ՚ի հաւատս: Ոմն ինչ նոցա երբէք հայհոյեալ զԱստուած, զսուրբս, կամ զսրբութիւնս, և թէ լմն ՚ի լու այլոց ՚ի գայթակղութիւն: Այս գիտելի է զի չեն ազատ ՚ի ծանուցմանց մեզաց՝ որք ՚ի չար ունակութենէ կամ ՚ի թուոյն կրից բերին ՚ի հայհոյութիւն առանց միտ դնելոյ բանիցն. զի թէպէտ և ոչ այնու խելամտութեամբ ասիցեն՝ որպէս ոչ սովորեալքն ՚ի հայհոյել, այլ է նոցա բաւական գիտութիւն առ ՚ի կացուցանել կամաւոր և մեղաւոր զմեզսն: Զհամարհելով նոցա զմեզս, չառնէ այն ՚ի նոսա զնոյն աշղեցութիւն՝ զոր առնէ ՚ի խիղճ չէ անզգայեալ, վասն որոյ առանց մնադրութեան ասեն հայհոյեալ. այլ ոչ է պարտ խոստովանահօր հաւատալ նոցա, և ոչ իսկ հարցանել՝ թէ ուշիւ էին նոցա հայհոյեալ, այլ ՚ի ստոյգ հայհոյութիւն համարել նոցա զայնս:

20. Ասա երրորդ պատուիրանին՝ պարտ է հարցանել, թէ էին նոցա յաւուրս տօնից հեղգացեալ ՚ի լսել սրբոյ պատարագին, կամ զգացեալ զի տարաժամէր, և կամ կամակաճեալ զի չժամանէր ընդուզգալ պատուիրանն: Զանգի պատահէ յաձախ, զի թէպէտ և ժամանեն սրբոյ պատարագին՝ այլ ըստ դիպուածոյ, և յայնժամ ոչ ևս խղճեն ընդ դնել իւրեանց զանձինս առանց իրաւացի պատճառի ՚ի վտանգ պատուիրանազանցութեան: Պարձեալ թէ յաւուրս տօնից պարապեալ էին նոցա ՚ի գործ ծառայական, և ոչ ըստ ժամանակի, և յինչական գործ, ՚ի ծանր թէ ՚ի թեթեւ: Այս ՚ի պատասխանել նոցա խառն ՚ի խուռն՝ մերթ աւելի և մերթ նուազ աշխատեալ, պարտ է հարցանել թէ քանիցս խղճեալ էին ընդ այն և համարեալ ծանուցս մեզանչել: Պարտ է դարձեալ խելամուտ առնել զառաջինն, զի թէպէտ և ՚ի ծածուկ և ձրի աշխատելոյն ՚ի տօնս սակայն մեզանչէ: Այս զվանելն ևս հարցանել զաշխատելոյն՝ թէ առ կարօտութեան կամ թէ ՚ի ծնողաց կամ յառնէ կամ ՚ի տեառնէ իւրմէ էին ստիպեալ յայն:

21. Ասա չորրորդ պատուիրանին՝ պարտ է հարցանել որդւոց, թէ անարգեալ էին նոցա զծնօղս իւրեանց

պոծով կամ բանիւք, կամ թշնամանեալ զնոսա կամ անիծեալ։ Այլ պարտ իսկ է այսպիսեացդ հատուցանել զպատիւ ծնողացն՝ խնդրելով ի նոցանէ թողութիւն, և եթէ առաջի այլոց իցեն մեղուցեալ՝ առաջի նոցա խնդրել և զթողութիւն։ Այլ եթէ դժուարին իցէ նոցա առնել զայս յառաջ քան զարձակումն, ոչ է պարտ պահանջել ի նոցանէ զայն, և ոչ օրպէս պարտ ծանր ի վերայ գնել նոցա առնելոյ զայն յետ խոստովանութեան, այլ օրպէս խրատ. զի համարի ներել ծնողացդ զայս պարտականութիւն օրդւոց իւրեանց՝ շատացեալ ընդ օրդիական մեծարանս նոցա, զի մի զրկեալ գտանիցին այնուիկ ի շնորհացն Աստուծոյ։

22. Իսկ ծնողաց պարտ է հարցանել, թէ վերջացեալ իցեն ի դաստիարակելոց զօրդիս իւրեանց յերկիւղին Աստուծոյ, և ի հսկելոց ի վերայ նոցա զի գնայցեն ի վարժս քրիստոնէական վարդապետութեան, զի յաճախեսցեն ի սուրբ խորհուրդս, զի ի բաց կացցեն յընկերշակութենէ չարաց և յընտանութենէ կանանց։ Պարձեալ թէ տուեալ իցէ նոցա գայթակղութիւն օրդւոց իւրեանց բանիւք կամ գործով և այլն, թէ հեղգացեալ իցեն ի յանդիմանելոյ զմեզս նոցա, մանաւանդ զգողութիւն. թէ թողեալ իցեն խօսնատուն զաւեր իւրեանց յաճախել առ իւրեանս. թէ կալեալ իցեն յանկողնի իւրեանց զօրդիս, կամ զուստերս և զդստերս ի միւսմ մահճի։

23. Պարձեալ և տեղեանց՝ թէ յանդիմանեալ իցեն զճառայս ի հայհոյել նոցա, ի չկատարել զզատիկան պարտս, ի հեղգանալ ի լուր պատարագի, ի խօսել զաղտեղիս և այլն. զի պարտական են տեառքդ խափանել ըստ կարի զայս ամենայն չարիս։ Պարձեալ և առանց՝ թէ կերակրեալ իցեն զընտանիս, և զկարեւորս նոցա հայթայթեալ. և կանանց՝ թէ զայրացուցեալ իցեն զարս իւրեանց, կամ զամուսնական պարտս չհատուցեալ։ Այլ հաւատացեալդ զայսոսիսի հարցմունս պարտ է առնել՝ ասելով. Արիանդ հնապանդէր ես պարտ ջերուտ մէջ, խղճմտանքդ ոնիա աս պէսակ բաներու մէջ։ Իսկ առ բարեպաշտ կանայս և ոչ այսչափ ինչ ասել։

24. Ըստ հինգերորդ պատուիրանին՝ պարտ է հարցանել, թէ ախորժեալ իցէ նոցա ընդ չարիս այլոց,

կամ մաղթեալ նոցա չարիս անիծիւք. և մի ունակայել ոք համարել զայսոսիկ ի թեթև մեղս, իբր ի սովորութենէ առանց չարութեան կամաց ասացեալս. այլ վարել ընդ անուղղայս ի նոցանէ, որպէս ընդ ունակայեալս ի մեղս և ընդ դարձադարձիւ անկեալս։ Պարձեալ թէ իցէ նոցա արարեալ թշնամանս այլոց՝ բանիւ կամ գործով ծանուներս, և արարեալ զայն առաջի այլոց. զի պարտ է նոցա յայնժամ հատուցումն առնել թշնամանելոյն՝ խնդրելով ի նմանէ թողութիւն կամ մեծարելով զնա նոյնպէս առաջի այլոց, եթէ չիցէ ըստ խոհական դատման համարելի՝ զի թշնամանեալն չպատհանիցէ զայն վասն խնայելոյ ի թշնամանօղն, կամ վասն չնորոգելոյ զչիշատակ թշնամանացն, և կամ եթէ վըտանգ իցէ արծարծանելոց անդրէն առելութեան չիշատակաւն այնուհետև։ Այլ պիտելի է զի ռամկին թըշնամանել զերեարս, և ս և ծանր բանիւք՝ գող և շուն զմիմեանս կոչելով, ոչ միշտ ի ծանր մեղս համարի նոցա. զի ոչ ինքեանք ծանր ինչ ըստ նշանակութեան բառիցն համարին զայն, և ոչ լսօղք գողս կամ շունս այնուհետև համարին զնոսա. բայց եթէ զգործս գողութեան կամ շնութեան և զմեղսակիցս նոցա յաւելցեն ի նոյն։ Պարձեալ թէ իցէ նոցա զրգռեալ թշնամութենա քսութեամբ, կամ ներեալ իցէ թշնամանօղին ի խնդրել նորա թողութիւն, ըստ ասացելոցս ի գլ. Դ. 17. յաւելումբ աստ ընդ Աւուրնեղլեայ, զի օրէն է թշնամանելոյն խնդրել յատենի զհատուցումն թշնամանացն՝ եթէ ի նախատինս ընտանեացն իցէ այն։ Պարտ է դարձեալ հարցանել ռամկին՝ թէ իցէ նոցա արքեցութեամբ զինեհարեալ, կամ զգացեալ զի հասանէր նոցա արքեցութենէն ղղլխոյ, ըստ ասացելոցս ի գլ. Ե. 4։

25. Ըստ վերադրոյդ պատուիրանին՝ պարտ է հարցանել, եթէ ցանկացեալ իցէ նոցա կամ յամեալ ի խորհուրդս աղտեղիս, խմացեալ զայնոսիկ լիով, կամ տուեալ այնոցիկ հաւանութիւն. դարձեալ ամենեցուն թէ այրեաց կամ թէ արամբեաց իցէ նոցա ցանկացեալ, և զինչ ընդ նոսա առնել մտաբերեալ։ Օրմէ գիտելի է, զի ռամիկն ծանրագոյն համարի մեղս զկուսապղծութիւն քան զպոռնկութիւն, և անդիտանալ

պչատութիւն ընութեան. վասն որոյ սովորելոյն ՚ի սոյն՝ չէ պարտ զծանրութիւն տրտա յայտ առնել, եթէ չիցէ նոցա օգուտ ՚ի յայտնութենէն: Պարտ է հետազօտել և գիտել ըստ կարի զթիւս խորհրդոց այսպիսեաց՝ որոց տուեալ իցէ նոցա հաւանութիւն, քանիցս յաւուր կամ յեօթնեկի կամ յամեան հաւանեալ իցէ նոցա ընդ այնս: Եթէ չկարիցեն առ այս տալ պատասխանի, պարտ է հարցանել՝ թէ իցէ՞ նոցա ցանկացեալ որոց և իցէ հանդիպելոյ կամ՝ ՚ի միտս եկելոյ կանանց. կամ զուարքէ ՚ի նոցանէ հանապազ խորհեցեալ հանդերձ ցանկութեամբ, կամ՝ ՚ի տեսանելն ևեթ զնա ցանկացեալ: Պարձեալ թէ իցէ՞ նոցա հնարս ՚ի կիր արկեալ առ ՚ի կատարել զցանկութիւնս իւրեանց. զի յայնժամ, որպէս ասացաք ՚ի գլ. Գ. 48, հնարքն այնոքիկ, թէպէտ և ըստ ինքեան ոչ բարի և ոչ չար, առնուն զտեսակ չարութեան խորհրդոյն. վասն որոյ պարտ է բացատրել զայնոսիկ որպէս գործեցեալս իրօք:

26. Պարձեալ թէ խօսեցեա՞լ իցէ նոցա զաղտեղիս, քանիցս, և ծլց ՚ի լուր, արա՞նց թէ կանանց, ամուսնացելոյ թէ ամուրեաց, հասելոյ թէ չհասելոյ չարբուսնս: Օ՜ ինչպիսի՞ բանս ասացեալ իցէ նոցա, օրինակ լինի՝ անուանեա՞լ զառականս տարատեսս, զի գժուարաւ ազատ ՚ի մահուչափ մեղաց մարթ է այսմ պատահել: Պարձեալ ՚ի բարկութենէ՞ թէ ընդ խաղ զայսպիսի բանս ասացեալ իցէ. զի ՚ի բարկութեան չիք սովորական զգայական ախորժ: Ոչ է պարտ արձակել զանկեալս զարձագարձիւ յայսպիսի խօսս պղծութեան, թէպէտ և ընդ խաղ ասիցեն խօսեցեալ: Պարձեալ թէ պարծեցեա՞լ իցէն ՚ի մեղս ինչ մարմնականս, զի երբակի մեղանչէն այնուհետ. ի՝ զի գայթակղութիւն մեծ տան լսողաց, երկրորդ՝ զի պարծին ՚ի չարութիւն, և երրորդ՝ զի զնոյն մեղս երկրորդեն հաճութեամբն ընդ այն: Ա՝ ասն որոյ և պարտ է հարցանել թէ յինչ մեղս պարծեցեալ իցէն. և դարձեալ թէ իցէ՞ն հեշտացեալ ՚ի լուր աղտեղի խօսից այլոց, և թէ իցէ՞ յայնժամ անկեալ ՚ի միտս նոցա պատուիրան եղբայրական աղդարարութեան:

27. Պարձեալ թէ գործեցեա՞լ իցէ նոցա գործս պղծութեան, և ընդ ո՞ր անձնս, ընդ այրիս, ընդ ամու-

բիս թէ ընդ ամուսնացեալս. ընդ նմին ումեք և ոչ մեղուցեալ, որպէս զի մարթ իցէ՛ւ միտ առնուլ զմեղաձաւոր վտանգս. քանիցս կատարեալ գործով զմեղսն, և յորմէ՞ հետէ՛ւ նոյնս մտաբերեալ, որպէս զի մարթ իցէ՛ւ միտ առնուլ զընդհատումն ներքինն և արտաքինն ներգործութեանց՝ որ զթիւս մեղացն յաձախէ ըստ ասացելոցս՛ւ գլ. Գ. 46։ Այլ պարտ է յայնժամ ըստ ընդհատութեան զբազմանց և քնոյ խմաստասիրել բազմապատկեալ զմեղս, հարցանելով զժամանակ տեւողութեան նոցա։

Պարձեալ և գիլջացելոց պարտ է հարցանել զշօշափմանց, քանիցս՛ւ ի նոսին անկղնտացեալ իցէն, զի և առանց գիլջութեան մահու չափ մեղք են շօշափմունք օրինազանցք։ Այլ դարձեալ թէ՛ւ ի մեղս անդ ցանկացեալ իցեն կամ հեշտացեալ մտածութեամբ մեղանչելոց ընդ ումեք կամ ընդ այլ և այլ կանայս, կամ ընդ մանկունս. զի յայնժամ այլ և այլ և զանազան մեղս՛ւ ի շօշափելն գործեն։ Օ ամուսնական պարտուց սովորաբար չէն ինչ պարտք և ոչ վայել է խոստովանահօր հարցանել, բայց միայն կանանց՝ թէ հատուցեալ իցեն զպարտս իւրեանց, և զայն համեստաբար՝ որպէս՛ւ ի վեր անդր ասացաք, և պատասխանել և՛ւեթ առ հարցուածս։ Նակ որ ինչ օրէն իցէ ամուսնաց կամ ոչ, տես՛ւ ի գլ. ԺԸ. 39. և այլն։

28. Նստ եօթներորդ պատուիրանին՝ պարտ է հարցանել, թէ առեալ իցէ նոցա զայլոց ինչ, մի՞ անդամ թէ բազում, ՛ի միոջէ՞ ումեք թէ՛ւ ի բազմաց, ՛ի մեծատանց եթէ չաղքատաց, որպէս զի մարթ իցէ՛ւ ի միտ առնուլ զծանրութիւն մեղացն։

29. Նստ ութերորդ պատուիրանին՝ պարտ է հարցանել, թէ իցէ՞ նոցա բամբասանս ինչ ծանուննս արարեալ զայլմէ, սուտ թէ ճշմարիտ, զգաղտնի իրաց թէ զյայտնեաց. և եթէ զգաղտնեաց՝ ՛ի լուր միոյ ումեքէ, թէ ասկաւուց, կամ բազմաց. որպէս ստոյգ ինչ թէ որպէս յայլոց լուեալ։ Այլ դարձեալ թէ ախորժեալ իցէ՛ւ ի լուր չարահամբաւութեան այլոց, կամ չարախօսեալ զումեքէ լո՛ւ ի լու նմին, զի և թէչնամանք են անդ ընդ բամբասանս՝ զանազանեալ յայնմանէ։ Նակ որ ինչ յաղագս հատուցման համբաւոյ և պատուոյ պարտ իցէ

խոստովանահօր ազդ առնել ապաշխարողին, տես՝ ի գլ. ժա. 3. 4. 18. և այլն։

30. *Ոչ ինչ կարևոր հարցանել նոցա զյանդուգն դատողութենէ. զի այսպիսի դատումնք դժուարաւ իցեն մահացու, զի սովորաբար կասկածանք են քան թէ դատումնք. և եթէ իցեն և դատումնք, կամ գոն իսկ բաւական պատճառք դատելոյ, և կամ Թուլին բաւական։ Պարտ է մանաւանդ ուսուցանել երբեմն տգիտաց՝ զի պարտ իսկ է նոցա կասկածել առ՝ ի խափանելոյ զչարիս, որպէս մեր՝ ի յառնախել խօսեցելոյ առ իրեարս և՝ ի վարել նոցա կարի ընտանութեամբ ընդ միմեանս, և յայլ այսպիսի դէպս՝ առ՝ ի բառնալ զպատճառս մեղաց։*

31. *Իսկ զպատուիրանաց եկեղեցւոյ շատ է հարցանել, թէ իցէ՞ նոցա պահեալ զպահս և զծոմապահս հրամայեալս, եթէ չիցեն ազատք՝ ի պատուիրանէն։*

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Որ ինչ հարցուածս ըստ հանգամանաց և ըստ պարտուց պաշտամանն ապաշխարողաց պարտ իցէ առնել։

32. *Ըստ պարտուց պաշտամանն ոչ միշտ բաւական է հարցանել ապաշխարողաց՝ թէ իցէ՞ ինչ նոցա ընդդէմ պարտուց իւրեանց գործեալ։ Ի զգալ խոստովանահօր չթէթևութիւն խղճի մտաց ապաշխարողին, և՝ ի կասկածել զի վերջացեալ իցէ՝ ի պարտուց իւրոց, պարտի հարցանել նմա զգխաւոր պարտս նորա՝ առանց ակն ածելոյ՝ ի նմանէ։ Ալ ասն օրոյ եթէ քահանայ իցէ ապաշխարողին, պարտ է հարցանել նմա թէ կատարեալ իցէ զպարտս ժամակարգութեան և զպատարագաց, թէ չամեալ ընդ երկար զպատարագս վասն մատուցողաց զպատարագին. թէ պարապեալ իցէ նորա՝ ի տուրևառ, կամ՝ ի խաղս արգելեալս, կամ հապճեպ պատարագեալ ըստ ասացելոցս՝ ի գլ. ե. 84—86։ Եթէ իցէ կանոնիկոս, պարտ է հարցանել նմա՝ յինչ վճաս իւր՝ ի կիր արկեալ. եթէ խոստովանահայրն, թէ արձակեալ իցէ զանարժանս և զդարձադարձիս անկեալս՝ առանց անսովոր նշանաց զղջման՝ ըստ ասա-*

ցելոցս՝ ի վեր այսր՝ ի թիւ 12։ Իսկ եթէ իցէ ժողովրդապետ, պարտ է հարցանել զնա ըստ ասացելոցս՝ ի գլ. Ե. 14. և մանաւանդ՝ թէ խրատեաւ իցէ և յանդիմանեալ զատեցօղս և զպռոնիկս. թէ հսկեաւ իցէ առանց ակնառութեան՝ ի վերայ վերջացելոց՝ ի զատիկան պարտուցն իւրեանց. թէ խօսեցեաւ իցէ զբանն Աստուծոյ՝ ի կիւրակէս, ուսուցեաւ զքրիստոնէական վարդապետութիւն, պաշտեաւ զխորհուրդս՝ մանաւանդ հիւանդաց՝ ի հոգեվարս. և թէ տուեաւ իցէ ձեռնադրելեաց վկայութիւն բարւոյ՝ առանց պիտելոյ ստուգիւ զբարւն վարս նոցա։ Իսկ եթէ ապաշխարողն իցէ եպիսկոպոս, պարտ է հարցանել զնա՝ ի վերայ պարտուց իւրոց ըստ ասացելոցս՝ ի գլ. Ե. 47. և մանաւանդ՝ թէ զգուշացեաւ իցէ՝ ի քննութիւն ձեռնադրելեաց (ըստ ասացելոցս՝ ի գլ. Ե. 47—52,) թէ բաւական համարեաւ զվկայութիւն ժողովրդապետաց՝ որ յաձախ առ ակնածութեան ընծային։ Եւ դարձեալ թէ տուեաւ իցէ քահանայից հրաման ընդունելոյ զխոստովանութիւն, առանց քննելոյ զվարդապետութիւն նոցա և զվարս։ Եւ դարձեալ թէ առնիցէ զպարտս այցելութեան, և հետազօտելոյ և բառնալոյ՝ ի բաց զդժգոհակրութիւնս՝ ի թեմի իւրում։

33. Եթէ յարգելալանից կուսանաց իցէ ապաշխարողն, պարտ է հարցանել զնա զպահպանութենէ ուխտին աղքատութեան, և թէ ունիցի ինչ ընդ ումեք խնդիր՝ ի սրտի. և մանաւանդ հարցանել՝ թէ իցէ ինչ նորա վտանգաւոր այցելութիւն, և ստիպել զնա հրաժարել յայնմանէ. զի թէպէտ և՝ ի սկզբան անդ չիցէ ինչ ծանր չար, այլ տակաւ յաձախ վտանգն, ևս և՝ ի գոյութիւն և՝ ի չար օրինակ այլոց կուսանաց։ Եթէ անուսապահ կամ դժնապան իցէ կուսանն, պարտ է հարցանել՝ թէ ածիցէ ումեք՝ ի ծածուկ զիր կամ բան վտանգաւոր բարեկամութեան. եթէ տեսանէ՝ հարցանել թէ ունիցի խնամ իրաց կուսաստանին. իսկ եթէ վանականցն՝ հարցանել մանաւանդ՝ թէ հսկիցէ՝ ի մուտս և՝ ի յամել արանց՝ ի ներքս, զգուշանայցէ խոսարանին՝ զի մի անդ լիցին վտանգաւոր խօսակցութիւնք, և պահպանութեան կանոնաց՝ զի մի ինչ սպրդեսցի՝ ի ներքս անկարգութիւն։

34. Արեք դատաւոր իցէ ապաշխարողին, պարտ է հարցանել՝ թէ իցէ՞ ինչ նորա դատեալ կրկնեալ կամ առ մնահաճութեան առանց քալ քննելոյ։ Արեք նմանապէս, թէ պրպիտս զհարցաքննութիւնն արարեալ, յաւելեալ ինչ կամ պլպլեալ զայնս՝ ի գրելն, և կամ պահանջեալ ինչ աւելի քան զսակ օրինաւոր։ Արեք բժիշկ՝ թէ իցէ՞ նորա բաւական գիտութիւն և փորձ, և՝ ի դէպ գործարինս դիմէ՞ ի մատեանս կամ առ հմտագոյնս. տնօրինեալ իցէ զոք տարապարտ՝ ի պահոց, ի տեսանելոյ զպատարագ կամ՝ ի ժամակարգութենէ. մատուցեալ իցէ ումեք դեղ վտանգաւոր առ՝ ի փորձ. յղեալ իցէ զոք յայս կամ յայն դեղարան՝ ի շահ օգտի կամ վասն բարեկամութեան, թէպէտ և չիցեն անդ ընտիր դեղքն. մանաւանդ զի Գրիգորի ԺԳ. արգելեալ է զամենայն շահակցութիւն դեղավաճառաց ընդ բժիշկս և զամենայն շահակցութիւն դեղավաճառաց ընդ բժիշկս և ընդ վիրաբոյժս։ Իսկ եթէ իցէ բժիշկ Թուրքաւոր, պարտ է հարցանել թէ խնամՀ զաղքատս մանաւանդ՝ ի յետին վտանգի կենաց։ Իսկ ամենեցունց իսկ բժշկաց պարտ է հարցանել՝ թէ զգուշանայցէ՞ն աղդ առնել հիւանդաց՝ ի դէպ ժամանակի զընդունելութիւն խորհրդոց ըստ պատուիրելոյ քահանայապետացն Կոստանդինոսի Գ. և սրբոյն Պիոսի, որք հրամայեն՝ ոչ միայն՝ ի հասանել վտանգին աղդ առնել, այլ և յորժամ մարթ իցէ հասանել վտանգի՝ ի հիւանդութենէն. և է հաւաստի՝ զի մահուչափ ընդդէմ երդման իւրեանց և մեղանչեն, որք ոչ աղդ առնեն հիւանդին խոստովանել՝ ի կասկածելն զվտանգ։ Ա՛ղէտք անհնարին՝ տեսանել զբազումս, մանաւանդ՝ ի մեծարոյ արանց, կիսամեռս ստիպեալ՝ ի քննութիւն խղճի մահու իւրեանց, յորժամ ոչ ևս խօսել կարեն, ոչ խորհել, և ոչ զղջալ՝ ի վերայ մեղաց իւրեանց. և է այսր ամենայնի չարեացապարտ բժիշկն, որ սուտ յուսով պատրէ զհիւանդն և զընտանիս նորա մինչև ցվերջին յուսահատութիւն։ Պարտ է ապդովագոյնս զայսմանէ խօսել առ բժիշկս, որոց չիցէ երկիւղած խիղճ մտաց. և յուցանել նոցա զպարտս աղդ առնելոյ հիւանդին և՝ ի կասկած վտանգի՝ զընդունելութիւն խորհրդոց. զի՝ ի զգուշութենէ աստի խոստովանահօր և փրկութիւն, ոչ միայն բժշկին ապաշխարողի, այլ և հիւանդացն՝ որ՝ ի հոգս նորա իցեն ապաստան։

35. Իսկ եթէ վիրաբոյժ կամ դեղավաճառ իցէ ապաշխարողն, պարտ է հարցանել՝ թէ տուեա՞լ իցէ յղեաց դեղ անցուցանելոյ զսաղմն, կամ զշահ օգտի իւրոյ հայթայթեա՞լ ի դեղս։ Եթէ իցէ վաճառական ապաշխարողն, պարտ է հարցանել՝ թէ նենգեա՞լ ինչ իցէ ի չափ և ի կշիռ. պահանջեա՞լ առաւել քան զբարձրացոյն գինս, մանաւանդ ի վաճառելն առանց կանխիկ հատուցման՝ յորժամ հատուցումն էր անվտանգ։ Իսկ եթէ օրէնն իցէ պահանջել աւելի ինչ ըստ հասարակաց սակի կամ մնրամանաբար վաճառման, տես ի գլ. ժ. 174. 178։ Եթէ դերձակ իցէ ապաշխարողն, պարտ է հարցանել՝ թէ իցէ՞ նորա աշխատեա՞լ ի տօնս առանց օրինաւոր պատճառի, կամ աղատ զանձն կացուցեա՞լ ի ծոմապահոց, զի չէ նա աղատ. թէ յաւելեա՞լ իցէ զգինս չուխային պատճառանօք իբր թէ վաճառականն առ բարեկամութեան տուեա՞լ իցէ նմա զայն դիւրագնի, սակայն չիցէ այնպէս. տես ի գլ. ժ. 189։ Եւ դարձեա՞լ եթէ կալեա՞լ իցէ իւր զկոտորակս չուխայինն կամ զկերպասուց առանց հաւանութեան տեառն զգեստուն. և դարձեա՞լ թէ իցէ՞ նմա մերձաւոր վտանգ մեղաց յառնուլ զայի անձին կանանց, որպէս ոչ դուն ուրեք պատահէ անզգուշից։

36. Եթէ իցէ միջնորդ վաճառաց ապաշխարողն, պարտ է հարցանել՝ թէ իցէ՞ նորա խորեա՞լ ինչ ի գնոցն, ըստ ասացելոցս ի գլ. ժ. 189, ուր ասացաք և թէ երբեմն օրէն իցէ նմա ունել իւր զյաւելուածն՝ եթէ աւելի ինչ գնոց վաճառեսցէ քան զսահմանեալն ի տեառնէ իրին։ Նմանապէս եթէ ի գնելն ինչ վասն այլոց՝ աւելի քան զհատուցեա՞լ գինսն պահանջեսցէ առանց արդար պատճառաց, որպէս եթէ աւելի քան զպարտս իւր վաստակեա՞լ իցէ առ ի գտանել զայն դիւրագնի, կամ յանուն իւր գնեա՞լ իցէ զայն՝ յանձն առեա՞լ զվտանգ և այլն։

37. Եթէ ապաշխարողն իցէ վարսավիրայ, պարտ է հարցանել՝ թէ պարապի՞ց և զտօնական աւուրս յաւելեա՞ց իւր. զի չէ այս օրէնն՝ ուր չիցէ ընկալեա՞լ ի տուողութենէ, կամ ի հարկէ աշխատասէր մարդկան բնակելոց անդ։ Դարձեա՞լ թէ ըստ դիւահնար արդի սովորութեան, յարդարիցէ զգիսակս կանանց, որ

մանաւանդ վասն առն երիտասարդի մերձաւոր վտանգ է մահուչափ մեղաց: Ա ասն որոյ եթէ ոք ՚ի քաղմաժամանակեայ փորձոյ իսկ ապահովեաւ՝ ազատ զանձն ՚ի վտանգէ անտի համարիցի, և չիցէ իսկ մարթ դատապարտել զնա ՚ի մահուչափ մեղս, սակայն չէ մարթ նեղել նմա զայն, զի ըստ ինքեան է վտանգաւոր, ոչ միայն իւր՝ այլ և կանանց, որոց չէ օրէն երբեք տալ առթանց յարդարել զդէմս իւրեանց:

ՑՕԴՈՒԱԾ Ե

Թէ ո՛րպէս պարտ իցէ խոստովանահօր ընդ մանկունս ընդ պատանիս և ընդ աղջկունս վարել:

38. Ո՛ ամենայն սէր և քաղցրութիւն պարտ է առնել ընդ մանկտին եկեալ ՚ի խոստովանութիւն: Յարցանել նախ՝ Թէ դիտիցէն զՀաւատոյս. և եթէ ոչ, պարտ է երկայնամտաբար ուսուցանել զնոսա անձամբ, եթէ ներիչ ժամանակն, կամ ՚ի ձեռն այլոց ուրուք, զի ՚ի կարևորս փրկութեան: Ա՛ւ յետ խոստովանելոյ նոցա որ ինչ դիտիցեն իւրովին, պարտ է հարցանել՝ Թէ իցէ՞ նոցա լռեալ ինչ ՚ի մեղաց առ ամօթոյ, իցէ՞ հայհոյութիւն ինչ հանեալ ՚ի բերանոյ կամ երդուեալ երբեք ստութեամբ. հեղգացեա՞լ իցէ երբեք ՚ի լսելոյ պատարագի, կամ ՚ի լսելն պարապեալ ՚ի խօսս, կամ աշխատեալ յաւուրս տօնից. հեատեա՞լ երբեք ընդդէմ ծնողաց, կամ ձեռն ձգեալ ՚ի նոսա, կամ թշնամանեալ զնոսա կամ անիծեալ կամ խաղ արարեալ: Տես որ ինչ ՚ի Թիւ 21 առաջաբ յաղագս պարտ ՚ի վերայ դնելոյ մանկտոյն խնդրել Թողութիւն ՚ի ծնողաց: Ա՛րձեալ Թէ իցէ՞ նոցա անհամեստս ինչ գործեալ. այլ պարտ է խոստովանահօր ՚ի մասինս յայսմիկ կարի զգուշութեամբ հետազօտել զբերան նոցա. հարցանել նախ՝ Թէ իցէ՞ նոցա ասացեալ բան ինչ տգեղ, կամ խեղկատակեալ ընդ եղբարս կամ ընդ քոյս կամ ընդ այլ մանկտին, յայտնի Թէ ՚ի ծածուկ, քանզի՝ Թէ ձեռաք, և այսպէս տակաւ որպա՛ՀՀ ՚ի բերանոյ նոցա գիտցի, և ապա զԹիւս այնոցիկ հետազօտել:

Նոյնպէս աղջկանց պարտ է հարցանել՝ Թէ իցէ՞ նոցա ընդ

տանուԹիւն ընդ ուժեք, և զինչ ՚ի կենակցելն ընդ նմա խորհիլին կամ խօսիլին. և ըստ պատասխանելոյ նոցա՝ յառաջ վարել զհարցմունս, այլ առանց ինչ հարցանելոյ զիւրմէնէ, ոչ ուստերաց և ոչ դստերաց։ Լաւ է Թերի վնաստովանուԹիւն ըստ նիւԹականն ամբողջուԹեան առնել, քան ուսուցանել նոցա զոր անպիտանան, կամ արկանել ՚ի միտս նոցա հետաքրքրուԹիւն։ Այլ դարձեալ պարտ է հարցանել օրիորդաց՝ Թէ ուսանիցին ընԹեռնուլ և մանաւանդ գրել յարանց. կամ Թէ ընկալեալ իցէ նոցա պարգեւս ՚ի պատանեաց կասկածելեաց, և մանաւանդ ՚ի կանամբեաց, կամ յեկեղեցականաց և ՚ի կրօնաւորաց։ Պարտ է և այս հարցանել ուստերաց և դստերաց՝ Թէ իցէ նոցա գողացեալ ինչ, կամ ՚ինչս ինչ ուժեք հասուցեալ, կամ չարախօսեալ զուժեքէ. հարցանել դարձեալ՝ Թէ պահեաւ իցէ նոցա զպատուիրանս եկեղեցւոյ՝ զպահս և զծոմապահս, և կատարեաւ զնուստովանուԹիւն զատկական։

39. Պարտ է յեզանակէ խոստովանուԹեան նոցա ՚ի միտ առնուլ զչափ բանաւարուԹեան նոցա, Թէ իցէն ընդունակ արձակման։ Ո՞ւ եԹէ որիշ և յատակ զմեղս խոստովանիցին, կամ ըստ հարցուածոց զպատասխանիսն պատշաճիցեն, և յայտ առնիցեն՝ զի ձանաչեն Թէ ինամանեալ մեղօք զ՚ինչս առուած և արժանի լեալ դժոխոց, պարտ է յայնժամ արձակել զնոսա՝ եԹէ զղջացեալ իցեն, և չիցէ նոցա զարձադարձիւ ՚ի նոյն մեղս յառնախեալ։ Իսկ եԹէ երկբայելի իցէ բանաւարուԹիւն նոցա, որպէս եԹէ այսր անդր ՚ի խոստովանելն իւրեանց զանչ յառնիցեն, կամ չուն իցին ուշ բանից խոստովանահօրն, պայմանաւ տալն է նոցա զարձակումն, և զայն՚ի զատկի ևեԹ և՚ ի վտանգի կենաց։ Այս առաւել եԹէ իցեն նոցա ծանր ինչ մեղք կասկածելի, պարտ է յայնժամ և առանց վտանգի կենաց արձակել զնոսա պայմանաւ։ Սփոռեր, ԿոպաԹոյ, Շ իլտեր և Ա՛աղոմԹԹէ օրէն իսկ համարին հաւանականաբար գԹէ յերկուս կամ յերիս ամիս միանգամ արձակել զայսպիսիս պայմանաւ, եԹէ չիցեն իսկ նոցա մեղք մահու չափ, որպէս զի ՚ի զրկեսցին ՚ի շնորհաց խորհրդոյն, Թերևս և ՚ի սրբարար շնորհաց՝ եԹէ իցեն ՚ի մահու

չաւի մեղս։ Այլ պիտելի է զի մանկանց այսպիսեաց, որոց երկբայելի է բանաւորութիւն, եթէ իցեն իսկ դարձադարձիւ ի մեղս ինչ յանձախեալ, պարտ է տալ պայմանաւ զարձակումն. զի յապաղել զայն վասն այնոցիկ է՝ որոց գոյ յոյս պատրաստագոյնս դառնալոյ անդրէն. այլ զայսպիսեաց չէ յուսալի վասն անկատար բանաւորութեանն։ Սակ զներդործութիւն զղջման այսպիսեաց պարտ է ըստ բաւականութեան նոցա պատշաճել. օրինակ իմն. Ոչխարաճ որ ունի սպեղծեր է, ունէ հասար կենդանը պուեր է, ինչն է ուս կենդանդ պահօղը, ունէ հասար արդասաւորեան պարարասպեր է, չքո սերեր զինդը։ Սակ դուն զինդը սերելու տեղը՝ երբեն դեմ ըրեր ես մեղբերովդ, ու զինդը ունէ ևողորեան պալ կուպէ կոր՝ Յիսուսին ունէ հասար ևափաճ արբանը հասար։ Հիմայ պէտ է որ զղջաս ընես. ինչ կըսես, կըզղջա՞ս երբեն դեմ ընելուդ հասար, ու իր պարարասպաճ արդասաւորեանը տեղը՝ ուս մեղբերովդ դիտուն արժանի ըլլալուդ հասար։ Զինչ չե՞ ըսածդ, կասես՝ զղջամ որ մեյմինակ չըրեա ևս այլն։

Այսպիսեաց և զապաշխարանս պարտ է ըստ կարի սահմանել թեթև, և վաղագոյն տալ նոցա կատարել. ապա թէ ոչ, մոռանան կամ չկատարեն։ Պարտ է մանաւանդ յորդորել զնոսա ի ջերմեռանդութիւն առ Տէրամայրն, ասել երկոցս ընդ առաւօտս զողջոյնն Հրեշտակային, Հանդերձ մաղթանօքն՝ Պահեա զնա Տայր երկնաւոր և հանապազօր ի ծանուանդ Ղեղց. և օր ըստ օրէ կատարել զվարդապետն։

40. Ո՛չ ընտրութիւն պայմանի կենաց ոչ է պարտ խոստովանահօր սահմանել ուժեք, այլ ըստ նշանաց առաջածային կոչման յորդորել զնա խոհեմաբար։ Այթէ կրօնաւորել կամիցի, պարտ է զգուշացուցանել զնա ի թուլացեալ կրօնից, և մի առ ի հաձել զկամն ծնողաց նորա խրատել զնա մնանելոյ յայնպիսի կրօնս. զի լաւ իցէ կալ մնալ նմա յաշխարհի բարեպաշտութեամբ՝ քան մտանել յայնպիսի կրօնս, և առ ի յապաշարել այլոց՝ վերջանալ ի պարտուց կոչմանն։ Սակ եթէ բարեկարգ և կանոնապահ իցէ կրօնն՝ ուր կամիցի կրօնաւորել, պարտ է քննել զառաջնութիւն նորա և զաւանականութիւն մտաց յուսումն, զկարօտութիւն ծնողաց նորա, և մանաւանդ զվիտաւորութիւն նորա,

ձի ինչ միանալ ընդ Աստուծոյ, ապաշխարել զանցեալ կեանս իւր՝ եթէ չինչ աստուածպաշտութեամբ կեցեալ, և խոյս տալ ի վտանգաց մեղաց։ Իսկ եթէ կրօնաւորել կամիցի առ ի զերծանել յաղքատ և յանշնան կենաց, առ ի կեալ դիւրութեամբ և փառօք, կամ առ ի հաձել ջնջողս իւր, պարտ է խափանել զնա. զի չէ կոչումն այն Աստուծոյ, և երկար նորա լինին չարաչար։ Իսկ եթէ բարի ինչ դիտաւորութիւն նորա, և չինչ խափան կոչման նորա, ծանր մեղք են՝ ոչ միայն խոստովանահօր՝ այլ և այլոց՝ խափանել զնա ի կոչմանէն։ Այլ օրէն է երբեմն յամեցուցանել զնա առ ի փորձել զհաստատութիւն մտաց, մանաւանդ զյեղյեղուկ մանկտւոյ, կամ զյորդորելոյ յայն ի ժամանակի հոգևորական կրթութեանց՝ ուր երբեմն յեռանդեան հոգւոյ առնին առաջադրութիւնք, որ ապա յեղկանալ եռանդեանն՝ լինին վտանգաւոր, չկարելով նոցա յարատևել ի կրօնի։

41. Եւ է պարտ զննջանել դիւրաւ ի կամ պատահեաց՝ որք քահանայանալ կամիցին, այլ քննել զհաստատութիւն մտաց նոցա և զկամաց, զբաւականութիւն յուսումն, և զուղիղ դիտաւորութիւն։ Ոչ ի քահանայից նոյն պարտք են, և աւելի իսկ քան զկրօնաւորաց, առանց զերծ գոլոյ ի վտանգաց աշխարհի. վասն որոյ պարտ է նոցա յառաջագոյն ունել հաստատութիւն ի բարեկրօն կեանս՝ հեռի ի խաղաց, ի զատարկութենէ և ի չար ընկերութեանց, գոլ աղօթասէր և ի սուրբ խորհուրդս յաձախաւոր։ Այսպէս եթէ ոչ, հասանէ նոցա վտանգ կորստեան. մանաւանդ եթէ ի նպաստ ընտանեացն, կամ առ ի հաձել զկամս նոցա կամիցին քահանայանալ։ Այսոցիկ իսկ ի գլ. Ե. 3. քանի ծանր մեղս գործեն ծնօղք, որք ստիպեն զորդիս ի քահանայութիւն կամ ի կրօնաւորութիւն։

42. Ընդհակառակն՝ որ կամիցին նուիրել Աստուծոյ զկուսութիւն իւրեանց, ոչ է պարտ թողուլ ի սկզբան անդ առնել նոցա ուխտ միանձնեաւոր՝ առանց փորձելոյ զհաստատութիւն նոցա յառաքինութեան և ի հոգևոր կեանս, և մանաւանդ յաղօթասիրութիւն. այլ ուխտել նոցա առժամանակեայ, որպէս տօնից ի տօնս։

Պատանիք՝ որոց պարտ իցէ ամուսնանալ, այսինքն

ոյք չկարեն ժուժկալել, և ոչ զայլ հնարս ժուժկալու-
թեան՝ ի վար արկանել, որպէս մեղանչեն ծնօղք նոցա՝
յարդելով առանց իրաւացի պատճառաց զամուսնու-
թիւն նոցա, նոյնպէս և ինքեանք մեղանչեն՝ եթէ՝ ի
նախատինս ընտանեացն, և առանց իրաւացի պատճա-
ռաց ընդդէմ կամաց ծնողացն ամուսնանայցեն, ըստ ա-
սացելոցս՝ ի գլ. ԺԸ. 6. վասն որոյ պարտ է խոստովա-
նահօր և ըստ այսոցիկ զգուշանալ։

ՑՕԴՈՒԱԾ Զ

Թէ ո՛րպէս պարտ իցէ խոստովանահօր գնալ ընդ հոգեսէրս։

43. Ոյք միանգամ յաձախեն՝ ի սուրբ խորհուրդն, պարտ է խոստովանահօր յորդորել զնոսա՝ ընդունել արձակումն յամենայն եօթնեկի. զի և՝ ի խոստովանել նոցա ներելի և եթէ մեզս, օրէն է արձակել զնոսա։ Իսկ եթէ չիցեն նոցա և ոչ ներելի մեղք յայտնիք, այլ թէ-
րութիւնք և եթէ մարդկօրէն՝ երկբայելիք՝ ի նիւթ արձակման, և կամ միշտ նոյն մեղք ներելիք, տես զայսցանէ որ ինչ ասացաքս՝ ի թիւ 9։

44. Ոչ օրէն խոստովանահօր արգելուլ այսպիսեաց չխոստովանել այլևս, այլ ցուցանել մանաւանդ ախորժ ընդ այն, և պատուիրել իսկ գնալ երբեմն առ այլս. եթէ միայն չիցէ խղճահար ոք, որում վտանգ իցէ աղ-
ուկելոյ խաղաղութեան հոգւոյն՝ ի չգիտելոյ այլոց զկա-
րի երկիւղածութիւնն նորա։ Ոչ է պարտ ցուցանել երբէք բաղձանս լինելոյ ումեք խոստովանահայր. և եթէ ախալեալ իսկ իցէ ուրուք՝ ի խոստովանահարց յառաջ-
նորդութիւն հոգւոյ նորա, պարտ է անբաւսիր առնել գնա. և մի՛ ընդունել զոք, որ առանց կարևոր պատճա-
ռի կամիցի փոխել զխոստովանահայր իւր, որպէս պա-
տուիրեն սուրբքն Ներսէս, սուրբ Սահակ, և սուրբն Կարոլոս Պորոմեան։ Այս չեն իսկ բաւական պատճառք չզգալ իւր՝ ի նա վստահութիւն, կամ զգալ խորշումն ինչ, զի դիւական փորձութիւնս համարի զայսոսիկ ընդունիլն Մերեզլիա. այլ եթէ չիցէ առաքինի և դի-
տուն, բաւական պատճառք են փոխելոյ։

Պարտ է խոստովանահօր զամենեցունց անխտիր ըզ-

խոստովանութեաց ունել հոգ և խնամ: Այլեն ապաքէն՝ որ առաւելագոյն քան զայլս կարօտ էին խնամոյ. առ կայն այլ է օգնել այնպիսեաց, և այլ՝ նոսա զամենայն խնամս ժողովել՝ անփոյթ զայլս առնելով, կամ համառօտելով զխոստովանութիւն սոցա, և զնոցայն երկայնաձգելով: Ա՛ի տացէ Հրամանն օրհնութեաց զնալ Թափառական յայցելութիւն եկեղեցեաց, և մի յամել յեկեղեցիս, այլ փութալ՝ի տուն, հնազանդել ծնողաց, և պարապել անդ՝ի գործ: Այսպէս զընտանութենէ նոցա ընդ խոստովանողիս ասացաք՝ի տոմս՝ի ԺԱ. յօդուածի:

ՑՕԴՈՒԱԾ Է

Թէ ո՞րպէս պարտ էգ ընդունել զխոստովանութիւն խլից և համբոյց:

45. Եթէ համրն էգ խուլ միանգամայն, որպէս է իսկ սովորաբար, պարտ է ածել զնա առանձին ուրեք՝ի խոստովանութիւն, առ՝ի զուշակել նշանօք ըստ կարի զմեզս նորա և զզջումն: Վասն էգի կալոյ խոստովանողն հայրն ուսանել յառաջագոյն յընտանեաց նորա զեղանակ նշանացն խօսից նորա, և գիտել թէ ունիցի ինչ ախտ: Եւ ապա՝ի հասու լինել մեզաց ինչ նորա և զզջման, պարտի արձակել զնա. այլ եթէ՝ի նշանաց անտի չկարէցէ իմանալ հաւաստեաւ զպատրաստութիւն նորա, պայմանաւ պարտի տալ զարձակումն:

46. Իսկ եթէ համրն գիտիցէ դպրութիւն, պարտ է նմա զրով խոստովանել ըստ ասացելոցս՝ի գլ. ԺԶ. 36. զի ոչ պարտականն է իմիք, պարտականն է և կարելոյ առ՝ի նոսին: Այլ զայսմանէ տես որ ինչ ասացաք՝ի գլ. ԺԶ. թիւ 35: Եւ զարձեալ անդ՝ի թիւ 155 ասացաք որ ինչ պարտ իցէ առնել խոստովանողն հօր, եթէ խուլ ոք գայցէ՝ի խոստովանութիւն, և՝ի տարաձայն պատահանաց նորա ծանիցի խլութիւն նորա:

ՅՕԴՈՒԱԾ Ը

*Թէ ո՛րպէս պարտ եղէ խոստովանահօր վարել ընդ հիւանդս
՚ի հոգեվարս։*

47. Յընդունել զխոստովանութիւն հիւանդացդ ՚ի հոգեվարս, ոչ է պարտ խոստովանահօր ձգդիլ հարցանել զթիւ և զհանգամանս մեղացդ. մանաւանդ յորժամ սպասէ քահանայն առ ՚ի տալ զթոշակ, և բժիշկին վտանգ սպասել զայն։ Օ՜ի լաւ է յայնժամ ՚ի զղջումն և ՚ի պատրաստութիւն ապաշխարողին գումն գործել՝ քան յամբողջութիւն խոստովանութեանն, պատուիրել հիւանդին ընդ զթերին՝ եթէ տայէ նմա Տէր կեանս. նոյնպէս և զապաշխարանն թեթև ինչ սահմանել, զնոյն պատուէր երկրորդելով՝ դալ յառաջանալն առ ինքն վասն ընդունելոյ ապաշխարանս ըստ մեղացն։ Ի հանապազ՝ որ յերկուսն իցէն, և ՚ի վիրաւորացդ առ որս հարկ է կալ այլոց առ ընթեր, շատ է ընդունել զխոստովանութիւն մեղաց հանրաբար, և զներելն ինչ մեղաց որիշ՝ որպէս զառատ ինչ առելոյ նոցա կամ զբան ինչ անհամբերութեան, առաջադրութեամբ խոստովանելոյ անդրէն յառաջանալն զամենայն։ Այլ ըստ պարտս հաստուցման պարտ է խոստովանահօր տալ նոցա կատարել, զի չէ բաւական պարտ ՚ի վերայ գնել զայն ժառանգաց՝ առ ընդունելոյ զարձակումն։

48. Եթէ երբեք տեսանիցէ խոստովանահայրն զի ժամ է պաշտելոյ հիւանդին զվերջին օծումն, և հիւանդն չկամեսցի, պարտի ցուցանել նմա զմեծամեծ օգուտս խորհրդոյն, այսինքն զի տայ զօրութիւն յոյժ հոգւոյն՝ զդէմ ունելոյ փորձութեանց ՚ի վերջին յայնմ ձակատամարտի, զի բաց ՚ի ներելն մեղաց՝ քաւէ և զմահուընէն մեղս զանցեալս և զմոռացեալս. և զի դարձեալ ընդոհէ և զառողջութիւն մարմնոյ՝ եթէ իցէ ՚ի վիրութիւն հոգւոյ օգտակար. այլ ոչ յորժամ ոչ ևս իցէ յոյս բժշկութեան հիւանդին, զի օրինէ ևեթ բընութեան և ոչ թէ սքանչելագործէ։ Եթէ այսու ամենայնիւ կամիցի հիւանդն ընդունել զայն, յոյժ հանդուգն և մահուընէ մեղանչել նորա՝ զկնի ընդդիմ

սիրոյ անձին, զրկելով զանձն'ի հզօր օգնականութենէ անտի'ի կարևոր պահուն, ըստ ասացելոյս'ի գլ. ԺԲ. 12։ Իսկ եթէ վիշտ մեծ լինի հիւանդին ընդունել զպատուական հաղորդութիւնն իբրև'ի Թոշակ, օրէն է քահանային՝ ըստ հաւանական կարծեաց՝ լռել'ի հաղորդելն զևս Թոշակին, ասելով զսովորական ձևն հաղորդութեան՝ առանց յաւելուածոյ Թոշակին։ Տես և'ի ստորև'ի յաւելուածն Բ. յօդ. Դ։

ՅՕԴՈՒԱԾ Թ

Թէ ինպէս պարտ էցէ վարել խոստովանահօր ընդ դատապարտեալս'ի մահ։

49. Պարտ է խոստովանահօր ամենայն սիրով գնալ ընդ հէք մահապարտս։ Յառաջնումն այցելութեան ջանասցի վերին արել գնա այնու, զի ուր յամենայն մարդկային սիրտս զրկեալ գտանի նա՝ Աստուած ևեթ'ի ձեռն պաշտօնեի իւրոյ գայ առ'ի սիրտս գնա. և զի ամենեցուն կայ միայ մեռանել, և գնալ ընդ հուպ'ի յաւիտենականութիւն անզրաւական. զի սակաւ իմն է եղանակ մահուն, այլ որ զհեան նորին գայ՝ այն է մեծ։ Օ՜ի փոյթ է մեռանել յանկողնի կամ'ի նահատակութեան կամ'ի ժանիս գազանաց, շատ է հասանել յետ այնորիկ յաւիտենական երանութեան. և եթէ օգնէ առ այս բանսամահ մեռանել, ցանկալի իցէ այն քան զօրհաս ծերութեան։ Յաւելցէ ապա, զի եթէ չէր նման մահն այն'ի փրկութիւն, էներէր Աստուած պատուապարտել նման չայն, կարող էր կանխել առաքել նման հիւանդութիւն և մահ բնական։ Յորդորեսցէ ապա գնա ընդունել զայն'ի ձեռանէ Տեառն, վասն սիրոյն Քրիստոսի՝ որ'ի փրկութիւն նորին մեռաւ'ի խաչի. և ապահով արասցէ գնա, յընդունելն զայն յօժարութեամբ՝ հասանել փրկութեան։ Յորդորեսցէ ապա'ի խոստովանութիւն, և հարցցէ նմա՝ թէ ունի ինչ ատելութիւն ընդ ումեք. և զայլ հարցուածս ըստ մահապարտութեան յանցանացն պատշաճեալ. և ընկալեալ զխոստովանութիւն նորա, շարժեսցէ գնա'ի զղջումն, պոհանալ զՏեառն երկայնմտութենէ'ի վերայ մեզաց

իւրոց, ապաւինել՝ի Տիրամայրն : և խնդրել՝ի նմանէ մահ բարի : Եւ ապա արձակեաւ զնա, հաղորդեսցէ սուրբ խորհրդոյն : Եւ յելանել նորա՝ի բանտէն գնալ՝ի տեղն պատուհասին, խրախուսեսցէ զնա ասելով. Օ՜ դուստր ա՛ծ, որդեակ, ելանել ընդ Քրիստոսէ՝ի Գողգոթա՝ : Եւ՝ի հասանելն անդր, միւսանգամ ընկալեաւ՝է նմանէ զխոստովանութիւն, և արձակեաւ զնա, յաւելցէ տալ նմա զներողութիւն, և ասասցէ. Որդեակ ընդ՝է ընդիմա Աստուծոյ կաս. հաղա՛ է ընդ ձեզ Տէր, և պատրաստեալ ձեզ արքայութիւն. ինձ ձեզ անդ աղօթք հրեշտակ և սուրբք ամենայն. Տահակիոյ ընդ Քրիստոսէ, որ վասն սիրոյ ձո պահ յանձն եաս, և ասա ընդ ես. Սիրեմ զձեզ Տէր, և սիրեմ՝է վէր ձան պահեցայն ինձ, և կամիմ մեռանել ըստ հրամանի ձոմ. ընդոստնիմ պահիս պայս՝է ձաւուրնիւն մեղայ ինոյ. յոյսամ պէ ի՛ողջեր ինձ պէղս եմ. դարձեալ վերստին պղջամ ընդ մեղս եմ, որովհ ի՛շնամանեցի պձեզ. յանկամ հասանել աս ձեզ, անկանել համբուրել պոտս ձո, և սիրել պձեզ՝է յաւիտեան : Եւ՝ի ժամ կատարման պատուհասին, թելադրեսցէ նմա դարձեալ զաղօթս զայս. Ա՛եղայ ձեզ Տէր, ընդունայնեցի պձեզ մեղօք ինովք, արդ պղջամ, արդ սիրեմ պձեզ ըստ ի՛ողորմութեան, կոչեա պինս աս ձեզ. սուրբ ապուաձամայր, օգնեա ինձ. Տէր ես Յիսուս, ՚է չեաս ձո յանձն առնեմ պհոգի եմ :

50. Իսկ եթէ մահապարտն յամառեալ և չկամիցի խոստովանել, օգնեսցէ նմա խոստովանահայրն աղօթիւք, տացէ և այլոց աղօթել վասն նորա, մանաւանդ միաբանական ուխտիւ՝ պատարագօք և այլն : Յուցցէ մահապարտին, զի եթէ խոստովանեսցի և եթէ ոչ, սակայն հասանէ նմա մեռանել : Ասասցէ նմա բանս ընդդէմ յուսահատութեան, յուցանելով զի միշտ խիստ պատրաստ է Աստուած տալոյ թողութիւն քնաւից խիստ ոչխիր եղեռնութեանց : Հարցցէ նմա՝ զի թերևս առ ատելութեան ընդ ումեք չկամի խոստովանել. և մի՛ ստիպեսցէ զնա՝ի սկզբան անդ՝ի խոստովանութիւն, այլ խօսեսցի զողորմութենէն Աստուծոյ, զփառաց արքայութեան, զարհաւրոց դժոխոց, զհասարակաց դատաստանէ՝ի մահ. պատմեսցէ նմա զանցեալ մեղաւորաց զտոկալն մահուընս, և զմահապարտից ամենից սրբութեամբ և զուարթութեամբ մեռանել վասն մահկնց Քրիստոսի լինելոյ : Եւ թողեալ զնա առ վայր մի

առանձինն, զարձցի ապա ազգ առնել նման՝ զի մերձե-
նայ ժամ մահու, զի՛ ի կամն նորա է ընտրել զաւրքայու-
թիւն կամ զդժոխս, զի զղջասցի յետ մահուն՝ այլ ոչ
և կարասցէ առնել ապեւիչն ձար։

Այեմ և ոչ այսուիկ շարժեսցի նա՛ ի զեղջ, ազօ-
թեսցէ խոստովանահայրն ընդ որս անդն կան՝ զլինել ա-
նիա Տիրամօրն, և՛ ի ծունր իջեալ առաջի մահապար-
տին՝ աղաչեսցէ զնա խնայել անձին, և մի՛ մատնել
զանձն՛ ի կորուստ։ Այլ յաւելցէ ասել՝ զի քան զաւե-
նայն պատիժ պատուհասի դժոխոց զառնադոյն լինի
նմա այն, զի կոչեցեալ՛ ի Տեառնէ և ընկալեալ ժա-
մանակ զղաստուածեան՝ հեատե ընդդէմ շնորհացն Ա-
ստուծոյ։ Այլ եթէ զգաստացեալ յայնմ յետին պա-
հու կամիցի խոստովանել, խնդրեսցէ խոստովանահայրն
՛ի պաշտօնէից արդարութեան՝ յամել վայրիկ մի. զի
պատուին իսկ պաշտօնեայք շնորհել զայն չեւ խոստով-
նելոյ։ Իսկ եթէ յառաջադոյն խոստովանեալ իցէ, և
կամիցի զարձեալ ընդունել արձակումն, տացէ նմա
խոստովանահայրն ասել. Խոստովանիմ զամենայն ըզ-
մեզս իմ հանդերձ խոստովանելովքս յառաջադոյն, և
ղղջամ՛ ի բոլոր սրտէ վասն սիրոյն Աստուծոյ. և արձա-
կեսցէ զնա։

ՅՕԴՈՒԱԾ Ժ

Թէ որպէս պարտ իցէ վարել խոստովանահօր ընդ
տագնապեալս՛ ի դիւաց։

51. Այն՝ որք արհաւրօք հոգւոյ և խոշտանգանօք
մարմնոյ տագնապին՛ ի դիւաց. զայնպիսիս պարտ է յոր-
դորել յաղօթս և՛ ի համբերութիւն, և սփոփել զնո-
սա հնազանդութեամբ կամացն Աստուծոյ։ Այլ թե-
րահաւատութեամբ ցնորս և արդասիս հիւանդութեան
համարիցի խոստովանահայրն զայս ամենայն դիւական
յարձակմունս. զի չէ մարթ ուրանալ զդոյութիւն դի-
ւահարացն՛ ի քրիստոնէայս իսկ. ապա թէ ոչ, ջուայլ
Քրիստոս՛ ի նշանակ Հրէից հաւատացելոյ՝ հանել
յանուն իւր զդեւս. “Արուք այսոքիկ, որ հաւատանն,
երեքեան զհետ այսոցիկ. յանուն իմ դեւս հանցեն,”

Եւ զարձեալ զի եկեղեցի Հաստատեաց վասն յարձակմանց այսոցիկ զիւականաց զկանոն երդմնեցուցանելոյ, որ ըստ յայտարարութեան տրիդենտեան ժողովոյ՝ ի սկզբանէ հետէ աւանդեալ պահի յեկեղեցւոջ։ Ընդունայն իսկ էր այնուհետեւ կարգ երդմնեցուցչաց, որոց աւանդի իշխանութիւն՝ ի վերայ այսահարաց, զոր և որպէս մի յեօթանեցունց կարգաց կալաւ միշտ եկեղեցի Աստուծոյ, ըստ յայտարարութեան նոյն ժողովոյ։ Սակայն կասկածել զղիւահարաց օրէն է և խոհեմութիւն, զի յառաւելագոյնս՝ ինոցանէ խաբէութիւնք են կամ ցնորք երեւակայութեան կամ լուանոտութիւն, մանաւանդ՝ ի կանայս։

52. Զի զնոստովանահարց միտս առաւելապէս ձերբնեն այնոքիկ, որք պիղծ տեսլեամբք և շարժմամբք և շշաւիմամբք իսկ տանջին՝ ի դիւէ. որ ոչ միայն զարթուցանէ՝ ի նոսա զցանկութիւն, այլ և յայր կամ՝ ի կին կերպարանեալ՝ խառնակի ընդ նոսա, ուստի յառաջգայ և զանազանութիւն՝ ի վերայ կամ՝ ի ներքոյ անկեալ դիւաց։ Ոմանք չընդունին զայս, այլ բազումք յերևելի վարպետաց և աստուածաբանից հաստատեն, ընդ որս և սուրբն (Գոտեինոս՝ ի գիրս «Հաղագս քին Աստուծոյ (գէր՛ ԺԵ. գլ. ԻԳ.) ասէ. «Գիտեմք զի և նոյն Աշմարտասպատում տառք վկայեն՝ Թէ հրեշտակք այնպիսի մարմնովք երևեցան մարդկան, մինչ զի ոչ միայն տեսանելի գոլ՝ այլ և ընդունելի։ Եւ զի կայ զբոյդ հաշակեալ, և բազումք ևս հաստատեն իբրու անձամբ զփորձ առեալ, կամ լուեալ յայլոց արժանահաւատ փորձառուաց, Թէ Սիլուանք՝ զորս ռամիկն քաջ կոչէ, յոլովակի քուռն արարեալ իցեն՝ ի կանայս, և Թէ դէք ամանք ստէպ յայն գարշութիւն մնաբերիցեն. և զի այնպիսիք ամանք և բազումք են վկայօղք իրացդ, մինչ զի՝ ի ժխտութիւն համարիցի դիմախօսել ինչ»։ Սա այսմ մարթ է դիւաց զմեռելոյ իսկ առնուլ զմարմին, կամ՝ ի տարերաց առնացի կամ կանացի կազմակերպել մարմին զինեալ, և նոքաւ ընդ արս կամ ընդ կանայս անկանել։ Եւ որպէս սուրբ Աստուածային, սուրբն Պռնաւենթուրա, Սկոտ և Աքուինացին և այլք բազումք հաստատեն, մարթ իսկ է դիւին զսերմն այրական առեալ յայլմէ ումեքէ յերազախոտձութեան, ար-

կանել՝ի սալմնաբոյն կնոջ, և զաւակ իսկ անտի ծնու-
ցանել, ոչ դիւական ինչ՝ այլ մարդկային, որպէս այնորիկ՝
յորմէ սերմն այն իցէ առեալ։ Եթէ արդարև մնթե-
ւոյ աստուածադիր օրինաց ներել զայսպիսի անկար-
գութիւն, իմաստնոց խոհեմութեամբ զայն դատել. այլ խըն-
դիր մեր աստ զայնմանէ է, թէ կարեցէ դևն ըստ թոյլ
տուելեանն Աստուծոյ շարժել զձեռն ուրուք ականայ
՝ի շշափուկն առ՝ի վիշտանալոյ։ Այլն Աբաւիննա դո-
ւինիկեան կարելի համարի զայս. զի եթէ մարդ իցէ
դիւին շարժել բովանդակ զմարմին ուրուք, որպէս ըզ-
Ալիմանի մոգին յօդս իսկ՝ի ձեռն դիւին գիտեմք ամբար-
ձեալ, ևս առաւել կարեցէ նա շարժել զձեռն մարդոյ
Եւ դարձեալ եթէ կարէ նա շարժել զլեզու ուրուք՝ի
խօսել ականջ զանարժանս և՝ի հայհոյել իսկ զԱ-
տուած, ընդէր չկարեցէ և զձեռնն նորա շարժել՝ի պըղ-
ծագործութիւն։ Ո այս այսպէս համարի և Աարդինալ
Վեներուչէի, և ասէ. “Ալ կայեալ է յայլ և այլ փոր-
ձոյ՝ տիրանալ դիւին՝ի մանն ինչ մարդկային մարմնոյ,
որպէս յաչս կամ՝ի լեզու կամ յառականս, և տալ նմա
ցուխաբանել հակառակ մտացն հաւանութեան. աստի
խենդչն այն լուձ անկեալ երբեմն՝ի սիրտ՝ մերկանալոյ
լուսնոյն և գործելոյ զանասելիս ,,։

63. Այլ առաւել ևս հաստատէ զայս սուրբ Ագուս-
տինոսին, ուր ասէ. “Դևն իւրով զօրութեամբ, եթէ
ոչ սանձահարեսցի Աստուծոյ, կարէ հարկաւորել զոք
՝ի գործ ըստ ազգի իւրում մեղանչական, այլ չկարէ
հարկաւորել՝ի մեղս։ Եւ այս յայտ անտի է, զի բա-
նիւն ևեթ մարդ հակառակ կայ մեղաց. իսկ դևն կա-
րող է խափանել՝ի սպառ զբանաւորութիւն յուզմամբ
երևակայութեան և զգայութեանց, որպէս՝ի դիւա-
հարեալս։ Այլ յայնժամ՝ի խափանել բանին՝ որ ինչ
և առնիցէ մարդ, չհամարի նմա՝ի մեղս ,,։ Այս ուրեմն
ըստ սրբոյ Ագուստինոսի, ՝ի թողացուցանելն Աստուծոյ,
կարող է դևն բառնալ զամենայն ազատութիւն մարդոյ
առ՝ի կալ հակառակ մեղաց որպէս զդիւահարացն, և
շարժել զնա նիւթապէս՝ի գործ մեղանչական, առանց
մեղանչելոյ նորա տեսակապէս։

Այդ եթէ երբեք այսպիսի ոք իսկապէս բռնաբա-
րեալ՝ի դիւէն մատիցէ՝ի խոստովանութիւն, մինչև

խոստովանահօրն կարող լինելոյ դատել՝ զի մեղ ինչ չինք
անդ ապաշխարողին, յորդորեսցէ զնա յաղօթս լինել
ապաստան, կարգալ զանուն Յիսուսի և զԱրիամու,
հրաժարել ըստ կարի յամենայն զբայական հաձոյից,
յաձախել՝ի սուրբ խորհուրդս, բողոքել ստէպ ընդ-
դէմ մեղաց և ասել՝ Լաւ իցէ ինձ մեռանել քան հա-
ւանել հրապուրանաց դիւին. և դարձեալ խաչակնքել
զանձն ստէպ, կրել յանձին զնշան սրբոյ խաչին և զնըշ-
խարս սրբոց, սրսկել ջուր օրհնեալ զտեղիս կասն և զմահ-
ճօք, դրոշմել նովաւ խաչակնիք՝ի ձակատուն, երդմնե-
ցուցանել իւրովի իսկ զդևն և ասել. Յանուն Յիսուսի
Քրիստոսի պատուիրեմ դեղ, ըստ սպասուց, եկ յինէն և մի
պանչեր զիս: Պարտ է դարձեալ յորդորել զնա՝ի խոս-
նարհութիւն և՝ի զործս խոնարհութեան. զի յաձախա-
վանն հպարտութեան Թողացուցանէ Աստուած դիւին
նեղել զինքնահաւանս:

54. Աճապարն դժուարութիւն վասն այնոցիկ է,
որք յօժարինն՝ի փոխմանութիւնս այսպիսիս սատանայի.
զի աստի զօրացեալ տիրէ դևն՝ի վերայ կամաց նոցա,
և այսպէս տկարանան նոքա զդէմ ունել նմա առանց
մեծի չնորհաց՝ զոր զժուարաւ չնորհէ նոցա Աստուած:
Ապաչն և վասն այսպիսեացդ չէ պարտ վհատել խոստո-
վանահօր, այլ քաջալերել զնոսա՝ յուցանելով զի ոչ է
մարթ ուժով մեզանչել ակամայ, և ուր չկոչեն կամք,
չեն և մեղք: Օրէն է նմա և երդմնեցուցանել առան-
ձինն զդևն, և ասել. Ա՛լ այսուհետև չար յապստամբասպեղծ հոգ-
դոյս, ես պատուիրեմ դեղ որպէս պաշտօնեայ Քրիստոսի Աս-
տուծոյ: Հարցցէ և զապաշխարողն թէ կայցէ նորա դաշն
ինչ ընդ դիւին, թէ կայցէ մեզսցեալ ինչ ընդդէմ հա-
ւատոց. յինչ կերպարանս տեսանիցէ զդևն, ի մարդմ
թէ՝ի կնոջ. զի յայնժամ բաց՝ի մեզաց բղջախոհու-
թեան և անհաւատութեան, խառնի՝ինքերքս և պոռնը-
կութիւն կամ արուապիտութիւն, մծղնեութիւն կամ
չնութիւն կամ սեղանակապտութիւն ըղձական. յա-
ւելցէ հարցանել և զժամանակ և զտեղի դիւական ե-
րևմանցն: Յուցցէ նմա զծանրութիւն մեզացն, և սահ-
մանեսցէ զվերապացեալ դեղս. յապաղեսցէ զարձա-
կումն, և պատուիրեսցէ դարձ առնել ստէպ՝ի խոստո-
վանութիւն՝ առ՝ի փորձել զհաստատութիւն նորա, զի

ասակաւք յայսպիսեաց ասաւ յարտաւէն յառաջադրութեան։

ՅՕԴՈՒՍԱԾ ԺԱ.

Թէ ոքպէս պարտ է խոստովանահօր վարել ընդ կանայս։

55. Օ գուշութեան մեծի պէտք են յընդունել զխոստովանութիւն կանանց և օրհոդաց։ Կանն է սահմանեալ յառաքելական աթոռոյ յամին 1620, զխոստովանութիւն կանանց չընդունել առանց հարկի ոչ յառաջ քան զարշալոյս և ոչ յետ մթից արեւու։ Պարտ է խստութեամբ քան ներողութեամբ վարել ընդ մանկամարդս. մի թողուլ նոցա գալ առաջի խոստովանութեանն խօսելոյ աղագաւ կամ՝ի համբոյր աջոյ։ Մի՛ ի խոստովանել նոցա յայտ արասցէ խոստովանահայրն ճանաչել զնոսա, զի մի գուցէ լռեսցեն ինչ՝ի մեզաց առ ամօթոյ։ Մի դիտեսցէ զնոսա յերանել նոցա՝ի խոստովանարանէն, և մի արտաքոյ խոստովանարանի զկոյս առցէ խօսել ընդ նոսա յեկեղեցւոջ. զգուշացի յամենայն ընտանութենէ, մի ընկալցի նաւթս՝ի նոցանէ, մի և՝ի տուն նոցա գնասցի առանց հարկի հիւանդութեան. և՝ի գնալն զամենայն զգուշութիւն՝ի կիր արկցէ, բացաւ զրամբ կալ՝ի սենեկի հիւանդին, և զդէմն՝ի բաց դարձուցեալ ըստ կարի։ Յառաջելոցն զգուշութեան պէտք են՝ի հոգեհաճ կանանուց. զի հնարք են դիւին զառաքինութիւն առնուլ պատճառս ածելոյ զնոսա յընտանութիւն, և ապա զսէր առաքինութեան՝ի սէր անձին նոցա փոխելոյ։ Ոմն որոյ ասէ սուրբն Օգոստինոս. "Պարտ է լուրջ և՝ հաճառօտ ընդ այնպիսի կանանցին խօսել, և մի վասն առաջելոցն սրբութեան նոցա նուազ զգուշանալ. զի սրբացուցիչն առաւել և յինքեանս ձգեն զոգիս,,։ Օ՝նոյն և տուրբ Ագուինացին ասէ, և յաւելու՝ զի՝ի սկզբան անդ չզգան այնպիսիքն զվտանգն, զի ոչ խոկ և խոկ ձգեն զնն զգեղեցիկ նեաս իւր, այլ մեղմօրէն զսիրտս նոցա խոցէ, և զկուր սիրոյ բոլբոջէ՝ի նոսա. որպէս զի ոչ հրեշտակք անմարմինք Թուէին միմեանց, զգան այնուհետև զի մարմնաւորք էին. և զաչս իրերաց քաղցր

հայելիւք, և զմիտս սիրալիր բանիւք խօսուտեն. և հո-
գեառն նոցա ընպանուելիւն ի մարմնասոր։ Ի դէպ ե-
կեալ նոցա առաքելական բանին։ «Կսեաւ հոգւով, և
արդ մարմնով վախճանիք»։

56. Ո՛ի լսել երբեք խոստովանահօր Թողուլ զարս
ապաշխարող՝ վասն ընդունելոյ զխոստովանուԹիւն կա-
նանց։ Զգրմռելն և տեսանել զոմանս ի խոստովանա-
հարց՝ զի ժամ ձիգս ի լուր բարեպաշտիկ մանկամարդաց
պարապեն, և ի դիմել առ նոսա կանամբեաց և արամ-
բեաց տառապելոց՝ որոց հաղիւ կարացեալ իցէ զվաս-
տակս իւրեանց կամ զտուն Թողուլ և գալ ի խոստո-
վանուԹիւն, զնոսա առ այլս արձակեն ի բաց։ Նարի
և առաջնորդել հոգեսիրաց ի ձանապարհ կատարելու-
Թեան, և խօսեացուք խակ զայսմանէ յառաջիկայս. այլ
խոստովանահայրն, որ վասն Աստուծոյ ևԹԷ կատարէ
զիւր պաշտօն, երիցագոյն խնամ ունի հոգւոց կարօտե-
լոց քան բարեպաշտից. զի ոչ պակասէ ժամանակ օգ-
նելոյ սոցա, այլ կարօտեալքն այնոքիկ ի բաց արձա-
կեալ՝ զամիսս և զամս խակ Թերևս հեռի կան Թշուա-
ռաբար ի տուրբ խորհրդոց։

ՑԱԻԵԼՈՒԱԾ Ա.

ՑԱՂԱԳՍ ԱՌԱՋՆՈՐԴԵԼՈՑ ՀՈԳԵՍԻՐԱՑ Ի ՀԱՆԱՊԱՐՀ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ

---

1. Պատգամն Աստուծոյ՝ որ եղև ի վերայ Երեմիայի մարգարէի. «Հա կացուցի զքեզ այսօր ի վերայ ազգաց և թագաւորութեանց, խլել և բրել, կորուսանել և յատակել, շինել և տնկել». զնոյն և ի վերայ խոստովանահարց է խմանալ. որոց պարտ է ոչ միայն խլել զախտս և զյոռութիւնս ի հոգւոց՝ այլ և տնկել ի նոսա զառաքինութիւնս։ Պարծ է աստուածահաճոյ պատրաստել ի կրթութիւն հոգւոց բարեպաշտից, և զհաստատունս Քրիստոսի զարդարել առաքինութեամբք. զի առաւել արժէ առաջի Աստուծոյ մի ի հոգւոց կատարելոց քան զհազարս անկատարից։ Այն որոյ պարտ է խոստովանահօր գուն գործել ածելոյ ի կատարելութիւն զայնոսիկ՝ որ ի բաց կան ի ծանուցից մեղաց, և վառել զնոսա ի սէր Աստուծոյ՝ խնայամուտ առնելով զնոսա անհուն բարութեան նորա և կատարելութեան. ցուցանել նոցա զի Աստուած և արարածք ամենայն ի միասին՝ չէն ինչ լաւագոյն քան զԱստուած միայն, զի ամենայն որ ինչ բարութիւն է յարարածս՝ վերազանցապէս է յԱստուած, և զի չէ երանագոյն որ զարարածս ամենայն ժառանգէ ընդ Աստուծոյ՝ քան զայն որ զԱստուած միայն ժառանգէ. և զարձեալ ցուցանել նոցա զՔրիստոսի զանբաւ սէրն, որով մատնեաց զանձն իւր վասն մեր և մեռաւ ի խաչափայտին, և յորդորել զնոսա ի չնորհակալութիւն և ի սէր փոխադարձ։ Ցուցանել և նոցա ի հակառակէն զվտանգ հոգւոց, որք հրաժարեալ ի Տեառնէ ի կատարելութիւն՝ ատունգանեն նմա։

Ի քառեակ մասունս բովանդակի գլխաւորապէս առաջնորդութիւն հոգւոց ի կատարելութիւն. որ են մտածական աղօթք, խմանալի հայեցողութիւն, ձըգնութիւնք, և յաճախել ի սուրբ խորհուրդս։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Յաղագս մտածական աղօթից։

2. Պարտ է խոստովանահօր՝ ի տեսանել զսոսկումն ուրուք՝ ի մահուշեան մեղաց և զփափաք յառաջադիմութեան յաստուածասիրութիւն, խրատել զնա՝ ի մտածական աղօթս, այսինքն՝ ի խոկումն յաւիտենական դժնարտութեանց և բարութեանն Աստուծոյ։ Օ՜ի թէպէտ և մտածութիւն չէ ինչ հարկաւոր՝ ի փրկութիւն որպէս զաղօթս, սակայն նոյն իսկ կարևորութիւն աղօթից հարկաւոր կացուցանէ և զմտածութիւն. զի որ ոչն մտածէ՝ չձանաչէ զպէտս հոգւոյ իւրոյ, զվտանգն՝ յորում կայ, և զկարօտութիւն աղօթելոյ։ Ընդ այլ կրթութիւնս հոգևորս կարէն կալ մեզք՝ ի միասին. այլ մեզք և աղօթք չկարեն կալ՝ ի միասին. զի կամ զաղօթս և կամ զմեզս թողու՝ ի բաց մեզաւորն։ „Որ յաւրսաւէն յաղօթս, ասէ սրբոյն Յերեզիա, որչափ և մեզս հանցէ զևն՝ ի ձակատ, հաւասատի ունիմ՝ զի յետոյ ապա ածցէ զնա տէր՝ ի նաւահանգիստն փրկութեան„։ Ա՜ան որոյ առաջին հնարիւք ջանայ զևն խափանել զաղօթս, որպէս նոյն սրբոյն ասէ. „Զինտե զևն, զի որ յարատևէն յաղօթս՝ ոչ կա՛ս է իւր„։ Ընդ դարձեալ աղօթիւք արծարծանի աստուածասիրութիւն՝ ի սիրտս մեր, որպէս առաջի կայ մեզ ցուցանել զայս՝ ի յաւելուածն Դ. վասն քահանայից։

3. Ա՜ան որոյ պարտ է յորդորել զնոսա յաղօթս, սահմանելով նոցա հանապազօր կէս ժամ աղօթից, և տակաւ ըստ առեալ՝ ի նոսա եռանդեան՝ յաւելուլ զայն։ Ընդ ապաշխարողն գժուարաւ գտցէ ժամ և տեղի առանձնութեան, պարտ է խրատել զնա՝ զի գէթ յառաւօտուն և յերեկոյի՝ ի յառնելն՝ ի քնոյ և՝ ի քուն մտանել և՝ ի պարապիլն՝ ի գործ՝ զիւրս առ Աստուած ամբաղձալ, և՝ ի մահ իւր խորհելոյն՝ որ օգտակարապէս նորամտիցն է՝ ի ձանապարհ հոգևոր, կամ՝ ի չարչարանս Քրիստոսի՝ որ ամենեցուն իսկ է պիտանի և կարևոր։ Ընդ ապաշխարողն գիտիցէ ընդհատնուլ, լաւ կէ նմա՝ ի կիր առնուլ հոգևոր գրեան՝ գէթ նախ քան

զաղօթս, որպէս առնէր սրբուհին Թերեզիա. ընտրել ի գրոց՝ որ առաւել ազդեն ի սիրտ իւր, և ուր զգայէ աղդումն՝ զկայ առնուլ ի ներդործութիւնս յաղօթս, և յառաջադրութիւնս։ Ներդործութիւնս առեմ խոնարհութեան, զոհութեան, հաւատոյ, յուսոյ, և մանաւանդ զղջման և սիրոյ առ Աստուած, նուիրելոյն զանձն բոլորովին և ի կամ նորա լինել ապաստան։ Աչեմ և յաղօնս, զի աղօթիւք ամենայն բարիք յաջողին ի մեզ. և որպէս առաքեն Գրոտինոս ասէ, սովոր է Աստուած զամենայն շնորհս իւր, և մանաւանդ զյարատեւութեան, առ ի ձեռն աղօթից։ Վասիտոս հրամայէ՝ Անդրեյե առնոտոյո. ապա որ ոչն խնդրէ, չառնու. ապա որ կամի փրկութեան հասանել, պարտի աղօթել, և միշտ աղօթել, և մանաւանդ վասն երկուց այսոցիկ աղօթել, վասն յարատեւութեան և վասն աստուածսիրութեան։ Նա չիք դիպողագոյն ժամանակ աղօթելոյ քան ի ժամ մտածութեան. և որպէս զժուարաւ աղօթէ որ ոչն մտածէ, այսպէս և զժուարաւ յարատեւէ ի շնորհս Աստուծոյ որ ոչն աղօթէ։ Աչեմ իսկ զարձեալ յառաջադրութիւնս. զի արդասիք աղօթից են առաջադրութիւնք, և որ ինչ որ ընդունի լայս և շնորհս ի Տեառնէ յաղօթս՝ առաջադրութեամբ զոյնասիկ առնէ պտղաբերս։ Վասն որոյ խրատէ սուրբ Վալեզացին, ի կատարած աղօթից առնել միշտ առաջադրութիւն ինչ, որպէս խորշելոյ ի վերստանգաւոր և ի սովորական թերութեանց, և կրթելոյ զանձն յառաքինութիւն ինչ՝ յորում առաւել որ իցէ տըկար, որպէս միոյ մէզ առել ի յառելուածն դ։

4. Պարտ է ապա խնդրել համար ի հոգեսէր ապաշխարողաց՝ թէ աղօթիցէն, և ոչպէս. և պատուխրել զի նախ քան զամենայն խոստովանեացն զպղերզանալ յաղօթից, զի որպէս նոյն ինքն սրբուհին Թերեզիա ասէ, "Ալ պղերզանայն յաղօթից՝ որպէս թէ անձամբ զանձն արկանէ ի դժոխս, առանց աշխատ առնելոյ զդէս,,։ Վանիք այսու օրինակաւ կարելին յառաջադիմել ի կատարելութիւն, և ազատել ի վերատին անկանելոյ ի մեզս ծանուննս, եթէ խոստովանահայրն չանացեալ էր յորդորել զնոսա յաղօթս, որպէս և պարտ իսկ էր նոցա։

5. Աչաւել ևս պարտ է նոցա առնել զայս ի տեսա-

նել վհատեալ զապաշխարողս : Ի մեռս հոգևոր կեանաց սովոր է Տէր քաջալերել զհոգի լաստաւրութեամբ մտաց, արտասուօք և զգալի միխիթարութեամբք. այլ ապա առ ի փորձել զհաւատարմութիւն նոցա և առնել զնոսա ի բարձրագոյն կատարելութիւն, առ փոխէ առ ժամանակ մի զմխիթարութիւն և զքաղցրութիւն՝ յորս յարի անձնասիրութիւն : Եւ քանզի կամի Աստուած զի սիրելիք իւր լինքն յարեացին և ոչ ի պարգեւս իւր, բառնայ զայնսոսիկ ի բաց՝ առ ի սրբել զսէրն նոցա, և փոխանակ այնոցիկ Թողու կրել նոցա ձանձրութիւն, վիշտ և փորձութիւնս իսկ : Ո՞ան որոյ պարտ է խոստովանահօր քաջալերել զառաւապէսն, զի մի՛ ի բաց կացցէն ի սովորական աղօթից և ի սուրբ խորհրդոյ : Ո՞ի որպէս սուրբ Ալեքսանդրն ասէ, "Աշխատել հաճոյ է Աստուծոյ վայրկեան մի աղօթել ի վհատութեան, քան զժամս ձիգս ի միխիթարութեան : Որ վասն միխիթարութեան սիրէ զԱստուած, առաւել քան զնա սիրէ զաստուածատարգև միխիթարութիւնս. իսկ որ առանց միխիթարութեան սիրէ զնա, նա է իսկապէս աստուածասէր :

ՅՕԴՈՒԱԾ Բ

Յաղագս խնամալի հայեցողութեան :

6. Պարտ է խոստովանահօր զգուշութեամբ դատել զաստուածային տեսութիւնս, և մի տալ տեղի պատրանաց սպաշխարողին : Խտիր մեծ է ընդ այս և ընդ մտածութիւն. զի ի մտածութեան վաստակէ հոգի ի ինդիր Աստուծոյ, իսկ յիմանալի հայեցողութեան անշխատ ի գիւտ՝ նկատէ զնա : Ի հայեցողութեան՝ Աստուած է որ ներգործէ, իսկ հոգին կրէ՝ ընկալեալ զպարգեւս հեղեալս յինքն ի շնորհացն Աստուծոյ. և լցան այն խնամալի և սէր Աստուծոյ, որով ընդ յաւժամ, զմայլեցուցանեն զնա ի զնին բարութեանն Աստուծոյ՝ որ զնա շնորհին այնմիկ արժանի առնէ :

7. Պիտելի է դարձեալ՝ զի սովոր է Աստուած նախ քան զպարգև խնամալի հայեցողութեան շնորհել հոգւոյ զնեղանձնութիւն կամ զպարապուժն Աստուած,

որ չէ տակաւին զմայլուածն. զի տակաւին ներգործէ անդ հոգի: Ա. յս ներանձնութիւն բնական, զի զդերբնականէն միայ մեզ ասել ՚ի ստորև, տայ մտայ ՚ի ներքս յինքեան խորհել անաշխատ և ախորժանօք զՀնմարտութիւնս կամ զխորհուրդս աստուածայինս: Պարապումն ևս Ա. աստուած գրեթէ նոյն ինչ է ընդ ներանձնութեան, բայց միայն զի սովաւ հոգին ՚ի յայտնի ինչ խորհուրդ հոգևոր զբաղի. իսկ պարապումն հանրակացնաւ իւիք ծանօթութեամբն Ա. աստուծոյ ամիտոփէ զհոգի Ա. աստուած, և սիրոյաբար ձգէ առ նա: Ի ներանձնութեան անդ և յիմանալի պարապման Ա. աստուած՝ ոչ է պարտ հոգւոյ զՀետ լինել մտածութեան, զի գտանէ հոգի զոր խնդրէրն. և զի դարձեալ մտածութիւնն ինքնին, ըստ ասելոյ Հօրն Ավենիկրի, յաբատեւեալ առժամանակ մի՝ ածէ ՚ի տեսութիւն աստուածայինն ստացական, որ միով ևեթ Հայեցողութեամբ իմանայ զՀնմարտութիւնս՝ զորս երբեմն տրամաքանելով և աշխատութեամբ Ճանաչէր: Հոգւոյ ՚ի կրաւորական զմայլման թէպէտ և չիցեն ինչ վաստակք, զի կրէ ևեթ զայն, սակայն առնու նա զօրութիւն մեծ առաւելագոյն կատարելութեամբ այնուհետև գործելոյ. այլ ՚ի ներգործական պարապմանն Ա. աստուած, առ արժանի լինելոյ վարձուց, պարտ է նմա առնել ներգործութիւնս կամաց, այսինքն սիրոյ, նուիրման անձին և այլն, որովք արժանաւորի հոգին աստուածայինն ընդՀաց: Ա. ան որոյ յաւելու Հայրն Ավենիկրի, զի ՚ի խօսել և ՚ի գործել Ա. աստուծոյ՝ պարտ է հոգւոյ լռել և զկայ առնուլ ՚ի ներգործութեանց, միտ ևեթ դնելով սիրոյաբար աստուածայինն ներգործութեանց. այլ յորժամ ոչ խօսի Ա. աստուած, պարտ է հոգւոյ գոն գործել ըստ կարի առ ՚ի միանալ ընդ Ա. աստուծոյ մտածութեամբ, ըղձիւք, աղօթիւք և առաջադրութեամբ: Այլ միայն մի բանի առնել զայսպիսի ներգործութիւնս, զի յայնժամ փոխանակ պարապելոյ զհոգի՝ ցամաքեցուցանեն զնա, այլ յոր ինչ հոգին ինքնին բերի յօժարութեամբ:

8. Վիտելի է դարձեալ զի սովոր է Ա. աստուած մինչև մուծեալ զհոգի յիմանալի հայեցողութիւն՝ մաքրել զնա գերբնական ցամաքութեամբ ՚ի թերութեանց նո-

ջա, որ խափան լինին աստուածային տեսութեան. վասն որոյ այլ է ցամաքութիւն զգալի, և այլ հոգևոր: Ցամաքութիւն զգալի է բնականն այն՝ որ ածէ տաղտկութիւն՝ի հոգևորից, և մթութիւն թեթև և անտեսուր զերբնականն, զորմէ մեր քանքս են, արկանէ զՀոգի՝ի խոր աղջամուղջ՝ որ և Թանձրանայ ըստ տեղողութեանն: Ի խաւարի անդ՝ հոգին հրաժարեալ յարատածոց, յառեալ Աստուած ըղձիւք և առաջադրութեամբ սիրելոյ զնա՝ի սպառ, տեսանէ զանձն ապիկար՝ի կատարել զայն վասն Թերութեանց իւրոց, ոչ լոկ Թուի նմա անկեալ յերեսաց Աստուծոյ. սակայն պինդ կայ յառաքինութեան: Այս տաժանաւոր ցամաքութիւն պարզև է չնորհացն Աստուծոյ, է լոյս լինի զերբնական՝ որ ածէ վիշտ և խաւար. զի՝ի կամել հոգւոյ սոսկանալ միանալ ընդ Աստուծոյ, խափանի՝ի զգայութեանց, և զօրութիւնք իւր ոչ օգնեն նմա՝ չև ևս մերկացեալ՝ի զգալի ախորժակաց: Որով անկանի՝ի խաւարն յայն վշտալի, այլ՝ի յոյժ օգտակար. զի մերկանայ այնուհիկ՝ի զգալի հաճոյից մարմնոյ և հոգւոյ, և խելամուտ լինի Թշուառութեան իւրոյ և ապիկարութեան առ ամենայն ինչ բարի, և խոնարհի առաջի Աստուծոյ ահիւ և դողութեամբ:

Նշանակք մաքրութեանս այսորիկ են, նախ՝ յորժամ հոգին ոչ ևս զօրէ խօսել՝ի մտածական աղօթս, և ըստ յաւելուլ ցամաքութեանն՝ ապիկար ևս գտանի՝ի մտածել: Երկրորդ՝ յորժամ ոչ ևս ախորժէ զՀոգևոր կրթութիւնս, այլ և ոչ՝ի խնդիր լինի աշխարհական զբօսանաց: Երրորդ՝ յորժամ՝ի մտի ունի միշտ զԱստուած, և փափաքէ սիրել զնա յամենայն սրտէ, այլ տառապի համարելով զանձն ցրտացեալ՝ի սիրոյ նորա: Պարտ է յայնժամ խոստովանահօր քաջալերել զնա, որպէս՝ի վեր անդր ասացաք, ի յոյս մեծամեծ բարեաց. այնու զի՝ի Ձանապարհ խաչի հրաւիրէ զնա Աստուած, այսինքն՝ի Ձանապարհ սրբոց: Ար՝ի տալ պետցէ զնա՝ի մտածութիւն, այլ աղօթել ևեթ, և մի դադարել յաղօթից ոչչափ և Ձանձրութիւն կրեսցէ և տագնապ: Յորդորեսցէ զնա ունել ևեթ՝ի մտի զՔրիստոսի, առանց խորհրդածելոյ. և առանց՝ի խնդիր լինելոյ գոլովանաց՝ յիշատակել զերկն

Աստուծոյ, որով յանձն կաս խոնարհիլ յարչաւիլ և անարգիլ վասն մեր: Իսկ ըստ ըղձից յաղօթս՝ խրատեսցէ զնա յերկիս յայսոսիկ. ՚ի խոնարհութիւն՝ համարելով զանձն արժանի վշտացն այնոցիկ և անարժան աստուածային մխիթարութեան. ՚ի նուիրումն անձին՝ յանձն առնուլով կրել զվիշտսն զայնոսիկ, և զծանուցեալս մինչև ցմահ, և ՚ի յաւիտեան իսկ՝ եթէ այսպէս հաճոյ իցէ Աստուծոյ. և ՚ի հնազանդութիւն կամացն Աստուծոյ՝ ՚ի նա բողոքիլն եղեալ ապաստան, առնել ընդ ինքն որ ինչ և կամեսցի: Այս գարձեալ յորդորեսցէ զնա՝ մի ՚ի վիշտս անդ խնդրել երկրաւոր սփոփանս. քանզի մի և խոստովանահայրն յաւելցէ նմա բեռինս, այլ մանաւանդ թեթևացուսցէ զարտաքին հնչունս, խրատելով զնա ՚ի նեղքին մեռելութիւն, ՚ի կրել կամակար զանարգանս, և մանաւանդ ՚ի հրաժարել յիւրոց կամաց:

9. Յետ այսր զգայական մաքրութեան սովոր է Աստուած տալ զպարգև իմանալի հայեցողութեան, խաղաղութիւն և խնդութիւն սրտի, և ամիսիսումն մտաց զերբնական. և ապա յաւելու զցանկութիւնն հոգևոր, որով կամի զի հոգին խոնարհեսցի յինքեան ՚ի սպառ և ՚ի չիք դարձցի: Ցանկութիւն զգայութեան է բարձումն զգալի եռանդեան, իսկ ցանկութիւն հոգւոյ է լոյս աստուածային՝ որով ճանաչէ հոգի զոչնչութիւն իւր: Այլ աստ գտանի հոգին ՚ի տագնապ անհնարին. զի թէպէտ և անդրդուելի հաստատեալ յաղթել անձին յամենայնի՝ զգուշացեալ է և ՚ի ծառայել Աստուծոյ, սակայն զի առաւել է ճանաչէ յայնժամ զթերութիւնս իւր, համարի զանձն լքեալ Աստուծոյ վասն ապաշնորհութեան իւրոյ, և կրթութիւնք իսկ հոգևորք, աղօթք, հաղորդութիւն և ճգնութիւնք առաւել վհատեցուցանեն զնա, զի տագտկութեամբ և տաժանմամբ զայնոսիկ կատարելով, համարի առաւելագոյն պատժոյ լինել նոքօք արժանի: Այնընդ այսպիսւոյ վհատութեան թողացուցանէ Աստուած կրել նմա և փորձութիւնս աղգի աղգի, շարժմունս բղջախոհութեան, ցասման, անհաւատութեան, աստուածընդդէմ հայհոյանաց, և մանաւանդ յուսահատութեան. մինչև ՚ի խաւարն անդ և ՚ի շիթոթու-

թեան ոչ կարելով ՚ի վերայ կալ անհաւանութեան կամացն, որ է իսկ ՚ի նմա՝ այլ ծածկի ՚ի նմանէ կամ պէտ թուի նմա երկբայելի, երկնչի կարծելով հաւանել ընդ այնս, և ևս քան զևս ընկղմի ՚ի տրտմութիւն՝ համարելով զանձն բոլորովին լքեալ Աստուծոյ։

10. Աղէտ ՚ի հանդիպել խոստովանահօր այսպիսւոյ ուժեք՝ որ գնայ ընդ ձանապարհ կատարելութեան և համարի զինքն լքեալ Աստուծոյ, փարատեսցէ ՚ի նըմանէ զերկիւղ և զվհատութիւն, և խրախուսեսցէ զնա ՚ի Տէր՝ նարին իսկ Տեառն բանիւ, զոր ասաց առ սրբուհին Թերեզիա. "Ով որ կորուսանէ զԱստուած, առանց զգալոյ յայտնապէս զկորուսանելն,,։ Խելամուտ արասցէ զնա զի այն աւելնայն փորձութիւնք ընդդէմ հաւատոյ և սրբութեան, և խորհուրդք հայհոյութեան և յուսահատութեան, չեն ինչ հաւանութիւնք՝ այլ տառապանք և անձկութիւնք միտց և կամաց, զորս համբերութեամբ որ եթէ կրեսցէ՝ առաւել միանայ ընդ Աստուծոյ. զի Աստուած ոչ առէ զոք՝ յորոյ սիրեն զնա, և չկամին դառնացուցանել զնա։ Օ՜ի որպէս նոյն սրբուհի ասէ. "Փորձէ Տէր զսիրելիս իւր ցամաքութեամբ և թողացուցանելով կրել նոցա փորձութիւնս. և թէպէտ մինչև ցմահ հասանիցէ նոցա կրել զցամաքութիւն, ոչ է պարտ դադարել նոցա յաղօթից. զայդ ժամանակ, զի բովանդակ ընկալցին զհատուցումն,,։ Ասան որոյ քաջայոյս արասցէ զնա ՚ի Տէր՝ որ աճէ զնա ընդ աներկիւղ ուղի վշտաց և խաչի, և յորդորեսցէ զնա ՚ի նոյն վերատացեալ կրթութիւնս, խոնարհել որպէս արժանի վշտացն այնոցիկ վասն մեզաց իւրոց անցելոց, յանձն լինել բոլորովին ՚ի կամս Աստուծոյ՝ յօժարութեամբ կրելոց զայնս, և ըզծանրագոյնս իսկ՝ եթէ Տէր կամեսցի, և յողորմութիւնն Աստուծոյ ապաւինել և ՚ի բարեխօսութիւն Տիրամօրն՝ որ մայրն է ողորմութեան և միխիթարիչ վշտացելոց։

11. Ցամաքութիւն զգայութեան տևէ, մինչև սրբեալ զգայութեանդ՝ լիցի հոգին ընդունակ իմանալի հայեցողութեան. իսկ ցամաքութիւն հոգւոյ տևէ, մինչև լիցի հոգին ընդունակ միանալոյ ընդ Աստուծոյ։

Աւ յաւելու նոյն սրբուհի, զի մերթ ևս յետ միու-
թեան իսկ հոգւոյ ընդ Աստուծոյ՝ դարձուցանէ՛ի նա
Աստուած զայս ցամաքութիւն, որպէս զի մի անհոգաս-
ցի, այլ երբեք երբեք յիշեսցէ զոչընչութիւն իւր։

12. Յետ զգայութեանն մաքրագործութեան և
յետ զգալի ցամաքութեան կայացուցանէ Տէր զՀոգին
յիմանալի հայեցողութեան, որոյ կրկին ազգ են. հաս-
տատական և ժխտական։ Հաստատական է յորժամ
հոգի՛ի ձեռն աստուածային լուսոյ, առանց ինչ իւրոյ
ջանից, տեսանէ զՀնմարտութիւն ինչ ստեղծական՝ որ-
պէս զԼիշատակութիւն գԱծոխոյ և զերանութիւն ար-
քայութեան և այլն, կամ անստեղծ ինչ Հնմարտու-
թիւն՝ որպէս զբարութիւնն Աստուծոյ, զողորմութիւն
նորա, զմարդասիրութիւն, զօրութիւն և այլն։ Ժխ-
տական է յորժամ Հանապէ ոչ զմի ի յաստուածային
կատարելութեանց, այլ համանգամայն. Թէպէտ և
ընդ աղօտ, այլ որ զմեծութեանն Աստուծոյ յոյժ ա-
ռաւել վերբերէ զտիպ։ Ըստ այսմ իմա և զստեղծա-
կան Հնմարտութեանցն ժխտական Հանապէսն, որպէս
զարհաւիրս գԱծոխոյ և այլն։ Ընդ առաջս նախ զա-
ռաջնոյ աստիճանաց իմանալի հայեցողութեան, որ են
ներանձնութիւն և խաղաղութիւն հոգւոյ. և ապա
զմիաւորութենէ ընդ Աստուծոյ, յոր՛ի հայեցողութե-
նէ են անցք։

13. Առաջին աստիճան իմանալի հայեցողութեան է
ներանձնութիւն զերբենական։ Ընական, զորմէ՛ի վեր
այսր ասացաք՛ի Թիւ 7, է ամփոփումն զօրութեանց
հոգւոյ՛ի նկատել յինքեան զԱստուած։ Աւ ասի բնա-
կան, իբր ոչ եթէ կարիցէ հոգի ինքնին ներգործել
զայն, զի ամենայն իսկ առաքինութիւն վասն արժանի
լինելոյ յաւիտենական վարձուց՝ կարօտի աստուածային
շնորհաց, վասն որոյ և միշտ է գերբենական. այլ ըստ
այնմ ասի բնական, զի ներգործիչ է անդ հոգի, և
գործէ՛ի ձեռն սովորական շնորհաց։ Իսկ գերբենական
ներանձնութիւն է՝ յորում Աստուած է ներգործիչ, և
գործէ՛ի ձեռն անսովոր շնորհաց, և գտանի անդ հոգին
կրօղ։ Վասն որոյ ներանձնութիւն գերբենական կամ
հեղական է յորժամ ամփոփումն զօրութեանց հոգւոյ
ոչ՛ի ձեռն ներգործութեան հոգւոյ յաջողէ, այլ՛ի

ձեռն լուսոյն՝ զոր հեղու ի նա Աստուած, որով վառի ի հոգւոջ մեծ լիմն և զգալի լոյս աստուածսիրութեան։ Ոչ է պարտ հոգւոյ խոափանել յայնժամ զլուսոյն այնորիկ մեզմական ներշնչութիւն, այլ խորհել և ևեթ յանարժանութիւն իւր, և առնել առաջադրութիւնս. մի և զներանձնութեանն այնորիկ զորպէսն հեռացօտել, այլ թողուլ ընորհացն Աստուծոյ առաջնորդել մտաց իւրոց ի տեսութիւն, և կամաց իւրոց ի ներգործութիւն, որոց ինչ իրաց կամք իցեն նմա։

14. Երկրորդ աստիճան իմանալի հայեցողութեան է խաղաղութիւն հոգւոյ։ Ի ներանձնութեան՝ զօրութիւն սիրոյ հաղորդի անմիջաբար արտաքին զգայութեանց, զոր ինքն Աստուած ամիոսիւ ի ներքս ի հոգին. իսկ ի խաղաղութեան հաղորդի սէր անմիջապէս ի հոգին, սէր սաստակագոյն՝ որ սիրէ և ի զգայութիւնս, այլ ոչ միշտ. զի պատահէ և հոգւոյ զմայլումն ի խաղաղութեան, առանց զգալի քաղցրութեան։ Յայնժամ ոչ և պարտ է հոգւոյ աշխատել յառաջադրութիւնս, կամ այլոց ներգործութեանց ի խնդիր լինել, այլ հետևել ևեթ աստուածայնոյ մեզմական ազդեցութեանն։

15. Կատարելագոյն քան զնախատատականն է հայեցողութիւն ժխտական, որ կոչի և ճգ պայծառութեան, զի վասն յորդութեան լուսոյն մռայլ ի միտս արկանէ։ Որպէս որ հայի յարեգակն՝ շլացեալ ի լուսոյ անտի չտեսանէ ինչ, այլ խմանայ զի լոյս մեծ է արեգակն, այսպէս ի միգի անդ հեղու Աստուած ի հոգի լոյս մեծ՝ ոչ առ ի տալ նմա խմանալ ճշմարտութիւն ինչ որիշ, այլ ընդունել ծանօթս ինչ հանրական և աղօտ զանհասանելի բարութեան իւրոյ. որով հոգին խմանայ զպատիկեր Աստուծոյ, Թէպէտ և աղօտ, այլ բարձր յոյժ։ Հայեցողութիւնս այս կոչի մէգ, ասէ Արդինալ Վիեննուացի, զի հոգի ի կենցաղումն չկարէ պայծառ խմանալ զաստուածութիւն. վասն որոյ խմանայ միւսա առանց խմանալոյ, այլ խմանայ լաւագոյն քան զառաջինն եղանակ խմացուածոյ, այսինքն խմանայ զի է նա անխմանալի. զոր սուրբ Դիոնիսիոս կոչէ Վեհմահան աստուածաճանաչութիւնն անգիտութիւն։ Ի միգի անդ զաղարեն առաջին զօրութիւնք հոգւոյ ներքինք, է ու-

բեք՝ զի և զգայութիւնք արտաքինք. մինչև զմայլել երբեմն հոգւոյ յարբեցութիւն հոգևոր, և շարժել յողբս և յաղաղաղուս, կամ՝ ի բարբառ սիրոյ խանդաղատելն, կամ յերգս և՝ ի կայթ, որպէս զսրբոց ոմանց և զսրբուհեաց պատմի։

16· Ընդ այսոսիկ երկուս առաքեանս հանէ Աստուած զՀոգին՝ ի միաւորութիւն ընդ իւր, որ և միակ նպատակ հոգւոյ. այլ էե նմա կարևոր առ՝ ի սրբութիւն՝ միաւորութիւնս այս կրաւորական, շատ և ներգործականն։ Ել ամենեքին, մանաւանդ թէ սակաւք այնոքիկ էեն, առ նոյն սրբուհին, որոց Աստուած ընդ գերբնական ձանապարհ առաջնորդէ. լեցի մեզ յերկինս տեսանել բաղումս առանց այսոցիկ գերբնական պարգևաց բազմեալս՝ ի վեր քան զնոսա։ Ներգործականն միաւորութիւն է համակամութիւն ընդ Աստուծոյ, և յայսմ է ամենայն կատարելութիւն աստուածսիրութեան. զի որպէս նոյն սրբուհին ասէ. "Ել՝ ի զմայլման է կատարելութիւն, այլ ՀՀմարիտ միաւորութիւն հոգւոյ ընդ Աստուծոյ, է՝ ի համակամութեան ընդ նմա,,։ Այս է կարևորն միաւորութիւն, և ոչ կրաւորականն. և որոց ներգործական և եթէ իցէ միաւորութիւն, յաւելու նա ինքն, "Արթ է նոցա յոյժ առաւել արժանաւորս զոլ վարձուց, զի աշխատանօք իւրեանց արժանաւորին. և որպէս հզօրաց առաջնորդէ նոցա տէր, ոչ վարձատրէ զնոսա աստ՝ առ՝ ի վարձատրել ապա միանգամայն,,։ Ըստ այնմ իսկ հեզական հայեցողութեան, ասէ Կարդինալ Փեթրուչչի, կարէ ոք՝ ի ձեռն սովորական ընծայ հայ ընկալել զկամս իւր՝ ի համակամութիւն ընդ Աստուծոյ. զի թէպէտ և զգայ զներհակն կրից շարժմունս, այլ այսոքիկ չկարեն մեկնել զնա՝ ի կամացն Աստուծոյ։ Նա՝ ի վերայ ածէ՝ զի յայսմ իսկ է սրբութիւն, և ամենայն ուժք պարտ է այսմ ցանկալ և զայս եթէ խնդրել՝ ի Տեառնէ, զի կայք նորա լինեքեան կատարեսցին։ Յաւելու դարձեալ նոյն սրբուհի զկրաւորական միաւորութենէ, զի անդ կայք այնու սիրով կապին ընդ Աստուծոյ՝ մինչև չկարել այլ ինչ սիրել, և միտք այնչափ սիրով լցեալ՝ մինչև չկարել յայլ ինչ խորհել, և ոչ՝ ի ընծրհան՝ զոր ընդունի. խանդագին բազում ինչ, այլ ոչ ըմբռնէ զոր խնդասցն. և յայսմանէ

իսկ գներկայութեանն Աստուծոյ զփորձ առնու, որ
ի նեղբս ի հոգւոջ իւրում է: Այլ այս միաւորու-
թիւն ոչ աւելի ինչ քան զկնի ժամու տևէ, որպես
նոյն ինքն զփորձ առեալ վկայէ. և հաստատէ՝ զի յայլ
իմանալի տեսութիւնս մարթի է հոգւոյ երկբայել ընդ
ներկայութիւնն Աստուծոյ, այլ ասա ոչ բնաւ: Սակայն
պարտ է խոստովանահօր աղդ առնել նմա, զի ոչ այնու
եզանի անմեզանչական. վասն որոյ և խրատել, զի ըստ
առաւելութեան պարգևացն Աստուծոյ խոնարհեացի, և
ի կամայ իւրոց հրաժարեալ՝ սիրեսցի զխաչ, և պատ-
րաստ կացցէ ի հնազանդութիւն կամացն Աստուծոյ ա-
հիւ և դողութեամբ, զի մի գուցէ թերութիւնք իւր
պնուհետև վասն ապերախտութեան իւրոյ խստագոյն
պատժոց պարտաւոր գնա առաջի Աստուծոյ կացուսցեն:
Օ՜ի վկայէ նոյն ինքն սրբուհին ոչ սակաւս, որք յայն
աստիճան միաւորութեան հասեալ էին, զահավէժ
կործանմամբ անկեալ ի շնորհացն Աստուծոյ: Զն-
կուճն ահագին:

17. Այլ և այլ ազգ են միաւորութեան ընդ Աս-
տուծոյ, որպես պարզ միաւորութիւն՝ յորում դադա-
րեն զօրութիւնք հոգւոյ, այլ ոչ և զգայութիւնք մար-
մնոյ: Խաւսումն՝ յորում դադարեն և զգայութիւնք,
մինչև չտեսանել աչաց, չլսել ունկան, և խարելոյ իսկ
և հատանելոյ մարմնոյն չզգալ: Յափշտակութիւն՝ յո-
րում ոչ հոգին և եթէ ամբառնայ ի միաւորութիւն ընդ
Աստուծոյ, այլ վերանայ և մարմինն թեթևանալ
իբրև զփետուր: Այլ զայսցանէ և զայլոյ աղգի աղգի
միաւորութեանց ընդ Աստուծոյ թողումք ձառել վար-
ժապետաց Հանապարհի կատարելութեան և աս-
տուածամերձ կենաց. բայց միայն զկատարեալ միաւո-
րութենէ այսչափ ինչ յաւելումք:

18. Ա՛րդեօ ուղևորն ոչ է մարթ միանալ ընդ Աս-
տուծոյ առաւել քան զայս կատարեալ միաւորութիւն,
որ և կոչի Հոգեծոր Հարսանիք. որով հոգի մարդոյ ընկղմի
ի Աստուած, որպես անօթ ինչ ջրոյ ի ծով համատա-
րած: Աստանօր ոչ դադարեն զօրութիւնք հոգւոյ, այլ
սակացեալ ի զգայութենէ և ի նիւթոյ՝ այնպես պատ-
կանաւորին միանալ ընդ Աստուծոյ, զի կամք ամենայն
ախորժանօք բերին ի սէր նորա, և միտք քաջիկ չա-

նաչէն և խելամուտ լինին ներքին միաւորութեան ընդ նմա: Եւ այս ոչ որպէս զայլսն վաղանցիկ և միաւորութիւն, այլ միայնոյն՝ որով վայելէ Հոգի յաւարտեալ թեամբ՝ ի ներկայութիւնն Աստուծոյ կինաբեան՝ աներկեւան խաղաղութեամբ. զի ոչ ևս կիրք խռովեն զնա. երևեալ երևին նմա, այլ ոչ ինչ ատնանեն նմա. որպէս որ զի գեր՝ ի վերոյ կացեալ ամպոյ և ամպրոպաց, տեսանիցէ ընդ իւրև զփայլատակել նոցին, և ըզձայնմանէնան լսիցէ:

19. Աւասցուք և զերկնաշնորհ տեսլեանց և զհաւսից և զյայտնութեանց, վասն ընտրելոյ զՀնմարիան՝ ի սոյ: Ի տեսլեանց՝ են որ արտաքինք են, են որ երևակայեալք, և են որ իմացականք: Արտաքինք են, որ երևին աչաց. երևակայեալք՝ որ ցնորք են մտաց կամ երևակայութեան. իսկ իմացականք՝ որ ոչ աչաց երևին, և ոչ՝ ի ցնորս մտաց երևութեանն, այլ ըմբռնին՝ ի մտաց աստուածային լուսով՝ որ զտիպս իրաց իմանալիս հեղու՝ ի միտս: Եւ է տեսիլս այս բոլորովքին Հոգեղէն, ոչ ինչ արտաքին զգայութեանց ունելով անդ մանն, և ոչ ներքնոց՝ որ են զօրութիւնք երևակայութեան: Եւ գիտելի է զի ոչ աչօք և ոչ երևակայութեամբ կարէ Հոգի տեսանել ինչ յանդիման՝ առանց մարմնաւոր տեսլեան, թէպէտ և Հոգեղէնք իցեն երևեալքն: Իսկ մտաց ընդ հակառակն և իրք նիւթեղէնք երևին որպէս Հոգեղէնք, մանաւանդ թէ Հանաչին՝ ի մտաց, ոլոյ Հանաչումն գեր՝ ի վերոյ է քան զտեսութիւն աչաց:

20. Եւն տեսիլք՝ որ Աստուծոյ են, և են՝ որ՝ ի դիւաց. և նշանք ընտրելոյ զաստուածայինս՝ ի դիւականաց՝ այսոքիկ են: Ցախ՝ յանկարծակի երևումն, առանց ինչ խորհելոյ մտաց յայն: Հրկրորդ՝ զի թէ և՝ ի սկզբան աճիցեն ահ և խռովութիւն, այլ ապա խաղաղեն զՀոգի: Հրրորդ՝ զի սակաւ երբեք երևին, և յաՀախաւորքն կասկածելի են: Չորրորդ՝ զի կարճաւակք են. զի որպէս սրբուհին Աւերեղիա ասէ, ՝ի յաւել կալ Հոգւոյ ընդերկար՝ ի տեսիլ ինչ՝ յայտ է թէ ցնորք երևակայութեան են. զի տեսիլք աստուածայինք վաղ անցանեն, այլ տպաւորութիւն նոցա միայ՝ ի միտս անջնջելի: Հինգերորդ՝ զի թողուն՝ ի Հոգւոջ խաղա-

զութիւն մեծ, խելամտութիւն անձին եղկութեան, և
ինձ սաստիկ կատարելութեան։ Իսկ տեսիլք դիւականք
թողուն ՚ի հոգւոջ աղմուկ և շփոթ և ինքնահաւա-
նութիւն։ Նանդերձ այսու ամենայնիւ չէ մարթ վըս-
տահել, ասէ նոյն սրբուհի. զի դիտեն դևք կեղծել և
զհաղագաղութիւն և զխորհուրդս խոնարհութեան և
զինձս կատարելութեան։ Վասն որոյ թէպէտ և ոչ է
պարտ խոստովանահօր արգելուլ ապաշխարողաց չպատ-
մելոյ զտեսիլս, զձշմարիտս և զսուտս, այլ չէ պարտ
նմա յուցանել ինձս լսելոյ զայնս, կամ հետազօտել։
Վթէ յինքնահաւանութենէ կամ յանկաղութենէ ա-
պաշխարողին և կամ ՚ի ցրտանալոյ նորա յառաքինու-
թենէ ՚ի միտ առնու՝ զի ցնորք մոլոց կամ դիւականք
են տեսիլքն, յայտ արասցէ նմա զայն։ Իսկ եթէ երկ-
բայելիք, մի դիւրահաւան և մի բոլորովին լինի անհա-
ւան. այլ խրատեսցէ զնա աղօթել առ Ցէր՝ զի փրկեա-
յէ զինքն ՚ի վտանգէ, և չկամել ձանաչել զնա այլազգ
՚ի վերայ երկրի՝ բայց միայն հաւատովք։

21. Վդաւել ևս զգուշութեան պէտք են խոստովա-
նահօր յընտրութիւն ներքնին կամ արտաքին ձայնի
բարբառելոյ ինչ ումեք։ Յարգասեաց անտի կամ յի-
նայ ազգելոյ մարթ է ձանաչել զայնս. եթէ յաւել-
ցեն զաստուածախրութիւն և զխոնարհութիւն, եթէ
թողուցուն խաղաղութիւն և հլութիւն ՚ի հոգւոջ,
եթէ ազդիցեն գործս առաքինութեան և ինքնարհա-
մարհութեան, և տացեն զօրութիւն համբերելոյ։
Վասն որոյ չէ պարտ խոստովանահօր թողացուցանել
ապաշխարողին առնել ինչ մանաւանդ անուամբ՝ բուռ
ներքնին կամ արտաքին ազգեցութեան, մինչեւ դիտա-
յեալ աներկբայելի զի Վստուծոյ են։

22. Վմանաւանդ և ՚ի յայտնութիւնս գաղտնեաց
կամ հանդերձելոց, խղճի մտաց կամ նախատեսմանու-
թեան հոգւոց, մահու ուրուք կամ ամբառնալոյ յերկ-
ինս յայնական աստիճանս և այլն, պարտ է խոստովանահօր
բազում խոհեմութեամբ վարել, մի դիւրահաւան լի-
նել, և ապաշխարողին ևս արգելուլ չիսկս ինչ ընդ
ումեք զայնցանէ, զի յայտնութիւնք այսպիսիք սովո-
րաբար երկբայելիք են։

23. Վյատանօր խնդիր առնեն աստուածբանք թէ

արդեօք յայսպիսեաց գերբնական պարգեւաց պաՀպան իցէ հրաժարել, Թէ ընդունել զայնս։ — Եթէ պարգեւքն այնոքիկ օտարացուցանեն ՚ի հաւատոց, յայտ է Թէ պարտ է մերժել զայնոսիկ, զի չեն Աստուծոյ։ Իսկ եթէ օգնեն ՚ի հաւատս և յաստուածՀրութիւն, պարտ է ընդունել զայնոսիկ խոնարՀութեամբ, և ցանկալ իսկ այնոցիկ՝ առ ՚ի միանալ ընդ Աստուծոյ, և Հաստատիլ ՚ի սէր նորա։ Այլ այս վասն աստուածամերձից, և որոց ընկալեալ իցէ զայսպիսի շնորՀս. իսկ այլոց լաւ ևս իցէ և աներկևան՝ ցանկալ ներգործական միաւորութեան ընդ Աստուծոյ, որ ըստ ասացելոցն՝ է Համակամութիւն ընդ Աստուծոյ։ Ալ ան որոյ խոստովանահայրն ՚ի հանդիպել ումեք՝ որ զայսպիսեաց նմանալի Հայեցողութեանց և գերբնական պարգեւաց խօսս առնիցէ, մի պատուիրեսցէ նմա մերժել զայնս, այլ ընդունել խոնարՀութեամբ և գոՀութեամբ. սակայն և մի Հաստատեսցէ զայնս որպէս Աստուծոյ, այլ Թողցէ զնա յերկբայս. որպէս զի անխոռով կացցէ միաւսէ ՚ի խոնարՀութեան։

24. Եւ առ ՚ի Համառօտել զասացեալքս, պարտ է խոստովանաՀօր լսել, մանաւանդ Թէ և պատուիրել ապաշնարողին, յայտնելոյ եԹէ իցէ ինչ ընկալեալ յայսպիսեաց պարգեւաց, այլ առանց Հետաքրքրութեան։ Մի պատմեսցէ այլոց զգերբնական պարգեւս ապաշնարողին. զի մի յաՃախեսցեն առ նա լսօղք՝ խնդրել ՚ի նմանէ աղօԹս, և լինի նմա վտանգ մնաՀառութեան. կամ ՚ի տեսանելն ՚ի նմա Թերութիւնս ինչ, գայԹակղեսցին կամ ծաղր արասցեն զնա։ Մի և ինքն յարգ և մեծարանս ցուցցէ նմա, այլ մանաւանդ լաւագոյն զայլս Համարել՝ որ Հաւատովք գնան. զի պարտ է միշտ ՚ի խոնարՀութեան ունել զայնպիսիս։ Իսկ եԹէ Հանդերձ այնպիսի պարգեւօքն իցէ ոք խոնարՀ և երկիւղած՝ ըզպարգեւսն Աստուծոյ կասկածելով, քաջալերեսցէ զնա. և եԹէ Հարկ լինի, յայտ իսկ արասցէ նմա զի Աստուծոյ են շնորՀքն։ Ալ կայեն այսմ տուրքն Փրանչիսկոս Պօրձեան, և տուրքն Պետրոս ԱլկանԹարացի. քանզի սրբոյն Թերեզիա, ՚ի Հաստատել նոցա զի Աստուծոյ էին պարգեւքն ՚ի նմա գերբնականք, խոստեաւ ՚ի նոցանէ՝ արագաԹռիչ ամբարձաւ ՚ի կա-

տարելութիւն։ Եւ մի խոստովանահօրն տեսանելով զայնպիսւոյ ուրուք անկանել՝ ի թերութիւնս ինչ տկարութեան, առանց լուսի կամաց կամ յարնչութեան՝ ի նոսին, պատրանս այնը աղագաւ զպարգևսն զայնոսիկ համարեսցի. զի Աստուած ոչ կատարելոց միայն ընդոչ զպարգևս իւր, այլ մերթ և անկատարից՝ առ՝ ի սրբել զնոսա և ամբառնալ՝ ի կատարելութիւն։ Ապա որոյ որ՝ ի ձեռն պարգևացն այնոցիկ յաւելու օր ըստ օրէ մերկանալ՝ ի կրից, և բորբոքիլ՝ ի սէր Աստուծոյ և՝ ի փափաք կատարելութեան, նշան է զի Աստուծոյ են պարգևքն։

Այլ ուր զարտաքին պարգևացդ իցեն բանք, այսինքն զտեսլեանց, զաստուածախօս պատգամաց, և զայլոց նուէից, ապահովացդն է չքելոյն առնել զայնս և չհաստատել, և ոչ՝ ի կատարելութիւն համարել զայնս։ Օ՜ի որպէս նոյն սրբուհի ասէ, "Անպէտ և իցեն և երբեմն պարգևք Աստուծոյ՝ այլ առաւելապէսք՝ ի նոսա պատրանք են և խաբէութիւնք, և դժուարին է՝ ի մեջ այնչափ ստութեանց ընտրել զճշմարտութիւն. և որչափ ոք՝ ի խնդիր լինի այնց, այնչափ առաւել խոտորի՝ ի ձանապարհէ հաւատոյ և խոնարհութեան, որ սահմանեալն է Աստուծոյ ձանապարհ աներկիւղ,,։ Ապա որոյ խրատեսցէ խոստովանահայրն զայսպիսիս, զի խնդրեսցեն՝ ի Տեառնէ զճշմարիտ հիւսուածն՝ որ է հրաժեշտ՝ ի աստղայնոց և յանձնէ, առանց որոյ չիք սրբութիւն։ Ապա անաւանդ եթէ որ՝ ի նոցանէ ինքնահաւանութեամբ հաւանութեամբ աստուածայինս ստուգիւ զպարգևսն, և դժկամակեսցի ընդ երկբայել խոստովանահօրն զայնցանէ, յայտ առնէ զի կամ պատրանք են այնոքիկ դիւականք, և կամ զեղծանի նա նոքիմբք. և պարտ է յայնժամ խոնարհել զնա, և խոտիւ ընդ նմա վարել՝ առ՝ ի փրկել զնա՝ ի վտանգէն։

ՅՕԴՈՒԱԾ Գ

Յաղագս Ճգնութեանց։

25. Օ՜նորամուտս՝ ի հոգևոր Ճանապարհ, որպէս ասացաք, սովոր է Պատուաճ քաջալերել զգալն վիճ- Թարութեամբք. և՝ ի նախկին յայնմ եռանդեան՝ ցան- կան նոքա մեռուցանել զանձինս խորգով, ձաղկանօք, պահովք և Ճգնութեամբք։ Պ՜այլ որպէս Հայրն Ներ- տոլիոս ասէ, մի՝ ի բազմանալտանգ հնարից սատանայի այն է՝ շարժել զմեզ՝ ի գործս տաժանաւորս, որպէս զի տաղտկացեալ յայնցանէ և պարտասեալ՝ ընդ նոսին և զառաքինութիւնս՝ ի բաց թողցուք, վերջացեալք՝ ի յարատևութենէ։ Պ՜ասն որոյ չէ պարտ խոստովանա- հօր ներոդ լինել Ճգնութեանց. զի՝ ի գալ ապա՝ ի վե- րայ հասանել ժամանակի երաշտութեան, վտանգ է հոգւոյ յետս կալ և յաղօթից և՝ ի Ճանապարհէ կա- տարելութեան։ Պատահէ և զի այսպիսիք առ անխո- հեմութեան կորուսանեն և զառողջութիւն մարմնոյ, և Թողուն՝ ի բաց զամենայն խակ հոգևոր կրթութիւնս։ Պարտ է ինձ՝ հաստատելոյ նոցա՝ ի հոգևոր կեանս, և ապա ըստ իւրաքանչիւր առողջութեան, եռանդեան, և պարապոյ ներել զարտաքին Ճգնութիւնս։ Պ՜ամենք՝ ի խոստովանահարոյ զամենայն յառաջադիմութիւն հաս- տատեն լինի՝ ի պահս և՝ ի խոշտանգանս մարմնոյ, և ոմանք սրգելոյն զամենայն արտաքին Ճգնութիւն իբր անօգուտ հոգևոր յառաջադիմութեան, և զամենայն կատարելութիւն ամփոփեն՝ ի ներքին մեռելութիւն, ծայրայեղ՝ ի հակառակն անկեալ։ Պ՜ի և մարմնաւոր Ճգնութիւնք ըստ չափոյ պատշաճի օգնեն ներքին մե- ռելութեան, և կարևոր իսկ են առ՝ ի Ճնշել զզգայու- թիւնս. վասն որոյ և սուրբք ամենայն, որ առաւել և որ նուազ, վարեցան նոքօք։ Պ՜ատաքէն կարևոր քան զա- մենայն է մեռելութիւն կրից, այսինքն անյիշաչար լի- նել, ոչ խնդրել զփառս անձին, տեղի տալ՝ ի վիճաբա- նութեան, զինջանել՝ ի կամս այլոց ուր չիցեն ինչ մեղք, լռել Թէնաւանաց և այլն. վասն որոյ և բարի է երբեմն արգելուլ զամենայն արտաքին Ճգնութիւնս, յորժամ

ընդ նոսին տիրապետէ յուժեք ախտ ինչ, որպէս մնափա-
ռութեան, սխակալութեան, զօշաքաղութեան, ինք-
նահաւանութեան և այլն. սակայն անօգուտ համարել
զարտաքին ձգնութիւնս է վրիպակ մեծ:

26. Պարտ է ասել խոստովանահօր արդելուլ ՚ի
սկզբան անդ ապաշխարողին չառնել ինչ ձգնութիւն
առանց հրամանի, և զոն ուրեք տացէ հրաման՝ թէ-
պէտ և թախանձեալ ՚ի նմանէ, բայց միայն թեթև
ինչ և զուշնաքեայ ձգնութեանց, որպէս զօտի մաղե-
ղէն կրելոյ զմարմնով, կամ զխարազան երբեմն ՚ի կիր
արկանելոյ առ ՚ի կրթութիւն քան ՚ի մեռելութիւն
մարմնոյ. և ըստ զարգանալ նորա յառաքինութիւն,
յաւելցէ զձգնութիւնս: Այլ սովորաբար զարտաքին
ձգնութիւնս ոչ է պարտ տալ ուրեք, առանց խնդրելոյ
նորա. ակամայ ձգնութիւնք սակաւ ինչ օգնեն, և միշտ
իսկ նուազ քան զոր խնդրէն՝ պարտ է տալ, զանցանե-
լով ՚ի ժխտել քան ՚ի ընդունել: Յորդորեսցէ զնա մա-
նաւանդ ՚ի նուաճել զոլկոր, որում հոգեսէրք ոմանք
չառնեն ինչ փոյթ, այլ դժուարապոյն այն է ՚ի ձգնու-
թիւնս, և կարի յոյժ օգտակար հոգւոյ, թէ արդեօք
և մարմնոյ. մինչև ասել սրբոյն Փիլիպպոսի Ներեան.
“Ով ոչն մեռուցանէ զոլկոր, ոչ հասցէ երբեք ՚ի կա-
տարելութիւն,,: Ընդ հակառակն մի դիւրաւ ներեսցէ
պղծնութիւն, զի ինքասէ այդ առողջութեան մարմնոյ և
հոգւոյ. զի առանց բաւական քնոյ՝ չէ մարթ, ոչ մաս-
ծական աղօթս, և ոչ զայլ հոգևոր կրթութիւնս կա-
տարել: Այս ՚ի ներքին զօր և իսկ ձգնութիւն, յաւել-
եկ պարտպել զապաշխարողն յինքնահաւանութենէ
ըստ առաքելական բանին. “Օ՜հպարտութիւն զամե-
նայն ՚ի բաց ընկենուլ... չև ևս արեամբ չափ պատե-
րազմեալ հակառակ կալոլ մեզայն,,: Այլ օգտակա-
րագոյն և անվտանգ ձգնութիւնք են զրկել զաչս և
զլսելիս, սակաւս խօսել, շատանալ անախորժ և ան-
համեմ կերակրովք, ընտրել զանարգս, գոհանալ ՚ի
կրելն ինչ կարօտութիւն՝ յորում է ձչմարիտն աղքա-
տութիւն, որպէս սուրբն Ներսէս ասէ. “Աղա-
քինութիւն աղքատութեան ոչ ինքն աղքատութիւնն
է, այլ սէր աղքատութեան,,:

27. Այլ զգործս առաքինութեան պարտ իսկ ծած-

կել յայլոց, թէ յայտնի իսկ կատարել։ — Այսրբ ա-
ւետարանն ուրեք ասէ. "Ընդհպակս լուսաւորեսցէ լոյս
ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր
բարիս, և փառաւորեսցեն զՀայր ձեր՝ որ յերկինս է,,։
Եւ այլ ուրեք յաւելու. "Յորժամ ողորմութիւն առ-
նիցես, մի գիտասցէ ձախ քո զինչ գործէ աջ քո,,։
Պարտ է ապա զանազանել զՀաստարակաց գործս կրօ-
նից, զպարտս քրիստոնէի, յառաքինական գործոց կա-
տարելութեան։ Ասն որոյ պարտ է յաձախել յայտ-
նապէս՝ի տուրբ խորհուրդս, ստէպ կալ աղօթից, յար-
դութեամբ առընթեր կալ սրբոյ պատարագին, լսել
յեկեղեցւոջ, սանձահարել զաչս, մի ամօթ հասանիցէ
զնզձս կատարելութեան, այլովքն հանդերձ։ Պա-
րտ է ծածկել զարտաքին ձգնութիւնս, զխորգ,
զխարազան, զարտասուս, զՀառաչանս, զբազկատա-
րած ծնրադրութիւն և այլն։ Իսկ զծառայել հիւան-
դաց, զողորմութիւն, զՀամբերութիւն, զխոնարհու-
թիւն և զայլ այսպիսի առաքինութիւնս, լաւ իցէ թա-
քուցանել քան կարի. այլ եթէ չիցէ մարթ առնել
զայնս՝ի ծածուկ, ոչ վասն այնորիկ պարտ է զանց առ-
նել զնոքօք, այլ շատ է չառնել զայնոսիկ՝ի ցոյցս
մարդկան։

ՃՕԴՈՒԱԾ Դ

Ճաղագս յաձախելոյ՝ի տուրբ խորհուրդս։

28. Խարխ է յորդորել զապաշխարողս՝ի խոստովա-
նութիւն ընդհանրական, զի օգնէ յոյժ այն՝ի փոխ-
խութիւն վարուց և՝ի յարատեւութիւն, եթէ չիցէ ու-
րուք արարեալ զայն միանգամ. այլ խղճահարաց բնաւ
իսկ պարտ է արդելուլ զայն։ Իսկ զաւելորդական խոստո-
վանութիւն շատ է երկիւղածոց միանգամ յեօթնեկի
խոստովանել. և եթէ էիցեն իսկ ուրուք մեղք նեղելիք,
և չկարիցէ դիւրաւ խոստովանել, ոչ է պարտ նմա վասն
այսորիկ՝ի բաց կալ՝ի հաղորդութենէ, որպէս ուսու-
ցանեն տուրբն Կիպրոսիոս, տուրբ Աղեքսայիոն և ա-
տուածաբանք. և տուրբ Ժողովն տրիդենտեան՝ի թո-
ղութիւն նեղելի մեղաց՝ բաց՝ի խոստովանութենէ ու-

սուցանէ և այլ օձանա, որպէս զներդործուԹիւն ղջմանն և աստուածսիրուԹեան և այլն։

29. Յաղագս սուրբ հաղորդուԹեան ասացաք պատուս հոգևոր հովուաց՝ ի գլ. Ե. 25. ուր և յաւելաք զԱնովվկենտեայ Զ. ՚ի դատաստան խոստովանահարց առնել ապաստան պահանջուԹիւն հաղորդուԹեան. վասն որոյ առանց յայտնի պատճառի չէ օրէն ժողովրդապետի չհաղորդել զոք՚ ի խնդրողաց։ Այլ և ոչ օրէն է խոստովանահարց հրաման տալ ամենեցուն անխտիր յաճախելոյ՚ ի սուրբ հաղորդուԹիւն. զի որք ատեպ՚ ի մեզս ծանուննս անկանին, և չիուԹան իսկ յապաշխարուԹիւն և յուղղուԹիւն, դարձեալ և որք՚ ի մեզս ներելիս գիտուԹեամբ անկանին՝ անփոյթք խելեալ՚ ի սրտէ զյօժարուԹիւն՚ ի նոսին, վրիպակ մեծ է ներել այնպիսեաց յաճախել՚ ի սուրբ խորհուրդն առելքան զիմանգամ յեօԹնեկի։ Անաւանդ լաւ իցէ երբեմն արգելուլ և զիմանգամն, առ՚ ի խորշեցուցանել զնոսա՚ ի մեզաց անտի, և առ՚ ի յարգուԹիւն խորհրդոյն. զի ըստ վարդապետուԹեան բազմաց յաստուածաբանից, անարդէ զսուրբ խորհուրդն՝ որ զբ յօժարուԹեամբ՚ ի ներելի իսկ մեզս մատչի յայն։

30. Ախալեղն ընդ հակառակն խոստովանահարքն և օտարանան՚ ի հոգւոյ եկեղեցւոյ, որք առանց խորհելոյ՚ ի պէտս և յօգուտ իւրաքանչիւրոց՝ արգելուն ամենեցուն անխտիր չյաճախել՚ ի հաղորդուԹիւն. ուր սուրբ ժողովն տրիդենտեան պարտ համարի ժողովրդապետի յորդորել զհաւատացեալս, ոչ միայն՚ ի յաճախ, այլ և՚ ի հանապազորդ հաղորդուԹիւն. և յուցանել նոցա, զի ոչ միայն մնրմին՝ այլ և հոգի առ՚ ի կեանս կարօտ է հանապազորդ հացի։ Այս և սովորուԹիւն նախնի հաւատացելոց, և վարդապետուԹիւն Հայոց առ հասարակ հաստատ։

Իսկ ոմանց չկարելով ժխտել զօրինաւորուԹիւն և զօգտակարուԹիւն յաճախ հաղորդուԹեան, պահանջեն զպատրաստուԹիւն առ այն։ Այլ զինչ իցէ խընդրեալն՚ ի նոցանէ պատրաստուԹիւն. եԹէ արժանաւորուԹիւն, ոչ ևս ումեք լինի օրէն հաղորդել. իսկ եԹէ պատշաճաւոր պատրաստուԹիւն, ասացաք իսկ՚ ի վեր այսր՝ զի որք գիտուԹեամբ՚ ի ներելի մեզս կայցեն,

կամ չկամիցին խլել՝ ի սրտե զյօժարութիւն յայնս, այնպիսեաց պարտ իսկ է արգելուլ զյաձախութիւն։ Իսկ որք առեան զներելն իսկ մեղս, և զանան խլել՝ ի սրտե զչար յօժարութիւնս, ընդկնի եկե արգելուլ նոցա զհանապազորդ իսկ հաղորդութիւն, եթէ հրամանաւ խոստովանահօր առնիցեն զայն։ Զի որպէս սուրբ Վարդանն ուսուցանէ. "Որ զիծոր առեալ դիտիցէ՝ զի հանապազորդ հաղորդութեամբ յաւելու՝ ինձա եռանդն աստուածսիրութեան և ոչ նուազել յարգ խորհրդոյն, պարտ է նմա հաղորդել հանապազօր։"

31. Այլ թէպէտ հրաժարել երբեմն՝ ի սուրբ հաղորդութենէ վասն առաւելագոյն մեծարանաց խորհրդոյն՝ առաքինութիւն է, այլ որ ընդունի զսուրբ խորհուրդն վասն յաւելոյ նուիրաս յատուածսիրութիւն՝ առաւել մեծարէ զայն։ Այսպէսին մեծարէին զայն և սուրբքն, որք հաղորդէինն հանապազօր. և եթէ ոք ասիցէ՝ թէ պակասեն արդ սուրբքն այնպիսիքն, պատասխանեմք զի սուրբքն այնօրիկ՝ ի հաղորդելն իւրեանց հանապազօր՝ չհամարէին սուրբս զանձինս. և Հայրն Պարսիոն յանդգնութիւն համարի ասել՝ թէ չիցեն և այժմ ծառայք Աստուծոյ արդարք. և յաւելու Հայրն Գիլա, զի արբանեակեն դիւին՝ որք խափանեցին զհաւատացեալս՝ ի տեպ հաղորդելոյ։

32. Յայսմ ամենայնի յայտ է, զի չէ օրէն խոստովանահօր չտալ հրաման երկիւղածոյ՝ որ ցանկան յաձախել՝ ի սուրբ խորհուրդն ըստ ասացելումն պատրաստութեան։ Այլ միայն ամենք՝ ի քաջահմուտ հովուաց սովոր են օր մի յեօթնեակի՝ ի բաց առնուլ վասն խոհեմութեան, և առ՝ ի փորձ հնազանդութեան ապաշխարողին։ Այլ՝ ի տալ խոստովանահօր հրաման, չէ օրէն ըստ սահմանադրութեան Ինոսենտիոսեայ ԺԱ. ոչ ժողովրդապետի և ոչ եպիսկոպոսի արգելուլ զայն, կամ սահմանել թիւ և ժամանակ հաղորդելոյ, եւս և վաճառականաց և ամուսնացելոց։

33. Սուրբ ժողովն տրիդենտեան զսուրբ հաղորդութիւնն կոչէ Պանդեղայ՝ որով՝ ի գանազանութեան յայլոց աղօթից, թէպէտ և պահիմք՝ ի մասնաւորաց։ Այսր աղաչաւ սուրբ առաքեալք հաղորդէին հանապազօր զնախնի հաւատացեալս, յորս գտանէին արդեօք և անկատարք, որպէս՝ ի

Թղթոյն Պօղոսի և Յակոբու առաքելոյ յայտ է. և վասն այսորիկ աղօթեմք ՚ի սուրբ պատարագի մաքրել զմեզ սրբոյ խորհրդոյն յաՀենայն ՀեռելոՒէ գործոյ Հերոյ. զի ոչ վասն կատարելոյ ևեթ, այլ և անկատարից սահմանեալ է խորհուրդս այս, որպէս զի զօրութեամբ սորին բժշկեսցին ՚ի Թերութեանց։ Ա՚ասն որոյ ասէ սուրբ Աաւետայինն. "Կատարելոց պարտ է ստէպ հաղորդել՝ առ ՚ի կալ մնալ ՚ի կատարելութեան, իսկ անկատարից՝ առ ՚ի կարօղ լինելոյ հասանել ՚ի կատարելութիւն,,։ Եւ Յայրն Կրանաթա ասէ. "Ալէ պարտ ուսմբ յետս կալ ՚ի սուրբ խորհրդոյ ասեն վասն անարժանութեան իւրոց, զի վասն աղքատաց տուաւ դանձս այս, և վասն հիւանդաց դեղս այս։ Ա՚ասն որոյ որչափ և անկատար ոք իցէ, ոչ է պարտ նմա հրաժարել ՚ի դեղոյ սորին, եթէ արդարև կամի բժշկիլ,,։ Եւ յաւելու զի որչափ առաւել տկար ոք զանձն ձանաչէ, այնչափ առաւել պարտի ձաշակել զկերակուրն հզօրիչ։ Ո՚որ և սուրբն Ա՚մբրոսիոս ասէ. "Որ հանապազ մեզանչեմն, հանապազ պարտիմ առնուլ զդեղ,,։ Եւ սուրբն Ո՚գոստինոս. "Որ հանապազ մեզանչեսդ, հանապազ ընկալ,,։

34. Ա՚ասցաք ՚ի գլ. Բ. 270. և սրբոյ Ա՚գուինացոյն վարդապետութիւն, զի զօրութիւն սրբոյ հաղորդութեան ըստ յաւելուածոյ ընծորհաց ոչ խափանի նեղբելն մեզաք, եթէ միայն չգործիցէ ոք զայնս ՚ի հաղորդելն. զի այսոքիկ թէպէտ և խափանեն ըստ մասին զշնորհութիւն նորա, այլ ոչ բոլորովին։ Եւ զայս վարդապետութիւն հաստատեն Ո՚ոմոյ, Ո՚ուարէզ, Ա՚ալենցիա, Ա՚ազուէզ, Վ՚ոնինքիոյ և այլք բազումք։ Եւ պարձեալ ըստ յորմանց երևելի աստուածաբանից խորհուրդս այս ՚է գործոյ գործեցելոյ քաւէ զմեզս ներելիս, յորս չիցէ ուրուք ներգործական յօժարութիւն։ Եւ որպէս նոյն ինքն սուրբ Ա՚գուինացին ուսուցանէ, չէ խնդիր կարևոր եռանդն զգալի առ ՚ի հաղորդել, այլ շատ է յօժարութիւն առնելոյ զՀաճոյս Ա՚ստուծոյ։ Ա՚պա թէ ոչ, որպէս յաւելու բազմահմուտն Վ՚երսոն, որ հրաժարէ ՚ի հաղորդութենէ վասն չգգալոյ եռանդն յանձին՝ նման է ցրտացելոյ, որ ոչ մտանէ առ հուր վասն չգգալոյ իւրոյ ջերմութիւն յանձին։ Ա՚ասն որոյ Յայրն

Արանաձա և Կայեձանոյ՝ ի վերոյ ածեն, զի որք առ
առաքապարտ երկիւղն անարժանութեան իւրեանց հրա-
ժարեն՝ ի հաղորդութենէ, միսա մեծ անձանց իւրեանց
գործեն. Այլ չէ իսկ կարեւոր առ՝ ի հանապազորդել՝ ի
սուրբ խորհուրդն, ասէ սուրբն Յաբեննաիոս Յուսա-
նեան, զգալ յայտնապէս աձումն եռանդեան. զի խոր-
հուրդս այս ներգործէ երբեմն անզգալի: Այլ սուրբն
Պոնաւենթուրա յաւելու, զի եթէ նուազագոյն իսկ
ոք յետ հաղորդութեան զգայցէ եռանդն յանձին, և ոչ
յայնժամ պարտի հրաժարել յայնմանէ: Պորձ իսկ է-
րացն վկայէ՝ քանի յառաջադիմեն՝ ի կատարելութիւն
այնոքիկ, որ փափաքանօք՝ ի սուրբ խորհուրդն յաճախ
մերձենան, թէպէտ և չկամիցի Տէր զգացուցանել զայն
նոցա՝ լքեալ զնոսա անմխիթար վասն առաւելագոյն օգ-
տի նոցա: Ալ ասն որոյ փոյթ կալցի խոստովանահայրն
քաջալերել զայնպիսիս, և որոց փափաքեինն ստէպ հա-
ղորդել՝ մի ընդդէմ դարձցի: Այլ խրատեսցէ մանաւանդ
՝ի զոհութիւն յետ հաղորդութեան, կալ ընդ փրկչին
գէթ զկէս ժամու, և զնդձս իւր և զկարօտութիւն
հեղուլ առաջի նորա: Արքունին Թերեզիա ասէ,
«Յետ հաղորդութեան բազմի Քրիստոս՝ ի հոգւոջ
մերում որպէս յաթոռ ողորմութեան առ՝ ի տալ մեզ
ինարհս, և որպէս ոչխարն ասէ յմեզ. Ո՞ՆԻՆ ԿԱՏԱ
ԱՐԱՐԵՑ ՀԵՂ.»:

ԽՐԱՏՔ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵՆԱՆ ՀԱՆՐԱԿԱՆՔ

Ա. Ջվստահել յանձն և յառաջադրութիւնս մեր,
այլ բոլորովին Աստուած ապաստանել. հաստատու-
թեամբ՝ ի մտի եդեալ յաղթել անձին, գոն գործել՝ի
դէպ ժամանակի և բոնն առնել անձին:

Բ. Ո՛չ գուշանալ չգործելոյ գիտութեամբ և վոչ-
տեսակ ինչ մեզս մանուանս, զի այնոքիկ խրամատեն ըզ-
ցանկ՝ ի մուտս մեծամեծացն:

Գ. Ալ՝ի տագնապիլ յանկանելն՝ ի թերութիւն ինչ.
խոնարհիլ անդէն, գիմել առ Աստուած համառօտիւ
ինչ ներգործութեամբ զղջման, և առաջադրութեամբ,
և համբարտել:

Դ. Հրաժարել յամենայն զերուեթենէ սրտի, ջա-
րիլ յապրելականս ի ստացուածս և ի հաճոյս. զի այսո-
ցիկ ախորժակք ոչ յամեն օտարացուցանել զսիրտ Աստ-
ուծոյ։ Փախչել յընտանուեթենէ տարաբերից, թե-
պէտ և երկիւղածաց. զի պատճառանօք հոգևոր սիրե-
լուեան՝ իղձս լինի ի սիրտ արկանել զևն ոչ անապակս,
զորմէ տես ի գլ. ԻՆ. 52։ Եւ մանաւանդ արհամար-
հել զանձն, և հրաժարել ի կամաց մերոց և ի հո-
գևորս, այսինքն յաղօթս, ի սուրբ խորհուրդս, ի ձըգ-
նուեթիւնս, այլովքն հանդերձ, նախասահմանեալ ըն-
դունեթիւն առնելով։ Եւ միանգամայն ասացեալ, պարտ
է արտաքսել ի սրտէ զամենայն որ ինչ ոչ է Աստուած,
կամ չէ հաճոյացոյն ինչ նմա։

Ե. Աւրախ լինել ընդ արհամարհանս և ընդ յետինս
քան զամենեսեան համարիլ յայլոց, մանաւանդ ի միա-
բանուեթեան մի ի կարևորագոյն առաքինուեթեանց է
այս։ Ի վերայ այսորիկ պարտ է մեզ սիրել զձշնամին,
և բարեբարել նոցա, պատուել զնոսա և խօսել զնոցա-
նէ բարիս, և մանաւանդ աղօթել վասն նոցա՝ որպէս ա-
րարին սուրբք առ հասարակ։

Զ. Ըղձիւք փափաքել սիրելոյ Աստուած և զհաճոյս
նորա առնելոյ. զի որպէս սրբասէրն Յերեզնիա ասէ,
"Ահա հաճի Աստուած ընդ իղձս, մինչև համարել
զայն յարդիւնս,,։ Զանց ըղձիցս այսոցիկ ոչ յառաջա-
դիմէ հոգի ի կատարելուեթիւն, և ոչ Աստուած առնէ
նմա ընդունելութիւն։ Պարտ է յաւելուլ միշտ ընդ
իղձս և զառաջադրուեթիւն՝ առնելոյ զհաճոյս նորա ըստ
կարի. զի որպէս նոյն սրբասէրն ասէ, "Ընպահանջէ այլ
լինի ի մինչ Աստուած բայց հաստատուն առաջադրու-
եթիւն, առ ի կատարել ապա ինքնին զամենայն,,։ Յա-
ւելուլ և զսէր աղօթից, որ է հնոց աստուածայինն սի-
րոյն. սուրբք ամենայն զի աստուածասէրք էին, նովին
իսկ էին և աղօթասէրք. և քանզի երկնայնոց ևեթ է
սիրել զԱստուած յամենայն զօրութենէ իւրեանց, և չէ
մարթ յերկրի աստ հաւասարել սիրոյ նոցա, պարտ է
մեզ փափաքել երկնից արքայութեան՝ զոր պատուական
արեամբն իւրով ստացաւ մեզ Քրիստոս։

Է. Յամենայնի լինել համակամ ընդ Աստուծոյ, և
ի հակառակս հաճոյից մերոց. վասն որոյ պարտ է

մեզ առեալ նուիրել Աստուծոյ զկամն մեր: Սրբուհին Թէրեզիա յինքնից յաւուրն առնէր զայս նուիրումն, և ասէր· «Ձմարիտ միաւորութիւն ընդ Աստուծոյ՝ է համակամութիւն ընդ նմա»:

Ը· Հնազանդել կանոնաց, մեծաւորաց, և հօր հոգևորի· և հնազանդել փութով, ձկղիւ, յօժարութեամբ և միամտութեամբ, առանց խնդրելոյ պատճառս ուր չիցեն յայտնապէս մեղք, որպէս ուսուցանեն սուրբն Բեռնարդոս, սուրբ Ալեքսացին, սուրբն Իգնատիոս և ըստ այսմ ասէ սուրբ Ասաւերեանն յորդորելն զղիմաբալ՝ի կատարելութիւն:

Թ· Աղաչել աչաց ունել միշտ զԱստուած· զի որ արդարև սիրէ զԱստուած, չկարէ մոռանալ զնա, վասն ո՞ր և առեալ յեղյեղէ· Յիսուս ֆրիէլ եմ, սիրեմ զքեզ՝ի բոլոր սրտի· Ո՞ եմ ես, ա՛ռ բոլորովին, արա ընդ ես ըստ կամացդ ոչինչ կամայ զոյ· Պարգևեա ինձ սիրել զքեզ արժանապէս: Այս չէ պարտ յայսոսիկ և յայսպիսի իղձս խնդրել միսիթարութիւն զգալի, այլ զկաձոյս ևեթ Աստուծոյ· և չնորհայ նորա ակն ունել աներկբայապէս, ըստ նորին սրբուհւոյ բանին· «Ա՛ի երկմտեսցուք, ոչ թողցէ Տէր անվարձ և զհամբարձումն աչաց առ՝ի յիշել զնա»:

Ժ· Յամենայնի զդիտաւորութիւն մեր առ Աստուած ուղերձել, եթէ՝ի հոգևոր և եթէ՝ի մարմնաւոր գործս մեր, և ասել· Ի ֆառս ֆո Տէր ես՝ է հաճոյս ֆո զայս առնել: Օ՛ի դիտաւորութիւն և զգործս՝ զկարի իսկ նիւթական՝ առնէ աստուածահաճոյս, որպէս զուտել ըզննջել և այլն:

ԺԱ· Ունել ամի ամի կրճատութիւն ութօրեայ հոգևոր, հրաժարեալ յամենայն գործոց և՝ի զբաղմանց՝ Աստուած միայն պարապելով: Օ՛նոյն և ամսոյ ամսոյ առնել օր մի: Կատարել ջերմեռանդն զպատրաստութիւնս տօնից Ծննդեանն Քրիստոսի, զՀոգեգալստեան, զՅիրամօրն, զհրեշտակաց, և զպաշտպան սրբոյ, առաւելագոյն աղօթիւք և ներգործութեամբ սիրոյ:

ԺԲ. Զոլ ջերմեռանդն առ սուրբ Աստուածածնայրն, առ հրեշտակն մեր պահապան, առ սուրբն մեր պաշտպան, առ հրեշտակապետն Միքայել պաշտպան ամենայն հաւատացելոց, և՛ ի վեր քան զամենեսեան առ Տիրամայրն յոյս մեր ես էիանդ. զի անհնար է բարեպատիս յառաջադիմել հոգւոյ՛ի կատարելութիւն առանց ջերմեռանդութեան առ Տիրամայրն։

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ

ՅԱՂԱԳՍ ԱՒՐՆԹԵՐ ԿԱԼՈՑ ՀԻՒԱՆԴԱՑ Ի ՀՈԳԵՎԱՐՍ

( )Ժանդակել հիւանդաց առ՝ի բարւոք մեռանել՝ քան զամենայն գործս սիրոյ է աստուածահաճոյ, և օգտակար՝ի փրկութիւն անձին։ Զի՝ի հոգեվարս անդ, յորում սահմանի իւրաքանչիւրոց՝ի մարդկանէ յաւիտենական փրկութիւն, ահագինք են և վտանգաւորք յարձակմունք դիւաց, և նուաղեալ հիւանդին զօրութիւն։ Ասուրբն Փիլիպպոս Ներեան ետես բազում անգամ զառեսիլ հրեշտակաց, որ Թելադրելին բան՝ի բերան քահանային առնթերակային՝ի հոգեվարս։

Ոչ ժողովրդապետաց ևեթ է պաշտօնս այս, այլ և ամենայն քահանայից. բայց ժողովրդապետն պարտք են գիմել ինքնին առ հիւանդն՝ առանց մնալոյ զի կոչեսցի, և յաձախել առ նա. և եթէ չկարիցէ գնալ ինքնին, յղել զոք՝ի բարեպաշտ և՝ի խոհեմ երիցանց, որ կարող լիցի զօգուտ հիւանդին և զընտանեաց նորա հայթայթել։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Խրատք առ քահանայս, որ առընթեր կան հիւանդաց՝ի հոգեվարս։

Ա. Պարտ է քահանային տեղեկանալ՝ի բժշկէն ծածկաբար՝ եթէ լիցի հիւանդութիւնն առ՝ի մահ։ Զսեմ լսիկ ծածկաբար, զի ամպարիշտ սովորութիւն է բժշկաց պատրել զհիւանդն և զընտանիս նորա անոտի յուսով, ուր պարտ է նոցա՝ի խղճէ մտաց յայտնել զվտանգն, և պատուիրել զհոգեւոր պատրաստութիւն։

Բ. Պետք կայցի գիտել յընտանեաց նորա կամ՝ի ծանօթից՝ եթէ լիցի՞ նորա առելութիւն ընդ ումեք, կամ սէր անկարգ՝ այլովքն հանդերձ, առ՝ի հոգալ զհոգեւոր պէտս նորա զգուշութեամբ, առանց ածելոյ նմա՝ի յուշ զառելիս նորա կամ զսիրելիս։

Օ վիրաւորեալս ՚ի մահ յորդորեսցէ յանյիշաչարու-
թիւն, և ընկալցի ՚ի նոցանէ թողութիւն թշնամեաց,
առանց հարցանելոյ նոցա զհարկանօղն և զորպէսն հա-
րուածոյն. և ՚ի յիշել իսկ նոցա զայն, այլ ինչ բանս ՚ի
վերայ ածցէ։ Այսպէս խաւխանեսցէ և զնօսա վիճակ,
զորդւոց, զգոյից, և զայլոց իրաց՝ որ յուզեն զկիրս։

Գ. Ի սկզբան անդ մի զնոստովանութենէ արասցէ
ինչ բան, այլ հարցցէ զհիւանդութենէն և զցաւոց նո-
ցա. յորդորեսցէ զնա ՚ի համբերութիւն և ՚ի համակա-
մութիւն ընդ Աստուծոյ, զվիշտս իւր նուիրել Աստու-
ծոյ ընդ չարչարանս Քրիստոսի ՚ի թողութիւն մեղաց
իւրոց. և ապա տակաւ յօժարեցուսցէ զնա ՚ի խոստո-
վանութիւն, հարցանելով քանի ժամանակք են յորմէ
հետէ չիցէ խոստովանեալ։ Պաշաւերեսցէ զնա յուսալ
՚ի Տէր, որ կարողն է տալ նմա առողջութիւն. այլ և
ծանուսցէ նմա մեղմով զվտանգն, և խրատեսցէ՝ մի վըր-
տահել ՚ի բանս բժշկին և ընտանեաց, որք աներկիւղ
առնեն զնա թէ գուցէ խռովեսցի։ Ապա խրատեսցէ
զնա յապահովել զպատրաստութիւն իւր միանգամ ՚ի
միտս կացցէ, և առնել զխոստովանութիւնն՝ որ օգնէ և
յառողջութիւն մարմնոյ, որպէս պատահէ իսկ ոչ սա-
կաւուց ՚ի խաղաղութենէ սրտի առողջանալ։ Պէտ հի-
ւանդն խնդրեսցէ ժամանակ, և ոչ ՚ի վերայ կացցէ մե-
տասաւոտ վտանգ մահու կամ անզգայելոյ, տացէ նմա
ժամանակ՝ թողեալ զխոստովանութիւն յերեկոյ կամ
՚ի վաղորդայն։ Այլ եթէ վտանգ ՚ի վերայ կացցէ, ծա-
նուսցէ նմա բանիւ սրբոյն Օգոստինոսի, զի Աստուած
խոստանայ մեզուցելոյն զթողութիւն, այլ ոչ զվաղոր-
դայն։ Իսկ եթէ յամառեսցի հիւանդն չխոստովանել,
մի մեկնեսցի ՚ի նմանէ մինչև ցվերջին շունչ. մերթ ա-
պարկուցանէ և մերթ յուսով առ Աստուած խրա-
տեսցէ զնա ՚ի դարձ, և աղօթիւք որոց անդն կան, և
հաստատակաց պաշտամանօք խնդրեսցէ ՚ի Տեառնէ շար-
ժել զսիրտ նորա։

Դ. Եթէ կարևոր իցէ ՚ի խաղաղութիւն ընտանեաց,
յորդորեսցէ զնա տալ հրաման և զտացուածոյ իւրոց.
մանաւանդ եթէ ըստ խղճի մտաց ևս պարտ իցէ հի-
ւանդին առնել զայն։ Պայց զգոյշ լիցի քահանայն
չխոնդրել երբեք զշահ իւր. այլ եթէ քրիք կամ եղբարք

իցեն հիւանդին ՚ի ծանր կարօտութեան, ազդ արասցէ նմա զպարտս իւր առ նոսա ըստ ասացելոցս ՚ի գլ. ժ. 237։ Իսկ եթէ կամիցի հիւանդն թողուլ ինչ վասն հոգւոյ իւրոյ, յորդորեսցէ զնա՝ մի ժառանգաց իւրոց յանձն առնել զայն. զի որպէս ՚ի փորձոյ յայտ է, սակաւք ՚ի հոգևոր հրիտակաց գան յարդիւնս։ Օգուշասցի և ՚ի թելադրելոյ ինչ նմա, ուստի զրկումն ումեք զհետ գայցէ. զի պաշտօնեկի Աստուծոյ ոչ է պարտ առեալ առնել զանձն իւր։

Ե. Մի՝ ինեղեսցէ զհիւանդն անդուլ անդադար խրատիւք և երկարելով զաղօթս, զի տկար է և տաղտկանայ. այլ համառօտ ինչ բանս ՚ի սուրբ գրոց, և խղճս սիրոյ առ Աստուած երբեք երբեք յուշ արասցէ։

Զ. Խաչ փոքրիկ ՚ի վերայ մահճաց տայցէ ունել հիւանդին, և յանդիման աչաց զպատկեր Տիրամօրն՝ յոր դիւրաւ կարասցէ հայել ստէպ, և յանձն առնել նմա զհոգի իւր։

Է. Ի բաց արասցէ յերեսաց հիւանդին զամենայն ինչ՝ յորմէ վտանգ իցէ նմա փորձութեան, զպատկերը և զնախատիպ. և ՚ի վերջին պահու զընտանիս իսկ նորա ՚ի բաց կացուսցէ, զի մի յուզեսցին գութք նորա։

ՅՕԴՈՒԱԾ Բ

Որ ինչ ընդդէմ փորձութեանց դեղք։

Ընդհանրական դեղ ընդդէմ ամենայն փորձութեանց է կարդալ զամենազօր անունն Յիսուսի և զԱրիամու, և կնքել զանձն ստէպ նշանաւ խաչի. այլ առանձինն և ընդդէմ փորձութեանց ինչ դեղք այսոքիկ են.

Ա. Ցոյժոնէ ընդդէմ հաւապոյ։ Ի փորձութենէ աստի նեղին սովորաբար այնոքիկ՝ որոց անկարգ իցեն լեալ կեանք, և մանաւանդ եթէ գիտունք իցեն լեալ և ՚ի կարծիս իւրեանց յամառք։ Ընդհիսեաց պարտ է արգելուլ զամենայն տրամաբանութիւն, և խրատել յամենայն երկմտութիւնս իւրեանց ասել. Հաւապոյ զոր ինչ հաւապոյ առաքէ էկեղեցի աստուածաճառոյն Վարդապետ Ճշմարտութեան. և գոհանալ զՏեառնէ՝ զի ՚ի ծոց սրբոյ եկեղեցւոյ են ծնեալ, և կամել ՚ի նմին կեալ և մեռա-

նել: Եւ ըղձել զմիտս ՚ի ներգործութիւն ղղջման, վըստահութեան առ Աստուած, աստուածսիրութեան և այլն:

Բ. Պորֆովրիէան ընդդէմ յոսոյ: Ընդ առաւելագոյնս ՚ի հիւանդսդ ՚ի հոգեվարս սովին փորձութեամբ պատերազմի դևն. վասն որոյ ոչ է պարտ խօսել նոցա զարդարութենէն Աստուծոյ, զպատժոց զժոխոց, զծանրութենէ մեղաց, այլ մանաւանդ զողորմութենէն Աստուծոյ, զբարեբարութեան Քրիստոսի, զաստուածային խոստմանց, և զբարեխօսութենէ սուրբ Աստուածածնին և ամենայն սրբոց: Պարտ է յոյժ աւնել նոցա՝ զի Աստուած հայր է գթութենից և Աստուած ողորմութեանց, զի ողորմութիւնք նորա անապատ են, զի գիտէ և այնոցիկ՝ որ ոչն խնդրեն զնա, զի առաւել ցանկայ նա փրկել զմեզ քան մեք մեզ փրկիլ, զի բազում նա էիմդ

Եւ զարձեալ յիշեցուցանել նոցա զբարեխօսութիւն սրբոց, և մանաւանդ զՏիրամօրն՝ որ ապաւէն է մեղաւորաց, յոյս մեր և կենդանութիւն: Ունքն իսկ յայտնեաց սրբուհոյն Պրիճիդայ, զի որպէս մայր պաշտպանէ զորդեակ իւր յերեսաց թշնամեաց, նոյնպէս և ինքն պաշտպանէ ի դիւաց զհոգի ինքն ապաւինեալ. զի չհայի ի մեզս նորա, այլ ի սիրտ նորա բեկեալ: Եւ սրբուհին Կատարինէ սենային ընկալաւ ի Տեառնէ յայտնութիւն, զի որ ի Տիրամօրն ապաւինի՝ չէ մարթ դիւին յափշտակել զնա:

Գ. Պորչիունկուլեան անհամբերութեան: Ոչ զցաւոց հիւանդութեանն տրանջիլն, պարտ է յուշ ածել նոցա զվկայիցն տանջանս, զքարկոծելոցն, զսղոցելոց, զմորթեզերծ կեղեքելոց, զյօշ յօշ պատառելոց, զկենդանի սրբեցելոց, զջարալուկ սպանելոց. և մանաւանդ զՔրիստոսի ի վերայ խաչին մեռանել չարչարանօք վասն մեր:

Յաւելուլ զարձեալ՝ զի անխուսափելի են ցաւք հիւանդութեան, և որ կրէ զայնոսիկ համբերութեամբ՝ թեթեւանան նմա, և կարձեն զկիրս քաւարանի, և յաւելուն զվարձս նորա յարքայութեան, զի համբերութիւն կատարեալգոյն քան զամենայն գործս առաքինութեան վկայեալ է ի գրոց. Ունի համբերութիւն գործ կատարեալ ունիցի. և զի Աստուած սիրելեաց իւրոց շնորհէ կրել ատ առաւելագոյն վիշս, խաչակիցս զնոսա առնելով իւր. Ըստ առաքելոյն յաճախութիւն ունելոց նեղութեանս մերոյ՝ ի յաւելուածական առատութիւն գթածութեան գործէ ի մեզ:

Դ. Պատանեաց և օրիորդաց, որոց տարաժամ հասանի մահ, պարտ է յիշեցուցանել զաղէտս կենցաղոյս, և մանաւանդ զվտանգս մեղաց և գատապարտութեան, վասն որոյ աւուրբք ցանկալին վաղագոյն ելանել ի կենաց, և սուրբ գիրք երանեն զննջեցեալս ի Տէր: Եւ զարձեալ զի ուղևոր եմք ի կենցաղումս, և ոչ ունիմք աստ քաղաք մնայուն, և ամենեցուն վաղ կամ անագան կայ մնալ մեռանել: Եւ զարձեալ զի գիտէ Տէր երբ օգտակարագոյն է մեզ մահ, և յայնժամ առաքէ մեզ զայն. վասն որոյ պարտ է մեզ յօժարութեամբ ընդունել զայն ի ձեռանէ Տեառն, և չիք նուէր աստուածա-

հաձոյ քան մտադիւր վանն մեղաց մերոց ընդունել ըստ կամացն Աստուծոյ զմահ, ի՛րբ և ո՛րպէս կամք ի՛ց նմա։

Ե. Ա՛ԵՃատանց, որոց սէր ընչից աճէ փորձութիւն, պարտ է յիշեցուցանել՝ զի Ճշմարիտ մեծութիւնք յերկինս են անվիշտ և անկորուստ, որ դանձին արհամարհութեամբ աստի ստացուածոց։

Ո՛վշտացեալս ընդ հրաժարումն յորդւոց և՛ի սիրելեաց՝ պարտ է սփոփել այնու, զի առաւել ևս մարթ է նոցա յերկինից օգնել ընտանեացն, և զի անդ գտանելոց են զինքեացեալս յընտանեացն և՛ի սիրելեաց, և յետ սուղ ինչ ժամանակի ընդ կենդանիսն ևս միանալոց են անմեկնելի՛ի յաւիտեան։ Այս զի դարձեալ առանց հաւատոյ՝ պէր՛ի վերոյ քան զամենայն սիրելեաց կենակցութիւն է զմայլական՝ կալ ընդ Աստուծոյ յերկինս, ընդ Աբրահամայ, ընդ սուրբ Աստուածամօրն և ընդ սուրբս ամենայն։

Զ. Ի՛սկ ընդդէմ ատելութեան և ոխակալութեան՝ պարտ է նախ յուշ առնել զպատուիրանն, Սիրեցէ՛ք զԻնձանէս ձեր. և ապա զխոստումն Աստուծոյ, Ո՛վ եթէ ընդունայնասիրտ խորհի զայնոցանս նոցա, ընդդէ՛մ ինձ ոչ հայրն ձեր երկնաւորք. դարձեալ զսպատնալիսն, Ապա թէ ոչ ընդունայնասիրտ խորհի զայնոցանս նոցա, և ոչ հայրն ձեր ընդդէ՛մ ձեզ ոչ ցայնոցանս ձեր։ Այս դարձեալ յուշ առնել՝ զի յոյժ ծանրագոյնք են յանցանքք մեք առ Աստուած, քան զամենայն յանցանս Ճշնաւեաց մերոց առ մեզ. վասն որոյ եթէ թողու մեզ Աստուած, ո՛րչափ ևս առաւել պարտ է մեզ թողուլ նոցա։ Այս դարձեալ յուշ առնել զնախատինսն՝ որ ազօթէր վասն քարաձգողացն՝ի վերայ նը. զսուրբն Յակոբոս՝ որ չարախօսին իւրում պիրկ եարկ՝ի մեռանելն. և զպիրկին մեր Աբրահամ՝ որ վասն խաչահանուացն իւրոց ազօթս առ Տէր մատուցանէր։

ՅՕԴՈՒԱԾ Գ

Յորդորակ և խրճք, զորս պարտ է յուշ առնել հիւանդաց ՚ի հոգեվարս։

Ա. Ա պատգամաւորն ես յոյս առ Աստուած։ “Ով հաւատայ ՚ի Տէր, և յանձն եղև,, Սերտ Բ. 11։

“Այս է քաւութիւն մեղաց մերոց,, Ա. Յհ. Բ։

“Որչիւր որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա, զիարդ ոչ նուաւ հանդերձ զամենայն ընծայիցէ մեզ,, Հռ. Ը. 32։

“Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց,, Սաղմոս։

“Ի քեզ Տէր յուսացայ, մի ամաչեցից յաւիտեան,, Սաղմոս։

“Այս ՚ի քեզ Տէր յուսացայ, ցնծացայց և ուրախ եղէց Աստուած փրկիչ իմ,, Սղմ։

“Այս յողորմութիւնս քո Տէր յուսացայ, և ցնծացաւ սիրտ իմ ՚ի փրկութեան քումմ,, Սղմ։

“Ընդ ընդէր տրտում ես անձն իմ, կամ ընդէր խռովվես զիս։ յուսա առ Աստուած, խոստովանեա նմա, փրկիչ երեսաց իմոց Աստուած է,, Սղմ։

“Բանզի յիս յուսացաւ, փրկեցից զնա,, Սղմ։

“Մի յամեթ առներ զիս ՚ի յուսոյ իմմէ,, Սղմ։

“Յոյս իմ ՚ի մանկութենէ իմմէ, մի թողուր զիս Տէր Աստուած իմ,, Ես ապ։

Ընդունն Քրիստոսի, արիւնն պատուական, դու միայն ես յոյս և ապաւէն իմ։

Փրկիչ իմ Յիսուս, ՚ի վերս քո կեցո զիս։

Որ վասն իմ չարչարեցար և մեռար, մի թողուր զիս։

“Ի քեզ եմ ապաւինեալ, Քրիստոսի մայր Աստուածոյ իմոյ,, Ես ապ։

“Մայր Աստուածոյ, բարեխոսեա վասն իմ մեղաւորիս,,

Ողջ լեր Թագուհի, մայր ողորմութեան, կեանք և յոյս իմ։

“Յոյս իմ և ապաւէն մայր Տեառն և սուրբ կոյս, բարեխոսեա վասն իմոյ փրկութեան,, Ես ապ։

Բ. Ի՛նչ՞ պղծմանն։ «Մի՛ մնաներ՝ ի դատաստան ընդ ծառայի քումմ, զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի»։ Աղմ։

«Օ՜հոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ»։ Աղմ։

«Հայր մեղայ յերկինս և առաջի քո, և ոչ ևս եմ արժանի կոչիլ որդի քո, արա զիս իբրև զմի՝ ի վարձկանաց քոց»։ Ղ։

«Ընդ միայն մեղայ Տէր, և չար առաջի քո արարի»։ Աղմ։

«Աստուած, քաւեա զիս զմեղաւորս»։ Ղ։

«Մեղայ Տէր, բաղումք եղեմ Աստուած, մեղայ, ողորմեա. մեղայ Տէր, խոստովանիմ զյանցանս իմ, մեղայ, ողորմեա»։ Ճ՝ աբ։

«Խաղաւմ են քո գթութիւնքդ, բազմամեղ անձին իմոյ ողորմեա»։ Ճ՝ աբ։

«Յանցանաց իմոյ զարհուրի սիրտ իմ, աղաչեմ զքեզ, Թո՛ղ ինձ Տէր»։ Ճ՝ աբ։

«Ընդ քեզ ապաւինեցայ որպէս զանառակ որդին, Հայր, մեղայ յերկինս և առաջի քո, ողորմեա ինձ Աստուած»։ Ճ՝ աբ։

«Ողորմեա ինձ, Քրիստոս, ողորմութեամբդ քոյ մեծաւ. զի կարօտ եմ ես ընարհի քո և ողորմութեան, ողորմեա և լուր ինձ բազմամեղիս»։ Ճ՝ աբ։

«Մնայն օրհնեալ սրբուհիդ՝ ի կանայս, բարեխօսեա առ Տէր, զի փրկեսցէ զիս՝ ի սպառնալեաց դեհենայն»։ Ճ՝ աբ։

«Աղաչանօք սրբուհւոյ անարատ Մօր քո և Կուսի, ապրեցո զիս յաւիտենից՝ ի մահուանէն»։ Ճ՝ աբ։

«Որ գՀուրն Աստուած՝ ի քեզ կրեցեր, մաղթեա փրկել զիս՝ ի հրոյն յաւիտենից»։ Ճ՝ աբ։

«Աստուածածին ապաւէն մեր և յոյս, բարեխօսեա առ որդիդ քո միածին, զի փրկեսցէ զմեզ՝ ի հրոյն տանջանաց, և պարգեւեսցէ մեզ զերկինից արքայութիւնն»։ Ճ՝ աբ։

Գ. Ի՛նչ՞ սէրդ։ Աստուած իմ, բարութիւն անսահմանելի, արժանի անբաւ սիրոյ, սիրեմ զքեզ՝ ի բոլոր սրտէ, սիրեմ զքեզ՝ ի վեր քան զամենայն և քան զանձն իմ։

Զեմ արժանի սիրելոյ զքեզ՝ ի մեղուցեալ սրտէ, այլ

վան սիրոյն Քրիստոսի ընդհակառակ ինձ սիրել զքեզ արժանապէս։

Սիրով զվիշտս հիւանդութեան իմոյ կրեմ, և զմահ վասն քո, որ վասն իմ չարչարեցար և մեռար։

Յանկամ հասանել արքայութեան քումմէ առ՝ի սիրել զքեզ։

Օ պատիժ մահուս վասն սիրոյ քո սիրով յանձն առնումք։

Երբ էիր ինձ լինել աներկիւղ՝ ոչ էս կորուսանելոյ զքեզ։

Այր սուրբ, դու ինքն ուսո ինձ զաստուածսիրութիւն։

Այր սուրբ, սիրեմ զքեզ և յոյժ սիրեմ, և ցանկամ հասանել երկնից արքայութեան վասն առաւել էս սիրելոյ զքեզ։

Դ. Ուղիւ համակամութեան ընդ Աստուծոյ։ Կենդանութիւն հոգւոյ մերոյ՝ի համակամութենէ ընդ Աստուծոյ է ըստ սաղմոսերգուին. "Երանի կեանք են՝ի կամսդ նորա"։ Օ՜ի որ ինչ օգտակարագոյն է մեզ, այն իսկ են կամք Աստուծոյ, վասն որոյ պարտ է ասել միշտ, և մանաւանդ՝ի հոգեվարս. "Եղիցին կամք քո, ոչ իմ կամք՝ այլ քոյդ լիցին"։

Կամիմ կրել, որչափ ինչ հաճոյ իցէ քեզ. կամիմ մեռանել, երբ և յորժամ հաճոյ իցէ քեզ։

Ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի և զմարմին իմ. եթէ միսիթարութիւն և եթէ տրտմութիւն ինձ անօրինես, ՚ի վիշտս և՚ի սփոփանս օրհնեցից զքեզ, յամենայն ժամ օրհնութիւն քո՝ի բերան իմ։

Մահակից ցանկամ լինել Քրիստոսի, զմահ իմ ընդ նորայն քեզ նուիրեմ։

Ե. Ուղիւ հաճանելոյ երկնից արբայութեան։ Պարտ է յուշ առնել հիւանդին, զի մահ՝ յորմէ խորշիմքն՝ սկիզբն է կենաց, նուաւ լինի մեզ հասանել երկնային բարեաց։ "Օ՜ որ աչն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և՚ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց"։ Ա Կոր. Բ։ Նա թելադրել նման զիղձս զայսոսիկ.

"Ով ապրեցուսցէ զիս՚ի մարմնոյ մահու"։ Ա. Կրն։

“Տէր հան՚ի բանտէ զանձն իմ,,: Աղ:

“Ընդ եկից երեսաց երեսաց Քոյոյ իմոյ,,: Աղ:

Յիսուս փրկիչ իմ, ընդ երեսս քո ես ինձ համբուրել զաւրը վերս քո:

Յիսուս փրկիչ իմ, հրամայեա ինձ գալ առ քեզ:

Մայր Քոյոյ, ընդ իմէ ինձ գալ տեսանել զքեզ, անկանել յոտս քո, գոհանալ զպաշտպանութենէդ քումմէ:

Ելէ արդ, ով բարեխօս իմ, գարձո առ իս զամենաողորմ Հայեցուածս աչաց քոց, և զօրհնեալ պատուական օրհնեայնի քո զՅիսուս յետ այսր աքսորանաց վայրի ցոյց ինձ:

Ջ. Ուղիդ՚ է համբուրել զսուրբ խաչն: Ա՛ի հայիր՚ի մեզս իմ, այլ՚ի չարչարանս քո:

Յիշեա յիշեա, զի վասն մեզաւորիս ընդեռնեցար՚ի խաչին:

Համբուրեմ զոտս քո զվասն իմ ընդեռնեալս՚ի խաչին. համբուրեմ զձեռս քո զվասն իմ տարածեալս՚ի վերայ խաչին. համբուրեմ զկող քո զվասն իմ խոցեալ. համբուրեմ զգլուխ քո զվասն իմ պսակեալ փշովք: Այր ամենակալ, վասն չարչարանաց միածնի որդւոյ քո տուր ինձ մահ բարի:

Է. Ուղիդ պարկանաւորդ համանայնէ ի կրօնաւորաց: “Խաղաղութեամբ յայսմ և՚ի սոյն ննջեցից և զարթեայց,,: Աղ:

“Ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ,,: Աղ:

“Մի ընկենուր զիս, Տէր, յերեսաց քոց,,: Աղ:

Մարգասէր Տէր, մի թողուր ինձ մեկնել՚ի քէն:

“Ի քեզ Տէր յուսացայ, մի ամաչեցից յաւիտեան,,: Աղ:

“Սիրեցից զքեզ Տէր, ապաւէն իմ և փրկիչ իմ,,: Աղ:

“Բաժին իմ ես դու Տէր. վիճակք ելին ինձ ընդ ընտիրս, և ժառանգութիւն իմ հաճոյ եղև ինձ,,: Աղ:

“Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումմէ երկեայց,,: Աղ:

“Դարձո զերեսս քո՚ի մեզաց իմոց,,: Աղ:

“Քո եմ ես, և կեցո զիս,,: Աղ:

“Ո՛ ողորմութիւնս քո, Տէր, յաւիտեան օրհնեսցից,,: Աղ:

Աբթուհի Մարիամ, մայր Աստուծոյ, բարեխօսեա վասն իմ մեղաւորիս ի ժամու մահուան իմոյ։

Աստուած մեղաւորաց, բարեխօսեա վասն իմ։

Կեանք, քաղցրութիւն, և յոյս մեր. փրկութիւն ո-րոց կարդան առ քեզ։

“( )ժանդակեա Թևոդոս աղօթիւք, խոստովանեալ մայրդ կենդանեաց. և ելիցն իմ յերկրէս հովտէ՝ առանց լկանաց հետևել ի կեանս օթևեվանացդ պատրաստութեան, զի թեթևասցի կատարածն իմ ինձ ծանրացելոյս անօրէնութեամբ։ Աստացես տօն ինձ բերկրութեան զօրն իմ տագնապի, աղաչին Աստուծոյ և մայր. բարձրասցի պատիւ քո ինձ, և ցուցցի փրկութիւն իմ քեզ.,,։ Նարէկ։

ՅՕԴՈՒԱԾ Դ

Խրատք վասն պաշտելոյ զվերջին խորհուրդս։

Ա. Որպէս ասացաք ի գլ. ժ.Ջ. 24, յորժամ վտանգ մահու մերձ ի վերայ կայ, և սուրբ Հոգին հասեալ է ի տուն, ոչ խնդրի նիւթական ամբողջութիւն խոստովանութեան՝ եթէ չկայ մարթ կատարել զայն փութով։ Նա պիտելի է զի ամենայն քահանայ կարող է ի հոգեվարս արձակել զհիւանդն յամենայն վերապահեղոյ ըստ յայտարարութեան սրբոյ տրիդենտեան ժողովոյն. և ոչ միայն ի ժամու մահուան, այլ և ի վտանգի նորին ըստ ասացելոցս ի գլ. ժ.Ջ. 92։ Նայց վասն բանադրանաց և պատժոց (և ոչ վասն մեղաց) վերապահելոց պարտ ի վերայ դնելով հիւանդին՝ յանդիման լինել մեծաւորի, եթէ տացէ նմա Տէր կեանս. որպէս ասացաք անդ ի թիւ 92։

Այլ քահանայի՝ որոյ չկայ հրաման ընդունելոյ զխոստովանութիւն՝ չէ օրէն արձակել զհիւանդն, եթէ կայցէ անդ այլ քահանայ՝ որոյ կայ հրաման. բայց եթէ սկսեալ կայ հիւանդն խոստովանել, և ապա հասցէ միւս քահանայն, ըստ ասացելոցս անդ ի թիւ 94։ Այլ որ մեղսակիցն լեալ կայ ի պղծութիւն, պարտի թողուլ և զսկսեալն խոստովանութիւն ի հասանել այլոյ ուրուք քահանայի, ըստ սահմանելոյ Բենեդիկտոսի ԺԴ։ Տես անդ։

Օրէն է արձակել զՀիւանդ անզգայեալ, դեթ պայմանաւ, ՚ի վկայել ուրուք խնդրելոց նորա զխոստովանութիւն կամ տալոց նշան զղջման. և և եթէ հիւանդն ՚ի մեղանչել անգ իցէ անզգայեալ, ըստ վարդապետութեան սրբոյն Գրիգորի Նիսացւոյ. զի համարի զղջացեալ ՚ի վտանգի անգ մահուան, և զի դարձեալ չիք անդարձութիւն խորհրդոյն ՚ի յաւելուլն զպայման։

Բ. Ո՞ւ ՚ի պաշտել զսուրբ Քրիսմին ոչ է պարտ սպասել ծանրանալոյ վտանգին, այլ շատ է զի իցէ վտանգ մահու, ըստ առաջելումն ՚ի գլ. յհ. 19։ Ոչ է պարտ պաշտել ուր իցէ վտանգ վերբերելոց զայն հիւանդին. և եթէ երկբայելի իցէ վտանգն, պարտ է փորձել նախ նշխարաւ՝ որ չիցէ սրբագործեալ։ Ցես անգ ՚ի Թիւ 29։ Օրէն է պաշտել զայն և մանկտուց, որ հասեալ իցէ ՚ի բանաւարութիւն։ Օրէն է պաշտել և յիմարաց՝ որոց բարեպաշտութեամբ կեցեալ իցէ, կամ սուղ ինչ յառաջ քան զվերլոգարերելն խոստովանեալ, և եթէ չիցէ վտանգ անարգութեան խորհրդոյն. վասն որոյ պարտ է զնոյն փորձ և առ փորձել, ըստ առաջելումն ՚ի գլ. յհ. 20։ Օրէն է և պարտ իսկ պաշտել զսուրբ Քրիսմն և յաւագ ուրբաթու աւուր, ըստ յայտարարութեան սրբոյ արարողութեանց ժողովոյն։

Ըստ հաստատակաց վարդապետութեան աստուածբանից՝ օրէն է ՚ի նմին հիւանդութեան կրկին պաշտել զսուրբ Քրիսմն յետ վեց կամ նուազ և աւուրց, վասն որոյ և հիւանդին ընդունել զայն անծոմ։ Իսկ եթէ յառաւօտուն ոք հաղորդեալ իցէ, և ապա վտանգեալ ՚ի մահ կամ դեղեալ կամ հարուածեալ և այլն, ոչ է օրէն պաշտել նմա զայն։

Պարտ է յորդորել զՀիւանդն ընդունելոյ զսուրբ Քրիսմն մինչդեռ առողջ իցէն միտք նորա, առ ՚ի զօրանալ ընդդէմ պատերազմաց դիւին, և առ ՚ի բժշկիլ իսկ ՚ի հիւանդութենէն շնորհօք խորհրդոյն՝ եթէ իցէ նմա յօգուտ։ Սուրբն Կիւրեղ աղեքսանդրացի ասէ զսուրբ խորհրդոյս, զի "Երժէ սա և զախտս մարմնոյ, և զհիւանդս բժշկէ"։ Եւ սուրբն Դիդիմոս Ալեքսանդրացի պատմէ զբժշկել հօր իւրոյ սովաւ։ Եւ ՚ի բերել քահանային զսուրբ Քրիսմն՝ պարտ է պատրաստել զհիւանդն եռանդեամբ ընդունելոյ զայն, յիշեցուցանելով

նմա զջուրչարանն Պրիսկոսի և զմեռանել վասն փըր-
կութեան մերոյ, և զհաւատալ յայնժամ առ ի հնոր-
հել նմա զքաւութիւն մեղաց։ Եւ հարցուածոյ պայ-
մանաւ պարտ է տալ նմա նորոգել զնեղգործութիւն
զղջմամն և սիրոյ. Ո՛ղջմամ ի բոլոր սրտէ վասն սիրոյն
Աստուծոյ ի վերայ ամենայն մեղաց քոց։։ Սիրեա՛ ի
բոլոր սրտէ զարարիչն քո և զփրկիչ, որ հրաւիրէ զքեզ
ի կեանս յաւիտենից։ Եւ ապա թելադրել նմա այս-
պիսի ինչ բանս ըղձակեաս. Ա՛յո՝ սիրեմ զքեզ, փրկիչ
իմ Յիսուս, և զղջամ ի բոլոր սրտէ զի զքեզ դառնա-
յուցի. սիրով զմահ յանձն առնում ի քաւութիւն մե-
ղաց իմոց, և առ ի գալ տեսանել և սիրել զքեզ ի
յաւիտեան։

Յաւելցէ յայնժամ քահանայն յորդորել զնա խըն-
դրել Թողութիւն՝ եթէ երբէք ումեք յանցուցեալ ի-
ցէ, և յանցուցելոց առ ինքն տալ Թողութիւն, և ա-
սել. "Թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք Թո-
ղումք մերոց պարտապանաց։ Ցկեր, չեմ բաւական՝ ե-
թէ ընդ յարկաւ իմով մտցես, այլ ասա բանիւ և
բժշկեսցի հոգի իմ։ Պատուէ Աստուծոյ, որ բաւնաս ըզ-
մեզս աշխարհի, ողորմեա ինձ։ Ո՛ինչ ևս խնդրեցիկ
յերկրէ. Նուաղեաց սիրտ իմ և մարմին իմ, Աստուած
սրտի իմոյ, բաժին իմ Աստուած յաւիտեան։։

Եւ յետ հաղորդելոյ հիւանդին պարտ է օգնել նմա
ի զոհութիւն, յուշ առնելով նմա զնա սուրբ հաղոր-
դութիւնն զրաւական է երկնից արքայութեան, և առ-
հաւատչեայ երանաւէտ միաւորութեան նորա ընդ Աս-
տուծոյ, և Թելադրել նմա այսպիսի ինչ բանս. Զոհա-
նամ զքէն փրկիչ իմ Յիսուս, ընդունիմ զքեզ սիրով
ի սիրտ իմ, և ցանկամ և յուսամ սիրել զքեզ ի յա-
ւիտեան. զղջամ բոլորով սրտիւ ընդ մեղս իմ, և առա-
ջադրեմ կեալ այսուհետև ի սէր քո, եթէ ասուղ և
եթէ երկար ինձ կեանք։ Լաւ եթէ արդ խակ կո-
չես զիս առ քեզ, աւասիկ կամ, եղիցին կամք քո. ահա
և եթէ յարատևել ինձ ի սէր քո, Աստուած սրտի իմոյ,
բաժին իմ Աստուած յաւիտեան։

Գ. Լսումն հոգևոր հոգաբարձութեան և պաշտել
զվերջին օծումն, որով պատրաստի հոգի մտանել յեր-
կինս. վասն որոյ պարտ է հիւանդին ընդունել զայն

մինչեւ կոխուածեալ զզգաստութիւն մտաց։ Օ՛ի թէ պէտ եւ՛ ի ծանր վտանգի պաշտի խորհուրդս այս՝ ըստ առաքելոյն՝ ի գլ. ԺԲ. 7, սակայն ոչ է պարտ թողուլ զայն՝ ի հոգեվարս. և ծանր մեղք են ժողովրդապետին յամել զայն մինչեւ ցանզգայութիւն հիւանդին։

Պարտ է ապա յուշ առնել նմա նախ՝ զի վերջին օծումն օգնէ և յառողջութիւն մատնոյ, եթէ օգտակար իցէ այն հոգւոյ. այլ ոչ յորժամ քննականապէս անբժշկելի լիցի հիւանդութիւնն։ Երկրորդ՝ զի բառնայ զմնացուածս մեղաց, և զմեղս իսկ մահացուս անծանօթս կամ մոռացեալս՝ ի նմանէ՝ ըստ առաքելոյն՝ ի գլ. ԺԲ. 1. վասն այնորիկ և յորդորեցէք զինա քահանայն զղջալ՝ ի վերայ այնց եւս մեղաց յօծանել ժողովրդապետին զզգայարանս նորա, և նովքին մտօք կցորդել զանձն։ Երկրորդ՝ զի օգնէ նմա՝ ի պատերազմել ընդդէմ դիւաց, վասն որոյ ոչ հրաժարէն կամաւ՝ ի խորհրդոյ աստի՝ ոչ գերծ գտանի՝ ի ծանր մեղաց, ըստ առաքելոյն անդ՝ ի թիւ 12։

Գիտելի է ասա Ա. զի չէ բաւական շնորհ մի իւղոյ յօծումն, զի անմարթ է օծանել այնու խակապէս զըզգայարանս։ Տես անդ՝ ի թիւ 2։ — Բ. Ըստ հանրագոյն կարծեաց՝ ի հարկաւորութենէ խորհրդոյն խնդրի օծումն հնգեցունց եւս զգայարանաց. վասն որոյ՝ ի ժամանակի եւթն սրածութեան և՛ ի մօտալուտ վտանգի օրէն է զմիւսեթ՝ ի նոցունց օծանել, և պարտ է յայնժամ օծանել զգլուխն պայմանաւս՝ եթէ ղօրէ, և՛ ի մի ձեւ կատարել՝ ասելով. Սովին օծումնեամբս նորովի ամենասուրբ ողորմութենէն Աստուծոյ տեսողութեանդ, լսելեաց, ճաշակելեաց, հոտոտելեաց և շօշափելեաց։ և յամենայն չարէ ապաւինեալ զքեզ փրկեսցէ Յիսուս Քրիստոս։ Այս եթէ կիցէ տակաւին հիւանդն, պարտ է վերստին պաշտել զխորհուրդն պայմանաւս՝ եթէ անկօր լիցի եղեսցէ, օծանելով զմի մի՝ ի զգայարանաց։ — Գ. Ձէ՛ի հարկաւորութենէ խորհրդոյն օծանել զերկոսին եւս՝ ի կրկնակ զգայարանաց, այլ օրէն իսկ է զմի եւեթ յաչաց կամ յականջաց օծանել՝ ի տեսիլ հարկին, կամ՝ ի վտանգի ածանցական ախտի, կամ եթէ չիցէ հնար շրջել զհիւանդն յանկողնի։ Օ՛ օծումն երիկամանց կանանց պարտ է՝ ի բաց թողուլ, և զարանց իսկ՝ եթէ

եղբայրսիրութեան քաջ՝ ի բաց հեռի են՝ ի մեղաց։
զի առանց մեղաց ոչ ոք գտանի լեալ անկատն, և գործք
նորին համարեսցի զանձն անկեալ յանկատնութիւն.
յանկարծ՝ ի շրջելն աւանդեսցէ զկոպին, մի՛ վասն այ-
հանգոյն մի՛ շրջել զհիւանդն վասն օծանելոյ. այլ եթէ
(զեթ հաւանականաբար) ի հիւանդութենէ իւրմէ, և
՝ի վերստին անկանել՝ ի վտանգ։ — ԺԲ. Ջոյշ լեալ քա-
զիաւորդա զայս, բայց միայն յառողջանալ հիւանդին
նայականն սպասուց պաշտել զայն։ — Ժ. Եթէ օրէն կրկնել
սում վտանգի օրէն է և առանց մոմեղինաց, առանց
սպասաւորի, և հաւանականաբար առանց խոկ քահա-
տոպատ ժամանակ՝ կատարել և զայլ աղօթս։ Յայնպի-
աղօթս, և զձև խորհրդոյն եւեթ ասացեալ, եթէ լինի
անղգիոյ և՝ ի յայտնի մեղս վախճանելոյ, որպէս և բա-
պի, և եթէ ոչ՝ ի ծանր ինչ մեղս իցեն անղգայեալ. զի
անղգայելոց զինակցութեամբ, եթէ իցեն՝ ի վտան-
պաշտել զայն պայմանաւ։ Զերկն է պաշտել զայն և
յայտ եթէ լեալ իցէ երբեք բանաւարութիւն, օրէն է
անարգութեան նորա. և առաւել եթէ վայրիկ մի ըզ-
դատութեան լեցի նոցա մերձ՝ ի մահ։ Խոկ որոց չիցէ
նոցա, օրէն է պաշտել զխորհուրդն՝ եթէ չիցէ վտանգ
մարթ իցէ համարել զի խնդրէին՝ եթէ առողջ էին միտք
պէ, և եթէ ոչ՝ ի ծանր ինչ մեղս իցեն անղգայեալ. զի
անղգիոյ և՝ ի յայտնի մեղս վախճանելոց, որպէս և բա-
նադրելոց, չէ օրէն պաշտել զխորհուրդս զայս։ Յեր-
կուընս իսկ կանանց վտանգաւորս օրէն է պաշտել զայն։
— Զ. Խոտիլել վտանգին՝ օրէն է թողուլ՝ ի բաց զայլ
աղօթս, և զձև խորհրդոյն եւեթ ասացեալ, եթէ լինի
տպա ժամանակ՝ կատարել և զայլ աղօթս։ Յայնպի-
սում վտանգի օրէն է և առանց մոմեղինաց, առանց
սպասաւորի, և հաւանականաբար առանց խոկ քահա-
նայական սպասուց պաշտել զայն։ — Է. Եթէ օրէն կրկնել
զխորհուրդս զայս, բայց միայն յառողջանալ հիւանդին
(զեթ հաւանականաբար) ի հիւանդութենէ իւրմէ, և
՝ի վերստին անկանել՝ ի վտանգ։ — Ը. Ջոյշ լեալ քա-
հանայն մի՛ շրջել զհիւանդն վասն օծանելոյ. այլ եթէ
յանկարծ՝ ի շրջելն աւանդեսցէ զկոպին, մի՛ վասն այ-
նորիկ համարեսցի զանձն անկեալ յանկատնութիւն.
զի առանց մեղաց ոչ ոք գտանի լեալ անկատն, և գործք
եղբայրսիրութեան քաջ՝ ի բաց հեռի են՝ ի մեղաց։

ՅՕԳՈՒԱԾ Ե

Որ ինչ ի հոգեվարս և ի ժամ մահու պարտ է առնել քահանային։

Ի մտանել հիւանդին ի հոգեվարս՝ պարտ է օգնել նմա ըստ կարի ի ձեռն ընկերացոյ։ Ա. Արակել ատեպ զնովաւ զօրհնեալ Ջուր, ասելով. «Յարիցէ Ա-ստուած և ցրուեսցին թշնամիք նորա»։ Բ. Խաչակնքել զնա ատեպ նշանաւ խաչին, ասելով. Օրհնեսցէ զքեզ Հայրն երկնաւոր՝ որ արարն զքեզ. օրհնեսցէ զքեզ Որդին միածին՝ որ փրկեացն զքեզ. օրհնեսցէ զքեզ Հոգին Ճշմարիտ Ա-ստուած՝ որ սրբեացն զքեզ յաւա-զանին։ Գ. Տալ նմա ատեպ ի հաւքոյր զնշան խաչին, և զպատակեր Տիրամօրն։ Դ. Տալ նմա զներողութիւնս, և մանաւանդ զվիճակատարն՝ որ ի ժամ մահուն։ Ե. Նրբեկք երբեկք յուշ առնել նմա բանս զղջման, համա-կամութեան ընդ Ա-ստուծոյ, նաւթիման ցաւոցն, ապա-շնութեան ի չարչարանս Քրիստոսի և ի թարեխա-սութիւն Տիրամօրն, տալով նմա միշտ հանդիստ։ Զ. Տալ նմա ասել ի սրտէ, եթէ ոչ ևս զօրէ արտասա-նել, զամենասուրբ անունն Յիսուսի և զԱրիամու։ Է. Տալ աղօթել և որոյ անդն կան, մանաւանդ զվի-ճանիա Տիրամօրն. և պարտ է գիտել զի ի լքանել հիւանդին ի զօրութենէ՝ լաւ է օգնել նմա աղօթիւք քան բանիւք։ Ը. Երբ ի մահ հիւանդին՝ ասել զա-ղօթան «Յրաժարեա հոգի քրիստոնէիս», և այլն, հանդերձ այլովքն՝ որ կան ի գիրս այցելութեան հի-ւանդաց։ Թ. Զգոյշ կալ ջծուտելոյ յունչ և ի ձեռս կամ յոտս հիւանդին առ ի փորձ նուաղելոյ ջերմութեան, զի զգան և նեղին յայնմանէ հիւանդք։ Ժ. Ա առել մոմեղէն օրհնեալ առ հիւանդին ի նշանակ աւանդելոյ նորա զհոգին ի սուրբ Հաւատս։ ԺԱ. Նորոգել երբեկք երբեկք զներպօրծութիւն զղջման և զարձակումն վանն ապահովելոյ զնա, եթէ երբեկք ի դիւական փորձու-թիւնս անդ յանցուցեալ իցէ ինչ։ Իսկ եթէ ոչ ևս ըզ-գայցէ հիւանդն, և չկարիցէ նորոգել զղջումն, պայ-մանաւ և մի կարի ատեպ արձակել զնա։ Օգնէ առ այս խրատել զհիւանդն ի զգաստութեան, զի ի չկարելն

խօսել՝ նշանացի խնդրեսցէ զարձակումն, որպէս թանալոյ կամ փակելոյ զաչս, խոնարհելով զգլուխ, շարժմամբ ձեռին, կամ այլ ինչ նշանաւ: ԺԲ. Յորժամ Թուխ աւանդեալ հիւանդին զհոգի, մի իսկոյն փակել զաչս նորա և զբերան, կամ զդէմս նորա ծածկել. զի մարթ է թէ չիցէ տակաւին մեռեալ, և արագէ այն զմահ նորա: Այլ՝ի ստուգել մահուն՝ ազդ արասցէ քահանային որոյ անդն կան, յանձն առնել՝ի ստուծոյ զհոգի նորա, և ինքն՝ի ծունր իջեալ կատարեսցէ զաղօթս՝ որ տպագրեալ կան՝ի նոյն գիրս այցելութեան հիւանդաց. ուր յաւելեալ է և վերջին օգնութիւն հիւանդին, և որ ինչ հառաչական աղօթս՝ի բերանոյ նորա պարտ է քահանային կատարել:

ՅՕԴՈՒԱԾ Զ

Նշանք մերձենալոյ մահու հիւանդին:

Յոյժ դժուարին է գուշակել զժամ մահու հիւանդին, զի և փորձք և հմուտք իրացն ոչ դուն ուրեք խաբին: Այլ գլխաւոր և հանրագոյն նշանք են նախ՝ դժուարաւ և նեղութեամբ տուրևառ շնչոյ. երկրորդ՝ պակասել բաբախման զարկին, կամ դեռալ, կամ ընդհատ բաբախել. և երրորդ՝ գոլանալ աչացն, և այլ ընդ այլոյ տեսանել:

Ի վերայ այսոցիկ այլևս նշանք մերձենալոյ մահուն են շունչ գալշահոտ, քիրտն ցուրտ, ականջ ազտաւուք, նրբիլ անգաց, դեղնիլ երեսաց, կնճիռն՝ի ճակատուն, կերպարանափոխութիւն դիմաց, կապուտակել եղընգանց, տատանիլ ձեռաց, ժողովիլ շիրս կամ հերս՝ի վերմակին, ջերմութիւն՝ի սրտակողմն, պաղել ծայրից, հառաչ ցրտաշունչ և անձայն, կրձտել ատամանց, կերկերել փողոյն՝ի պղտամէ, դադարել զարկին: Այայց ջրգոլք, ընչարդելք, թոքախտիւ կամ մաշարայիւ հիւծեալք, վտանդեալք՝ի թանչից և՝ի ժայթքելոյ, և որոց իցեն վէրք խղխղայթեալք, կամ խոց մահացու, կամ պղտամ՝ի փողն, սակաւս՝ի նշանաց ասեմ տան, և բազում այն է՝ զի տեստիկ զարկիւ՝ի խօսել անդ խրթեանց անընչանան. վասն որոյ աներկիւղ ղգուշութիւն քահանայի այն է, կալ միշտ առընթեր հիւանդին:

ՅԱԽԵԼՈՒԱԾ Գ

ՔՆՆՈՒԹԻՒՆ ՆՈՒԻՐԵԼՈՑ Ի ՍՈՒՐԲ ԿԱՐԳ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՋԽՈՐՀՐԴՈՑ ԱՌ ՀԱՅԱՐԱԿ

1 · Ջ[ինչ է խորհուրդ:
2 · Ո՛ր ինչ [նդրի առ՝ի կատուցանել զխորհուրդ · արդեօք Թլփատու-
Թիւն էր խորհուրդ:
3 · Ո՛ր ինչ արբազան էրք և արարողութիւնք:
4 · Բաժանումն խորհրդոց:
5 · Նիւթ խորհրդոց:
6 · Զև խորհրդոց, կցորդութիւն նիւթոյն ընդ ձևոյ:
7 · Աչքալրութիւն էակաև և պատահական:
8 · Պայմանաւ պաշտել զխորհուրդ · յորժամ երկբայելի էր ձևն կամ
նիւթ · ընդհատումն ձևոյ:
9 · Դիտաւորութիւն պաշտօնեի և ընդունողի խորհրդոց:
10 · Պաշտօնեայ խորհրդոց:
11 · Պա՛րտ էր նմա զոլ՝ի շնորհս:
12 · Եթէ աչխարհիկ ոք էր սկրտօղն, կամ առանձնաբար պաշտէր
զխորհուրդն, շա՛տ էր նմա զքնալ՝ի մեղաց:
13 · Եթէ՝ի մահուընչափ մեղս տացէ զարձակումն կամ զտուրբ հաղոր-
դութիւն, կամ մատուսցէ զպատարագ:
14 · Կխոտորիկաւոր կամ սարկաւագ որ սպասաւորէ հանդիսատէս:
15 · Եթէ պաշտեսցէ խորհուրդ անարժանաւոյ:
16 · Կեղծեաք պաշտել զխորհուրդ:
17 · Կեղծեաք ընդունել զխորհուրդ:
18 · Պա՛րտ էր պաշտօնեի ունել դիտաւորութիւն առնելոյ զոր առնէ
եկեղեցի:
19 · Ո՛ր ինչ կարեւոր վասն վաւերաբար և ըստ օրինի ընդունելոյ զխոր-
հուրդ:
20 · Խնդրել զայն՝ի բանադրելոյ կամ՝ի մեղաւորէ:
21 · Օրէն էր տալ դրամն պաշտօնեի խորհրդոյն:
22 · 23 · Աբդասէք խորհրդոց, և նախ շնորհք:
24 · Կնիք խորհրդոց:

1 · Խորհուրդ, ըստ հանրական նշանակութեան, յուցանէ զծածկեալ ինչ · այլ որպէս խորհուրդ եկեղեցւոյ՝ է նշան պճալի անէրեւոյթ շնորհաց՝ի սբբութիւն հաւատացելոց առհմանեալ՝է Քրիստոսէ: Այլ նշան պճալի, այսինքն արտաքին նշան առհմանեալ՝ի նիւթ գինելի: Ընդ-

երկոյն ընդվզայ, զի անտեսաբար ներգործէ խորհուրդ զընորհս իւրև, այսինքն՝ ի գործոյ գործելոյ, եթէ ընդունողն ոչ դիցէ խափան: Սահմանեալ ՚ի Կիպրիոսէ. զի ըստ հաւանականագոյն կարծեաց նոյն ինքն որդին Աստուծոյ, ևս և որպէս մարդ, ներգործէ իշխանութեամբն իւրով սահմանեաց զխորհուրդս:

2. Պարտ երեք ինչ խնդրին առ ՚ի կացուցանել զխորհուրդ. նախ՝ նշան ինչ արտաքին, երկրորդ՝ խոստումն ընորհաց, երրորդ՝ սահմանադրութիւն Քրիստոսի. զի ամենայն խորհուրդք ՚ի չարչարանաց նորա առնուն զօրութիւն: Խնդիր է թէ արդեօք և թլփատութիւն լոկ լեալ խորհուրդ սրբարար: Ասացն Օգոստինոս, և աշակերտք նորա նախնիք և արդիք, և բազումք ևս յաստուածաբանից խորհուրդ համարին զայն. կէսք զսրբարար զօրութիւն նորա վարկանելով ՚ի գործոյ ևթէ գործողին, այսինքն ՚ի հաւատոյ նորա. և այլք ՚ի գործոյ ևս գործեցելոյ, այսինքն սահմանելոյն Աստուծոյ զայն ՚ի պայման սրբելոյ զսկզբնական մեղս: Լոկ այլք ոչ սակաւք ժխտեն զայն, վասն չունելոյ ՚ի գրոց հաստատուն ինչ վկայութիւն առ այն, և ընդ հակառակն տարեալս տկարս և աղքատս համարելոյ առաքելոյն զամենայն օրինականս, ընդ որս և զԹլփատութիւն: Այս նախնի Հայրք, Կրանոս, Յուստինոս, Կիպրիանոս, Տերտուղիանոս, Հայիփան, Կիւրեղ, Ալեքսանդր, և այլք ՚ի Յունաց, չընդունին ՚ի Թլփատութեան այլ ինչ զօրութիւն, բայց նշան ուխտին և խոստմանցն Աստուծոյ, որով Թլփատեալքն գրեալ ՚ի մարմին հրեական ժողովոյ՝ լինէին անդամք եկեղեցւոյն Աստուծոյ, դաւանել զհաւատս Աբրահամու, և նովին հաւատովք սրբել ՚ի սկզբնական մեղաց:

3. Լոկ խորհրդական կամ սրբազան իրք սահմանեալք յեկեղեցւոյ՝ են օծմունք, օրհնութիւնք, և այլն, որք իւրովին չունին զօրութիւն քաւելոյ զմեղս, այլ ընդունելոյ ևթէ զաստուածային օգնականութիւն առ ՚ի գործել զբարիս՝ որովք քաւին մեղք:

4. Նազմապատիկ բաժանին խորհուրդք: Կէսք կարևորք են հարկաւորութեամբ միջնորդի, որպէս միութիւն վասն ամենեցուն, ապաշխարութիւն վասն մահու չափ մեղուցելոց, կարգն վասն որոց պաշտեն զը-

խորհուրդ հաղորդութեան, և ըստ հաւանականապէս կարծեաց՝ հաղորդութիւնն, զկնի ընձեռման, վասն հասելոց՝ ի բանաւարութիւն: Իսկ այլք հարկաւորութեամբ պատուիրանի. որպէս դրոշմն ըստ հաւանական կարծեաց, և վերջինն օծումն ըստ հաւանականագոյն կարծեաց: Դարձեալ բաժանին՝ ի կրկնելիս, որպիսի են հաղորդութիւն, ապաշխարութիւն, վերջինն օծումն և պսակ. և յանկրկնելիս, որպիսի են մկրտութիւն, դրոշմ և կարգ, վասն անջինջ տպաւորելոց նոցա կնիք: Դարձեալ բաժանին՝ ի խորհուրդս մեռելոց, որպիսի են մկրտութիւն և ապաշխարութիւն՝ որք զհոգի անկենդան, այսինքն զուրկ՝ ի շնորհայն Աստուծոյ, կենդանացուցանեն՝ տալով զառաջնապարգեւ շնորհս. և՝ ի խորհուրդս կենդանեաց, որք երբեմն ըստ պատահմանն տան և զառաջնապարգեւ շնորհս, այսինքն յորժամ որ՝ ի մեզս լինի, և յանդիպս անկատար ղղջմամբ ընդունելոյն զայնս: Դարձեալ բաժանին՝ ի տեսականս՝ այսինքն որ բերեն զարդասիս շնորհաց, և յանտեսական՝ այսինքն որ ոչ բերեն շնորհս: Այլ թէ արդեօք լիցի հնարաւոր խորհուրդ ապաշխարութեան վաւեր և անտեսական, այսինքն առանց շնորհաց, տես՝ ի գլ. ԺԲ. 18:

5. Արդեք լինչ խնդրին յէութենէ խորհրդոյ. նիւթ, ձև և գիտաւորութիւն: Նիւթ է մարմնաւոր լինչ և զգալի, որպէս ջուր՝ ի մկրտութեան, մեռոն՝ ի դրոշմին, և այլն. այլ այսոքիկ են նիւթք հեռաւորք, իսկ մերձաւոր է հեղումն ջրոյն՝ ի գլուխ երախային, կամ օծումն Ճակատոյ դրոշմելոյն, և այլն:

6. Ձև է բանն՝ զոր պաշտօնեայ խորհրդոյն արտասանէ: Այլ՝ ի վաւերականութիւն խորհրդոյն՝ խնդրի կցորդութիւն նիւթոյն ընդ ձևոյ, այսինքն զի՞ւ աւարտեալ զձևն, կամ յետ սկսանելոյ զոյն, պարտ է տալ ընդունողի խորհրդոյն զնիւթն: Կարծիք այնոցիկ, որ բաւական համարին տալ զնիւթն նոյնհետայն զՀետ ձևոյն, հաւանական միայն է և ոչ առանգ բաւարարեալ. վասն որոյ և՝ ի կատարումն խորհրդոյ անընդունելի: Այլ միայն՝ ի խորհուրդ ապաշխարութեան և պսակի ասէ լինչ յամեցումն ընդ նիւթ և ընդ ձև՝ ոչ լինչ ըստ նմանէ վաւերականութեան:

7. Արեւ այլ իցէ նիւթն ըստ գոյացութեան՝ որպէս գինի փոխանակ ջրոյ, կամ այլայլեալ ձեւն՝ մինչեւ ոչ ևս տալ զնոյն խմաստ, որպէս թէ փոխանակ ասելոյ ես Դիրեմ կամ Դիրե Ֆառաայս Աբրէսոսէ, ասէ ես սրսկեմ կամ սրսկէ Ֆառաայս Աբրէսոսէ, անվաւեր է խորհուրդն: Այլ վաւեր է, եթէ պատահական ինչ իցէ այլայլութիւն. որպէս եթէ ջերմ իցէ ջուրն, կամ փոխանակ ասելոյ յանուն Հօր՝ ասիցէ ոք յանուն Հօր ամենակալէ: Այլ այսպիսի փոփոխութիւնք չեն ինչ ազատ ի ծանր մեղաց:

8. Ի պահանջել հարկին կամ կարեւոր օգտի, օրէնն է պայմանաւ պաշտել զխորհուրդս. ոչ միայն զայնս՝ որ ինքեք տպաւորեն, որ հաւատոի է, այլ և զայլսն՝ ուր ուրեք երկբայելի իցէ նիւթն առ ի չգոյէ ստոյգ նիւթոյ: Այլ թէ արդեօք օրէն իցէ պաշտօնէի խորհրդոյն առ ահի սպառնալեաց մահու վարել զնիւթ կամ զձեւ երկբայելի, Անքէզ և Վռնինքիոյ օրէն համարին՝ եթէ չիցեն սպառնալիքն ի ճշմարտես խորհրդոյն: Արեւ ի նիւթ խորհրդոյն խառնեալ իցէ այլ նիւթ կիսով չափ կամ աւելի, անպատկանաւոր է նիւթն. իսկ եթէ նուազ քան զկէս, պատկանաւոր է: Ընդհատումն ձեւոյն եթէ սուղ ինչ իցէ, ոչ ինչ ատնանի վաւերականութեան խորհրդոյն. իսկ եթէ այնչափ՝ զի ոչ ևս զմի խմաստ ընծայեսցէ, անվաւեր է: Օէ օրէն երկրորդել զձեւ սրանց հաւանական երկբայութեան զվաւերականութենէ առաջնոյն: Ունիթ և զձեւ խորհրդոյ կէսք համարին սահմանեալ ի Վրիատոսէ ընդհանրապէս, և թողեալ եկեղեցւոյ սահմանել զայն որոշակի. այլ ըստ հաւանականագոյն վարդապետութեան ի Վրիատոսէ սահմանեալ են ըստ էական մասանցն: Ամն որոյ ընդ նախնի և ընդ արդի սովորութիւնս եկեղեցւոյ եթէ իցէ զանազանութիւն ի նիւթ և ի ձեւ խորհրդոյ, պատահական ինչ է և ոչ էական: Տես ի գլ. ԺԲ. 15:

9. Ազ վաւերականութիւն խորհրդոյ՝ խնդրի և դիտաւորութիւն պաշտօնէին ներգործական և կամ դէթ զօրութեամբ: Ներգործական է դիտաւորութիւն, յորժամ ոք ի պաշտելն զխորհուրդ՝ դիտէ ներգործութեամբ առնել զայն իբրև խորհուրդ. իսկ զօրութեամբն՝ որ առէ միշտ ի պաշտօնեայն, որպէս սատ-

ցաք ՚ի վեր անդր զայսմանէ ՚ի գլ. ԺԴ. 2։ Եւ ունա-
կական պիտաւորութիւն, որ իցէ լեալ յուժիք յառաջա-
պոյն, և չիցէ նորա նահանջեալ զայն. այլ այս բաւէ
ընդունողացդ և եթէ խորհրդոյն. զի ՚ի կարևոր ժամանա-
կի Թէպէտ և ՚ի քուն կայցեն, Թէպէտ և յարբեցու-
Թեան, և յիմարեալ ևս Թէ իցեն յետ կամելոյ ընդ-
ունել զխորհուրդս, օրէն է պաշտել նոցա զայնս։ Ա՛ա-
նաւանդ վասն դրոշմի և վերջին օծման բաւէ ընդունո-
ղաց և մեկնողականն, այսինքն որ չէ և ոչ լեալ է յու-
մեք, այլ լինելը՝ եթէ ՚ի միտս նորա անկեալ էր։

10. Պաշտօնեայք խորհրդոց սոքա են։ Արքեպ կար-
գին՝ եպիսկոպոսն միայն. դրոշմին՝ եպիսկոպոսն ըստ կար-
գի, այլ և քահանայք հրամանաւ։ Իսկ այլոց խորհրդոց՝
քահանայն է պաշտօնեայ, բայց ՚ի պաակէ և ՚ի մկրտու-
Թենէ ՚ի կարևոր ժամանակի. զի յայնժամ և աշ-
խարհականք և կանայք և հերձուածողք իսկ կարեն
մկրտել։

11. Պէ ՚ի պաշտել վաւերաբար զխորհուրդս՝ չէ
հարկ պաշտօնէին գոլ ՚ի շնորհս Սուրբ Հոգւոյ, զի և մե-
ղաւորք վաւերաբար պաշտեն զխորհուրդս։ Նոյպէս ըզ-
խորհուրդ ապաշխարութեան չկարեն պաշտել վաւե-
րաբար հերետիկոսք և բանադրեալք խոշընդունք, քան ա-
սացեալոցս ՚ի գլ. ԺԶ. 92։ Պէտ առ ՚ի պաշտել զխոր-
հուրդս ըստ օրինի, պարտ է պաշտօնէին գոլ ՚ի շնորհս.
բայց միայն ՚ի սահմանել հարկին՝ եթէ չկարիցէ ունել
զղջումն առ ժամայն, Սոթոյ, Սուարկչ, Վոլետոյ,
Կայեթանոյ, Վալենցիա և Տնաքլեթոյ, ներելի հա-
մարին նմա հաւանականաբար. այլ ոչ երբեք ժողովըր-
դապետի և հոգաբարձուի, որոց պարտ է կալ միշտ
պատրաստ ՚ի պաշտել զխորհուրդս։ Իսկ որ պատարա-
գին ՚ի մահուանէ մեզս՝ չորեքկին մեզանէ. մի՝ զի ան-
արժանապէս քահանայագործէ, երկրորդ՝ զի անարգ-
ժանութեամբ հաղորդի, երրորդ՝ զի անարժանապէս
պաշտէ զխորհուրդն, և չորրորդ՝ զի պաշտէ անարժա-
նոյ, որ ինքն իսկ է։

12. Պէտ աշխարհիկ զ՚ի պակինն կամ ՚ի պաշտել
առ հարկի զխորհուրդ մկրտութեան, և ձեռնադրեալ
զ՚ի պաշտեին առանձնաբար զխորհուրդս, մեղանչե-
ցե՞ն՝ գոլով ՚ի մահուանէ մեզս։ — Սուրբ հաւանականա-

պոյն կարծեաց ծանր մեղանչէն, զի զսբբութիւնս սըրբութեամբն պարտ է պաշտել: Իսկ պաշտօնեի, որ հանդիսապես պաշտէ զխորհուրդս, շատ է ունել զըզջումն. այլ առ՝ ի մատուցանել զպատարագ՝ պարտ է նման և խոստովանել. և չէ օր ազատ՝ ի պարտուց առաքի, բայց եթէ՝ ի տանելէ հարկի պատարագելոյ՝ զգատնիցի խոստովանահայր: Այլ յայնժամ, ըստ սահմանելոց տրիդենտեան ժողովոյ, պարտ է նմա յետ պատարագին վաղագոյն խոստովանել:

13. Խոստովանահայր յընդունել եթէ զխոստովանութիւնն՝ ի մահուչափ մեղս, ըստ հաւանականագոյն կարծեաց՝ ոչ ծանր մեղանչէ, զի չպաշտէ զխորհուրդ. այլ յարձակել իբրեւ զապաշխարողս բազումս, և ս և զհետ միմեանց, ըստ Թուոյ ապաշխարողացն գործէ մեղս ծանուցանել, զի միւսմ միւսմ պաշտէ խորհուրդ այլ և այլ: Պահանայ կամ սարկաւագ, որ՝ ի մահացու մեղս պաշտէ զխորհուրդ հաղորդութեան, մահուչափ մեղանչէ. այլ՝ ի պաշտել զայն բազմաց՝ ոչ բազմապատիկ զմեղս, զի ըստ հաւանականագոյն կարծեաց՝ զմի ինչ բարոյապէս կատարէ պաշտօն:

14. Սարկաւագ և կիսասարկաւագ՝ որք՝ ի մահուչափ մեղս սպասաւորեն սեղանոյ, ծանր մեղանչեն հաւանականաբար ըստ բազմաց աստուածաբանից. այլ հանրագոյն և բաւականապէս հաւանական կարծիք ազատ կացուցանեն զնոսա՝ ի ծանր մեղաց՝ զի չկատարեն և ոչ իսկ պաշտեն զխորհուրդ: Զարմանալ, որ՝ ի մահուչափ մեղս բեմահաւսկ, ըստ հանրագոյն և հաւանականագոյն կարծեաց՝ ոչ ծանր մեղանչէ. զի ոչ պաշտէ զպաշտօն կարգին, այլ յարակից ինչ նմին, որ իբրեւ ոչ ածէ չնորհս՝ որպէս ածեն զայն խորհուրդք:

15. Ծանր մեղք են պաշտել անարժանաւոր զխորհուրդ, եթէ ոչ խնդրիցէ զայն առաջի այլոց՝ յորոց զանխտիր կացեն մեղք նորա: Այլ օրէն է եպիսկոպոսի ըստ տրիդենտեան սահմանադրութեան՝ չձեռնադրել զոք վանն ծածուկ յանցանաց, թէպէտ և առաջի այլոց խնդրիցէ զկարգ: Նա ոչ իսկ պարտական է եպիսկոպոսն յայտ առնել վանն որոց իրաց մերժէ զնա, ըստ վճռոց ժողովոյն տրիդենտեան սահմանադրութենէ: Իսկ եթէ օրէն կացէ խոստովանահօր արձակել զանկեալն

զարձադարձիւ՝ ի մեզս ծանուցնա, ՚ի խնդրել նորա ըզ-
սուրբ կարգ, տես ՚ի գլ. Է. 48. և ՚ի գլ. ԻԸ. 16. 17:

16. Ոչ օրէն պաշտօնեի, և ոչ առ ահի մահու, կեղծեօք պաշտել զխորհուրդ. հակառակն վարդապե-
տութեան տարագրեալ է Յովնովկենատեայ ԺԱ: Այս հա-
մարի կեղծեօք պաշտել՝ որ ոք զձև խորհրդոյն արտա-
սանէ առանց դիտաւորութեան, կամ այլ ինչ փոխա-
նակ ձևոյն արտասանէ՝ առ ՚ի կարծեցուցանել այլոց զն
պաշտիցէ զխորհուրդ: Այլ օրէն է խոստովանահօր
փոխանակ ձևոյ արձակման առնել աղօթս ինչ ՚ի վե-
րայ ապաշխարողին՝ որ չիցէ ընդունակ արձակման, ոչ
առ ՚ի կեղծել զարձակումն՝ այլ առ ՚ի ծածկել զմեղս
ապաշխարողին. զի չէ այն կեղծել զխորհուրդ, այլ
ծածկել զձշմարտութիւն: Արարեննա օրէն ևս հա-
մարի խոստովանահօր, ՚ի պահանջել ապաշխարողն
ապառնալեօք զարձակումն, յաւելուլ անձայն զմնացեալն
ոչ՝ ասելով Եա ոչ արժանի եմ. զի չէ պարտական խոս-
տովանահայրն լսելի առնել ապաշխարողի զարձակումն,
վասն որոյ և չէն իրաւունք ապաշխարողի պահանջել՝ զի
զամենայն բառս ձևոյն բարձրաձայն արտասանեսցէ:

17. Այս որպէս չէ օրէն պաշտօնեի խորհրդոյ կեղ-
ծեօք կատարել զխորհուրդ, նոյնպէս և ոչ ընդունել
ումեք կեղծեօք զխորհուրդ: Այլ այս ոչ արգելու չը-
կարել ումեք մատչել ՚ի խոստովանարան, առ ՚ի խօսել
զայլմէ իմեքէ ընդ քահանային: Այլ սակաւք յաստուա-
ծաբանից օրէն (կամ գէթ ոչ ծանր ինչ մեղս) համա-
րին խօսեցեալոց՝ որոց առ ՚ի խափանել զպայծառութիւն
հարկ իցէ պսակիլ, և իցեն նոցա արգելք լուծիչք, կեղ-
ծեօք տալ միմեանց հաւանութիւն. զի առ ՚ի չգոյէ ներ-
քին հաւանութեան՝ անվաւեր լինի պաշնադրութիւն,
և առ ՚ի չգոյէ դաշին՝ անվաւեր և պսակն:

18. Ընդհանրապէս պաշտե զխորհուրդ որ ոք ՚ի պաշ-
տելն զայն և ՚ի ներգործել զարտաքին արարողութիւն
խորհրդոյն՝ չկամիցի առնել զայն ըստ դիտաւորութեան
եկեղեցւոյն Քրիստոսի, Թէպէտ և լրջմտութեամբ
պաշտեսցէ զայն, և ոչ ընդ խաղ ինչ, որպէս յետասանա-
բար և զայն իսկ վաւերական համարեր Ի ուրեք: Նոյնպէս
եթէ կամիցի ըստ դիտաւորութեան եկեղեցւոյ առնել
զայն, Թէպէտ և չիցէ նորա յայտնի դիտաւորութիւն

կատարելոյ զխորհուրդ, վասնզի է խորհուրդն։ Նչեմ իսկ յայտնէ պետրոս ասելով. զի եթէ դրախտապէս չիցէ նորա դիտաւորութիւն կատարելոյ զխորհուրդ, անվաւեր է, զի չկամի յայնժամ առնել զայն ըստ դիտաւորութեան եկեղեցւոյ։ Նսկ ՚ի կատարել զսրբազան իւղ մահուչափ մեզոք, որպէս յօրհնել զջուր, յօծանել զսկիհ և այլն, ոչ ծանր մեղանչէ պաշտօնեայն։

19. Ա՝ան վասնզի արդարեւ և ըստ օրինի ընդունելոյ ընդ խորհուրդս, խնդրի նախ՝ զի իցէ ոք մկրտեալ, զի առանց մկրտութեան ոչ ոք ընդունակ է այլոց խորհրդոց։ Նսկ վասն մկրտութեան ոչ խնդրի դիտաւորութիւն ՚ի մանկտին և ՚ի յիմարս ՚ի ծնէ, զի բաւէ վասն նոցա դիտաւորութիւն եկեղեցւոյ։ Յայլ խորհուրդս խնդրի զկնի ունակական դիտաւորութիւն յընդունողս, ըստ ասացեալսն ՚ի Թիւ 9։ Ա՝ան որոյ բռնի ձեռնադրեցան անվաւեր է կարգ։ Նայց եթէ առ երկիւղի և ևս ՚ի իցէ ոք ձեռնադրեալ, ոչ է անվաւեր. զի երկիւղ ոչ բառնայ զկամաւորութիւն։ Յհնարհատանական է զի իցէ օրէն պաշտել զխորհուրդս ՚ի վտանգի մահուան արբեցելոյ և յիմարելոյ, որոց յառաջագոյն լեալ իցեն կամք ընդունելոյ զայնս։ Նաւէ և մեկնողական դիտաւորութիւն յանպայմանս ՚ի վտանգի մահուան վասն ընդունելոյ զվերջին օծումն, զդրոշմ, և զհաղորդութիւն. այլ ոչ և զմկրտութիւն և զկարգ, և մանաւանդ զապաշխարութիւն և զպսակ՝ առ որս խնդրի դիտաւորութիւն ներգործական, կամ դէմ ջրութեամբ։

Խնդրի և պատրաստութիւն յընդունողս խորհրդոյ վասն ընդունելոյ զայնս ըստ օրինի, այսինքն գոլ ՚ի շնորհս Նստուծոյ։ Ա՝ան որոյ որ ՚ի մահուչափ մեզս իցէ, պարտի զկնի զղջալ կատարելապէս, հանդերձ ապաշխարութեամբ խոստովանելոյ։ Նսկ վասն ընդունելոյ զհաղորդութիւն՝ խնդրի և խոստովանութիւն, եթէ ՚ի ստիպել հարկին՝ ոչ պակասեսցէ խոստովանահայր. և յայնժամ պարտ է քահանային յետ պատարագին վաղագոյն խոստովանել, ըստ ասացեալսն ՚ի Թիւ 22։ Նւ հարկ համարի նախ՝ ուր պարտ իցէ տալ ուժեք ըզսուրբ Թոշակն։ Նրկրորդ՝ առ ՚ի խափանել զբարահամբաւութիւն և զգայթակղութիւն։ Նրրորդ՝ ժողովրդապետն առ ՚ի չթողուլ զժողովուրդն յաւուր տօնի ան-

պատարագ։ Ընդդէմդ՝ եթէ յետ սրբագործութեան յիշեսցէ քահանայ զմեզս ինչ իւր։ Իսկ որ զխորհուրդ ապաշխարութեան առանց զղջման ընդունիցի, ոչ միայն ըստ ոչ օրինի՝ այլ և անվաւեր է խորհուրդն, զի զըզջումն ապաշխարողի՝ ևս և նիւթ է խորհրդոյս։ Այլք ի խորհրդոյ առանց խոկ զղջման ընդունողացն վաւերք են, և ի բառնալ մեղացն կամ կեղծեաց՝ ներգործեն զշնորհս իւրեանց։

20. Ընդ օրէնն ի մեզաւոր կամ ի բանադրեալ պաշտօնեէ առանց իրաւացի պատճառի խնդրել զտուրբ խորհուրդս, թէպէտև իցէ նա ժողովրդապետ։ Այլ յիւրաւացի պատճառ համարի և օգուտ հոգևոր. վասն որոյ օրէն է խնդրել նախ՝ առ ի ընուլ զպատուիրան խոստովանութեան, հաղորդութեան, և պատարագի, կամ վասն ընդունելոյ զներողութիւն առօրին։ Ներկրօղ՝ առ ի զերծանել վաղագոյն ի խղճէ մահաւորի մեղաց։ Ներօղ՝ եթէ հասանէ ումեք ընդերկար առանց խոստովանութեան կամ հաղորդութեան։ Այլ ի բանադրելոյ խորշելոյ և ոչ ի վտանգի մահաւան օրէն է ընդունել արձակումն, զի և ի յետին կարևորութեան անվաւեր է այն ըստ ասացելումն ի Թիւ 11։

21. Որքո՞ն իցէ տալ պաշտօնէի խորհրդոյ արծաթ ի չիամել նորա ձրի պաշտել զխորհուրդս։ — Սրբոյ Պօղոսեանցն ոչ օրէն Թուի համարել զայս. այլ որ ինչ և իցէ ինամատը բանից նորա, սակայն ըստ հանրական կարծեաց օրէն է՝ ոչ միայն ի յետին՝ այլ և ի ծանր իսկ հարկաւորութեան հատուցմամբ դրամոց ընդունել զխորհուրդս։ Նախ՝ զի հատուցումն դրամոց չէ ինչ իւրովի չար. և հատուցողն ոչ չարութեան կամաց պաշտօնէին՝ այլ գործոյ նորա լինի գործակից ըստ ասացելումն ի գլ. Դ. 31. 32։ Նա երկրորդ՝ զի չիք անդ սիմոնականութիւն. զի հատուցող դրամոյն ոչ առ ի գնոյ առնուլ զխորհուրդն՝ տայ զարծաթն, այլ առ ի խափանել զչարութիւն պաշտօնէին, և առ ի շահել զկամս նորա։ Զանաւանդ զի հատատացելոյ իրաւունք են ի վերայ խորհրդոց, և ըստ սրբոյ Պօղոսեանցն իսկ վարդապետութեան՝ յետ ստանալոյ զնիրաւունս ի վերայ իւրեանց՝ օրէն է բառնալ արծաթով զանիրաւ արգելս նորին։ Ոչ այսու ոչ Սաւարիշ, Լաքրուա և այլք օրէն

համարին զայս ոչ միայն վասն միաբանութեան և ապաշխարութեան, այլ և վասն վերջին օծմանն:

22. Արկին են արդասիք խորհրդոյ, տալ ընծայս, և տաւարել կնիք: Այս ընծայք ևս կրկնապատիկ են. ընծայք սրբարար՝ որ առնեն զմարդ սիրելի Աստուծոյ, և ընծայք սեփական իւրաքանչիւր խորհրդոյ՝ առ՝ի ներգործել զզօրութիւն խորհրդոյն, որպէս միաբանեան՝ ընդել զմեզս, դրոշմի՝ հաստատել՝ի հաւատս, հաղորդութեան՝ զօրացուցանել զհոգի, ապաշխարութեան՝ թողուլ զմեզս, վերջին օծմանն՝ տալ զօրութիւն ընդդէմ դիւաց՝ի հոգեվարս, սրբոյ կարգին՝ տալ նպաստ առ՝ի բարւոք պաշտել զգործ պաշտամանն, և պսակին՝ առ՝ի կատարել զպարտս ամուսնական կարգին:

23. Խորհուրդք՝ յընդունողս նոցին ըստ օրինի՝ ներգործեն ընծայս՝ի գործոյ գործողին, այսինքն ըստ վաստակոյ կամ արժանաւորութեան ընդունողին: Այլ արդեօք բնականապէս ներգործիցեն զայն՝ որպէս սուրբ Աստուածային ուսուցանէ, թէ բարոյապէս՝ որպէս ուսուցանէ Ակովա. այսինքն զի ջուրն կամ իւղ և այլ նիւթք խորհրդոց վերառեալ Աստուծոյ՝ի կարգ գերբնական՝ ըստ աստուածաձիր զօրութեանն ներգործիցեն զընծայս, թէ Աստուած ինքնին՝ի կատարել խորհրդոյն ներգործիցէ. երկաքանչիւրոցն ևս վարդապետութիւն է հաւանական: Խորհուրդք մեռելոց, այսինքն միաբանութիւն և ապաշխարութիւն, ներգործեն զառաջնապարգև ընծայս. իսկ այլք՝ որ են խորհուրդք կենդանեաց՝ յաւելուն և երէք զընծայս, այլ երբեմն՝ի զղջացեալս անկատար զղջմամբ՝ որք կարծեն զղջացեալ կատարեալապէս՝ ներգործեն ևս զառաջինն ընծայս:

24. Այժմ ևս արդասիք խորհրդոյ է տաւարել կնիք. և է կնիք նշան ինչ հոգևոր անջնջելի դրոշմեալ՝ի հոգի ընդունողին զխորհուրդն: Այս տաւարի կնիքս այս՝ի ձեռն միաբանեան, դրոշմի, և ձեռնադրութեան, ՚ի նշանակ արժանապատուութեան՝ յոր ամենառնայ ընկալուչ խորհրդոյն: Օ՛ի միաբանեամբ խառնի՝ի հօտ երկնաւոր հովուին, և լինի ընդունակ խորհրդոց. դրոշմաւ զինուորի Քրիստոսի, և զօրանայ՝ի խոստովանութիւն հաւատոց. իսկ ձեռնադրութեամբ անցանէ՝ի կարգ պաշտօնէիցն Քրիստոսի, և առնու իշխանու-

Թիւն մատակարարելոյ զխորհուրդս։ Յընդունել եւս ուրուք զխորհուրդս զայսոսիկ ըստ ոչ օրինի՝ տպաւորի ՚ի նմա կնիքս այս, եւ ոչ ՚ի մեղանչել նորա բառնի ՚ի նմանէ։ Ա՛կրտուԹիւն և դրոշմ յաւելոյն և աղգակատուԹիւն հոգևոր, լուծիչ պսակի մկրտողին ընդ մկըրտեալն և ընդ ծնօղս նորին, և կնքահօր կամ կնքամօր ընդ սանս իւրեանց և ընդ ծնօղս նոցին։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՋՈՐՀՐԴՈՑ ԿԱՐԳԻՆ ԱՌՀԱՍԱՐԱԿ

25. Թէ զի՞նչ է կարգն։
26. Զի՞նչ ձեռնադրուԹիւն։
27. Քանի՞ն է կարգ, և արդեօք եպիսկոպոսուԹիւն եւս կարգ ուրոյն։ Մէն մի ՚ի կարգաց եւս՞ն խորհուրդք։
28. Ո՞ր եւեն նիւԹ և ձև կարգին։
29. Պաշտօնեայ կարգին։
30. ՋօրուԹիւն կարգին։
31. Որ ինչ խնդրին ՚ի վաւերական ձեռնադրուԹիւն։
32. Որ ինչ խնդրին յօրինաւոր ձեռնադրուԹիւն։
33. Ո՞ր իւրաքանչիւր ուրուք եւս սեփական եպիսկոպոս, յորմէ պարտ եւս նմա ընդունել զկարգ։
34. Զկրօնաւորացն։
35, 36. Որ ինչ գիտուԹիւն խնդրի ՚ի ձեռնադրելեացս։
37, 38. Ապրուստ ձեռնադրելեացս։
39. Կեղծ ապրուստ։
40. Զի ըստ կարգի պարտ է ընդունել զաստիճանս. ժամանակ ձեռնադրուԹեան։
41, 42. Մինչդեռ ընդ աստիճանս։
43, 44. Տեղի ձեռնադրուԹեան, և հասակ։
45. Տիրահրաւէր կոչումն։
46. Ո՛չք ոմանք անկանին յարգել։

25. *Կարգ ըստ սրբոյ Աթուինացւոյն է նշան, որով եկեղեցի Աստուծոյ տայ նուիրելոյն իշխանուԹիւն հոգևոր։ Ա՛սն է հաւատոյ ըստ սահմանելոյ տրիդենտեան ժողովոյն՝ խորհուրդ գոլ կարգին. զի են ՚ի նմա երբեակ պայմանք խորհրդոյ, այսինքն նշան զգալի՝ որ է ձեռնադրուԹիւն, սահմանադրուԹիւն Քրիստոսի յաւելն՝ "Օ՛այս արարէք առ իմոյ յիշատակի,,, և տուչուԹիւն շնորհաց ըստ առաքելական բանին՝ "Յիշեցուցանեմ քեզ արծարծել զշնորհն Աստուծոյ, որ են ՚ի քեզ ՚ի ձեռնադրուԹենէ իմմէ,,։*

26. Օ անապատն կարգ ՚ի ձեռնադրութենէ. զի կարգ է իշխանութիւնն տուեալ, իսկ ձեռնադրութիւն է տուչութիւն այնր իշխանութեան յեպիսկոպոսէ. ըստ այսմ քահանայութիւն ՚ի ձեռնադրութեան է խորհուրդ, և ոչ ՚ի կարգին։

Աւօթնեակ աստիճանք են կարգին, փոքունք և մեծամեծք. փոքունքն են քառեակ. դռնապանին, ընթերցողին, երգիծնեցուցչի և ջահընկալին. իսկ մեծքն երեք. կիսասարկաւագին, սարկաւագին և քահանայի։ Յաւելուն հաւանականաբար և զաստիճան եպիսկոպոսութեան Պետրոսինոս, Անքեզ, Հաբերտ և այլք բազումք, վասն զանազանելոյ նորա ՚ի քահանայութենէ այնու՝ զի տայ քահանային իշխանութիւն սրբագործելոյ զՀայն և զգինի ՚ի մարմին և յարիւն Քրիստոսի, և արձակելոյ զհաւատացեալս ՚ի մեղաց։

27. Պ՚ԱՐ արդեօք մի մի յաստիճանաց աստի իցէ՞ն խորհուրդք։ — Օ՚կարգ քահանայութեան չիք երկբայել, զի է ՚ի հաւատոց. սարկաւագութեան ևս կարգ հաւաստեաւ է խորհուրդ, այլ ոչ ՚ի հաւատոց. Իսկ այլոց կարգաց հաւանականաբար համարի տուրբ Աստուածային խորհուրդս գոլ, իբր զի իւրաքանչիւրոյ Թուխ սահմանեալ նիւթ և ձև։ Պ՚ԱՐ ըստ միութեան նպատակի ամենեցուն՝ եօթանեքին աստիճանք մի և եթ կայուցանեն խորհուրդ. զի ՚ի կատարումն սրբոյ պատարագին սահմանին բանիւն Քրիստոսի, «Օ՚այս արարէք առ իմոյ յիշատակի»։ և բովանդակին իսկ գերապանցաբար փոքր աստիճանք ՚ի կարգ քահանայութեան։ Զան որոյ հաւանականապէս է այլոց կարգաց, քան ՚ի քահանայութենէ և ՚ի սարկաւագութենէ, խորհուրդս ոչ գոլ. զի և գլխաւորն նիւթ պակասէ ՚ի նոսա, որ է ձեռնադրութիւն՝ որպէս աստուցուք ըստ հաւանականապէս կարծեաց ՚ի ստորև. պակասէ և ձև, զի ՚ի տուչութեան նոցին չիք յիշատակ ընծայից՝ այլ իշխանութեան եւթ։ Օ՚այսցանէ աստուցաք բաւականապէս ՚ի գլ. ԺԲ. 14։

28. Զի՞ր իցէ նիւթ և ձև կարգին։ — Զրեակ զայսմանէ են կարծիք. կէսք համարին զտուչութիւն եւթ սպասուց, այլ այս չէ հաւանելի։ Պ՚ԱՐԱՔ կրկին համարին զնիւթ կարգին, զտուչութիւն սպասուց և զձեռ-

նադրութիւն. ըստ այսմ կարծեաց նիւթ հեռաւոր համարին սպասքն և ձեռն եպիսկոպոսի: Իսկ հաւանականագոյն կարծիք այնոցիկ է, որք նիւթ կարգին համարին զձեռնադրութիւն, և ձև զբանն՝ զոր եպիսկոպոսն՝ ի ձեռնադրելն իւրում ասէ. Աստուածային ի երկնաւոր շնորհք և այլն. որպէս ցուցաք՝ ի գլ. ԺԲ. 16:

Այլ քանզի միւս կարծիքն ևս է հաւանական, վասն որոյ խնդրի և տուչութիւն սպասուց, և իսկապէս ընդունելութիւն նոցին, այսինքն շօշափմամբ ձեռին կամ մատին: Եւ չէ կարևոր, որպէս ասացաք՝ ի Թիւ 6, զի՝ ի սկզբանէ մինչև ցվախճան ձևոյն կալցի զբ զբնպասն, այլ շատ է ունել զայնս յառաջ քան զվախճան ձևոյն, կամ յետ սկսանելոյ նորին: Եւ ձև է բանն, զոր եպիսկոպոսն յաւանդել զսպասսն ասէ: Այլ գիտելի է զի՝ ի սուրբ կարգս պարտ է նմին իսկ եպիսկոպոսի, որ զձևն ասէ, տալ նուիրելոյն զսպասս. ևս և՝ ի տուչութեան փոքր աստիճանաց, թէպէտ և՝ ի սոսին չիցէ ամենակարևոր, որպէս հաստատեն սուրբ Աթանասին և այլք: Գիտելի է դարձեալ զի եթէ մի յեպիսկոպոսաց զձեռնադրութիւնն կատարեսցէ, և միւս զբ զպատարագն, վաւեր է ձեռնադրութիւնն՝ այլ ոչ օրինաւոր, ըստ յայտարարութեան Ինոսենտեայ ԺԳ:

29. Օրինաւոր պաշտօնեայ կարգին է եպիսկոպոսն միայն. այլ կարէ Հռոմայ քահանայապետն աւանդել քահանայի իշխանութիւն տալոյ զփոքր աստիճանս, որպէս և է իսկ իշխանութիւն աբբայից տալոյ զայնս կրօնաւորաց իւրեանց և նորընծայից, այլ ոչ և այլոց, որպէս յայտ է՝ ի վէմոյ ժողովոյն տրիդենտեան սահմանադրութեանց, հաստատութեամբ Ուրբանոսի Ը: Տես՝ ի գլ. Ի. 113–116: Իսկ եթէ զբ յաբբայից ձեռնադրիցէ զաշխարհիկ զբ, որ կամ հպատակ իցէ իւր և կամ հրամանապիր յեպիսկոպոսէ իւրմէ ունիցի, թէպէտ և վաւեր է ձեռնադրութիւնն՝ այլ ոչ օրինաւոր, ըստ յայտարարութեան նոյն ժողովոյ. վասն որոյ և անկանին ձեռնադրեալքն յարգել:

30. Երեսակ արկասիք են խորհրդոյ կարգին. նախ՝ շնորհք սրբարար, որպէս յամենայն խորհուրդս՝ ըստ ասացելումն՝ ի Թիւ 22. և շնորհք սեփհական խորհրդոյն, այսինքն զօրութիւն բարւոք պաշտելոյ զկարգն: Երկ-

րորդ՝ իշխանութիւն կատարելոյ զպաշտամունս կարգին։ Եւ երրորդ՝ տալաւորել կինք անչնջելի, վասն որոյ չէ մարթ կրկին տալ զնոր և իցէ աստիճան կարգին։

31. Ընդ վաւերականութիւն ձեռնադրութեան խընդրի ոչ նուիրեալն իցէ նախ՝ ուղևոր. երկրորդ՝ այր, զի կին չէ ընդունակ խորհրդոյ կարգին. երրորդ՝ մկրտեալ. չորրորդ՝ զի ունիցի դիտաւորութիւն, դէթ ունակական, ընդունելոյ զկարգ, ըստ ասացեալսն ի Թիւ 9։

32. Իսկ առ օրինաւոր ձեռնադրութիւն խնդրի նախ՝ զի իցէ դրոշմեալ. այլ ըստ Հանրական կարծեաց՝ ոչ ընդ ծանր պատճէն։ Երկրորդ՝ զի մի իցէ մատաղատունկ, այսինքն նորահաւատ. և մի անուանարկ, կամ անկանոն։ Երրորդ՝ զի ամենայն ոք յիւրմէ եպիսկոպոսէ ձեռնադրեսցի, կամ ըստ իրաւացի պատճառաց՝ հրամանագրաւ նորա՝ յայլմէ եպիսկոպոսէ։ Այլ խստի կանոնիկոսաց, ի դատարկանալ աթոռոյ, չէ օրէն տալ ումեք հրամանագիր ձեռնադրութեան, բայց եթէ հարկ ի վերայ կայցէ նմա ձեռնադրութեան վասն եկեղեցական ժառանգութեան իրիք՝ զոր ընկալեալ իցէ, և խնդրիցի կարգ առ այն։

33. Եպիսկոպոս իրաքանչիւր ուրուք համարի, կամ ըստ հայրենեացն, կամ ըստ բնակութեան, կամ ըստ եկեղեցական ժառանգութեան, և կամ ըստ ընտանութեան։ — Ա. Ըստ հայրենեացն՝ պարտ է նուիրելոյն ընդունել զկարգ յեպիսկոպոսէ հայրենի երկրին, եթէ ի թեմի նորա ծնեալ իցէ, և ծնողաց իւրոց ի ժամանակի ծննդեան իւրոյ անդ լեալ իցէ բնակութիւն. զի եթէ ըստ դիպուածոյ ծնեալ իցէ անդ, և բնակութիւն ծնողաց իւրոց այլուր, յայնժամ պարտ է նմա ընդունել զկարգ յեպիսկոպոսէ թեմին՝ ուր ծնողացն իւրոց ի ժամանակի ծննդեան իւրոյ էր բնակութիւն։ — Բ. Ըստ բնակութեան՝ օրէն է ումեք ընդունել զկարգ ի թեմական եպիսկոպոսէ, ուր ինքն հաստատեալ իցէ զբնակութիւն իւր՝ կամելով մնալ անդ միշտ. և կամաց նորա նշանակ է տաճնամեայ բնակութիւն իւր անդ, կամ ստացումն տան, և անդր փոխադրութիւն առաւելապոյն մասին ընչից իւրոց՝ կալով անդ ոչ դոյզն ինչ ժամանակ։ — Գ. Ըստ եկեղեցական ժառանգութեան՝ թէպէտ և այլուր ոք ծնեալ իցէ և այլուր բնակացեալ, սակայն կա-

րէ ընդունել զկարգ յեպիսկոպոսէ Թեմին՝ ուր իցէ նո-
րա ժառանգութիւն բաւական առ ի կեալ ըստ պատ-
շաճի իւրում. բայց պարտ է նմա ունել հրամանագիրը
յեպիսկոպոսէ բնակութեան իւրոյ, առ որում օրէն է
նմա և զքննութիւն իւր կատարել՝ եթէ ապա դառնա-
լոյ իցէ անդրէն։ Այլ առ ի կարօղ լինելոյ ընդունել
զկարգ յեպիսկոպոսէ Թեմին՝ ուր իցէ իւր ժառանգու-
թիւն, պարտ է զի ընկալեալ իցէ նորա գէթ զխուզումն
հերայ. ապա թէ ոչ, չէ ընդունակ եկեղեցական ժա-
ռանգութեան, վասն որոյ և ոչ յեպիսկոպոսէ անտի
կարէ ընդունել զկարգ։ — Դ. Ըստ ընտանութեան, այս-
ինքն եթէ զերեսամ մի՛ ի տան անդ եպիսկոպոսին բնա-
կեալ իցէ, կամ՛ ի հանապազորդ ծառայութեան նորա
կացեալ և՛ ի նմանէ կերակրեալ՝ թէպէտ և չբնակիցէ
՛ի տան նորա, կարէ ընդունել՛ ի նմանէ զկարգ՝ եթէ
միայն՛ ի նմին տեղւոջ կամ մերձ անդր բնակիցէ, և ե-
թէ եպիսկոպոսն տացէ նմա ժառանգութիւն ստոյգ, զի
չէ բաւական սահմանել նմա թոշակ կամ ապրուստ։

34. Ոսկ կրօնաւորաց պարտ է ընդունել զկարգ՛ ի Թե-
մական եպիսկոպոսէ՝ ուր իցէ մենաստան նոցա, եթէ
կարիցէ նա՛ ի սահմանեալ ժամանակս ձեռնադրել. ա-
պա թէ ոչ, կարեն ընդունել յորմէ և իցէ եպիսկոպոսէ
զկարգ, ըստ ասացելոցս՛ ի գլ. Ժ. 123։

35. Ընդրի և բաւական գիտութիւն ըստ կարգին,
զոր հանդերձեալ է որ ընդունել։ Ըստ սահմանադրու-
թեան տրիդենտեան ժողովոյ առ խուզումն հերայնըն-
դրի, զի գիտիցէ զբրիստոնէական վարդապետութիւն
և զդպրութիւն։ Ընդ փոքր աստիճանս, զի գիտիցէ
զգլոյ բարբառ։ Ընդ կիսասարկաւագութիւն և սարկա-
ւագութիւն, զի պրագէտ իցէ և տեղեակ կարևորաց առ
՛ի պաշտել զկարգն։ Ոսկ նուիրելոյ՛ ի քահանայութիւն
պարտ է, զի գիտիցէն ուսուցանել հաւատացելոց որ
ինչ ամենեցուն կարևոր է առ՛ի փրկութիւն, և քաջնիկ
քննութեամբ յառաջագոյն փորձք իցեն և պատկանա-
ւորք՛ ի պաշտել զխորհուրդս։ Վասն՛ ի միտ առցեն
ձեռնադրօղք և ձեռնադրեալքն զասել ժողովոյն պոհա-
նաւորս՛ ի պաշտել զխորհուրդս։ զի ըստ այսմ պարտ է
նուիրելոյ գիտել, ոչ միայն որ ինչ անկ է՛ ի մկրտու-
թիւն, ՛ի հաղորդութիւն և յայլ խորհուրդս, այլ և՛ ի

խորհուրդ ապաշխարութեան: Օ՛ի թէպէտև քահանայի չիցէ կարևոր այնչափ գիտութիւն որչափ խոստովանահօր, այլ պարտ է նմա գիտել զԵկեղեցական կանոնս բարոյականին՝ որովք կարիցէ լուծանել զխնդիրս սովորականս՝ի տեսակել հարկին ընդունելոյ զխոստովանութիւն հիւանդացս՝ի հոգեվարս, և մանաւանդ գիտել որ ինչ յայնժամ իշխանութիւն ունի իւր. երբ կարիցէ արձակել զնոսա, և ա՛ի հաստանել անդր խոստովանահօր. երբ պայմանաւ և երբ առանց պայմանի տալ արձակումն. ՛ի վերջին և եթէ պահու կարիցէ արձակել, թէ՝ի վտանգս իսկ մահու, և յօրսիսի ինչ վտանգս. զինչ պարտս՝ի վերայ դնել հիւանդին, եթէ իցեն նորա մեղք կամ բանադրանք վերապահեալք. տես որ ինչ ստորև յաղագս այսր պարտականութեան ասելոց ելք՝ի Թիւ 130: Ե՛րէն իսկ է եպիսկոպոսի պահանջել յիւրոցն առաւելագոյն գիտութիւն քան զսահմանադրեալն՝ի սրբոյ Ժողովոյն:

36. Ա՛յլ՝ի կրօնաւորաց, որք՝ի հոգևոր կեանս պատրաստեն կամ՝ի դաս, կամ սեղանոյ և եթէ և սարկաւագանոցին՝ի ծառայութիւն, նուազ քան յայլոց երիցանց լինդրի գիտութիւն. և շատ է նոցա գիտել զկատարս պաշտամանց կարգին: Ա՛ման որոյ պարտ է նոցա գիտել զբերականութիւն, առանց որոյ անկանոնք են ըստ աստուածային իրաւանց՝ անտնօրինելիք և՛ի սրբազան Պատկն. այլ այս անկանոնութիւն, ՛ի բաւնալ պատճառին՝ որ է տգիտութիւն, ինքնին լուծանի առանց անօրինման:

37. Ա՛ման օրինաւոր ձեռնադրութեան կարևոր է և ապրուստ՝ ձեռնադրելոյն. վասն որոյ եպիսկոպոս, որ ձեռնադրէ զոք կամ զՀրամանադիր ձեռնադրութեանն տայ այնպիսւոյ՝ որոյ չիք ապրուստ, ինքն պարտական գտանի կերակրելոյ զնա մինչև կարասցէ նա գտանել իւր ապրուստ: Ա՛յլ զայս իմա, եթէ եպիսկոպոսն չիցէ՛ի պատրանս ըմբռնեալ:

38. Ա՛նօրինակ է ապրուստ. ուխտիւ կրօնաւորական աղքատութեան, եկեղեցական ծառայութեամբ, և՛ի հայրենի ժառանգութենէ: Ա՛ստ առաջնոյն օրինակի՝ կարէն կրօնաւորք ևեթ ընդունել զկարգ. իսկ այլոց պարտ է ունել ժառանգութիւն եկեղեցական

ատոյգ և բաւական առ՝ի կեալ ըստ պատշաճի պայմանին։ Այլ պիտելի է զի ըստ սահմանելոյ առաքելական աթոռոյն՝ ՚ի կամ եպիսկոպոսին է ապաստան՝ հանել ՚ի բաց ՚ի համարոյ ատեն եկեղեցական ժառանգութեան կամ ժամարարութեան զպարտս պատարագաց։ Ընդ նուիրեալս, որոց՚ի հայրենի ժառանգութենէ է ապրուստ, օրէն է եպիսկոպոսի ձեռնադրել վասն պիտոյից կամ օգտի եկեղեցեաց ըստ սահմանելոյ տրիդենտեան ժողովոյն։ Նոյց հայրենի ժառանգութեան պարտ է դալ ատոյգ և հաստատուն, ՚ի բնութենէ իւրմէ պտղաբեր, ժառանգեալ անխռով և ազատ յամենայն բեռանց։ Հաւական է և հաս ՚ի դրամագլխոյ, որ ՚ի միջնջենաւոր շահեկանութիւն իցէ աւանդեալ, թէպէտ և մարթ իցէ պահանջել զայն յետս։

39. Որ կեղծեօք հայրենի ժառանգութեան ընդունի զկարգ, ըստ հաւանականադոյն կարծեաց անկանի յարգել. այլ անկանիցի և որ ձեռնադրին պարգեւեալ ժառանգութեամբ՝ զոր խոստացեալ իցէ հատուցանել յետս զկնի ձեռնադրութեան։ — Եթէ պարգեւատուին իսկապէս պարգեւեալ իցէ նմա զայն, ոչ անկանի. զի խոստումն նորա հատուցանելոյ զայն յետս՝ ոչ ինչ զօրէ ըստ սահմանելոյ առաքելական գահուն, և զի դարձեալ՝ առանց հրամանի եպիսկոպոսին ամենայն հրաժարումն եկեղեցականի ՚ի ժառանգութենէ՝ որով ընկալեալն է զկարգ, անվաւեր է։ Իսկ եթէ պարգեւատուին չիցեն լեալ կամք պարգեւելոյ զայն, անկանի ձեռնադրեալն նուաւաս յարգել, զի առանց կամաց պարգեւատուին չստանայ երբեք պարգեւընկալն իրաւունս՚ի վերոյ պարգեւին։

40. Յօրինաւոր ձեռնադրութիւն՝ խնդրի և կարգաւ ընդունել զաստիճանս. զի որ ընդոստ ընդունի զայնս, նուաղին իսկ գործով գտանի կախեալ ՚ի պաշտամանէ կարգին, մինչև ընկալցի տնօրինութիւն եպիսկոպոսին։ Օրինաւոր ժամանակ ձեռնադրութեան ըստ մեծութեան արարողութեան են գլխաւոր տօնք տէրունականք կամ Տիրամօրն, և կամ աւագ տօնք՝ որպէս՝ Յարութիւն կամ օրհնեալ Ծնունդն, այլովքն հանդերձ։

41. Խնդրին և միջոցք ընդ աստիճանս իւրաքանչիւր, մանաւանդ ընդ կիսասարկաւագութիւն և ընդ սարկա-

ւագութիւն առ յաւինս ամ մի, որպէս և ընդ սարկաւագութիւն և ընդ կարգ քահանայութեան։ Այլ առ մեզ օրէն է զջրեսին փոքր աստիճանս տալ՝ի միասին, զկիսասարկաւագութիւն ընդ սարկաւագութեան, և զկարգ քահանայութեան ևեթ ուրոյն։

42. Եթէ ոք չէ ընկալեալ զկարգ սարկաւագութեան՝ ձեռնադրեսցի քահանայ, վաւեր է ձեռնադրութիւնն, այլ չկարէ պաշտել զքահանայութիւն մինչ չէ ընկալեալ զկարգ սարկաւագութեան։ Իսկ որ նախ քան զքահանայութիւն ձեռնադրեսցի եպիսկոպոս, անվաւեր է ձեռնադրութիւնն։

43. Պարտ է եպիսկոպոսի կատարել զձեռնադրութիւնս յեկեղեցւոջ՝ի թեմի իւրում. և եթէ յայլում թեմի ձեռնադրեսցէ զոք, արգելեալ գտանի ինքն՝ի հայրապետական հանդիսից, և ձեռնադրեալն՝ի պաշտամանէ ընկալեալ կարգին։

Ըստ սիոց՝ առ խուզումն հերաց խնդրի պէթ հասակ եօթնամեայ. զիոքր աստիճանս օրէն է տալ յեօթնամենից ցչորեքտասան. զկիսասարկաւագութիւն՝ քսանևերկուց ամաց, զսարկաւագութիւն՝ քսան և երից, իսկ զքահանայութիւն՝ քսանևհնգից։ Ոչ էջ պարտ յօրէ մկրտութեան հաշուել զամս, այլ յօրէ ծննդեան. և շատ է դի սկսեալ ևեթ իցէ ամն սահմանեալ։ Ըստ քիկ ըստ յաւինաց. զի առ մեզ, որպէս յայտ իսկ է, չիք նոյն խոտութիւն վասն աբեղայից։ Վասն ընդունելութեան պարզ ժառանգութեանց բաւէ հասակ չորեքտասանամեայ, իսկ վասն ժառանգութեանց՝ որոց կցորդ է հոգաբարձութիւն՝ խնդրին ամք քսանևհինգ. վասն կանոնիկոսաց մեծի եկեղեցւոյ՝ ամք քսան և երկու, վասն այլոց՝ չորեքտասան. իսկ վասն եպիսկոպոսութեան հասակ երեսնամեայ։

44. Եթէ ոք գիտութեամբ յառաջ քան զօրինաւոր տիս ձեռնադրեսցի, նովին իսկ գործով անկանի յարգել միջանկենաւոր, զոր Պաւղոս ևեթ է տնօրինել՝ թէ իցէ յայտնի. իսկ եթէ անյայտ, կարէ տնօրինել զայն և եպիսկոպոսն։ Ըստ իսկ գէպռոնեամբ, զի Պետրոս Բ. զայս պատուիր վասն յանդգնութեան այնպիսեաց ձեռնադրելոցն սահմանեաց. վասն որոյ և Թանձր տգիտութիւն հաւանականաբար զերծ՝ի պատուոյ աստի կա-

ցուցանէ զձեռնադրեալն, և օրէն է նմա ի լնուլ հաւատակին պաշտել զկարգն։ Այլ խնդիր է թէ անկանիցի և յանկանոնութիւն որ յառաջ քան զսահմանեալ տիս ընդունի զկարգ քահանայութեան։— Կեսք հաստատեն, իբր զի պատարագէ ընդ եպիսկոպոսին ի ձեռնադրութեան, և իսկապէս քահանայագործէ պաշտելով զընկալեալն կարգ. այլ հանրապէտն և յոյժ հաւանական կարծիք զերծ կացուցանեն զնա յանկանոնութենէ, զի ոչ արդար համարի նուիրն միով գործով ի կրկին պատիժս անկանել, այսինքն յարգել և յանկանոնութիւն. և ի տնօրինմանն իսկ այսպիսեաց ձեռնադրելոց չառնի յիշատակ անկանոնութեան նոցա։ Ոչնոյն է խնդիր և զարկաւագաց և զկիսասարկաւագաց, եթէ ոչ յետ ձեռնադրութեանն ինքնակամ յառաջ մատիցեն սպասաւորել սեղանոյն։

45. Յօրինաւոր ձեռնադրութիւն խնդրի և աստուածահրաւէր կոչումն. զի ըստ առաքելական բանին՝ "Ոչ եթէ անձամբ ոք առնու պատիւ, այլ կոչեցեալն Աստուծոյ՝ որպէս և Ահարոն"։ Եւ գարձեալ՝ "Ոչ ոք զանձն ընծայեցուցանէ, նա է ընտրեալ. այլ զոր Տէրն ընծայեցուցանէ"։ Իսկ նշանք կոչման են նախ՝ գիտութիւն ըստ ասացեալսն ի վեր այսր։ Երկրորդ՝ ուղիղ դիտաւորութիւն պարապելոյ ի սպասաւորութիւն Աստուծոյ և ի փրկութիւն հոգւոց։ Երրորդ՝ բարի վարք, որով առաւելապէս Հանապազ Հմարիտ կոչումն ըստ տիրդենտեան բանին. "Գիտասցեն եպիսկոպոսունք, զի պարտ է նոցա զարժանաւորս եւեթ առնուլ ի կարգս յայսոսիկ, և որոց հասակ ծերոնեան էցեն էհանդ անարատ"։ Եւ առըք Աստուածային ասէ. "Ոչ վարկպարապղի ինչ՝ այլ գերազանց բարութիւն խնդրի աստանօր. զի ոչք ձեռնադրութեամբն վերակացուք լինին հաւատացելոց, պարտին և արժանաւորութեամբ սրբութեան գերազանցել քան զնոսա"։ Ասն որոյ որ առանց նշանացս այսոցիկ, որով և առանց տիրահրաւէր կոչման, մատչի ի սեղան, չէ ազատ ի ծանր մեղաց վասն յանդգնութեան անձամբ առնլոյ պատիւ, և վասն արկանելոյ զանձն ի վտանգ դատապարտութեան։ Յանդգնէն ևս մեղանչէն եպիսկոպոսունք, որ ձեռս ի վերայ այնպիսեացդնեն ընդդէմ առաքելական պատուիրանին. "Ձեռս

վաղվաղակի յօտրուք վերայ մի դնիցես, և մի կցորդ լինիցիս մեղայ օտարոյ»։ Օրմէ մեծն Լևոն ասէ. «Ո՞վ է կցորդ մեղաց օտարացն լինել, բայց ձեռնադրողին հաւասարել անարժան ձեռնադրելոյն»։

46. Ի դէպ է համառօտել ասա՛ք ամենք՝ի ձեռնադրելոց ըստ ոչ օրինի՝ նովին իսկ գործով անկանին յարգել։ — Ա. Ոմանք առանց հրամանագրի Թեմական եպիսկոպոսին ձեռնադրին, կամ առանց վկայական գրոյ նորին՝ եթէ ըստ եկեղեցական ժառանգութեան յայլմէ եպիսկոպոսէ ընդունիցին զկարգ։ — Բ. Ոմանք (ըստ լատին արարողութեան) երկուս սուրբ աստիճանս՝ի նմին առնուն ընդունին։ — Գ. Ոմանք (ըստ լատին արարողութեան) ոչ՝ի սահմանեալ աւուրս ձեռնադրին։ — Դ. Ոմանք յայլաւմ Թեմի եպիսկոպոսէ իւրեանց ձեռնադրին առանց հրամանի Թեմական եպիսկոպոսին։ — Ե. Ոմանք գիտութեամբ յառաջ քան զսահմանեալ տիս ձեռնադրին։ — Զ. Ոմանք ընդօստ ձեռնադրին, և ոչ ըստ կարգի աստիճանաց։ Յաւէլ և զձեռնադրեալսն սիմոնականութեամբ. զի և սոքա զտանին արգելեալ՝ի պաշտամանէ կարգին, և չըկարեն ընդունել այլ կարգ. այլ ոչ՝ եթէ այլոց ուրուք յանգիտս նոցա գործեալ իցէ զսիմոնականութիւնն։

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

ՑԱՂԱԳՍ ՄԻՈՑ ՄԻՈՑ Ի ԿԱՐԳԱՑ

ՅՕԳՈՒԱԾ Ա.

ՋԽՈՒԶՄԱՆՆ ՀԵՐՈՑ

47. Ջինչ է խուզումն հերաց, և իցէ արդեօք աստիճան. զինչ եթէ ոք առանց այնր ձեռնադրեսցի:
48. Արտօնութիւնք որոց ընկալեալ իցէ զխուզումն հերաց:
49, 50. Ջի պարտ է նոցա կրել զձև եկեղեցական և զխուզումն:
51. Ջրիւսն նոցա յատենական և ի կանոնական արտօնութենէ:

47. Խուզումն հերաց, որ առ մեզ կոչի և սաղմոսերգութիւն կամ աւետածութիւն, ոչ է կարգ կամ աստիճան կարգի՝ այլ պատրաստութիւն ի նոյն, և նշանակ մտից ի ծառայութիւն Տեառն: Ասան որոց և որք ընդունիմն զխուզումն հերաց, կղերիկոս կոչին այսինքն վիճակաւոր, զի վիճակին ի ծառայութիւն Աստուծոյ, և քաժին նոցա և վիճակ Աստուած է. և խաչաձև հերք նոցա հատանին որպէս նուիրելոց Ադրիատոսի:

Ընդ խուզումն հերաց խնդրի նախ՝ զի իցէ որ զրոշմաւալ երկրորդ՝ զի դիտիցէ զքրիստոնէական վարդապետութիւն և զդպրութիւն. և երրորդ՝ զի ունիցի կամ մտանելոց ի ծառայութիւն Աստուծոյ: Որ առանց խուզման հերաց ընդունի զայլ աստիճանս, ծանր մեղանչէ ընդդէմ սահմանադրութեան տրիդենտեան ժողովոյ, այլ վաւեր է ձեռնադրութիւն նորա. և թէպէտ գտանի արգելեալ մինչև կամք իցեն եպիսկոպոսին տնօրինել, այլ ոչ է պարտ նմա ընդունել այնուհետև զխուզումն հերաց. զի աստիճանաւն, զոր ընդունի, լինի պատկանաւոր և զայլսն ընդունելոյ:

48. Արդասիք և արտօնութիւնք խուզման հերաց են, նախ՝ ազատութիւն յաշխարհական ատենէ, եթէ միայն կրիցէ զձև եկեղեցական և զխուզումն, և կայցէ ի ծառայութեան ուրեք յեկեղեցեաց ըստ հրամանի ե-

պիսկոպոսին, կամ՝ ի կղերանոցի, և կամ՝ ի գպրոցի ուր ինքն հրամանաւ նորին եպիսկոպոսի: Արկղորդ՝ ազատութիւն կանոնական, որով հարկանողք նորին անկանին՝ ի բանադրանս վերապահեալս Պապին՝ եթէ իցէ ծանր հարուածն, և եպիսկոպոսին՝ եթէ իցէ թեթև: Արկղորդ՝ ընդունակութիւն եկեղեցական ժառանգութեան, եթէ իցեն նորա ամք չորեքտասան: Չորրորդ՝ ընդունակութիւն եկեղեցական իրաւասութեանց, տուչութեան ժառանգութեանց, սահմանելոց բանադրանս և դատելոց զդատաստանս հոգևորս:

49. Ինքը աստիճանաւորք, որոց չիցէ Թոշակ ինչ եկեղեցական, չմեղանչեն եթէ չկրիցեն զձև եկեղեցական. այլ Թոշակաւորք, ժառանգաւորք, և սուրբ աստիճանաւորք, ըստ հասարակաց վարդապետութեան աստուածաբանից, ծանր մեղանչեն: Ասյց Անքէզ, Այման, Վասիլիոսի, Պոնաւինա, Ամբատիկեանք և այլք, զերծ՝ ի մեզաց կացուցանեն զայնոսիկ՝ որք սուղ ինչ ժամանակ, կամ վասն անծանօթ լինելոց ըստ իրաւացի պատճառի, ՝ի բաց դնիցեն զձև եկեղեցական: Սակ ըստ պատժոց, եթէ խրատեալք յեպիսկոպոսէ իւրեանց՝ ոչ հնազանդեսցին, օրէն է նմա արգելուլ զնոսա՝ ի պաշտամանէ, ՝ի ժառանգութենէ և՝ ի հասից. և եթէ յամառեսցին, կարող է և ընկենուլ զնոսա՝ ի պաշտամանէ և՝ ի ժառանգութենէ:

50. Որ ինչ զձևոյ ասացաք, զնոյն և զխուզմանէ հերոց հաստատեն Անքէզ, Այման, Աքոպալ և այլք: Ասյց Վասիլիոսի, Հենրիկոսէց, Հենոյի, Ղամպուրինի և Արքինոյ չկշռեն դատապարտել՝ ի մահուչափ մեղս եւս զսուրբ աստիճանաւորս և զժառանգաւորս՝ որք չկրիցեն զխուզումն հերոց, եթէ չիցէ այն վասն արհամարհութեան: Ըստ այսմ և Աքրուա արժան համարի ներողագոյնս դատել զորս չկրեն զխուզումն, քան զայնս՝ որ չկրեն զձև եկեղեցական. վասն որոյ և չդատապարտէ՝ ի մահուչափ մեղս զքահանայ՝ որ երկամնեայ աւուրս չկրիցէ զխուզումն:

51. Ժառանգաւորք և սուրբ աստիճանաւորք՝ որ չկրեն զձև եկեղեցական, զրկին յատենական և՝ ի կանոնական արտունութենէ, եթէ յետ երրակի ազդարարութեան յամառեալ կայցեն: Սակ որոց զխուզումն

Եւեթ հերայ կամ զփոքր աստիճանս ընկալեալ իցէ, և չլիցէ նոցա եկեղեցական ժառանգութիւն, թէպէտ և ոչ ծանր մեղանչէն՝ այլ զրկին յատենական աղատութենէ, եթէ ոչ կրեն զձև եկեղեցական, և ոչ կան ուրեք՝ի ծառայութիւն եկեղեցւոյ։ Ա՛յլ՝ի զգենուլ զայն վերատին՝ ստանան զաղատութիւն իւրեանց, եթէ ոչ նենգաւ առնիցեն զայն, որպէս յետ բանտարկութեան կամ կոչելոց յատեան վասն քաղաքական իրաց։ Ա՛յեմ իսկ յապէնական ապաշխարեն, զի ոչ զրկին՝ի կանոնական նէն, այսինքն զի հարկանողք նոցին անկանին ընդ բանադրանօք։ Իսկ որ զնուազուածն հերայ առանց կամայ մտանելոյ՝ի կարգ եկեղեցական ընդունիցի, թէպէտ և մեղանչէ, այլ ոչ մահաւորապէ։

ՅՕԴՈՒԱԾ Բ

ԶՓՈՓՐ ԱՍՏԻՃԱՆԱՑ

52. Դռնապանութիւն։
53. Զի ինքն իսկ ձեռնադրօղն պարտի աւանդել նուիրելոյն զնիւթն, ինքնին պատարագել։
54. Աստիճան ընթերցողութեան։
55. Երգիչներգուցչութեան։
56. Ջահընկալութեան։

52. Դռնապանութիւն է աստիճան կարգին, որով եպիսկոպոսն տայ ուժեք իշխանութիւն բանալոյ և փակելոյ և պահելոյ զեկեղեցի։ Ա՛սն որոյ և պաշտօն նորա է՝ ՚ի վերայ այսօրիկ՝ և զանդակ հարկանել, ընդունել զարժանաւորս յեկեղեցի և մերժել զանարժանս, այսինքն զանհաւատս, զհերետիկոսս և զբանադրեալս։ Ա՛յեւսաւոր նիւթ աստիճանիս, ըստ այնոցիկ՝ որք զաստիճանս հաւանարին խորհուրդ, են բանալիք եկեղեցւոյ, և մերձաւոր՝ տուչութիւն նոցին. իսկ ձև՝ բանքն, զոր եպիսկոպոսն ասէ՚ի տալն. Ա՛յսպէս արա, որպէս Ա՛ստուածոյ պատասխանի պաշտօնեայ վասն այսր գործոյ և այլն։ Պարտ է զի բանալիքն իցեն եկեղեցւոյն, և զի նուիրեալն կալցի զայնս կամ շօշափեսցէ։

53. Ա՛յերատին երկրորդեմք ասա որ ինչ ասացաքն՚ի թիւ 28, զի պարտ է եպիսկոպոսին ինքնին զնիւթն աւանդել նուիրելոյն, և իւրովի զպատարագն մատուցանել։

54. Ընթերցողութիւն է աստիճան կարգին, որով եպիսկոպոսն տայ ուժեք իշխանութիւն ընթեռնելոյ ըղ-ասուրբ գիրս յեկեղեցւոջ: Զի թէև հեռաւոր են գիրք մար-գարէութեանց և առաքելական թղթոց. իսկ մերձաւոր՝ տուչութիւն նոցին. և ձև՝ բանքն, զոր եպիսկո-պոսն ասէ ՚ի տալն. Ա՛ռ զգիրս գայս, և լեր Ա՛ստուածոյ բա-նին պաշտող, և այլն: Ա՛ն որոյ պաշտօն ընթերցողին է ընթեռնուլ զասուրբ գիրս յեկեղեցւոջ, քաց յաւետա-րանէ՝ որ սարկաւագին է անկ. և դարձեալ կրթել զե-րախայս, և ուսուցանել նոցա զկարևորս առ՚ի միրաու-թիւն: Զի թէ փոխանակ առաքելական թղթոց տացի նուիրելոյն ժամագիրք, վաւեր է և օրինաւոր իսկ ձեռ-նադրութիւնն. այլ ոչ, եթէ այլ ինչ տացի մատեան:

55. Երդմնեցուցչութիւն է աստիճան կարգին, ո-րով եպիսկոպոսն տայ ուժեք իշխանութիւն հալածելոյ զդեւս ՚ի դիւահարաց, զի մի խափանեսցեն զնոսա ՚ի հա-ղորդութենէ: Հեռաւոր նիւթ աստիճանիս է մաշտոցն, իսկ մերձաւոր՝ տուչութիւն նորին. և ձև՝ բանքն, զորս եպիսկոպոսն ասէ ՚ի տալն. Ցա՛մ ջեղ կրաման գնել կ՚ենոա գո և այլն: Ա՛յլ առ ՚ի կարող լինելոյ երդմնեցուցչին հրապարակաւ երդմնեցուցանել զդեւս, պարտ է ունել նման և իրաւասութիւն կամ հրամայ եպիսկոպոսին: Ա՛յժմ իսկ հրապարակաւ. զի ամենեցուն իսկ հաւատա-ցելոց օրէն է առանձինն հրամայել դիւաց, զի մի ջնա-սեսցեն հաւատացելոց, և մի զնոսա խափանեսցեն ՚ի սրբութեանց:

56. Ջահընկալութիւն է աստիճան կարգին, որով եպիսկոպոսն տայ ուժեք իշխանութիւն կրելոյ ջահ, լուցանելոյ զկանթեղս յեկեղեցւոջ, և ածելոյ ժամա-նոցս ՚ի սեղան: Զի թէև աստիճանիս հեռաւոր է աշտա-նակ մոմեղինաւ հանդերձ, և շիշք գաւտարկք. իսկ մեր-ձաւոր՝ տուչութիւն նոցին. և ձև՝ բանքն, զոր եպիսկո-պոսն ասէ ՚ի տալ զաշտանակն լապտերաւ. Ա՛ռ կաղ զաշ-պանակս լապտերիս և այլն. և ՚ի տալ զշիշսն գաւտարկ. Ա՛ռ գքամանոցս և այլն:

ՅՕԴՈՒԱԾ Գ.

ՅԱՂԱԳՍ ԿԻՍԱՍԱՐԿԱՒԱԳՈՒԹԵԱՆ

57. Զ[ինչ] է կիսասարկաւագութիւն. նիւթ նորա և ձև և պաշտօն:
58. Որ ինչ կարևոր առ կիսասարկաւագութիւն:
59. Ուխտ կուսութեան. եթէ ոք անպիտանայցէ զայն. եթէ չեկեալ բունս հասեալ. եթէ առ ահի ձեռնադրեալ:

57. Կիսասարկաւագութիւն է կարգ, որով եպիսկոպոսն տայ ուժեք իշխանութիւն ածել զսկի՛ւ ի սեղան, և սպասաւորել ընդ ձեռամբ սարկաւագին: Ձեռաւոր նիւթ կարգիս է սկին դատարկ և ամենայն սպասք պատարագին. իսկ մերձաւոր՝ տուչութիւն նոցին: Պարտ է զի օծեալ լիցէ սկին. ըստ լատինաց՝ խնդրի և տուչութիւն առաքելական Թղթոց, հանդերձ ձևոյին. զի առ նոսա կիսասարկաւագին է անկ ընծերցուած գրոց՛ի պատարագի, իսկ ընծերցողին՝ արտաքոյ և եթե պատարագի: Ձև խորհրդոյս են բանքն, զորս եպիսկոպոսն ասէ՛ի տալ զսկին և զսպասս. Տե՛ս յո՛ր խորհուրդ կոչեցաւ և այլն: Պաշտօն կիսասարկաւագին է՝ ի վերայ ասացելոցս՝ և կրել զխաչ, և լուանալ զմարմնակալս և զմաքրիչս կտաւիս: Պարտ է նմա ուրարաւ սպասաւորել՛ի պատարագի. և մեղանչէ, եթէ առանց հարկի զանց զնովաւ արասցէ: Իսկ՝ որ՛ ի մահուչափ մեղս սպասաւորէ կիսասարկաւագ՝ ընդունչ մեղս գործիցէ, ասացեալ՛ի Թիւ 14:

58. Ո՞ւ՛ի կարող լինելոյ ընդունել զկարգ կիսասարկաւագութեան՝ խնդրին — Ա. Վտքր աստիճանք: — Բ. Ուսան և ի՞նչ տիոց լցեալ: — Գ. Ուղղութեամբ ըստ ասացելոցս՛ի Թիւ 37 և 39: — Դ. Գիտել որ ինչ անկ են իւրում պաշտամանն: — Ե. Ունութիւն խիտ, զի սկիզբն սրբոյ կարգիս աստիճանս այս, և այսուհետև ոչ ևս օրէն է ուժեք աշխարհաւարել. վասն որոյ պարտ է քննել զնա մանաւանդ՛ի վերայ պարտուցն՝ զորս հանդերձեալ է յանձն առնուլ, զողջախոհութենէ ասեմ և զժամակատարութենէ: Պարտ է քննել զնա և ըստ ժամին բանադրանաց և անկանոնութեանց, զորոց ու-

ըոյն համառօտեսցուք ասա՛ի ստորև՛ի յօդուածՏ ե. ըզպիտելիս։

59. Ուխտ ողջախոհութեան յարակից է ընդ սուրբ կարգս. վասն որոյ թէ և չիցէ ուրուք ուխտեալ զայն, սակայն յանձն առնու յընդունելն զսուրբ կարգ. որպէս զի եթէ ոք՝ ի ձեռնադրելն՝ ի կիսատարկաւագ՝ չկամիցի իսկ յանձն առնուլ զկուսութիւն, սակայն արկանէ զանձն ընդ եկեղեցական պատուիրանաւ պահելոյ զայն։ Այլ զայս այսպէս պարտ է իմանալ, եթէ անգիտութեամբ իսկ ոք պարտուցս այսոցիկ՝ կամիցի և եթէ ընդունել զսուրբ կարգ, և եթէ անմեղադրելի իսկ իցէ տգիտութիւն նորա, որպէս յոյժ հաւանականաբար բազումք յաստուածաբանից հաստատեն։ Իսկ որ յառաջքան զձանաւարութիւն իցէ ձեռնադրեալ, կրկին կարծիք են զնմանէ, երկոքին ևս հաւանականք։—Որ ոք առանիրաւ ահարկութեան ընկալեալ իցէ զսուրբ կարգ՝ առանց դիտաւորութեան ընդունելոյ զայն, չէ պարտական պահելոյ զկուսութիւն. և ըստ հաւանականագոյն կարծեաց՝ եթէ ունիցի իսկ դիտաւորութիւն, չէ պարտական. զի ուխտ առ երկիւղի արարեալ, ըստ հաւանականագոյն կարծեաց անվաւեր է։ Իսկ եթէ իրաւացի իցէ ահարկութիւնն, կամ եթէ ձեռնադրեալն հաւանեալ իցէ ընդ ձեռնադրութիւն իւր, և պաշտեալ իսկ զկարգն ինքնակամ, գտանի պարտական։

ՅՕԳՈՒԱԾ Դ

ՅԱՂԱԳՍ ՊԱՐՏՈՒՑ ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ

60. Վարդապետութիւնք ժամակարգութենէ դատապարտեալք։
61. Ո՞յք պարտականք իցեն ժամակարգութեան։
62. Ո՞յք պարտական՝ ի հատուցումն հասին։
63. Ջինչ եթէ իցեն նոցա և այլ պարտք։
64. Բանադրեալք և որք առանց մոռացութեան կատարեն զժամակարգութիւն։
65. Ջինչ յառաջին վեց ամիսս. որ առանց մեղաց Թողու՛ի բաց. քանի՞ մեղս գործէ որ Թողու՛ի բաց։
66. Որ ոչ ընդունի հասս։
67. Եթէ հասքն իցեն դուշնաքեայք։
68. Որ վանեն զհասս. որ ոչն արտասանէ՛ի դասու։
69. Որ ինչ՛ի մասինս յայսմիկ նիւթ դուշնաքեայ։ Որ ընկենու զժամագիրն՛ի ծով։ Որ երկեայն ընդ կատարել իւր զման ինչ ժամաքգութեան։

70. Որ ինչ խնդրի առ բարւոք կատարումն ժամակարգութեան. եթէ այլ ընդ այլոց ոք կատարիցէ:
71. Որոյ այլոյր դէմ եդեալ իցէ:
72. Որ խմանայ զխաչել իւր:
73. Արտասանութիւն ի ձայն. որպէս ի դասու:
74. Արտասանել ամբողջ. արտասանել անընդհատ. արտասանել կարգաւ. արտասանել ըստ ժամուց:
75. Դիտաւորութիւն և մտադրութիւն:
76. Վասն որոյ երից օրէն է Թողուլ ի բաց զժամակարգութիւն:

60. Ի դէպ է կարգել աստ նախ զվարդապետութիւնս որ յաղագս ժամակարգութեան դատապարտեալս Ա՛ղեքսանդրէ է. և Ա՛նաւկենտեայ ԺԱ. ոլք են այսոքիկ:

"Որ ոչն կարիցէ կատարել զպիշերայինն ժամ, ազատ է ի պարտուց կատարելոց զայլսն":

"Այն ինչ պարտք հատուցանելոց զհասս նախ քան զվճիռ":

"Որ պարապէ յուսումն, օրէն է նմա ի ձեռն այլոց ուրուք կատարել զժամերգութիւն":

"Աղօրմութիւնք, զորս բաշխեալ ուրուք իցէ յաւագպոյն, լուծն զպարտս հատուցման հասից":

61. Ա՛ռենեցուն, որոց ընկալեալ իցէ զսուրբ կարգ, պարտ է կատարել զժամակարգութիւն. թէպէտ և քանագրեալք իցեն, թէպէտ և արգելեալք, և թէ ընկեցեալք ի կարգէն: Կիսասարկաւագին պարտք սկսանելն յօրէ ձեռնադրութեան նորա, և ի ժամ՝ յորում ձեռնադրի. վասն որոյ եթէ ձեռնադրեալ իցէ զմիջասուրբ, պարտ է նմա սկսանել ի վեցերորդի ժամուն աղօթից. եթէ յառաւօտուն, պարտ է նմա կատարել և զառաւօտեան և զարևագալին և զերրորդ ժամուն աղօթս:

Կրօնաւորաց ևս միաբանութեան եղբարց և քերց ուխտելոց պարտ է կատարել զժամակարգութիւն, որպէս ի սկզբանէ հետէ կալաւ սովորութիւն ընդ ծանր պարտեօք ըստ հանրական վարդապետութեան, ընդդէմ սակաւուց և եթէ ոմանց՝ որք զհակառակն հաստատեն: Եւ ոչ զօրէ ինչ ասել թէ մուծանողաց զսովորութիւնս չայս չիցէ յայտ դիտաւորութիւն ընդ ծանր պարտեօք արկանելոյ զայն. զի զոր կրօնաւորք առհասարակ յայսքան դարուց հետէ անխափան հանդերձ դժուարու-

թեամբ մեծաւ կատարեն, պարտ է համարել զի որպէս պարտս ընկալեալ իցէ նոցա զայն՝ ի նախնեաց. և ըստ հանրական կանոնին՝ յոր կողմն համարիցի լինչ, այնր կողման են իրաւունք։ Այեաոնոլեան ասեմ, զի իւրաքանչիւրոց միանձանց՝ որ չիցեն աբեղայք, նոյնպէս և կուսանաց, չեն լինչ ծանր պարտք կատարելոյ զժամերգութիւն՝ ի դասու. շատ է չխափանել դասուն, առ որ խնդրին գէթ անձինք չորեքին։ Արօնաւորք արտաքսեալք, որ չիցեն աբեղայք, չեն պարտականք կատարելոյ զժամակարգութիւն, այլ պարտականք են փառաւորեալք և դասալինք։ Պարտականք են և ժառանգաւորք. ապա թէ ոչ, պարտ է նոցա հատուցանել յետս զհասս ժառանգութեան իւրեանց. որպէս հրամայէ ժողովն Լաւերանեան ե։ Նոյն առնէր Պիոս զչափ հատուցմանն իսկ սահմանէ. զի որոց զգիշերայինն և զառաւօտեան՝ ի բաց թողեալ իցէ, պարտ է նոցա զկէս հասից զայնր աւուր տալ՝ ի բաց. իսկ որոց և զայլս՝ ի ժամուց, պարտ է նոցա զմիւս կէսն և սա տալ՝ ի բաց։ Օ՞նոյն է իմանալ՝ եթէ ուրուք մասունս դուզնաքեայս յայլ և այլ ժամուց թողեալ իցէ՝ ի բաց, որք՝ ի միասին մասն լինչ մեծ կազմացանիցեն։ Իսկ զերկեան ժամակարգութիւն՝ ի վաղիւ անդր եթէ կամիցի ոք ընուլ, ոչ աղաւի՝ ի պարտուց հատուցման։ Այս զհատուցումն պարտ է առնել նախ քան զամենայն վճիռ. զի կատարումն ժամակարգութեան կարևոր պայման է ընդունելութեան հասից, զի առանց այնորիկ ըստ սահմանադրութեան նորին ժողովոյ չեն իրաւունք ժառանգաւորի ընդունել զհաս։

62. Իսկ զհատուցումն պարտ է առնել կամ աղքատաց ուր և իցէ, կամ եկեղեցւոյն, կամ բարերարութեան տեղւոյն, և կամ՝ ի յաւելուած ստացուածոյ նոցա։ Արժէ է տալ և՝ ի նպաստ այլոց եկեղեցեաց, եթէ իւրն իցէ անկարօտ, և կամ եթէ օգտակարացոյն իցէ աղքատաց՝ տալ այլուր եկեղեցւոյ։ Արժէ է տալ և՝ ի պատարագիս վանն ննջեցելոց, և եթէ աղքատ ոք իցէ ժառանգաւորն՝ կարէ և իւր իսկ առնուլ զայն, եթէ միայն շահախրութիւն ինա ոչ խաբեսցէ։ Իսկ որ յետ վերջանալոյ՝ ի ժամակարգութենէն՝ յանպէտս կամ՝ ի մոռացօնս պարտուցն հատուցման՝ տացէ ո-

ղորմութիւնս, հաւանականաբար՝որպէս համարին Ան-
քէզ, Սուարէզ, Լուկոյ, Լայման, Լաբրուա, Ալմա-
տիկեանք և այլք, ընու զպարտս իւր. զի որպէս և այ-
լոքն ասացաք առնային ուժեք կամք են կատարելոյ նախ
զպարտս իւր, և ապա զառաւելն քան զպարտս:

63. Հաւանական է և զոր Հաստատեն Ալթոյ,
Լեսլոյ, Վաստուէզ, Պոնաչինա, Անքէզ, Ալմա-
տիկեանք և այլք, զի եթէ ժառանգաւորին՝ բաց ՚ի
ժամակարգութենէ՝ իցէ և այլ պարտք, զորս կատա-
րեալ իցէ նորա, չէ պարտական ՚ի բաց տալոյ զամե-
նայն հասս իւր. այլ ոչ պարզ ժառանգաւորն, որոյ չի-
ցեն այլ պարտք բաց ՚ի կրելոյ զձև եկեղեցական:

64. Ուանադրեալք ոչ խորշելիք ըստ Հանրագոյն և
Հաւանականագոյն կարծեաց չեն պարտական նախ քան
զվճիռ ՚ի բաց տալոյ զՀասս ժառանգութեան, որպէս
ասացաք ՚ի գլ. ԺԹ. 19: Օ՚ի ոչ է պարտ յանցաւորի
նախ քան զվճիռ կրել զպատիժ. և զի դարձեալ՝ բա-
նադրեալք ոչ խորշելիք վաւերաբար պաշտեն զխոր-
հուրդս և կատարեն զժամակարգութիւն: Հաւանա-
կանաբար ազատ է ՚ի Հատուցմանէ և որ ոչ կատարէ
ներքին մտադրութեամբ զժամակարգութիւն. զի ըստ
Հաւանական կարծեաց բաւական է ՚ի կատարումն պար-
տուց դիտաւորութիւն և արտաքին մտադրութիւն, որ-
պէս առաջի կայ մեզ ասել ՚ի Թիւ 75:

65. Սուրբն Պիոս ՚ի վերատացեալ կոնդակին յա-
ւել յայտ առնել, զի ժառանգաւորք՝ որք յառաջին վեց
ամիսս ժառանգութեան իւրեանց վերջանայցեն ՚ի ժամ
երգութենէ, Թէպէտ և չիցեն պարտական ՚ի բաց
տալոյ զՀասս, այլ չեն ազատ ՚ի ծանր մեղաց: Ա-
նոր որոյ Թէպէտ և կամիցին տալ ՚ի բաց ՚ի վերջանալն ՚ի
ժամերգութենէ յայն ամիսս, մեղանչեն սակայն մա-
հու չափ. զի կրօնից ազգաւոր զպարտս Հատուցման ՚ի
վերայ եղեալ է նոցա եկեղեցւոյ, և ոչ ՚ի բնական օ-
րինաց են պարտականք. և ոչ ՚ի վարձ ժամերգութեան
տուեալ են նոցա Հասք, այլ վասն կենաց՝ պարտակա-
նութեամբ ժամերգութեան. վասն որոյ և յառաջ քան
զժողովն լատերանեան չէր պարտ ժառանգաւորաց վեր-
ջացելոց ՚ի ժամերգութենէ ՚ի բաց տալ զՀասս: Ամին
իրի և որք առանց մեղաց վերջանայցեն ՚ի ժամերգու-

թենէ, չեն պարտական հատուցմանն. զի որովհետև հատուցումն այն առ՝ի պատիժ է սահմանեալ, պահանջէ զմեղս։ Ապա ոմն և ժառանգաւոր, որոյ իցէ սուրբ աստիճան, ՚ի վերջանալն ՚ի ժամերգութենէ՝ մի միայն մեղս գործէ, զի երկոքին ևս պարտք իւր ՚ի կրօնից գան յառաջ։

66. Արդեմ ոչ հատուցանելին հասք ժառանգութեան իւրոյ, պարտականն իցէ ժամերգութեան։ — Այնք ոչ վասն յանցանաց ինչ իւրոց զբաւիցի ՚ի հասէն, կամ վասն չվնդրելոյ իւրոյ, չէ պարտական. իսկ եթէ վասն այլ ինչ պատճառի յամեցեալ հատուցումն նոցին առանց վտանգի կորստեան, պարտական է։

67. Արդ զոյն ինչ իցեն հասք ժառանգութեանն, պարտականն իցէ ՚ի ժամերգութիւն։ — Ընտանեկանքն ՚ի բարոյականաց չհամարին զնա պարտական, զի հաս դուշնաքեայ չհամարի ՚ի ժառանգութիւն. և դուշնաքեայ համարին հասք, որ չբաւեն ՚ի լնուլ զերիս մասն պիտոյից կենաց։

68. Արդ վասնիցէ զհաս ժառանգութեան իւրոյ, պարտականն իցէ ՚ի հատուցումն։ — Բազում երևելի աստուածաբանք հաւանականաբար ազատ կացուցանեն զնա ՚ի հատուցմանէ. բայց Լայման, Պոնաչինա, Կաետարոյ, Վեթրոզոր, Ռոնչինա և այլք պարտական համարին զնա. զի պարտ է ժառանգաւորաց ըստ արդարութեան և կամ գէթ ըստ եկեղեցական սահմանադրութեան տալ աղքատաց զաւելորդս ՚ի հասից իւրեանց, ըստ ասացելոցս ՚ի գլ. ժ. 7։

69. Այլ իսկ է զի մանուչսն մեղք են ՚ի բաց թողուլ զմասն ինչ ժամակարգութեան ոչ դուշնաքեայ. և դուշնաքեայ համարի կէս միոյ ՚ի ձաշու ժամուց։ Ըստ հանրական կարծեաց՝ մի միայն մեղք են ՚ի բաց թողուլ բովանդակ զաւուրն ժամակարգութիւն. այլ որ զժամագիրս իւր ՚ի ծուլ ընկենուցու, ուր չգտանիցին այլ ժամագիրք, ըստ ժամուց սահմանելոց մեղս գործէ՝ որչափ ինչ աւուրց պէտք իցեն առ՝ի գտանելոյ այլ ժամագիրս. զի նախատեսութեամբն մեղանչէ ՚ի տալն այնոցիկ պատճառս։ Յերկբայել ուրուք զկատարմանէ մասին ինչ ժամակարգութեան, եթէ բացասական իցէ երկբայութիւնն՝ այսինքն զի չիցեն ինչ նորա խոհական

պատճառք կատարելոյ իւրոյ զայն, պարտական է կատարել. իսկ եթէ դրական իցէ երկբայութիւնն՝ այսինքն ի համարիցի հաւանականաբար կատարեալ զայն, ոչ է պարտական:

70. Պէ՛տ ՚ի բարւոք կատարել զժամակարգութիւն, պարտ է նախ՝ ըստ պատշաճի աւուրն կատարել, և չէ հաւանական կարծիք նոցա՝ որք ազատ ՚ի մահուչափ մեղայ համարին, փոխանակ պատշաճի աւուրն՝ կատարել զայլոյ աւուր կարգ համառօտ: Ի հաւասարն իսկ փոխանակել զայն, ըստ յոգունց աստուածաբանից, չէ ազատ ՚ի ծանր մեղայ. մանաւանդ եթէ ստէպ որ կամ առանց պատճառի արասցէ զայն:

71. Որչափ է ուղևորելոյ ուրեք, կամ երթելոյ յեկեղեցի՝ ուր իցէ այլ ինչ տօնախմբութիւն, կատարել զայնը տեղւոյ կամ եկեղեցւոյ ժամակարգութիւն: Զարձեալ և որ կամիցի կատարել զժամակարգութիւն ընդ ուխտիք, որ զայլոյ իրիք աւուր կատարիցէ զպատակեր ըստ զանազանութեան տօնացոյցի կամ ըստ հին տոմարի, օրէն է նմա համաձայնել նմին. վի աղօթակցութիւն օրինաւոր առնէ զայն, միայն եթէ չիցէ համաուօտ յոյժ ժամակարգութիւն նորա քան զիւրն:

72. Եթէ որ սխալեսցէ զաւուրն պատկեր, և ՚ի կէս ժամակարգութեանն ՚ի միտ առցէ զսխալանսն, օրէն է նմա կատարել զսկսեալն, այլ լաւագոյն ևս իցէ՝ ըստ պատշաճի աւուրն կատարել զմնացեալն, եթէ ոչ յայլ օր կամիցի փոխել զտօն աւուրն, որպէս հաստատեն քաղուածք բաւականապէս հաւանականութեամբ:

73. Երկրորդ՝ առ ՚ի բարւոք կատարել զժամակարգութիւն, պարտ է արտասանել զայն: Ակնք կարևոր համարին զայս արտասանութիւն՝ լսելի արտասանողին. բայց Սիլուեոս, Ծուրնելլի, Լայման, Ազորիոյ, Սփորեր, Սալմանտիկեանք և այլք շատ համարին զյօգուել բարբառոյ՝ որ առանց հասանելոյ իսկ ՚ի լսելիս հնչէ ընդ օդս: Իսկ ՚ի գաղտ ընել և եթէ շատ է, այլ ոչ կանոնիկոսաց՝ որոց պարտ է աղօթել ՚ի ձայն ըստ ասացեալումն ՚ի Թիւ 68: Այս խառն ՚ի խառն իսկ լսել երկելոյ այլոց՝ բաւական է, թէպէտ և վասն ոչ բարւոք արտասանելոյ այլոց ոչ լսելոյ զի զմանն ինչ ոչ գուշնաքեայ: Ծանրալուր իսկ թէ իցէ զի, շատ է նմա լռել ընդ աղօտ զժամակարգութիւն. այլ ոչ և խլից:

74. Երբորդ՝ կարևոր է և ամբողջ արտասանութիւն, առանց կրճատութեան բառից՝ որ անխմանալի զաղօթն առնիցէ: Ընդհատ՝ անընդհատ արտասանութիւն ժամուց իւրաքանչիւր. այլ առանց պատճառի իսկ ընդհատումն չէ ինչ աւելի քան զներելի մեզս. և յետ մեզադրելի իսկ ընդհատութեան՝ չէն ինչ պարտք երկրորդելոյ զընդհատեալն ժամ: Հինգերորդ՝ կարգ ժամուց, այսինքն զի չէ օրէն յետ և յառաջ փոփոխել զժամն. այլ այս ևս չէ ինչ մահուչափ, ևս և՝ի յառաջխելն, ևս և՝ի դասու, որպէս հաւանականապոյնս հաստատեն Կայէթանոյ, Լայմանն, Սանքէզ, Պոնաչինա և այլք: Իսկ՝ի կատարել զժամակարգութիւն ընդ այլում, ևս առաւել՝ի դասու, օրէն է փոխել զկարգ. զոր օրինակ եթէ էիցէ ուրուք կատարեալ զՀաշու ժամն, կարող է ընդ այլում կատարել նախ զերեկոյեանն: Պարձեալ և յառաջ քան զգիշերայինն ժամ պատարագել, ըստ հանրապոյն և ըստ հաւանականապոյն կարծեաց, չէ ինչ աւելի քան զներելի մեզս: Զգիշերայինն և զառաւօտեան, օրէն է կատարել յերեկոյէ մինչև ցմիջօրեայ վաղուն. և համարի երեկոյ միջակետն ընդ միջօր և ընդ մուտս արևու: Զարևապալնն և զՀաշու ժամն օրէն է կատարել՝ի հասարակ գիշերոյ մինչև ցօր հասարակ. իսկ զերեկոյեանն և զՀանդստեան՝ի հասարակ օրէ ցհասարակած գիշերոյ:

75. Վեցերորդ՝ կարևոր է դիտաւորութիւն, զեթ զօրութեամբ, կատարելոյ զժամակարգութիւն. և շատ է առ այս առնուլ զժամագիրս՝ի ժամասացութիւն, առանց իսկ դիտաւորութեան կատարելոյ զպարտս իւր: Ան անաւանդ զի որ ակամայ իսկ կատարէ զժամակարգութիւն, կատարէ զպարտս իւր. զի կատարումն պարտուց ոչ՝ի կամն նորա է, այլ օրէնսդրին այսինքն եկեղեցւոյ: Կարևոր է և մտադրութիւն, զեթ արտաքին. այսինքն չառնել յայնժամ այլ ինչ, որ խափանեսցէ զմտադրութիւն: Իսկ յաղագս նեբքին մտադրութեան կէսք կարևոր համարին խոտհել կամ յԱյտուած, կամ յիմաստս աղօթիցն, և կամ՝ի բառս՝ այսինքն՝ի բարեղոր արտասանութիւն. բայց այլք բազումք ոչ ինչ յայսցանէ կարևոր համարին, բաւական համարելով զդիտաւորութիւն աղօթելոյ, և զարտաքին մտադրութիւն.

զի եթէ այսոքիկ կարևոր էին, որ ակամայ զբաղմամբ մտաց կատարէր զժամակարգութիւն՝ ոչ ընդդէմ պարտս իւր։ Այսոր որոյ չէ մարթ անհաւանելի համարել զերկրորդս զայս վարդապետութիւն. սակայն ամենեքեան միաբանին՝ զի չէ բաւական վասն երկրորդելոյ զժամակարգութիւն խմանալ զզբաղումն մտացն, այլ խնդրի և կամաւոր զբաղումն։ Իսկ խղճահարաց ոչ երբեք պարտ է կրկնել զժամակարգութիւն վասն զբաղման մտացն այլուր։

76. Ի պարտուց ժամակարգութեան ազատ կացուցանէ նախ՝ հիւանդութիւն կամ ծանր նեղութիւն։ Այսոր որոյ որք կրենն տենդ ընդհատ, չեն ազատ ի պարտուց ի դադարել ջերմանն, և պարտ իսկ է նոցա կանխել կատարել զժամատացութիւն յառաջ քան զհասանել ջերմանն, այլ ոչ և զպիշերայինն յերեկոյ։ Եթէ ոք առանց նեղութեան կարող իցէ ընդ այլում ի միասին կատարել զժամակարգութիւն, պարտի այնպէս առնել։ Եթէ ոք ծանր ինչ միաս առողջութեան ի կատարելոյ զժամս կասկածիցէ, ազատ է ի պարտուց անտի։ Իսկ եթէ երկբայիցի, և չիցէ նմա հաւանական պատճառ ազատութեան, չէ ազատ. այլ լաւ իցէ նմա յայնժամ վարել խորհրդով բժշկի կամ մեծաւորի և կամ գէթ առն խոհականի։ Եթէ ոք վասն խօթութեան չկարիցէ բովանդակ կատարել զժամակարգութիւն, ոչ է պարտական և ոչ մասին ինչ նորին. զի տագնապ մեծ ի պարտականութենէ աստի հասանէ մտաց զառաւելն և սա կարելոյ կատարել։ Այս այսպէս կարի հաւանականաբար ուսուցանեն Աւարէզ, Նաւարրոյ, Անքէզ, Լուկոյ, Վարտանաս, Ոնքալեա և այլք։

Երկրորդ՝ ի պարտուց աստի ազատ կացուցանէ եղբայրսիրութիւն. որպէս եթէ ոք պարապիցի ի գործ՝ զոր չիցէ մարթ թողուլ նմա առանց պատճառս տալոյ այլոց գայթակղութեան, կամ առանց միաստուածայլոց կամ իւր. զոր օրինակ եթէ իցէ ապաշխարողաց քաջութիւն և պակասիցեն խոստովանահարք, կամ հարկ ի վերայ կայցէ քարոզելոյ և այլն։ Երրորդ՝ ազատ առնէ կուրութիւն։ Չորրորդ՝ ուր չգտանիցէ ոք ժամագիրս. այլ պարտի յայնժամ կատարել որչափ ինչ յուշոյ կարիցէ։

ՑՕԴՈՒԱԾ Ե

ՉՐԱՆԱԴՐԱՆՑՅ ԱՌՀԱՍԱՐԱՑ

77–80. Չինչ և քանիսպատիկ են բանադրանք:
81–83. Նզովք:
84. Արդելք:
85. Ընկերցումն ի կարգէն:
86. Խափանած:
87. Անկանոնութիւն:
88. Ըստ յանցանաց:
89. Ըստ թերութեան:

77. Բանադրանք է պատիժ հոգևոր, որով եկեղեցական իշխանութիւն բառնայ ի յանցաւորաց և ի յամառելոց զվայելս հոգևորականաց ինչ բարեաց:

78. Այս բաժանի նախ՝ ի նզովս, յարգելս և ի խափանած: Այրկրորդ՝ յայն որ չէրաւանց, այսինքն ի հանրական և ի հաստատուն օրինաց. և յայն որ ի մտրիպ, այսինքն ի մեծաւորէ ումեքէ սահմանեալ: Այրորդ՝ ի վճռեալ, յոր անկանի ոք նովին իսկ գործով. և ի վճռելէ, յոր չետ վճռոյ անկանի ոք. զորոց ասացաք ի գլ. ԺԹ. 2:

79. Օ բանադրանս կարէն սահմանել ամենայն առաջնորդք եկեղեցականք, որոց իցէ իրաւասութիւն յարտաքին ատենի, կամ ըստ կարգի իշխանութեանն՝ որպէս Պապին, Ժողովոց, եպիսկոպոսաց, փոխանորդի նոցին, փոխանորդի ուխտին կանոնիկոսաց, Ժողովոյ կրօնաւորաց և առաջնորդաց նոցին. և կամ ըստ աւանդեալ իշխանութեան, որպէս այնոցիկ՝ որոց առաջինքն տան իշխանութիւն ըստ ասացելոցս ի գլ. ԺԹ. 3:

Այսան անկանելոյ ընդ բանադրանօք խնդրի նախ՝ զի իցէ ոք մկրտեալ. երկրորդ՝ զի իցէ հասեալ ի բանականութիւն. երրորդ՝ զի իցէ յայտնի և որիշ ոք. չորրորդ՝ զի իցէ հպատակ բանադրողին: Օ օտարաց տես անդ ի Թիւ 6: Այսան անկանելոյ ի ծանր բանադրանս, որպէս ի մեծ նզովս, ի քօղորովին կամ յընդհերկար արգելս, խնդրի նախ՝ ծանր ինչ մեղք, և ըստ ինքեան ծանր կամ հրապուրիչ ի ծանր ինչ. իսկ յերկբայս ծանրութեան իրին՝ զօրեն բանադրանք. երկրորդ՝

գործ արտաքին. երրորդ՝ գործ կատարեալ. չորրորդ՝ յամառութիւն, այսինքն զի յանցաւորն դիտիցէ ոչ միայն յաստուածային իրաւանց արգելեալ զգործն՝ զոր առնէ, այլ և յեկեղեցական իրաւանց։ Օ պատկանաւորն առ այս տես ի գլ. ժթ. 7։

Օ բանադրանս սահմանեալս առանձին վճռով կալող է լուծանել սահմանօղն, կամ մեծաւոր նորին, կամ յաջորդ, կամ որ ի նմանէ ունի իշխանութիւն։ Իսկ զսահմանեալս յերէսանց կամ ի մարդոյ հանրական վճռով, եթէ չիցեն վերապահեալ, կարող է արձակել ամենայն խոստովանահայր։ Տես անդ ի թիւ 11։

80. Եպիսկոպոսունք ըստ տրիդենտեան սահմանադրութեան կարող են անօրինել զամենայն անկանոնութիւնս և արգելս՝ որ յառաջ գան ի յանցանաց. բաց ի կամաւոր մարդասպանութենէ, և ի յանցանաց՝ որ ածեալ իցեն յատեան։ Կարեն դարձեալ արձակել յամենայն մեղաց անյայտից և ի վերապահելոց առաքելական գահոյն ջնջատակս իւրեանց, անձամբ կամ ի ձեռն փոխանորդի՝ զիշխանութիւն իւրեանց այնր աղագաւ նմա առանդելով, ըստ ասացելոցս ի գլ. ժ. 29։ Եւ որպէս անդ ի թիւ 34 յաւելաք, օրէն է եպիսկոպոսի զայս իշխանութիւն հանրաբար իսկ առանդել այլոց։ Եւ թէպէտ այս իշխանութիւն նոցա բարձաւ ըստ մահին հերձուածողութեան և այլոց վերապահելոց ի կոնդակին ընթերցաց ըստ ասացելումն անդ ի թիւ 38, սակայն ի չիարել ուրուք գնալ ի Հռոմ՝ կարէ եպիսկոպոսն արձակել գնա, պարտ ի վերայ եդեալ գնալոյն ի կարողն լինել. իսկ զկանայս, զմանկունս, և զամենեսին իսկ՝ որոց անկարողութիւն չիցէ առժամանակեայ, արձակել առանց լինչ պարտուց ի վերայ գնելոյ, ըստ ասացելոցս անդ ի թիւ 39—45։ Եւ յաղագս բանաբարողաց զազատութիւն եկեղեցական ասացաք ի գլ. ժ. 99։

81. Կշռի է բանադրանք, որով զրկի հաւատացեալ ոք ի հաղորդութենէ եկեղեցւոյ։ Եւ է կրկին, մեծ և փոքր. փոքրն զրկէ ի կրաւորական հաղորդութենէ, այսինքն չընդունելութենէ խորհրդոյ ըստ ասացելումն ի գլ. ժ. 26. 27։ Իսկ մեծն զրկէ և ի ներգործականէն, որպէս առաջի կայ մեզ ասել ի թիւ 83։

82. Ի բանադրելոյ են որ տանելի են, և են որ խորշելի: Տանելի այնոքիկ են, յորոց չէ պատշաճ խորշել հաւատացելոյ, և ոչ յաստուածայինս, ըստ ասացելումն անդ՝ ի Թիւ 15. իսկ խորշելի, յորոց պարտին խորշել հաւատացեալք: Արկնակի մարթ է ումեք գոլ խորշելի. մի՝ յորժամ յանուանէ իւիք բանադրեալ և ծանուցեալ, և միւս ևս՝ եթէ յայտնապէս ձեռն ձգեալ իւիք յեկեղեցական ոք կամ՝ ի կրօնաւոր, և այնպէս յայտնի՝ զի չիցէ մարթ ծածկել կամ անբաւսիր առնել իւիք զայն, ըստ ասացելումն՝ ի գլ. ԺԹ. 14: Ո՞յս բանադրանս, եթէ հարուածն իւիք ամենածանր, կամ ծանր և յայտնի, Հռովմայ հայրապետն եւեթ կարող է լուծանել. բայց՝ ի կանանց և՝ ի մանկանց չէ հասելոյ յարքունս, զորս օրէն է և եպիսկոպոսաց արձակել. որպէս և զհարուածս Թեթևս, Թէպէտ և իւիքն յայտնիք. և զանյայտս, Թէպէտ և իւիքն ծանուցք և ամենածանր իսկ: Տես՝ ի գլ. Ի. 46—48:

83. Բանադրեալքն՝ ի նզով մեծ, Թէպէտ և ոչ խորշելի, զրկին նախ՝ ի նպաստից եկեղեցւոյ. երկրորդ՝ յեկեղեցական ժառանգութեանց, որպէս զի տուչքս Թեան իսկ այնց անվաւեր գոլ. երրորդ՝ յընդունելութենէ և՝ ի մատակարարութենէ խորհրդոց, և՝ ի քնաւից իսկ յաստուածայինն պաշտամանց. և չորրորդ՝ ՚ի հոգևորական և՝ ի քաղաքական հաղորդակցութենէ հաւատացելոց: Այ եղանչէն և հաւատացեալք՝ որք ընդ բանադրելումն խորշելոյ հաղորդին, եթէ յաստուածայինս՝ այսինքն՝ ի լսել ընդ նմա զտուրբ պատարագն և՝ ի կատարել զժամակարգութիւն. և եթէ՝ ի քաղաքականս՝ այսինքն՝ ի խօսակցել ընդ նմա, ՚ի բնակակից լինել կամ սեղանակից, յողջունել զնա և՝ ի նամակապիր լինել առ նա: Այլ յերկս եւեթ հաղորդակցութիւնս ծանր մեղանչէ. մի՝ հաղորդելով ընդ նմա յաստուածայինս, երկրորդ՝ յարհամարհանս պատուիրանին հաղորդելով, և երրորդ՝ գործակից լինելով նոյին իսկ մեղացն, վասն որոյ բանադրեալն իւիք նա. և յայնժամ ինքն ևս հաղորդեալն անկանի՝ ի մեծ նզովս, ուր այլովք հաղորդակցութեամբքն անկանի՝ ի փոքրագոյն եւեթ, և սովորաբար ներելի մեղս գործէ, և ազատ իսկ է՝ ի մեղացն ուր իւիք հարկ ինչ կամ օգուտ կամ օրէնք

ամուսնութեան կամ հպատակութիւն և կամ տգիտութիւն: Սակս իսկ առվոյբէաբ, զի ՚ի յաձախելն ՚ի նոյն, կամ ՚ի հաղորդելն դիտաւորութեամբ յաձախելոյ, ըստ հաւանականաց ոյն կարծեաց ծանր մեզանչէ: Տես զայսցանէ ՚ի գլ. ժթ. 21:

84. Արգելք կամ կախումն է ազգ բանադրանաց, որով եկեղեցական ոք չկարէ կատարել զպաշտամունս կարգին: Այն է և այսմ գոլ յիրաւանց, կամ ՚ի մարդոյ. և առժամանակեայ՝ որ ՚ի ընուլ ժամանակին լուծանի, կամ անժամանակ՝ որ արձակմամբ եթէ լուծանի. և դարձեալ արգել ՚ի պաշտամանէ կարգին կամ իրաւասութեան, արգել յեկեղեցական ժառանգութենէ, և արգել յերկաքանչիւրոցն եւս: Տես զայսմանէ ՚ի գլ. ժթ. 64:

85. Ընկեցումն ՚ի կարգէ զրկէ զեկեղեցականն յամենայն պաշտամանց և ՚ի ժառանգութեանց: Իրական ընկեցումն կատարի արարողութեամբ, և զրկէ զեկեղեցականն յերկաքանչիւրոցն եւս արտունութեանց, այսինքն յատենական և ՚ի կանոնական ազատութենէ. զի օրէն է քարշել զնա յատեան աշխարհական, և որ հարկանէն զնա՝ ոչ եւս անկանի ընդ բանադրանօք: Իսկ բանիւ չափ ընկեցումն առանց արարողութեան կատարի, և ոչ զրկէ զնա յերկոցունց աստի արտունութեանց: Տես ՚ի գլ. ժթ. 67:

86. Խափանումն է ազգ լինչ բանադրանաց, որով խափանի ՚ի տեղւոջ ուրեք, կամ անձին ումեք սպասաւորութիւն աստուածային պաշտամանց, և խորհրդոց լինչ, և եկեղեցական շնորհաց: Օ՞ի թէպէտ և Նպովք եւս զնոյն խափանումն առնեն, այլ որպէս հաղորդակցութիւն ընդ հաւատացեալս. և ապա՛ եւս առնէ զնոյն, այլ որպէս զրկումն յեկեղեցական իշխանութենէ: Այրեակի է խափանումն. տեղական՝ որ խափանէ զաստուածային պաշտամունս յայս լինչ տեղւոջ. անձնական՝ որ խափանէ այսմ կամ այնմ անձին. և խառն՝ որ տեղւոյ և բնակչաց առնէ խափանումն աստուածային պաշտամանց: Օ՞այլ եւս կարևորս առացաք ՚ի գլ. ժթ. 68:

Այ և դադարումն աստուածային պաշտամանց և եկեղեցական յուղարկաւորութեան՝ որ ոչ ՚ի պատիժ կամ ՚ի դեղ սահմանի, այլ ՚ի նշան սգոյ և ապաշխարու-

Թեան վասն սատուածընդդէմ Թշնամանաց գործեցեալոյ. և որոց իշխանութիւն է սահմանելոյ ղբանադրանս, նոցա է անկ սահմանել և ղայս։

87. Պիտանութիւն է արգել կանոնական չկարելոյ ընդունել, զսուրբ կարգս, և զընկալեալս չպաշտելոյ։ Ըստ հանրագոյն կարծեաց չէ սա պատիժ, այլ որպէս խոչ լինի ըստ ասացելոցս ի գլ. ԺԹ. 73։ Ունի լինի անկանել յանկանոնութիւն, որ չիցէ յայտնապէս սահմանեալ յօրինաց. վասն որոյ յերկբայս՝ աղատ է որ յանկանոնութենէ, եթէ երկբայութիւնն չիցէ զմարդասպանութենէ գործեցելոյ. զի ի մասինս յայսմիկ բաւական են երկբայք յանկանոնութիւն, ըստ ասացելոցս անդ ի Թիւ 79. 80։ Ումն անկանելոյ յանկանոնութիւն ըստ յանցանաց՝ լինդրի գիտութիւն գՔ և կեղեցական օրինաց արդելման։ Նաւարդոյ, Սիլուխոյ, Սանքեզ, Վասթրոխալ, Ոռնքալեա և այլք կարևոր համարին և զգիտութիւն պատժոյն ըստ ասացելոցս անդ ի Թիւ 84։ Նա բառնի անկանոնութիւն նախ՝ ի դադարել պատճառին, եթէ յառաջ գայ ի Թերութենէ տիոցն, ի տգիտութենէ, յաղքատութենէ, և ի վատահամբաւութենէ՝ որ դադարէ տեղափոխութեամբ կամ ուղղութեամբ վարուց, եթէ չիցէ ատենական վճռով հաստատեալ, զի լինդրի յայնժամ անօրինութիւն. երկրորդ՝ ի մկրտիլն, եթէ յառաջ գայ ի յանցանաց. երրորդ՝ անօրինմամբ, և չորրորդ՝ կրօնաւորելով։ Տես անդ ի Թիւ 85—87։

88. Ալ է անկանոնութիւն ըստ յանցանաց, և այլ ի Թերութենէ իմիք յառաջ եկեալ։ Պիտանութիւնք ըստ յանցանաց են վեց. նախ՝ ի կրկին մկրտութենէ դիտութեամբ, և յայնժամ անկանին յանկանոնութիւն եթէ մկրտօղն և եթէ մկրտեալ, ըստ ասացելոցս ի գլ. ԺԹ. 88։ Երկրորդ՝ ի բռնաբարելոյ ղբանադրանս, այսինքն որ ընդ բանադրանօք պաշտիցէ զսուրբ կարգս, ըստ ասացելոցս անդ ի Թիւ 89։ Երրորդ՝ ի պաշտելոյ զսուրբ կարգ՝ որ չիցէ ուրուք, որպէս եթէ փոքր աստիճանաւոր կարդայցէ ուրարաւ զաւետարան ի հանդիսի։ Չորրորդ՝ յօրինաղանց ձեռնադրութենէ, որպէս եթէ որ առանց հրամանագրի եպիսկոպոսին իւրոյ՝ ձեռնադրիցի յայլմէ, կամ ի նմին

աւուր ընկալցի առանց տնօրինման զսարկաւագութիւն, զքահանայութիւն և այլն, ըստ ասացելոցս ի գլ. ԺԹ. 91։ Այլ ոչ ամենայն ձեռնադրութիւն, որ չիցէ ըստ օրինի, աճէ անկանոնութիւն. զի են և այ՝ որ աճեն արգելս լեալ վերապահեալս Պատկին, որպէս ասացաք ի վեր այսր ի Թիւ 46։ Հինգերորդ՝ ի յայտնի եղեռանէ, որ աճէ անուանարկութիւն ըստ գործոյ կամ ըստ իրաւանց, որպէս չնութիւն, առևանգութիւն, աբոստատիութիւն, մծղնէութիւն, ստերդմնութիւն ի դատաստանի, հերետիկոսութիւն, սիմոնականութիւն, այլովքն հանդերձ։ Անկանոնութիւն ըստ գործոյ՝ բառնի ուղղութեամբ վարուց, իսկ ըստ իրաւանցն՝ տնօրինմամբ, ըստ ասացելոցս ի գլ. ԺԹ. 92։ Վեցերորդ՝ ի մարդասպանութենէ կամ ի խեղելոյ զոք յանիրաւի. ընդ անկանոնութեամբս այսուիկ անկանին և պատուիրօղք և խրատտուք և գործակիցք։ Որ ինչ և գայսմանէ կարևոր գիտելիս, հատուցաք անդ ի Թիւ 94, և այլն։

89. Իսկ անկանոնութիւնք ի Թերութենէ՝ են ութ։ Ցախ՝ ի Թերութենէ մտաց, որով չիմանքք առհասարակ, ցնորեալք, լսանոտք և այսահարք են անկանոնք. դարձեալ և տգէտք, ըստ ասացելոցս ի վեր այսր Դ. 35. դարձեալ և նորակնուքք, ըստ ասացելոցս ի գլ. ԺԹ. 115։ Երկրորդ՝ ի Թերութենէ մարմնոյ, որպէս եթէ չիցէ ուրուք ախտ ինչ՝ որ խափանեսցէ զնա ի պաշտելոյ ըստ պատշաճի զկարգ, կամ տգեղութիւն ինչ ոչ դուզնաքեայ ածիցէ նմա։ Ըստ առաջնումն անկանոն են կոյրք, խուլք, համրք, միաձեռանիք և այլն. իսկ ըստ երկրորդումն՝ թորոտք, ընչաքաղք, սապատողունք և այլն, ըստ ասացելոցս ի գլ. ԺԹ. 116–125։ Երրորդ՝ ի Թերութենէ ծննդոց, որով անկանոնք են ամենեքեան ըստ ոչ օրինի ծնեալք. այլ մարթ է բառնալ զայս Թերութիւն պատկաւ ծնողացն, կամ որդւոցն կրօնաւորելոյ, և կամ անօրինմամբ Պատկին, ըստ ասացելոցս անդ ի Թիւ 126–129։ Չորրորդ՝ ի Թերութենէ տիոց, զորմէ ասացաք ի վեր այսր ի Թիւ 43, 44։ Հինգերորդ՝ ի Թերութենէ խորհրդոց, որով անկանոն են երկկանայք. զի ոչ կրկին լեալ իցեն կանայք, ոչ յանդիման առնէ ըզխորհուրդ միաւորութեանն Քրիստոսի ընդ միակ հարսին իւրում եկեղեցւոյ։ Երրակի է երկկնութիւն ոչ

անընդունակ սրբոյ կարգին կացուցանէ։ Նախ՝ եթէ ուրուք երկուս կանայս յաջորդաբար ածեալ իցէ. երկրորդ՝ եթէ ընդ երկրորդին ումեք կնոջ կեղծեալ իցէ զամուսնութիւն, կամ պսակեալ ընդ այրւոյ, կամ ընդ փորձելոյ ումեք ամուսնացեալ, այլովքն հանդերձ՝ զոր սասցաք՝ ի գլ. ժթ. 134–139. երրորդ՝ եթէ ոք ամուսնացեալ իցէ, թէ և անվաւերաբար, ընդ փորձելոյ կամ ընդ կուսի յետ կրօնաւորական ուխտի կամ ընդունելոյ զսուրբ կարգ, ըստ սասցելոցս անդ՝ ի թիւ 38։ Ող երեքորդ՝ ի պակասութենէ բարեհամբաւութեան, զորմէ տես անդ՝ ի թիւ 92. ոչ թերութենէնս այս նոյն համարի ընդ անուանարկութեան ըստ յանցանաց։ Նօթներորդ՝ ի թերութենէ ազատութեան, որոյ անկանոնք են նախ՝ ծառայք. երկրորդ՝ կանամբիք. երրորդ՝ պաշտօնեայք սահեսի, որք երդմամբ կամ թոշակաւ սպասաւորեն արդարութեան. տես անդ՝ ի թիւ 143։ Ոչթերորդ՝ ի թերութենէ մարդասիրութեան, այսինքն որոց սպանութիւն ինչ կամ անդամատութիւն՝ թէպէտ և օրինաւոր՝ իցէ գործեալ. որպէս զինուոր յարդար պատերազմի, և վիրաբոյժ՝ որոյ խեղեալ զոք իցէ առ՝ ի բժշկութիւն։ Նոյնպէս և դատաւորք արեան, որք ներգործաբար, աղդողաբար և մերձաւորաբար գործակից լինին մահուան մահապարտի։ Տես անդ՝ ի թիւ 144–146։

ՑՕԴՈՒԱԾ Զ

ՑԱՂԱԳՑ ՍԱՐԿԱՒԱԳՈՒԹԵԱՆ

90. Զինչ է սարկաւագութիւն, և որ ինչ նմին պատշաճ և ձև։
91. Պաշտօն սարկաւագի։

90. Սարկաւագութիւն է կարգ, որով եպիսկոպոսն տայ ումեք իշխանութիւն անմիջաբար սպասաւորելոյ քահանային՝ ի պատարագի, մատուցանելով նմա զմաղզմայն հացիւ և զսկիհն գինւով. և սա և կարդալոյ զաւետարան և քարոզելոյ։ Ըստ հաւանականագոյն կարծեաց, որպէս սասցաք՝ ի թիւ 20, նիւթ սարկաւագութեան է ձեռնադրութիւն և՛ եթ աջոյ եպիսկոպոսին, և ձև Ընդունիմ ես երկնաւոր ընդկե և այլն, զոր ե-

պիսկոպոսն ասէ՝ ի ձեռնադրելն։ Այլ քանզի հաւանական է և միւսն կարծիք, վասն որոյ պարտ է համարել նիւթ ամբողջական և զտուչութիւն սրբոյ աւետարանին, հանդերձ բանիւն՝ Այս էշխանութիւնս և այլն. և զտուչութիւն բուրվառին, հանդերձ բանիւն՝ Այս *եպ հրամանս և այլն։ Այլ թէ ըստ այսմ կարծեաց օրպէս լինէին սարկաւագունք՝ ի սկզբանէ, մինչ չև դրեալ էին աւետարանք, ասելի է՝ զի սահմանադիրն խորհրդոյ Քրիստոս ետ եկեղեցւոյ իւրում իշխանութիւն սահմանելոյ զնիւթ և զձև նոցին. այլ զայսմանէ տես՝ ի գլ. ԺԲ. 14–16։

91. Պաշտօն սարկաւագին է, բայց յասայելոցս, և մկրտել հանդիսապէս հրամանաւ ժողովրդապետին՝ ի կարևոր ժամանակի. զի առանց հրամանի՝ ի ստիպել ևս հարկին եթէ մկրտեսցէ զոք հանդիսապէս, անկանի յանկանոնութիւն։ Կարէ սարկաւագն և հաղորդել՝ դարձեալ հրամանաւ ժողովրդապետին, ի կարևոր ժամանակի, այսինքն առ՝ ի չգոյէ քահանայի՝ որ հաղորդեսցէ զժողովուրդն։ Ո՞այս ևս եթէ արասցէ անհրամանն, անկանի յանկանոնութիւն։ Պաշտօն սարկաւագին է դարձեալ՝ բերել կամ մատուցանել քահանային զնանատուին և զձաձանչ հանդերձ սրբութեամբն։ Դարձեալ և զմարմնակալս կտաւիս լուանալ առ՝ ի չգոյէ կիսասարկաւագի։

Սարկաւագ, որ՝ ի բանադրանս գոլով սպասաւորէ, անկանի յանկանոնութիւն ըստ ասացելումն՝ ի թիւ 88։ Նոյնպէս որ՝ ի բանադրանս գոլով ձեռնադրի, ոչ վասն ձեռնադրութեանն անկանի յանկանոնութիւն, այլ վասն սպասաւորելոյ սեղանոյն յետ ձեռնադրութեանն։

ՅՕԴՈՒԱԾ Լ

ՅԱՂԱԳՍ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ

92, 93 • Ջ[ինչ է քահանայութիւն, և որ [ինչ նիւթ և ձև նորին։
94 • Թէ որպէս պարտ [ինչ ընդ զԹերութիւնս ձեռնադրութեան։
95, 96 • Ջ[ինչ է պատարագն և քանի պատիկ։
97 • Նիւթ պատարագին, և ասա զորակէ հայցին։
98 • Ջգինւոյ։
99 • Ջնեղկայութենէ նիւթոյն։
100 • Ձև պատարագին։
101 • Որո՞վ օրինակաւ [ինչ անդ Քրիստոս։
102 • Ջօրութիւնք պատարագին։
103 • Վասն որո՞յ օրէն [ինչ մատուցանել զայն։
104 • Աղաչիք արբոյ պատարագին։
105 • Ջօրութիւն արբոյ պատարագին [ինչ անբաւ։
106 • Օրինաւոր պատարագիք։
107 • Ցամեցումն պատարագի։
108 • Խորէ՛ի պատարագեաց։
109 • Որ [ինչ Ժողովրդապետի պարտք պատարագելոյ։
110, 111 • Ցիշատակ մատուցողի զպատարագս։
112 • Կարմրագիր խրատք առ հասարակ [ինչ՝ն հրամայականք։
113 • Ե՞րբ օրէն [ինչ պատարագել։
114 • Ո՞ր օրէն [ինչ պատարագել։
115 • Ի՞ւ պղծի եկեղեցի։
116 • Որ [ինչ կարևոր առ՛ի պատարագել, և նախ սեղան։
117 • Սկիհ և մաղզմայ։
118 • Սպասք։
119 • Մարմնակալ։
120 • Մաքրիչ և այլն։
121 • Պատարագամատոյց։
122 • Սպասաւոր։
123 • Նշան խաչին։
124 • Սրբագործէն քահանայք նորընծայեալք՛ի պատարագէն ընդ եպիսկոպոսին։
125 • Ջի պարտ է պատարագել՛ի ձայն, համառօտ և այլն։
126 • Ջի ըստ աւուր պատշաճի պարտ է պատարագել։
127 • Ե՞րբ օրէն [ինչ կրկին՛ի միում աւուր պատարագել։
128 • Ջ[ինչ եթէ՛ի պատարագել անդ պղծի[ցի] եկեղեցի, կամ բանադրեալ խորհրդի անդր մատնի[ցի]։
129 • Ջիշխանութենէն քահանայի։ զի օրէն է պարզ քահանայի պատարագել եւթ և հաղորդել, և՛ի կարևոր ժամանակի արձակել։
130 • Որ [ինչ պարզ քահանայի պարտ [ինչ գիտել յաղագս ընդունելոյ զխոստովանութի[ւն]՛ի տուպել հարկին։
131, 132 • Պաշտօն ուսուցանելոյ և քարոզելոյ։

92 • Քահանայութի[ւն] է կարգ, որով եպիսկոպոսն տայ ուժեք իշխանութի[ւն] սրբագործելոյ զմարմին և զարիւն Քրիստոսի, և արձակելոյ զհաւատացեալս՛ի մե-

ղաց : Օ կարգ քահանայութեան սահմանեաց Քրիստոս ի վերջին ընթրիս իւր՝ յասելն. Օ այս արարէք առ իմոյ յիշատակի. և յետ յարութեան իւրոյ՝ յասելն. Ընդ առաքեալսն ղրկեցից զձեզ, ընդունեալ լերուք Հոգի : Սիւթ խորհրդոյս, ըստ հաւանականագոյն կարծեաց, է ձեռնադրութիւն եպիսկոպոսի ընդ քահանայից ի վերայ նուիրելոյն, որպէս ասացաք ի գլ. ԺԲ. 16 : Դայց հաւանական է և կարծիք այլոց, որք կրկնակ համարին զնիւթ խորհրդոյս և զձև, այսինքն ընդ ձեռնադրութեան և զտուչութիւն սկզբոյն և մաղզմայի հանդերձ ընծայիւքն, և զասել եպիսկոպոսին ի տալն՝ Ա՛ռ զնկալ, *անդէ առեր կարողութիւնս և այլն. և զմիւսն զայն՝ զոր ասէ. Ա՛ռ զեղ երկնաւորութիւն ի ՚ոգւոյն սրբոյ կապելոյ և արձակելոյ և այլն. վասն որոյ ի ձեռնադրութեան ամենայն զգուշութեամբ և զայսոսիկ պարտ է կատարել ըստ ասացելոցս ի գլ. ԺԲ. 16 :

93. Ըստ այսմ պարտ է նախ՝ ի ձեռնադրութեան քահանայի տալ նուիրելոյն ընդ սկզբոյ և մաղզմայի զհաց և զգինի, որով աւանդի նմա իշխանութիւն քահանայագործելոյ զմարմին և զարիւն Քրիստոսի : Երկրորդ՝ ի միասին պարտ է տալ զայնոսիկ, զի իշխանութիւն սրբագործելոյ զայնս անբաժանելի է ըստ հաւանականագոյն կարծեաց : Երրորդ՝ պարտ է, զի նոյն ինքն եպիսկոպոսն՝ որ ձեռնադրէ և պատարագէ՝ իւրովի տացէ զայնս նուիրելոյն, ըստ ասացելումն ի Թիւ 53 : Ոմանք՝ չէ բաւական նուիրելոյն զսկիհն ևեթ շօշափել, այլ պարտ է զի և զմաղզմայն ի միասին շօշափեսցէ. զի հաւանական է կարևորութիւն երկոցունցն ևս շօշափման : Ինգերորդ, զի Թէպէտ և ըստ հասարակաց կարծեաց վաւեր է ձեռնադրութիւն այնորիկ՝ որ զհացն ևեթ շօշափիցէ առանց շօշափելոյ և զմաղզմայն, զի հացն և գինին են նիւթ կարևոր, իսկ սկիհն և մաղզմայ ըստ պատշաճի յաւելեալ. սակայն լաւ է երկրորդել յայնժամ զձեռնադրութիւնն վասն չորեցունց ոմանց աստուածաբանից երկբայելոց զայնմանէ, և վասն պատուիրելոյ մաշտոցին շօշափել զընդպանակ սկզբոյն և զմաղզմայ ի միասին : Օ նոյն իմա և զշօշափելոյ զսկիհն ևեթ և զմաղզմայ, առանց շօշափելոյ և զհացն :

94. Ի պատահել թերութեան իրիք ի ձեռնադրու-

թեան, եթէ յէական մասին իցէ թերութիւնն, այսինքն՝ ի նիւթն կամ՝ ի ձևն, պարտ է երկրորդել զայն անպատճառ. և երկրորդել բուսանդակ, եթէ թերութիւնն կամ երկբայութիւն իցէ՝ ի տուչութեան առաջնոյ մասին՝ այսինքն իշխանութեան՝ ի վերայ իրական մարմնոյն Քրիստոսի. իսկ եթէ՝ ի տուչութեան երկրորդի մասին՝ այսինքն իշխանութեան՝ ի վերայ խորհրդական մարմնոյն, շատ է զերկրորդն եւեթ զայն մատն կրկնել: Իսկ եթէ՝ ի մակերեսութ մասունս իցէ թերութիւնն, և թեթև ինչ, ոչ է պարտ կրկնել. այլ եթէ ծանր, որպէս եթէ մեռացօնք լեալ իցեն օծութեան ձեռաց նուիրելոյն, պարտ է վաղագոյն նմին իսկ ձեռնադրողն (եթէ հնար իցէ) ընուլ զթերին:

95. Պատարագ ըստ հանրական նշանակութեանն է նուէր զինեալոյ ինչ իրի ձօնեալ Աստուծոյ՝ զենմամբ՝ ի նշան գերագոյն տէրութեան նորա: Այս է չորեքկին. փառատրական՝ առ՝ ի պաշտել զնա. գոհացողական՝ առ՝ ի գոհանալ զնմանէ վասն բարերարութեանց նորա. մաղթողական՝ առ՝ ի հայցել՝ ի նմանէ բարիս. և քաւչական՝ առ՝ ի խնդրել զթողութիւն:

96. Այլ պատարագ սրբոյ սեղանոյն է նուիրագործութիւն մարմնոյ և արեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Զնմարիտ պատարագ, զայլոց բնաւից պատարագաց բերելով զէութիւն. և է իսկապէս պատարագն այն՝ որ՝ ի խաչին մատուցաւ, ըստ եղանակի եւեթ մատուցմանն զանազանեալ յայնմանէ, որպէս ժողովն տրիդենտեան ուսուցանէ: Այնք յաստուածաբանից զէութիւն սրբոյ պատարագին կացուցանեն՝ ի սրբագործութեան, այլք՝ ի նուիրման, կէսք՝ ի Հաշակման, և այլք դարձեալ հաւանականագոյնս՝ ի սրբագործութեան և՝ ի Հաշակման, որպէս Պելլարմինոս, Սոթոյ, Պոնաչինա, Վուրնելլի և այլք: Այս դարձեալ, ըստ հաւանականագոյն կարծեաց, առ էութիւն խորհրդոյն՝ խընդրի սրբագործութիւն երկոցունցն ևս տեսակաց, այսինքն հացին և գինւոյ. զի այլապէ ոչ բաւականապէս բերի զկիշատակ պատարագի խաչին, յորում փրկիչն մեր եհեղ զարիւն իւր սուրբ:

97. Այրեք ինչ կարևոր են առ՝ ի մատուցանել զսուրբ պատարագն. գիտաւորութիւն, նիւթ և ձև: Ընդրի

դիտաւորութիւն սրբագործելոյ կամ կատարելոյ զսուրբ խորհուրդն, զկնի զօրութեամբ, այսինքն յարատևելով կանխակալ ներգործական դիտաւորութեան, զոր ունի աներկբայապես քահանայ ՚ի զգեստաւորելն և ՚ի գնալ ՚ի սեղանն, ըստ ասացելումն ՚ի վեր այսր ՚ի Թիւ 9։ Կիւթ սրբոյ խորհրդոյս է ինքն Քրիստոս, իրապես ներկայ ընդ տեսակօք հացին և գինւոյ։ Հացին ընծայելոյ ՚ի խորհուրդն պարտ է գոլ յալերկ ցօրեհնոյ, և մի խառն յայլմէ իմեքէ, և ոչ ըստ կիսոյ մասին. և ՚ի հասարակ ջրոյ, գկնի ըստ առաւելագոյն մասին. եփեալ որպէս հաց, մի ապականեալ և մի մերձ յապականութիւն. ապա թէ ոչ, չիցէ նիւթ պատկանաւոր։ Ըստ լատին և ըստ մերումն արարողութեան նիւթ օրինաւոր է բաղարջն. իսկ ըստ Յունաց խմորեալն։ Գիտելի է աստ, զի եթէ ՚ի Յունաց ոք քահանայից գտցի յերկիր լատինացւոց՝ ուր չիցէ եկեղեցի ըստ ազգային արարողութեան, որպէս և ՚ի Լատինաց ոք եթէ գտցի ՚ի յունաստան՝ ուր չիցէ եկեղեցի ազգային, կարող է ըստ հանրագոյն կարծեաց աստուածաբանից պատարագել բաղարջիւ կամ խմորելով անխտիր։ Գիտելի է դարձեալ, զի չէ օրէն սրբագործել զնշխար բեկեալ կամ արատաւոր. այլ չէ ինչ ծանր մեղք, եթէ արատն կամ բեկումն չիցէ մեծ չափ, որպէս հաստատուն Քրիստի և Փառագուարճ։ Յաւելուն Լաքրուա և Կոպաթոյ, զի եթէ յետ օրհնութեան ընծայիցն տեսցէ ոք զի բեկեալ է նշխարն, օրէն է նմա սրբագործել զայն։ Պարտ է դարձեալ, զի նշխարն իցէ մեծ ըստ սովորականին չափոյ և բոլորշի. այլ առ ՚ի չգոյէ մեծին՝ օրէն է քահանայագործել և զնշխար փոքրիկ։

98. Պարտ է գինւոյն գոլ ՚ի բերոյ որթոյ. և զոյգն ինչ ջուր խառնել ՚ի բաժակն՝ խիստ պատուիրան է եկեղեցւոյ, ՚ի նշանակ միաւորութեան հաւատացելոց ընդ Քրիստոսի։ Կթէ սաստիկ իցէ անապակն, մինչև ՚ի չափ երիր մասին նորա օրէն է գոլ ջրոյն. այլ կաթիլ մի և եթէ շատ է։ Այս չէ նիւթ պատկանաւոր ոչ գոյզ ազօսոյ, և ոչ գինի ջրախառն կամ անհամեալ. իսկ եթէ գոյզն ինչ ջուր կամ այլ ինչ հեղուկ խառնեալ իցէ ընդ գինի, որպէս և քաղցու կամ խազմուզ, թէպէտ և պատկանաւորք են՝ այլ ոչ երբէք օրինա-

ւորք : Օնոյն իմա և զլինուց, որ սկսեալ իցէ քայա-
խել· բայց | աքրուա , Կոպաթոյ , Սփորեր , և կարդի-
նալ | ամպերթինի օրինաւոր համարին , առ՝ի չգոյէ
ուրեք բարեհամ գինւոյ , ՚ի կիր առնուլ զկճուահանին :
Օկ օրէն նուիրագործել և զգինի պաղեալ , և չև լու-
ծեալ , թէպէտ և իցէ նիւթ պատկանաւոր· զի և ոչ՚ի
պաղել տեսակաց արեանն ՚ի բաժակի՝ գադարէ անդ
խորհուրդն· այլ պարտ է ջերմջերմ կատարեօք պատել
զբաժակն՝ առ՚ի լուծանել զթանձրութիւն տեսակին ,
ըստ կարմրագիր խրատուց լատին պատարագամատու-
ցին : Իսկ եթէ՚ի ձաշակելն զգայցէ քահանայն զի ա-
պականեալ է գինին , կամ ջուր փոխանակ գինւոյ նուի-
րագործեալ , կէսք բաւական համարին զգինի եւեթ
վերստին սրբագործել· այլ լաւ և ըստ խրատու պա-
տարագամատուցին զՀայ և զգինի անդրէն քահանայա-
գործել , զկանոնն եւեթ երկրորդելով Ոյբէ աւրբէ աւրբէ
էս ճշմարտապէս ի ամենասուրբ , և այլն : Տես և որ լինչ
ասացաքն ՚ի գլ· ԺԵ· 54 : Իսկ եթէ երկբայելի միայն
իցէ գինին , պարտ համարին | աքրուա , Փասքուալ և
Ալբերտա , ընդդէմ Ֆրանսուբրինեայ և Սփորերի , վերըս-
տին քահանայագործել պայմանաւ զգինի :

99· Կարևոր է զարձեալ զնիւթն կայցէ առաջի քա-
հանային , գեթ բարձրայարկ· վասն որոյ անվաւեր է սրբա-
գործութիւն , եթէ նիւթն այնչափ իցէ դուշնաքեայ՝
զի չիցէ գննելի աչաց կամ ձեռին , կամ հեռի յոյժ կայ-
ցէ կամ յետկոյս քահանային : Ասեմ իսկ գէթ բարձրա-
պէս , զի վաւեր է սրբագործել քահանայի կուրի կամ
որ՚ի խաւարի պատարագիցէ , եթէ իցէ նմա հաւաստի
նիւթոյն առաջիկայութիւն : Կարևոր է և սա , զի յեղա-
նակաւ իւիք գիտիցէ քահանայն զոր սրբագործէ , այս-
ինքն զի գեթ երկուս՚ի նշխարաց անտի ընծայելոյ տե-
սանիցէ· զի բաւէ յայնժամ զօրութեամբ գիտաւորու-
թիւն նորա՚ի սրբագործութիւն , թէպէտ և՚ի սրբա-
գործելն չյիշիցէ : Իսկ եթէ սրբատուփն արտաքոյ մնալ
նակալին կայցէ՚ի բացեայ անյիշատակ , ըստ հաւանա-
կանագոյն կարծեաց պարտի վերստին սրբագործել
զայն պայմանաւ : | աւ իցէ քահանայի ունել գիտաւո-
րութիւն սրբագործելոյ և զչինիս գինւոյ՚ի նեղքս յրմ-
պանակի սկսոյն զատ՚ի գինւոյ անտի մնացեալս : Եթէ

յետ ընծայման մատուցին այլ և ս նշխարք վան հաղորդելոց, շատ է՛ի մնաց և եթէ ընծայումն այնց, և ս և յետ աղօթիցն, Տէր Ա՛ստուածդ ղօրուներանդ։

100. Իսկ ձևք սրբոյ խորհրդոյս են բանքն՝ զոր ասէ քահանայն՛ի վերայ հացին, Ա՛յս է մարմին իմ. և՛ի վերայ գինւոյն, Ա՛յս է արիւն իմ։ Ումանք և զայլոցդ բան երկրորդին, այսինքն նորոյ ուխտի և այլն, համարին մասն ձևոյ սրբագործութեան գինւոյն, և հաւանական է կարծիք նոցա, և հաւաստեաւ ծանր մեղք են թողուլ զայն՛ի բաց։ Իսկ աղօթքն՝ որ յառաջ քան զայն, Ո՛րբէ ստո՛րբէ ստո՛րբէ ես Աչխարհապէս և այլն, ըստ հանրական կարծեաց չէ կարևոր՛ի սրբագործութիւն՛ի հարկաւորութենէ խորհրդոյն. բայց Ակօվտ և այլք ունին երկբային զայսմանէ։ Այս պարտ է զձևս զայսոսիկ, այսինքն զբանս Քրիստոսի, ՛ի գիմաց նորա՛ի վերայ հացին և գինւոյ յառակ յօգաւորութեամբ արտասանել. այլ եթէ ոք առ քաղքենատութեան՝ փոխանակ մարմնոյ ասիցէ մալքին էմ կամ մայքին էմ, և փոխանակ արեան ասիցէ ալէ՛ն էմ, կամ այրո՛ն էմ, վաւեր է սրբագործութիւնն, որպէս և վասն ձևոյ միրոտութեան ասացաք, և որպէս հաստատեն Ուարդ, Լուիզ, Աքրուա և այլք գրեթէ առ հասարակ. քանզի բառք՝ Թէպետև և Թերի յօգաւորեալ՝ բերեն զնշանակութիւն իրեանց, ուր Թերութեամբ հնչմանն չնշանակիցեն այլ ինչ, և չփոխիցեն զիմաստ բանին։ Պարտ է քաջ գիտել, զի չէ օրէն քահանայի վան վայրապար երկբայութեանց կըրկնել զձև սրբագործութեան. այլ եթէ երկբայեսցի հաւանականաբար Թողեալ ինչ՛ի բաց՛ի ձևոյ անտի, պարտ է նմա յայնժամ երկրորդել զայն՝ լռելեայն պայմանաւ։

101. Երկայութիւն Քրիստոսի՛ի սուրբ խորհրդեան անձառելի է, ըստ բանի տրիդենտեան ժողովոյն. զի ոչ յառաջբերութեամբ է և ոչ յերկնից յերկիր իջուցանելով, այլ գոյացութեան հացին և գինւոյ՛ի գոյացութիւն մարմնոյ և արեան Քրիստոսի փոխելով, զոր սուրբ ժողովն բացատրեաց բառիւս գոյացափոխութիւն, այսինքն տարրապէս փոփոխումն գոյացութեան հացին և գինւոյ։ Ոմն որոյ ընդ տեսակօք հացին և գինւոյ խոստովանիլք և հաւատամք զՔրիստոս, այլ զոր-

պէտն չկարեմք գիտել· գիտեմք զի կայ անդ մարմինն Քրիստոսի հանդերձ հոգւովն և աստուածութեամբ, և կայ առանց տարածութեան մասանց ըստ տեղւոյ, թէպէտ և մասն իւրաքանչիւր արտաքոյ յայլմէ՛ ի մասանց, այլ չկարեմք հասու աքանչելեացն լինել· Ի վերայ այսորիկ, որպէս նոյն սուրբ ժողովն ուսուցանէ, կայ անդ Քրիստոս բովանդակ, և ընդ իւրաքանչիւր մասամբք տեսակացն կայ և միայ ամբողջ՛ ի բաժանել նոցին· Նա թէպէտ՛ ի հաղորդելն չընդունիմք զանձն Տօր և Տոգւոյն սրբոյ՝ որպէս ընդունիմքն զանձն Բանին վասն գոյացապէս միաւորութեանն ընդ մարդկութեան, սակայն են՛ ի խորհրդեան անդ և անձն Տօր և անձն Տոգւոյն սրբոյ վասն միասնական աստուածութեանն, այսինքն նոյն աստուածային բնութեան նոցա ընդ Որդւոյ·

102· Աստուածօրէք սրբոյ պատարագին երեք են· նախ ինքն Քրիստոս՝ որ մատուցանէն և մատչի և ընդունի, երկրորդ՝ եկեղեցի սուրբ, և երրորդ՝ քահանայն, որ իբրև պաշտօնեայ Քրիստոսի և եկեղեցւոյ պատարագէ· Օրութիւնք սրբոյ պատարագին են չորս· նախ Թողութիւն մեղաց, զոր ոչ իբրև տայ անմիջաբար՝ այլ՛ ի ձեռն ընծայ շարժելոյ յապաշխարութիւն, որում չէետ գայ Թողութիւն մեղաց՝ մահացուաց և ներելեաց, որպէս ուսուցանէ սուրբ Աղուինացին ընդ այլս դրեթէ աւ հասարակ· Երկրորդ՝ Թողութիւն պատժոց, անմիջաբար ընդհեղոյ զայն արդարոյն՝ վասն որոյ մատչի պատարագն, որպէս աստուածաբանք աւ հասարակ ուսուցանեն ընդ սուրբ Աղուինացւոյն՝ որ ասէ· "Ամէն հոգւոյդ այս, որպէս պատարագ, ունի զօրութիւն հատուցողական· Երրորդ՝ աճումն շնորհաց, ոչ անմիջաբար՛ ի գործոյ գործելոյ, այլ՛ ի ձեռն նպաստից՝ զոր սուրբ պատարագաւն ընդունիմք՛ ի բարեգործութիւն, և բարեգործութեամբք յաւելուն՛ ի մեզ շնորհք· Ողորմոյդ՝ ընդունելութիւն հոգւոյ և մարմնաւոր պիտոյից, այլ մարմնաւորացն՝ եթէ իցեն օգտակարք հոգւոյ·

103· Որքն է վասն ամենայն հաւատացելոյ մատուցանել զսուրբ պատարագն, և ա և վասն տղայոց, վասն այսահարաց և յիմարաց, և վասն որոյ՛ ի մեղս իսկ կայցեն· Վասն բանադրելոց, եթէ խորշելի իցեն, չէ օրէն

մատուցանել պատարագ· իսկ եթէ չկրեն խոչընդոտ, օրն ի վաղն նոցա պատարագել· զի թէպէտ և տանելիք ևս՝ ի բանապրելոց զուրկ են՝ ի հաղորդութենէ հոգևոր նպաստից, սակայն շնորհեալ է այլոց ազատութիւն հաղորդելոց ընդ նոսա ևս և յաստուածայինս, ըստ ասացելոցս՝ ի գլ· ԺԹ· 15: Պարձեալ օրէն է ըստ հաւանականագոյն կարծեաց մատուցանել և վաղն անհաւատից զտուրբ պատարագն, որպէս ուսուցանեն Պետրոս Մինոս, Լայման, Սուարէզ, Սալմատիկեանք և այլք· զի Քրիստոս վաղն աւուրն մատոյց զանձն պատարագ, և՝ ի հին օրէնս ևս մատուցանէին ընդեղք պատարագս վաղն հեթանոսաց: Իսկ վաղն ննջեցելոց՝ որ կան՝ ի քաւարանի՝ օրէն է և մանն իսկ հաւատոց, ըստ յայտարարութեան տրիդենտեան ժողովոյ, մատուցանել պատարագս· և օժանդակէ՝ ի քաւութիւն նոցա, այսպէս ըստ հանրագոյն կարծեաց՝ ի Քրիստոսէ խոստացեալ· զի եթէ օժանդակէ նոցա, որպէս ուսուցանեն հաւատք, ապա հարկ է զի՝ ի Քրիստոսէ խոստացեալ:

104· Ընդհանուր սրբոց պատարագին զանազանին նախ ըստ գործոյ գործելոյ՝ այսինքն՝ ի վաստակոյն Քրիստոսի, և ըստ գործոյ գործողին՝ այսինքն՝ ի վաստակոյ քահանային: Պարձեալ զանազանի՝ ի հանրական՝ ուրում հաղորդին ամենայն հաւատացեալք կենդանիք և ննջեցեալք· ի մասնական՝ որում հաղորդին առաջնիկայք պատարագին և վասն որոց մատուցանի պատարագն, և յատուկնական՝ որում հաղորդի քահանայն եւեթ պատարագիչ· և չէ նմա օրէն վասն այսր մասին առնուլ երբեք ողորմութիւն, քանզի Ալեքսանդրէ Ե· դատապարտեալ է հակառակն սորին վարդապետութիւն:

105· Ամբաւութիւն զօրութեան սրբոց պատարագին, թէ՛ ըստ սաստկութեան և թէ՛ ըստ հաղորդականութեան, ըստ հաւանականագոյն կարծեաց, հաստատեն Կոնէթ, Հաբերտ, Փինեաթելլի, Ծուրնելլի, Վանչինա, Հոլզման, Լաքրուա, Սալմատիկեանք և այլք, ընդ օրս և սուրբ Ալֆոնսացին, զի նոյն պատարագ է ամբաւազօր՝ որ՝ ի խաչին մատուցաւ: Բայց թէպէտ և ամբաւ ըստ զօրութեան, այլ ազդեցութիւն նորա ըստ բաւականութեան այնոցիկ է՝ վասն որոց մատուցանի, զի իւրաքանչիւր ըստ իւրումն բաւականու-

թեան ընդունի զարգասիս նորին։ Այլ քանզի են և այ-
ոյք ոչ համարին ամբաւ զղօրութիւն պատարագին,
վասն որոյ չէ օրէն քահանայի առնուլ կրկին պատարա-
գիս, և վասն երկոցունցն միանգամայն պատարագել. զի
դատապարտեալ է և վարդապետութիւնս այս Այ-
ղեք-սանդրի է։ Եւ առանց իսկ ընդունելոյ կրկին պատա-
րագիս, չէ օրէն նմա խառն ընդ այլոց հաղորդս առնել
զոք զօրութեան պատարագին՝ բայց միայն պայմանաւ,
այսինքն եթէ չհասանիցէ ինչ այնուհետև զրկումն մատու-
ցողի զպատարագիս։

106· Օրէն է և անկարօտ քահանայի ընդունել պա-
տարագիս, որպէս հաստատեն Սուարէզ, Լուկոյ, Վան-
չինա, Ծուրնելլի, Վերսոն, Ծոմպլինի և այլք բա-
զումք· զի արժանի է մշակն վարձու իւրոյ ըստ առա-
քելոյն։

107· Ծանր մեղք են յապաղել զմատուցումն պա-
տարագի առաւել քան զերկուս ամիսս յետ ընդունելոյ
զպատարագիս։ Իսկ եթէ վասն ննջեցելոյ իցէ պատա-
րագն, ծանր է և յամեցումն աւելի քան զամաւրեայ ա-
ւուրս, որպէս հաստատեն Վաւթրոփալ, Նաբոպար և
Ալմաթիկեանք։ Ապաւանդ եթէ՝ ի կարևոր պատճառ
վասն վտանգի մահուան կամ արկածից ընդունիցի ոք
պատարագիս, եօթնեակ մի և այս յամեցումն մարթի
ծանր դոլ։ Վնասելի է աստ, զի Ինոմիկենտիոս Ժ.Ա·
հրամայէ՝ ի կոնդակի իւրում ամենայն եկեղեցապետաց
կախել՝ ի յայտնի ուրեք տեղւոջ՝ ի սարկաւագանոցի
զցուցակ պարտուց պատարագաց, ժամանակիւ և մըշ-
տընջենաւորաց, և մի յաւելուլ պարտս՝ զորս ապա զը-
ժուարին իցէ ընուլ։

108· Ոչ ումեք օրէն է խորել՝ ի պատարագեայ տը-
ւելոյ նմա, և մասամբ ինչ նորին տալ այլում ընուլ զը-
պարտս պատարագելոյ· և որ խորեսցէ ոք, եթէ իցէ ե-
կեղեցական, անկանի յարգելս վերապահեալս Պապին·
իսկ եթէ աշխարհիկ, անկանի՝ ի բանադրանս, և զխո-
րեալ մասն պարտ է նոցա հատուցանել պատարագողին
ըստ հաւանականապոյն կարծեաց, և մի աղքատաց։
Յօրինաց աստի պարտ է՝ ի բաց առնուլ եթէ ումեք
՝ի մեծարանս անձին նորա կամ վասն աղքատութեան
տուեալ իցեն պատարագիքն աւելի քան զօրէն սովորա-

կան, կամ եթէ ի՛ւր ժառանգութիւն եկեղեցական կամ հասք ժամարարութեան կամ հրիտակ մշտնջենաւոր. զի յայնժամ օրէնն է զմասնն աւելի քան զսովորական պատարագիս ունել ուժեք իւր: Այլ ոչ եկեղեցպանաց օրէն է խորել ինչ ի պատարագեաց ի ծախս պիտոյից մատուցման պատարագաց ըստ ասացելոցս ի գլ. ԺԲ. 65. բայց եթէ չկացեն եկեղեցւոյն այլ ինչ հասք ամենևին:

109. Պարտ է ժողովրդապետաց յամենայն աւուրս ոչնչից և ի կիւրակէս վասն ժողովրդեան մատուցանել զպատարագ, թէպէտ և չկացեն նոցա հասք ըստ պատշաճ բաւականին. իսկ ընդ հակառակն՝ եթէ կացեն և նոցա հասք առատապէս, չէ ինչ նոցա պարտ աւելի ինչ քան զոչնական աւուրց մատուցանել վասն ժողովրդեան պատարագ, ըստ ասացելոցս ի գլ. Ե. 29: Այս այսպէս սահմանէ Ղեւոնդիկոսն ԺԴ. ի կանդակի իւրում, և յաւելու վասն հատարակաց պատարագին՝ զոր ուխտ եկեղեցւոյն երդէ հանապազօր, մատուցանել զայն վասն բարերարաց այնր եկեղեցւոյ անպատճառ:

110. Ո՛ղիտաւորութիւն, վասն որոյ մատչի պատարագն, պարտ է յառաջ քան զպատարագն առնել և կամ դէթ յառաջ քան զսրբադործութիւն: Ըստ հանրագոյն և հաւանականագոյն կարծեաց բաւական է դիտաւորութիւն ունակական: Ո՛րգասիք պատարագաց, առանց դիտաւորութեան մատուցելոց, գանձին ի գանձարան եկեղեցւոյ: Դիտաւորութիւն պայմանաւ՝ որ լցեալն իցէ, վաւերական է. այլ եթէ ոք վասն այնորիկ՝ որ առաջին տալոցն իցէ պատարագիս՝ մատուսցէ զպատարագն, ոչ միայն օրինաւանց է, այլ ըստ հաւանականագոյն կարծեաց և անվաւեր:

111. Ըստ հանրագոյն կարծեաց և ըստ վարդապետութեան՝ սուրբ Ո՛ւղնացւոյն, պարտ է քահանայի դէթ երբեմն, այսինքն երկոց կամ չորից ի տարւոջ ի գլխաւոր տօնս պատարագել. զի Ժողովն տրիդենտեան ասէ. "Ո՛ւսաքելոց և յաջորդաց նոցին ի քահանայութեան՝ պարտ ի վերայ դնել հրամանս, Ո՛ր՝ այս արարէք առնոյ յիշատակի": Իսկ Ժողովրդապետաց յամենայն տօնս պարտ է պատարագել ըստ ասացելոցս ի գլ. Ե. 29:

112. Կարմրագիկը խրատք պատարագամատուցին հրամայականք են, և ըստ ծանրութեան իրին պարտս

ծանուցա՝ի վերայ ածեն։ Վասն որոյ և սուրբն Պիտա՝ի կանդակի իւրում ասէ. "Ինստիւ պատուիրեմք, ըստ արարողութեան ըստ եղանակի և ըստ խրատուց սպատարագամատուցին զսուրբ պատարագն մատուցանել,,։ Այլ խրատք, որ յառաջ քան զպատարագն կամ զկնի պատարագին պատկանաւորք, ըստ հաւանական կարծեաց ոչ ծանր ինչ պարտս՝ի վերայ ածեն, որպէս լուացումն ձեռաց յետ պատարագին, և այլն։

113. Որինաւոր ժամ մատուցման պատարագին է յարշալուսոյ ցմիջօրէ. Ըստ Ենեդիկտոս ԺԳ, և Կղեմէս ԺԲ, ներեն զերիր մասն ժամու յառաջ քան զարշալոյս և նոյնպէս ևս յետ միջօրէի սկսանել զպատարագն։ Վասն որոյ ըստ հանրագոյն և ըստ հաւանականագոյն կարծեաց չէ ինչ ծանր եթէ ոք ոչ աւելի քան զժամ կանխեսցէ քան զարշալոյս, և ոչ աւելի քան զժամ մի յամեսցէ յետ միջօրէի սկսանել զպատարագ։ Ըստ այսմ՝ ժամու չափ կանխել կամ յամել՝ ներելի և եթէ մեղք են, յորմէ ազատ կացուցանեն պատճառք իրաւացիք ուղևորութեան, տօնախմբութեան և այլն։ Այլ հաղորդել օրէն է մինչև ցերեկոյ, և յերեկոյի իսկ, եթէ իցեն պատճառք իրաւացիք, և չիցէ գիշեր տարաժամեալ։

Պատարագել յառաջ քան զգիշերայնին և զառաւօտեան ժամակարգութիւն ըստ ամենայն յաստուածաբանից՝ի ծանր մեղս, ըստ այլոց և ոչ՝ի մեղս համարի. բայց ըստ հանրագոյն և ճշմարտագոյն կարծեաց, զոր հաստատեն Աուարէզ, Աոթոյ, Սիլուէյ, Ծուրնելլի, Պելլարմինոս և այլք, չեն ինչ ծանր մեղք, այլ և ոչ ազատ՝ի ներելի մեղաց։ Սմա զառանձնական պատասխանի, զի ջհաստարակացն զուխտի եկեղեցւոյն մատուցանել նախ քան զգիշերայնին և զառաւօտեան ժամերգութիւն ոչ ազատ՝ի մահու չափ մեղաց կացուցանեն աստուածաբանք զրեթէ աւ հաստարակ։ Յաւազ ուրբաթու աւուր չէ օրէն պատարագել. իսկ յաւազ հինգշաբաթի և յաւազ շաբաթու աւուր մէն մի պատարագ յեկեղեցիս իւրաքանչիւր օրէն է մատուցանել, Կղեմայ Ծ. խափանեալ և զառանձնական պատարագս։

114. Յամենայն մատուռնս օրհնեալս յեպիսկոպոսէ, ՚ի կղերանոցս, յանկելանոցս, ՚ի գստերանոցս, յառաջ-

նին մատուռնս՝ որոց իցէ դուռն՝ ի վերայ հասարակաց ճանապարհի, ի վանս և ի վանատունս կրօնաւորաց ըստ ասացելոցս ի գլ. ի. 123. 124, և ի բնակարանս եպիսկոպոսաց օրէն է ամենեցուն պատարագել, ևս և ի տօնս մեծամեծս. զի մատուռնք այսպիսիք համարին ընդ եկեղեցիս։ Իսկ յառանին մատուռնս, յորս արտաւնութեամբ մատչին պատարագք, չէ օրէն պատարագել յաւուր Ծատկի, Հոգեգալստեան, Ննդեանն Քրիստոսի, Աստուածայայտնութեան, Ամենայն սրբոց։ Այլ դարձեալ չէ օրէն պատարագել յայնս, եթէ չիցէ անդ ոք՝ ի նոցանէ՝ որոց ընծրհեալ է արտաւնութիւնն այն, ըստ սահմանելոյ Ներսէսի կաթողիկոսի ՃԻ. և ոչ աւելի քան զմի մատուցանել պատարագ, եթէ չիցէ յայտնապէս բացատրեալ՝ ի հրամանագրին. և ոչ հաղորդել զոք անդ առանց հրամանի եպիսկոպոսին։ Իսկ պատարագել՝ ի նաւի ոչ երբեք օրէն է առանց հրամանի սրբազան Պատրին։

115. Եթէ պղծեալ իցէ եկեղեցի յայտնապէս հեղմամբ ոչ դուշնաքեայ ինչ արեան՝ ի նմա և կամ սերմանն, կամ թաղմամբ ուրուք յանհաւատից, ի հերետիկոսաց կամ՝ ի բանադրելոց, և չիցէ տակաւին սրբեալ յեպիսկոպոսէ, քահանայ՝ որ պատարագէ անդ՝ ծանր մեղանչէ, թէպէտ և չանկանի ընդ բանադրանօք ըստ հաւանականագոյն կարծեաց։ Եթէ եկեղեցին օրհնեալ միայն իցէ և ոչ օծեալ, օրէն է և քահանայի՝ հրամանաւ եպիսկոպոսին՝ սրբել զայն։ Յայնապէս ծանր մեղք են պատարագել յեկեղեցւոջ, որոյ որմունք կիսոյ կէս փլուզեալ իցեն և կամ ծեփ նոցա անկեալ։ Իսկ թէ օրէն իցէ քահանայի ընդդէմ հրամանի եպիսկոպոսին պատարագել յեկեղեցիս կրօնաւորաց, տես՝ ի գլ. ի. 77։

116. Զի՞ ի պատարագել ուրեք ըստ օրինի, խնդրի նախ՝ սեղան կամ վէմ օծեալ յեպիսկոպոսէ, հանդերձ ականբն՝ յորում զետեղեալ կայցեն նշխարք սրբոց կընքեալք՝ ի նմանէ։ Այս չափ մեծութեան նորա այնպէս զի մարթի իցէ հանգուցանել՝ ի նմա զսկիհ զմաղզմայ և զմանատուփ։ Եթէ շարժեալ իցէ սեղանն՝ ի խարըխխէն, կամ բեկեալ ոչ դուշնաքեայ ինչ բեկուածն, կամ թարձեալ՝ ի նմանէ նշխարք սրբոց, կամ կափարիչ նոցին

՚ի բաց բարձեալ, պարտ է օրհնել զայն վերստին. և որ ՚ի նմա պատարագին առանց օրհնութեան՝ ծանր մեղանչէ, ըստ սահմանի արարողութեանց ժողովոյն։ Պարտ է և ծածկոյթս երիս ածել զսեղանով կատարս, և չեն բաւական ծածկոյթք կրկին։

117· Արկղորդ՝ կարևոր են սկիհ և մաղզմայ օծեալք. և թէպէտ ոչ բառնի օծութիւն նոցա ՚ի մաշել ոսկւոյ ընդանակին կամ մաղզմային, այլ վասն յարգութեան խորհրդոյն պարտ է վերստին ոսկեզօծել զայնոսիկ, զի պատարագել նոքօք մեղք են՝ թէպէտ և ներելիք։ Այլ յոսկեզօծելն զայնոսիկ պարտ է և օրհնել և օծանել անդրին. որպէս և ՚ի բեկանել ունելեաց սկսցն՝ բառնի օծութիւն նորա, և պարտ է յետ նորոգութեանն օծանել զայն։ Ըստ հանրագոյն կարծեաց ոչ է հարկ օծանել զմանանատուփն, զի բաղումք բաւական համարին օրհնել ևեթ զայն. որպէս և զմահիկ ձաձանչին, որով սրբութիւնն դնի ՚ի բազմոյն։

118· Արկղորդ՝ կարևոր են սպասք սուրբք օրհնեալք յեպիսկոպոսէ կամ ՚ի քահանայէ. և ծանր մեղանչէ՝ որ առանց շապկի կամ փորուրարի և կամ բաղպանի, և առաւել որ առանց շուրջառի պատարագէ. կամ առանց օրհնութեան սպասուցն՝ զայնոսիկ ՚ի կիր արկանէ, եթէ ոչ հարկ անհրաժեշտ ՚ի վերայ կայցէ։ Եւ առանց հաւանականութեան անմեղապիր առնեն բազումք, որ առանց գօտւոյ կամ վակասի, կամ ըստ Ա այինաց՝ առանց վարշամակի, պատարագիցէ։ Բառնի օրհնութիւն ՚ի սուրբ սպասուց ՚ի հնանալ նոցա, այլ ինքն ՚ի հերձուածել նոցա կամ ՚ի ծակոտել. և ոչ օգնեն կարկատանք, զի ՚ի նորոգելն իսկ վայելչապէս՝ պարտ է օրհնել զայնս վերստին։

119· Ջորդորդ՝ կարևոր է և մարմնական կտաւն օրհնեալ. և օրհնութիւն նորին դիւրաւ և քան զայլոց սպասուցն բառնի ՚ի մաշելն։ Ջ մարմնական աղտեղի՚ի կիր առնուլ մեղք են, և ծանր իսկ մեղս համարին զայն Ա այման, Ա ամպուրինի և Ա ուարիզ՝ եթէ յոյժ իցէ աղտեղի, և ոչ հարկ ՚ի վերայ կայցէ ՚ի կիր արկանելոյ զայն։ Այլ ըստ հանրական կարծեաց, եթէ զմարմնական և եթէ զայլս ՚ի սպասուց աղտեղիս և կարի իսկ աղտեղիս ՚ի կիր արկանել չէ լինչ աւելի քան զներելին

մեղս. մանաւանդ ՚ի ստիպել հարկին, որպէս եթէ ՚ի կիւրակէի աւուր անպատարագ հասանիցէ մնալ ժողովրդոյ կամ քահանայի, օրէն է և զմարմնակալ զոյժ իսկ ազատելն ՚ի կիր արկանել։

120. Հինգերորդ՝ կարևոր են և մաքրիչ և կախարիչ կտաւիք օրհնեալք և մաքուրք, և ոչ հնոտիք կամ կարկատունք։

121. Վեցերորդ՝ կարևոր է և պատարագամատոյց. այլ ըստ հնարականն և հաւանականն կարծեաց չեն ինչ մեղք, եթէ ոք գիտիցէ ՚ի մտաց զաղօթս պատարագին՝ զիորձ իսկ առեալ զանսայթաք կատարելոյ զայնս, և առանց գրոյ պատարագիցէ։

122. Լօթներորդ՝ կարևոր է ընդ ծանր պարտեօք և սպասաւոր պատարագին, եթէ ոչ հարկ ՚ի վերայ կայցէ, որպէս տալոյ թոշակ հիւանդի, կամ անպատարագ մնալոյ ժողովրդոյ ՚ի կիւրակէի և այլն։ Ծանր մեղք են սպասաւորել հնոջ առ սեղանոյ. այլ առանց սպասաւորելոյ ասել և եթէ ՚ի հեռուստ զբանս սպասաւորին, մանաւանդ կուսանաց, օրէն համարին Յոյնք, Ասկոյ, Այման և այլք։

123. Ութներորդ՝ կարևոր է և նշան խաչին հանդերձ խաչելոյելոյին, թէպէտ և սրբութիւն ՚ի բազմոյն եղեալ իցէ անդ։ Այման, Սուարեզ, Պոնաչինա, Յուրնել, Ռոնչինա, Հաբերտ և այլք չհամարին ՚ի մահու չափ մեղս առանց խաչի պատարագել. բայց Ռենեդիկտոս ժդ. խստիւ յոյժ պատուիրէ ՚ի շրջաբերականին առ եպիսկոպոսունս ընելոյ ամենայն պարտաքննել ոմն ՚ի ածղանի՝ որ չէնչէ նշան խաչին ՚ի ծէջ աղաճանակաց պէտքապետել հանապազայն և ծողովրդեան բարձրացեալ, առ որ չբաւէ փոխել ինչ նշան։ Բայց եթէ խաչ վիմարդեան կամ նկարչն կայցէ առ սեղանոյն, չէ ինչ կարևոր յաւելուլ ՚ի սեղանի անդ և զնշան խաչին։ Կարևոր են և մանրք ենք երկու վառեալք, ոչ ՚ի ձրագուէ կամ ՚ի ձիթոյ և կամ յայլ ինչ նիւթոյ առանց ինչ հարկի։ Բացաւ զըլխով պարտ է մատուցանել զսուրբ պատարագն ՚ի սրբութագործութենէ ցձաշակումն. և որ բռնանդակ իսկ ըզպատարագն ծածկեալ գլխով մատուցանիցէ, ծանր մեղանչէ։

124. Ի պատարագել քահանայիւ նորընծայեալոյ ընդ

եպիսկոպոսին, թէպէտ և մի է պատարագն՝ այլ ամենքին իսկապէս մատուցանեն զայն. վասն որոյ պարտ է իւրաքանչիւր ումեք՝ի նոցանէ արտասանել՝ի միասին ընդ եպիսկոպոսին զբանս սրբագործութեան հանդերձ դիտաւորութեամբ սրբագործելոյ. ապա թէ ոչ, ծանր մեղանչէ։

125. Պարտ է պատարագել, նախ՝ի հայն, այսինքն այնպէս զի գէթ մերձակայիցն զով լսելի. և որ զամենայն աղօթս ասիցէ անձայն, չէ ազատ՝ի ներելի մեղաց։ Օնոյն իմն և որ զաղօթս, զորս՝ի ծածուկ պարտ է ասել, ասիցէ՝ի ձայն։ Արկրորդ՝ համառօտիւ, այսինքն ըստ բարեկրօն սովորութեան ոչ ինչ երկայն քան զկէս ժամու, և ոչ սուղ քան զերիս մասն ժամու. զի որպէս ասացաք՝ի գլ. ԺԵ. 83. որ արագ քան զբաւորդ ժամու վճարէ զպատարագն, չէ ազատ՝ի ծանր մեղաց։ Արրորդ՝ յապաւէ, այսինքն առանց կրճատելոյ զբառս. զի եթէ այնչափ ինչ ոք շուարափեսցէ՝ մինչև այլայլել զիմաստս բանիցն, չէ և նա ազատ՝ի ծանր մեղաց։ Չորրորդ՝ մեծապատրաստութեամբ, այսինքն առանց զբաղելոյ մտացն այլուր. զի եթէ կամաւ ոք այլուր զմիտսն զբաղեցուցանիցէ քան զօթսն՝ որ յառաջ քան զնուիրագործութիւն, կամ՝ի նուիրագործել անգ, կամ՝ի Ճաշակելն, ծանր մեղանչէ. թէպէտ և ամենեք ազատ՝ի մահու չափ մեղաց կացուցանեն զնա։ Հինգերորդ՝ ամբողջ, այսինքն առանց թողլոյ ինչ՝ի բաց յաղօթիցն և յարարողութենանց։ Օի եթէ թողուն՝ի բաց ոչ գոյնաքեայ ինչ իցէ, չի ծանր մեղս համարի, որպէս աղօթքն որ յառաջ և յետոյ քան զսրբագործութիւն, բեկումն նշխարին և արկանել զմանն նորին՝ի բաժակն, և որ սոցին սակի աղօթք և արարողութիւնք. կամ՝ի կարևորաց անտի աղօթից տասամբ չափ բառս թողուլ՝ի բաց, կամ զընթերցուածն կամ զաւետարան ամբողջ, կամ զնուիրումն ընծայիցն և այլն։ Ա. յլ զսաղմոսն և եթէ Պատարագ արա ինձ, կամ Տէր թագաւորեաց, կամ զևսաչափսքել՝ի վերայ ընծայիցն, կամ զլուացումն մատանցն, և կամ զԵետին աւետարանն թողուլ՝ի բաց, չէ ինչ աւելի քան զներելի մեղս։ Իսկ եթէ ոք՝ի գոյնաքեայ մասանց իսկ աստի այնչափ ինչ թողցէ՝ի բաց, զի ոչ ևս իցեն գոյնաքեայ, չէ ազատ՝ի ծանր մեղաց։

126. Պարտ է ըստ աւուր պատշաճի մատուցանել զպատարագն, և մի՛ ի տէրունական տօնս՝ զսրբոց, և ի տօնս սրբոց՝ զտէրունական տօնիցն պատշաճն կատարել։ Զի որ այսպէսն առնիցէ, չէ ազատ ի ներելի մեղաց։

127. Չէ օրէն քահանայի աւելի քան զմիանգամ յաւուր պատարագել, բայց միայն յերեսին յայտոսիկ դէպս. նախ՝ առ ի պաշտել հիւանդի զԹոշակ. երկրորդ՝ եթէ յաւուր տօնի հասցէ որ յաւագայ, որպէս Թադաւոր կամ իշխան կամ եպիսկոպոս, որոյ չէ պարտ մնալ առանց պատարագ. և երրորդ՝ եթէ ժողովրդապետի այլևայլ գիւղք իցեն հեռաւորք՝ ի միմեանց, և պարտ իցէ բնակչաց միոյ յայնցանէ մնալ անպատարագ։ Այլ պարտ է և վասն այսոցիկ ունել հրաման՝ ի Թեմական եպիսկոպոսէ, բայց՝ ի հարկաւորութենէ գիւղից հեռաւորաց։

128. Եթէ՝ ի պատարագել քահանային պատահեցէ պղծել եկեղեցւոյն, կամ ումեք՝ ի բանադրելոց խորշելեաց անդր մնանել և չկամել ելանել՝ ի բաց, պարտ է քահանային Թողուլ զպատարագն՝ եթէ չև իցէ նուիրադործեալ. իսկ եթէ յետ նուիրադործութեանն պատահեսցէ, պարտ է նմա կատարել զպատարագն մինչև ցձաշակութիւն, և իսկոյն ելանել՝ ի բաց։ Տես՝ ի գլ. ժ.Թ. 21։ Չէ երբեք օրէն յետ սրբադործութեան ընդհատել զպատարագ, բայց միայն առ՝ ի մկրտել զոք կամ արձակել՝ ի մեղաց, որում վտանգ մահու մօտալուտ՝ ի վերայ կայցէ։

129. Պարզ քահանայ յիշխանութենէ կարգին զսուրբ պատարագն և եթէ կարէ կատարել, և հաղորդել զհաւատացեալս. զի առ այլ ամենայն պաշտամունս պէտք են իրաւասութեան։ Այսան որոյ չկարէ առանց հրամանի ժողովրդապետին ոչ մկրտել զոք, ոչ պաշտել ումեք զվերջին օծումն կամ զԹոշակ, և ոչ օրհնել զպսակ. և առանց հրամանի եպիսկոպոսին չկարէ ընդունել ըզխոստովանութիւն, և ոչ զներելի կամ զխոստովանեալ իսկ մեղաց, բայց միայն՝ ի ստիպել հարկին ըստ ասացելոցս՝ ի գլ. ԺԶ. 76։ Զի ըստ ուսուցանելոց տրիգենտեան ժողովոյն, խոստովանահայրն զպատասխանի վարէ զիշխանութենէն՝ որ՝ ի վերայ հպատակաց եթէ զօրէ. վասն որոյ և առանց հրամանի եպիսկոպոսին չկարէ ոք դատել զհպատակս նորա։

130. Նուիրելոց ի քահանայութիւն պարտ է, որպէս ասացաքս ի Թիւ 35, գիտել զԷթ որ ինչ կարևոր են վասն ընդունելոյ զնոստովանութիւն հիւանդաց ի հոգեվարս. վասն որոյ ի դէպ է նշանակել առ գկապրևորագոյն գիտելիս։ Նախ՝ չէ օրէն պարզ քահանայի ընդունել զնոստովանութիւն հիւանդի՝ ուր կայցէ խոստովանահայր, բայց միայն եթէ խոստովանահայրն չկարիցէ կամ չկամիցի ընդունել, կամ եթէ իցէ բանագրեալ կամ արգելեալ, կամ եթէ յայլուստ ևեթ թեմի իցէ նորա իշխանութիւն խոստովանահայրութեան, կամ եթէ հիւանդին այնպիսի խորշումն իցէ խոստովանելոյ նմա՝ զի վտանգ իցէ լռելոյ ինչ՝ի մեղացն, կամ եթէ յետ սկսանելոյ զնոստովանութիւնն հասցէ խոստովանահայրն, և կամ եթէ խոստովանահայրն մեղսակից իցէ հիւանդին լեալ իցէ՝ի գործ պղծութեան, ըստ ասացելոցս՝ի գլ. ԺԶ. 94։

Երկրորդ՝ եթէ հիւանդն խնդրէ արձակումն կամ նշան ինչ զղջման տայ, պարտ է արձակել զնա։ Իսկ եթէ անզգայեալ իցէ, և վկայիցէ այլ ոք խնդրելոց նորա զարձակումն կամ տալոց նշան զղջման, յայնժամ ապահովագոյն է պայմանաւ զնա արձակել։ Օրէն է ըստ բազմաց յաստուածաբանից արձակել պայմանաւ և զանզգայեալս անդէն՝ի մեղանչելն, թէպէտ և չտայցեն յայնժամ նշան ինչ զղջման, ըստ ասացելոցս՝ի գլ. ԺԴ. 36–39։

Երրորդ՝ օրէն է պարզ քահանայի առ՝ի չգոյէ խոստովանահօր արձակել զհաւատացեալս յորոց և իցէ մեղաց և՝ի բանագրանաց, ոչ միայն՝ի հոգեվարս, այլ և՝ի հաւանական վտանգի մահուան։ Եւ վտանգ մահու համարի ոչ միայն ծանր հիւանդութիւն, այլ և երկայն նաւարկութիւն, և երկունք կնոջ գժուարածնի, և խելացոյ ծփումն՝ի նշան խելագարելոյ, և դարձեալ անկանել՝ի գերութիւն անհաւատից՝ ուր չիցէ յոյս գտանելոյ խոստովանահայր։

Չորրորդ՝ պարտ է ազգ առնել հիւանդին յարձակելն զնա՝ի բանագրանաց վերապահելոց, զի յառողջանալ իւրում յանդիման լիցի մեծաւորաց. ապա թէ ոչ, վերստին՝ի նոյնս անկանի։ Այլ վասն մեղաց վերապահելոց չէք պարտ այսպիսի։

Չինգերորդ՝ պարտ է ամենայն քահանայի գիտել զկնի զհանրական օրէնս բարոյականին, առ՝ի կարող լինելոյ՝ի պատահել հարկին՝ ընդունել զխոստովանութիւն.

131. Եւ քանզի պաշտօն քահանայի է և ուսուցանել զհաւատոյն եկեալս, և քարոզել զաւետարանն արքայութեան, կարևոր է նմա գիտել որ ինչ պարտ իցէ նմա ուսուցանել, և որպէս մեկնել զաւետարանն: Պատառաջնումն մասին ջրոց ինչ պարտ է նմա ուսուցանել հաւատացելոց. այսինքն զհաւատս, զյոյս, զսէր, և զբարեգործութիւն. և նախ ըստ հաւատոյ՝ զի Աստուած Հնմարտութիւն անսխալ յայտնեալ է եկեղեցւոյ, և վասն այնորիկ պարտիմք բացայայտակի գիտել և հաւատալ՝ զի է նա վարձատրիչ բարւոյ, և չարաց դատաւոր. և զի մի է, և անձինք նորա երեք, Հայր, Որդի և Հոգի, և զի Որդին Աստուծոյ մարդացաւ վասն մեր. այսոքիկ՝ի հարկաւորութենէ միջնորդի: Իսկ՝ի հարկաւորութենէ պատուիրանի՝ պարտ է ամենայն ումեք գիտել զտէրունական աղօթքն և զողջոյնն հրեշտակային, զտասնաբանեայ և զեկեղեցական պատուիրանս. և դարձեալ զեօթանեսին խորհուրդս եկեղեցւոյ, մանաւանդ զամենեցուն կարևորս, զմկրտութիւն, զսրբազնութիւն, զհաղորդութիւն և այլն: Երկրորդ՝ ըստ յուսոյ պարտ է ուսուցանել հաւատացելոց, զի ամենաղօրմ է Աստուած, և խոստանայ հաւատացելոց վասն չարչարանաց և մահուանն Քրիստոսի՝ տալ զյաւիտենական կեանս, և որ ինչ կարևորն է հասանելոյ այնմ, այսինքն զթողութիւն մեղաց և զշնորհս յարատևութեան: Երրորդ՝ ըստ սիրոյ, զի զանհուն բարութիւնն Աստուծոյ պարտիմք սիրել՝ի վեր քան զամենայն, և վասն նորա սիրել և զեղբարս մեր իբրև զմեզ: Ողորմութ՝ ըստ բարեգործութեան, զի առ՝ի հասանել փրկութեան՝ կարևոր է մեզ պահել զպատուիրանս Աստուծոյ և եկեղեցւոյ:

132. Իսկ ըստ երկրորդ մասին՝ քարոզելոյ զաւետարանն և բացատրելոյ հաւատացելոց զսուրբ գիրս, պարտ է ուսուցանել նոցա՝ զի կրկին իմաստք են սուրբ գրոց, նկարագրական և խորհրդական. նկարագրական՝ զոր բառքն ինքնին նշանակեն, և խորհրդական՝ զոր առ՝ի

միտս յայտ առնեն. որպէս յասելն՝ Այնէ ակն ոմ ալ գայ՝ նախղեցուսցէ ղէնդ, եւ ինա ինա ի ընկեա՝ է ղէն. Հրամայէ զմարմնոյ աչս խլել, այլ զդայթակղութիւն եւ զվտանգս մերձաց: Ոչ՝ բանս գրոց պարտ է իմանալ ըստ նկարագրին՝ ուր չկայ ինչ անտեղի, որպէս անտեղի է իմանալ ըստ նկարագրին զասելն՝ Եթէ ձեռն եր ինոյն Աբրահամու. այլ բազում ուրեք գերկոսին ևս իմաստս տան քանք սուրբ գրոց. որպէս յասելն՝ Եա ղհուանդուխոնա մեր վերացոյց, ի ղյաուս մեր եբարչ, նշանակեն զհոգևոր եւ զմարմնաւոր ախտս, որպէս ըստ երկուցն իսկ իմաստից՝ ի ներքս ածեն զայն աւետարանիչք: Վասն որոյ օրէնն է ստէպ ըստ այսմ խորհրդական մտաց՝ ի կիր առնուլ զբանս սուրբ գրոց:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Դ

ԽՐԱՏՔ ԱՌ ԽՈՍՏՈՎԱՆԱՀԱՐՍ ԵՒ ԱՌ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՍ, ԵՒ ՄՏԱԾԱԿԱՆ ԱՂՕԹԻՑ ԿՐԹՈՒԹԻՒՆ

ՑՕԴՈՒԱԾ Ա.

Խրատ առ խոստովանահարս

Ի դէպ համարիմ նշանակել աստ զկարևորս, յորոց ՚ի վեր անդր ասացեալ վասն խոստովանահարց։

Ա. Պարտ է նոցա բազում սիրով ընդունել զմեղաւորս, և քաջալերել զնոսա յոդորմութիւնն Աստուծոյ։ Ալ և մի մարդկօրէն ակնածութեամբ վերջանալ ՚ի խրատելոյ զնոսա և ՚ի յանդիմման առնելոյ նոցա՝ յորպիսի աղէտս անկեալ դնին, և ՚ի սահմանելոյ նոցա ըզհնարս ազատութեան ՚ի չար սովորութեանց։ Կարևորագոյն քան զամենայն պարտս խոստովանահօր այս է. յորում եթէ պակասեսցէ, ոչ զայլս և ոչ զանձն իւր փրկել կարասցէ։

Բ. Տգիտաց և անկիրթ մարդկան, որոց սակաւ ինչ միայն է զհոգևորաց և չյաձախեն ՚ի խորհուրդս, պարտ է հարցանել՝ թէ գիտիցէ՞ն զխորհուրդս հաւատոյ, և զայլ կարևորս ՚ի փրկութիւն, ըստ ասացելոցս ՚ի գլ. ԻԲ. 18. և դարձեալ զմեղաց՝ յորս սովոր են այնպիսիքն անկանել, ըստ ասացելոցս անդ։

Գ. Օգուշութեամբ մեծաւ պարտ է առնել զհարցուածս՝ որ յաղագս քաղքենութեան, մանաւանդ զբռատերաց, և ուստերաց իսկ, զի մի գուցէ ուսոյին ՚ի հարցուածոց անտի չար ինչ, և կամ քրքրեսցին միտք նոցա գիտել զոր չէ արժան։ Ալ և մի անհոգ լինել հեռատեսելոյ՝ թէ գուցէ յայնպիսեաց ինչ գործեալ իցէ նոցա, և ամաչիցեն խոստովանել։ Ոչ բաւական հարցանել զնոսա թէ իցէ՞ ինչ լռեալ նոցա առ ամօթոյ. զի ՚ի բերանոյ գեղջկաց և աղջկանց և պատանեկաց՝ Հարտաս-

թուԹեամբ յաջողէ ոքսալ զծածկեալս : Պարտ է յոր-
դորել նախ զնոսա՝ զի մի՛ երկիցեն· յուցանել նոցա՝ զի
՚ի խոստովանելն զմեզս և յընդունել զարձակումն՝ ՚ի
քանի՛ խաղաղուԹեան սրտի վայելեսցեն և յուրախու-
Թեան : Ըգաւել և սնդ հիւանդս, որ ՚ի վտանգի մա-
հու կան, պարտ է զսոյն խնամն ՚ի կիր արկանել : Ընդ
օրհորդս իսկ հոգեսէրս չէ ինչ անտեղի ունել զայս հոգ-
զի ոմանք՚ի նոցանէ լռեալ առ ամօԹոյ զանկումն իւ-
րեանց, ոչ գաղարեն ՚ի յաձախելոյ սեղանակատու-
Թեամբ՚ի սուրբ խորհուրդս : Ըայլ մանաւանդ զբօսա-
սէր ուստերաց և դստերաց պարտ է հարցանել նախ՝
Թէ ի՞նչ ինչ լեալ ՚ի միտս նոցա խորհուրդ չար· Թէ
ի՞նչ ինչ նոցա լռեալ կամ ասացեալ բան ինչ տզեղ·
Թէ ի՞նչ ինչ նոցա կատակեալ ձեռօք, յայտնի Թէ ՚ի
ծածուկ, և այսու օրինակաւ ածել զնոսա ՚ի խոստո-
վանուԹիւն : Ըայլ ոչ է պարտ յայսմ մասին մանրա-
մասնաբար հետապօտել զհանգամանս մեղաց, այլ որ-
չափ ինչ կարևոր իցէ առ՚ի միտ առնուլ զտեսակ և ըն-
Թիւ նոցին :

ԸԹէ խոստովանահայրն կրէ փորձուԹիւնս ՚ի լուր
այսպիսի մեղաց, շատ է չհաւանիլ մտացն ընդ այնս,
և կամաց չտալ այնոցիկ պատճառս· ոչ է պարտ նմա
երկնչիլ, և մի՛ վասն այնորիկ հրաժարել ՚ի պաշտելոյ
զխորհուրդ ապաշխարուԹեան· զի այն իսկ են հնարք
դիւին, ահարկուԹեամբ փորձուԹեանց նահանջել
զնա ՚ի բարեգործուԹենէ : Ըայլ քան զմտանել ՚ի խոս-
տովանարան՝ դիմեսցէ առ Ըստուածամայրն, և հաստա-
տեսցէ ՚ի մտի չտալ տեղի սադրանաց դիւին, և ՚ի խոս-
տովանարանի անդ երբեք երբեք ամբարձցէ զմիտս իւր
առ Ըստուած ՚ի կրելն զխորձուԹիւն : Ըե որպէս ասա-
ցաք ՚ի գլ· Ա· 30, շատ է զի չհաւանեսցի մտօք ընդ
այնս :

Դ· Ըէ է բաւական հանրաբար հարցանել զծնօղս
յաղագս դաստիարակուԹեան որդւոց, այլ պարտ է
հետապօտել մանրամասնաբար Թէ յանդիմանիցէն զյո-
ռուԹիւնս նոցա, ունիցին փոյԹ ուսանելոյ նոցա զքրիս-
տոնէական վարդապետուԹիւն, և չյաձախելոյ ընդ ան-
ծանօԹ մանկտին, մանաւանդ ընդ տարասեռս, և ընդ
որեսար կասկածելի :

Ե. Ոչ է պարտ վանս բազմութեան դիմելոյ՝ ի խոստովանութիւն առնապարել, և համառօտել երբեք զխոստովանութիւն ըստ ամբողջութեան, ըստ պատրաստելոյ զապաշխարողս յընդունակութիւն արձակմանն, և ըստ տալոյ նոցա զխրատս կարևորս։

Զ. Ի խոստովանել ուրուք ծանր ինչ մեզս, մանաւանդ եթէ կրկին վերստին անկեալ իցէ՝ ի նոյն, չէ բաւական հարցանել նմա զթիւ ևեթ և զտեսակ, այլ պարտ է և հարցանել՝ թէ իցէ և յայլ նուազս յառնախեալ՝ ի նոյն, ընդ որպիսիս ոմանս, ոմր ուրեք, առ՝ ի միտ առնուլ զընդունակութիւն նորա և զվերջաւոր վտանգս։ Օ. Ի առանց այսոցիկ ոչ է մարթ խոստովանահօր սահմանել ապաշխարողաց զդեղս կարևորս, բժշկել զբաւ սովորութիւնս նոցա, և զգուշացուցանել զնոսա՝ ի վտանգաց։ Տես որ ինչ գայսմանէ ասացաք՝ ի գլ. ԻԲ. 2–17. ուր և յաւելաք՝ ի թիւ 6. զի չէ օրէն արձակել զանկեալսն դարձադարձիւ՝ ի նոյն մեզս՝ առանց փորձելոյ զնոսա, կամ առանց հաւաստի նշանաց զղջմանն։ Պինդ կացցէ խոստովանահայրն չարձակել որ՝ ի մերձաւոր վտանգս կայցեն կամաւորութեամբ. յապաղեսցէ առանց ակնածութեան զարձակումն մինչև ապաշխարողն բարձցէ՝ ի բաց զվտանգն, ըստ ասացելոցս անդ՝ ի թիւ 4։ Իսկ եթէ չկայցէ մարթ բառնալ զայն, դէթ ըզմերձաւորն հեռաւոր առնել, որպէս ասացաք անդ՝ ի թիւ 7։ Մի արձակեսցէ և զխօսեցեալս՝ որ յաճախեն առ միմեանս, և զծնօղս նոցա՝ որ ներքին յաճախել նոցա առ միմեանս. և եթէ ասիցեն՝ թէ չկայ ինչ նոցա յայնմանէ վտանգ, մի հաւատասցէ. զի անհնար է այդ բարւոյապէս, վկայեալ՝ ի փորձոյ ըստ ասացելոցս՝ ի գլ. ԻԲ. 3. ուր ասացաք և զայնցանէ, որք վասն հարստանախօսութեան առնեն ընդ իրեարս ընտանութիւն։

Է. Օրէն արձակել և զնոսա, որ ունայնացեալք՝ ի մեզս՝ կամին ընդունել զաւուրբ կարգ, եթէ չիցեն զգաստացեալ և հաստատեալ՝ ի բարւոյն վարս, որպէս ասացաք անդ՝ ի թիւ 16. 17։

Ը. Մի զրկ՝ ի պատանեաց վասն ակնածութեան ծնողացն խափանեսցէ խոստովանահայրն յաստուածային հրաւէրն կոչմանէն. զի որպէս սուրբ Աւգուստինոս հաստատէ, այնպիսին չէ ազատ՝ ի մահացու մեզաց։ Վանքիք

’ի տգէտ խոստովանահօրէ առնեն զայս առ ’ի հաձել զաղգականս պատանւոյն, պարտ ’ի վերայ եդեալ հնազանդել ծնողացն, ուր վարդապետք առ հասարակ յայսմ մասին ազատ կացուցանեն զորդիս ’ի հնազանդութենէ ծնողաց։ Եւ ընդհակառակն՝ որ առանց կոչման կամիցի առնուլ զսուրբ կարգ, էէ օրէն խոստովանահօր արձակել զայնպիսին. տես որ ինչ զայսմանէ ասացաք ’ի յաւելուածն գ· 45։

թ· Ընդունել զխոստովանութիւն քահանայից՝ պարտ է պատուով և քաղցրութեամբ զպատշաճ յանդիմանութիւնն առնել, և չտալ իսկ նոցա արձակումն կամ յապաղել. մանաւանդ այնոցիկ, որք հանդերձ սովորութեամբն յաձախելոյ ’ի մեղս ծանուցանս՝ իշխեն մատչել հանապազօր ’ի սեղան։ Եւ յայսիսիք սովոր են ’ի սարկաւագանոցի անդ խոստովանել առաջի այլոց, առ ’ի կորզել զարձակումն՝ պատճառանօք գայթակղութեան նոցա ’ի չպատարագելն։ Պարտ է խոստովանահօր պինդ կալ ընդ այսպիսիս, յապաղել զարձակումն նոցա, տալ նորոգել նոցա զխոստովանութիւնս իւրեանց անվաւերս, և խոստովանել զսեղանակապուտ քահանայագործութիւնս, և չներել նոցա պատարագել՝ մինչև տայցեն հաւաստիս ուղղութեան. զի չկոյ ինչ նոցա զբաժառարին, եթէ կամիցին, գտանել պատճառանս հրաժարելոյ զաւուրս ինչ ’ի պատարագելոյ՝ մինչև կարասցեն արժանի լինել արձակման։

ժ· Սակ հասարակօրէն չընդունել զխոստովանութիւն քահանայից՝ որ ոչ երկիւղածք իցեն, պարտ է հարցանել նոցա երեք ինչ։ Առաջին՝ եթէ յապաղեաք իցէ նոցա քան զամսօրեայ աւուրս զպատարագս վասն ննջեցելոց, և քան զերկամսեայ աւուրս զվասն կենդանեացն. զի չեն այսոքիկ թեթև ինչ մեղք, ըստ ասացելոցս ’ի յաւելուածն գ· 108։ Երկրորդ՝ եթէ շուտ ափեաք իցէ նոցա ’ի պատարագելն. զի որ պատարագէն արագ քան զքառորդ մի ժամու, էէ ազատ’ի ծանր մեղաց, ըստ ասացելոցս ’ի գլ· ԺԵ· 14—16· զի ոչ է մարթ յայնչափ սուղ ժամանակի կատարել ըստ պատշաճի զաղօթս և զարարողութիւնս ահեղ խորհրդոյն։ Երրորդ՝ եթէ լցեալ իցէ նոցա զպարտս ժամակարգութեան, մանաւանդ եթէ վայելիցեն’ի հասս եկեղեցական ժառանգութեան։ Պարտ

է և յորդորել զնոսա յուսումն կարևորաց, առ՚ի կարող լինելոյ առնուլ հրաման պաշտելոյ զխորհուրդ ապաշխարութեան. զի մանաւանդ ուր սակաւք իցեն խոստովանահարքն, ծանր պարտք են քահանային՝ պատրաստել՚ի պաշտօնս յայս, ըստ ասացելոցս՚ի գլ. ժ.Զ. 126. 127։ Յաւելցէ խոստովանահայրն ցուցանել նոցա և զպարտս բարւոք պատրաստութեան յառաջ քան զպատարագն, և գոհութեան զկնի պատարագին, և զմնաճճականս ապօթից. զի առանց այսոցիկ ոչ է մարթ քահանայի գոլ՚ի կարգին իւրում վայելուչ։ Տես որ ինչ զայսմանէ ասացեալ կայ մեզ ասել՚ի գ. յօդուածի։

ԺԱ. Ի պարտս հատուցման սովորաբար ոչ է պարտ արձակել զապաշխարողս՝ մինչեւ հատուցեալ նոցա ըստ պարտս իւրեանց, եթէ կարող իցեն հատուցանել. զի յետ ընդունելոյ զարձակումն՝ սակաւք են որ հատուցանեն։ Այլ գիտելի է որ ինչ զպարտուց հատուցմանէ ասացաք՚ի գլ. ժ. 10. 13. Թէ երբ նախապրութեամբն կամ այլ ինչ պատճառք ազատ՚ի հատուցմանէ կացուցանիցեն։

ԺԲ. Եթէ ապաշխարողին ընդ ինչ յուսոյ կրեալ իցէ, և զվնասակարն ածեալ յատեան, սովորաբար չէ պարտ արձակել զնա, եթէ ոչ թողուլթիւն արասցէ Քրիստոսն, ըստ ասացելոցս՚ի գլ. դ. 17։

ԺԳ. Եթէ ազգարարութիւն անօգուտ իցէ ամենևին, և ապաշխարողն կայցէ՚ի բարւոք խիղճ մտաց, պարտ է թողուլ զնա յանգիտութեան իւրում, ըստ ասացելոցս՚ի գլ. ժ.Զ. 208. մանաւանդ եթէ զանվաւերութենէ պակիս իցեն իրք։ Զի բազում մեղք յազգարարութենէ անտի պատահեն, կալով նորա՚ի մերձաւոր վտանգի՝ ի չիարելն բաժանել՚ի կարծեցեալ կնոջէն։ Այն որոյ պարտ է խոստովանահօր, առանց յայտնելոյ՝ նմա զանվաւերութիւն պակին, գրել առ ժողովն ապաշխարութեան ըստ պատճենին՝ զոր եդաք՚ի գլ. ժԸ. 88. և ընկալեալ զտնօրինութիւն, ապա յայտնել զայն նմա։ Սակայն եթէ՚ի տգիտութենէ ապաշխարողին հասանէ միտս հասարակաց, պարտ է ազգառնել նմա՝ թէպէտ և՚ի բարւոք խղճի մտաց կայցէ, ըստ ասացելոցս՚ի գլ. ժ.Զ. 116։ Նոյնպէս և՚ի պարտս յայտնելոյ զխոստովանահարս հրապուրիչս՚ի պղծու-

Թիւն· զի պարտ է խոստովանահօր՝ պարտ ՚ի վերայ դնել զայս ապաշխարողին, Թէ և գիտիցէ զի չառնլոց է զայն յանձն, որպէս ասացաք անդ ՚ի Թիւ 178։

ԺԴ· Կարելի՛ է և չեն ինչ պարտք խոստովանահօր, և ոչ խոհեմութիւն, յանձն առնուլ զայսպիսութիւնս զայս, սակայն ՚ի դէպս ինչ պարտական գտանի առ ՚ի խափանել զինեաս հասարակաց կամ զմիաբանութեան։ Պարտ է նմա յայնժամ հրամանաւ եպիսկոպոսին՝ առնուլ նախ զանուն հրապուրողին և զհրապուրելոյն· երկրորդ՝ զօր և ժամանակ հրապուրանացն· երրորդ՝ զտեղին, այսինքն յեկեղեցւոջ Թէ ՚ի խոստովանարանի իցէ հրապուրեալ· և չորրորդ՝ զհանգամանս հրապուրողին, այսինքն զտիս, զկերպարանս և այլն։ Այլ զերկուսցէ ապաշխարողին, զի եթէ երբեք զրպարտութիւն իցէն բանքն՝ անկանի ՚ի մեղս վերապահեալս Պապին, ըստ ասացելոցս ՚ի գլ· ԺԶ· 129· և երդմնի արասցէ զնա՝ մի ումեք յայտնել զնոսն։ Այլ զգոյշ լինի մի աւելի ինչ քան զբանս և զգործս հրապուրանացն նշանակել՝ այլ որչափ ինչ մարթ իցէ յայտնել եպիսկոպոսին, և մի երբեք զմեղս ապաշխարողին։

ԺԵ· Մի հրաժարեսցէ խոստովանահայր յընդունելոյ զխոստովանութիւն ընդհանրական, Թէպէտ և չիցէ այն կարևոր· զի սուրբն Կարոլոս Պորոմեան օգտակար յոյժ համարի զայն ՚ի փոխոխումն վարուց և ՚ի յարատևութիւն։ Այլ միայն եթէ բազմութիւն ապաշխարողաց սպասիցեն, օրէն է նմա յամեցուցանել զայն ՚ի ժամանակ պատեհագոյն· իսկ ուր չիցէ խոստովանութիւնն այն կարևոր, օրէն է նմա և համառօտել զայն ըստ տեսակի և ըստ տևողութեան մեղացն, առանց հետազօտելոյ զԹիւ և զհանգամանս։

ԺԶ· Պարտ է տալ ապաշխարողաց առնել զներդողծութիւն զղջման, յորդորելով զնոսա յանկատարն և ՚ի կատարեալ ըստ ձևոյն՝ զոր եդաք ՚ի գլ· ԺԶ· 117· զի չգիտեն իսկ բազումք՝ վասն որոյ իրաց պարտ իցէ զղջալ ընդ մեղս։ Այլ յորժամ ապաշխարողն ինքնին առնիցէ ըստ պատշաճի զներդողծութիւն զղջման, շատ իցէ յայնժամ նախ քան զարձակումն՝ ազդ առնել նմա նորոգելոց զայն։ Իսկ եթէ բոլորովին զանպատրաստ մատիցէ ՚ի խոստովանութիւն, պարտ է խոստովանահօր

պատրաստել զնա ըստ կարի, որպէս ասացաք անդ՝ ի Թիւ 105։

ԺԲ. Ա՛պաշխարողք՝ որոց չիցեն մեղք ծանուցք՝ այլ ունակացեալ իցեն՝ ի ներելի մեղս, ոչ է օրէն արձակել զնոսա առանց Աշմարիտ զղջման և առաջադրութեան՝ զկնի ընդ ի յայնցանէ, կամ առանց խոստովանելոյ նոցա ինչ յանցելոց՝ ի ծանուցից մեղացն՝ հանդերձ զղջմամբ՝ ըստ ասացելոցս՝ ի գլ. Ժ.Զ. 23։ Վ՛անի խոստովանութիւնք անվաւերք առնին յանհոգութենէ խոստովանահարց յայսմ մասին։

ԺԳ. Պարտ է սահմանել ապաշխարողաց զայնպիսի ապաշխարանս, զորս զիւրին իցէ նոցա կատարել՝ ըստ ասացելոցս՝ ի գլ. Ժ.Զ. 31. և որ բժշկականք իցեն ախտից նոցա, որպէս յաձախել՝ ի սուրբ խորհուրդս, այլ առնել սրբոց խորհրդոյն և Տիրամօրն, յանձն լինել Ա՛ստուծոյ ընդ առաւօտս և ընդ երեկս, ընթեռնուլ հոգևոր գրեանս, յօդանալ՝ ի հոգևոր եղբայրութիւնս, և այլն։

ԺԹ. Օ՛երկիւղածս՝ որ յաձախեն՝ ի խորհուրդս՝ պարտ է յորդորել՝ ի մտածական աղօթս, և՝ ի դառնալ նոցա՝ հարցանել թէ առնիցէն զայն. զի փոքու այսուիկ հոգոյս թութեամբ մարթի է խոստովանահօր ածել՝ ի կատարելութիւն զբազումս։ Մի դժուարահաւան լինի և ընդ յաձախել նոցա՝ ի հաղորդութիւն՝ ի դատել խոհեմաբար զօգուտ նոցա հոգևոր, ըստ ասացելոցս՝ ի յաւելուածն ա. 30։

Ի. Օ՛խղձահարս պարտ է յորդորել՝ ի հնազանդութիւն. սակայ երկրորդելով զի ապահովութիւն նոցա՝ ի հնազանդութեան է, և կորուստ յանհնազանդութեան։ Ա՛ժգին պահանջել պարտ է՝ ի նոցանէ զխոստովանութիւն, հրամայաբար խօսելով նոցա. զի՝ ի խօսելն ըզգուշութեամբ՝ և քան զևս խուսափին։ Պարտ է տալ նոցա կանոնս հանրականս առ՝ ի փարատել զերկիւղ նոցա և զկասկածանս, ըստ իւրաքանչիւր պատշաճի. որպէս եթէ ոք զանցելոց խոստովանութեանցն խղճի՝ պարտ է պատուիրել նմա չխոստովանել ինչ՝ եթէ չգիտիցէ ստուգիւ, նախ՝ զի գործեալ իցէ զայն, երկրորդ՝ զի ոչ խոստովանեալ, և երրորդ՝ զի մնհուչափ մեղուցեալ։ Պինդ կացցէ խոստովանահայրն մի զիջանել՝ ի լուր՝

յանհնազանդել նոցա · զի եթէ երբեք զինքանիցն, արկանէ զնոսա յանձկուժիւն անբժշկելի : Այն և այլք՝ որ յամենայն գործս իւրեանց կասկածեն մեղանչել · այսպիսեաց պարտ է հրամայել՝ ազատաբար գործելոց ուր չիցեն մեղք ինչ յայտնի և ստոյգ, արհամարհելով զխիղճ մտաց իւրեանց · տես զայսմանէ ՚ի գլ· Ա· 8 :

ԻԱ· Իսկ յաղագս ընտրելոց զկարծիս, պարտ է զայս ունել կանոն : Եթէ առաջի կայցէ խափանել զտեսակաւոր մեզս, պարտ է խոստովանահօր ՚ի մեղմն կոյս ընդարձակել զօրինս՝ ըստ ներելոց քրիստոնէական խոհեմութեան : Իսկ ուր կարծիք ինչ զվտանգ տեսակաւոր մեղաց մերձ կացուցանէ, պարտ է ՚ի խստագոյն կարծիս խրատել զապաշխարողն՝ ըստ ասացելոցս ՚ի գլ· ԻԲ· 3 : Այսպէս ասեմ, զի եթէ արդարև հաւանական իցէ և հակառակն կարծիք, և ապաշխարողն կամիցի այնմ հետևել, ոչ է մարթ զրկել զնա յիրաւանցն՝ զոր խոստովանութեամբն ստանայ՝ ընդունելոց զարձակումն, որպէս ասացաք ՚ի գլ· ԺԶ· 119 :

ԻԲ· Ընդ խոստովանագստերս պարտ է զգուշութեամբ գնալ, հրաժարելով ՚ի պարգևաց, յընտանութենէ, և յամենայնէ՝ որ արծարծանէ զսէր : Դանիք ՚ի խոստովանահարց, առանց այսր զգուշութեան, համակործան ընդ ապաշխարողս իւրեանց անկան : Տես ՚ի գլ· ԻԲ· 52 :

ԻԳ· Պարտ է խոստովանահօր պատկառ կալ խոնարհութեան, և մի ՚ի դիտութիւն իւր ապաստանել· զի մեղ առ Աստուած, և խնդրել լոյս ՚ի նմանէ ՚ի ձեռն ջերջարանաց փրկչին, ըստ քանի խմաստնոյն · Սիրեցի աղօթից· և եկն ինձ հոգի իմաստութեան : Խոստովանահայրն, որ ոչ աղօթէ, զժուարաւ կարասցէ գնալ ընդ ուղիղ Ճանապարհ : Պարտ է նմա ՚ի զժուարինս՝ հարցանել զգիտուն և զփորձ խոստովանահարս · մանաւանդ յառաջնորդութիւն աստուածամերձ հոգւոց, որոց պարզևք գերբնականք ընծորհեալ իցեն : Այնմ ոմանք հարցանել զայլս, թէպէտ և ինքեանք չիցեն հմուտք երկնաւորն քաղաքավարութեան · այլ օրք իսկապէս խոնարհք իցեն, ոչ միայն խնդրեն խորհուրդ և խրատ յայլոց, այլ և առ հմուտ առաջնորդս հոգւոց յղեն զայնպիսի ապաշխարողս աննախանձ, յառաւելապոյն օգուտ հոգւոց նոցա :

ՅՕԴՈՒԱԾ Բ

Խրատ առ Ժողովրդապետս։

Ի դէպ է համառօտել աստանօր և զկարևորագոյնս ՚ի պարտուց Ժողովրդապետաց ՚ի խնամս հաւատացելոց.

Ա. Պարտ է Ժողովրդապետի ուսուցանել Ժողովրդեան իւրում զխորհուրդս հաւատոյ և զկարևորս ՚ի փրկութիւն։ — Նախ՝ զջրեսին զկնաւոր խորհուրդս հաւատոյ, այսինքն զի մի է Աստուած ամենակալող, ամենիմաստ, արարիչ և տէր ամենայնի, ամենողորմ և սիրելի քան զամենայն բարութիւնս, և արդարակշիռ հատուցող բարւոյ և չարի. զխորհուրդ աստուածութեան Երրորդութեան, զմարդեղութեան, և զմահուանն Քրիստոսի։ — Երկրորդ՝ զխորհուրդս կանոնաց, իմա զմկրտութիւն, զապաշխարութիւն, զհաղորդութիւն և զայլս, զորս ընդունինն։ — Երրորդ՝ զմասունս Հանգանակին, և մանաւանդ զկուսութիւն Տիրամօրն, զհամբարձումն Քրիստոսի և զնստել ընդ աջմէ՝ այսինքն փառաւորակից Հօր, զմիութիւն եկեղեցւոյ, զի մի է եկեղեցի Քրիստոսի, այսինքն հաւատացեալքն՝ յորում միայն է փրկութիւն, զյաւիտենականութիւն արքայութեան և զժոխոց, զորս առ հասարակ պարտ է հաւատացելոց գիտել ընդ ծանր պատուիրանաւ։ — Յորրորդ՝ զտասնաբանեայ և զեկեղեցական պատուիրանս։ — Ինգերորդ՝ զտէրունական աղօթս, զհրեշտակային ողջոյնն, զներդործութիւնս հաւատոյ յուսոյ սիրոյ և զղջման։ Ընդ որպէս ծանր մեղանչէ՝ որ անփոյթ առնէ ուսանել և գիտել զայսոսիկ, այսպէս ծանր մեղք են և Ժողովրդապետի՝ ըստ միաբան վարդապետութեան աստուածաբանից՝ անփոյթ առնել ուսուցանելոց զայսոսիկ հաւատացելոց՝ որ են ՚ի վինձակի իւրում, անձամբ կամ ՚ի ձեռն այլոց ուրուք՝ որ կարող իցէ, եթէ ինքն վասն իրաւացի ինչ իրաց իցէ խափանեալ։ Վասն որոյ եթէ ծնօղք և տեառքը չարձակիցեն զմանկունս ՚ի քրիստոնէական վարդապետութիւն, պարտական է ընդունել զնոսա ընդ եպիսկոպոսին, որ ըստ սահմանի տրիդենտեան ժողովոյն կարող է

և բանադրանօք ստիպել զնոսա յայն : Ովողովդապետ բարեխնամող ունի զհամար մանկտւոյն, առ ի գիտել ծլք ի նոցանէ պակասեն : Յաւելու ի աքրուա, զի եթէ իցեն ի տգիտաց՝ որ չկարող գալ յեկեղեցի, ի պահ հօտին կամ ընտանեաց արգելեալ, և ի ծանր կաթօտութեան կայցեն ըստ հոգւոյ, պարտական է ժողովրդապետան պահնայն նեղութիւն յանձն առեալ՝ գնալ ուսուցանել զնոսա : Եւ եթէ վասն բազմութեան այսպիսեացն չկարէ հնար նմա առնել զայս, գնթ՝ ի գալ նոցա ի խնդիր վկայականի վասն զբօշմի կամ պսակի՝ քննեսցէ զնոսա, և մի տացէ նոցա վկայութիւն՝ մինչև ուսցին զկարևորս, առ ի կարող լինելոյ ուսուցանել զայնոսիկ և որդւոց իւրեանց, և ի սուրբ երկիւղին Աստուծոյ դաստիարակել զնոսա :

Բ· Պարտ է ժողովրդապետի պաշտել զնորհուրդս, ի խնդրել հաւատացելոց զայնս ի դէպ ժամանակի : Եւ եթէ իցէ նորա օգնական հոգաբարձու, պարտի հսկել ի վերայ վարուց և գիտութեան նորա· ապա թէ ոչ, զամենայն հետևանաց ինքն տալոց է համար յատենին Աստուծոյ : Ուր իսկ պարտք են խնամել և զհիւանդս ի հոգեվարս, անձամբ կամ ի ձեռն այլոց՝ յոր վստահ իցէ· մանաւանդ սովորելոց ի մեզ՝ երիցադոյն խնամ պարտի ունել, զի ծանր կաթօտութիւն է նոցա օգնականութեան հովանի իւրեանց հոգևորի :

Յուշ լիցի նմա խրատ հռոմէական մաշտոցին, զի «ծանր մեզանչեն՝ որք զվերջին օծումն հիւանդաց ցայն վայր յապաղեն, մինչև ոչ ևս միայ յոյս բժշկութեան հիւանդին, և սկսանի նա պակասել ի զգայութենէ և ի կենաց»: Պարտ է ժողովրդապետի հետազօտել՝ թէ զղջականքն պատուիրան լցեալ իցէ իւրոցն ամենեցուն :

Գ· Պարտ է նմա դարձեալ արգելուլ զի մի զձև եկեղեցական առնութեան պատանիք, որ ոչ տան հաւատոխս թարեկրօն վարուց· և որոց առեալ իցէ զձևն, կրկնել յեկեղեցական վարս, զի մի՛ ի հասանել ժամանակի ձեռնադրութեան՝ անարժանութեամբ ընկալցին զսուրբ կարգ ի վնաս հաւատացելոց : Առեմ զայնցանէ՝ որք վկայութիւն ևս զբաղի վարուց անարժանիցն տան, կամ առանց գիտելոյ և քննելոյ թէ իցէ՞ն արժանի սրբոյ կարգին· որոց համար մեծ միայ տալ յահեղ ատենին :

Դ. Պարտ է նմա հսկել և՛ ի վերայ այնոցիկ՝ որ՛ ի մեղս կեան, կամ յատելութեան ընդ միմեանս, մանաւանդ ընդ այր և ընդ կին. և զուն զործել՛ ի հաշտութիւն նոցա և՛ ի զգաստութիւն։ Այլ եթէ՛ ի հզօրացն ոք իցէ կամ յերիցանց՝ որ տայ զդայթակղութիւնն, զոր չկարիցէ ինքն բառնալ՛ ի բաց, պարտի ծանուցանել զայն եպիսկոպոսին առ՛ ի խափանել զչարիս։ Նովիւ քաջ զանձն իւր պարտի դնել՛ ի վերայ ոչխարաց, վասն որոյ ոչ և իցէ ակնածութիւն կամ երկիւղ չէ բաւական զերծ կացուցանելոյ զնա՛ ի պարտուց աստի։

Ե. Այլ՛ ի բառնալ զդայթակղութիւնս՛ ի վիճակէ իւրմէ՝ պարտ է նմա հրաւիրել և քարոզիչս և խոստովանահարս օտարս, վասն այնոցիկ՝ որ ձախողակի պատկառանս՛ ի ծանօթից կրնեն։

Զ. Պարտ է ժողովրդապետի ոչ միայն բառնալ զդայթակղութիւնս, այլ և հայթայթել զբարիս՛ ի վիճակի իւրում՝ յորդորել զհաւատացեալս յաձախելոյ՛ ի տուրբ խորհուրդս, յաստուածային պաշտամունս, յայցելութիւն եկեղեցեաց և ուխտատեղեաց Տիրամօր, այլովքն հանդերձ։

Է. Պարտ է նմա յորդորել զհաւատացեալս՛ ի սէր և՛ ի պաշտօն Տիրամօրն, ցուցանելով նոցա զհզօր պաշտպանութիւն և զգուէթ նորա ընդ պաշտօնեասն իւր։ Վասն որոյ խրատեսցէ զնոսա կատարել հանապազօր զտուրբ վարդարանն՝ ընտանեօք հանդերձ՛ ի միասին, պահել զպահս և զծոմապահս՛ ի պատրաստութիւն տօնից նորա և՛ ի չորեքշաբաթի աւուրս, ընդ առաւօտս և ընդ երեկս յանձն լինել՛ ի մայրենի խնամն նորա, և ընթեռնուլ գիրս ինչ՝ որ ձառեն զնմանէ։ Նրանի ժողովրդապետի՝ որ՛ ի սէր և՛ ի պաշտօն Աստուածամօրն կրթէ զժողովուրդ իւր, զի առնէ նոցա բարեպաշտութեամբ կեալ, և՛ ի մահուն իւրում բարեխօս իւր ունիցի զապաստանն մեղաւորաց։ Տես որ ինչ այլ ևս զայսմանէ ասացաք՛ ի գլ. Է. 37։

Նա՛ ի վեր քան զամենայն խրատեսցէ զժողովուրդ իւր դիմել առ Աստուած, և խնդրել՛ ի նմանէ զշնորհս յարատևութեան վասն սիրոյն Քրիստոսի և Տիրամօրն. խելամուտ արասցէ զնոսա զի զշնորհս Աստուծոյ, մանաւանդ զյարատևութեան, ոչ է մարթ առ

նել առանց խնդրելոյ. Սիրելեայք՝ ե՞ պայ չեղ։ Յիշեցուսցէ նոցա ստէպ զխոստումն Քրիստոսի, զի որ ինչ յանուն իւր խնդրիցեմք՝ ի Հօրէ՝ տացէ մեզ. Զինչ ա՞ն ասեմ չեղ, զի զոր ինչ խնդրիցէ՛ ի Հօրէ եմնէ յանուն իմ, պայ չեղ։

Յորդորեսցէ զնոսա և՛ ի մտածական աղօթս. և՛ ի ժօնական աւուրս՝ ի միասին ընդ նոսա կատարեսցէ զայն յեկեղեցւոջ, ուսուցանելով նոցա առնել զայն ըստ նմին օրինակի և առանին։ Վասն որոյ յաւելումք աստ և զյաջորդ յօդուածդ յաղագս կարևորութեան մտածական աղօթից, և եղանակի կատարելոյ զայն։

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Յաղագս մտածական աղօթից։

Սրկին են պատճառք կարևորութեան մտածական աղօթից։ Մի՝ զոր սուրբն Քրիսոստոմոս ասէ, զի որ փակէ զաչս՝ չկարէ տեսանել զուզի, ընդ որ պարտ է նմա ընթանալ. այսինքն զի որ ոչն խորհի, ոչ տեսանէ զձանապարհն կենաց և փրկութեան իւրոյ։ Ձշմարտութիւնք յաւիտենականք անշինելի են աչաց մարմնոյ, և մտաց և՛եթ տեսանելի. վասն որոյ որ ոչն խորհի, ոչ՛ի միտ առնու զկարևորութիւն յաւիտենական փրկութեան, և ոչ զկարևորս առ՛ի նոյն։ "Որ էն Աստուծոյ, զբանս Աստուծոյ լսէ... Ամենայն որ լսէ՛ ի Հօրէ և ուսանի, գայ առ իս,,. ասէ փրկիչն մեր։ Սիտատ և ճանրալուր է սիրտ մեր բանիցն Աստուծոյ, զի հակէ զնա հոգեզէն յարկ՝ ի հաճոյս մարմնոյ. այլ կակղեն զայն ընդհակ Աստուծոյ հեղեալ՛ի մեզ՛ի ձեռն աղօթից։ Ի խորհել մերում յաղօթս անդ զբարութիւն Աստուծոյ և զամբաւ մարդասիրութիւն՝ որով այնչափ բարերարութիւնս ապարեալ և առնէ մեզ, գորովի սիրտ մեր, յօժարի՛ ի լուր բանից նորա, և խոնարհի՛ ի հլութիւն. ապա թէ ոչ, կայ մնայ խիստ և ապառաւմ, և զխստութիւն իւր ոչ՛ի միտ առնու։ Վասն որոյ սուրբն Յովհաննարդոս գրէր առ Նոգինիոս Հռոմայեցի Հայրապետն, երբեմն աշակերտ իւր. "Նորինչիմ, Նոգինիէ, զի՛ ի խառանէ զբաղանաց՛՛ի Թողուլ քո զաղօթս և զմտածու-

թիւն՝ խոստացեալ սիրտ քոյին, ոչ ևս սոսկասցի՛ ի խըլտուլթենէ իւրմէ, զի ոչ զգայցէ զայն ,, : Օ՞այս այսպէս սուրբ վարդապետն առ քահանայապետն գրէր, որ ետ թէ Թողայր իսկ երբեմն զաղօթս, ոչ վասն աշխարհական զբաղմանց՝ այլ յօգուտ եկեղեցւոյ և՛ ի փառս Աստուծոյ Թողայր: Պարտ է քալ՛ի միտ առնուլ զայս, մանաւանդ քահանայից, որոց ըստ առաւելագոյն պարտուցն՝ առաւել ևս պէտք են աստուածային շնորհաց, վասն որոյ և աղօթից, զի ընկալցին շնորհս առ՛ի կատարել զպարտս իւրեանց:

Իսկ միւս պատճառ կարևորութեան մտածական աղօթից այն է, զի որք ոչն մտածեն՝ չաղօթեն ևս. և որք չաղօթենն՝ չընդունին շնորհս. իսկ առանց շնորհաց չիք փրկութիւն: Աղաչնութիւնք, առանց աղօթից, չեն հաստատունք և յարատեք. զի յարատևութիւն, աղօթիւք ևեթ, և անդադար աղօթիւք ստացանի. ապա որ ոչն աղօթէ, ոչ յարատևէ: Այր աղաչաւ խրատէ առաքեալ՝ Անդադար աղօթս առնել. և փրկիչն մեր՝ Յաճախ նայն ծամ աղօթս կալ, և մի՛ չանչքնալ: Այսպա ուրեմն, առ՛ի կալ միանալ՛ի շնորհսն Աստուծոյ, կարևոր են բարոյապէս մտածական աղօթք: Այսեմ իսկ էապոյապէս. զի որ ոչն մտածէ, դժուարին յոյժ է նմա ջանկանել՛ի մեղս ծանուցնս. վասն զի ոչ՛ի միտ առնու զվտանգս, որով և ոչ զպէտս աղօթից առ՛ի զերծանել՛ի վտանգաց անտի. և՛ ի դադարել յաղօթից՝ տկարանայ, և՛ ի վտանգս անդ կործանի: Վասն որոյ ոմն յաստուածարեալ Հայրապետաց ասէ. ՝“ Վէ է մեզ բաւական նախանձն Աստուծոյ, և ոչ աստուածսիրութիւն՝ առանց աղօթից. զի առաքինութիւնք՝ անօգնականք յաղօթից՝ պակասեն, և մեք կորնչիմք: Այս յայտնի իսկ են պատճառքն. զի որպէս հնար լոկ կալ յաստուածսիրութեան, եթէ ոչ տացէ մեզ Աստուած յարատևութիւն. և որպէս տացէ մեզ Աստուած յարատևութիւն, եթէ ոչ խնդրիցեմք զայն՛ի նմանէ. և որպէս կարիցեմք խնդրել զայն առանց աղօթից. որպէս մարթ իցէ շնորհացն Աստուծոյ՛ի մեզ հեղանել, առանց խոզովակի՝ որ են աղօթք: Այանց աղօթից ոչ է մարթ հաղորդել մեզ ընդ Աստուծոյ, և ոչ առանց աստուածահաղորդս լինելոյ՝ կալ միանալ յաստւածութեան ,, :

Ընդ հակառակն՝ որ ի յաւիտենական Աչմարտու-
թիւնս խօրհի, այսինքն ի մահ իւր և ի դատաստան,
յերանաւէտ և ի թշուառ յաւիտենականութիւնս, ոչ
երբեք մեղիւք ըստ գրոց։ Այլ կարէաք հարցանել
զդատապարտեալս՝ թէ ընդէր կայցեն ի դժոխս, սա-
տանայինն ցմեզ. Ո՞ւ ոչ խորհեցաք զդժոխոց։
Յուրբն Ս. Ինկենտ Պաւլայեցի ասէր. “Ոչ ի լուր ա-
ռաքելական քարոզութեան զյաւիտենական Աչմարտու-
թեանց ոչ զգաստանայցէ, հրէշ զնա համարելի է,,.
և սակայն մարդ է անդ որ խօսին, իսկ ի մտածական
աղօթս՝ Աստուած է որ խօսի ի սիրտ։ Ի փորձոյ իսկ
վկայեալ, որք պարապեցան մտածական աղօթից՝ դուն
ուրեք ի մեզս ծանուցնա անկանին. և եթէ երբեք լինի
նոցա անկանել՝ կանգնին ի ձեռն աղօթից. զի մտածա-
կան աղօթից և մեզայ ոչ է մարթ ի միասին կալ։
Ատածութիւն վառէ զսիրտ սիրոյն Աստուծոյ. ան-
մարթ է զմտաւ ածել զբարութիւնն Աստուծոյ և զմար-
դասիրութիւն, և ոչ բորբոքիլ ի սէր նորա։ Այլ արդ
կարճ ի կարճոյ հատուսյուք և զեղանակ կատարելոյ
զմտածական աղօթս։

Պատեհագոյն տեղի մտածութեան է եկեղեցի. այլ
որք ոչն կարեն գնալ անդր կամ յամել անդ, ամենայն
ուրեք մարթ է նոցա կատարել զայն, առանձին, ի գաշ-
տի, զձանապարհայն, և ի գործելն իսկ, ունելով զիտա-
ւառ Աստուած. զի որ խնդրէ զԱստուած, ամենայն ու-
րեք գտանէ զնա։

Ոչնդ ժամանակ մտածութեան յաւուրց է. ոչ
բարւոք յաջողէն իրք, որոց չիցէ արարեալ յայգուէ
զմտածական աղօթս։ Ապաքէն երկիցս յաւուր պարտ է
առնել զայն, յաւուրս և յերեկոյին. այլ որ չկարէ
յերեկոյին, գէթ յաւուրսն արասցէ. սրտեռանդն
ներգործութիւն ինչ սիրոյ արարեալ յաւուրսն՝ բաւա-
կան է պահելոյ մինչև ցերեկոյ զսիրտ յեռանդեան։ Իսկ
ըստ չափոյ ժամանակին՝ պարտ է խոստովանահօր վա-
րել խոհեմութեամբ. արդարև չէ բաւական կէս ժա-
մու առ ի հատանել ի դերաստիճան կատարելութիւն,
այլ բաւական է վանն Հոգեսիրաց։ Պարտ է մանաւանդ
յորդորել զնոսա, զի մի առ ցամաքութեան թողցեն
զայն ի բաց, ըստ ասացելոցս ի յաւելուածն գ. 5։

Երբեակ մասունք են կատարելոյ զմտածական աղօթս. պատրաստութիւն, խոկումն, և կատարած: Ընդ՝ի պատրաստութիւն՝ պարտ է որպէս առաջի Աստուծոյ կալով, խոնարհել և խնդրել՝ի նմանէ լուսաւորութիւն միտց՝ ասելով. Հաւատամ Տէր զի կաս առ իս, և երկիր պագանեմ քեզ՝ի խորս ոչնչութեան իմոյ. պարտեր ինձ վասն բազում մեղաց իմոց կալ արդ՝ի դժոխս, զղջամ զի նոքօք զքեզ զառնացուցի, Թո՛ղ ինձ զՁեռնութեամբ: Այր ամենակալ, յանուն միածնի որդւոյ քո, և անարատ մօր նորին, լուսաւորեա զմիտս իմ, զի լինիցի մտածութիւնս այս ինձ յօգուտ: Եւ ապա զհրեշտակային ոգջոյնն պարտ է կցորդել առ սուրբ Աստուածածինն, և յաւելուլ զվաղք Հօր առ Աստուածհայրն, առ հրեշտակն պահապան, և առ պաշտպան սուրբս իւրաքանչիւր: Ծայոսիկ համառօտիւ պարտ է առնել, և փութալ՝ի խոկումն:

Որոց գիտից ընթեռնուլ՝ լաւ ինչ է առնուլ զդիրս ինչ մտածական աղօթից յօդնականութիւն, և ուր ուրեք աղդողապոյն ինչ գտանիցին՝ զկայ առնուլ՝ի խոկումն, ըստ օրինակի մեղուաց՝ որք՝ի ծուծ միոյ՝ի ծաղկանց զկայ առնուն ցորչափ գտանեն մեղր՝ի նմա, և ապա անցանեն անտի յայլ: Նոյնպէս որ ոչն գիտիցէ ընթեռնուլ, ՝ի վախճան իւր խորհեսցի, ՝ի գատաստանս, ՝ի յաւիտենականութիւն, ՝ի քաղաքութիւնս Աստուծոյ, և մանաւանդ՝ի վարս և՝ի չարչարանս Քրիստոսի: Ծօրհանապազ՝ի չարչարանս Քրիստոսի պարտ է մեղր խորհել, ասէ սուրբ Ալեքսանդրոս. քանզի գեղեցիկ մասեան է հոգեսիրաց՝ չարչարանքն Քրիստոսի. անդ տպաւորապոյն է տեսանել քան այլ ամենայն ուրեք զչարութիւն մեղաց և զմարդասիրութիւնն Աստուծոյ: Ընդունարդոս Քրիստոսի, եղբայր աշխատասէր, տգիտ՝ի գալոյ Ենէ, անկեալ երբեմն առաջի խաչելելոյն աղօթէր և խնդրէր լոյս՝ի նմանէ՝ թէ պարտ իցէ իւր ուանել զընթերցումն. առ որ ձայն եղև, որ ասէր. Ընդ՝ինչ խնդրես ընթեռնուլ, առ ինչ մտանեան. ես եմ մատեան քոյին, և շատ լինի քեզ:

Բայց օգուտ մտածական աղօթից ոչ այնչափ՝ի խոկմանն է, որչափ յիշելս և՝ի խնդրուածս և յառաջադրութիւնս, որպէս ասացաք՝ի յաւելուածն ա. 3: Ընդ այսմ

յետ խոկալոյ ՚ի ձշմարտութիւն ինչ յաւիտենական, և յետ ուսնկնդիր լինելոյ ձայնին Աստուծոյ՝ որ խօսի ՚ի սիրտ, պարտ է խօսել ՚ի սրտէ առ Աստուած, և նուիրել նմա իղձս, որպէս զդաւանութեան հաւատոյ, զգոհութեան, զերկրպագութեան, զխոնարհութեան, և մանաւանդ զսիրոյ և զղջման· զի սէր շղթայ է ոսկեղինիկ, որ զօդէ զհոգի ընդ Աստուծոյ: Իղձ մի սիրոյ՝ գանձ է անհուն, զի զառհաւատչեայ բարեկամութեանն Աստուծոյ ընծայէ մեզ· "Ընդակաս գանձ է նա, որով ոք վաթեցանն՝ առ Աստուած առաքեցին զբարեկամութիւն,,· (Յհասպ· է· 14): "Որ զինն սիրեն, սիրեմ,,· (Առակ· Ը· 17),,: Սէր ծածկէ զբազմութիւն մեղաց,,· (Ա· Պետր· Դ· 8): Տես ՚ի գլ· Զ· 442): Մի ոմն յաստուածամերձ կուսանաց ետես ՚ի տեսլեան բոց մեծ, և զմիջոցս արկեալս անդր՝ հրկիզ սպառեալ· որով յայտնէր նմա՝ զի ՚ի բոց սիրոյն Աստուծոյ կիզեալ սպառին մեղք առ հասարակ: Եւ տուրբ Աբգուխնացին յաւելու՝ զի ներգործութիւնք սիրոյ, մին ևս, տան մեզ ամբառնալ աստիճան մի ՚ի վեր ՚ի յաւիտենական փառս: Իսկ ներգործութիւնք սիրոյ այսոքիկ են, և սոցին նմանք· Աղաչեմ էմ, սիրեմ զքեզ ՚ի վեր քան զանձինս: Սիրեմ զքեզ ՚ի բոլոր սրտէ ես ՚ի բովանդակ մտաց: Յանկամ զքեզ ամենեցեան զքեզ միայն ծանիցեն Աստուած ճշմարիտ, և զքեզ սիրեսցեն ՚ի վեր քան զանձինս: Աղաչեմ էմ, ուժ բնիկ գիտել որ ինչ հաճոյ է քեզ· զի առասիկ կամ առնել զկամս քո· պատրաստ է սիրտ իմ առ քեզ Աստուած, պատրաստ է սիրտ իմ առնել զկամս քո: Աստ ընդ ես որպէս ես հաճոյ եղէ քեզ: Յոյժ աստուածահաճոյ են մանաւանդ այսպիսի անձնանուէրը իղձք· վասն որոյ սրբուհին Մարեզիա յիսնից յաւուր նուիրեր զանձն իւր Աստուծոյ: Իսկ յորժամ հոգի միանայ ընդ Աստուծոյ զերբնական կամ հեզական զմայլմամբ, ոչ ևս պարտ է նմանն այլ ինչ ներգործել իղձս՝ բայց զոր Աստուած ազդէ ՚ի նա քաղցրութեամբ: Յաւելու սուրբ Աղեքսացին, զի եթէ յառաջագոյն իսկ քան զխոկումն՝ իղձս ինչ բարիս ազդեսցէ Հոգին սուրբ ՚ի մեզ, պարտիմք յայնժամ դադարել ՚ի մտածութենէ, և տեղի տալ ըղձից· զի մտածութիւն առ ՚ի շարժել զիղձս է, վասն որոյ ՚ի շարժել ըղձից՝ ոչ ևս պէտք են մտածութեան:

Օգնէ յոյժ և կրկնել ստէպ՝ ի մտածութեան զաղօթս, և խնդրել խոնարհութեամբ և հաւատովք լսել՝ ի Տեառնէ, թաղութիւն մեղաց, յարատեւութիւն՝ ի շնորհս, զմահ բարի, զարքայութիւնն երկնից, և մանաւանդ զշնորհս աստուածախրատութեան։ Սուրբ Սալեզացին խրատէ՝ ի վեր քան զամենայն շնորհս խնդրել զսէրն Աստուծոյ, զի՝ ի ժառանգել ուրուք զայն՝ զպարտութիւն ամենայն շնորհաց ժառանգէ։ Նոթէ որ յանձկութեան հոգւոյ դառնիցի, և չկարիցէ այլ ինչ աղօթել, զաղաղաղերգուին աղօթան կրկնեսցէ անդադար. Աքսոաճ յօգնել ինձ նայեաց, Տէր յընկերել ինձ ճոխ։ Հայրն Ենովիքի ասէր զփոքր առեալ, զի չիք օգտակարագոյն ինչ հոգւոյ՝ ի մտածական աղօթս՝ քան խնդրել անդադար՝ ի Տեառնէ շնորհս յանուն միածնի Որդւոյ նորա, ըստ զեղեցիկ խոստման նորին՝ զոր՝ ի վեր այսր առացաք։

Պարտ է՝ ի մտածական աղօթս առնել և առաջադրութիւնս, ոչ միայն հանրականս՝ որպէս խորշելոյ յամենայն կամաւոր մեղաց, և նուիրելոյ զանձն բոլորանուէր Աստուծոյ, այլ և որիշ առաջադրել խորշելոյ՝ ի թերութեանց՝ յորս ոք ստէպ գայթէ, կամ կատարելոյ զառաքինութիւնս՝ որոց առաւելագոյն ըստ հանգամանաց ժամանակին պէտք իցեն, որպէս հնազանդութեան մեծաւորի, մեռելութեան յիրս ինչ, անյիշաչարութեան, հեզութեան, այլոցքն հանդերձ։

Յոկ՝ ի կատարած մտածական աղօթից, պարտ է նախ՝ զոհանալ զԱստուծոյ յաղագս լուսաւորութեան մտաց, և աղեցութեանցն ընդհեղոյ՝ ի նմանէ։ Ակրոտդ՝ առաջադրել կատարելոյ զամենայն որ ինչ՝ ի մտածութեան անդ ծանուցեալ բարիս։ Նա երրորդ՝ խնդրել յերկնաւոր Հօրէ վասն սիրոյն Յիսուսի, և մեր նորա անպատուսի, օգնութիւն յարատեւութեան՝ ի շնորհս։ Նա ապա յանձն առնել՝ ի խնամն Աստուծոյ զհոգիս ննջեցելոց, զսրբոյ եկեղեցւոյ առաջնորդս, զպետականս, զբուերարս, զբարեկամս և զանպէղջ մեղաւորս, աղօթելով վասն նոցա զտեղւոյնական աղօթսն և զողջոյնն հրեշտակային, որ զօրաւորագոյնք յաղօթս են, ի Քրիստոսէ և՝ ի սրբոյ եկեղեցւոյ նորա ուսուցեալ մեզ։

Յետանելն՝ ի մտածական աղօթից պարտ է նախ զոհ

խրատուց սրբոյ Աւետարանչին՝ յօրինել փունջ մի ծաղկանց, առ ի հատուածս զայն երբեմն երբեմն ի նմին աւուր. այսինքն ինչ ինչ որ առաւելապէս ազդեն ի միտս յուշի կապել, առ ի յիշելս զայնս մինչև ցերեկոյ։ Արկ-ծորդ՝ պարտ է զառաջադրութիւնս ի գործ առնել ի դէպս որ պատահեն, օրպէս ցածուցանել հեղութեամբ զցասումն ուրուք՝ որ խռովել կոչէ ընդ մեզ, կամ մանաւանդ յուցանել զայս կամ զնոսին կամ զնոսս. և մանաւանդ լռելով ըստ կարի՝ պահել ի սրտի զիղձս և զզգայմունս ընկալեալս ի մտածութեան։

Պարտ է խոստովանահօր, ի վեր քան զամենայն, յորդորել զորդի իւր՝ մի դադարել յաղօթից, մի համառօտել զայն ի ցանկութեան և յանձկութեան սրտի, մի խռովիլ և մի վհատիլ երբեք թէ լքեալ կամ ստոյգ, թէպէտ և ընդերկար տեւեսցէ վիշտն այն. այլ աւելի ընդ սաղմոսերգուին. "Որդ ընդէր տրտումես անձն իմ, կամ ընդէր խռովես զիս. յուսա առ Աստուած, խոստովանեա նմա, փրկիչ երեսաց իմոց Աստուած է,,։ "Բայնչ ոստանիկք, ասէ սուրբ Աւետարանչին, կան յանդիման Աստուծոյ անբաւբաւս, շատ համարեալ երևել նմա։ Այցցուք և մեք առաջի Աստուծոյ ի պատիս և ի փառս նորա. եթէ կամիցի խօսել ընդ մեզ և պարզևել մեզ միխիթարութիւն, գոհասցուք զնմանէ վասն հնարհին. իսկ եթէ ոչ, շատ համարեսցուք կալ յանդիման մեծ-վայելչութեան նորա, երկիր պագանել և հեղուլ առաջի նորա աղերս ըստ կարօտութեան մերում։ Օ՜ի եթէ չխօսեսցի իսկ ընդ մեզ, սակայն հաճեսցի ընդ խոնարհութիւն մեր և ընդ հաւատարմութիւն, և ըստ հաւատոյ մերոյ ընկալցի զաղաչանս մեր,,։

ՅԱՆԿ ԳԼԽՈՑ

ԳԼՈՒԽ ՎԵՑՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՑԱՂԱԳՍ ԽՈՐՀՐԴՈՑ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա

Ընթերոյ ի պիեսոյ խորհրդոյս : էջ 5

1 • Հեռաւոր և մերձաւոր նիւթ : — 2 • Պարտ իցէ կրօնաւորացս խոսանավանել միանգամ յամենեան : — 3 • Թէ խոսանավանեալ մեզք՝ իցէ՞ն նիւթ արձակման : — 4 • Պարտ իցէ որոշել զայնս ՚ի չխոսանավանելոց : — 5 • Իցէ՞ կարևոր բառն պէսպ. իցէ՞ն կարևոր և այլքն յամենայն հանդիպ. դուրբենին մեղաց փոյ • զինչ և այլքն • արձակմամբ ևեթ մեղաց արձակին և բանադրանք • կարևոր իցէ ներկայութիւն ապաշխարողին : — 6, 7 • Պայմանաւ արձակուին :

ՅՕԴՈՒԱԾ Բ

Յաղագս զղջման : էջ 9

8 • Էութիւն զղջման : — 9 • Պատճառք նորին : — 10 • Երբ պարտ իցէ զղջալ : — 11 • Ի վառնգ մահու : — 12 • Բաւական՞ն իցէ զղջումն հանդրևան : — 13 • Բաւականք իցեն ներգործութիւնք հաւատոյ և այլն : — 14–16 • Բաւական՞ն իցէ անկատար զղջումն առանց աստուածսիրութեան ՚ի վեր քան զամենայն : — 17 • Բաւական՞ն իցէ անկատար զղջումն առ երկիւղն դժոխոց : — 18 • Մարթ իցէ խոսանավանութեան գոլ վաւերական առանց ընդհատ : — 19 • Պարտ իցէ զղջման կանխել քան զխոսանավանութիւն : — 20 • Զբարոյական տեղութեանէ զղջման : — 21 • Պարտ իցէ զղջման գոլ վասն խոսանավանութեան : — 22 • Որ անգէն վերսին խոսանավանի, պարտ իցէ նմա նորոգել զղջումն : — 23 • Զղջումն ընդ ներկել մեղս :

ՅՕԴՈՒԱԾ Գ

Յաղագս աստաջադրութեան : էջ 18

24 • Զի պարտ է առաջադրութեան գոլ հաստատուն • զինչ ևթէ զբ համարիցի զի անկանելոց է վերսին : — 25 • Պարտ է առաջադրութեան գոլ հանդրևան : — 26 • Պարտ է գոլ և գործունեայ • վերսին անկուին իցէ՞ միշտ նշան անվաւեր խոսանավանութեան • պարտ իցէ առաջադրութեան գոլ բացայայտ :

ՅՕԴՈՒԱԾ Դ

Յաղագս խոստովանութեան : Էջ 21

27 · Չի պարտ է խոստովանութեան գոլ բանիւք և՛ ի ծածուկ : — 28 · Գոլ Ճշմարիտ · և զինչ որ առէ՛ ի խոստովանութեան : — 29 · Գոլ անթերի · զհանգամանաց՝ որ ծանրացուցանեն զմեղս : — 30–32 · Չերկբայականաց : — 33 · Չորոց ոք երկբայիցի թէ չկարէ խոստովանեալ : — 34 · Որ յետ խոստովանելոյ լինչ երկբայութեամբ՝ ձանձրէ զայն հաւատառեալ : — 35 · Բնական անկարողութիւն համբոյր, խլիլ, այլոցն զբաց և հիւանդաց՛ ի հոգեվարս : — 36 · Որոյ՛ ի հոգեվարս տուեալ կարէ նշան ըստ վկայութեան այլոց : — 37 · Որ ոչ առն լինչ նշան : — 38 · Չանզգայիլոց՛ ի մեղս անդ : — 39 · Անկարողութիւն բարբոյականն : — 40 · Ո՞յր պարտ կարէ յայտնել զմեղսակիցն : — 41 · Չի չէ օրէն խոստովանահօր հետաքննել զանուն մեղսակցին :

ՅՕԴՈՒԱԾ Ե

Յաղագս անվաւեր խոստովանութեան, ևս ի՞նչ պարտ կարէ վաւերացուցանել զայն : Էջ 33

42 · Խոստովանութիւն անվաւեր՛ ի կողմանէ խոստովանահօր : — 43 · Ի կողմանէ ապաշխարողին · և մեղսակցի՛ ի պղծութիւն : — 44 · Ո՞րպէս պարտ կարէ զխոստովանութիւն անվաւեր վաւերացուցանել առ նմին խոստովանահօր, և թէ շատ կարէ յիշատակել նմա ըզսմանէնալ ապաշխարանն : — 45 · Յաղագս ռամկին և տգիտի, որոյ չկարէ ոչ զառեակ և ոչ զթիւ բացատրեալ : — 46 · Ե՞րբ զխոստովանութիւն պարտ կարէ երկրորդել :

ՅՕԴՈՒԱԾ Զ

Յաղագս ապաշխարանաց : Էջ 37

47 · Պարտք խոստովանահօր սահմանելոց ապաշխարանս · եթէ կարէ արձակման սահմանեցէ : — 48 · Պարտ է սահմանել զայն որպէս պարտս : — 49 · Ե՞րբ օրէն կարէ թեթևացուցանել զայն · և յաղագս հիւանդաց : — 50, 51 · Յաղագս խօթամոնաց : — 52–54 · Որպիսի՞ ապաշխարանս պարտ կարէ սահմանել :

ՅՕԴՈՒԱԾ Է

Յաղագս խպարմանի ապաշխարանաց : Էջ 43

55 · Պարտք ընդունելոց զապաշխարանս : — 56 · Պարտք կատարելոց զայն : — 57 · Որ յապաւէ կատարել զայն : — 58 · Կարևոր կարէ գիտութիւն՛ ի կատարումն նորին : — 59 · Որ մոռանայէ կատարել զայն : — 60 · Որ՛ ի մահուընէ մեղս կատարէ զայն : — 61 · Ո՞ փոխել զապաշխարանս կարէ :

ՅՕԴՈՒԱԾ Ը

Յաղագս ապաշխարանաց՛ ի յետին ներողութեան : Էջ 48

62 · Չներողութենանց : — 63 · Չլինակատար ներողութիւն մնալ կարէ ընդունել ըստ մասին : — 64 · Չյոբելինէ : — 65 · Պարտ կարէ զպայմանեալ գործս՛ ի միում աւել եօթնեկի կատարել · զաղօթից

և զողորմութենէ, և զխոհանոցութենէ այնց: — 66. Անվաւեր խոստովանութեամբ բառնի՛ն բանադրանք և վերատահեալ արգելք: — 67. Մեզանչի՛ արձակեալն ՚ի վերատահելոյ, եթէ չիատարէ զպարտս յօրելինի: — 68. Որ մոռանայցէ զվերատահեալ ինչ մեղս: — 69. Որ պատեհ առեալ զյօրելեանն՝ մեզանչի՛ մեղս վերատահեալս: — 70. Օրի՛ն իցէ նախ քան զհատուցումն արձակել ՚ի յօրելինի: — 71. Յորմ՛ց մեղաց և ՚ի բանադրանաց մարթի իցէ յայնժամ արձակել: — 72. Գիտելիք ինչ յաղագս սուրբ տարեյ:

ՅՕԴՈՒԱՆ Թ

Յաղագս պաշտօնէի խորհրդոյ տպաւորութեան: էջ 55

73. Չի քահանայից եւեթ է պաշտօն խոստովանութեան: — 74. Չի պարտ է խոստովանահօր ունել հրաման. զի ոչ է կարևոր քննութիւն: — 75. Եթէ յանկրաւի բառնի յոմանէ հրաման: — 76. Օրի՛ն իցէ յայլորդի առնել վերատին քննութիւն: — 77. Օրի՛ն իցէ անհրաման քահանայի արձակել զտպաւորողն ՚ի ներելի մեղաց: — 78. Օրի՛ն իցէ ժողովրդապետի կոչել յօգնութիւն զոք ՚ի ժողովրդապետացդ այլոց թեմի: — 79. Կամ զայնը թեմի: — 80. Որո՛ւմ եպիսկոպոսի անկ է տալ հրաման: Կրօնաւորք, որք ՚ի թեմի ուրեք ունին հրաման:

ՅՕԴՈՒԱՆ Ժ

Յաղագս իրաւասութենէն խոստովանահօր: էջ 58

81. Ո՞ ըստ կարգի իշխանութենէն, և ո՞ ըստ աւանդեալ իշխանութենէն ունի իրաւասութիւն: — 82. Աւանդեալն իրաւասութիւն դադարի՛ ընդ մահուան աւանդողին: — 83. Իւաւհա՞ն իցէ հատանութիւն մոտաց եպիսկոպոսի: — 84. Որ երկբայելի իրաւասութեամբ արձակիցէ: — 85. Ո՞ւմ օրէն իցէ ընտրել իւր խոստովանահայր: — 86. Ազատ է ամենայն ոք խոստովանել ուր և կամիցի ՚ի խոստովանահարց: — 87. Ո՞ւմ օտարականք կարեն խոստովանել: — 88. Ո՞ւմ կրօնաւորք: — 89. Ո՞ւմ հուսանք: — 90. Վրիպակ հասարակաց. կարծեցեալ իրաւունք: — 91. Օրի՛ն իցէ արձակել հաւանականն իրաւասութեամբ: — 92. Օրի՛ն իցէ բանադրելոց և այլն՝ արձակել զհիւանդս ՚ի հոգեվարս: — 93. Օրի՛ն իցէ պարտ քահանայի ՚ի կաղ անդ խոստովանահօր: — 94. Խոստովանութիւնք: — 95. Խոստովանահայր մեղսակից ՚ի պղծութիւն: — 96. Խոստովանահայր հասարակ ՚ի կաղ անդ վերատունի: — 97. Չվերատահելոց Պատկին: — 98. Պարտ իցէ հիւանդի ՚ի հոգեվարս աղերսել զրուկ հրաման ՚ի վերատունից:

ՅՕԴՈՒԱՆ ԺԱ

Յաղագս պաշտամանն և պարտուց խոստովանահօր: էջ 70

99, 100. Չի կարևոր է խոստովանահօր գիտութիւն: — 101. Վրանի՛ պարտք իցեն նորա: — 102, 103. Պարտք քննութեան: — 104. Դաստելոյ: — 105. Հրահանգելոյ: — 106, 107. Ազդ առնելոյ և խրատելոյ: — 108–112. Եթէ ազգարարութիւն և խրատ չիցեն յօգուտ: — 113. Եթէ չիցէ վաւեր պատկ ապաշխարողին: — 114. Եթէ հարան և փեսայ պատրաստք կան՚ի պատկ: — 115. Եթէ իցեն պարտք հատուցման. եթէ ազգարարութիւն օգտակար իցէ յառաջիկայս: — 116.

Եթէ հարցանէ ապաշխարողն . եթէ ինսա հասարակաց կայցէ ՚ի միջի . եթէ երկբայելի իցէ օգուտ ազդարարութեան : — 117 . Յաղագս արձակման : — 118 . Որպիսի առուգութիւն պատրաստութեան իցէ կատարեալ : — 119 . Եթէ ապաշխարողն զկարծիս ինչ ունիցի ոմանէ որպէս հաւանական : — 120 . Եթէ ժխտէ կամ լռէ ինչ ՚ի մեղաց : — 121 . Յաղագս ուղղելոյ զսխալանս , և նախ զվաւերականութեան խորհրդոյն : — 122 . Զպարտուց հաստուցման՝ եթէ ազատ յայնմանէ կացուցեալ իցէ զապաշխարողն : — 123 . Եթէ չիցէ ազդ արարեալ նմա ըզպարտս հաստուցման : — 124 . Օրէ՞ն իցէ ազդ առնել նմա զսխալանս խոստովանութեան առանց խնդրելոյ ՚ի նմանէ հրամանի : — 125 . Պարտք պաշտելոյ զխորհուրդ ապաշխարութեան . ևս և վասնզաւ մահու : — 126 , 127 . Պա՞տա իցէ քահանայի պատրաստել և առնուլ հրաման պաշտելոյ զխորհուրդ ապաշխարութեան :

ՅՕԳՈՒԱԾ ԺԲ

Յաղագս վերապահելոյ : Էջ 93

128 . Զի վերապահութիւն ամիսիթուման է խրատատութեան : — 129 . Զի ոչ պիտուիթիւն ոչ ազատ կացուցանէ ՚ի վերապահութենէ , այլ ՚ի բանադրանաց Աեթ : Խոիր ընդ վերապահելս Պաոլին և եղիսկոպոսին : — 130 . Ո՞ւմ անկ իցէ վերապահել : Վերապահելք ՚ի կրօնաւորական կարգս : — 131 . Օրէ՞ն իցէ մեծաւորի արձակել զոք ՚ի վերապահեալ մեղաց , և Թողուլ խոստովանահօր արձակել զնա յայլոց մեղաց : — 132 . Օրէ՞ն իցէ վերապահել զմեզ ներելիս կամ զներելիս կամ զմերձակատարս : — 133 . Ե՞րբ մարթի իցէ ատրնագուն արձակել : — 134 . Եթէ անիրաւարար ուժիք չտացի իշխանութիւն արձակելոյ ՚ի վերապահելոյ : Եթէ վանահայրն զլռացի տալ զայն : — 135 . Կալ ընկե՞ն օտարականք ընդունել արձակումն , եթէ իցեն մեղքն այն վերապահեալ Աեթ արտաքոյ , կամ ՚ի հայրենիս նոցա : — 136 . Ո՞րպէս պարտ իցէ իմանալ զբանն ՚ի ՆՆԳ Վերապահութենն : — 137 . Որ մեզանէ ՚ի հայրենիս իւր , կարիցի՞ ընդունել արձակումն այլուր ՚ի խոստովանահօրէ՝ որոյ իցէ իշխանութիւն : — 138 . Որ մեզանիէ արտաքոյ , կարիցի՞ ընդունել արձակումն ՚ի հայրենիսն : Որ մեզանիէ ՚ի հայրենիսն , կարիցի՞ ընդունել այլուր արձակումն ՚ի բանադրանաց . կամ որ մեզանիելով այլուր անկանի ՚ի բանադրանս վերապահեալս : — 139 . Որ յանդիման արձակի ՚ի վերապահելոյ ՚ի ձեռն խոստովանահօր , որոյ չիցէ իշխանութիւն արձակելոյ : — 140 . Որ մոռանայ ինչ ՚ի մեղաց վերապահելոյ ՚ի խոստովանելն առ մեծաւորն : — 141 . Եթէ խոստովանութիւնն այն իցէ լեալ անվաւեր : — 142 . Օրէ՞ն իցէ պարզ խոստովանահօր արձակել զվերապահեալ երկբայելի : — 143 . Որ յեա խոստովանութենէն այնորիկ ճանաչէ առուգիւ վերապահեալ զայն : — 144 . Որ մեզանիէ վատահացեալ ՚ի հրաման արձակմանն : — 145 . Որ մեզանիէ յեա հրամանին : — 146 . Իշխանութիւն եպիսկոպոսաց և կարգաւորաց ՚ի վերայ վերապահելոյ :

ՅՕԳՈՒԱԾ ԺԳ

Յաղագս ինչոյ խոստովանութեան : Էջ 104

147 . Պարտք կնքոյ : — 148 . Ո՛յք ունիցեն պարտաւորիչք իցեն այնմ : — 149 . Պարտաւորի՞ն իցէ որ հրամանաւ ապաշխարողին հարցեալ ՚ի խոստովանահօրէն վասն խորհրդակցութեան : — 150 . Պարտաւորի՞ն իցէ որ ՚ի նոյն իսկ յապաշխարողէն հարցեալ : — 151 . Պարտաւորի՞ն

իցէ օր զդիր խոստովանութեան ընթեռնուցու : — 152 · Անհանգին ընդ հնգով Ա· Ընկրկի ևս մեղք փոշեառակք : Բ · Մեղսակցին ևս մեղք , այլ հրամանաւ ապաշխարողին օրէն է խրատել զմեղսակիցն : — 153 · Գ· Պատճառք մեղացն : Դ · Ապաշխարանք : Ե · Բանք յարակից մեղաց : Զ · Յայտնութիւնք և առաքինութիւնք : Է · Խղճահարութիւնք : — 154 · Թերութիւնք բնականք : — 155 · Յաղագս ընդունելոյ զխոստ ապաշխարողի խոստովանութիւն : — 156 · Ո՛ւր ուրիք չիցեն պարտք հնգոյ : Հրամայ ապաշխարողի · իցէ՞ օրէն ՚ի խոստովանութեան խրատել զինա առանց խնդրելոյ հրամայ : — 157 · Լուծանի՞ զինիք որ ասիցէ Թէ ՚ի մեղսասանի ուրիք և այլն : — 158 · Որ ասիցէ Թէ ՚ի քաղաքի ուրիք և այլն : — 159 · Որ վարի ծանօթութեամբ ՚ի տեսչութեան ընդդէմ ապաշխարողին : — 160 · Ի դառնալ անեղկիւղած ապաշխարողի : — 161 · Օրէ՞ն իցէ խոստովանահօր զգուշանալ ՚ի ճնասուց : — 162 · Օրէ՞ն իցէ տալ զգիտակ խոստովանութեան : — 163 · Ի տգառնալ ապաշխարողի զմահ : — 164 · Օրէ՞ն իցէ հաւանական կարծեօք ՚ի մասնից յայտնի վարել :

ՅՕԴՈՒԱԾ ԺԴ

Յաղագս հրապուրանաց ՚ի խոստովանութենէն : Էջ 117

165 · Կռնգակ Գրիգորի ԺԵ : — 166 · Հրապոյրք ՚ի խոստովանութեան անգ : — 167 · Յառաջ քան զխոստովանութիւն : — 168 · Պատճառաւ խոստովանութեան : — 169 · Պատճառանիւք խոստովանութեան : — 170 · Ախտաքոյ խոստովանութեան : — 171 · Ե՞րբ պարտք իցեն յայտնութեան : — 172 · Ե՞րբ չիցեն : — 173 · Եթէ կին հրապուրեն զխոստովանահայրն : — 174 · Եթէ խոստովանահայրն շօշափէ զկին հրապուրիչ : — 175 · Եթէ եկեալ իցէ յուղղութիւն : — 176 · Օրէ՞ն իցէ արձակել նախ քան զայտնութիւն · եթէ պարտ իցէ ապաշխարողին առնել զայն գրով · եթէ չկամիցի ՚ի կարելն առնել զայն անձամբ : — 177 · Չքանագրանաց՝ յոր անհանի : — 178 · Եթէ ապդատարութիւն իցէ անօգուտ : — 179 · Ա՛յլոց ևս գիտողաց պարտք են յայտնելոյ զայն , թէ և չկարիցեն ցուցանել զայն , թէ և անյայտ մնացեալ իցէ այն : — 180 · Եթէ երկբայելի իցեն հրապոյրքն : — 181 · Որ գովէ զգեղեցկութիւն : — 182 · Երկբայելի բանք : — 183 · Յաղագս չկարելոյ հրապուրողաց պատարագել :

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

Ի ՎԵՐԱՑ ԽՈՐՀՐԴՈՑ ՎԵՐՋԻՆ ՕՆՄԱՆ ԵՒ ԿԱՐԳԻ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵՆԱՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա

Յաղագս վերջին օծման : Էջ 128

1 · Իւրութիւն և զօրութիւնք նորա : — 2 · Նիւթ հեռաւոր : — 3 · Նիւթ մերձաւոր : — 4 · Կարևոր իցէ օծանել զամենայն իսկ զդայարանս : — 5 · Ձև նորա , և որպէս պարտ իցէ յարմարել զայն ընդ օծմանն : — 6 · Պաշտօնեայ նորին : — 7 · Ո՞յր պարտ իցէ տալ զվերջին օծումն : — 8 · Ե՞րբ կրկնել զայն : — 9 · Պատրաստութիւն կարևոր առ այն : — 10 · Պա՞րտ իցէ տալ զայն մանկաւոյ : — 11 · Պա՞րտ իցէ տալ զայն յիմարացս , ալրեցելոց , անդիեղ մեղաւորաց , համբոյ , խլից , կուրաց : — 12 · Իցէ՞ ծանր պատրաստութիւն ընդունելոյ զայն : — 13 · Ո՞րպէս պարտ իցէ պաշտել զայն :

ՅՕԴՈՒԱԾ Բ

Յաղագս խորհրդոյ սրբոյ հրգին : ԿՂ 139

14 · Մէն մի յեօթանեցաւնց կարգաց իցէ խորհուրդ : — 15 · Նիւթ և ձև խորհրդոց ի Վրխատոսէ իցեն սահմանեալ : — 16 · Ո՞ր իցէ նիւթ սրբոյ կարգին , ձեռնադրութիւն թէ տուչութիւն ապաստց :

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

Ի ՎԻՐԱՑ ԽՈՐՀՐԴՈՑ ՊՍԱԿԻՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա

Յաղագս հարանախօսութեան : ԿՂ 143

1 · Զի՞նչ է հարանախօսութիւն : Եթէ մանկունք յառաջ քան զխոստովանիլն ամաց առնիցեն : Որ առանց կամելոյ պարտ յանձն առնուլ ապաստ հարանախօսութիւն : Որ դաւով , կամ վրիպակաւ : — 2 · Եթէ պայմանիք պատճառս առեալ իցեն դաչինն : — 3 · Հարանախօսութիւն առ երկիւղն : — 4 · Պարտ իցէ խոստմանն լինել երկուսեանէք : — 5 · Պարտ իցէ արտայայտել զայն : Եթէ հայր խոստանայցէ վասն որդւոյն ի լուր նորա : — 6 · Պարտ իցէ յերկբայս նպաստել ազատութեան : Որ խոստանայն չառնուլ զայլ ոք կինութեան : Որ տայ ընչիցն : — 7 · Չէ ևս հասելոց յարբունս : Չշշափմանց խոստեցելոց :

ՅՕԴՈՒԱԾ Բ

Յաղագս պարտուց հարանախօսութեան : ԿՂ 148

8 · Ո՞րպէս և երբ պարտ իցէ կատարել զհարանախօսութիւն : — 9 · Եթէ ոք խոստանայ երկուց օրիորդաց : — 10 · Մարթ իցէ որդւոյ առանց գիտութեան և հաւանութեան ծնողացն խոստանալ : — 11 · Որ հրաժարէ յետ հարանախօսութեան : Որ ինչ պատիժ սահմանեալ հրաժարելոյն : — 12 · Հրիտակ պայմանաւ ամուսնանալոց կամ չամուսնանալոց :

ՅՕԴՈՒԱԾ Գ

Յաղագս լուծման հարանախօսութեան : ԿՂ 153

13 · Լուծանի նախ հարանեօք ընդ այլում · այլ արձակի յանցաւորն ևս ի պարտուց : — 14 · Երկրորդ՝ հաւանութեամբ միմեանց , թէպէտ և երդմամբ իցէ հաստատեալ · իսկ զինչ եթէ չէ ևս յարբունս իցեն հասեալ : — 15 · Երրորդ՝ եթէ արգելք ի վերայ գայցեն · պարտ իցէ յայնժամ խնդրել նոցա անօրինութեամբ — 16 · Անհաւատարութեան պայմանի օրէն իցէ լուծանել զհարանախօսութիւն : — 17 · Անհաւատնութեան ծնողաց օրէն իցէ լուծանել զայն : — 18 · Չորրորդ՝ վասն եղեռնագործութեան · պատնիւթիւն ևս համարիցի յեղեռնագործութիւն , մանաւանդ եթէ յաւելցի ի վերայ այլ չարութիւն : — 19 · Հինգերորդ՝ յեզայրսլութեամբ հանգամանաց : — 20 · Վեցերորդ՝ տարապնդութեան օրէն իցէ լուծանել զայն : — 21 · Եօթներորդ՝ լուծին սահմանեալ ժամանակի լուծանիցէ զայն : — 22 , 23 · Ութերորդ՝ ուխտ կրօնաւորական կամ սուրբ կարգ լուծանիցէ՞ն զայն : — 24 · Մեզանիցէ որ ընդունիցի զսուրբ կարգ : — 25 · Ուխտ ողջախոհութեան կամ ընդունելոց զսուրբ կարգ՝ լուծանիցէ՞ն զայն : — 26 · Կարևոր իցէ առ այս իշխանութիւն դատաւորի : — 27 Զինչ հաւատիք խնդրին առ այս :

ՅՕԴՈՒԱԾ Դ

Յաղագս նիւթոյ, յէութ և պաշտօնէի պաշին : էջ 162

28· Նիւթ, ձև և պաշտօնեայ պատկին : — 29· Օրէ՞ն իցէ կեղծել զպատակ : Գողացիկ ամուսնութիւն · առ 'ի վաւերացուցանել զայն՝ նոքին դրի՞ ընթերակայութիւն ժողովրդապետին : — 30· Պատճառք ամուսնութեան : — 31· Բաւակա՞նք իցեն նշանք ևթէ հաւանութեան : — 32· Պատկ 'ի ձեռն փոխանորդի կամ նամակաւոյ : — 33· Պայմանաւ հաւանութիւն : — 34· Ի ընուէ պայմանին խնդրի՞ վերստին հաւանութիւն :

ՅՕԴՈՒԱԾ Ե

Յաղագս օրինապէս վարելոյ ամուսնութեամբ : էջ 168

35· Ո՞չ է օրէն վարել ամուսնութեամբ, եթէ անվաւեր լեալ իցէ պատկն, կամ երկբայելի · այլ օրի՞ն իցէ պատկիլ, եթէ արդեօք երկբայականք իցեն 'ի միջի : — 36· Օրէ՞ն իցէ յերկբայս խնդրել կամ հաստուցանել զպարտս : — 37· Զի՞նչ եթէ երկբայութեամբ լեալ իցէ պատկն : — 38· Զի՞նչ եթէ վտանգ առողջութեան 'ի վերայ կայցէ : — 39· Զի՞նչ եթէ առ հեշտութեան ևթէ գոյցեն առ միմեանս : Զի՞նչ եթէ մօտք շնութեան : Զի՞նչ եթէ անարժան եղանակաւ : — 40· Զի՞նչ եթէ այրն նահանջեսցի 'ի սերմնաբխութենէ : — 41· Զի՞նչ եթէ յանպատեհ տեղւոջ կամ յանպատեհ ժամանակի այսինքն 'ի յղութեան : — 42· Եթէ այրն իցէ արդեւեալ ուխտիւ կամ մծղնէութեամբ : — 43· Ներելի՞ իցեն ամուսնոց շշուափմունք կամ յամեալ հեշտութիւնք :

ՅՕԴՈՒԱԾ Զ

Յաղագս պարտուց ամուսնութեան : էջ 174

44· Ե՞րբ պարտ իցէ ամուսնոյ խնդրել : — 45· Եթէ ծխատեցէ միանգամ և երկիցս : — 46 Եթէ բազմածնի իցէ կինն : — 47· Եթէ մահաւասի մեղաւ խնդրիցէ մին : — 48· Եթէ խնդրիցէ այր ոչ 'ի սաղմբոյին սերմանել : — 49· Եթէ մին յամուսնոց խնդրեսցէ ներելի մեղաւ : — 50· Եթէ խնդրիցէ արբեալն կամ անմիտ : Արդելք խնդրելոյ վասն մծղնէութեան : Եթէ 'ի վերայ կայցէ վտանգ առողջութեան կամ սաղմին : — 51· Եթէ այր նահանջեսցէ զսերմն : Եթէ կին յարիցէ կամ միղիցէ : Օրէ՞ն իցէ օրիորդի բռնաբարելոյ արտաքսել զսերմն : Եթէ ծեր առէալ հեղու արտաքս զսերմն : — 52· Յաղագս պարտուց բնակակցութեան ընդ կնոջ, և անուցանելոյ զնա :

ՅՕԴՈՒԱԾ Է

Յաղագս խափանել արգելից : էջ 179

53· Ո՞ր են արգելք : — 54· Ա· Արդելական հրամանն : Բ· Աւուրք՝ յորս չլինին հարսանիք · արդեօ՞ք իցէ յայնժամ լսումն հարսանեաց · արդեօ՞ք իցէ օրհնութիւն պատկի : Գ· Հարսնախօսութիւն : Դ· Ուխտ : Իցէ՞ իշխանութիւն եպիսկոպոսի անօրինել զսխտ ողջախոհութեան : — 55· Գողացիկ հարսանիք : — 56· Պարտք ծանուցանելոյ զարգելս, և երբ խափանէ ծանուցումն : — 57· Բաւակա՞ն իցէ համբաւ · հարցփորձ պատկելեաց · եթէ ժողովրդապետին ծանօթ իցեն արգելքն : — 58· Ե՞րբ կարէ և պարտի եպիսկոպոսն անօրինել զերբակի հրատարակութիւն : — 59· Կարիցէ՞ և փոխանորդն կամ ժողովրդապետ անօրինել :

ՅՕԴՈՒԱԾ Ը.

Յաղագս ըստ-ծին արգելից : Էջ 184

60. Ո՞ր այն իցեն արգելք լուծիչք պսակի : — 61. Ա. Վ բիսպակ անձին և անպիտութիւն հանգամանաց նորա : — 62. Բ. Անպիտութիւն նուաստութեան նորա : Գ. Ուխտ : Դ. Աղգականութիւն : — 63. Ե. Ոճիր : — 64. Զ. Կրօնից զանազանութիւն : Է. Բռնութիւն և երկիւղ : — 65. Ը. Սուրբ կարգ : Թ. Կապ ամուսնութեան : Ժ. Անվայելչութիւն : — 66. ԺԱ. Տկք : — 67. ԺԲ. Խնամութիւն : — 68. Արգելք ինդրելոյ զամուսնական պարտս. և ուստ իցէ անօրինել զայն : — 69. ԺԳ. Գողացիկ պսակ, և յաղագս ընդհակայութեան վկայից : — 70. 71. Ընդհակայութիւն ժողովրգապետին : — 72. Յաղագս թափառականաց և օտարականաց : — 73. Որպիսի ընդհակայութիւն ժողովրգապետի իցէ կարևոր : — 74. 75. ԺԴ. Անհարողութիւն : — 76. ԺԵ. Առնանկութիւն :

ՅՕԴՈՒԱԾ Թ.

Յաղագս վերբայոյանելոյ զպսակ անվաւեր : Էջ 201

77. Ե՞րբ համարին արգելքն ծածուկք : — 78. Եթէ ժողովրգապետն և վկայից ծանօթ իցեն լեալ արգելքն : — 79. Որոյ կեղծեալ իցէ զգաչինս, պա՞րտ իցէ նմա նորոգել զայն : — 80. Որոյ առ ահի կամ կեղծեօք իցէ խոստացեալ, պարտական իցէ յայտնել զանվաւերութիւն պսակին : — 81. Ի բառնալ արգելիցն, պա՞րտ իցէ յայտնել անգիտին զանվաւերականութիւնն : — 82. Ո՞րպէս պարտ իցէ առնուլ գՀաւատնութիւն անգիտին :

ՅՕԴՈՒԱԾ Ժ.

Յաղագս փնօրինման արգելից պսակի : Էջ 204

83. Զո՞ր արգելս կարիցէ անօրինել Պատն : — 84. Իրաւացի պատճառք անօրինման. պա՞րտ իցէ բացատրել զամենայն իսկ արգելս : — 85. Պա՞րտ իցէ բացատրել զամենայն հանգամանս, մանաւանդ զմերձութեան : — 86. Պա՞րտ իցէ բացատրել զամենայն յարակից հանգամանս՝ որ զԺուարտացուցանեն զանօրինութիւն : — 87. Պա՞րտ իցէ բացատրել զամենայն առաքեանս ազգականութեան : — 88. Պայմանք հրամանադրոց անօրինման : — 89. Պատճէնք աղերսագրոց : Զև պաշտելոյ զանօրինութիւն :

ՅՕԴՈՒԱԾ ԺԱ.

Յաղագս բաժանելոյ առն և կնոջ : Էջ 210

90. Լուծումն պսակի : — 91. Բաժանումն ըստ առագաստի. քանի՞ պատճառաւ օրէն իցէ : Ա. Վասն յանցանաց : Բ. Վասն ախտի : Գ. Ի հաստարակաց հատանութենէ : — 92. Դ. Առ ահի ինաւսու : — 93. Ե. Վասն շնութեան. այլ ինդրել առոյգ և կատարեալ շնութիւն : — 94. Պա՞րտ իցէ ամուսնոյ բաժանիլ վասն շնութեան ամուսնակցին : — 95. Իրաւունք կոչելոյ զընացեալն : — 96. Օրէ՞ն իցէ ինքնահրամանն բաժանումն : — 97. Յետ բաժանման ո՞ յամուսնոյ կարիցէ կրօնաւորիլ :

ԴԼՈՒԽ ԻՆՆԵՒՏՄԱՆԵՐՈՐԴ

Ի ՎԵՐԱՅ ԲԱՆԱԴՐԱՆԱՑ ԵՒ ԱՆԿԱՆՈՆՈՒԹԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա

Յաղագս սահմանելոյ բանադրանս։ Էջ 218

1։ Զի՞նչ են բանադրանք և քանիսպատիկ։ — 2։ Ե՞րբ վճռեալ են և երբ վճռելի։ — 3։ Ո՞ կարէ սահմանել բանադրանս։ որ բանադրէ առ երկիւղ։ — 4։ Որ ինչ խնդրի վասն հպատակաց անկանելոյ ընդ բանադրանաց։ որ ինչ վասն եպիսկոպոսաց և թագաւորաց։ մանրթի կայ միաբանութեան անկանել ընդ բանադրանաց։ — 5։ Օրի՞ն կայ եպիսկոպոսի բանադրել, ոչ՝ ի վիճակի իւրում կալով։ կամ զհպատակ, որ կայ արտաքոյ վիճակի իւրոյ։ — 6։ Օրի՞ն կայ նմա բանադրել զտաճարական ոք։ — 7։ Զի՞նչ միջոց օրէն կայ ընդ բանադրանաց արկանել։ զպատուիրողաց։ զնորատուաց։ 8։ Կայ՞ թէ անդիտութիւն և երկիւղ ազատ առնիցեն՝ի բանադրանաց։ օրի՞ն կայ վասն անցելոյ միջոց բանադրել զոք։ — 9։ Աբարոզութիւնք բանադրելոյ։ — 10։ Զի՞նչ եթէ սուտ կամ երկբայելի կայեն պատճառք բանադրանացն։

ՅՕԴՈՒԱԾ Բ

Յաղագս արձակելոյ՝ ի բանադրանաց։ Էջ 225

11։ Ո՞եմ օրէն է արձակել՝ի բանադրանաց։ — 12։ Ո՞եմ՝ի բանադրանաց հատարակաց։ կարի՞ց եպիսկոպոսն արձակել՝ի բացեայ կալով՝ի վիճակէն։ — 13։ Կարեւո՞ր կայ ձև արձակման, կամ՝ նեղակայութիւն բանադրելոյն։ Պայմանաւ արձակումն։ Արտաքոյ խոստովանութեան։ — 14։ Պայմանք կարեւորք վասն արձակման։

ՅՕԴՈՒԱԾ Գ

Յաղագս ձեռագոյն նղովիցն։ Էջ 229

15։ Հաղորդակցութիւն ընդ ատելի և ընդ խորշելի նղովեալս։ — 16։ Ընդ հարիանոզս եկեղեցականաց։ — 17։ Պատիժք յարակից նղովից։ Ա։ Զրկուածն՝ի խորհրդոց։ — 18։ Բ։ Զրկուածն՝ի հոգեւոր նպաստից։ Գ։ Ի պաշտելոյ զնորհուրդս։ Դ։ Յատուկածայնն պաշտամանց։ — 19։ Ե։ Ցեկեղեցական ժառանգութենէ, լիշխանութենէ և՝ի հասից։ — 20։ Զ։ Յատենական պաշտամանց։ Է։ Յիրաւասութենէ։ Ը։ Ի թաղմանէ։ Թ։ Ի քաղաքական հաղորդակցութենէ։

ՅՕԴՈՒԱԾ Դ

Յաղագս էութ նղովից և յարակից նորին պատժոց։ Էջ 235

21։ Որո՞վ իրաւք անկանի ոք՝ի վտարս նզովս։ Ա։ Խօսակցութիւն։ Բ։ Աղօթակցութիւն։ Գ։ Ողջոյն։ ընդունելութիւն ողջունի։ պատասխանի նմա համականութ։ Դ։ Հաղորդակցութիւն։ Ե։ Սեղանակցութիւն։ — 22։ Զի՞նչ միջոք են հաղորդակցութեան ընդ խորշելոյ, և երբ ծանր։ — 23։ Որ ինչ օրինաւոր առնեն հաղորդակից լինել ընդ խորշելոյ։ Ա։ Օգուտ։ Բ։ Ամուսնութիւն։ — 24։ Գ։ Հպատակութիւն։ — 25։ Դ։ Անգիտութիւն։ — 26։ Ե։ Հարկ։ — 27։ Պատիժք յարակից վտարս նզովից։ արգելուցն՝ զմատակարարութիւն խորհրդոց և զընդունելութիւն եկեղեցական ժառանգութեանց։

ՅՕԴՈՒԱԾ Ե

Յաղագս ապգիտութեան բանադրանաց : Էջ 241

28 · Բանադրանք ոչ վերատպահեալք : — 29 · Որ բանադատեն զայլ ինչ կամ զինն մուռնել ՚ի վանս : — 30 · Բանադրանք վերատպահեալք : — 31 · Ընդդէմ վիճողաց զանարատ յղութենէ Տիրամօրն : — 32 · Որ մուռնեն յարդելանս կուսանաց : — 33 · Որ պատճառանաւք խլեանու- թեան մուռնէ չարամուռութեամբ : — 34 · Զի պարտ է հրամանին գրով և բացայայտ գոլ : — 35 · Ո՞ւմ անկ իցէ տալ զհրամանն զայն : — 36 · Եւ վասն ընդ : — 37 · Վասն խոստովանահօր կուսանաց : — 38 · Վասն բժշկի և այլոց : — 39 · Որ ոչ եւանէ վաղագոյն : Որ յամէ կամ մուռնէ չար մտօք , այլ հրամանաւ : — 40 · Արգել խօսելոյ ընդ կուսանս , մա- նաւանդ կրօնաւորաց : — 41 · Վերատպահեալք · դուշնաքէութիւն նիւ- թոյ յայտ մուռնի · զազգականաց և զմանկանց չէ հատելոց յարբունս : — 42 · Խօսել ընդ վանամօր : — 43 · Կրօնաւորք ընդ որո՞վ բանադրանք անկանիցին : — 44 · Զինչ և զօտարականաց : — 45 · Զինչ զեպիսկո- պոսաց : — 46 · Զկուսանաց , ոյք լուծանեն զխականնս : — 47 · Փա- կանք կրօնաւորաց : — 48 · Չարկանողք եկեղեցականաց : — 49 · Պա- տուէրողք , հաւանողք , կամ ոչ արգելողք զհարուածն : — 50 · Զինչ իցէ լսանել եկեղեցական կամ կրօնաւոր ասելով : — 51 · Որո՞վ իւիք ոք անկանի ՚ի բանադրանս : — 52 · Որո՞վ իւիք ոչ անկանի : — 53 · Բանադրանք կոնդակին ընդդեմ · ընդդէմ հերետիկոսաց : — 54 · Ընդ- դէմ համախոհից նոցա : — 55 · Ընդդէմ ընդերցողաց զարգելեալ դիրս : — 56 · Որ զինչ խնդրի վանն այսր բանադրանաց · ընդունուլ՝ գիտելով զի մուռնադիրն է հերետիկոս : — 57 · Գիտելով զի զկրօնից է մա- ռեանն , և է ՚ի նմա մոլորութիւն : — 58 · Նիւթ ծանր : — 59 · Որ ուսնկըն- դիր լինի · որ ընդունուլ զնամականի կամ զձեռագիր : — 60 , 61 · Ար- գելեալք ՚ի ցուցակին : — 62 · Որ ուսի առ իւր զայնպիսի գրեան : — 63 · Այլ ևս բանադրանք՝ որ են ՚ի կոնդակին :

ՅՕԴՈՒԱԾ Զ

Յաղագս արգելման , կարգընկէց առնելոյ , խափանածոյ և գաղտնման յաստուածա- յին պաշտամանց : Էջ 263

64 — 66 · Արգել կամ կախուին : — 67 · Անկուին ՚ի կարգէ : — 68 — 70 · Խափանուին : — 71 · Դադարուին յաստուածային պաշտա- մանց :

ՅՕԴՈՒԱԾ Է

Յաղագս անկանոնութեան : Էջ 270

72 · Զինչ է անկանոնութիւն : — 73 · Ոչ ոք այն հաւատար բանադ- րանաց : — 74 · Խափր զանարատութեան նորա : 75 · Յորո՞ց լինչ զրկէ անկանոնութիւն : — 76 · Ոչ ընդունակ եկեղեցական ժառանգու- թեանց անկեալն յանկանոնութիւն : — 77 · Կարկո՞ վայելել յայնս :

ՅՕԴՈՒԱԾ Ը

Ո՞րպէս լինի անկանել յանկանոնութիւն : Էջ 272

78 · Զի պարտ է բացայայտ սահմանել օրինաց զանկանոնութիւն : — 79 · Որ երկբայանօք իցէ անկանոն : — 80 · Որոյ երկբայելի իցէ մարդասպանութիւն : — 81 · Որ լինչ խնդրի առ անկանոնութիւն ըստ

յանցանաց : — 82 · Եթէ յանցանքն էին զանխոյլ ամենևին : — 83 · Խնդրի գիտութիւն օրինացն : — 84 · Խնդրի գիտութիւն անկանոնութեանն : — 85 · Ո՞րպէս ՚ի բաց բառնի անկանոնութիւն : — 86 · Տնօրինութիւն անկանոնութեան : — 87 · Ո՞րպէս ՚ի բաց բառնի անկանոնութիւն ըստ թերութեան :

ՅՕԴՈՒԱԾ Թ

Անկանոնութենէ ըստ յանցանաց : Էջ 277

88 · Ի թերութենէ մկրտութեան : — 89 · Ի բռնաբարելոյ զբանապրանս : — 90 · Ի պաշտելոյ յայտնապէս զպաշտօն սրբոյ կարգի : — 91 · Յընդունելոյ ըստ ոչ օրինի զկարգս : — 92 · Յոճիր եղեռանէ : — 93 · Ի մարգասպանութենէ : — 94–96 · Վասն կամաւոր մարդասպանութեան : — 97, 98 · Վասն պատահարտողաց և խրատատուաց : — 99 · Վասն գործակցաց : — 100 · Վասն հաւանողաց ընդ այն : — 101 · Վասն ոչ խափանողաց : — 102–105 · Վասն պատահական մարդասպանութեան : — 106 · Որ ՚ի պահպանութիւն անձին սպանանէ զոք : — 107 · Որ ՚ի պահ ընչից իւրոց սպանանէ զոք : — 108 · Որ ՚ի կռիւն սպանանէ զոք : — 109, 110 · Որ խեղէ զոք : — 111 · Զանօրինսանէ այսոցիկ :

ՅՕԴՈՒԱԾ Ժ

Յաղագս անկանոնութեան ՚ի ընդունելն : Էջ 286

112 · Թերութիւն մտաց : — 113 · Լուսնոտք և այսահարք : — 114 · Անուամուկք : — 115 · Ընդարատունկք : — 116 · Թերութիւն մարմնոյ · կոյրք : — 117 · Խուլք : — 118 · — Համրք : — 119 · Կաղք : 120 · Մխաձեռանիք : — 121 · Ջերմնոտք : — 122 · Ականդակք : — 123 · Ծորոտք : — 124 · Հրեշք : — 125 · Ներքինիք : — 126–128 · Ըստ ոչ օրինի ծնեալք : — 129 · Ի բաց ընկեցիկք : — 130 · Թերահասակք : — 131 · Կրկնամուսնիք : — 132 · Որ ածէ կին այրի : — 133 · Որ ածէ ՚ի կին զիսրնձեալ : — 134 · Որ ամուսնանայ ընդ նմա անվաւերապար : — 135 · Կանամբք՝ որ մտանէ առ կին իւր շնացեալ : — 136 · Որ երկիցս ամուսնանայ անվաւերապար : — 137 · Որ ամբաստանէ զկին իւր ՚ի շնութիւն, և միանգամայն հաստուցանէ նմա զամուսնական պարտս : — 138 · Ուխտեալ՝ որ ածէ կին : — 139 · Ո՞րպէս բառնի անկանոնութիւն կրկնամուսնութեան : — 140 · Զարահամբաւութիւն · Անազատք · Ծառայք : — 141 · Կանամբիք : — 142 · Օրէնն էգէ կանամբեաց կրօնաւորիլ առանց կրօնաւորելոյ և կնոջն : — 143 · Առեւնական պաշտօնեայք, զինուորք, և այլն : — 144 · Օրինաւոր ապանութիւն : — 145, 146 · Դատաստան : — 147 · Տնօրինմունք :

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

ՅԱՂԱԳՍ ԱՐՏՈՒՆՈՒԹԵԱՆՑ

ՅՕԴՈՒԱԾ Ա

Զարգունութենէն հանրապէս : Էջ 297

1 · Խաիր ընդ արտունութիւն ընդ անօրինութիւն և ընդ հրամանն : — 2 · Ե՞րբ արտունութիւն զօրէ ընդգէմ հաստատակաց իրաւանց : — 3 · Որ ունին զարտունութիւն, պարտի վարել նովաւ : — 4 · Որ ՚ի խոր-

հրդեհական առենի ունի զայն, կարիցէ վարել նոաւա և արտաքոյ : — 5. Բացառութիւնք : — 6–8. Մեկնութիւն արտաւնութեանց : — 9–11. Հաղորդակցութիւն արտաւնութեանց : — 12. Արտաւնութիւնք կրօնաւորաց խափանեալք ի սրբոյն Պիտակ : — 13. Հրամանագիրք շնորհայ և արդարութեան դադարին ի մեռանիլ Պատկին : — 14. Վճռի օրինական դադարին արտաւնութիւնք : — 15. Ո՞րպէս դադարին նահանջմամբ : — 16. Բարձուին բացայայտ : — 17. Բարձուին լռելեայն. պաշտ էցէ ազդ առնել, կամ դէմ հրատարակել զբարձուին :

ՅՕԴՈՒԱԾ Բ

ԿՂ 306

18. Յոր ինչ իրս ազատ են եկեղեցականք յաշխարհական իշխանութենէ : — 19. Արտաւնութիւն կանոնական և առենական բան անձին : — 20. Ըստ գոյից : — 21. Ո՛յք ոմանք վայելին յայն : — 22. Ժառանգաւորք : — 23. Որոց զնուազուին հերաց ընկալեալ էցէ : — 24. Որոց մերկացեալ էցէ զձև եկեղեցական : — 25–28. Զազատութենէ սուբբ տեղեաց :

ՅՕԴՈՒԱԾ Գ

Աբգանութիւն Եպիսկոպոսաց : ԿՂ 310

29. Իշխանութիւնք տուեալք նոցա ի տիզենեան Ժողովոյ. օրէն էցէ եպիսկոպոսի անօրինել զանկանոնութիւն ի չանգանաց կամ ի բերանէ զերկբայելի : — 30. Ուր չէցէ Ժողովն տիզենեան ընկալեալ : — 31. Զի ընդ անուամբ եպիսկոպոսի էցէ խմանալ : — 32. Յաղագս օտարականաց. օրէն էցէ եպիսկոպոսի արձակել ի վերատահելոց Պատին արտաքոյ խաստովանութեան : — 33. Զինչ էցէ խմանալ զանյայտ մեղս : — 34. Օրէն էցէ եպիսկոպոսի աւանդել այլում զայս իշխանութիւն : — 35. Կարիցէ արձակել ի վերատահելոց այլոց եպիսկոպոսի : — 36. Կարիցէ և ի վերատահելոց յետ Ժողովոյն : — 37. Օրէն էցէ եպիսկոպոսի արձակել զնուազուածհայրը, որոյ արձակեալ էցէ զմեղաւորէ իւր ի գործ բղջախոհութեան : — 38. Կարիցէ՞ն եպիսկոպոսն արձակել ի վերատահելոց կանդակին ընթրեաց : — 39. Կարիցէ՞ն անօրինել զանկանոնութիւն, յոր անկեալ էցէ ոք հերետիկոսութեամբ : — 40. Կարիցէ՞ն արձակել զանկարողս դիմել ի Հռոմ : — 41. Եւս և ի ձեռն այլոց : — 42. Զի՞ս պարտ է խմանալ անկարողս ի սպաս : — 43. Անկարողք ի սպաս : — 44. Պա՞րտ էցէ նոցա դիմել գրով : — 45. Պարտ էցէ նոցա դիմել դէմ առ եպիսկոպոսն. և եթէ չկարիցէ՞ն. և զինչ եթէ էցեն ի հոգեվարս : — 46–48. Վէճեակ դէպք վերատահեալք եպիսկոպոսի, և մանաւանդ բանագրանք հարկանողաց զեկեղեցականս : — 49. Տնօրինուին ըստ օրինի պատկելոց : — 50. Երիկանայց : — 51. Անկանոնութեան անյայտ յանցանաց. և զինչ եթէ սպանութիւնն էցէ բազբոքիլն զանխուզ : — 52. Եթէ էցէ պատահական : — 53. Տնօրինուին անընդունակութեան : — 54. Իշխանութիւն եպիսկոպոսի ի վերայ պատկի : — 55. Տնօրինուին հրատարակման. ուխտի ողջախոհութեան. արգելից խնդրելոց զամուսնական պարտս. լուծիչ արգելից երկբայականաց : — 56. Լուծիչ արգելից հաւատաեաց, եթէ կատարեալ էցէ ամուսնութիւնն : — 57. Եթէ չէցէ կատարեալ : — 58. Օրէն էցէ եպիսկոպոսի աւանդել այլում զայս իշխանութիւն : — 59. Տնօրինուին միջոցաց ձեռնադրութեան : — 60. Ժամանարին յայլում եկեղեցւոջ պատարագելոյ : — 61. Յետ միջօրէի պա-

տալոյ գեղոյ : — 62 • Զմաւրանոց : — 63 • Ո՞ւր օրէն իցէ եպիսկոպոսի պատարագել : — 64 • Կարիցէ՞ տալ հրաման պատարագելոյ առանին : — 65 • Իշխանութիւն եպիսկոպոսաց և մեծաւորաց ընտրելոյ խոստովանահայր : — 66 • Զարգելամանից կուսաստանաց : — 67 • Ընդունելութիւն խոստովանահօրէ նոցա : — 68 • Իցէ՞ օրէն եպիսկոպոսի փոխել զիւրակ : — 69 • Անհատից հաստուցմանց իրաւախոհութիւն : — 70 • Թուոյ պատարագաց նուազումն : — 71 • Զերգմանց և զերախից • կըցորդել զժառանգութիւնս և կանգնել նոր ժողովրդապետութիւն :

ՅՕԴՈՒԱԾ Դ

Աբգունութիւնք իրծնաւորաց հանրականք : էջ 329

72–74 • Ազատութիւն յիրաւասութենէ եպիսկոպոսաց : — 75 • Ի բաց առեալ ինչ ինչ, և մանաւանդ զմատուցումն պատարագի : — 76 • Յայտարարութիւն սրբոյ գահուն զայսմանէ : — 77 • Ցո՞ր ինչ իրս օրէն է եպիսկոպոսի պարտ ի վերայ գնել նոցա : — 78 • Պա՞րտ իցէ կրծնաւորաց հնազանդել հրամանաց եպիսկոպոսի : — 79 • Օրէ՞ն իցէ եպիսկոպոսի այլ առնել նոցա : — 80 • Օրէ՞ն իցէ եպիսկոպոսի այլ առնել արգելամանից կուսաստանաց : — 81 • Օրէ՞ն իցէ եպիսկոպոսի խնդրել համար զպատարագաց կատարս ասհմանելոց : — 82, 83 • Ցոր ինչ իրս օրէն իցէ եպիսկոպոսի պատուհասել զնոսա : — 84–87 • Ապահարկութիւն նոցա ի տանտնորդաց : — 88 • Շինութիւն նորոց մենաստանաց : — 89 • Մենաստանք հպատակք եպիսկոպոսաց : — 90 • Դատաւոր կրծնաւորաց : — 91, 92 • Թաղումն : — 93, 94 • Բաժ կանոնական :

ՅՕԴՈՒԱԾ Ե

Աբգունութիւնք իրծնաւորաց առանձնականք : էջ 340

95–97 • Իշխանութիւն արձակելոյ զհպատակս ի վերապահելոյ և ի բանադրանաց : — 98 • Վերապահելոյ իշխանութիւն : — 99 • Իշխանութիւն նոցա ի վերայ աշխարհականաց : — 100 • Կարիցե՞ն արձակել ի վերապահելոյ եպիսկոպոսին ըստ իրաւանց կամ ըստ սովորութեան : — 101 • Կարիցե՞ն արձակել ի վերապահելոյ Պապն : — 102 • Չինչ յուղևորութեան : — 103 • Օրէ՞ն իցէ եպիսկոպոսի զնոսատովանահայր կրծնաւորս քննել վերապն : — 104, 105 • Տնօրինութիւն անհանութեանց : — 106 • Տնօրինութիւն եկեղեցական պատուիրանաց : — 107 • Ժամակարգութիւն : — 108 • Տնօրինութիւն ուխտից և երդմանց : — 109 • Ուխտ ազջախոհութեան պահելոյ և խօսեցելոյ : — 110 • Արտաքնութիւն կրծնաւորաց, նորընծայից և սպասաւորաց նոցա խոստովանելոյ ում և ի քահանայէ : — 111 • Վասն կրծնաւորաց պանդխտելոց : — 112 • Ո՞ր ինչ նոցա իշխանութիւն ի յօգուտ : — 113–116 • Ընդունելութիւն կարգաց : — 117–120 • Ձեռնադրութիւն : — 121, 122 • Մատուցումն պատարագաց : — 123 • Հաղորդութիւն : — 124–127 • Վարագ :

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

ՈՐ ԻՆՉ ԿԱՐԵԻՈՐ ԵՆ ԽՈՍՏՈՎԱՆԱՀՕՐ

էջ 353

1 • Ձի պարտ է խոստովանահօր մարդասիրաբար ընդունել զպաշխարողն : — 2 • Սիրով լսել նմա : — 3 • Սիրով խրատել : — 4 •

Խոհեմութեամբ առնել զհարցուածս և զպանդխտանութիւն, և պատասխանել վասնզ նորա։ — 5. Հանրական դեղք։ — 6. Դեղք առաձնական։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

ԹԷ Ո՛ՐՊԻՍ ՊԱՐՏ ԻՑԻ ՎԱՐԵԼ ԽՈՍՏՈՎԱՆԱՀՕՐ ԸՆԴ ԱԶԳՍ ԱԶԳՍ ԱՊԱՇԽԱՐՈՂԱՑ

ՅՕԴՈՒԱԾ Ա
ՀԼ 358

1–7. Վասն որ՝ի մերձաւոր վտանգս մեղայ կան։

ՅՕԴՈՒԱԾ Բ
ՀԼ 363

Վասն ոչնակացելոյ և գարձադարձիւ անկելոյ՝ի մեղս։

ՅՕԴՈՒԱԾ Գ
ՀԼ 369

Որ լինէ հարցուածս պարտ է խոստովանահօր առնել ապաշխարողաց ըստ տանաբաննայ պատուիրանաց, որք առ ոգիսուրեան կամ անհոգութեան անպատրաստաբար գայցեն՝ի խոստովանուրիւն։

ՅՕԴՈՒԱԾ Դ
ՀԼ 377

Որ լինէ հարցուածս ըստ հանգամանաց և ըստ պարտուց պաշտամանն ապաշխարողաց պարտ իցէ առնել։

ՅՕԴՈՒԱԾ Ե
ՀԼ 381

Թէ ո՛րպէս պարտ իցէ խոստովանահօր ընդ մանկունս, ընդ պատանիս և ընդ աղջիկունս վարել։

ՅՕԴՈՒԱԾ Զ
ՀԼ 385

Թէ ո՛րպէս պարտ իցէ խոստովանահօր գնալ ընդ հոգեւոքս։

ՅՕԴՈՒԱԾ Ի
ՀԼ 386

Թէ ո՛րպէս պարտ իցէ ընդունել զխոստովանուրիւն իւրից և համբոյս։

ՅՕԴՈՒԱԾ Ը
ՀԼ 387

Թէ ո՛րպէս պարտ իցէ խոստովանահօր վարել ընդ հիւանդս՝ի հոգեվարս։

ՅՕԴՈՒԱԾ Թ
Էջ 388

Թէ ո՛րպէս պարտ էցէ վարել խոստովանահօր ընդ դաստապարտեալս ՚ի մահ :

ՅՕԴՈՒԱԾ Ժ
Էջ 390

Թէ ո՛րպէս պարտ էցէ վարել խոստովանահօր ընդ տագնապեալս ՚ի դիւաց :

ՅՕԴՈՒԱԾ ԺԱ
Էջ 394

Թէ ո՛րպէս պարտ էցէ խոստովանահօր վարել ընդ կանայս :

ՑԱԻԵԼՈՒԱԾ Ա.

ՑԱՂԱԴՍ ԱՌԱՋՆՈՐԴԵԼՈՑ ՀՈԳԵՒԻՐԱՑ Ի ՃԱՆԱՊԱՐՀ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ
Էջ 396

ՅՕԴՈՒԱԾ Ա
Էջ 397

Յաղագս մեռածական ալօթից :

ՅՕԴՈՒԱԾ Բ
Էջ 399

Յաղագս խմանալի հայեցողութեան :

ՅՕԴՈՒԱԾ Գ
Էջ 412

Յաղագս Հպնութեանց :

ՅՕԴՈՒԱԾ Դ
Էջ 414

Յաղագս յաճախելոյ ՚ի տուրբ խորհուրդս :

Խրատք Հոգաբերութեան հանգամանք
Էջ 418

ՑԱԻԵԼՈՒԱԾ Բ

ՑԱՂԱԴՍ ԱՌՔՆԹԵՐ ԿԱԼՈՑ ՀԻՒԱՆԴԱՑ Ի ՀՈԳԵՎԱՐՍ
Էջ 422

ՅՕԴՈՒԱԾ Ա
Էջ 422

Խրատք առ քահանայս , որ առընթեր կան հիւանդաց ՚ի հոգեվարս :

ՅՕԴՈՒԱԾ Բ
Էջ 424

Որ ինչ ընդդէմ վորձուԹեանց դեղք։

ՅՕԴՈՒԱԾ Գ
Էջ 428

Յորդորակք և խրճք, զորս պարտ է յուշ առնել հիւանդացն՝ի հոգևվարս։

ՅՕԴՈՒԱԾ Դ
Էջ 432

Խրատք վասն պաշտելոյ զվերջնն խորհուրդս։

ՅՕԴՈՒԱԾ Ե
Էջ 437

Որ ինչ՝ի հոգեվարս և՝ի ժամ մահու պարտ է առնել քահանայի։

ՅՕԴՈՒԱԾ Զ
Էջ 438

Նշանք մերձենալոյ մահու հիւանդին։

ՅԱԽԵԼՈՒԱԾ Գ

ՓՆՆՈՒԹԻՒՆ ՆՈՒԻՐԵԼՈՑ Ի ՍՈՒՐԲ ԿՔՐՊ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Զխորհրդոյ տէր հաւաքակ։ Էջ 439

1. Զինչ է խորհուրդ։ — 2. Որ ինչ հնդրեն առ՝ի կատարեցանել զխորհուրդ. արդեօք ԹլփատուԹիւն իցէ՞ խորհուրդ։ — 3. Որ ինչ արբազան իրք և արարողուԹիւնք։ — 4. Բաժանումն խորհրդոց։ — 5. ՆիւԹ խորհրդոց։ — 6. Զև խորհրդոց, կցորդուԹիւն նիւԹոյն ընդ ձևոյ։ — 7. ԱկլայլուԹիւն էակաւն և պատահական։ — 8. Պայմանաւ պաշտել զխորհուրդ. յորժամ երկբայելի իցէ ձևն կամ նիւԹ. ընդհատումն ձևոյ։ — 9. ԴիտաւորուԹիւն պաշտոնէի և ընդունողն խորհրդոց։ — 10. Պաշտօնեայ խորհրդոց։ — 11. Պա՞րտ իցէ նմա գոլ՝ի ընծրմս։ — 12. ԵԹէ աշխարհիկ ոք իցէ միրուոյն, կամ առանձնաբար պաշտիցէ զխորհուրդն, շա՞տ իցէ նմա զղջալ՝ի մեղաց։ — 13. ԵԹէ՝ի մահուշափ մեղս ատցէ զարձակումն կամ զտուրըն հաղորդուԹիւն, կամ մատուսցէ զպատարագ։ — 14. Կխոստովիւաւոք կամ ստիւաւոք որ ապաստաւորէ հանդիսասէս։ — 15. ԵԹէ պաշտեսցէ խորհուրդ անաւրժանուոյ։ — 16. Կեղծեաք պաշտել զխորհուրդ։ — 17. Կեղծեաք ընդունել զխորհուրդ։ — 18. Պա՞րտ իցէ պաշտօնէի ունել զիտաւորուԹիւն առնելոյ զոր առնէ եկեղեցի։ — 19. Որ ինչ կարևոր վասն վաւերաբար և ըստ օրինի ընդունելոյ զխորհուրդ։ — 20. Խնդրել զայն՝ի բանադրելոյ կամ՝ի մեղաւորէ։ — 21. Օրէ՞ն իցէ ասել զրսեմն պաշտօնէի խորհրդոյն։ — 22. 23. Արդասիք խորհրդոց, և նախ շնորհք։ — 24. Կնիք խորհրդոց։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Ջխորհրդոյ խոցգին առ հասարակ : էջ 449

25. Թէ զինչ է կարգն : — 26. Զինչ ձեռնադրութիւն : — 27. Քանիսն է կարգ, և արդեօք եպիսկոպոսութիւն իցէ կարգ ուրոյն : Մէն մի՛ ի կարգաց իցէն խորհուրդք : — 28. Ո՞ր իցեն նիւթ և ձև կարգին : — 29. Պաշտօնեայ կարգին : — 30. Զօրութիւն կարգին : — 31. Որ ինչ ինդրին՝ ի վաւերական ձեռնադրութիւն : — 32. Որ ինչ խընդրին յօրինաւոր ձեռնադրութիւն : — 33. Ո՞ր իւրաքանչիւր ուրուք իցէ սեփական եպիսկոպոս, յորմէ պարտ իցէ նմա ընդունել զկարգ : — 34. Զկրօնաւորաց : — 35, 36. Որ ինչ գիտութիւն խնդրի՝ ի ձեռնադրելեաց : — 37, 38. Ապրուստ ձեռնադրելեաց : — 39. Կեղծ ապրուստ : — 40. Զի ըստ կարգի պարտ է ընդունել զաստիճանս. ժամանակ ձեռնադրութեան : — 41, 42. Միջոցք ընդ աստիճանս : — 43, 44. Տեղի ձեռնադրութեան, և հասակ : — 45. Տիրահրաւէր կոչումն : — 46. Ո՛րք ոմանք անկանին յարգել :

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

Ցաղագս մեղ մեղ՝ ի կարգաց : էջ 459

ՅՕԴՈՒԱԾ Ա

Ջխաւսանէ հերաց : էջ 459

47. Զինչ է խուզումն հերաց, և իցէ արդեօք ստիճան. զինչ է, եթէ ոք առանց այնր ձեռնադրեսցի : — 48. Արտաւնութիւնք որոց ընկալեալ իցէ զխուզումն հերաց : — 49, 50. Զի պարտ է նոցա կրել զձև եկեղեցական և զխուզումն : — 51. Զրկումն նոցա յատենական և ի կանոնական արտաւնութենէ :

ՅՕԴՈՒԱԾ Բ

Ջֆոյր ասպիճանաց : էջ 461

52. Դռնապանութիւն : — 53. Զի ինքն իսկ ձեռնադրօղն պարտի առանցել նուիրելոյն զնիւթն, և ինքնին պատարագել : — 54. Աստիճան ընթերցողութեան : — 55. Երգմնեցուցչութեան : — 56. Զահընկալութեան :

ՅՕԴՈՒԱԾ Գ

Ցաղագս էպոսպաւթոռնէից : էջ 463

57. Զինչ է կիսասարկաւագութիւն. նիւթ նորա և ձև և պաշտօն : — 58. Որ ինչ կարևոր առ կիսասարկաւագութիւն : — 59. Ուխտ կուսութեան. եթէ ոք անպիտանացեալ զայն. եթէ չիցէ յարբուն հասակ. եթէ առ ահի ձեռնադրեալ :

ՅՕԴՈՒԱԾ Դ

Ցաղագս պարտուց ծառայութեան : էջ 464

60. Վարդապետութիւնք զծառայութենէ դասուպարտեալք : — 61. Ո՞րք պարտականք իցեն ծառայութեան : — 62. Ո՞րք պարտական՝ ի հասուցումն հասկցի : — 63. Զինչ եթէ իցեն նոցա և

այլ պարտք : — 64 · Բանադրեալք և որք առանց մտադրութեան կատարեն զժամանակարգութիւն : — 65 · Չինչ յառաջին վեց ամիսս · որ առանց մեղաց Թողու՛ի բաց · քանի՞ մեզս գործէ որ Թողու՛ի բաց : — 66 · Որ ոչ ընդունի հաստ : — 67 · Եթէ հայրն լինի դուշնաքեայք : — 68 · Որ վաճառէ զհաստ · որ ոչն արտասանէ՛ի դասու : — 69 · Որ լինչ՛ի մտանիս յայտիկ նիւթ դուշնաքեայ : Որ ընկենու զժամագիրսն՛ի ծով : Որ երկայն ընդ կատարել իւր զմտան լինչ ժամանակարգութեան : — 70 · Որ լինչ խնդրի առ բարւոք կատարութիւն ժամանակարգութեան · եթէ այլ ընդ այլոց ոք կատարիցէ : — 71 · Որոյ այլուր դէմ եդեալ լիցէ : — 72 · Որ խմանայ զսխալել իւր : — 73 · Արտասանութիւն՛ի ձայն · որպէս՛ի դասու : — 74 · Արտասանել ամբողջ · արտասանել անընդհատ · արտասանել կարգաւ · արտասանել ըստ ժամուց : — 75 · Դիտաւորութիւն և մտադրութիւն : — 76 · Վասն որոյ երկայ օրէն է Թողու՛ի բաց զժամանակարգութիւն :

ՅՕԴՈՒԱԾ Ե

Չբանադրանաց առ հասարակ : էջ 472

77–80 · Չինչ և քանիսքառիկ են բանադրանք : — 81–83 · Նզովք : — 84 · Արգելք : — 85 · Ընկերութիւն՛ի կարգին : — 86 · Խափանած : — 87 · Անկանոնութիւն : — 88 · Ըստ յանցանաց : — 89 · Ըստ Թերութեան :

ՅՕԴՈՒԱԾ Զ

Յաղագս սարկաւագութեան : էջ 478

90 · Չինչ է սարկաւագութիւն , և որ լինչ նիւթ նորա և ձև : — 91 · Պաշտօն սարկաւագի :

ՅՕԴՈՒԱԾ Է

Յաղագս քահանայութեան : էջ 480

92 , 93 · Չինչ է քահանայութիւն , և որ լինչ նիւթ և ձև նորին : — 94 · Թէ որպէս պարտ իցէ ընտրել զԹերութիւնս ձեռնադրութեան : — 95 , 96 · Չինչ է պատարագն և քանիսքառիկ : — 97 · Նիւթ պատարագին , և առ զորահիէ հացին : — 98 · Չգինւոյ : — 99 · Չնեռիայութիւնէ նիւթոյն : — 100 · Ձև պատարագին : — 101 · Որո՞վ օրինակաւ իցէ անգ Քրիստոս : — 102 · Չօրութիւնք պատարագին : — 103 · Վասն որո՞յ օրէն իցէ մատուցանել զայն : — 104 · Աղթականք սրբոյ պատարագին : — 105 · Չօրութիւն սրբոյ պատարագին իցէ՞ անբաւ : — 106 · Օրինաւոր պատարագիք : — 107 · Յաճախումն պատարագի : — 108 · Խորհո՛ի պատարագեաց : — 109 · Որ լինչ Ժողովրդապետի պարտք պատարագելոյ : — 110 , 111 · Յիշատակ մատուցցուն զպատարագս : — 112 · Կարմրագինի խրատք առ հասարակ լինե՞ն հրամայականք : — 113 · Ե՞րբ օրէն իցէ պատարագել : — 114 · Ո՞ր օրէն իցէ պատարագել : — 115 · Ի՞ւ պղծի եկեղեցի : — 116 · Որ լինչ կարևոր առ՛ի պատարագել , և նախ սեղան : — 117 · Սկիհ և մատղնոյ : — 118 · Սպասք · — 119 · Մարմնակալ : — 120 · Մաքրիչ և այլն : — 121 · Պատարագամատոյց : — 122 · Սպասաւոր : — 123 · Նշան խաչին : — 124 · Սբբագործիչն քահանայք նորընծայեալք՛ի պատարագելն ընդ եպիսկոպոսին : — 125 · Չի պարտ է պատարագել՛ի ձայն , համառօտ և այլն : — 126 · Չի ըստ աւուր պատշաճի պարտ է պատարագել : — 127 ·

Ե՞րբ օրէն էր կրկին՝ի միում աւուր պատարագել: — 128. Զինչ եթէ՝ի պատարագել անդ պղծիցի եկեղեցի, կամ բանադրեալ խորշէ՛ր անդր մտանիցէ: — 129. Զխչեանութեանց քահանայի. զի օրէն է պարզ քահանայի պատարագել եթէ և հաղորդել, և՛ի կարևոր ժամանակի արձակել: — 130. Որինչ պարզ քահանայի պարտ էր գիտել յաղագս ընդունելոյ զնոսատավանութիւն՝ի սակել հարկին: — 131, 132. Պաշտօն ուսուցանելոյ և քարոզելոյ:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Դ

ԽՐԱՏՔ ԱՌ ԽՈՍՏՈՎԱՆԱՀԱՐՍ ԵՒ ԱՌ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՍ

ՅՕԴՈՒԱԾ Ա
էջ 499

Խրատ առ խոստովանահարս:

ՅՕԴՈՒԱԾ Բ
էջ 507

Խրատ առ Ժողովրդապետս:

ՅՕԴՈՒԱԾ Գ
էջ 510

Յաղագս մոռացական ալօթից:

ՅԱՆԿ ՆԻՒԹՈՑ

Ա.

Աբբայից իրաւասուԹիւն · Բ · 57 · 512 : Տես և Կարգապետ :
Աբբասուհւոյ ընտրուԹիւն · Ա · 361 :
ԱղաուԹեան մարդոյ որչափ լինէ օրէն է · Ա · 16 · 24 :
ԱղգականուԹիւն մերձաւոր և հոգևոր լուծիչ պսակի · Ա · 415 : Բ · 186 :
Ախորժ ընդ մեզս · Ա · 74—78 : Տես և ՀեշտուԹիւն :
Ախտալք · տես Կրօնք :
Աղէքսագիր Թերի · տես Տիօրինուածն :
Աղքատ 'ի յեռին կարօտուԹեան օրէն էգէ առնուլ զայլոյ լինէ · Ա · 223 : Եւս և մեծագին լինէ · 224 : Պարտ էգէ նմա մուրանալ · 224 : Որ 'ի յեռին կարօտուԹեան սպառէ զդրօնն · 225 : Որ ոչ ողորմի աղքատին՝ պարտական է էգէ հատուցանել · 226 :
ԱմբաստանուԹիւն · Երբ և որչ օրէն էգէ կամ պարտ ամբաստանելոյ : Ա · 391—395 : Տես և Հրապոյրք 'ի խոստովանուԹեան :
Ամուսնոց առ միմեանս պարտք · Ա · 153 : Օժիտք նոցա · Ա · 218 : Գոյք նոցա · Ա · 231 : Պարգևք նոցա առ իրեարս · Ա · 278 : Քանի՞ պատճառաւ օրէն էգէ բաժանուիլ նոցա ըստ առաքելոյն · Բ · 210—216 : Յեռ բաժանման ո՞ յամուսնոց կարէիցէ կրօնաւորիլ · Բ · 211 : Պարտ էգէ ամուսնոյ բաժանիլ վասն չնուԹեան ամուսնակցին · Բ · 214 : Իրաւունք կոչելոյ զընացեալն ամուսին · Բ · 215 : Տես և Պսակ :
ԱմուսնուԹիւն · տես Պսակ :
Այբ · տես Ամուսին :
ԱնառնապիտուԹիւն · Ա · 211 :
Անէծք ընդդէմ արարածոց և մեռելոց էգէ՞ մեղք մահուէսփ · Ա · 109 :
ԱնկանոնուԹիւն ըստ յանցանաց և ըստ ԹերուԹեան · Բ · 476—478 :
ԱնկանոնուԹիւն զի՞նչ է և յորո՞ց լինէ զրկել · Բ · 270 · 271 : Ո՞րպէս լինի անկանել յայն, և ո՞րպէս ազատել · Բ · 272—285 : ԱնկանոնուԹիւնք ըստ յանցանաց · Բ · 277—285 : ԱնկանոնուԹիւնք 'ի ԹերուԹենէ · Բ · 286—297 : Ո՞րպէս բառնին · Բ · 295 : Ո՞րպէս անօրինին · Բ · 297 :
ԱնկարողուԹիւն ազատ կացուցանէ յօրինաց · Ա · 47 :
ԱնձնասպանուԹիւն · Ա · 182 : Ե՞րբ օրէն էգէ դնել զկեանս 'ի վտանգի · 183 : Կերբինայուցանել ըղրգիս էգէ՞ օրէն · 184 : Օրէ՞ն էգէ արբենալ առ 'ի դէզ, կամ՝ վասն ազատելոյ 'ի սպանուԹենէ · 184 : Օրէ՞ն էգէ արբեցուցանել զոք առ 'ի խափանել զնա 'ի մեծագոյն եղեռանէ · 186 : Որ էնչ մեղայ պարտաւոր գտանի արբեալ ոք · 186 :

Աղահովութեան գաշն • Ա • 315 :
Ապաշխարանք • պարտք խոստովանահօր սահմանելոյ ապաշխարանս : Չ֊ինչ եթէ յետ արձակման սահմանեալոյ • Բ • 37 : Պարտ է սահմանել զայն որպէս պարտս : Երբ օրէն էր թեթեւացուցանել զայն • և յաղագս հիւանդաց • Բ • 38 : Յաղագս սահմանելոյ ապաշխարանս խոշտանոյց • Բ • 39 • 40 : Որպիսի՛ ապաշխարանս պարտ էր սահ֊մանել • Բ • 41 • 42 : Պարտք ընդունելոյ զապաշխարանս • Բ • 43 : Պարտք կատարելոյ զայն • Բ • 44 : Որ յաղագէ կատարել զայն • Բ • 45 : Կարեւոր էր դիւահարութիւն 'ի կատարումն նորին : Չ֊ինչ որ մնացեալ կատարել զայն • Բ • 46 : Որ 'ի մահուընէ մեզս կատա֊րէ զայն • Բ • 46 : Ո՞ վրդովել զապաշխարանս կարէր է • Բ • 47 :
Ապաշխարութեան խորհուրդ • հեռաւոր և մերձաւոր նորին նիւթ • Բ • 5 : Խոստովանեալ մեղք էր՞ն նիւթ արձակման : Պարտ էր ո֊րոշել զայնս 'ի չխոստովանելոյ • Բ • 6 : Իբր կարեւոր բանն պէ֊տ էր ին կարեւոր և այլքն յամենայն ժամանակս ունենալ մեղայ տոյ : Չ֊ինչ և այլքն • Բ • 7 : Արձակմամբ նեխի մեղացն արձակի՛ն և բանադրանք : Կա֊րելո՛ր էր ներկայութիւն ապաշխարողին : Պայմանաւ արձակուին • Բ • 8 : Իւրեքին զղջման • Բ • 9 : Պատճառք նորին • և երբ պարտ էր զղջալ • Բ • 10 : Բաւակա՞ն էր զղջումն հանրական • կարեւո՛րք էին ներգործութիւնք հաւատոյ և այլն • Բ • 11 : Բաւակա՞ն էր զղջումն անկատար առանց խոստովանութեան 'ի վեր քան զա֊մենայն • Բ • 12 • 13 : Բաւակա՞ն էր զղջումն անկատար առ երկիւղ դժոխոց • Բ • 14 : Մա՞րթ էր խոստովանութեան դուռ վաւերական առանց շնորհաց • Բ • 15 : Պարտ էր կանխել զղջման քան զխոստո֊վանութիւն : Բարոյական անհրաժեշտութիւն զղջման : Պարտ էր զղջման դուռ վան խոստովանութեան • Բ • 16 : Որ անդէն վերստին խոստո֊վանի, պարտ էր նմա նորոգել զղջումն : Չէզք ընդ ներթել մեզս • Բ • 17 : Պարտ է առաջադրութեան դուռ հաստատուն • և զի՞նչ եթէ ոք համարիցի զի անկանելոց է վերստին • Բ • 18 : Պարտ է առաջա֊դրութեան դուռ հանրական և գործունեայ : Վերստին անկումն էր միշտ նշան անվաւեր խոստովանութեան • Բ • 19 : Պա՞րտ էր առաջա֊դրութեան դուռ բացայայտ • Բ • 20 : Պարտ է խոստովանութեան դուռ բանիւք և 'ի ծածուկ , դուռ և ՃՀմարիտ • և զի՞նչ որ առէ 'ի խոս֊տովանութեան • Բ • 21 : Պարտ է խոստովանութեան դուռ ամբողջ • հանգամանք որ ծանրացուցանեն զմեզս • երկբայականք • զորոց ոք երկբայիցի թէ չէին խոստովանեալ • զորս յետ խոստովանելոյ երկ֊բայանաւք՝ ծանիցէ հաւաստեաւ • Բ • 22—26 : Բնական անկարողու֊թիւն համբոյ , խոշտ , այլաչեզուաց և հիւանդաց 'ի հոգեվարս : Ո֊րոց 'ի հոգեվարս առեալ էին նշան զղջման ըստ վիճակութեան այլոց • որ ոչ ատն էին նշան • Բ • 26—28 : Չանղգայելոց 'ի մեզս անդ • Բ • 29 : Անկարողութիւն բարոյական : Բ • 29 : Ո՞րը պարտ էին յայտնել զմեզսակիցն • Բ • 31 : Չէ օրէն խոստովանահօր հետազօտել զանուն մեզսակցին • Բ • 32 :
Առաջադրութիւն պարտի դուռ հաստատուն և հանրական : Վերստին անկումն էր միշտ նշան անվաւեր խոստովանութեան • Բ • 18—20 : Տես և Ապաշխարութեան խորհուրդ :
Առևանգութիւն • Ա • 206 :
Աստուածաբանական առաքինութեանց ներգործութիւն երբ էին կա֊րելոր • Ա • 90 • Բ • 42 :
Աստուածսիրութիւն • Ա • 88 : Ներգործութեան նորին պարտք • 89 :
Արբեցեալք մեղացն չանցանել ըստ օրինս • Ա • 44 : Օրէ՞ն էր ար֊

բենալ առ 'ի դէզ, կամ վասն ազատելոյ 'ի սպանումենէ • 184 : Օ-
րէ՞ն էր արբեցուցանել զոք առ 'ի խափանել զկռիւն • 186 : Ո՞ր ինչ
մեղաց պարտաւոր գտանի արբեալն • 186 : Օրէ՞ն էր տալ նոցա վեր-
ջին օծումն • Բ • 157 :
Արդել • տես Կախումն :
Արդելականք • որ մնանին յարգելականս կուսանաց • Բ • 243 : Ո՞ւմ
անկ էր տալ զհրամանն մնոյց անդր և վասն ի՞ր • 243 • 249 • 327 • 333 :
Արդելեալ գինք • Ա • 37 : Բանադրանք ընծայեցողաց նոցին • Բ • 259—
261 : Որ լսէ կամ առ իւր ունի զարգելեալ գրեան • — Բ • 260—263 :
Արգելեալք 'ի ցուցակին • Բ • 261 :
Արգելք խափանիչք պսակի • Բ • 179—184 : Լուծիչք պսակի • Բ • 184—
193 : Արգելք ինդրելոյ ամուսնական պարտս • Բ • 193 : Ե՞րբ հա-
մարին ծածուկք • Բ • 201 : Ո՞րպէս պարտ էր վաւերացուցանել
զպսակ անվաւերս • Բ • 202—209 :
Արձակումն • խոստովանեալ մեղք էր նմին արձակմանն : Պարտ էր
որոշել զայնս 'ի չխոստովանելոցդ • Բ • 6 : Էր՞ կարևոր բառն գՔԵ :
Էր՞ն կարևոր և այլքն յամենայն համահայցութենէն հղայ փոդ : Զի՞նչ և
այլքն • Բ • 7 : Արձակմամբ ևս մեղացն արձակի՞ն և բանադրանք :
Կարևո՞ր էր ներկայութիւն ապաշխարողին : Պայմանաւ արձա-
կումն • Բ • 8 : Ե՞րբ պարտ էր խոստովանահօր արձակել զապաշ-
խարօղն • Բ • 83 : Որպիսի՞ առաքութիւն պատրաստութեան ապաշ-
խարողին էր կարևոր • Բ • 84 : Եթէ ապաշխարողն զկարծիս ինչ
պինդ ունիցի որպէս հաւանական • Բ • 75 : Եթէ ժխտէ կամ լռէ
ինչ 'ի մեղաց • Բ • 86 : Տես և Խոստովանահայր , և Վերատեսուչ :
Արուեստութիւն • Ա • 210 :
Արուեստութիւն զի՞նչ է և ե՞րբ զօրէ ընդդէմ հատարակաց իրաւանց •
Բ • 298 : Որ ունին զայն՝ պարտ էր նմա վարել նուաւա • Բ • 299 :
Մենիութիւն արուեստութեանց • Բ • 300 : Հաղորդակցութիւն ար-
ուեստութեանց • Բ • 301 • 302 : Վանի՞ օրինակաւ դադարին • Բ • 303—
305 : Արուեստութիւնք եկեղեցականաց • Բ • 306—310 : Արուեստու-
թիւնք եպիսկոպոսաց • Բ • 310—329 : Արուեստութիւնք կրօնաւորաց
հանրականք • Բ • 329—340 : Արուեստութիւնք նոցա առանձնականք •
Բ • 341—352 :
Աւանդ զի՞նչ է • Ա • 281 : Պարտ էր առաւել հոգ տանել զայնմանէ
քան զերաց անձին • Ա • 281 : Ե՞րբ օրէն էր աւանդառուի հատու-
ցանել զաւանդն • Ա • 281 :

Բ

Բամբասանք • Ա • 321 : Օրէ՞ն էր յայտնել զմեղս ուրուք 'ի պաշտ-
պանութիւն անձին , 'ի խնդիր իրաւանց , կամ խոհականի և առա-
քելեայ ումեք • 323 : Զի՞նչ եթէ հոչակեալ ուրեք էին մեղքն ,
կամ յառաջ ժամանակաւ հոչակեալ , կամ 'ի հանդոյն ինչ ոք վաղ
իսկ չարահամբաւեալ • 324 : Հատուցումն բամբասանաց • 326 :
Բանադրանք զի՞նչ են և քանիսպատիկ • Բ • 218 • 472—474 : Ե՞րբ վճռեալ
և ե՞րբ վճռելի • Բ • 219 • Ա • 55 • 58 : Ո՞ կարէ սահմանել բանա-
դրանս • Բ • 219—221 : Ո՞յք անկանին ընդ բանադրանաց • Բ • 219 :
Զի՞նչ մեղս օրէն էր սրկանել ընդ բանադրանաց : Անդիտութիւն
և երկիւղ առնէին ազատ 'ի բանադրանաց • Բ • 221 • 222 : Արատ-
ղութիւնք բանադրելոյ , և զի՞նչ եթէ առա կամ երկբայելի պատ-
ճառք բանադրանացն էին • Բ • 224 • 225 : Ո՞ւմ օրէն է արձակել 'ի

բանադրանաց · կարևոր կայ ձև արձակման համ նեղկայութիւն բանադրելոյն · պայմանք կարևորք վասն արձակման · Ր · 225–228 : Մեծագոյն նզովք , և պատիժք նորա · Ր · 229–235 : Փոքր նզովք , և ի՛նչ անկանի ոք յայն · որ ինչ օրինաւոր առնեն հաղորդակից լինել ընդ նզովելոյ · Ր · 235–250 : Պատիժք փոքր նզովից · Ր · 340 : Բանադրանք ոչ վերապահեալք · Ր · 242 · 243 : Բանադրանք վերապահեալք · Ր · 244–253 : Բանադրանք կոնդակին ընդ երեց · 253–263 :
Բժիշկ · օրի՞ն կայ բժշկի հաւանական կարծեօք վարել Ա · 20 : Պարտք նորա ՚ի վտանգի մահուան հիւանդին · Ր · 379 : Տես և Վիճաբան :
Բռնաբարելոյ պա՞րտ կայ բառնալ զաղաղակ · Ա · 203 : Կա՞յ երբեք օրէն թողուլ զանձին բռնաբարութիւն · 203 :
Բռնութիւն արգելք մարդկային գործոյ · Ա · 67 :

Գ

Գաղտնեաց լուսութեան պարտք : Որպա՞ղ ներեցաւ զպաղտնիս · Ա · 322 ·
Գայթակղութիւն զի՞նչ է և քանիսպա՞ռիկ · Ա · 93 : Ո՛ր գայթակղեցուցանէն գործկա՞յ և ընդդէմ եղբայրսիրութեան · 96 : Զի՞նչ եթէ գայթակղեալն ինքնին իսկ պատրաստ կայ ՚ի մեղանչել · 96 : Ա՛ւ ՚ի խափանել զգայթակղութիւն պա՞րտ կայ յանձն առնուլ զաոյժս , և թողուլ իսկ զգրաւոն պատուիրանս · 97 : Ո՛ր ինչ պատճառք գայթակղութեան ՚ի կանանց և ՚ի թատերերգութենէ · 97 : Օրի՞ն կայ թելադրել զիոգբրտոյն ՚ի չարեաց · 98 : Ե՞րբ օրէն կայ նիւթական եւեթ գործակցութիւն ՚ի մեղս · 98 :
Գինւոյ ութիւն · Ա · 212 : Օրի՞ն կայ արտաքսել զսեղմն ապականեալ · 213 : Պա՞րտ կայ արգելուլ զգինւոյ ութիւն ինքնեկ · 213 : Պա՞րտ կայ զգուշանալ յամենայն իսկ պատճառաց գինւոյ ութեան · 213 : Զի՞նչ եթէ կարևոր համ օգտակար կայեն պատճառք · 213 :
Գիտակցութիւն · տես խղճմ մտաց :
Գողութեան սահմանն · Ա · 223 : Աղքատ ՚ի չեռնին կամ գրեթէ ՚ի չեռնին կարօտութեան · 223 : Ծանրութիւն գողոնից ըստ պայմանի անձանց · 227 : Գողնք այլեայց և անասնոց · 228 : Գողնք մանուանք · 229 : Գողնք նշխարաց սրբոց · 229 : Գողնք մանուանք ՚ի բազմաց ուրոյն կամ միանգամայն · 229 · 230 : Ո՛ր գողանայն գոյքն լինչ չեռնծանր գողնից · 230 : Գողնք որդւոց , կանանց , և ծառայից · 231 :
Գործք մարդոյ և գործք մարդկայինք · Ա · 65 : Հանգամանք և զանազանութիւն համառօտ գործոց · 65 : Զի՞նչ է գործ ազատ և քանի՛ պատիկ · 64 : Արգելք մարդկային գործոց , ապիտութիւն , բռնութիւն , աւնչ հաճելոյ զայլս , երկիւղ · 66–68 : Ասսոյ մարդկային գործք ընդունին զբարութիւն կամ զչարութիւն · 68 : Գործ արտաքին չաճախէ զչարութիւն նեղբնոյն · 68 : Գուցէ լինչ գործ մարդկային անխոտրական · 68 :
Գրաւ օրի՞ն կայ դնել · և զի՞նչ եթէ մի ՚ի կողմանց չեռնկայ զերծն հաւասարաւ · Ա · 308 · 345 : Գրաւականել սրբազան ապատս · 346 :
Գրաւարան · Ա · 287 :

Դ

Դադարումն յաստուածային պաշտամանց · Ր · 269 :
Դայեկաց և մանկաբարձից պարտք · Ա · 169 · 170 :
Դաշն քանիսպա՞ռիկ է · Ա · 274 : Ո՛ր դնէ դաշն առանց կամելոյ յանձն

առնուլ զպարտս դաշնի • 274 : Յոռի դաշինք • 274 : Ղենգաւ կամ վրիպակաւ եղեալ դաշինք • 275 : Աւ առի կռեալ դաշինք • 275 : Առանձնական դաշինք • 266 : Ապահովութեան դաշն • 315 : Տես և խոստումն • Պարգև • Ոխտ • Պատիւ • Կրօնաւորութիւն • և Տուրք։

Դատաւոր • օրէն ի՞նչ է դատաւորի հաւանական կարծեօք գտանել • Ա• 20 : Ե՞րբ օրէն իցէ նմա դատաստան արձակել • Ե՞րբ առանձնական գիտութեամբ դատել • 585 • 586 : Օրէն իցէ նմա դատել ըստ նուազ հաւանական կարծեաց • 586 : Օրէն իցէ նմա ընդունել պարգեւս, կամ չտալ՝ ի բաց ղգինս անկրաւ վճռոյ • 586 • 587 : Վասն հարցաքննող դատաւորաց • 587 :

Դիտաւորութիւն ի՞նչ է, և որպիսի՞ դիտաւորութիւն պարտ իցէ ունել պաշտօնէի խորհրդոց • Ա• 399 • Բ• 441 : Բաւական՞ն իցէ ունայական դիտաւորութիւն՝ ի պատասխանել • Աղօթ դիտաւորութիւն • Պայմանաւոր դիտաւորութիւն • Ա• 462–464 : Ներգործական, զգրութենական, ունայական և մեկնողական դիտաւորութիւնք • Բ• 442–446 : Դիտաւորութիւն պաշտօնէի խորհրդոց և ընդունողի • Բ• 442 • 443 • 483 : Ի կատարել զժամակարգութիւն • Բ• 470 :

Դիւագիտութիւն • Ա• 241 : Բ• 391 :

Դիւահար • ո՞րպէս պարտ իցէ խոստովանահօր յանձնառնել զտառապեալ՝ ի դիւաց • Բ• 390 : Տես և Երդմնեցուցչութիւն :

Դոնատականութեան ասելիքն • Բ• 461 :

Դրամոյ փոխանակութեան այլևայլ ազգ• Ա• 303 : Որ ընդունի զբ առաքիծ դրամն • 305 :

Դրամավաճառ զի՞նչ է • Ա• 302 : Պայմանք սահմանեալք առ այն • 302 : Օրէ՞ն իցէ դրամավաճառ անձնական, կամ կարելով գնողին յետս դարձուցանել զայն • 303 : Զի՞նչ՝ ի կորնչել դրամավաճառոյ՝ կորըստեամբ կալուածոյն • 304 : Օրէ՞ն իցէ վաճառել փոխանակ դրամոյ զպահանջն • 304 :

Դրոշմին նիւթ • Կարևո՞ր իցէ իւղոյ դրոշմին օրհնութիւն • և յոմանք : Օծութիւն բուն թիւ աչօք կամ գործուով • Ա• 419–421 : Զև և պաշտօնեայ դրոշմին : Զի եպիսկոպոսն պարտք են դրոշմել : Զի կարևոր է դրոշմ : Որ առանց այնր չեն ընդունելի : Պա՞րտ իցէ դրոշմել զտղայս և զխնամս • 421–423 : Արտաքսութիւնք դրոշմին և զօրութիւնք նոցա • 423 : Կնքահայր դրոշմին • տես Կնքահայր :

Ե

Եկեղեցական • տես Ժառանգաւոր : Ո՞ր յորոց չիցէ օրէն եկեղեցական կանոց • Ա• 247 : Որ ինչ վաճառաշահ արգելեալ նոցա • 300 : Որ ինչ արուեստ արգելեալ նոցա • 282 • 388 : Ե՞րբ օրէն իցէ նոցա առբառոնել, 381 : Հարկանօզք նոցա • Բ• 253–256 : Արտունութիւնք նոցա • Բ• 306–310 :

Եկեղեցական ինչք և սեպհականք • զի չէ օրէն վաճառել զայնս կամ տալ՝ ի բաց • Ա• 383 :

Եկեղեցի ի՞նչ պղծի • Բ• 491 • Խափանութիւն եկեղեցւոյ յառաջագային պաշտամանց • Բ• 475 :

Եղբայրսիրութիւն • տես Սէր :

Եղբարց առ եղբարս և առ քոյրս պարտք • Ա• 150 : Շահակցութիւն եղբարց • 313 :

Եպիսկոպոսի իցէ՞ իշխանութիւն անօրինել զսխալս օտարականաց, ըզ-

ծոմապահութիւն և այլն • Ա• 46 : Իշխանութիւն նորա յԱստուծմ
էին անմիջապէս• 42: Եպիսկոպոսունք զի՞նչ ինչ կարող էին անօրի-
նել, 52 • 108 • 154 • 317 : Ո՞ւր իշխանութիւն էին նմա պատարա-
գել, և էին նմա օրէն տալ հրամանն պատարագելոյ ՚ի տունս • 142 :
Ո՞ւր պարտ էին նոցա կալ, և որ ինչ նոցա իրաւացն պատճառք
բացակայութեան • 157—160 : Ո՞ր ինչ պարտք նոցա ըստ ձեռնա-
դրութեան, ըստ ընտրութեան ժողովրդապետաց, և խոստովանա-
հոլոց, ըստ ինամոց ՚ի վերայ պատարագաց, ըստ այցելութեան
հիւմ և հուսատուհոց, ըստ կալոց ՚ի վիճակի իւրեանց, ըստ յանդի-
մանելոց, ըստ ողորմութեան, և ըստ լինելոց օրինակ բարի • 171—180 :
Եպիսկոպոսունք կրօնաւորք պարտաւո՞ր էին ՚ի պահպանութիւն
ուխտից և կանոնաց • 350 : Եպիսկոպոսի օրէն էին կրօնաւորել•
364 : Օրէն էին նմա ՚ի նուազել պատարագեաց՝ նուազել զհիւ պա-
տարագաց • 461 : Ե՞րբ կարէ և պարտ եպիսկոպոսն անօրինել զեր-
բանի հրատարակութիւն պատկի • — Բ• 185 : Ո՞ր ինչ հնդրի վասն եպիս-
կոպոսաց ընդ բանադրանաւք անկանելոյ • Բ• 219 : Օրէն էին եպիս-
կոպոսի սահմանել բանադրանս, և ո՞ր, և ՚ի վերայ ո՞յց • Բ• 219 •
220 : Տես և Բանադրանք : Աւտուանութիւնք եպիսկոպոսաց ՚ի վե-
րայ վերապահելոց և այլն • Բ• 310 • 329 : Չի օրէն է նոցա և վասն
ծածուկ ինչ յանցանաց մերժել զոք ՚ի ձեռնադրութենէ • Բ• 444 :
Չի պարտ է նոցա ՚ի ձեռնադրութեան ինքնին աւանդել նուիրե-
լութիւն ընծայիս, և ինքնին պատարագել • Բ• 461 : Որո՞մ եպիսկո-
պոսի անկ է տալ հրամանն խոստովանութեան • Բ• 57 : Ո՞րպէս
պարտ էին եպիսկոպոսի ընտրել զթեկնութիւն ձեռնադրութեան • Բ•
481 : Կարէին՞ անօրինել զսխալս ողջախոհութեան • Բ• 480 : Կա-
րէին՞ արձակել զբանադրեալ՝ կալով արտաքոյ ՚ի վիճակէ իւրմէ •
Բ• 226 : Արդեօք եպիսկոպոսութիւն էին կարգ ուրոյն • 450 :
Երազահանութիւն • տես Կրօնք :
Երաշխաւորութիւն • Ա• 515 :
Երգմնեցուցչութեան աստիճան • Բ• 462 :
Երգութիւն զի՞նչ է և քանիսդառիկ • Ա• 112 : Պայման օրինաւոր երգ-
մանն • 113 : Օրէն էին երգութիւն երիգիմի • 113 : Որ ՚ի վերին երեսս
երգնու, 114 : Չի երգութիւն օրինապանց ոչ ածէ պարտս • 114 : Կա-
նի՞ զինչ ազատ կացուցանիցն յերգմանէ • 115 : Ցաղագս երգմնեցուց-
մանն • 116 : Տես և Երաժշտեցուցչութեան աստիճան :
Երկիւղ ազատ կացուցանէ յօրինաց • Ա• 46 : Տնօրինութիւն առ ահի •
տես Տնօրինութիւն : Երկիւղ արդեօք մարդկային գործոյ • Ա• 67 :

Չ

Չաղիր բանից խոսելութիւն կամ լսելութիւն • Ա• 204 :
Չինուորի օրէն էին դնալ ՚ի պատերազմ, որոյ արդարութիւն կայ՞ :
Երկբայելի • Ա• 193 : Անկանոնութիւն զինուորի • Բ• 294 :
Չգեստութիւն • Էութիւն և պատճառք նորին • Բ• 9 • 10 : Ե՞րբ պարտ էին
զգեստ • Բ• 11 : Բառականի՞ն էին զգեստութիւն հանդերձից • Բ• 12 : Բառա-
կանի՞ն էին անհատաւոր զգեստութիւն, կամ առ երկիւղի գժոխոց • Բ• 12 :
Պա՞րտ էին այնմ կանխել քան զխոստովանութիւն • Բ• 20 : Պա՞րտ
էին այնմ գոլ վասն խոստովանութեան • Բ• 16 : Որ անդէն վերըս-
նին խոստովանի, պա՞րտ էին նմա նորոգել զգեստութիւն • Բ• 17 : Չգե-
ստութիւն ընդ նեղելի մեզս • Բ• 17 : Տես և Ապաշխարութեան խոր-
հուրդ :

Ը

Ընթերցողութեան սահմանն • Բ • 462 :
Ընթրեաց կենդանիին քանդագրանք • Բ • 257–265 :
Ընկերացումն ՚ի կարգէն • Բ • 475 :

Թ

Թլփատութիւն նոցին խորհուրդ • Բ • 440 :
Թշնամանք ոչինչ են , և որպէս պարտ նոցին առնել այնոց , և որ ինչ ՚ի հատուցմանէ ասոյ ազատ կացուցանեն • Ա • 349 :
Թոշակ վերջին • որպէս պարտ նոցին և օրէն տալ զայն • Ա • 430 : Երբ պարտ նոցին ընդունել զայն : Զինչ եթէ վատնեալ նոցին հիւանդին վերբերելոյ զայն , և կամ եթէ նեղն հիւանդն ՚ի հաղոյ • 433 : Քանիցս օրէն նոցին ընդունել զայն • 446–448 :
Թոշակ ոչինչ ե և քանիսատակիկ • Ա • 381 :
Թոշակատուր • տես Ժառանգատուր :

Ժ

Ժամադարձ որ ինչ օրէն է անօրինել զպատարագէից • Ա • 457 : Ժամադարձը կարիցէն երբեմն վասն այլոց պատարագել կամ Թողուլ զպատարագ , և զինչ եթէ հիւանդանոյցին • 458 : Օրէն նոցա յայլում եկեղեցւոջ կամ տեղանի պատարագել : Եթէ ոչ պատարագէ յատուկնացեալ տեղանի , կամ եթէ այլոց տայ պատարագել • 460 : Ի նուազել հասից՝ օրէն նոցա նուազել զթիւ պատարագաց • 461 : Տես և Քահանայ :
Ժամակարգութիւն • Վարդապետութիւնք զայնմանէ դասատարաւեալք : Ո՛յք պարտականք նոցին կատարել զայն • Բ • 465 : Ո՛յք պարտականք նոցին ՚ի հատուցումն հասից • 466 : Քանագրեալք և որ առանց միաբանութեան կատարեն զայն • 467 : Որ առանց մեզայ Թողու զայն ՚ի բաց • 467 : Քանի՞ մեզս գործէ որ Թողու ՚ի բաց • 468 : Որ ոչն ընդունի հասս , կամ գաղնաքեայ ինչ ընդունի • որ վատնէ զհասս • որ ոչն արտասանէ • 468 : Որ ընկենու զժամապիկսն ՚ի ծով • որ երկեայն ընդ կատարել իւր զժամակարգութիւն • 468 : Որ ինչ խնդրի առ բարւոք կատարումն նորին • 469 • 470 : Վասն ոչ ըմպ իրաց օրէն նոցա Թողուլ զայն ՚ի բաց • 471 :
Ժանտախտ • Պարտք հոգևոր հանուցց ՚ի ժանտախտի • Ա • 161 :
Ժառանգատուրացս ինչք • Ա • 219 : Իցէ նոցա ազատ իշխանութիւն ՚ի վերայ հասից • 219 : Որ ոչ ըստ օրինի ընդունի ինչ ՚ի հասից նոցա • 220 : Հանգամանք և պարտք ժառանգատուրացս և Թոշակատուրացս • 575–584 : Զրկումն նոցա յեկեղեցական ժառանգութեանց , յիշխանութենէն և ՚ի հասից • Բ • 225 :
Ժառանգութիւն • Պարտք Թողլոյ զայն որդւոց , եղբարց , և ազգաց ազգականաց • Ա • 347 :
Ժառանգութիւն եկեղեցական քանիսատակիկ է • Ա • 366 : Քանի՞ օրինահաւ է առանալ զայնս • իրաւունք առելոյ զայնս • 367 : Պարտ նոցին տեղաց առաջարկել զարժանաւորագոյնս ՚ի ժառանգութիւն • 368 : Զինչ և ՚ի կրօնաւորական կարգս : Վաճառք նոցին ընտրութիւն նուազ արժանաւորին ՚ի ժառանգութիւն • 368 : Պարտականն նոցին ընտրօղն

զայնպիսիս՝ ի հատուցումն · 369 : Մեղանչէ՛ հուսագ արժանին՝ ընդ արժանագունին՝ ի խնդիր լինելով · և զի՞նչ եթէ քննիչք ծածկեն զշնմարտութիւն · 370 : Զ բազմապատիկ ժառանգութենէ · 371 :
Ժողովրդապետք զի՞նչ ինչ կարող էին անօրինել · Ա · 53 · 154 · 555 : Ժողովրդապետաց պարտք կալոյ ՝ի վիճակի իւրեանց · 154—160 : Ի մատակարարութիւն խորհրդոց · 160—162 : Պարտք յանդիմանութեան , և արգելուլ անարժանից ջառնուլ զձև եկեղեցական · 162—264 : Վասն որոյ պարտին մատուցանել զպատարագ · Ա · 162 · 438 · — Բ · 489 : Զի պարտին հսկել մանաւանդ ՝ի վերայ զառիւական հաղորդութեան և արգելոյ պատիւ · 164 : Պարտք նոցա քարոզելոյ և ուսուցանելոյ զքրիստոնէական վարդապետութիւն , լինել օրինակ բարի , առ ընդհեր կալ հիւանդաց , առնել ողորմութիւն , և քննել զմանկաբարձս վասն մկրտութեան · Ա · 131 · 165—170 : Ժողովրդապետի օրէ՞ն էր կրօնաւորել · 364 : Վասնդ մեղանչելոյ նմա ՝ի մկրտութեան · 418 : Պարտք Ժողովրդապետաց ունելոյ ՝ի պահեսպի և մատակարարելոյ զՀաղորդութիւն · 428 : Կարէր՞ Ժողովրդապետ անօրինել զերբակի հրատարակութիւն պատիւ · Բ · 185 : Որպիսի՞ ընդհանրակայութիւն Ժողովրդապետի էր կարեւոր առ ՝ի պատիւ · Բ · 194—197 : Օրէ՞ն էր Ժողովրդապետի կոչել յօգնութիւն զոք ՝ի Ժողովրդապետաց այլոց թեմի · Բ · 57 : Խրատ առ Ժողովրդապետս · Բ · 307 :

Ի

Իշձ մեղաց · Ա · 74—78 : Տես և Հեշտութիւն :
Իրաւասութիւն · ո՞ ըստ կարգի իշխանութեան և ո՞ ըստ աւանդեալ իշխանութենէն ունի իրաւունս իրաւասութենէն · Բ · 58 : Աւանդեալ իշխանութիւն զադարի՞ ընդ մահուան աւանդողին · Բ · 59 : Բաւակա՞ն էր հաւանութիւն մատուց եպիսկոպոսի : Որ երկբայելի իրաւասութենէ արձակիցէ · Բ · 60 : Զ թերին իրաւասութենէն ընդունել եկեղեցի · Բ · 64 : Տես և Խոստովանահայր :

Լ

Լուսայափոխութիւն · տես Դրամոյ փոխանակութիւն :

Խ

Խալ · եթէ մանուկ կամ կրօնաւոր կորուսանիցէ ՝ի խալն · Ա · 308 : Ղենգ ՝ի խալն : Արգելեալ խալք , և թէ օրէ՞ն էր յաղթողն յայնս՝ ունել զշահն · 309 : Պարտականո՞ն էր հատուցանելոյ պարտեալն · 218 : Խալք արգելեալք եկեղեցականաց · 310 :
Խաչ ոսկւոյ կարեւոր ՝ի պատարագի · Բ · 493 :
Խափանումն ատուածայինն պաշտամանց · Բ · 267—269 · 475 :
Խեղագարք · տես Ցխմարք :
Խնդիր մատուց · Ա · 1 : Հեռաւոր և մերձաւոր կանոն բարուքեան մարդկային գործոց · 1 : Քանիսպատիկ է խնդիր մատուց · 1 : Ուղիղ խնդիր մատուց · 2 : Մոլար խնդիր մատուց · 2 : Մարթի՞ ազխատութիւն բնական օրինաց · 2 : Մա՞րթ էր անգիտանալ եթէ ցանկութիւն չարեաց մեղք էր են · 11 : Տարաժամ խնդիր մատուց · 11 : Վարանական խնդիր մատուց · 12 : Երկբայելի խնդիր մատուց · բացասական և դրական տարակոյս · 13 :

Տեսական և գործնական տարակոյս • 15 : Ուր օրէնքն կամ ուխտ լ-
ցեն երկբայելի • 17 : Ուր չկայ յայտ հրամանի մեծաւորին ընդ մե-
ղաք արկանել զյանցուցեալն • 17 • 18 : Ուր պարտք ծոմապահու-
թեան , կամ ծոմ վասն հաղորդութեան կէսն երկբայելի • 18 : Ուր
արդեօք կամ պարտք կէսն երկբայելի • 18 : Հաւանական խոշտ մը-
տաց • 19 : Ի հաւատոյս • 'ի բժշկութեան • 'ի դատաստանի • 20 : Ի
տոյժս այլոց • 21 : Առաքինութիւն հաւանականութեան • 21 : Ընտազ հա-
ւանական • Ամենահաւանական • Հաւանական կամ հաւանականա-
պոյն • 21—29 :

Խոշհարութիւն գի՞նչ է • և դեղք նորա • Ա • 12—15 : Բ • 505 :

Խնամութիւն լուծիչ պսակի • Բ • 193 :

Խոստման պարտք • Ա • 115 • 126 • 258 • 277 : Տես և Ուխտ և Հարանա-
խոստութիւն :

Խոստովանահայր • գի քահանայից կ'ելնէ է պաշտօն խոստովանութեան •
գի պարտ է խոստովանահօր ունել հրամանն • գի ոչ է կարևոր քրի-
նութիւն • Բ • 55 : Եթէ յանկարաւ բառնի յումեքէ հրամանն : Օրէ՞ն
կայ յայլորդի առնել վերստին քննութիւն : Օրէ՞ն կայ անհրամանն
քահանայի արձակել զապաշխարող 'ի ներելի մեղաց • 56 : Օրէ՞ն կայ
ժողովրդապետի կոչել յօգնութիւն զոք 'ի ժողովրդապետաց այլոց
կամ գայնը թեմի • 57 : Որքա՞ն հեռիկողոսի անկ է տալ հրամանն :
Կրօնաւորք ոյք 'ի թեմի ուրեք ունին հրամանն • 57 : Ո՞ր ըստ կարգի
իշխանութեանն և ո՞րպատ աւանդեալ իշխանութեան ունի իրաւասու-
թիւն • 58 : Աւանդեալն իրաւասութիւն դադարի ընդ մահուան ա-
ւանդողին • 59 : Բաւակա՞ն կայ հաւանութիւն մտաց հեղհեղոսի :
Որ երկբայելի իրաւասութեամբ արձակիցէ • 60 : Ո՞ւմ օրէն կայ ընդ-
արել իւր խոստովանահայր : Աղատ է ամենայն ոք խոստովանել ումմ
և կամիցի 'ի խոստովանահարց • 61 : Ո՞ւմ օտարականք կարեն խոս-
տովանել • ո՞ւմ կրօնաւորք • ո՞ւմ կուսանք • 62 : Վ.րիպակ հաստատ-
կաց վնոստովանահօրէ • 63 : Օրէ՞ն կայ բանագրելոց արձակել գնի-
ւանդս 'ի հոգեվարս : Օրէ՞ն կայ պարզ քահանայի 'ի կալ անգ խոս-
տովանահօր • 63 : Խոցաւորութիւնք • 66 : Խոստովանահայր մեղսակից
'ի պղծութիւն • 67 : Խոստովանահայր հաստատակ 'ի կալ անգ վերհա-
գուն : Չվերստահելոց Պատին • 68 : Պա՞րտ կայ հիւանդի 'ի հոգե-
վարս ազերսել գրով հրամանն 'ի վերհագունէ • 69 : Չի կարևոր է
խոստովանահօր գիտութիւն • 70 : Պարտք խոստովանահօր քրի-
նութեան • գատելոյ • հրահանգելոյ • ազդ առնելոյ և խրատելոյ •
71—77 : Եթէ ազդարարութիւն և խրատ չկայեն յօգուտ • եթէ չկայ
վաւեր պսակ ապաշխարողին • եթէ հարան և վիճակ պատրաստաք
կան 'ի պսակ • եթէ կէսն պարտք հատուցման • եթէ ազդարարու-
թիւն օգտակար կայ յառաջիկայս • 77—81 : Եթէ հարցանիցէ ա-
պաշխարողն • եթէ ձեռս հաստատակաց կայցէ 'ի միջի • եթէ երկ-
բայելի կայ օգուտ ազդարարութեան • 81 • 82 : Յաղագս արձակ-
ման • 83 : Որովհե՞տ աստուածութիւն պատրաստաութեան ապաշխա-
րողին կայ կարևոր • 83 : Եթէ ապաշխարօղն զկարծիս ինչ պինդ
ունիցի որպէս հաւանական • 83 : Եթէ ժխտէ կամ լռէ ինչ 'ի մե-
ղաց • 86 : Յաղագս ուղղելոյ զսխալանս , և նախ զվաւերականու-
թեան խորհրդոյն • 87 : Չպարտաւոր հատուցման՝ եթէ ապատ կայն-
ցանիցէ կացուցեալ կայ զապաշխարօղն : Եթէ չկայ ազդ արարեալ
նմա զպարտս հատուցման • 88 : Օրէ՞ն կայ ազդ առնել նմա զսխա-
լանս խոստովանութեան՝ առանց խնդրելոյ 'ի նմանէ հրամանն • 89 :
Պարտք պաշտելոյ զնորհուրդ ապաշխարութեան , և և վատնեալ

մահու : Պաքրա կոչ քահանայի պատրաստել և առնուլ հրամանն պաշտելոց զնորհուրդ ապաշխարութեան · 90–92 : Որ ինչ կարևոր են խոստովանահօր յընդունել զնոստովանութիւն · 353 : Ո՞րպէս պարտ կոչ վարել նմա ընդ որս ՚ի մերձաւոր վտանգս մեղաց կան · 359–363 : Ընդ ուսակացեալս և դարձադարձիս անկեալս · 365–369 : Որ ինչ հարցուածս պարտ է նմա առնել ապաշխարողաց · 369–381 : Ո՞րպէս պարտ կոչ նմա վարել ընդ մանկունս և ընդ աղկունս · 381–385 : Ո՞րպէս ընդունել զնոստովանութիւն խլից և համբոյ · 386 : Ո՞րպէս վարել ընդ հիւանդս ՚ի հոգեվարս · 387 : Ո՞րպէս ընդ դատապարտեալս ՚ի մահ · 388 : Ո՞րպէս ընդ ապստամբեալս ՚ի դիւաց · 390–394 : Ո՞րպէս ընդ կանայս · 395 : Ո՞րպէս ընդ հոգեհարս · 385 · 396–421 : Ո՞րպէս առընթեր կալ հիւանդաց ՚ի հոգեվարս · 422–438 : Որ ինչ յայնժամ իշխանութիւն է նորա ՚ի վերայ վերապահելոց · 65 · 432 : Զի չէ օրէն խոստովանահօր հետազօտել զանուն մեղսակցի ապաշխարողին · 32 : Խրատ առ խոստովանահարս · 498 : Տես և Վերապահեալ · Կնիք խոստովանութեան · Հրապոյրք ՚ի խոստովանութեան :

Խոստովանութիւն անվաւեր ՚ի կողմանէ խոստովանահօր · Բ · 33 : Անվաւեր ՚ի կողմանէ ապաշխարողին , և մեղսակցի ՚ի պղծութիւն : Ո՞րպէս պարտ կոչ զնոստովանութիւն անվաւեր վաւերացուցանել առ նմին խոստովանահօր · 34 : Յաղագս ռամկին և տգիտի , որոյ չկոչ ոչ զտեսակ և ոչ զթիւ մեղաց բացատրեալ · 35 : Ե՞րբ զնոստովանութիւն պարտ կոչ երկրորդել · 36 : Խոստովանութիւն զտակաց կան : Որոյ չկոչ դարձեալ մահուչափ լինչ մեղս՝ պարտ կոչ նոցա առնել զտարեւորն խոստովանութիւն : Եթէ գիտիցէ որ զի խափանելոց է ՚ի զտակական խոստովանութենէ , պարտ կոչ նմա կանխել զայն : Որոյ չկոչ խոստովանեալ ՚ի զտակի , պարտ կոչ նմա վաղագոյն խոստովանել : Խոստովանութիւն երկրորդի ամին ընդացնու զպատասխանութիւն առաջնոյն · Ա · 342–344 : Պատիժք այսր պատուիրանազանցութեան · 344 : Տես և Ապաշխարութեան խորհուրդ · Արձակումն · Ապաշխարանք :

Խորհուրդք եկեղեցւոյ զի՞նչ են · Բ · 439 : Օրի՞ն կոչ յայնոսիկ հաւանական կարծեօք վարել · Ա · 21 : Ե՞րբ օրէն կոչ պաշտել զնորհուրդս պայմանաւ · — Ա · 401 · Բ · 442 : Պարտ կոչ մերժել զմեղաւորս ՚ի խորհրդոց · Երբ ՚ի հաղորդութենէ · Երբ ՚ի պահէ · Ա · 401 · 402 : Յաճախել ՚ի սուրբ խորհուրդս · Բ · 414–424 : Նիւթ և ձև խորհրդոց · Բ · 440–442 : Պաշտել զայնս անարժանից · Բ · 444 : Կեղծեօք պաշտել կամ ընդունել զայնս · 443 : Դիտաւորութիւն պաշտօնեի խորհրդոց · 441 · 442–446 : Ա · 462–466 : Վանն վաւերաբար և ըստ օրինի ընդունելոց զայնս կարևորք · Բ · 446 : Խնդրել զայնս ՚ի մեղաւորէ կամ ՚ի բանադրելոց կոչ օրէն · Բ · 447 : Օրի՞ն կոչ տալ դրամս պաշտօնեի խորհրդոց · 447 : Արգասիք խորհրդոց և կնիք · 448 :

Խոստումն հերետից զի՞նչ է , և զի՞նչ եթէ ոք առանց այնը ընկալցի զաստիճանս սրբոյ կարգին · Բ · 459 : Արատութիւնք որոց ընկալեալ կոչեն զնոստոստումն հերետից · 508 · 459 : Զի պարտ է նոցա կրել զձև երկղեկական և զնոստոստումն · 460 : Զրկումն նոցա յատենական և ՚ի կանոնական արատութենէ · 460 :

Խուլ · տես Համր :

Խարտեամայութիւն · տես Կրօնք :

Խրատելոց զեղբայրն պարտք · Ա · 94 : Ժողովրդապետի · 163 : Մեծատուն · 348 · 393 :

Ծ

Ծառայից առ տէրթս իւրեանց պարտք · Ա· 151 : Ինքնօրէն հատուցումն զկիման իւրեանց · 226 : Գողնիք նոցա · 232 : Անկանոնութիւն նոցա : — Բ· 293 : Օրէնն է նոցա ընդունել զնորհուրդս 'ի մէնաստանի՝ յորում կան 'ի ծառայութեան · 347 : Որ աշխատեցուցանէ 'ի ոճի սուղ լինէ զայլ և այլ ծառայս · Ա· 137 :
Ծնողաց առ որդիս պարտք · Ա· 148 : Տես և Հայր և Մայր :
Ծոմ· ծոմապահութիւն · Ա· 18 : Տես և Պահք :

Կ

Կախումն · Բ· 263—265 · 475 :
Կամաւորի հանգամանք և զանազանութիւն · Ա· 63 · 70 :
Կարգ· Մէն մի յեօթանեցունց կարգաց իւրէ խորհուրդ· Բ· 139 · 450 : Նիւթ և ձև խորհրդոց 'ի Քրիստոսէ իւրեն սահմանեալ· 140 : Ո՞ր իւրէ նիւթ սրբոյ կարգին, ձեռնադրութիւն թէ առնութիւն սպասուց · 141 · 449 · 481 : Պաշտօնեայ և արգասիք կարգին · 451 : Կարգ արգել պահպին · տես Պահ և Հարամախօսութիւն : Որ ինչ իրիք 'ի վաւերական և յօրինաւոր ընդունելութիւն կարգին · Բ· 452 : Ցումմէ օրէն իւրէ ընդունել զկարգ · 452 : Որ ինչ գիտութիւն իւրին դրի յընդունողաց զկարգ · 453 : Որ ինչ ապրուստ իրիք վասն նոցա · 454 : Չի ըստ կարգի պարտ է ընդունել զառաքինութիւն կարգին, և միջոց ընդ առաքինութեան · 455 : Տեղի ձեռնադրութեան և հասակ · 456 : Տիրահրաւէր կոչումն · և այլ ոմանք յընդունողաց զկարգ անհանին յարգելս · 457 : Տես և զիւրաքանչիւր առաքինութիւն կարգին, այսինքն Խոնարհութիւն · Դիմառապանութիւն · Ընդհերցողութիւն · Երգմնեցուցչութիւն · Ջահընկալութիւն · Կիսասարկաւագութիւն · Սարկաւագութիւն · Քահանայութիւն :
Կարգապետաք զինչ ինչ կարիցեն անօրինել· Ա· 53 · 535 : Բ· 277 · 500 · 502 : Իշխանութիւն նոցա 'ի վերայ վերապահելոց · 93 · 511 : Իշխանութիւն բանադրելոյ · 220 :
Կէն · տես Ամուսին :
Կիսասարկաւագութիւն զինչ է, և զինչ նիւթ նորա և ձև և պաշտօն · Բ· 463 : Որ ինչ կարևոր առ այս կարգ · 463 · 464 :
Կիւրակէ · տես Տօն :
Կնիք խորհրդոց · Բ· 448 :
Կնիք խոստովանութեան · Բ· 104 : Ո՞յք պարտականք էին այնմ· 105—107 : Անկանիլն ընդ կնքով նեղելն և մեղք · մեղսակիցն և մեղք · պատճառք մեղացն · ապաշխարանք · բանք յարտակից մեղացն · յայտնութիւնք և առաքինութիւնք · խղճահարութիւնք · Թերութիւնք բնականք · 108 · 109 : Յաղագս ընդունելոյ զխոստ ապաշխարողի խոստովանութիւն · 110 : Ո՞ւր ուրեք չկան պարտք կնքոյ · Հրամանն ապաշխարողի · 111 : Լուծանիլ զկնիք որ ասիցէ թէ 'ի մէնաստանին ուրեք և այլն · 112—115 : Օրէնն էին խոստովանահօր զգուշանալ 'ի միաստուց · 115 : Օրէնն էին նմա առ զսխատակ խոստովանութեան : Չկնիք 'ի սպառնալ ապաշխարողի : Օրէնն էին հաւանական կարծեօք վարել 'ի մահինս յայտմիկ · 116 :
Կնքահօր մկրտութեան հանգամանք · Ազգականութիւն հոգևոր 'ի ձեռն մկրտութեան և զրոյնի՝ լուծիչ պսակի : Չկնիչ եթէ ծնօղք

մկրտիցեն զմանուկն. Պարտ է հնգաւօր ըլ լոյծ սահմանեալ՝ի ծնողաց մանկանն. Ո՞եմ չէոյծ օրէն կալ հնգաւայր. Ա. 415–418: — Բ. 449: Կնգաւայր գրոշմին. 423:

Կնգամայր. տես Կնգաւայր:

Կոչումն՝ի կարդ եկեղեցական և՝ի կրօն. Բ. 383. 584. 457: Որ խափանէ զկոչումն. 501. Ա. 448:

Կուսանք. տես Հաւատաւորք:

Կուսապղծութիւն քանիպատիկ մեղք լոյծ. Ա. 206: Իցի՞ն ինչ պարտք հատուցման կուսապղծին, եթէ կոյսն հաւանեալ լոյծ. 257: Եթէ կուսապղծին լոյծ ուխտ ողջախոհութեան. 97: Եւ զինչ եթէ բռնաբարեալ լոյծ կամ ապառնալեօք հաւանեցուցեալ զաղջիկն. 258: Զինչ եթէ խնդալիս կամ կեղծեօք խոստացեալ լոյծ առնուլ զնա կնութեան. 258: Զինչ եթէ մարթի էր աղջկանն գուշակել զնա բէնութիւն. 259: Որ ինչ այլ ազատ կացուցանեն յածելոյ՝ի կնութիւն զպղծեալն. 260–262:

Կուսաստան. տես Հաւատաւոր և Արգելավանք:

Կաթակ. եթէ յայնմի լոյծ կամք կոտակողին. եթէ մի եւեթ լոյծ վկայ. հրիտակ վասն կուսից. օրէն լոյծ Պատրն կամ եպիսկոպոսաց փակել զկաթակ: Ա. 516. 517. Բ. 327:

Կրկնամուսնութիւնք անկանոնք են. Բ. 290: Կարիցէ՞ եպիսկոպոս անօրինել զնոսա. 320: Նէս և կարգապետք. 345:

Կրճատել զանդամն լոյծ օրէն. Ա. 184: Զի անկանոնք են կրճատեալքն և կրճատօղք. Բ. 288–290: Ա. 182:

Կրօնաւորի պարտք աղքատութեան. Ա. 332: Պարտք ողջախոհութեան և փականաց. 357: Բ. 252: Արգել խոսելոյ կրօնաւորաց ընդ հատատուրս. Բ. 249: Պարտք հնազանդութեան. Ա. 358: Օրէն լոյծ կրօնաւորել՝ Թողեալ զծնօղս՝ի կարօտութեան. Ա. 362: Օրէն լոյծ կրօնաւորել ընդդէմ կամաց ծնողաց, կամ Թողլով՝ի կարօտութեան զորդիս, զեղբարս կամ զքոյր. Ա. 362: Որ խափանէ զոք՝ի կրօնաւորելոյ. Որ զկոչումն իւր ապաքար առնէ. Ա. 363: Օրէն լոյծ պարտաւորեալ կրօնաւորել. 364: Օրէն լոյծ ժողովրդապետաց կամ ժառանգաւորաց կրօնաւորել. 364: Կարիցէ՞ կրօնաւոր պատարագել ընդդէմ դիտաւորութեան մեծաւորի. Ա. 462: Պա՞րտ լոյծ կրօնաւորի խոստովանել միանգամ յամենայն. Բ. 5: Պարտք ժամակարգութեան. 465: Արտօնութիւնք կրօնաւորաց հանրական. 529–540: Արտօնութիւնք նոցա առանձնականք՝ի վերայ վերապահելոց և այլն. Բ. 541–552: Արտօնութիւնք նոցա խափանելք. 505: Ցումմէ՞ օրէն լոյծ կրօնաւորի ընդունել զսուրբ կարգ. Բ. 452: Ո՞եմ խոստովանիլ. Բ. 62. 547: Եպիսկոպոսունք կրօնաւորք պարտականք՞ն լոյծ՝ի պահպանութիւն ուխտից և կանոնաց. Ա. 550: Կրօնաւորաց ազատութիւն՝ի տասանորդէ. 555. 557: Եթէ կորուսանեն՝ի խաղի. Ա. 508: Որ բռնագաւազ զաղջիկ մնանել՝ի կրօն. Բ. 242:

Կրօնաւորութիւն զինչ է, և ոեմ է անկ հատատաւել զկրօնս. Ա. 548–550:

Կրօնք զինչ են. Ա. 100: Ընդդէմ կրօնից անօգտաշատութիւն, ախտարք, երազահանութիւն, վհճահամոյութիւն, մոկան դիւթականն, խաղատիմոյութիւն, փոշի համակրական, փորձել զԱստուած, սեղանակատարութիւն, շնորհավաճառութիւն և պատիժք նորա: 100–107:

Հ

Հաղորդակցութիւն ընդ բանադրեալս • Բ • 229 : Հաղորդակցութիւն կրօնաւորաց յարաւնութիւնս • 301 :
Հաղորդութիւն զաւակեան : Որոյ չկոյ հաղորդեալ՝ի զաւկի, պարտ կոյ նմա հաղորդել վաղագոյն : Որ գիտէ զի խափանելոց է՝ի զաւակեան հաղորդութենէ, պարտ կոյ նմա կանխել զայն : Զինչ է թէ զ՝ի բանադրանս կոյցէ կամ՝ի բանակ : Չի պարտ է՝ի ժողովոյ առաջնորդեալ հակղեցւոջ հաղորդել՝ի զաւակի : Ոչ քահանայապետ ասի կոչեն ազատք • Ա • 345–346 : Խնդիրք զհաղորդութենէ սրբոյ հաղորդութեան : Կարևոր կոյ հաղորդութիւն հարկաւորութեամբ մկնոցդի : Միով հնէթ անասնոյ քահանայագործել անվաւեր կոյ թէ ըստ ոչ օրինի միայն : Զօրութիւնք սրբոյ հաղորդութեան : Տեսողութեան անասնոյն արգասիք : Որ հաղորդի ներելի մեղք • 424–428 : Ոչ օրէն կոյ մատակարարել զհաղորդութիւն և հաղորդիլ իւրմէ : Օրէն կոյ հաղորդել որովք և կոյ մատամբք, կամ երկոքումբք եւս անասնոք : Օրէն կոյ հաղորդել զկայանի մեղաւորս : Օրէն կոյ հաղորդել՝ի հոգեհանգստեան պատարագի : Ե՞րբ օրէն կոյ հաղորդել • 428–432 : Չի պարտ է խոստովանել նախ քան զհաղորդութիւն : Որ՝ի պատարագէն լինէ զմեզս ինչ իւր, եւս և կեա քահանայագործութեան : Որոշ ինչ՝ի մեզոց կեա խոստովանութեան անկանի՝ի միտս : Օրէն կոյ երկբայանօք մեզոց հաղորդիլ • 434–441 : Չի պարտ է ծոմապահել նախ քան զհաղորդութիւն, և որ ինչ լուծանել զծոմ : 442–445 : Օրէն կոյ հաղորդիլ էն մարսեալ զկերակուր : Թէքանել կեա հաղորդութեան մեղք կոյեն : Ե՞րբ օրէն կոյ անծոմ հաղորդիլ • 445–450 : Պարտ կոյ վանն զկնդութեան հրաժարել՝ի հաղորդութենէ, կամ վանն ամուսնական պատուոց կատարելոյ, կամ վանն ապստամբէ : Որ աղաչեղահանդերձ կամ բռնութեամբ կամ անհամաձայն մատչի՝ի հաղորդութիւն • 450–451 : Տես և Թոշակ վերջին :
Համերոյ և խլեայ խոստովանութիւն • Բ • 26 • 27 • 104 • 386 : Պարտ կոյ պաշտել նոցա զվերջին օծումն • 157 : Անհամանութիւն նոցա • 288 :
Հայերոզական կենաց առաջնորդութիւն • Բ • 399–421 :
Հայերացած անհամաձայն եկեղեցւոջ՝ կոյ սրբապղծութիւն • Ա • 209 : Տես և Հերձուածք :
Հայհոյութիւն զի՞նչ է • Ա • 109 : Տես և Անէծք :
Հայր • Հօր առ որդի պարգեւք • Ա • 278 : Օրէն կոյ հօր անժառանգել զորդի, և երբ • 318 : Օրէն կոյ հօր կրօնաւորել՝ լքեալ զորդիս • 362 : Որ սրտիկու զկեցուսի որդւոյ, կամ սակաւ զնա՝ի կրօնաւորութիւն • 148 : Եթէ մկրտիցէ զորդի • 416 : Տես և Ծնողաց առ որդիս պարտք :
Հառաչական աղօթք • Բ • 428–432 :
Հասք Ժառանգաւորաց • տես Ժառանգաւոր :
Հաստատութիւն երկբայական առնկոյ ազատ զպատասխանն՝ի հաստատմանէ • Ա • 19 : Որ ոչն ողորմի աղքատին՝ պարտականն կոյ հաստատման • 226 : Պայմանք արդար հաստատման անձին • 226 : Ե՞րբ ուժք՝ի վերայ կայցեն պարտք հաստատման • 232 : Ներելի մեղք ածկելն պարտս հաստատման • 234 : Օրինաղանցութիւն իրաւաբանական ածկել պարտս հաստատման • 235 • 234 : Կոյն պարտականք՝ի հաստատութիւն գործակցեցք պատուիրանաւ և խրատատուք • 235 : Զինչ

Եթէ գողոյն վաղ խակ ՚ի մոխ եդեալ էր գողանալ· 236։ Զի՞նչ եթէ ոք խրատեսցէ ՚ի փոքրագոյն վնաս, կամ եթէ նահանջեսցէ զխրատս իւր, կամ եթէ առ ապիսութեան առեալ լիցէ զխրատն· 236։ Զի՞նչ որ տայ քոյէ անօրէն, կամ հրապուրէ, կամ տայ առատաձեռն գողոյ· 238։ Օրէն լիցէ որոց գնեն ինչ ՚ի գողոյ՝ հաստուցանել զայն նմին· 239։ Գործակից գողոյ 240։ Եթէ բաղուսք ՚ի միասին հուր հարկանեն զանէ· 240։ Որ գործակից լինի յահէ ինեաւս անձին· 241։ Որ արդելու չխոսիանել զինեան· 242։ Աւելիք բացասականք· 342։ Ո՞յք ՚ի գործակցաց առաւել լիցեն պարտականք· և զի՞նչ եթէ պարտաւէրն Թոզոյ ուժիք ՚ի նոցանէ զբաժին պարտուցն· 242։ Որ արդելու զբարի լինչ ուրուք· 243։ Որ խափանէ զդանձ հաստատակաց յիրաւանց խրոց, և որ խափանէ ուժիք զբարի լինչ առ առելութեան· 243։ Առ ո՞ պարտ լիցէ առնել զհաստուցումն եթէ ստոյգ ուրուք լիցեն լինչք, և առը նոցա հեռի· 244։ Եթէ առը իրին առնուցու զայն ուժգին ՚ի գնողէն· 245։ Եթէ առը իրին լիցէ անստոյգ· 245։ Զգաեալ իրաց· զգանձուց գտելոց· զանասնոց որսացելոց· 246։ Որ լինչ պարտք հաստուցման որոց ժառանգէն զօտարին լինչ անգիտութեամբ· 248։ Որ գողօնս խառն ընդ իւրն ընդունի ՚ի գողոյ· 249։ Որ առնիւ ինեաս լինչ այլոյ՝ համարեալ նուազ քան զոր էն· 249։ Որ ժառանգէ զայլոյ լինչ գիտութեամբ· 250· Եթէ առձէ գին նորա· և եթէ ծախս լինչ պիտանիս արարեալ լիցէ ՚ի նմին· 250։ Եթէ գողօնն կորնչելոյ էր ՚ի ձեռս առեալն նորին· 251։ Եթէ կասկածանօք ոք գնէ· 251։ Որ նենգէ ՚ի առուրս արքունի· 252։ Որ լինչ պարտք մարդասպանին· 253։ Որ լինչ ընդ կենաց և ընդ համբաւոյ հաստուցումն· 253։ Որ զոր այլ ընդ այլոյ սպանանիցէ՝ պարտականն լիցէ հաստուցման, և անկանիցի ընդ բանագրանօք և ընդ անկանոնութեամբ· 254։ Որ ՚ի սպանելոյն ընդունի Թոզութիւն՝ պարտականն լիցէ որդւոց նորա· 255։ Զի՞նչ պարտի ժառանգաց սպանելոյն· 255։ Զի՞նչ ՚ի համարել սպանութեանն այլոյ ուժիք· 251։ Որ սպանանէ զոք՝ անցեալ ըստ իրաւացի չափ պաշտպանութեան կենաց իւրոց· 256։ Ժառանգք պատուհասելոյն ՚ի մահ՝ պարտականք լիցեն առժիցն· 257։ Պարտք հաստուցման կոտտապղծի· առ Կոտտապղծութիւն։ Պարտք ընացողաց· առ Ընութիւն։ Պարտք վաղագոյն հաստուցման, և առժիցոյ զինեաս յառաջումն· 263։ Ոչ է պարտ արձակիլ զսպաշխարոյն էն ըզպարտսն հաստուցեալ· 266։ Մարթ է ՚ի ձեռն այլոյ հաստացանել, այլ զի՞նչ եթէ նա ոչ հաստուցէ· և զի՞նչ եթէ խոստովանահայրն պատուիրէ տալ զայն ՚ի պատարագիս՝ յայնկի գոլով առեալն իրին· 366։ Ե՞րբ օրէն լիցէ խոստովանահօր լուծ զպարտս հաստուցման· Բ· 81։ Հաստուցումն համբաւոյ· Պա՞րտ լիցէ արծաթով փոխարինել չարահամբաւութեան· Ա· 325։ Առ ո՞ր ըստ կարգի պարտ է առնել զհաստուցումն· 267–270։ Որ լինչ պատճառք ազատ կացուցանեն զպարտատանն ՚ի հաստուցմանէ· 270–274։ Պարտք հաստուցման վաշխառուաց և ժառանգաց նոցա· 290։

Հարուած Եկեղեցականին· առ Եկեղեցական։

Հարնախօսութիւն· եթէ մանկունք յառաջ քան զխս եօթն ամաց առնիցեն· որ առանց կամելոյ պարտ յանձն առնուլ՝ արտաքս հարնախօսութիւն· որ գաւոյ և վրիպակաւ· Բ· 143։ Եթէ պայմանք պատճառս առեալ լիցեն դաշինն։ Հարնախօսութիւն առ երկիւղն· Բ· 144։ Պա՞րտ լիցէ խոստմանն լինել երկուստեք· պա՞րտ լիցէ արտայայտել զայն· 145։ Եթէ հայր խոստանայցէ վասն որդւոյ

'ի լուր նորա · 146 : Պարտ իցէ յերկբայս նպաստել ազատութեան : Որ խոստանայն չառնուլ զոյլ ոք կինութեան : Որ ոտ զինչան : Չչէ ևս հասկլոց յարբունս · զջրափմանց խոսկելոց · 147 · 148 : Ո՞րպէս և երբ պարտ իցէ կատարել զհարանախօսութիւն · 148 : Եթէ ոք խոստանայ երկուց օրիորդաց : Մարթ իցէ որդւոյ առանց պիտութեան և հաւանութեան ծնողացն խոստանալ · 149 : Որ հրաժարէ յեա հարանախօսութեան · 151 : Հրիտակ պայմանաւ չամուսնանալոյ · 150 : Լուծման հարանախօսութեան պատճառք · Ա · Հարսանիք ընդ այլում · Բ · Հաւանութիւն երկուստեք · Գ · Արգելք 'ի վերայ հասեալ · Անհաւասարութիւն պայմանի · Անհաւանութիւն ծնողաց · Դ · Եղեւնագործութիւն · Ե · Ցեղաշրջութիւն հանգամանաց · Զ · Տարագնացութիւն · Է · Լրումն սահմանեալ ժամանակի · Ը · Ուխտ կրօնաւորելոյ կամ սուրբ կարգ · 153—160 : Կայրևոր իցէ առ այս իշխանութիւն դատաւորի · և զինչ հաւասարիք խնդրին առ այս · 160 :

Հաւանականութեան աստիճանք · Ա : 22 :

Հաւանութիւն ընդ մեզս երբ իցէ համարելի · Ա · 12 · 71—73 :

Հաւատաւորայ պարտք հնազանդութեան · տես Կրօնաւոր : Պարտք վկականաց · տես Արգելականք : Ո՞ւմ պարտին հնազանդել · Ա · 361 : Ընտրութիւն վանամօր · 361 : Արգել խոսելոյ ընդ հաւատաւորս · Բ · 249—251 : Արտաւնութիւնք նոցա · 302 : Ազատութիւն 'ի տատանորդէ · 357 : Ո՞ւմ կարիցեն խոստովանել · 62 : Պարտականք իցեն 'ի ժամերգութիւն · 464 : Որ ինչ հարցուածք կարեւորք նոցա 'ի խոստովանութեան · 378 : Որ բանագատէ զալչիկ մտանել 'ի կրօն · 242

Հաւատք · Ա · 86 : Ի հաւատոյս չէ օրէն վարել կարծեօք : Մեզք հակառակ հաւատոց · 88 : Կերպարծութեան հաւատոյ պարտք · 99 :

Հերեսիկոս · կարիցէ եպիսկոպոս արձակել զհերեսիկոս ապաշխարօղ · Բ · 315 : Որ ինչ խնդրի առ հերեսիկոսութիւն · Ա · 88 : Ե՞րբ պարտ իցէ ամբաստանել զհերեսիկոս · 394 : Բանագրանք ընդդէմ նոցա · Բ · 257 : Ընդդէմ պրոց նոցա · 359 :

Հիւանդաց առնութիւնք կալոյ պարտք և եղանակ · Բ · 422—458 :

Հրիտակ · տես Կտակ :

Հռչակութեան տեսակք · Ա · 74 · Պարտ իցէ բացատրել զայնս 'ի խոստովանութեան · 74 : Դատնաքէութիւն նիւթոյ իցէ՞ 'ի մասին յայսմիկ ընդունելի · 201 : Շօշափումն · Պար · Հայեցուած · 202 · 205 : Հեշտութիւն ընդ զաղջագործութիւն և ընդ խորհուրդ զաղջագործութեան · 75 :

Հնազանդութիւն · տես Կրօնաւոր :

Հոգեբարձու որդոց · տես Որբ :

Հոգեվար · որպէս պարտ իցէ խոստովանահօր վարել ընդ հոգեվարս · Բ · 387 · 422—458 : Որ ինչ յայնժամ իշխանութիւն է խոստովանահօր 'ի վերայ վերապահելոց · 452 · 65 :

Հրապոյրք 'ի խոստովանութեան · Բ · 417—421 : Ե՞րբ պարտք իցեն յայտնութեան · 421 · 422 : Եթէ կին հրապուրէ զխոստովանահայրն · 422 : Եթէ խոստովանահայր շօշափէ զկին հրապուրիչ : Եթէ եհեակ իցէ նա յուղղութիւն · 423 : Օրէն իցէ արձակել զապաշխարօղն նախ քան զյայտնութիւն · Պարտ իցէ առնել նմա զայն գրով · Զինչ եթէ չկամիցի առնել զայն անձամբ · 424 : Զբանագրանաց՝ յոր անկանի · Զինչ եթէ ապգատարութիւն իցէ նմա անօգուտ · Այլոց ևս պատուոյ պարտք յայտնելոյ զայն · 425 : Զինչ եթէ երկբայելի իցեն

հրապոյրքն • 126 • 127 : Ցաղագս չիարելոյ այսպիսեաց պատարագել • 127 :

Զ

Զեռնադրութիւն նիւթ սրբոյ կարգին • Բ • 139 • 450—481 : Ո՞րպէս պարտ իցէ լինուլ զիերութիւն ձեռնադրութեան • 481 : Զեռնադրութիւն ՚ի դրաշխէն • Ա • 420 :

Զև խորհրդոց • Բ • 441 • տես և յիւրաքանչիւրս ՚ի խորհրդոց : Զև պաշտելոյ զանօրինութիւն • 209 : Կցորդութիւն ձևոյն ընդ նիւթոյ • 441 : Ա յլայլութիւն նորին էական և պատահական • 442 :

Ճ

Ճգնութիւնք • Բ • 412 : Ա յն որ կարձէն զկեանս • Ա • 183 :

Մ

Մահան դիւթահան • տես Կրօնք :
Մահուչափ մեղք • տես Մեղք :
Մաղմոս • տես Սկիհ :
Մայր • օրէն իցէ մօր առնուլ դեղ առ ՚ի վիժել զսաղմն • Ա • 194 : Պարտ իցէ մօր տալ հատանել զարդանդ իւր վասն միգրաւթեան որդւոյն • 405 : Տես և Ծնողաց առ որդիս պարտք :
Մանկաբարձ • տես Դայեակ :
Մանկունք • տես Տղայք :
Մանուածուփ • տես Սկիհ :
Մատուռն կամ Սեղան առանձին • Բ • 326 • 349 : Ա • 142 : Օրէն իցէ եպիսկոպոսի տալ հրաման պատարագելոյ ՚ի տան • Բ • 326 :
Մարդասպան • տես Սպանութիւն :
Մարդասպանին պարտք հատուցման • տես Հատուցումն : Անիանոնութիւն սպանողաց • Բ • 294 • 295 :
Մարմնակալ • տես Սպասք պատարագի :
Մարտիրոսութիւն • օրէն իցէ գիմել ինքնօրէն յոյն • Ա • 403 :
Մաքրիչ • տես Սպասք պատարագի :
Մեծատուն որ ոչն պարծի տալքատին՝ պարտական իցէ հատուցման • Ա • 226 : Պարտ իցէ մեծատան փրկել զգերիս հատատացեալս • 224 :
Մեղսակից • նիւթահան գործակցութիւն ՚ի մեղս իցէ օրինաւոր • Ա • 98 : Մեղսակից միմեանց պարտութեան • 196 : Մեղսակից գողութեան • 235—242 : Մեղսակից վաշխառուաց • 290 : Որ առ ահի ինքսեան անձին գործակից լինի ՚ի մեղս այլոյ • 241 : Գործակից ՚ի հարցուած եկեղեցականի • — Բ • 253 : Գործակից ՚ի սպանութիւն • 279 : Իցէ օրէն յայտնել ՚ի խոստովանութեան զանուն մեղսակցին • 31 : Ոչ երբեք է օրէն խոստովանահօր հետաքննել զայն • 32 • 108 : Չի անվաւեր է խոստովանութիւն առ մեղսակից խոստովանահօր ՚ի մարմնական մեղս • Բ • 74 : Խոստովանահայր մեղսակից ՚ի սպրդութիւն • տես Խոստովանահայր : Կարիցէ եպիսկոպոս արձակել զայնպիսին խոստովանահայր, որոյ արձակեալ ևս իցէ զմեղսակից իւր • 314 :
Մեղք մահուչափ և նեխուկ • Ա • 69 : Որ ինչ առ մահուչափ մեղս թնդրին • 70 : Խմաստասիրական մեղք • Ա • 73 : Իղձ և մխորժ մեղաց • 74—78 : Որոշումն մեղաց ըստ տեսակի և ըստ թուոյ • 78—83 :

Աղբատք մահուջամբ և ներելի մեղաց • 83 : Քանի՞ օրինակաւ մեղք մահուջամբ փոխին ՚ի ներելի, և ներելիք ՚ի մահուջամբ • 83 • 84 : Զի՞նչ և ՚ի հաւանական վտանգի մահուջամբ գոլոյ • 84 :
Մենամարտ • Որ ինչ վարդապետութիւնք զայսմանէ գտառապարտեալք • Ա • 196 : Ե՞րբ էին օրինաւոր • 197 :
Մենավանաւորութիւն • Ա • 185 :
Մեծաւոր վանից մեղաց • Բ • 358 : Ո՞րպէս պարտ էին վարել խոստովանահօր ընդ որս յայնպիսեաւք վտանգի կայցեն • 359—363 :
Միւռոն • տես Օրհնութիւն :
Մծղնէութիւն • Ա • 207 :
Մկրտութիւն քանիպատճիկ է • Նիւթ նորա • Օրի՞ն էին վասն մկրտութեան հաւատանել զարդանդ մօր : Օրի՞ն էին մկրտել զմանուկ յարդանդի մօր, և յորմէ՞ յանդամոց • Ա • 405—406 : Կարևոր իցէ երբեմն հեղուման • Զև մկրտութեան • Պաշտօնեայ նորին • Յապաղումն և առանձին մկրտութիւն • 406—409 : Պատիժք վերսանին մկրտողաց • 410 : Սպասն վիժեալ և որդիք անհաւատից էին՞ն ընդունակք մկրտութեան • Զի՞նչ եթէ չիամիցին ծնօղքն • Օրի՞ն էին դարձուցանել անհաւատից զորդիս նոցա գնածոյս • 410—413 : Մկրտութիւն պայմանաւ • Զմանկանց արիւնէ ՚ի բաց • Զմկրտելոց ՚ի ձեռն աշխարհականաց, կամ ՚ի հերետիկոսաց • զի՞նչ եթէ էին երկբայելի մկրտութիւնն • Արատոտութիւնք մկրտութեան • 412—415 :
Կնքահայր մկրտութեան • տես Կնքահայր :
Մոռծական ազօթից կարևորութիւն • Բ • 397 • 510 : Եղանակ առնելոյ զայն • 512—516 :

Յ

Յամեալ հեշտութիւն • տես Հեշտութիւն :
Յանդուգն դառնոզութիւն • Ա • 518 :
Յիմարք չէն ընդ օրինօք • Ա • 44 : Օրի՞ն էին հաղորդել զյիմարս • 347 : Իցի՞ն ընդունակ դրոշմի • 421—423 : Իցի՞ն ընդունակ վերջին օծման • Բ • 136 : Որ ինչ ապաշխարանս պարտ է սահմանել նոցա ՚ի խոստովանելն • 39 • 40 : Պա՞րտ էին ամենայնի հաւատացանել այնպիսեաւք ըստ պարտս • 176 : Անկանոնութիւն նոցա • 286 :
Յորելեան • Բ • 49—54 : Տես և Ներողութիւն :
Յոյս • Ա • 88 : Մեղք հակառակ յուսոյ • 88 : Ներդործութեան յուսոյ պարտք • 99 :
Յուսահատութեան մեղք • Ա • 88 :

Ն

Նախապրութիւն զհաւատացեալն վարձուց • Ա • 152 • 221—225 : Զպատարագաց • 459 : Նախապրութիւն ընդդէմ եկեղեցական օրինաց • 55 • 60 : Ընդդէմ արոց • Բ • 535 :
Նամակառուց պլոց բացումն և ընթերցումն • Ա • 320 : Պատկ ՚ի ձեռն նամակառուց • Բ • 166 : Զի պարտ է գոլ և այնպէս պատկերացն ՚ի շնորհս • 164 :
Նենգ ՚ի տուրս արբունի • Ա • 252 : Ի խաղն • 309 : Նենգաւոր գիտացեալ գաղանիք • 322 : Նենգ ՚ի տուրևառս • տես Տուրևառ :
Ներելի մեղք • տես Մեղք :
Ներողութիւն • Բ • 48 : Զվիճակաւոր ներողութիւն մանրի՞ էին ընդու-

նել ըստ մասին : Հոգեբուժել • Բ• 49 : Պարտ էին զպայմանեալ գործս ի միում ևերթ ևօթնևկի կատարել • զաղօթից • զողորմութեն նէ • զխոհականութենե այնց • Բ• 50 : Անվաեր խոստովանութեամբ բառնին բանադրանք և վերստացեալ արդեք • Բ• 51 : Մեղանչէ արձակեալն ի վերստացելոց՝ եթե չկատարէ զպարտս հոգեբուժելի : Ինչ որ մոռացայցե զվերստացեալ ինչ մեղս • Բ• 52 : Որ պատէհ առեալ զհոգեբուժն՝ մեղանչէ մեղս վերստացեալս • Բ• 53 : Օրէն էին նախ քան զՀատուցումն արձակել ի հոգեբուժի • Բ• 53 : Յորմց մեղաց և ի բանադրանաց մարթ ի՛ցէ յայնժամ արձակել : Վիճելիք ինչ յաղագս սուբբ ատրուց • Բ• 54 :

Նեղբնի • օրէն էին նեղբնիացուցանել զորդիս • Ա• 184 : — Բ• 290 :

Նզովք • տես Բանադրանք :

Նիւթ խորհրդոց • Բ• 441 : Անյարմարութիւն նիւթոց էական և պատահական • Բ• 442 : Տես և յիւրաքանչիւրս ի խորհրդոց :

Նշան • տես Հարմարասնութիւն :

Նշխարաց սրբոց գողօնք • Ա• 229 :

Նորընծայք ազնուք էին յաշխարհական առեն • Բ• 307 : Թաղումն նոցա • 358 : Խոստովանութիւն նոցա • 346 : Ձեռնադրութիւն նոցա • 348 :

Շ

Շահակցութեան արդար պայմանք • Ա• 311—314 : Քանիապատիկ օրէն է վաճառն առնել շահակցութեան • 314 :

Շնորհք խորհրդոց • Բ• 448 : Տես և Խորհուրդք եկեղեցւոյ :

Շնութիւն • Ա• 206 : Ինչ պարտք էին կնոջ շնացելոյ • 262 : Պարտական էր նա յայտնել որդւոյ իւրում անհարազատ ընութիւն իւր, և որդւոյն պարտ էր հաւատալ նմա • 262 : Ինչ պարտք էին առն շնացողի, թէ և չէր իւր հրապուրեալ զկինն շնացեալ՝ ընդ հարազատ որդիս առն իւրոյ խառնել զզաւակին • 264 : Ինչ եթե կիզակարծ էր զաւակին հարազատութիւն • 264 : Ինչ եթե յանկիելանոց զնա արկցէ • 264 : Օրէն էր համանուագ ի պաշտպանութիւն կնոջ իւրոյ սպանանել զայր կնոջն շնացելոյ յարձակեալ ի վերայ իւր • 192 : Լուծումն պատկի վասն շնութեան : — Բ• 213 • 216 : Ցեա բաժանման ի յամուսնոյ կարէր կրօնաւորել • 216 :

Ո

Ողորմութեան պարտք • Ա• 93 : Ժողովրդապետի պարտք ողորմելոց աղքատաց վիճակի իւրոյ • 170 • 576 : Եպիսկոպոսին • 179 : Ի յոբելինի • Բ• 54 :

Ողջախոհութիւն • տես Կրօնաւոր :

Ողջունել զաւետիսն կամ զնշանի պարտք էին • Ա• 92 :

Որբոց օրէն էր պարտ յանձն առնուլ, կամ պարզեա տալ այլոց • Ա• 316 : Ոչ էին մնօրինել զդրամ իւրեանց • 254 :

Որդւոց առ ծնօղս պարտք • Ա• 147 : Ինչք նոցա և իրաւունք • 216 : Որդւոյ և հօր առ միմեանս պարտիք • 278 : Որդւոց էն էս ազատացելոց կամ զաւուցելոց առեալ փոխ • 282 : Եթե որդի հայրենի դրամին առնիցէ վաճառաշահ • 313 : Պարտ էր որդւոյ հաւատալ վկայութեան մօրն՝ եթե վկայեսցէ ի հնութենե ծնեալ զնա • 262 : Փոխ առեալ նոցա առանց գիտութեան հօրն • 283 : Եթե կորուսա-

նեն 'ի խաղն • 308 : Օրէ՞ն էդէ նոցա կրծնաւորել՝ Թողեալ զծնօղս 'ի կարօտութեան , կամ ընդդէմ կամաց նոցա • 362 : Որ առանց հաւանութեան հօրն հարսնախօսէ • Բ• 149 :
Որպ• անասունք կալեալք յորսս ո՞ւմ անկ էդեն • Ա• 247 : Արգելեալք կրծնաւորաց որպ • 247 :
Ոխտ երկայնելի • Ա• 17 : Զի՞նչ է ոխտ • 117 : Վասն ոչ բարւոյ առ բարեաւ ոխտ • 119 : Ոխտ չինդրելոյ երբէք անօրինութեան • Ոխտ ամենանոտալոյ • Ոխտ ոչ ևս լինչ ոխտաելոյ • 119 : Ոխտ պայմանաւ • 120 : Տրոհական ոխտ • և որ առանց յիշելոյ կատարէ զոխտ իւր • 121 : Եթէ անցցէ պայմանեալն ժամանակ • Մէղք յամեցման ոխտին • Ոխտ կրծնաւորական • 122 : Փոխոխութիւն ոխտելոյ իրն • Բարձրութիւն ոխտին • 123 • 124 : Փոխանակութիւն ոխտի • 125 : Տնօրինութիւն ոխտի , և պատճառք նորին • 125 • 126 : Զի՞նչ եթէ ոխտն էդէ 'ի նպատս այլոց • Ո՞ւմ անկ է անօրինել զոխտս • 126 • 127 : Վերապահեալ ոխտք • 127—128 : Կարող էդէ Պատն անօրինել զոխտս հանդիսականս • 129 : Կարի՞ էր եղիակոպոս անօրինել զոխտ ողջախոհութեան • — Բ• 180 : Ոխտ ողջախոհութեան ընդունողաց զսուրբ կարգ • եթէ ոք անպիտանութեամբ այսր պարտուց ընկալցի զկարգ • եթէ չիցէ յարբունս հասեալ • որ առ ահի ընկալցի • Բ• 463 : Որ ոխտիս ողջախոհութեան ապականէ զկոյս • Ա• 261 : Ոխտ արգել պսակի : Տես Հարսնախօսութիւն և Պսակ :
Ոչնակացեալք 'ի մեղս և գարձադարձիս անկեալք • պրպէս պարտ էդէ խոստովանահօր վարել ընդ այնպիսիս • Բ• 565 • 576 :

Չ

Չարամաղթութիւն • Ա• 82 :
Չարամասեան զի՞նչ է , և զի՞նչ գրողացն պատիժք • Ա• 327 :

Պ

Պահապանք ազա՞տք էդեն 'ի պարտուց պատարագի • Ա• 144 : Պարտք նոցա • 391 : Օրէ՞ն էդէ բանտարկեալոյ կաշառել զնոսա • 398 :
Պահք • հրաժարել 'ի մսոյ , 'ի կիթեղինաց , 'ի ձարպոյ • Ա• 328—330 : Որոց հրամայեն է ուտելոյ զմիս , օրէ՞ն էդէ նոցա ուտել և ձուկն • 330 : Սկիզբն եւթ յաւուրս Յոմապահոց պարտ է ձաշել • Բաժանումն ձաշոյ • ըմպելիք • չիքոլաթ • երեկոյաձաշիկ • որ բազում անգամ յաւուրս պահոց ձաշակէ միս կամ այլ կերակուրս • 331—334 : Որ լինչ ազատ կացուցանեն զոք 'ի պահոց • 333 : Զմանկանց , զծերոց , զաշխատաւորաց , զուղևորաց , զձոխ ձեռագիտաց • Եթէ մարթ էդէ ձեռագիտին Յոմապահել առանց Յանր նեղութեան • Որ անպատճառ ձեռնարկէ յաշխատութիւն • Ե՞րբ վասն բարեգործութեան օրէն էդէ չՅոմապահել • 337—342 :
Պաշտօնեայ խորհրդոց պարտի՞ գոլ 'ի ընթրիս • Բ• 445 • 444 :
Պատարագ • տես Վհանանայութիւն :
Պատարագի ընթերցակայութեան պարտք • Ա• 37 • 40 • 137 : Վխտաւորութիւն • 137 : Մտադրութիւն • 138 : Ժամերգութիւն 'ի տեսնելն զպատարագ • Խոստովանիլ կամ լսել զխոստովանութիւն • Նկրտիլ կամ Ժողովել ողորմութիւն • 139 : Դուշնաքէի մասին լինչ պահպանութիւն • Որ կրկին պատարագս լսէ կէս 'ի կէս • 140 : Ասմո՞ մարթ էդէ լսել կամ տեսանել զպատարագ • Ո՞ր օրէն էդէ լսել

զպատարագ ՚ի ոճս • 141 : Ո՞ր իշխանութիւն կայ եպիսկոպոսի պատարագել • և կայ՞ նմա օրէն տալ հրաման պատարագելոյ ՚ի տուն • 142 : Որ ինչ պատճառք ազատ կացուցանեն ՚ի պարտուց տեսանելոց զպատարագ • 144–146 : Զի մեղանչէ մահուրձաւն որ շատ պատարագ • Ա • 464 :

Պատարագիք • օրէն կայ անկարօտ քահանայի ընդունել պատարագիս : Որ այլ և այլ պատարագիս վասն միոյ պատարագի ընդունի : Ո՞ր կայ օրէն արգել պատարագեալ : Զի օրէն է արգելուլ զնուաղն քան զարդար պատարագիս : Որ ընդունի զնուաղն՝ օրէն կայ նմա նուաղել զթիւ պատարագաց : Որ չմատուցանէ զպատարագ խոստացեալ ընդ դոյզն ինչ պատարագեաց : Որ սակ արկանէ զպատարագ • Որ խորհ ՚ի պատարագեաց • Բ • 452–456 • 488 : Զի՞նչ օրէն է ժամարարաց և եկեղեցականաց : Եթէ պատարագիչն կամ կաւակահատար Թոզչէ կամակար զմոմն խորհեալ : Որ ժողովէ պատարագիս : Որ փոխանակէ • Բ • 456–458 : Տես և ժամարար :

Պատարագամատոյց • կարևոր ՚ի պատարագի • Բ • 489 • 493 :

Պատեբազմ օրէն կայ գրգռել հաւանական կարծեաք • Ա • 198 : Օրէն կայ կոչել յօգնութիւն պատեբազմի զՔրիստիա հաւատոյ • 199 : Օրէն կայ զնուաղն գնալ ՚ի պատեբազմ, որոյ արգարութիւն կայ երկբայելի • 199 : Որ ինչ օրինաւոր ՚ի պատեբազմի • 199 :

Պար կայ երբեք օրինաւոր • Ա • 202 :

Պարգև • որ ոչն ունի իշխանութիւն պարգևելոյ • որ ընդունի պարգևս ՚ի պարտապանէ • Ա • 277 :

Պարգև ամուսնոյց առ իրեարս • Հօր և որդւոյ առ միմեանս • Ա • 278 : Պարգև ոչ ընկալեալ • պարգև արարեալ ՚ի ձեռն նուիրակի կամ նամականւոյ • 278 : Զի՞նչ եթէ կայ վասն բարերարութեան , չկարիցէ ընդունել զայն ժառանգն • 279 : Տուչութիւն պարգևին • կառարուածն • պարգև շռայլեալ • վախճանական պատճառ պարգևին • 279 : Վասն որոյ կրաց օրէն է նահաջել զպարգև : 280 • Պարգև հրեաական • 280 :

Պարտաւորի ինքն պարտ է խոստովանիլ զյանցանս • Ա • 396 : Եթէ յանձն առցէ տուտ մեղանս • եթէ զղջաթափիցէ զդատաստանն • 397 : Օրէն կայ նմա զդէմ ունել իշխանութեան • պաՓրտ կայ նմա փախչել • օրէն կայ նմա խորտակել զբանտ , կամ կաշառել զբանտապան • օրէն կայ և այլոց օգնել նմա • 398 :

Պարտք եթէ երկբայելիք կայն • Ա • 19 : Օրէն կայ պարտապանին նահատակել զի և կամիցի • 267 : Եթէ պարտապանն կայ կարօտ • 272 : Օրէն կայ պարտապանի կրօնաւորել • 364 :

Պատնկութիւն • Ա • 205 : Օրէն կայ Թողուլ զբաղս • 205 : Պատնկութիւն խօսեցեալոց կայ արգելօք մեղք այլատեսակ • 206 : Որք ընդ իբեարս նախ քան զՀարանին պատնկին , զինչ մեղս գործեն • 208 :

Պահակ • նիւթ , ձև և պաշտօնեայ պահկին • Բ • 162 : Օրէն կայ կեղծել զպահակ • Գողացիկ ամուսնութիւն • Բ • 163 : Պատճառք ամուսնութեան • Բ • 164 : Բաւականիք կայն նշանք ևեթ հաւանութեան • Բ • 165 : Պահակ ՚ի ձեռն վոխանորդի կամ նամականւոյ : Պայմանաւ հաւանութիւն : Ի ընուլ պայմանին ինդրի վերատին հաւանութիւն • Բ • 166 : Յաղագս օրինաւորապէս վարելոյ ամուսնութեամբ • զինչ եթէ անվաւեր լեալ կայ պահկն , կամ երկբայելի • օրէն կայ պահկիլ եթէ արգելք երկբայականք կայն ՚ի միջի • Բ • 168 : Օրէն կայ յերկբայս ինդրել կամ հաւատացանել զպարտս • Բ • 169 : Զի՞նչ եթէ վասնզ առողջութեան ՚ի վերայ կայցէ • Բ • 170 : Զինչ եթէ առ

հեշտութեան եւեթ գայցէն առ միմեանս ամուսինք, կամ մնօք շնութեան, կամ անարժան եղանակաւ, կամ յանպատեհ տեղւոջ և՛ ի ժամանակի • Բ • 71 • 72 : Եթէ այրն կոչ արգելեալ ուխտիւ կամ մծղնէութեամբ • Բ • 72 : Ներելի՞ կոչն նոցա ջոյնափնունք կամ յաճախ հեշտութիւնք • Բ • 173 : Ե՞րբ պարտ կոչ ամուսնոյ խնդրել• զի՞նչ եթէ ժխտեսցէ միանգամ կամ երկիցս • Բ • 174 : Ջի՞նչ եթէ բազմածին կոչ կինն, կամ եթէ մահուրշափ մեղօք խնդրիցէ մին• Բ • 175 : Եթէ ներելի մեղօք խնդրեսցէ, կամ արբեալ կոչ և կամ անմիտ կամ մծղնեայ, կամ եթէ վտանգ առողջութեան՝ ի վերայ կացէ • Բ • 176 : Եթէ այր նահանջեսցէ զաբերն • եթէ կինն յարիցէ կամ մլշիցէ • եթէ օրհորդ բռնաբարեալ արտաքսիցէ զաբերն • եթէ ծեր առեալ հեղուցու արտաքս զաբերն • 177 : Պարտք բնակակցութեան ընդ կնոջ և մնուցանելոյ զնա • 178 : Արգելք խափանիչք պսակի • 179—200 : Ո՞ր կոչն արգելք՝ լուծիչք պսակի Բ • 184—195 : Տնօրինութիւն արգելից պսակի • 201—210 : Լուծումն պսակի • քանի՞ պատճառաւ օրէն կոչ բաժանութիւն առաջադրի • 210—212 : Պա՞րտ կոչ ամուսնոյ բաժանիլ վասն շնութեան ամուսնակցին • 214 : Իրաւունք կոչելոյ զընացեալն ամուսին • 215 : Օրէ՞ն կոչ ինքնահրաման բաժանութիւն : Ցե՞ռ բաժանման ո՞ յամուսնոյ կարիցէ կրօնաւորիլ • 216 :

Ջ

Ջահընկալութեան աստիճան • Բ • 463 :

Ռ

Ռոմայի հռոմէական առեներն սահմանադրութիւնք • Ա • 43 :

Ս

Սաղմոսահմայութիւն • տես Կրօնք :
Սալմն • օրէ՞ն կոչ երբեք վիճել զսաղմն • Ա • 195—196 : Իցէ՞ սաղմն ընդունակ մկրտութեան • 410 : Տես և Վիճումն :
Սարկաւագութիւն զի՞նչ է, և որ ինչ նմանք նորա և ձև և պաշտօն • Բ • 478 • 479 :
Սեպհականպատութիւն • Ա • 404—408 • 208: Օրէ՞ն կոչ առալ գրաման պաշտօնէի խորհրդոց • Բ • 447 :
Սերնդակալծութիւն • տես Գիջութիւն :
Սէր • Կարգ սիրոյ • Ա • 91 : Որ ինչ ցոյցք սիրոյ առ Թշնամիս • 92 : Պարտք ողորմութեան • 93 : Խրատ եղբայրական • 94 : Պարտք մեծաւորաց յայտմ • 95 : Տես և Գայթակղութիւն :
Սիմոնականութիւն • Ա • 100—107 : — Բ • 45 • 458 :
Սիւհ և մաղմոս պարտին դալ օծեալք • և ե՞րբ բառնայ օծութիւն նոցա • Բ • 492 : Կարևորութիւն շջալիելոյ զայնա՛ի ձեռնադրութեան • 481 :
Սնապաշտութիւն • տես Կրօնք :
Սովորութեան պայմանք կարևորք • Ա • 60 : Պայմանք կարևորք չեղծումն սովորութեան • 61 : Եթէ օրէնք մեծին՝ ի բաց զամենայն սովորութիւն ապաքայ • 62 : Սովորութիւն մեկնիչ օրինաց • 62 : Եթէ օրէնք նահանջեցին զամենայն հակառակ սովորութիւն • 62 : Սովորութիւն ընդդէմ պահպանութեան ծոնից • 134 : Սովորութիւնք

որ աղաւո կացուցանէ 'ի պարտուց տեսանելոյ զպատարագ • 145 :
Սուրբ տեղեաց արտունութիւնք • Բ • 308 • 310 :
Սուրբ տարի • տես Ներողութիւն և Ցոբելեան :
Սպանութիւն 'ի հրամանէ պետութեան • Ա • 189 : Ի պաշտպանութիւն անձին , պատուոյ , ընչից , և պարկեշտութեան • 189 : Ի պաշտպանութիւն ընկերին • 191 : Աւ 'ի զաւակս առնուլ յարձակման • 192 : Օրէն էր սկզբան պաշտպանել զկեանս իւր ընդդէմ առն չնացելոյն • 192 : Օրէն էր երբեք սպանութիւն անմեղին • 192 : Օրէն էր պատճառս տալ վիժման • 193 • Բ • 284 : Կին որ կամաւ զտալն վիժեցէ՝ անկանիցի 'ի բանադրանս • 193 : Իսկ զինչ էթէ երկայնէլի էր հոգեւորութիւն սպանողին • 194 : Օրէն էր մօր առնուլ դեղ 'ի բժշկութիւն վտանգաւ վիժման տալոյն • 194 : Տես և Մենամարտ : Բանադրանք և անկանոնութիւն սպանողաց • Բ • 273 • 277—283 : Անկանոնութիւն 'ի սպանութենէ • Բ • 295 :
Սպասաւոր պատարագի • Բ • 493 :
Սպասք պատարագի • Բ • 492 • 493 :
Տաճարած • Քանի օրինակաւ մարթ էր տաճարալ ինչ • Ա • 220 : Թեղութիւնք տաճարածոյ , և պարտք այնպիսւոյ տաճարի • 248—252 :
Սրբագործութեան բանք • Բ • 485 : Տես և Քահանայութիւն :
Սրբարան Պաւլն զինչ ինչ կարող էր անօրինել • Ա • 31 • 134 • 317 • Բ • 204 : Տես և Տեօրինութիւն :
Սրբապղծութիւն • տես Սեղանակատարութիւն :

Վ

Վաճառական • որ ինչ հարցուածս պարտ էր առնել նմա 'ի խոստովանութեան • Բ • 380 : Տես և Վաճառաշահ և Տուրհաւս :
Վաճառաշահ • ոմն էր արդեւլեալ , և երբ էր ծանր մեղք • զինչ էթէ եկեղեցական ոք 'ի ձեռն այլոց ուրուք առնիցէ վաճառաշահ , կամ 'ի շահ այլոց • Ա • 300 : Տառնալ խաչն վասն արօտի խրոյ • Վաճառել տաւարեղջոյն գնոց առ 'ի գնել տակաւադին • Գնել զարդ և այլն • և զինչ էթէ հարկ 'ի վերայ կայցէ • 301 : Իցէ օրէն եկեղեցականի հոգաբարձութիւն , գործակալութիւն և այլն • 301 : Տես և Տուրհաւս :
Վանահարց իշխանութիւն անօրինելոյ • Ա • 33 • 54 • 309 • 335 • 349 : Եթէ վանահայր զաւագի տալ իշխանութիւն արձակելոյ 'ի վերատալոյ • Բ • 97 :
Վանիայր • տես Աբբատուհի :
Վարչ • տես Փոխ :
Վարձ • Պարտք տեարց 'ի վարձ ծառայից • Ա • 151 : Նախադրութիւն ընդդէմ երաւանց ծառայի • 152 : Որ տայ ինչ 'ի վարձու • Ա • 305 : Օրէն էր տալ 'ի վարձու զերաւունս մուրանալոյ • 306 : Պարտ էր տալ վարձ ծառայի 'ի հիւանդութեան նորա : Այլևայլ սղդ տալոյ ինչ 'ի վարձու • 307 : Վարձ վաստատութեանի • 389 • 390 :
Վարուձիրայից կարեւոր հարցմունք 'ի խոստովանութեան • Բ • 308 :
Վերապահեալ զինչ է • Բ • 93 : Զի տպհաւութիւն ոչ աղաւ կացուցանէ 'ի վերապահութենէ , այլ 'ի բանադրանաց աւելի • 94 : Ո՞ւմ անկ էր վերապահել • Վերապահեալք 'ի կրօնաւորական կարգս : Օրէն էր մեծաւորի արձակել զոք 'ի վերապահեալ մեղաց , և Թողուլ խոստովանահօր արձակել զնա յայլոց մեղաց • 93 : Օրէն էր վերապահել զմեղս ներելիս կամ զնեղբինս կամ զթերակատարս : Ե՞րբ մարթ

Էյե սաորնագուն՝ արձակել • 96 : Եթէ անիրաւաբար ումէք չտացի Էշխանութիւն արձակելոյ 'ի վերապահելոյ : Եթէ վանահայրն զլուսոյ տալ զայն • 97 : Կարէյե՞ն օտարականք ընդունել արձակուսին, եթէ էյեն մեղքն այն վերապահեալ եւեթ արտաքոյ կամ 'ի հայրենեսն նոցա • 98 : Ո՞րպէս պարտ էյե խնամալ զբանն 'ի ՆՆԳ վերապահուՂեան : Որ մեղանչէ 'ի հայրենիս իւր , կարէյե՞ ընդունել արձակուսին այլուր 'ի խոստովանահօրէ՝ որոյ էյե Էշխանութիւն • 99 : Որ մեղանչէ արտաքոյ • կարէյե՞ ընդունել արձակուսին 'ի հայրենեսն : Որ մեղանչէ 'ի հայրենեսն, կարէյե՞ ընդունել այլուր արձակուսին 'ի բա. նագրանաց , կամ որ մեղանչելով այլուր անկանի 'ի բանադրանս վերապահեալս : Որ յանդիպաս արձակի 'ի վերապահելոյ 'ի ձեռն խոստովանահօր , որոյ չէյե Էշխանութիւն արձակելոյ • 100 : Որ մոռացեալ լինի 'ի վերապահելոյ 'ի խոստովանելն առ մեծաւորի : Եթէ խոստովանութիւնն այն էյե լեալ անվաւեր • 101 : Օրէ՞ն էյե պարզ խոստովանահօր արձակել զվերապահեալ երկբայելի • 102 : Որ յետ խոստովանութեանն այնորիկ ձանձրէ սուգիս վերապահեալ զայն : Որ մեղանչէ վտահացեալ 'ի հրամանն արձակմանն • 103 : Որ մեղանչէ յետ հրամանին : Էշխանութիւն եպիսկոպոսաց և կարգապետաց 'ի վերայ վերապահելոյ • 104 : Վերապահեալք Պատին • 69 :

Վերջին օծման կարեւորութիւն • Ա• 161 • 162 : Իւրութիւն և զօրութիւնք նորա • — Բ• 128 : Նիւթ հեռաւոր և մերձաւոր• Բ• 130• 131 : Կարեւոր էյե օծանել զամենայն զգայարանս • 131 : Զև և պաշտօնեայ նորին • 132• 135 : Ո՞յց պարտ էյե տալ զայն • 134• 136• 137 : Ե՞րբ պարտ էյե կրկնել զայն • 135 : Պատրաստութիւն կարեւոր առ այն • 136 : Իցէ՞ ծանր պարտականութիւն ընդունելոյ զայն • 137 : Ո՞րպէս պարտ էյե պաշտել զայն • 138 : Խրատք վասն պաշտելոյ զայն • 432—436 :

Վիժման օրէ՞ն էյե տալ պատճառս • Ա• 193 : Կին որ կամաւ զսաղմն վիժէյե՝ անկանիյե՞ 'ի բանադրանս • 193 : Զինչ եթէ երկբայելի էյե՞ հոգևորութիւն սաղմին • 194 : Օրէ՞ն էյե մօր առնուլ դեղ 'ի բժշկութիւն վտանգաւ վիժման սաղմին • 194 • — Բ• 274 : Արձակուսին յանցուցելոյ յայսմ• 342 :

Վիրաբուժից կարեւոր հարցուածք՝ 'ի խոստովանութեան • Բ•380 : Տես և Բժիշկ :

Վկայից երբ պարտ էյե տալ վկայութիւն : Որ չգայանէ զՀնարաւորութիւն , կամ որ ծածկել զայն • Ա• 395 : Վկայից պատկին առնութեան պարտք • Բ• 197 : Զինչ եթէ գիտիցեն արդելս լինի • 202 :

Վհատահամբայութիւն • տես Կրօնք :

Վճիռք հռովմէական առնելոյ ումեքէ՞ զզօրութիւն օրինաց • Ա• 42 : Վճիռք Ռոմայն • 43 :

Վնաս • որ ախորժէ ընդ վնաս այլոյ վասն բարւոյ իրիք • Ա• 77 • Օրէ՞ն էյե խրատել զոք 'ի փոքրագոյն վնաս • 237 : Որ առ ահի վնասու անձին գործակից լինի վնասու այլոյ • 241 : Որ արդելուցու խափանել զվնաս ընկերին • 242 : Որ համարի թեթեւագոյն լինել գործել վնաս • 249 : Տես և Հատուցումն և Փոխ :

Տ

Տաճարզդք Բ• 335 : Ազատութիւն կրօնաւորաց և հաւատաւորաց 'ի տրոց տաճ • 337 :

Տարակոյս բացասական և դրական, տեսական և գործնական · Ա· 15 : Ոլոմ տարակուսիս օրէն ինչ գործել · 16 : Եթէ տարակուսելի ինչ հրաման մեծաւորի · 18 · 338 : Օրէն ինչ հաղորդել տարակուսիս ընդ ծոմ· 18 : Տարակոյս ընդ հաւատացումն պարտուց առնիցէ զոք ազատ 'ի հաստատմանէ · 19 : Ուխտ տարակուսելի · 118 : Պարտ ինչ խոստովանել զմեզս տարակուսականս · — Բ· 23 : Արձակումն տարակուսելի իրաւատուէն · 60 :

Տգիտութիւն անյաղթելի · Ա· 10 : Մարթի տգիտութիւն բնական օրինաց · 10 : Մարթ ինչ անգիտանալ թէ ցանկութիւն չարեաց մեզք են · 11 : Տգիտութիւն արգելք մարդկային գործոց · 66 : Վրանիստ ոմիք ի տգիտութիւն · 66 : Ազատ կացուցանէ 'ի բանադրանաց · — Բ· 223 : Ազատ կացուցանիցէ և 'ի վերապահելոյ · 96 : Ցանկանոնութիւնէ · 275 : Յարգելոյ խնդրելոյ զղջարտս յամուանոյ · 193 : Տգիտութիւն արգել սրբոյ կարգի · 287 :

Տեսակի մեղաց որոշումն · Ա· 78 :

Տեսիլք ասուածայինք և դիւականք · Բ· 48 :

Տէր · սեռից առ ծառայս պարտք · Ա· 151 : Տես և Վարձ :

Տղայք ինչո՞ն ընդ օրինօք · Ա· 44 : Տղայ՝ որ մոռանէ յարգելամանս · — Բ· 231 : Տղայ՝ որ հարկանէ զեկեղեցական · 310 : Ո՞րպէս պարտ ինչ խոստովանահօր վարել ընդ տղայս · 581 : Եւս և վասն արձակմանն · 582 : Օրէն ինչ պաշտել նոցա զվերջին օծումն · 136 : Պարտականք ինչեն 'ի ծոմիլ պահպանութիւն · Ա· 131 : Պարտականք ինչեն պահոց · 337 : Ե՞րբ պարտ ինչ նոցա հաղորդել · 346 : Որ յառաջ քան զամս հօմնաւոյ առնիցեն հարմնախօսութիւն · Բ· 143 : Օրէն ինչ մկրտել զտղայ յարդանդի մօրն, և ոչպէս · Ա· 405 · 406 :

Տնօրինութիւն · կարեւոր ինչ առ 'ի տնօրինութիւն պատճառ իրաւացի · Ա· 48 : Եթէ տղերապատիր տնօրինմանն ինչ թերի · 48 : Եթէ ինչ վասն այլոց ուրուք · 49 : Լռելեայն տնօրինութիւն · 49 : Պատճառք տնօրինմանն · 49 : Ուր երկբայելի ինչ կարևորութիւն տնօրինմանն · 49 : Ինչ երբեք պարտք մեծաւորի տնօրինել · 50 : Եթէ ոք ոչ ըստ խղճի մերոց տնօրինէ, կամ թէպէտ և ըստ խղճի մերոց՝ այլ առանց իրաւացի պատճառի · 50 : Եթէ ոք առ ահի տնօրինէ · 51 : Սրբազան Պատն զի՞նչ ինչ կարօղ ի տնօրինել · 51 : Զի՞նչ ինչ եպիսկոպոսունք · 52 : Զի՞նչ ինչ ժողովրդապետք · 53 : Զի՞նչ ինչ կարգապետք · 53 : Զի՞նչ ոք ըստ աւանդեալ իշխանութեան · 53 : Զի՞նչ եթէ վախճանի աւանդօղն · 54 : Պայման օրինաց միանգամ տնօրինութիւն · 54 : Սպասաւանդութիւն իշխանութեան տնօրինելոյ · 54 : Ընձայիլ զանձն տնօրինել · 54 : Մարթ ի գաղարել տնօրինմանն 'ի գաղարել պատճառին · 55 : Կահանչմամբ տնօրինմանն · 55 : Հրաժարմամբ տնօրինելոյն · 56 : Տնօրինութիւն անստոյգ պարտուց հաստատման · 244 : Արգելից պատիւ · — Բ· 204—209 : Տես և Արտաւնութիւն :

Տուրեսաւ · Որոշումն սակի և իրին · Աբահաւաստէսայ · Ա· 291 : Ե՞րբ սեփականութիւն իրին անցանէ 'ի գնօղն · 291 : Գնել պայմանաւ · 292 : Վրաստանգ և շահ իրին գնողին միշտ իցեն անկ · 292 : Դաշն վայելելոյ 'ի պատուս միանգամ ցհատուցումն գնոյն · 292 : Եթէ ոք գնեսցէ արծաթով այլոց, կամ զայլոց իր վաճառեսցէ · 292 : Գին արդար · Ածումն և նուազումն գնոյ · 293 : Վաճառ կամակաւ, և ե՞րբ օրէն ինչ վաճառել ինչ ծանրագնի · Հաստատակաց վաճառք · Վասն վաղ կամ անագան հատուցման օրէն ինչ այլայլել զգինս · 294 : Գնել զմուրհակ · Դաշն անդրէն վաճառելոյ · Դաշն անդրէն գնելոյ · Որ ինչ յայտնակ օրինազանցութիւնք · 295 : Մինամաճառ · 183 · Ցո-

ռուԹիւն վաճառաց · Որ գիտակն իցէ աճելոյ կամ նուազման գնոց · Մի՛ջնորդք վաճառաց · 184 : ԵԹէ երկուց ումանց վաճառեալ իցէ ինչ · և զի՞նչ ի կորնչել երկին վաճառելոյ · 185 : Տես և Վաճառաշահ :
Տօնից պահպանուԹիւն եկեղեցական՝ իցէ պատուիրան՝ Թէ սատուածոյին , և ածիցէ պարտս ի վերայ անհաւատից · Ա · 130 : Ո՞յք ոմանք մեղանչեն ընդդէմ այնորիկ · 130 : Ո՞ւմ անկ է սահմանել տօնս : Պարտք լսելոյ զբանն Աստուծոյ · Պարտք քարոզելոյ զայն · Ածիցէ պարտս և մեռեալոյ · 131 : Որ ինչ գործք արգելեալք ի տօնս · 132 · 133 : ՏնօրինուԹիւն պատկին կամ եպիսկոպոսի կամ ժողովրդապետի զայնցանէ · 134 : ՍովորուԹիւն հակառակ նմին · 134 : Խափեցոյ ծուԹիւն ի տօնս · 16 : Հարկ գործելոյ ի տօնս · 135 : Վասն շահաւէժի , կամ առ ի չկալոյ գաւառիկ , կամ յաղագս օգտակարուԹեան , և կամ սուղ ինչ ժամանակ օրէն իցէ գործել · 136 : Օրէն իցէ աշխատեցուցանել սուղ ինչ ժամանակ զայլևայլ ծառայս · 137 : Պարտք տեսանելոյ զպատարագ ի տօնս · տես Պատարագ :

Ց

ՑանկուԹիւն երբ համարի ի մեղս · Ա · 67 : Տես և Ախորժ և ՀեշտուԹիւն :

Փ

Փառաւորան · օրէն իցէ միանձանց և եկեղեցականաց առնել փառասիրուԹիւն : Ե՞րբ պարտ իցէ փառասիրանի պաշտպան կալ : Որ ինչ գործս օրէն է նմա պաշտպանել , և որ ինչ վարձս ընդունել · Ա · 388–391 :
Փոխ · Ե՞րբ պարտ իցէ հատուցանել զփոխ · Ա · 282 : Որդւոց չէ և նա զգատուցելոց տուեալ փոխ · 282 : Որդւոց չէ և նա զգատուցելոց տուեալ փոխ · 282 : Զվաշխից · 282 : Տալ փոխ յուսով շահու · 282 : Շահ տուեալ ձրի կամ առ ակն · 285 : Դարձն չպահանջելոյ զգրամագլխին ընդ երկար · 284 : Վնաս ծագեալ շահ խափանեալ · 285 : Պայմանք պահանջելոյ զշահ · 285 : Վտանգ գրամագլխոյն · 286 : Տոյժ պայմանեալ · 287 : Պահանջ բարեկամուԹեան · 288 : Պայմանք հարկեցուցիչք · 288 : Պայման հատուցանելոյ նոյնչափ քանակաւ · 288 : Պայման հատուցանելոյ որ ինչ պարտն է ըստ արդարադԹեան կամ եղբայրսիրուԹեան · 289 : Պարտք վաշխառուացս և ժառանգաց նոցա · 290 : Գործակիցք վաշխառուացս · 290 : Տես և Դրամավաճառ և Դրամոց փոխանակուԹիւն :
Փոխանակագիր · տես Դրամոց փոխանակուԹիւն :
Փոխանորդն եպիսկոպոսին որ ինչ իշխանուԹիւն անօրինելոյ , և որ ինչ ժողովական փոխանորդին · Ա · 52 · 54 : Տես և ԱրտաւնուԹիւնք եպիսկոպոսաց · Բ · 340–329 : Կարիցէ՞ նա անօրինել զերկրակի հրատարակուԹիւն պատկի · Բ · 185 :
Փոշի հանեալ կրական · տես Կրօնք :
Փորձել զԱստուած · տես Կրօնք :
ՓորձուԹեանց ո՞րպէս պարտ իցէ զդէմ առնել · Ա · 74–75 : Ընդդէմ նոցին գեղք · Բ · 424–427 :
Փորք ասելիանք · Բ · 450 · 461 : Տես և Խոշտանգուն հերետ · ԴատաստանուԹիւն · ընԹերցողուԹիւն · ԵրդմնեցուցչուԹիւն · ՋահընկալուԹիւն :

Ք

Քահանայի պարտք մատակարարելոյ զնորհուրդս • Բ• 92 : Օրէն ունի նմա դրոշմել• 421 : Պարտք խոստովանելոյ • տես Հաղորդութիւն : Ի հաղորդել նորա որպէս աշխարհիկ • 451 : Օրէն ունի անկարօտ քահանայի ընդունել պատարագս : Որ այլեայլ պատարագս վասն միոյ պատարագի ընդունի : Ո՞ր ունի օրէն արդար պատարագեաց : Չի օրէն է ընդունել աւելի քան զարգարն , և գնուածն քան զայն արդելուլ : Որ ընդունի գնուածն , օրէն ունի նմա նուազել զվիճ պատարագաց : Որ չմատուցանէ զպատարագ խոստացեալ ընդ դրամն ինչ պատարագեաց : Որ սակ արկանէ զպատարագեաց : Որ խորէ ՚ի պատարագեաց : Եթէ պատարագիքն ՚ի ջնորհս անձին ուրուք ունին առատաձեռնեալ• 452–456 • 488 : Զինչ օրէն է ժամատարաց , զինչ եկեղեցականաց : Եթէ պատարագիչն կամ կտակատար Թողեալ կամակար զմանն խորհեալ : Որ Ժողովէ պատարագիս : Որ փոխանակէ պատարագս • 456–458 : Ժամատար քահանայի պարտք • տես Ժամատար : Չի մեղանչէ մահուրձաւ որ շտապաւն պատարագէ • յայտարարութիւն արբոյ արարողութեանց Ժողովրդոյն զայսմանէ • 464 : Չի քահանայ նորընծայեալ արբագործէ ՚ի պատարագել անդ ընդ եպիսկոպոսին • 494 : Պաշտօն և պարտք պարզ քահանայի • Բ• 495 և այլն : Տես և Քահանայութիւն :

Քահանայութիւն զինչ է , և որ ինչ նիւթ և ձև նորին • Բ• 441 • 450 • 481 : Ո՛րպէս պարտ եղեալ ընուլ զվեղարութիւնս ձեռնադրութեան• 481 : Զինչ և քանիպատիկ է պատարագ• նիւթ նորա , և որակ հացին և գինւոյ • 482 • 483 : Զնեղկայութենէն նիւթոյն • 484 : Զև պատարագին , և թէ որով օրինակաւ եղեալ անդ Կրիատոս • 485 : Չօրութիւնք արբոյ պատարագին , և վասն որոյ օրէն եղեալ մատուցանել զայն • 486 : Արգասիք արբոյ պատարագին , և զամբաւ զօրութենէն նորա • 457 : Օրինաւոր պատարագիք • Ցամէցումն ՚ի պատարագել• Խորել ՚ի պատարագեաց • 488 : Որ ինչ Ժողովրդապետի պարտք պատարագելոյ • Ցիշատակ մատուցողի զպատարագիս • 489 : Կարմրագիր խըրատք առ հասարակ եղելոյն հրամայականք • 489 : Ե՛րբ և ուր օրէն ի՛ եղ պատարագել• 490 • 491 : Որ ինչ կարևոր սպասք առ ՚ի պատարագել• 491–494 : Ո՛րպէս պարտ եղեալ պատարագել• 494 : Չի ըստ աւուր պատշաճի պարտ է պատարագել : Ե՞րբ օրէն եղեալ է հրկիզն ՚ի միում աւուր պատարագել : Չինչ եթէ ՚ի պատարագել անդ պղծիցի եկեղեցի , կամ բանադրեալ խորշելի անդր մատանիցէ : Չի պաշտօն է պարզ քահանայի պատարագել ևեթ և հաղորդել• և ՚ի կարևոր ժամանակի արձակել զժեղս • 495 : Որ ինչ պարտ եղեալ նմա դիտել• 495 : Պաշտօն նորա ուսուցանելոյ և քարոզելոյ • 497 :

Քարոզիչ պարտի յանդիմանել զհասարակաց մեղս • Ա• 95 : Պարտք լսելոյ զբանն Աստուծոյ • 451 : Չի պարտին եպիսկոպոսունք և Ժողովրդապետք խօսել զբանն Աստուծոյ • 451 • 465 • 466 • 469 : Օրէն եղեալ կրօնաւորաց ինքնահրաման քարոզել• Բ• 550 :

Օ

Օտարականաց ածելոյն արգելօք պարտս օրէնք , եթէ հարևանցի ուրեք եղցեն • Ա• 45 : Եղէ իշխանութիւն եպիսկոպոսի անօրինել զսխալ օտարականաց , զծոմապահութիւն և այլն • 46 : Կարելոյն

օտարականք ընդունել արձակուրդ, եթէ կայն մեղքն վերատահեալ
եւեթ արտաքոյ կամ՝ի հայրենիս նոցա : Որ մեղանչէ՝ի հայրենիս
իւր, կարիցէ ընդունել արձակուրդ այլուր՝ի խոստովանահօրէ, ա-
րտ կայ եչխանուԹիւն· Բ· 99· 512 : Որ մեղանչէ՝ի հայրենիսն, կա-
րիցէ ընդունել այլուր արձակուրդ՝ի բանադրանաց· Բ· 100 : Օտա-
րականաց օրհնիչ պատկի մ՝ի ժողովրդապետաց պարտի գոլ· Բ·
193 : Օտարականաց հարմանհաւատուԹիւն· Բ· 198 : Օտարականաց
ոչ պարտ կայ տալ մկրտել զորդիս իւրեանց· Ա· 409 : Ո՞ւր դրոշ-
մել· 422 :

Օրէնսդիրք պարտին պահել զօրէնս· Ա· 44 :

Օրէնք զինչ են և քանիսականի· Ա· 30 : Օրէնք երկբայելի· 47 : Պայ-
մանք օրինաց· 30 : Հրատարակուածն նոցին և ընդունելուԹիւն· 31–
33 : Եթէ զամս տասն չկային լեալ ընդունելի : Եթէ՝ի բազմաց լեալ
ընդ նեղի· 33· 34 : Հրամայական օրինաց պարտք· 34 : Կարիցէ՞ն
հրամայել նեղքին նեղդործուԹեանց մարդոյ· 36 : Եթէ ծանր նե-
ղուԹիւն՝ի վերայ ածկէ : Կարիցէ՞ն օրէնք բառնալ զպարտս բը-
նուԹեան· 36 : Պա՞րտ կայ մարդոյ բառնալ զարգելս օրինապահու-
Թեան : ԵրկբայուԹիւնք զօրինաց· 37 : Պատժական, հոգևոր,
զրկողական, պայմանական օրէնք· 38 : Ի սուտ կարծիս հաստա-
տեալ օրէնք : ԴաշնադրուԹեան օրէնք : Ի կատարումն օրինաց կայ
կարևորՙի շնորհս Աստուծոյ գոլ : Կայ կարևոր դիտաւորուԹիւն·
39· 40 : Մա՞րթ կայ նովին միով գործով այլևայլ պատուիրանս
կատարել· 30 : Զի՞նչ եթէ նովին միով գործով ընդդէմ այլևայլ
պատուիրանաց ոք յանցանիցէ· 41 : Ո՞ւմ կայ անկ քաղաքական
օրէնսդրուԹիւն, և ումմ եկեղեցականն· 42 : ՍահմանադրուԹիւնք
ժողովոց և հռովմէական Ոտնձգի առեներն· 42 : Ո՞րց ումանց պարտս
՝ի վերայ ածեն օրէնք : Ածիցե՞ն արդեօք ստոյգ· 44 : Արդեօք օ-
րէնսդրաց· 45: Արդեօք օտարականաց, եթէ հարեանցի ուրուք կայ
ցեն· 45 : Կայ եչխանուԹիւն եպիսկոպոսի անօրինել զուխտ օտարա-
կանաց, զծոմապահուԹիւն և այլն· 46 : Որ ինչ աղատ կացուցա-
նէ զոք յօրինաց, և նախ անգիտուԹիւն· 46 : Երկիւղ· անկարողու-
Թիւնՙ· 47 : Կարևոր կայ առ՝ի անօրինուածն օրինաց պատճառ երա-
ւացի· տես Տնօրինուածն : Ի դադարել վախճանին դադարիցէ՞ն օրէնք·
56 : ԲարեկարգուԹեան օրէնք· 57 : ՄեկնուԹիւն օրինաց· 58 : Բաց-
առուԹիւն օրինաց· 59 : Դիպաց՝ի դէպս երբ զօրէն օրէնք· 59 :
ՍովորուԹիւն ընդդէմ օրինաց· 60–62 : ՕրինապանուԹիւն աս-
տուածաբանական և իրաւաբանական· 235 : Ի դաշնադրուԹիւնս և
՝ի պաշտամունս քաղաքական ածիցէ պարտս հաստուցման օրինա-
զանցուԹիւն իրաւաբանական· 234 :

Օրհոդ· օրէն կայ օրհոդն դնել զանձն՝ի վտանգ մահու առ՝ի պա-
հել զպարկեշտուԹիւն· Ա· 185 : Ո՞րպէս պարտ կայ խոստովանահօր
վարել ընդ նոսա· Բ· 381 : Տես և ԿուսապղծուԹիւն : Պա՞րտ կայ
նմա առ՝ի բժշկուԹիւն յանձն առնուլ զդործուԹիւն վիրաբու-
ժի· 184 :

ՕրհնուԹիւն միւռոնի կարևոր կայ, և յումմէ՞· Ա· 420 :

Ա. · ՀԱՏՈՐ

Է՛Ջ	ՏՈՂ.	ՎՐԻՊԱԿ	ՈՒՂԻՂ.
70	21	*խնդրի*	*խնդրի՛*
71	11	*ընդ փորձուԹիւնս*	*ընդ փորձուԹիւնս ,*
158	23	*Ուռնքիլեա*	*Ուռնքալեա*
162	28	*իբրեանց*	*իբր*
205	5	*անեբկիւղաց*	*անեբկիւղած*
260	5	*Պուսեմպոյ*	*Պուսեմպաոյ*
265	2	*համարելով*	*համարելոյ*
325	16	*Մուսեմպաոյ*	*Պուսեմպաոյ*
359	37	*մեծաւորն*	*մեծաւորին*
456	29	*հաւատոց*	*հաւատոց*

Բ · ՀԱՏՈՐ

21	35	*յօգ 36*	*յօգ 35*
124	13	*խոստովանահարց*	*խոստովանահարք*
132	18	*կանանաց*	*կանանց*
153	31	*նմա :*	*նմա ,, :*
229	4	*մեծագոյն*	*մեծագոյն*
233	38	*կողոպտո*	*կողոպտոյ*
274	12	*մարդասպանուԹեան*	*մարդասպանուԹեան*
304	29	*Բեռնաւորաց*	*Բեռնաւորաց*
313	1	*չկարէ*	*չկարեն*
360	29	*գաԹակղեացեն*	*գայԹակղեացեն*
361	1	*խոստաւ*	*խոստանալ*
387	8	*խոստովանահօր*	*խոստովանահօր*
389	1	*՛ի Տէրտէրսն : և*	*՛ի Տէրտէրսն , և*
405	15	*սասսակագոյն*	*սասսկագոյն*
425	13	*անասպատ.*	*անսպատ.*
444	10	*Խոստովանահայր*	*Խոստովանահայր*
453	26	*հերացնըն- գրի*	*հերաց նըն- գրի*
463	23	*կխաբկաւագ*	*կխաւարկաւագ*
486	30	*հաւուցդպրական :*	*հաւուցդպրական ,, :*
490	23	*զառաւոտեան*	*զառաւօտեան*
512	30	*յաւաւօտու.*	*յառաւօտու.*
514	32	*նման*	*նմա*
524	34	*բաժանեչոյ*	*բաժանելոյ*
525	3	*սահմանեչոյ*	*սահմանելոյ*
306	14	*Պակասէ վերնագիր Բ յօդուածոյ*	

ԱՐՏՈՒՆՈՒԹԻՒՆՔ ՆԿԵՂԵՑՈՒԱՆՑ

5848

Հ-41

ՀՀ Ազգային գրադարան
NL0161616